


ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է  
ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ - 100  
ՃԱՆԱԶՈՒՄԻՑ՝ ՀԱՏՈՒՑՈՒՄ**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ  
ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2016**

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

**ГЕНОЦИД АРМЯН - 100  
ОТ ПРИЗНАНИЯ ДО КОМПЕНСАЦИИ**

**СБОРНИК ДОКЛАДОВ МЕЖДУНАРОДНОЙ  
КОНФЕРЕНЦИИ**

**ЕРЕВАН  
ИЗДАТЕЛЬСТВО “ГИТУТЮН” НАН РА  
2016**

**NATIONAL ACADEMY SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
YEREVAN STATE UNIVERSITY**

**ARMENIAN GENOCIDE - 100  
FROM RECOGNITION TO REPARATION**

**KOLLEKCIION OF PAPERS  
OF THE INTERNACIONAL CONFERENCE**

**YEREVAN  
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA  
2016**

ՀՏԴ 94(479.25):06

ԳՄԴ 63.3(52)

Հ 282

**Տպագրվում է  
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական  
գիտությունների բաժանմունքի բյուրոյի որոշմամբ**

**Գիրքը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ  
գիտահրատարակչական խորհուրդը**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Յու. Սուվարյան (նախագահ), Ա. Ադասյան, Ա. Ավագյան,  
Պ. Ավետիսյան, Հ. Դեմոյան, Վ. Դերիկյան, Ա. Իսահակյան,  
Վ. Հովակիմյան, Վլ. Հարությունյան, Մ. Հովհաննիսյան,  
Գ. Մարգարյան (պատ. քարտուղար), Ա. Մելքոնյան,  
Է. Մինասյան, Ս. Մուրադյան, Գ. Պողոսյան,  
Ռ. Սաֆրաստյան, Վ. Սվազլյան

Հ 282 Հայոց ցեղասպանություն-100. Միջազգային գիտաժողովի  
գեկուցումների ժողովածու.-Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն»  
հրատ., 2016, 774 էջ:

Ժողովածուում ընդգրկված են 2015 թ. հոկտեմբերի  
15-16-ը կայացած միջազգային գիտաժողովի նյութերը:  
Հասցեագրվում է ընթերցող լայն հանրությանը:

ISBN 978-5-8080-1248-6

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

*Երևան, 15 հոկտեմբերի 2015թ.*

### **«ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ – 100. ՃԱՆԱԶՈՒՄԻՑ՝ ՀԱՏՈՒՅՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ**

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,  
Տիկնա՛յք և պարոնա՛յք

Ի սրտե ողջունում եմ ձեզ «Հայոց ցեղասպանություն – 100. Ճանաչումից՝ հատուցում» թեմայով միջազգային գիտաժողովի բացման առիթով:

Դեռևս 1916 թվականին ֆրանսիացի մեծ գրող և հումանիստ Անատոլ Ֆրանսը նշում էր. «Հայաստանը վերջին շունչն է փչում, բայց կվերածնվի: Այն մի փոքր արյունը, որ դեռ մնում է, թանկագին է, ու դրանից մի հերոսական սերունդ է ծնվելու: Մի ժողովուրդ, որը չի ցանկանում մեռնել՝ չի մեռնի»: Այո՛, մեր ժողովուրդը չմեռավ, վերածնվեց, վերակերտեց իր պետականությունը և այսօր հանդես է գալիս որպես պահանջատեր՝ արդարության պահանջատեր, իսկ դա ենթադրում է լուրջ նախապատրաստական, այդ թվում նաև՝ հետազոտական աշխատանք:


Պատահական չէ, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բազմաթիվ միջոցառումների ցանկում ուրույն տեղ են գրավում գիտահետազոտական բնույթի համաժողովները: Կարծում եմ՝ այսօր բացվող գիտաժողովն առանձնանում է նրանով, որ կրելով «Ճանաչումից՝ հատուցում» ենթախորագիրը և նվիրված լինելով Հայոց ցեղասպանությանն առնչվող խնդիրների լայն շրջանակը հետազայում ավելի խորացված ուսումնասիրելուն՝ միաժամանակ հատուկ ուշադրություն է հատկացնում այդ ծանրագույն

հանցագործության հետևանքների վերացման ու հատուցման հիմնահարցերին:

Կրկին ողջունելով այս կարևոր գիտաժողովի կազմակերպիչներին Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիային և Երևանի պետական համալսարանին, մասնակիցներին մաղթում եմ բեղմնավոր աշխատանք:



ՍԵՐՃ ՍԱՐԳՍՅԱՆ



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՊԱՏԳԱՍՐ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ - 100.  
ՃԱՆԱՀՈՒՄԻՑ՝ ՀԱՏՈՒՑՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ  
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում ենք ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի համատեղ նախաձեռնությամբ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Հայոց ցեղասպանություն-100. Ճանաչումից հատուցում» թեմայով միջազգային գիտաժողովի կազմակերպումը և Հայրապետական Մեր օրհնությունը հղում գիտաժողովի բոլոր մասնակիցներին:

1915 թվականը հազարամյակների մեր պատմության ամենաողբերգական էջն է, որը հայրենագրկումի, մարդկային ու նյութական մեծ կորուստների անամոքելի ցավի դառը հիշողություններ է թողել մեր ժողովրդի հոգում: XX դարի սկզբին ավելի քան մեկ ու կես միլիոն անմեղ հայորդիներ իրենց հավատի ու ազգային պատկանելության համար զոհ գնացին Օսմանյան կայսրության կողմից իրագործված անմարդկային ոճրագործությանը՝ Հայոց ցեղասպանությանը: Ավերվեցին մեր շեներն ու բնակավայրերը, թալանվեցին ու քանդվեցին մեր վանքերն ու եկեղեցիները, ոչնչացվեց մեր հայրերի ստեղծած մշակութային ժառանգությունը:

Պատմական իր Հայրենիքի մեծագույն մասը կորցրած, մեծ դժվարությունների գնով իր կյանքը վերակառուցած մեր ժողովուրդը Ցեղասպանության դաժան հետևանքները զգում է առ այսօր: Որպես Ցեղասպանություն վերապրած ժողովուրդ՝ մեր պայքարը, մեր ջան-

քերը նպատակաուղղված են ցեղասպանությունների ու բռնությունների դատապարտմանը, որպեսզի աշխարհում երբեք չվտանգվի ժողովուրդների ազատ և խաղաղ ապրելու աստվածաշնորհ իրավունքը:

Ցավալի է, որ մարդկության դեմ իրագործվող այսօրինակ հանցագործությունները տակավին տեղ ունեն մեր կյանքում: Այսօր միջազգային տարբեր հարթակներից մենք լսում ենք կոչեր ու հորդորներ խաղաղ ու ապահով աշխարհի կառուցման մասին, մինչդեռ աշխարհի տարբեր կողմերում, հատկապես Մերձավոր Արևելքում, դաժանորեն խոշտանգվում ու սպանվում են հազարավոր մարդիկ, շատերը ստիպված լքում են իրենց բնակավայրերը, անխնա ոչնչացվում են պատմամշակութային հնադարյա արժեքները: Արդյո՞ք հնարավոր է խաղաղության կառուցումը առանց արդարության, առանց նախկինում կատարված հանցագործությունների դատապարտման ու հատուցման: Փաստերով վկայված իրողություն է, որ չդատապարտված հանցագործությունը ծնում է նոր՝ ավելի մեծ հանցագործություն: Որքա՞ն գոհեր խլեց ֆաշիզմը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքին, որի առաջնորդները քաջալերված էին Հայոց ցեղասպանության հանդեպ համընդհանուր մոռացությամբ: Որքա՞ն անմեղ մարդիկ են տառապում մեր օրերում ահաբեկչությունների պատճառով, որոնց կազմակերպիչները վստահ են իրենց անպատժելիության վրա:

Մեր ժողովուրդը, որ վշտակից է մերօրյա պատերազմներից ու բռնություններից տուժած ժողովուրդներին, աննվազ նախանձախնդրությամբ պայքարելու է արդարության հաստատման համար, քանզի արդարության և համընդհանուր դատապարտման ճանապարհն է միայն, որ աշխարհը գերծ պիտի պահի նոր ցեղասպանություններից ու ոճրագործություններից:

«Հայոց ցեղասպանություն-100. Ճանաչումից՝ հատուցում» թեմայով միջազգային գիտաժողովը կարևոր մեկ քայլ է՝ քննարկումների միջոցով բարձրաձայնելու և առավել հանրայնացնելու մարդկության դեմ իրագործված հանցագործությունների հիմնախնդիրները: Մենք վերստին Մեր գնահատանքն ու բարեմաղթանքներն ենք յղում գիտաժողովի կազմակերպիչներին ու բոլոր մասնակիցներիդ կարևորելով ձեր առաքելությունը ի նպաստ խաղաղ ու բարօր աշխարհի կառուցման:

Առ Աստված աղոթքով հաջողություններ ենք մաղթում գիտա-  
ժողովի աշխատանքներին և հայցում, որ Տերն Ամենակալ խաղա-  
ղություն ու բարօրություն պարգևի բոլոր ազգերին ու ժողովուրդ-  
ներին:



ԳԱՐԵԳԻՆ Բ՝  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ARMENIAN CATHOLICOSATE  
OF CILICIA  
Antelias, Lebanon



كاثوليكوسية  
الأرمن الأثوثكس  
أنطلياس، لبنان

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ  
Անթիլիաս, Լիբանան

Նորին Վսեմութիւն  
Մերժ Սարգսեան  
Նախագահ Հայաստանի Հանրապետութեան  
Երեւան

Միրելի՛ Պրն Նախագահ եւ  
Յարգելի մասնակիցներ Միջազգային Գիտաժողովին

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ, քրիստոնեական ջերմ սիրով եւ ազգային վառ ապրումներով կ'ողջունենք ձեզ: Հայաստանի Հանրապետութեան Գիտություններու Ազգային Ակադեմիայի հրաւերին ընդառաջելով՝ հաւաքուած էք՝ միասնաբար քննարկելու Հայոց ցեղասպանութեան առնչուած հարցեր. աշխատանքներ ու ծրագիրներ՝ «Հայոց ցեղասպանութիւն. Ճանաչումէն՝ հատուցում» ընդհանուր խորագրի ծիրէն ներս:

Յատուկ ուրախութեամբ ու բարձր գնահատանքով կ'ողջունենք այս նախաձեռնութիւնը, որ վստահաբար նոր շեշտ ու արժեւորում պիտի տայ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի համազգային նշման, ինչպէս նաեւ՝ քննարկումի ու աշխատանքի նոր տարածքներ ու հորիզոններ պիտի բանայ մեր առջեւ: Արդարեւ, Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի տարին շուտով պիտի հասնի իր աւարտին: Այս առիթով կազմակերպուած աշխատանքները ու ծրագիրները եւս պիտի ունենան իրենց եզրափակումը: Բնականաբար, ձեռք ձգուած յաջողութիւններուն ու եղած թերութիւններուն ընդհա-

նուր արժեւորումը եւս յառաջիկային պէտք է տեղի ունենայ: Սակայն, այս բոլորէն անդին հրամայական անհրաժեշտութիւն է նպատակաւոր հայեցակէտով, իրապաշտ ոգիով ու գործնական մոտեցումով ծրագրել հայ ժողովուրդի իրաւունքներու ձեռքբերման յառաջիկայ գործընթացը: Այս աշխատանքը Մենք կը նկատենք համահայկական յառաջնահերթութիւն: Այս շրջագծէն ներս պիտի ուզէինք կարգ մը մտածումներ բաժնել ձեզի հետ:

Ա.– Անցնող հարիւր տարիներու ընթացքին Հայոց ցեղասպանութեան պատմական իրողութեան, անոր ներքին ծալքերուն ու հետեւանքներուն մասին հսկայ գրադարան մը լեցնելու չափ հրատարակութիւններ կատարուեցան հայ թէ օտար հեղինակներու կողմէ: Այս ընթացքը տակաւին կը շարունակուի, պէտք է շարունակուի. յատկապէս օտարներուն կողմէ: Որքան ալ ցեղասպան թուրքը ուրանայ իր գործած ցեղասպանութիւնը, որքան ալ իր ունեցած քաղաքադիւանագիտական ու տնտեսական հսկայ կարելիութիւնները ի գործ դնէ արգելակելու Հայոց ցեղասպանութեան ճանաչման ձգտող փորձերը. վերջապէս, որքան ալ Թուրքիոյ պետութիւնը իր աշխարհաքաղաքական առաւելութիւններուն վրայ յենած նոյնիսկ սպառնական մոտեցումներով փորձէ խոչընդոտ հանդիսանալ Արեւմտեան պետութիւններու կողմէ Հայոց ցեղասպանութեան գծով կատարուող դրական մոտեցումներուն ու արտայայտութիւններուն, 1915-ին թուրք կառավարութեան կողմէ պետական մասշտապով ծրագրուած ու գործադրուած հայ ժողովուրդին բնաջնջումը XX դարու առաջին ցեղասպանութիւնն է, առաջին ոճիրը մարդկութեան դէմ:

Բ.– Անցնող հարիւր տարիներու ընթացքին Հայոց ցեղասպանութեան ճանաչման գծով մեր ձեռք ձգած իրագործումներուն ու փորձառութեան լոյսին տակ անհրաժեշտ է, որ հանգրուանային մօտեցումով ու ծրագրուած կերպով մուտք գործենք հայ ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներու հետապնդման իրաւական մարզը: Այս աշխատանքը կը նկատենք խիստ հրամայական ու անյետաձգելի: Այս հաստատ համոզումէն մեկնած, 23-25 Փետրուար 2012-ին, Մեր նախաձեռնութեամբ ու նախագահութեամբ Անթիլիասի Մայրավանքէն ներս միջազգային համագումար մը կազմակերպեցինք «Հայոց ցեղասպանութիւն - ճանաչումէն՝ հատուցում» խորագրով: Յիշեալ համագումարին մասնակցեցան աւելի քան երեսուն միջազ-

գային օրենքի ու ցեղասպանության օտար մասնագետներ ու դատավորներ զանազան երկիրներէ: Համագումարին ներկայացուած դասախօսութիւնները հրատարակուեցան միջազգային օրենքի շրջագծէն ներս մեծ վարկ վայելող International Criminal Law Review-ի յատուկ թիւով, 2014 թուականին: Նոյնը Անթիլիասի մէջ վերահրատարակեցին *Legal Avenues for Armenian Genocide Reperations* խորագրով: Մեր թելադրութիւնն է, որ Հայ դատի իրաւական երեսով զբաղուող մասնագետները կարելորութեամբ նկատի ունենան յիշեալ հրատարակութիւնները նկատի առնելով անոնց մասնագիտական որակն ու այժմեականութիւնը:

Գ.– Միացեալ Ազգերու Կազմակերպութեան կողմէ որդեգրուած մարդկային իրաւանց ու ցեղասպանութեան առնչուած բոլոր փաստաթղթերը յստակօրէն կը շեշտեն թէ ա) ցեղասպանութիւնը ոճիր է մարդկութեան դէմ, հետեւաբար անոր ետին գտնուող անձը, հաւաքականութիւնը կամ պետութիւնը պէտք է համարատուութեան կանչուի միջազգային ատեանին կողմէ: Բ) Ճանաչում կ'ենթադրէ հատուցում. այլ խօսքով՝ ճանաչում եւ հատուցում իրարու հետ սերտորէն ընդելուզուած են: Գ) Միջազգային օրէնքը նաեւ կը պարզէ հատուցման եղանակն ու ընթացքը: Հետեւաբար, իրաւական մարզ մուտք գործելէ առաջ անհրաժեշտ է կարելորութեամբ ուսումնասիրել յիշեալ բոլոր փաստաթղթերը յարակից վաւերաթուղթերով, ինչպէս նաեւ Թուրքիոյ Հանրապետութեան իրաւական կառոյցներն ու գործընթացները:

Դ.– Անցնող տարիներու ընթացքին հայ ժողովուրդի իրաւունքներու ձեռքբերման իրաւական մարզէն ներս Մեր կատարած անձնական պրպտումները եւ ունեցած խորհրդակցութիւնները Մեզ կը մղեն մտածելու, որ իրաւական շրջագծէն ներս ամենէն իրապաշտ ու գործնական քայլը մեր եկեղեցապատկան ու ազգապատկան կալուածներու վերադարձի պահանջն է: Միջազգային օրէնքը եւ միջազգային ատեաններու որդեգրած սկզբունքները ու ուղեգիծերը եւս այս ուղղութեամբ որոշ կարելիութիւններ կ'ընծայեն: Ահա այս համոզումէն մեկնելով, Սիսի մեր դարաւոր Կաթողիկոսարանին վերադարձը պահանջող դատ բացինք Թուրքիոյ Սահմանադրական Դատարանին մօտ, որպէս առաջին գործնական ու իրաւական քայլ՝ Արեւմտեան Հայաստանի ու Կիլիկիոյ Մեր բոլոր եկեղեցապատկան ու ազգապատկան կալուածներու վերադարձի



պահանջին:


Բոլորս գիտենք, որ պետություններուն մօտ իրաւական ու քաղաքական կառոյցները իրարմէ անջատ են, անջատ կը գործեն ու որոշումներ կ'առնեն: Նաեւ քաջ գիտենք, որ Թուրքիոյ պարագային, նկատի ունենալով Հայ դատին ըստ էութեան քաղաքական բնոյթը, մեր ժողովուրդին կողմէ առնուած իրաւական որեւէ քայլ կրնայ բախիլ թուրք պետութեան քաղաքական դիրքորոշման: Հետեւաբար հարկ է ըլլալ իրապաշտ՝ հեռու ամէն տեսակ ռումանօիք ու քարոզչական մօտեցումներէ:

Ժամանակը հասած է, որ ցեղասպանութեան գծով մեր աշխատանքները կեդրոնական իրաւական մարզին վրայ՝ առանց անտեսելու ճանաչման գործընթացը: Նաեւ ժամանակը հասած է, որ Հայաստան եւ Սփիւռք միա սնաբար, իւրաքանչիւրը իրեն յատուկ դերակատարութեամբ ու աշխատելաձեւով, բայց ներդաշնակ կերպով լծուին մեր ժողովուրդի իրաւունքներու հետապնդման գործին:

Վստահ ենք, որ հակիրճ կերպով Մեր կատարած մատնանշումները աւելի լայն կերպով պիտի քննարկուին պատմական ու աշխարհաքաղաքական խորքի վրայ, ինչպէս նաեւ միջազգային օրէնքի շրջագծէն ներս:

Ձեր բոլորին կը մաղթենք արդիւնաշատ գործունէութիւն եւ յաջողութիւն՝ համագումարի աշխատանքներուն:

Հայրապետական ջերմ սիրով ու օրհնութեամբ.



ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿԻՈՅ

15 Հոկտեմբեր, 2015

Անթիլիաս



# ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ

*ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԸ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

XIX դարի վերջին սուլթան Համիդ II-ի, իսկ Առաջին աշխարհամարտի տարիներին երիտասարդ թուրքերի՝ հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանության միջոցով օսմանյան իշխանությունները նպատակ ունեին ասպարեզից հանելու դեռևս 1878 թվականի Բեռլինի վեհաժողովում կյանքի կոչված Հայկական հարցը, որը, ըստ թուրքերի, եվրոպական մեծ տերություններին հնարավորություն էր տալիս հայկական բարենորոգումների վերահսկողության անվան տակ մշտապես միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին և կարող էր հեռանկարում Բալկանյան ժողովուրդների օրինակով հանգեցնել նաև հայկական պետության ստեղծմանը:

Ի դեպ, Արևմտահայաստանի հայաթափումից հետո խնդիրն այլևս Հայկական հարց կոչելն անիմաստ էր: Այն հայության կողմից այդուհետ ընկալվում էր որպես բռնազավթված Հայրենիքը վերադարձնելու, Հայոց ցեղասպանությունը դատապարտելու, տարածքային, նյութական ու բարոյական հատուցման հասնելու խնդիր: Ուստի ամբողջապես արդարության համար հայ ժողովրդի մղած այդ պայքարը ստացավ **Հայ դատ** խորհրդանշական անվանումը:

Հայոց ցեղասպանությունից հետո Հայ դատի համար մղված 100-ամյա պայքարի պատմությունը կարելի է բաժանել մի քանի շրջափուլերի՝ հաշվի առնելով պատմական յուրաքանչյուր ժամանակահատվածում խնդրի նկատմամբ միջազգային ասպարեզում առկա վերաբերմունքի սկզբունքային տարբերությունները:

- **Առաջին փուլ**ն ընդգրկում է 1915-1923 թթ., այսինքն՝ բուն ցեղասպանության տարիները, երբ աշխարհի մի շարք երկրներ, միջազգային կազմակերպություններ զանազան մակարդակներով ոչ միայն դատապարտեցին հայերի ֆիզիկական բնաջնջման ու հայրե-

նագրկման թուրքական քաղաքականությունը, այլև որպես եղեռնի հետևանքների վերացման եղանակ՝ առաջարկեցին Միացյալ Հայաստանի ստեղծման ծրագիրը: Հենց այդ շրջափուլում էլ սկսվեց Հայոց եղեռնի միջազգային դատապարտման գործընթացը, որի որպես առաջին դրսևորում իրավամբ կարելի է համարել դեռևս 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի երկրների՝ Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի համատեղ հայտարարությունը: Դրանում մասնավորապես ասվում էր. «Ամբողջ վերջին ամսվա ընթացքում Հայաստանում (ընդգծումն իմն է - Ա.Մ.) օտտոմանյան իշխանությունների բացահայտ թողտվությամբ, երբեմն էլ ուղղակի գործակցությամբ քրդերի և թուրքերի կողմից տեղի է ունենում հայերի կոտորած»<sup>1</sup>: Այնուհետև կոտորածների գլխավոր վայրերը թվարկելուց հետո տերություններն արձանագրում են, որ օսմանյան իշխանությունների այս վայրագությունները որակվում են որպես Թուրքիայի կողմից մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություններ<sup>2</sup>:

Պատահական չէ, որ պատերազմում հաղթանակած Անտանտի երկրները հետպատերազմյան սահմանների հարցը քննարկելիս փորձեցին հաշվի առնել նաև ցեղասպանված ու հայրենագրկված հայության շահերը: Նրանք նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետ այդ հարցերն արծարծեցին 1919 թվականից սկսված Փարիզի խաղաղության վեհաժողովում: Մեծ տերությունների ղեկավարները 1920 թ. ապրիլին Սան Ռեմոյի և օգոստոսի 10-ին՝ Սևրի դաշնագրով, իսկ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Ուիլսոնը նոյեմբերի 22-ին հայ-թուրքական սահմանի վերաբերյալ ներկայացրած իրավաբար վճռով ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի համար կենսագոյության պայմաններ ստեղծելու, նրան վերջնական ֆիզիկական բնաջնջումից փրկելու համար մասնավորապես առաջարկեցին հետևյալ լուծումը. Արևելյան Հայաստանում ստեղծված հանրապետությանը միացնել Արևմտյան Հայաստանի չորս նահանգների՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի զգալի մասը, որոնց միացման արդյունքում Հայաստանի տարածքը պետք է կազմեր

<sup>1</sup> “Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества”, документы и комментарий”. Ред. и сост. профессор Ю.Г.Барсегов, т. 1, М., 2002, с. 238.

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

ավելի քան 160 հազար քառ. կմ:

Սակայն քեմալաբոլշևիկյան գործակցության, ինչպես նաև այլ գործոնների ազդեցությամբ հայ ժողովրդի այդ արդարացի երազանքն իրականություն չդարձավ: Հայաստանը բռնի խորհրդայնացվեց, նրա բնակչությունը գործնականում զրկվեց միջազգային ատյաններում այդ հարցը բարձրացնելու հնարավորությունից:

Հայ դատի համար պայքարի սկզբնափուլում հույժ կարևոր էին 1921-1922 թվականները, երբ մի շարք հայ երիտասարդներ՝ Սողոմոն Թեհլիրյանը, Արշավիր Շիրակյանը, Արտաշես Գևորգյանը և ուրիշներ վրեժ լուծեցին Թալեաթից, Ջեմալից, Բեհաեդդին Շաքիրից, Սայիդ Հալիմից, Ջեմալ Ազմիից և Մեծ եղեռնի գլխավոր այլ կազմակերպիչներից: Այս գործողությունները հայտնի են «Նեմեսիս» անունով (Նեմեսիսը հունական դիցաբանության մեջ վրիժառության աստվածուհին է):

- **Երկրորդ փուլում՝** 1922-1923 թթ. Լոզանի կոնֆերանսից մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտն ընկած շրջափուլում, աշխարհը հետզհետե մոռացության տվեց Հայոց մեծ եղեռնը և աշխարհասփյուռ հայությանը միայնակ թողեց իր ազգային ողբերգությանը դեմ հանդիման: Պատճառն այն էր, որ տարբեր երկրներում, առանց կարգավիճակի՝ նանսենյան անձնագրերով հաստատված արևմտահայ գաղթականությունը Սփյուռքում, իսկ հայրենաբնակ հայությունը՝ ստալինյան բռնաճնշումների պայմաններում, չունենալով անհրաժեշտ լծակներ, մինչև Երկրորդ աշխարհամարտի ավարտը ի վիճակի չեղան աշխարհին հիշեցնելու Սևրի դաշնագրով մեծ տերությունների ստանձնած պարտավորությունների կատարման մասին: Հենց այդ «մոռացությունից» էլ օգտվելով՝ Ա. Հիտլերն ու իր ֆաշիստական կուսակցությունն իրականացրին XX դարի երկրորդ ցեղասպանությունը՝ հրեական Հոլոքոստը: Ուստի իրավամբ կարելի է այդ ժամանակահատվածը համարել որպես Հայ դատի մոռացման և ուրացման շրջափուլ: Բայց միաժամանակ այդ ժամանակաշրջանը կարելի է բնութագրել լռելյայն պայքարի փուլ, քանի որ հայությունը չմոռացավ իր ազգային ողբերգությունը, և հատկապես Սփյուռքում ստեղծվեցին բազմաթիվ հայրենակցական կազմակերպություններ, նրանց ջանքերով տպագրվեց Մեծ եղեռնի մասին ահռելի փաստական նյութ՝ վավերագրեր, աշխատություններ, հուշեր և այլն:

Երրորդ փուլ կարելի է համարել Երկրորդ աշխարհամարտից հետո մինչև 1965 թվականն ընկած քսանամյակը: Այդ փուլի սկզբնաշրջանում Խորհրդային Միությունը Հայաստանի ու Վրաստանի անունից 1945 թ. ամռանը Պոտսդամի կոնֆերանսում բարձրացրեց հանիրավի Թուրքիային մնացած հայկական ու «վրացական» հողերի վերադարձի հարցը: Թեպետ խնդիրն ի սկզբանե հանդիպեց ԽՍՀՄ նախկին դաշնակիցների, հատկապես ԱՄՆ-ի և Անգլիայի կոշտ հակազդեցությանն ու նրանց մեղքով վիժեցվեց, այնուամենայնիվ այն սփյուռքահայության աննախադեպ աշխուժացման լուրջ ազդակ հանդիսացավ:

Հայկական հարցը քննարկելու, արևմտահայ տարածքները Խորհրդային Հայաստանին վերադարձնելու պահանջով բազմաթիվ դիմումներ հղվեցին նորաստեղծ Միավորված ազգերի կազմակերպությանը, մեծ տերությունների ղեկավարներին, ստեղծվեցին մի շարք սփյուռքահայ հաստատություններ, հրավիրվեցին համահայկական համաժողովներ, սկսեցին գործել Հայ դատի առաջին գրասենյակները: Հայկական տարածքների խնդրի վերաբացումը յուրահատուկ ազդակ հանդիսացավ հայերի աննախադեպ հայրենադարձության համար: Եվ վերջապես, այդ ժամանակաշրջանում՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ին, ՄԱԿ-ի կողմից ընդունվեց հայտնի հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինի հեղինակած բանաձևը ցեղասպանության վերաբերյալ, որում գենոցիդ երևույթը բնութագրելիս հեղինակը հիմնականում նկատի էր առել այն ամենը, ինչ Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի էր ունեցել հայ ժողովրդի հետ<sup>3</sup>:

Ցավոք, պայմանավորված այդ փուլում Թուրքիայի նկատմամբ խորհրդային նոր ղեկավար Նիկիտա Խրուշչովի քաղաքական ուղեգծի փոփոխությամբ (ԽՍՀՄ-ը 1953 թ. մայիսի 30-ին հանդես եկավ հայտարարությամբ, որ այլևս տարածքային պահանջ չունի Թուրքիայի Հանրապետությունից), հայությունը խոր հիասթափություն ապրեց:

Հայ դատի միջազգային պայքարը նոր՝ **Չորրորդ փուլ** թևակո-

---

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս Yair Auron: Israel and the Armenian Genocide, Maba, Tel Aviv, 2005, “Конвенция о предупреждении преступления геноцида и наказания за него”. Права человека. Сборник международных договоров, том I (часть вторая). Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 1994, с. 780-785.

խեց 1965 թ.՝ Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի կապակցությամբ Ուրուգվայի խորհրդարանի կողմից հատուկ բանաձևի ընդունումով: Շուտով պետական մակարդակով եղեռնը դատապարտեցին Կիպրոսի ու Արգենտինայի, ապա նաև՝ Ռուսաստանի ու Հունաստանի խորհրդարանները: 1998 թվականից, երբ Հայաստանի Հանրապետությունը Մեծ եղեռնի հարցը դարձրեց իր արտաքին քաղաքականության բաղադրամաս, սկսվեց խնդրի միջազգային ճանաչման հաղթարշավը. Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևեր ընդունեցին Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Լիբանանը, Շվեդիան, աշխարհի բազմաթիվ քաղաքապետարաններ, ԱՄՆ-ի տասնյակ նոր նահանգներ և այլն: Մինչև Ցեղասպանության 100-րդ տարելիցն այդ երկրների թիվը մոտեցավ երեք տասնյակին:

Խնդրի միջազգայնացման հեռանկարից անհանգստացած՝ թուրքական քաղաքական ու «գիտական» շրջանակները դրան արդեն 1965 թվականից արձագանքեցին և որդեգրեցին ժխտողական քաղաքական ուղեգիծ, այն է՝ նման բան Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի չի ունեցել, և հայկական կողմը քաղաքական նկատառումներով կեղծում է իրականությունը:

Շուտով հայկական գիտաքաղաքական շրջանակները, որոնց գործունեությունը մեծապես աշխուժացավ Հայոց մեծ եղեռնի 50-րդ տարելիցի կապակցությամբ ինչպես հայրենիքում, այնպես էլ Միջուղքում, «մոռանալով» իրենց պահանջատիրական պայքարը, աստիճանաբար ներքաշվեցին թուրքական մերժողականության դեմ պայքարի ոլորտ: Փաստորեն բռնազավթված հայրենիքը վերադարձնելուն նպատակաուղղված ռազմավարական պայքարը ժամանակի ընթացքում ակամայից ստորադասվեց ժխտողականության դեմ մղվող պայքարի մարտավարությանը: Արդյունքում ասպարեզ իջած մերժողականության դեմ գործադրած ջանքերն այդպես դարձան հայության վերջին կեսդարյա պայքարի «մեխը»:

Ընդ որում՝ այդ բնագավառում կարևորելով երրորդ կողմի անաչառ մոտեցումը՝ մենք պայքարի միջոց դարձրինք հատկապես զանազան երկրների խորհրդարանների, միջազգային կազմակերպությունների կողմից հայանպաստ բանաձևերի ընդունման մարտավարությունը: Այսպես, հակառակ այն հանգամանքին, որ Հայ դատի համար պայքարի վերջին՝ չորրորդ փուլն ամենաբուռն ու ընդգրկուն ժամանակաշրջանն էր, պահանջատիրության պայքարը

վերածվեց ճանաչման համար պայքարի: Պատահական չէ, որ մեզանում «ճանաչում» եզրաբառը զգալիորեն դուրս մղեց «հատուցում» եզրույթը և փաստորեն բովանդակագրվեց Հայ դատի գաղափարը: Դրանում կհամոզվենք, երբ փորձենք վերլուծել վերջին 50 տարվա մեր պայքարի արդյունքները՝ արդեն փաստորեն ոչ թե հատուցման, այլ ճանաչման բնագավառում: Այդ նպատակով անդրադառնանք Հայոց ցեղասպանությունը ճանաչած մի շարք երկրների խորհրդարանական որոշումներին և փորձենք դրանք գնահատել հատուցման հասնելու տեսանկյունից:

Նախ՝ նկատենք, որ վերջին կես դարի ընթացքում Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ ընդունված խորհրդարանական այդ փաստաթղթերն իրենց իրավական կարգավիճակով նույնական չեն: Դրանք կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝ հայտարարություն-հռչակագրեր, բանաձև-որոշումներ և օրենքներ:

Հայտարարությունները, թերևս, իրենց իրավական ուժով ամենաթույլն են և, որպես կանոն, միայն արձանագրում են տվյալ երկրի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման փաստը, այդ կապակցությամբ ցավակցում հայ ժողովրդին կամ ապրիլի 24-ը հայտարարում եղեռնի զոհերի հիշատակի օր: Բանաձև-որոշումները, մեր կարծիքով, բովանդակային առումով շատ չեն տարբերվում հայտարարություններից, սակայն իրավական առումով երևի թե ավելի կարևոր փաստաթղթեր են: Օրենքները, անշուշտ, իրավական լուրջ փաստաթղթեր են, քանի որ դրանց ընդունումով Հայոց ցեղասպանության մերժողականության համար այդ երկրներում նախատեսվում է քրեական պատիժ: Բայց վերջին դեպքում ևս, հաշվի առնելով Հայոց ցեղասպանությունը հրապարակավ մերժող թուրք դիվանագետ Դոդոյ Փերենջեքի գործի կապակցությամբ շվեյցարական դատարանի խուսափողական պահվածքը, կարելի է պնդել, որ օրենքների ընդունումից նույնպես առանձնապես ակնկալիքներ չպետք է ունենալ, քանի որ հատուցման հասնելու տեսանկյունից դրանք որևէ արդյունք չեն կարող ապահովել:

Հայոց ցեղասպանության կապակցությամբ ընդունված փաստաթղթերի մեծագույն մասը հայտարարություններ են կամ բանաձևեր: Այսպես՝ Ուրուգվայի սենատի ու ներկայացուցիչների պալատի՝ 1965 թ. ապրիլի 20-ի հռչակագրում ապրիլի 24-ը հայտարարվում է «Հայ նահատակների հիշատակի օր», և այն ազգությամբ



հայերի համար դառնում է ոչ աշխատանքային<sup>4</sup>: Փաստաթղթում ոչ միայն չի նշվում հայերի հայրենագրվման մասին, այլև անգամ 1915 թ. դեպքերը չեն որակվում որպես ցեղասպանություն:

Գրեթե նույն բովանդակությունն ունեն Արգենտինայի Սենատի 1993 թ. մայիսի 5-ի<sup>5</sup>, Հունաստանի Խորհրդարանի 1996 թ. ապրիլի 26-ի բանաձևերը և հուլիսի 10-ին Հունաստանի նախագահ Կ.Ստեֆանոպոլոսի ստորագրած հռչակագիրը՝ միայն այն տարբերությամբ, որ այդ փաստաթղթերում գործածվում է «ցեղասպանություն» բառը<sup>6</sup>:

Հետագա տարիներին ընդունված նույնատիպ, այդ թվում՝ միևնույն երկրի կողմից արդեն քանիերորդ անգամ ընդունված փաստաթղթերի մեծ մասում շեշտադրություններն ավելի հստակեցվում են. ցեղասպանության հանգամանքն այլևս կասկած չի հարուցում, երիտթուրքերի կատարած ոճրագործության և դրա շարունակությունը հանդիսացող ժխտողականության գնահատականներն ավելի խիստ են դառնում և այլն: Օրինակ. եթե Լիբանանի Խորհրդարանի 1997 թ. ապրիլի 3-ի բանաձևը 1915 թ. դեպքերը գնահատում է որպես «աղետ», ապա 2000 թ. մայիսի 11-ի բանաձևում դրանք գնահատվում են որպես «ցեղասպանություն»<sup>7</sup>:

Այդուհանդերձ, դրանք իրավական առումով կշիռ չունեն: Պատահական չէ, որ անգամ Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից երեք անգամ՝ 1998, 2000 և 2001 թվականներին ընդունված բանաձևերը, որոնք ընդունվել են երկարատև ու բուռն քննարկումներից հետո, պարունակում են սուսկ միանման երկու նախադասություններ: Առաջինում և երկրորդում միայն մեկ նախադասությամբ նշվում է. «Ֆրանսիան հրապարակավ ճանաչում է հայերի 1915 թ. ցեղա-

---

<sup>4</sup> Legislative Power. Law № 13926. Senate chambers in Montevideo, the 20th of April, 1965. Martin R. Echegoyen, President. Jose Pastor Salvanach, Secretary.

<sup>5</sup> Number of Resolution: 1554/92, S-92-1554: Mario A. Losada, [http://www.genocide-museum.am/rus/Argentina\\_Senate\\_Resolution\\_1993.php#sthash.3KR0FHS4.dpuf](http://www.genocide-museum.am/rus/Argentina_Senate_Resolution_1993.php#sthash.3KR0FHS4.dpuf)

<sup>6</sup> Hellenic Parliament Resolution 23 97/1996 (A'80). International Affirmation of the Armenian Genocide; Armenian National Institute, Washington, DC. USA. Տե՛ս նաև՝ <http://www.armenian-genocide.org/affirmati-on/156/current category.7>.

<sup>7</sup> International Affirmation of the Armenian Genocide. Armenian National Institute. Washington, D. C U.S.A. Տե՛ս նաև՝ <http://www.armenian-genocide.org/affirmation/resolution/163.html>

Հմմտ. Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, т. 2, ч. 1, М., 2003, էջ 736, 807.

սպանությունը»<sup>8</sup>: Դրանց միջև տարբերությունն այն է, որ առաջինը «օրինագիծ» է, երկրորդը՝ «օրենք»: Համապատասխանաբար՝ երրորդ փաստաթուղթը, վերոհիշյալ նախադասությունը տառացիորեն կրկնելուց հետո, արձանագրում է. «Սույն օրենքը պետք է գործադրվի որպես պետական օրենք»<sup>9</sup>: Հետևելով Ֆրանսիայի լակոնիկ ոճին՝ Կանադայի Համայնքների պալատն իր՝ 2004 թ. ապրիլի 21-ի բանաձևում կրկնեց. «Պալատը ճանաչում է հայերի 1915 թ. ցեղասպանությունը և դատապարտում է այդ ոճրագործությունը որպես հանցագործություն մարդկության դեմ»<sup>10</sup>:

Համանման ոճը, ցավոք, նկատվում է հետագայում ընդունված այլ խորհրդարանական բանաձևերում (Նիդեռլանդներ, Իտալիա, Շվեյցարիա և այլն), որտեղ, որպես կանոն, տեղի ունեցած ցեղասպանության վայրը ոչ թե Հայաստանն է, այլ Օսմանյան կայսրությունը կամ «Արևելյան Անատոլիան»<sup>11</sup>, առանց եղեռնի հետևանքները վերացնելու՝ հայ-թուրքական հաշտեցման պահանջն է, միայն բարոյապես հայությանն աջակցելը և այլն:

Թուրքական ժխտողականության դեմ պայքարում և հայ ժողովրդին բարոյական աջակցություն ցուցաբերելու հարցում բնավ

---

<sup>8</sup>Assemblée Nationale de France. Session ordinaire 1997-1998. Loi no 140. Adoptée 29 Mai 1998.://www.genocide-museum.am/rus/France\_National\_Assembly\_Law.php# sthash.oTbHmjHT.dpuf. Հմմտ.՝ Le Senat Nationale de France N 22. Session ordinaire de 2000-2001. Proposition deloi. Adoptee 7 Novembre 2000.

Հմմտ. “Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий”. Т. 2, ч. 1, М., 2003, с. 784, 814, 818.

<sup>9</sup> Loi no 2001-70 du 29 janvier 2001 relative a la reconnaissance du génocide arménien de 1915(1). Travaux preparatoires: loi no 2001-70. Senat: Proposition de loi no 60 (2000—2001). Discussion et adoption le 7 novembre 2000. Assemblée nationale: Proposition de loi, adoptee par le Senat, no 2688.

Տե՛ս նաև [http://www.genocide-museum.am/rus/France\\_Law.php# sthash.89x4Hfd2.dpufdpuf](http://www.genocide-museum.am/rus/France_Law.php# sthash.89x4Hfd2.dpufdpuf)

<sup>10</sup> “Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий”. Ред., сост. и автор комментария профессор Ю.Г.Барсегов. Т. 2, ч. 2, М., 2005, с. 53).

<sup>11</sup> Օրինակ՝ Արևմտյան Հայաստանի փոխարեն Կանադայի Սենատի՝ 2002 թ. հունիսի 13-ի բանաձևում գտնում ենք Արևելյան Անատոլիա, այսինքն՝ Արևելյան Արևելք ասված տխմար բառակապակցությունը (տե՛ս Գеноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Сост., автор предисловия и комментария Ю.Г.Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, с. 858).

չթերագնահատելով վերոհիշյալ փաստաթղթերի նշանակությունը՝ միաժամանակ մատնանշենք, որ դրանք Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման, մասնավորապես հատուցման խնդիրն առաջ մղելու տեսանկյունից, ցավոք, իրավական կշիռ չունեն:

Այդուհանդերձ ուշադիր քննության դեպքում նկատվում է, որ առանձին երկրների կողմից ընդունված փաստաթղթերում Հայոց ցեղասպանության վերաբերյալ գնահատականները բովանդակային առումով ավելի համարձակ են, իրավական հարթության վրա՝ առավել ճշգրիտ ու կազմված են մասնագիտական խորությամբ ու պատշաճ մակարդակով: Դրանցում առկա են այնպիսի կարևոր ձևակերպումներ, ինչպիսիք են թուրքերի իրականացրած Հայոց ցեղասպանության աշխարհագրական արեալի՝ հայերի հայրենիք Հայաստանի մատնանշումը և հայության ոտնահարված իրավունքները վերականգնելու անհրաժեշտությունը: Համառոտ անդրադառնանք այդ բանաձևերին:

Հատկանշական է, որ ի սկզբանե՝ դեռ 1915 թ. մայիսի 24-ին, Անտանտի երկրների կողմից ընդունված համատեղ հայտարարության մեջ<sup>12</sup> հստակ նշվում է, որ սկսված հայկական կոտորածներն ընթանում են Հայաստանում: Դա հասկանալի է, քանի որ դեռ չէր ավարտվել հայերի հայրենագրկման գործընթացը, և Հայաստանը հիմնականում հայաբնակ էր:

Ուշագրավ է, որ Մեծ եղեռնից հետո ինչպես խորհրդարանական, այնպես էլ իրավական այլ փաստաթղթերում «Հայաստան» բառի գործածությունը դառնում է հազվադեպ: Բայց 1974 թ. թուրքական վայրագ ներխուժմանը ենթարկված Կիպրոսում Խորհրդարանի Ներկայացուցիչների պալատի պատգամավորները կարողանում են հայերի հայրենագրկման ու իրավունքների վերականգնման գաղափարը 1982 թ. ապրիլի 29-ին իրենց ընդունած բանաձևում արտացոլել դիվանագիտորեն, բայց միաժամանակ՝ շատ հստակ, քանի որ այդ ցեղասպանությունը «...հայերին զրկել է իրենց հին հողերից», իրենք «գորակցում են հայ ժողովրդի անկապտելի իրավունքների ամբողջական վերականգնմանը»<sup>13</sup>: Պարզ է, որ ամբողջական իրա-

---

<sup>12</sup> Տե՛ս վերևում մեր կողմից հիշատակված այդ փաստաթղթի համապատասխան ընդգծումը:

<sup>13</sup> International Affirmation of the Armenian Genocide. Armenian National Institute. Washington, D. C U.S.A. Տե՛ս նաև՝ <http://www.armenian-genocide.org/Affirmation->

վունքների մեջ հատակ հասկացվում է նաև հայրենիքի նկատմամբ իրավունքը, առավել ևս, որ վերնում խոսվում է կորցրած հայկական հին հողերի մասին:

Միջազգային մակարդակով Հայոց ցեղասպանության հարցում առկա լուծությունը խախտեց Եվրախորհրդարանը: Թուրքիայի մուտքը Եվրամիություն փակելու նպատակով այս կազմակերպությունը 1987 թ. հունիսի 18-ին իր ընդունած ընդարձակ բանաձևով «հիշեց» մոռացված Հայ դատը: Այդ հեղինակավոր կառույցի մեջ մտնելու համար, ի թիվս այլ հարցերի, թուրքական իշխանություններից պահանջվում էր ճանաչել ու դատապարտել Հայոց Մեծ եղեռնը: Փաստաթղթում նշվում էր, որ «Թուրքական պետությունը մերժում է ցեղասպանության մեղադրանքը որպես անհիմն և դրանով իսկ զրկում է հայ ժողովրդին իր սեփական պատմության իրավունքից:

Մինչև այժմ պատմականորեն ապացուցված հայկական ցեղասպանությունը չի ենթարկվել քաղաքական դատապարտման և չի ստացել իր համապատասխան հատուցումը»<sup>14</sup>: Ինչպես տեսնում ենք, Թուրքիային անելանելի վիճակի մեջ դնելու նպատակով Եվրոպան հիշեցնում էր հատուցման անհրաժեշտությունը:

Սակայն միաժամանակ, իրենց նատոյական դաշնակցին չվշտացնելու համար, նույն փաստաթղթում Եվրախորհրդարանի անդամ-պետությունները հավելում էին վերոհիշյալին տրամագծորեն հակառակ այլ պնդում. թեև 1915-1917 թթ. հայերի հետ տեղի ունեցածը լիովին համապատասխանում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 9-ի ցեղասպանությունների վերաբերյալ կոնվենցիայի դրույթներին, այնուամենայնիվ. «... ներկայիս Թուրքիան չի կարող պատասխանատվություն կրել **Օսմանյան կայսրությունում** (ընդգծումն իմն է- Ա.Մ) հայ ժողովրդի ողբերգության համար ... և չ քաղաքական, ոչ իրավական կամ նյութական պահանջ չի կարող հետևել ներկայիս Թուրքիայի համար այդ պատմական իրադարձությունը որպես ցեղասպանություն ճա-

---

[detail.html](#)

<sup>14</sup> “Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий”. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария Ю.Г.Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, с. 701.

նաչելու փաստին»<sup>15</sup>։ Եթե ասվածին էլ ավելացնենք, որ փաստաթուղթը նաև խստորեն դատապարտում է հայ նորօրյա ազատամարտի վրիժառուական գործողությունները թուրքերի նկատմամբ՝ դրանք որակելով որպես ասիական, պարզ կդառնա, որ այս բանաձևն իրականում քաղաքական խաղաթուղթ է Եվրոպայի ձեռքին թուրքերի դեմ, որքան էլ մի մասով ներառում է ցեղասպանության դիմաց հատուցելու պահանջ։

1988 թ. փետրվարից ծավալված Արցախյան ազատագրական շարժման ընթացքում ժողովրդական զանգվածների ճնշման տակ Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհուրդն անդրադարձավ Հայոց ցեղասպանությանը և նոյեմբերի 22-ին ընդունած բանաձևով դատապարտեց Հայոց հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, տեղի ունեցած այդ ոճրագործությունը<sup>16</sup>։ Նման ճշգրիտ՝ հայրենի հողում ցեղասպանության ենթարկվելու վերաբերյալ ձևակերպումով հատուկ կետ մտցվեց նաև այնպիսի կարևոր իրավական փաստաթղթում, որպիսին Հայաստանի անկախության հռչակագիրն էր՝ ընդունված Գերագույն խորհրդի կողմից 1990 թ. օգոստոսի 23-ին<sup>17</sup>։

Վերջին քառորդ դարի ընթացքում Հայոց ցեղասպանության վերաբերյալ ընդունված շուրջ քսան բանաձևերում միայն մի քանիսում կարելի է գտնել թեզեր, որոնք տարածքային հատուցման առումով կարող են որոշակի իրավական կոլման հանդիսանալ։ Դրանց մեջ առանձնակի նշանակություն ունի Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի՝ 1995 թ. ապրիլի 14-ի որոշումը<sup>18</sup>, որը կազմվել է Բարձր մասնագիտական մշակման արդյունքում։ Միաձայն ընդունված այդ բանաձևում հստակ նշվում է՝ Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովը դատապարտում է անհերքելի փաստերով ապացուցված Հայոց ցեղասպանությունը, որը տեղի է ունեցել «Արևմտյան Հայաստանի (ընդգծումն իմն է - Ա. Մ.) տարածքում 1915-1922 թվականներին»<sup>19</sup>։ Ընդ որում՝ Արևմտյան Հայաստանի գաղափարը փաստաթղթում կրկնվում է և ընդգծվում, որ «իր պատ-

---

<sup>15</sup> Նույն տեղում։

<sup>16</sup> Բարսեղյան Լ., Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003 թթ.), էջ 50։

<sup>17</sup> Տե՛ս [www.gov.am/am/independence/](http://www.gov.am/am/independence/)

<sup>18</sup> См. Собрание законодательства РФ, Москва, 1995, N 17, с. 1497, Ведомости Федерального Собрания РФ, Москва, 1995, N 14, с. 1024.

<sup>19</sup> Նույն տեղում։

մական հայրենիքում եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումն իրականացվել է Ռուսաստանի փլուզման համար պայմաններ ստեղծելու նպատակով»<sup>20</sup>:

Վերոնշյալից հետևում է, որ Ռուսաստանի օրենսդիրների կարծիքով հայերը ոչ միայն ենթարկվել են էթնիկ բնաջնջման, այլև հայրենագրվել են: Կարևոր է, որ բանաձևի հեղինակները փաստաթուղթը կազմել են ցեղասպանության վերաբերյալ միջազգային հայտնի կոնվենցիաների դրույթների ոգուն և տառին հավատարիմ: Հետևաբար, Ռուսաստանի Դաշնության այս բանաձևը կարևոր իրավական փաստաթուղթ է՝ ի լրումն Խորհրդային Ռուսաստանի կառավարության ժողովրդի, 1917 թ. դեկտեմբերի 29-ի «Թուրքահայաստանի մասին» հռչակագրի, որտեղ ևս փաստվում էր հայերի իրավունքն Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Այլ հարց է, թե այդ մասին որքանով է իրագեկված ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ և ռուս հասարակայնությունը:

Ցավոք, իրավական հստակ, ոչ հռչակագրային բնույթի ձևակերպումներով բանաձևեր հետագայի խորհրդարանական որոշումներում մենք չենք հանդիպում: Թերևս բացառություն է Սլովակիայի Խորհրդարանի որոշումը՝ ընդունված 2004 թ. նոյեմբերի 30-ին: Այս դեպքում ևս դրսևորվում է փաստաթղթի հեղինակների բարձր պրոֆեսիոնալությունը: Նրանում սլովակ խորհրդարանականներն ընդգծում են, որ թուրքերը հայերին ցեղասպանության են ենթարկել ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլ նաև Արևելյան Հայաստանում, որտեղ ներխուժել են 1918 թ.: Թուրքերի ցեղասպան քաղաքականության հետևանքով «Մինչև 1923 թ. ամբողջ Փոքր Ասիայի և պատմական Արևմտյան Հայաստանի տարածքում (ընդգծումն իմն է - Ա.Մ.) բնաջնջվել է հայ բնակչությունը»<sup>21</sup>: Սլովակիայի Խորհրդարանը միաժամանակ դատապարտում է Թուրքիայի ղեկավարության քաղաքականությունը՝ Կիպրոսը բռնազավթելու, Հայոց ցեղասպանությունը ժխտելու, Հայաստանը շրջափակելու, պոլսահայերի իրավունքները մշտապես ոսնահարելու համար:

Այսպիսով, տարբեր երկրների խորհրդարաններում Մեծ

---

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> “Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий”. Сост.,- автор предисловия и комментария Ю.Г.Барсегов, т. 2, ч. 2, М., 2005, с. 60-61).

եղեռնի հարցի վերաբերյալ քննարկումների գործընթացի ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ սեփական հայրենիքում բնաջնջվելու վերաբերյալ ձևակերպումը, բացառությամբ Կիպրոսի, Ռուսաստանի, Սլովակիայի խորհրդարանների, մասամբ նաև Եվրախորհրդարանի բանաձևերում, ամենայն հավանականությամբ, միտումնավոր հանվել է կամ ի սկզբանե տեղ չի գտել այդ բանաձևերում՝ տարածքային հատուցման հարցում միջազգային պատասխանատվությունից իրենց երկրներին «ազատելու» նպատակով, հանգամանք, որը նշանակում է համաշխարհային հանրության կողմից 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրում կնքված դաշնագրից հրաժարվելու փորձ:

Ներկայումս, երբ Հայոց ցեղասպանության խնդիրը փաստորեն դադարել է զուտ ճանաչման խնդիր լինելուց և փոխադրվել իրավաքաղաքական դաշտ, հայության գործունեության առանցքը միմիայն պետք է կազմի իրավաքաղաքական դաշտում հայության իրավունքն իր հայրենիքի նկատմամբ փաստող միջազգային փաստաթղթերի ընդունման մարտավարությունն ու ռազմավարությունը<sup>22</sup>:

*ASHOT MELKONYAN (ARMENIA)*

## **THE PROCESS OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE AND THE ISSUE OF RESTITUTION**

The difficult and unequal struggle of Armenia and the Armenian people against the Turkish denial has ended with the victory of the Armenian side. But in that struggle Armenianness overlooked one vital factor which is

---

<sup>22</sup> Արդեն կարելի է ուրախությամբ արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության բարձրագույն պետական մարմիններն իրենց ընդունած փաստաթղթերում (2015 թ. հունվարի 29-ի Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիր, ՀՀ Ազգային ժողովի՝ 2015 թ. ապրիլի 21-ի հայտարարություն և այլն) ճանաչման գաղափարին զուգընթաց, հստակ նշում են ցեղասպանության հետևանքով հայրենիքում հայերի հայրենազրկման իրողությունը և անուղղակիորեն նաև խնդիրը իրավաքաղաքական դաշտ տեղափոխելու, այն է՝ դատական կարգով հատուցման հասնելու անհրաժեշտությունը: Այդ ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ վերջապես ձևավորվում է համահայկական ու պետական հայեցակարգ Հայոց ցեղասպանության խնդրի վերաբերյալ:

important for achieving its ultimate goal in the issue of territorial restitution.

In parliamentary documents of about 30 countries [with the exception of the Resolution (where is mentioned Western Armenia) by the State Duma of Federal Assembly of the Russian Federation (April 14, 1995)] the Armenian Genocide in the Ottoman Empire has been condemned without being pointed out in them the reality that along with the physical extermination on the ethnic ground, the Armenian nation was simultaneously subjected to dispossession (i.e. the patricide perpetrated against the Armenian nation) of its Homeland.

The study of the process of the debates on the issue of the Armenian Genocide in the parliaments of different countries brings to a conclusion that the formulation about the Armenians being annihilated in their own Homeland tendentiously was excluded or initially was not included in those resolutions with the purpose of “releasing” their countries from international responsibility in the issue of territorial restitution.

Currently, when the issue of the Armenian Genocide, in fact, has been ceased to be solely the problem of recognition, the core of the activities of all Armenians must merely be in the legislative-political field the tactics and strategy of adoption of international documents introducing the right of the Armenian nation to its Homeland (Western Armenia and Cilicia).

### *ՌՈՒԲԵՆ ՍՍՖՐՍՍՅԱՆ (ՀԱՅՍՍՏԱՆ)*

#### **ԱՆՏԱՆՏԻ ԵՐԵՔ ԵՐԿՐՆԵՐԻ՝ 1915 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐԶԱԿԱՆ ՊԱՏԱՄԻԱՆԸ**

1915 թ. մայիսին Անտանտի երեք տերությունները՝ Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, շուրջ մեկամյա նախապատրաստական աշխատանքից և քննարկումներից հետո հանդես եկան օսմանյան Թուրքիայի իշխանությունների կողմից իրականացվող հայ ժողովրդի զանգվածային ցեղասպանությունը խստագույնս դատապարտող համատեղ պաշտոնական Հայտարարա-



գրով<sup>1</sup>: Այն իրավական հիմք էր ստեղծում՝ այդ ծանրագույն հանցագործության հեղինակներին պատժելու համար, քանի որ ընդգծվում էր, որ դաշնակիցների կառավարությունները «հայկական կոտորածների» համար անհատապես պատասխանատու են ճանաչում «օսմանյան կառավարության բոլոր անդամներին»<sup>2</sup>:

Հայտարարագրի հրապարակումը տեղի ունեցավ մայիսի 23-24-ին: Մայիսի 23-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության մամուլի գրասենյակը նրա անգլերեն տարբերակն ուղարկեց բրիտանական լրագրերի խմբագրություններին՝ հաջորդ օրվա առավոտյան լրագրերում տպագրելու համար<sup>3</sup>: Ֆրանսերեն տեքստը ստացավ ավելի լայն տարածում, քանի որ այն մայիսի 24-ին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության կողմից ուղարկվեց «Հավաս» հեռագրական գործակալությանը, ինչը հնարավորություն տվեց տարածելու այն նաև հեռագրային կապուղիների միջոցով<sup>4</sup>:

Հայտարարագիրն ունեցավ զգալի ներգործություն ինչպես Թուրքիայի, այնպես էլ Գերմանիայի կառավարությունների վրա: Իհարկե, թուրքական իշխանությունները չիրաժարվեցին ցեղասպան քաղաքականությունից, քանի որ որոշել էին՝ օգտվելով պատերազմական դրությունից և այն հանգամանքից, որ Անտանտի երկրները հնարավորություն չունեին դիվանագիտական միջոցներով ներագդելու իրենց վրա: Գերմանիայի արտաքին գործերի

---

<sup>1</sup> Հայտարարագրի տեքստը ընդունվել է երեք լեզվով՝ անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն: Նրանց միջև առկա են որոշ տարբերություններ: Տե՛ս այդ մասին. Ազապի Նասիպեան, Բրիտանիա եւ Հայկական Հարցը 1915 – 1923: Պեյրոթ, 1994, էջ 75:

<sup>2</sup> Այս դրույթն առկա է բոլոր երեք լեզուներով հրատարակված տեքստերում: Տե՛ս, օրինակ, անգլերենում. Allies' Stern Warning to Turkey, - The Times, May 24, 1915, - The Times of the Armenian Genocide: Reports in the British Press, Volume 1: 1914-1919, Compiled & Edited by Katia Minas Peltekian, Beirut, 2013, p. 46.

<sup>3</sup> From Foreign Office press office for publication in Monday morning papers (23 May 1915), - British Parliamentary Debates on the Armenian Genocide 1915-1918. Eric Aveybury (foreword), Ara Sarafian (comp., ed. and intro), Princeton and London, 2003, Appendix I, p. 60.

<sup>4</sup> Դեպարտամենտի ծանուցագիրը «Հավաս» գործակալությանը, Հրատապ, Փարիզ, 24-ը մայիսի 1915 թ. - Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում: Հատոր I: Աշխատասիրությամբ Արթուր Պելլերյանի: Առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի: Ֆրանսերենից թարգմանեց Վարուժան Պողոսյանը: Երևան, 2005, էջ 99:

նախարարության արխիվում այդ մասին պահպանվել է գերմանացի դիվանագետի բացառիկ վկայություն, որը որպես հավելում կցված է Հալեպում այդ երկրի հյուպատոսի զեկուցագրին դեսպան Վանգեն-հայմին: Այս փաստաթղթից հետևում է, որ Թալեաթը ինքն է ամենայն հստակությամբ հայտարարել, որ թուրքական իշխանություններն ուշադրություն չեն դարձնելու Անտանտի Հայտարարագրի վրա և լի են վճռականությամբ, օգտվելով պատերազմի առիթից «հիմնովին» մաքրել երկիրը ներքին թշնամիներից՝ «տեղական քրիստոնյաներից, անկախ նրանց դավանական ուղղությունից»<sup>5</sup>:

Սակայն Օսմանյան կայսրության ղեկավարների մոտ վախ առաջացավ, որ համաձայն Հայտարարագրի՝ դաշնակիցները պատերազմի ավարտից հետո կարող են իրենց ենթարկել անհատական պատասխանատվության: Այդ պատճառով ներքին գործերի նախարար և երիտթուրքական կուսակցության փաստացի ղեկավար Թալեաթը, ով այդ հանցավոր քաղաքականության հիմնական նախաձեռնողներից և իրականացնողներից մեկն էր, ձեռնարկեց մի գործընթաց, որի նպատակն էր խուսափել ռճրագործության պատասխանատվությունը միայնակ կրելու հնարավոր հեռանկարից և դրան հաղորդելով հավաքական բնույթ՝ փորձել թաքցնել այն «օրինականության» քողի ներքո: Արդյունքում, հապճեպորեն ընդունվեցին «Տեղահանության օրենքը» մայիսի 27-ին<sup>6</sup> և կառավարության որոշումը հայերին տեղահանելու մասին մայիսի 30-ին<sup>7</sup>: Օսմանյան կայսրության հանցագործ պարագլուխները, ինչպես այդ հատուկ է հանցագործներին, որոշեցին չիրապարակել Անտանտի երկրների Հայտարարագիրը Օսմանյան կայսրությունում և զաղտնի պահել այն իրենց ժողովրդից:

---

<sup>5</sup> Der Konsul in Aleppo (Röbler) an die Botschaft Konstantinopel: Telegraphischer Bericht, Aleppo, den 6. Juni 1915, [Notiz Mordtmann], - Quelle: DE/PA-AA/BoKon/169, Botschaftsjournal: A53a/1915/3451 - Wolfgang & Sigrid Gust (Ed.): [www.armenocide.net](http://www.armenocide.net) A Documentation of the Armenian Genocide in World War I, - [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-06-DE-012](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-06-DE-012)

<sup>6</sup> Տես այդ մասին մեր հետևյալ հոդվածը. Ռուբեն Սաֆրաստյան, Օսմանյան կայսրության 1915թ. «Տեղահանության օրենքը», «Պատմա - բանասիրական հանդես», 2007, 2 (175), էջ 72 - 81:

<sup>7</sup> Տե՛ս այդ մասին մեր հետևյալ հոդվածը. Ռուբեն Սաֆրաստյան, Օսմանյան կառավարության որոշումը հայերի տեղահանության մասին (1915 թ. մայիսի 30), «Հայագիտության հարցեր» հանդես, Երևանի պետական համալսարան, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, 2014, 1, էջ 5 - 19:

Այլ էր Գերմանիայի արձագանքը: Նրա արտաքին գործերի նախարարությունը Հայտարարագիրն ընկալեց որպես Անտանտի կողմից Գերմանիայի դեմ վարվող «քարոզչական պատերազմի» բաղկացուցիչ մաս, ինչը կարող է վնասել իրենց շահերին<sup>8</sup>: Այդ հանգեցրեց նրան, որ գերմանացիները որոշեցին առանց հապաղելու հակահարված տալ Հայտարարագրին հենց «քարոզչական պատերազմի» միջոցներով՝ օգտագործելով Օսմանյան կայսրությանը: Ի տարբերություն թուրքական իշխանությունների՝ որոշվեց Անտանտի երկրների Հայտարարագիրը գերմաներենով հրատարակել, սակայն դրան կցել օսմանյան կառավարության պաշտոնական պատասխանը, որտեղ պետք է հերքվեին Հայտարարագրի դրույթները: Այս մոտեցումը պայմանավորված էր այն մեծ նշանակությամբ, որ Գերմանիան տալիս էր «քարոզչական պատերազմին»<sup>9</sup>:

Այդ էր պատճառը, որ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության պետքարտուղարի տեղակալ Արթուր Ցիմմերմանը արդեն Հայտարարագրի հրապարակման հաջորդ օրը՝ մայիսի 25-ին, հեռագիր հղեց Կ. Պոլսում երկրի դեսպան Հանս Վանգենհայմին՝ պահանջելով, որ նա միջոցներ ձեռնարկի՝ օսմանյան կառավարության պատասխանը նախապատրաստելու համար<sup>10</sup>:

Գերմանական դիվանագիտական փաստաթղթերը վկայում են մի կարևոր փաստի մասին: Պարզվում է, որ օսմանյան կառավարության պաշտոնական պատասխան-հերքումի նախնական տեքստի հեղինակը գերմանացիներն էին՝ ի դեմս Օսմանյան կայսրությունում դեսպան Հ. Վանգենհայմի: Այդ մասին նա գեկուցում էր կանցլեր Բեթմանն Հոլվեյգին<sup>11</sup>: Երբ թուրքերը պատրաստեցին իրենց՝

<sup>8</sup> Տե՛ս այդ մասին. **Donald Bloxham**, *The Great Game of Genocide*, Oxford-New York, 2005, p. 130.

<sup>9</sup> Ինչպես նշում են այդ հարցի հետազոտողները, Առաջին աշխարհամարտի տարիներին Գերմանիան քարոզչությանը ամենամեծ նշանակություն տվող երկիրն էր: Տե՛ս այդ մասին, օրինակ, հետևյալ հոդվածը. Ali Kaşıyugun, Mustafa Çolak, Savaş ve Propaganda: Birinci Dünya Savaşı'nda Alman Propagandası, - *History Studies*, 2014, Volume 6, Issue 5, p. 157-176.

<sup>10</sup> Der Unterstaatssekretär des Auswärtigen Amts (Zimmermann) an die Botschaft Konstantinopel, Erlaß, Berlin, den 25. Mai 1915, Nr. 1020, - Quelle: DE/PA-AA/R14085, Zentraljournal: 1915-A-16924, - Wolfgang & Sigrid Gust (Ed.): [www.armenocide.net](http://www.armenocide.net) A Documentation of the Armenian Genocide in World War I, - [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-05-25-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-05-25-DE-001).

<sup>11</sup> Տե՛ս այդ մասին. Der Botschafter in Konstantinopel (Wangenheim) an den

ավելի մանրամասն պատասխանը, ապա պարզվեց, որ նրանք հիմնականում հետևում են Վանգենհայմի նախնական տեքստին, կամ ինչպես ինքն էր հաղորդում Բեռլին՝ հետևում էր իր կողմից պատրաստված տարբերակի «մտքերի ընթացքին»<sup>12</sup>: Վանգենհայմի կողմից կազմված նախագծի տեքստի ֆրանսերեն թարգմանությունը կցված է Բեռլին ուղարկված նույն զեկուցագրին: Այն անհերքելիորեն վկայում է, որ առաջինը գերմանացիներն էին, որոնք սկսեցին հրապարակայնորեն կեղծել ճշմարտությունը Հայոց ցեղասպանության վերաբերյալ՝ այդպիսով հիմք դնելով արդեն հարյուր տարի սևոտ թուրքական կեղծարարությանը:

Այդ տեսակետից ուշագրավ է գերմանական նախագծի առաջին իսկ նախադասությունը. «Ճիշտ չէ, որ Թուրքիայում՝ պատերազմի սկսվելուց հետո տեղի են ունենում հայերի կոտորածներ...»<sup>13</sup>: Դեսպան Վանգենհայմը գրում էր այս տողերը՝ միտումնավոր անտեսելով իր ենթակայության տակ գտնվող և Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում տեղակայված գերմանական դիվանագետների հաղորդագրությունները, որոնք մանրամասն նկարագրում էին թուրքական իշխանությունների կողմից իրականացվող հայ ժողովրդի զանգվածային կոտորածները<sup>14</sup>:

Գերմանացիները նպաստեցին նաև թուրքական կեղծիքի տարածմանը ողջ աշխարհով մեկ: Այդ նպատակին ծառայեց գերմանական «Վոլֆի» հեռագրական գործակալությունը, որն անմիջապես հաղորդեց օսմանյան կառավարության պատասխանի տեքստը՝ գերմաներեն թարգմանությամբ<sup>15</sup>: Թուրքական պաշտոնական պատասխանը Անտանտի Հայտարարագրին օգտագործվում էր նաև

---

Reichskanzler (Bethmann Hollweg), Bericht, Pera, den 5. Juni 1915, 2 Anlagen, - Quelle: DE/PA-AA/R14086, Zentraljournal: 1915-A-18530, - Wolfgang & Sigrid Gust (Ed.): [www.armenocide.net](http://www.armenocide.net) A Documentation of the Armenian Genocide in World War I, - [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-05-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-05-DE-001).

<sup>12</sup> Ibid.

<sup>13</sup> Ibid., Anlage 2.

<sup>14</sup> Տե՛ս այդ մասին. Vahakn N. Dadrian, German Responsibility in the Armenian Genocide: A Review of Historical Evidence of German Complicity, A Foreword by Roger W. Smith, Watertown, 1996, p. 143.

<sup>15</sup> "Wolff's Telegraphisches Büro" Agenturbericht (Deutschland), Konstantinopel, 4. Juni, - Quelle: DE/PA-AA/R14086, - Wolfgang & Sigrid Gust (Ed.): [www.armenocide.net](http://www.armenocide.net) A Documentation of the Armenian Genocide in World War I, - [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-07-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-07-DE-001)

գերմանացի հրապարակախոսների կողմից, որոնք լծվել էին «քաղաքական պատերազմին» և իրենց աշխատություններում կրկնում էին թուրք կեղծարարներին: Նրանց թվին է պատկանում այդ տարիներին մեծ համբավ ձեռք բերած հրապարակախոս Կարլ Ադոլֆ Բրատերը, ով իր Հայկական հարցին նվիրված գրքույկում լայնորեն օգտագործում էր թուրքական պատասխանը՝ հղելով այն<sup>16</sup>: Ուշագրավ է, որ այդ հրապարակախոսի հեղինակած գրքույկի տեքստը տեղ էր գտել գերմանական դիվանագիտական արխիվում, ինչը վկայում է այն մասին, որ այդ երկրի արտգործնախարարությունն այն օգտագործել է քաղաքական նպատակով<sup>17</sup>: Նշենք, որ գերմանացի ճանաչված հետազոտող Տ. Հոֆմանը բնութագրում է Բրատերին՝ որպես այդ տարիներին Գերմանիայում աչքի ընկնող հակահայ հեղինակներից մեկի<sup>18</sup>:

Օսմանյան կառավարությունն իր՝ Անտանտի Հայտարարագրին տրված պաշտոնական պատասխանը փաստորեն սկսում էր՝ կրկնելով որոշ փոփոխություններով Վանգենհայմի խոսքերը. «Բացարձակ ճիշտ չէ, որ Թուրքիայում տեղի են ունեցել հայերի կոտորածներ...»<sup>19</sup>: Ինչպես տեսնում ենք, թուրքական տեքստում կատարվել են միայն երկու փոփոխություն. ավելացվել է «բացարձակ» բառը, և օգտագործվել է անցյալ ժամանակը՝ դուրս թողնելով աշխարհամարտի մասին Վանգենհայմի կողմից արված հիշատակումը:

Վերը նշված երկու փոփոխությունների նպատակներն ակն-

<sup>16</sup> C. Adolf Bratter, Die armenische Frage, Berlin, 1915, S. 7, S. 8-13.

<sup>17</sup> C. Adolf Bratter: Die armenische Frage, - Quelle: DE/PA-AA/R14089, - Wolfgang & Sigrid Gust (Ed.): [www.armenocide.net](http://www.armenocide.net) A Documentation of the Armenian Genocide in World War I, - [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-12-31-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-12-31-DE-001)

<sup>18</sup> Tessa Hofmann, From Silence to Re-remembrance: The Response of German Media to Massacres and Genocide against the Ottoman Armenians, - Mass Media and the Genocide of the Armenians 2015 : One Hundred Years of Uncertain Representation, Edited by: Stefanie Kappler, Sylvia Kasparian, Joceline Chabot, Richard Godin, London-New York, 2016, p. 93, p. 103, Note 17.

<sup>19</sup> Der Botschafter in Konstantinopel (Wangenheim) an den Reichskanzler (Bethmann Hollweg), Bericht, Pera, den 5. Juni 1915, 2 Anlagen, - Quelle: DE/PA-AA/R14086, Zentraljournal: 1915-A-18530, Anlage 1, - Wolfgang & Sigrid Gust (Ed.): [www.armenocide.net](http://www.armenocide.net) A Documentation of the Armenian Genocide in World War I, - [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-05-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-05-DE-001).

հայտ են. առաջին դեպքում փորձ է արվում «ուժեղացնել» հերքման ներգործության ուժը, իսկ երկրորդ դեպքում ընդհակառակը՝ «թուլացնել» հայկական կոտորածների մասին տեղեկատվության ներգործությունը, տպավորություն ստեղծելով, որ այն վերաբերում է անցյալում տեղի ունեցած իրադարձություններին:

Օսմանյան կառավարությանը հաջողվեց այսքան արագ հրապարակ հանել կեղծիքներով հագեցած իր պատասխանը այն պատճառով, որ օգտագործվեցին այն նյութերը, որոնք արդեն ամիսների ընթացքում հավաքվում էին «Կարմիր գրքի» մեջ, որը պետք է փաստեր Օսմանյան կայսրության պարագլուխների «անմեղությունը»: Այդ մասին է վկայում Թուրքիայի Հանրապետության բանակի գլխավոր շտաբի կողմից հրապարակված մի կարևոր փաստաթուղթ: Խոսքը արտաքին գործերի նախարարության կողմից բանակի փոխիրամանատարին, այսինքն՝ Էնվերին, ուղարկված գրության մասին է: Նրա գոյության մասին պարզ է դառնում արտգործնախարարության կողմից բանակի հրամանատարությանն ավելի ուշ ապրիլի 20-ով թվագրված գրությունից, որտեղ նշվում է, որ արտգործնախարարությունը կրկնում է ավելի վաղ իր կողմից բանակի հրամանատարությանը հասցեագրված խնդրանքը՝ Օսմանյան կայսրության կողմից նախապատրաստվող «Կարմիր գրքի» համար ուղարկել համապատասխան նյութեր<sup>20</sup>: Այդ փաստաթուղթը թվագրված է 1915 թ. փետրվարի 25-ով: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ փաստերը վկայում են այն մասին, որ այդ նույն օրերին երիտթուրքական կուսակցության բարձրաստիճան պատասխանատուներն իրենց ներքին գաղտնի գրագրություններում նշում էին, որ հայերի բնաջնջումն արդեն որոշված է<sup>21</sup>, ապա ակնհայտ է դառնում, որ վերը նշված փաստաթղթերի առաջացումը մաս էր կազմում սկսվող Հայոց ցեղասպանության: Նրա հեղինակները հենց սկզբից հոգ էին տանում իրենց հանցագործությունը քողարկելու մասին...

---

<sup>20</sup> Տե՛ս այդ փաստաթուղթը. T.C. Genelkurmay Başkanlığı: Genelkurmay ATASE ve Genelkurmay Denetleme Başkanlığı yayınları: Arşiv belgeleriyle Ermeni faaliyetleri 1914-1918, Cilt I. Yayına hazırlayan Dr. Öğ. Alb. Ahmet Tetik, Ankara: Genelkurmay Basım Evi, 2005, s. 380

<sup>21</sup> Տե՛ս այդ մասին Արամ Անտոնյանի հրատարակած գաղտնի փաստաթղթերում. Արամ Անտոնյան, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեթ փաշա, Երևան, 1990, էջ 129 - 137:

Իր այդ կեղծիքը օսմանյան արտաքին գործերի նախարարությունը սկզբում ուղարկեց Բեռլինի և Վիեննայի իր դեսպանատներին<sup>22</sup>, իսկ հետագայում նաև այլ մայրաքաղաքներում գտնվող օսմանյան դեսպանատներին՝ պահանջելով, որ նրանք միջոցներ ձեռք առնեն՝ այն տեղական մամուլում հրապարակելու համար:

Օսմանյան արխիվները վկայում են, որ այդ պատասխանի տեքստը ուղարկվել է մասնավորապես Բուլղարիայի և Շվեյցարիայի օսմանյան դիվանագիտական ներկայացուցչություններ: Բուլղարիայի դեսպանատունը, օգտվելով այն հանգամանքից, որ այդ երկրում ուժեղ էին գերմանամետ տրամադրությունները, կարողացավ հրապարակել տալ այն մի շարք բուլղարական լրագրերում<sup>23</sup>:

Շվեյցարական մամուլը հրաժարվեց հրապարակել թուրքական կեղծիքը<sup>24</sup>: Ժնևում տեղակայված օսմանյան գլխավոր հյուպատոսությունը փորձեց նաև Շվեյցարիայում գտնվող ամերիկյան թերթերի թղթակիցների միջոցով օսմանյան կառավարության պատասխանը Անտանտի երեք երկրների Հայտարարագրին ուղարկել

---

<sup>22</sup> Der Botschafter in Konstantinopel (Wangenheim) an den Reichskanzler (Bethmann Hollweg), Bericht, Pera, den 5. Juni 1915, 2 Anlagen, - Quelle: DE/PA-AA/R14086, Zentraljournal: 1915-A-18530, Anlage 1, - Wolfgang & Sigrid Gust (Ed.): [www.armenocide.net](http://www.armenocide.net) A Documentation of the Armenian Genocide in World War I, - [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-05-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-05-DE-001).

<sup>23</sup> Տե՛ս Բուլղարիայում Օսմանյան կայսրության դեսպանի զեկուցագիրը սադրը ազամ (վարչապետ) և արտաքին գործերի նախարար Մայիդ Հալիմ փաշային. Sofya Sefâret-i Seniyyesi - Sadr-ı a'zam ve Hâriciye Nâzırı Devletlü Fahâmetlü Sa'îd Halîm Paşa Hazretlerine, Fî 29 Haziran 915, 3482 325, HR.SYS 2879/33, - T.C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü Osmanlı Arşivi Daire Başkanlığı, [1915 Olaylari, Belgeler, Osmanlı Devleti'nin yaptığı Karşı Propaganda Faaliyetleri, http://www.devletarsivleri.gov.tr/assets/file/1915\\_Olaylari/resim/2600belge/51.PDF](http://www.devletarsivleri.gov.tr/assets/file/1915_Olaylari/resim/2600belge/51.PDF)

<sup>24</sup> Տե՛ս Ժնևի Օսմանյան կայսրության գլխավոր հյուպատոսի զեկուցագիրը արտաքին գործերի նախարարությանը. Devlet-i Aliyye-i Osmâniyye Genevre Başşehbenderliği, Fî 9 Temmuz sene 915, Numara 131-1257, HR. SYS, 2879/38\_1, - T.C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü Osmanlı Arşivi Daire Başkanlığı, 1915 Olaylari, Belgeler, Tehcirin sebepleri ve alınan tedbirler, <http://arsiv.p.yapyonet.com/icerik/531/turk-ve-kurd-halkini-ermen-i-katliamini-organize-etmekle-suc-layan-uclu-ittifakin-iddialarinin-aksi/>. Թուրքիայի Հանրապետության Վարչապետությանը առնթրեք Պետական Արխիվների Գլխավոր վարչության Օսմանյան արխիվի վարչության համացանցային կայքէջում տեղադրված այս փաստաթուղթն անհասանելի է: Բարեբախտաբար, ժամանակին մեզ հաջողվել էր ներբեռնել այն այդ կազմակերպության կայքէջի ավելի վաղ տարբերակից:

ԱՄՆ և այնտեղի մամուլում հրապարակել, սակայն այդ էլ չհաջողվեց<sup>25</sup>:

Հետագայում այդ պատասխանի տեքստը հիմք հանդիսացավ առանձին գրքով հրատարակված ավելի մեծածավալ կեղծիքի համար, որտեղ ավելի հավաստի երևալու համար տեղադրված էին նաև լուսանկարներ<sup>26</sup>:

Ցեղասպանության քաղաքականության հեղինակների և նրանց գերմանացի հովանավորների համատեղ ջանքերով դեռևս 1915 թ. հունիսին լույս աշխարհ եկած, կեղծիքներով հագեցած օսմանյան կառավարության պաշտոնական պատասխանի տեքստը լայնորեն օգտագործվում է նաև հանրապետական Թուրքիայի պատմաբանների կողմից<sup>27</sup> և ծառայում է նույն գերնպատակին՝ խեղաթյուրել իրականությունը Հայոց ցեղասպանության մասին:

*RUBEN SAFRASYAN (ARMENIA)*

## **THE TRIPLE ENTENTE JOINT DECLARATION OF MAY 1915 AND GERMAN-TURKISH RESPONSE**

In a joint Declaration signed on 23-24 May 1915 Russia, Great Britain and France came out with a strong condemnation of the massive massacres of Armenians in the Ottoman Empire.

The paper discusses some issues connected with the response caused by the Declaration in the Turkish and German official circles. Author shows that the initiators of official response of Ottoman Government, which was aimed to falsify the truth about Armenian genocide, were in fact German diplomats.

---

<sup>25</sup> Ibid.

<sup>26</sup> Ermeni komitelerinin âmâl ve harekât-ı ihtilâliyyesi İlân-ı Meşrutiyetten evvel ve sonra, İstanbul, 1332, Aspirations et agissement révolutionnaires des Comités Arméniens avant et après la proclamation de la Constitution Ottomane, İstanbul, 1917.

<sup>27</sup> Կարելի է նշել, օրինակ, Է. Ուրասի գիրքը. Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi. Yeniden gözden geçirilmiş ve genişletilmiş 2. baskı. İstanbul, 1987.



ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ  
ԱՐԴԻ ՓՈԻԼԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.  
ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Հայտնի է, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նոր փուլը սկսվեց 1998 թ. ՀՀ իշխանափոխությունից հետո, երբ այն դարձավ արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը: Այդ գործընթացը XX դարի վերջին և XXI դարի սկզբին ծավալվեց նոր ուժով: ՀՀ-ի մոտեցումը հստակ է. նման ոճի՞րը ոչ թե մի ժողովրդի ողբերգություն է, այլ մարդկության դեմ կատարված ծանրագույն հանցանք: Դրա անպատժելիությունը խրախուսել է հետագա նման ողբերգությունները: ՀՀ-ի նման դիրքորոշումը լայն ճանաչում և աջակցություն է ստացել տարբեր երկրների ու միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված բանաձևերում:

Եթե մինչև Հայաստանի անկախությունը Հայոց ցեղասպանությունը ճանաչել ու դատապարտել էին ընդամենը մի քանի երկրներ ու միջազգային կազմակերպություններ, ապա 1990-ական թթ. դրանց թիվն ավելացավ: Ռուսաստանը, Կանադան, Կիպրոսը, Հունաստանը, Բելգիան, Լիբանանը, Արգենտինան և այլն, իրենց խորհրդարանների որոշումներով ճանաչեցին ու դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը: 1998 թ. ապրիլի 24-ին Եվրախորհրդարանի խորհրդարանական վեհաժողովը Հայոց ցեղասպանությունը համարեց XX դարի առաջին ցեղասպանություն: 2000 թ. նոյեմբերի 10-ին Վատիկանն իր հայտարարության մեջ Հայոց ցեղասպանությունը համարեց XX դարի հետագա բոլոր ցեղասպանությունների սկիզբ:

2000-ական թթ. նման որոշումներ կայացրել են Ֆրանսիան (29 հունվարի 2001 թ. օրենք)<sup>1</sup>: Գերմանիան (խորհրդարանի բանաձև՝ 15 հունիսի, 2005 թ.), Արգենտինան (2004թ. մարտի 14-ի և 2007 թ. հունվարի 15-ի օրենքներ), Կանադան (Սենատի 2002 թվականի հունիսի 13-ի բանաձև և Համայնքների պալատի՝ 2004թ. ապրիլի 21-ի

<sup>1</sup> См. “Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий”. Т.2, часть 2, сост. и ответственный редактор, докт, юридических наук, профессор Ю. Г. Барсегов, М., стр. 25-63.

բանաձևը), Չիլին (2007թ. հունիսի 5-ի Սենատի բանաձևը), Իտալիան (Ներկայացուցիչների պալատի բանաձև՝ նոյեմբերի 16, 2000 թ.), Լիբանանը (Խորհրդարանի բանաձև՝ մայիսի 11, 2000 թ.) Լիտվան (Ասամբլեայի բանաձևը՝ դեկտեմբերի 15, 2005թ.), Նիդեռլանդները (Խորհրդարանի բանաձևը՝ դեկտեմբերի 21, 2004թ.), Լեհաստանը (Խորհրդարանի բանաձև՝ 19 ապրիլ, 2005 թ.), Սլովակիան (բանաձև՝ 30 նոյեմբերի, 2004 թ.), Շվեդիան (Խորհրդարանի բանաձև՝ 11 մարտ, 2010թ.) Ուրուգվայը (Սենատի և Ներկայացուցիչների պալատի բանաձև և օրենք՝ 26 մարտի, 2004 թ.), Վատիկանը (Նորին Սրբություն Հռոմի Պապ Հովհաննես Պողոս II-ի և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Կաթողիկոսի համատեղ հայտարարությունը՝ 10 հունվար, 2000թ.), Վենեսուելան (Ազգային ժողովի որոշում, հուլիսի 14, 2005 թ.), Միացյալ Նահանգների 46 նահանգները, Բասկերի երկիրը, Կատալոնիան, Բալեարյան կղզիները (Բալանիա), Ուելսը, Շոտլանդիա, Հյուսիսային Իռլանդիան (Մեծ Բրիտանիա), Նոր Հարավային Ուելսը (Ավստրալիա) և այլ երկրներ<sup>2</sup>: Այս փուլի կարևոր առանձնահատկությունն այն է, որ հատկապես մինչև 2004 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում նկատվում էր տվյալ երկրի հայկական համայնքների ազդեցության հանգամանքը: Սակայն Սլովակիայի ճանաչումից հետո սկսվել է մի փուլ, երբ Հայոց ցեղասպանությունը ճանաչող երկրներում հայկական համայնքն այնքան էլ մեծ դերակատարություն չունի, և պետությունները հետևում են մյուս երկրների ժողովրդավարական քայլերին: Հայոց ցեղասպանությունը ճանաչում են պետություններ, որտեղ հայկական Սփյուռքն էլ մեծ չէ, և ճանաչումները լոբբիստական ճնշման արդյունք չեն<sup>3</sup>: Հայոց ցեղասպանության մասին հիշողությունն աստիճանաբար դառնում է եվրոպական հիշողության մի մաս՝ դադարելով միայն մերը լինելուց: Ցեղասպանություն ճանաչող ու դատապարտող երկրներից հատկապես կարևորվում են Թուրքիայի դաշնակից երկրներ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի խորհրդարանների որոշումները, քանզի նրանք ամենամեծ մեղսակցությունն են ունեցել Մեծ եղեռնի իրագործման մեջ:

2015թ. մարտի 3-ին Եվրոպական ժողովրդական կուսակցու-

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 4 մարտի, 2015թ.:

<sup>3</sup> Տե՛ս Է. Մինայան, Առաջիկա տասնամյակը պետք է լինի հատուցում ստանալու պայքարի տասնամյակ, «Երկիր», 29 ապրիլի, 2010, էջ 5:

թյան քաղաքական համաժողովը ընդունել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բանաձև՝ «Հայոց ցեղասպանությունը և եվրոպական արժեքները» վերնագրով, որտեղ վերահաստատել է Հայոց ցեղասպանության և հայ ժողովրդի բռնի տեղահանման փաստը և դատապարտել այն: Բանաձևում ուղղակիորեն նշված է, որ «ԵԺԿ-ն դատապարտում է հայ ժողովրդի հանդեպ ցեղասպանության գործողությունները, որոնք ծրագրվել և մշտապես չարականորեն իրականացվել են Օսմանյան կայսրության և Թուրքիայի այլ ռեժիմների կողմից 1894-1924թթ.: Դրանք են՝ հայրենագրկումը, ոճրագործությունները և էթնիկ գործով պայմանավորված բնաջնջումները, որոնք ուղղված էին հայ բնակչության և նրա մշակութային ժառանգության ոչնչացմանը: Ինչպես նաև ցեղասպանության ժխտումը, պատասխանատվությունից խուսափելու և իրականացված ոճրագործությունները մոռացության մատնելու կամ արդարացնելու փորձերը՝ որակելով դրանք որպես շարունակական հանցագործություն և նոր ցեղասպանություններից խուսափելու միտում»<sup>4</sup>: Բանաձևը կոչ է անում Թուրքիային՝ «...հետևել հետպատերազմական Գերմանիայի կողմից ցուցաբերված բացառիկ շիտակության ու նախաձեռնողականության օրինակին, պատմությունը ընդունելուն և Հայոց ցեղասպանության և դրան հետևող ունեցրկման ներկայիս իրականությունը ճանաչելուն, ինչպես նաև նյութական և բարոյական հատուցումն ապահովելուն՝ իրականացնելով եվրոպական երկրին վայել քաղաքականություն, որը ներառում է պատմական հողերի վերադարձը հայ բնակչությանը, հայ ընտանիքների վերամիավորումից իրենց ազգային օջախներին վերադառնալու և դրանից բխող ճշմարտությանը հասնելու հրամայականի իրագործմանը»<sup>5</sup>, ճանաչել և դատապարտել Օսմանյան կայսրության կողմից կատարված Հայոց ցեղասպանությունը՝ սթափ գնահատելով սեփական պատմությունը և հիշողությունը՝ հարգանքի տուրք մատուցելով մարդկության դեմ կատարված այլ զագրելի ոճրագործությունների զոհերի հիշատակին»<sup>6</sup>:

<sup>4</sup> См. “Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, Документы и комментарий”. Т. 2, часть 1, составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов, Москва, 2003, стр. 723-867.

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

Քանի որ ԵԺԿ-ն ամենախոշոր եվրոպական քաղաքական աջ կենտրոնամետ կուսակցությունն է, որը ներառում է 78 անդամ կուսակցություն 39 երկրներից, եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական խորհրդի նախագահներին, ԵՄ անդամ 11 և եվրոպական 6 այլ պետությունների ու կառավարության ղեկավարներին, Եվրահանձնաժողովի 14 անդամների և Եվրախորհրդարանի ամենամեծ խմբին՝ իր 219 անդամներով<sup>7</sup>, ուստի եվրոպական իշխող քաղաքական ուժի նման աջակցությունը շատ կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության և մեր ժողովրդի համար: Այս բանաձևը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակում մի կարևոր քայլ է ցեղասպանական հանցագործության ժխտողականության դեմ, պատվար՝ նոր ոճրագործ մտահղացումների չեզոքացման համար:

Հայոց ցեղասպանության հանցագործության ժխտման ու քուղարկման նոր դրսևորում պետք է համարել 2014թ. ապրիլի 23-ին Հայոց ցեղասպանության տարելիցի առնչությամբ Թուրքիայի վարչապետ (այժմ՝ նախագահ) Ռեջեփ Թայիբ Էրդողանի հայտարարությունը: Նա, կիրառելով թուրքական քարոզչության մեքենայի բոլորին հայտնի թեզերը՝ զոհին ու դահճին նույն հարթության մեջ դնելը, պատճառահետևանքային կապի խեղաթյուրումը, «պատմական իրականության վերանայման» կոչը, «խոսքի ազատության և պատմության մեջ բազմակարծությունը հարգելու կարևորությունը», Հայոց ցեղասպանությունը Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով «1915թ. պատահած միջադեպ» համարելը և «ընդհանուր ցավ» ներկայացնելը, Թուրքիայի անունից «հայերի թոռներին ցավակցություն հայտնելը», որոնց ծնողները ոչ թե սպանվել են թուրք և քուրդ ոճրագործների կողմից, այլ «մահացել են XX դարի սկզբին»<sup>8</sup>, փորձում է շարունակել ժխտողական քաղաքականությունը, վերափաթեթավորել ուրացումը, խուսափել Հայոց ցեղասպանության համար պատասխանատվությունից՝ այդ դեռևս չպատժված ոճիրը իջեցնելով սովորական չլուծված երկկողմ հակամարտության մակարդակի, որը չի կարող դիմանալ ոչ պատմական փաստարկների, ոչ էլ միջազգային իրավունքի կամ բարոյականության քննությանը:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, 24 ապրիլի, էջ 4:

<sup>8</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 30 հունվարի, 2015, էջ 2:

Ցեղասպանությունն իրականացնողների կամ նրանց ժառանգների կողմից ժխտողականության այլքն ամենամեծ հարվածն է վերապրածների համար: Ինչպես իրավացիորեն ասել է Հոլոքոստը վերապրած Նոբելյան մրցանակակիր Էլի Վիզելը. «Ժխտել – նշանակում է սպանել զոհերին երկրորդ անգամ»: Նրանք, ովքեր ժխտում կամ արդարացնում են տեղի ունեցածը, անուղղակիորեն չեն բացառում ապագայում նույն հանցանքը կրկնելու հավանականությունը:

Այսօր աշխարհը ճանաչում և դատապարտում է այդ ոճիրը, սակայն մեզ համար չափազանց կարևոր է Թուրքիայի կողմից ճանաչումը և սեփական պատմությանն առերեսվելը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը ցույց տվեց, որ հայ-թուրքական հաշտեցումը վերևից չի գալիս: Թուրքական իշխանությունները գնացին պատմության ակնհայտ կեղծման ճանապարհով: 2015թ. Թուրքիայի իշխանությունները հանկարծ որոշեցին, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման գլխավոր օրը՝ ապրիլի 24-ին, պետք է բռնեն Գալիպոլիի ճակատամարտի 100-ամյակը, որի ավարտը նշվում է մարտ ամսին: Իհարկե, սա կատարյալ ցինիզմ էր և հայ ազգի համար խորհրդանշական այդ օրը ձախողելու անհաջող փորձ:

Թուրքիայի նախագահ Էրդողանի կողմից բացահայտ ժխտողականության արտահայտություն էր նաև ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանի հրավերին՝ ներկա գտնվելու Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին, ի պատասխան հակահրավեր ուղարկելը՝ նույն ժամանակում՝ ապրիլի 24-ին, ներկա գտնվելու Դարդանեղի միջոցառման 100-րդ տարելիցին՝ նշելով, որ «Գալիպոլիում կովող հայ զինվորներ էլ կային... միասին ենք պայքար մղել» արտահայտությունը: Սա, իհարկե, նպատակ ուներ շեղելու աշխարհի ուշադրությունը և նվազեցնելու Մեծ եղեռնի մեկդարյա տարելիցի նշանակությունը: Ուստի պատահական չէ, որ ՀՀ նախագահն այն որակեց «Թուրքիայում կայացած անհեռատես և ցինիկ որոշում՝ խմբագրել սեփական պատմությունը՝ կեղծելով դեպքերի ժամանակահատվածն ու օրը (ընդգծումն իմն է- է. Մինասյան) Գալիպոլիի ճակատամարտի տարեդարձը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի օրը նշելու միջոցով»<sup>9</sup>: Իրականում այն սկսվել է մարտի 18-ին և տևել է մինչև 1916թ. հունվարի վերջը, մինչև Գալիպոլիում դաշնա-

<sup>9</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 30 հունվարի, 2015, էջ 2:

կիցների ափհանումը:

Շարունակելով իր միտքը՝ ՀՀ նախագահն ընդգծել է. «Կարծում եմ՝ այդ հարցում պաշտոնական Անկարան վատ ծառայություն մատուցեց ինքն իրեն, որ երբ ստացա այդ անպարկեշտ հրավերը, անհրաժեշտ համարեցի անմիջապես և հանրայնորեն պատասխանել Ռեջեփ Էրդողանին... Կարծում եմ, որ իմ պատասխանը և դրան հետևած միջազգային և Թուրքիայի ներսում տեղ գտած արձագանքներն ապացուցում են այդ թերհաշվարկված քայլի սին լինելը: Այդ քայլը սին է, ինչպես և Ժխտողականության բոլոր դրսևորումները: Ժխտողականությունը ոչ միայն քաղաքական թուլության և անլիարժեքության բարդությունների դրսևորումն է, այլև իրավական կատեգորիա: Այն կապում է Թուրքիայի գործող իշխանություններին ցեղասպանության հանցագործությունը կատարած իրենց նախնիների հետ, դարձնում նրանց մեղսակից մարդկության դեմ այդ ծանրագույն հանցատեսակում»<sup>10</sup>:

Հայոց ցեղասպանությունը ճանաչել են ոչ միայն ԱՄՆ-ի 4 տասնյակից ավելի նահանգները, այլև տարբեր քաղաքների քաղաքապետարանները: Ֆրանսիայի Սենատը 2012 թ. հունվարին ընդունեց Հայոց ցեղասպանության Ժխտման քրեականացնող օրենք, թեև Սահմանադրական խորհուրդը փետրվարին այն մերժեց՝ խոսքի ազատությունը սահմանափակելու պատճառաբանությամբ<sup>11</sup>:

2014թ. ապրիլի 10-ին ԱՄՆ-ի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 12 կողմ, 5 դեմ արդյունքով ընդունել է Հայոց ցեղասպանության փաստը դատապարտող 410 բանաձևը<sup>12</sup>:

Նույն տարվա սեպտեմբերի 9-ին Հունաստանի Խորհրդարանը ձայների մեծամասնությամբ ընդունել է Ցեղասպանության Ժխտումը քրեականացնող՝ «Այլատյացության դեմ պայքարի» օրինագիծը, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում հրեաների, հայերի և Պոնտոսի հույների ցեղասպանության Ժխտման համար: Նոյեմբերի 30-ին Բուլվիայի Սենատի և Պատգամավորների պալատի կողմից ընդունվել է Օսմանյան կայսրությունում իրակա-

---

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>12</sup> Է. Մինասյան, Հանցագործությունը ենթակա է ճանաչման և փոխհատուցման, տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 25 ապրիլի, 2014 թ., էջ 5:

նացված Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծ<sup>13</sup>:

Այս փուլի մյուս կարևոր առանձնահատկություններից է այն, որ փոխվել է Թուրքիայի հասարակական կարծիքը Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Ցեղասպանության հարցը դադարել է «տաբու» լինել Թուրքիայում և դարձել է ամենաքննարկվող խնդիրներից մեկը: Ի հակակշիռ իշխանությունների և ցեղասպանության փաստը ժխտողների՝ Թուրքիայում մի շարք պատմաբաններ ու գիտնականներ ոչ միայն ճանաչում են Հայոց ցեղասպանությունը, այլև հանդես են գալիս այն պաշտոնապես ճանաչելու կոչերով: Դրա ջատագովներից էր 2007 թ. հունվարի 19-ին Ստամբուլում ահաբեկչության զոհ դարձած «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքը: Կատարվեց անսպասելին. Դինքի թաղման արարողությունը վերածվեց բազմահազարանոց բողոքի ցույցի՝ թուրք հանրության «Մենք Հայ ենք», «Մենք Հրանտ Դինքն ենք» կարգախոսներով:

ՀՀ ԳԱԱ-ի փիլիսոփայության և սոցիոլոգիայի ինստիտուտի կողմից 2013թ. անցկացված սոցիարցման արդյունքները պարզել են, որ Թուրքիայում ուսանողության 33 տոկոսից ավելին ճանաչում է Հայոց ցեղասպանության փաստը:

Կարևորն այն է, որ Թուրքիայի հասարակական կարծիքը Հայոց ցեղասպանության ճանաչումը սերտորեն կապում է երկրի ընդհանուր ժողովրդավարացման գործընթացի հետ, դա դիտում որպես այդ գործընթացի պարտադիր և անբաժանելի մաս: Միջազգային ատյաններում Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունն աստիճանաբար ավելի հստակեցվում է Թուրքիա-ԵՄ լիիրավ անդամակցության գործընթացում՝ որպես սեփական պատմության հետ հաշտվելու պահանջ: Այս դրույթն ամրագրվել է դեռևս Եվրախորհրդարանի 2005թ. սեպտեմբերի 28-ի Թուրքիայի մասին զեկույցում, որում հստակ նշվում է, որ որպես ԵՄ-ի լիիրավ անդամակցության նախապայման՝ Թուրքիան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանության փաստը: ԵՄ-ի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի 2006թ. սեպտեմբերի 4-ի՝ Թուրքիային վերաբերող զեկույցում նույնպես տեղ է գտել Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության դրույթը: Եվրախորհրդարանն այս փուլում

---

<sup>13</sup> Տե՛ս 2014թ. ՀՀ արտաքին գործերի նախարարության գործունեության հաշվետվությունը, ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, Եր., 1915, թ. 8:

5 անգամ՝ 2000թ. նոյեմբերին, 2002թ. փետրվարին, 2005թ. սեպտեմբերին, 2006թ. սեպտեմբերին և 2008թ. հոկտեմբերին, բանաձև է ընդունել Հայոց ցեղասպանության ճանաչման և Թուրքիայի վարքագծի դատապարտման վերաբերյալ<sup>14</sup>:

Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին ՄԱԿ-ի կոնվենցիան անկախ Հայաստանը ստորագրել է 1993 թվականին: Այդ կոնվենցիայի 50-ամյակի առիթով 1998թ. ՄԱԿ-ի Ժնևյան գրասենյակում ընդունվեց ցեղասպանության մասին նոր բանաձև, որի նախաձեռնողն ու հեղինակը Հայաստանի Հանրապետությունն էր:

Մարդու իրավունքների հանձնաժողովն ընդունել է «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» բանաձևերը ոչ միայն 1998, այլև 1999 և 2001 թվականներին: 2008թ. Մարդու իրավունքների խորհուրդն ընդունել է «Ցեղասպանության կանխարգելման մասին» բանաձևը: Նշված բոլոր բանաձևերն ընդունվել են կոնսենսուսով՝ վայելելով անգամ պետությունների լայն աջակցությունը<sup>15</sup>:

«Հայաստանը միջազգային շրջանակներում ձեռք է բերել ցեղասպանության դեմ պայքարող երկրի հեղինակություն (իմիջ), որը ճանաչել է նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ցեղասպանության կանխարգելման հարցերով հատուկ ներկայացուցիչը: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում Հայաստանը 2013թ. «Ցեղասպանության կանխարգելում» վերնագրով նոր բանաձև ներկայացրեց: Մասնակցեցին ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրները: Հետաքրքիր քննարկումներ տեղի ունեցան ակադեմիական շրջանակների, քաղաքական գործիչների և վերապրողների մասնակցությամբ: Հիշարժան էր Ռուանդայի ցեղասպանությունը վերապրած մի կնոջ զեկույցը, որը, վերհիշելով Ռուանդայում իր ընտանիքի սարսափելի պատմությունը, անդրադարձավ Հայոց ցեղասպանությանը՝ կրկնելով այն միտքը, որ եթե ժամանակին դատապարտվեր Հայոց ցեղասպանությունը, հետագայում չէին լինի ուժեր, որոնք կհանդգնեին, կհամարձակվեին նման հանցագործություններ իրականացնել»<sup>16</sup>:

---

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>15</sup> «Հիշում եմ և պահանջում», Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից, Երևան, 2015, էջ 25:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 26-27:



Ցեղասպանության ճանաչման վերաբերյալ 25 երկրի բանաձև կա, բայց միայն Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի, Ռուսաստանի Դաշնության և ԵԺԿ-ի ընդունած բանաձևերում է նշված, որ հայ ժողովուրդը ցեղասպանվել է իր բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում, ինչը շատ կարևոր է և ենթադրում է հատուցում, իսկ մյուս բանաձևերն այդ իմաստով խիստ թերի են<sup>17</sup>:

Մենք, որպես պետություն և ազգ՝ Սփյուռքով հանդերձ, հայեցակարգային առումով մարտավարություն պետք է ունենանք, այսինքն ամեն անգամ որևէ բանաձև որևէ երկրի խորհրդարան տանելուց առաջ հստակեցնենք, թե ճանաչելուց հետո հատուցման փուլը ինչպե՞ս կազմակերպենք, որն էլ կլինի հենց բանաձևի մեխը: Մենք մեկնարկային փուլից նոր ենք փորձում դուրս գալ և, բարեբախտաբար, հաջորդ փուլի նախաշեմին ենք: Ցանկացած երկրում լոբբինգ անելուց առաջ պետք է գիտակցենք, որ բանաձևում հստակ ձևակերպումներ են պետք՝ ճանաչել, դատապարտել և հատուցել, այսինքն՝ ցեղասպանության հետևանքները վերացնել:

Եթե մենք հեռանկարում նպատակ ունենք հարցը բարձրացնելու միջազգային ատյաններում, պետք է մինչ այդ կարողանանք միջազգային իրավունքում ամրագրել ցեղասպանության ճանապարհով ժողովրդին հայրենագրկելու համար նախատեսված պատասխանատվությունը: Դրանով է Հայոց ցեղասպանությունը տարբերվում բոլոր համանման ոճիրներից, որովհետև թուրքական կառավարությունն այն իրականացրել հայերին հայրենագրկելու նպատակով: Այսօր, մեր կարծիքով, ճանաչում և դատապարտում ձևակերպումը պետք է փոխարինվի կամ ավելացվի հետևանքների վերացում կատեգորիայով:

Ձգտելով անդամակցել Եվրամիությանը՝ Թուրքիան աստիճանաբար հայտնվում է միության անդամների, այդ թվում՝ այն երկրների իրավական դաշտն ընդգրկվելու գործընթացի մեջ, որոնց օրենսդիր մարմինները ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

Հետևաբար, առաջ է գալիս անլուծելի հակասություն հայերից թալանված գույքի ու հարստության պահպանման և ցեղասպանության զոհերի ժառանգների փոխհատուցման՝ փաստաթղթերով ապացուցվող պահանջների միջև: Զարգացումների այս համատեքս-

---

<sup>17</sup> Է. Մինասյան, Հայաստանի Երրորդ հանրապետության պատմություն, Երևան, 2014, էջ 5:

տում հայության կարևորագույն խնդիրներից մեկն է փորձագիտական մակարդակով Հայոց ցեղասպանության հետևանքով կրած կորուստների փոխհատուցման լուրջ և մանրակրկիտ իրավաբանական հայեցակարգի մշակումը:

Այսօրվա Թուրքիան իրավահաջորդն է Օսմանյան կայսրության, որը ոչ միայն օգտագործում է ցեղասպանության պտուղները, այլև շարունակում է նույն քաղաքականությունը: Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի շեմին՝ 2014 թվականին, Թուրքիան իր տարածքում կազմակերպեց Քեսաբի, որը Կիլիկյան Հայաստանի բեկորն էր, հայաթափման ու ցեղասպանության գործը: Քեսաբում կատարվածը ցեղասպանություն էր, էթնիկական զտումների քաղաքականություն, որն իրականացնում էր Թուրքիայի Հանրապետությունը, որը ցեղասպանություն իրագործած Օսմանյան կայսրության իրավահաջորդն է, շարունակաբար հանդես է գալիս ուժի դիրքերից Հայաստանի Հանրապետության և ընդհանրապես հայության հետ քաղաքականություն իրականացնելիս: Եթե երիտթուրքական իշխանությունները բնաջնջեցին հայ ազգաբնակչությանն Արևմտյան Հայաստանում՝ իրենց պատմական հայրենիքում, ապա հանրապետական Թուրքիան փակել է Հայաստանի հետ սահմանը և սպառնալիքների ու նախապայմանների լեզվով է խոսում Հայաստանի Հանրապետության հետ, որի բնակչության 60 տոկոսից ավելին այդ ցեղասպանությունը վերապրածների ժառանգներն են: Ուստի Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու հետևանքների վերացման հիմնախնդիրն ուղղակիորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի անվտանգության ապահովմանը: Այս առումով պատահական չէր ՀՀ նախագահ Ս. Մարգարյանի հայտարարությունը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի չորրորդ նիստում, որտեղ նա ընդգծեց, որ մարդկության դեմ ոճիրները վաղեմության ժամկետ չեն կարող ունենալ, թող որևէ մեկը հույս չունենա, թե Մեծ եղեռնի հարյուրամյակը մեր դատի սահմանագիծն է: Հայոց ցեղասպանության հարյուրամյակին մենք ներկայացրել ենք նոր նպատակներ՝ համահայկական նոր օրակարգով, առավել հզոր պետականություն և առավել համախմբված Սփյուռք ունենալու ծրագրով: Հարյուրամյակով մենք ամփոփելու ենք պատմական մի շրջան և ազդարարելու ենք հանուն արդարության

վերականգնման պայքարի մի նոր փուլ, նոր թափով, եռանդով ու վճռականությամբ շարունակելու ենք մարդկության դեմ ուղղված հանցագործության Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար մղվող մեր պայքարը<sup>18</sup>:

2015թ. հունվարի 29-ին տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի 5-րդ նիստը, որտեղ առաջին անգամ ընդունվեց համազգային նշանակության մի փաստաթուղթ՝ «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի Համահայկական հռչակագիրը»<sup>19</sup>: Փաստաթուղթը բացառիկ է իր ձևով ու բովանդակությամբ, քանզի կազմվել է հայ ժողովրդին ներկայացնող բոլոր հիմնական կառույցների ներգրավմամբ:

Փաստաթղթում ոչ միայն մատնանշվում են Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման ու պահանջատիրության պատմական ու իրավական հիմքերը, այլև ուղիներն ու սպասելիքները, պատգամները ապագա սերունդներին:

Հռչակագիրը, արտահայտելով հայ ժողովրդի միասնական կամքը, հաշվի է առնում, որ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի ընդունումը հնարավորություն է տալիս պայքարելու ժխտողականության դեմ:

Քանի որ ՄԱԿ-ը հատուկ կարևորել է այդ հանցատեսակի դեմ պայքարում միջազգային համագործակցությունը՝ շեշտելով ցեղասպանության հանցակազմում պարունակվող արարքների համար անպատիժ մնալու անթույլատրելիությունն ու այդ հանցագործության վաղեմության ժամկետ չունենալու հանգամանքը, ուստի հռչակագիրը, դատապարտելով 1894-1923 թվականներին Օսմանյան կայսրության և Թուրքիայի տարբեր վարչակարգերի կողմից ծրագրված ու հայ ժողովրդի դեմ շարունակաբար իրականացված ցեղասպանական քայլերը, հայրենագրկումը, հայության ոչնչացմանն ուղղված զանգվածային կոտորածները, էթնիկ գտումները, հայկական ժառանգության ոչնչացումը, ինչպես նաև ցեղասպանության ժխտումը, պատասխանատվությունից խուսափելու, կատար-

<sup>18</sup> Տե՛ս «Հիշում եմ և պահանջում», Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից, էջ 5:

<sup>19</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 30 հունվարի 2005, էջ 3:

ված հանցագործություններն ու դրանց հետևանքները լռության մատնելու կամ արդարացնելու բոլոր փորձերը դիտում է որպես հանցագործության շարունակություն և նոր ցեղասպանություններ իրականացնելու քաջալերանք: Հռչակագիրը 1919-1921 թվականներին օսմանյան ռազմական արտակարգ ատյանների կողմից «Իրավական և մարդկային օրենքների դեմ» այդ ծանր ոճրի ուղղությամբ կայացված դատավճիռները համարել է որպես եղելության իրավական գնահատական, արժևորելով 1915 թվականին միջազգային հանրության կողմից Անտանտի պետությունների մայիսի 24-ի համատեղ հռչակագրով հայ ժողովրդի դեմ իրականացված ծանրագույն հանցագործությունը՝ այն որակվել է պատմության մեջ առաջին անգամ որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ իրականացված հանցագործություն», շեշտադրվել է օսմանյան իշխանություններին պատասխանատվության կանչելու հանգամանքը, ինչպես նաև 1920 թվականի օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագրի և 1920 թվականի նոյեմբերի 22-ի ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի դերը և նշանակությունը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում:

Հռչակագիրը ոգեկոչում է Հայոց ցեղասպանության մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը և երախտագիտությամբ խոնարհվում կյանքի ու մարդկային արժանապատվության համար պայքար մղած նահատակ և վերապրած հերոսների առջև<sup>20</sup>:

Այն վերահաստատում է Հայաստանի և հայ ժողովրդի հանձնառությունը՝ շարունակելու միջազգային պայքարը ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման և պատմական արդարության հաստատման համար:

Ցեղասպանության 100-րդ տարելիցը յուրօրինակ դարձակետային շրջան էր՝ վերագնահատելու և արժևորելու հետեղեռնյան շրջանի, մասնավորապես անկախ պետականության գոյության տարիների եղելություններն ու անցքերը:

Անտարակույս, այդ եղելությունների շարքում կենտրոնական դիրք են զբաղում Հայաստան-Թուրքիա կապերն ընդհանրապես և հայ-թուրքական հարաբերությունների ներկայիս իրավիճակը մասնավորապես: 2015թ. կատարված իրադարձությունները, այդ թվում՝

---

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հոշակագրի ընդունումը, փետրվարի 16-ին նախագահ Մերժ Սարգսյանի կողմից հայ-թուրքական արձանագրությունները ԱԺ-ից հետո կանչելը և դրանց հաջորդած թուրքական արձագանքները ևս մեկ անգամ օրախնդիր են դարձնում հայ-թուրքական հարաբերությունների հետնախորքին, ներկային ու հեռանկարներին անդրադառնալը:

Հայաստանի վերանախաջուրմից հետո հայ-թուրքական հարաբերությունների բովանդակությունը պայմանավորել են երեք հիմնական գործոններ՝ դարաբաշխի հարցը, ցեղասպանության խնդիրը և հողային-տարածքային բաղկացյալը: Կա նաև չորրորդ՝ այսպես ասած «ստվերային» գործոնը, այն է՝ երկկողմ անուղղակի առևտուրը, որին անդրադառնալը, սակայն, դուրս է այս շարադրանքի շրջանակներից: Նախագահ Մերժ Սարգսյանի նամակը ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանին, որով վերջինս տեղյակ էր պահվում «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովից հետո կանչելու նախագահի որոշման մասին, հերթական անգամ երկկողմ հարաբերությունների մակարդակում ակտիվացրեց ապակառուցողականության գործընթացը: Այսպես՝ նախագահի նամակի հրապարակումից հաշված ժամեր անց Թուրքիայի դիվանագիտական շրջանակներն այդ քայլը որակեցին որպես «սխալ և չարադետ»: Հայկական կողմից արդեն ապակառուցողական էր բնորոշվել Թուրքիայի վարքը՝ հաշվի առնելով արձանագրությունները վավերացնելու հարցում «...Թուրքիայի իշխանությունների քաղաքական կամքի բացակայությունը, արձանագրությունների տառի ու ոգու աղավաղումները և նախապայմանների շարունակաբար արձարծումը»<sup>21</sup>: Այսքանով իսկ, արձանագրությունները ԱԺ-ից հետո կանչելը և դա հիմնավորելը Թուրքիայի կողմից ժխտողականության և պատմության խմբագրման քաղաքականությամբ, հասկանալի է, քանզի հայության հետ միջպետական հարաբերությունների մակարդակում աղերսվելուց խուսափելն ու խնդրի էության ձևախեղումները հենց պատմության խմբագրման վկայություններն են:

<sup>21</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 16 փետրվարի, 2015թ.:

Հայ-թուրքական հարաբերությունների մոտալուտ կարգավորման քիչ հույս կա: 2015թ. Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ընտրությունների և դարդանեղյան տոնակատարությունների ժամանակ ևս այդ երկրի քաղաքականությունը Հայաստանի մասով շարունակեց մնալ նույնը, դեռ ավելին՝ հաճախադեպ դարձան աղբյուրանամետ կոչերն ու հայտարարությունները, մեղադրանքները հայկական կողմին՝ հարաբերությունների չբարելավման համար և այլն:

Հարաբերությունների կարգավորման համար իրական հիմք կարող է լինել բացառապես առանց նախապայմանների և միջպետական երկկողմ հարգանքի վրա խառնված քաղաքականությունը, որը Թուրքիայի համար մնում է անընդունելի հանգամանք:

Հայոց ցեղասպանության միջազգայնացման գործընթացին մեծապես նպաստեցին 1915թ. ապրիլի 12-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում նորին սրբություն Հռոմի պապ Ֆրանցիսկոսի կողմից Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված աղոթքի՝ պատարագի ժամանակ ասված խոսքերը: Հռոմի պապը հայերի զանգվածային սպանությունները բնութագրեց «որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն»<sup>22</sup>: Նա այդ ցեղասպանությունը համարեց մարդկության դեմ կատարված հանցագործություն, որին հաջորդեցին Հիտլերի և Ստալինի զանգվածային բնաջնջումները:

«Չարիք թաքցնելը կամ ժխտելը հավասարազոր է արյունահոսող վերքն առանց վիրակապի թողնելուն», - ասել է պապը՝ առաջացնելով ժամանակակից Թուրքիայի Հանրապետության զայրույթը, որի կառավարությունը երկար ժամանակ շարունակում է պնդել, որ իր նախնիները զբաղված էին ոչ թե ցեղասպանությամբ, այլ ծանր կռիվներով<sup>23</sup>: Այս միջոցառումը համաշխարհային նշանակության երևույթ էր, որը բացատրվում է մի շարք հանգամանքներով: Նախ՝ առաջին անգամ էր, որ նման մեծածավալ պատարագ էր մատուցվում կաթոլիկ եկեղեցու հովվապետի կողմից, երկրորդ՝ Հռոմի պապը չխորշեց իրերը կոչել իրենց անուններով՝ հայերի հետ կատարվածը անվանելով ցեղասպանություն: Երրորդ առաջին անգամ հնչեց հայոց կաթողիկոսների համատեղ աղոթքը կաթոլիկ եկեղեցում, որը մեծ խորհուրդ էր պարունակում: Կարևոր փաստ է նաև այն, որ Հայ առաքելական և կաթոլիկ եկեղեցիների ամբողջ պատ-

<sup>22</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15 ապրիլի, 2015թ., էջ 4:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղում:

մության ընթացքում առաջին անգամ միջնադարյան հայոց նշանավոր դեմքը՝ Գրիգոր Նարեկացին, հռչակվեց տիեզերական եկեղեցու վարդապետ: Փաստորեն Հռոմի պապը կոչ արեց միջազգային հանրությանը անվերապահորեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Պատահական չէ, որ կաթոլիկ եկեղեցու առաջնորդի բերանից հնչած վերոնշյալ խոսքերը սրբության պես իբրև պատգամ ընդունվեցին նշյալ եկեղեցու 1մլդ-ից ավելի հավատացյալների, շուրջ 3 մլն հոգևորականների, 4000-ից ավելի եպիսկոպոսների և այլոց համար<sup>24</sup>, որոնք աշխարհով մեկ տարածեցին այս լուրը և նոր թափ հաղորդեցին Հայոց ցեղասպանության ճանաչման միջազգային գործընթացին:

1915 թ. ապրիլի 22-23-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակում Երևանում անցկացվեց «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ հասարակական-քաղաքական միջազգային ֆորումը, որին մասնակցում էին ավելի քան 600 խորհրդարանականներ, քաղաքական գործիչներ, դիվանագետներ, գիտնականներ, ականավոր ցեղասպանագետներ 5 տասնյակ երկրներից<sup>25</sup>: Որոշվեց, որ ֆորումը պետք է հրավիրվի պարբերաբար: Ֆորումը ընդունեց հռչակագիր, որտեղ ընդգծվում էր, որ «...ցեղասպանությունը անդառնալի հետևանք ունեցող ծանրագույն հանցագործություն է, և բոլոր պետություններին կոչ էր արվում աջակցել ցեղասպանության կանխարգելման մեխանիզմների ամրապնդմանը»: Ֆորումը ողջունում էր ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում 2015 թ. մարտի 27-ին «Ցեղասպանության կանխարգելում» բանաձևի ընդունումը, միաժամանակ ճանաչում էր, որ Ժխտողականությունը հատկապես պետական մակարդակով անընդունելի է, և ընդգծում էր, որ ցեղասպանությունների անհապաղ դատապարտումն ու դրանց հետևանքներին արդյունավետորեն անդրադառնալն ի գործու են ծառայելու որպես կանխարգելման և հաշտեցման կարևոր միջոցներ: Հռչակագիրը կոչ է անում միջազգային հանրությանը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախօրեին աջակցել դրա համընդհանուր ճանաչման ջանքերին: 1915 թ. ապրիլի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Ս. Տրդատի բաց

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>25</sup> Տե՛ս «Հիշում եմ և պահանջում», Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից, Երևան, 2015, էջ 4:

խորանում, հանդիսապետությամբ կատարվեց Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման արարողությունը<sup>26</sup>: Սրբադասումը կատարվեց հավաքական կերպով. 1.5 մլն նահատակների թիվն ու անհատների անուններն առանձին չնշվեցին: Հայոց ցեղասպանության զոհերը վերածվեցին հավատքի ու հայրենիքի համար նահատակների՝ միասնական կարգով դասվելով սրբերի շարքում: Արարողության ավարտին՝ ժամը 19:15-ին, ազդարարվեց լուծարան րոպե, որին հաջորդեցին Մայր տաճարի 100 գուժկան զանգերը, ապա՝ տոնական դողանքը՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների<sup>27</sup>: Ջանգերի դողանքին նույն ժամին միացան աշխարհի հայկական տասնյակ եկեղեցիները, Գերմանիայի և Լեհաստանի բոլոր եկեղեցիները, Բուենոս Այրեսի Մայր տաճարը, Փարիզի Աստվածամոր տաճարը, Մոսկվայի և ՆյուՅորքի տաճարները և այլ եկեղեցիներ:

Առանձնապես հանդիսավորությամբ նշվեց Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը: Ապրիլի 24-ին ավելի քան 60 երկրների և միջազգային տասնյակ կառույցների պատվիրակություններ ՀՀ, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Սերբիայի ու Կիպրոսի նախագահների հետ մասնակցեցին Ծիծեռնակաբերդում տեղի ունեցած միջազգային մեծ ծավալի արարողությանը: Նման մեծ ու հանդիսավոր միջոցառում Հայաստանում երբեք չէր եղել<sup>28</sup>: Նախագահների ելույթներից հետո ընթերցվեց «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումի ընդունած հռչակագիրը, ապա տասնյակ պատվիրակությունների ղեկավարներ ծաղիկներ խոնարհեցին անմար կրակի մոտ: Ապրիլյան չորսյան գլխավոր միջոցառման հանդիսավոր անցկացումն անշուշտ նպաստեց Հայոց ցեղասպանության միջազգայնացման գործընթացի նոր ուժով ծավալմանը: 1915 թ. ապրիլի 24-ին նախորդած ու հաջորդած օրերին աշխարհում անցկացված հիշատակի միջոցառումներն իրենց ծավալներով ու բազմազանությամբ աննախադեպ էին: Հինգ մայրցամաքներում հայկական համայնքային կառույցների նախաձեռնությունները հիշատակի միջոցառումների ուղղությամբ աշխարհի առաջատար լրա-

---

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 5:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 12, 13:



տվամիջոցների ուշադրության կենտրոնում էին<sup>29</sup>:

Առաջին գլոբալ ֆորումը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետությունը XXI դարում լինելու է ցեղասպանություն հանցագործության դեմ պայքարի առաջամարտիկներից մեկը:

«Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» երկրորդ գլոբալ համաժողովը՝ «Ցեղասպանության վերապրած վկաները» խորագրով, տեղի ունեցավ 2016թ. ապրիլի 23-ին, ֆորումի ավարտին ընդունվեց հայտարարություն, որտեղ վերհանված էին ցեղասպանությունների կանխարգելման առկա հիմնախնդիրները, մշակված դրանց լուծման ուղիները և կոչված համախմբելու քաղաքակիրթ մարդկության ներուժը՝ XXI դարում մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վճռական հաղթանակ տանելու նպատակով, ցեղասպանության անթույլատրելիության մասին բացարձակ գիտակցություն արմատավորել՝ մարդկության մեջ նմանօրինակ աղետներից պաշտպանվելու համար: Հայտարարության մեջ նշված է, որ այսուհետ գործելու է «այլևս երբեք» կարգախոսը, և որ աշխարհի որևէ անկյունում իրականացված ցեղասպանությունը պետք է ընկալվի որպես ողջ միջազգային հանրության ձախողման հետևանք, իսկ դրանց կանխարգելումը ինչպես յուրաքանչյուրիս, այնպես էլ ողջ մարդկության պատասխանատվություն: Ֆորումից հետո մեկնարկեցին «100 կյանք» նախաձեռնությունը և «Ավրորա» մրցանակաբաշխությունը՝ Հայոց ցեղասպանությունը վերապրածների անունից և ի երախտագիտություն նրանց, ովքեր այդ դժվարին օրերին փրկության ձեռք մեկնեցին հայ ժողովրդին:

2015թ. մի հանգրվան էր, երբ հայ ժողովուրդը վերախմաստավորեց իր գոյության իրավունքի և պատմական արդարության վերականգնմանն ուղղված հարյուրամյա պայքարը: 2015թ. կարևոր էր այն առումով, որ աշխարհի շատ երկրների ղեկավարներ, խորհրդարաններ, միջազգային կառույցներ, կրոնական կազմակերպություններ, ականավոր անհատներ իրենց համերաշխությունը հայտնեցին ցեղասպանությունների դեմ ընդհանուր պայքարին ճանաչելով ու դատապարտելով Հայոց ցեղասպանությունը:

«Մենք ողջունում ենք Հռոմի պապի տեսակետը, հայ, թուրք և շատ այլ պատմաբանների հայացքները, որոնք փորձել են լույս սփռել պատմության այս մութ էջերի վրա», - ասված է 2015 թ. ապ-

---

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 44:

րիլի 24-ին հրապարակված՝ ԱՄՆ նախագահի ուղերձում<sup>30</sup>: «Այս կարևորագույն պահին մենք կանգնած ենք հայ ժողովրդի կողքին և հիշում ենք նրանց կորուստները: Մենք խոստանում ենք, որ կորուստները չեն մոռացվի: Եվ մենք պարտավորվում ենք դասեր քաղել այս ցավալի ժառանգությունից, որպեսզի ապագա սերունդները չկրկնեն մեր սխալները», - նշել է ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման:

2015 թ. ապրիլին տասնյակ երկրներում նահանգային ու քաղաքային օրենսդիր մարմիններում ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բազմաթիվ հայտարարություններ ընդունվեցին: Խնդիրը բարձրացվեց տարբեր մակարդակներով՝ 5 մայրցամաքներում ի ցույց դնելով ցեղասպանության ճանաչման իրողությունը՝ որպես իրերն իրենց անուններով կոչելու կարևորություն:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը 2015-ին նախորդած տարիների համեմատ ամենաարդյունավետն էր: Ցեղասպանությունը պաշտոնապես ընդունում ու դատապարտում էին տարբեր մակարդակներով: Ճանաչման արշավն առանձնացավ թուրքական աննախադեպ հակազդեցությամբ: Միայն 2015-ին Թուրքիան աշխարհի տարբեր երկրներից իր դեսպանների հետկանչով սահմանեց բոլոր հնարավոր ռեկորդները: Ցեղասպանությունը ճանաչած Բելգիան 2015-ին ընդունեց նոր բանաձև, որտեղ ցեղասպանությունը ճանաչեց կառավարության անունից: Կիպրոսը քրեականացրեց ցեղասպանության ժխտումը՝ միանալով 2014-ին նույն որոշումը կայացրած Հունաստանին: Ապրիլին ցեղասպանությունը դատապարտող հայտարարություններ ընդունեցին Նիդեռլանդների ու Ռուսաստանի խորհրդարանները: Ցեղասպանությունը ճանաչեց Չեխիայի Խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը՝ լրացնելով երկրի նախագահի հայտարարությունը: Չիլիի Խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը՝ լրացնելով 2007 թվականին Սենատի ընդունած բանաձևը: Նույն ամսին ամերիկյան ևս 3 նահանգ ճանաչեց ցեղասպանությունը: Հարավային նահանգի սենատը, Վերմոնտ և Նևադա նահանգների օրենսդիր ժողովներն ընդունեցին ցեղասպանությունը ճանաչող բանաձևեր: Ցեղասպանությունն արդեն ճանաչել է ամերիկյան 46 նահանգ<sup>31</sup>:

<sup>30</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 26 ապրիլի, 2015:

<sup>31</sup> Տե՛ս «Հիշում եմ և պահանջում», Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկից, Երևան, 2015, էջ 40:

Թուրքիայի համար ցավոտ էր 2015թ. ապրիլի 15-ին 28 պետություններ ներկայացնող Եվրախորհրդարանի՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ ընդունած հատուկ բանաձևը, որով դատապարտելով ժխտողականությունը, կոչ է արվում Թուրքիային առերեսվել անցյալին:

Բելգիայի Խորհրդարանում կառավարության անունից Հայոց ցեղասպանությունը ճանաչել ու դատապարտել է Բելգիայի վարչապետը:

Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բանաձևեր են ընդունել Բրազիլիայի Դաշնային սենատը, Բելգիայի Խորհրդարանը, Լյուքսեմբուրգի Պատգամավորների պալատը, Սան Մարինոյի օրենսդիր մարմինը, Պարագվայի Սենատը: Ռուսաստանի, Արգենտինայի, Բոլիվիայի, Չիլիի, Կանադայի օրենսդիր մարմինները վերահաստատել են նախկինում արված իրենց հայտարարությունները: Համալսարանում բանաձև է ընդունել Չեխիայի պատգամավորների պալատի արտաքին հարաբերությունների ժխտումը քրեականացնող բանաձև: Ցեղասպանության հիշատակի միջոցառումները լայնորեն լուսաբանվել են աշխարհի բոլոր մայրցամաքներում հազարավոր հրապարակումներով և հուշարձաններով:

Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև է ընդունել Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների 23 օրենսդիր մարմիններ միավորող Լատինամերիկյան խորհրդարանը:

2015թ. հոկտեմբերին Երևանում կայացած 80 պետություն ներկայացնող Ֆրանկաֆոնիայի միջազգային կազմակերպության արտգործնախարարների համաժողովն ընդունել է Հայաստանի կողմից նախաձեռնված «Ցեղասպանության կանխարգելման մասին» բանաձևը: Մի շարք պետությունների ղեկավարներ իրենց երկրներում մասնակցել են Մեծ եղեռնի հիշատակի միջոցառումներին: Տարբեր երկրների առաջնորդներ ու ղեկավարներ, կառավարություններ և խորհրդարաններ իրենց գորակցությունն են հայտնել հայ ժողովրդին: Հայտարարություններով հանդես են եկել Գերմանիայի նախագահը, Ավստրիայի Խորհրդարանը՝ նշելով այդ ոճրագործության մեջ համապատասխանաբար Գերմանիայի և Ավստրո-հունգարական կայսրության պատասխանատվության մասին:

2015 թ. ապրիլին Եվրախորհրդարանի ընդունած բանաձևն

այս անգամ ոչ միայն վերահաստատեց ցեղասպանության ճանաչումը, այլև Թուրքիային կոչ արեց այն ճանաչելու միջոցով դուրս գալ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար: Նման ձևակերպում միջազգային որևէ կառույց դեռ չէր արել հարաբերությունների կարգավորումը պայմանավորելով ցեղասպանության ճանաչմամբ:

Եվրախորհրդարանը Թուրքիային կոչ էր անում օգտագործել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը՝ որպես հնարավորություն շարունակելու իր ջանքերը արխիվները բացելու, իր անցյալին առերեսվելու ուղղությամբ, «ճանաչել Հայոց ցեղասպանությունը և դրանով հայ և թուրք ժողովուրդների իրական հաշտեցման ճանապարհը հարթել», - ասված է ընդունված փաստաթղթում<sup>32</sup>:

Եվրախորհրդարանում Հայոց ցեղասպանության հարցի քննարկման ժամանակ միջադեպ տեղի ունեցավ: Իտալիան ներկայացնող եվրախորհրդարանական Մարիո Բորգեզիոն իր ելույթի ընթացքում խիստ վրդովվեց՝ հիշելով, թե ինչպես էր Թուրքիայի նախագահը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու համար սպառնացել Հռոմի պապ Ֆրանցիսկոսին. «Այսպես մաֆիոզի պես խոսելով էլ նա դեռ ցանկանում է մուտք գործել ԵՄ: Այդպիսի պահվածքով Թուրքիան չի կարող մուտք գործել Եվրամիություն»<sup>33</sup>, - ասել էր նա: Հռոմի պապի հասցեին հնչած վիրավորանքները եվրապատվիրակներին դրդեցին բանաձևի տեքստում հղում կատարել պապի հայտարարությունից:

Եվրախորհրդարանը «ողջունում է Հռոմի պապի ապրիլի 12-ի ուղերձը, որտեղ նա հիշատակել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը խաղաղության ու հաշտության ոգով», - նշված է Եվրախորհրդարանի բանաձևում<sup>34</sup>:

Դրանից մեկ շաբաթ անց՝ ապրիլի 22-ին, Ավստրիան ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Ավստրիայի Ազգային խորհրդի նախագահ Դորիս Բուրեսը նշեց, որ 1915 թվականի ապրիլի 24-ին Օսմանյան կայսրությունում հայ մտավորականության և առաջնորդների ձերբակալմամբ սկիզբ առած տեղահանությունների և հալա-

<sup>32</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 16 ապրիլի, 2015թ.:

<sup>33</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>34</sup> Նույն տեղում:

ծանքների քաղաքականությունն ավարտվեց հայերի ցեղասպանությամբ<sup>35</sup>:

«XX դարի պատմության մշակումը նախընթաց տասնամյակներում մեծ առաջընթաց է արձանագրել: Պատմական մեղսակցության ընդունումը հետևողական հաշտեցման նախապայման է: Այս գիտակցությամբ և նպատակ ունենալով սատարել Հայաստանի և Թուրքիայի հաշտեցմանը՝ Ավստրիայի խորհրդարանում ներկայացված բոլոր վեց խորհրդարանական խմբակցությունների նախագահները համատեղ հայտարարություն են ընդունել Օսմանյան կայսրությունում հայերի հանդեպ իրագործված ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ», - ասել է Բուրեսը: Ավստրիայի Խորհրդարանի ընդունած բանաձևում նույնպես հղում էր արվում Հռոմի պապի ուղերձին: Նշվում էր, որ 100 տարի առաջ հայերի դեմ իրագործված հանցագործությունը, որը Ֆրանցիսկոս պապը որակել էր «20-րդ դարի առաջին ցեղասպանություն», հստակորեն ի ցույց է դնում հիշողության մշակույթի անհրաժեշտությունը<sup>36</sup>:

Ավստրիայի Խորհրդարանի բանաձևն առանձնացավ նրանով, որ պաշտոնական Վիեննան փաստացի ընդունեց Ավստրո-Հունգարիայի մեղսակցությունը Հայոց ցեղասպանությանը: «Ելնելով պատմական պատասխանատվությունից (Ավստրոհունգարական միապետությունը Առաջին աշխարհամարտում դաշնակցում էր Օսմանյան կայսրության հետ)՝ մեր պարտականությունն է այս սարսափելի իրադարձությունները ճանաչել ցեղասպանություն և դատապարտել: Թուրքիան նույնպես պարտավոր է անկեղծորեն առերեսվել իր անցյալի մութ ու ցավալի դրվագի հետ և Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրագործված հանցագործությունը ճանաչել ցեղասպանություն», - ասված է Ավստրիայի Խորհրդարանի ապրիլի 22-ին ընդունած բանաձևում<sup>37</sup>:

2015թ. ապրիլի 23-ին Բեռլինի Մայր տաճարում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված արարողության ժամանակ Գերմանիայի նախագահը պաշտոնապես ընդունեց Հայոց ցեղասպանությունը ու նույնպես խոսեց իր երկրի մեղսակցության մասին:

<sup>35</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 ապրիլի, 2015թ.:

<sup>36</sup> Նույն տեղում:

<sup>37</sup> Տե՛ս «Հիշում եմ և պահանջում», էջ 41:

անոնք նաեւ Կովկասի մէջ, ինչպէս եղած են Թուրքիոյ մէջ»<sup>7</sup>: Կովկասում Օսմանյան կայսրության վարած հայաջինջ քաղաքականության մասին է վկայում Գերմանիայի պետական քարտուղար Ռիխարդ ֆոն Քյուլմանի՝ Կ.Պոլսում Գերմանիայի դեսպանին 1918 թ. հունիսի 3-ին հղած հեռագիրը, որում ասված է. «Թուրքերը հասնում են իրենց նպատակին – Կովկասում ոչնչացնել հայերին»<sup>8</sup>:

Երիտթուրքերի հենարանը Այսրկովկասում Մուսավաթ կուսակցությունն էր<sup>9</sup>, որը ջանք չէր խնայում թուրքերի առաջխաղացումն արագացնելու: Հարկ է նշել, որ Բաքվի նահանգի հայերի կոտորածների քաղաքականությունը նախապէս ծրագրված էր երիտթուրքական և մուսավաթական կառավարությունների կողմից, որը խաբսիված էր Օսմանյան կայսրության ցեղասպան քաղաքականության վրա: Բազմաթիվ փաստերն ի հայտ են բերում այդ ծրագրերը: Հայերի բնաջնջումը համարելով համաթուրքականության հիմնական խնդիրներից մեկը՝ երիտթուրքերն այդ նպատակով գործնական քայլեր էին մշակում իրենց իսկ թելադրանքով ստեղծված արհեստածին «Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության»<sup>10</sup> մուսավաթական կառավարության (նախագահ՝ Մ. Ֆա-

---

<sup>7</sup> Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968, էջ 88, 89:

<sup>8</sup> Нагорный Карабах в международном праве и мировой политике (документы и комментарий), сост. проф. Ю. Барсегов, Москва, 2008, т. I, док. 222, с. 224.

<sup>9</sup> Երիտթուրքերի և մուսավաթականների համագործակցության մասին մանրամասն տե՛ս Ավետիսյան Հ., Երիտասարդ թուրքերի և Մուսավաթի համաթուրքական գործակցությունը և հակահայկական ոճրագործությունները 1918 թ., «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), Երևան, 1991, N 1, էջ 43-64:

<sup>10</sup> Արևելյան Այսրկովկասում երբևէ գոյություն չի ունեցել «Ադրբեջան» անվամբ որևէ աշխարհագրական վայր կամ պետություն: Արտ. Աբեղյանի դիպուկ բնորոշմամբ՝ «Ասորբեջան եւ ասորբեջանցի անունով երկիր ու ժողովուրդ գոյութիւն չունին պատերազմից (իմա՝ Առաջին աշխարհամարտից - Գ. Ս.) առաջ: Ռուսական հին վիճակագրութիւնը գիտէր միայն «Արեւելեան Անդրկովկաս», «Բազուի նահանգ» և այլն փոխարինելով նույնանուն խանութիւններին պարսկական տիրապետութեան տակ: Այդ երկրամասի մեծամասնութիւն կազմող ցեղն էլ հին վիճակագրութիւններում թաթար եւ կամ պարզապէս մահմեդական յորջորջումով էր յայտնի» (Աբեղյան Արտ., Մենք եւ մեր հարեւանները (ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք», Պոսթրն, 1928, 2 տարի, մայիս, N 7, էջ 135): 1918 թ. մայիսի 26-ին՝ Անդրկովկասյան Սեյմի լուծարումից հետո, երբ կովկասյան թաթարների «ազգային» խորհուրդը (նախագահ՝ Սամեդ

թալի Խան-Խոյսկի) հետ: Առկա են բազմաթիվ հեռագրեր, հրահանգներ, առանձին կարգադրություններ՝ առաքված մուսավաթական կառավարության կողմից, որոնք լիովին բացահայտում են հայերի կոտորածների առնչությամբ նախօրոք կազմված ծրագրերը: Ադրբեջանական Հանրապետության զինվորական նախարար, հայատյաց Խոսրով-բեկ Սուլթանովը բացեիքաց հայտարարում էր, որ «Ադրբեջանում կամ չպետք է լինեն հայեր, կամ էլ կլինեն այնպես, ինչպես ռայան՝ Թուրքիայում»<sup>11</sup>: Փաստերը վկայում են, որ մուսավաթական իշխանությունը որդեգրել էր տեղաբնիկ ժողովուրդների (հայեր, ուղիներ, լեզգիներ, թաթեր, թալիշներ և այլն) բռնի ուժացման, էթնիկ գտման, զանգվածային կոտորածների և հայրենազրկման ճանապարհով Արևելյան Այսրկովկասի՝ Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում «միատարր» թյուրք-թաթարական<sup>12</sup>

Էմին Ռասուլզադե) երիտթուրքերի թելադրանքով մայիսի 28-ին Թիֆլիսում հռչակեց արհեստածին նոր «պետության» ստեղծումը՝ նպատակ ունենալով նույն անվան միջոցով հավակնել Իրանի հյուսիսարևմտյան պատմական Ատրպատական-Ազարբայջան երկրամասին, հակառակ Իրանի բողոքների այն հորջորջվեց «Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն» (հետագայում՝ Ադրբեջանական ԽՍՀ, ներկայումս՝ Ադրբեջանի Հանրապետություն): Մանրամասն տե՛ս Բարտոլդ Բ., Место прикаспийских областей в истории мусульманского мира, Сочинение, т. II, ч. I, Москва, 1963, с. 703; Էնաթոլլահ Ռեզա, Ազարբայջան եւ Առան (Կովկասեան Ալբանիա), Երևան, 1994, էջ 151, 152: Swietochowski T., Russian Azerbaijan. 1905-1920. The Shaping of National Identity in a Muslim Community. Cambridge, Cambridge University Press, 1985, p. 129: Ասատրյան Գ., Գևորգյան Ն., Ադրբեջան. յուրացման սկզբունքը և իրանական աշխարհը, Երևան, 1990: Galichian R., The Invention of History. Azerbaijan, Armenia and the Showcasing of Imagination (Second, revised and expanded edition), London/Yerevan, 2010, p. 35. Խանլարյան Կ., «Ադրբեջան» աշխարհագրական հասկացության սահմանումները օսմանյան քարտեզներում, հանրագիտարանային նշանակության հրատարակություններում և դասագրքերում, «Վեմ», Երևան, 2012, հոկտեմբեր-դեկտեմբեր, N 4 (40), Երևան, էջ 145-160:

<sup>11</sup> Нагорный Карабах в международном праве и мировой политике (документы и комментарии), т. I, док. 229, с. 232.

<sup>12</sup> XIX դարի երկրորդ կեսի ռուսական աղբյուրներում *թյուրք-թաթար* տերմիններից առավել գործածական է դառնում *թաթարը* (տե՛ս Գегемейстер Ю., Закавказские очерки, СПб., 1845, с. 12, տե՛ս նաև՝ Зейдлиц Н., Этнографический очерк Бакинской губернии, Кавказский календарь на 1871 г., Тифлис, 1870, с. 47), որն աստիճանաբար դառնում է Այսրկովկաս ներխուժած թյուրքալեզու ցեղերի համար մեկ ընդհանուր հավաքական անվանում (տե՛ս Էнциклопедический словарь, под ред. проф. И. Андреевского, т. XIII, издатели Ф. Брокгауз, И. Ефрон, СПб., 1894, с. 836, տե՛ս նաև՝ Энциклопедический словарь, под ред. проф. И.

«տարածք-հայրենիք» ստեղծելու երիտթուրքերի ռազմավարությունը<sup>13</sup>:

Մուսավաթականները հայերին դիտում էին որպես իրենց ծրագրերի հիմնական խոչընդոտի: Ուստի հայերի զանգվածային կոտորածների հիմքում ի սկզբանե դրված էր հայրենագրկման ծրագիրը, որը պետք է իրականացվեր ցեղասպանության ճանապարհով: Այս առումով ուշագրավ է հետևյալ փաստը. Բաքվի հայերի սեպտեմբերյան կոտորածների գլխավոր կազմակերպիչներից մեկի՝ մուսավաթական կառավարության ներքին գործոց նախարար Բեհբուդ-խան Զիվանշիրի ահաբեկիչ Միսաք Թողաքյանի՝

---

Андреевского, т. XXVIIА, издатели Ф. Брокгауз, И. Ефрон, СПб., 1899, с. 86, տե՛ս նաև Պոпен И., Исторический памятник Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПб., 1852, с. 537): Միաժամանակ Գագանի, Աստրախանի և Ղրիմի թաթարներին տարբերելու համար Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու բնակչությունը հանրագիտական բառարաններում և պաշտոնական վիճակագրական տեղեկագրերում սկսեց անվանվել *կովկասյան* կամ *այսրկովկասյան թաթարներ* (տե՛ս Энциклопедический словарь русского библиографического института гранат. т. 4, изд. 7-ое, Москва (б. г.), с. 459, տե՛ս նաև Статистическое бюро Бакинской городской управы. Пособия при разработке материала переписи г. Баку 22-го октября 1903 года, Баку, 1904, с. 102): Ադրբեջանական ԽՍՀ-ում 1930-ական թվականներին տեղի ունեցած անձնագրավորման ժամանակ, երբ համատարած «ադրբեջանականացվեց» թյուրքալեզու բնակչությունը, 1939 թ. հունվարի 17-ի մարդահամարի պաշտոնական նյութերում նոր միայն արհեստածին «Ադրբեջան» վարչաքաղաքական անունից ի հայտ եկավ *ադրբեջանցի* բառը (տե՛ս Всесоюзная перепись населения 1939 г.: основные итоги, Москва, 1992, с. 71, տե՛ս նաև Большая Советская Энциклопедия, изд. 2, т. 1, Москва, 1949, с. 440, տե՛ս նաև Ստեփանյան Գ., Արևելյան Այսրկովկասում «ադրբեջանցի» էթնանվան գործառնական հարցի շուրջ, «Մերձավոր Արևելք», պր. V, Երևան, 2008, էջ 137-144):

<sup>13</sup> Ադրբեջանական Հանրապետությունում սկսած մուսավաթականների կառավարման շրջանից հայ և այլազգի բնակչության նկատմամբ իրականացված հալածական և ձուլման քաղաքականության մանրամասն քննությունը տե՛ս Волкова Н., Этнические процессы в Закавказье в XIX-XX вв., “Кавказский этнографический сборник”, N 4, Москва, 1969, с. 47-50; Григорян В., Насильственная ассимиляция мусульманских национальных меньшинств в Азербайджане, Ереван, 1992; Чобанян С., “Государственная и национальная политика Азербайджана”, Ереван, 1993; Алексеев М., Казенин К., Сулейманов М., “Дагестанские народы Азербайджана”, Москва, 2006, Ընդդեմ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, կազմող՝ Ավրգյան Հ., Երևան, 2007, Միրզոյեան Բ., Էթնիկ ժողովուրդների գտման քաղաքականությունը Ադրբեջանում, «Դրօշակ», Երևան, 2008, N 2-3, էջ 24-33:

Կ. Պոլսում 1921 թ. հոկտեմբերի 6-ին կայացած դատավարության ընթացքում Բաքվի՝ 1918 թ. հերոսամարտի մասնակից, ՀՅԴ անդամ Գրիգոր Ամիրյանը հրապարակեց կոտորածներից առաջ Բ. Ջիվան-շիրի կողմից Նուխիի, Արեշի, Շամախու և Բաքվի քաղաքապետերին տրված ծածկագիր հրամանը, որում ասված էր. «Սրբազան պատերազմ մըն է այս, մղուած՝ միացնելու համար բոլոր թուրք ցեղերը: Այս ի կատար ածելու համար անհրաժեշտ է, որ նախ հայ ցեղը բնաջնջուի: Հայերը խոչընդոտ կը հանդիսանան մեր քաղաքական ճամբուն վրա... Անհրաժեշտ է ոչնչացնել հայերը, անոնց դիակներու վրայէն անցնելով մեր նպատակներուն հասնելու համար: Մի խնայէք ոչ ոքի եւ հավատարմօրէն կատարեցէք ձեզի տրուած հրահանգները»<sup>14</sup>: Ուշագրավն այդ փաստաթղթում այն է, որ հայ բնակչությանը կոտորելու մուսավաթական ղեկավարի հրահանգը հար և նման է 1915-1916 թթ. արևմտահայերի կոտորածների ժամանակ Թալեաթի, Էնվերի և երիտթուրքական մյուս ղեկավարների հրահանգներին: Եվ եթե արևմտահայերի բնաջնջումն իրականացնում էր «Թեշքիլաթը մահուսե»-ն («Հատուկ կազմակերպություն») իր հրոսակախմբերով<sup>15</sup>, ապա Բաքվի նահանգում այդ նպատակով գործում էր «Ջալլադ քոմիթեսի» («Դահիճների կոմիտե») կազմակերպությունը<sup>16</sup>: Դրանով մեկ անգամ ևս փաստվում է այն իրողությունը, որ արևելահայերի՝ 1918-1920 թթ. կոտորածների ժամանակ երիտթուրքերի, հետագայում նաև քեմալականների և մուսավաթականների միջև գոյություն ուներ գաղափարական և գործնական սերտ համագործակցություն: Թուրքերի մուտքը Բաքու մեծ օժանդակություն ստացավ Գանձակում գտնվող մուսավաթական կառավարության կողմից: Թուրք-մուսավաթական համագործակցությունն ավելի ակնառու դարձավ, երբ մայիսի 27-ին Գանձակ ժամանեց Կովկասյան թուրքական բանակի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Նուրի փաշան, ով, լինելով Էնվեր փաշայի խորթ եղբայրը, հարյուրապետից կարճ ժամանակում հասել էր գեներալ-

<sup>14</sup> Պեհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը անգ. Զինուորական ատենանին առջեւ, Աթէնք, 1936, էջ 141, 142:

<sup>15</sup> Տե՛ս Տատրեան Վ., Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, Մասաչուսեթս, 1995, էջ 126:

<sup>16</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 245, ց. 1, գ. 12, թ. 7:

լեյտենանտի կոչման<sup>17</sup>: Մայիսի վերջերին Բաքվի ճակատում գտնվող թուրքական ուժերի ընդհանուր թիվն արդեն անցնում էր 20.000-ից<sup>18</sup>, և այդ թիվն օրեցօր ավելանում էր<sup>19</sup>:

Բաքվի հայության հերոսամարտն ուներ վճռորոշ նշանակություն ինչպես Նուխի և Արեշ գավառների ու Բաքվի նահանգի հայահոծ բնակավայրերի, այնպես էլ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետագա գոյության համար: Երիտթուրքերը մամուլում բացեիքաց հայտարարում էին, թե «Հայաստանի խնդրի վերջնական լուծումը կախած է Բազուից, երբ կը գրաւենք Բազուն, կը լուծենք եւ Հայաստանի հարցը...»<sup>20</sup>: Այդ իսկ պատճառով էլ Բաքվի Հայոց Ազգային խորհուրդն ու ՀՅԴ Բաքվի Ոսկանապատի Կ. Կոմիտեն հրաժարվեցին կատարել Հայաստանի Հանրապետությանը պարտադրված Բաթումի պայմանագրի (1918 թ. հունիսի 4) 11-րդ հոդվածի պարտավորությունը, որով «Բաքու քաղաքից անհապաղ դուրս պետք է բերվեին հայկական բոլոր զորամասերը»՝ Բաքվի Կոմունայի պաշտպանների հիմնական կորիզը<sup>21</sup>:

Հայկական զորամիավորումների չորսամսյա հերոսամարտերից հետո մեծաթիվ թուրք-թաթարական զորամասերը սեպտեմբերի 15-ին գրավեցին Բաքուն և թուրք սպաների ղեկավարությամբ երեք օր շարունակ (15-ից-17-ը) կոտորեցին հազարավոր հայերի՝ կոդպտելով նրանց ունեցվածքը: Նախքան Բաքուն գրավելը զանգվածային տեղահանության ու կոտորածի էր ենթարկվել Նուխի և Արեշ գավառների և Բաքվի նահանգի հայկական գյուղերի բնակչության զգալի մասը<sup>22</sup>: Վրաստանում Գերմանիայի գերագույն կոմիսար գեն. Ֆրիդրիխ Կրես ֆոն Կրեսենշտայնի՝ 1918 թ. հոկտեմբերի 2-ին Բեռլին ուղարկված հույժ գաղտնի հեռագրում ասվում է. «Քաղաք մոնեթլուց հետո թաթարները սկսեցին կոդոպուտը և կոտորած-

<sup>17</sup> Ո՞վ է Նուրի փաշա, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 1918, Ա տարի, նոյեմբերի 13/26, N 24:

<sup>18</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 57, թ. 44, տե՛ս նաև Սարգսյան Ե., նշվ. աշխ., էջ 398:

<sup>19</sup> Տե՛ս Բազուի ուղղութեամբ, «Մշակ», Թիֆլիս, 1918, հունիսի 25, N 120:

<sup>20</sup> Գիլիսանդանեան Ա., Բազուն Հայաստանի անկախութեան եւ նորա պահպանման տեսակէտից (Մայիս 28. 1918-1938 քսանամեակ), Փարիզ, 1938, էջ 27:

<sup>21</sup> Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով (Դէպքեր, դէմքեր, ապրումներ), Կ. Զ. Պէրրոյ, 1967, էջ 337, տե՛ս նաև Ահարոնեան Գ., Մեծ երազի ճամբուն վրայ... (ակնարկ հայկական հարցի պատմութեան վրայ), Լոս Անճելըս, 1986, էջ 111:

<sup>22</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 36, թ. 45:



ները, որոնց մասնակցում էր թուրքական բանակը»<sup>23</sup>: Թուրք ջարդարարներին էին միացել նաև 2000-ի հասնող քրդական ջոկատները<sup>24</sup>, որոնք «...երեք օր իրադրության տերերն էին»<sup>25</sup>: Փաստերը վկայում են, որ հայերի կոտորածներն իրականացվել են թուրքական զորքերի ուղեկցությամբ Բաքու մտած Ֆ. Խան-Խոյսկու գլխավորած մուսավաթական կառավարության անմիջական օժանդակությամբ: «Հորիզոնը» գրում է. «Եւ տաճիկները, քիւրդերն ու թուրք հրոսակները խուժեցին քաղաք, տաճիկ հրամանատարութիւնից և Ադրբեջանի կառավարութիւնից թոյլտուութիւն ստացած լինելով երեք օր թալանել և կոտորել հայերին»<sup>26</sup>: Սպանդ, կոտորածներ, սրածվող երեխաներ, պատշգամբներից նետվող այրվող մարդիկ. ահա սա էր 1918 թ. սեպտեմբերյան ջարդերի օրերի Բաքուն: Ինչպես 1915 թ. արևմտահայերի ցեղասպանությունը սկսվեց հայ մտավորականության գլխատմամբ, այնպես էլ Բաքվում զանգվածային ջարդերին առաջինը գոհ գնացին տեղի հայ մտավորականները, այդ թվում՝ բժիշկներ, ինժեներներ, փաստաբաններ, մանկավարժներ, գրողներ, լրագրողներ և մշակույթի գործիչներ<sup>27</sup>: Մտավորականներից շուրջ 500 հոգի բանտարկվեց. մեծ մասը մահապատժի ենթարկվեց<sup>28</sup>: Համընդհանուր էին կոտորածը, ավերն ու թալանը: Քաղաքի գրեթե ոչ մի հայ ընտանիք զերծ չմնաց սոսկալի ջարդերից ու կողոպուտից: Բնակչության մի մասը կոտորվեց տեղում՝ հարազատ օջախներում, մյուս մասը՝ փողոցներում և ապաստանած վայրերում: Լիովին ավերվեց հատկապես Հայկական թաղամասը, որտեղ անխնա կոտորեցին ծերերին և մինչև անգամ ծծկեր երեխաներին<sup>29</sup>: Չինայվեցին նույնիսկ հիվանդանոցներում գտնվողները: Միայն Բալա-

<sup>23</sup> «Армянский вопрос и геноцид армян в Турции 1913-1919». Материалы политархива МИД кайзеровской Германии (сборник), сост. отв. ред. В. Микаелян, Ереван, 1995. с. 587.

<sup>24</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 2, թ. 98, տե՛ս նաև՝ «Աշխատաւոր», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 25, դ. 140:

<sup>25</sup> ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեռնի անձնական ֆոնդ, ց. 1, գ. 235, թ. 5:

<sup>26</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 25, N 218:

<sup>27</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 974, թ. 1, տե՛ս նաև՝ ֆ. 276, ց. 1, գ. 37, թ. 42:

<sup>28</sup> Տե՛ս ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեռնի անձնական ֆոնդ, ց. 1, գ. 235, թ. 5, տե՛ս նաև «Ժողովուրդ», Թիֆլիս, 1918, նոյեմբերի 3, N 27, տե՛ս նաև՝ «Մշակ», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 25, N 193:

<sup>29</sup> Տե՛ս «Արձագանք», Եկատերինոդար, 1918, հոկտեմբերի 7, N 7:

խանութի հիվանդանոցում սրախողխող արվեց 360 հիվանդ. Կոտորածին զոհ գնաց «Կոմենդանտսկի» փողոցի վրա գտնվող հայկական որբանոցի 500 երեխա, նրանցից 63-ը փողոց էր նետվել չորրորդ հարկից<sup>30</sup>: Կոտորածի 4-րդ օրը Բ. Խան-Ջիվանշիրի հրամանով Մուղանի անապատ տաժանակիր աշխատանքի քշվեց և կոտորվեց 9000 հայ երիտասարդ<sup>31</sup>:

Բաքվում հայերի կոտորածների մասին կարևոր և ստույգ տեղեկություններ է հաղորդում Թիֆլիսում Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական ներկայացուցիչ Բարոն Գ. ֆոն Ֆրանկենշտայնը՝ արտաքին գործոց նախարար կոմս Շտեֆան Բուրիանին 1918 թ. հոկտեմբերի 5-ին հղած հեռագրով, որում ասվում էր. «Հայկական մեծ թաղամասը, որն այցելեցի, ամբողջությամբ կողոպտված էր և լրիվ դատարկ: Բազմաթիվ ապացույցներ ստացա զազանային դաժանությունների՝ հիվանդանոցներում հայ բժիշկների, հիվանդների և երեխաների կոտորածի մասին»<sup>32</sup>: Դեպքերի մեկ այլ ականատես «Արևելք» գորախմբի զվսավոր շտաբի պետ, թուրքական ծառայության փոխգնդապետ Էռնստ Պարակեն կատարված ոճրագործությունների մասին գեներալ-լեյտենանտ ֆոն Ջեքքբիին 1918 թ. Սեպտեմբերի 26-ին գրել է. «Գազանությունները մեծ մասամբ կատարվում էին տների ներսում: Այդ պատճառով փողոցներում համեմատաբար քիչ դիակներ կային: Դրանք գերազանցապես անկյուններում էին դարսված, այնպես որ հաճախ միայն հոտից կարելի էր իմանալ: Մի տեղում ես իրար վրա դարսած 7 դիակ տեսա, այդ թվում մի քանի երեխա... Գրեթե բոլոր դիակները ծածկված էին կապտուկներով, որոնք առաջացել էին հրացանների խզակոթների հարվածներից և խողխողումներից»<sup>33</sup>: Զանգվածային կոտորածների հետքերը ծածկելու նպատակով զանազան թաղամասերից հավաքված հայերի դիակների մեծ մասը թուրքական հրամանատար-

<sup>30</sup> Տե՛ս «Ժողովուրդ», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 18, N 20, տե՛ս նաև՝ «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 13, N 208, տե՛ս նաև՝ Պէհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարությունը, էջ 22:

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 21:

<sup>32</sup> Մանուչարյան Ա., 1918 թ., Բաքվի հայկական ջարդերը (ԳՖՀ-ի արտաքին գործերի մինիստրության քաղաքական արխիվի փաստաթղթերը), «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետ՝ ԼՀԳ), Երևան, 1990, N 6, էջ 86:

<sup>33</sup> Մանուչարյան Ա., նշվ. աշխ., էջ 84:

րության կարգադրությամբ թափեցին ծովը կամ էլ հրկիզեցին<sup>34</sup>: Շամախու հայոց թեմի առաջնորդ և Բաքվի Հայոց ազգային խորհրդի պատվավոր նախագահ Բագրատ եպս. Վարդապարյանի վկայությամբ. «25 բեռնատար մեքենաներ 4 օրերի ընթացքում անընդմեջ, գիշեր ու ցերեկ տեղափոխում էին դիակներ, իսկ այն դիակները, որոնք չէին հասցնում տեղափոխել, թաղում էին Սալյանսկի գորանոցների շրջանում»<sup>35</sup>: Ծանր փորձություններ էին սպասվում Բաքվում ապաստանած և կոտորածներից փրկված Շամախի և Գյոքչա գավառների գաղթականությանը: Նրանցից 6500-ը Շամախու և 3000-ը Գյոքչայի գավառներից էին: Բ. Խան-Ջիվանշիրի հրամանով 1918 թ. սեպտեմբերի վերջերին նրանց բռնությամբ տեղափոխեցին գավառներ<sup>36</sup>: Գաղթականներից 1500-ը ճանապարհին սրի քաշվեցին թուրք-թաթար ասկյարների կողմից<sup>37</sup>, իսկ կանայք և աղջիկները ենթարկվեցին խոշտանգումների և նսեմացման<sup>38</sup>: Սպանություններին նախորդում էին կոդպուտը, բռնաբարությունները, կանանց ու երեխաների խոշտանգումը:

Հայերի կոտորածներից հետո Բաքվի Հայոց ազգային խորհրդին կից 1918 թ. հոկտեմբերի 10-ին Բ. Իշխանյանի նախագահությամբ ստեղծվեց «Անկետային հանձնաժողով», որն ուսումնասիրեց հայերի կրած մարդկային ու նյութական կորուստների չափը: Բ. Իշխանյանի հեղինակած «Բագուի մեծ սարսափները...» աշխատությունը, որը որակվել է որպես «հայկական ողբերգության սգամատյան», ցույց է տալիս Բաքվի հայերի կրած ողջ ողբերգությունը: Ահա մի քանի տվյալներ, որոնք բացահայտում են թուրք-թաթարների գործած գազանությունների իրական պատկերը: Գերիների թիվը կազմել է 4246, որոնցից 445-ը ծեծի և տաժանակիր աշխատանքների հետևանքով մահացել են, բանտարկվածներինը՝ 553, բռնաբարվածներինը՝ 572, առևանգված հայուհիներինը՝ 1142, անհայտացածներինը՝ 3586<sup>39</sup>: Ցեղասպանության այդ հրեշավոր քաղաքակա-

<sup>34</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 223, ց. 1, գ. 118, թ. 10, տե՛ս նաև՝ ֆ. 199, ց. 1, գ. 23, թ. 25-26:

<sup>35</sup> ՀԱՍ, ֆ. 199, ց. 1, գ. 25, թ. 9:

<sup>36</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 3:

<sup>37</sup> Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1919, մարտի 4, դ. 48:

<sup>38</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 278, ց. 1, գ. 4, թ. 28, տե՛ս նաև՝ ֆ. 223, ց. 1, գ. 75, թ. 74, տե՛ս նաև՝ «Наше время », Баку, 1919, 22 февраля, N 32:

<sup>39</sup> Տե՛ս Իշխանյան Բ., Բագուի մեծ սարսափները: Անկետային ուսումնասիրություն սեպտեմբերեան անցքերի 1918 թ., Թիֆլիս, 1920, էջ 184-187:

նությանը զոհ գնացին ավելի քան 30.000 հայեր<sup>40</sup>: Հայ բնակչության կրած նյութական վնասների գումարն անցնում էր 1 միլիարդ ռուբլուց<sup>41</sup>:<sup>42</sup>

Բաքվում հայերի զանգվածային ջարդերի և դրանում թուրք-մուսավաթականների պատասխանատվության հարցի առիթով Ժամանակի մամուլում բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել կոտորածների ակնաստես, ռուս բանաստեղծ և դրամատուրգ, պետական պաշտոնյա Մերգել Ռաֆայովիչը: 1918 թ. դեկտեմբերի 3-ին “ Кавказское слово ” լրագրում նա տպագրել է «Ճշմարտություն Բաքվի իրադարձությունների մասին» խորագրով հոդվածը, որում փաստերով ապացուցում է, որ Բաքուն թուրքական զորքերի կողմից գրավվելուց հետո հայ բնակչության նկատմամբ իրականացվել են նախապես ծրագրված բնաջնջում ու կոդուպուտ<sup>43</sup>: Ս. Ռաֆայովիչը վկայում է, որ կոտորածի օրերին մուսավաթական կառավարությունը չէր թաքցնում իր մտադրությունը՝ կոտորել և բռնագաղթի ենթարկել Բաքվում ապրող հայերին<sup>44</sup>: Այս իրողությունը փաստվում է նաև այլ վկայություններով: Ս. Թողլաքյանի դատավարության Ժամանակ մինչ այդ գաղտնի մնացած փաստեր են հրապարակվում Բաքվի հայերի սեպտեմբերյան ջարդերի՝ նախօրոք կազմակերպված լինելու, դրանում մուսավաթական կառավարության ունեցած մեծ դերակատարության մասին: Այսպես, ջարդերից մի քանի օր առաջ, ըստ թաղամասերի, նախապես ճշտվել էին հայերի բնակչության հասցեները: Դրանում հատկապես մեծ դերակատարություն է ունեցել փոստի և հեռահաղորդակցության նախարար Խուդադատ-բեկ Մելիք-Ասլանովը: Դատավարության ընթացքում հրապարակվեց հայերի ջարդերի օրերին վերջինիս արած հետևյալ հայտարար-

<sup>40</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 96-99, տե՛ս նաև՝ Геноцид армян в Османской империи. Сборник документов под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982, док. N 245, с. 524, տե՛ս Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 418:

<sup>41</sup> Տե՛ս Բշխանեան Բ., նշվ. աշխ., էջ 185, 187:

<sup>42</sup> Բաքվի նահանգի հայության պատմության մանրամասն քննությունը տե՛ս Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011:

<sup>43</sup> См. Рафалович С., “Правда о бакинских событиях”. “Кавказское слово”, Тифлис, 1918, 3 (20) декабря, N 262, Закарян А., Русский писатель С. Рафалович о сентябрьских событиях в Баку 1918 г., І, 29, 1988, N 2, с. 48-51:

<sup>44</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 199, թ. 153:

րությունը. «Մինչև որ Ատրպեճանի բոլոր հայերը չմաքրենք. մեր զենքը պիտի չթողունք»<sup>45</sup>: Իսկ Բաքուն գրավելուց հետո Ֆ. Խան-Խոյսկու և Բ. Ջիվանշիրի ստորագրությամբ թուրքերենով և ռուսաց լեզվով հրապարակված հայտարարության մեջ ասվում էր. «Վերջապես թրքական զինուորները փրկեցին Ատրպեճանի մայրաքաղաքը: Կը սպասենք որ կարգ ու կանոն հաստատուի երկրին մեջ, ի բաց առեալ հայերու պարագային, որոնք ծանրօրէն պիտի պատժուին»<sup>46</sup>: Եվ պատահական չէ, որ Բ. Ջիվանշիրը հայերի դեմ գործած իր ոճրագործ քաղաքականության համար ձեռք էր բերել «Ադրբեջանի Թալեաթ» տիպահոջակ համբավը<sup>47</sup>:

Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրած իր մենագրության մեջ Բաքվի հայերի ջարդերին անդրադարձել է պատմաբան պրոֆ. Վահագն Դադրյանը: Քննարկելով հայերի ջարդերի պատասխանատուների հարցը՝ նա համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ այդ հրեշավոր ծրագիրը իթթիհադական պարագլուխների հղացումն էր, որի իրականացմանը աջակցել և գործուն մասնակցություն է ցուցաբերել մուսավաթական կառավարությունը: Գիտական շրջանառության մեջ դնելով նոր, մինչ այդ գաղտնի մնացած վավերական նյութ, ինչպես նաև քաղվածքներ կատարելով թուրք ականատես-ժամանակակիցների վկայություններից՝ Դադրյանը փաստում է, որ կոտորածի կազմակերպիչներից էր իթթիհադական տեսաբան, արևմտահայերի ցեղասպանության գլխավոր հանցագործներից մեկը՝ Բեհաեդդին Շաքիրը, որը Բաքվի գրավումից հետո նշանակվել էր քաղաքի ոստիկանապետ: Անդրադառնալով երիտթուրքերի և մուսավաթականների փոխադարձ դաշինքով Բաքվում տեղի ունեցած հայերի ջարդերին՝ Վ. Դադրյանը դիպուկ նկատում է. «Այլապես հարց է ծագում, ի՞նչ էր անում թուրք բժիշկը Ադրբեջանում և մասնագիտական ինչ հմտություններ կարող էր օգտագործել բժիշկը՝ գործելով որպես ոստիկանապետ»<sup>48</sup>: Բաքվում հայերի զանգվածային ջարդերը երիտթուրքերի կողմից կանխամտածված և ծրագրված լինելու փաստի մասին վկայություն է թողել Էնգելիում

<sup>45</sup> Թողաքեան Ս., Օրերուս հետ, Գ հրատ., Պէրյուք, 2001, էջ 527:

<sup>46</sup> Պէհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաթ Թորլաքեանի դատավարությունը, էջ 18, 19:

<sup>47</sup> Տե՛ս «Ձանգ», Երևան, 1918, Բ տարի, դեկտեմբերի 8, N 77:

<sup>48</sup> Дадрян В., “История армянского геноцида. Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа”, Ереван, 2007, с. 454.

Ֆրանսիայի ներկայացուցիչը, որ 1918 թ. հոկտեմբերի 5-ին Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյին գրել է, որ Բաքուն գրավելուց հետո թուրքերը հայ բնակչության հետ վարվում էին ինչպես Օսմանյան կայսրության մեջ 1915 թ.<sup>49</sup>: Խալիլ փաշայի գերմանացի սպաներից մեկը, ով Բաքվում ականատես էր եղել հայերի դեմ թուրք-թաթարների գործած գազանություններին, Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Զամալյանի հետ հանդիպման ժամանակ վրդովմունքով հայտարարել էր իր հրաժարականի մասին: «Այն բարբարոսությունը, որ տեղի ունեցավ այնտեղ (իմա՝ Բաքվում - Գ. Ս.), անկարելի է նկարագրել: Ոչ, լինես քրիստոնեայ և եւրոպացի և ստիպուած լինես խժոժութիւններ տեսնել և լսել – դա վեր է իմ ուժերից. և ես այս երեկոյ նեթ պէտք է իմ հրաժարականը տամ Խալիլ փաշային:... Ամբողջ պատասխանատւութիւնը ընկնում է Նուրի փաշայի և նրա շտաբի վրայ, սրանք եթէ կամենային, կարող էին արգելել կոտորածը և թալանը: Պէտք է ասեմ, որ կոտորածը և թալանը եղել են ոչ միայն զօրքը քաղաք մտնելուց առաջ, այլև յետոյ. իմ տպաւորութիւնս է, որ **կոտորածը նախամտածուած էր** (ընդգծումը - Գ. Ս.)...»<sup>50</sup>, - ասել էր գերմանացի սպան: Այսպիսով, ջարդերի անմիջական ականատեսների ու ժամանակակիցների անհերքելի վկայություններն ու հավաստի վավերագրերն աներկբա փաստում են, որ ռազմական գործողությունների քողի տակ երիտթուրքերն ու մուսավաթականները կանխամտածված ծրագրով Բաքվի հայերի նկատմամբ իրականացրել են ցեղասպանություն:

Բաքվի նահանգում հայահալած քաղաքականությունը շարունակվեց Ադրբեջանական Հանրապետության գոյության ամբողջ ընթացքում (1918 թ. մայիսի 28-1920 թ. ապրիլի 28): Պետք է նշել, որ ազգային խտրական քաղաքականության մեջ մուսավաթականները հատուկ տեղ էին հատկացրել հատկապես հայերին: Որ թիրախը հայ բնակչությունն էր, փաստում է Բաքվում այդ տարիներին բնակվող ռուս հասարակական-քաղաքական ճանաչված գործիչ Բորիս Բայկովը: Նա վկայում է, որ մուսավաթական կառավարությունը բռնությունները դարձրեց նպատակային և «պատերազմ հայտա-

<sup>49</sup> Տե՛ս Պողոսյան Ս., Պանթուրքիզմը երեկ և այսօր, Երևան, 1990, էջ 25:

<sup>50</sup> ՀԱՍ, ֆ. 276, ց. 1, գ. 37, թ. 34, 35:

րաբեց հայությանը»<sup>51</sup>: Պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից և թուրքական զորքերի Այսրկովկասից հեռանալուց հետո մուսավաթականները շարունակեցին հայահալած քաղաքականությունը: Եռյակ դաշինքի պետությունների պարտությունից հետո հեռանալով Բաքվից՝ թուրքական հրամանատարությունն այնտեղ թողեց մեծ թվով սպաներ, զենք ու զինամթերք<sup>52</sup>: Այսպիսով, արևելահայերին բնաջնջելու երիտթուրքերի քաղաքականությունը որպես «ժառանգություն» փոխանցվեց մուսավաթականներին:

Բաքվի հայերի՝ 1918 թ. սեպտեմբերյան կոտորածներից հետո մուսավաթականները Նուխի և Արեշ գավառներում և Բաքվի նահանգի տասնյակ հայկական գյուղերում հայ բնակչության նկատմամբ իրագործեցին նորանոր ոճրագործություններ՝ կոտորած, կողոպուտ, տեղահանություն և այլն<sup>53</sup>: Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական ծառայությունների՝ արտաքին գործոց նախարար Շ. Բուրիանիին հղած հեռագրում թուրք-թաթարների ոճրագործությունների մասին ասվում էր. «Հայերի վերջին հալածանքների ժամանակ թաթարներն իրենց դաժանությամբ մրցում էին թուրքերի հետ»<sup>54</sup>: «Առաջին համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» 1919 թ. մարտին կազմած տեղեկագրի համաձայն՝ միայն Շամախու գավառում ավերվել էր 17 գյուղ՝ 2431 տնտեսություն, իսկ Գյոքչայի գավառում՝ 12 գյուղ՝ 1703 տնտեսություն<sup>55</sup>: Ընդհանուր առմամբ 1918 թ. մարտից 1919 թ. հունիս ընկած ժամանակահատվածում Բաքվում և գավառներում հայ զոհերի թիվը ոչ լրիվ տվյալներով անցնում էր 50.000-ից<sup>56</sup>: Այսպիսով, երիտթուրքերի կիսատ թողածը նույն թուրքերի օգնությամբ լրացրին մուսավաթականները:

<sup>51</sup> Байков Б., “Воспоминания о революции в Закавказьи (1917-1920 гг.)”. “Архив русской революции”, издаваемый И. В. Гессеным, т. IX, Берлин, 1923, с. 143.

<sup>52</sup> Տե՛ս Ավետիսյան Հ., Երիտասարդ թուրքերի և Մուսավաթի համաթուրքական գործակցությունը, էջ 62:

<sup>53</sup> Մանրամասն տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ. (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմողներ՝ Միրզոյան Ս., Ղազիյան Ա., պատ. խմբագիր՝ Վիրաբյան Ա., զիրք Ա, Երևան, 2003, զիրք Բ, Երևան, 2012:

<sup>54</sup> Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., Երևան, 1997, էջ 285:

<sup>55</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 202, ց. 1, գ. 1271, թ. 31:

<sup>56</sup> Տե՛ս Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թթ., ՊԲՀ, Երևան, 2008, N 3, էջ 46:

Հարկ է նշել, որ մուսավաթական իշխանությունների հայա-  
հաված քաղաքականությանը նպաստեց նախկին երիտթուրք Մուս-  
տաֆա Քեմալ փաշայի գլխավորությամբ 1919 թ. գարնանից սկսված  
ազգայնական (միլլի) հորջորջված շարժումը<sup>57</sup>: Քեմալական շարժու-  
մը ժառանգեց երիտթուրքերի հայասպան քաղաքականության գա-  
ղափարական ծրագիրը: Լավ հասկանալով այն դերը, որ կարող են  
ունենալ մուսավաթականները Հայաստանի և հայերի դեմ սկսված  
պայքարում՝ Մ. Քեմալը Կարինի (Էրզրում) առաջին (1919 թ. հուլիս  
23-օգոստոս 6) և դրան հաջորդած Մեֆաստիայի (Սվաս) երկրորդ  
(1919 թ. սեպտեմբեր 4-11) համաժողովների աշխատանքներին մաս-  
նակից էր դարձրել Ադրբեջանական Հանրապետության զինվորա-  
կան ներկայացուցիչներին<sup>58</sup>: Ադրբեջանական Հանրապետությունը  
Կովկասում լայնածավալ գործունեության համար հենակետ դարձ-  
նելու նպատակ ունենալով՝ համաժողովներից անմիջապես հետո  
քեմալականների կողմից մի պատվիրակություն ուղարկվեց Բաքու,  
որն առաջադրանք ուներ՝ ամենուրեք մահմեդականներին ոտքի  
հանել հայերի դեմ և համաձայնության գալ մուսավաթականների  
հետ՝ նրանցից ֆինանսական օժանդակություն ստանալու նպատա-  
կով<sup>59</sup>: Բաքվում սկսեց ծավալվել քեմալականությունը պաշտպանող  
լայն շարժում: Տակավին 1919 թ. ամռանը թուրքական 15-րդ բանակի  
հրամանատար Քյազըմ Կարաբեքիրի պատվիրակները մշտական  
կապ էին պահպանում մուսավաթական կառավարության հետ: Բա-  
քու ուղարկվածների մեջ էր երիտթուրքական նախկին գործիչ, Էրզ-  
րումի համաժողովի կազմակերպիչ դոկտ. Ֆուաթ Սաֆիթը (Աղա-  
ջըք), որն ավելի ուշ՝ 1920 թ., իրեն հայտարարեց Բաքվում Թուր-  
քիայի գլխավոր ներկայացուցիչ<sup>60</sup>: Բաքվում իր գործունեությունն էր  
ակտիվացրել նաև համիսլամականության դիրքերում կանգնած  
«Իթթիհադ» («Միասնություն») կուսակցությունը, որն անթաքույց

<sup>57</sup> Տե՛ս Ամատունի Յ., Թուրք Միլլի շարժումը, «Հայրենիք», Պոսթըն, 1941, ԺԹ  
տարի, փետրվար, N 4, էջ 107-111:

<sup>58</sup> Տե՛ս Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ  
(1915-ից մինչև մեր օրերը), գիրք Բ, Երևան, 1983, էջ 262:

<sup>59</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>60</sup> Տե՛ս Սարգսյան Ե., Քեմալականների 1920-1921 թթ. արշավանքն Անդրկովկաս  
և 1921 թ. մարտի 16-ի Մոսկովյան պայմանագիրը, ԼՀԳ, Երևան, 1992, N 1, էջ 23:



ուներ հակահայկական ուղղվածություն<sup>61</sup>: Օսմանյան կայսրության և Բաքվի կայն ամրապնդելու նպատակով 1919 թ. հոկտեմբերի 29-ին Կ. Պոլսում Ադրբեջանական Հանրապետության ներկայացուցիչ Քերիմովի և Մ. Քեմալի ներկայացուցիչ, թուրքական զլխավոր շտաբի պետ Ջնադ բեյի միջև կնքվեց ռազմաքաղաքական համագործակցության գաղտնի մի դաշնագիր, որն առաջին հերթին ուղղված էր Հայաստանի և հայ ժողովրդի դեմ<sup>62</sup>: 1919 թ. վերջերից Բաքվում իր գործունեությունն էր վերսկսել Խալիլ փաշան: Այդ ժամանակ Ադրբեջանական Հանրապետությունում ազատ գործողության իրավունքից օգտվում էր նաև Նուրի փաշան, որը ղեկավարում էր մուսավաթականների հետ սերտորեն շաղկապված «Թուրքական ժողովրդի պատվիրակություն» կոմիտեն<sup>63</sup>: Քեմալականների և մուսավաթականների սերտ համագործակցության մասին «Իթթիհադ» լրագիրն այդ օրերին գրում էր. «...Տաճիկ ժողովրդի բախտը այսօրվանից կապված է Ադրբեջանի մահմեդականների բախտի հետ»<sup>64</sup>:

Անշուշտ, այս ազդակները ոգևորեցին թուրք-մուսավաթականներին՝ հայ բնակչության նկատմամբ վերսկսելու հալածական քաղաքականությունը: Բաքվում սկսեցին մշակվել հայասպան նոր ծրագրեր: Հայ բնակչության կոտորածները նոր թափով սկսվեցին 1920 թ. սկզբներից: 1920 թ. ապրիլի 11-ին թաթարական 200 զինված հրոսակախմբեր իշխանությունների ցուցումով հարձակվեցին Շամախու գավառի Գյուրջևան, Հնդար, Քոնլուձ, Քարքանջ ու շրջակա հայկական գյուղերի վրա և կոտորեցին 500 հոգու<sup>65</sup>: Կոտորածը զարհուրելի կերպարանք ստացավ հատկապես Գյուրջևան գյուղում: 300 զինված հրոսակներ ապրիլի 10-ին, շրջապատելով գյուղը, սպանում են ավելի քան 120 հոգու<sup>66</sup>: Հայ խաղաղ բնակչության սպանությունները, կոդոպուտն ու ավերումները շարունակվեցին նաև հայկական մյուս գյուղերում: Մուսավաթական իշխանության գործա-

<sup>61</sup> Տե՛ս Միքայելեան Ա., Ղարաբաղի վերջին դեպքերը, «Հայրենիք», Պոսթրն, 1923, Ա տարի, մայիս, N 7, էջ 165:

<sup>62</sup> Զարեւանդ, Միացեալ Անկախ Թուրանիա կամ ի՞նչ կը ծրագրեն թուրքերը, Բոստոն, 1926, էջ 169:

<sup>63</sup> Տե՛ս Սարգսյան Ե., Քեմալականների 1920-1921 թթ. արշավանքն Անդրկովկաս և 1921 թ. մարտի 16-ի Մոսկովյան պայմանագիրը, էջ 23:

<sup>64</sup> «Յառաջ», Երևան, 1920, հունիսի 19, N 127:

<sup>65</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2053, թ. 2:

<sup>66</sup> Տե՛ս “ Наше время”, Баку, 1920, 22 апреля, N 29.

դրած բարբարոսական քաղաքականության հետևանքով Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում զգալիորեն փոխվեց էթնոժողովրդագրական պատկերը՝ ի վնաս հայերի: Ընդհանուր առմամբ Նուխի և Արեշ գավառների 50.000-ից ավելի հայերից կոտորածի ենթարկվեց շուրջ 40.000-ը<sup>67</sup>: Ջարդերից հետո կտրուկ նվազեց նաև Բաքվի նահանգի հայերի թիվը: 1921 թ. մարդահամարի տվյալներով Գյոքչայի, Շամախու, Ղուբայի, Բաքվի, Լենքորանի և Ջավաթի գավառներում հայ բնակչության թիվը կազմում էր 50.212<sup>68</sup>: Այդ թիվը համադրելով հայ բնակչության՝ նախքան կոտորածներն արձանագրված թվի (127.318)<sup>69</sup> հետ՝ պարզորոշ երևում են փաստացի կորուստների այն մեծ չափերը, որ պատճառել էին թուրք-մուսավաթականները: Ըստ այդմ՝ կոտորածներին զոհ էր գնացել 77.106 մարդ, որից միայն 49.927-ը՝ Բաքու քաղաքում (նախքան կոտորածները Բաքվում (ներառյալ արդյունաբերական-գործարանային շրջանները) հայ բնակչության թիվը 88.673<sup>70</sup> էր, ապա 1921 թ. տվյալներով կազմում էր 38.746<sup>71</sup>): Դատարկված և ամայացած հայկական գյուղերը բնակեցվեցին կովկասյան թաթարներով, որոնց տրամադրվում էր հայերից բռնագրավված գույքը: Ավերվեցին ու ոչնչացվեցին դարերի ընթացքում ստեղծված հուշարձանները՝ խաչքարերը, վանքերն ու եկեղեցիները: Այսինքն՝ հայ բնակչության նկատմամբ իրականացվել է նաև մշակութային ցեղասպանություն: Բաքվի նահանգում 1918-1920 թթ. հայ բնակչության նկատմամբ իրականացված ցեղասպան քաղաքականության վերաբերյալ Մոսկվայում լույս տեսնող «Жизнь национальностей» ամսագիրը 1921 թ. գրել է. «Աղբբեջանում, այնտեղ, որտեղ նախկինում բնակվել են

<sup>67</sup> Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ., «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», հ. 5, Երևան, 2005, էջ 23-28:

<sup>68</sup> Տե՛ս Закавказье. Советские республики (Статистико-экономический сборник). Тифлис, 1925, с. 152-153.

<sup>69</sup> Տե՛ս ՀԱՄ, ֆ. 149, ց. 1, գ. 46, թ. 2-8, տե՛ս նաև՝ գ. 133, թ. 19, տե՛ս նաև՝ ֆ. 57, ց. 3, գ. 512, թ. 1-2, տե՛ս նաև՝ ֆ. 409, ց. 1, գ. 2634, թ. 1-2, տե՛ս նաև Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թթ., էջ 31-48:

<sup>70</sup> Տե՛ս Իշխանեան Բ., նշվ. աշխ., էջ 17:

<sup>71</sup> Տե՛ս Закавказье. Советские республики (Статистико-экономический сборник). С. 152-153, տե՛ս նաև Известия азербайджанского центрального статистического управления, Баку, 1923, 1 декабря, N 1 (7), с. 2.

հայերը, մնացել են բաց տարածություններ կամ բնակեցվել են կովկասյան թաթարներով և քրդերով: Հայ բնակչությունը կենտրոնացել է այն տեղերում, որտեղ չէին թափանցել մուսավաթականները»<sup>72</sup>:

Ադրբեջանական Հանրապետության խորհրդայնացումը (1920 թ. ապրիլի 28) չկասեցրեց նախորդ իշխանությունների կողմից իրականացվող հայահալած քաղաքականությունը: Բաքվում 1920 թ. սեպտեմբերի սկզբներին Կոմիստերնի նախաձեռնությամբ հրավիրված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի (որն ուներ ընդգծված հակահայկական ուղղվածություն), 4-րդ նիստում ընթերցվեց Բաքվում այդ օրերին գտնվող էնվեր փաշայի հայտարարությունը, որտեղ ասվում էր. «Մենք գտնում ենք, որ Ադրբեջանը պատկանում է ադրբեջանցիներին»<sup>73</sup>: Ինչը նշանակում էր նոր ցեղասպանություն և բռնագաղթ: Հատկանշական է այն հանգամանքը, որ արևմտահայերի ցեղասպանության ժամանակ նույն երիտթուրք ոճրագործներն իրենց հրեշավոր ծրագրերն իրականացրել են «Թուրքիան միայն թուրքերին» նենգամիտ նշանաբանով:

Այսպիսով, ինչպես ակներև է ցեղասպանության միջազգայնորեն ճանաչված սահմանումից, այն ամենը, ինչ տեղի է ունեցել Կուրի ձախափնյակի հայության հետ 1918-1920 թթ., անառարկելիորեն փաստում է, որ կատարվածը ցեղասպանություն էր: Հատկանշական է այն իրողությունը, որ երկրամասի տեղաբնիկ հայ բնակչությունը ցեղասպանության ենթարկվեց իր բնօրրանում, այնպես, ինչպես երիտթուրքերն իրագործեցին արևմտահայերի բնաջնջումը 1915-1916 թթ. Արևմտյան Հայաստանում: Ուստի, Բաքվի նահանգում թուրք-մուսավաթականների իրագործած քաղաքականությունը պետք է որակել որպես արևմտահայերի ցեղասպանության շարունակություն և բաղկացուցիչ մաս, քանզի Հայոց ցեղասպանությունն իր աշխարհագրական ընդգրկմամբ (Կիլիկիայից մինչև Բաքու) համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր:

---

<sup>72</sup> П. П., Тяжелое наследство, «Жизнь национальностей», Москва, 1921, N 4: Մեջբերումն ըստ՝ Волкова Н., Этнические процессы в Закавказье в XIX-XX вв., “Кавказский этнографический сборник”, N 4, Москва, 1969, с. 10.

<sup>73</sup> Первый съезд народов Востока 1-8 сентября 1920 г. Стенографические отчеты, Петроград, 1920, с. 109.

Հարկ է նշել, որ Բաքվի նահանգում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը մինչ օրս քաղաքական գնահատական չի ստացել համաշխարհային հանրության կողմից: Ուստի, անպատժելիության գործոնով էր պայմանավորված Մումգայիթում (1988 թ. փետրվարի 27-29), Բաքվում (1990 թ. հունվարի 13-19), Խանլարի շրջանում (1991 թ. ապրիլի 30), Մարաղայում (1992 թ. հունիսի 13-14) և հայաթափված Շահումյանի շրջանում սանձազերծված հայերի սպանող, որի մանրամասները բազմաթիվ զուգահեռներով աղերսվում են 1918-1920 թթ. կոտորածների հետ: Հետևապես, Ադրբեջանական Հանրապետությունում, անկախ այդտեղ հաստատված քաղաքական վարչաձևերից, հայ բնակչության նկատմամբ հետևողականորեն կիրառվել է հալածանքի, ազգային խտրականության, էթնիկ զտման և ցեղասպանության հանցավոր քաղաքականություն:

Թուրք-մուսավաթականների կողմից Բաքվի նահանգի հայերի նկատմամբ 1918-1920թթ. իրագործված ցեղասպանությունն իր էությանմբ համարվում է ոչ միայն պատմական, այլև քաղաքական ու իրավական հարց: Ուստի բոլոր երեք հարթություններում էլ պահանջվում են հստակ ու որոշակի գնահատականներ: Միաժամանակ պետք է արձանագրել, որ, անկախ վարչակարգից, Բաքվի նահանգի հայության ցեղասպանության պատասխանատուները ներկայիս թուրքական և ադրբեջանական պետություններն են: Հայտնի է, որ միջազգային իրավահաջորդությունը որևէ պետության իրավունքների և պարտականությունների փոխանցումն է մեկ այլ պետության: Ուստի Թուրքիայի Հանրապետությունը, համարվելով Օսմանյան կայսրության իրավահաջորդը, լիիրավ պատասխանատվություն է կրում վերջինիս կատարած հանցագործությունների, մասնավորապես Հայոց ցեղասպանության համար<sup>74</sup>:

Ադրբեջանական Հանրապետության պարագայում այդ պատասխանատվության համար որպես իրավական հիմք է ծառայում նախագահ Այազ Մուրադիբովի կողմից 1991 թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված «Ադրբեջանական Հանրապետության պետական անկախությունը վերականգնելու մասին սահմանադրական ակտը»:

---

<sup>74</sup> Տե՛ս Մելքոնյան Ա., Հայոց պատմության դասերը, Երևան, 2003, էջ 212, տե՛ս նաև Մարության Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան, 2014, էջ 38-42:

Փաստաթղթի «Ընդհանուր դրույթներ» բաժնի 2-րդ հոդվածում պարզորոշ ասված է. «Ադրբեջանական Հանրապետությունը 1918 թ. մայիսի 28-ից մինչև 1920 թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանական Հանրապետության ժառանգորդն է»<sup>75</sup>: Այդ փաստաթղթով, ըստ էության, հաստատվում են 1918-1920 թթ. և ներկայիս Ադրբեջանական Հանրապետության ժառանգական կապը, պետականության իրավահաջորդ լինելու հանգամանքը, որը սկզբունքորեն իր հետ բերում է նաև իրավական պարտավորություն: Այս փաստաթուղթը նույնպես հայ ժողովրդի համար հիմք է ծառայում Ադրբեջանական Հանրապետությունից պահանջելու Բաքվի՝ 1918-1920 թթ. հայերի ցեղասպանության փաստի ճանաչումը և փոխհատուցումը նյութական ու բարոյական այն վնասի, որ նա կրել է: Հաստատված է նաև, որ Բաքվի նահանգի հայերը բնաջնջման են ենթարկվել իրենց ազգային պատկանելության և հայրենի բնօրրանից դուրս մղվելու համար, որը ևս ցեղասպանությունը բնորոշող հանցագործություն է: Հետևապես «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի դրույթները (ուժի մեջ է մտել 1951 թ. հունվարի 12-ից) լիովին համընկնում են այն ամենին, ինչը կատարվել է Բաքվի նահանգի հայ բնակչության հետ 1918-1920 թթ.: Քանի որ կոնվենցիայի 2-րդ հոդվածը ցեղասպանությունը բնութագրում է իբրև կանխամտածված գործողությունների գործադրում<sup>76</sup>, ապա հարկ է նշել, որ արխիվային բազմաթիվ փաստերն անհերքելիորեն ապացուցում են, որ երիտթուրքերի, քեմալականների և մուսավաթականների իրականացրած ցեղասպանության նպատակը եղել է ոչ միայն հայերի ֆիզիկական բնաջնջումը, այլև հայրենագրվումը: Սակայն, չնայած այդ ամենին, Թուրքիան ու Ադրբեջանը ոչ միայն չեն համակերպվում պատմական փաստերի հետ, այլև պետական մակարդակով վարում են Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականություն: Հետևապես, միջազգային հանրության ամենաանհետաձգելի խնդիրներից պետք է լինի նաև Բաքվի նահանգում 1918-1920 թթ. հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությանն իրավական ու քաղա-

<sup>75</sup> base.spininform.ru/show\_doc.fwx?rgn=2889, տե՛ս նաև Манасян А., Карабахский конфликт. Ракурсы правового подхода, Ереван, 1998, с. 97.

<sup>76</sup> См. Международное гуманитарное право в документах. Москва, 1996, с. 123-127.

քական գնահատական տալը: Դրանից ուղղակիորեն բխում է ցեղասպանության պաշտոնական ընդունման պարտավորությունը և ապա աղբյուրաանհայտության վնասների հատուցումը: ՄԱԿ-ը և նրա անդամ բոլոր երկրներն իրավասու են հետամուտ լինելու այդ խնդրի լուծմանն ու զորակցելու հայ ժողովրդի պայքարին:

*GEVORG STEPANYAN (ARMENIA)*

**POGROMS OF THE ARMENIANS OF BAKU PROVINCE  
AND RESPONSIBILITY OF THE TURKISH-AZERBAIJANI  
AUTHORITIES (1918 SEPTEMBER-1920 APRIL)**

In the years of World War I, during the invasion of Baku Ottoman empire intended to create a beforehand planned “Oguzi” country. The first step was the creation of a new country “Big Azerbaijan” in the territory between the Black and the Caspian Seas. The program had to be realized through the massacre of the Armenians.

The criminal politics of physical abolishment or the forcible expulsion of Armenians continued during the whole period of Musavat Azerbaijan’s existence (1918 -1920), that resulted in thousands of Armenian victims. The policy of Turkey and Azerbaijan in the province of Baku in 1918-1920 must be viewed as the continuation of Western Armenians’ Genocide in 1915-1916, because Armenian Genocide as a political question, both geographically (from Kilikia to Baku) and in the historical sense is the result of panTurkic entire plan.

*ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

**ԱՄՆ-Ի ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՊԱՍՏԸ  
ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ  
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ**

1914-1918 թթ. Առաջին աշխարհամարտի ընթացքում ու դրան հաջորդող տարիներին առավելապես առաջին սերնդի ամերիկահայերի համար հայրենի ժողովրդի սատարմանն ուղղված ջանքերը

եղել են գործնական ու ծանրակշիռ՝ կրելով թե՛ քաղաքական ու դիվանագիտական և թե՛ հասարակական, տնտեսական ու ռազմական բնույթ: Վերջինս արտահայտվել է ռազմամթերքի, դրամական միջոցների, ինչպես նաև մարդկային ուժի՝ կամավորների առաքումով, որն իրականացվել է գլխավորապես հայ քաղաքական տարբեր կուսակցությունների ու կազմակերպությունների կողմից:

Ամերիկահայերն իրենց գործուն մասնակցությունն են ունեցել Առաջին աշխարհամարտի տարիներին և հետո Կովկասում, ապա Կիլիկիայում կազմակերպված կամավորական շարժումներին՝ սկսած 1915 թ. Վանի ինքնապաշտպանական կոիվներից մինչև 1918 թ. Արարայի հերոսամարտը՝ Անտանտի տերությունների, ցարական Ռուսաստանի և Ֆրանսիայի զորամիավորումների հետ կողք կողքի քաջաբար մարտնչելով գերմանական ուժերի և երիտթուրքական ու քեմալական բռնությունների դեմ:

Պատերազմի սանձազերծումով արևմտահայության կյանքի ու գույքի անձեռնմխելիության պահպանման համար Օսմանյան կայսրությունում ստեղծված անբարենպաստ ու օրեցօր վատթարացող պայմանները (այդ թվում՝ հայ առևտրականների ու վաճառականների սեփականության և ունեցվածքի թալան և այլն) պատճառ են դարձել օսմանցիների դեմ Կովկասում կովող ռուսական ցարական զորքերին սատարելու նպատակով այդտեղ հայրենասեր հայերից բաղկացած ջոկատների կազմակերպմանը: Կամավորական շարժման նշանաբանն էր՝ «Ինքնավարութիւն վեց վիլայեթներու և անոնց անբաժան մասը կազմող Կիլիկիայի՝ Ռուսաստանի հօգը հովանաւորութեան տակ»<sup>1</sup>:

Արդեն 1914 թ. նոյեմբերի 8-ին Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսը դիմել էր Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին՝ շեշտելով հայերի համընդհանուր գործնական նվիրվածությունը ռուսական շահերի պաշտպանությանը, ուստի և խնդրել էր, որպեսզի Ռուսաստանը պաշտոնապես հայտարարեր Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներին (Վան, Էրզրում, Բիթլիս, Սեբաստիա, Դիարբեքիր, Խարբերդ) և Կիլիկիային ինքնավարություն շնորհելու մասին, որով և «ավարտվելու էր նրա (Ռուսաստանի) պատմական միսիան օսմանյան լծի տակ դարերով ճնշված քրիստոնեական

---

<sup>1</sup> Լազեան Գ., Հայաստանը եւ Հայ Դատը ըստ դաշնագրերու, Գահիրէ, 1942, էջ 81:

ժողովուրդների ազատագրման գործում»<sup>2</sup>:

Քանի որ Կաթողիկոսի լիազորությամբ Հայկական հարցը հետապնդելու նպատակով Պողոս Նուբարի նախագահությամբ Եվրոպայում՝ Փարիզում, արդեն գործում էր Ազգային պատվիրակությունը, ուստի Կովկասում հայ կամավորական զորաբանակները ղեկավարելու համար 1912 թ. փետրվարին Թիֆլիսում հայոց հոգևոր առաջնորդ Մեսրոպ Էպիսկոպոսի նախագահությամբ հիմնվել էր Ազգային բյուրոն:

Կամավորագրման գործընթացն աննախադեպ աշխուժություն է առաջացրել հայկական գաղթօջախներում: Շուտով կամավորական շարժման կենտրոններ են ստեղծվել ԱՄՆ-ում, ինչպես նաև Բուխարեստում, Թիֆլիսում: Ազգային բյուրոն՝ մասամբ Արևմտյան (եվրոպական, ամերիկյան) և Արևելյան (կովկասյան) բյուրոներով, համակարգում էր բացառապես ՀՅԴ-ն, իսկ ԱՄՆ-ի և Բալկանների բյուրոները հիմնականում ՄԴՀԿ-ի ազդեցության տակ էին<sup>3</sup>:

Արդեն 1914 թ. աշնանը կամավորական շարժման կազմակերպումն ընթացքի մեջ էր: Ազգային բյուրոյի կոչերից ոգևորված՝ կարճ ժամանակում ոչ միայն Կովկասից և Ռուսաստանի մյուս շրջաններից, այլ նաև Եվրոպայից և աշխարհի տարբեր կողմերից (Բուլղարիա, Ռումինիա Եգիպտոս, Կիպրոս, Ֆրանսիա, Պարսկաստան) և հատկապես հեռավոր ԱՄՆ-ից, մեծ խանդավառությամբ խումբ-խումբ Կովկաս են շտապել վրեժով ու ատելությամբ, բայց և ազատատենչ ոգով տոգորված հարյուրավոր հայազգի անձնուրաց երիտասարդ կամավորներ՝ համալրելու նոր կազմվող զնդերը<sup>4</sup>: «Զմայլունով կըսեինք անճառելի եռանդն ամեն անոնց, որոնք տուն, գործ ու քոլեջ կամ համալսարան կըլէին՝ դեպի Հայաստանի ռազմաճակատը վազելու աճապարանքով»<sup>5</sup>, - նշել է ակնանատեսը:

Անգամ Ադանայի ջարդերից (1909 թ.) փրկված և նոր երկրում ապաստանած կիլիկիահայերն իրենց հոգևոր առաջնորդի միջոցով

<sup>2</sup> Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը. 1914-1916 թթ., Երևան, 1965, էջ 194, 195:

<sup>3</sup> Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962, խմբ.՝ Արսէն Կիտուր, հ. Ա, Պէրութ, 1962, էջ 469:

<sup>4</sup> Կարապետյան Ս., Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները կովկասյան ռազմաճակատում (1914-1917 թթ.), Երևան, 1999, էջ 38: Լազեան Գ., Հայաստանը եւ Հայ Դատը ըստ դաշնագրերու, Գահիրէ, 1942, էջ 81:

<sup>5</sup> Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 187:



1914 թ. հոկտեմբերի 30-ին նամակով դիմել են ԱՄՆ-ում Ռուսաստանի դեսպան Բախմենսոնին՝ հայտնելով, որ տարագրության մեջ գտնվող կիլիկիահայությունն իր վրա է վերցնում ամերիկահայ կամավորների հանդերձավորման և Ռուսաստան մեկնելու ծախսերը: Զինման և ռազմաճակատի հարցերը տնօրինելու էին ռուսական իշխանությունները<sup>6</sup>:

ԱՄՆ-ից ժամանած ՀՅԴ կամավորները գտնվել են Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյի հսկողության ներքո և ներառվել են գործող հինգ զորախմբեր (հրամանատարներ՝ Անդրանիկ, Դրո, Համազասպ, Քեռի, Վարդան):

ՄԴՀԿ Ամերիկայի բյուրոյի հրամանատարության ներքո գործել է կովկասյան կամավորական Վեցերորդ գունդը (իրար հաջորդած հրամանատարներ՝ Զանփուլայան, Գրիգոր Ավշարյան /Ավշարով/, Հայկ Բժշկյան /Գայ/, Պանդուխտ /Միքայել Մերյան/), որը հետագայում մասամբ ներառել է նաև Վերակազմյալ հնչակյան և Հայ սահմանադիր ռամկավար կուսակցությունների, ինչպես նաև անկուսակցական ներկայացուցիչների փոքրաթիվ խմբերը, որոնք Ազգային բյուրոյի կուսակցականակենտրոն գործունեության հետևանքով դուրս էին մնացել<sup>7</sup>:

1915 թ. մարտի 12-ին մեկնել է ամերիկահայ կամավորների առաջին խումբը, որն Արխանգելսկով հասել է Կովկաս: Նրանց ղեկավարն էր մշեցի Պանդուխտը: Երկրորդ խումբը նույն ճանապարհով դուրս է եկել մարտի 10-ին՝ Ալեքսանդր Մնացականյանի գլխավորությամբ, երրորդ խումբը՝ նոյեմբերի 21-ին՝ Ս. Շահենի գլխավորությամբ<sup>8</sup>:

Անուշավան Տեր-Մկրտիչյանի ղեկավարությամբ հավաքվել է ռամկավար կամավորների խումբը, որը 1915 թ. օգոստոսի 5-ին ռուսական նավով մեկնել է Արխանգելսկ, այնտեղից՝ Պետրոգրադ, ապա՝ Թիֆլիս<sup>9</sup>:

---

<sup>6</sup> Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 40:

<sup>7</sup> Պատմություն Ս. Դ. Հնչակեան կուսակցության. 1887-1962, հ. Ա, էջ 469: Ճիգմեճեան Մ. Գ., Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց (1890-1925), Ֆրեզնո, 1930, էջ 208: Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, 1996, էջ 387: Ճեղեճեան Եղ., Պանդուխտ, Պելրուք, 1999, էջ 19:

<sup>8</sup> Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 40:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 209, 210:

Արդեն 1917 թ. Նյու Յորքի հայկական եկեղեցու գավթում հավաքագրվել էր ամերիկահայ կամավորների թվով յոթերորդ խումբը:

Ընդհանուր առմամբ պաշտոնական տվյալներով բոլոր կամավորական գնդերում կռվող զինվորների ընդհանուր թիվը կազմել է 6.000-7.000, որոշ տվյալներով՝ 10.000, ընդ որում ԱՄՆ-ից և եվրոպական երկրներից տարբեր ճանապարհներով հայրենիքի ազատագրմանը մասնակցելու նպատակով եկել էր շուրջ 3.000 հայ<sup>10</sup>:

Կամավորները ցրված էին Կովկասյան ճակատում կռվող ռուսական բանակներում և կատարում էին առաջապահի և հետախույզի դեր՝ որպես տեղանքին, բնակչությանը, լեզվին ու բարքերին ծանոթ: Ռուսական զորքերի ճակատը տարածված էր Բաթումից մինչև Պարսկաստան, իսկ կամավորները դիրքավորվել էին Էրզրումից մինչև Դիլման: Վեցերորդ գունդը կռվում էր Էրզրումի կողմում՝ կազմելով կամավորական շղթայի վերին օղակը<sup>11</sup>:

Ռուսական բանակի հետ գործակցող հայ կամավորական խմբերը զգալի հաջողություններ են արձանագրել Վանի, Բիթլիսի, Էրզրումի գրավման ժամանակ՝ արժանանալով ռուսական գերագույն հրամանատարության բարձր գնահատանքին ու պարգևներին<sup>12</sup>:

1915 թ. դեկտեմբերին ռուսական գերագույն հրամանատարության որոշմամբ կովկասյան հայ կամավորական խմբերի լուծարումը համընդհանուր լքման պատճառ էր դարձել շարքերում. հետացել էր կամավորների զգալի մասը՝ արևմտահայերն ու ամերիկահայերը: Միաժամանակ առաջ էին եկել նաև հարակից դժվարություններ՝ կապված նպաստի, բժշկության, հաշմանդամության, հետդարձի և այլ նյութական ծախսերի հետ: Ազգային բյուրոն Բոստոնի կենտրոնական կոմիտեի միջոցով վճարել էր միայն 430 ամերիկահայ կամավորի վերադարձի ճանապարհաձախսը՝ ընդհանուր 60.600 ռուբլի արժեքով, ինչպես նաև նվիրատվություններից ու կազմակերպված տարբեր վաճառահանումներից ստացված գումար-

<sup>10</sup> Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 187:

<sup>11</sup> Չոփուրեան Եդ., Մեծ պատերազմը եւ հայ ժողովուրդը (Անդրանիկ, Մուրատ եւ Պօղոս Նուպար), հ. 1, Կ. Պոլիս, 1920, էջ 22:

<sup>12</sup> Պատմություն Ս. Դ. Հնչակեան կուսակցության. 1887-1962, հ. Ա, էջ 470:

րով սահմանել նպաստ գոհված կամավորների ընտանիքներին և այլն<sup>13</sup>:

Այդուհանդերձ կամավորական գնդերի լիակատար լուծարումը ձգձգվել է մինչև 1916 թ. մարտի վերջը, մինչև որ ռուսական զլխավոր հրամանատարության և Թիֆլիսի հայկական ազգային իշխանությունների միջև համաձայնություն է ձեռք բերվել<sup>14</sup> դրանք վերածելու ռուսական բանակի կազմում գործող 6.000 զինվորներից բաղկացած Հայ հրացանաձիգ գնդերի (Հայ նշանաձիգ վաշտ)<sup>15</sup>: Ու թեև կամավորական շարժման լուծարումով ամերիկահայ կամավորների զգալի մասը վերադարձել է ԱՄՆ, սակայն քիչ չեն եղել նաև նորաստեղծ ազգային գումարտակներ ներգրավվածները:

1914 թ. սեպտեմբերի 10-ից մինչև 1916 թ. օգոստոսի 25-ը Կովկասում ծավալված հայ կամավորական շարժումն իր ուրույն տեղն ունի հայ ռազմարվեստի պատմության մեջ՝ որպես նորագույն ժամանակաշրջանում բնօրրանում և արտերկրում ցրված հայության երկու հատվածների կազմակերպված ինքնապաշտպանական շարժման դրսևորման անդրանիկ փայլուն օրինակ, ինչպես նաև ռուս, կազակ, արևելահայ, արևմտահայ զինակցության հիշարժան դրվագ:

Զինվորական մասնակցության հետ միասին ամերիկահայության հայանպաստ ջանքերի շնորհիվ 1916 թ. հոկտեմբերի 21-22-ը ԱՄՆ-ի նախագահի ու Կոնգրեսի որոշմամբ երկրով մեկ հայտարարվել է «Հայոց օր», և, ի պաշտպանություն Հայ դատի, շուրջ 400 քաղաքներում կազմակերպվել են Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացվող բռնությունները դատապարտող հավաքներ, բողոքի ելույթներ ու ցույցեր, ինչպես նաև ազգանպաստ բազմաթիվ միջոցառումներ, հանգանակություններ և այլն: Ամերիկյան ժողովուրդն իր համերաշխությունն է արտահայտել իթթիհատական պետությունում հետապնդվող ու հալածվող քրիստոնյա ազգություններին:

Ընդհանուր առմամբ ԱՄՆ-ը արևելյան այդ տարածաշրջանում

<sup>13</sup> Համառոտ տեղեկագիր Հ. Կ. Ազգային Բիւրօի գործունէութեան. 1915-1917 թթ., Թիֆլիս, ա.թ., էջ 7-10:

<sup>14</sup> Միմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, էջ 523: Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 200:

<sup>15</sup> Մարմարեան Ա., Ջօր. Անդրանիկ եւ իր պատերազմները, Կ. Պօլիս, 1920, էջ 266, 269, 270: Չոփուրեան Եդ., նշվ. աշխ., էջ 71:

(ներառյալ Մերձավոր Արևելքը) իր ծրագրերի իրականացման համար հատկացրել էր 30 մլն դոլար<sup>16</sup>:

Այնպես որ, ամերիկահայությունը Կովկաս կամավորներ տրամադրելուց բացի, զգալի նյութական նպաստ է տրամադրել վերոհիշյալ շարժմանը՝ ընդհանուր առմամբ շուրջ 342.000 դոլար<sup>17</sup>: Ամերիկահայությունն աջակցել է նաև փախստականների փրկության ջանքերին: Այսպես, ԱՄՆ-ի հայ գործավորները 1-2 տարվա ընթացքում կամավորական շարժմանն ու փախստականներին ի նպաստ հանգանակել են մոտավորապես 2 մլն դոլար<sup>18</sup>:

Կովկասում կամավորական շարժման լուծարումով արևմտահայության շրջանում չի մարել հայրենի տարածքներն ազատագրելու և հայ ժողովրդի ապրելու բնական իրավունքը պաշտպանելու սրբազան զգացումը, և նա ձեռնամուխ է եղել սեփական ուժերով կամավորական նոր շարժում կազմակերպելուն: Այդ նպատակով արտասահմանի, մասնավորապես ԱՄՆ-ի հայությունը կարևոր բացատրական աշխատանք է իրականացրել դաշնակից տերությունների շրջանում՝ նրանցից ակնկալելով ինչպես քաղաքական ու դիվանագիտական, այնպես էլ նյութական ու ռազմական աջակցություն<sup>19</sup>:

1916 թ. հոկտեմբերի 27-ին Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները, Փարիզի Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի մասնակցությամբ, Լոնդոնի ֆրանսիական դեսպանատանը համատեղ համաձայնության էին եկել (Մայքս-Պիկոյի համաձայնություն)՝ կազմել հայ, ինչպես նաև արաբ (սիրիացի, ալժիրցի, մարոկոցի և այլ<sup>20</sup>) կամավորներից բաղկացած և օսմանյան իշխանությունների համար չեզոք «Արևելյան լեգեոն»

<sup>16</sup> Հայկ Վ., Խարբերդ եւ անոր ոսկեդէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 994: Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը, ԺԶ տարի, Կ. Պօլիս, 1922, էջ 284:

<sup>17</sup> Համառօտ տեղեկագիր Հ. Կ. Ազգային Բիւրօի գործունէութեան. 1915-1917 թթ., Թիֆլիս, ա.թ., էջ 7:

<sup>18</sup> Զոփուրեան Եղ., նշվ. աշխ., էջ 79:

<sup>19</sup> Ավելի մանրամասն տե՛ս Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.), Երևան, 2000, էջ 111-120:

<sup>20</sup> Forgotten Heroes. The Armenian Legion and the Great War. An Exhibit Commemorating the 83<sup>rd</sup> Anniversary of the Armenian Legion's Victory on September 19, 1918 at Arara (Palestine). September 23-December 31, 2001. Prepared by Barbara Merguerian (ALMA), Watertown, 2001, p. 8.

(“Légion d’Orient”) անվանումը կրող զորամիավոր, որը, իբրև օժանդակ ուժ, պատերազմի տարիներին ֆրանսիական բանակի կազմում պետք է կռվեր բացառապես Ասիական Թուրքիայի մաս կազմող Սիրիայում և Կիլիկիայում, այնուհետև՝ թուրքերի դեմ հաղթանակից հետո, որպես քաղաքապահ ուժ, ապահովեր ֆրանսիական հոգատարության ներքո Կիլիկիայի ինքնավարությունը: «Արևելյան լեգեոնի» կազմակերպման ծախսերն իր վրա էր վերցնելու ֆրանսիական կառավարությունը, որը հոգալու էր կամավորների տեղափոխման ճանապարհածախսը, հիվանդության ու հաշմանդամության ծախսերը: Կամավորները, որոնք պետք է ներկայացնեին լավ վարքի վկայական, մարզվելու և ղեկավարվելու էին ֆրանսիացի սպաների և ենթասպաների կողմից, վարձատրվելու էին ֆրանսիացի զինվորների նման, ստանալու էին նույն պարենը, ինչ ֆրանսիացի զինվորը: Լեգեոնը սկզբնապես հաստատվելու էր Կիպրոսում (Ֆամագուստա նավահանգստից 40 կմ հեռավորության վրա գտնվող Մոնարկա ծովեզրյա սարահարթային վայրում<sup>21</sup>), որտեղ ժամանելու էին Մարսելի, Բորդոյի և Փորտ Սաիդի գրասենյակներում գրանցված տարբեր վայրերից ժամանած հայ կամավորները<sup>22</sup>:

1916 թ. նոյեմբերի 26-ին հիմնվել է օսմանյան հպատակներից կամավոր հիմունքներով հավաքագրված «Արևելյան լեգեոնը»: Կամավորագրումը սկսվել է Եգիպտոսում, որի կորիզը կազմել են 600 մուսալեոցիներ (Ֆրանսիայի շնորհիվ Փորտ Սաիդում ապաստանածներից<sup>23</sup>), ապա նաև՝ 300 եգիպտահայեր, օսմանյան բանակից ու այլ վայրերից փախստական 236 հայեր<sup>24</sup>:

Եգիպտահայ պատվիրակության ջանքերով և համախմբման նկատմամբ ամերիկահայ ազգայինների դրսևորած գիտակցության

---

<sup>21</sup> Աճեմեան Խորեն Քհնյ., Հայկական Լեգեոնը, «Համազգային»ի տարեգիրք - 1953, Ղեյրուք, 1952, էջ 72:

<sup>22</sup> Ճիզվեճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 345: Պոյաճեան Տ., Հայկական Լեգեոնը. Պատմական յուշագրություն, Ուօթթթաուն, 1965, էջ 8-10, 13:

<sup>23</sup> Մահակյան Ռ. Գ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան. 1919-1921 թթ., Երևան, 1970, էջ 115, 116:

<sup>24</sup> Յուշամատեան Մուսա Լեբան, խմբ.՝ Մ. Գուշագճեան, Պ. Մատուռեան, Ղեյրուք, 1970, էջ 426: Մալխազունի Օ. Թ., Ամերիկահայ կամավորները եւ իրենց յաղթանակը, «Արագած», թիւ 12, Ապրիլ 12, 1919, էջ 172: Մահակյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 116:

շնորհիվ հնարավոր է դարձել 1917 թ. մարտի 16-26-ը Բոստոնում անցկացնել քաղաքական չորս կուսակցությունների միջև համերաշխության բանակցությունների յոթ նիստեր, որոնց ընթացքում էլ կազմակերպվել էր Ամերիկայի հայ ազգային միությունը (ԱՀԱՄ): Միությունը բաղկացած էր քաղաքական չորս կուսակցությունների (ՄԴՀ, Վերակազմյալ հնչակյան, ՀՅԴ, ՀՍՌ), ազգային երկու եկեղեցիների (առաքելական, ավետարանական) և ՀԲԸՄ ներկայացուցիչներից (ատենապետ՝ Միհրան Սվազըլյան)<sup>25</sup>:

Առաջին աշխարհամարտի սկսվելուց ի վեր առաջին անգամ էր, որ հայ քաղաքական կուսակցությունները (մասնավորապես ՀՅԴ-ն) միասնականություն էին հանդես բերում ազգային կարևոր ձեռնարկների իրականացման գործում: Կարճ ժամանակում ԱՄՆ-ում արդեն ստեղծվել է միության 187 մասնաճյուղ: Ամերիկայի հայ ազգային միության նպատակն էր ամերիկահայ նյութական ու բարոյական ուժերը համախմբել և դրանք ի սպաս դնել Հայաստանի և Կիլիկիայի ազատագրմանը, վերաշինությանն ու կարոտյալների անմիջական օգնությանը, ինչպես նաև՝ ԱՄՆ-ում հայանպաստ քաղաքականություն և դիվանագիտական ձեռնարկներ իրականացնելու<sup>26</sup>: Միությունն իր գործունեությունը համաձայնեցրել է Փարիզի Ազգային պատվիրակության հետ՝ հանդիսանալով նրա լիազոր ներկայացուցչական մարմինն ԱՄՆ-ում<sup>27</sup>: Միաժամանակ ամերիկյան պաշտոնական շրջանների կողմից ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում<sup>28</sup>:

Հայաստանի ազատագրության նպատակով Ամերիկայի հայ ազգային միության իրականացրած կարևոր ձեռնարկներից էր ամերիկահայության շրջանում կամավորական նոր շարժման կազմակերպումը: Այն մեծ խանդավառություն է առաջ բերել գաղութում.

---

<sup>25</sup> Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի. 1917-1921 թթ., Պոստոն, 1922, էջ 11, 12: Սահմանադրութիւն եւ կանոնադրութիւն Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, Պօսթօն, 1917, էջ 2, 19, 20: **Թեոդիկ**, նշվ. աշխ., էջ 286:

<sup>26</sup> **Ճիզմեճեան Մ. Գ.**, նշվ. աշխ., էջ 353:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 352: Սահմանադրութիւն եւ կանոնադրութիւն Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 1, 2:

<sup>28</sup> Ավելի մանրամասն տե՛ս **Ավագյան Բ.**, Հայ առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում, «Հայոց պատմության հարցեր», Երևան, 2003, թիվ 4, էջ 98-104:

«Հազարաւորներ կը ձգէին հանգիստ աշխատանք ու գրասեղան, ապահով կէանք ու փայլուն ապագայ՝ զօրացնելու համար կորիզը «հայկական բանակին»», մանավանդ որ 1917 թ. ապրիլի 6-ին ԱՄՆ-ը դադարեցրել էր իր չեզոքությունը և ներքաշվել Առաջին աշխարհամարտին<sup>29</sup>:

Համաձայն Փարիզի Ազգային պատվիրակության և ֆրանսիական կառավարության միջև կայացած պայմանավորվածության ամերիկահայ կամավորները Նյու Յորքից Բորդո պիտի մեկնէին ֆրանսիական փոխադրանավերով և Ամերիկայի հայ ազգային միության ծախսով: Բորդոյում ֆրանսիական զինվորական ղեկավարության քննությունն անցնելուց հետո նրանց պիտի արձանագրէին՝ ֆրանսիական հրամանատարության ներքո կռվելու համար: Իսկ դաշնակից տերությունների համար պատերազմի բարենպաստ ավարտի դեպքում Կիլիկիայի պաշտպանությունն անցնելու էր հայ զինվորականությանը<sup>30</sup>:

Կարճ ժամանակում՝ ընդամենը վեց ամսում (1917 թ. հունիսի 9 - նոյեմբերի 3), ֆրանսիական հովանավորության ներքո սկսված կամավորական շարժմանն իրենց մասնակցությունը բերելու նպատակով արձանագրվել է 5.000 ամերիկահայ, սակայն, հակառակ ամերիկահայության շրջանում ստեղծված աննախադեպ խանդավառության, փոխադրական միջոցների սղության պատճառով մեկնելու հնարավորություն է ընձեռվել ընդամենը 1.172-ին, այսինքն՝ չորս ամսում 17 նավով փոխադրվել է կամավորագրված ամերիկահայերի 1/5 մասը միայն<sup>31</sup> (նրանցից վերապրել է ընդամենը 250 հայ<sup>32</sup>, իսկ մնացյալը հետագայում զինվորագրվել է ԱՄՆ-ի բանակին՝ կռվելով Գերմանիայի դեմ արևմտյան ճակատներում<sup>33</sup>):

Մեծ մասամբ քեսապցի, սեբաստացի, խարբերդցի, արաբկիրցի, չնքուշցի, տիգրանակերտցի, հուսեյնիկցի այդ երիտասարդները ներառել են ԱՄՆ-ի գրեթե բոլոր հայաշատ նահանգները: Կամավոր-

<sup>29</sup> Տամատեան Մ., Իմ յուշերէս, խմբ. եւ ծանօթ.՝ Վ. Ղազարեան, Պէրյուք, 1985, էջ 114: Յուշամատեան Մ-եմ Եղեռնի, էջ 891:

<sup>30</sup> Պօյաճեան Տ. Յ., նշվ. աշխ., էջ 38:

<sup>31</sup> Տամատեան Մ., նշվ. աշխ., էջ 115: Պօյաճեան Տ. Յ., նշվ. աշխ., էջ 38:

<sup>32</sup> Yeretzian, A. S. A History of Armenian Immigration to America with Special Reference to Conditions in Los Angeles. A Thesis. California, 1923, p. 11.

<sup>33</sup> Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 27: Տեփոյեան Պ. Յ., Միհրան Տամատեան (1863-1945), Գահիրէ, 1956, էջ 196:

րագրվածների մեծ մասը կուսակցականներ էին՝ վերակազմյալ հնչակյաններ, դաշնակցականներ, սոցիալ-դեմոկրատ հնչակյաններ, ռամկավարներ: «Արևելյան լեգեոն» կամավորագրված ամերիկահայերի կազմում կային նաև մի շարք բարձրաստիճան զինվորականներ (հրամանատարներ՝ Զիմ Չանգայան, Հայկ Ագատյան, Տիգրան Պոյաճյան, Ռուբեն Հեքյան, Վահան Չուրկենց, Վաղարշակ վրդ. Արշակունի, Ջոն Շիշմանյան և այլք)<sup>34</sup>:

Կամավորագրվածները նախնական վարժանք են անցել Փաթերսոնում (Նյու Ջերսիի նահանգ), գրանցվել Նյու Յորքում, նավով մեկնել Բորդո կամ Մարսել (Ֆրանսիա), ապա Պորտ Սաիդ (Եգիպտոս) կամ Մոնարկա (Կիպրոս)՝ զինվելու և ամիսներով վարժանքներին մասնակցելու<sup>35</sup>:

Թեև Կիլիկիայի ազատագրման համար գործադրված ջանքերը վերջին հաշվով ձախողվել են, այդուհանդերձ անուրանալի է նաև ամերիկահայ կամավոր երիտասարդության մասնակցության նշանակությունը «Արևելյան լեգեոնի» («Հայկական լեգեոն») ձեռք բերած մարտական հաջողությունների գործում:

Մայիսից մինչև հուլիսի 12-ը ամերիկահայ կամավորները լեգեոնի կազմ ներգրավվել են Իսմայիլիայի գորաշարժերին, ապա 250 սիրիացիների հետ անապատի միջով միացել անգլիացի զենեւորալ Սըր Էդմունդ Հենրի Ալենբիի հրամանատարության տակ գործող դաշնակից ուժերին՝ դիմադրելու Մուստաֆա Քեմալի գորաւմիավորներին<sup>36</sup>: Հայ կամավորների միջամտությունից ընդամենը 48 ժամ անց 1918 թ. սեպտեմբերի 19-ի առավոտյան, հաջողվել է գրավել վեց ամիս անգլիական բանակի պաշարման տակ գտնվող Նաբլուսից հարավ՝ Արարայի բարձունքները<sup>37</sup>:

Այնպես որ ամերիկահայ կամավորները «Արևելյան լեգեոնի» իրենց քաջարի հայրենակիցների հետ միասին լուրջ ավանդ են ներդրել նաև Պաղեստինում՝ Արարայի անառիկ բարձունքների

<sup>34</sup> Յուշամատեան Մուսա Լեբան, էջ 426, 428: The Armenians in Massachusetts, Boston, 1937, p. 54. Պոյաճեան Տ. Յ., նշվ. աշխ., էջ 86: Պաթթեւեան Ս., Արարաւ. Հայկական Լեգեոնը, Ադեքսանդրիա, 1919, էջ 88, 102:

<sup>35</sup> Պոյաճեան Տ. Յ., նշվ. աշխ., էջ 10, 46:

<sup>36</sup> Forgotten Heroes, p. 4. Սահակյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 116, 117:

<sup>37</sup> Թէմիրեան Ա., Քէսապ (1909-1946), Պէրյութ, 1956, էջ 82:



վրա, թուրքական բանակին պարտության մատնելու գործում<sup>38</sup>։ Արարայում գոհվել է 22 և վիրավորվել ավելի քան 70 հայ<sup>39</sup>, ընդ որում ամերիկահայ լեգեոնականներից գոհվել է 3-ը, և վիրավորվել 14-ը<sup>40</sup>։ Ավելի ուշ՝ 1925 թ. հոկտեմբերի 19-ին գոհվածների աճյունները Եգիպտոսի Ռամկավար-ազատական կուսակցության նախաձեռնությամբ և Երուսաղեմի Հայոց պատրիարքության ջանքերով Արարայից փոխադրվել են Երուսաղեմ՝ Սիոնի Հայ ազգային հանգստարան և թաղվել Անհայտ զինվորի հողակույտում, որտեղ կանգնեցվել է «Արարայի Հայ Քաջերուն» հիշատակը հավերժացնող հուշարձան։ Հայ լեգեոնականներից շատերն արժանացել են ֆրանսիական «Մարտական խաչ» պատվանշանի, ինչպես նաև ֆրանսիական բարձրաստիճան պաշտոնյաների դրվատանքին<sup>41</sup>։

Այնուհետև լեգեոնականները մասնակցել են Սիրիայի և Լիբանանի համար մղված մարտերին. դաշնակից ուժերի հետ միասին շարժվել են դեպի Դամասկոս, Հալեպ, մինչև Պոզանթիի լեռները, ապա Պաղեստինի միջով՝ դեպի Բեյրութ, որտեղ սիրիական զորամիավորների անջատումով «Արևելյան լեգեոնը» վերանվանվել է «Հայկական լեգեոնի» (Légion Arménienne)<sup>42</sup>։ Այն մեկ ամիս շարունակ իր գրավման տակ է պահել Պաղեստինը, Լիբանանը։

«Հայկական լեգեոնը» Հայոց ցեղասպանությունից ընդամենը երկու տարի անց ձևավորված առաջին զուտ հայկական զորամիավորն էր՝ տարբեր երկրներից (ԱՄՆ, Եվրոպա, Եգիպտոս, Հարա-

---

<sup>38</sup> Ավելի մանրամասն տե՛ս Ավագեան Ք., Կիլիկիահայությունը ԱՄՆ-ում եւ նրանց նպաստը Բնօրրանին. Ամերիկահայերը եւ «Արեւելեան-Հայկական լեգեոնը», «Հասկ». Հայագիտական տարեգիրք, Նոր Շրջան, ԺԱ Տարի, 2007-2008, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 61-79։

<sup>39</sup> Պարթևեան Ս., նշվ. աշխ., էջ 13։

<sup>40</sup> Արարա. Նուիրուած Արարայի հինգերորդ տարեդարձին. Հրատարակություն Հայ Լեգեոնական Միություն, Պոսթոն, Սեպտեմբեր 19, 1923, էջ 28։ Պարթևեան Ս., նշվ. աշխ., էջ 77, 78։

<sup>41</sup> Պոյաճեան Տ. Յ., նշվ. աշխ., էջ 148, 151։ Ճիզմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 357, 358։

<sup>42</sup> Քլեյշեան Մ., Սիւ-Մատեան. Պատմական, բանասիրական, տեղագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ, Պէրյութ, 1949, էջ 592։ Forgotten Heroes. The Armenian Legion and the Great War. An Exhibit Commemorating the 83<sup>rd</sup> Anniversary of the Armenian Legion's Victory on September 19, 1918 at Arara (Palestine). September 23-December 31, 2001. Prepared by Barbara Merguerian (ALMA), Watertown, 2001, p. 7.

վային Ամերիկա, Ավստրալիա և այլն<sup>43</sup>) ժամանած 4.000-5.000 պանդուխտների մասնակցությամբ, արդիական բանակի կազմությամբ, ռազմամթերքով, թեև ֆրանսիական բանակին առընթեր, սակայն նրանից անջատ, իր յուրահատուկ ազգային դիմագծով: Հայ կամավորների թվի սովորաբարումով 1918 թ. հոկտեմբերի կեսերին Բեյրութում ստեղծվել էր լեզեռնի արդեն 4-րդ գումարտակը Կիպրոսից ժամանած պահեստայիններից<sup>44</sup>:

Առաջին աշխարհամարտին ԱՄՆ-ի ներքաշումով, ինչպես նաև ելնելով փոխադրամիջոցների բացակայությամբ պայմանավորված դժվարություններից, դադարել է հայ կամավորների առաքումը Ֆրանսիա, ուստի ամերիկահայությունն իր ողջ ուժն ու կարողությունը ծառայեցրել է նաև հանուն հյուրընկալ երկրի պաշտպանության՝ անդամագրվելով դաշնակցային զինված ուժերի շարքերը:

Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ի կառավարությունը, գնահատելով ամերիկահայերի նվիրվածությունը, նրանցից շատերին արժանացրել է բարձր պարգևների, շնորհել մեծ արտոնություններ ու նպաստներ: Բացի այդ, ԱՄՆ-ի բանակում ծառայած ամերիկահայ զինվորականները վերադառնալով ավելի մեծ առանձնաշնորհումներից են օգտվել, քան ֆրանսիական դրոշի ներքո մարտնչած ամերիկահայ լեզեռնականները, որոնք վերջին հաշվով զրկվել են ամեն տեսակի նպաստներից, իրավունքներից և արտոնություններից՝ հանձնվելով բախտի քմահաճույթին: Միայն Ամերիկայի հայ ազգային միության շնորհիվ էր, որ նրանց վիրավոր ու կարիքավոր մասը ստացել է ընդհանուր առմամբ շուրջ 1.193 դոլարի օգնություն, իսկ բազմաթիվ ամերիկաբնակ կամավորների շնորհվել է Միության Պատվո վկայագիր<sup>45</sup>:

Ամփոփելով նշենք, որ հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած Առաջին աշխարհամարտի տարիներին և հետո բաղձալի երկրի ազատագրման համար ԱՄՆ-ի հայության գործադրած բազմակողմանի ջանքերը, ընդ որում՝ մասնակցությունը Կովկասում և Կիլիկիայում մղված կամավորական շարժումներին, բախվելով արևմտյան տերությունների աշխարհաքաղաքական խարդախ

<sup>43</sup> Պոյաճեան Տ. Յ., նշվ. աշխ., էջ 71: Forgotten Heroes, p. 3.

<sup>44</sup> Սահակյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 117:

<sup>45</sup> Պոյաճեան Տ. Յ., նշվ. աշխ., էջ 87: Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 28:

շահերին և երկդիմի խաղերին, ինչպես նաև որպես արդյունք՝ Օսմանյան կայսրությունում և ցարական Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքական արմատական փոփոխություններին ու ճգնաժամային իրավիճակին, վերջին հաշվով ի դերն են եղել՝ տարագիր հայությանը վերջնականապես ամրացնելով որդեգրած նոր երկրին և դատապարտելով անխուսափելի ձուլման ու ուժացման:

*KNARIK AVAKIAN (ARMENIA)*

### **THE PARTICIPATION AND AID OF THE US ARMENIANS TO THE CAUCASIAN AND CILICIAN VOLUNTARY MOVEMENTS**

During the First World War (1914-1918), that was disastrous for the Armenian people, the US Armenian community assembling its entire intra-communal intellectual, financial, public and political resources, has assisted the Motherland and its people by all the possible diplomatic, military and human means.

They have taken part in the Caucasian and Cilician voluntary movements, shoulder to shoulder fighting with Russian and French military units against German and Turkish forces.

The Armenian-Americans have carried out also active lobbying activities on behalf of the Armenian Case among political circles of Europe and the USA.

*ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՍԲԱՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

### **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ 1914-1923 ԹԹ.**

Այսօր, երբ բոլորել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկիցը, աշխարհի զգալի մասը (բացառությամբ որոշ երկրների կառավարությունների, պետական և հասարակական կազմակերպությունների) դեռևս անհաղորդ է XX դարի այդ մեծագույն ողբերգու-

թյուններից մեկին: Ողբերգություն, որի պատճառով հայ ժողովուրդն արմատախիլ արվեց և գրկվեց հայրենիքից:

Նշանակում է, որ Յեղասպանության ճանաչման, դատապարտման՝ արդեն թափ առած գործընթացը դեռևս վաղ է ընկալել իբրև արդարության հաղթանակ. առջևում ճանաչմանն ու դատապարտմանը հաջորդող ամենակարևոր փուլն է՝ փոխհատուցումը: Ասել է թե՛ արդար դատի լուծմանը հասնելու համար անհրաժեշտ է ի մի բերել գիտական, իրավական ու ֆինանսական հսկայական ռեսուրսներ:

Այդ բազմազանության մեջ իրավական դաշտի, միջազգային իրավունքի կոմանների հետ մեկտեղ ծանրակշիռ է համաշխարհային հանրության գործոնը: Վերջինիս տեղեկացվածության, գիտակցության վրա ազդելու և դիրքորոշում ձևավորելու հարցում չափազանց կարևոր է զանգվածային լրատվամիջոցների դերը:

Այս գեկույցում անդրադառնալով Առաջին աշխարհամարտի և նրան հաջորդող տարիների ամերիկյան մամուլին և լուսաբանելով մասնավորապես, 1915 թ. իրադարձությունները՝ փորձ է արվել ներկայացնելու Հայոց ցեղասպանության մասին եղած 100-ամյա վկայությունները: Նշելով վերջիններիս կարևորությունը՝ ընդամենն ասենք, որ եթե անգամ Հայոց ցեղասպանության մասին պահպանված չլինեք որևէ այլ վկայություն, և աշխարհում չլինեք գեթ մեկ արխիվ, որտեղ գետեղված լինեին Մեծ եղեռնի վերաբերյալ պետական, պաշտոնական և ոչ պաշտոնական նյութեր, ամերիկյան մամուլի վկայություններն արևմտահայության բնաջնջման մասին կբավարարեին, որպեսզի զրվեք Հայոց ողբերգության պատմությունն ու ներկայացվեք աշխարհին իր ցավալի ամբողջության մեջ:

Դեռևս XIX դ. վերջին եվրոպական և ամերիկյան պարբերական մամուլը լուսաբանել էր արևմտահայության կյանքի ծանր պայմաններն ու ողբերգական էջերը: XX դ. սկզբին և Առաջին աշխարհամարտի նախօրյակին ամերիկյան մամուլը շարունակում էր լուսաբանել Արևմտյան Հայաստանի իրադարձությունները: 1913 թ. ամռանը «Դը Լիթըրըրի Դայջեսթ»-ում (“The Literary Digest”) տեղ գտած հոդվածը, անդրադառնալով Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակին, ներկայացնում էր ամերիկյան ընթերցողին Հայկական հարցի էությունը և ընդգծում, որ սուլթան Աբդուլ Համիդի անօրինություններն ու դաժանությունները շարունակվում էին

երիտթուրքերի կողմից է՛լ ավելի կատաղի ձևերով<sup>1</sup>: Հայերի նկատմամբ թուրքերի կողմնակալության և անհանդուրժողականության մասին ամերիկյան մամուլում հոդվածներ էին հանդիպում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին նույնպես: Աշխարհամարտի մեջ Թուրքիայի ներգրավումից անմիջապես հետո 1914 թ. նոյեմբերի 12-ին, «Դը Նյու Յորք Թայմզ» (The New York Times) օրաթերթը գրում էր, որ քրիստոնյաներն Օսմանյան կայսրությունում վտանգի մեջ էին, հիմնական թիրախ էին ընտրված հատկապես՝ հայերը: Նոյեմբերի 14-ին պարբերականը տեղեկացնում էր, որ հայերն ահաբեկվում էին՝ ռուսներին համակրելու համար, ձերբակալվում և սպանվում առանց դատ ու դատաստանի, իսկ նոյեմբերի 29-ի համարում հաղորդում է, որ սրբազան պատերազմի կոչերի ներքո թուրք խուժանն ավերում ու քանդում էր Էրզրումի հայկական սկումբները, եկեղեցիներն ու դպրոցները: Դեկտեմբերի 14-ի կարճ հաղորդագրությունը փաստում էր Էրզրումի փոդոցներում կախաղան հանված բազմաթիվ հայերի մասին:

«Դը Լիթըրըրի Դայջեսթ», «Դը Նյու Յորք Թայմզ», «Դը Աուտլուք» (The Outlook), «Դը Ինդեպենդենթ» (The Independent), «Միշընըրի Ռեվյու» (Missionary Review), «Դը Սըրվեյ» (The Survey), «Ամերիքըն Ռևյու Օֆ Ռևյուս» (American Review of Reviews), «Մեթըրդի Իվնինգ Փոստ» (Saturday Evening Post), «Դը Լիվինգ Էյջ» (The Living Age), «Դը Աթլանտիկ Մանթլի» (The Atlantic Monthly), «Դը Նյու Յորք Թայմզ. Քարընթ Հիսթորի Մեգզին» (The New York Times. Current History Magazin), «Դը Նյու Ռեպաբլիք» (The New Republic), «Դը Վըրլդս Վըրկ» (The Worlds' Work) և այլ օրաթերթեր ու պարբերականներ բազմազան հոդվածներում ներկայացնում էին թե՛ Մեծ եղեռնի մանրամասները (1915 թ.), թե՛ հաջորդող տարիներին (1916-1922 թթ.) Օսմանյան կայսրության պարագլուխների և նրանց ժառանգորդների չարագործությունները:

Հայոց ցեղասպանության համակարգում անդրադառնալով ամերիկյան մամուլի ընդհանուր բնութագրին, նշենք, որ նորությունների հաղորդման առումով ամենաակտիվն ու ընդգրկունը «Դը Նյու Յորք Թայմզ»-ն էր: Այն, կենտրոնական թերթ լինելով, ոչ միայն տպագրվող հոդվածների քանակով ռեկորդակիր էր, լայնորեն ձանաչված և մեծ հեղինակություն էր վայելում, այլև ուներ արտա-

<sup>1</sup> “Young Turks’ Misrule in Armenia”, The Literary Digest, July 5, 1913:

սահմանյան ընթերցողների մեծ շրջան<sup>2</sup>: Նման առաջատարության հետ մեկտեղ, սակայն, «Դը Նյու Յորք Թայմզ»-ը, ի տարբերություն այլ օրաթերթերի, հազվադեպ էր տեղադրում Հայոց ցեղասպանության մասին հոդվածներն առաջին էջին, ավելի հաճախ՝ երկրորդ, իսկ հիմնականում՝ երրորդ-չորրորդ էջերին: Մինչդեռ տեղական թերթերից շատերը Հայոց ցեղասպանության մասին տեղեկությունները հիմնականում տպագրում էին առաջին էջին: Այդուհանդերձ, չնայած իր պահպանողական զգուշավորությանը, «Դը Նյու Յորք Թայմզ»-ը չափազանց մեծ գործ է կատարել Հայոց ցեղասպանության վավերագրման մեջ:

Նյութերը, որ տեղ էին գտնում ԱՄՆ-ի հայտնի այդ օրաթերթերում և պարբերականներում, ոչ միայն տեղեկատվական բնույթի լուրեր կամ ամերիկյան հյուպատոսների պաշտոնական հաղորդագրություններ էին, այլև ամերիկյան միսիոներների, բժիշկների, առևտրականների նամակներ, հեռագրեր, արհավիրքը վերապրած հայերի կամ օտարերկրացի ականատեսների պատմություններ: Ամերիկյան մամուլում հրապարակված տեղեկությունները փաստացի վկայում են Հայոց ցեղասպանության ծրագրված լինելու<sup>3</sup> և արևմտահայությանն իսպառ ոչնչացնելու մասին<sup>4</sup>:

1915 թ. հունվարի 11-ին «Դը Նյու Յորք Թայմզ»-ը հատուկ հաղորդագրությամբ տեղեկացնում էր, որ լարվածությունը Կոստանդնուպոլսում ժամանակի ընթացքում աճում էր: Այստեղ չէին պատրաստվում զսպել հակատրամադրվածությունը քրիստոնյա հպատակների հանդեպ: Այդ առումով, ինչպես տեղեկացնում էր թերթը, Բալկանյան երկրներից մեկի նախարարին իր մտավախությունն էր հայտնել նույնիսկ Գերմանիայի դեսպան բարոն ֆոն Վանգեյնհայմը: Նա նշել էր, որ եթե դաշնակիցների նավատորմը գրոհի նեղուցները, ապա թուրքերն իրենց զայրույթն արտահայտելու էին քրիստոնյա բնակչության կոտորածով<sup>5</sup>: Նույն հոդվածը հայտնում էր, որ ներքին գործերի նախարարության ծայրահեղ քայլերի դեմ Թալեաթ փաշային բողոքելու նպատակով այցելած

<sup>2</sup> Kloian Richard D., The Armenian Genocide. News Accounts From the American Press: 1915-1922, California, Third Edition, Fourth printing - 1985, p. VIII:

<sup>3</sup> “The Armenians in Asia Minor”, The Outlook, August 18, 1915

<sup>4</sup> “Christians in Great Peril”, The New York Times, January 13, 1915:

<sup>5</sup> “Says Turks Advise Christians to Flee. Fear of General Massacre in Constantinople if Allied Fleet Passes Dardanelles”, The New York Times, January 11, 1915, p. 2:

հույն պատրիարքը վերջինիցս ոչ երկիմաստ պատասխան էր ստացել, մասնավորապես խորհուրդ տալ իր հոտին հեռանալ երկրից և տարածք ազատել մահմեդական փախստականների համար, քանի որ քրիստոնյաները տեղ չունեին Թուրքիայում: Երկու օր անց պարբերականը «Քրիստոնյաները մեծ վտանգի մեջ» հատուկ ստացված հաղորդագրությամբ հաստատում էր նույն տեղեկությունը: Ակնհայտ էր, որ ստեղծված պայմաններում, երբ ներքին գործերի նախարարը հայտարարել էր, որ «...այսուհետ Թուրքիայում տեղ ունեն միայն թուրքերը»<sup>6</sup>, իրավիճակը չափազանց վտանգավոր էր քրիստոնյաների համար անգամ մեծ քաղաքներում:

Այդուհանդերձ, երիտթուրքերի պարագլուխները ձգտում էին քողարկել իրենց իրական քաղաքականությունն ու ագրեսիվ մտադրությունները և փորձում թաքցնել ակնկալիքներն սկսված աշխարհամարտից: 1915 թ. փետրվարին «**Հասոիլեթիդ փրես**»-ին (**Associated Press**) տված հարցազրույցում Թալեաթ փաշան հայտարարել էր, որ Թուրքիան ամենևին մտադրություն չունեւ ներգրավվելու պատերազմի մեջ և «...միայն Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի սաղորդ գործողություններն էին, որ ստիպեցին մեզ (իմա թուրքերին) միայն պաշտպանողական դիրքերից մտնել պատերազմի մեջ: Արդյունքում՝ բոլոր մահմեդականների անունից թուրքերն ստիպված էին սրբազան պատերազմ հայտարարել»<sup>7</sup>: Միլիոնավոր մահմեդականների ռազմական սրբազան պատերազմի կոչի թարգմանությունը տեղ էր գտել «**Միշընըրի Ռեվյու**»-ի 1915 թ. հուլիսյան համարի էջերում:

Սրբազան պատերազմ հայտարարած թուրքերն առավել մոլեռանդորեն անցան իրենց «սուրբ» գործի իրականացմանը: Սկսած զարնանից՝ «Դը Նյու Յորք Թայմզ»-ը գրեթե ամեն օր ցավալի տեղեկություններ էր հայտնում: Աշխարհագրական իմաստով էլ իրադարձությունները լայն շրջանակներ էին ընդգրկում: Մարտի 20-ի լուրերը տեղեկացնում էին, որ Ալաշկերտի դաշտն ամբողջությամբ ծածկված էր հայերի դիակներով, որ Կովկասում հանգրվանել էին ավելի քան 120.000 արևմտահայ փախստականներ<sup>8</sup>: Հյուսիսարևմտյան Պարսկաստանից ստացված հեռագիրը հայտնում էր թուրքերի և քրդերի կողմից Ջուլֆայից Թավրիզ ընկած հատվածի քաղաքների

<sup>6</sup> “Christians in Great Peril”, The New York Times, January 13, 1915, p. 3:

<sup>7</sup> “Talaat Says Turks Fight for Life”, The New York Times, February 18, 1915, p. 3:

<sup>8</sup> “Whole Plain Strewn by Armenian Bodies”, The New York Times, March 20, 1915, p.4:

բնակչության կոտորածի մասին<sup>9</sup>։ Մարտի 22-ին «Դը Նյու Յորք Թայմզ»-ին Աթենքից ուղարկված հատուկ հեռագիրը «Թուրքերը վերսկսել են ջարդերը» խորագրով, տեղեկացնում էր Զմյուռնիայի հյուսիսում գտնվող գյուղի 60 քրիստոնյա ընտանիքների կոտորածի մասին<sup>10</sup>։ Լուրերում պատմվում էր ոչ միայն հայերի, այլև հույների սպանությունների մասին<sup>11</sup>։

1915 թ. ապրիլի 18-ի, 19-ի, 20-ի, 26-ի, 28-ի, 29-ի համարներում տպագրված հոդվածները նկարագրում էին հայկական գյուղերի հիմնահատակ ոչնչացումը։ Այս ամենը ստիպեց ամերիկյան կառավարությանը Թուրքիայում իր դեսպան Հենրի Մորգենթաուի միջոցով դիմում հղել թուրքական կառավարությանը հայերի կոտորածները դադարեցնելու վերաբերյալ<sup>12</sup>։ Դիմումը տպվեց «Դը Նյու Յորք Թայմզ»-ի ապրիլի 28-ի համարում։ Հաջորդ օրը, ապրիլի 29-ին, թերթը զետեղել էր ԱՄՆ-ի պետքարտուղար Բրայանին ուղղված Մորգենթաուի հեռագիրը. Վերջինս, իր անհանգստությունն արտահայտելով, կարծիք էր հայտնում, որ հայերի վիճակը դժվար թե փոխվեր<sup>13</sup>։ Մայիս ամսվա արյունոտ իրադարձությունները՝ արևմտահայության թափ առած զանգվածային կոտորածների մանրամասնությունները, գրեթե ամեն օր լույս էին տեսնում ամերիկյան մամուլում։ «Դը Նյու Յորք Թայմզ»-ը մայիսի 6-ին գրում էր Անդրկովկասից ստացված լուրերի, մասնավորապես ռուսների առաջընթացի մասին, Վանի ինքնապաշտպանության, Արևմտյան Հայաստանի գյուղերի շարունակվող ջարդերի և տեղահանությունների, Էրզրումում բռնկված համաճարակի մասին<sup>14</sup>։ Թերթը տեղեկացնում էր նաև, որ ամերիկյան միսիոներների կյանքը նույնպես վտանգված էր<sup>15</sup>, որ թուրքերի և քրդերի վերջին վայրագությունները հիշեցնում են 1895թ.

---

<sup>9</sup> Նույն տեղում։

<sup>10</sup> “Turks Renew Massacres”, The New York Times, March 22, 1915, p. 4:

<sup>11</sup> “Pillage in Smyrna District. Christians Murdered at Vourla”, The New York Times, April 19, 1915, p. 2:

<sup>12</sup> “Appeal to Turkey to Stop Massacres”, The New York Times, April 28, 1915, p. 2:

<sup>13</sup> “Morgenthau Intercedes. Reports Great Uneasiness Over Treatment of Armenians”, The New York Times, April 29, 1915, p. 2:

<sup>14</sup> “Routed Turkish Army Pursued by Russians”, The New York Times, May 6, 1915, p. 3:

<sup>15</sup> “Missioners in Danger”, The New York Times, May 10, 1915, p. 9:



իրադարձությունները<sup>16</sup>, որ ի պատասխան դրանց՝ Կիլիկիայի և Ջեթունի հայերը ոտքի են ելել<sup>17</sup>: Նման լուրերն ու տեղեկություններն անտարբեր չէին թողել ամերիկյան հասարակությանը: Մայիսի 15-ին թերթը տպել էր «Խնդրանքներ հայերի համար» խորագրով Վաշինգտոնից ստացված տեղեկությունն առ այն, որ ի պատասխան հայերի օգտին ԱՄՆ-ի տարբեր մասերից ստացված, Պետդեպարտամենտը հեղեղած դիմում-խնդրագրերի՝ վերջինս հայտարարում էր, որ անում է և հետագայում էլ կանի հնարավորը՝ Հայաստանի բնիկ քրիստոնյաներին պաշտպանելու համար<sup>18</sup>: 1915թ. մայիսի 24-ին «Դը Նյու Յորք Թայմզ»-ը հրապարակեց նաև Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի մայիսի 11-ի համատեղ հայտարարությունը, որը դատապարտում էր հայերի կոտորածները և թուրքական կառավարությանը պատասխանատու հայտարարում վերոնշյալ հանցագործությունների համար<sup>19</sup>:

Հակառակ այս ամենի թուրքական կառավարությունը ներկայացնում էր ամբողջովին այլ իրականություն: Նյու Յորքում թուրքական հյուպատոս Ջեյալ Մունիֆ Բեյը 1915 թ. հոկտեմբերի 15-ին «Դը Նյու Յորք Թայմզ»-ում հանդես էր եկել հատուկ հայտարարությամբ, ժխտել դաժանությունները՝ նշելով, որ «հայերը կատարվածում պետք է մեղադրեն միայն իրենք իրենց»<sup>20</sup>: Նույն հայտարարությամբ Վիեննայում «**Հասիլեթիդ փրես**»-ին տված հարցազրույցում հանդես էր եկել նաև արտգործնախարար Հալիլ բեյը<sup>21</sup>:

Այդուհանդերձ, իրողությունը շարունակում էր ներկայացվել ամերիկյան մամուլի էջերում՝ ընդգրկելով բոլոր մանրամասնությունները՝ թե՛ հայ զինվորների հետ դաժան հաշվեհարդարը, թե՛ մտավորականության ձերբակալությունն ու սպանությունը, թե՛ տղամարդկանց մեկուսացումն ու ջարդերը և հայ ծերերի, կանանց ու երեխաների զանգվածային տեղահանում-աքսորումը, թե՛ մահվան դատապարտված քարավանների նկարագրությունները, մի ամբողջ ժողովրդի բնաջնջումը, ինչպես նաև դաժանությունները

<sup>16</sup> “6000 Armenians Killed”, The New York Times, May 18, 1915, p. 3:

<sup>17</sup> “Armenians Attacked 2 Turkish Divisions”, The New York Times, May 17, 1915, p. 3:

<sup>18</sup> “Pleas for Armenians”, The New York Times, May 15, 1915, p. 6:

<sup>19</sup> “Allies to Punish Turks Who Murder”, The New York Times, May 24, 1915, p. 1:

<sup>20</sup> “Turkish Official Denies the Atrocities”, The New York Times, October 15, 1915, p. 4:

<sup>21</sup> “Turkish Foreign Minister’s Defense of Armenian Massacres”, Current History - The New York Times, December 1916:

մյուս քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ, անբարեհամբույր ու տեղ-տեղ բիրտ վերաբերմունքը միսիոներների, երբեմն էլ նաև դիվանագիտական ներկայացուցիչների հանդեպ: Խստագույն գրաքննության և արգելքների պատճառով տեղեկություններն ուշացած էին հասնում և տպագրվում ԱՄՆ-ում: Այնուամենայնիվ, նաև 1916-1917թթ. դեսպան Մորգենթաուի և ամերիկյան հյուպատոսների շնորհիվ ոչ միայն ամերիկյան հասարակությունը, այլև աշխարհը տեղեկանում էր արևմտահայերի ողբերգական ճակատագրին: Այդ տեղեկությունների շնորհիվ էր, որ արդեն 1915թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ԱՄՆ-ում ստեղծվել էին մի շարք օգնության, բարեգործական, նպաստամատույց կազմակերպություններ, որոնց գործունեության մասին ԱՄՆ-ի մամուլում նույնպես տեղեկություններ էին տպագրվում: Թերթերը տեղեկացնում էին նաև հայերին օգնելու, տեղահանումները կասեցնելու ամերիկյան կառավարության որոշ փորձերի մասին<sup>22</sup>:

Մամուլում փաստացի արտացոլվել էին նաև ԱՄՆ-ի թե՛ պետական դիրքորոշումը և թե՛ ոչ պաշտոնական դիրքորոշումն արևմտահայության ողբերգության վերաբերյալ, ինչպես նաև քաղաքական և հասարակական գործիչների տեսակետներն ու գնահատականները: Հոդվածները պարունակում էին նաև տեղեկություններ Հայոց եղեռնի վերաբերյալ այլ պետությունների դիրքորոշման մասին, տարբեր երկրների միջպետական հարաբերությունների և Օսմանյան կայսրության հանդեպ նրանց վերաբերմունքի և քաղաքականության մասին և այլն:

ԱՄՆ-ի Աշխարհամարտի մեջ ներգրավումը, դեսպան Մորգենթաուի վերադարձը վերջ չդրեցին Հայոց ցեղասպանության մասին տեղեկությունների հրապարակմանն ԱՄՆ-ի մամուլում: Տպագրվում էին նաև բազմաբնույթ հոդվածներ և հատվածներ մենագրություններից ու տարբեր ժողովածուներից: Այդ շարքում, իհարկե, առանձնահատուկ տեղ էին գրավում դեսպան Մորգենթաուի բազմաթիվ հոդվածները և հատկապես «Դեսպան Մորգենթաուի հուշերը» գիրքը, որը հատվածաբար (Հայոց ցեղասպանության մասին բաժինները) 1918թ. ապրիլից մինչև 1919թ. հունվար տպագրվեց «Դե Վըրլդս Ուրբ» պարբերականում: Դեռ 1916թ. նոյեմբերին « Դը

---

<sup>22</sup> “Defends Repression of the Armenians”, The New York Times, October 10, 1915, p. 19:

Նյու Յորք Թայմզ. Քարընթ Հիսթորի»-ն տպել էր Վիքոնսո Բրայսի 600-էջանոց փաստաթղթերի ժողովածուի խտացված տարբերակը: 1919թ. նոեմբերին «Դը Նյու Յորք Թայմզ. Քարընթ Հիսթորի»-ն տպում է նաև դոկտոր Ջ. Լեփսիուսի «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 -ին» ժողովածուից հատվածներ և այլն:

Մուղղոսի զինադադարի կնքումից հետո էլ ամերիկյան մամուլը չկորցրեց իր ակտիվությունը: Արևմտահայությանն ու Հայոց ցեղասպանությանն հետ առնչվող բոլոր իրադարձությունները 1919 թ. երիտթուրքերի դատավարությունը, հայ վրիժառուների գործունեությունը, հայ փախստականների, ցեղասպանությունը վերապրածների ճակատագրերը և այլն, շարունակում էին լուսաբանվել ամերիկյան մամուլում՝ ընդհուպ մինչև Լոզանի վեհաժողով և հետագա տարիներին: Անաչառության հանգամանքը ընդգծելու համար նշենք, որ «Դը Նյու Յորք Թայմզ. Քարընթ Հիսթորի»-ն 1921թ. նոյեմբերին տպել է նաև Թալեաթ փաշայի «Հիշողությունները», որտեղ ներկայացված է Ցեղասպանությունը ժխտելու ամենաբացահայտ փորձը:

Այսպիսով, հետևելով Հայոց ցեղասպանության վերաբերյալ ամերիկյան մամուլում հրապարակված նյութերին ու եթե անգամ կենտրոնանանք միայն «Դը Նյու Յորք Թայմզ»-ում տեղ գտած հոդվածների ու հաղորդագրությունների վրա, առանց մեկնաբանությունների ու բացատրությունների, չխախտելով նրանց ժամանակագրական հաջորդականությունը, ընթերցենք ներկայացվող տեղեկությունները, արդյունքում իսկապես ունենում ենք արևմտահայության ողբերգության հստակ և ամբողջական պատկերը: Այն ոչ միայն հարուստ և անաչառ փաստական աղբյուր է, այլև կարող է որակվել իբրև «Հայոց ցեղասպանության համառոտ պատմություն»:

Ամփոփելով նշենք, որ պարբերական մամուլը լրատվական և տեղեկատվական անսպառ աղբյուր լինելուց զատ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր ունի ոչ միայն հետազոտական և գիտական, այլև բարոյահոգեբանական և դաստիարակչական նշանակություն: Ուստի, Հայոց ցեղասպանության պատշաճ ճանաչման և գնահատման համար մեծ նշանակություն կունենա Ցեղասպանության տարելիցի օրերին, ինչպես նաև հետագայում ամերիկյան թերթերում և ամսագրերում Հայոց մեծ եղեռնի մասին տեղ գտած նյութերի վերահրատարակումը ոչ միայն տարբեր լեզուներով առանձին ժողովա-

ծուների տեսքով, այլև հատվածաբար՝ հողվածաշարով կամ առանձին հողվածներով, ժամանակակից աշխարհի տարբեր երկրների մամուլի էջերում:

Լինելով հարուստ փաստական աղբյուր՝ այդ տեղեկություններն իրենց անաչառությամբ թերևս կարող են ազդել համաշխարհային հանրության ընթերցող շրջանակների վրա ավելի, քան պատմական հաղորդագրությունները կամ հայության կողմից աշխարհով մեկ տարածվող, հանրամատչելի ու մարդկային կյանքի հետաքրքիր պատմություններ պարունակող, սակայն օտարներին երբեմն կանխակալ թվացող հրապարակումները: Մամուլի տեղեկատվական արդիականությունն ու առատությունն իրենց հերթին կօգնեն քաղաքակիրթ հանրությանը՝ լինել ավելի զգոն, ավելի սթափ, ճանաչել ու չմոռանալ պատմական ճշմարտությունները, ընդդիմանալ և պայքարել մեր օրերի սարսափազդու իրողությունների դեմ: Այս դեպքում միայն կարելի է ասել, որ Հայոց ցեղասպանությունը իսկապես, ոչ միայն մոռացված չէ ու դատապարտված է, այլև նրա դասերը հիմք են դարձել մշտապես կանխելու մարդկության և մարդկայնության դեմ նման հանցագործությունները և թույլ չտալու, որ դրանք երբևէ կրկնվեն:

*ARMENUHI GHAMBARYAN (ARMENIA)*

### **U.S. MEDIA TESTIMONIES ON THE ARMENIAN GENOCIDE (1914-1923)**

The presented report elucidates the articles, published on the pages of the American newspapers and journals, dedicated to the tragic fate of the Armenian people in the period of Great massacre (Mets Eghern) committed by the Young Turks in 1915 and subsequent years of WWI. The atrocities of new rulers of the Turkish Republic during the first postwar years also are introduced. The objective and successively elucidated events of the Armenian Genocide present the objective, true and comprehensive picture of that period. It is a rich source of the actual materials and has not only scientific-research value but also a great moral and educational importance.

ՀՈԳԵՎՈՐ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Օսմանյան կայսրությունն իր ձևավորման սկզբից նեթ հաստատեց այնպիսի սոցիալական համակարգ, որը լի էր կրոնական և քաղաքական հակամարտությամբ: Կրոնահոգեբանական, կրոնաբարոյական աշխարհընկալման սկզբունքով հասարակությունը տարանջատվում էր «ճշմարիտ հավատացյալների» և «անհավատների», համապատասխանաբար՝ մուսուլմանների և ոչ մուսուլմանների, իրենց՝ տիրապետողների և ենթարկվողների դերակատարությամբ:

Հայազգի ցեղասպանագետ Վահագն Դադրյանը նշում է, որ ազգային հիմքի վրա հայ-թուրքական բախումների ամբողջական վերլուծության համար անհրաժեշտ է ուսումնասիրել իսլամը՝ որպես դրա ծագման և զարգացման կարևորագույն ազդակ<sup>1</sup>: Սա պայմանավորված է նրանով, որ աստվածապետությունն ունի երկու բաղադրիչ մաս՝ *տեսական կամ դոգմատիկ*, որն ընդգրկում է հավատքի ընդհանուր հայեցակարգերը, և *կիրառական*՝ կրոնական օրենքների գործածությունը սոցիալական և պետական համակարգերում<sup>2</sup>:

Թյուրքերը, արաբներից ընդունելով իսլամը, այն գերազանց համապատասխանեցրին քոչվոր ավազանու շահերին՝ Ալլահի համար որպես հաճո գործ հռչակելով «անհավատների» դեմ պատերազմը, թալանը, սպանությունները, հողերի զավթումը՝ հերոսացնելով յուրաքանչյուրին, ով ընկնում էր այդ պատերազմում որպես «հերոս», «դրախտի արժանավոր»<sup>3</sup>: Այն հենվում է Ղուրանի և շաբիաթի օրենքներին՝ ընդունելով միայն մուսուլմանների հավասար-

<sup>1</sup> Dadrian V., Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict, New Brunswick and London, 1999, pp. 5-7, 133-137.

<sup>2</sup> St 'u Klein F., The Religion of Islam, London and New York, 1979, pp. 37-38.

<sup>3</sup> Еремеев Д. "Этногенез турок (происхождение и основные этапы этнической истории)". М., 1971, с. 77.

րությունը: Օսմանյան կայսրությունում իսլամի համակարգի վրա էին հենվում հասարակական, սոցիալ-քաղաքական, բարոյական և իրավական նորմերը<sup>4</sup>: XVI դարից սկսած՝ սուլթանն ուներ նաև խալիֆի կոչում, նրա ձեռքում էր կենտրոնացած երկրի գերագույն հոգևոր և քաղաքական իշխանությունը (էմիրաթ և իմամաթ): Խալիֆից հետո բարձրագույն հոգևոր դեմքը շեյխ-ուլ-իսլամն էր, որն իրավասու էր ընդունելու ֆեթվաներ, որոնք օգտագործվում էին պետական գործերի համակարգման համար: Նա իրավասու էր ջիհադ հայտարարելու անհավատների դեմ, ինչը պարտավորեցնում էր այլ ժողովուրդներին հնազանդեցնելու և ոչնչացնելու միջոցով տարածել իսլամը:

Այս ավանդությանին ուժով էր պայմանավորված նաև այն հանգամանքը, որ չնայած Օսմանյան կայսրությունում XX դարի առաջին քառորդում, երբ ձևավորվում էր թուրքական ազգային գիտակցությունը, կրոնը փոխարինվեց ազգայնականությամբ, այնուամենայնիվ, երիտթուրքական կառավարությունը քաղաքական նպատակներով հավատարիմ մնաց գերակայող դասակարգի սկզբունքին և իսլամին ու պանիսլամիզմի գաղափարախոսությանը: Օսմանյան կայսրության հասարակական և քաղաքական համակարգում իսլամի դերով էր պայմանավորված նաև այն, որ ջիհադի գործոնը լավագույնս կարողացավ օգտագործել երիտթուրքական կառավարությունը՝ հրահրելով հասարակության տարբեր սոցիալական խմբերին մասնակցելու ցեղասպանությանը: Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն իր հուշերում գրում է, որ հայերին կոտորող թուրք և քուրդ հասարակությունն անկեղծորեն հավատում էր, որ Ալլահին է ծառայում: Նրա համոզմամբ մուսուլման հասարակությունը կրոնական եռանդով էր բարբարոսություններ կատարում: Սակայն այն մարդիկ, ովքեր ծրագրեցին ոճրագործությունը, այլ նպատակներ ունեին: Նրանք բոլորն էլ անհավատներ էին և հետապնդում էին բացառապես պետական-քաղաքական նպատակ<sup>5</sup>: Արևելագետ Հովհաննես Բնճիկյանը կրոնի դերի վերաբերյալ գրում է. «...հենվելով զանգվածային կոտորածների բազմամյա փորձի, Ղուրանի և շարիաթի դոգմաների վրա՝ երիտթուրքերը նախապատրաստել են երկրի մուսուլման զանգվածների հա-

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>5</sup> Մորգենթաու Հ., Դեսպան Մորգենթաուի պատմությունը, Երևան, 2012, էջ241:

սարակական հոգեբանությունը և, օգտագործելով համաշխարհային պատերազմի պայմանները, հասել իրենց ազգայնական նպատակներին»<sup>6</sup>:

1914 թ. նոյեմբերի 2-ին Օսմանյան կայսրությունը ներգրավվեց պատերազմի մեջ՝ որպես Գերմանիայի դաշնակից: Մի քանի օր անց կառավարությունը համոզում է սուլթանին խալիֆի իշխանությունն օգտագործելով ջիհադ հայտարարել Անտանտին: Միաժամանակ գործող շեյխ-ուլ-իսլամը՝ Հայրի էֆենդին, և բարձրաստիճան հինգ հոգևորականները ստորագրում են ֆեթվա: Այն եղել է երեք լեզուներով՝ օսմաներեն, արաբերեն, ռուսերեն, և ուղղված էր ամբողջ աշխարհի մուսուլմաններին:

Անտանտին հայտարարված ջիհադն արտաքին քաղաքականության մեջ ձախողվեց, սակայն նպաստեց երկրի ներսում գործադրվող բռնություններին, քանի որ միտում ուներ նաև ժողովրդական զանգվածներին գրգռելու և վատթարացնելու միջերնիկական փոխհարաբերությունները<sup>7</sup>: Վանում գերմանական օգնության միության կայանի ղեկավար քարոզիչ Շայրըրը հաղորդում է. «...Կ. Պոլիսը սրբազան պատերազմ է հայտարարել և դրանով իսկ սանձազերծել մահմեդականների կատաղությունը քրիստոնյաների հանդեպ: Այս տրամադրությունը կար դեռ ամիսներ առաջ, թեպետ սանձերը ձգված էին: Դրանք ավելի բացահայտվեցին, երբ տարածվեցին Վանի շրջանում տեղի ունեցող արյունահեղությունների մասին լուրերը»<sup>8</sup>: Խնդրի վերաբերյալ օսմանյան բանակի վենեսուելացի սպա Ռաֆայել դե Նոգալեսը գրում է, որ երիտթուրքերը կարողացան ողջ ժողովրդին հավատացնել սրբազան պատերազմի անհրաժեշտությունը<sup>9</sup>:

Ջիհադի կոչն ամբողջությամբ ներծծված էր այն նույն կրոնական մոլեռանդությամբ ու ցեղամոլությամբ, որով լի էին համիդյան ջարդերի ու Ադանայի կոտորածների ժամանակ մոլլաների կողմից արված կրոնական բնույթի ագրեսիվ կոչերը: Այնտեղ աս-

<sup>6</sup> Ինձիկյան Հ., Սոցիալական հոգեբանությունը և ցեղասպանությունը, Երևան, 1995, էջ 5:

<sup>7</sup> Տե՛ս Միմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 329-338:

<sup>8</sup> Ջոմեթ Է., Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին, Երևան, 2002, էջ 18-20:

<sup>9</sup> De Nogales R., Four Years Beneath the Crescent, New York and London, 1926, p. 20.

վում էր, որ յուրաքանչյուր մահմեդական պետք է հանդիսավոր երգում տա, որ իրեն շրջապատող քրիստոնյաներից պիտի սպանի ամենաքիչը երեքին կամ չորսին, քանի որ նրանք Ալլահի թշնամիներն են: Նրանք, ովքեր կհնազանդվեին այս հրամանին և կսպանեին նույնիսկ մեկ հայի, կազատվեին վերջին դատաստանի սարսափներից և կապահովեին իրենց համար հարությունն ու հավերժական կյանքը. «Մեզ հարստահարող թշվառականներին բնաջնջելը սուրբ գործ է՝ կատարված գաղտնի, թե բացահայտ: Առե՛ք նրանց և սպանե՛ք, որտեղ էլ որ կարողանաք գտնել. մենք տալիս ենք նրանց ձեզ և շնորհում ենք ձեզ ամեն իշխանություն նրանց վրա»<sup>10</sup>:

Նման ավանդությանի հիմքով կրոնը դառնում է ուժեղ ազդակ, որով հնարավոր է համախմբել հասարակությանը: Կրոնական անհանդուրժողականությունն ու մոլեռանդությունը վերածվում են բռնության նրանց նկատմամբ, ում համարում են «թշնամի»:

\*\*\*

Հայոց ցեղասպանության ընթացքում (ինչպես և դրան նախորդող XIX դարի վերջին և XX դարի սկզբին տեղ գտած զանգվածային կոտորածների ժամանակ) կրոնական մոլեռանդությունը դրսևորվում էր հետևյալ կերպ՝ 1. կրոնական բովանդակությամբ ագրեսիվ տեքստերի՝ կոչերի, աղոթքների, օրհնությունների մատուցումը մուսուլման հավատացյալներին, 2. մուսուլմանների կրոնական մոլեռանդ ատելությունը եկեղեցիների և հոգևորականության նկատմամբ, 3. քրիստոնեական խորհրդանիշերի կիրառումը բռնության գործողություններում, 4. հայերի սպանություններին ուղեկցող կրոնական բնույթի արտահայտություններ:

Կրոնական բովանդակությամբ ագրեսիվ տեքստերի (կոչեր, աղոթքներ, օրհնություններ) մատուցումը մուսուլմանական հասարակությանը: Օսմանյան կայսրությունում զանգվածային կոտորածների ու ցեղասպանության կազմակերպման, քարոզչության և ժողովրդական զանգվածներին ուղղորդելու գործում մեծ է եղել մուլաների, մուֆթիների, սոֆթաների ու իմամների դերը<sup>11</sup>: Տեղական

<sup>10</sup> Զաքեանդ, Բ<sup>ո</sup>նչ կը ծրագրեն թուրքերը: Միացեալ, անկախ Թուրանիա, Պոսթըն, 1926, էջ 135,136:

<sup>11</sup> Սոֆթա՝ մեղրեսների (կրոնական դպրոցներ) աշակերտներ, իմամ՝ մուսուլմանների հոգևոր առաջնորդ:



բնակչությանը քրիստոնյաների դեմ բորբոքելու և նրանց սպանության դրդելու համար կազմակերպիչները հաճախ դիմում էին կրոնական տեքստերի՝ արթնացնելով մուսուլմանների կրոնական զգացումները, Մուհամմեդի անունից խոստանալով հավերժական կյանքի ապահովագրություն, խրախուսելով և արտոնելով բռնությունները (այդ թվում՝ բռնաբարությունները) և կոդոպուտը: Այս ժամանակ հոգևոր առաջնորդները հասարակությանը ոչ միայն հրահրում էին քրիստոնյաների դեմ, այլև անձամբ կազմակերպում և ուղղորդում զանգվածային բռնությունները՝ իրենց օրինակով ազդարարելով կոտորածի սկիզբը: Հոգևոր առաջնորդները, մուսուլմաններին ժողովելով հրապարակներում, շուկաներում, մզկիթներում, աղոթքներ էին կարդում և Մուհամմեդի ու սուլթանի անունից կոչ անում կոտորել Ալլահի «թշնամիներին»: Կոտորածներն սկսվելուց առաջ մզկիթներում տեղի էին ունենում կրոնական արարողություններ, որտեղ հանդիսավոր կերպով կոչեր էին արվում, աղոթքներ էին հնչում, և օրհնվում էին տեղ գտնելիք կոտորածները: Ընդ որում հետաքրքրական է, որ հոգևոր առաջնորդները ևս հայերին ներկայացնում էին որպես երկրի «դավաճաններ»:

1915 թ. մարտին Էրզրումի թուրքերը, որոնք ընդհանուր առմամբ լավ էին տրամադրված տեղի հայերի նկատմամբ, արդեն հասկանալ էին տալիս, որ զանգվածային կոտորածն անխուսափելի է (հավանաբար հայերի նկատմամբ վերաբերմունքի նման փոփոխությունը պայմանավորված էր ռուսական զորքի առաջխաղացման վտանգով): Սզկիթներում մոլլաները սրբազան պատերազմի կոչ էին անում՝ մուսուլման հավատացյալներին հրահրելով քրիստոնյաների դեմ<sup>12</sup>: Այդ կոչերը շատ արագ արձագանք էին գտնում: Իսկ Խարբերդում տիրող կրոնական մոլեռանդության մասին ԱՄՆ-ի հյուպատոս Լեպի Դևիսն իր հուշերում գրում է, թե ինչպես էին թուրքերն ամեն երեկո հյուպատոսարանի դիմացի հրապարակում նամազի հավաքվում, և լսվում էր, թե ինչպիսի մոլեռանդությամբ էին Ալլահին խնդրում ատելի քրիստոնյաներին բնաջնջելու իրենց ջանքերն օրհնել: Նա գրում է. «Գիշերները թուրքերը երկինք աղոթք էին հղում, իսկ ցերեկներն իրականացնում արյունոտ գործը»<sup>13</sup>:

<sup>12</sup> Ֆիբբուլսեր Հ., Հայաստան, 1915: Գերմանացի սպայի վկայությունը, Երևան, 1995, էջ 41:

<sup>13</sup> Դևիս Լ., Սպանդի նահանգը, Երևան, 2001, էջ 145:

Ցանկանալով էլ ավելի ընդգծել օրենքների կրոնական էությունը՝ հանցագործները, սպանելով իրենց զոհին, բոլոր այն դեպքերում, երբ դա հնարավոր էր, կատարում էին մուսուլմանական ծեսեր:

Կրոնական բովանդակությամբ ագրեսիվ տեքստերն ու կոչերը, բռնությունների օրհնությունները և դրանց ծիսական բնույթը, մոլլաների կողմից ծիսական արարողությունների կատարումը նպաստում էին, որ մուսուլման ժողովուրդը դյուրությամբ ներգրավվեր զանգվածային բռնությունների մեջ: Ընդ որում պետք է նշել, որ կրոնական մոլեռանդությամբ լեցուն կոչերն անմիջականորեն ընկալվում և ընդունվում էին հասարակության կողմից այնքան, որ նրանք անասելի վայրագություն էին գործադրում հատկապես հայկական եկեղեցիների և հայ հոգևորականության նկատմամբ:

**Մուսուլմանների կրոնական մոլեռանդությունը եկեղեցիների և հոգևորականության նկատմամբ:** Վկայություններում ու փաստաթղթերում հայկական եկեղեցիների և հոգևորականության նկատմամբ ոճրագործների բարբարոսական ու ծաղրական վերաբերմունքի մասին բազմաթիվ նկարագրություններ կան: Հայտնի է, որ եկեղեցիները վերածվում էին զինանոցների, հասարակաց տների, պահեստների, բանտերի, հիվանդանոցների, գոմերի և սպանդանոցների:

1915 թ. հուլիսի 1-ին Թել-Էրմենում զինվորներն առաջարկում են տեղի հայ բնակչությանն ապաստանել եկեղեցում, սակայն նույն զինվորների ազդանշանով շուրջ 2.000 հոգուց բաղկացած ավագակների բազմությունը՝ ձի հեծած ու զինված, գյուղն ամեն կողմից պաշարում է, իսկ եկեղեցու խորանը ծառայեցնում որպես սպանդանոց<sup>14</sup>: Խարբերդում 40 երևելի անձանց, որոնք ապաստանել էին եկեղեցում, շեյխն առաջարկում է իսլամ ընդունել, և երբ նրանք հրաժարվում են, հրամայում է, որ նրանց մեկը մյուսի հետևից մորթեն եկեղեցու շեմին<sup>15</sup>: Քրիստոնեությունը ծաղրելու և հայ ժողովրդին որպես «անհավատների» նվաստացնելու համար Մուշում մոլեգնած խուժանը մի քանի գյուղերի եկեղեցիների զանգերը հանել

<sup>14</sup> Եղբայր Եասենթ Սիմոն, Մարտին. հերոսաբաղաբ: Խորան եւ Շիրիմ Հայաստանի 1915ի Ջարդերուն ընթացքին, Լիբանան, 1991, էջ 92, 93:

<sup>15</sup> Братская помощь пострадавшим в Турции армянам. М., 1897, Отдел II, с. 58.

է և փոխարենը շնոր կախել<sup>16</sup>:

Հայ հոգևորականները ենթարկվում էին ամենադաժան չար-չարանքների: Քերթում էին նրանց նույնիսկ անշնչացած մարմինը, փորում աչքերը, փետում մորուքը, կտրում մարմնի այլ մասեր<sup>17</sup>, պայտում<sup>18</sup>, զլուխներին փաթոցներ էին կապում և ստիպում նա-մազ անել<sup>19</sup>: Բնակավայրերից շատերում քրդերը հագնում էին եկե-ղեցական հագուստը և պարում էին<sup>20</sup>: Հաճախ հայ հոգևորական-ներին մերկացնում էին և ստորացնելու համար այդպես պտտեցնում փողոցներում<sup>21</sup>:

Մեծ եղեռնի ժամանակ Տիգրանակերտի Չղատյան սրբազանի եղունգները մեկիկ-մեկիկ քաշել են և պետական պաշտոնյաների ներկայությամբ թմբուկ զարկելով այրել<sup>22</sup>: Մշեցի Վարդան Օայրա-գույն վարդապետ Հակոբյանին ականավոր շատ այլ անձանց հետ տեղական կառավարման մարմնի հրամանով հասցնում են մինչև Ալի-Ջոնա գյուղը, որտեղ նրանց այրում են<sup>23</sup>: Տիվրիկցի Գրիգոր Ա քահանա Զարդարյանին, բանտ նետելով, քաշել են եղունգները, ներքանները պայտել և մորթազերծել<sup>24</sup>: Իսկ 71-ամյա Մկրտիչ Ա քահանա Գալեոնճյանին (Շապին-Գարահիսարից) ողջակիզելուց առաջ հանել են նրա աչքերը<sup>25</sup>: Կաթոլիկ առաքելության հայր Ռի-

---

<sup>16</sup> ԱկունիՍ., Միլիոնը հայեր ու ջարդի պատմությունը, Կ. Պոլիս, 1921, էջ 166:

<sup>17</sup> Ներսէս եպսկ. Դանիէլեան (Սասկանվարդ.), Գաթիլ մը ջուր այրած սրտերուն, Կ. Պոլիս, 1912, էջ 41:

<sup>18</sup> Տեր Հեթում քահանայի ձեռքակալման և չարչարանքների մասին տե՛ս ԿՃի-կեան (Առաքելեան) Լ., Մօրենիկ եւ իր սեւ տարին, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 27:

<sup>19</sup> Գաղտնի տեղեկագիր Տոքթ. Եօհաննէս Լեփսիուսի: Նախագահ գերման Մօ-տաւոր Արեւելքի Միսիոնին եւ Գերմանիայական ընկերութեան, Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919, էջ 273: Տե՛ս նաև Նազկեան Յ. Արք., Մերձավոր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին, Պէ-րուր-Լիբանան, 1960, էջ 288, 289:

<sup>20</sup> Братская помощь пострадавшим. Отдел II, с. 58.

<sup>21</sup> Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը 1915-1916, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից, Երևան, 2008, էջ 305:

<sup>22</sup> Միւթէվէլեան Յ., Յուշեր 1915-ի տարագրութենէն, Փարիզ, 1981, էջ 6:

<sup>23</sup> Թէղդիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարին, Նիւ Եորք, 1985, էջ 75:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 129:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 139:

գալի վկայությամբ Ադանայում «Հավատքն ուրանալ պարտադրելու համար մի տերտերի աչքերը փորեցին չերքեզական երկսայր դանակով, որը պտտեցնում էին արյունաներկ ակնակապիճում, կարծես պտտատակով մի փայտի կտոր էին փորում: Միննույն դանակով կտրեցին նրա լեզուն և կտրեցին ատամները»<sup>26</sup>: Արաբ ականատես Ֆայեզ Ալ-Ղուսեյնը հիշատակում է, որ մի անգամ իրեն հանդիպած ժանդարմն ասել է, որ անձամբ սպանել է Իսահակ քահանային: Ժանդարմները գրագ են եկել, թե ով կարող է կրակելով գցել քահանայի գլխարկը: «Ես ամենալավը կրակեցի, կպա գլխարկին և այն ցած գցեցի, իսկ երկրորդ գնդակով նրան սպանեցի», – պատմում է ժանդարմը: Հետաքրքրական է հատկապես արաբ ականատեսի վերաբերմունքը. «Այս մարդը հավատում էր, որ հայերին սպանելն անհրաժեշտություն է, քանի որ այդպես է հրամայել սուլթանը»<sup>27</sup>:

Հայկական եկեղեցիների և հոգևորականության նկատմամբ գործադրվող բռնությունների ընդգծված դաժանությունը հավանաբար պայմանավորված էր նրանով, որ հայերի ներհամայնքային կյանքը կենտրոնացած էր եկեղեցու շուրջը, իսկ ոճրագործներն այդպիսով փորձում էին թուլացնել հայկական համայնքը և սահմանափակել վերջինիս դիմադրելու հնարավորությունը: Եկեղեցիների և հոգևորականության նկատմամբ ծաղրով մուսուլմանները նվաստացնում էին քրիստոնեությունը՝ այդպիսով իբր հաստատելով Մուհամմեդի գերակայությունը Քրիստոսի նկատմամբ և ինքնահաստատվելով որպես մահմեդականներ, իսկ կազմակերպիչները դրանով մասամբ լուծում էին նաև իսլամական համախմբման խնդիրը:

**Քրիստոնեական խորհրդանիշերի կիրառումը բռնության գործողություններում:** Կրոնական մոլեռանդության դրսևորումներից է բռնություններում խաչը որպես խորհրդանիշ կիրառելը, ինչը մեկ անգամ ևս փաստում է, որ մուսուլման հասարակությունը լի էր հայերի նկատմամբ կրոնական ատելությամբ և հավատում էր, որ սրբազան գործ է կատարում:

Խնուսցիների կոտորածի ժամանակ դեպի Աղջամելիք (Խաչա-

<sup>26</sup> Ադոսիդես Ա., Հայերը և երիտթուրքերը. Կիլիկիայի կոտորածները, Երևան, 2012, էջ 40:

<sup>27</sup> Гуаята Дж., Шейх Файез эль-Гусейн о геноциде армян, М., 2007, с. 155.

մելիք<sup>28</sup>) տանող ճանապարհին Տեր Երեմիայի հագից թուրք զինվորները հանում են անդրավարտիքը: Ականատեսը պատմում է. «Մպիտակ ներքնագգեստով, խաչը բարձր պահած կանգնել էր քահանան: Մի թուրք պատռում է նրա շապիկը և դաշույնի ծայրով խաչ քաշում կրծքին»<sup>29</sup>: Դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենի տեղեկացմամբ Խարբերդի բնակավայրերից մեկում թուրքերը 13 հոգի էին խաչել՝ գամելով նրանց ձեռքերը, ոտքերն ու կրծքերը: Խաչել էին նաև Սևերեկի<sup>30</sup> պատվելիին<sup>31</sup>: 1916 թ. հունվարի 24-ին պրոֆեսոր Բեքերին ուղղված դոկտոր Ռիթերի նամակում կարդում ենք. «Ճանապարհի երկու կողմում մենք տեսանք սպանված հայերի: Մենք հաշվեցինք մոտ ինը հոգի: Մեծ մասը կանայք էին: Մեկի ձեռքերի և թևերի մեջ մեխեր էին խփված»<sup>32</sup>:

Երզնկացի վերապրող Արշալույս Գարակյոյանի վկայության համաձայն՝ 1915 թ. մայիսի 26-ին Կամախի կիրճի մոտ գտնվող դաշտի մեջ մի քանի ժանդարմներ վեց տարեկան Մեսրոպ անունով տղային բռնի վերցրին մորից, փայտե խաչի վրա գամեցին աչքերից, ձեռքերից ու ոտքերից, հետո ժողովրդին ցուցադրեցին՝ բացականչելով. «Ահա ձեր Քրիստոսը և խաչը, թող ձեզ ազատի»<sup>33</sup>: Չմշկածագի կոտորածները վերապրած Արշալույս Մարտիկյանը (Ավրորա Մարդիգանյան)<sup>34</sup> վկայում է. «Մալաթիային մոտենալիս անցանք այն ճանապարհով, որտեղով անթիվ-անհամար հայեր էին անցել ոտքով: Ճանապարհի մոտ որպես ծաղր Քրիստոսի խաչելության և որպես զգուշացում Մալաթիա հասած քրիստոնյա աղջիկներին, թուրքերը 16 հայուհիների խաչել էին կոպիտ, փայտյա խաչերի վրա»<sup>35</sup>:

Դիարբեքիր նահանգի կոտորածը վերապրած Զաքար Ֆնտիսյանը պատմում է. «Գիշեր մը դուրս եկայ և գացի դեպի քաղաք

<sup>28</sup> Խաչամելիք՝ գյուղ էրգրումի նահանգի Խնուս գավառակում:

<sup>29</sup> ՀՅԹԻ-ի գ. ֆ., բաժին 8, ձեռագիր հուշագրություններ, թղթ. 151:

<sup>30</sup> Սևերեկ գավառակ Դիարբեքիրի նահանգում:

<sup>31</sup> Ճեյքըպսըն (Շագոպսըն) Մ., Օրագրություն, 1907-1919, Խարբերդ, Անթիլիաս, Լիբանան, 1979, էջ 97:

<sup>32</sup> Գուստ Վ., նշվ. աշխ., էջ 498:

<sup>33</sup> Յուշամատենան Մեծ եղեռնի (1915-1965), պատրաստեց՝ Ահարոնեան Գ., Պեյրուք, 1965, էջ 538:

<sup>34</sup> Ծնվել է հավանաբար 1901 թ.: Հուշագրությունը գրի է առնվել 1918 թ.:

<sup>35</sup> Ravished Armenia. The Story of Aurora Mardiganian. The Christian Girl who lived through the Great massacres. Interpreted by Gates H. L., New York, 1918, p. 132.

տանող ճանապարհը, [ուր] ականատես եղայ զարհուրելի տեսարաններու: Ճանապարհին մէկ կողմը իգանդամներէն ցցած էին կիները՝ յատկապէս պատրաստուած սուր ցիցերու վրայ և թներնին կապած փայտերուն խաչաձև, ծիծերնին կտրուած, ճեղքոտուած, միւս կողմը՝ մարդկանց գլուխները դարձուցած դէպի կանանց կողմը, երեսի վրայ պառկեցուցած և յետոյքները փայտեր խոթած»<sup>36</sup>:

Նման վարքը նպատակ է հետապնդել վարկաբեկելու, նվաստացնելու և կրոնի միջոցով հայերին էլ ավելի թիրախայնացնելու: Պատահական չէ, որ զանգվածային խաչելությունները կատարվում էին ճանապարհների եզրերին կամ տղամարդկանց ներկայությամբ: Սրանով բռնությունների ժամանակ կիրառվող սիմվոլիզմը կարող էր ավելի տպավորիչ լինել և ահաբեկել հայերին՝ կանխելով նաև դիմադրության որևէ փորձ:

**Հայերի սպանություններին ուղեկցող կրոնական բնույթի արտահայտություններ:** Կոտորածների նկարագրություններում հաճախ հանդիպում ենք այնպիսի դեպքերի, երբ հայերի վրա հարձակվող մուսուլմանները կրոնական բնույթի կոչեր են անում, որոնցում հատկապես շեշտվում էին Մուհամմեդի հաղթանակը և Քրիստոսի պարտությունը:

Ըստ Խարբերդի նահանգում տեղի ունեցած դեպքերի նկարագրության՝ քրդերը հայերի վրա հարձակվելիս բղավում էին «կեցցե՛ Մուհամմեդը»: Քաղաքի հայության տեղահանությունից հետո տեղի բնակչությունն ասում էր. «Մուհամմեդը հաղթեց Քրիստոսին»<sup>37</sup>, իսկ մահացած քրիստոնյաների վերաբերյալ ասում էին, թե Քրիստոսը մոռացել է նրանց<sup>38</sup>: Խարբերդում և Մեզրեում, երբ բանտերում մարդկանց սարսափելի խոշտանգումների էին ենթարկում, զինվորները բղավում էին. «Դե թող հիմա ձեր Քրիստոսն օգնի ձեզ»<sup>39</sup>: Բեհեսնի գյուղաքաղաքի հայության երրորդ քարավանից հետ

<sup>36</sup> Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր III, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Մերաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, Երևան, 2012, էջ 360: Տե՛ս նաև Սվազյան Վ., Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2011, էջ 544:

<sup>37</sup> Փիբանեան Ն., Խարբերդի եղեռնը, Պոսթըն, 1937, էջ 302:

<sup>38</sup> Ravished Armenia. The Story of Aurora Mardiganian, p. 138.

<sup>39</sup> Յուհանսոն Ա., Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից, Երևան, 2008, էջ 43, 44:

մնացած ընտանիքները ոստիկանների հրահանգով հավաքվում են Չաթի հրապարակում, որտեղ կայմակամը կրկին առաջարկում է կրոնավորյա լինել և ողջ մնալ: Գյուղաքաղաքի ակնաբույժ Եղսա մայրիկը համարձակորեն պատասխանում է, որ իրենք անդրդվելի են իրենց որոշման մեջ և նախընտրում են մահը: Իր ցուցաբերած հանդգնության համար կայմակամը հրամայում է Եփրատին հասնելուն պես նրան զցել գետը՝ ասելով. «Թող իր Քրիստոսը գա և ազատի իրեն»<sup>40</sup>: Կարինում հայկական եկեղեցու կործանման ակա՛նատես Օսմանօղլուի վկայության համաձայն, երբ հատուկ բերված վարպետները զանգակատունը քանդում էին, և սուրբ խաչն ընկնում է գետնին, շատ թուրքեր, այն անարգելով, ասում էին. «Եթե զօրութիւն մ'ունիս, ցոյց տուր»<sup>41</sup>:

Վերոնշյալ օրինակները հիմք են տալիս պնդելու, որ Օսմանյան կայսրությունում մուսուլմանների կրոնական մոլեռանդությունը պայմանավորված էր դարերով ամրապնդված իսլամական և հատկապես ջիհադի ինստիտուտով: Այդ ավանդույթով էր պայմանավորված այն հանգամանքը, որ ինչպես դարերով ամրագրված գավթողական արշավանքները, կոտորածներն ու կողոպուտը համարվում էին Ալլահին հաճո գործ և սրբազան պարտք, այնպես էլ Հայոց ցեղասպանությունն ընկալվեց «որպես սրբազան պատերազմ» և ներգրավեց մուսուլման հասարակությանը:

*GRIGORYAN HASMIK (ARMENIA)*

## **THE FACTOR OF RELIGIOUS IDEOLOGY IN THE CONTEXT OF THE ARMENIAN GENOCIDE**

It is well known that the social relations in society are regulated by “cultural models”, which in turn model the behavioral peculiarities in the culture of violence. One of such “models” is religious system.

The adoption of Islam in the Ottoman Empire became an excellent means for the nomadic people to explain their expansionist policy on religious principles. By calling the war against the “unbelievers” as the will

---

<sup>40</sup> Թեքէեան Ա., Դրուագներ ապրիլեան Մեծ եղեռնէն: Պեհեսնիհայութեան զոդ-գորան (1914-1918), Պէյրուք, 1956, էջ 92:

<sup>41</sup> Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Հատոր III, էջ 391:

of Allah, precept of Muhammad they glorified each person who was killed in that war as a “hero”, a “person who deserves the heaven”. Islam is based on the rules of Quran and Shariat accepting only “the equality of all Muslims”. Besides that in the Ottoman Empire public, social-political, legal, and military institutions were based on Islam. The religious intolerance based on such traditions changed into terror towards those who were perceived as “enemies”. In particular, religious xenophobia based on religion brought about religious sadism.

Both during the massacres of Abdul Hamid (1894-96) and those in Adana province in 1909 (known as the Adana massacre), and during the Genocide of 1915 the religious sadism in the Ottoman Empire had the same fanatic manifestations: 1. recitation of aggressive appeals with religious content, as well as prayers in mosques, 2. sadistic attitude towards churches and the clergy, 3. religious slogans read while killing, 4. religious symbols as “models” in the methods of violence.

### *ՔՐԻՍՏԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

## **ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ ԱՌՆԶՎՈՂ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԵՁ**

Հայոց ցեղասպանության մասին գիտելիքի փոխանցումը սերունդներին կարևոր նշանակություն ունի: Անկախ ցեղասպանության մասին գիտելիքի փոխանցման ձևից, միշտ էլ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել դրա գործառույթային նշանակությանը: Մեծ հաշվով ցեղասպանության թեմայի ուսուցումը կոչված է նախ և առաջ ցեղասպանության ենթարկված ժողովրդի, ապա նաև ամբողջ մարդկության հավաքական հիշողության պահպանմանը և փոխանցմանը: Ցեղասպանության ուսուցման (Genocide Education) մյուս կարևոր գործառույթը նոր ցեղասպանությունները կանխարգելելուն ուղղված ազդեցությունն է: Այնուամենայնիվ, վերոնշյալ հիմնական գործառույթների իրացմանը հասնելուն ուղղված միջոցները տարբեր են:



Այս հոդվածում դիտարկելու ենք Հայոց ցեղասպանության մասին գիտելիքի փոխանցման մեջ առանձին պատմությունների դերն ու նշանակությունը: Այսինքն՝ փորձելու ենք հասկանալ, թե այս կամ այն «մասնավոր» պատմությունն ինչ դեր կարող է ունենալ թեմայի իրազեկման առումով և ինչ ազդեցություն կարող է ունենալ ցեղասպանության մասին կրթության գործառնությունների հաջող իրականացման մեջ: Մեր առջև դրված նպատակին հասնելու համար մենք օգտագործել ենք մի քանի պատմություններ, որոնք վերաբերում են այս կամ այն անձի փորձառությանը ցեղասպանության տարիներին և դրանից հետո:

### ***Ցեղասպանության մասին գիտելիքը***

Հայ ժողովրդի բազմահազարամյա պատմության մեջ XX դարի սկիզբը դարձավ թերևս ամենաողբերգականը. մի ամբողջ ժողովուրդ ոչնչացվեց իր պատմական հայրենիքում: Դրան հաջորդած հարյուրամյա պատմության ընթացքում այդ ողբերգության վերաբերյալ հիշողությունը դարձավ հայ ժողովրդի ազգային ինքնության ամենակարևոր բաղադրիչներից մեկը<sup>1</sup>: Սակայն դա տեղի ունեցավ միայն ու միայն այդ հիշողության պահպանման և փոխանցման շնորհիվ: Անշուշտ, ցեղասպանության մասին գիտելիքի, իսկ դրա արդյունքում նաև հիշողության փոխանցումը հետցեղասպանական շրջանի տարբեր փուլերում կատարվել է տարբեր միջոցներով: Տասնամյակներ շարունակ ցեղասպանության մասին գիտելիքը փոխանցվել է բանավոր պատմությունների, գեղարվեստական կինոնկարների, գրականության ու դասագրքային հիշատակումների միջոցով: Անկախ գիտելիքի փոխանցման ձևից՝ այդ փոխանցումը դարձել է պատմական հիշողության պահպանման կարևոր գրավական՝ այդպիսով լուծելով իր գործառնությամբ առաջին խնդիրը:

Ցեղասպանության մասին գիտելիքի փոխանցման առաջնությունը մյուս գործառնությամբ կանխարգելումն է: 1948 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի<sup>2</sup> կարևոր-

---

<sup>1</sup> Մարության Հ., Ցեղասպանության հիշողությունն իբրև գործոն, տե՛ս [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=2268](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2268)

<sup>2</sup> Կոնվենցիայի ամբողջական տեքստ տե՛ս [http://www.un.org/res/un%20Treaties/III\\_1.pdf](http://www.un.org/res/un%20Treaties/III_1.pdf)

րագույն առաքելությունը հետագա ցեղասպանությունները կանխարգելելն էր, սակայն ժամանակի ընթացքում ակնհայտ դարձավ, որ կոնվենցիան բավարար չէ կանխելու համար հետագա ցեղասպանությունները, քանի որ XX դարի երկրորդ կեսին ևս տեղի ունեցան ցեղասպանություններ (Կամբոջա՝ 1975-1979, Ռուանդա՝ 1994, Բալկաններ՝ 1992-1995 և այլն): Ահա հենց այստեղ է երևում ցեղասպանության մասին գիտելիքի դերակատարությունը: Այս հարցում ձախողումների մի մասը ցեղասպանության մասին կրթության թերացման, իրազեկության ցածր մակարդակի, այլ խոսքով՝ նախկին ցեղասպանություններն ու կոտորածները լավ չուսումնասիրելու, դրանց համար չպատժելու, դրանց սարսափների մասին չդասավանդելու, ժխտողականության դեմ չպայքարելու հետևանք էր:

Փաստորեն մենք տեսնում ենք, որ ցեղասպանության մասին գիտելիքի փոխանցումն ունի ուղղակի կանխարգելիչ դեր:

### *Առանձին կամ մասնավոր պատմությունը՝ ցեղասպանության մասին գիտելիքի փոխանցման միջոց*

Ցեղասպանության թեմայի՝ դպրոցներում ուսուցանումը կամ ամենատարբեր հարթակներում դրա մասին իրազեկումը հարաբերականորեն կարելի է բաժանել երկու մակարդակի: Առաջին մակարդակը հիմնարար գիտելիքն է, այսինքն՝ Մեծ եղեռնին առնչվող ամենակարևոր հիմնական գիտելիքների փոխանցումը<sup>3</sup>: Այն կարող է լինել ամենամակերեսային գիտելիքներից մինչև նյութի բավական խոր մատուցում: Սակայն, անկախ դրա խորությունից՝ բովանդակային առումով այն, միևնույն է, կոչված է ընդհանուր պատկերացում տալու Հայոց ցեղասպանության մասին, և, միևնույնն է, այդ մանրամասների մեծ մասը շատ արագ մոռացվում են: Օրինակ, դասագրքային նյութում աշակերտը հանդիպում է ասենք Հայկական հարցի ծագմանն առնչվող մի դրվագի, ինչպիսին 1878 թ. Բերլինի կոնգրեսի արդյունքում ստորագրված պայմանագրի 61-րդ հոդվածն է<sup>4</sup>: Չնայած դրա կարևորությանը՝ փորձը և մեր անձնական հար-

<sup>3</sup> Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Հայոց ցեղասպանության ամենատարական և կարևոր գիտելիքներին:

<sup>4</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, «Հայաստան», 1972, էջ 128:

ցումները<sup>5</sup> ցույց են տալիս, որ որոշակի տվյալ հոդվածի մասին տեղյակ են շատ քչերը: Մյուս կողմից էլ, առանց ցեղասպանության մասին հիմնարար գիտելիքների փոխանցման ընդհանրապես դժվար է պատկերացնել ցեղասպանության մասին կրթությունը:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ցեղասպանության մասին գիտելիքի փոխանցման մեջ օգնության է գալիս մեկ այլ միջոց եւ՝ առանձին պատմությունները: Առանձին պատմություններ ասելով՝ մենք նկատի ունենք ականատես-վերապրողների անձնական փորձառությունն ու դրանց մասին պատմությունները: Պետք է նշել, որ այդ առանձին պատմությունները մեզ են հասել ինչպես բանավոր պատմությունների, այնպես էլ լույս տեսած հարյուրավոր հուշագրությունների տեսքով:

Առաջին խումբը ցեղասպանությունը վերապրողների բանավոր պատմություններն են: Այս ոլորտում Ռիչարդ Հովհաննիսյանի, Վերժինե Սվազյանի, Զորյան ինստիտուտի՝ տասնամյակների ընթացքում կատարած վիթխարի աշխատանքի արդյունքում մենք ունենք ականատես-վերապրողների անձնական փորձառությանը վերաբերող հսկայական նյութ՝ ինչպես տեսանկարահանված<sup>6</sup>, այնպես էլ տպագիր<sup>7</sup>: Առանձնանում է նաև Ջեյմս Բրայսի կողմից հրատարակված ժողովածուի մեջ բանավոր պատմությունների ներկայացումը<sup>8</sup>: Առկա են նաև վիթխարի քանակությամբ տպագրված

---

<sup>5</sup> Այդ նպատակով հարցումներ ենք անցկացրել բնակչության տարիքային և կրթական տարբեր խմբեր ներկայացնող 20 անձի շրջանում, որոնցից միայն 3-ը կարողացան մեզ պատմել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի մասին:

<sup>6</sup> Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում պահվում են տասնյակ վերապրողների ձայնագրություններ և տեսագրություններ: Տե՛ս ՀՅԹԻ, Բ 4 (բ) Հուշապատմությունների տեսագրություններ:

<sup>7</sup> Տե՛ս Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2011:

Այս առումով շատ կարևոր է նաև Հայաստանի ազգային արխիվի կողմից 2012 թ. հրատարակված եռհատորյակը: Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածուներ, հեղինակ և կազմող՝ Ամատունի Վիրաբյան, Երևան: Հայաստանի ազգային արխիվ, 2012:

<sup>8</sup> The Treatment of Armenians in the Ottoman Empire, Documents Presented to Viscount Grey of Fallodon, With a Preface by Viscount Bryce, [London : H.M.S.O., 1916.](#)

հուշագրություններ<sup>9</sup>:

Չնայած մեծաքանակ նյութի առկայությանը՝ այնուամենայնիվ այդ նյութերը և պատմությունները մեծ հաշվով անհայտ են մեզ: Այսինքն՝ առանձին ճակատագրերի պատմությունը մեզանում մնում է լայն շրջանների համար անհասանելի:

Բավական ուսանելի է այդ ոլորտում հրեական փորձը: Հոլոքոստի ականատես-վերապրողների վկայություններն ահռելի քանակություն են կազմում, սակայն գլխավորը ոչ թե դրանց քանակն է, այլ այդ պատմությունների օգտագործումը Հոլոքոստի իրազեկման և Հոլոքոստի մասին պատմելու մեջ<sup>10</sup>: Այդ պատմությունները կարող են երբեմն ավելի ազդեցիկ լինել, քան մի քանի ակադեմիական հրատարակություն: Դրա լավագույն օրինակը կինոռեժիսոր Ռոման Պոլանսկու նկարահանած «Դաշնակահարը» ֆիլմն է (2002 թ.), որն արժանացավ ամերիկյան կինոակադեմիայի բարձրագույն՝ «Օսկար» մրցանակին: Ֆիլմը հիմնված է ծագումով հրեա լեհ դաշնակահար Վլադիսլավ Շպիլմանի հուշագրության հիման վրա<sup>11</sup>: Այն Հոլոքոստը վերապրած հրեա մարդու պատմություն է, որի ներկայացման գեղարվեստական բարձր մակարդակն ապահովեց Հոլոքոստի թեմայի մասին իրազեկմանը ֆիլմի միլիոնավոր դիտումներով:

Հայոց ցեղասպանության թեմայի իրազեկման մեջ տասնամյակներ շարունակ առանձին պատմությունները տեղ են գտել գեղարվեստական և փաստավավերագրական ամենատարբեր ֆիլմերում: «Ձորի Միբոն», «Մայրիկ», «Արամ», «Արարատ», «Արտույտների

---

<sup>9</sup> Պետք է ընդգծել այն փաստը, որ Հայոց ցեղասպանության մասին հուշագրություններ տպագրվել են տասնամյակներ շարունակ և անգամ մեր օրերում: Ուստի որպես օրինակ կառանձնացնենք Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից վերջին տարիներին տպագրված հետևյալ հուշագրությունները: Հովհաննես Կարապետյան (Օննիկ Յուսուֆ), «Վերածնված կյանք մր. երևակայական և իրական սարսափների արանքում», Երևան, ՀՅԺԻ, 2010, Սարգիս Թորոսյան, Դարդանելից մինչև Պաղեստին, Երևան, ՀՅԺԻ, 2013, Marjaret Adjemjan-Anert “Стук в дверь”. Ереван: Музей-институт Геноцида армян, 2012, Амбарцум Читчян. “На волоске от смерти”, Ереван, Музей-институт Геноцида армян, 2012.

<sup>10</sup> Shoah Recourse Center, Films on the Holocaust

[http://www.yadvashem.org/odot\\_pdf/Microsoft%20Word%20-%205849.pdf](http://www.yadvashem.org/odot_pdf/Microsoft%20Word%20-%205849.pdf)

<sup>11</sup> Wladyslaw Szpilman, The Pianist: The Extraordinary True Story of One Man's Survival in Warsaw 1939-1945., New York: Picador, 1999.

ագարակ» և մի շարք այլ ֆիլմերում հրաշալի անդրադարձ է կատարվում Մեծ եղեռնին: Այնուամենայնիվ, Հայոց ցեղասպանության տարիներին շարքային մարդու ողբերգության մասին պատմող օրինակները քիչ են:

### *Արշալույս և Մուշեղիկ: Ցեղասպանությունը մեկ հայի աչքով*

Մեծ եղեռնի դեպքում առանձին պատմությունների կարևորությունը հասկանալու համար մենք դիտարկում ենք ցեղասպանությունը վերապրած երկու երեխաների՝ Արշալույսի և Մուշեղիկի պատմությունները: Երկու երեխաներ, ովքեր փրկվել են ցեղասպանությունից, սակայն ամբողջ կյանքում կրել են դրա բոլոր սարսափները և ողբերգականությունը:

Մենք առանձնացրել ենք այս պատմությունները, քանի որ դրանք ներկայացված են Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրության մեջ, և շատ լավ հնարավորություն է ստեղծվել՝ ուսումնասիրելու նրանց թողած ազդեցությունը: Ովքե՞ր էին Մուշեղիկը<sup>12</sup> և

---

<sup>12</sup> Մուշեղիկ – Մուշեղիկը ծնվել է 1907/08 թվականին Վանի նահանգի Վանի գավառի Դիգա գյուղում՝ 13-հոգանոց ընտանիքում: Փրկվել են միայն ինքը և մայրը՝ Բեյազ Բադալյանը: Մուշեղիկի հայրը և նրա երեք հորեղբայրները 1914թ. գորահավաքից հետո որպես ամելե-թաքուրի (աշխատանքային գումարտակի) զինվորներ սպանվեցին Բաշկալեի ճանապարհին:

1915թ. զարնանը Խալիլ բեյի հրամանով Դիգա գյուղից թուրք զինվորականները հավաքում են 5-10 տարեկան տղա երեխաների և դաժանաբար սպանում գյուղի հարևանությամբ գտնվող աղբանոցում: Մուշեղիկի մայրն իր երկու որդիներին Սմբատին և Մուշեղին, մահից փրկելու խնդրանքով դիմում է իրենց ընտանիքի վաղեմի ծանոթ թուրք պաշտոնյային: Նա համաձայնում է միջնորդել Խալիլ բեյին երեխաների փրկության համար՝ կրոնափոխության առաջարկն ընդունելու դիմաց: Այդ նույն ժամանակ մի քուրդ, լսելով Բեյազի որդու՝ Մուշեղիկի հայկական անունը, նրա ձեռքերը դաժանաբար գամում է փայտին:

1915 թ. Վանի տասնյակհազարավոր հայ գաղթականների մեջ էին նաև մահից մազապուրծ Բեյազն իր երեք երեխաների՝ Սմբատի, Մուշեղի և Արեգնազի հետ: Գաղթի ճանապարհին՝ Մալմաստում, մեռնում է փոքրիկ Սմբատը: Բաքվում ընտանիքի հաստատվելուց կարճ ժամանակ անց մեռնում է նաև Արեգնազանը: Մեծ եղեռնի սարսափները որպես չսպիացող վերքեր, ողջ կյանքում ուղեկցել են Մուշեղիկին՝ ամեն վայրկյան հիշեցնելով իր մանկության դժնի օրերն ու ապրած զարհուրելի պահերը: Մուշեղիկի կրած անմարդկային «պատժի» ապացույցները երևում են նույնիսկ դեպքից մեկ տարի անց արված լուսանկարում, որտեղ նա ի ցույց է դրել իր ձեռքերը՝ սպիացած վերքերով:

Այդ մասին տե՛ս 100 լուսանկարչական պատմություններ Հայոց ցեղասպանության մասին, Երևան, ՀՅԹԻ, 2014, էջ 95:

Արշալույսը<sup>13</sup>: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր պատմությունը:

<sup>13</sup> *Արշալույս-Արշալույս Մարտիկյանը* (Ավրորա Մարդիգանյան) ծնվել է 1901թ. հունվարի 12-ին Չմշկաձագում: Արշալույսը 13 տարեկան էր, երբ պայթեց Առաջին համաշխարհային պատերազմը, և դեռատի աղջկա ու նրա ընտանիքի համար սկսվեց տառապանքներով ու ողբերգական իրադարձություններով լի մի շրջան: Չմշկաձագի հայության բռնազաղթը սկսվեց 1915 թ. հունիսի 14-ին: Բռնազաղթի ճանապարհին Արշալույսը կորցրեց իր ընտանիքի անդամներին ու ազգականներին, որոնց քարավանն ուղեկցող թուրք ժանդարմները սպանեցին իր աչքի առջև: Թուրք պաշտոնյաների և թուրք ցեղապետերի կողմից տանջանքների ու բռնությունների ենթարկվելուց հետո Արշալույսը, Եփրատ գետը նետվելով, կարողացավ փախչել Քեմալ էֆենդու հարեմից, սակայն կրկին գերեվարվեց: Նա հայտնվեց թուրք ստրկավաճառների ձեռքում, ովքեր լավ գին ստանալու ակնկալիքով նրան չապանեցին և վաճառեցին 85 ցենտին համարժեք գումարով: Նրան կրկին հաջողվեց փախչել: Քաղցից ու ծարավից հյուծված՝ երկու տարվա ընթացքում Արշալույսը ոտքով անցավ 600 կմ և երկար դեգերումներից հետո՝ 1917 թ. գարնանը, հասավ Էրզրում, որն արդեն գրավել էին ռուսական զորքերը: Հայ-սիրիական նպաստամատույցի ամերիկյան կոմիտեի միջոցներով Արշալույսը հասավ Պետերբուրգ, իսկ 1917 թ. նոյեմբերին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Արշալույս Մարտիկյանի պատմությունը՝ «Երկու տարվա տանջանքներս իմ հոշոտված ու մարտիրոսված հայրենիքում» խորագրով, 14 գլուխներով տպագրվեց ամերիկյան հայտնի «The New York American» և «The Los Angeles Examiner» թերթերի՝ 1918թ. օգոստոսի 18-ից նոյեմբերի 24-ը հրապարակված համարներում, որոնք ավելի ուշ՝ 1918թ. դեկտեմբերին, ամփոփվեցին անգլերեն լույս տեսած «Հոշոտված Հայաստան» հուշագրության մեջ: 1919 թ. կեսերին Նյու Յորքում լույս տեսավ գրքի երկրորդ հրատարակությունը՝ «Հոգիների աճուրդ» վերնագրով:

1918-1935 թթ. գիրքն ունեցավ շուրջ 30 հրատարակություն, թարգմանվեց իսպաներեն, հոլանդերեն, լեհերեն և այլ լեզուներով:

1918 թ. վերջին «Հայ-սիրիական նպաստամատույցի ամերիկյան կոմիտե»-ի պատվերով գրքի հիման վրա ամերիկյան «Մելիզ Պոլիսկոպ» ընկերությունը նկարահանեց «Հոշոտված Հայաստան» (Հոգիների աճուրդ) համր ֆիլմը, որի գլխավոր հերոսուհու դերը կատարեց հենց Արշալույս Մարտիկյանը: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ նա ստացավ նոր անուն-ազգանուն՝ Ավրորա Մարդիգանյան: Ֆիլմում նկարահանվեց նաև Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի նախկին դեսպան Հենրի Մորգենթաուս, ով մարմնավորեց իր իսկ կերպարը:

Ֆիլմի պրեմիերան տեղի ունեցավ Լոս Անջելեսի «Մաջեսթիկ» թատրոնում 1919 թ. հունվարի 19-ին, իսկ Նյու Յորքում՝ 1919 թ. փետրվարի 16-ին «Պլազա» հյուրանոցի նախասրահում: Ֆիլմի ցուցադրությունից ստացված հասույթը՝ շուրջ 30 մլն ամերիկյան դոլար, տրամադրվեց ցեղասպանությունը վերապրած և Մերձավոր Արևելքում ապաստան գտած 60,000 հայ որբերի կենսապահովմանը:

Երկու հայ երեխայի ճակատագիր, որոնք ունեն շատ ընդհանրություններ և տարբերություններ: Երկուսն էլ ամբողջությամբ կամ մասամբ կորցրել են իրենց ընտանիքը, երկուսն էլ փրկվել են հրաշքով: Նրանցից մեկի պատմությունը դեռևս իր կենդանության օրոք իմացել է ամբողջ աշխարհը, իսկ մյուսի մասին՝ շատ քչերը: Այնուամենայնիվ, երկուսն էլ ներկայացնում են Մեծ եղեռնի սարսափներով անցած հայի պատմություն:

Պետք է նշել, որ Ցեղասպանության թանգարանի նոր ցուցադրության բացումից մինչև այսօր թանգարանում եղել են բազմահազար այցելուներ, և բոլոր այցելուների շրջանում այս երկու պատմությունները մեծ հետաքրքրություն են առաջացնում: Ավելին՝ Ավրորային նվիրված սրահում փոքրիկ ֆիլմի ցուցադրությունը մշտապես իր շուրջն է հավաքում մեծ թվով այցելուների: Այսպես, մեր դիտարկումների համաձայն՝ 10 այցելուից 8-ը թանգարանում անցկացրած ժամանակի գրեթե 40 %-ը անցկացնում է Ավրորայի սրահում<sup>14</sup>: Դա պայմանավորված է ոչ միայն մեկ հայի ճակատագրի ներկայացման բարձր որակով, այլ նաև մեկ պատմության ունեցած ազդեցիկությամբ:

Նման իրողություն է առկա նաև Մուշեղիկին նվիրված հատվածում: Այստեղ արդեն մենք ականատես ենք լինում այն բանին, որ 10 այցելուներից 4-5-ը լուսանկարում է ցուցապատին պատկերված Մուշեղիկի լուսանկարը կամ էլ պարզապես ինքն է լուսանկարվում այդ նկարի կողքին<sup>15</sup>: Այսինքն՝ այս պատմությունը ևս առանձնահա-

---

Ավրորայի հետագա կյանքն այնքան էլ լավ չդասավորվեց. 28 տարեկանում նա ամուսնացավ գաղթական հայ երիտասարդի՝ Մարտին Հովանյանի հետ:

1931-ին ծնվեց նրանց միակ որդին՝ Մայքլ Սեդալ Հովանյանը: Ամուսնու մահից հետո միակ որդին հեռացավ մորից: Ցեղասպանության տարիներին կրած զրկանքների ու ցնցումների պատճառով կյանքի վերջին տարիներին Ավրորան կորցրեց բանականությունը. նա երկար տարիներ ապրում էր միայնակ թուրքերի կողմից հետապնդվելու վախով:

Կյանքի վերջին օրերն Ավրորան անցկացրեց Կալիֆոռնիայի «Արարատ հոում» ծերանոցում և մահացավ մեռության մեջ 92 տարեկան հասակում 1994թ. փետրվարի 6-ին:

Այդ մասին տե՛ս Ավրորա Մարդիգանյան, «Հռչակված Հայաստան», Մեծ եղեռնը վերապրած Ավրորա Մարդիգանյանի պատմությունը, Երևան, ՀՅԹԲ, 2015:

<sup>14</sup> Հաշվվել և վերլուծվել են 2015 թ. մայիսի 1-ից մինչև հունիսի 1-ը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ կատարված այցելությունները:

<sup>15</sup> Ինչպես նախորդ դեպքում հաշվվել և վերլուծվել են 2015 թ. մայիսի 1-ից մինչև

տուկ ուշադրության է արժանանում այցելուների կողմից:

Հայոց ցեղասպանությունը վերապրած այս երկու երեխաների պատմությունները և այդ պատմությունների մատուցելն իրազեկում են ցեղասպանության սարսափների ու մեր կորուստների մասին: Բայց մյուս կողմից այս փոքրիկների պատմությունները խորհրդանշում են նաև հայ ժողովրդի վերածնունդը և ապրելու մեծ ուժը:

Անշուշտ, այս դիտարկումը մենք կատարել ենք բացառապես թանգարանի՝ որպես ցեղասպանության մասին պատմող և կրթող հաստատության գործառույթների տեսանկյունից: Սակայն դա էլ բավարար է հասկանալու առանձին ճակատագրերի պատմությունների հանրայնացման կարևորությունը:

Այսինքն՝ ցեղասպանությունը վերապրած մեկ հայի անձնական պատմությունը շատ հաճախ կարող է դառնալ Հայոց ցեղասպանության ամբողջ պատմությունը ներկայացնելու լավագույն տարբերակներից մեկը, եթե ոչ լավագույնը:

*KRISTINE NAJARYAN*

## **INDIVIDUAL STORIES RELATED TO ARMENIAN GENOCIDE AND THEIR ROLE IN GENOCIDE KNOWLEDGE TRANSMISSION**

The importance of individual stories in terms of genocide knowledge transmission is discussed in this article. Namely, it views the functional significance of individual histories as an important tool in memory transmission.

The article discusses and analyzes the importance of “telling the story of Armenian Genocide throughout an individual’s story”. The main conclusion is that the individual stories of genocide survivors are of exceptional importance, because they act as an effective mean in genocide knowledge transmission.

---

հունիսի 1-ը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ կատարված այցելությունները:



## GERMANY AND THE ARMENIAN GENOCIDE

The debate about the involvement of the German Empire in the Armenian Genocide dates back to World War I accusations of the Entente as well as rumors spread by Young Turks in their own country from 1915 on. Moreover, the German role has recently been mentioned both in the April 23 speech of Federal President Joachim Gauck as well as in the Bundestag debate of April 24. How far does German involvement in this crime reach? We have discussed this question in its broader context at an international conference organized by the Lepsiushaus and the German Historical Museum in Berlin this March. The issue is quite complex, so this talk can only highlight some questions which are relevant to the discussion.

In his seminal 1968 book *Germany and the Ottoman Empire*, Ulrich Trumpener pointed out that, overall, the German Imperial Government neither supported nor welcomed the persecution of the Armenians during World War I. Yet it culpably displayed an extreme moral indifference and thoroughly failed to take any kind of action against the crimes of its ally, even within the confines of political opportunity<sup>1</sup>. Moreover, the Germans had learned to accept, excuse, and rationalize extreme violence against civilians as a legitimate method of domestic politics, already at the time of the Hamidian massacres 1894-96. Many followed this path in the years after 1915- albeit fewer than in the 1890s, as the *German Armenian Society* stated after the war<sup>2</sup>. Some even went further. An outstanding example is the Kaiser himself, who in late 1918 suggested Young Turk methods against Bolsheviks and Jews in the Baltics<sup>3</sup>, by this referring to the spirit of his notorious “Hun speech” from 1900.

But is there any evidence supporting an extended notion of German involvement in the Armenian Genocide of 1915/16 from the beginning, as Vahakn N. Dadrian, invoking “German Responsibility” or “Complicity”,

---

<sup>1</sup> Ulrich Trumpener: *Germany and the Ottoman Empire*, p. 204

<sup>2</sup> Deutsch-Armenische Korrespondenz 1 (1918), p. 3

<sup>3</sup> Adam Tooze: *Sintflut. Die Neuordnung der Welt 1916-1931*, p. 171

claimed twenty years ago?<sup>4</sup> Journalist Jürgen Gottschlich's book *Beihilfezum Völkermord*<sup>5</sup> has recently rehashed most of these arguments, stirring some public interest, yet it failed to add anything new. Can one seriously speak of "complicity"? The documented cases on which the "complicity" hypothesis is based – concerning five of 200 German officers in the Ottoman Empire up until 1916 – have been known for a long time. Some were actively involved in anti-Armenian activities – a particular example is Lieutenant Colonel Böttrich who signed a deportation order without authorization. Naval attaché Hans Humann called the annihilation of the Armenians "hard, but useful". Without a doubt, these cases are scandalous, and there may be more which are not documented.

Still, is a handful of individuals sufficient to label Germany's part as a state in the annihilation of the Armenians as "complicity in genocide"? The argument usually offered in support of this thesis relies on characterizing the Ottoman Empire's power structure as akin to a German semi-colony. This view is congenial to certain older theories of imperialism as well as World War I Entente propaganda. But in fact, the influence of the Germans on the Ottoman Empire was fairly limited; and in 1915 it was not the result of long-standing plans, even though the imperial pipe-dream of a Turkish "German Egypt" was actually debated before and during the war.

Let me clarify this with some general remarks. One of the results of the so-called "Fischer debate", following Fritz Fischer's *Griffnach der Weltmacht*(1961) and *Krieg der Illusionen*(1969), was that, contrary to Fischer's assumptions, the German Empire of August 1914 had no distinct war objectives besides preventing a loss of influence<sup>6</sup>.

Bethmann-Hollweg's plan was, first of all, to get rid of the "cauchemar des coalitions" which, in his view, endangered the status quo of German power<sup>7</sup>. He was not totally wrong<sup>8</sup>. There was no distinct "Griffnach

---

<sup>4</sup> Vahakn N. Dadrian: German Responsibility in the Armenian Genocide. Watertown 1996; Vahakn N. Dadrian: The History of the Armenian Genocide, pp. 248-300

<sup>5</sup> Jürgen Gottschlich: *Beihilfe zum Völkermord. Deutschlands Rolle bei der Vernichtung der Armenier*. Berlin 2015

<sup>6</sup> Thomas Nipperdey: *Deutsche Geschichte 1866-1918. Machtstaat vor der Demokratie*, p. 696

<sup>7</sup> Trumpener: *Germany and the Ottoman Empire 1914-1918*, p.109

<sup>8</sup> Nipperdey, p. 695

der Weltmacht” (grip to world power)<sup>9</sup> before the winter of 1917/18<sup>10</sup>. It was not until September 1915 that the first war aims were outlined, and they concerned a German hegemony over Central Europe, not at first the Orient<sup>11</sup>. But of course, in 1915, an important issue for the Germans was the successful defense of the Dardanelles, which definitely cut Russia off from Entente supply for the rest of the war.

A principal motive of the Young Turks for entering the war was to shake off any foreign influence once and for all, and they were determined not to become subject to new German domination. This was, as Ulrich Trumpener pointed out, “a sober calculation of Ottoman self-interest”<sup>12</sup>. The war made it possible to become “independent”. For the Young Turks, this was the only way to solve the “Oriental Question” once and for all -and in the fantasy of some Panturanists even more. They had their own particular war objectives from the very get-go.

Secondly: When the war began, the political system in Istanbul was that of an ideologically driven one-party rule. The Germans had no experience with a political system like this, and they did not even understand it. So, not least for this reason, their influence in the Ottoman Empire was limited from the beginning. They thought their partner was the Porte, but the Porte was in fact ruled by a deep state to which they had no access.

Armenian persecutions had a long history in the context of Ottoman domestic policies. And the Ottomans entered the war already with an ethos of population policies, including the respective plans and institutions, as is evident from the violent expulsion of 150.000 Greeks from Western Anatolia in early 1914. The Armenian Genocide was an exclusively Young Turk – domestic – project.

During the Hamidian massacres of the 1890s, foreigners often saw the Armenians against the backdrop of what they knew from their own countries. For many German observers, who against the background of the Second Reich as a nation state - established after a war against France in 1871 - had clear ideas of what “interior nation building” referred to, the Armenians were some kind of “subversive faction”, or, like Jews (the years before had

---

<sup>9</sup> Niall Ferguson: Der falsche Krieg. Der Erste Weltkrieg und das 20. Jahrhundert, p. 388

<sup>10</sup> Manfred Nebelin: Ludendorff. Diktator im Ersten Weltkrieg, p.365

<sup>11</sup> Nipperdey, p. 802f.

<sup>12</sup> Trumpener, p. 19

witnessed an anti-semitic wave that was yet far from being over<sup>13</sup>), a too powerful “alien” nation within the state. In many cases, both these frames of reference coincided, and this produced strong anti-Armenian stereotypes. Others viewed them as fellow Christians who needed support in their state of distress. Much of this was by no means an exclusively German issue. US Ambassador Alexander Watkins Terrell, for example, despite regretting the Armenian victims, recognized parallels in their situation to the arrogance of the “enfranchised negroes” – whom he clearly deemed second-class citizens – and their demand for equal rights. He thus equated the Hamidian violence with the Ku Klux Klan’s violence, both of which he considered not correct, but understandable<sup>14</sup>. This position closely resembled that of some German Turcophiles in the 1890s. How far did the Germans comprehend what was going on in the Ottoman Empire of 1915? In summer 1918, Siegfried von Lüttichau from the German embassy in Constantinople spoke of “racial antagonisms” pointing to “monumental historical evolutions the interrelations of which we cannot even fathom in the present day”<sup>15</sup>. These turned out to be prophetic words, but they were not very clear. In any case, the Germans understood, as Wangenheim cabled to Bethmann-Hollweg already on July 7, 1915, that it was beyond doubt “the government does indeed pursue the aim of exterminating the Armenian race in the Turkish Empire”<sup>16</sup>. Since then, he – and the German government with him – exactly knew what was happening. Extermination of a race means genocide. But what was the ratio behind this? Harry Stürmer, correspondent for the *Kölnische Zeitung*, spoke of an underlying concept of inner colonization<sup>17</sup>. Vice consul Scheubner-Richter in Erzurum observed how this immediately led to “race hatred”<sup>18</sup> and to a treatment of the Armenians as if they were subjects of foreign states<sup>19</sup>. The Young Turks themselves openly spoke of an “era of cleansing” at the Union

---

<sup>13</sup> Winkler: *Der lange Weg nach Westen*, vol. 1, p. 228ff, p. 281

<sup>14</sup> Lewis L. Gould: Alexander Watkins Terrell. Civil War Soldier, Texas Lawmaker, American Diplomat. Austin 2004, p. 133, 139

<sup>15</sup> Axenfeldt AA, 18 October, 1918. Attachment: Bericht des Pfarrers Grafen von Lüttichau. PA-AA R 14104

<sup>16</sup> Wangenheim to Bethmann-Hollweg, 7 July, 1915. PA-AA R 14086

<sup>17</sup> Harry Stürmer: *Zwei Kriegsjahre in Konstantinopel*, p. 50

<sup>18</sup> Scheubner-Richter to Constantinople Embassy, 26 June, 1915. PA-AA/ BoKon/ 169

<sup>19</sup> Scheubner-Richter to Constantinople Embassy, 22 May, 1915. PA-AA/ BoKon/ 169

and Progress party congress in fall 1916<sup>20</sup>. “We can handle our internal enemies”, the Ottoman War Minister Ismail Enver said to Johannes Lepsius on August 10, 1915: “You in Germany cannot. In this we are stronger than you.”<sup>21</sup> For the time being, thoughts like this were foreign to German politics, the mentality of which was almost still deeply rooted in traditional 19<sup>th</sup> century values. Yet, not much later, they were the reason why Adolf Hitler admired Enver as an example to follow, whom he referenced in his trial before the Munich People’s Court in 1924. According to Hitler, Enver managed to build up a whole new nation, successfully detoxifying the multicultural Gommorrah that was Constantinople<sup>22</sup>. Hitler’s “awaking” Germany welcomed the radically nationalist Young Turks as a congenial example. They were, as Hanioglu pointed out, “avantgarde” in many ways<sup>23</sup>. Of course they were influenced by German ideas and concepts - like Colmar von der Goltz’ *Das Volk in Waffen* (The Nation in Arms), but they went further. The phenomenon is similar to the Bolsheviks at the same time – who were influenced by Marx and equally went a lot further.

Yet, this background was not what the Germans, and particularly German officers, understood when the Armenian persecutions began in 1915. Most of them had no knowledge of Ottoman domestic affairs at all. Their perception was - as it had been in the 1890s - influenced by a German vision of the Orient. To a great extent, it was now supplemented by Turkish anti-Armenian propaganda, which many of them were all too eager to believe-particularly in this war which, as Lewis Einstein observed, induced a psychosis of *spy mania* on all fronts<sup>24</sup>. A disposition of that kind was certainly at work in the heads of Generals Bronsart, Feldmann, and Guseon the Caucasian front in the winter of 1914/15. These officers signed or supported early regional and limited military deportation orders in their respective war zones.

But what was the meaning of these early deportations?

---

<sup>20</sup> Radowitz an Bethmann-Hollweg, 9.10.1916, Anlage Taswiri Efkiar, 7.10.1916. PA-AA R 14093

<sup>21</sup> Johannes Lepsius, *Mein Besuch in Konstantinopel*, p. 8

<sup>22</sup> Harold J. Gordon (Ed.): *The Hitler Trial before the People’s Court in Munich*. Vol. 1. Arlington 1976, p. 180

<sup>23</sup> M. Sükrü Hanioglu: *The Young Turks in Opposition*, p. 18

<sup>24</sup> Lewis Einstein: *Inside Constantinople*, p. 44

Military deportations occurred at many stages of the First World War. During the first months of the war in 1914, the Austro-Hungarian monarchy had tens of thousands of nationally “unreliable elements” deported to German-Austrian internment camps<sup>25</sup>. Later on, German plans were devised for coercively relocating the Polish border population (in a lawfully ordered manner, incorporating compensation payments<sup>26</sup>) so as to establish a “racial military border” against the Russians<sup>27</sup>. However, these designs never advanced to the practical stage. In Russia, millions of civilians who, solely for ethnic reasons, were considered “unreliable” segments of the populace fell victim to crass military deportation policies<sup>28</sup>. Sir George Buchanan, the British ambassador to Petersburg, believed that the Jews among them were indeed German spies one and all<sup>29</sup>. The First World War, according to Wolfgang J. Mommsen, was *borderline* in terms of violence against civilians, a “phenomenon of transition”<sup>30</sup>. Roughly speaking, a strict distinction was still in place between deportations as military security measures and genocide which is an extreme concept of radical domestic population policy. Ambassador Wangenheim became aware of this difference only on 17 June, 1915, when he wrote to Bethmann-Hollweg, that it had become evident, “the banishment of the Armenians is not entirely motivated by military considerations”<sup>31</sup>. What did the involved German officers know? They probably believed in military security measures, with one exception: the aforementioned Lieutenant Colonel Bötttrich

Whether the German Empire could have prevented the Armenian Genocide – even at the cost of resolving the alliance – is highly contentious. The opinion of Austro-Hungarian General Joseph Pomiankowski was a clear “no”. Only a timely declaration of war by the United States, he argued, could have prevented the evil<sup>32</sup>. But the US never did declare war on the Ottoman Empire, not even sanctions were considered.

---

<sup>25</sup> Michael Schwartz: Ethnische „Säuberungen“ in der Moderne, p. 273

<sup>26</sup> Nipperdey, p. 809

<sup>27</sup> Wolfgang J. Mommsen: Der „polnische Grenzstreifen“, p. 118-136

<sup>28</sup> Peter Gatrell: A Whole Empire Walking. Bloomington 2005, p. 3

<sup>29</sup> Mark Levine: The Crisis of Genocide, p.62

<sup>30</sup> Wolfgang J. Mommsen: Anfänge des “ethnicleansing”, p. 47

<sup>31</sup> Wangenheim to Bethmann-Hollweg, 17 June, 1915. PA-AA R 14086

<sup>32</sup> Hans Lukas Kieser: Germany and the Armenian Genocide 1915-17, p. 37

Does that exculpate Germany? In this regard, I personally would answer with a clear “no”. To accept, excuse, and rationalize extreme violence against civilians was part of its military culture. As Isabel Hull observed in a recent study on the military culture of Wilhelminism, Germany applied the standards of a military struggle for existence in an extreme manner to all theatres of World War I. It is this mentality that entailed tolerating the Armenian Genocide<sup>33</sup>.

The public displayed a broad spectrum of mental perceptions, many influenced by a value relativism stemming from the tradition of German historicism. The Orient, this meant, had its own values that could not be judged by European standards. Some went even further. Surely, Humann’s position (“hard, but useful”) was *borderline* in that it embraced genocidal options, as was that of the more “liberal” Ernst Jäckh. Both welcomed the extermination of the Armenians, not for military reasons, but for the purpose of Turkish nation building, even though neither of the two was personally involved as a perpetrator. Their stance could be compared to that of some officers of the Polish Home Army or members of the Vichy régime who admired the Nazis for their “consequential” extermination policies against the European Jews.

The prevailing German opinion in WWI was different. “The deportation was a military measure”, we read in a memorandum by Siegfried von Lüttichau from late 1918: “The reason for this measure is well-known and thoroughly justified. Yet the extermination of the deported -which succeeded all too efficiently – was a political measure of the government”. It commenced, in Lüttichau’s words, when, at the Dardanelles, the stakes were “to be or not to be, not just for the Turks, but for us as well.”Which in his mind meant that the German Empire was forced to hold still at that point<sup>34</sup>. In addition, the Germans never really trusted the alliance<sup>35</sup>.

We need the Turks to secure our victory. This was also the argument of Chancellor Bethmann-Hollweg against Ambassador Wolff-Metternich, when the latter demanded a stronger stance against Turkish extermination policies and voted for sanctions. Bethmann-Hollweg’s answer is well-

---

<sup>33</sup> Isabel Hull: *Absolute Destruction*, p. 290

<sup>34</sup> Axenfeldt AA, 18 October, 1918. Attachment: Bericht des Pfarrers Grafen von Lüttichau. PA-AA R 14104

<sup>35</sup> Mustafa Aksakal: *The Ottoman Road to War*, p. 171 et passim

known. “It is beyond me how Metternich can suggest this”, he wrote in the margin of the dispatch: “The proposed public reprimand of an ally in the middle of an ongoing war here submitted would be a historically unprecedented move. Our sole objective is to keep Turkey by our side until the end of the war, regardless of whether or not Armenians perish in the meantime.”<sup>36</sup> This is exactly what Isabel Hull called military extremism. Yet the “belief that in warfare, might is the only decisive factor and that right and humanity can be disregarded until victory is achieved”<sup>37</sup>, as Johannes Lepsius put it in December 1918, can easily lead to a *borderline* mentality.

Hindenburg and Ludendorff - to give another example - did not deny what had happened, they even condemned it. The Armenian persecutions, as Hindenburg put it, revealed an “awakening of the Beast in Man” and were one of the “darkest chapters in the history of all times and peoples”. But ultimately both military leaders viewed this as something that had to be tolerated under the laws of war<sup>38</sup>.

Lüttichau, who cultivated a strong anti-Armenian sentiment<sup>39</sup>, drew the distinction between military measures and genocide quite correctly. He believed that the Armenians were a rebellious nation, but he did not support genocide. As a German national protestant he was first and foremost concerned about the German image displayed towards the rest of the world. From that frame of reference, he denounced the - verbal or factual - behavior of some officers against the Armenians as something that had caused “grave harm”<sup>40</sup>. In essence, the Germans practiced denialism and tolerance of a crime for the entire duration of the war. A single exception occurred in December 1915, when Gottlieb von Jagow and Arthur Zimmermann of the

---

<sup>36</sup> Note Bethmann- Hollweg: Wolff-Metternich to Bethmann-Hollweg, 7 December, 1915. PA-AA R 1489

<sup>37</sup> Lepsius: Was hat man den Armenien angetan? Die Zeit zu reden ist gekommen. Mitteilungen aus der Arbeit von Dr. Johannes Lepsius, September/Dezember 1918, p. 113

<sup>38</sup> Paul von Hindenburg: Aus meinem Leben. Leipzig 1920, p. 208 f. ; Erich Ludendorff: Meine Kriegserinnerungen 1914-1918. Berlin 1919, p. 500

<sup>39</sup> Christin Pschichholz: Zwischen Diaspora, Diakonie und deutscher Orientpolitik, p. 233 ff.

<sup>40</sup> Axenfeldt to AA, 18 October, 1918. Attachment: Bericht des Pfarrers Grafen von Lüttichau. PA-AA R 14104



Foreign Office thought it would be opportune to break out of this cage- but they were instantly stopped by Bethmann-Hollweg<sup>41</sup>.

“Laws of War”, “grave harm”, those were the main issues of the German government when it came to the Armenian Genocide. It was never a question of legitimate violence against civilians in wartimes, not to mention human rights. Although there was no “complicity” in the form of active support, all options were put on the table of “Realpolitik”. And the way it was done came close to *borderline*. Better knowledge notwithstanding, official Germany supported denialism and by this the crime of its war ally from the very beginning for egocentric reasons. After the war, as Stefan Ihrig has shown in a recent study, there was an important public debate about genocide in Germany, following the publication of Johannes Lepsius’ foreign office documents “Deutschland und Armenien” in 1919 and the assassination of Talaat Pasha in 1921 as well as the trial against Soghomon Tehlirian in 1921. Yet after this, following Ihrig, denialist voices became stronger and they even more and more changed to justificationalism (“hard, but useful”) of the Humann type. This backlash made Hitler’s statement about Enverat the Munich People’s Court in 1924 possible and helped to prepare the ground for Nazi mentality<sup>42</sup>.

ՌՈՒՏ ՀՈՍՏԵԼԴ (ԳԵՐՄԱՆԻԱ)

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՎ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Փոքրաթիվ գիտնականներ հաճախ դիտարկել են Գերմանիայի մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը՝ որպես «մեղսակցություն»: Սա, կարծես, ի ցույց էր դնում կապը նացիստների կողմից հրեաների նկատմամբ իրականացված ճնշումների հետ: Այդ կապը ինչ-որ տեղ ավելի բարդ է: Հայոց ցեղասպանությունը բացառապես երիտթուրքական ծրագիր էր, որի արմատները գալիս էին հայերի նկատմամբ բռնություն գործադրելու վաղուց ձևավորված

<sup>41</sup> Wolff-Metternich to Bethmann-Hollweg, 7 December, 1915. Notes Zimmermann and Jagow 16 December; Note Bethmann-Hollweg 17 December PA-AA-R 14089

<sup>42</sup> Stefan Ihrig: Justifying Genocide. Germany and the Armenians from Bismarck to Hitler. Cambridge, Mass./ London, UK: Harvard University Press, 2016

օսմանյան ավանդույթից: Առաջին աշխարհամարտի տարիներին գերմանական կառավարությունը գիտեր զրեթե ամեն ինչ, սակայն չմիջամտեց եսակենտրոն պատճառներով: Սա էլ հանգեցրեց «Ժխտողականության» քաղաքականության, իսկ պատերազմի ավարտից հետո՝ «արդարանալու»: Վերջինս նշանակում է հակա-երիկական մտածողություն «վերջնական լուծումների» հայեցակարգում, որը նացիզմի համար մտավոր հող նախապատրաստեց:

ՎԵՐԱ ՍԱՀԱԿՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

## ՀԱՏՈՒԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ԹԵՇՔԻԼԱԹ-Ը ՄԱԽՍՈՒՄԵ՝) ԶԵԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից քրիստոնյա բնակչության կոտորածներն առավել մեծ դաժանությամբ շարունակեցին իշխանության եկած երիտթուրքերը, որոնց հիմնական ձգտումը Օսմանյան կայսրության մեջ ապրող ոչ թուրք ժողովուրդների թուրքացումը կամ ոչնչացումն էր: Հայ ժողովրդին բնօրրանից զրկմանն ուղղված երիտթուրք գործիչների նպատակը մեծ Թուրանի ստեղծումն էր, մի ծրագիր, որը ծնունդ էր առել նախքան Առաջին համաշխարհային պատերազմը:

1919-1920 թթ. տեղի ունեցած դատավարությունների ընթացքում ներկայացված վավերական նյութերը<sup>2</sup> փաստում են, որ այն, ինչ իրագործվել է հայերի դեմ եղել է մանրակրկիտ և երկարատև

<sup>1</sup> Թեշքիլաթ-ը մախսուսե (تشكيلات مخصوصه), *huyf.* հատուկ կազմակերպություն, անգլ. Special Organization/:

<sup>2</sup> 1918թ. դեկտեմբերի 16-ի որոշումներով կազմվել են հարցաքննիչ հանձնախմբեր (գլխավոր նախագահ՝ Անկարայի նախկին վալի Մազհար բեյ), որոնք սկսել են հավաքել արևմտահայության կոտորածներին վերաբերող մեղադրական ապացույցներ՝ ծածկագիր հեռագրեր, պաշտոնական գրություններ, հրահանգներ և հրամաններ, ականատեսների վկայություններ: Մանրամասնությունները տե՛ս Yves TERNON, *Ermeni Tabusu*, թրգ. Emirhan Oğuz, Belge, 1993, էջ 247:

քննարկումների արդյունք<sup>3</sup>: Հայոց ցեղասպանության իրագործման հիմքում ընկած են եղել որոշումն ու ծրագիրը<sup>4</sup>: Պետական մարմինների կողմից նման ծրագրի իրագործման նպատակով կազմավորվել է քրեական հանցագործներից կազմված մի զուն՝ (gayri nizami harp örgütü<sup>5</sup>) «Թեշքիլաթ-ը մախսուսե», որի մասնակցությամբ իրականացվել է XX դարի առաջին ծրագրված ցեղասպանությունը (planlı, modern kitlesel halk kıyımı<sup>6</sup>):

Ուսումնասիրելով ՀԿ գործունեությունը՝ տեսնում ենք, որ այն ընդհատակյա, վտանգավոր, Օսմանյան կայսրության պետական հովանավորությունը վայելող ահաբեկչական կազմակերպություն է: Պահպանված վավերագրերը, մասնակիցների հուշագրությունները փաստում են, որ նրանում ներգրավված են եղել իշխող կուսակցությունը, Օսմանյան կայսրության սուլթանը<sup>7</sup>, բարձրաստիճան պաշտոնյաներն ու կառավարության բոլոր օղակների ներկայացուցիչները: ՀԿ ասվածը եղել է ձևավորված այն վարչական մարմինը, որը գործել է որպես պետության մեջ պետություն, կուսակցության մեջ՝ կուսակցություն: Սա այն կառույցն էր, որը պետք է «իրականացներ գործառույթներ, որոնց մասին պետությունը պաշտոնապես չէր ցանկանում իրագործելու հրաման արձակել»<sup>8</sup>: Կազմակերպության ցայսօր գաղտնի պահվող փաստաթղթերի մեջ են նախացեղասպանական ամբողջ ծրագիրն ու իրագործման մանրամասնությունները, որոնք ունեցել են առնվազն 25-30 տարիների նախընթաց, մանրակրկիտ, պետական մակարդակով կազմակերպչական փուլ: Այս կազմակերպության գործունեության ուսումնա-

<sup>3</sup> Takvim-i Vekayi, h. 3540, 8 (1919): Հղում՝ Դադրյան Վահագն, Հայոց ցեղասպանությունը ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր, Երևան 2012, էջ 17:

<sup>4</sup> ATI, մարտի 3-ը, 1919թ., հղում՝ Դադրյան Վահագն, նշվ. աշխ. էջ 18:

<sup>5</sup> Polat Saffi, *Fiiilden İsim, Teşkilat-ı Mahsusa*, Toplumsal Tarih, S. 243 (Mart 2014), էջ 76:

<sup>6</sup> **Taner Akçam**, *Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu*, İletişim Yayıncılık, 1.baskı, 1992, s. 22: **Taner akçam**, *İnsan Hakları ve Ermeni Sorunu*, İmge, 1999, s. 161:

<sup>7</sup> Սուլթան Մեհմեդ Ռեշադ V: Նրա ստորագրությունը տեսնում ենք տեղահանության օրենքի, բանտարկյալների ազատ արձակելու վերաբերյալ հրամանագրի, հետախուզության մեջ գտնվող հանցագործներին ներում շնորհող շրջաբերականի և այլ ցեղասպանական հրամանագրերի ներքո:

<sup>8</sup> **Hamit Bozarslan**, *Türkiye’de Devlet Komitacılık ve Çetecilik Konusunda Birkaç Hipotez*, Resmi Tarih Tartışmaları-1 Ed. F.Başkaya, Özgür Ün. Kitaplığı 2005. էջ 181:

սիրությունը ցույց է տալիս, որ ցեղասպանությունը չի իրականացվել միայն իթթիհադական երեք պարագլուխների հրամաններով: Անշուշտ, «Երեքի գործադիր կոմիտեն»<sup>9</sup> կարևոր և վտանգավոր կառույց էր, սակայն իր մեծ դերակատարությունն է ունեցել առաջին հերթին սուլթանը, ով, ստորագրելով ցեղասպանական շրջափերականներ և հրամանագրեր վավերացրել է կայսրության հայ քաղաքացիների ոչնչացման ծրագիրը, դրանով իսկ հաստատելով Ցեղասպանության՝ պետականորեն հովանավորվող հանցագործություն լինելու հանգամանքը: Բացի սուլթանից, ՀԿ-ի մեջ ներգրավված են եղել բանակը՝ բարձրաստիճան սպայական կազմով, առողջապահության, հոգևորականության ոլորտի բարձրաստիճան ներկայացուցիչների մեծամասնությունը:

Լինելով գաղտնի կազմակերպություն՝ գրագրությունն իրականացվել է հույժ գաղտնի: Հաճախ դրանք փոխանցվել են բանավոր<sup>10</sup>, հաճախ ընթերցելուց հետո վերադարձվել են կենտրոն, որտեղ, կարգադրության համաձայն՝ անմիջապես ոչնչացվել են<sup>11</sup>: Ըստ Երիտթուրքերի դատավարության նյութերի՝ ՀԿ-ի վերաբերյալ գոյություն ունեցած փաստաթղթերը ոչնչացվել են կազմակերպության գլխավոր պաշտոնյաների կողմից<sup>12</sup>: Սակայն վերջերս լույս տեսած Ահմեթ Թեթիկի<sup>13</sup> երկհատոր ուսումնասիրության մեջ հեղինակը տեղեկություններ է փոխանցում այն մասին, որ ժամանակին փաստաթղթերը պահ են տրվել ռազմական նախարարությանը<sup>14</sup>:

Փաստաթղթերի բացակայության պայմաններում ՀԿ-ի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների մեջ առաջ են եկել հակասություններ կազմավորման թվականի, նպատակների, ընդգրկ-

<sup>9</sup> Գործադիր կոմիտեի գլխավոր անդամներն էին Բեհաեդդին Շաքիրը, բժիշկ Նազրմը, կրթության նախարար Շյուքրին: Սա անկախ, ոչ պաշտոնական մարմին էր, որն ուներ սեփական գրասենյակ, քարտուղարություն, քննիչներ: Տե՛ս **Ղազարյան Հ.Գ.**, Ցեղասպան թուրքը, էջ 38-41:

<sup>10</sup> Մենմեդ Վեհիբի ցուցմունքը տե՛ս **Ղազարյան, Վ.**, նշվ. աշխ., էջ 18: **Tanık Zafer Tunaya, Türkiye’de Siyasal Partiler**, cilt III, İstanbul 1989, s. 279:

<sup>11</sup> Takvim- i Vakayi, N 3616, s. 69:

<sup>12</sup> **Y.Ternon, Bir Soykırım Tarihi**, haz. R. Zarakolu, Belge, 2013 s. 272:

<sup>13</sup> Թուրքիայում ԶՈՒ ԳՇ-ի ռազմական պատմության և ստրատեգիական ուսումնասիրությունների վարչությունում արխիվային բաժնի տնօրեն:

<sup>14</sup> **Ahmet Tetik, Teşkilat-ı Mahsusa (Umur-ı Şarkıyye Dairesi) Tarihi**, 2 Cilt, İşbankası Y., 2014, տե՛ս *(1. Cilt)*, s. 18:

ված անձանց և այլ կարևոր մանրամասնությունների վերաբերյալ<sup>15</sup>:

Առաջին թուրք ուսումնասիրողներից Էրգյուն Հիյըլմազը «Թեշքիլաթ-ը մախսուսեն ըստ փաստաթղթերի» գրքում գրում է, որ «Թեշքիլաթ-ը մախսուսեն» կազմավորվել էր որպես հետախուզական և հակահետախուզական կազմակերպություն, որը վերահսկում էր օտարների աշխատանքը թե՛ Օսմանյան կայսրության տարածքում, թե՛ նրա սահմաններից դուրս<sup>16</sup>: Ինչպես նշում է նույն հեղինակը, ՀԿ անվան «կնքահայրը» կապիտան (miralay) Ռասիմ Բեյն էր, ընդհանուր պատասխանատուն Էշրեֆ Քուշուրաշըն<sup>17</sup>, իսկ իբրև հետախուզական կազմակերպություն վավերացվել է սուլթան Ռեշադի կողմից Միություն և առաջադիմություն կուսակցության իշխանության գալուց հետո: Վարչական տեսանկյունից ենթարկվել է վարչապետությանը, իսկ գործնականում գործել է անկախ<sup>18</sup>:

Հիյըլմազի շարադրանքից հարց է առաջանում, եթե խոսքը պետական հետախուզական ցանցի անհրաժեշտությանն ու Օսմանյան կայսրության պետական պաշտպանությանն է վերաբերել, ինչու՞ է այն վավերացվել իթթիհադականների իշխանության գալուց

---

<sup>15</sup> ՀԿ-ի վերաբերյալ արված ուսումնասիրություններից և հուշագրություններից են՝ P. Stoddard, "The Ottoman government and the arabs, 1911 to 1918: A Preliminary Study of the Teskilat-i Mahsusa", Ann Arbor, Michigan, 1963: Cemal Kutay, *Birinci Dünya harbinde Teşkilat-ı Mahsusa ve Hayber'de Türk Cengi*, İstanbul, 1962: Ergün Hiçyılmaz, *Belgelerle Teşkilat-ı Mâhsusa ve Casusluk Örgütleri*, Ünsal Yayınları, İstanbul, 1979: Hamit Bozarslan, *Türkiyede devlet komitacılık ve çetecilik konusunda birkaç hipotez*, Resmi Tarih Tartışmaları-1 Ed. F.Başkaya, Özgür Ün. Kitaplığı 2005: Авакян А., Черкесский фактор в Османской империи и Турции: (Вторая половина XIX-первая четверть XX вв.).- Երևան, 2001թ: Авакян А. Генотид 1915 г: Механизмы принятия и исполнения решений/ НАН РА, Музей Генотид армян / [Отв. ред. Г. Р. Симонян], Երևան, 2013թ., Ahmet Tetik, *Teşkilat-ı Mahsusa (Umur-ı Şarkıyye Dairesi) Tarihi*, 2 Cilt, İşbankası Y., 2014: Orhan Koloğlu, *Curnalcilikten Teşkilat-ı Mahsusa'ya*, Kırmızı Kedi Y. 2012: Atilla Çelikepe, *Teşkilat-ı Mahsusa'nın siyasi Mıyonu*, IQ 2002: Philip H. Stoddard, *Teşkilat-ı Mahsusa*, arma, 2003: Vahakn Dadrian, "The Role of the Special Organization in the Armenian Genocide during the First World War," in *Minorities in Wartime*, P. Panayi (éd.): Oxford, 1993: Ahmet Emin Yalman, *Yakın Tarihte Gördüklerimiz ve Geçirdiklerimiz*, Cilt 1, İstanbul: Yenilik Basımevi, 1970, և այլն: Թեմալի ուսումնասիրությանը նվիրված են նաև բազմաթիվ հոդվածներ և հրապարակումներ:

<sup>16</sup> Hiçyılmaz, E., նշվ. աշխ., էջ 47:

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 48:

հետո միայն: Պարզ քննությունը ցույց է տալիս, որ միննույն մարդիկ, ովքեր եղել են մինչև երիտթուրքական հեղաշրջումը, եղել են նաև Թեշքիլաթ-ը, մախսուսայի ընդհատակյա ցանցի մեջ, ստացել են պաշտոններ երիտթուրքերի հեղաշրջումից հետո, որոշ մասը պաշտոնավարել է նաև Հանրապետական Թուրքիայում<sup>19</sup>: Ինչ վերաբերում է սուլթան Ռեշադին, նրա անունը տեսնում ենք 1913-ին կամավորության վերաբերյալ կանոնադրության, ՀԿ-ի շարքերը համալրելու նպատակով բանտարկյալներին ներում շնորհող, բանտերից մարդասպաններին ազատ արձակող օրենքի նախագծի ու շրջաբերականների ներքոստորագրյալի կարգում:

Սուլթան Ռեշադի և մինչև Յեղասպանություն գոյություն ունեցած հետախուզական կազմակերպության մասին 2014-ին լույս տեսած մեկ այլ թուրք հեղինակ Ահմեթ Թեթիկի երկհատոր ուսումնասիրության<sup>20</sup> մեջ որևէ տողի չենք հանդիպում: Նրա մեջտեղ բերած փաստաթղթերի համաձայն՝ Թեշքիլաթ-ը մախսուսեն նկարագրվում է որպես հետախուզական կազմակերպություն, որը, սակայն, կազմավորվել է Բալկանյան պատերազմներին մասնակցող «կամավորների» հիման վրա, որոնց հավաքագրումը սկիզբ է առել 1911թ. սեպտեմբերի 29-ից<sup>21</sup>: Խումբը նախ մասնակցել է Թիրեբուլուի, ապա Բալկանյան պատերազմներին: Երկու պատերազմների ընթացքում նշված գնդերը Թեշքիլաթ-ը մախսուսե անվան ներքո<sup>22</sup> համակարգվել են Ստամբուլի մուհաֆըզլըրի<sup>23</sup> կողմից», գունդն ունեցել է հաս-

<sup>19</sup> Նշենք օրինակ ՀԿ ամենաազդեցիկ անդամներից Աթիֆ Կամչիլին, ով պատերազմի ընթացքում վարել է երկու պաշտոն՝ Անկարայի պատգամավոր և ՀԿ տնօրենների խորհրդի անդամ, իսկ 1939-ին ընտրվել Չանաքքալեի պատգամավոր: St u Emekli sandığı arşivi, Atif Kamçıl dosyası: հղում՝ Polat Safi, *Fılden İsim.*, էջ 74-79: Պաշտոնավարած անձանց անուններին ծանոթացի՝ ր նաև՝ Fikret Başkaya, Sait Çetinoğlu, *Resmî Tarih Tartışmaları -3-, 1. Baskı*, Nisan 2007, s. 247:

<sup>20</sup> Ahmet Tetik, *Teşkilat-ı Mahsusa (Umur-ı Şarkıyye Dairesi) Tarihi*, Vol.: 1, 1914-1916, Vol.: 2, 1916-1918, İşbankası Y., 2014:

<sup>21</sup> Ahmet Tetik, նշվ. աշխ., (*1. Cilt*), էջ 2:

<sup>22</sup> ATASE, BH Kol, Kls., 197, D. 37, F., 1-14: Հղում՝ Ahmet Tetik, նշվ. աշխ. (*1. Cilt*), էջ 3:

<sup>23</sup> "İstanbul Muhafızlığı": Հայտնի է նաև «Բեքիրաղայի բաժանմունք» անունով: Արդուլիամիդ 2-ի, Երկրորդ սահմանադրության ընթացքում մինչև զինադադար զործող բանտ:

տիքով և անհաստիք ծառայողական կազմ<sup>24</sup>: Ըստ հեղինակի հղած փաստաթղթերի՝ թեջքիլաթականների գնդերը երբեմն կոչվել են «կամավորների գնդեր» (gönulli), երբեմն Թեջքիլաթ-ը մախսուսա, երբեմն չեթենների ջոկատ, երբեմն ոչ պաշտոնական գնդեր, իսկ հրամանատար Էշրեֆ Քուշուրբաշըն՝ չեթենների ընդհանուր հրամանատար (Uzum Çeteler Kumandanı)<sup>25</sup>:

Ա. Թեթիկի մեջբերած փաստաթղթերից հասկանալի է դառնում, որ 1913թ. արդեն իսկ լայն գործունեություն էր ծավալում ոչ պաշտոնապես կազմավորված մի գունդ՝ բանակի բարձրաստիճան զինվորականների ներգրավվածությամբ, որի մասին տեղյակ էր կառավարությունը: Այս կառույցն ուներ պետական բարձր հովանավորություն, հաստիքով և անհաստիք ծառայողական կազմ: Հեղինակը որևէ կերպ չի բացատրում տարբեր անունների գործածության պատճառները, ինչպես նաև առհասարակ չի անդրադառնում այն հարցերին, թե գնդերը ինչպես են վերադարձել Բալկանյան պատերազմներից, որտեղ են հաստատվել, մինչև պաշտոնական գորահավաք ինչով էին զբաղված և ինչու կամավորության վերաբերյալ շրջաբերականը հրապարակվեց 1913-ին:

Այս կարևոր հատվածը լրացնելու համար դիմում ենք այլ աղբյուրների, որոնց համաձայն՝ 1910-1911<sup>26</sup> թթ. տեղի ունեցած գաղտնի<sup>27</sup> ժողովների ընթացքում մշակվել էին որոշակի ծրագրեր, որոնք պետք է 1913 թ. վերածվեին պետական քաղաքականության: Այդ նպատակով Բալկաններից և Կովկասից վերադարձած գնդերի հիման վրա կազմավորվում են նոր գնդեր: Նրանց առջև դրված առա-

---

<sup>24</sup> ATASE, BH Kol, Kls., 230, D. 158, F., 1-55: Հղում՝ **Ahmet Tetik**, նշվ., աշխ., (*I. Cilt*), էջ 4:

<sup>25</sup> **Ahmet Tetik**, նշվ., աշխ., (*I. Cilt*), էջ 7-8:

<sup>26</sup> 1910 թ. հոկտեմբերի 31-ին Սելանիկում տեղի են ունեցել 13 օր տևող ժողովներ, որի ընթացքում որոշումներ են ընդունվել ցեղասպանության իրագործման վերաբերյալ: Ստեղծվել է 7 հոգուց բաղկացած գաղտնի կոմիտե (հետագայում դրանց թիվը հասավ 14-ի): Կոմիտեի բոլոր անդամներին հետագայում տեսնում ենք ՀԿ-ի պարագլուխների շարքերում՝ Ռուսուհի, Զիյա Գյոքալփ, Բեհաեդդին Շաքիր, Թալեաթ, Հաջը Ադիլ և այլք:

<sup>27</sup> Գաղտնի ժողովները տեղի են ունեցել նաև 1914թ. մայիս, հունիս, օգոստոս ամիսներին: Տե՛ս **Taner Akçam**, *Türk Ulusal...*, էջ 124:

ջին առաջադրանքներից մեկը հույների արտաքսումն էր<sup>28</sup>: 1913 թ. հունվարի 24-ի գրության համաձայն՝ Էնվերը դեռևս փոխգնդապետ եղած ժամանակ, հրամայում է Էջրեֆին, որ վերջինս գնա Իզմիրի շրջան՝ կազմակերպելու համար ՀԿ ջոկատներ<sup>29</sup>: 1913թ. մարտի 16-ի գրությամբ քվեարկության է դրվում կամավորների՝ 13 կետից բաղկացած կանոնադրությունը<sup>30</sup>: Նշենք, որ կամավորության վերաբերյալ փաստաթուղթը հղում է անձամբ Ահմեթ Թերիկը: Կամավորության շրջափերականի համաձայն՝ չեթե կարող էին արձանագրվել դասալիք զինվորներ, գերիներ<sup>31</sup>, Բալկաններից կամ Կովկասից Օսմանյան կայսրություն տեղափոխված մուհաջիրներ, լազեր, չերքեզներ<sup>32</sup>, չեչեններ<sup>33</sup>, քրիստոնյա վրացիներ<sup>34</sup>, քրդեր<sup>35</sup>: Կազմավորված զորագնդերի օրինակով, առընթեր չեթեական գնդեր կազմելու իրավունք էր տրվում նաև տեղական վալիներին ու քայմաքամներին<sup>36</sup>: Մուհաջիրներին՝ զաղթականներին, ՀԿ շարքերում տեղավորելու գործընթացը կազմակերպել է աշիրթների և զաղթականների զետեղման հանձնաժողովը (*İşkân-ı Aşâir ve Muhâcirîn Müdiriyeti*)<sup>37</sup>, որը 1913-ին ոչ թե տարագիր հայության խնդիրներով զբաղվելու, այլ կայսրություն բերված կամ ներգաղթած քոչվոր մահմեդականներին բնակատեղիներով և «աշխատանքով» ապահովելու համար էր ստեղծվել<sup>38</sup>: Ձևավորված գնդերը, ըստ դասերի, ջոկատների գործել են ՀԿ տնօրենների խորհրդի կողմից նշանակված հատուկ հրամանատարի ներքո, սակայն, «ըստ անհրաժեշտության»,

<sup>28</sup> Հույների բռնագաղթի վերաբերյալ տե՛ս АВПРИ, Ф., 180, Посольство в Константинополе, оп. 517/2, д. 4009, 1914 г., л. 102, հղումը՝ **Авакян А.** Черкесский фактор... , էջ 229:

<sup>29</sup> Ղազարյան Հ.Գ., Ցեղասպան թուրքը, Բեյրութ, 1968, էջ 51:

<sup>30</sup> **Ahmet Tetik**, նշվ., աշխ. (1. Cilt), էջ 4:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 32:

<sup>32</sup> Չերքեզների մասնակցության մասին տե՛ս **Авакян А.** *Геноцид 1915 г.*, էջ 68:

<sup>33</sup> Չեչենների մասին տե՛ս Արամ Անտոնյան, *Մեծ ոճիրը*, Պոսթրն, 1921, էջ 230: Պողարյան Գրիգոր, *Ցեղասպան թուրքը, վկայություններ քաղված հրաշքով փրկվածներու զրույցներէն*, Պեյրութ, 1973, էջ 51, 52:

<sup>34</sup> **Polat Safi**, *Üç Tarz-ı Çete*, Kebikeç, համար 34, Ankara 2012, էջ 99:

<sup>35</sup> Գրիգոր Պողարյան, նշվ. աշխ., էջ 14: Արամ Անտոնյան, նշվ. աշխ., էջ 292-93:

<sup>36</sup> ATASE, BHD: K: 1828, D. 4, F: 1/9; ATASE, BHD; K: 1828, D: 4, F, 1/25:

<sup>37</sup> Հիմնադրվել է 1913-ին: Առաջին նախագահն էր Սուադ բեյը:

<sup>38</sup> **Volkan Martin**, *Bir Osmanlı Kurumunun Adı ve Etkinliği Üzerine*, Uluslararası Avrasya Sosyal Bilimler Dergisi, Yıl 2, Sayı 5:



կարող էին գործել նաև առանց կենտրոնական հրամանի<sup>39</sup>:

Այսպիսով, 1913-ի դրությամբ ՀԿ-ի ջոկատները համալրվում էին հետևյալ հիմքերով՝ կամավորության շրջաբերական, որը մեծ հնարավորություն էր ստեղծում հատկապես կովկասցի փախստականների համար, թիվ 67 հրամանագիրը<sup>40</sup>, որով բանտերից ազատ էին արձակվում մարդասպանները, քրդաբնակ շրջաններում Աբդուլ Համիդի կողմից բացված զինվորական դպրոցների սաները<sup>41</sup>, հետախուզության մեջ գտնվող և սուլթանի հատուկ շրջաբերականով ներման արժանացած հանցագործները: Վերջիններս շրջաբերականի հրապարակումից անմիջապես հետո դուրս էին գալիս թաքստոցներից, ներկայանում կառավարությանը, ապա արձանագրվելով որպես կամավորական՝ ստանձնում ՀԿ որևէ գնդի հրամանատարություն<sup>42</sup>: Հավաքագրված այս կազմը նախ ռազմական նախարարության կողմից վարժեցվում էր, ապա ուղարկվում հիմնականում Կովկասյան շրջան<sup>43</sup>: ՀԿ ընդգրկված անձանց 60 տոկոսը կովկասցի բնիկներ էին<sup>44</sup>: Սա արվել էր Կովկասի մահմեդականներիին միավորելու և ընդդեմ Ռուսաստանի օգտագործելու, այլ կերպ՝ «թյուրքչուլուքի» գաղափարախոսության տարածման նպատակով<sup>45</sup>: Այս ընդհանուր ծրագրի իրականացման համար ռազմական նախարարությունը տրամադրում էր ֆինանսական գաղտնի աղբյուրներից հատկացումներ<sup>46</sup>:

Ինչպես տեսնում ենք, մինչև 1914 թ. Թուրքիայի կողմից պատերազմի մեջ մտնելը, այս գնդերը գործում էին ամբողջությամբ

<sup>39</sup> **Tanık Zafer Tunaya**, *Türkiye’de Siyasal Partiler*, İstanbul, 1952, էջ 134-137:

<sup>40</sup> **Toynbee, Arnold**, *The Western Question in Greece and Turkey*, Boston: **Houghton Mifflin**, 1922, էջ 279, 280:

<sup>41</sup> **Минорский В. ф.**, *Курды. Заметки и впечатления*, Петроград, 1915, с. 11:

<sup>42</sup> **Վահրամ Տատրյան**, *Հէյի անապատ* (փրցված էջեր օրագրես), Նիւ Եորք, 1945, էջ 19:

<sup>43</sup> **Дадрян В.**, *История Армянского Геноцида: Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа*, Еրևան, 2007, էջ 314:

<sup>44</sup> **Авакян А.**, *Геноцид 1915 г.*, էջ 224: Կովկասցի ցեղերի մասնակցության մասին տե՛ս նաև՝ **Polat Safi**, *Filden İsim*. . . , էջ 74-79:

<sup>45</sup> **Liman von Sanders**, *Türkiye’de Beş Sene*, Yeditepe Yay. ,2006, s. 164-169, 194:

<sup>46</sup> **Cemal Kutay**, *Birinci Dünya harbinde Teşkilat-ı Mahsusa ve Hayber’de Türk Cengi*, İstanbul, 1962, էջ 36: (BOA), Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Mğdürüyeti (DH. EUM.), 6.Şb, D. 21, G. 2-A (1,2,3,4,5,6,7,8,9,1,11), հղումը՝ **Ahmet Tetik**, նշվ. աշխ., (*1. Cilt*), էջ 14:

գաղտնի՝ ոչ պաշտոնապես: Քանի որ պետությունը չէր կարող վավերացնել նման մի կազմակերպության գործունեությունը: Թեթիկի հղած որոշ վավերաթղթերում նշված են ոչ պաշտոնական (gayri nizami) գնդեր անվամբ: Փաստաթղթերի՝ մինչև Առաջին աշխարհամարտ բացակայությունը բացատրվում է նաև այս հանգամանքով: Գնդերը ոչ պաշտոնական գործունեություն են ծավալում մինչև 1914 թ. օգոստոս ամիս: Առաջին աշխարհամարտը այն լավագույն առիթն էր, որը կարող էր օգտագործվել հայերի վերջնական հաշվեհարդարի համար: Ուստի, 1914թ. օգոստոսի 2-ին, նույն թվականի մայիս, հուլիս, օգոստոս ամիսներին տեղի ունեցած գաղտնի ժողովների արդյունքում<sup>47</sup> ընդհանուր գորահավաքի հրամանից հետո<sup>48</sup> պաշտոնապես վավերացվում է Թեշքիլաթ-ը մախսուսայի գործունեությունը (Teşkilat-ı Mahsusa merkez-i umûmisi)՝ ռազմական նախարար Էնվեր փաշայի, ներքին գործոց նախարար Թալեաթ փաշայի, Մուլեյման Ասքերիի, անվտանգության նախարար Ազիզ Բեյի, դուկտոր Նազըմ Բեյի և Աթըֆ Բեյի (Atif Kamçıl) գլխավորությամբ<sup>49</sup>: Նախապես գաղտնի կառույցը, օգտվելով պատերազմական պայմաններից, սկսում է գործել բացահայտ<sup>50</sup>: Ի դեմս ՀԿ ընդհանուր կենտրոնի գրասենյակի՝ վավերացվում է մի կազմակերպություն, որն իրավասու էր իրականացնելու անկախ գործառույթներ, ուներ հսկայական բյուջե, օժտված էր բոլոր իրավասություններով<sup>51</sup>, ուներ պետական բանակից առավել հզոր, իր դաժանությամբ առանձնացող ռազմական ուժ: ՀԿ ցեղասպանական գնդերը ձևավորվում են Օսմանյան կայսրության առաջին և երրորդ զորաբանակի շրջանում՝ Բեհաեդդին Շաքիրի գլխավորությամբ: Ըստ Ա. Թեթիկի հղած փաստաթղթերի 1914թ. սեպտեմբերի 4-ից մինչև 1915թ. մարտի 28-ը ՀԿ ընդհանուր կենտրոնն ունեցել է 3 նախագահ՝ Մուլեյման Ասքերի, Բինբաշը Հալիլ և Ջևաթ (Miralay Cevad Kızanlık): Նույն փաստաթղթերի համաձայն՝ Մուլեյման Ասքերիի հետաքրքրության ամբողջ շրջանակը պաշտոնավարման 2.5 ամիսների ընթացքում բա-

<sup>47</sup> **Taner Akçam**, *Türk Ulusal. . .*, էջ 124: **Celal Bayar**, *Ben de Yazdım*, Cilt 5, İstanbul, 1967, էջ 1573:

<sup>48</sup> **Arif Cemil**, *I Dünya Savaşı'nda Teşkilat –ı Mahsusa*, Arba, Yayınları, İstanbul, 1997, էջ 9:

<sup>49</sup> **Ahmet Tetik**, նշվ. աշխ., (*1. Cilt*), էջ 4: էջ 15:

<sup>50</sup> **Ղազարյան Հ.Գ.**, *Ցեղասպան թուրքը*, Բեյրութ, 1968, էջ 112:

<sup>51</sup> **Yves TERNON**, *Ermeni...*, էջ 234:

ցառապես վերաբերել է հետևյալ շրջաններին՝ Սարիղամիշ, Կարս, Էրզրում, Վան, Արդահան, Օլթի, Ալեքսանդրապոլ և այլն: Նշված շրջաններում Սուլեյման Ասքերիի հատուկ ցուցումներով թեշքիլաթի ջոկատներն իրականացրել են քարոզչություն, բնակիչներին տրամադրել միմյանց նկատմամբ, կազմակերպել դիվերսիաներ<sup>52</sup>:

1914թ. նոյեմբերի 16-ին, նոյեմբերի 20-ին, դեկտեմբերի 16-ին պետականորեն գործող ՀԿ գրասենյակ են ուղղվել հեռագրեր: 1915թ. փետրվարի կեսերից կենտրոններին են ուղարկվել սպանությունների և սեփականության գրավման վերաբերյալ զաղտնի հրահանգներ: 1915 թ. մայիսի 5, մայիսի 12, մայիսի 23-ով թվագրված ծածկագրերի մեջ արդեն քննարկվում և գրվում էր հայերի վերջնական ոչնչացման մասին<sup>53</sup>: ՀԿ գնդերը փոխօգնությունը բացառելու նպատակով նախ խաթարում էին հայկական գյուղերի միջև եղած կապը, ապա մտնելով գյուղ թալանում, բռնաբարում և կոտորում էին ամբողջ հայ բնակչությանը<sup>54</sup>: Հետախուզական կենտրոնը մարդասպանների գնդի ընդհանուր հրամանատար Բեհաեդդին Շաքիրին էր ուղարկում հանձնարարական: Վերջինս ջարդարար մեքենայի առաջնորդներին, որոնք եղել են բանակի փորձառու զինվորականներ, առաքել է ծածկագիր կարգադրություններ: Վերջիններս իրենց հերթին նույնը փոխանցել են տարբեր նահանգների պաշտոնյաներին, որոնք համարվել են *թեշքիլաթի* ցածր օղակի անհաստիք համագործակցողներ: Մարդկանց տեղահանել են, զինվորականների ուղեկցությամբ խմբերով տարել դեպի համապատասխան նախապես ընտրված վայրեր և *թեշքիլաթի* մեջ կամավորության շրջաբերականի համաձայն ընդգրկված հանցագործ գնդերով կոտորել:

Ովքե՞ր են իրականում եղել ՀԿ անդամ: ՀԿ անդամակցած անձանց մասին Ջեմալ Քուրբայը գրում է, որ նրանում ներգրավված են եղել բանակի բարձրաստիճան ներկայացուցիչներ, տարեց և փորձառու հրամանատարներ, մտավորականներ, քաղաքացիական անձինք, հոգևորականներ, թուրքական ազգայնականների կողմից ստեղծված «Թուրքական օջախների» անդամներ<sup>55</sup>: Բազմաթիվ տե-

<sup>52</sup> ATASE, Birinci Dünya Harbi Koleksiyonu (BHD Kol.), Kls. 2868, D. 269, F. 2, BHD Kol., Kls. 2868, D. 269, F. 2-1, Հղումը Ahmet Tetik, նշվ. աշխ. (*I. Cilt*), էջ 11:

<sup>53</sup> Ղազարյան, Հ.Գ., Ցեղասպան թուրքը, Բեյրութ, 1968, էջ 116:

<sup>54</sup> Նույն տեղում:

<sup>55</sup> Kutay, Cemal (1983). Talat Paşa'nın Gurbet Hatıraları. Cilt 3. İstanbul: Kültür. S. 1491:

ղեկություններ կան հասարակ բնակչության մասին /sivil halk/<sup>56</sup>: Եթե Ստոդդարդի ուսումնասիրությունից քաղենք, ապա անդամների ընդհանուր թիվը կազմել է 30-35000 մարդասպան<sup>57</sup>: Նույն քանակն է ներկայացնում նաև Ահմեթ Թեթիկը: Եթե մեր կողմից կարդացված որոշ հուշագրություններից, փաստաթղթերից և ուսումնասիրություններից քաղված ցանկով առաջնորդվենք, թեշքիլաթականների միայն պարագլուխների թիվը անցնում է 300-ը, իսկ ներգրավված մարդասպանների թիվը որևէ կերպ հնարավոր չէ հաշվել:

Թեշքիլաթի կազմակերպման, անդամների և ծրագրած գործողությունների վերաբերյալ հետաքրքրական դիտարկումներ է կատարում հետազոտող Աթիլայ Չելիքթեփեն: Նա, հենվելով ՀԿ անդամ Էշրեֆ Քուշուրաշըի փոխանցած տեղեկություններին, ուսումնասիրողի ուշադրությունը հրավիրում է նրա հետևյալ հայտարարության վրա. «Կարևոր չէ, թե կառույցն ինչ անունով է հայտնի՝ «Արևմտյան Թրակիայի ժամանակավոր կառավարություն», «Ֆիդայական շարժում», «Արևելյան գործերի գրասենյակ», «Զավթողական շարժում»<sup>58</sup>, «Թեշքիլաթ-ը մախսուսա». . . այն իրականացրել է նույն գործողությունները, բաղկացած է եղել նույն անձնակազմից, ղեկավարվել է նույն անձի՝ Էնվերի կողմից»<sup>59</sup>: Երիտթուրքերի դատավարության 2-րդ, 5-րդ և 6-րդ նիստերի արձանագրությունների համաձայն, որոնց ընթացքում հարցաքննության են ենթարկվել Միություն և առաջադիմություն կուսակցության հատուկ որոշմամբ ստեղծված Թեշքիլաթ-ը մախսուսայի անդամները, հայտնի է դառնում, որ կազմակերպությանը մասնակցություն են ունեցել կուսակցության կենտրոնական կոմիտեի բոլոր գլխավոր անդամները, այլ խոսքով՝ ողջ կառավարական վերնախավը՝ ստորին օղակների և տեղական կառավարման մարմինների՝ վալիների հետ միասին: Ի. Տերնունի գնահատմամբ՝ ինչպես «Համիդիե»<sup>60</sup> գնդերը, «Թեշքիլաթ-ը

<sup>56</sup> Taner Akçam, *Türk Ulusal . . .*, էջ 133:

<sup>57</sup> Stoddard, P., *"The ottoman government and the arabs, 1911 to 1918: a preliminary study of the teskilet-i mahsusa"*, ann arbor: 1963, p. 58:

<sup>58</sup> Քուշուրաշը Էշրեֆը թեշքիլաթի իրականացրած գործողություններն անվանում էր *Ֆեթիհի հարևերթի*: Տե՛ս Celal Bayar, նշվ. աշխ., էջ 1979:

<sup>59</sup> Atilla Çeliklepe, *Teşkilat-ı Mahsusa'nın siyasi Misyonu*, 2002, էջ 73-75:

<sup>60</sup> Կազմվել են 1890-ական թվականներին Արդուլ Համիդի նախաձեռնությամբ: Տե՛ս Osman Nuri, *Abdul Hamid Sani ve devri Saltanatı*, İstanbul, 1327, s. 858-859:

մախսուսե»-ի կազմավորման նպատակը նույնպես ոչնչացման ծրագրի առաջին մասն է եղել<sup>61</sup>:

Թեթիկի կողմից չբացատրված հանգամանքների ներքո 1915թ. ապրիլի 5-ին Թեշքիլաթ-ը մախսուսեն վերանվանվում է Արևելյան գործերի գրասենյակ (Umur-ı Şarkiye Dairesi <sup>62</sup>) Ալի Բաշհամրայի նախագահությամբ: Վերջինս պաշտոնավարում է մինչև 1918թ. հոկտեմբեր 31-ը<sup>63</sup>: Նշենք, որ Թեթիկի մեջտեղ հանած և հղած փաստաթղթերից բացի, այս անձի մասին տեղեկություններ ընդհանրապես չկան ոչ Ստոդոլարդի, ոչ Թարըք Զաֆեր Թունայայի և ոչ էլ այլոց մոտ:

Ինչ էր նախատեսում անվանափոխությունը: ՀԿ տարբեր անունների ներքո հանդես գալը նպատակների և ծրագրերի փոփոխությունից չէր բխում: Ինչպես տեսնում ենք, նպատակը, գործելաճը և անձնակազմը մնում էին անփոփոխ: Նույնիսկ 1918-ի փաստաթղթերում դեռևս հաճախ պաշտոնյաները շարունակում էին օգտագործել «Թեշքիլաթ-ը մախսուսա» -եզրույթը<sup>64</sup>: Անվանափոխության հիմնական նպատակը հետքերի ոչնչացման նպատակով միայն կարող էր արվել: Ինչպես այս, այդպես էլ հետագա անվանափոխությունների ընթացքում թուրք ղեկավարները փորձում էին իրականացնել արմենոցիդի բացարձակ իրագործում՝ առանց հետքերի:

1918թ. նոյեմբերի կամ դեկտեմբերի 15-ին Արևելյան գործերի գրասենյակը (իմա Թեշքիլաթ-ը մախսուսա) լուծարվում է<sup>65</sup>: Լուծարման գործընթացի ղեկավարումը հանձնարարվում է գրասենյակի հիմնադիր անդամներից մեկին՝ Հուսամեդդին Էրթուրքին<sup>66</sup>: Ըստ Թեթիկի հղած զեկուցագրի՝ Էրթուրքը փաստաթղթերը ոչ թե ոչնչացրել, այլ ուսումնասիրելուց հետո ի պահ է հանձնել ռազ-

---

Արթուր Պելերեան, *Համիտիկ գորախումբերու կազմակերպութեան ծագումը (1890-1894)*, Հայկազեան Հայագիտական Հանդես, Պէյրոս, 1994թ., էջ 81-96):

<sup>61</sup> Yves TERNON, *Ermeni Tabusu*, Emirhan Oğuz, Belge, 1993, s. 234:

<sup>62</sup> Ergün Hıçılmaz, նշվ. աշխ., էջ 123:

<sup>63</sup> Ahmet Tetik, նշվ. աշխ., (*1. Cilt*), էջ 17:

<sup>64</sup> BOA, Irade-i Dosya Usulü İradeler Tasnifi (İ. DUIT), D.61, G. 51, Հղումը՝ Ahmet Tetik, նշվ. աշխ. (*1. Cilt*), էջ 17:

<sup>65</sup> BOA, Hariciye Siyasî Kısımı (HR. SYS.), D. 2461, G. 31 (1,2,3): Հղումը՝ Ahmet Tetik, նշվ. աշխ. (*1. Cilt*), էջ 18:

<sup>66</sup> Takvim-i Vekayi, համար 3554, էջ 68:

մական նախարարությանը<sup>67</sup>, որի հիման վրա էլ տարիներ անց անձամբ պատրաստել է ուսումնասիրությունը: Ինչ վերաբերում է շինությանը, այն տրամադրվում է հասարակական անվտանգության կոմիտեին<sup>68</sup>: Սակայն ուշադրություն հրավիրենք այն հանգամանքին, որ ո՛չ դատավարությունների և ո՛չ էլ մասնակիցների հուշագրությունների մեջ հղում չկա ռազմական նախարարությանը ի պահ հանձնված փաստաթղթերի վերաբերյալ: Թերիկի աշխատության մեջ ընդհանրապես հակասություններ կան ընդհանրապես թեշքիլաթի պարագլուխների, ներգրավված անձանց և, որ ամենակարևորն է, գործունեության վերաբերյալ առհասարակ:

Կազմակերպության պաշտոնապես փակումից հետո, երբ կոտորածը շարունակելու համար այլևս չկային պատերազմական պայմաններ, ՀԿ անդամները Մուդրոսի զինադադարից հետո հանդես են գալիս Ազգային պաշտպանություն (Müdafaa-i Hukuk cemiyetleri), Ազգային ուժ (Kuva-yi Milliye)<sup>69</sup> և այլ կազմակերպությունների շարքերում: ՀԿ նախկին անդամ Չերքեզ Էթեմը գրում է, որ «Milli» շարժման տարիներին իր պաշտպանական ջոկատը համարվել էր 4000 բանտարկյալով, որոնք ազատ էին արձակվել իր միջնորդության հիման վրա՝ Քյութահիայում (Կուտինա) և շրջակայքում եղած բանտերից<sup>70</sup>: «Milli» շարժման տարիներին ստեղծված գնդերը կազմավորվել և գործում էին բացառապես հայկական տարածքներում: Մասնաճյուղերից մեկը նույնիսկ կրում էր «Արևելյան նահանգների Ազգային պաշտպանություն» անունը (Vilayet-i Şarkıye Müdafaa-i Hukuk): Սյալիսով, Մուդրոսի զինադադարից անմիջապես հետո ՀԿ ներգրավված անձանց կողմից վերակազմավորված հինգ ջոկատներից երեքը գործում էին ընդդեմ հայերի, իսկ երկուսը՝ ընդդեմ հույների<sup>71</sup>: Հաջորդող տարիներին ՀԿ պարագլուխներին տեսնում ենք ազգային անվտանգության ծառայողների, արտգործնախարարության, ներքին գործոց նախարարության և պաշտպա-

<sup>67</sup> BOA, Hariciye Siyasî Kısmı (HR. SYS.), D. 2461, G. 31 (1,2,3): Հղումը **Ahmet Tetik**, նշվ. աշխ. (*1. Cilt*), էջ 18:

<sup>68</sup> **Ahmet Tetik**, նշվ. աշխ. (*1. Cilt*), էջ 18:

<sup>69</sup> **Sabahattin Selek**: *Anadolu İhtilali (1. Cilt)*, Kastaş A.Ş. Yayınları, 1987, s. 127, 129, 249, 323:

<sup>70</sup> **Çerkes Ethem**, *Hatıralarım*, Dünya yayınları, 1962, s. 82:

<sup>71</sup> **Taner Akçam**, նշվ. աշխ., էջ 150-151: **Erik Jan Zürcher**, *Milli Mücadelede İttihatçılar*, İstanbul 1987, s. 187:

նության նախարարության ծառայողների շարքերում<sup>72</sup>:

Այսպիսով, «Օսմանյան կայսրության քաղաքացիական ծառայողների 85, իսկ հաստիքային սպաների 93 տոկոսը նորաստեղծ Հանրապետությունում մնացել էին նույն պաշտոնում»:<sup>73</sup> Հետևաբար, Թուրքիայի հանրապետությունը բոլոր առումներով Օսմանյան կայսրության իրավահաջորդ՝ Հայոց ցեղասպանության իրագործման մեջ պատասխանատու պետությունն է:

VERA SAHAKYAN (ARMENIA)

### **THE PREREQUISITES OF THE FORMATION OF SPECIAL ORGANIZATION (THE TEŞKILÂT-I MAHSUSA)**

The Teşkilât-ı Mahsusa semi-military organization, which formally acted during the Ottoman Empire, was organized on the way of creating Great Turan. The first Genocide of 20st century was committed with the help of this organization.

The results of the study of motivations, date and members of The Teşkilât-ı Mahsusa organization are contradicting. The main reason is that it acted with oral commands and the existing documents were eliminated by the officials of The Teşkilât-ı Mahsusa. It is known that during the Ittihadists Convention in Thessaloniki, in 1910 and 1911 when the members of the Convention were discussing the secret Genocidal plans, they came up with a conclusion that the annihilation of Armenians had to be done by the criminal organization Teşkilât-ı Mahsusa. This organization was financed by the Ministry of War and by Armenians' confiscated wealth which is presented as an unknown, secret source in corresponding documents.

The former groups of this semi-military organization were formed in the Balkans Firstly, Chete organizations were commended by militaries. However, gradually criminals were released from jails and recruited in order to commit the massacres.

The following report discusses the prerequisites of the formation of The Teşkilât-ı Mahsusa in the Ottoman Empire and its role in the commitment of the Armenian Genocide.

---

<sup>72</sup> Ahmet Tetik, նշվ. աշխ., I հ. (*1. Cilt*), էջ XII:

<sup>73</sup> Hugh Poulton, *Top Hat, Grey Wolf and Gresgend* 88 (1997), հղումը՝ Դադրյան, Վահագն, *Հայոց ցեղասպանությունը...*, էջ 33:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅ.

### ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

*ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԵՎ ԹՈՒՐԹԱԿԱՆ  
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 1896Թ.**

Գերմանական կայսրության մերձավորարևելյան քաղաքականության մեջ առանձնահատուկ տեղ է հատկացված Հայաստանի ռազմավարական, տնտեսական և քաղաքական դերին ու նշանակությանը: XIX դ. վերջին քառորդից գերմանական պետական գործիչներն սկսեցին մշակել հատուկ ռազմավարական հայեցակարգեր, որոնց նպատակն էր Ռուսաստանի և Անգլիայի դեմ սպասվող պատերազմում հաղթանակի հասնել և ստեղծել հզոր Գերմանական կայսրություն: Այդ ծրագրերում Հայաստանի դերը ներկայացվում էր ընդգծված:

Արևմտյան Հայաստանում օսմանյան իշխանությունների իրականացրած հայաթափման և վերաբնակեցման քաղաքականությունն ուղեկցվում էր գերմանական ղեկավար շրջանների թողտվությամբ: Գերմանական քաղաքական շրջանները Հայաստանի դերը հատկապես կարևորում էին ռազմավարական դիրքի տեսանկյունից՝ որպես հետագա ռազմական գործողությունների իրականացման հենակետ: Հաջողության հասնելու հիմնական նախապայմանը տվյալ տարածքներում գերմանա-թուրքական կողմի համար ոչ ռուսամետ բնակչության առկայությունն էր: Հայերը, ըստ գերմանական ղեկավարության, համարվում էին ռուսամետ և արգելք էին, անկասկած գերմանական ապագայի ծրագրերի իրականացման տեսանկյունից<sup>1</sup>:

Գերմանա-թուրքական արտաքին քաղաքականության մեջ 1895 թ. վերջերից սկսած և 1896 թ. ամբողջ ընթացքում կարևոր մի-

---

<sup>1</sup> Рорбах П. “Война и германская политика”. Москва, 1915г., с. 62.



ջոցառումներ են ձեռնարկվել Հայկական հարցի հետ կապված: Կողմերը մանրամասնորեն քննարկել են հայաբնակ վայրերում բարենորոգումների անցկացման և Սասունում տեղի ունեցած իրադարձությունների հարցը: Վերջինիս վերաբերյալ ակտիվ քննարկումներ էին ընթանում գերմանական և թուրքական ղեկավար շրջանների միջև, որոնք, միմյանց հետ համագործակցելով, ցանկանում էին եվրոպական երկրների ներկայացուցիչներին ապացուցել, որ Սասունում հայերի կողմից տեղի է ունեցել ապստամբություն: Մինչդեռ այս հարցի վերաբերյալ հրապարակված գերմանական արխիվային փաստաթղթերը ոչ միայն բացահայտում են թուրքական իշխանությունների ոճրագործությունները, այլև լույս են սփռում գերմանական կողմի դավադիր գործունեության վրա:

Սասունի կոտորածը մեծ հուզում առաջացրեց ողջ քաղաքակիրթ Եվրոպայում: Հայերի դեմ ձեռնարկված վրդովեցուցիչ ռազմական միջոցառումների մանրամասնությունները թափանցում էին եվրոպական մամուլ և **Արևմտյան** Հայաստանի (ընդգծումը մերն է-Տ. Խ.) քրիստոնյա բնակչության նկատմամբ թուրքական զորքերի գազանաբարո արարքների դեմ ամենուրեք մերկացնող հոդվածների փոթորիկ բարձրացնում: Սասունի կոտորածների անպատկառ հերքումը, որն անձամբ սուլթանի հրամանով հեռագրերով ուղարկվել էր արտասահմանի բոլոր թուրք ներկայացուցիչներին՝ հնարավոր հրապարակումների համար, չկարողացավ ցանկալի տպավորություն գործել Եվրոպայի հասարակական կարծիքի վրա, և չդադարեց մեղադրանքների ու մերկացման հեղեղը<sup>2</sup>:

Հայոց ցեղասպանության առաջին փուլի<sup>3</sup> կազմակերպման վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ կան հրապարակված

---

<sup>2</sup> Ներսիսյան Մ. Գ., Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 1991, էջ 32, 33:

<sup>3</sup> 1890-ականներից սկսված արևմտահայերի զանգվածային ջարդերն ու կոտորածները Հայոց ցեղասպանության առաջին փուլն են, քանի որ անհերքելի փաստերը ցույց են տալիս, որ այդ ամենը եղել է կազմակերպված և իրականացվել է պետական մակարդակով: Տե՛ս Ներսիսյան Մ., Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան 2005 թ., էջ 14: Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Ե., 2009, էջ 33, 167-168: Պողոսյան Վ., Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (19-րդ դարի վերջ, 20-րդ դարի սկիզբ), Ե., 2005, էջ 97:

գերմանական արխիվային փաստաթղթերում, որոնք ամփոփված են «Եվրոպական կառավարությունների մեծ քաղաքականությունը 1871-1914 թթ.» 40 հատորից բաղկացած արխիվային փաստաթղթերի ժողովածուում: Այստեղ ներկայացված են գերմանական արտաքին քաղաքականությանը վերաբերող շուրջ 16000 փաստաթուղթ ու զեկուցագիր, իսկ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի և Հայկական հարցի վերաբերյալ կան մի քանի հատորներում ներկայացված բաժիններ<sup>4</sup>: 12-րդ հատորի առաջին մասում ներկայացված է դիվանագիտական փաստաթղթերի մի ամբողջ փաթեթ՝ «Հայկական հարցը և տերությունները 1896 թվականին» խորագրով, որոնք հիմնականում վերաբերում են Մասունում տեղի ունեցած իրադարձություններին և այդ դեպքեր քննելու համար եվրոպական երկրների և թուրքական կողմի հատուկ պատվիրակներից ստեղծված հանձնաժողովի գործունեությանը:

Թուրքական կառավարությունն իր վրա բարդած մեղադրանքը թեթևացնելու միտումով հաճախ ձգտել է հերքել կառավարական գորքերի մասնակցությունը Մասունի կոտորածին: Այդ պատճառով Քյամիլ փաշան, որն այս դեպքերի ակտիվ մասնակիցներից էր, իր հուշերում նշում է, որ ջարդը տեղի է ունեցել Աբդուլ Համիդի անմիջական հրամանով: Այն իրագործել է Բիթլիսի 4-րդ բանակի հրամանատար Ջեքի փաշան<sup>5</sup>:

Մեր կողմից կատարված այս ուսումնասիրության շրջանակներում ներկայացնենք միայն Մասունի դեպքերին վերաբերող փաստաթղթերը<sup>6</sup> և դրանց վերլուծությունը: Աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ դեպքերը տազնապ են առաջացրել ոչ միայն օսմանյան ղեկավարների շրջանում, այլև գերմանական

<sup>4</sup> «Die Grosse Politik Europäische Kabinete 1871-1914. Sammlung«der diplomatischen Akten des auswärtigen Amtes», Bildung, 2,6,9,10,12(1,2),14(1,2),30, 34, 38, Berlin 1922-1930.

<sup>5</sup> Փափագյան Ա., Հայերի ցեղասպանությունը թուրք քաղաքական գործիչների հուշագրություններում, Ե., 2001, էջ 21:

<sup>6</sup> «Die Grosse Politik Europäische Kabinete 1871-1914. Sammlung «der diplomatischen Akten des auswärtigen Amtes», Bildung, 12(1, Berlin 1924, S. 13-43. Հետագա հրապարակումներում կանոնադաշտնանք նաև սույն փաստաթղթերում առկա Մայիսյան բարենորոգումների ծրագրին վերաբերող հատվածներին, որտեղ ևս բացահայտվում է Գերմանիայի անմիջական մասնակցությունը՝ հօգուտ Թուրքիայի եվրոպական երկրների դեմ ձեռնարկած դիվանագիտական պայքարին և բարենորոգումների ձախողմանը միտված քայլերի ձեռնարկմանը:

որոշ ղեկավար գործիչների մոտ: Թուրքական ղեկավարներն ամեն ինչ անում էին ապացուցելու, որ Սասունում ապստամբություն է տեղի ունեցել, և իրենք ստիպված են եղել կանխել պետության դեմ բռնկված ապստամբությունը: Այդ պատճառով նրանք ցանկանում էին ճնշում գործադրել այն հանձնաժողովի գործունեության վրա, որը կազմվել էր եվրոպական երկրների միջամտությամբ Սասունում կատարված դեպքերը քննելու համար: Այս կապակցությամբ օսմանյան պետական գործիչ Քյամիլ փաշան<sup>7</sup> հետևյալ խորհուրդն է տվել Աբդուլ Համիդին. «Սասունի դեպքերը, ավելի ճիշտ այնտեղի ապստամբության ճնշումը հայերի կողմից այնպես է ուռճացվել և անգլիական մամուլում այն աստիճան դաժանությամբ է նկարագրվել, որ այդ հրապարակումները չէին կարող ազդեցություն չգործել ոչ միայն Անգլիայում, այլև նույնիսկ այստեղ՝ Օսմանյան կայսրության տարբեր հպատակների վրա»: «Եվ եթե այժմ որևիցե հրատապ բան կա անելու, դա այն է, որ հետաքննող հանձնաժողովի ղեկույցը շտապ կերպով հրապարակվի Անգլիայում, որպեսզի հանդարտեցվի ընդհանուրի տրամադրությունը: Եվ այդ հանդարտեցման նպատակին հասնելու համար բավական է, որ նշված ղեկույցը հրատարակվի օտար պաշտոնյաների ստորագրությամբ»<sup>8</sup>:

Վերոհիշյալի առումով հստակ փաստեր կան մեր կողմից ուսումնասիրված գերմանական տպագիր արխիվային փաստաթղթերում, որտեղ նաև ցույց է տրվում, որ այս կոտորածը կազմակերպվել է օսմանյան կառավարող շրջանների կողմից: Այս կապակցությամբ Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Բարոն ֆոն Զաուրման կայսրընտիր իշխան ֆոն Հոհենլոռեին 1896 թ. օգոստոսի 30-ին գրում է. «Արդարացումը չհաջողվեց: Մասնավորապես, որ նա մշտապես արդարանում է այն հիմնական կետի վերաբերյալ (այսինքն՝ համակարգված և կազմակերպված մարդասպանությունը թուրք ժողովրդի կողմից հայերի հանդեպ) անընդհատ զայրույթով մատնանշելով հայերի սադրանքները, որոնց զենքի ուժով լռեցնելը թուրքական կառավարական զորքերի կողմից տեղին է և նույնիսկ իրենց պարտականությունն է:

<sup>7</sup> Ահմեդ Քյամիլ փաշան սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի կառավարման տարիներին 1884-1912 թթ., չորս անգամ վարել է Օսմանյան կայսրության մեծ վեզիրի պաշտոնը: Տե՛ս Փափազյան Ա., նշվ. աշխ., էջ 19:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 23:

Թուրքական ոճրի իրականացումից ի վեր մեր դեսպանների քննարկումներում զայրությո՝ է առաջանում տեղի կառավարության նկատմամբ, որն այնտեղ սպառնում է իրավիճակի գերսրացում: Ես ձգտում եմ մեր գործընկերներին խորհուրդ տալ հնարավորինս օբյեկտիվություն և զսպվածություն դրսևորել՝ միշտ հաշվի առնելով մեր համախմբվածությունը, որպեսզի մեր ուզածին հասնելու համար չպայքարենք ձևականորեն և անարդյունք»<sup>9</sup>:

Առանձնակի կարևորություն է ներկայացնում այս փաստաթղթերում առկա հավելվածը<sup>10</sup>, որը մեկ անգամ ևս փաստում է Հայկական հարցում գերմանա-թուրքական համատեղ որդեգրած դիրքորոշման մասին: Այստեղ թուրքական պատվիրակության անդամ մարշալ Քամփիյովեները<sup>11</sup> (Kamphövenner) հատուկ նամակով դիմում է Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան ֆոն Զաուրմային և տեղեկացնում, որ իր և սուլթանի երկրորդ քարտուղար Իզզեթ բեյի միջև լուրջ կոնֆլիկտ է առաջացել, որի պատճառով ստիպված դուրս է գալիս նշված հանձնաժողովի կազմից: Այս փաստաթղթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպես էին քննարկվում Հայկական հարցի հետ կապված իրադարձությունները, և ինչքանով էին միմյանց հետ համագործակցում գերմանական և թուրքական պետական գործիչները: Փաստաթղթի ուսումնասիրությունից երևում է, որ նշված հանձնաժողովի կազմում գործում էին նաև գերմանական կողմի ծպտված ներկայացուցիչներ և հանդես էին գալիս որպես թուրքական պատվիրակության անդամներ ի դեմս մարշալ Քամփիյովեների:

Ներկայացնենք նշված հավելվածը որոշակի կրճատումներով՝ իրադարձությունների և մեր հիշատակած տվյալների իսկության վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու համար:

---

<sup>9</sup> «Die Grosse Politik Europäische Kabinete 1871-1914. Sammlung» der diplomatischen Akten des auswärtigen Amtes», Bildung, 12(1), Berlin, 1924, S. 31.

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 30-37:

<sup>11</sup> Քամփիյովեները Թուրքիա էր ժամանել դեռևս 1882 թ. գնդապետ Կյոլլերի հետ և համարվում էր գերմանական ռազմական պատվիրակության ազդեցիկ ղեկավարներից: St'e u C. Von der Goltz-Pascha, Denkwürdigkeiten, Berlin, 1929, S. 108.

## ՀԱՎԵԼ ՎԱԾ

Թուրք մարշալ Քամիհյովեններ փաշան Կոստանդնուպոլսում  
դեսպան՝

Ֆրայիեր ֆոն Չաուրմային  
Պատճեն

Կոստանդնուպոլիս, հոկտեմբերի 19, 1896

Ձերդ պայծառափայլություն, պատիվ ունեմ Նորին Ճիշտ Ժամանակին տեղեկացնելու այն մասին, որ ես Ձերդ մեծություն Սուլթանի երկրորդ քարտուղար Բզզեթ Բեյի՝ հետաքննության հանձնաժողովի նիստում հոկտեմբերի 4-ի Հայկական հարցի հետ կապված ելույթի պատճառով, ինչպես նաև այն ազդեցության պատճառով, որը Սուլթանի այդ պատվիրակը ամբողջ հանձնաժողովի վրա և առանձնահատուկ ձևով օտարազգի «պատվավոր անդամների» վրա փորձեց կիրառել, դրդեցին ինձ Ճիշտ Ժամանակին դուրս գալու հանձնաժողովից: Ես ունեմ իրոք պատճառներ, որոնք ինձ դրդեցին այս քայլին, Ձերդ պայծառափայլությանն անձամբ հաղորդելու և ինձ պարտավորված եմ զգում այս կապակցությամբ ամբողջ իրավիճակը բացատրելու համար, քանի որ անձամբ ինքը՝ Ձերդ մեծություն Սուլթանը կայսերական դեսպանությանը ներքաշել է այս գործում կայսերական թարգման պրն Տեստայի միջոցով, և ես այս կապակցությամբ պետք է կարևորեմ Ձերդ պայծառափայլության կարծիքը՝ ճշգրտորեն իրազեկելով իմ վերաբերմունքը Բ. Դոան բողարկումների դեմ: Այն լեզվով, ինչով որ փորձում էր Բզզեթ Բեյը իրականացնել Ձերդ մեծություն Սուլթանի հրամաններն ու մտադրությունները, բռնադատական, կտրուկ հրամայական ու ահաբեկող են, ինչն իհարկե բազմանդամ հանձնաժողովի թուրք ներկայացուցիչների վրա այնպիսի ազդեցություն է թողնում (5 պատվավոր անդամների կողքին 4 մարշալներ, 6 դիվիզիայի հրամանատարներ, 4 բրիգադի գեներալներ և ավելի ցածր պաշտոնյաների համապատասխան քանակ), որ նրանց աշխատանքը, ինչպես նաև նրանց վերջնական որոշումը դժվարությամբ է կայացվում, և որ երկուսի դեպքում էլ դրանից հետո խաթարվում է ազատ, ոչ մեկի ազդեցության տակ չգտնվող որոշման կարևոր արժեքը:

Այն բանից հետո, երբ Բզզեթ Բեյը ազգությամբ ֆրանսիացի գեներալ Լեցոցք փաշային բուռն քննարկման վերջում նրան պրովոկացիայի ենթարկեց «parti pris»/ կողմնակալ բառերով, և երբ ես

վերոնշյալ պարոնի հետ վիճաբանություն ունեցա կապված այն բանի հետ, թե ես ինչքանով և ինչ ձևով եմ պատրաստ մասնակցելու հանձնաժողովի պատասխանատու աշխատանքներին, այս շատ խորամանկ ու խելացի դիալեկտիկը և բանասարկուն այնքան անզգույշ էր, որ ինձ բացահայտորեն հարցրեց իմ վերջնական որոշման մասին: Ես հրաժարվեցի նրան պատասխանել՝ ավելացնելով, որ ես նրա հարցը ընկալում եմ որպես իմ խոսքի ազատությունը խաթարելու անտեղի փորձ, որի համար ես պատասխանատու եմ միայն իմ սեփական խղճին:

Այնուհետև զայրացած ինձ նետեց հետևյալ խոսքերը. «*Alors je vois, que Ion ne veut pas le pays des taches dont on le souille !*» (Այսպիսով, ես տեսնում եմ, որ նրանք չեն ուզում ընդունել իրենց իսկ ձեռքերով կեղտոտած երկիր):

Այդ պահին ես վեր կացա և բացատրեցի Իզգեթ Բեյին, որ ես նրան նման լիազորություն չեմ կարող տալ, Ձերդ մեծություն Սուլթանին նաև այս առիթի դեպքում իմ խղճից ելնելով չեմ կարող ծառայել, իմ բարի մտադրությունը և կամքը ինչ-որ ձևով քննադատելու և կասկածի տակ դնելու համար, և որ ես նման ոճով խոսելու պատճառով պետք է դուրս գամ հանձնաժողովից: Ես նաև ավելացրի, որ խոսելու այդ ոճը, որով նա Նորին մեծության հրամաններն ու միջնորդություններն է արտահայտում, չի կարող համապատասխանել իմ կոչմանն ինչպես որպես թուրքական մարշալ, այնպես էլ որպես պրուսական գեներալ: Այս քայլին անմիջապես հետևեց նաև գեներալ Լեցոցք փաշան՝ վկայակոչելով վերևում նշված նրան ուղղված վիրավորական խոսելաոճը:

Նորին մեծություն Սուլթանին ես տեղեկացրի այս նախադեպի մասին և իսկույն ներկայացրի ամենայն Մեծությանը ամենահնազանդիս խնդրանքը՝ հրաժարականի հետ կապված, ընդ որում ավելացնելով, որ վերջին օրվա ամբողջ բանակցությունները ցույց տվեցին, որ ես Նորին Մեծության այն անհրաժեշտ վստահությունը չունեմ, ինչը պահանջվում է ըստ կարգի ու էության:

Ձերդ պայծառափայլություն, Դուք գիտեք, որ Նորին մեծություն Սուլթանը ընդունելություններից մեկի ժամանակ անձամբ իր Ամենամեծության կողմից խնդրել էր, որպեսզի ես հանդես գայի որպես «պատվավոր փրկիչ» այն մեղադրանքների դեմ, որոնք հարուց-

վելու էին հայերի խոռվությունների ժամանակ իր գորքերի գործելակերպի դեմ:

Ձերդ գերազանցություն, իմ որոշման մասին, թե ինչու ես անձնական ուսումնասիրությունները հայկական խոռվությունների մասին չեմ ընդունում, Ձեզ եմ հայտնում հետևյալ պատճառները. Այստեղ պաշտոնապես իմ տրամադրության տակ գտնվող շրջաններում վկաների ցուցմունքներ կան, և դա արդեն հաստատվել է նաև ենթահանձնաժողովի կողմից, որոնք բացառում են ճշմարտության հայտնաբերմանն ուղղված հետագա ուսումնասիրությունների յուրաքանչյուր հաջողությունը: Ներկայումս բոլոր շրջաններում ուստիկանության դեմ գերիշխող ցուցմունքների պատճառով հանձնաժողովի թուրք անդամների մոտ տիրում է սարսափ՝ հիմա և հետագայում տհաճություններ ունենալու համար: Բացի դրանից իսկական բողոքողները մեծ մասամբ կամ մահացած են, կամ գտնվում են բերդերում, որոնց մոտ մեզ չեն թողնում: Ուստիկանությունը խաբում է մեզ, քանի որ արդարացիորեն ինքնամեղադրանք նրանից չի էլ կարելի սպասել: Ոմանց մեղադրանքը ուստիկանության աշխատանքը կոպիտ ոտնահարելու համար, կամ օրինակ գողություն, կողոպուտ և այլն, արդեն հաստատվել է, և վախը փակում է մնացածների բերանը:

Ջիդիս-հանձնաժողովի թվացյալ միջազգայնացումը այդ պատճառով խաբեությանն ուղղված միտում է, որին ես, որպես պրոսակական գեներալ վերևում նշված հրամայական ոճին չեմ կարող ենթարկվել: Եվ դա հաջորդ օրերին հանգեցրեց այն բանին, որ Ձերդ մեծություն Սուլթանը հանձնաժողովի յուրաքանչյուր կարծիքի արտահայտում, այսինքն՝ ավելի շուտ Ձերդ մեծություն Սուլթանի կողմից արդեն հավանության արժանացած եզրահանգումը մերժվեց, և ընդունվեց միայն դատարկ մի զեկույց հայկական դեպքերի ընթացքի մասին: Այնուհետև այն ստացավ հետևյալ ընթացքը:

Հոկտեմբերի ութին ինձ կանչեցին Ջիդիս: Բզզեթ Բեյը և սենեկապետ Նուրի փաշան հայտնվեցին, առաջինն սկզբում ինձանից ներողություն խնդրեց հանձնաժողովում իր կողմից արված արտահայտությունների համար, բացատրություն տրվեց նաև արդեն հանձնաժողովում կատարած յուրաքանչյուր հայտարարության վերաբերյալ, և երկու պարոններն էլ փորձում էին համոզել ինձ մասնակցելու հանձնաժողովի հետագա աշխատանքներին: Ես կրկնեցի

նորից իմ վերնում նշած տեսակետը և խնդրեցի, որ եթե Ձերդ մեծություն Սուլթանը ի վիճակի չէ ընդունելու այն, ապա մեծահոգաբար թող ազատի ինձ հանձնաժողովից:

Այնուհետև ինձ հնարավորություն տրվեց վերջնականապես որոշում կայացնելու, երբ ինձ հոկտեմբերի իննին կրկին կանչեցին: Ձերդ մեծություն Սուլթանը համաձայնվում էր «Ի տեղեկություն» տարբերակին և բացի դրանից ընդունում էր իմ կարծիքը, սակայն այն պետք էր միայն զեկույցին առնչվեր և յուրաքանչյուր դրվագի նկարագրությունից հետո:

Հոկտեմբերի տասնմեկին մեկ անգամ ևս հրահանգներ ստացվեցին Ձերդ մեծություն Սուլթանի կողմից, և նրա կամքը պարզ կրկնվում էր, քանի որ սենեկապետ Արիֆ Բեյը կասկածում էր, թե արդյոք հանձնաժողովը միայն քննարկման ազատություն ուներ, կամ արդյոք այն այդ քննարկման արդյունքները, այսինքն՝ առանձին հատվածներում վերջնական կարծիքները գրավոր արտահայտելու իրավունք ուներ:

Այդ ժամանակ բոլոր պատվավոր անդամները խնդրեցին հանձնաժողովին, որպեսզի նյութը հանգամանորեն ուսումնասիրեն և իրենց առաջարկները որպես եզրահանգում առանձին հատվածների համար բարեխղճորեն ձևակերպել կարողանան, նրանց տրամադրվեն այդ հատվածների պատճենները՝ հավաստիացնելով, որ այդ պատճենները միայն 24 ժամ կպահեն և դրանց մասին ոչ մեկին չեն տեղեկացնի:

Առաջարկը ներկայացվեց Նորին մեծություն Սուլթանին, բայց այն չընդունվեց: Միննույն ժամանակ այդ առաջարկին հետևեց բարձր աստյանի տեսակետների և որոշումների հանկարծակի փոփոխված պատասխանը: Նորին մեծություն Սուլթանը կրկին արգելում էր յուրաքանչյուր կարծիքի արտահայտում, համապատասխանորեն նաև եզրահանգումը:

Այս ամբողջովին փոփոխված Նորին մեծություն Սուլթանի կամքի դրսևորման պատճառով հայտարարեցի ես Լեցոցք փաշայի հետ միավորվելով, որ այլևս չեմ կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, քանի որ այս դժվար և պատասխանատու աշխատանքի համար անհրաժեշտ լիարժեք վստահությունը չկար, և քանի որ ես տեսնում եմ, որ Նորին մեծություն Սուլթանը չի հաճում թույլ տալ ազատ, միայն սեփական խղճի պատասխանատվությամբ



*խոսքի ազատություն:*

*Նորին մեծություն Սուլթանը դրանից հետո հրամայեց հանձնաժողովին հայկական դեպքերի մասին պատմական զեկույցը ավարտել և իրեն ներկայացնել: Բմ մասնակցությունը այդ աշխատանքին չէր պահանջվում, և ես փաստորեն հոկտեմբերի 11-ից ազատված էի հանձնաժողովից:*

*Քամփիյովեներ*

*TIGRAN KHACHATRYAN (ARMENIA)*

### **THE ARMENIAN QUESTION IN THE CONTEX OF THE GERMAN-TURKISH FOREIGN POLICY /1896/**

As a result of our study we shall present only the events referring to the cases in Sasun, concerning which a special examining committee was created under the influence of the European countries. In these cases, and generally in those relating to the Armenian question, Germany outlined «it doesn't refer to us» position, trying to show that it didn't want to interfere into the internal affairs of Turkey. However the study of some professional literature and the published German documents of this period show that the German politicians participated in the work of the committee actively and tried to carry out its work in favour of the Osman rulers.

*КРБЕКЯН ВААГН (АРМЕНИЯ)*

### **АРМЯНСКИЙ ВОПРОС В 1878 ГОДУ**

В 2015 году армянский народ и мировое сообщество отмечают 100-летнюю годовщину геноцида армян в Османской империи – первого геноцида XX столетия. Осуществляя это чудовищное преступление, турецкие власти, наряду с другими, ставили перед собой и задачу “решения” Армянского вопроса. Его история уже не одно десятилетие является предметом тщательного и всестороннего изучения специалистов. Он и в наши дни продолжает занимать центральное

место в исследованиях, посвященных политической истории армянского народа.

Вместе с тем сравнительно меньше внимания уделяется внутренним и внешним обстоятельствам, сопутствующим возникновению Армянского вопроса, преданию ему международного статуса, его предыстории. А между тем, как его дальнейшая история, так и политическое будущее западных армян во многом были predetermined теми важнейшими договорами и соглашениями, которые были заключены в 1878 г. Именно тогда, он из внутреннего вопроса Османской империи стал субъектом международного права, и был зафиксирован в ст. XVI Сан-Стефанского договора и в ст. LXI Берлинского трактата, к нему относились § VII, X и XI англо-русского соглашения от 30 мая 1878 г. и ст. I Кипрской конвенции от 4 июня 1878 г.

Под Армянским вопросом современная историческая наука подразумевает комплекс вопросов политической истории армянского народа, связанных с его стремлением к восстановлению утраченной государственности, национальной консолидации на территории своей исторической родины. В качестве объекта международных отношений и дипломатии, Армянский вопрос сформировался во второй половине XIX века, став составной частью Восточного вопроса – сложного узла международных противоречий, продолжительное время находящегося в центре внимания европейской дипломатии. В данном аспекте Армянский вопрос – это, прежде всего, вопрос о положении и судьбе западных армян, которые, находясь под властью Османской империи, подвергались беспощадному социальному и политическому гнету, жесточайшим преследованиям на национальной и религиозной почве. Армянский вопрос является ключевым при изучении новейшей истории армянского народа. Именно с его положительным решением армянский народ на протяжении более чем сорока лет (1877-1923) связывал свое будущее.

Русско-турецкая война 1877-1878 гг. завершилась сокрушительным поражением Османской империи, а победоносный меч России в кровавой схватке добыл долгожданную свободу балканским народам. Успех их национально-освободительной борьбы воодушевил армян и явился мощным катализатором их свободолюбивых устремлений. Военные действия на Малоазиатском театре войны непосредственно затра-

гивали интересы армянского народа, и он проявил исключительную активность на всех этапах войны. Это и руководство крупными армейскими соединениями, когда прославленные офицеры свято исполняли свой долг перед государем и отечеством, это и добровольческое движение, в котором участвовали жители Восточной Армении, это и та деятельная поддержка, которую оказали западные армяне наступающей русской армии, за что впоследствии понесли невосполнимые человеческие и материальные потери.

Сразу по окончании войны Константинопольское армянское патриаршество направило в русскую дипломатическую миссию свое представительство, которое обратилось с просьбой внести в намечаемый договор отдельную статью, посвященную армянам.

В феврале 1878 г. патриарший викарий в Адрианополе – архимандрит Геворк Русчуглян, по поручению армянского патриарха в Константинополе Нерсеса Варжапетяна и при посредничестве русского консула в Пловдиве М. Кирова встретился с полномочным представителем царя на русско-турецких переговорах, с бывшим послом России в Турции Николаем Игнатьевым. Начался русско-армянский диалог об улучшении положения армянского населения восточных вилайетов Османской империи. В дальнейшем к переговорам присоединились главный доктор военного министерства Турции, председатель Армянского Национального собрания – Степан-паша Асланян и представитель «Красного полумесяца» – Нурян эфенди. Поскольку армянские делегаты подвергались негласной слежке турецких властей, встречи с русскими представителями происходили в основном ночью. Суть их предложений заключалась в том, чтобы в намечаемом русско-турецком договоре присутствовала отдельная статья, посвященная турецким армянам и предоставляющая им гарантии, идентичные гарантиям, предоставляемым христианам европейских провинций Турции.

Следует отметить, что турецкое правительство было изначально проинформировано об армянских инициативах. 9 февраля 1878 г. патриарх посетил первого министра двора Ахмеда Вефик-пашу, а на следующий день министр совершил ответный визит в патриаршество.

Примечательно, что турецкая сторона не только не противодействовала армянским инициативам, но, наоборот, даже поддержала их, намереваясь использовать Армянский вопрос в качестве противовеса

Балканскому<sup>1</sup>. В итоге в Сан-Стефанский прелиминарный договор вошла XVI статья, благодаря которой Армянский вопрос стал субъектом международного права и объектом русско-турецких отношений и которая гласила: «Ввиду того, что очищение русскими войсками занимаемых ими местностей, которые должны быть возвращены Турции, могло подать там повод к столкновениям и усложнениям, могущим вредно отразиться на добрых отношениях обоих государств – Блистательная Порта обязуется осуществить, без замедления, улучшения и реформы, вызываемые местными потребностями в областях, населенных армянами, и оградить безопасность последних от курдов и черкесов»<sup>2</sup>.

Эта статья с момента своего появления стала предметом обсуждения армянской общественности, в дальнейшем к ее анализу обращались многие исследователи, занимающиеся Армянским вопросом.

Как отмечали практически все без исключения исследователи, фактор присутствия российских вооруженных сил на армянской земле (согласно XXV статье сроком на 6 месяцев) был единственным гарантом осуществления сколь-нибудь серьезных преобразований в Западной Армении. Важным моментом статьи являлось также и то, что в ней говорилось о необходимости осуществления в азиатских провинциях Турции преобразований, вызванных местными потребностями, и что Блистательная Порта обязывалась осуществить эти улучшения и реформы без замедления. Статья конкретно указывала на угрозу, исходившую от курдов и черкесов, причем правительство обязывалось ограждать от нее армян.

Сан-Стефанский договор был первым международным документом нового времени, в котором упоминалось слово Армения, и который фиксировал факт проживания на территории Османской империи армянского населения, что официально признавалось Турцией. Помимо этого обе стороны признавали существование у армянского населения азиатских провинций определенных интересов и констатировали необ-

---

<sup>1</sup> Սարուխան, Հայկական հարցը և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), Թիֆլիս, 1912, հ. I, էջ 131: «Անահիտ», Փարիզ, 1907 № 6, էջ 143: Լեն, «Թուրքահայ հեղափոխության զաղափարախոսությունը» Երևան, 1992, հ. I, էջ 72:

<sup>2</sup> Сборник договоров России с другими государствами (1856-1917)/ под ред. Е.А. Адамова. М., 1952. С. 169.

ходимость их удовлетворения, в том числе и по вопросам обеспечения их безопасности.

Вместе с тем статья имела безусловные просчеты, которые в значительной степени умаляли ее действительное значение. Во-первых, статья не отвечала на вопрос, какие именно реформы и улучшения должно было проводить османское правительство, которому передавалось право их определения и проведения; во-вторых, конкретно не очерчивался их географический ареал и не определялись сроки; в-третьих, ничего не говорилось об ответственности Турции и о допускаемых мерах воздействия на нее, помимо присутствия на армянских землях русских войск, в случае саботажа этих преобразований; в-четвертых, вся ответственность за злоупотребления и бесчинства, происходящие в Западной Армении, возлагалась исключительно на курдов и черкесов, тем самым турецкие власти «выходили сухими из воды».

Дж. С. Киракосян не без основания считал причиной половинчатости XVI ст. то, что ее появление «было результатом того эксперимента, когда Армянский вопрос в области дипломатии был возбужден неподготовленным»<sup>3</sup>. На данном этапе, «первоочередной задачей русской стороны являлось остаться в занятых местностях, обусловить вывод войск необходимостью реформ», а «статья XVI давала довод, основу не удалять русскую армию из занятых областей»<sup>4</sup>.

Армянский вопрос с момента своего возникновения стал также предметом дипломатических спекуляций великих держав, совершенно не озабоченных его разрешением, а лишь стремящихся к его использованию для достижения своих военно-политических и социально-экономических целей на Востоке. Ведущий малоазиатский игрок – Великобритания, озабоченная усилением влияния России в Азиатской Турции и ее территориальными приобретениями, проявив удивительную сноровку и упорство, смогла, посредством дипломатического шантажа по отношению к Турции и военного шантажа по отношению к России, внести ряд статей, относящихся к Армянскому вопросу, сначала в англо-русское соглашение, а затем и в Кипрскую конвенцию.

---

<sup>3</sup> Киракосян Дж. С. «Буржуазная дипломатия и Армения в 70-ые гг. XIX в.» Ереван, 1981. С. 113.

<sup>4</sup> Там же. С. 119.

30 мая 1878 г. в Лондоне между российским послом в Англии Петром Шуваловым и министром иностранных дел Великобритании лордом Солсбери было заключено двухстороннее соглашение. В § XI соглашения говорилось: «Соглашаясь не возражать против желания русского императора приобрести порт Батум и сохранить свои завоевания в Армении, правительство ее Величества не скрывает от себя, что, вероятно, в результате этого расширения границ России в будущем может возникнуть серьезная опасность, угрожающая спокойствию турецкого населения в Азии». Далее отмечалось, что «обязанность предохранять оттоманскую империю от этой опасности ... отныне ляжет специально на Англию», а русский император заверил, что «в будущем граница России не будет расширена со стороны Азиатской Турции»<sup>5</sup>. Согласно § VII, Англия разделяла с Россией право участия в разрешении Армянского вопроса и получала законное основание для вмешательства в малоазиатские дела: «Обещания в отношении Армении, содержащиеся в прелиминарном Сан-Стефанском договоре, должны быть даны не исключительно по адресу России, но также и по адресу Англии»<sup>6</sup>. § 10 касался будущего торговых путей из Европы в Азию: «Что касается долины Алашкерта и г. Баязета, то поскольку эта долина является великим транзитным путем в Персию и имеет огромное значение в глазах турок, Е.В. Император согласен вернуть ее им, но взамен потребовал и получил уступку в пользу Персии небольшой территории Котура»<sup>7</sup>. Этот знак благорасположения императорского правительства в ответ на нейтралитет шаха во время минувшей войны преследовал цель дальнейшего улучшения русско-персидских отношений. Таким образом, в обмен на согласие о передаче России Батума и крепостей, Альбион получал право политического вмешательства на последующие события в Малой Азии.

4 июня 1878 г. Министр иностранных дел Турции Савфет-паша заключил с английским послом в Турции Остином Лейярдом Кипрскую конвенцию, гласившую: «В случае если Батум, Ардаган, Карс или какой-либо из этих городов будут удержаны Россией и если когда-либо

---

<sup>5</sup> Сборник договоров России с другими государствами (1856-1917), под ред. Е.А. Адамова. М., 1952. С. 179.

<sup>6</sup> Там же. С. 177.

<sup>7</sup> Там же. С. 178.

Россия сделает попытку к завладению какой-либо другой частью владений Е.И.В. Султана в Азии, кроме определенных окончательным мирным договором, то Англия обязывается соединиться с Е.И. Величеством для защиты означенных владений силою оружия. Взамен этого Е.И.В. Султан обещает Англии ввести необходимые реформы, которые будут установлены впоследствии по соглашению между обеими державами, касающиеся хорошей администрации и защиты христианских и прочих подданных Высокой Порты, обитающих в означенных владениях, для предоставления Англии необходимых средств к исполнению ее обязательства Е.И.В. Султан соглашается, кроме того, назначить о. Кипр к занятию и управлению Англией»<sup>8</sup>.

Как видно из текста конвенции, военное обязательство отображено вполне конкретно и даже подкреплено передачей о. Кипр английской стороне. Что касается гражданского обязательства, то оно чрезвычайно размыто. Султан лишь обещает Англии ввести необходимые реформы, которые не уточнялись, и определение которых оставлялось на будущее. В конвенции не очерчивались территориальные рамки намечаемых реформ, не обговаривались их сроки. В ней даже отсутствовало слово Армения. А, что касается самих армян, то они упоминались включенными в состав христианских и прочих подданных Высокой Порты. По существу речь шла об общих реформах азиатских провинций Османской империи, реальность осуществления которых не подкреплялась никакими гарантиями, не говоря уже о какой-либо ответственности со стороны султана за срыв оных.

В результате блестяще проведенной дипломатической операции, Англия в течение 4 дней, согласно соглашению, сначала получила право участия, наряду с Россией, в вопросах проведения реформ в Западной Армении, а потом, согласно Кипрской конвенции, добилась установления своего единоличного протектората над Малой Азией и без единого выстрела приобрела Кипр.

Вполне естественно, что армянские национальные лидеры не имели ни малейшего представления об этих закулисных переговорах и подписанных договорах, тем более, что на тот момент даже европей-

---

<sup>8</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում / խմբ. Ջ.Ս. Կիրակոսյան, Երևան, 1972, էջ 104,105:

ская дипломатия находилась в неведении. Узнав, что для обсуждения итогов русско-турецкой войны, намечается организация общеевропейского конгресса, Армянское патриаршество Константинополя направило своих представителей в Европу и Россию с целью обеспечения максимально возможной поддержки великих держав, находящихся в состоянии конкурентного противостояния друг с другом в Армянском вопросе. И вполне естественно, что из этой затеи ничего не вышло. Предшествовавший и последующий ход событий привели к появлению печально известной LXI статьи Берлинского конгресса, одним из результатов которой стала та общечеловеческая трагедия, столетнюю годовщину которой мы отмечаем в этом году.

LXI статья Берлинского трактата гласила: «Блистательная Порта обязуется осуществить без дальнейшего замедления, улучшения и реформы, вызываемые местными потребностями в областях, населенных армянами, и обеспечить их безопасность от черкесов и курдов. Она будет периодически сообщать о мерах, принятых ею для этой цели, державам, которые будут наблюдать за их применением»<sup>9</sup>. Статья эта была принята без обсуждения. Армянский вопрос получил международное признание, его разрешение передавалось Османскому правительству, а европейские державы получали дополнительный повод для своего вмешательства.

По существу, цивилизованная Европа заключала с варварской восточной деспотией своего рода гуманитарное соглашение, по которому государство, допущенное к участию в преимуществах европейского публичного права, в конце XIX в. брало на себя совершенно дикое обязательство защищать одних своих граждан от притеснений других. Н. Б. Сарухян совершенно справедливо замечает, что «подобное элементарное обязательство, которое не имеет своего аналога в истории международных отношений, могло стать предметом международного соглашения с государством, павшую в крайнюю степень безнравственности»<sup>10</sup>.

---

<sup>9</sup> Сборник договоров России с другими государствами (1856-1917), под ред. Е.А. Адамова. М., 1952. С. 205.

<sup>10</sup> Մարտիրոսյան Ն.Բ. Հայկական հարցը նախասովետական հայկական հասարակական-քաղաքական մարմին և պատմագրությունում, Երևան, 1997, էջ 36, 37:



Статья LXI признавала наличие в Османской империи Армянского вопроса и требовала от султана осуществления реформ, но она не предлагала никаких действенных мер воздействия на турецкие власти в случае неисполнения этого требования и не давала никаких гарантий, обеспечивающих безопасность турецких армян. Даже если признать, что лидеры Европы не представляли себе всей остроты Армянского вопроса, они не могли не знать, с каким именно государством им приходилось заключать подобное соглашение. Об этом свидетельствуют слова, сказанные председателем конгресса Отто фон Бисмарком турецким делегатам сразу по его окончанию: «Теперь господа, вы должны быть довольны, мы для вас обеспечили мир на двадцать лет. За этот период вы сможете осуществить преобразования, поставить страну на путь прогресса и очистить ее администрацию. Это последняя возможность для спасения Турции. Но я убежден, что вы ничего из этого не сделаете»<sup>11</sup>.

Подводя итог вышесказанному, следует отметить, что Армянский вопрос являлся прямым следствием того тяжелейшего социально-политического и национально-религиозного гнета, которому подвергалось армянское население Западной Армении. Он был инициирован западноармянскими национальными лидерами, воодушевленными результатами национально-освободительной борьбы Балканских народов, которые стремились по итогам русско-турецкой войны 1877-1878 гг. добиться максимально возможных на тот момент реформ для Западной Армении, вплоть до ее автономии, и даже включения в состав Российской империи. Несмотря на то, что эта инициатива западных армян была для русской дипломатии неожиданной<sup>12</sup>, она решила ею воспользоваться и включить в Сан-Стефанский прелиминарный договор отдельную статью о проведении реформ в «областях, населенных армянами»<sup>13</sup>. Однако, спустя всего четыре месяца, под давлением великих держав этот договор был пересмотрен, и согласно LXI статье Берлинского трактата Европа отобрала у России право единоличного

---

<sup>11</sup> «Նոր կյանք», Լոնդոն, 1898, N 19, էջ 293:

<sup>12</sup> Игнатьев И.П. Записки о Сан-Стефано//Исторический вестник СПб., 1915. Т. 140. С. 52-53.

<sup>13</sup> АВПРИ Ф. 149. Оп. 502 а. 1877-1878. Д. 1762. Л. 9-об; Сборник договоров России с другими государствами (1856-1917)/ Под ред. Е.А Адамова. М., 1952. С. 168-169.

решения Армянского вопроса и приняла на себя коллективное обязательство по проведению реформ в Западной Армении. А что «было делом всех, – по справедливой оценке герцога Д. Аргайльского, – переставало быть делом кого-нибудь в частности»<sup>14</sup>. В «Истории дипломатии» говорится, что «Берлинский трактат оставил значительную часть армянского народа под игом турок. История показала, что это решение капиталистических держав было роковым для турецких армян: оно обрекло их на физическое истребление»<sup>15</sup>.

Весь последующий ход исторических событий, завершившихся Геноцидом Армян в Османской империи, показал, что политическая инициатива западноармянских лидеров была сколь оправданной с точки зрения существовавшего положения дел в Западной Армении, столь наивной и ошибочной с точки зрения международной дипломатии и реальной политики. Эти обстоятельства, а именно существующие между великими державами противоречия (англо-русское соперничество («Большая игра»), противоречия между Антантой и Тройственным союзом, породившие Первую мировую войну, противостояние Большевицской России и Запада), позволили турецким властям не только нейтрализовать коллективные и согласованные действия великих держав в Армянском вопросе, но и попытаться похоронить сам вопрос, путем физического истребления западного армянства. Другим обстоятельством, имевшим не менее трагические последствия, явилось то, что после международного признания Армянского вопроса, армянские национальные деятели, объединившиеся затем в политические партии, на протяжении почти сорока лет (1878-1914) проводили линию, с одной стороны, постоянных и совершенно бесполезных апелляций к внешнему миру, с другой, перманентной и абсолютно неравной вооруженной борьбы внутри империи. Эти два направления и определили весь дальнейший ход армянского национально-освободительного движения и последующей истории Армянского вопроса.

---

<sup>14</sup> Аргайльский Д. «Ответственность Англии в Восточном вопросе». СПб., 1908. С. 75.

<sup>15</sup> История дипломатии. Т. II. Автор тома В.М. Хвостов. М., 1963. С. 334.

## THE ARMENIAN QUESTION IN 1878

The Armenian Question and its “solution” has been one of the basic reasons and the main concerning task for the organizers of the Armenian Genocide. Hence, from the historiography point of view is essential studying and analyzing the issue.

This question was initially fixed in Article XVI Agreement of San Stefano, then in Article LXI Berlin Treaty, to related § VII, X and XI of the Anglo-Russian agreement of May 30, 1878 and Article I Cyprus Convention on June 4, 1878. This article provides a brief overview of the main events related to the international recognition of the Armenian question and its consequences.

### *ԺԻՐԱՅԸ ՔՈՉԱՐԵԱՆ (ԳԵՐՄԱՆԻԱ)*

#### **ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՍԱՆԱՎՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՅՈՑ ԵՎ ՄԻԻՍ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱԶԳԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ**

Գերմանական լրատուական միջոցների, մշակութային, գիտական և մարդու իրաւունքների բազմաթիւ միջոցառումների արձագանքը ցեղասպանութեան 100-րդ տարելիցին գերազանցեց Գերմանիայում ապրող հայերի սպասելիքները<sup>1</sup>:

---

<sup>1</sup> **Kirsten Staut:** Strategien des Gehörwerdens, Transcript-Verlag, 2015; Pogrom-100 Jahre Völkermord, 100 Jahre leugnen, 6/2014; **Reinhard Pohl:** Völkermord, Heft 69, Magazine Verlag, Kiel, 2015; **Jürgen Gottschlich:** Beihilfe zum Völkermord, C.links Verlag, 2015; **Mihran Dabag,** Kristin Platt: Verlust und Vermächtnis Überlebende des Genozids an den Armeniern erinnern sich, Verlag Ferdinand Schöningh, 2015; **Kai Seyffarth:** Entscheidung in Aleppo-Walter Rössler (1871-1929): Helfer der Verfolgten Armenier-Eine Biografie, **Donat Verlag,** Bremen, 2015; Yetvart Fickeyan (Hg): Der Völkermord an den Armeniern im Spiegel der deutschsprachigen Tagespresse 1912-1922; **Michael Hesemann:** Völkermord an den Armeniern, Herbig Verlag, München, 2015; **Rafaela Thaumassian:** Werwolf oder Taube, Norderstedt: Books in Demand GmbH (BoD), Oktober 2015.

2015 թ. ապրիլի 24-ին տեղի ունեցած խորհրդարանական բանավեճում բոլոր խմբակցությունների ներկայացուցիչները ներկայացրին յուզիչ ճառեր: Յատկապես տպաւորիչ էր Բունդեսթագի նախագահի՝ պրոֆ. Լամերթի (քրիստոնեա-դեմոկրատական միաւորում, CDU) բացման ելոյթը, որը պարզ ու յստակ «1915-ի դէպքերը» ցեղասպանութիւն որակեց և դատապարտեց: Մեր կարծիքով այս որակական և քաղաքական ազդու դիրքորոշման մէջ խիստ կարևոր էին հետևեալ չորս գործօնները՝ ա) Կաթոլիկական եկեղեցու գլուխ՝ Պապ Ֆրանսիսքոսի 2015թ. ապրիլի 12-ի պատարագի ընթացքում արտահայտած օրինակելի և յստակ խօսքը, բ) գերմանական խորհրդարանական ընդդիմականների հաշուեյարդարը CSU-CDU իշխանութեան հետ, գ) գերմանական հասարակութեան մէջ պատմութեան գիտակցութեան զարգացումը և դ) Էրդոդանի Նէո-օսմանական քաղաքականութեան ժխտումը ու Եւրախորհրդարանի որոշումը:

Հայկական միութիւն-կազմակերպութիւնների գործօնը 2015-ին նշանակալի վաստակ չունեցաւ, քանզի նրանք չունեն միջոցներ ազդելու Գերմանիայի քաղաքականութեան վրայ: Բունդեսթագը 15 տարի է, ինչ առնչուով է Հայոց ցեղասպանութեան խնդրին, այսինքն՝ ստիպված է տալ սահմանուած գնահատական՝ համաձայն ՄԱԿ-ի ցեղասպանութեան պայմանագրի: 2015թ. 24 ապրիլին 2005թ. բանաձևի բարելաւմանն էին սպասում ոչ միայն Գերմանիայում ապրող հայերը, այլ նաև ցեղասպանագետները և մարդու իրաւունքների հարցերով զբաղող անձինք: Սակայն արագործնախարարութեան, քանցլերի գրասենյակի, ինչպես նաև իշխող մեծ խմբակցութիւնների ներկայացուցիչների պահանջով այս տարուայ սկզբին որոշուած նախագիծ-բանաձևից «ցեղասպանութիւն» եզրույթը հանուեց: Ընդդիմական ձախերը և կանաչները, ի պատասխան դրան, ներկայացրին իրենց սեփական բանաձևը: Հասարակութեան կարծիքի ճնշման ներքոյ և գուցէ նաև նկատի առնելով Գերմանիայի վարկը արտերկրում՝ ապրիլի 24-ից առաջ մեծ կռաւիցիայի առաջարկի մէջ դարձեալ կարճաժամկետ ներառուեց «ցեղասպանութիւն» եզրույթը, թէպէտև վերին աստիճանի խճճուած նախադասութեամբ՝ «Հայերի ճակատագիրը վառ օրինակ է, երբ խօսքը գնում է զանգուածային բնաջնջման, էթնիկ մաքրագործման, տեղահանութեան, անգամ ցեղասպանութեան պատմութեան մասին, որոնցով XX դարը սարսա-

փելի եղանակով նշանաւորուած է»<sup>2</sup>:

Գործադիր մարմնի ազդեցութիւնը օրէնսդիրի վրայ, որը անյարիր է ժողովրդավարական հիմունքներին, ցաւօք տխուր աւանդոյթ ունի Գերմանիայի հայ-թուրքական քաղաքականութիւնում: Դեռևս 1915-ին օրվան իշխանութեան վարչապետը քանցելը, վկայակոչելով գերմանա-օսմանական զինուորական դաշնակցութիւնը, արգելեց Թուրքիայի հայաջինջ քաղաքականութեան նկատմամբ որևէ քննադատական կեցուածք:

Ուստի գերմանական մեղքի մասնաբաժնին վերաբերող որևէ ընդարձակ, գիտական և ճշգրիտ աշխատութիւն առ այսօր բացակայում է Գերմանիայում: Ոչ մի պատմաբան, ոչ մի համալսարան չի անցկացրել ուսումնասիրման որևէ ծրագիր: Այս թեման երկար ժամանակ թողնուել էր լրագրողներին: Սակայն, շարունակ աճող մի հասարակութիւնում, որտեղ հանցագործների իսլամ ժառանգորդները՝ թուրքերը և մերձաւոր-արևելեան քրիստոնէայ գոհերի սերունդները միասին են ապրում, գիտական և յիշողութեան անգործունէութեան քաղաքականութիւնը հանգեցնելու է ողբերգութեան:

Ապրիլի 24-ին Բունդեսպագում ներկայացուած ճառերի ցանկում պետութեան որևէ անդամ ելոյթ չունեցաւ: Կառավարական աթոռին նստած արտգործնախարար Ֆրանք-Վալթեր Շթայնմայերը քարացած դէմքով հետևում էր 100 տարի առաջ իրականացուած Հայոց ցեղասպանութեան մասին քննարկումներին:

Դրանից շաբաթներ առաջ նա դիմել էր ամեն միջոցի, որպէսզի «ցեղասպանութիւն» հասկացութիւնը չհնչի՝ նկատի առնելով Թուրքիայի հետ բարձր մակարդակի յարաբերութիւնները: Սակայն Դաշնային Հանրապետութեան նախագահը, Բունդեսպագի նախագահը, բազմաթիւ պատգամավորներ և բոլոր խմբակցութիւնները արդէն դիրքաւորել էին: «Կատարուածը ցեղասպանութիւն էր, առանց այլևայլի, Շթայնմայերի դէմքից երևում էր իրեն վիրաւորուած զգալը: Չախտումը նա անձնական ընդունեց»<sup>3</sup>, -դիպուկ ասում է Հենրի Մ. Բրոդերը<sup>4</sup>:

Սկզբից եթէ միշտ արտգործնախարարութիւնը և կամ արտ-

<sup>2</sup> Հատուած Գերմանիայի նախագահ Նոախիմ Գաուքի՝ ապրիլի 23-ին Բեռլինի Մայր տաճարում տեղի ունեցած ճառից:

<sup>3</sup> Henry M. Broder, die Welt 27.04.2015.

<sup>4</sup> Թղթակից և հրապարակախօս, ապրում է Գերմանիայում:

գործնախարարը ունեին և ունեն հակահայ դիրքորոշում, անկախ կուսակցական պատկանելությունից:

Գերմանա-Օսմանեան յարաբերությունը սերտացել է Helmut Karl Bernhard von Moltke-ի ժամանակաշրջանից, երբ նա 1836-1839 թթ. թրքական բանակի instrukteur-ն էր: Հետագայում համագործակցությունը ընդլայնեց տնտեսական, զինուորական մշակոյթային և սոցիալական ոլորտներով:

Առաջին աշխարհամարտի ժամանակամիջոցին գեներալներ von der Goltz-ը և Liman von Sanders-ը գլխավորում էին գերմանական զինուորական- mission-ը: Բեռլին-Բաղդադ երկաթգծի ծրագիրը սկսուեց իրականանալ և աւելի սերտացան այդ յարաբերությունները՝ մղելով Օսմանեան սուլթանութեանը մասնակցելու Առաջին համաշխարհային պատերազմին, որպէս Գերմանիայի դաշնակից: Մինչև 1918 թ. Թուրքիայում գերմանացի սպաների թիվը հասաւ 800-ի, իսկ զինուորներինը՝ 25 000-ի: Պատերազմը ցանկացած առիթն էր, որի սուների ներքոյ իրագործեց երիտթուրքերի կողմից նախապէս ծրագրուածը: Թուրքիայում ապրող քրիստոնէայ ազգերի՝ հայերի, ասորիների/արամեալեզու քրիստոնէաների և յոյների բնաջնջումը, որոնց կոտորածների և բռնատեղահանումների (Deportation) մասին Կ. Պոլսոյ Գերմանիայի կայսերական դեսպանատունը իր շուրջ 15 քաղաքներում աշխատող յիւպատոսութիւններից լաւագոյնս տեղեակ էր, որն էլ իր հերթին փոխանցում էր Բեռլին: Բեռլինը չփորձեց կասեցնել կոտորածը, այլ գրաքննութիւն սահմանեց Հայոց կոտորածների մասին: 1915 թ. դեկտեմբերի 23-ին մամուլի գրաքննութիւնը դէռ աւելի խստացրեց, քանզի «Հայկական հարցի կապակցութեամբ նախընտրելի էր լռելը: Յատուկ գովասանքի արժան չեն թուրք իշխանաւորները»<sup>5</sup>:

Գրաքննութեան օրէնքին ենթարկուեց նաև Լեփսուսի «Հայ ժողովրդի մահուան երթը» (1919, Փոթսդամ) գիրքը<sup>6</sup>, որը հասցեագրուած էր խորհրդարանի (Ռայխսթագի) պատգամավորներին, ինչպէս նաև Քառլ Լիբքնեխտի հարցադրումը ուղղուած կառավարութեանը 1916-ի Յունուար ամսին, Հայոց զանգուածային կոտորածների առնչութեամբ, որին խորհրդարանի նախագահը զրկեց ձայնից:

<sup>5</sup> Reinhard Pohl, Völkermord, Deutschland und die Welt, Heft 69, Seite 12-13.

<sup>6</sup> Johannes Lepsius: Der Todesgang des armenischen Volkes, Potsdam, 1919, Tempelverein.

Մինչ այդ՝ 1915-ի դեկտեմբերին, հայերի բնաջնջման առթիւ դեսպան Փառլ Գրաֆ Վոլֆ- Մերենիխը նամակով դիմել էր Գերմանիայի արտգործնախարարութեանը: Քանցելր Թեոֆալդ Ֆոն-Բերթման Հոլշեգը պատասխանել էր նրան. «Մեր նպատակն է Թուրքիային մինչև պատերազմի աւարտը պահել մեր կողքին, կարևոր չէ թէ դրանից հայերը կկործանւեն, թէ ոչ...»<sup>7</sup>:

Գերմանական ակադեմիականները, դիւանագետները ու զինւորականները աջակցում էին Մաքս ֆոն Օփենհայմին<sup>8</sup>: Թեպետև չլազոդուեց նրանց իսլամներին անգլիացիների եւ ֆրանսիացիների դէմ «մոքիլիզացնել», սակայն «Ջիհատ»-ի հռչակումը թուրքերի, քուրդերի և չերքեզների մօտ ունեցաւ մեծ արձագանք: Նրանք քրիստոնէաների նկատմամբ յատուկ դաժանութիւն ցուցաբերեցին, յատկապէս ցեղասպանութեան և բռնատեղահանութիւնների ընթացքում:

Պատերազմը պարտուելուց յետոյ երիտթուրք պարագլուխները զինեղբայր Գերմանիայի օժանդակութեամբ փախան Թուրքիայից և ապաստան գտան Բելիւնում: Արտգործնախարարութիւնը դիմեց բոլոր միջոցների՝ հովանաւորելու իր դաշնակից ոճրագործներին և մերժեց թուրք պատասխանատուներին յանձնել Կ. Պոլսոյ զինւորական ատեանին, որը Մեծն Բրիտանիայի ջանքերով եւ ճնշման հետևանքով էր կեանքի կոչուել: Այսպիսով, Գերմանիան արգելք հանդիսացաւ, որպէսզի թուրք մեղսակիցները կրեն իրենց պատիժը, թեպետև նրանք արդէն մահվան էին դատապարտուել զինւորական ատեանի կողմից (Թալէաթ, Ջեմալ, Էնւեր և Ազմի):

Արտգործնախարարութիւնը ոչ մի ջանք չխնայեց, որպէսզի Թալէաթ փաշայի դատաւարութիւնը չդառնա քաղաքական ֆորում: Դատը տևեց միայն մէկուկէս օր, որպէսզի առիթ չտրուի բոլոր վկաներին ելոյթ ունենալու: Սողոմոն Թեփիրեանը յայտարարեց անմեղսունակ եւ անհապաղ արտաքսուեց Գերմանիայից:

Արտգործնախարարութիւնը մոլորեցրեց նաև Յոհաննէս Լէփսուսին՝ նրան յանձնելով կեղծուած փաստաթղթեր՝ «Գերմանիան և Հայաստանը 1914-1918, Փոթսղամ, 1919» գրքի համար, որպէսզի

<sup>7</sup> Archiv des Auswärtigen Amtes, R 14089; A36184; pr.15.12.1915, Bericht DuA Dok.209, Zitiert nach Gust, Völkermord, Springe 2005, Seite 394-395.

<sup>8</sup> Դիւանագէտ, արևելագէտ և հնէաբան Մերձաւոր Արևելքում, մականունը՝ Արուջիհադ (1860-1946):

կայսերական Գերմանիան անմեղ ներկայացւի:

Նացիոնալ- սոցիալիստական Գերմանիայի օրօք Թալեաթի դին դեսպան Ֆրանց Ֆոն Փափենի ( 1945-ին որպէս պատերազմական ոճրագործ մահուան դատապարտուեց) ներկայութեամբ վերաթաղուեց Կ. Պոլսոյ ազատութեան բլուրի վրա (դեռ Ջեմալ Ազմին և Բեհաէդին Շաքիրը թաղուած են Բեռլինի Քոլոմբիադան թրքական գերեզմանոցում, շէհիտներ մզկիթի հովանու ներքեր):

Գերմանիայի նացիոնալ-սոցիալիստական աշխատաւորների կուսակցութեան գաղափարախօս Ալֆրեդ Ռոզենբերգը 1926 թ. բնորոշել էր հայերին որպէս հրեաների ռասայի (ցեղի) խորթ եղբայրը և արդարացրել երիտթուրքերի ոճրագործութիւնը<sup>9</sup>: Չպետք է մոռանալ նաև Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վէպի արգելքը:

Այսօրուայ Գերմանիան լրիւ անտեսում է ցեղասպանութիւնը, թէպէտև Գերմանիայի Դաշնային Հանրապետութիւնը (ԳԴՀ) ստորագրել է 1955-ի փետրուարի 22-ին ՄԱԿ-ի ցեղասպանութեան կանխման և պատժման կոնւենցիան ( ընդունվել է1948-ի դեկտեմբերի 9-ին, ուժի մեջ է մտել 1951-ի յունուար 12-ին): Նույն տարում էլ ԳԴՀ-ն դարձել է NATO-ի անդամ՝ յանձն առնելով թրքական բանակի կատարելագործումն ու նորագույն զենք ու զինամթերքի մատակարարումը: 1996 թուականից առկա է գերմանա-թրքական մաքսային միութիւն, և Գերմանիան Թուրքիայի ամենամեծ առևտրական գործընկերն է:

Թուրքիայից գաղթած այսպէս կոչուած հիւր աշխատաւորները կազմում են ԳԴՀ-եան ամենամեծ իսլամական համայնքը, որոնց 2-րդ, 3-րդ սերունդները բոլոր գերմանական կուսակցութիւններում ակտիւ են և ունեն ազդեցութիւն գերմանական քաղաքական որոշումներում: Նախկին քանցել Գերհարդ Շրոյդերը Թուրքիայի ԵՄ-ի անդամակցութեան ջատագովներից էր: ԳԴՀ-ն որպէս Դեմոկրատական Հանրապետություն, անդամ է մարդու արժէքային համակարգ ներկայացնող ԵՄ համայնքին, այսուամենայնիւ, իր Եվրոպայի պառլամենտի սոցիալիստ և քրիստոնիա-դեմոկրատական անդամները միաձայն դեմ քուէարկեցին 1987-ին ընդունված Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձևին:

2000-ի ապրիլին հայկական, թրքական և գերմանական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ (դոկտ. Թեսա Հոֆման, Ալի

<sup>9</sup> Zeitschrift: Die Weltkampf, 1926.



Էդթեմ և դոկտ. Ժիրայր Քոչարեան) 16000 ստորագրութիւններով դիմեցին Բունդեսթագի խնդրագրերի գրասենեակին՝ ճանաչելու և դատապարտելու Հայոց ցեղասպանութիւնը, որին մեկ տարի յետոյ արձագանքեց Բունդեսթագը՝ խուսափողական եղանակով: Տեղեակ պահելով պաշտօնապէս Թուրքիայի կառավարութեանը խնդրագրի նպատակի մասին՝ նա խնդրարկութիւնն մատնանշել էր 2001 թ. գարնանը աշխատանքը սկսած թուրք-հայկական հաշտեցման յանձնախումբը՝ TARC-ը (Turkish-Armenian Reconciliation Commission): Ու թեպէտս TARC-ի միջազգային անցումային արդարադատութեան կենտրոնին (International Center of Transitional Justice) յանձնած իրաւական գնահատականը (2003 թ. փետրուարին) հանգել էր եզրակացութեան, որ կարելի է ասել, ընդհանուր առմամբ եղելութիւնները համահունչ են ՄԱԿ-ի ցեղասպանութեան կոնվենցիայի բոլոր կետերին<sup>10</sup>: Այսուամենայնիւ գերմանական օրէնսդիր մարմինը և կառավարութիւնը նկատի չառան Անցումային Արդարադատութեան Դատարանի (ICTJ) իրաւական բնորոշումը:

Ցեղասպանութեան ճանաչման 2-րդ խնդրագիրն այս անգամ CDU/CSU խմբակցութեան կողմից ներկայացուեց Բունդեսթագին փետրուար 2005-ին, երբ դեռ ընդդիմադիր էին, մի ծանրաշարժ ծրագրային վերնագրով՝ «Յիշողութիւն և յիշատակում (1915-16 թթ.) հայերի կոտորածները և վտարումները, Գերմանիան պիտի ունենայ իր ներդրումը թուրքերի և հայերի հաշտեցման հարցում»<sup>11</sup>:

Գերմանիան ինքն իրեն համարում է որպէս ազնիվ միջնորդ, սակայն չունի սեփական դիրքորոշում, թէ արդեօր 1915-ի կոտորածները և վտարումները ցեղասպանութիւն են եղել: Եվ նկատի առնելով հայ-թրքական անիրական մերձեցումները TARC (2000) և վերջապէս հայ-թրքական երկու արձանագրութիւնները (10.10.2009), (NZZ, 05.01.2012), որոնք կարճ ժամանակ յետոյ փաստեցին իրենց անարդիւնաւէտ լինելը և շատ թովիչ այսպէս կոչուած միջպետական դիալոգը (որը մնաց Գերմանիայի թրքական երեսակայական քաղաքականութեան սահմաններում), այսուհանդերձ Գերմանիան

<sup>10</sup> Vgl. den Text des Gutachtens zur «Anwendbarkeit» der UN-Konvention über die Bestrafung und Verhütung von Völkermord auf Ereignisse vom Beginn des 20. Jhs." S. 17,                    aut                    <http://www.1.american.edu/cgp/TARC/ICTJ%20Memorandum%20Feb.%2003.pdf>

<sup>11</sup> <http://www.aga-online.org/dokumente/attachments/Bundestagresolution.pdf>

չփոխեց իր քաղաքական կողմնորոշումը:

100 տարի ցեղասպանությունից և բռնատեղահանումներից յետոյ Թուրքիան և Գերմանիան վարում են նույն արհամարհական քաղաքականությունը: Գերմանիան, որը նպաստել է հայերի, ասորիների (արամեալեզու քրիստոնեաների), քրիստոնեա արաբների, եզդիների եւ տերսիմցիների ցեղասպանություններին, հրաժարում է դիրքորոշումից, որը ծայրահեղ ցաւալի է զոհերի ժառանգների համար և հարուածում է այն քղերին և թուրքերին, որոնք պատասխանատւութիւն են ստանձնել ցեղասպանութեան ոճրագործութեան համար, քանզի թրքական պաշտօնեական քաղաքականութիւնը, պատմութեան առումով, հովանավորում է Գերմանիայի կողմից:

Հայերի ցեղասպանութիւնն ու բռնատեղահանումները, որոնք չափանիշ են հանդիսացել ՄԱԿ-ի ցեղասպանութեան կանխման և պատժման կոնվենցիայի համար, որպէս «ջարդ և արտաքսում» աղճատելը կազմում է ԳԴՀ-ի արտաքին գործօց նախարարութեան բոլոր յայտարարութիւնների հիմքը, որը կառուարութեան անունից որպէս պատասխան տրում է ընդդիմադիր կուսակցութիւններին, երբ նրանք Բունդեսբազում Հայոց ցեղասպանութեան հարցն են բարձրացնում:

Միքայէլ Հէգէմանը<sup>12</sup> 2015 թ. սեպտեմբերի իր յօդուածում գրում է. «Երբ պապ Ֆրանսիսկոսը այս տարուայ ապրիլի 12-ին Հայոց երկու կաթողիկոսների ներկայութեամբ Ս.Պետրոս կաթողիկէում պատարագով ոգէկոչում էր Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցը, Գերմանիայի դեսպան տիկին Անէթ Շաւանը ցուցադրաբար հեռու մնաց վատիկանեան Պատարագից: Տիկին Մերքելը այդ դէպքից առաջ յայտարարել էր՝ «Հայոց ցեղասպանութիւնը Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ երկկողմ խնդիր է»<sup>13</sup>, ու հերքել էր գերմանական որևէ մեղսակցութիւն: Արտգործնախարար Շթայնմայերը յետ չէր մնացել իր քանցլերից և նշել էր. «Երկու ազգերի բուն խնդիրը իրար հետ չխօսելն է»<sup>14</sup>:

Իսկ պետնախարար Միխայէլ Ռոթը, սեփականացնելով Անկարայի դիրքորոշումը, յայտարարեց իմ բողոք-նամակին առ ի պատասխան, գրում է Հէգէմանը, «Սկզբում, իհարկէ, Էրդողանի կողմից

<sup>12</sup> Պատմաբան, բազմաթիւ գրքերի և յօդուածների հեղինակ:

<sup>13</sup> St u Hesemann-ի հետևեալ յօդուածը՝ Islam-Christentum, September 2015.

<sup>14</sup> Michael Hesemann: Islam-Christentum 2015.

կեանքի կոչուած պատմաբանների յանձնախումբը պիտի որոշի, թե ի՞նչ է իրապէս տեղի ունեցել 1915-ին»<sup>15</sup>:

Ինչպէս սկզբում ակնարկեցինք, 2015-ի ապրիլի 24-ի յուզիչ ճառերից յետոյ որոշուեց, որ Բունդեսթագի արտաքին յարաբերութիւնների յանձնախումբը բանաձև մշակի Բունդեսթագի արձակուրդներից առաջ, և յետոյ էլ յետաձգուեց արձակուրդներից յետոյ, որը և առայսօր տեղի չի ունեցել: Ուլա Ելփքինը<sup>16</sup> իր սեպտեմբերի 13-ի՝ Զմիւռնիայի ողբերգութեան՝ հայերի, յույների, ասորիների (արամէալեզու քրիստոնեաների) միասնական յուշահամալիրի բացման օրւայ ճառում, որը տեղի ունեցաւ Շադոլթենբուրգի աւետարանական պանթէոնում, այսպէս յայտարարեց «Հնարավոր է ցեղասպանութեան հարցը 2016թ. ապրիլի 24-ին մտնի Բունդեսթագի օրակարգ»<sup>17</sup>:

Գերմանա-թրքական յարաբերութեան վերջին զարգացումները, իմ կարծիքով, թույլ չեն տալու, որպէսզի Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձևը 2016 թ. Ապրիլի 24-ին մտնի Բունդեսթագի օրակարգ: Ստորև ամփոփ ներկայացնենք վերը նշված զարգացման հիմնական կետերը. քանի որ տիկին Մերքելը, անտեսելով փախստականների ահռելի քանակը, խօստացել է լուծել փախստականների հարցը և հասկանալով, որ այս խնդիրը թերևս անհաղթահարելի է մնալու, փորձում է Թուրքիայի օգնութեամբ կանխել փախստականների հոսքը դէպի Եվրոպա և Գերմանիա: Էրդողանը այդ ծառայութեան դիմաց ներկայացրել է պահանջներ: Ավելի դյուրին են դարձել Թուրքիայի քաղաքացիների՝ եվրոպական վիզային առնչվող հարցերը: Մերքելը, Թուրքիա ուղևորվելով, օգնեց Էրդողանին շահել ընտրությունները, ԵՄ-ը չհրապարակեց Թուրքիայի զարգացմանը վերաբերող զեկոյցը և խօստացաւ երեք միլիարդով օժանդակել նրանց՝ բարելավելու Սիրիայի փախստականների վիճակը, ինչպէս նաև խօստացաւ տարեկան 170 միլիոն յաւելեալ օգնութիւն:

Զեկոյցի մի հատվածը ներկայացուել է միջազգային գիտաժողովում «Հայոց ցեղասպանութիւ-100. ճանաչումից հատուցում», Երևան, 2015 թ., հոկտ.15-16-ը:

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Զախերի կուսակցութեան (PDS) Բունդեսթագի պատգամաւոր:

<sup>17</sup> Հատուած Ուլա Ելփքէի՝ 2015թ. սեպտեմբերի 13-ին ունեցած ճառից:

**THE POSITION OF THE GERMAN FEDERAL FOREIGN OFFICE ON THE GENOCIDE AGAINST THE ARMENIANS AND OTHER CHRISTIAN ETHNIC GROUPS: PAST AND PRESENT**

The response of German media (TV, radio) and the cultural, academic and human rights events at the occasion of centenary were extremely numerous and went above and beyond everything that Armenians in Germany were used to so far. In a parliamentary debate on 24 April 2015 representatives of all fractions made impressive speeches, in particular the President of the Bundestag Prof. Lammert, who clearly qualified and condemned the "events of 1915" as genocide.

Four factors seem to be instrumental for this qualitatively and quantitatively intensive statements: 1) the exemplary and significant speech by Pope Francis during a memorial service on April 12, 2015 2) the antipathy of parliamentary German opposition against the ruling conservatives, 3) an enhanced sense of history in the German majority society, and 4) the distancing from Erdoğan's Neo-Ottoman policy.

In my contribution, I analyze the 'recognition' of the genocide of Armenians in Germany in its historical dimension. The Bundestag is facing 15 years in a bid to recognize the genocide of the Armenians, i.e. to make a legally qualified vote in the spirit of the UN Genocide Convention. Whilst in 2005 the Bundestag unanimously adopted a resolution that admitted German co-responsibility, the German lawmakers avoided, at the same time, an own position whether the "expulsion" and "massacres" of 1915 qualify as a genocide.

The influence of the executive on the legislature, incompatible with the democratic principle of separation of powers, has an unfortunate tradition in Germany's policy towards Turkey and Armenia: In 1915, Prime Minister Bethmann Hollweg prevented a critical distancing of his country from the Ottoman extermination policy, citing the priority of German-Ottoman military alliance. Although German political decision makers were better informed than other governments about destruction of Christian co-religionists in the allied Ottoman Empire, the German public was not allowed to know anything about these crimes. Until the end of World War I

strict military censorship prevented any objective press reporting over Armenia and Turkey.

As a result of a century of silence, until this day there exists no comprehensive scientific review of precise German debt proportion in Germany. No German historian, no university has ever conducted research on this topic. The subject was entirely left to journalists and non-historians. In the increasingly pluralistic society of Germany, in which the descendants of the Muslim perpetrators and the oriental Christian victims live together now, scientific and political inaction bear negative results.

*ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

### **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԽՆԴԻՐԸ 1960-ԱՎԱՆ ԹԹ.**

1960-ական թվականների սկզբին՝ Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի նախօրեին, սփյուռքահայությունը եռանդուն պայքար սկսեց՝ Հայկական հարցը լուծելու և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հասնելու համար: Այդ ժամանակահատվածում նկատելիորեն մեծանում է համաշխարհային հանրության հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ. սկսվում են քննարկումներ միջազգային տարբեր կազմակերպություններում, գիտական և հասարակական համաժողովներում ու խորհրդրդաժողովներում:

ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության հարցի շուրջ հիշատակումները սկսվում են դեռևս 1960-ական թվականների սկզբին: Առաջին անգամ այդ մասին խոսվում է 1961 թ.<sup>1</sup>, սակայն հիմնական հիշատակումները եղել են 1964-1965 թթ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստերում՝ Կիպրոսի հարցի շուրջ քննարկումների ընթացքում: Հատկապես հիշարժան են 1965 թ. հունվարի 25-27-ը ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովում կայացած քննարկումները: Հունվարի 25-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ֆ. Ջ. Էրքինն իր ելույթում դատապարտում է Կիպրոսում թուրքերի հանդեպ հույ-

---

<sup>1</sup> Ազդակ, 4. 05. 1965:

ների ցուցաբերած ոչ ընդունելի վերաբերմունքը և առաջարկում, որ ՄԱԿ-ը Մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների հիման վրա քննարկի Կիպրոսի ապագա կարգավիճակը՝ հաշվի առնելով Կիպրոսում ապրող թուրքերի իրավունքները: Նա մեղադրում է հույներին՝ վերջիններիս կոտորելու համար<sup>2</sup>: Նման ելույթը չէր կարող անպատասխան մնալ: Ի պատասխան Կիպրոսի արտաքին գործերի նախարար Ս. Քիփրիանուն հայտարարում է, որ չէր պատրաստվում անդրադառնալ տեղի ունեցած բախումներին և վերջինիս հիշեցնում է Հայոց ցեղասպանության մասին. «Հաշվի առնելով այն փաստը, որ հարցը բարձրացվեց, և ինչ-որ մեկը պետք է մտածի մասնավորապես այն ժողովրդի մասին, որի մասին չեն մտածում մյուսները, ես պարտավոր եմ տեղեկացնել, որ միայն այս տարի ամբողջ աշխարհի հայերը պատրաստվում են նշել 1915 թ. Թուրքիայում 1.5 միլիոն հայերի կոտորածի 50-րդ տարելիցը»<sup>3</sup>: Մեկ օր անց՝ հունվարի 26-ին, ՄԱԿ-ում Թուրքիայի ներկայացուցիչ Օրհան Էրալփը փորձեց հերքել իր երկրի պատասխանատվությունը հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության մեղադրանքի հետ կապված: Նա հայտարարում է. «Կիպրոսի արտաքին գործերի նախարար Քիփրիանուն հերթական հուսահատ փորձն արեց Թուրքիային վարկաբեկելու ուղղությամբ՝ մեղադրելով թուրքերին անցյալում այսպես կոչված զանգվածային կոտորածներ իրականացնելու համար»<sup>4</sup>:

Հունվարի 27-ին Ս. Քիփրիանուն կրկին արձարծեց Հայոց ցեղասպանության հարցը և հերքեց թուրքերի կողմից ներկայացված պատճառաբանությունները: Նրա ելույթում ասվում էր. «Թուրքիայի ներկայացուցիչը կրկին խոսեց կոտորածի մասին (խոսքը Կիպրոսում թուրքերի կոտորածների մասին է – Ք. Մ.): Ես չեմ առաջինը

<sup>2</sup> UN General Assembly, Nineteenth Session, 1321<sup>st</sup> Plenary Meeting, Monday, 25 January 1965, New York, p. 8,  
[http://www.un.org/ga/search/view\\_doc.asp?symbol=A/PV.1321](http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/PV.1321)

<sup>3</sup> UN General Assembly, Nineteenth Session, 1321<sup>st</sup> Plenary Meeting, Monday, 25 January 1965, New York, p. 16,  
[http://www.un.org/ga/search/view\\_doc.asp?symbol=A/PV.1321](http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/PV.1321)

<sup>4</sup> UN General Assembly, Nineteenth Session, 1323<sup>rd</sup> Plenary Meeting, Tuesday, 26 January 1965, New York, p. 18,  
<http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/NL6/605/72/PDF/NL660572.pdf?OpenElement>

բարձրացրել և, ինչպես նշել եմ, փորձել եմ շրջանցել այն: Սակայն երկու օր առաջ ստիպված էի անդրադառնալ հայերի կոտորածներին, որը Թուրքիայի ներկայացուցիչն անվանեց «այսպես կոչված» կոտորածներ: Ավելին, որպեսզի ամրապնդի իր դիրքերը, հիմնվել է Առնոլդ Թոյենբի<sup>5</sup> գրքի վրա: Ես խորհուրդ կտամ նրան կարդալ Առնոլդ Թոյենբի բոլոր աշխատությունները, և նա կարող է գտնել այնտեղ հայերի կոտորածների վերաբերյալ տեղեկություններ և շատ այլ բաներ, որը վստահ եմ, որ նրան դուր չեն գա»<sup>6</sup>: Մեկ ամիս անց էլ՝ փետրվարի 22-ին, լրագրողներին տված իր հարցազրույցում Ս. Քիփրիանուն տեղեկացնում է, որ ՄԱԿ-ում շատ երկրների ներկայացուցիչների հետ առիթ է ունեցել քննարկելու Հայ դատը և հարցը մանրամասնությամբ ներկայացնելու վերջիններին: «Նրանցից շատերը մեծապես տպավորված են և մեծ հետաքրքրություն ու համակրանք են ցուցաբերում»<sup>7</sup>, - իրազեկում է Կիպրոսի արտաքին գործերի նախարարը:

Բացի այդ, նկատենք, որ 1960-1970-ական թթ. կիպրական խնդրի շուրջ Թուրքիայի որդեգրած քաղաքականության և ծավալված գործընթացների հետևանքով լարվել էին նաև թուրք-ամերիկյան հարաբերությունները: Այդ մասին է վկայում 1974 թ. օգոստոսի 22-ին Թուրքիայի վարչապետ Բ. Էջնիտի հայտարարությունը, որում ասվում է. «1964 թ. հունիսի 5-ի ԱՄՆ-ի նախագահ Լինդոն Ջոնսոնը՝ վարչապետ Իսմեթ Ինյոնյուին ուղղած իր նամակում սպառնում էր, որ հանդիսանալով ՆԱՏՕ-ի դաշնակից՝ չի աջակցի Թուրքիային Խորհրդային Միության հարձակման դեպքում, եթե Թուրքիան իր գորքերը մտցնի Կիպրոս՝ ընդդեմ Հունաստանի»<sup>8</sup>: Դեռևս 1964 թ. մայիսի 10-ի՝ ԱՄՆ-ի պետքարտուղարության «կիպրական հարցին» վերաբերող փաստաթղթում առաջարկվում է վերհանել Թուրքիային անհանգստացնող խնդիրները՝ վերջինիս վրա ճնշում գործադրելու նպատակով<sup>9</sup>: Փաստաթղթում չի նշվում, թե որ

<sup>5</sup> UN General Assembly, Nineteenth Session, 1325<sup>th</sup> Plenary Meeting, Wednesday, 27 January 1965, New York, pp. 6-7,

[http://www.un.org/ga/search/view\\_doc.asp?symbol=A/PV.1325](http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/PV.1325)

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 7:

<sup>7</sup> New York Times, 22. 02. 1965.

<sup>8</sup> Hürriyet, 23. 08. 1974.

<sup>9</sup> Foreign Relations Of The United States, 1964–1968, Volume XVI, Cyprus; Greece; Turkey, United States Government Printing Office, Washington, 2000, p.81.

խնդիրների մասին է խոսքը, սակայն կարելի է ենթադրել, որ Հայկական հարցը ևս ընդգրկված էր:

Միաժամանակ նկատենք, որ 1960-ական թթ. ԽՍՀՄ-ը, օգտվելով թուրք-ամերիկյան լարված հարաբերություններից, փորձում է բարելավել խորհրդա-թուրքական կապերը՝ կրկին վստահեցնելով, որ Թուրքիայից որևէ տարածքային պահանջ չունի: Նախ՝ 1964 թ. նոյեմբերին Մոսկվայում պաշտոնական այցով գտնվող Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ֆ. Ջ. Էրքինը խորհրդային կառավարության հետ համատեղ հաղորդագրություն է հրապարակում, որում ասվում էր. «ԽՍՀՄ-ը և Թուրքիան համաձայն են ամեն ճիշդ գործադրել, որպեսզի երկու երկրների միջև ամրապնդվեն բարի-դրացիական հարաբերություններ՝ հիմնված անկախության, տարածքային ամբողջականության և իրավունքների հավասարության հիման վրա»<sup>10</sup>: 1965 թ. հունվարի 4-ին ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ն. Պողոտնին Անկարա պատասխան այցելության ընթացքում մեկ անգամ ևս հաստատում է, որ «Խորհրդա-թուրքական սահմանը կոչված է դառնալու բարեկամության ամրապնդման խորհրդանիշ»<sup>11</sup>: Խորհրդային կառավարության հայտարարությունները Թուրքիայի տարածքային ամբողջականության անքակտելիության վերաբերյալ հաստատում են, որ պաշտոնական Անկարան վախենում էր, որ հայկական տարածքների հարցը կրկին օրակարգում կհայտնվի, և Մոսկվայից երաշխիքներ էին պահանջում: Ավելին՝ նկատենք, որ համաձայն թուրքական մամուլի՝ խորհրդային խորհրդարանական պատվիրակությունը Թուրքիայից ևս երաշխիքներ էր պահանջում: Ավելի ստույգ՝ ԱՄՆ-ին և ՆԱՏՕ-ին արգելել Թուրքիայի տարածքում ընդդեմ ԽՍՀՄ-ի ռազմաբազաների կառուցումը: Աղբյուրը տեղեկացնում էր, որ Թուրքիայի իշխանությունները հրաժարվել են բավարարել խորհրդային կողմի պահանջը<sup>12</sup>: Այնուհանդերձ 1965 թ. հունվարի 14-ին պաշտոնական Անկարան հայտարարել է, որ չի մասնակցելու գարնանը նախատեսված ՆԱՏՕ-ի զինավարժություններին<sup>13</sup>:

Պաշտոնական Մոսկվան էլ չնայած Անկարային վստահեց-

---

<sup>10</sup> Правда, 28. 11. 1964.

<sup>11</sup> Правда, 09. 01. 1964.

<sup>12</sup> Milliyet, 11. 01. 1965.

<sup>13</sup> Milliyet, 15. 01. 1965.



նում էր, որ Թուրքիայից որևէ տարածքային պահանջ չունի, սակայն դրան զուգահեռ հետևում էր Սփյուռքում Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի միջոցառումների նախապատրաստման աշխատանքներին: Ավելին խրախուսում էր սփյուռքահայերի այդ ուղղությամբ արված քայլերը: Դրա վառ վկայությունն է 1964 թ. օգոստոսի 17-ի՝ Վազգեն Ա Կաթողիկոսի կոնդակը՝ «նվիրված Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում արևմտահայ ժողովրդի նահատակության», որով 1965 թ. հռչակվում էր սուգի և աղոթքի տարի Հայ եկեղեցու և ժողովրդի համար»<sup>14</sup>: Խորհրդրդային իշխանությունները թույլատրում են, որ Մայր Աթոռը ապրիլի 24-ին Մուրբ պատարագ մատուցի և հոգեհանգստյան արարողություն կատարի ի հիշատակ Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի: Արդյունքում Վազգեն Ա Կաթողիկոսը ծավալում է բավականին լայնածավալ գործունեություն: 1964 թ. սեպտեմբերին նա Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին պատարագներ մատուցելու խնդրանքով դիմում է Հռոմի պապ Պողոս VI-ին<sup>15</sup> և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիին<sup>16</sup>: 1964 թ. հոկտեմբերի 17-ին Հռոմի պապը Վատիկանի Ս. Պետրոսի տաճարում մատուցում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության տարածքում կոտորածի ենթարկված հայերի հիշատակին պատարագ<sup>17</sup>: Այդ միջոցառումը մեկնաբանվեց արևմտյան և թուրքական մամուլում<sup>18</sup>:

1965 թ. հունվար-փետրվար ամիսներին Վազգեն Ա կաթողիկոսը այցելում է Սփյուռքի հայոց գաղթօջախներ և ծանոթանում տարելիցի հետ կապված նախապատրաստվող միջոցառումներին: Ավելին՝ Վազգեն Ա-ն Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի միջոցառումների մեկնարկը 1965 թ. հունվարին անձամբ է տալիս: 1965 թ. հունվարի 24-ին Եթովպիայի մայրաքաղաք Ադիս Աբեբայի Մուրբ Երրորդության Մայր տաճարում Ամենայն Հայոց Կաթողիկոս

<sup>14</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 409 (Էջմիածնի գերագույն հոգևոր խորհուրդ), ց. 1, գ. 520 (Վազգեն Ա Կաթողիկոսի կոնդակը 1915 թ. Հայոց եղեռնի 50-ամյակի առթիվ, 1964 թ. օգոստոսի 17), թ. 1:

<sup>15</sup> ՀԱԱ, ֆ. 823 ( ՀՀ կառավարության առնթեր կրոնի գործերի պետական խորհուրդ), ց. 7, գ. 73 (Հաշվետվություն Վազգեն Ա Կաթողիկոսի նամակագրության մասին, 1964-1965 թթ.), թ. 1, 2:

<sup>16</sup> Նույն տեղում, թ. 3, 4:

<sup>17</sup> Նույն տեղում, թ. 8:

<sup>18</sup> Նույն տեղում:

Վազգեն Ա-ն և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Խորեն Ա-ն Սուրբ պատարագ մատուցեցին ի հիշատակ Մեծ եղեռնի 1,5 միլիոն զոհերի: Այդ արարողությանը ներկա էին Եթովպիայի կայսր Հայլե Սելասիե I-ը, երկրի Բարձրաստիճան այրեր ու օտարերկրյա դիվանագետներ: Միջոցառման ավարտից հետո ներկաները հանդիսավոր երթ կատարեցին քաղաքային հրապարակ և պսակ դրեցին Անհայտ զինվորի հուշարձանին՝ այդ կերպ իրենց հարգանքի տուրքը մատուցելով 1,5 միլիոն հայ նահատակների հիշատակին<sup>19</sup>: Այս իրադարձությունը լուսաբանվել է ինչպես եթովպիական, այնպես էլ թուրքական և օտարերկրյա մամուլում:

Մեծ եղեռնի 50-ամյակը Խորհրդային Միությունում և Սփյուռքում նշվեց ազգովի: Կանգնեցվեց Օիժենակաբերդի հուշարձանը, իսկ ավելի ուշ ստեղծվեց Սարդարապատի հուշահամալիրը, հրատարակվեցին պատմական ուսումնասիրություններ: Երևանում կազմակերպվեցին հուշ-երեկոներ, տեղի ունեցավ ժողովրդական ինքնաբուխ ու բազմամարդ ցույց: Սփյուռքում ևս կառուցվեցին հուշարձաններ, անցկացվեցին ցույցեր, Մեծ տերություններին ուղարկվեցին հուշագիր-նամակներ, և Հայոց ցեղասպանության վերաբերյալ հրատարակվեցին բազմաթիվ աշխատություններ, որոնք հիմնականում ցեղասպանությունը վերապրածների հուշերն էին: Վերը թվարկված բոլոր միջոցառումները լայնորեն լուսաբանվել են օտարերկրյա մամուլում, այդ թվում՝ թուրքական:

Միաժամանակ նկատենք, որ Սփյուռքում գործող հայկական կազմակերպություններն այդ տարիներին մշակում են գործողությունների նոր ծրագիր, որի հիմնական նպատակն էր աշխատանքներ իրականացնել միջազգային կառույցներում, հիմնականում խոսքը վերաբերում էր ՄԱԿ-ին և օտարերկրյա խորհրդարաններում Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացին<sup>20</sup>: Արդյունքում՝ 1960-ական թվականներից Հայկական հարցը դառնում է ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխման ենթահանձնաժողովի քննարկման

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 823 (ՀՀ կառավարությանն առնթեր կրոնի գործերի պետական խորհուրդ), ց. 7, գ. 82 (1965 թ. Վազգեն Առաջինի արտասահման կատարած ուղևորությունների հաշվետվությունները), թ. 15-16:

<sup>20</sup> Նույն տեղում, թ. 55:

առարկա: Բացի այդ, 1965 թվականից օտարերկրյա խորհրդարաններում սկիզբ է դրվում Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևերի ընդունմանը. փետրվարի 1-ին Ուրուգվայի խորհրդարանը ապրիլի 24-ը հայտարարեց պաշտոնական սգի օր, ապրիլի 20-ին Կիպրոսի խորհրդարանը միաձայն վավերացրեց ցեղասպանությունը դատապարտող փաստաթուղթ: 1965թ. ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Օրենսդիր ժողովն ընդունեց Ասամբլեայի թիվ 274 բանաձևը, որում ասվում էր. «...50 տարի առաջ՝ 1915-ի ապրիլի 24-ին Թուրքական կայսրության կառավարությունը, իբրև Կենտրոնական դաշինքի երկրների դաշնակից, սկսել է հայ ազգի բնաջնջման սիստեմատիկ ծրագիրը: ...1915-1918 թթ. թուրքական հոլոքոստի ընթացքում ողջ հայության կեսն իր բնակավայրերից քշվել է դեպի Սիրիայի անապատները և սպանվել կամ աննկարագրելի սարսափներ կրել: ...Մարդկության պատմության մեջ չի եղել ոչ մի իրադարձություն, որն այսքան հիմնովին գրավի աշխարհի ժողովուրդների սրտակցությունը, սակայն որն այսքան շուտ մոռացվի, ինչպես հայերի թուրքական ցեղասպանությունը»<sup>21</sup>:

Նույն թվականի հուլիսի 15-ին Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում գումարված «Խաղաղության, ազգային անկախության և զինաթափման համաշխարհային կոնգրեսը», որին մասնակցում էր 98 երկրների 1470 պատգամավոր, դատապարտեց բռնությունը, գաղութատիրությունն ու ցեղասպանությունը և Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև ընդունեց: Փաստաթղթում ասվում էր. «Այս տարի 50-ամյակն է Օսմանյան Թուրքիայի կողմից գործադրված հայկական կոտորածների, ազգային հարցը մի ժողովրդի բնաջնջումով լուծելու նպատակով: Այս ցեղասպանությունը խլեց կյանքը ավելի քան մեկ ու կես միլիոն ազատասեր հայերի, այսինքն հայ ժողովրդի երկու երրորդի»<sup>22</sup>: Այս փաստաթուղթը առանձնանում է նրանով, որ 1915 թ. դեպքերը հիշատակվում են որպես ցեղասպանություն: Այսինքն՝ 1960-ական թթ. համաշխարհային հանրությունը Հայոց ցեղասպանությունը ճանաչում և դատապարտում էր: Չնայած

<sup>21</sup> State of California. The Legislature. Assembly Resolution 274. 1965. Տե՛ս նաև՝ ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 41, փաստաթուղթ 1:

<sup>22</sup> Խաղաղության, ազգային անկախության և ընդհանուր զինաթափման համաշխարհային համաժողով Հելսինկի-Էջմիածին, 1965, Ը-Թ, էջ 70:

թուրքական պատվիրակության ճնշման ներքո բանաձևի նախնական տարբերակը վերանայվեց և հատուցման ու տարածքային պահանջատիրությանը վերաբերող հատվածը հանվեց<sup>23</sup>:

Բացի այդ, նշենք, որ թուրքական մամուլը լայնորեն անդրադառնում է 1965 թ. հայկական միջոցառումներին: «Հուրիյեթը» գրում էր. «Ապրիլի 24-ին, ամբողջ աշխարհի հանրային կարծիքի առջև, Թուրքիայի դեմ պիտի միջազգային նոր պայքար մղվի: Բեյրութի եկեղեցու (խոսքը վերաբերում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը - Ք. Մ.) առաջնորդությամբ, Փարիզի, Նյու Յորքի, Աթենքի, Լոնդոնի և Հարավային Ամերիկայի զանազան քաղաքներում «կոտորածի գոհ դարձած հայերի» հիշատակին պիտի տեղի ունենան սգահանդեսներ՝ զոհերի հիշատակը ոգեկոչելու և «Թուրքիայի վայրագությունները ծանուցելու» համար: Այս արարողությունները, ճառերը և հրապարակված գրքույկները պետք է սփռվեն ռադիոկայաններով ու հեռուստատեսությամբ»<sup>24</sup>:

Թուրքական մամուլը մեծ կարևորություն էր տալիս այս միջոցառումներին՝ Բեյրութ և հայկական այլ գաղթօջախներ ուղարկելով իր թղթակիցներին: Ավելին՝ թուրք լրագրողները իրենց հրապարակած հոդվածների միջոցով փորձում էին ցույց տալ, որ թուրքերին ուղղված մեղադրանքներն անհիմն են: 1965 թ. «Հուրիյեթը» կարճ հարցազրույցներ էր տպագրում Ստամբուլի հայերի հետ՝ դրանք դնելով «Մեր հայրենիքը Թուրքիան է, մեր դրոշը թուրքական դրոշն է, ամեն թուրքի պես կապված ենք այս երկրի հետ» վերնագրի տակ: Վերը նշված հարցազրույցներից մեկում հայ կաթոլիկների կրոնապետն ասել է. «Մենք բնավ չենք ուզում, որ հիշատակները վերակենդանանան..., Բեյրութում ծրագրված միտինգները որևէ օգուտ չպիտի ունենան»<sup>25</sup>: Կ.Պոլսի Հայոց պատրիարք Շնորհք արք. Գալուստյանի խոսքը բավականին չափավոր էր. «Մեռելներին հիշելը բոլոր մարդկանց իրավունքն է ու բարոյական պարտականությունը: Միայն թե հարգանքի արտահայտությունները պետք չէ, որ ազգերի սրտերում թշնամություն սերմանեն»<sup>26</sup>:

<sup>23</sup> ՀԱԱ, ֆ. 57 (Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան), ց. 5, գ. 231 (Փաստաթղթեր Հայկական հարցի մասին), թ. 27:

<sup>24</sup> Hürriyet, 08. 04. 1965.

<sup>25</sup> Hürriyet, 16. 04. 1965.

<sup>26</sup> Նույն տեղում:

Հրապարակված հոդվածներից կարելի է եզրակացնել, որ Մեծ եղեռնի 50-ամյակին նվիրված միջոցառումները, հատկապես միջազգային հանրության արձագանքը և մասնակցությունը դրանց, անակնկալի են բերել Թուրքիայի կառավարությանը, իսկ թուրքական պարբերականների հետևողական լուսաբանումը թուրք հասարակության անհանգստության պատճառ էր դարձել: Ինչն էլ ստիպում է 1965 թ. ապրիլի 23-ին Թուրքիայի նախագահ Ջեմալ Գյուրսելին հայտարարությամբ հանդես գալու և կոչ անելու թուրքական մամուլին հետևելու իրենց խոսքերին: Նա ասում էր. «Մամուլը պետք է եղածի պես չխորացնի և չներկայացնի հայկական խնդիրները: Պետք է գիտենա, որ հայկական կոտորածներ չեն եղել...»<sup>27</sup>:

Չնայած այդ հայտարարությանը՝ թուրքական մամուլը հետևում և լուսաբանում էր աշխարհի տարբեր վայրերում կազմակերպված հայկական միջոցառումները, հատկապես ցույցերը: Այդ առիթով խորհրդարանում ելույթով հանդես է եկել վարչապետ Սուաթ Հայրը Յուրգյուփյուն՝ հայտարարելով, որ մի շարք երկրներում հայկական ծայրահեղական կազմակերպությունները ցույցեր ու հանրահավաքներ են կազմակերպել, սակայն կազմակերպիչներն իրենց ակնկալած մասնակցությունը չեն ապահովել: Վարչապետը մեղադրել է հույներին այդ ցույցերի կազմակերպման մեջ: Հայտարարությունում ասվում էր. «Հայկական ցույցերն արդյունք են հունական գրգռվածության: Կան մի շարք օտար պետություններ, որ ցանկանում են հայերին գործիք դարձնել իրենց քաղաքական խաղերում, խնդիրն այստեղից է ծագում: Գրգռիչների նպատակն է հիսուն տարի անց պատմական իրողությունները նենգափոխել և Թուրքիայի դեմ հակաքարոզչություն տանել: Մենք շահագրգիռ պետություններին բացատրել ենք, որ Հայկական հարցը որևէ կապ չունի Թուրքիայի հետ, և չի կարելի պատմությունը նենգափոխել: Մեր ողջամիտ հայ հայրենակիցները չմասնակցեցին այդ միջոցառումներին և նույնիսկ ապրիլի 24-ին, այսինքն՝ հանրահավաքի օրը, Աթաթուրքի հուշարձանին ծաղկեպսակ դնելով՝ դատապարտեցին արտասահմանի մեջ տեղի ունեցող ցույցերը»<sup>28</sup>:

Չնայած այս հայտարարությանը՝ Թուրքիայի քաղաքական

---

<sup>27</sup> Milliyet, 23. 04. 1965.

<sup>28</sup> Milliyet, 25. 04. 1965.

շրջանակներում անհանգրստությունը չէր նվազում, այլ ընդհակառակը Հայկական հարցը լուրջ քննարկումների թեմա էր դարձել: Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը ԽՍՀՄ-ից պահանջում էր, որ երկու երկրների հարաբերությունները հիմնվեն վերջիններիս հողային ամբողջականության փոխադարձ հարգանքի վրա<sup>29</sup>:

1965 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ իրականացված քայլերը շարունակվեցին: 1967 թ. հունվարի 30-ին Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը երկարատև՝ հինգժամյա նիստի ընթացքում կիպրական խնդրի հետ համատեղ քննարկեց նաև Հայկական հարցը: Նիստին ներկա էին Թուրքիայի նախագահ Ջ. Սունայը, վարչապետ Ս. Դեմիրելը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Ջ. Թուրալը, պաշտպանության նախարար Ա. Թոփալօղլուն և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև ցամաքային բանակի, նավատորմի և օդուժի հրամանատարներ<sup>30</sup>:

1967 թ. փետրվարի 28-ին Անկարայում Թուրքիայի պահանջով ստորագրվեց խորհրդա-թուրքական արձանագրություն, որը հաստատում էր խորհրդա-թուրքական պետական սահմանը: 1967 թ. ապրիլին էլ թուրքական մամուլը տեղեկացնում էր, որ Թուրքիան ԽՍՀՄ-ի հավանական հարձակումից պաշտպանվելու համար առաջարկել է ՆԱՏՕ-ին «աթոմական ականերու դաշտեր հաստատուին թուրք և ռուս սահմանին վրայ, նկատելով, որ Թուրքիա հինգ զորաբաժին ունի հոն»<sup>31</sup>: Թուրքական կողմի այս քայլերը վկայում են, որ պաշտոնական Անկարան անհանգստացած էր տարածքային ամբողջականության հարցում և բոլորովին չէր վստահում ԽՍՀՄ-ին: Ավելին՝ 1968-1969 թթ. խորհրդա-թուրքական հանդիպումներում հիմնականում քննարկվում էր սահմանի վերագծման հարցը: Թուրքական մամուլն էլ այդ առիթով տարաբնույթ լուրեր էր տարածում, որոնք էլ ավելի էին սրում իրավիճակը:

1969 թ. թուրքական «Սաբահ» թերթը գրում էր, որ Խորհրդային Միությունը կրկին Կարսի և Արդահանի հարցն է բարձրացրել՝ պահանջելով վերագծել երկու երկրների միջև եղած սահմանը<sup>32</sup>: Մեկ

<sup>29</sup> Մսրբյան Ջ., Հայկական հարցի մասին, Պեյրուք, 1978, էջ 106:

<sup>30</sup> Մարմարա, 31. 01. 1967:

<sup>31</sup> Նույն տեղում, 21. 04. 1967:

<sup>32</sup> Sabah, 29.06. 1969.

օր անց Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը հերքել է մամուլում տեղ գտած այդ լուրերը: Սակայն, այն, որ սփյուռքահայերի՝ 1960-ական թթ. միջոցառումները լուրջ անհանգստություն են պատճառել, վկայում է Չանքայի պալատում 1970 թ. Ապրիլի 24-ին նախագահ Ս. Դեմիրելի մասնակցությամբ կայացած Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդի նիստը: Այնտեղ որպես հրատապ խնդիր քննարկվում էր նաև Հայկական հարցը: Ըստ թուրքական մամուլի՝ ներկաները կառավարությունից պահանջել են միջոցներ ձեռնարկել՝ կանխելու հայերի «հակաթուրքական գործունեությունը», որը թուրք պաշտոնյաների գնահատմամբ հետագայում լուրջ խնդիր կարող է դառնալ<sup>33</sup>: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ Հայոց ցեղասպանության խնդրի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության ձևավորման, մշակման և որդեգրման համար կարևոր ու թերևս հիմնական սկզբնակետ են 1960-ական թվականները:

Այսպիսով, 1960-ական թթ. դարձան Հայկական հարցի պատմության շրջադարձային էջը. ազգի մեծագույն ողբերգությունը վերջապես դադարեց լինել արգելված հարց: Համաշխարհային հանրության կողմից հայերի ցեղասպանությունը ճանաչելու սփյուռքահայության պայքարն առավել գործուն դարձավ, որն էլ ավելի լայն թափ ստացավ հետագա տասնամյակներում: Ավելին՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված քայլերը ստիպեցին Թուրքիային որոշ հակաքայլեր ձեռնարկել: Կարճ ժամանակ անց դրանք դարձան թուրքական ժխտողական քաղաքականության ու հակահայկական քարոզչության հիմքերը:

*CHRISTINE MELKONYAN (ARMENIA)*

## **THE ISSUE OF RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE IN 1960S**

From mid-1960s, on the eve of the 50th anniversary of the Armenian Genocide, the struggle of the Armenians in the Diaspora, aiming at gaining the recognition of the Armenian Genocide by the international community,

---

<sup>33</sup> Ազգակ, 07. 05. 1970:

became more active. As a result of the interest of the international community to the Armenian Question became more intensified and was discussed in international organizations. The problem of the Armenian Genocide was the subject of consideration in the United Nations adopted a more widespread after 1965. The parliaments of several countries (Uruguay, Cyprus) were adopted documents that contribute to the issue.

### *ՌՈՐԵՐՏ ԹԱԹՈՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

#### **«ԹՎԵՐԻ ՈՃԻՐԸ». ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՈՐՈՇ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Մեծ եղեռնի նախօրյակին Օսմանյան կայսրությունում բնակվող և ցեղասպանության շրջանում զոհ գնացած հայերի թվաքանակի հարցերը յուրահատուկ տեղ են գրավում խնդիրը ժխտող ուսումնասիրողների նենգափոխումների շարքում: Այսպես, Թուրքիայի արտգործնախարարության կայք այցելելու դեպքում այնտեղ կարող ենք գտնել «Ցեղասպանության մասին հայկական պնդումները, խնդիր և փաստեր» գրությունը, որտեղ որպես փաստ համար մեկ նշվում է հետևյալը. «Ժողովրդագրական ուսումնասիրությունները փաստում են, որ Առաջին աշխարհամարտի նախօրյակին Օսմանյան կայսրությունում բնակվում էր 1.5 միլիոնից պակաս հայ. Այսպիսով, պնդումներն առ այն, որ ավելի քան 1.5 միլիոն Արևելյան Անատոլիայի հայ է մահացել, կեղծ են»<sup>1</sup>: Այս «փաստի» գիտական հիմնավորման բնագավառում աչքի են ընկել բազմաթիվ ուսումնասիրողներ, որոնցից կարելի է նշել Էսաթ Ուրասի<sup>2</sup>, Մթենֆորդ

---

<sup>1</sup> The Armenian Allegation of Genocide: The issue and the facts (<http://www.mfa.gov.tr/the-armenian-allegation-of-genocide-and-the-facts.en.mfa>, վերցված է՝ 07.10.2015).

<sup>2</sup> Uras Esat, *Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi*, Ankara: Yeni Matbaa, 1950, անգլերեն թարգմանությունը՝ Uras Esat, *The Armenians in History and the Armenian Question*, Ankara, Documentary Publications, 1988



Շոուի<sup>3</sup>, Քյամուրան Գյուրունի<sup>4</sup>, Քեմալ Կարապատի<sup>5</sup>, Ջասթին Մաք-Քարթի<sup>6</sup> և այլոց անունները: Ժխտողական ուղղության ուսումնասիրողներին հաստուկ են արևմտահայության թվաքանակի վերաբերյալ 1878-1914 թթ. օսմանյան կառավարության վիճակագրական տվյալների (հենց դրանք են հաղորդում «1.5 միլիոնից պակաս» թիվը) անվերապահ ու ոչ քննադատաբար ընդունումը և այդ տվյալներին հակասող, հիմնականում հայկական աղբյուրներից ծագող վիճակագրության մերժումը (համաձայն Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1914 թ. տվյալների՝ Օսմանյան Թուրքիայում շուրջ երկու միլիոն հայ էր բնակվում<sup>7</sup>):

Դրա հետ մեկտեղ, վերջին շրջանում Թուրքիայի որոշ ուսումնասիրողներ ավելի տարբերակված, անկողմնակալ և հավասարակշռված մոտեցում են որդեգրել խնդրո առարկա հարցի նկատմամբ: Նրանցից է մասնավորապես Ֆուաթ Դյունդարն իր «Թվերի ոճիրը. վիճակագրության դերը Հայկական հարցում (1878-1918)» մենագրությամբ, որը լույս է տեսել 2010 թ. անգլերեն լեզվով<sup>8</sup>:

Ներածության (էջ 1-10) սկզբում հեղինակը հայտարարում է, որ ուսումնասիրության հիմնական թեզն է հիմնավորել, որ վիճակագրությունը կարևոր դեր է խաղացել Հայկական հարցում՝ ինչպես հարցի միջազգային ասպարեզում հայտնվելու, այնպես էլ «վերջնական հանգուցալուծման» մեջ:

---

<sup>3</sup> Shaw Stanford J. and Shaw Ezel Kural, *History of the Ottoman Empire and Modern Turkey*, vol.2, N.Y., Cambridge University Press, 1977; Shaw Stanford J., *The Ottoman Census System and Population, 1831-1914*, IJMES, 1978, № 9, էջ 325-338.

<sup>4</sup> Gürün Kamuran, *The Armenian File: The Myth of Innocence Exposed*, Nicosia and London: K. Rustem and Brother and Weidenfeld and Nicolson, 1985.

<sup>5</sup> Karpat Kemal H., *Ottoman population 1830-1914: Demographic and Social Characteristics*, Wisconsin, The University of Wisconsin Press, 1985.

<sup>6</sup> McCarthy Justin, *Muslims and Minorities. The Population of Ottoman Anatolia and the End of the Empire*, N.Y. University Press, 1983.

<sup>7</sup> Համաձայն 1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանսին Հայկական միացյալ պատվիրակության կողմից ներկայացված հուշագրի՝ 1914 թ. Օսմանյան կայսրությունում բնակվում էր 2026000 հայ, որից Արևմտյան Հայաստանում (Տրապիզոնը և Կիլիկիան ներառյալ)՝ 1403000, կայսրության այլ մասերում՝ 440000, Պոլսում և եվրոպական մասում՝ 183000 (տե՛ս Հայկական հարցը հաշտութեան կոնֆերանսի առաջ, Երևան, 1919, էջ 32):

<sup>8</sup> St u Dündar Fuat, *Crime of Numbers. The Role of Statistics in the Armenian Question*, The State University of New Jersey-Rutgers, Transactions Publishers, 2010, xiv + 238 pp.

Աշխատանքի առաջին գլխում, որը վերնագրված է «Դիվանագիտություն և վիճակագրություն. Հայկական հարցի ի հայտ գալը (1878-1913)» (էջ 11- 65), հեղինակը ներկայացնում է Արևմտյան Հայաստանի բնակչության վիճակագրության դերը նշված ժամանակաշրջանի Հայկական հարցի հետ կապված դիվանագիտական գործընթացներում: Այդ առումով նա անդրադառնում է Հայկական հարցի գործընթացի շրջանակներում մեծ տերություններին վիճակագրություններ ներկայացրած երկու մարմինների՝ օսմանյան կառավարության և Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալների արժանահավատության խնդրին: Ինչպես Դյունդարն արդարացիորեն նշում է. «...ի հակառակ որոշ ուսումնասիրողների, այդ թվում՝ Քեմալ Կարպատի և Ջասթին ՄաքՔարթիի պնդումների, հայ բնակչության վերաբերյալ օսմանյան վիճակագրական տվյալները ոչ ամբողջությամբ են վստահելի»: Հեղինակը փաստում է, որ օսմանյան իշխանությունները մարդահամարներ էին անցկացնում ոչ միայն զինվորագրվողների թիվը և կամ հարկերի չափը որոշելու, ինչպես պնդում են Ք. Կարպատն ու Ջ. ՄաքՔարթին, այլ նաև տեղական ինքնակառավարման մարմիններում մահմեդականների և ոչ մահմեդականների ներկայացուցչության մասնաբաժինը սահմանելու նպատակով: Այդ պատճառով օսմանյան կառավարությունը ձգտում էր վերահսկել վիճակագրական տվյալներն այն տեղերում, որտեղ ոչ մահմեդականները (հայերը) մեծամասնություն էին կազմում, թեև նրանք ամբողջ պետության մակարդակով փոքրամասնություն էին: Ուսումնասիրողը կարևորություն է տալիս այն հանգամանքին, որ, ի տարբերություն Ք. Կարպատի և Ջ. ՄաքՔարթիի պնդումների, օսմանյան իշխանությունները հաշվել և գրանցել են մահմեդականներին նաև ըստ իրենց էթնիկական ծագման հատկանիշի՝ թուրքեր, քրդեր, չերքեզներ և այլն: Վերոնշյալը թույլ է տալիս ուսումնասիրողին եզրահանգելու, որ օսմանյան իշխանությունները միջամտել են ինչպես թվերի հավաքման, այնպես էլ դրանց դասավորման համակարգի մեջ՝ համապատասխան իրենց սեփական քաղաքական շահերի (էջ 3):

Մինևույն ժամանակ Դյունդարը փորձում է վիճարկել Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալների արժանահավատությունը. ըստ հեղինակի՝ «հայերի կողմից ներկայացվող տվյալները ևս երբեմն հակասական էին» (էջ 2) և «ուռճացված»:

Մասնավորապես հեղինակը հակասություններ է տեսնում Գրիգոր Զոհրապի՝ 1913 թ. հրատարակած վիճակագրության<sup>9</sup> և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալների միջև՝ նշելով, որ թեև Զոհրապը պնդում է, որ տվյալները Հայոց պատրիարքարանին են, սակայն դրանք պատրիարքարանի տվյալների համեմատ ուռճացված են: Իր այս կարծիքը հեղինակը հիմնավորում է լոկ այն փաստարկով, որ իրեն չի հաջողվել գտնել որևէ փաստաթուղթ, որը կարող է վկայել Զոհրապի տվյալների վավերականության մասին (էջ 3): Իրականում Գրիգոր Զոհրապը 1913 թ. հրատարակած իր գրքում ընդամենը զետեղել էր Հայոց պատրիարքարանի կողմից լիազորված մարմնի՝ Ապահովության հանձնաժողովի՝ 1912 թ. վերջերին կազմած վիճակագրական աղյուսակները, որոնք բարենորոգումների հայկական նախագծի հետ միասին ներկայացվել էին մեծ տերությունների դեսպանների ուշադրությանը 1913 թ. սկզբներին Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ<sup>10</sup>:

Ընդհանրապես Դյունդարն աղոտ պատկերացում ունի Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից 1878-1914 թթ. անցկացված մարդահամարների և դրանց արդյունքում հավաքված վիճակագրական տվյալների մասին: Այսպես նա սխալմամբ համարում է, որ Գրիգոր Զոհրապի՝ 1913 թ. հրատարակած տվյալները<sup>11</sup> և սփյուռքահայ ուսումնասիրող Ռայմոն Գևորգյանի կողմից 1992 թ. կազմված վիճակագրությունը<sup>12</sup> Հայոց պատրիարքարանի նույն 1912 թ. կազմած վիճակագրության երկու տարբերակներն են, և այդ առու-

<sup>9</sup> Տվյալները զետեղված են «Հայկական հարցը փաստաթղթերի լույսի տակ» ֆրանսերեն լեզվով հրատարակված գրքում (Léart Marcel, La question Arménienne a la lumière des documents, Paris, Challamel, 1913):

<sup>10</sup> 1912-14 թթ. Հայկական հարցի վերաբացման շրջանում ստեղծված Ապահովության հանձնաժողովի աշխատանքներին Գրիգոր Զոհրապի մասնակցության մասին տե՛ս մասնավորապես Շարության Ա. Ս., Գրիգոր Զոհրապի օրագրությունները հայկական բարենորոգումների (1912-1914) վերաբերյալ, «Պատմա-բանասիրական հանդես», № 4, էջ 202-228:

<sup>11</sup> Ըստ Գ. Զոհրապի՝ 1912 թ. Օսմանյան կայսրությունում բնակվում էր 2,100,000 հայ (տե՛ս Léart Marcel, La question Arménienne a la lumière des documents..., էջ 62):

<sup>12</sup> Համաձայն Ռայմոն Գևորգյանի տվյալների՝ Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը Առաջին աշխարհամարտի նախօրյակին 1915-60 է (տե՛ս Kévorkian Raymond H., Paboudjian Paul B., Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide, Paris, Arhis, 1992, էջ 57-60):

մով հակասություններ տեսնում դրանց մեջ (էջ 145), մինչդեռ Ռայմոն Գևորգյանի վիճակագրությունը հիմնված է Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. կազմակերպած մարդահամարի ցուցակների ամփոփման վրա<sup>13</sup>:

Երկրորդ՝ «Պատերազմ, կոտորած և վիճակագրություն (1914-1918). Հայկական հարցի «վերջնական հանգուցալուծումը», գլխում (էջ 67-140) ներկայացվում է հայերի տեղահանության և բնաջնջման գործընթացը: Դյունդարը չի ժխտում օսմանահպատակ հայերի հետ տեղի ունեցածի ծրագրված բնույթը, սակայն նա դիտարկում է 1915-1917 թթ. Դեպքերը՝ որպես «ժողովրդագրական գործողություն», երիտթուրքերի «էթնիկական ճարտարագիտության» (ethnic engineering) քաղաքականության մի մաս: Ըստ հետազոտողի՝ երիտթուրքերի նպատակն էր ոչ թե արևմտահայության բնաջնջումը, այլ ամբողջ բնակչության համեմատ հայերի տեսակարար կշռի նվազեցումը: Նշենք, որ հեղինակը կարծես թե խուսափում է «ցեղասպանություն» բառերը օգտագործելուց<sup>14</sup>, նրա համար տեղի ունեցածը «1915-1917 թթ. կոտորածներ են» (էջ 5):

Դյունդարը գտնում է, որ երիտթուրքերի նպատակն էր ամբողջապես տեղահանել 1914 թ. ռուս-թուրքական բարեփոխումների ծրագիրն ընդգրկող տարածքի (Արևմտյան Հայաստանի վեց նահանգներ և Տրապիզոնի նահանգը) հայ բնակչությանը, մինչև 5%-ի իջեցնել Անատոլիայի (Փոքր Ասիայի) նահանգների, մինչև 2%-ի՝

---

<sup>13</sup> Մեր կողմից կատարված ուսումնասիրության մեջ, որի արդյունքներն ամփոփված են «Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին» աշխատանքում (Երևան, ՀՅԹԻ, 2015), ցույց է տրվել, որ 1878-1914 թթ. ընթացքում Պատրիարքարանի կողմից Արևմտյան Հայաստանն ամբողջությամբ ընդգրկող հինգ մարդահամարներ և հաշվառումներ են կազմակերպվել. 1-2) 1878-1880 թթ. և 1880-1881 թթ.՝ պատրիարք Ներսես Վարժապետյանի օրոք, 3) 1902 թ.՝ Մատաթիա Օրմանյանի պատրիարքության շրջանում, 4) 1912թ.՝ Հայկական հարցի վերաբաժան կապակցությամբ և 5) 1913-1914 թթ.՝ հայկական բարեփոխումների նախագծի շուրջ ընթացող զարգացումներին զուգահեռ: Առանձնակի տեղ է զբաղեցնում 1878 թ. Բեռլինի վեհաժողովին ներկայացված Արևմտյան Հայաստանի բարեփոխումների հայկական նախագծին կից վիճակագրական աղյուսակը, որի հեղինակն է հայոց պատվիրակության անդամ Ստեփան Փափազյանը: Նա Արևմտյան Հայաստանի բնակչության թվաքանակի իր հաշվարկը կատարել է օսմանյան վիճակագրական տարբեր աղբյուրների հիման վրա:

<sup>14</sup> Ամբողջ շարադրանքի մեջ այն օգտագործված է լոկ մեկ անգամ, այն էլ ծանոթագրությունում (էջ 7):

Հայեպի նահանգի, և մինչև 10%-ի՝ այլ տարածքների հայ բնակչության տեսակարար կշիռը (էջ 2): Ըստ հեղինակի՝ Հայկական հարցի հանգուցալուծման երիտթուրքական քաղաքականությունն անցել է երեք փուլերով՝ 1) հայ «հեղափոխականների» ընդվզման «պատճառների» և «ոգու» ոչնչացումը 2) հայ ժողովրդի անհատական և ինստիտուցիոնալ ներկայացուցչական միջոցների ոչնչացումը և վերջապես 3) հայ բնակչության կիսաանապատային տարածքներ տեղահանելը և այնտեղ նրանց թվաքանակի նվազեցումն այն մակարդակի, որ հայերը «վիճակագրական տեսանկյունից» վտանգ չներկայացնեն (էջ 68):

Իրականում այն, որ Հայոց ցեղասպանության կազմակերպիչներն իրենց հակահայկական քաղաքականության մեջ պետք է առաջնորդվեին այլ՝ ավելի լուրջ նկատառումներով, քան հայ բնակչության թվաքանակի լոկ նվազեցումը մինչև 2,5, 5 կամ 10%-ը, կարող ենք տեսնել, երբ մենք թեկուզ թեթև հայացք ենք նետում 1914 թ. վերաբերող օսմանյան վիճակագրական տվյալների վրա: Ըստ այդ պաշտոնական տվյալների, որոնք պետք է դրված լինեին երիտթուրքերի վիճակագրական հաշվարկների հիմքում, արդեն իսկ նախքան տեղահանությունը Փոքր Ասիայի մի քանի նահանգներում հայ բնակչությունը ցածր էր կամ չէր գերազանցում 5%-ը (տե՛ս աղյուսակ 1): Այս հանգամանքը, սակայն, չի խանգարել երիտթուրքական իշխանություններին տվյալ տարածքների հայ բնակչությանը ևս ենթարկել տեղահանության ու կոտորածների:

Աղյուսակ 1<sup>15</sup>

Վարչական միավոր	Հայեր <sup>16</sup>	Ընդհանուր բնակչություն	Հայ բնակչության տեսակարար կշիռը, %
Ադրիանապոլիս	19773	631094	3,1
Անկարա	51576	953817	5,4
Կաստամունի	8959	767227	1,1
Կոնիա	12971	789308	1,6
Էսքիշեհիր	8592	152726	5,6
Նիզդե	4935	291117	1,7
Բիդա (Կալեի Սուլթանիե)	2474	165815	1,5

<sup>15</sup> 1914 թ. օսմանյան վիճակագրական տվյալները վերցրել ենք Քեմալ Կարապետի «Օսմանյան բնակչությունը 1830-1914 թթ. ժողովրդագրական և սոցիալական բնութագրիչներ» գրքից (տե՛ս Karpat Kemal H., *նշվ. աշխ.*, էջ 188, 189):

<sup>16</sup> Լուսավորչական և կաթոլիկ:

Բհարկե, չի կարելի ժխտել, որ երիտթուրքերը մեծ տեղ էին տալիս վիճակագրական տվյալներին արևմտահայության բնաջնջման գործողությունները կազմակերպելու գործում, սակայն վիճակագրությունը լոկ միջոց էր, գործիք՝ ցեղասպանության ընթացքը կառավարելու համար և ոչ երբեք նպատակ, ինչպես փորձում է ներկայացնել Ֆուաթ Դյունդարը: Բացի այդ, լոկ «ժողովրդագրական ճարտարագիտության» քաղաքականության տրամաբանությունից ելնելով, հնարավոր չէ բացատրել ո՛չ արևմտահայ հասարակական-քաղաքական և մշակութային ընտրանու ձերբակալությունները, արքայություն ու բնաջնջումը և ո՛չ էլ հայ զինվորականության ոչնչացումը, որոնք Հայոց ցեղասպանության գործողությունների մասն են կազմում:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին արևմտահայության թվաքանակի և Մեծ եղեռնին զոհ գնացած հայերի թվաքանակի հաշվարկներին է նվիրված Դյունդարի աշխատության երրորդ գլուխը, որը կրում է «Հանցագործության թիվը. հաշվելով հայկական մահերը» վերնագիրը (էջ 141-157): Նախքան տեղահանությունը հայ բնակչության թվաքանակը որոշելու հարցում ուսումնասիրողը սեփական որևէ հաշվարկ չի կատարում, այլ ընդունում է մի թիվ, որն առկա է վերջերս հայտնաբերված և հրատարակված թուրքական մի զեկուցագրում, որը կազմվել էր Հայոց ցեղասպանության առանցքային կազմակերպիչներից մեկի՝ Թալեաթի համար 1917 թ. և պահվել նրա արխիվում: Զեկուցագրում ներկայացվում է հայ բնակչության թվաքանակն ըստ Օսմանյան կայսրության վարչական միավորների, նախքան Հայոց ցեղասպանությունը՝ 1914-ին և հետո՝ 1917-ի դրությամբ: Զեկուցագիրը կազմած թուրք պաշտոնյան, մեկնաբանելով օսմանյան վիճակագրության տվյալը, համաձայն որի 1914-ին արևմտահայության թվաքանակը 1251785 շուրջ էր (առաքելադավան և կաթոլիկ հայեր), ծանոթագրության կարգով նշում է, որ այդ տվյալն իրականից ցածր է, քանի որ ոչ բոլոր հայերն են հաշվառվել, և իրական թիվը պետք է լինի 1500000-ի սահմաններում: Ահա այս տվյալը Ֆուաթ Դյունդարը և ընդունում է որպես մի թիվ, որը «վերջ է դնում հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վեճերին» (էջ 149):

Հիմնավորելու համար իր այս պնդումը՝ ուսումնասիրողը բերում է երկու փաստարկ. 1) տվյալը կազմվել է մի քաղաքական

կազմակերպության կողմից, որը ցանկանում էր վերջնականապես հանգուցալուծել Հայկական հարցը և այդ նպատակով բոլոր ջանքերն էր գործադրում՝ հայ բնակչության ճշգրիտ թվաքանակը պարզելու համար, և 2) այս տվյալը պատրաստվել էր ոչ թե հրապարակման նպատակով, այլ կազմակերպության ներսում ներքին օգտագործման համար (նույն տեղում):

Նախ, եթե անգամ ընդունենք Հայկական հարցի հանգուցալուծման և հայ բնակչության ճշգրիտ թիվը պարզելու միջև հեղինակի կողմից փաստվող կապը, ինչը տրամաբանական առումով այնքան էլ ակնհայտ չէ, նույնիսկ այդ դեպքում անհասկանալի է, թե ինչպես 1,5 միլիոն թիվը կարելի է համարել «ճշգրիտ»: Ընդհակառակը, տրամաբանությունը հուշում է, որ եթե 1917-ին կազմված թուրքական զեկուցագրի հեղինակն իր առջև նպատակ դրած լիներ ճշգրիտ թիվ պարզելու, ապա նա չէր սահմանափակվի ծանոթագրության կարգով տողատակում նշված մոտավոր կլորացված թիվ ներկայացնելով, այլ կփորձեր ավելի հիմնավոր և որոշակի հաշվարկներ կատարել, մասնավորապես, ինչպես արդեն նշեցինք, 1914 թ. օսմանյան վիճակագրական տվյալներով հաղորդվող օսմանյան հայերի թիվը բավականին որոշակի է՝ 1251785 շունչ:

Այսպիսով, ուսումնասիրողի կարծիքը, որ Թալեաթի համար պատրաստված այս զեկուցագրում զետեղված հաշվարկները վերջ են դնում Պոլսի Հայոց պատրիարքարանի այն պնդումներին, որ Մեծ եղեռնի նախօրյակին Օսմանյան Թուրքիայում շուրջ 2 միլիոն հայ է բնակվել, հիմնագուրկ է: Թալեաթի զեկուցագրում առկա տվյալն իրականում միայն մեկ բան է ապացուցում, այն է՝ իրենք իսկ օսմանյան պաշտոնյաները չէին վստահում արևմտահայության թվաքանակի վերաբերյալ օսմանյան պաշտոնական վիճակագրության հավաստիությանը, գտնում էին, որ տվյալը շտկման կարիք ունի: Մինևնույն ժամանակ օսմանյան տվյալները շտկելու նպատակով զեկուցագրում առաջարկվող շուրջ 20%-ով ավելացումը պետք է գնահատել որպես ոչ բավարար. նախքան տեղահանությունը և կոտորածները լուսավորչական և կաթոլիկ հայ բնակչության թիվը 1,5 մլն հաշվելը ևս թերհաշվառում է և իրականությունից ցածր:

«Պարզելով» Առաջին աշխարհամարտի նախօրյակին օսմանահպատակ հայերի թվաքանակը՝ 1,5 միլիոն, հեղինակն անցնում է իր առջև դրված հաջորդ նպատակին՝ որոշել Մեծ եղեռնին զոհ

գնացած հայերի թիվը: Դյունդարը նշում է, որ դա կարելի է անել հետևյալ մեթոդի օգտագործման միջոցով՝ հանելով 1918 թ. վերապրածների թիվն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրության հայ բնակչության թվաքանակից: Վերապրածների թիվը պարզելու համար Դյունդարը դասակարգում է նրանց երեք խմբերի՝ հայեր, որոնց «թույլ էր տվել մնալ Անատոլիայի տարածքում», տեղահանված հայեր և այլ երկրների տարածքում ապաստան գտած փախստական հայեր: Առաջին խմբի մեջ հեղինակը հաշվում է 281000 շունչ, այդ թվում՝ Կոստանդնուպոլսի, Զմյուռնիայի (Ադրին), Ադրիանապոլսի (Էդիրնե) և Կոնիայի հայեր, կաթոլիկների, բողոքականների, արհեստավորների և զինվորականների ընտանիքներ (շուրջ 75000), ինչպես նաև շուրջ 50000 իսլամացված հայեր՝ հիմնականում կանայք և երեխաներ: Երկրորդ խումբ կազմող Սիրիայի և Միջագետքի աքսորակայաններում վերապրած հայերի թիվն ուսումնասիրողը հաշվում է շուրջ 300000: Երրորդ՝ փախստականների խմբի թվաքանակը, ըստ հեղինակի, 255000 է: Հանելով իր կողմից արդեն իսկ որոշված 1,5 միլիոն թվից 1918 թ. դրությամբ վերապրածների թիվը՝ 836000՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ Մեծ եղեռնին զոհ է գնացել 664000 հայ (էջ 151):

Ինքնին պարզ է, որ գոհերի այս թիվն իրականության հետ որևէ կապ չունի, քանի որ հիմնավորապես սխալ է մուտքային տվյալը՝ հայ բնակչությունը նախքան Առաջին աշխարհամարտը 1,5 միլիոն շունչ հաշվելը: Դրա հետ մեկտեղ լուրջ հարցեր է առաջացնում հեղինակի մոտեցումը, որը պատերազմի նախօրյակին հայ բնակչության թվաքանակի որոշման համար իր հաշվարկների հիմքում դնում է օսմանյան տվյալները, սակայն վերապրածների թվաքանակը հաշվարկելու համար լայնորեն օգտվում է հայկական և արևմտյան տվյալներից: Այսպես, իրականությանը մոտ է Այսրկովկասում ապաստանած հայ փախստականների թիվը շուրջ 255000 հաշվելը, սակայն հեղինակը, գուցե, տեղյակ չէ, որ այդ թվի կեսից ավելին (շուրջ 150000 շունչ) կազմում են Վանի նահանգից գաղթած հայերը<sup>17</sup>: Այս վավերական թիվը ևս մեկ անգամ ապացու-

<sup>17</sup> Տե՛ս Կիրակոսյան Ջ. Ս., *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը*, Երևան, «Հայաստան» հրատ., էջ 43:



ցում է օսմանյան պաշտոնական վիճակագրության՝ իրականության հետ որևէ աղերս չունենալու բնույթը, քանի որ, ըստ օսմանյան տվյալների, իբր 1914 թ. Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակը 67792 շունչ էր<sup>18</sup>:

Ուսումնասիրությունը եզրափակող «Որոշ դիտարկումներ» վերտառությամբ գլուխը (էջ 157-172) ըստ էության վերջաբանի դեր է կատարում: Դյունդարն ավարտում է իր ուսումնասիրությունը հետևյալ տողերով. «Անգամ այսօր վիճակագրությունը անխուսափե-

---

Համաձայն Գովկասի Հայոց բարեգործական ընկերության լիազոր Ալեքսանդր Շարաֆյանի տվյալների՝ 1916 թ. հունվարի դրությամբ Ռուսական կայսրության տարածքում ապաստանած արևմտահայ փախստականների թիվը 229293 էր, այդ թվում Բասենի բնակիչները՝ 18910 հոգի, Բիթլիսի, Մշո, Բայազետի գավառի և Վանի նահանգի բնակիչները՝ շուրջ 170000, Վանի նահանգի արևելյան և Պարսկաստանի արևմտյան շրջանների բնակիչները՝ 18055 հոգի, ինչպես նաև Պարսկաստանում ապաստանած Վանի նահանգի գաղթականները՝ մոտ 10000 և 3,500 որբ: Նույն աղբյուրում նաև նշվում էր, որ 1915 թ. հուլիսին Վան-Վասպուրականի հայ բնակչության գաղթի ժամանակ մահացել էր մոտ 20000 հոգի (տե՛ս «Հայ գաղթականներ. հունվար 1916 թ.» հոդվածը «Համբավաբեր» շաբաթաթերթում (*«Համբավաբեր»*, հասարակական-գրական շաբաթաթերթ Գովկասի Հայոց բարեգործական ընկերության, 3 հունվարի, 1916 թ., թիվ 2):

1919 թ. հայկական պատվիրակության կողմից Փարիզի հաշտության կոնֆերանսին ներկայացրած հուշագրում որպես հանրահայտ իրողություն նշվում էր, որ Վանի վիլայեթի հայերի թիվը, որոնք ապաստան էին գտել Ռուսաստանում, 220000-ից ավելի էր (տե՛ս *«Հայկական հարցը հաշտութեան կոնֆերանսի առաջ, Թիֆլիս, տպ. «Աշխատաւոր», 1919, էջ 17*):

Հայ ուսումնասիրող Գ. Բադալյանը, հիմք ընդունելով 1917 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին անցկացված գաղթականների հաշվառման տվյալները, համաձայն որի Վանի նահանգից դուրս եկած հայ ընտանիքների թիվը 24127 էր, և, վանեցի հայերի տան մեծության միջին գործակիցը հաշվելով 8,8 շունչ, գտնում է, որ 1914 թ. Վանի նահանգում ապրում էր 210-212 հազ. հայ (տե՛ս Բադալյան Գ. Մ., Արևմտահայության թվաքանակի ճշգրտման ժողովրդագրական որոշ սկզբունքներ (Էրզրումի և Վանի վիլայեթների օրինակով), *«Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները» հայագիտական միջազգային համաժողովի (Երևան, 2003, 15-20 սեպտեմբեր) զեկուցումների դրույթներ*, Երևան, 2003, էջ 140): Տե՛ս նաև Թաթոյան Ռ.Ա., Վիճակագրական տվյալները Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1878-1914 թթ. (աղբյուրների համադրության և վերլուծության փորձ), *«Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր»*, №7, Եր., ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., 2003, էջ 65-79:

<sup>18</sup> Եթե անգամ հաշվի առնենք օսմանյան վիճակագրական տվյալները ճշտելու նպատակով Դյունդարի կողմից կիրառվող գործակիցը (20%), ապա ստացված թիվը՝ 81600, միննույնն է, գուրկ է վավերական լինելուց:

լիորեն կենտրոնական տեղ է զբաղեցնում Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի բոլոր ասպեկտների շուրջ ցանկացած բանավեճում» (էջ 171): Անշուշտ, հեղինակի պնդումը, որ Թալեաթի համար պատրաստված զեկուցագրի տվյալները վերջակետ են դնում արևմտահայության թվաքանակի վերաբերյալ վեճերին, հիմնագուրկ է, խիստ վիճելի են նաև հեղինակի բազմաթիվ այլ պնդումներ, սակայն, այնուամենայնիվ, գուցե հենց դա է «Թվերի ոճիրը» գրքի արժեքը: Որպես բանավեճի հրավիրող աշխատանք՝ այն կարող է նպաստել Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի և Մեծ եղեռնին զոհ գնացած հայերի թվի ճշգրտման բարդ և խճճված խնդիրների ուսումնասիրությանը, ինչպես նաև Բեռլինի կոնգրեսից հետո Օսմանյան պետության հակահայկական քաղաքականության՝ իր վիճակագրական և վարչաժողովրդագրական դրսևորումներում լուսաբանմանն ուղղված նոր աշխատանքների ի հայտ գալուն:

*ROBERT TATOYAN (ARMENIA)*

### **"THE CRIME OF NUMBERS": ABOUT SOME NEW TENDENCIES AIMED AT LESSENING OF THE NUMBER OF THE ARMENIAN GENOCIDE VICTIMS**

The article presents and analyzes some of the new tendencies in Turkish historiography aimed at lessening of the number of victims of the Armenian Genocide in the Ottoman Empire on the example of the monograph of the Turkish historian Fuat Dündar "Crime of Numbers: The Role of Statistics in the Armenian Question" (published in English in 2010).

In his book Dündar among other topics touches upon the issues of Armenian population of the Ottoman Empire on the eve of the Armenian Genocide and the number of victims of this terrible crime, devoting a separate chapter to its estimates. Dündar bases his calculations on the statistical figures found in recently published notebook of Talaat, one of the main organizers of the Armenian Genocide, and comes to the conclusion that on the eve of 1915 about 1.5 million Armenians lived in the Ottoman Empire. This number is an underestimate and significantly below of the actual number.

Then Dündar deduct from the number of the Armenian population of

the Ottoman Empire on the eve of the genocide, estimated by him as of 1.5 million, the number of survived Armenians in 1918, which he defines as 836,000, coming to the conclusion that as a result of the Armenian Genocide about 664.000 were killed – the number, which also doesn't correspond to reality.

*ИГОРЬ КРЮЧКОВ, НАТАЛЬЯ КРЮЧКОВА (РОССИЯ)*

## **ГЕРМАНСКИЙ ОККУПАЦИОННЫЙ РЕЖИМ НА СТАВРОПОЛЬЕ И ПРОБЛЕМА ОСТАРБАЙТЕРОВ**

Летом 1942 г., после неудачного наступления Красной армии под Харьковом части Вермахта начинают быстро продвигаться к Сталинуграду и Ростову на Дону. Форсировав Дон, немецкие части смогли в течение августа 1942 г. захватить большую часть территории Ставропольского и Краснодарского краев, восточные районы Сталинградской области и выйти к предгорьям Кавказа. Берлин очень рассчитывал на трудовые ресурсы Юга РСФСР в затянувшейся войне.

Трудовые ресурсы региона имели свои плюсы и минусы. К плюсам, безусловно, относились низкий процент городского населения и доминирование сельских жителей, которые воспринимались как менее подверженные «коммунистической пропаганде». Кроме этого в годы гражданской войны и последовавшей коллективизации сильно пострадало казачество и крестьянство региона, что собирались использовать в своих целях оккупационные власти при вербовке населения для работ в Третьем Рейхе. Представители народов Северного Кавказа традиционно воспринимались, как слабое звено в Советской системе, которое можно было легко переориентировать на сотрудничество с оккупантами.

Кроме этого, при относительно высокой по меркам СССР плотности населения можно было безболезненно для местной экономики перебросить часть трудовых ресурсов в Германию. Срыв эвакуации на Северном Кавказе привел к тому, что значительная часть трудоспособного населения, прежде всего представителей молодежи, оказалась на оккупированной территории.

Заняв Северный Кавказ, оккупационные власти начинают заниматься учетом трудовых ресурсов региона, опираясь при этом на под-

держку местных коллаборационистов, находившихся на должностях старост и бургомистров. Оккупационные власти, опираясь на свои представления о настроениях жителей региона, первоначально сделали ставку на добровольное привлечение местных жителей на работу в Германию. Поэтому через местные средства местной информации, распространение листовок, выступления специальных агитаторов и даже с привлечением кино, на жителей Северного Кавказа шел вал информации о том, как к ним несправедливо относилась Советская власть, и как им будет хорошо жить в Германии, если они туда уедут на работу. На территории Ставропольского края по радио ежедневно транслировалась передача «Германия зовет тебя!», в которой оккупационные власти убеждали местных жителей переезжать на работу в Германию<sup>1</sup>. Эта пропаганда была нацелена на дискредитацию политики Советской власти в регионе и в СССР в целом и на восхваление достижений Третьего Рейха. Причем пропаганда ориентировалась на каждый отдельный класс и даже пол. Обращаясь к рабочим, газета «Ставропольское слово» писала: «Нигде на земном шаре не было столь низкого жизненного уровня, как у советского рабочего... У советских рабочих отнимались дарованные им «сталинской Конституцией права»<sup>2</sup>. Не обошла стороной пропаганда и колхозное крестьянство, самый многочисленный слой жителей Северного Кавказа. «...Коммунистам был нужен покорный, не помнящий родства раб, беспрекословно выполняющий все распоряжения власти и довольствующийся самым малым. В такого раба они обратили крестьянина, загнав его в колхозы и лишив его какой бы то ни было заинтересованности в работе...», - отмечало все тоже «Ставропольское слово»<sup>3</sup>. Большое внимание оккупационные власти отводили привлечению на работу в Германию женщин и девушек, поэтому не случайно, что значительная часть пропагандистской информации была рассчитана именно на эту часть населения. Все обращения к женской половине были однотипны. В них рассказывалось о тяжелой доле женщин при сталинском режиме и полном игнорировании их политических и социальных права в СССР. Выход предлагался

---

<sup>1</sup> Государственный архив Ставропольского края (ГАСК). Ф.1368. Оп.1. Ед.хр. 142. Л.173.

<sup>2</sup> «Ставропольское слово». 1942. 6 сентября.

<sup>3</sup> Там же, 15 ноября.

довольно простой - это переезд на работу в Германию, где они в «семье европейских народов», будут создавать свое «счастливое будущее»<sup>4</sup>.

При этом подчеркивалось, что вся компания по привлечению местного населения на работу в Германию основана на строго добровольных началах и что не все трудоспособные «к сожалению» могут рассчитывать на свою «долю счастья» в Третьем Рейхе. Газета «Свободный Карачай» по данному поводу писала: «Запись на работу в Германию производится исключительно на добровольных началах. Работа предоставляется в промышленности, сельском хозяйстве и в домашнем хозяйстве... Специалисты и ремесленники, а также все рабочие и служащие, работающие в интересах Германии, регистрироваться на работу в Германию не могут, так как в их рабочей силе нуждается сама область...»<sup>5</sup>.

Следует подчеркнуть, что создаваемый у местного населения «образ Германии» и будущих условий работы и жизни остарбайтеров выглядел очень привлекательно. Подчеркивалась цивилизованность Германии и высокий уровень развития ее экономики, чем смогут воспользоваться остарбайтеры. «Получая хорошую заработную плату, германский рабочий имеет возможность жить в комфортабельной квартире со всеми удобствами, о которых в Советском Союзе никто и не мог помышлять, прекрасно одеваться и хорошо питаться. Каждый рабочий и каждый член семьи обычно имеют велосипед; некоторые рабочие семьи имеют собственные автомобили. Рабочий день в Германии продолжается 8 часов... При каждом заводе прекрасная столовая...», - так выглядела жизнь в Германии в одной из пропагандистских статей<sup>6</sup>.

В СССР всегда подчеркивалось, что действия этой пропаганды были незначительны, и что она в целом провалилась. Разумеется, во многом следует согласиться с этой точкой зрения. Действительно, оккупационные власти рассчитывали на приток «добровольцев» в массовом порядке, но этого не произошло.

Однако это только часть проблемы. Определенная часть советских граждан изъявила желание добровольно поехать на работу в Германию. Следует подчеркнуть, что уровень жизни на Северном

---

<sup>4</sup> «Пятигорское эхо». 1942. 11 ноября.

<sup>5</sup> Свободный Карачай. 1942. 20 декабря.

<sup>6</sup> Пятигорское эхо. 1942. 28 ноября.

Кавказе, как и в остальной части СССР, был действительно на низком уровне. На Северном Кавказе в 1932-1933 гг. свирепствовал ужасный голод, который привел к смерти тысяч чел., в некоторых районах голод продолжался до 1935 г. На территории Северного Кавказа в годы коллективизации создается несколько специальных зон, где репрессированные крестьяне были лишены даже элементарных прав. Отсюда некоторые советские граждане поддались на уговоры германской пропаганды. Архивные материалы показывают, что советские граждане ехали в Германию ввиду тяжелого материального положения, в котором они оказались в годы войны<sup>7</sup>. Разговоры о возможности увидеть другие страны или, заработав значительные деньги, вернуться на родину, заставили незначительную часть жителей Северного Кавказа записаться в число добровольцев, подлежащих отправке на работу в Германию.

С конца 1942 г. на Северном Кавказе начинает проводиться насильственная отправка местных жителей от 17 до 40 лет в Германию. Не раз оккупанты запугивали местных жителей тем, что если они поедут в Германию добровольно, то они получают обещанные льготы. В случае отказа это будет сделано в принудительном порядке, и тогда уже оstarбайтеры не могут претендовать на хорошие условия работы и содержания. Об этом в частности говорил офицер немецкой армии Ратц главному врачу г.Пятигорска Алецкому. После этих запугиваний оккупанты смогли завербовать 40 врачей Пятигорска для выезда в Германию<sup>8</sup>. По приказу бургомистра г.Пятигорска Орлова, все горожане, подходившие для вывоза в Германию, были зарегистрированы. Сотрудники биржи заранее запугивали людей, что хотят они этого или не хотят их все равно вывезут в Германию. Но если они это сделают добровольно, то оstarбайтеры смогут рассчитывать на хорошее отношение к ним<sup>9</sup>.

Условия перевозки оstarбайтеров были тяжелые. 4 декабря 1942 г. из Пятигорска отправляется в сторону Ростова на Дону первый эшелон с оstarбайтерами в количестве 800 чел. Людей разместили в товарных вагонах по 40-43 чел., вагоны не имели нар, поэтому людям приходилось спать на полу, вагоны не отапливались<sup>10</sup>. Отправка вто-

---

<sup>7</sup> ГАСК. Ф.1368. Оп.1. Ед.хр. 142. Л.36.

<sup>8</sup> Там же, л. 174.

<sup>9</sup> Там же, л. 173.

<sup>10</sup> Там же, л. 174.

рого эшелона из Пятигорска не состоялась из-за стремительного наступления Красной армии.

Быстрое отступление германской армии с Северного Кавказа в январе – феврале 1943 г. сорвало планы Берлина по дальнейшему вывозу с территории региона рабочей силы. По данным устоявшимся в современной российской историографии за август 1942 - январь 1943 гг. с Дона и Северного Кавказа было вывезено в качестве оstarбайтеров более 93 тыс. чел., в том числе из Краснодарского края 48464 чел., Ростовской области 40910 чел., Ставропольского края 1985 чел. и Северо-Осетинской АССР 1659 чел.<sup>11</sup> Правда, с подсчетом оstarбайтеров вывезенных за пределы региона возникло несколько проблем.

Сразу после освобождения Северного Кавказа летом 1943 г., проводится первый подсчет оstarбайтеров, вывезенных из региона. Районные и городские комиссии по установлению последствий оккупации на основании заявлений граждан и собственных данных пришли к выводу, что с территории современного Ставропольского края, Карачаево-Черкесской, Чеченской республик в Третий Рейх было вывезено 990 чел., в том числе из г.Ставрополя 83 чел., Апанасенковского района 22 чел., Черкесской АО 98 чел.<sup>12</sup>, Буденовского района 10 чел., Георгиевского района 67 чел., Гофицкого района 7 чел., Горячеводского района 10 чел., Наурского района 306 чел.<sup>13</sup>, Нагутского района 20 чел., Либнехтовского района 13 чел., Ново-Александровского района 102 чел., Спицевского района 35 чел., Шпаковского района 12 чел.<sup>14</sup> Однако это были неполные данные, в частности, здесь отсутствовали сведения по региону Кавказских Минеральных Вод.

Проведенный анализ списков оstarбайтеров показывает, что основную часть вынужденных рабочих составляли женщины, но в этом правиле находились и свои исключения. Так из 12 оstarбайтеров, вывезенных из Шпаковского района все оказались мужчинами, такая же ситуация наблюдается в Горячеводском районе, где все 10, оstarбайтеров также являлись мужчинами. Все 10 оstarбайтеров из Буденов-

---

<sup>11</sup> Полян П.М. :Жертвы двух диктатур. Оstarбайтеры и военнопленные в Третьем Рейхе и их репатриация”. М., 1996. С.368.

<sup>12</sup> В настоящее время часть Карачаево-Черкесской Республики.

<sup>13</sup> В настоящее время входит в состав Чеченской Республики.

<sup>14</sup> ГАСК. Ф.1368. Оп.1. Ед. хр. 8. л. 6-7.

ского района были мужчины, вывезенные из с.Прасковья, 22 оstarбайтера из Апанасенковского района (5 чел. из с.Киста и 17 чел. из с. Малая Джалга) являлись мужчинами. Основную массу оstarбайтеров составляли лица 1924-1927 годов рождения. В то же время это не исключало попадание в категорию оstarбайтеров граждан, относившихся к среднему поколению и старше. В Шпаковском районе возраст некоторых оstarбайтеров в 1942 г. составлял 50, 55, 57 лет. Такая же ситуация наблюдается в Ставрополе и в других районах края. Примерно половина оstarбайтеров уезжало в Третий Рейх целыми семьями. В Ставрополе средний размер вывезенной семьи составлял 3 чел. В сельских районах этот показатель был выше. Из Лысогорского и Крымгиреевского сельских советов уезжали семьи по 4-6 чел., то есть уезжали родители вместе со своими детьми<sup>15</sup>. Все оstarбайтеры из Наурского района являлись жителями станицы Ищерская (305 чел.), практически все они выехали в составе семей от 2 до 8 чел.

Станица Ищерская дала самый высокий показатель оstarбайтеров по Северному Кавказу в соотношении к общей численности населения. Это обстоятельство не могло не привести к началу официального расследования случившегося. По данным властей причиной столь большого числа оstarбайтеров из Ищерской стало то обстоятельство, что станица оказалась практически на линии фронта, поэтому немцы всех оstarбайтеров угнали принудительно<sup>16</sup>. Но это не совсем соответствует действительности. Безусловно, часть оstarбайтеров из Ищерской выехала в Третий рейх по принуждению. Однако часть жителей станицы покинуло ее добровольно. Основную часть жителей Ищерской составляли терские казаки, которые очень сильно пострадали от гражданской войны и коллективизации. Терские казаки стали одной из первых групп населения России, подвергшейся массовым репрессиям. Против терских казаков большевики весьма охотно использовали и окружающих их горцев. Поэтому недовольство Советской властью наряду с активной агитацией оккупационных властей привело к добровольному отъезду части терских казаков из Ищерской в Третий Рейх.

Потенциально большое число оstarбайтеров должен был дать Апанасенковский район, где в начале 30-х гг. в период начала сплош-

---

<sup>15</sup> Там же, л. 21-22.

<sup>16</sup> Там же, л. 1.



ной коллективизации создаются специальные зоны, куда было переселено несколько тысяч так называемых кулаков, люди которые потеряли все свое имущество и которые были практически полностью лишены всех политических и социальных прав. Однако район дал всего 22 оstarбайтера, даже с учетом приуменьшения этой цифры, мы не наблюдаем массового отъезда жителей района в Германию и Австрию. Это можно объяснить несколькими причинами. Во-первых, патриотизмом жителей района, во-вторых, его близостью к театру боевых действий, что не позволяло оккупантам проводить в районе активную пропаганду.

Следует подчеркнуть, что в силу быстрого наступления Красной армии и загруженности Ростовского железнодорожного узла, оккупационная администрация не успела вывезти около 12 тыс. оstarбайтеров, подготовленных для отправки в Третий Рейх<sup>17</sup>. Только в Благодарненском районе на местной бирже труда были составлены списки на вывоз в Германию 1800 чел.<sup>18</sup>, но их не успели вывезти.

Цифра в 990 оstarбайтеров в официальных отчетах продержалась до весны 1945 г., когда «Ставропольская краевая комиссия по установлению и расследованию злодеяний немецко-фашистских захватчиков и их сообщников» заявила, что с территории Ставропольского края в «немецкое рабство» было угнано 1986 оstarбайтеров<sup>19</sup>. Эта численность оstarбайтеров и утвердилась в историографии. Однако она не совсем соответствует действительности. Если речь идет о границах Ставропольского края, существовавших в 60-80-е гг., то отсюда следует вычесть 305 чел. из ст.Ищерской (60-80-е гг. станица входила в состав Чечено-Ингушской АССР), таким образом, получается 1680 чел. До наших дней вокруг численности оstarбайтеров на Ставрополье возникает путаница и неточности. Некоторые историки по-прежнему ошибочно определяют численность оstarбайтеров в крае в 990 чел.<sup>20</sup> Даже появляются материалы, где в это число оstarбайтеров входят только

---

<sup>17</sup> Полян П.М. «Жертвы двух диктатур. Оstarбайтеры и военнопленные в Третьем Рейхе и их репатриация». М., 1996. С.98.

<sup>18</sup> ГАСК. Ф. 1368. Оп.1. Ед.хр. 7. л. 11.

<sup>19</sup> Там же, Ф. 1852. Оп. 12. Ед.хр. 85. л. 67.

<sup>20</sup> Бочкарева З.В. «Проблема вынужденной и добровольной эмиграции в годы великой отечественной войны. Проблемы беженцев и вынужденных переселенцев на Северном Кавказе». Ставрополь, 2003. С.81.

советские граждане, угнанные из г.Ставрополя<sup>21</sup>. Такого рода заявления не выдерживают никакой критики.

ՕՐԵՆՔՆԵՐԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԳՐԱՎՎԱԾ (ՇԱՐԺԱԿԱՆ ԵՎ  
ԱՆՇԱՐԺ) ԻՆՉՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, 1915 – 1928 ԹԹ.**

Գիտաշխատությունը կը նպատակադրէ Օսմանեան կայսրության ու Հանրապետական Թուրքիայի տարածքներուն վրայ 1915-1930 թուականներուն որդեգրուած հայերու տեղահանման ու անոնց անշարժ ու շարժական գոյքերու՝ «Լքեալ Գոյքեր»ու վերաբերող օրէնքների վերլուծությունը կատարելու զանոնք նկատի ունենալ իբրեւ ցեղասպանությունը փաստող տուեալներ: Հարցը կը վերաբերի այն իրողութեան, որ տարագրությունը ու իրերի գրաւումը, ըստ տուեալ օրէնքներուն, ժամանակաւոր բնոյթ կը կրէին, մինչդեռ իրականութեան մէջ այդ «ժամանակաւոր» բնոյթը հիմնուած էր սուտի մը վրայ: Այլապէս ինչպէ՞ս կարելի է բացատրել անոնց մնայունի վերածման բնոյթը: Աւելի՛ն, նշեալ օրէնքները, որոնք փաստացիօրէն հրապարակուած են ու հետեւաբար անկարելի է անոնց գոյությունը ժխտել թրքական կողմէն, ցոյց կու տան, որ անոնք հիմնովին կը հակասեն Ցեղասպանութեան Կոնվենցիայի երկրորդ պարբերութեան հինգ կետերէն երրորդը եւ այդ իմաստով ալ ապացոյց կը դառնան ցեղասպանութեան փաստագրման: Աշխատությունը ուղղուած է միջազգային օրէնքի ու ցեղասպանութեան մարզի մասնագետներուն, որոնք պիտի զբաղուին Հայոց ցեղասպանութեան իրաւական փաստագրման հարցով:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԸ

XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունը տնտեսական և քաղաքական խոր ճգնաժամ էր ապրում: Հաճախակի էին դարձել հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները: Թուրքական հասարակությունում առաջացել էին ուժեր, որոնք ցանկանում էին երկիրը դուրս բերել ծանր կացությունից և ամեն գնով պահպանել կայսրությունը: Այդ ուժերից էր 1889թ. կազմակերպված «Իթթիհաթ վե Թերաքքի» («Միություն և առաջադիմություն») կուսակցությունը, որը գլխավորում է հակասուլթանական շարժումը երկրում<sup>1</sup>:

1907թ. դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցավ Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ Համաժողովը: Երիտթուրքական և դաշնակցական կուսակցությունները, արաբական, հրեական, ապա մակեդոնական կոմիտեները համաձայնության եկան համատեղ ջանքերով մինչև 1909 թվականը զինված ապստամբությամբ տապալել համիդյան վարչակարգը և Թուրքիայում հաստատել սահմանադրական կարգեր: Բայց հեղաշրջումը կատարվեց ծրագրված ժամկետից շուտ՝ 1908թ. հուլիսին: Շարժման կենտրոնը դարձավ Սալոնիկը, իսկ շարժիչ ուժը՝ թուրքական բանակը: Կարճ ժամանակում տեղի է ունենում պետական հեղաշրջում, երկրում հաստատվում են սահմանադրական միապետական կարգեր, որտեղ վճռական դեր էին խաղում երիտթուրքերը<sup>2</sup>: Սակայն շատ կարճ ժամանակահատվածում երիտթուրքական կառավարությունը բացահայտեց իր իրական դեմքը՝ շարունակելով սուլթան Համիդի վարչակարգի հաստատած քաղաքականությունն ավելի նենգ ու դաժան եղանակով՝ Հայկական հարցի լուծումը Հայոց ցեղասպանության միջոցով: Նրանց հանցավոր մտադրությունն ընկած էր

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Петросян Ю.А. “Младотурецкое движение (вторая половина XIX-начало XXвв.)”. М., 1971; Կիրակոսյան Ջ., Երիտթուրքական շարժում. ծագումը, ընթացքը // «Գարուն» (Ե.), 1972, № 3, էջ 88-92:

<sup>2</sup> Տե՛ս «Հայոց պատմություն»: Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար: Խմբ.՝ պրոֆ. Հր. Ռ. Միմոնյանի, Երևան, 2012, էջ 464:



պետական ողջ ապարատի քաղաքականության հիմքում:

1911թ. հունական Մալոնիկ քաղաքում կայացած գաղտնի ժողովում Թալեաթի, Էնվերի, Ջեմալի ղեկավարությամբ որոշում կայացվեց առաջիկա պատեհ առիթի դեպքում հայերին խափառ ոչնչացնել՝ Հայաստանն ամբողջությամբ գրավելու, ռուսական վտանգը վերացնելու և «Մեծ Թուրան» ստեղծելու պանթուրքիստական ծրագիրն իրականություն դարձնելու համար<sup>3</sup>:

XX դարում աշխարհում առաջինը հայ ժողովուրդը ենթարկվեց պետականորեն և մանրագին ծրագրված ցեղասպանության: Հիմնականում դրանով է Հայոց ցեղասպանությունը տարբերվում մինչ այդ համաշխարհային պատմության մեջ հայտնի զանգվածային կոտորածներից:

Մեկ այլ ոչ պակաս առանձնահատկություններից է, որ Հայոց ցեղասպանության նախապատրաստումը և իրականացումն ընթացան խիստ գաղտնիության պայմաններում: «Գաղտնիությունը»՝ որպես միջազգային հասարակությունից գաղտնի գործելակերպ, ևս ուղղակիորեն վկայում է թուրքական իշխանությունների կանխամտածված, և մանրագին ծրագրված ցեղասպան քաղաքականության և այն մասին, որ երիտթուրքական կառավարությունը լիովին գիտակցում էր իր քաղաքականության և ծրագրված հրեշավոր հանցագործության ողջ հետևանքները (հայ ազգաբնակչության ոչնչացումը, հայրենագրվումը, հայերի ունեցվածքի ապօրինի յուրացումը և այլն) և ցանկանում էր դրանց առաջացմանը (քրեագիտության մեջ դա բնորոշվում է որպես ուղղակի դիտավորություն):

Հայոց ցեղասպանության խիստ գաղտնիության պայմաններում իրականացրած հրեշավոր մտադրության և իրականացված մասսայական կոտորածների մասին են վկայում բազմաթիվ և բազմատեսակ պետական (թուրքական, գերմանական, ֆրանսիական, անգլիական, ռուսական) պաշտոնական գրազրույթությունները, արխիվային նյութերը, վերապրած ականատեսների վկայությունները և այլն:

Թուրքական կառավարության գաղտնի որոշումների, հրահանգների, կարգադրությունների և այլ «պաշտոնական փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Օսմանյան կայսրության պետական կառավարման բարձրագույն մարմինները, ինչպես Նա-

<sup>3</sup> Տե՛ս «Հայոց պատմություն», էջ 647:

խարարների խորհուրդը, այնպես էլ առանձին նախարարություններ, ակտիվորեն ներգրավված են եղել Հայոց ցեղասպանության նախապատրաստման աշխատանքներում: Այն եղել է ծանրագույն միջազգային հանցագործություն, որի պատասխանատվությունը կրում են ոչ միայն առանձին անհատներ, այլ նաև օսմանյան թուրքերի կողմից ղեկավարվող պետականությունը<sup>4</sup>:

Այս բոլորն աներկբա վկայում են, որ թուրքական կառավարության որոշումների և տեղական իշխանությունների կողմից դրանց անշեղ իրագործումը նախապես ծրագրված և մանրամասն մշակված հայատյաց քաղաքականության գործնական իրացումն էր՝ թուրքական ողջ պետական մեքենայի կողմից (վերից վար): Այստեղից էլ եզրակացություն. հայատյաց քաղաքականության և Հայոց ցեղասպանության՝ որպես ուղղակի դիտավորությամբ կատարված հրեշավոր հանցագործության սուրյեկտներն են՝ թուրքական կենտրոնական և տեղական իշխանությունները, պաշտոնատար անձինք, զինվորականությունը, ոստիկանությունը, իթթիհատականների հանցավոր կազմակերպությունները (Միություն և առաջադիմություն), ինչպես նաև ջարդերի անմիջական կատարողները: Հենց ցեղասպանության՝ որպես ծանրագույն հանցագործության բնույթ արտահայտվում է նրա դիտավորության ուղղվածության մեջ, որի էությունն այն է, որ այդ հրեշավոր հանցագործությունն իրականացվում է միմիայն պետական մակարդակով, նախօրոք մշակված հանցավոր ծրագրի շրջանակներում, որի հիմնական նպատակն է ոչնչացնել պատմականորեն ձևավորված ժողովրդին (ազգին) կամ նրա մի մասին (ինչպես հնարավոր կլինի՝ պայմանավորված արտաքին և ներքին գործոններով) և տիրել գոհի հայրենիքին, ունեցվածքին, պատմամշակութային ժառանգությանը և այլն:

Այդ է պատճառը, որ ցեղասպանությունը դասվում է միջազգային ծանրագույն հանցագործությունների շարքում, որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն:

---

<sup>4</sup> Ռուբեն Մաֆրաստյան, Թուրքական պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության նախապատրաստման մասին // Հայագիտությունը..., էջ 475:

## THE PROBLEM OF LEGAL LIABILITY FOR THE ARMENIAN GENOCIDE

The author of this scientific article considers in detail the historical fact of the massacres of Armenians in the Ottoman Empire - as crime against humanity and human rights. This monstrous and meticulously planned crime of the Turkish authorities is classified as genocide, i.e. an international crime. Therefore, the author of the article based on the examined facts and documents, reaffirms intended annihilation of Armenian people, and represents the types of legal liability for the Genocide of the Armenian people based on international legal acts.

*ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐԳԻԱ - ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ՈՒԺԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Վերջին շրջանում հաճախ է խոսվում Հայոց ցեղասպանության հարցը իրավական դաշտ տեղափոխելու մասին: 2015 թ. հունվարի 29-ին «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի» պաշտոնական հրապարակումով արձանագրվեց, որ մեկնարկում է հայ ժողովրդի միասնական պայքարը ոչ միայն Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչմանը հասնելու, այլև ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար, ինչը ենթադրում է ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի իրավական պահանջների թղթածրարի մշակում՝ դիտելով այն անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ<sup>1</sup>:

Հայոց ցեղասպանության հարցի հետ կապված Հայաստանը,

---

<sup>1</sup> <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/>

իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ, հիմնվելով թե՛ ՄԱԿ-ի կանոնադրության և թե՛ անմիջականորեն՝ Ցեղասպանության կոնվենցիայի դրույթների վրա, կարող է դիմել միջազգային դատական ատյաններին՝ և՛ իր ու Թուրքիայի միջև առկա վեճը լուծելու, և՛ որոշակի հարցերի, օրինակ՝ կոնվենցիայի դրույթների մեկնաբանման ու կիրառման, կամ էլ՝ ՄԱԿ-ի կառույցների՝ Գլխավոր ասամբլեայի կամ Անվտանգության խորհրդի միջոցով ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավաբար վճռի օրինականության և վավերականության հետ կապված խորհրդատվական եզրակացություն տալու խնդրանքով<sup>2</sup>:

Սակայն, գաղտնիք չէ, որ միջազգային իրավունքի և հատկապես նրա նորմերի կիրառման վրա լուրջ ազդեցություն ունեն աշխարհաքաղաքական գործընթացները, միջազգային հարաբերություններում ուժերի վերադասավորումները և այլն: Այդ իսկ պատճառով Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման միջազգային իրավական գործընթացը պետք է լրջորեն նախապատրաստված ու ապահովագրված լինի դրան նախորդող ու դրա հետ զուգահեռ տարվող քաղաքական գործընթացով:

Մեզանում տիրապետող է այն կարծրատիպային տեսակետը, թե Թուրքիան՝ որպես ՆԱՏՕ-ի անդամ, ԱՄՆ-ի ռազմավարական դաշնակից, աշխարհի 16-րդ տնտեսությունն ունեցող և Եվրամիության անդամության թեկնածու ու տարածաշրջանային կարևոր դերակատարություն ունեցող երկիր, փայլուն փոխշահավետ հարաբերություններ ունի համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոնների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Եվրամիության հետ: Տվյալ թեզից էլ բխեցվում է այն եզրահանգումը, թե նշված ուժային կենտրոնները ճնշումներ չեն գործադրի Թուրքիայի վրա և չեն հարկադրի վերջինիս ճանաչել ու դատապարտել Հայոց ցեղասպանությունը և քայլեր ձեռնարկել այդ հանցագործության հետևանքների հաղթահարման ուղղությամբ: Սակայն արագ փոփոխվող աշխարհում տեղի ունեցող վերջին զարգացումները պարզորոշ ցույց տվեցին, որ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Եվրամիության հետ Թուրքիայի երկկողմ հարաբերություններում առկա են որոշակի խնդիրներ, իսկ աշխարհաքաղաքական կարևոր հարցերում նկատվում է նրանց շահերի

---

<sup>2</sup> Մարության Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., 2014, էջ 286:

հակադրություն, ինչն է՛լ ավելի է սրում Թուրքիա-Ռուսաստան, Թուրքիա-ԱՄՆ և Թուրքիա-Եվրամիություն առանց այդ էլ լարված հարաբերությունները:

Ներկայումս Թուրքիան իր արտաքին քաղաքականության նոր կուրս է հռչակել նեոսամանականությունը, ինչը ենթադրում է նախկին Օսմանյան կայսրության և դրան հարակից տարածքների, այսինքն՝ Բալկանների, Հյուսիսային Աֆրիկայի, Այսրկովկասի, Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի նկատմամբ Անկարայի ազդեցության հաստատում<sup>3</sup>: Թուրքիայի աշխարհաքաղաքական նման ամբիցիաները, ինչպես նաև միջազգային հարաբերություններում ազդեցիկ դերակատար դառնալու նրա անթաքույց հավակնությունները մտահոգիչ ու անընդունելի են բոլոր վերը նշված ուժային կենտրոնների համար:

Թեև տնտեսական ու էներգետիկ ոլորտներում Ռուսաստանն ու Թուրքիան ունեն սերտ համագործակցություն և առևտրաշրջանառության մեծ ծավալներ, այդուհանդերձ անցած տարիներից նրանց քաղաքական հարաբերություններում կուտակված բազմաթիվ խնդիրներն առաջացրել են փոխադարձ անվստահության մթնոլորտ, ինչը բացասաբար է անդրադառնում նաև նշված ոլորտների վրա:

ԽՍՀՄ փլուզումից հետո Անկարան սկսեց ակտիվություն դրսևորել հետխորհրդային տարածքում թուրքախոս ժողովուրդների շրջանում իր դիրքերն ու ազդեցությունը հաստատելու նպատակով<sup>4</sup>: Անկարայի նեոպանթուրանական նկրտումները չսահմանափակվեցին միջինասիական հանրապետություններով, Այսրկովկասով ու Ղրիմով, որոնք Ռուսաստանի կենսական շահերի տարածքներ էին համարվում, այլ ներթափանցեցին նաև Ռուսաստանի տարածք՝ Հյուսիսային Կովկաս և Թաթարստան<sup>5</sup>:

2008 թ. ռուս-վրացական հնգօրյա պատերազմից հետո Թուրքիան առաջ քաշեց «Կովկասում կայունության և համագործակցության պլատֆորմը», որով նախատեսվում էր ստեղծել կայուն միաս-

---

<sup>3</sup> Davutoğlu A., Turkey's Foreign Policy Vision: An assessment of 2007, Insight Turkey, Vol. 10, No.1, p. 79.

<sup>4</sup> История Турции XX век. Н.Г. Киреев. Москва: ИВ РАН:, 2007, с. 352.

<sup>5</sup> См. Семедов С. «Основные аспекты современной политики Турции на Кавказе». «Вестник». М., ун-та. Сер. 18. Социология и политология. 2008. № 2. с. 29–52.

նական Կովկաս, որի երաշխավորը լինելու էին միայն Թուրքիան և Ռուսաստանը, բացառելով ԱՄՆ-ի և Եվրամիության մասնակցությունը<sup>6</sup>։ Իրականում այս ծրագիրը մեր տարածաշրջանում թուրքական ազդեցությունը մեծացնելու քողարկված նպատակ էր հետապնդում։ Թուրքական ծրագրի կենսագործումը Անկարային հնարավորություն կընձեռեր մասնակցելու նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացին, ինչն անընդունելի է ոչ միայն Հայաստանի, այլև Ռուսաստանի համար։

Թուրքիան ակտիվ մասնակցություն ունի Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի և Բաքու-Թբիլիսի-Ախալքալաք-Կարս երկաթգծի կառուցման ու գործարկման ծրագրերում, որոնք ակնհայտորեն ուղղված են ոչ միայն Հայաստանի, այլև Ռուսաստանի շահերի դեմ։

Որպես ՆԱՏՕ-ի անդամ՝ Թուրքիան ակտիվորեն մասնակցում է նաև Ռուսաստանի դեմ ուղղված ԱՄՆ-ի ծրագրերին։ 2011թ. սեպտեմբերին Անկարայի և Վաշինգտոնի միջև ստորագրվեց թուրքական տարածքում ամերիկյան «Պատրիոտ» հակահրթիռային պաշտպանության համակարգերի տեղակայման մասին համաձայնագիր<sup>7</sup>։

Ռուսաստանը և Թուրքիան սկզբունքային տարաձայնություններ ունեն նաև սիրիական ճգնաժամի կարգավորման հարցում։ Մոսկվայի համար Բ.Ասադը Սիրիայի օրինական նախագահն է, իսկ Անկարան նրան համարում է բռնակալ, որը պետք է հեռացվի իշխանությունից<sup>8</sup>։ Սիրիական ճգնաժամի հետ կապված ռուս-թուրքական հարաբերությունները շարունակեցին լարված մնալ, երբ 2014 թ. մարտի 21-ին «Ալ-Ղաիդա»-ի հետ կապեր ունեցող «Ջաբհաթ ալ-Նուսրա» և «Ահրար աշ-Շամ» ծայրահեղական խմբավորումների մի քանի հազարի հասնող զինյալները Թուրքիայի տարածքից ներխուժեցին Սիրիայի հայաբնակ Քեսաբի շրջան և գրավեցին Քեսաբն ու հարևան գյուղերը, իսկ մոտ 2000 հայեր հարկադրաբար տեղա-

---

<sup>6</sup> См. Сотниченко А. “Кавказский треугольник”: Турция-Иран-Россия.  
<http://www.csef.ru/index.php/ru/politica-i-geopolitica/project>

<sup>7</sup> См. Россия нейтрализует американскую ПРО в Турции,  
<http://www.km.ru/v-rossii/2013/06/06/otnosheniya-rossii-s-respublikami-byvshego-sssr/712627>

<sup>8</sup> См. Агаджанян М. “Россия - Турция: диалектика партнёрства”.  
<http://newsland.com/news/detail/id/1286370/>

փոխվեցին Լաթափա: Ռուսաստանը խստորեն դատապարտեց Քեսաբի վրա կատարված հարձակումը և խաղաղ բնակչության նկատմամբ կատարված հանցագործությունները՝ հստակ նշելով, որ պատմական հայկական անկլավի՝ Քեսաբի վրա ծանր հրետանին և տանկերը գործի են դրվել հենց Թուրքիայի տարածքից: Այնուհետև Ռուսաստանը պահանջեց, որ ՄԱԿ-ի ԱԽ-ում քննարկվի Քեսաբի իրավիճակը և սկզբունքային գնահատական տրվի այդ իրադարձություններին<sup>9</sup>:

Նշվածը ռուս-թուրքական հարաբերություններում առկա խնդիրների ու հակասությունների ոչ ամբողջական ցանկն է, որը կարելի է շարունակել:

Ինչ վերաբերում է թուրք-ամերիկյան հարաբերություններին, ապա երկու երկրները՝ որպես ՆԱՏՕ-ի գործընկերներ ու երբեմնի ռազմավարական դաշնակիցներ, կարևոր աշխարհաքաղաքական հիմնահարցերում ունեն տարբեր դիրքորոշումներ, որոնք վերածվել են խորացող հակասությունների: ԱՄՆ-ի և Թուրքիայի հարաբերություններում հակասությունների խորացման վրա ազդեցին Վաշինգտոնի գլխավորած կոալիցիայի ռազմական գործողությունները Իրաքում և դրա հետևանքով Թուրքիայի սահմանին կից Իրաքյան Քուրդիստանի ինքնավարության ստեղծումը, Իրանի միջուկային ծրագրի նկատմամբ Անկարայի ընդգծված դրական վերաբերմունքը և իր տարածքում իրանական ցածր հարստացված ուրանը վերամշակելու պատրաստակամությունը<sup>10</sup>, Չինաստանից հակահրթիռային համակարգեր ձեռք բերելու մտադրությունները<sup>11</sup>, սիրիական ճգնաժամը լուծելու Անկարայի ու Վաշինգտոնի մոտեցումների ակնհայտ տարբերություններն<sup>12</sup> ու այդ հարցում նրանց կողմից կատարվող քայլերը<sup>13</sup>, Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատ-

---

<sup>9</sup> Տե՛ս Դավությոլու. Թուրքիան բացել էր դռները Քեսաբի հայերի համար  
<http://www.azatutyun.am/content/article/25318585.html>

<sup>10</sup> ՏՄ. Ахмадинежад рекомендует Западу признать ядерный Иран,  
<http://expert.ru/2011/01/21/>

<sup>11</sup> ՏՄ. Евсеев В., Китайское ПРО для Турции – это сигнал, адресованный США,  
<http://www.politcom.ru/18603.html>

<sup>12</sup> ՏՄ. Премьер-министр Турции больше не хочет разговаривать с Обамой,  
<http://www.nakanune.ru/news/2014/7/24/22362062#sthash.JAOn3fwx.dpuf>

<sup>13</sup> Տե՛ս Hubbard B., Yeginsu C. After opening way to rebels Turkey is paying heavy price, <http://www.nytimes.com/2014/06/25>

ժամիջոցներին Անկարայի չմիանալն ու էներգետիկ ու տնտեսական ոլորտներում Մոսկվայի հետ հարաբերությունների սերտացման փորձերը<sup>14</sup> և այլն: Թուրք-իսրայելական հարաբերությունները սրելու Անկարայի հետևողական քայլերը հասկապես լուրջ գլխացավանք են դարձել Վաշինգտոնի համար, որը ստիպված է մեծ ջանքեր գործադրել իր երկու դաշնակիցներին՝ Թուրքիային և Իսրայելին հաշտեցնելու համար<sup>15</sup>: Ի դեպ, թուրք-իսրայելական հարաբերությունների սրման հետևանքով Իսրայելի կառավարությունը և ԱՄՆ-ի կառավարող վերնախավում ազդեցիկ դիրքեր ունեցող ծագումով հրեա գործիչներն ամերիկյան կառավարող էլիտայում սկսել են աշխատանքներ տանել Թուրքիայի դեմ և կասկածի տակ դնել Անկարայի՝ ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակից լինելը<sup>16</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ Թուրքիան 1995 թ. մտել է եվրոպական մաքսային միության մեջ և 1999 թ. դեկտեմբերից ԵՄ անդամության թեկնածու երկիր է, այդուհանդերձ, Թուրքիայի և Եվրամիության միջև առկա հակասությունները նույնպես խորանում են:

Եվրամիության ազդեցիկ երկրները՝ Ֆրանսիան և Գերմանիան, միանշանակ բացասական դիրքորոշում ունեն Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու հարցում: Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության մերժումն այդ կառույցի առաջատար երկրներն այսօր արդեն չեն պայմանավորում Թուրքիային ներկայացվող միայն ավանդական նախապայմաններով<sup>17</sup>: Եվրամիության երկրները լրջորեն մտահոգված են իրենց տարածք հարյուր հազարավոր թուրք ներգաղթյալների ներթափանցումով, որոնք Գերմանիայում դարձել են ոչ միայն տնտեսական, այլև ժողովրդագրական խնդիրների առաջացման պատճառ: Պարզ է, որ Թուրքիայի անդամակցության պարագայում թուրք ներգաղթյալների նոր հոսքեր կուղղվեն ԵՄ երկրներ, որոնք ուղղակի չեն կարողանա դի-

---

<sup>14</sup> См. "Турецкий гамбит" Москвы: шах и мат "Южному потоку", <http://www.nakanu-ne.ru/articles/19791#sthash.akxq4k4x.dpuf>

<sup>15</sup> См. Агаджанян М. Ссорятся Турция и Израиль, а страдают США, <http://www.politcom.ru/15450.html>

<sup>16</sup> См. Мурадян И. США – Турция – партнеры или противники? <http://novos-tink.ru/mir/54421.html#ixzz2ozvvsDb1>

<sup>17</sup> См. Гаджиев А.Г. Курдский вопрос в свете очередного ежегодного доклада Еврокомиссии о развитии Турции. Институт Ближнего Востока. <http://www.iimes.ru/rus/stat/2009/11-11-09a.htm>



մակայել դրա հետևանքով առաջացած նոր ժողովրդագրական ու տնտեսական ճգնաժամին: ԵՄ ազդեցիկ երկրներին մտահոգում են նաև Գերմանիայի չափ բնակչություն ունեցող Թուրքիայի անդամակցության հեռանկարները, ինչը Անկարային կառույցի քաղաքականության վրա ազդելու լայն հնարավորություններ կընձեռի:

Արտաքին խնդիրներից ԵՄ-ի կողմից միշտ առաջ է քաշվում Կիպրոսի խնդիրը, որը, լինելով Եվրամիության անդամ պետություն, չի ճանաչվում Թուրքիայի կողմից: Անկարան Կիպրոսի նկատմամբ իրականացնում է շրջափակման քաղաքականություն, իսկ թուրքերով բնակեցված կղզու հյուսիսային հատվածում շարունակում է պահել իր զինված ուժերը: Կիպրոսն իր հերթին կարող է օգտագործել և ամենայն հավանականությամբ կօգտագործի իր վետոյի իրավունքը, եթե բանը հասնի Թուրքիայի անդամակցությանը:

Արտաքին հարցերի շարքում Բրյուսելը երբեմն ներառում է նաև Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը՝ ելնելով Եվրախորհրդարանի կողմից դեռևս 1987 թ. հունիսի 18-ի «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևից<sup>18</sup>, որի դրույթները չեն կատարվում Անկարայի կողմից: 2000 թ. նոյեմբերի 15-ին Եվրախորհրդարանը «Թուրքիայի առաջընթացը Եվրամիության անդամակցության ճանապարհին» զեկույցի քննարկումից հետո ընդունեց հռչակագիր, որի 21-րդ կետով հատուկ ամրագրվում էր Հայաստանի հետ երկխոսություն սկսելու հարցը, որն ուղղված է լինելու բնականոն դիվանագիտական և առևտրային հարաբերությունների հաստատմանը և առկա շրջափակման վերացմանը<sup>19</sup>: Բրյուսելի կողմից նախաձեռնված հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացի՝ Թուրքիայի կողմից տապալումը նույնպես օգտագործվում է վերջինիս դեմ՝ Անկարային դիտելով որպես անվստահելի գործընկեր:

Թուրքական իշխանություններն արդեն հասկացել են ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում այդ կառույցում տիրող տրամադրությունները, և Անկարան Բրյուսելի հետ արդեն բա-

<sup>18</sup> St' u European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc. A2-33/87, [http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc\\_meeting/resolutions/1987\\_07\\_20.pdf](http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf)

<sup>19</sup> “Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества”. Сост., отв. ред., автор предисловия и комментария Ю.Г., Барсегов, т.2, ч. 1, М., 2993, с. 816.

ցահայտ առճակատման է գնում:

Ի հեճուկս ԵՄ-ի կողմից Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների՝ Անկարան ցուցադրաբար սկսեց հարաբերություններ բարելավել Մոսկվայի հետ: 2013 թ. սկզբին Էրդողանը հայտարարեց, թե Թուրքիան չի պատրաստվում հավերժ սպասել Եվրոպայի դռների առջև և սպառնաց, որ Թուրքիան կարող է անդամակցել Շանհայան կազմակերպությանը և նույնիսկ Մաքսային միությանը<sup>20</sup>:

Եվրոպական երկրների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բանաձևերի ընդունումը չափազանց ցավագին է ընդունվում Անկարայի կողմից, որը նախ փորձում է շանտաժի միջոցով կանխել այդ բանաձևերի ընդունումը, իսկ անհաջողությունից հետո այդ երկրներից հետ է կանչում իր դեսպաններին՝ լարվածություն ստեղծելով երկկողմ հարաբերություններում: Թուրքիային նյարդայնացնում է նաև որոշ եվրոպական երկրների՝ Շվեյցարիայի, Սլովակիայի, Հունաստանի և Կիպրոսի կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենսդրության ընդունումը, ինչպես նաև Ֆրանսիայում այդ ուղղությամբ կատարված քայլերը:

2015 թ. ապրիլի 12-ին՝ Սուրբ Պետրոսի տաճարում պատարագի ժամանակ, Հռոմի պապ Ֆրանցիսկոսը հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությունն անվանեց XX դարի առաջին ցեղասպանություն<sup>21</sup>: Թուրքիայի նախագահը վիրավորանքներով արձագանքեց Հռոմի պապի ուղերձին, ինչը հանգեցրեց մի շարք եվրոպական կառույցների ու Եվրամիության այլ երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերի ընդունմանը: Ապրիլի 14-ին Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բանաձև ընդունեց ԵԺԿ-ն, իսկ ապրիլի 15-ին՝ Եվրախորհրդարանը: Չեխիան՝ ապրիլի 14-ին, Ավստրիան՝ ապրիլի 21-ին, և Լյուքսեմբուրգը՝ մայիսի 5-ին իրենց խորհրդարանների ընդունած բանաձևերով միացան Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած երկրների շարքին: Ապրիլի 23-ին Գերմանիայի նախագահ Յոախիմ Գաուկը Բեռլինի Մայր տաճարում

<sup>20</sup> См. Расов С., Турция предложила создать аналог Евросоюза, <http://www.polit-com.ru/9562.html>

<sup>21</sup> Տե՛ս <http://www.azatutyun.am/content/article/26951506.html>

կրկնեց Հռոմի պապի ձևակերպումը՝ Հայոց ցեղասպանությունն անվանելով XX դարի առաջին ցեղասպանություն<sup>22</sup>: Այսպիսին էր Եվրոպայի պատասխանը Հայոց ցեղասպանության հարցի հետ կապված կաթոլիկ աշխարհի հոգևոր առաջնորդին Էրզրոմի հասցրած վիրավորանքներին ու սպառնալիքներին:

Վերը նշվածի լույսով միանգամայն տրամաբանական պետք է համարել, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին՝ 2015 թ. ապրիլի 24-ին, Ռուսաստանի, Եվրամիության երկու երկրների՝ Ֆրանսիայի ու Գիպրոսի, ինչպես նաև այդ կառույցի անդամության թեկնածու Սերբիայի նախագահները ԱՄՆ-ի պաշտոնական պատվիրակության ներկայությամբ Ծիծեռնակաբերդում հնչեցրած իրենց ելույթներում, ևս մեկ անգամ դատապարտելով այդ հանցագործությունը, կրկին ուղերձներ հղեցին Անկարային<sup>23</sup>:

Ինչպես տեսնում ենք, նշված ուժային կենտրոնների հետ Անկարան ներկայումս ունի բավական բարդ ու լարված հարաբերություններ: Այսպիսով, բարենպաստ պայմաններ են ստեղծվել, որ համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոնների ու Թուրքիայի միջև խորացող հակասություններն օգտագործվեն վերջինիս դեմ: Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների ու Սփյուռքի լոբբիստական կառույցների ներդաշնակ ու համաձայնեցված աշխատանքի դեպքում հնարավոր կլինի այդ ուժային կենտրոններում Հայոց ցեղասպանության հիմնահարցում ձևավորել այնպիսի մտայնություն, որ նրանք եթե նույնիսկ հենց իրենք այդ հարցով անմիջական ճնշում չգործադրեն Թուրքիայի վրա, ապա սատարեն Հայաստանի ջանքերին, երբ վերջինս պատրաստ կլինի միջազգային դատական ատյանում իրավական գործընթաց նախաձեռնելու Թուրքիայի դեմ՝ Հայոց ցեղասպանության դատապարտման ու այդ հանցագործության հետևանքների հաղթահարման հարցով:

Քաղաքական ուղղությամբ տարվող աշխատանքներում կարևոր տեղ պետք է հատկացվի ցեղասպանության հանցագործությունից տուժած ժողովուրդների խախտված իրավունքների վերա-

<sup>22</sup> Տե՛ս [http://arka.am/am/news/politics/germania468\\_1915\\_/#sthash.zpp0YdcM.dpuf](http://arka.am/am/news/politics/germania468_1915_/#sthash.zpp0YdcM.dpuf)

<sup>23</sup> Տե՛ս Հայաստանի, Սերբիայի, Գիպրոսի, Ֆրանսիայի և Ռուսաստանի նախագահները ելույթ ունեցան Ծիծեռնակաբերդում, <http://www.azatutyun.am/content/article/26976030.html>

կանգնման պայքարի ընդհանուր ճակատի ձևավորմանը, ինչպես նաև այդ պայքարում ազդեցիկ դաշնակիցների ներգրավմանը, ինչը զգալիորեն կբարձրացնի տարվող աշխատանքների արդյունավետությունը և հաջողության հասնելու հավանականությունը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում այս ուղղությամբ արդեն ձեռք են բերվել որոշակի հաջողություններ: Մեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի լիագումար նիստում կոնսենսուսով ընդունվեց Հայաստանի ներկայացրած բանաձևը, որով դեկտեմբերի 9-ը հռչակվեց ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի և արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր<sup>24</sup>: Մակայն ստացված արդյունքները դեռևս վաղ է բավարար համարել:

Ամփոփելով նշենք, որ նախ հարկավոր է հասնել նրան, որ խորհրդարանների կողմից ընդունված բանաձևերն ու հայտարարությունները վերածվեն օրենքների և այդպիսով պարտադիր դառնան տվյալ երկրների համար: Բացի այդ, անհրաժեշտ է շարունակել աշխատանքները ցեղասպանության ժխտողականությունը քրեականացնող օրենքների ընդունման ուղղությամբ: Հայկական լուրբիստական կառույցներն իրենց աշխատանքների թիրախ, բացի խորհրդարաններից, պետք է դարձնեն նաև գործադիր մարմինները, քաղաքական որոշումները նախապատրաստող փորձագիտական կառույցներն ու «ուղեղային կենտրոնները»: Անհրաժեշտ է հասնել նրան, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած երկրներն իրենց քաղաքականությամբ սատարեն Հայաստանին, երբ հասունանա Հայոց ցեղասպանության հայցը միջազգային դատարան ներկայացնելու պահը:

Այս առումով Հայաստանը, օրինակ, կարող է նաև կոչ անել Լոզանի պայմանագիրը ստորագրած երկրներին պահանջել Թուրքիայից կատարել այդ պայմանագրի 37–44-րդ հոդվածներով ստանձնած ոչ մահմեդական բնակչության իրավունքները պաշտպանելու պարտավորությունները, հակառակ դեպքում՝ սպառնալով դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարան:

Նշված ուժային կենտրոններն արդեն իսկ Հայոց ցեղասպա-

---

<sup>24</sup> St' u <http://civilnet.am/2015/09/12/un-general-assembly-adopts-armenia-resolution-on-genocide/#.Vhl7vm6den8>

նության հարցն օգտագործում են իրենց շահերին ու նպատակներին հասնելու համար, ուստի անհրաժեշտ է, որ մենք մեր հաշվենկատ ու շրջահայաց քայլերով փորձենք օգտվել շահերի համընկնման հանգամանքից և Թուրքիայի վրա ավելացող ճնշումն ուղղորդենք դեպի ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնումը:

*ARMEN MARUKYAN (ARMENIA)*

### **POSSIBILITIES OF CONSIDERATION OF THE QUESTION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE CONTEXT OF TURKEY – WORLD FORCE CENTERS CONTRADICTIONS**

Long time prevailed stereotypic opinion that Turkey as NATO member state, the strategic ally of the USA, the country with the 16th economy, the influential actor of regional policy and the candidate for members of the EU, has mutually beneficial relations with such force centers of world politics as the USA, the EU and Russia. From this followed that conclusion that the mentioned centers of force of world politics won't put any pressure upon Turkey in a question of recognition, condemnation of the Armenian Genocide, and also taking measures to overcoming of consequences of this crime. However, the latest events distinctly showed that in the bilateral relations of Turkey with the USA, the EU and Russia there are essential contradictions. Disagreements and were outlined in approaches of Turkey and the world centers of force in the solution of the major problems of modern world politics. Ambitions of Ankara and collision of interests gradually develops into its antagonism with these centers of force that has to be used by the Armenian diplomacy and a lobby.

**ԵՒՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՏԻ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՀՈԼՈՎՈՅԹԸ  
ՃԱՆԱՉՈՒՄԷՆ ԴԵՊԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԻՒՆ**

Քննարկել Հայոց ցեղասպանության դատի հետապնդման խնդիրը և յատկապես անոր միջազգային ճանաչումն դեպի հատուցման պահանջատիրություն անցում կատարելու ռազմավարական խնդիրները և այդ երևոյթին հանդէպ Եւրոպայի երկիրներու և համաեւրոպական քաղաքականութեան հնարաւոր դիրքորոշումները՝ կ'ենթադրէ նախ և առաջ լոյս սփռել Եւրոպայի քաղաքական բեմին վրայ Ցեղասպանութեան ճանաչման դատի վերջին տասնամեակներու պատմութեան վրայ: Այսինքն՝ մեր տեսադաշտին մէջ ընդգրկել ցարդ տարուած աշխատանքը խորհրդարաններու, կառավարութիւններու, միջազգային կազմակերպութիւններու ոլորտէն ներս. արժևորել նաև եւրոպական հանրային կարծիքին մէջ տեղի ունեցած տեղաշարժերը և հասկնալ սահմանափակումները այս մարզին մէջ:

Չափազանցութիւն պիտի չըլլայ հաստատել, որ 1970-ական թուականներուն Եւրոպայի քաղաքական բեմին վրայ Հայոց ցեղասպանութեան հարց արծարծելը համազօր էր ընդհանուր մոռացութենէն վերակենդանացնելու մարդկութեան դէմ ոճիր մը, որ շատ կարճ ժամանակ՝ 1918-էն 1920, քաղաքական ոլորտ մուտք գործելէ ետք, եւրոպացիներու քաղաքական գիտակցութեան մէջ արագօրէն նետուած էր պատմութեան գիրկը: Եւ որովհետեւ վերակենդանացման գործընթացը հասարակութենէն բխող շարժման բնոյթ ստացաւ, տեղական ինքնակառավարման մարմիններէն դեպի խորհրդարանական մակարդակ բարձրացող պահանջը կրնար միայն Ցեղասպանութեան իրականութիւնը հաստատող որոշումներու յանգիլ, այսինքն՝ ճանաչման բանաձեւերու:

Որպէս օրինաչափութիւն, եւրոպական երկիրներու ճանաչման բանաձեւերը, բացի Ֆրանսայէն<sup>1</sup> և Յունաստանէն<sup>2</sup>, օրէնքի ուժ չունին: Իսկ վերոյիշեալ երկու երկիրները չեն նախատեսած օրէնքի

<sup>1</sup> <http://www.assemblee-nationale.fr/11/dossiers/genocide.asp>

<sup>2</sup> <http://www.genocide-museum.am/eng/Greece.php>

գործադրության միջոցներ՝ ճանաչումը քաղաքական ոլորտ փոխադրելու սահմանում:

Հետևաբար Հայոց ցեղասպանության ճանաչումը կը մնայ, տուեալ երկիրներու ներքին և արտաքին քաղաքական արեւելումէն անջատ, ժամանակէն և միջոցէն դուրս՝ քաղաքական ոլորտէն անկախ, քաղաքական որոշումներու վրայ ազդեցութենէ զուրկ, բարոյական աքթ մը:

Այսպէս է, որ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող երկիրներու լայն մեծամասնութիւնը սովորաբար ճանաչման յաջորդող օրերուն, թրքական իշխանութիւններուն հաւաստիք կու տան այն մասին, թէ.

1. Հայոց ցեղասպանության ճանաչումը ներքին սպառման սահմանում որոշում է:
2. Թէ այդ բանաձեւերը խորհրդարանական նախաձեռնութիւն են և Թուրքիոյ հետ յարաբերութիւններու վրայ ազդելու չեն սահմանում:
3. Թէ Հայոց ցեղասպանութիւնը պատմական հարց է:
4. Եւ թէ արդի Թուրքիան պատասխանատու չի՝ նկատուիք Հայոց ցեղասպանութեան:

Պատմական իրողութեան և քաղաքական հանգամանքին միջեւ ստեղծուած վէճը Եւրախորհրդարանի 1987-ի ծանօթ ճանաչումէն վերջ, եւրոպական քաղաքականութեան մէջ առանցքային տեղ գրաւեց 90-ական թուականներէն մինչեւ այսօր, Թուրքիոյ Եւրոպայի անդամակցութեան թղթածրարի քննարկման բովին մէջ: Յետագային, Թուրքիա իւրացուց այս պատճառաբանութիւնը և զայն զարգացուց Հայ-թուրք պատմագէտներու յանձնաժողովի առաջարկով:

Չորրորդ հաւաստիքը, պատասխանատուութեան շուրջ, զանազան առիթներով տեղ գտած է Ֆրանսայի քաղաքական դասի պատճառաբանութեան մէջ, ներառեալ Հայոց ցեղասպանութեան ճանաչման ջատագով անձնատրութիւններու ելոյթներուն մէջ: Առաջին պարագան 1982-ին Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Գիօտ Շէտոնի ելոյթը եղաւ, ուր ան կը հաստատէր Ցեղասպանութեան իրողութիւնը բայց կը շեշտէր որ արդի Թուրքիա պատասխանատու չէ այդ ոճիւրի:

Նախագահ Ֆրանսուա Միթերան յունուար 1984-ին առաջին անգամ՝ հանրային ելոյթի մը ընթացքին Ցեղասպանութիւն եզրը

գործածել է տք, յաջորդ օրերուն Թուրքիա առաքեց դիւանագէտ Էթիէն Մանաք, պատասխանատուութեան հարցի շուրջ Ֆրանսայի կարծիքին գծով թրքական իշխանութիւնները հանգստացնելու յատուկ առաքելութեամբ:

Մերթ ընդ մերթ ֆրանսական կուսակցութիւնները, քաղաքական և կառավարական դէմքեր, «ո՛չ պատասխանատու» հռչակեցին թուրք ժողովուրդը, թուրք քաղաքացին, թրքական հանրապետութիւնը կամ ընդհանրապէս Թուրքիան:

Մեկնելով պետութիւններու շարունակականութեան սկզբունքի մասին միջազգային օրէնքի տրամադրութիւններէն, հաստատե՛նք՝ թուրք պետութիւնն է Հայոց ցեղասպանութեան պատասխանատուն: Քննարկման առարկայ է ցարդ և յաւելեալ ուսումնասիրութեան կը կարօտի թուրք ժողովուրդի և թուրք անհատի պատասխանատուութեան հարցը: Թէեւ թուրք քաղաքացին, մաս կազմելով թուրք ժողովուրդին և վերջինս, բաղկացուցիչ մաս ըլլալով (թրքական) պետութեան դասական հասկացութեան, պատասխանատուութեան իր բաժինը պէտք է կրէ, առնուազն՝ հատուցման նիւթական և բարոյական գործընթացին իր վճարելիք տուրքերուն միջոցաւ:

### ՀԱՏՈՒՑՈՒՄ ԵԶՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Փրոֆ. Ռուբէն Ղազարեան իր Գրաբարի Բառարանին մէջ<sup>3</sup> «հատուցում» բառին կու տայ հետևեալ իմաստները՝ «հատուցելը, հատուցուելը, փոխհատուցում, փոխարինութիւն, վճարում, բարերարութիւն, երախտիք, վրէժխնդրութիւն, պատիժ, մատուցելը»: Բնականաբար այս եզրերը պէտք է համապատասխանեցնել միջազգային բառապաշարի եզրերուն հետ, զանոնք կարենալ գործածելէ առաջ:

Հատուցման գաղափարը ունի շարք մը իրաւաբանական իմաստային շերտեր, որոնցմէ ամէն մէկը կը թելադրէ ցեղասպանութեան իրաւունքէն բխող հատուցման պահանջներու յատուկ գործադաշտ մը:

Անգլերէն և ֆրանսերէն լեզուներով նուիրագործուած եզրերէն մէկը compensation-ն է, որ գլխաւորապէս կը վերաբերի նիւթական,

---

<sup>3</sup> Ռ. Ս. Ղազարեան, Գրաբարի Բառարան, Երևան, 2000, հատոր ք, էջ 47:



այսինքն կալուածային և ֆինանսական հատուցման, և որ չի ներառեր հատուցման հարցին բարոյական և քաղաքական ոլորտները: Մինչդեռ ցեղասպանութեան պարագային, Միջազգային օրէնքի թելադրած հայեցակարգը նիւթական հատուցման առընթեր կ'ընդգրկէ նաեւ բարոյական միջոցառումներու փաթեթ մը: Այսինքն՝ ոճիրին մոռացութիւնը կանխող և անոր յետագայ հաւանական կրկնութիւնը արգիլող դաստիարակչական ծրագրերու և որոշումներու ամբողջական քաղաքականութիւն մը: Հատուցման նմանօրինակ համապարփակ քաղաքականութիւնը կը կոչուի *Reparation*, որ աւելի խորքային լուծում մը կը նախատեսէ ցեղասպանութեան հարցին:

### ՀՐԷԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՆԱԽԸՆԹԱՑԸ

Հրեական ցեղասպանութեան հատուցման առաջին պահանջը ներկայացնողը եղաւ Միոնիստական Համաշխարհային կազմակերպութեան օրուան նախագահ Խայիմ Վայցման<sup>4</sup>, որ սեպտեմբեր 1945-ին պաշտօնապէս դիմում կատարեց Գերմանիան գրաւած երկիրներուն, պահանջելով հրեական գործակալութեան յանձնել սպանուած հրեաներու ամբողջական ունեցուածքը՝ միաժամանակ կազմակերպութիւնը ճանչնալով որպէս հրեայ ժողովուրդի պաշտօնական ներկայացուցիչը: Դիմումը մերժուեցաւ անգլիացիներուն կողմէ. Սփիւռքի հրեական կազմակերպութիւնները եւս մերժեցին Միոնիստական կազմակերպութեան ներկայացուցչական հանգամանքը:

Պետք է ըսել, որ թէւ Դաշնակցային Գերմանիոյ կանցլեր Գոնրատ Ատենաուր սեպտեմբեր 1951-ին հատուցման պաշտօնական գործընթացը սկսաւ, սակայն Սփիւռքի հրեայ ղեկավարութիւնը և Միոնիստական շարժումը արդէն 1941-ին Գերմանիոյ վճարելիք հատուցումներու նախագիծը պատրաստած էին:

1940-ին ԱՄՆու Հրեական Յանձնաժողովը (American Jewish Committee) ստեղծած էր «Խաղաղութեան Ուսումնասիրութեան Յանձնախումբ» մը, անոր յանձնելով հրեաներու տընտեսական կորուստներու վերականգնման հնարաւոր ճամբաներու ուսումնասիրութիւնը:

1941-ին և 1944-ին երկու կարելոր համաժողովներ կազմակեր-

---

<sup>4</sup> Marilyn Henry, «Confronting the Perpetrators, a History of the Claims Conference, Valentine Mitchell, London, 2007, pp. 9-10

պուեցան Համաշխարհային Հրեական Համագումարի նախաձեռնությամբ, վերոյիշեալ յանձնախումբի եզրակացութիւնները հրապարակային դարձնելու նպատակով:

Կեդրոնական Եւրոպայի հրեայ գաղթականներու կազմակերպութիւնը 1943-էն սկսեալ լծուեցաւ հրեայ ժողովուրդին տրուելիք հատուցման «Փիլիսոփայական և գործնական հիմունքներու ուսումնասիրութեան» գործին:

Իր կարգին Իսրայէլի Հրեական Գործակալութիւնը ուսումնասիրեց հատուցման իրաւական դաշտը, որուն մէջ գլխաւոր արգելքներէն մէկն էր՝ հրեայ ժողովուրդին միջազգային իրաւունքի միաւոր չըլլալու հարցը: Հրեաները տակաւին ազգ չէին, առաւել Գերմանիոյ դէմ պատերազմող ազգ չէին:

Վերջապէս կար հիմնական ուրիշ հարց մը: Ո՞վ պիտի ներկայացնէր հրեայ ժողովուրդը, երբ հատուցման ժամը հնչէր:

Յետագային՝ 1951-ին, Հրեական Համաշխարհային Համագումարի ղեկավարութեան տակ ընթացող համաժողովի մը ընթացքին, մօտ 20 սփիւռքեան կազմակերպութիւններ էապէս ճշդեցին իրենց ռազմավարութիւնը՝ Յեղասպանութենէն տուժած հրեաներուն հատուցման ապահովումը և Յեղասպանութեան պատճառով կործանման ենթարկուած հրեայ համայնքներու վերականգնումը: Առաջին ժողովին Նահում Կոլտման՝ Հրեական Համաշխարհային Համագումարի նախագահը, կը յայտարարէր. «Միայն պատմութիւնը պիտի լուծէ Գերմանիոյ և հրեաներուն միջեւ յարաբերութեան խնդիրը: Գերմանացիներէն պահանջել այն ինչ մեզի պարտական են, ամենեւին չի՝ նշանակէր, որ իրենց ներում կը շնորհենք»<sup>5</sup>. Վերոյիշեալ համագումարի աւարտին Սփիւռքի հրեաները կը ստեղծէին Գերմանիոյ դէմ «Հրեական Նիւթական Պահանջներու Մարմինը», որ Իսրայէլի կառավարութեան կողքին բանակցութիւններ վարեց Դաշնակցային Գերմանիոյ կառավարութեան հետ:

1949-ին Ատենաւոր 10 միլիոն գերմանական մարք առաջարկեց Իսրայէլի կառավարութեան, զոր վերջինս կտրականապէս մերժեց՝ գումարը արհամարհելի նկատելով: Հետեւաբար, յունուար 1951-ին Իսրայէլ Գերմանիան գրաւած երկիրներէն պահանջեց, որ անոնք Գերման կառավարութեան պարտադրեն Իսրայէլին 1,5 միլիառ տոլարի գումար մը վճարել, որուն ի պատասխան՝ գրաւող

<sup>5</sup> Marilyn Henry, op. cit., p. 214.

երկիրները Իսրայելին առաջարկեցին ուղիղ բանակցություններ վարել գերման կառավարության հետ :

1951-ի 27 սեպտեմբերին Ատենաուր գերմանական խորհրդարանին առջեւ իր պատմական ելոյթով սկիզբը դրաւ *Indergutma-chung*-ի (կրկին լաւութիւն ընել) քաղաքականութեան, զոր իրականացուց 1953-էն 1965-ի միջեւ, «Դաշնային փոխհատուցման» 3 օրէնքներու ընդունմամբ:

Վերոյիշեալ օրէնքները կազմեցին Նացիական հալածանքներու զոհերուն հատուցման իրաւական շրջանակը, նախ՝ Գերմանիոյ տարածքին վրայ ապրող հրեաներուն վերաբերող, ապա ընդլայնուեցան Գերմանիոյ գրաւած տարածքներուն մէջ ապրող զոհերուն, աւելի ուշ կիրառուելով Աւստրիոյ, նախկին Սովետական Միութեան և Կոմունիստական հանրապետութիւններու հրեաներուն:

Մարդկութեան պատմութեան մէջ աննախադէպ երեւոյթ մը հանդիսացաւ Հրեաներու ցեղասպանութեան հատուցման պարագան: Առաջին անգամ ըլլալով՝ ժողովուրդ մը իր կրած հալածանքներուն և բնաջնջման քաղաքականութեան դէմ նիւթական հատուցում կը ստանար նոյնի՝ նքն դահիճէն:

1952-ի սեպտեմբեր 10-ին Դաշնակցային Գերմանիա, Իսրայել և Գերմանիոյ դէմ Հրեական Նիւթական Պահանջներու Մարմինը ստորագրեցին համաձայնագիր մը, որ կը նախատեսէր 3 միլիարդ գերմանական մարքի (820 միլիոն տոլար) հատուցում մը Իսրայելի 1953-էն 1964, որու շնորհիւ Իսրայելի համախառն ազգային արդիւնքը եռապատիկ աճ արձանագրեց տուեալ ժամանակաշրջանին:

Որպէս արդիւնք՝ XX դարու աւարտին, «Գերմանիոյ դէմ Պահանջներու Մարմնի» հետ զանազան համաձայնագրերու շնորհիւ, որպէս Նացիզմի անհատ զոհերու հատուցում, Գերմանիա 100 միլիարդ գերմանական մարք վճարեց: Գրաւուած ինչքերու հատուցումը հասաւ 3,9 միլիարդ գերմանական մարքի: Իսկ Եւրոպայի հրեական համայնքներու վերականգնման ուղղուած հատուցումը հաւասարեցաւ 450 միլիոն գերմանական մարքի:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԷՆՔԻ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ

Ի տարբերութիւն Հրեական նախընթացին, ուր հատուցումը անջատ պահուեցաւ դատին միւս երեսներէն, և ներկայացաւ որպէս

բոլորովին առանձին գործընթաց, վերջին քսանամեակին միջազգային հանրութիւնը փորձեց աւելի ամբողջական պատասխան տալ մարդկութեան դէմ գործուած ոճիրներու (և առհասարակ պատերազմական ոճիրներու) հատուցման խնդիրներուն:

Այսպէս, 1997-ին ՄԱԿ-ի Մարդկային Իրաւանց յանձնաժողովին ներկայացուցած իր զեկոյցով<sup>6</sup> ֆրանսացի փորձագետ Լուի ժուանէ զոհերու համար երեք հիմնական իրաւունքներ կը սահմանէր անպատժելիութեան դէմ պայքարի բովին մէջ՝ իրազեկութեան իրաւունքը, արդարութեան իրաւունքը և հատուցման իրաւունքը:

2005-ին ՄԱԿ-ի լիագումար նիստը կը վաւերացնէր «Միջազգային Մարդկային Իրաւանց Օրէնքի Կոպիտ Խախտումներու և Միջազգային Մարդասիրական Օրէնքներու Լուրջ Զանցումներու Զոհերուն Դարմանումի և Հատուցման Իրաւունքին Մասին» փաստաթուղթի հիմնական սկզբունքներն ու ուղեցոյցը<sup>7</sup>:

Միջազգային օրէնսդրութեան զանազան փաստաթուղթերը այսօր կը հաստատեն անհատ և հաւաքական զոհերու հանդէպ պետութիւններու հատուցման և դարմանումի (Reparation) պարտաւորութիւնը: Նշենք Մարդկային Իրաւանց Տիեզերական հռչակագրի 8-րդ յօդուածը, Քաղաքացիական և Քաղաքական Իրաւունքներու Միջազգային դաշնագրի և Տնտեսական, Ընկերային և Մշակութային Իրաւունքներու Միջազգային դաշնագրի 2-րդ յօդուածը, Յեղային Խորականութեան Բոլոր Ձեւերու Վերացման Միջազգային Համաձայնագրի 6-րդ յօդուածը, Խոշտանգումներու եւ այլ Դաժան, Անմարդկային կամ Արժանապատուութիւնը Նուաստացնող Վերաբերմունքի կամ Պատժի դէմ ՄԱԿ-ի Համաձայնագրի 14-րդ յօդուածը, Երեխաներու Իրաւունքներու Համաձայնագրի թիւ 39 յօդուածը, որոնք կը հաստատեն զոհերու հատուց-ապաքինման իրաւունքը: 2002-էն ի վեր Միջազգային Քրէական Ատեանի Հոռմի կանոնագիրը եւս կը հաստատէ նոյն իրաւունքը՝ երեք բաղկացուցիչ տարրերով – սեփականութեան վերադարձ, հատուցում և դարմանում:

<sup>6</sup> Nations Unies, Conseil Economique et social E/CN.4/Sub.2/1997/20 26 juin 1997.

<sup>7</sup> UN, Updated set of principles for the Protection and Promotion of Human Rights through action to combat impunity E/CN.4/2005/102/Add.1.

## ԹՈՒՐԹԻՈՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՐԱՑՈՅՑՆԵՐՈՒ ՀՈԼՈՎՈՅԹԸ

Սկզբունքով միջազգային իրաւական համակարգը հատուցման հնարաւորութիւն կ'ընծայէ հայութեան և սակայն ան տակաւին հեռու է փորձուած ըլլալէ: Նաև հարց է, թէ ի՞նչ չափով այսօր Եւրամիութիւնն ու անոր անդամ երկիրները կրնան սատարել նման գործընթացի մը իրագործման նկատի առած քաղաքական հարթակի բարդութիւնները:

Ճիշտ է, որ Մարդկային Իրաւանց Եւրոպական Ատեանը, որոշ պայմաններու տակ, նիւթական հատուցում ստանալու իրաւունք կու տայ անհատ հայցուորներու և իրաւաբանական անձնաւորութիւններու:

Սակայն այս նեղ ոլորտէն դուրս, կարելիութիւնները կախեալ են շարք մը անյայտներէ, որոնք դեռ կը կարօտին խորքային քննարկման:

Առաջին հերթին, հարց է, թէ ի՞նչ չափով Հայկական պետութիւնը այսօր ի վիճակի է, կամ պատրաստ, պաշտօնապէս պահանջատէր կողմ հանդիսանալու յանուն Հայութեան:

Թուրքիոյ ռազմաքաղաքական կարեւորութիւնը Արևմուտքի համար և Միջին Արեւելքի մէջ ռազմավարական գործընկերոջ անոր հանգամանքը թոյլ չեն տար պատկերացնել, որ Եւրամիութիւնը և անոր անդամ պետութիւնները այսօր ճանաչումէն աւելի լայն ուշադրութիւն յատկացնեն Հայոց ցեղասպանութեան խնդրին և «բարոյական» ոլորտէն շօշափելի քաղաքական ոլորտ փոխադրեն զայն:

Կարելի է պատկերացնել, որ յառաջիկային տարածաշրջանային յարաբերութիւններու վերադասաւորման բովին մէջ նոր կարելիութիւններ ստեղծուին մեր դատին համար: Պարզ խօսքով, այդպիսի կարելիութիւնները կապուած են աշխարհակարգի և յատկապէս Արևմուտքի ռազմավարական շահերու յարացոյցի (paradigm) փոփոխութեան հետ: Եւ սակայն այս պարագան կենսագործելը եւս ուժերու մեծ կեդրոնացում և պետական քաղաքականութեան բիւրեղացում կը պահանջէ:

**THE EUROPIAN POLICY AND THE ISSUE OF  
TRANSITIONING FROM THE RECOGNITION PHASE OF THE  
ARMENIAN GENOCIDE TO REPATION**

To study the European Policy on the issue of transitioning from the international recognition phase of the Armenian Genocide to reparations by the government of Turkey shall require an adequate appreciation of the recent history of recognition processes in Europe by governments, parliaments, international organizations and the European public opinion in connection with the geostrategic choices such recognition would entail.

Secondly, we have to consider the precedent of the German reparations program with regard to the Jewish case. We need to note that, as of the outset, the Jewish side voluntarily chose to limit the negotiations to financial compensations only and deliberately excluded from the negotiations the moral aspects of the reparations.

Most recent tools of International Law regarding reparations also need to be considered. The fact that new rules are now fixed guiding reparations for the purpose of combating impunity in cases of gross human rights violations as genocides leading to the Right to Truth, Justice and Reparations. The latter may comprise Restitution, Compensation, Rehabilitation, Satisfaction and guarantees of non-repetition.

Lastly, we must look into the conflicting aspects of geopolitical interests affecting the relations between Europe and Turkey.

*ԷՄԻԼ ՕԴՂՈՒԽԱՆՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

**ՕՍՄԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Համիդի օրոք օսմանյան Թուրքիայում իրավակարգը հիմնվում էր կրոնական իսլամական սուրբ օրենքի վրա, որի դեպքում կրոնական, հասարակական և քաղաքական ոլորտների միջև սահմանները վերանում էին, քանի որ իսլամը դարձել էր նաև կենսա-

կերպ: Սակայն նույնիսկ Համիդից հետո իշխանության եկած երիտ-թուրքերը, որոնք աստվածապաշտ չէին, ևս հաստատեցին իրենց տիրապետող և գերակա ազգ լինելու *ցեղապաշտական սկզբունքը*:

Լինելով աթեիստներ երիտթուրքերը իսլամը, օգտագործեցին որպես քաղաքական գործիք ոչ թուրք էթնոսներին՝ մեծապես հա-յերին բնաջնջելու համար: Այսինքն՝ ցեղասպանի հոգեբանական տիպը նրանց մեջ դրսևորվեց և քողարկվեց կրոնական շղարշով:

Երիտթուրքերի և Աթաթուրքի օրոք Թուրքիայի որդեգրած աշխարհիկացումն Արևմուտքին հաճոյանալու և ազգային-ցեղա-պաշտական նկրտումները քողարկելու քաղաքականություն էր, քանի որ, ըստ էության, Արդուլ Համիդից հետո Թուրքիայի ցեղա-սպան գործունեությանը վերջ չդրվեց, այն շարունակվեց ցանկացած հարմար առիթով, իսկ այդ քաղաքականության կամ թուրքական հակամշակույթի սկզբունքները շատ հնարավոր է, որ այսօր էլ չեն վերացել և կարող են դրսևորվել աշխարհաքաղաքական վերադա-սավորումների դեպքում:

Այս տեսանկյունից հարկ է նշել, որ իսլամադավան օսմա-նական պետությունում չէր գործում և չէր էլ կարող գործել կրոնի, քաղաքականության և էթիկայի տարանջատման մաքիավելական սկզբունքը, որը հատուկ էր քաղաքակիրթ քրիստոնեական աշխար-հին: Ցեղապաշտ և իսլամադավան օսմանցիների համար քրիս-տոնեական քաղաքակրթական մոդելը չէր կարող իրականում լինել ընդունելի, եթե չասենք մերժելի, ինչի մասին փաստում է նրանց իրական քաղաքականությունը ուղղված քրիստոնյա քաղաքա-կրթության և հատկապես հայերի դեմ: Ուստի ինչպես ցույց տվեցին պատմական զարգացումները, օսմանցիները, բացի սեփական ազ-գայնամոլական և կրոնական պատկերացումներից, թշնամական տրամադրվածություն ունեին մյուս բոլոր քաղաքակրթությունների հանդեպ, ինչը դրսևորում էին ցանկացած հարմար առիթով:

Օսմանցիների ցեղասպան գործունեությունը բխում էր նաև նրանց հին ավանդույթներից, քանի որ թուրքերի մեջ ազգայնա-մոլական և ցեղապաշտական, այլ ազգերի նկատմամբ գերակայու-թյան կարծրատիպերը ձևավորվել են դեռ վաղուց: Այս մոտեցումը կարելի է հիմնավորել Ուիլիյամսի այն գաղափարով, որի համա-ձայն՝ ավանդույթները Արևելքում (խոսքը Օսմանյան կայսրության մասին է) ավելի ուժեղ էին օրենքներից, դատարաններից և իշ-

խանութիւններից, իսկ այդ ավանդույթները պահպանվել էին գրեթե Օսմանյան կայսրության ողջ տարածքում<sup>1</sup>: Այս տեսակետը կարող է հիմք ծառայել այն հիմնավորման համար, ըստ որի՝ ցեղասպանի, կողոպտչի, զավթիչի վարքագիծը չի կարող լինել կրոնական. այն առավելապես բխում է ավանդույթից (այն, ինչին սովոր են եղել թուրքերը), հոգեբանական է, քանի որ օսմանցիները, բացի կողոպտելուց, սպանողից և այլոց հողերը զավթելուց, պատմության մեջ այլ կերպ հայտնի չեն: Հետևապես՝ նրանց իրական մշակույթը պետք է բնորոշել որպէս *հակամշակույթ* կամ այլոց մշակույթի յուրացում և սեփականում:

Թուրքերի կոնֆլիկտային իրավիճակներում դաժանագոյն բռնությունների դիմելու ավանդական հակվածությունը համահունչ է թուրքական ռազմական ավանդույթներին, որոնք թուրքական մշակույթի հիմնական տարրն են<sup>2</sup>: Այսինքն՝ թուրքի մշակույթը, ըստ էության, ոչնչացնելու մշակույթ է:

Այս առումով Դադրյանն իրավացիորեն նշում է, որ թուրքական մշակույթը սպանողի մշակույթն է, քանի որ ինչպես ցույց է տալիս պատմական փաստերի վերլուծությունը, թուրքը կոնֆլիկտները լուծելու միջոցով իր նպատակներին հասնելու համար մշտապես դիմել է սպանողի<sup>3</sup>: Իսկ պատմության ընթացքում շարունակաբար և հաստատակամորեն միևնույն վարքագծի դրսևորումը փաստում է արդեն տվյալ երևույթի մշակութային հիմքի մասին, այս դեպքում թուրքական վարքագիծը կարելի է անվանել ոչ թե մշակույթ, *այլ հակամշակույթ*, որը հակառակ է քաղաքակիրթ աշխարհի կողմից ընդունված մշակույթի ընկալմանը:

Այլ մշակույթների և քաղաքակրթությունների նկատմամբ թուրքական հակամշակութային վարքագծի մասին է վկայում նաև բրիտանացի ազգագրագետ Ուիլիյամ Ռամսեյի այն միտքը, որի համաձայն՝ թուրքական կառավարությունը հայերին, նաև հույներին (քրիստոնեական քաղաքակրթության կրողներին) համարում էր շներ կամ խոզեր, որոնց վրա թուրքը պետք է մաքրեր իր ոտքերի կեղտը: Դարեր շարունակ այն, ինչ պատկանել է հայերին՝ սե-

<sup>1</sup> Williams T. Turkey: A World Problem of Today, New York, 1921, p. 285.

<sup>2</sup> Дадрян В. “История армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа”. Ереван, 2007, с. 490.

<sup>3</sup> Дадрян В. ..., с. 154.



փականություն, տուն, ինքնություն, ընտանիք և այլն, երաշխավորված չեն եղել բռնությունից<sup>4</sup>:

Օսմանական հակամշակութային սովորույթների արմատավորվածությունը միանշանակ նաև թուրքական քաղաքական կարգի անբաժան մասն էր կազմում, իսկ տարբեր շրջաններում առաջարկվող բարեփոխումները չէին կարող դառնալ իրականություն, քանի որ, ինչպես հիմնավորում է Սեմյուել Հանթինգթոնը, այն հասարակություններում, որտեղ նոր ընդունվող նորմերը չեն համապատասխանում գործող վարքագծին, ավանդույթին, չեն կարող ունենալ արդյունավետ գործնական կիրառություն<sup>5</sup>:

Այն հանգամանքը, որ երկու տարբեր օսմանական վարչակարգեր՝ Աբդուլ Համիդի և երիտթուրքերի օրոք իրականացրին միևնույն ցեղասպան քաղաքականությունը բարեփոխումներ պահանջող հայերի նկատմամբ, խոսում է այն մասին, որ դա անփոփոխ թուրքական քաղաքական մոդելն էր<sup>6</sup>:

Այս առումով Մանդելշտամը իրավացիորեն նշում է, որ թուրք ժողովուրդը Կոստանդնուպոլիսը նվաճելու ժամանակ լիարժեքորեն ռազմականացված ազգ էր, որին ամբողջությամբ օտար էր քաղաքակրթությունը<sup>7</sup>: Դրան հակառակ՝ քաղաքակրթության ոլորտում հայերի ունեցած ընդունակությունների մասին արտահայտվել են նույնիսկ որոշ թուրքեր: Օրինակ՝ գեներալ Շերիֆ փաշան խոստովանում է. «Չկա մի լուսավորյալ թուրք, որը չստորագրի հետևյալ հայտարարության տակ, որ արված է <...> անգլիական պառլամենտի դեպուտատ Լինչի կողմից. «Հայերը բացառիկորեն ընդունակ են այն բանին, որպեսզի նոր քաղաքակրթության կրողներ լինեն: Նրանց հարազատ են դարձել մեր ամենաբարձր իդեալները: Նրանք եվրոպական մշակույթի նոր նվաճումները յուրացնում են մեծ ազա-հությամբ և դրանց տիրապետում են այնպիսի կատարելությամբ, որին երբեք չի կարող հասնել ոչ մի ազգ»: Իսկ այս ամենը կասեց-

---

<sup>4</sup> **William R.** Impressions of Turkey During Twelve Years Wanderings, New York, 1897, pp. 206-207.

<sup>5</sup> **Huntington S.** Political Order in Changing Societies, Yale University Press, 1968, 488 p.

<sup>6</sup> **Дадрян В.** “История армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа”. Ереван, 2007, с. 489.

<sup>7</sup> **Mandelstam A.** La Société des Nations et les Puissances devant le Problème Arménien, Paris, 1926, p. 4.

նելու նպատակով, ինչպես նշում է Լևոն Շիրինյանը. «...գորշ գայլը՝ Թուրքիան, նենգ էր (և է), դարանակալ ու ռիսակալ, նաև անբարո եվրոպականացնող անդրենածին և մշակութաստեղծ ազգի հանդեպ»<sup>8</sup>: Այսինքն՝ գորշ գայլի արքետիպը լիովին բնորոշում է թուրքական հակամշակույթը և հակաքաղաքակրթությունը: Չէ՞ որ նույնիսկ քաղաքակիրթ աշխարհը թուրքական ցեղապաշտական բնագրի պոռթկումը որակեց որպես *հանցանք մարդկության և քաղաքակրթության դեմ*:

Վերլուծելով հայերի ցեղասպանության հիմքերը թուրքական քաղաքականության համատեքստում՝ Հասան Ջեմալը գրում է. «Ազգ-պետությունների մեջ շարժիչ ուժը ազգայնականությունն է, որը մի վիրուս է, երբ թվում է, թե ձեր ազգայնականությունն ամենագեղեցիկն է: Դուք սկսում եք մյուսներին դարձնել օտար և նույնիսկ անվանում թշնամի: Եթե հարցնեք՝ ինչ է Հայոց ցեղասպանությունը, ես կասեմ, որ դրա հիմքում ընկած էր թուրքական ազգայնականությունը: Եթե դուք ուսումնասիրեք, թե ինչպես է ստեղծվել ազգ-պետությունը Թուրքիայում, ապա կտեսնեք, որ դա այնպիսի մի պատմական հասկացություն է, որում քրդերը պետք է մոռանան իրենց քուրդ լինելը, հայերը պարտավոր են մոռանալ իրենց ցավերը, ալևիները պարտավոր են մոռանալ իրենց ալևի լինելու փաստը, իսկ հավատացյալ մուսուլմանները չպետք է ազատ լինեն հասարակության մեջ իրենց հավատքը ցույց տալու հարցում, և ամեն ինչ պետք է մնա հսկողության տակ: Այսպիսով, Անատոլիայում պետք է ստեղծվեր թուրքական ազգային պետությունը: Սա էր ծրագիրը»<sup>9</sup>:

Մեկ այլ թուրք հետազոտող՝ Հասան Օքթայը ևս նշում է, որ թուրք ազգայնականությունը *մշակութային ազգայնականություն* է<sup>10</sup>: Այս ամենը փաստում է, որ նույնիսկ Հայոց ցեղասպանությունից հարյուրամյակ անց թուրքական ազգայնականությունը, որը բխում է նրանց ավանդույթից, նրանց իսկ մշակույթի անբաժան մասն է: *Բսկ XX դարի սկզբին որքան էլ աշխարհը ցանկանար, որ օսմանները*

<sup>8</sup> Շիրինյան Լ. Թուրքական էթնոֆոբիան և Հայոց ցեղասպանությունը, «Մանկավարժ» հրատ., Երևան, 2011, էջ 20, 23:

<sup>9</sup> Ջեմալ Հ. Հայոց ցեղասպանության հիմքում ընկած է թուրքական ազգայնականությունը, / <http://civilnet.am/> 2014/12/11/hasan-cemal-climbing-the-mountain-program/#.VUI1dCHtmko/, (27.04.2015)

<sup>10</sup> Օքթայ Հ. Թուրք ազգայնականությունը մշակութային ազգայնականություն է, /<http://karabakhinfo.com/> 3978?lang=hy (05.05.2015)

քաղաքակրթվելին, ի հեճուկս այդ ամենի, միևնույնն է, մեծ ոճիրը երկնելու և գործադրելու համար հանձար ունենալու կարիքն էլ չկար, վստահաբար, սակայն պարտադիր էին մոնղոլական բնագոյն ու եղեռնաբաղձության կիրքը, ինչով լիովին օժտված էր օսմանյան հորդան<sup>11</sup>:

Թուրքական ազգայնականությանն ավելի խիստ բնորոշում է տալիս Արմեն Այվազյանը, ով իրավացիորեն նշում է, որ իրականում Հայոց ցեղասպանության հետևանքներից մեկը եղավ այն, որ Եվրոպայի մերձակայքում ստեղծվեց առաջին **ֆաշիստական պետությունը**՝ Թուրքիայի Հանրապետությունը, որն իր հիմնական բնորոշ գծերով նույնանում էր ավելի ուշ Իտալիայում, Գերմանիայում, Եվրոպայի մի շարք այլ պետություններում առաջացած ֆաշիզմին ու նացիզմին<sup>12</sup>: Սա վկայում է այն մասին, որ Թուրքիան համիդյան, երիտթուրքական, աթաթուրքյան շրջանում, ըստ էության, երբեք չի փոխել իր քաղաքականությունը քրիստոնեական քաղաքակրթություն կրող հայ ազգի նկատմամբ:

Թուրքերի գերխնդիրը բնաջնջման միջոցով Հայաստանը ոչնչացնելն էր, վերջնականորեն հայկական մշակույթը սեփականելը և «յուրացնելը», հայկական քաղաքակրթությունը ջնջելը, կոդապուտի և ավարառության **թուրքական ավանդույթ-օրենքով** հայոց նյութական ահռելի հարստությանը տեր դառնալը<sup>13</sup>:

Միևնույն տեսակետին էր նաև Քյազիմ Կարաբեքիրը, ով ասում էր. «Հայաստանը գտնվում է խիստ լայնատարած մուսուլմանական մի հողատարածքի վրա, հետևաբար՝ անհրաժեշտ է նրան ինչպես քաղաքականապես, այնպես էլ փաստականորեն ոչնչացնել: Հայերին խեղդամահ անելով՝ միաժամանակ մենք պետք է ջանանք չարել հարաբերությունները Եվրոպայի հետ, որի դաշնակիցն է Հայաստանը, և այդպիսով պետք է հասնենք մեր նպատակին»<sup>14</sup>:

---

<sup>11</sup> Ասատրյան Հ. Հայաստան. արիական նախադիրք Առաջավոր Ասիայում, հատոր Ա, Սոֆիա, 1942, էջ 123-133:

<sup>12</sup> Այվազյան Ա. Թուրքիայի Հանրապետությունը պատմության առաջին ֆաշիստական պետությունն է, /«Հայաստանի գրուցակից», № 10 (173 ), 18 մարտի 2011թ.:

<sup>13</sup> Երիկյան Լ. Թուրքական էթնոֆոբիան և Հայոց ցեղասպանությունը, «Մանկավարժ» հրատ., Երևան, 2011, էջ 6:

<sup>14</sup> Սարգսյան Ե. Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Երևան, 1994, էջ 170, 171:

Այստեղ հարկ է մեջբերել Լևոն Շիրինյանի ձևակերպումը. «Թուրքական անկասելի մղումը Հայաստանն իր օրինական ու բնական տիրոջից անվերադարձ խլելը թուրքական անասնական բնագոյեր»<sup>15</sup>:

Քեմալի ժամանակ որոշակիորեն փոխվում են արտաքին ընկալումները, սակայն խորքում թուրքական քաղաքականությունը մնում է նույնը: Այլ ազգերի մշակույթը գողանալու և յուրացնելու ձգտումը կրկին դառնում է սեփական «ազգ» ստեղծելու գործիք այժմ արդեն աշխարհիկության քողի ներքո: Այս առումով թերևս դիպուկ են Ռուբենի խոսքերը. «Թուրք կուլտուրա՝ եթե որոնեք, չեք գտնեք: Այդպիսին չկայ, ստացական է ոչ թե այնքան Միջին Ասիայէն, այլ պարսիկէն, արաբէն, Բիզանդիոնէն, հայէն եւն: Թրքական մշակոյթ, տնտեսական պայմաններ եւն. չկան, որ կարողանային այլատարր ցեղերը ձուլել, այնպէս, ինչպէս Ամերիկայի մեջ տեղի կունենայ»<sup>16</sup>:

Հայերի ցեղասպանությունը կապելով թուրքական ինքնության հետ՝ Աքչամը նշում է, որ թուրքական գիտակցության մեջ կայսրության պահպանման նպատակով արմատավորվում էին ներքին և արտաքին թշնամու կարծրատիպերը, քանի որ թվացյալ թշնամին կարող էր սպառնալ օսմանների տապալմանը և կայսրության անկմանը<sup>17</sup>: Այսինքն՝ եթե փորձենք ընկալել Աքչամի միտքը խորությամբ, ապա դրանից կարելի է ենթադրել, որ թուրքերի բոլոր ոճիրների և ցեղասպան քաղաքականության պատճառը նրանց իրենց կայսրությունը կորցնելու վախն էր, և, ինչպես նշում է Աքչամը, այդ ցեղապաշտական քաղաքականությունը և բռնության բնագործ հոգեբանական դրսևորումներ էին, որոնք կյանքի էին կոչվում բռնի վարքագծի տեսքով: Կայսրության կորստի մտավախությունը որոշ դեպքերում հասնում էր ցնորքի և ազգային գիտակցության մեջ ստեղծում որոշակի անհավասարություն, ինչն արտացոլվում էր սեփական անձի գերկարևորման չափազանցության մեջ, քանի որ թուրքն իրեն համարում էր «մեծ կայսրության» զավա-

<sup>15</sup> Շիրինյան Լ. Թուրքական էթնոֆոբիան և Հայոց ցեղասպանությունը, «Մանկավարժ» հրատ., Երևան, 2011, էջ 9:

<sup>16</sup> Շիրինյան Լ. Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (երկրաքաղաքական վերլուծություն), Երևան, 2004, էջ 147:

<sup>17</sup> Akcam T. From Empire to Republic. Turkish Nationalism and The Armenian Genocide, 2004, p. 39.

կը՝ միևնույն ժամանակ ունենալով ազգային ինքնագիտակցության քրոնիկական պակաս և միջակության բարդույթ<sup>18</sup>:

Բիարկե, Աքչամի դիտարկումներն այս առումով ընդունելի են, սակայն նա չի նշում այդպիսի բարդությունների, հոգեբանության և հետևապես՝ վարքագծի պատճառների և արմատների մասին: Այս տեսանկյունից հարկ է նկատել, որ այլոց մշակույթը, ունեցվածքը՝ ինչպես հոգևոր, այնպես էլ նյութական, զավթած ցեղը բնականաբար պետք է հայտնվեր նման հոգեբանական վիճակում, քանի որ շատ լավ գիտակցում էր, որ այն ամենը, ինչ նա ունի, ամեննին էլ իր ստեղծածը չէ, նա չէ այդ ամենի իրական տերը և, ըստ էության, նա մի պարզ «գող» կամ «կողողպտիչ» է և մի օր պետք է պատասխան տա իր արարքների համար: Ուստի մեր համոզմամբ ցեղասպան քաղաքականության և ոչնչացնողի հոգեբանությունը մի օր պատասխանատվության առաջ կանգնելուց խուսափելն էր: Իսկ եթե չլինեին պահանջատերեր, չէր լինի նաև պատասխանատվություն:

Աքչամը նշում է, որ թուրքերի համար առհասարակ, XX դարի սկզբին դժվար էր ընդունել քաղաքակիրթ վարքագծի նորմերը և հրաժարվել բռնությամբ խնդիրները լուծելու գործուն քաղաքականությունից: Հարկավոր էր, որ քաղաքացիական վարքագծի նորմերը դառնային գերակա թուրքերի շրջանում<sup>19</sup>: Այլ կերպ ասած՝ թուրքի համար քաղաքակիրթ վարքագծի նորմերի ընդունումն ինքնագոհություն էր, քանի որ թուրքը պետք է ստիպված զսպեր իր որոշ հիմնական բնագոյները<sup>20</sup>: Այսինքն՝ այս ամենը կրկին հիմնավորում է թուրք ցեղի *անասնական բնագոյների* գերակայության փաստը: Իսկ վարքագծում բնագոյների գերակայությունը գիտակցության նկատմամբ փաստում է նաև հակամշակույթ լինելու հանգամանքը, քանի որ մշակույթը, ըստ էության, գիտակցության դրսևորում է: Թուրքերի անասնական բնագոյը՝ ուղղված սեփական տեսակի՝ այլոց զոհաբերության միջոցով պահպանելուն և տարածապատկան քաղցր բավարարելուն, դրսևորվեց հայերի ցեղասպանության միջոցով:

Ցեղասպանությունն ազգային գիտակցության արդյունք է, և

---

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>19</sup> **Akcam T.** From Empire to Republic. Turkish Nationalism and The Armenian Genocide, 2004, p. 40.

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում:

դա կենտրոնական դեր է խաղացել հայերի ցեղասպանության գործում: Ազգային գիտակցությունը կարևոր է հայերի ցեղասպանության բնութագրիչների և պայմանների ընկալման համար<sup>21</sup>: Հայերի ցեղասպանության գլխավոր գործոններից մեկը թաքնված է թուրքական ազգային ինքնության գիտակցության բնութագրիչների մեջ<sup>22</sup>:

Անփոփելով նշենք, որ Օսմանյան կայսրության շրջանում թուրքերի վարած քաղաքականությունը մեծապես դրսևորվեց իր հակաքաղաքակրթական և հակամշակութային երանգներով: Դա մի շրջան էր, որը միանշանակ կարելի է որակել որպես հումանիզմի, քաղաքակրթության և մարդկային համընդհանուր արժեքների դեմ իրականացվող ցեղապաշտական քաղաքականություն, որից տուժեցին ոչ միայն առանձին ազգեր և մեծապես՝ հայերը, այլև առաջադեմ քաղաքակրթությունը և մշակույթը:

Հարկ է նկատել, որ մինչ օրս էլ Թուրքիան չի ազատվել իր հոգեբանական բարդություններից, քանի որ կրկին այլոց քաղաքակրթական արժեքների և մշակույթի զավթիչն է մնացել չկրելով որևէ պատասխանատվություն: Եվ այսօր Թուրքիայում ապրող ազգերի կողմից իրենց ազգային ինքնության վերականգնման, վերագտնման բոլոր փորձերը ճնշվում են նույն բիրտ և դաժան քաղաքականությամբ: Թուրքն այսօր էլ գիտակցում է, որ նույնիսկ 100-ամյակ անց չի կարողացել հաղթահարել իր ամենամեծ խնդիրը՝ այն ճաքը, որը երբևէ չի վերանում և չի լցվում որևէ նյութով: Թուրքիան շարունակում է մնալ կայսերապաշտական նկրտումներով «ճաքած պետություն», բայց ոչ երբեք ազգ-պետություն, ինչին ձգտել է դարեր շարունակ:

*EMIL ORDUKHANYAN (ARMENIA)*

## **THE OTTOMAN ANTICULTURE AND ARMENIAN GENOCIDE**

In the years of existence of the Ottoman Empire the Turkish policy was substantially allocated with the anti-civilization and anti-cultural coloring. It was the period which, unambiguously, can be characterized as racist policy against humanism, civilization and universal human values from

---

<sup>21</sup> Akcam T. ..., p. 45.

<sup>22</sup> Akcam T. ..., p 59.

which suffered not only different nations and substantially Armenians, but also the advanced Christian civilization and culture.

Turks, at opportunity, always fought against the nations having other civilization and cultural values with the purpose to appropriate them and to expand their own "vital space" as it is done by wild wolves (*a gray wolf as an archetype of Turks*). Also it seems that even today this behavior didn't change, except for methods and mechanisms of fight. The proof to it is the occupied northern part of Cyprus by the secular Turkey which made a mass destruction of autochthon Greeks.

That fact that during two various Ottoman regimes (in the period of Abdul-Hamid and young Turks governance) and even later, in the period of Kemal governance a same policy against Armenians demanding reforms was carried out, testifies that after all this policy in roots was the invariable Turkish political model. Whether such political model changed today?

#### *ՀԱՅԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

### **«ՄԻՋԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ» ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՅՆՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հայոց ցեղասպանության գործում պատմագիտական, իրավական, հոգեբանական հարցերին զուգահեռ մեծ կարևորություն է ստանում նաև ռազմավարական հարցերի ուսումնասիրությունը:

Նախ, իհարկե, հարկ է նշել, որ ի սկզբանե ավարառության, ուրիշների հայրենիքների կողոպուտի և բռնազավթման բնագործությունը ինքնության մի մասն է: Այսինքն՝ տարածքներ բռնազավթելու մոլուցքը ի սկզբանե եղել է արքետիպի մակարդակում: Սակայն Բալկանյան պատերազմից հետո դեպի սեփական վաթանի սահմանների որոնումը կողմնորոշված թուրք նախամարդու համար անհրաժեշտություն առաջացավ թուրքական պետության տարածքների, սահմանների ճշգրտման հարցում դիմել առավելապես մշակված ստրատեգիական հայեցակարգերի, քանի որ ավարառուի հակաքաղաքակրթական արքետիպային բնագոյն այլևս չէր բավարարում ժամանակի երկրաքաղաքական իրադրությունների պայ-

մաններում իրավիճակի ճիշտ գնահատմանը:

Այս առումով բացառիկ նշանակություն է ստանում գերմանական ռազմավարական միտքը, որտեղ մեզ համար առավել նկատելի է «Միջին Եվրոպայի» (Mitteleuropa) հայեցակարգի և թուրք ռազմական, ստրատեգիական վերնախավի վրա նրա հնարավոր ազդեցության ուսումնասիրությունը: Ենթադրելի է, որ այս հայեցակարգը մեծ ազդեցություն է ունեցել նրանց մտածումների վրա և կարող էր որպես տեսական հիմք ծառայել Հայոց ցեղասպանության իրականացման համար:

Միջին Եվրոպայի (Mitteleuropa) հայեցակարգը տարածքների զավթման միջոցով ծավալման, կայսրություն և նոր աշխարհագրություն ստեղծելու գերմանական հայեցակարգ է, որը պետք է ստեղծվի Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի միավորման միջոցով:

«Իդեալական ծրագրերի» մշակումը կարևոր նշանակություն ունի քաղաքական-տարածական մակարդակում: Այդ իդեալական ծրագրերի շարքից է նաև «Միջին Եվրոպայի» հայեցակարգը<sup>1</sup>:

Ընդհանրապես աշխարհում բազմաթիվ երկրաքաղաքական գործընթացներ տեղի են ունենում հենց «քարտեզների պատճառով»:

Երկրաքաղաքական պատկերային կառուցավորումներում կարևոր տեղ են զբաղեցնում, այսպես կոչված, ազգային մինիմումի պատկերային քարտեզները<sup>2</sup>: Այդպիսի պատկերային քարտեզներից է նաև Միջին Եվրոպայի գերմանական հայեցակարգը:

Միջին Եվրոպայի (Mitteleuropa) գաղափարի սկզբնավորման վերաբերյալ կան տարբեր տեսակետներ: Օրինակ՝ Ժերար Դենալտիի պնդմամբ Mitteleuropa-ն (Mitteleuropa – գերմաներենից թարգմանաբար նշանակում է «միջին» կամ «կենտրոնական» Եվրոպա) որպես քաղաքական կառույց ի հայտ է եկել ի հակակշիռ նապոլեոնական Եվրոպայի և իր տեսակի մեջ հակաեվրոպա էր եղել: Յոզեֆ Կրուսվորի կարծիքով Արևմուտքի, Արևելքի և Կենտրոնականի բաժանված Եվրոպայի գաղափարը մշակել է կանցլեր Մետերնիխը. նա պնդում էր, որ միապետական Ավստրիան պետք է «հոգ տանի» Կենտրոնական Եվրոպայի «սեպի» մասին, որպեսզի

<sup>1</sup> Улунян А. “Комминтерн и геополитика: Балканский рубеж”. 1919-1939. М., 1997, с. 18.

<sup>2</sup> Улунян А. ..., с. 10.



վերջինս պաշտպանի ավելի մասշտաբային բաժանումներից: Բայց քանի որ, ինչպես նշում է Յորգ Բրեխտեֆելդը. «Վիեննայի Կոնգրեսը 1815 թ. գերտերություններին արգելել էր սահմանների փոփոխության համար ուժ կիրառելը, այդ իսկ պատճառով Mitteleuropa-ի գաղափարի պաշտպաններն առաջին հերթին զարգացրին Mitteleuropa-ի տնտեսական և մշակութային հայեցակարգերը»<sup>3</sup>: Հենց այս պատճառով էլ որոշ տեսաբաններ Mitteleuropa-ի գաղափարը կապում են Ֆրիդրիխ Լիստի տնտեսական հայեցակարգի հետ<sup>4</sup>:

Եվ այսպես, Mitteleuropa-ի հայեցակարգը գիտական շրջանառության մեջ մտավ XIX դարի կեսերին տեսաբան-տնտեսագետ Ֆրիդրիխ Լիստի կողմից, ում անվանում են «Միջին Եվրոպայի առաջին մարզարե»: Լիստի Mitteleuropa-ի տնտեսագիտական գաղափարն այնուհետև զարգացրին Կոնստանտին Ֆրանցը, Կառլ Լյուդվիկ ֆոն Բուրկը և Պաուլ դե Լագարդը<sup>5</sup>:

Ֆրիդրիխ Լիստը միջինեվրոպական տնտեսական միության ստեղծման կողմնակից էր: Լիստը Միջին Եվրոպայի ստեղծումը կարևորում էր միասնական գերմանական պետության ստեղծման և նրա անվտանգ, ապահով գոյության համար: Նա ենթադրում էր, որ գերմանական պետության ապագան դեպի մայրցամաք էքսպանսիան է<sup>6</sup>:

Միջին Եվրոպայի քաղաքականության (Mitteleuropapolitik) գաղափարը վերջնական ձևակերպում ստացավ Վիլհելմ II-ի իշխանության տարիներին, որի նպատակը ոչ միայն գաղութային պետության ստեղծումն էր, այլև Գերմանիան եվրոպական մայրցամաքի առաջատար պետություն դարձնելը: Նա խնդիր էր դրել ստեղ-

---

<sup>3</sup> St' u Brechtefeld J. Mitteleuropa and German politics, 1848 to the present. New York: St. Martin's Press, 1996. (Буховски М., Колбон И. От Mitteleuropa до Центральной Европы: очерк развития идеи. Перекрестки, 3-4, 2006, Журнал исследований восточноевропейского пограничья, Вильнюс, с. 112-138).

<sup>4</sup> St' u List F. The National System of Political Economy. New York: Longman 1904 [1841].

<sup>5</sup> St' u Meyer H. Mitteleuropa in German Thought and Action (1815-1945). The Hague, 1995 (Баранов Н. Срединная Европа Фридриха Науманна: становление концепции. Известия Уральского гос. ун-та. Сер. 2, Гуман. науки, 2009, №3 (65), с.17-181).

<sup>6</sup> Սուրիապյան Հ. [Պարչ-Նաումանի «Միջին Եվրոպայի» հայեցակարգերը: «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2015, № 2 \(17\), էջ 21-30:](#)

ծել տարածաշրջանային քաղաքական կազմավորում, որը կկարողանար դիմակայել Ֆրանսիային, Անգլիային և Ռուսաստանին: Եվրոպայում գերմանական էքսպանսիայի ուղղությունը որոշվում էր դեռևս վաղուց հայտնի թոփչք դեպի Արևելք (Drang nach Osten) և կենսատարածք (Lebensraum) արտահայտություններում: Մի խոսքով՝ Կենտրոնական Եվրոպայի առաջին ծրագիրը պետք է ծառայեր գերմանական հզոր կայսրության ստեղծմանը<sup>7</sup>:

Mitteleuropa-ի աշխարհագրական հայեցակարգը զարգացում է ստացել գերմանացի աշխարհագրագետ Յոզեֆ Պարչի Միջին Եվրոպա (Mitteleuropa)<sup>8</sup> աշխատանքում, որը եվրոպական համադաշնության հայեցակարգ է, այսինքն՝ պետությունների համախումբ Գերմանիայի միջուկով, քանի որ հենց Գերմանիան էր Արևմտյան Եվրոպայում զբաղեցնում կենտրոնական դիրք<sup>9</sup>:

Գերմանացի աշխարհագրագետ Յոզեֆ Պարչի Mitteleuropa գիրքը գերմանական քաղաքական և տնտեսական ընդհանուր գոտու ստեղծման ձգտումի արդյունք է: Պարչը գծել է մեծ Գերմանիայի քարտեզը, որը ձգվում էր Օստենդեից (Ժնևի միջով) մինչև Սև ծով<sup>10</sup>: Պարչի Mitteleuropa-ի մեջ էին մտնում հետևյալ պետությունները՝ Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բելգիա, Հոլանդիա, Շվեյցարիա, Չեռնոգորիա, Սերբիա, Ռումինիա և Բուլղարիա<sup>11</sup>:

Յոզեֆ Պարչի Մեծ Գերմանիայի գաղափարը պետք է հանգեր Պրուսիայի կողմից Կենտրոնական Եվրոպայի կառավարմանը<sup>12</sup>: Այս առիթով Յու. Տիխոնրավովը գրում է, որ երբ Պրուսիան պայքարում էր «բնական սահմանների» սեփական դոկտրինի ներքո Գերմանիան իրեն միացնելու համար, գործընթացը զարգացավ

---

<sup>7</sup> См. Буховски М., Колбон И. От Mitteleuropa до Центральной Европы: очерк развития идеи. Перекрестки, 3-4/2006, Журнал исследований восточноевропейского пограничья, Вильнюс, с. 112-138.

<sup>8</sup> St' u Partsch J. Mitteleuropa. Die Länder und Völker von den Westalpen und dem Balkan bis an den Kanal und das Kurische Haff. Gotha, 1904.

<sup>9</sup> См. Крупнов Ю. Минск должен стать столицей «Новой Центральной Европы» (06.05.2011), // <http://www.km.ru/bssr/2011/05/06/soyuznoe-gosudarstvo-rossii-i-belorussii/minsk-dolzhen-stat-stolitsei-novoi-tsentra> (13.05.2015).

<sup>10</sup> St' u Partsch J. Mitteleuropa. Gotha: J. Parthes, 1904.

<sup>11</sup> St' u Partsch J. Central Europe / tłum. C. Black. New York: D. Appleton and Company, 1903, Map 1. "Central Europe", frontispiece.

<sup>12</sup> St' u Partsch J. Central Europe / tłum. C. Black. New York: D. Appleton and Company, 1903, p. 141.

երկու ուղղությամբ՝ «բնական լեզվական սահմանների» («Փոքր Գերմանիայի» գաղափարը) և «բնական ռելիեֆային սահմանների» («Մեծ Գերմանիայի»): Եթե առաջին ուղղությունը նախատեսում էր մեկ պետության մեջ բոլոր այն տարածքների միավորումը, որոնք բնակեցված էին գերմանական ծագում ունեցող մարդկանցով, ապա երկրորդը նախատեսում էր, այսպես կոչված, Մեծ Գերմանիայի ստեղծումը, որի կազմի մեջ պետք է մտնեին ոչ միայն Ավստրիան, այլև Լեհաստանի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Լյուքսեմբուրգի, Շվեյցարիայի տարածքների մի մասը<sup>13</sup>:

Պարզի կարծիքով քաղաքակրթական գերազանցությունը և դեմոգրաֆիական առավելությունը նրան տալիս էին այդ իրավունքը: Այդ կազմավորման սահմաններում գերմանացիները պետք է կազմեին ամբողջ բնակչության 51.1 %-ը<sup>14</sup>, ամբողջ տարածքում (բացառությամբ «Սերբիայի և Չեռնոգորիայի հետամնաց շրջանների») հաղորդակցության լեզուն պետք է լիներ գերմաներենը: Գործնականում այն պետք է ընդգրկեր գերմանալեզու ազգությունները, այդ իսկ պատճառով էլ կապված է «ժողովուրդ» (volk) բառի հետ: Եվ ինչպես Էռնստ Արենդտի հեղափոխական երգում է հնչում. «Գերմանիան պետք է լինի ամենուր, որտեղ կլսվի գերմաներենը»<sup>15</sup>: Համաձայն պետության կենսաբանական տեսության՝ «գերբնակեցված» երկրներում առաջանում է մյուս պետությունների սահմանների նկատմամբ ճնշում<sup>16</sup>, որն անխուսափելիորեն հանգեցնում է հարևան պետության տարածքների վերաբնակեցման (գրավման՝ Ն. Սուբիասյան): Սա ընդլայնման անհրաժեշտությամբ պայմանավորված ճնշում է, որը տվյալ պետությունը գործադրում է հարևան պետության վրա. այսպիսի ճնշումը կոչվում է մասնավոր ճնշում (Druckquotienten)<sup>17</sup>:

<sup>13</sup> См. Яковлюк И. Идея срединной Европы в концептуальных разработках европейских геополитиков второй половины XIX–начала XX вв.: историко-теоретический анализ. №3. PolitBook, 2013-4, с. 132-151.

<sup>14</sup> St' u Partsch J. Central Europe / tłum. C. Black. New York: D. Appleton and Company, 1903, p. 141.

<sup>15</sup> Буховски М., Колбон И. От Mitteleuropa до Центральной Европы: очерк развития идеи. Перекрестки, 3-4/2006, Журнал исследований восточноевропейского пограничья, Вильнюс, с. 112-138.

<sup>16</sup> Zeitschrift für Geopolitik, 1931, Heft 7, p. 549.

<sup>17</sup> Նույն տեղում:

Ռատցելը հիմնավորում էր. «Պետությունների բնույթն այնպիսին է, որ դրանք զարգանում են՝ մրցելով հարևան պետությունների հետ, ընդ որում՝ այդ պայքարում պարզևր մեծամասամբ լինում է տարածքի տեսքով»<sup>18</sup>: Նրա կարծիքով. «Ժողովուրդը աճում է՝ մեծացնելով իր թիվը, երկիրը աճում է՝ մեծացնելով իր տարածքները: Քանի որ աճող ժողովուրդը կարիք է զգում նոր տարածքների իր թվի աճի համար, ապա այն դուրս է գալիս իր երկրի սահմաններից: Առաջին հերթին պետությունը իրեն դնում է իր դատարկ տարածքների զբաղեցման ծառայությանը: Եթե այդ տարածքները բավարար չեն, ապա ժողովուրդը ձգտում է դուրս գալ երկրի սահմաններից, և այդ ժամանակ ի հայտ են գալիս տարածական աճի այն բոլոր ձևերը, որոնք վերջ ի վերջո հանգեցնում են նոր տարածքների ձեռքբերմանը»<sup>19</sup>:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ պատասխանատու գերմանացի պետական գործիչները դեռևս Առաջին համաշխարհային պատերազմից առաջ կիրառում էին նույն փաստարկումը, ինչը կիրառում էր Ռատցելը: Այդ ժամանակվա ռայխկանցլեր Բեթման-Հոլվեգը ֆրանսիացի դեսպանին հայտնել էր, որ գերմանացի բնակչության աննախադեպ աճի, արդյունաբերության, առևտրի և նավատորմի աննախադեպ աճի պայմաններում կայսրությունը ստիպված է ձգտել ինչ-որ ձևով ընդլայնման: Ինչպես ցանկացած օրգանիզմ՝ գերմանացի ժողովուրդը նույնպես պահանջում է էքսպանսիայի հնարավորություն<sup>20</sup>:

Պարչի այս պանգերմանական գաղափարը հետագայում առավել զարգացում ստացավ լյութերական քահանա, հրապարակախոս, քաղաքական գործիչ Ֆրիդրիխ ֆոն Նաումանի կողմից իր համանուն Mitteleuropa<sup>21</sup> գրքում:

Ֆրիդրիխ Նաումանն իր Mitteleuropa «բեքսելերում» մանրամասն վերլուծում է հնարավոր քաղաքական կազմավորման

<sup>18</sup> Ratzel F. Politische Geographie, München, Leipzig, 1897, p. 247.

<sup>19</sup> Ratzel F. ..., p. 129.

<sup>20</sup> St u Documents Diplomatiques Fran?ais 1871-1914", Serie 111, vol. 9, p. 210-211, Mb 177, Cambon an Doumergue 28.1.1914. (Гейден Г. Критика немецкой геополитики. М., Издательство иностранной лит-ры, 1960, 312 с. <http://4i5.ru/uchebnik/teoreticheskoe-soderjanie-nemetskoy-30635.htm> (30.08.2015).

<sup>21</sup> Науманн Ф. Срединная Европа (Mitteleuropa). Пер. В. Фань-дерь-Флита. К-Во "ОГНИ ", Петроградъ, 1918, 136 с.

պատմական, կրոնական, ազգային, տնտեսական, մաքսային և սահմանադրական հարցերը: Դրա հիմքում, ինչպես Յոզեֆ Պարչի մոտ, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի միացումն է:

Ինչպես նշում է Նաումանը. «Եթե միջին Եվրոպային վիճակված է դառնալ անկախ պատմական մեծություն, ապա նախ պետք է առաջանա նոր պատմական գիտակցություն, քանի որ միայն տնտեսական նկատառումներով, ինչքան էլ որ դրանք ծանրակշիռ լինեն, միևնույնն է, դրա ձևավորման համար անհրաժեշտ ստեղծագործական կամք հնարավոր չէ ստեղծել: Ցանկացած նոր հասարակական երևույթ առաջին հերթին ձևավորվում է մարդկային հոգում, իսկ այդ հոգին էլ բացառապես տնտեսական չէ. այն բոլոր ժամանակներում, ինչպես և հիմա, կազմված է տարատեսակ նյութական և հոգևոր, պարզ և խավար դրդապատճառներից և իրադրություններից և ղեկավարվում է դրանցով»<sup>22</sup>:

Նաումանը գտնում էր, որ Միջին Եվրոպայի բոլոր պետություններն ունեն միևնույն «աշխարհագրական ճակատագիրը». դրանք չունեն «բնական սահմաններ»: «Միջին Եվրոպան», ի տարբերություն պանգերմանական ազգայնական այլ գաղափարների, մաքուր երկրաբաղաքական (գեոքաղաքական) հասկացություն է, որտեղ կենտրոնական տեղը զբաղեցնում է ոչ թե Էթնիկ միասնությունը, այլ աշխարհագրական ճակատագրի ընդհանրությունը<sup>23</sup>:

Սա մայրցամաքում աշխարհագրական այն տարածությունն է, որը գերազանցելու է Գերմանիայի սահմանները, որտեղ գերմանացիները պետք է ունենան ռազմավարական գերիշխանություն<sup>24</sup>: Ստյուարտ Էլդենը նշում է, որ այս գաղափարն իր փաստարկներով նման է «տարածք առանց ժողովրդի» մոտեցմանը, որը պետք է լցվեր այնպիսի ժողովրդով, որը կամ չունի տարածք, կամ որին եղած տարածքը բավարար չէ:

Միջին Եվրոպայի հայեցակարգը պետք է դիտարկել որպես Գերմանիայի համար կենսատարածքի ապահովման և գերտերության կարգավիճակի (կերպարի) պահպանման ուղիներից մեկը:

<sup>22</sup> Науманн Ф. Срединная Европа (Mitteleuropa). Пер. В. Фань-дерь-Флита. К-Во "ОГНИ", Петроградъ, 1918, с. 34.

<sup>23</sup> Տե՛ս Тихонравов Ю. Начала геополитики, // [http://vasilievaa.narod.ru/gu/stat\\_rab/book/Geopolitika/2-36.aspx.htm](http://vasilievaa.narod.ru/gu/stat_rab/book/Geopolitika/2-36.aspx.htm) (13.05.2015):

<sup>24</sup> Տե՛ս Elden St. Reading Schmitt geopolitically. nomos, territory and Grossraum. Radical Philosophy, No 161, May/June 2010, p. 18-26.

Ընդ որում՝ գերմանական ծավալապաշտոներին չէին բավարարում «Mitteleuropa»-ի աստիճանական իրականացումը, ձևավորումը: Նրանք պահանջում էին «Mitteleuropa»-ի իրականացումը «մեկ հարվածով»<sup>25</sup>:

Հարկ է նշել, որ ոչ միայն պետության, այլև ցանկացած միջպետական կազմավորման համար սկզբունքային և կարևորագույն հարցը սեփական տարածքների սահմանները որոշելն է<sup>26</sup>: Mitteleuropa-ն երկրաքաղաքական հայեցակարգ է, որն արտահայտում է Գերմանիայի ձգտումը՝ ճշգրտելու սեփական աշխարհագրական տարածքները մյուս պետությունների հաշվին սեփական կենսատարածքն ընդլայնելու միջոցով:

Ընդհանրապես գերմանական գեոստրատեգիական միտքը հիմնված է տարածքային էքսպանսիայի սկզբունքի վրա:

Ռատցելը, լինելով պետության օրգանական ծագման տեսության կողմնակից, ձևակերպել է «տարածություն» (Raum) կատեգորիայի նոր բովանդակություն: Ըստ նրա՝ տարածությունը քանակական-նյութական կատեգորիայից փոխակերպվում է նոր որակի՝ վերածվելով «կենսատարածքի» (Lebensraum), ինչն իր հերթին պայմանավորում է այնպիսի հասկացությունների առաջացումը, ինչպիսիք են՝ «տարածական զգացողությունը» (Raumsinn) և «կենսաէներգիան» (Lebensenergie), որոնք բնորոշում են աշխարհագրական համակարգերը՝ նախորոշելով նրանց քաղաքական ձևակերպումները<sup>27</sup>:

Ռատցելը նաև փորձել է հիմնավորել այն գաղափարը, համաձայն որի՝ տարածական էքսպանսիան օրինաչափ, բնական գործընթաց է: Իր «Պետության տարածական աճի օրենքների մասին» հոդվածում Ռատցելը ձևակերպել է էքսպանսիայի յոթ օրենք՝ 1. պետության մշակույթի զարգացումը նպաստում է նրա տարածքի

---

<sup>25</sup> Поп И. «Срединная Европа» в планах кайзеровской Германии в период первой мировой войны. Исследования по славяно-германским отношениям. М., 1971. с. 134-148.

<sup>26</sup> См. Яковлюк И. Идея срединной Европы в концептуальных разработках европейских геополитиков второй половины XIX-начала XX вв.: историко-теоретический анализ. №3. PolitBook, 2013-4, с. 132-151.

<sup>27</sup> См. Яковлюк И. Идея срединной Европы в концептуальных разработках европейских геополитиков второй половины XIX-начала XX вв.: историко-теоретический анализ. №3. PolitBook, 2013-4, с. 132-151.

ավելացմանը (նա ենթադրում էր, որ մշակույթի տարածումը գործի է գցում մշակութային ժողովուրդների գերաճի գործընթացի ինքնա-  
բազացման մեխանիզմը. բնակչության թվաքանակի աճը պայմա-  
նավորված է մշակույթի զարգացմամբ ինչպես հին, այնպես էլ նոր  
մշակութային կենտրոններում<sup>28</sup>), 2. պետության տարածական աճն  
ուղեկցվում է գաղափարական, տնտեսական, կրոնական (պրոգնեզի-  
տիզմ՝ դավանափոխության քաղաքականություն) ոլորտների աճով,  
3, ընդլայնման գործընթացում պետությունը կուլ է տալիս, կլանում է  
պակաս նշանակություն ունեցող քաղաքական միավորներին, 4.  
սահմանները պետության ծայրամասային օրգաններն են և որպես  
այդպիսիք՝ վկայում են նրա աճի և ուժի կամ, ընդհակառակը, թու-  
լության և անկման (նվազման) մասին, 5. էքսպանսիայի քաղաքա-  
կանությունը ենթադրում է պետության կողմից իր զարգացման հա-  
մար առավել կարևոր նշանակություն ունեցող շրջանների (հա-  
րուստ տարածքների) գրավումը, 6. էքսպանսիայի համար խթանն  
առաջանում է պետության սահմաններից դուրս, քանի որ պետու-  
թյունը «դրդվում» է էքսպանսիայի ավելի ցածր քաղաքակրթական  
զարգացմամբ հարևան քաղաքական միավորումների կողմից  
(նրանց հաշվին), 7. թույլ ազդերին կլանելու և ձուլելու ընդհանուր  
միտումը պետությանը մղում է տարածքների էլ ավելի ընդլայն-  
ման<sup>29</sup>:

Ընդհանուր առմամբ սա Ռաուցելի կողմից էքսպանսիան՝  
որպես օրինաչափ գործընթաց, ներկայացնելու փորձ է, որն  
ուղղված է միայն գերտերությունների զարգացմանը, ինչը տեղի է  
ունենում մյուս պետությունների հաշվին: Սա փաստացի նշանա-  
կում է պետությունների սուվերեն հավասարության սկզբունքի  
հերքում, քանի որ պետությունները բաժանվում էին քաղաքակիրթ,  
սուվերեն պետությունների և ոչ քաղաքակիրթ պետությունների,  
որոնք ունեին գոյության իրավունք այնքան ժամանակ, քանի դեռ

<sup>28</sup> Ратцель Ф. Народоведение: в 2 т.; пер. с нем. Д.А. Коропчевского. СПб.: Книгоизд. товарищество «Просвещение», 1900. Т. 1. 1900. с. 11, 13-14. (Яковюк И. Идея срединной Европы в концептуальных разработках европейских геополитиков второй половины XIX-начала XX вв.: историко-теоретический анализ. №3. PolitBook, 2013-4, с. 132-151).

<sup>29</sup> St u Ratzel F. Die Gesetze des raumlichen Wachstums der Staaten. Ein Beitrag zur wissenschaftlichen politischen Geographie/ Petermanns Geographische Mitteilungen. 1986. Jg. 42. p. 97-107.

գերտերությունները հետաքրքրություն չեն դրսևորել նրանց տարածքների և ռեսուրսների նկատմամբ<sup>30</sup>:

Սա միգուցե երկրաքաղաքական ռետրոսպեկտիվ (ինչու՞ չէ նաև ռեակցիոն, ինչու՞ չէ նաև հակաքաղաքակրթական) հայեցակարգ է, բայց քաղաքական ռեալիզմը գործնականում ապացուցում է դրա անփոխարինելիությունը<sup>31</sup>:

Ինչևէ, անդրադառնանք Ֆրիդրիխ Նաումանի Mitteleuropa-ի հայեցակարգին:

Ըստ Նաումանի՝ «Միջին Եվրոպան» ունենալու է գերմանական առանցք<sup>32</sup>: Այսինքն՝ գերմանացիները գերակայելու են Mitteleuropa-ում: Գերմանականության շուրջ ծնվելու է Միջին Եվրոպայի մշակույթը<sup>33</sup>: Գերմանական առանցքին, ըստ Նաումանի, պետք է միավորվեն փոքր պետությունները, որոնք ունակ չեն գոյատևելու առանց մեծ տերությունների հետ դաշինքի<sup>34</sup>: Սակայն մինչև պետությունների միավորման մասին մտածելը պետք է նախ և առաջ ավարտվի գլխավոր միջուկի (առանցքի) բյուրեղացման գործընթացը<sup>35</sup>: Սակայն Նաումանը լավ հասկանում էր, որ Mitteleuropa-ի ստեղծման ճանապարհին գոյություն ունեն և ունենալու են բազմաթիվ խոչընդոտներ: Եվ ինչպես նշում է Նաումանը. «Պետք է հասկանալ, որ փոքր ժողովուրդները ինքնակամ չեն միավորվի միջին եվրոպական միության կազմում»<sup>36</sup>: Իսկ միավորման համար կան բազմաթիվ գործիքներ՝ պատերազմ, ցեղասպանություն:

Mitteleuropa-ի ստեղծման խոչընդոտների շարքում Նաումանը

---

<sup>30</sup> См. Яковлюк И. Идея срединной Европы в концептуальных разработках европейских геополитиков второй половины XIX-начала XX вв.: историко-теоретический анализ. №3. PolitBook, 2013-4, с. 132-151.

<sup>31</sup> Սուրիաշյան Հ. Պարզ-Նաումանի «Միջին Եվրոպայի» հայեցակարգերը: «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2015, № 2 (17), էջ 21-30:

<sup>32</sup> См. «Срединная Европа», в кн.: Дергачев В. Геоэкономический словарь-справочник. Одесса, 2004, // <http://politike.ru/dictionary/973/word/-sredinaja-evropa> (15.07.2014).

<sup>33</sup> См. Науманн Ф. Срединная Европа (Mitteleuropa), с. 55.

<sup>34</sup> См. «Срединная Европа», в кн.: Дергачев В. Геоэкономический словарь-справочник. Одесса, 2004, // <http://politike.ru/dictionary/973/word/-sredinaja-evropa> (15.07.2014).

<sup>35</sup> См. Науманн Ф. Срединная Европа (Mitteleuropa), с. 3.

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 67:



նշում է Պրուսիայի լեռերին, որոնք մեծ խնդիր են պետության համար, բայց, միևնույնն է, նրանք քիչ են, և հարկ չկա նրանց շատ լուրջ ընդունել<sup>37</sup>: Այնուամենայնիվ, դատելով նրա մյուս դատողություններից, այդ բոլոր դժվարությունները, խոչընդոտները հաղթահարելի են: Եվ ինչպես կայսերապաշտական ոգով գրում է Նաումանը. «Այսօր այլևս ժամանակավրեպ է հաշվի առնել միջին եվրոպական փոքր ժողովուրդներին՝ որպես մեծ ծրագրի իրագործման համար դրական մեծություններ»<sup>38</sup>: Նույն միտքն ասում է նաև Յոզեֆ Պարչը. «Կենտրոնական Եվրոպայի մյուս հատվածները, ցանկանում են նրանք դա, թե ոչ, պետք է պատկանեն գերմանական քաղաքակրթական միջավայրին»<sup>39</sup>: Այս գաղափարը սերտորեն կապված է գերմանական Blut und Boden (արյուն և հող) ռասիստական խոսույթի (դիսկուրսի) հետ:

Գովերգելով իր ընկեր Ռոհրբախի գաղափարները՝ Նաումանը գրում է. «.... Ազգային մտածողություն ունեցող ոչ մի չէիս կամ հունգարացի չի դատապարտի մեզ այն բանի համար, որ մենք երգում, երագում և հոգ ենք տանում Գերմանիայի վեհացման մասին»<sup>40</sup>: Նաումանը պնդում էր, որ գերմանական համաշխարհային քաղաքականությունը պետք է ձևակերպված լինի բարոյականությունից ազատ ոլորտում և պաշտպանի միայն ազգային շահերը: Այնուամենայնիվ, դա Նաումանի համար անբարո չէր, այլ նա «գերմանական համաշխարհային քաղաքականությանը տալիս էր eo ispo (ինքնըստինքյան) բարոյական որակներ»: Ըստ Նաումանի՝ գերմանացի ժողովուրդն ամենակարևոր արևմտյան-քրիստոնեական մշակույթի կրողն է, և նա փորձեց Հայոց հարցի վերաբերյալ Գերմանիայի համաշխարհային քաղաքականությունը՝ որպես ավելի բարձր բարոյականություն, արդարացնել. «... չթուլացած գերմանացի ժողովուրդը ամբողջ աշխարհում անհամեմատ ավելի կարևոր է, քան ողջ Հայոց հարցը: Ամեն ոք, ով այդպես է մտածում և գործում,

<sup>37</sup> См. Буховски М., Колбон И. От Mitteleuropa до Центральной Европы: очерк развития идеи. Перекрестки, 3-4/2006, Журнал исследований восточноевропейского пограничья, Вильнюс, с. 112-138.

<sup>38</sup> Науманн Ф. Срединная Европа (Mitteleuropa), с. 2.

<sup>39</sup> Partsch J. Central Europe / tłum. C. Black. New York: D. Appleton and Company, 1903, p. 142.

<sup>40</sup> Науманн Ф. Срединная Европа (Mitteleuropa). Пер. В. Фань-дерь-Флита. К-Во "ОГНИ", Петроградъ, 1918, с. 11.

միևնույն ժամանակ մատուցում է մարդկության բարոյական զարգացմանը լավագույն և մեծագույն ծառայություններ»<sup>41</sup>:

Mitteleuropa-ի ծրագրի իրականացման համար Նաումանը նշում է. «Մենք չենք հերքում նրանց (Ավստրո-Հունգարիայի - Հ. Սուբիասյան) ձևական իրավունքը՝ զբաղեցնելու մեզ համար ոչ բարենպաստ դիրքեր, սակայն մենք հաստատում ենք միայն այն, որ Ավստրո-Հունգարիայի կողմից միության (Mitteleuropa-ի- Հ. Սուբիասյան) գոյությանը սպառնացող գործողությունները հավասարազոր կլինեն նրանց ոչնչացմանը: Գերմանիայի հետ ավստրո-հունգարական դաշինքը ոչ թե բարոյական պարտք է, այլ սեփական ինքնապահպանման անխուսափելի անհրաժեշտություն»<sup>42</sup>:

Ըստ Նաումանի. «Միջին Եվրոպան կարելի է համեմատել լճի հետ, որտեղ լողում են ամենատարբեր տեսակի ձկներ: Միաձուլել այդ ամբողջը մեկ պետական օրգանիզմում և բերել մեկ քաղաքական հայտարարի՝ մարդկային ցանկացած տեսակի ուժը գերազանցող խնդիր է, բայց, ինչպես կոնստյան և նիցշեական ոգով գրում է Նաումանը, միևնույն ժամանակ՝ մեծագույն պետական գործիչներին արժանավայել նպատակ, որոնց կամքից է կախված պատմության ոգին»<sup>43</sup>: Հարկ է նկատել, որ Օ. Կոնտի, նաև Նիցշեի գերմարդու գաղափարներն ուրույն տեղ են ունեցել պասիոնար հայասպանների գաղափարներում:

Ըստ Հր. Միմոնյանի բավական հիմնավորված մոտեցման՝ Օգյուստ Կոնտի արտահայտած մտքերը և գաղափարները չափազանց մեծ ազդեցություն են գործել թուրքերի ազգային բուրժուազիայի գաղափարաբանության վրա: Կոնտի ուսմունքը, նրա պոզիտիվիզմի տեսությունը որոշակի գործողությունների փիլիսոփայություն է, որն իրեն ձեռնադրում է մեկնաբանում հասարակական երևույթները՝ հաշվի չնստելով ռացիոնալ մտածողության, տրամաբանության հետ<sup>44</sup>: Կոնտի պոզիտիվիզմի ազդեցությունը հատկապես ուժեղ էր երիտթուրքերի՝ Փարիզի «Միություն և առա-

<sup>41</sup> **Schmuhl Von Hans-Walter.** Friedrich Naumann und die Armenische Frage Die deutsche Öffentlichkeit und die Verfolgung der Armenier vor 1915. <http://www.hist.net/kieser/agheth/Essays/EssaySchmuhl.html> (02.06.2015).

<sup>42</sup> **Науманн Ф.** Срединная Европа (Mitteleuropa). С. 24.

<sup>43</sup> **Науманн Ф.** ..., с. 54.

<sup>44</sup> **Միմոնյան Հ.,** Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 268:

ջադիմություն» կազմակերպության ղեկավարների աշխարհայացքի ձևավորման վրա: Երիտթուրքական գաղափարներին և գործելակերպին քաջածանոթ հայ կաթոլիկ բարձրաստիճան եկեղեցական Հովհաննես Նազյանը վկայում է, որ «երիտասարդ թուրքերը իրանք զիրենք կիռչակեին իբրև Օգյուստ Կոնստի դպրոցին սկզբունքներով կառապարուածներ....»<sup>45</sup>:

Mitteleuropa-ի ստեղծման համար լավագույն առիթը Նաումանը համարում էր պատերազմը (Առաջին աշխարհամարտ) և նշում է. «Եթե մենք պարտվենք, ապա, ամենայն հավանականությամբ, դատապարտված կլինենք մնալու «ազգ-արբանյակ», եթե հաղթենք կիսով չափ, ապա ստիպված կլինենք ևս մեկ անգամ մտնել պայքարի մեջ, իսկ եթե մենք հաղթենք, ապա մենք կթեթևացնենք մեր երեխաների և թոռների գործը, և Միջին Եվրոպան կգրանցվի գալիք դարերի երկրային գրքի մեջ»<sup>46</sup>:

Mitteleuropa-ի հայեցակարգը պասիոնար էթնոազգային (պանգերմանական) տարածաշրջանային միավորում ստեղծելու հայեցակարգ է<sup>47</sup>:

Mitteleuropa-ն ոչ միայն ծրագրվող միավորման մեջ մտնող պետությունների աշխարհագրական տեղակայության, այլև որոշակի քաղաքակրթական երևույթ է: Ըստ Ա. Միլլերի՝ սա Եվրոպայի քաղաքակրթական քարտեզի հետ խաղերի և տարբեր սկզբունքներով այդ քարտեզը բաժանելու ձև է<sup>48</sup>: Ընդ որում՝ հենց Նաումանի կարծիքով պատերազմը երկրամասը բաժանելու նախադրյալ է, և Mitteleuropa-ի ստեղծման համար լավագույն առիթը համարում էր հենց պատերազմը:

Միջին Եվրոպան բնորոշում է պետությունների երկրաքաղաքական ինքնությունը՝ ձևավորելով «միջքաղաքակրթական գոտի»<sup>49</sup>:

---

<sup>45</sup> Տրապիզոնի թեմին վիճակավոր Յովհաննես արք. Նազլեանի յուշերը..... էջ 10-11: (Միմոնյան Հր. Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 268,269):

<sup>46</sup> Науманн Ф. Срединная Европа (Mitteleuropa), с. 94.

<sup>47</sup> См. Коренчук О. Идея срединной Европы и ее отражение в работах Ф. Науманна. *Leges et viata*, Moldova, Nr. 8/3 (272) 2014, с. 78-80.

<sup>48</sup> См. Миллер А. Восток Европы или к востоку от Европы/Pro et Contra. Том 3. №2. 1998. 15, с. 7-8.

<sup>49</sup> St u Partsch J. Mitteleuropa. Die Länder und Völker von den Westalpen und dem Balkan bis an den Kanal und das Kurische Haff. Gotha. 1904.

Միջին Եվրոպայան ունի իր երկրաքաղաքական ինքնությունը, քանի որ միջանկյալ դիրք է գրավում ատլանտականության և եվրասիականության միջև<sup>50</sup>:

Հարկ է նշել, որ դա, ըստ էության, նաև նոր ինքնության ձևավորման հայեցակարգ է, քանի որ երկրաքաղաքական պատկանելությունն ավելի շարժական է, քան քաղաքակրթականը: Եվ ինչպես Միջին Եվրոպայի մասին նշում է Նաումանը. «Մենք պատմական կիսաֆաբրիկատ ենք. գերմանացիների շուրջ ձևավորվում է Միջին Եվրոպայի մշակույթը, ձևավորվում է միջինեվրոպացին»: «Մենք պետք է պատերազմից վերադառնանք որպես միջինեվրոպացիներ»<sup>51</sup>:

Այս հայեցակարգը, ըստ էության, նոր աշխարհագրական ինքնություն ձևավորելու հայեցակարգ է: «**Աշխարհագրական անհատականություն**» հասկացությունը ձևակերպել է Ռիտերը, որը վերաբերում է որպես մեկ ամբողջություն ձևավորված կամ կազմող աշխարհագրական շրջանին, տարածությանը: Այս հասկացությունն ունի երկու բաղադրիչ. արտաքին փոխհարաբերությունների տեսանկյունից աշխարհագրական անհատականությունը բնութագրվում է «բնական սահմաններով», ներքին ընկալումի տեսանկյունից բնութագրվում է այնպիսի կապերով, որոնք ներհատուկ են «օրգանական բնական միջավայրին»: Այս հիմքի վրա գեոպոլիտիկները ձևակերպեցին «պետության աշխարհագրական անհատականացման օրենքը»<sup>52</sup>:

Հենց էթնոազգային գիտակցության գոյության շնորհիվ (մշակութային արժեքների, զգացմունքների, պատկերացումների, գաղափարների, կարծրատիպերի, սիմվոլների և նույնիսկ գաղափարական առասպելների) գերմանացիները, որպես էթնիկական հանրույթ, մարդկության էթնիկ բազմազանության համակարգի մեջ իրենց պատմականորեն հիմնավորված սոցիալ-մշակութային տեղանքը (տեղակայությունը) պետք է գտնեն: Եվ ինչպես նշում է

---

<sup>50</sup> См. Окара А. Дурманиящие иллюзии «Серединной Европы»: Европейский «континентализм» как манипулятор «Большой Евразией», <http://old.russ.ru/politics/20021022-okara-pr.html> (11.03.2015).

<sup>51</sup> Науманн Ф. Срединная Европа (Mitteleuropa), с. 6.

<sup>52</sup> Гейден Г. Критика немецкой геополитики. М., Издательство иностранной литературы, 1960, 312 с. <http://4i5.ru/uchebnik/teoreticheskoe-soderjanie-nemetskoy-30635.htm> (30.08.2015).

գերմանացի գրող Է. Արենդտը. «Աստված մեզ տեղավորել է Եվրոպայի կենտրոնում. մենք (գերմանացիներս) աշխարհի մեր հատվածի սիրտն ենք»<sup>53</sup>:

Եվ ինչպես իրենց ծավալուն հոդվածում նշում են Մ. Բուխովսկին և Ի. Կոլբոնը, Mitteleuropa-ի ծրագիրը, որը ստեղծվելու էր գերմանական հեռանկարով, ոմանց համար (նրանց, ովքեր երագում էին պանգերմանականության մասին) հույս էր, իսկ ոմանց համար (նրանց, ովքեր կովում էին բարիկադների մյուս կողմում, և որոնց համար Mitteleuropa-ն ասոցացվում էր «Բեռլին-Բաղդադ առանցքով» ագրեսիվ հայեցակարգերի հետ) սարսափի հայեցակարգ էր<sup>54</sup>:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ «Միջին Եվրոպայի» հայեցակարգը իդեալիստական ոգով, պասիոնար, սակայն երկրաքաղաքական և երկրառազմավարական հաշվարկներով տարածքների զավթման միջոցով կայսրություն ստեղծելու հայեցակարգ է:

Ընդհանրապես, ինչպես Միջին Եվրոպայի կայսերապաշտական հայեցակարգը, այնպես էլ Նաումանի երկրառազմավարական մյուս հայացքները և գաղափարները մեծ ազդեցություն են ունեցել թուրք նախամարդու առանց այն էլ մարդատյաց, հայատյաց մտքի վրա:

*HAYK SUKIASYAN (ARMENIA)*

## **THE CONCEPT OF "MIDDLE EUROPE" AND ARMENIAN POLICY OF TURKEY**

The plunder instinct, robbery and occupation of others homeland is the part of Turkish identity. In other words, the obsession to usurp territories was on the subconscious, archetypical level of Turks. Nevertheless, a time has come when the countercivilization instinct of a predator didn't correspond to geopolitical realities of time, and there was a need to apply carefully developed concepts to adjust the borders of the Turkic state for

---

<sup>53</sup> Баранов Н. Срединная Европа Фридриха Науманна: становление концепции./ Известия Уральского гос. ун-та. Сер. 2, Гуман. науки. 2009. №3 (65). с.17-181. (Яковлюк И. Идея срединной Европы в концептуальных разработках европейских геополитиков второй половины XIX-начала XX вв.: историко-теоретический анализ. №3. PolitBook, 2013-4, с. 132-151).

<sup>54</sup> Буховски М., Колбон И. ..., с. 112-138.

correct evaluation of geopolitical realities. And here, the Turkic political elite tried to find mechanisms of its own state borders adjustment by imperialistic motives. Here, Turkish youth came to the rescue of Turkey which was sent to Europe for education. In this context it is necessary to find out, what strategic concepts affected the Turkish military-political elite. In our opinion, the German geostrategic thinking had a greater influence on Turkish elite, more specifically the concept of "Middle Europe".

## 4. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

*АБЛАЖЕЙ НАТАЛЬЯ (РОССИЯ)*

### **ТЕМА ОСМАНСКОЙ И СОВЕТСКОЙ ДЕПОРТАЦИЙ В КОЛЛЕКТИВНОЙ ПАМЯТИ АРМЯН-РЕПАТРИАНТОВ**

Большое число жертв, ставшее следствием крупнейших кампаний по уничтожению отдельных групп людей на основании этнических или религиозных признаков (геноцида), обусловлено не только этническими чистками, но и депортациями (принудительными переселениями). История знает много примеров не только эпизодического использования депортационных практик, но и реализации рядом стран на протяжении длительных периодов специфической и целостной депортационной политики. Не всегда депортация (или даже депортационная политика) оказывается нацеленной на уничтожение какой-либо группы населения – в целом или ее части. Бесспорно, однако, то, что любое принудительное выселение – это репрессия, которая ведет к жертвам, обрекает их на изгнание и тяжелые условия жизни. Важно и то, что любые депортации априори незаконны, какие бы «законные» основания власть не пыталась под них подвести. Отметим также, что случаи квалификации депортаций международным правом как акта геноцида/этноцида и преступления против человечности крайне редки.

В данной статье, посредством анализа письменных свидетельств послевоенных репатриантов, очевидцев Геноцида и советских репрессий, мы попытаемся акцентировать внимание на описании и оценках османской (1915 г.) и советской (1949 г.) депортаций как двойной травмы для коллективной памяти армян.

Несмотря на масштаб трагедии и массовое количество свидетельств, в том числе и очевидцев Геноцида среди населения Советской Армении, власти удалось уже к середине 1920-х гг. купировать эту тему в публичном дискурсе. На протяжении трех десятилетий в СССР публичное упоминание о Геноциде армян в Османской империи было под запретом. Считается, что подобная практика обуславливалась в значительной степени геополитическими причинами. Только с середины

1960-х гг., под давлением оппозиционной общественности Советской Армении и на фоне сильного резонанса, который вызвали в армянском обществе события 50-летней давности, власть позволила советским армянам почитать память жертв Геноцида, при соблюдении максимума «политкорректности» как в отношении Турции, так и в оценках советско-турецких договоренностей 1921 г. Двойные стандарты и двойная мораль стали водоразделом между политикой и памятью.

Вводя запрет на память для целого народа, власть при этом не просто знала о масштабах трагедии, но и активно оперировала ею в своих геополитических стратегиях. Претензии к Турции, трактовавшиеся как требование «возвращения исконных армянских территорий», основывались на совокупности доводов (исторических, политических, этнографических и др.). Документальные материалы были объединены в особую папку «Захват Турцией армянских территорий», на которую был поставлен гриф «совершенно секретно». При этом сами события, связанные с Геноцидом, как невиданной человеческой трагедией, его методы и массовость, были вторичны, хотя и получили оценку как «планомерная и последовательная политика истребления», ...«которые не должно забыть свободолюбивое человечество». В частности, утверждалось, что согласно «достоверным источникам», число жертв резни можно оценить в 1 млн чел. и еще 1 млн – «бегство». Указывалось также на массовую исламизацию оставшегося армянского населения Турции; констатировалось, что для Турции вопроса турецкой Армении нет, т. к. они ее «освободили от армян»<sup>1</sup>.

Главным аргументом для мирового сообщества в обосновании территориальных претензий СССР к Турции была призвана стать именно массовая репатриация армян, предпосылками которой были высокий миграционный потенциал диаспоры и заявления руководства Советской Армении о желании принять полмиллиона армян. Выдвижение высшим советским руководством территориальных претензий к Турции позволило политической элите Советской Армении заговорить

---

<sup>1</sup> Докладная записка от 3 мая 1945 г. Министра иностранных дел С.К. Карапетяна заместителю министра иностранных дел СССР С.И. Кавтарадзе «О бывших армянских территориях, отошедших к Турции и о возможности возвращения армян, проживающих за рубежом» Карапетяна. Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1946–1947 гг. Под ред. А. Киракосяна. Ереван: Тигран Мец, 2010. С. 63, 66.



об Армянском вопросе и необходимости репатриации. Эта тема получает звучание в письмах первого секретаря ЦК КП Армении Арутюнова Сталину, на заседаниях ЦК КП Армении и даже грозит выйти в публичное пространство, после серии выступлений Арутюнова перед избирателями накануне выборов в Верховный совет в феврале 1946 г. На фоне начала массовой репатриации армян в Советскую Армению эта весьма острая тема могла приобрести полную публичность.

В 1946–1949 гг., во время реализации программы репатриации, из 12 стран Ближнего Востока, Европы и Америки в Советскую Армению прибыли почти 100 тысяч зарубежных армян, что не только обеспечило существенный прирост населения, но существенно увеличило долю выходцев из Западной Армении (прямых свидетелей Геноцида) и их потомков в структуре населения республики. Вывоз Советской армией армян из Ирана в 1946 г., а затем их организованная репатриация из Сирии и Ливана привели к всплеску в армянском обществе разговоров о западных территориях и, неизбежно, о трагических судьбах западных армян. Первые волны расселения репатриантов были в значительной степени сориентированы на оседание мигрантов в приграничных с Турцией областях. Рассчитывая на скорое решение территориального вопроса, власти Армении расселили 32,5 тыс. репатриантов (из 50,7 тыс., прибывших в июле-октябре в 1946 г. из Ирана, Сирии, Ливана, Болгарии, Румынии и Греции) в пограничной с Турцией долине р. Аракс<sup>2</sup>. Оседание мигрантов в приграничье не только усилило миграционные ожидания переселенцев, но и обострило ответную реакцию турецкого правительства.

За годы изгнания армянские общины сумели сохранить свою идентичность, которая резко усилилась на фоне патриотизма, обусловленного победой СССР во Второй мировой войне. Так как репатриация в Советскую Армению подавалась исключительно как этническое переселение, и право на въезд и получение советского гражданства имели только армяне, это обстоятельство повлекло массовые случаи смены национальной принадлежности. Вместе с тем, после въезда в страну стало очевидно, что часть переселенцев плохо знала армянский язык, в то время как курдский и турецкий воспринимала как родной. Приезд в Армению привел к очередному всплеску среди репат-

---

<sup>2</sup> ГА РФ. Ф. Р-9401. Оп. 2. Д. 169. Л. 72.

риантов национальной идентичности, этот процесс не остался без внимания МВД. В отчетах в Москву неоднократно приводились тому свидетельства. Приведем лишь одно из них: «иммигрант Аганжянян Султан в беседе с нашим источником заявил: «Мы были поработаны, нас преследовали турки, я вынужден был, в свое время, поменять свое имя на турецкое, а с приездом на родину с честью буду носить свое настоящее имя Саркис»<sup>3</sup>.

Репатриация очень скоро вызвала резкий рост миграционной активности в приграничье: однако здесь он был обусловлен эмиграционными намерениями вчерашних переселенцев. Тяжелая экономическая ситуация в республике провоцировала массовое бегство армян-репатриантов в Турцию. Уже в 1947 г. армяно-турецкий участок границы был признан «неблагополучным». Заместитель министра МВД СССР А. Н. Аполлонов, характеризуя эмиграционные настроения среди репатриантов в Армении, в своих докладных записках наряду с предложениями по ужесточению режима указывал на многочисленные случаи обнищания, недоедания и даже голода среди переселенцев, упоминая, в частности, одно из приграничных сел, где буквально каждая семья репатриантов потеряла от голода ребенка<sup>4</sup>. В качестве превентивных мер ведомство предлагало как репрессивно-административные меры (ужесточение пограничного режима, усиление наказания за побег, выборочное отселение от границы в глубинные районы республики), так и экономические (оказание экстренной гуманитарной помощи населению приграничья); иные меры, направленные на оседание и интеграцию переселенцев, которые «сократили бы отрицательные эмиграционные настроения и попытки нелегального ухода за границу»<sup>5</sup>. В 1947–1949 гг. в Армянской СССР была проведена кампания «по переселению реэмиграционно настроенных армян, прибывших из зарубежных стран, из пограничных в глубинные районы» республики. В ее рамках в формате административной высылки было проведено десять крупных отселений, под которые попали более 2 тыс. чел., хотя МВД и МГБ настаивали на более масштабных выселениях. Отселения от границы стали «прелюдией» к более масштабной высылке.

---

<sup>3</sup> ГА РФ. Ф. Р-9401. Оп. 2. Д. 139. Л. 119-120.

<sup>4</sup> ГА РФ. Ф. Р-9401. Оп. 2. Д. 199. Л. 16-17.

<sup>5</sup> ГА РФ. Ф. Р-9401. Оп. 2. Д. 199. Л. 383.

На фоне усиления политических репрессий по всей стране Армении захлестнула очередная волна «борьбы с буржуазным национализмом» и шпиономания. На этом фоне армян-репатриантов нередко рассматривали как «пятую колонну», людей, не разделявших советские ценности. Репатриантам инкриминировали связи с дашнакской партией, шпионаж, антисоветские настроения, измену Родине (к которой приравнивались даже эмиграционные намерения). Масштаб репрессий в отношении армян-репатриантов 1948–1953 гг. достиг 4 % от численности переселенческой группы, а их доля в общей массе армян, депортированных в 1949 г. на Алтай, превысила 11,5 %. Репрессии в отношении репатриантов не были направлены на уничтожение политических противников власти, в значительной степени они должны был «ускорить» формирование у основной массы репатриантов советской идентичности.

Анализ формальных процедур, связанных с рутинными следственными действиями в отношении репатриантов, высланных вглубь страны, шаблонные вопросы «о родственниках за границей» и «что Вы делали до приезда в Советский Союз» рисуют потрясающую по своей трагичности палитру судеб армян, переживших Геноцид. Персональные истории людей, переживших уже два трагических эпизода, продолжали настойчиво звучать и позднее, уже из ГУЛАГа, когда заключенные и высланные, в попытках добиться справедливости писали «во власть». В этих свидетельствах глубоко личные истории становятся историей коллективной.

Приведем лишь некоторые из них<sup>6</sup>:

*«... родилась в Себастии, в Турции. Наша семья состояла из 12 человек, моя мать, отец и 10 душ детей. В войну всю нашу семью, мать, отца, моих братьев и сестер вырезали турки, лишь мне одной удалось бежать в Египет. Голодная, босая, после долгих скитаний по арабским пустыням я устроилась в Александрии».*

*«15 лет жили под турецким игом и страдали от турецкой монархии. После чего турецкое государство решило нас выгнать из*

---

<sup>6</sup> Здесь и далее приводятся выдержки из архивно-следственных дел и дел на выселение (НА РА. Ф. 1191. Оп. 3, 6). Ссылки на дела не приведены по причине законодательных ограничений в использовании персональных данных.

*родного дома, месяц прожили под открытым небом, после чего нас приняло Арабское государство».*

*«Я родился в Турции. Жили мы очень бедно. Говорить я мог только по-курдски, не зная турецкого языка, а также не владел и своим родным языком. И когда в Турции на религиозной и национальной почве началась резня армян, то я с супругой, а также часть других армян бежали в Аравию».*

*«Моя семья состояла из 41 души, но во время депортации из Турции 36 членов семьи от вражеских рук погибли».*

*«Мы видели много страдания, мы не помним ни одного солнечного дня. Видели страшные дни резни и депортации турецких армян, мы под мечами черкесов и аскаров оставили родину, родной дом в Киликии, г. Ачин, и в течение перехода через арабскую пустыню из 9 членов семьи моего отца в живых остался только я. Отец скончался от ужаса, от голода умерли моя жена и трое детей, умерли мой брат с женой и ребенком. И только я остался в живых и как свидетельство этих жутких дней фотография кучи костей, которую я посылаю с этим заявлением. Здесь находятся также кости моих родных. Почему я остался в живых? Был бы счастлив умереть вместе с ними».*

*Встречаются и свидетельства о спасении турками армян в период Геноцида. Вот одно из них: «Я родился в Турции, в г. Килис, в 1914 году. В том же году началась война и потому всех армян выслали в Тер Зор, где началась резня армян. К счастью, нашелся один турок, у кого не было детей, он предложил родителям передать меня, полторалетнего мальчика, ему; и что он спасет их жизни. Родители согласились. Я 15 лет жил у этого турка, не зная свое происхождение, свою веру и своих родных. Мать моя, турчанка, умерла, а мачеха не хотела больше держать у себя и выгнала. Отец-турок, знал, где мои родители. В 1929 [настоящий] отец приехал и забрал меня в Алепп». При этом само «спасение» описывается чаще как исламизация и отуречивание.*

*В одном из писем адресат настолько осведомлен о масштабе трагедии, что оперирует цифрами: «Трудно себе представить то чувство, которое испытывают наши соотечественники за границей и особенно армяне, находящиеся под игом Османской Турции. Хотя я пишу только о себе... истории любой трудовой армянской семьи похожи друг на друга, поэтому история армян – это история истребления со*

*стороны персов, арабов и особенно турок, оккупировавших нашу родину и истреблявших наш трудовой народ огнем и мечем. Только во время Первой мировой империалистической войны армянский народ понес жертву убитыми более полтора миллиона от турок-зверей...»*

Каждый из рассказов имеет свое продолжение. Рассказ о турецких репрессиях сменяет тема советских репрессий и депортации, которые тоже травматичны и сфокусированы на несправедливости репрессий и тяготах изгнания. Эти репрессии связаны прежде всего с одним событием – репатриацией.

Прочитаем лишь некоторые из них:

*«... мы еще не отведали вкуса нашей родины, еще не осуществили мечту – нас привезли в этот холодный край в Сибирь»;*

*«13 июня нас сослали в Алтайский край... МВД в первый же день прибытия на место назначения нам объявило, что мы будем здесь вечными переселенцами...»;*

*«... находясь теперь на Алтае, мы являемся немymi людьми, не знаем ничего, даже пару слов по-русски, дети наши так же...»;*

*«... кто должен нести ответственность за все незаконное мое страдание, за потерю родин, имущества, сына, здоровья»;*

*«...прошу принять во внимание .... что я столько душ потерял в Турции и помиловать семью и дать возможность вернуться из Сибири в Армянскую ССР»;*

*«... мы проехали моря, леса и горы, чтоб приехать в столь любимую Армению, но эта самая Армения нас изгнала навечно из своих пределов».*

Эти глубоко личные документы – свидетельства двух поколений, которые прошли две депортации и имеют очень тяжелую депортационную травму. Трагедия депортации прочно связана у армян с двумя драматическими событиями – османской резней в ходе Первой мировой войны и депортацией и советской ссылкой, произошедших уже после Второй мировой. Опыт депортации – это отягощающее воспоминание, событие личной биографии, но при всей индивидуальности трагедии мы видим, что свидетели осознают себя частью коллективного репрессированного «мы» (наказанного и гонимого этноса). Усугубляло травму и то, что в армянском обществе тема Геноцида и советских репрессий и депортаций была закрыта для публичного обсуждения. Воспоминания

подавлялись десятилетиями, и армянское общество не осваивало память о трагических событиях, тогда как единственная возможность избежать повторения репрессий – это помнить о них.

*ABLAZHEY NATALYA (RUSSIA)*

## **THE ISSUE OF OTTOMAN AND SOVIET DEPORTATIONS IN THE COLLECTIVE MEMORY OF THE ARMENIAN REPATRIATES**

The paper is devoted to the estimations of the Ottoman (1915) and Soviet (1949) deportations in the written evidences of Armenians who witnessed Genocide and Soviet repressions. There is an effort to show evristic possibilities of the study of the Ottoman and Soviet deportations on the materials of the investigation files and cases of the exiled. The witness accounts of the repatriated who arrived to the Soviet Armenia after the end of the WW2 and experienced political repressions are analysed. The author stipulates that the Ottoman and Soviet deportations were historically traumatic in the collective memory of the Armenians. This trauma was exacerbated by a ban on publicity of the issues of Genocide and Soviet repressions.

*ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՏՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

## **ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԼԱԽՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՍՀՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՈՆԱՃՆՇՈՒՄՆԵՐՈՒՄ**

Գաղտնիք չէ, որ ԽՍՀՄ-ում, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանում, փաստացի արգելված էր գրել և խոսել Հայոց ցեղասպանության և Արևմտյան Հայաստանի մասին, նույնիսկ զսպված էր «Արևմտյան Հայաստան» անվան օգտագործումը: Խորհրդային հանրազինտարաններում, այդ թվում՝ Մեծ հանրազինտարանի ԲՇԶ-ի

(Большая советская энциклопедия) բոլոր երեք հրատարակություններում (1926-1947, 1949-1958, 1969-1978) Յեղասպանությունից փրկված և Արևելյան Հայաստանում հաստատված թուրքահայերի, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանի տարածքում ծնված ականավոր հայերի՝ գրողների, գիտնականների, նկարիչների... մասին գրվում էր ծնվել է Թուրքիայում այսինչ թվին, տեղափոխվել է Հայաստան: «Տեղափոխության» պատճառի, այսինքն՝ Յեղասպանության մասին՝ ոչ մի ակնարկ: Նույնն է պարագան նաև սովետահայ հանրագիտարաններում կամ տեղեկատու այլ ժողովածուներում: Ալազան, օրինակ, ըստ 1974 թ. հրատարակված Հայկական սովետական հանրագիտարանի, ծնվել է Վան քաղաքում (երկիրը չի նշվում) 1903 թ. և 1914 թ. գաղթել է Երևան, ընկել որբանոց (հ. 1, էջ 134): Ոչ մի խոսք՝ ինչու է ընկել որբանոց: Նույնիսկ 1990 թ. հրատարակված Հայկական համառոտ հանրագիտարանում պատկերը չի փոխվում. ծնվել է Վան քաղաքում, մահացել Երևանում (էջ 73): Ո՛չ յեղասպանության, ո՛չ աքսորի, գաղթի կամ փախուստի մասին որևէ տեղեկություն չկա: Ադասի Խանջյանի մասին 1979 թ. Հայկական սովետական հանրագիտարանը տեղեկացնում է. «Ծնվել է 1901 թ. Վանում, սովորել է Վանի կենտրոնական վարժարանում: 1917-ից զբաղվել է հեղափոխական գործունեությամբ: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո անցել է կուսակցական աշխատանքի Երևանում»: Դեպքերին անծանոթ որևէ ընթերցող չի կասկածի, որ Վանը Հայաստանում էր, որտեղ իր բնականոն կյանքով մարդն ապրել և Հայաստանի խորհրդայնացումից հետո անցել է կուսակցական աշխատանքի: Այդպես է գրված նաև Արևմտյան Հայաստանից և Օսմանյան կայսրության այլ տարածքներից փախստական հայերի այլ, այդ թվում՝ ստալինիզմի բռնաճնշումների շրջանի արևմտահայ գոհերի դատական փաստաթղթերում, հետազայում նաև արդարացման փաստաթղթերում՝ «ծնվել է Թուրքիայում», կամ հիշատակվում է միայն ծնվելու բնակավայրի անունը՝ առանց երկրի հիշատակության: Եթե ծնվելու բնակավայրը հայտնի բնակավայր չէ՝ փոքր գյուղ է, ապա նույնիսկ իրազեկների համար դժվարհասկանալի է Յեղասպանություն անցած մարդու անցյալը: Եթե հավատանք, որ այս կարգի տեղեկությունները գրելիս առաջնորդվում էին տվյալ պահի երկրի պաշտոնական անվան հիշատակման սկզբունքով, ապա այդ մարդկանց ծնվելու պահին «Թուրքիա» անունով պետու-

թյուն չկար, կար Օսմանյան կայսրություն: Խորհրդային Գլավլիտը պարզապես խորհրդային պատմության և տեղեկատվական բառամթերքից հանել էր «Հայոց ցեղասպանություն», «կոտորածներ», «փախստականներ», «Արևմտյան Հայաստան» բառերը:

Այդ արգելքը մասամբ մեղմվել է միայն Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցին, երբ ԽՍՀՄ ղեկավարությունը Խորհրդային Հայաստանին թույլ տվեց 1965 թ. ապրիլի 24-ին գուսպ նշել Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը: Մինչ այդ, բայց հատկապես մինչև Ստալինի մահը, հայկական «կոտորածների», «ջարդերի» մասին գիտելիքը և հիշողությունները փոխանցվում էին ընտանիքներում, գլխավորապես թուրքահայ փախստականների միջավայրում: Փոխանցվում էր կիսաշշուկով, որպես գաղտնիք կամ անթույլատրելի մի բան: Աբդուլ Համիդի ժամանակներից Օսմանյան կայսրությունում, առավել ևս՝ քեմալական Թուրքիայում և ապա Կովկասի հայության նկատմամբ իրականացված Հայոց ցեղասպանության ժամանակ դիմադրության կազմակերպիչների անունները՝ Սերոբ, Գևորգ Զառուշ, Անդրանիկ, Նժդեհ, բարձրաձայն արտաբերվում էին միայն «ղաշնակցական», «մաուզերիստ», «խմբապետ», երբեմն նույնիսկ՝ «ջարդարար» պիտակներով: Սա մի իրականություն էր, որտեղ Հայոց ցեղասպանությունը և ոչ վաղ անցյալի պատմությունը նույնքան լռեցված էր, որքան Թուրքիայում: Խորհրդային Հայաստանում ստալինիզմի քաղաքական բռնաճնշումների շրջանում հետապնդումների մասնավոր թիրախներից էին ոչ միայն արևմտահայ ֆիդայիները, այլև Ցեղասպանությունից փրկված ու Արևելյան Հայաստանում հաստատված թուրքահայերը:

Թուրքահայերի, հատկապես Մուշ-Սասունի գաղթականների ներկայիս սերունդը հիանալի պահել է ոչ միայն Ցեղասպանության շրջանի իրենց ընտանիքների, գյուղերի ջարդերի, փախուստի մասին հիշողությունները, այլև այդ հիշողությունների մասին խոսելու արգելանքը ստալինիզմի բռնաճնշումների շրջանում: Իրենց ծնողների պատմություններից նրանցից շատերի մեջ համոզմունք է ձևավորվել, որ երեսնականներին բռնություններն ավելի շատ ուղղված էին արևմտահայերի, քան արևելահայերի դեմ: Այսպես, 2014 թ. ամռանը սասունցիներով բնակեցված Թալինի շրջանի Վերին Սասնաշեն գյուղում մի խումբ մարդիկ պատմում էին, որ 1927-28 թթ. թուրքահայ փախստականների բնակավայրերից չեկիստները չէին



հեռանում. «...բոլոր արևմտահայերին, բոլոր տղամարդկանց, ովքեր կռվել էին թուրքերի դեմ, դաշնակցական էին համարում: Առաջին հերթին ֆիդայիներին: Բոլորդ էլ շատ լավ գիտեք, որ սովետական տարիներին օրինակ արևմտահայերն իրավունք չունեին ասելու՝ որտեղից են էլել, աքսորում էին դրա անվան տակ, որ իրենք [իբրև թե] եղել են դաշնակցականներ, և բոլոր դաշնակցականները կոչվեցին կարճ՝ «հակա» [հակասովետական, հակահեղափոխական]: Սովետական Միությունը դրանց վտանգավոր էր համարում: Մինչև 30-ական թվականները արևելահայերին եղբան չէին հալածում, հիմնականում՝ մեքոնց, արևմտահայերին: Նույնիսկ մեր տներում մեր երգերն էին արգելված, երգել չէր կարելի, որոշ մարդիկ գնում մատնում էին, հետևանքն աքսորն էր»<sup>1</sup>: Այս կարգի պատմությունները շատ են: Սասունի գաղթականներից Թալինի Ահազյի գյուղում ապրողների մասին սասունցի Պողոս Գրիգորյանը, նկատի ունենալով կոտորածների մասին խոսելու արգելքը, գրում է. «...բոլշևիկյան բռնապետության դաժան տարիներին, վախի ու սարսափի մեջ լեզուները կապ դրած ապրեցին, քչախոս դարձան, գոմերի մեջ քնեցին, իրենց տառապանքները, հոգսն ու ցավը ավելի շատ անասունների ու լծկան եզների հետ կիսեցին, քան՝ ընտանիքի անդամների ու հարևանների հետ»<sup>2</sup>:

Ըստ Թուրքիայի հետ սահմանակից Շիրակի և Թալինի բնակավայրերի թուրքահայ գաղթականների հիշողությունների՝ Ցեղասպանության մասին խոսելու արգելանքը սկսվել է 1927-ից՝ զուգահեռվելով արևմտահայերի մեջ առավել հեղինակություն ունեցող անձանց, մասնավորապես ֆիդայիների նկատմամբ հետապնդումներին: 1927-ից չեկիստներն սկսեցին ձերբակալել նախկին ֆիդայիներին, իսկ երբ վերջիններս սկսեցին նրանցից թաքնվել՝ 1928-29 թթ. սկսվեցին հալածանքներն ու հետապնդումները: Թաքնվողներին «բանդիտ», «դաչաղ» էին անվանում և հետապնդում որպես հասարակության համար վտանգավոր մարդկանց: Սասունի Սեմալ գյուղից Թալինի Իրինդ գյուղում 1920 թ. հաստատված փախստականների ընտանիքից Սասուն Մարտիրոսյանը, ում քեռի Միհրա-

<sup>1</sup> Զրուցել և պատմությունը գրանցել են Հ. Խառատյանը, Զ. Համբարձումյանը, Գ. Ստեփանյանը Վերին Սասնաշեն գյուղում (Թալինի շրջան), 2014 թ. օգոստոսին:

<sup>2</sup> Պ. Գրիգորյան, Անպարտ Սասուն, մարտնչող Շենիկ. հուշապատումներ, Երևան, «Լուսակն», 2012, էջ 44:

նին չեկիստները հենց գյուղում սպանել էին 1931-ին, իսկ հորն ու հորեղբորը Միբիր էին քստրել 1937-38-ին, գրում է. «...սկսվել էր մի անհիմն զրպարտանք աչքի ընկնող սասունցիների հասցեին. նրանց մեղադրում էին որպես խորհրդային իշխանության անհավատարիմ տարրեր և համարում դաշնակցական, հակահեղափոխական, ավանտյուրիստ, մաուգերիստ: Չդիմանալով այս անհիմն հալածանքներին, որն իրականացնում էին սովետական «չեկիստ» կոչվածները, սասունցիները որոշեցին թաքնվել, հեռու մնալ սրանցից... Այս անգամ էլ սասունցիներին պիտակավորեցին՝ էլ բանդիտ, էլ դաչադ, ժողովրդի թշնամի և այլն: Հիշում էին մեր մեծերը, որ երբ մի չեկիստ էր հայտնվում գյուղում, բոլոր տղամարդիկ փախչում էին գյուղից ու թաքնվում սարերում, ձորերում, քարայրներում, մինչև չեկիստը հեռանար...»<sup>3</sup>: Նույն հեղինակը հիշում է Ագարակ գյուղում Միհրան Պողոսյանի և Հովհաննես Հարությունյանի հետապնդումները. «Նրանց բռնելու համար ոտքի էր հանված Թալինի, Աշտարակի, Էջմիածնի, Ախուրյանի միլիցիան: Օրական չեկիստների մի խումբ պաշարում էր Ագարակ գյուղը՝ պահանջելով իրենց հանձնել Միհրանին և նրա խմբին: Խուզարկում էին կասկածելի տները..., անհարգալից էին անգամ կանանց նկատմամբ, ծեծում, բանտարկում էին այդ թույլ էակներին... 1931-ի դեկտեմբերի 5-ի լուսաբացին Ագարակ գյուղը պաշարված էր, ոչ մի գյուղացի չէր համարձակվում տանից դուրս գալ...»<sup>4</sup>: Հովհաննեսի սպանությանը ականատես Մահակ Օսմանյանը (ավելի ուշ երկու անգամ՝ 1941-ին և 1949-ին, քստրվել է Միբիր, երկրորդ անգամ՝ ընտանիքով) հետո պատմել է, որ «օձի ծնունդ <չեկիստը> տասը փամփուշտն էլ դատարկում է զոհված Հովհաննեսի գլխին... դուրս է թափվում ուղեղը: Ես աչքովս տեսա այդ վայրագությունը և համեմատում եմ թուրք լամուկների արածի հետ»<sup>5</sup>: Հիրավի, նկարագրությունը շատ է հիշեցնում Արևմտյան Հայաստանում հայերի նկատմամբ թուրքական հալածանքների պատմությունները: Նույն պատկերն է նաև ծագումով Մշո Փեթարա գյուղից, Թալինի Կաթնաղբյուր գյուղում հաստատված Իսրայել Իսրայելյանի՝ ֆիդայի Փեթարա Իսրոյի և Ահազչի

<sup>3</sup> *Մարտիրոսյան*, Սասունը Սեմալում (փաստագրական երկ), Երևան, «Լուսապսակ», 2014, էջ 201:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 212:

<sup>5</sup> Նույն տեղում:

գյուղում հաստատված Տեր Քաջի Աղամի (Զոհրապ Գասպարի Մամիկոնյան) դեպքում: Բազմաթիվ կոիվներում թուրքական գրոհներին դիմակայած, բազմաթիվ փախստականների փրկած, Մարդարապատի ճակատամարտին մասնակցած և հինգ տարվա դեգերումներից հետո մեծ դժվարություններով Թալինի Կաթնաղբյուրում Ահազի գյուղերում հաստատված այս մարդկանց նախ աքսորեցին, իսկ աքսորից վերադառնալուց հետո չեկիստները գնդակահարեցին 1934 թ. Իրինդ գյուղի մոտի ձորում<sup>6</sup>: Քննարկվող ժամանակաշրջանում Խորհրդային Հայաստանում թուրքահայերի նկատմամբ իրականացված բացահայտ հալածանքներն ու պետական տեռորը դարձել էին այնպիսի քննարկումների նյութ, որ 1929 թ. ապրիլի 7-ի Հայաստանի խորհուրդների 6-րդ համագումարում ստիպված էին կազմակերպել խորհրդային իշխանություններից շնորհակալ գյուղացի մի սասունցու ելույթ, որը Ա. Խանջանին պիտի հնարավորություն տար ժխտելու հալածանքները. «Խորհրդային Հայաստանում սասունցիների նկատմամբ չկա և չի կարող լինել որևէ ուրիշ քաղաքականություն, քան մեր ընդհանուր քաղաքականությունը գյուղացիության նկատմամբ... արտասահմանում դաշնակցականները ստեր են տարածում սասունցիների հալածանքների մասին նպատակ ունենալով արտասահմանի հայ աշխատավորների անգիտակից մասն օգտագործել ի շահ միջազգային իմպերիալիզմի»<sup>7</sup>:

Նյութերը, սակայն, վկայում են, որ Կոմկոուն, այնուամենայնիվ, «ուրիշ քաղաքականություն» ուներ թուրքահայերի նկատմամբ: 1924 թ. Խորհրդային Հայաստանի Կենտգործկոմի նախագահի տեղակալ Արտաշես Կարինյանը գրել էր, որ Խորհրդային Հայաստանում թուրքահայերի գոյությունը ցանկալի չէ: Նա գտնում էր (կամ գտնում էր Կոմկուրը), որ 300.000 արևմտահայ գաղթականությանը պետք է ցրել Ռուսաստանում. «Այդ գաղթականության բնակեցումը [Ռուսաստանում] կազատի Հայաստանը ծանր բեռից, որ խեղդում է նրան: Այդ ձևով իր հիմքի մեջ *կխեղդվի ամեն մի ազգայնական փորձ* և կստեղծվի ամուր պատվանդան Մերձավոր Արևելքի ժողովուրդների միության համար... ազգայնական ռոման-

<sup>6</sup> Հ. Խառատյանի գրույցը Թալինի Կաթնաղբյուր գյուղում Փեթարա Իսրայիլի թոռների հետ, 11.08.2014:

<sup>7</sup> «Խորհրդային Հայաստան», 10 ապրիլի 1929 թ.:

տիկան է <պատճառը>, որ հայությունը ձգտի տիրանալու իր «պապենական հողերին», ինչպես նաև վառ ու կենդանի պահի «միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը» ժողովրդական զանգվածների մեջ...»<sup>8</sup>:

Դատելով արխիվային նյութերից՝ ակտիվ թուրքահայերին գաղտնի հետևում էին առնվազն 1924 թ.-ից: Քաղաքական բռնաճնշումների ենթարկված մարդկանց՝ ներկայումս ՀՀ Ազգային արխիվում պահվող գործերին ծանոթացումը հաստատում է, որ թուրքահայերի նկատմամբ Հայաստանի ազգային անվտանգության մարմիններին հետաքրքրող տեղեկությունները, թե հետապնդումները միատեսակ էին: Ստորև ներկայացվող նյութերից մեկը՝ ներկայիս Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղում հաստատված վանեցի փախստական Բաբե Սարգսյանի «գործը», պատկերացում կտա դրանց բնույթի մասին:

1883 թ. Վանի նահանգի Քաբաբիկ գյուղում ծնված և Ցեղասպանությունից հետո Հայաստան-Թուրքիա սահման դարձած Արաքս գետի ափին գտնվող Ջանֆիդա գյուղում հաստատված Բաբե Տեր-Դանիելյանին (Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ Սարգրսյան. ազգանունը փոխվել է՝ քաղաքականապես անցանկալի «Տեր» մասնիկից ազատվելու համար) Չեկայի գործակալները հետևել են մինչև 1937 թ. նրա գնդակահարությունը<sup>9</sup>: 1924 թ. Հոկտեմբերի 15-ին Բաբե Սարգսյանի մասին նյութեր հավաքող Չեկայի աշխատակիցը տեղեկություն է ստանում «Նորեկ» գաղտնաւումով գործակալից, ըստ որի «Ջանֆիդա գյուղում ապրող միջակ գյուղացի, անգրագետ, խմբապետ Բաբեն հրաժարվել է հարկերի դեմ քարոզելու դաշնակցականների առաջադրանքից՝ դա համարելով կնոջը վայել բամբասանք, և հայտարարել, որ իրեն վայել է զենքը ձեռքին պայքարը»: Փաստաթղթում տեղեկացվում է, որ Բաբեի նկատմամբ վարում են անհատական դիտարկումներ, և տեղեկությունները կլրացվեն այլ աղբյուրներից: Գործակալների միջոցով Բաբեի մասին Չեկային տեղեկություններ են հաղորդվել 24.10.1925-ին (մասնակցել է դաշնակցական թուրքահայերի ժողովին, ուրախացել են քե-

<sup>8</sup> Գ. Լազեան, Հայաստան եւ հայ դատը հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, «Ադանա» հրատ., 1991, էջ 308-310:

<sup>9</sup> Բաբե Սարգսյան Տեր-Դանիելյան Տեր Դանիելի գործ, ՀՀ ԱԱ, ֆ.1191 , ց.10, գ.1999:

մալիստների նկատմամբ քրդերի հաղթանակների և սովետա-լեհական հնարավոր պատերազմի մասին լուրերից, որոշվել է զենք ձեռք բերել մաքսանենգ ճանապարհով Թուրքիա անցնող Մամեդ Կուլիի միջոցով): 15.08.1926-ին «Մաուզեր» գաղտնանունով գործակալի զեկույցի համաձայն՝ «դաշտում հանդիպել և զրուցել է դաշնակների հետ, խոսել են այն մասին, որ Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունները դաշնակցականների համար շահեկան են»: 01.09.1926-ին «Մաուզեր»-ը զեկուցում է Չեկային, որ «Բաբեի տան բակում «անծանոթ մարդ է տեսել»: 1927 թ. Բաբեն ձերբակալվել է որպես «դաշնակցություն կուսակցության անդամ», հինգ ամիս բանտում պահելուց հետո ազատել են: Կրկին ձերբակալվել է 1929 թ. նույն մեղադրանքով, աքսորվել է, աքսորից վերադարձել է 1932 թ.: 23.06.1935 թ. Չեկայի զեկույցում ասված է, որ «գործակալական տեղեկությունների» համաձայն, աքսորից վերադարձած դաշնակցականներն օգնում են միմյանց երկրագործական աշխատանքներում (խոտ են հնձում), իսկ աքսորից վերադարձած Բաբեն ամուսնացել է նախկին դաշնակցականի այրու հետ և որպես բանվոր տեղափոխվել է աշխատելու Աղամզալու գյուղի մարմարի քարհանքում, տեղի դաշնակցականների հետ մտերմիկ հարաբերություններ ունի, բայց հակասովետական տրամադրություններ չի ցուցաբերում և ապրում է մեկուսի կյանքով: «Կրակ» գաղտնանունով գործակալին հանձնարարվում է մտերմանալ Բաբեի հետ և շարունակել տեղեկություններ հայտնել նրա մասին: Մեկ ամիս անց՝ 15.05.1935 թ., տեղեկացվում է, որ «պարտադիր փոխառության ցուցակները կազմելիս բանվոր Բաբե Սարգսյանը դժգոհել է. «...մեզ խաբում և կողոպտում են: Մի կողմից ասում են, որ փոխառության ցուցակները կամավորական սկզբունքով է, մյուս կողմից ստիպում են ցուցակագրվել: Ես չեմ ցուցակագրվելու»: Որոշ բանվորներ համոզել են Բաբեին, թե «ով-ով, բայց դու պետք է ցուցակագրվես, քո անցյալը վատն է»: Բաբեն ցուցակագրվել է դժկամությամբ»: Բաբեին հետևող «Կրակ» գործակալը 01.10.1935թ. տեղեկացնում է, որ Բաբե Սարգսյանի մոտ է եկել ոմն թուրքահայ Սամսոն և տեղեկացրել, որ «...չպետք է հուսահատվել, Սուրմալուի շրջանը թուրքերը մաքրել են, Թուրքիայի ներկայացուցիչը եղել է ընկ. Խանջյանի մոտ և հայտնել, որ հայերին կարող էք արդեն տեղավորել Սուրմալուում, բայց խորհրդային իշխանությունները հազիվ թե համաձայնեն, քանի

որ վախենում են, որ տեղափոխված հայերը թուրքական քաղաքացիություն կընդունեն: Ընկ. Խանջյանը հեռագրել է Մոսկվա, պատասխան են սպասում»: 1936 թ. «Կրակ» գործակալը տեղեկացնում է, որ «Բաբեի մոտ մաուզեր կա, որը նրան է մնացել իր ներկայիս կնոջ հանգուցյալ դաշնակ ամուսնուց»: Շարունակելով հետևել Բաբեին՝ «Ազատունի» գաղտնանունով գործակալը 15.07.1936-ին տեղեկացնում է, որ «Ջանֆիդա գյուղի արքայից վերադարձած հակահեղափոխականները ջանում են անձնագիր ձեռք բերել և որ Բաբե Սարգսյանը մայիսի 18-ին մասնակցել է քաղաքականապես կասկածելի անձանց մի խնջույքի»: 1937 թ. Հոկտեմբերի 11-ին Բաբեին ձերբակալում են: Սկսվում են հարցաքննությունները, և գործին կցվում են վկաների ցուցմունքները: Դրանք տիպային են, միմյանց կրկնում են և ակնհայտորեն կազմված են մի մարդու, ամենայն հավանականությամբ՝ քննիչի կողմից: Վկաները Բաբեի համագյուղացիներն էին: Չորս վկաներին հարցաքննել են նույն օրը՝ նոյեմբերի երեքին: Առաջին վկան (վկաների անուններն արձանագրություններում առկա են) «վկայում է». «Բաբեն դեմ էր կոլխոզներին, բայց չնկատվելու համար իր կնոջն առաջարկել է կոլխոզ մտնել», երկրորդ վկան ասում է, թե. «հին դաշնակ է, եղել է խմբապետի օգնական, կռվել է բոլշևիկների դեմ... արքայից է... Աքսորից վերադառնալուց հետո ունեցել է հզոր մենատնտեսություն, իրեն ազդեցիկ է պահում, կապեր է ունեցել Ադամզալուի դաշնակցականների հետ, որոնց միջոցով պայքարել է գյուղում տարվող տնտեսական քաղաքականության դեմ, անձամբ ինքը չի կատարել 1937 թ. պետական պատվերները և այլ գյուղացիների կոչ է արել չկատարել, վնասում է կոլտնտեսությանը, թունավորել է բամբակը, 1936 թ. հնձել է կոլխոզի այգիների խոտը, ինչի համար դատվել է: Բաբեն ինքն իրեն մեկուսի է պահել, բայց այլոց միջոցով քայքայել է կոլխոզը...»: Երրորդ վկա. «Բաբեի անցյալի մասին ոչինչ չգիտեմ, արքայից վերադառնալուց հետո հաստատվել է Ախամզալու գյուղում, որտեղ ունի հզոր մենատնտեսություն»: Չորրորդ վկան պատմում է, որ. «մեր գյուղի արքայից վերադարձած բոլոր դաշնակցականները միմյանց հետ կապեր ունեին, պրովոկացիոն լուրեր էին տարածում խորհրդային իշխանության կործանման, կապիտալիստական երկրների հաղթանակի մասին: Նրանցից Շահբազյան Գրիգորը հակահեղափոխական Խանջյանի ինքնասպանության ժամանակ գյուղացիներին ասել է, որ

Խանջյանին սպանել են վրացիները և այլն... Նրանցից Բաբե Սարգրայանը ջանում էր վնասել կոլխոզային տնտեսությանը, թունավորել է բամբակի ցանքսը, գողացել է կոլխոզի խոտը, այսինքն՝ հնձել է կոլխոզի այգիների խոտը և մնացել է անպատիժ: Բաբեն եղել է խմբապետ Դավի-Կազոյի օգնականը, քաղաքացիական պատերազմի ժամանակ ակտիվորեն մասնակցել է բոլշևիկների դեմ կռիվներին [մասնակցել է 1921 թ. փետրվարյան ապստամբությանը-Շ.Խ.], փախել է Իրան»:

Հարցաքննությանը Բաբեի «ցուցմունքները» տեքստում գրված է. «1919 թ. կամավորագրվել եմ խմբապետ Անդրանիկի ջոկատին և մասնակցել եմ թուրքերի դեմ կռվին: Անդրանիկի ջոկատի կազմալուծումից հետո խմբապետներ Մուրադի և Մուշեղի խմբերում 1919-ին մասնակցել եմ Հոկտեմբերյանի և Զանգիբասարի շրջանների աղբբեջանցիների գյուղերի ջարդերին և կողոպուտներին<sup>10</sup>: 1919-ից

---

<sup>10</sup> Հայաստանի Հանրապետության դեմ ապստամբած Վեդի-Զանգիբասարի մահմեդական բնակչության կողմից տեղի հայ բնակչության նկատմամբ իրականացվող թալանի և ջարդերի, ինչպես նաև 1915 թ. ցեղասպանությունից փրկված փախստական թուրքահայերի կողմից նրանց պատժելու գործողությունները բավականաչափ ուսումնասիրված են մասնագիտական գրականության մեջ: Զանգիբասարի մահմեդականները զինվելու և կռիվների համար միջոց պատրաստ խմբեր ունենալու համար ֆինանսական օգնություն էին ստանում գլխավորապես Բաքվից, 1919 թ. մարտին Հայաստանի Հանրապետությունում հաստատված Ադրբեջանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության միջոցով: Այդ մասին տեղեկություններ կան նաև Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչների որոշ հեռագիր-հաղորդագրություններում: Օրինակ, 1919 թ. մարտի 10-ով թվագրված մի հեռագրով Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Հախվերդովը Ադրբեջանի արտաքին գործերի նախարարին ահագանգում է. «Հրօսակախմբի նախօրոք պատրաստած ինձ հետ պատահած քստմենլի դէպքից յետոյ, իմ այստեղ մնալը անմտութիւն եմ համարում»: Տե՛ս «Գաղտնի փաստաթղթերը»: Ադրբեջանի դաւադրական գործունէութիւնից մի էջ, Երևան, Գլխավոր շտաբի տպարան, 1920, էջ 55: Փաստաթղթի՝ հավանաբար, արտաքին գործերի նախարարի կողմից արված մեկնաբանությունում ասվում է, որ «Հախվերդովը Թիֆլիս գալով ստացել է Նախիջևանի, Զանգիբասարի և այլ շրջանների համար նախօրոք նշանակւած փողերը, սակայն Երեւան վերադառնալիս չէզօք զոնայում կողոպուտել է չարագործներից» (նույն տեղում, էջ 55): Ըստ երևույթին Շարուր-Նախիջևանի ճանապարհին Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի թալանվելու մասին հիշատակող հայ հետախույզ Տիգրան Դեռյանը նույնպես այս դէպքի մասին է պատմել. «Բազմից ուղարկված այդ գումարով միայն Շարուր-Նախիջևանի շրջանի թաթարական բանակի թիվը պետք է հասներ 10.000-ի, նույն

հետո մինչև Հայաստանի խորհրդայնացումը զբաղվել են իմ տնտեսությամբ: Մասնակցել են 1921 թ. փետրվարի ապստամբությանը... Զանգեզուրում մասնակցել են կարմիր բանակի դեմ կռիվներին ... անցել են Իրան... 1921 թ. Սեպտեմբերին վերադարձել են Հայաստան... 1924-32-ին որպես կուլակ եղել են ձայնագուրկ, ունեցել են ջրաղաց, երկու հարյուր գլուխ ոչխար, պահել են բատրակներ... Որևէ հակասովետական քարոզչություն չեմ արել, սահմանն անցնելու մտադրություններ չեմ ունեցել»: Տեքստը գրված է Բաբեին անհասկանալի ռուսաց լեզվով, Բաբեի ստորագրությունն առկա է: Ակնհայտ է, որ այս «ցուցմունքները» Բաբեի կողմից չեն տրվել: Բաբեն ինքը Անդրանիկին «խմբապետ» չէր անվանի (Անդրանիկը «խմբապետ» էր բոլշևիկյան լեզվով, ժողովրդի, հատկապես բոլոր թուրքահայերի համար, Անդրանիկը բացառապես «գորավար», «զեներալ» էր), երբեք չէր գրի «մասնակցել են Հոկտեմբերյանի և Զանգեզուրի շրջանների աղբրեջանցիների գյուղերի ջարդերին և կոդալուտներին» (Բաբեն կարող էր խոսել Հոկտեմբերյանի և Զանգեզուրի 1919 թ. ապստամբած մահմեդական բնակչության դեմ կռիվներին մասնակցության մասին. Տե՛ս թիվ 12 ծթ.), Բաբեն չէր կարող գործածել «աղբրեջանցիներ» եզրը, այն նոր-նոր, 1936-ից էր

---

համեմատությամբ պետք է ավելանար կոմոլ թաթարների թիվը Բեյուկ-Վեդիի, Զանգեզուրի և այլ շրջանների մեջ, և ամբողջ Հայաստանի հայությունը պետք է գտնվեր բնաջնջման սպառնալիքի տակ»: Տե՛ս Վ. Վիրաբյան, Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումն ու գործունեությունը 1918-20 թթ., Երևան, ԵՊՀ հրատ., 2006, էջ 96,97: Զանգեզուրի ապստամբած մահմեդական բնակչությանը ֆինանսավորելու 1919 թ. մարտ ամսվա այս անհաջողությունից հետո Բաքուն փորձել է լուծել ապրիլ ամսին, սակայն «1920 թ. ապրիլի 4-ին Էջմիածնի գաւառի Դաւարաբաղ գիւղի մօտ, ապստամբ Զանգեզուրի շրջանը մեկնող երեք զինած թուրքեր են բռնած: Կալանաւորւածների մօտ գտնւել են Աղբրեջանի բռնէր 499.750 ռ., Անդրկովկասեան բռնէր՝ 11.050 ռ. և Հայկական չէկէր՝ 1.100 ռ.: Այդ մարդիկ պարզւել է Երեւանի Աղբրեջանեան միասիայի պահակներ են եղել, եկել են միասիայի ատոմոբիլով դիւ. ներկ. Մակինսկու յանձնարարութեամբ և մտադրւել էին թափանցել Զանգեզուր՝ փողը ապստամբների դէկավար Մոլլա Ղատումին յանձնելու դիտարարութեամբ: Այդ երեք անձնաւորութիւնները և միասիայի շոֆերը յանձնւել են Հայաստանի Հանրապետութեան զինուորական դատարանին»: Տե՛ս «Գաղտնի փաստաթղթերը», էջ 56: Վերջիններիս դատը եղել էր 1920 թ. հունիսի 3-ին և լայնորեն մեկնաբանվել լրատվամիջոցների կողմից՝ ցուցադրելով Աղբրեջանի կողմից Հայաստանի մահմեդականներին խռովությունների հրահրելու իրավիճակը: Տե՛ս Վ. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 110, 111:



մոնում պաշտոնական շրջանառության մեջ: Նույնիսկ աղբբեջանական պաշտոնական փաստաթղթերում նրանց դեռևս «մահմեդականներ» կամ «թուրքեր» էին անվանում, իսկ հայերի շրջանակներում օգտագործվում էր բացառապես «թուրքեր» եզրը: Բարեն, ինչպես ստորև կտեսնենք, նախախորհրդային շրջանում մասնակցել էր նաև Սարդարապատի ճակատամարտին, բայց այն խնամքով շրջանցված է Բաբեի «ցուցմունքներում»: Խորհրդային արդարադատությունը հաճախ է շրջանցել քաղաքական բռնաճնշումների գոհերի կենսագրություններում «Սարդարապատի ճակատամարտի» հիշատակությունը, չնայած այդ ճակատամարտի շատ մասնակիցներ են գնդակահարվել որպես «ժողովրդի թշնամիներ»: Բարեն Սարգսյանը պարզապես ստորագրել է ռուսաց լեզվով մի թուղթ, որն իրեն հարկադրել են ՆԳԺԿ-ի քննիչները: Նույն նոյեմբերի երեքին կազմվել է մեղադրական եզրակացություն, ըստ որի՝ 1883 թ. Թուրքիայում ծնված (Վանը կամ Քաբաբիկը չեն նշվում) Սարգսյան Տեր-Դանիելյան Բարեն Տեր Դանիելին (Саркисян Тер-Даниелян Бабе Тер Даниелович) իմպերիալիստական պատերազմի ժամանակ կամավոր ծառայել է խմբապետ Անդրանիկի ջոկատում, այնուհետև խմբապետներ Մուրադի և Մուշեղի խմբերի հետ մասնակցել է Զանգիբասարի աղբբեջանական գյուղերի ջարդերին և թալանին, մասնակցել է փետրվարյան դաշնակցական ավանտյուրային<sup>11</sup>, փախել Իրան, վերադարձել է 1921 թ.: Խորհրդային իշխանության կատաղի թշնամի է: Չի խոստովանել: Մերկացվել է ազենտների նյութերով և վկաների ցուցմունքներով: Երկու օր անց՝ նոյեմբերի 5-ին, Տրոյկայի նիստը որոշում է «Գնդակահարել, անձամբ նրան պատկանող ունեցվածքը առգրավել»: Երկու օր անց գնդակահարվել է: Գնդակահարությունից հետո ընտանիքին հայտնել են, որ Բարեն Սարգսյանին արքայի են «առանց նամակագրության իրավունքի»: Սրանով,

<sup>11</sup> 1921 թ. ապրիլի 24-ին Հայեղկոմը դեկրետ էր ընդունել «Ընդհանուր ներման մասին», որով ներում էր շնորհվում փետրվարյան ապստամբության բոլոր մասնակիցներին: Դեկրետում ասվում էր. «...ազատ համարել քաղաքական և ամեն տեսակի ու ձևի պատասխանատվությունից առանց բացառության բոլոր նրանց, ովքեր որևէ կերպ պայքարել են Հ.Ս.Խորհրդային հանրապետության դեմ, անկախ նրանց անմիջական գործից, կոչումից, դիրքից, պաշտոնից: Բոլոր այս քաղաքացիներին վերահաստատել իրենց ամբողջ իրավունքների մեջ»: «Կոմունիստ», 24 ապրիլի, 1921 թ.: 1936-37 թթ., սակայն, նրանք բոլորը քաղաքական հալածյալներ էին:

սակայն, Բաբե Տեր-Դանիելյան-Սարգսյանի գործը չի ավարտվել: 1949 թ. հունիսի 14-ին դեռ Սիբիր պիտի աքսորվեն Բաբեի ընտանիքի անդամները և հենց Բաբեի անունով<sup>12</sup>: Սա նույնպես խորհրդային բռնաճնշումների դասական դեպքերից էր:

Իսկ հիմա այն տեքստը, որը կազմվել է Բաբեի թոռների հիշողություններով. «Մեր ծագումը Վանի նահանգի Բերկրիի Քաբաբիկ գյուղից է: Մեր պապը եղել է Անդրանիկի բանակում հեծելազորային գնդի հարյուրապետ: Տատս պատմում էր, որ դեռ Վանի ինքնապաշտպանությունից առաջ Բաբեն միշտ գնում էր Բաքու գնեք բերելու: Մեկերով գնում էին Բաքու, աղ էին բերում, բայց աղի տակը դարսում էին գենք, հրացաններ՝ տասնոց: Տատս պատմում է, որ մի անգամ ինքը Բաքու գնացած է եղել, քուրդ բեկերից մեկը Քաբաբիկ գյուղի երևելի մարդկանց, երիտասարդներին, կոմոդներին տարել է իբրև թե պատիվ տալու, հետո հանել է գյուղի վերջում սպանել է, այդ թվում՝ Բաբեի երիտասարդ եղբայրներ Կարոյին և Հովհաննեսին...<sup>13</sup>: Բաբեն վերադառնալուց հետո այդ բեկին սպանել է... Ինքը երեք անգամ բռնվել է թուրքերի կողմից, երեք անգամն էլ փախել է: Շատ քաջ մարդ էր: ...Երբ որ գաղթը սկսվել է, Քաբաբիկի և շրջակա գյուղերի ժողովրդի մի մասը անցել է Սիրիա, մյուս մասին Բաբեն օգնել է հասնել Արևելյան Հայաստան: Տատս ասում էր երբ որ եղսիրը (գաղթականներին տատս եղսիր էր ասում), երբ որ եղսիրը հավաքվում էր, որ պիտի գար Հայաստան, Բաբեն էր բերում անցկացնում Հայաստան: Հենց որ Արաքս գետը անցնում էին, ինքը նորից գնում էր եղսիր փրկելու: Տատիս խոսքերն են: Ինքը մի քանի զինվորներով օգնում էր, հսկում էր, որ քրդերը ճանապարհին չսպանեին, չթալանեին: Բոլորին անվնաս բերում հասցնում էին այս կողմ, իրենք նորից գնում էին մյուսներին բերելու: Տատս ասում էր՝ Բաբեն ուր գնում էր, թուխսի ճուտերի պես ժողովուրդը հետևից

---

<sup>12</sup> Բաբե Տեր Դանիելի Սարգսյան Տեր-Դանիելյանի գործ:

<sup>13</sup> Բաբեի թոռների այս հիշողությունը հաստատվում է նաև այլ պատմություններով: 1915 թ. ապրիլի 6-ին քրդերը հարձակվել էին Քաբաբիկի վրա և կոտորել գյուղի բնակչությանը, կենդանի մնացածները հասել էին Վան քաղաք, որտեղից մայիսին վերադարձել էին ռուսական զորքերի կողմից վերագրավված իրենց գյուղ և հետագայում գաղթել են թուրքերի կողմից Վանը գրավվելուց հետո: Տե՛ս Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ, հ. 1, Վանի նահանգ, Երևան, 2012, «Հայաստանի Ազգային արխիվ», էջ 226, 227, 455, 456:

գնում էր: Եկել են այս գյուղում հիմնվել, որպեսզի պատեհ պահին նորից անցնեն իրենց երկիրը: Սարդարապատի ճակատամարտին ինքը որպես մահապարտ է մասնակցել: Քոչոյի հետ: Հրաչյա Քոչարի հոր հետ: Բաբեն ու Քոչոն շատ մտերիմներ են եղել: Հետո սովետական կարգերը հաստատվեցին, ու Բաբեն եղավ հալածական: Իսկ [19]36ին այնպես էին հետապնդում, որ մեր պապը դաչաղ դարձավ, տանը չէր մնում, միայն երբեմն թաքուն տուն էր գալիս: Մինչև ձերբակալվելը ինքը շոր չի հանել, իր տանը չի պառկել քնել: Չգիտեմ որքանով է ճիշտ, տատս ասում էր հենց Խանջյանին սպանեցին, արդեն Բաբեն էլ վերցրեցին: Չեկայից ասել էին, թե աքսորել են, և որդին՝ Ջորիկը անընդհատ աքսորավայրերում փնտրում էր իր հորը: Իսկ տատս մինչև իր մեռնելու օրը կարծում էր պիտի վերադառնան հայրենիք: Տատս 1984 թվին մահացավ...»<sup>14</sup>:

Բաբե Սարգսյանի «գործը» չնչին տարբերություններով զուգահեռն է 1936-1938 թթ. գնդակահարության դատապարտված բազմաթիվ թուրքահայ «խմբապետերի» (որ տվյալ դեպքում նույն ֆիդային է) «գործերի»: Սրանց հիանալի տեղյակ էին իրենք թուրքահայերը, և մինչև այսօր նրանցից շատերի մեջ իշխում է այն համոզմունքը, որ այդ մարդիկ Խորհրդային Հայաստանում պատժվել են... թուրքերին դիմադրած լինելու համար: Սանասար Արոյանը (և շատ ուրիշներ) Թալինի շրջանի սասունցիներով բնակեցված Աշնակ գյուղում պատմում էր. «... հա, ես ընդհանուր թշնամու դեմ զենք եմ վերցրել, կռվել եմ, թուրքը մեզ կոտորել է, ես էլ զենք եմ վերցրել ինքնապաշտպանության, ես նախահարձակ չեմ եղել, ինչու՞ են դրա համար ինձ աքսորում, մեղադրում, ես իմ ընտանիքն եմ պահել, իմ պատիվը, իմ էրեխայի կյանքն եմ փրկել, ինչու՞ են դրա համար ժողովրդի թշնամի սարքել...»<sup>15</sup>:

Խորհրդային Գլավլիտը ստալինյան բռնապետության տարիներին խորհրդային պատմության և տեղեկատվական բառամթերքից հանել էր «Հայոց ցեղասպանություն», «կոտորածներ», «փախըստականներ», «Արևմտյան Հայաստան» բառերը, իսկ ՆԳԺԿ-ն դրանք հիշողներին դիտում էր որպես քաղաքական այլախոհներ: Հավանական է թվում, որ ԽՍՀՄ քաղաքական բռնաճնշումների ալիքին

<sup>14</sup> Զրույցը տեղի է ունեցել Ջանֆիդա գյուղում 2015 թ. հունիսին: Գրանցել է Հ. Խառատյանը:

<sup>15</sup> Հ. Կնյազյանի գրանցած պատմություն, Աշնակ գյուղ, 2013 թ.:

թուրքահայերին թիրախավորելով որպես հակախորհրդային տրամադրությունների կրողների՝ խորհրդային միակ իշխանությունը Կոմկոմսն իրականում վախենում էր նրանց ««պապենական հողերին» տիրանալու «ազգայնական ռոմանտիկայից» և իրականացնում էր Մոսկվայի պայմանագրի 8-րդ հոդվածով (ամրագրվել է նաև Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածում) ստանձնած պարտավորությունը, որի համաձայն՝ երկրները պարտավորվում են թույլ չտալ իրենց տարածքում, կամ դրա մի մասում մյուս երկրի նկատմամբ պայքարելու նպատակ ունեցող խմբերի ձևավորում կամ առկայություն: Հայաստանում արևմտահայերի առկայությունը, ամենայն հավանականությամբ, հենց այդպիսի խումբ էր ընկալվում, իսկ Թուրքիա-Հայաստան, ապա՝ Թուրքիա-ԽՍՀՄ սահմանին կուտակված փախստական թուրքահայերը պոտենցիալ վտանգ էին դիտվում Թուրքիա-ԽՍՀՄ հարաբերությունների համար:

*HRANUSH KHARATYAN (ARMENIA)*

### **THE MEMORY OF WESTERN ARMENIA AS AN INTERPRETATION OF ARMENIAN POLITICAL DISSENT IN THE CONTEXT OF POLITICAL REPRESSIONS IN USSR**

The study of materials from political courts and media rhetoric of 1936-38 in Soviet Armenia reveals that the most denounced form of political dissent in Armenia at the time was “Armenian Nationalism.” According to the political estimate of the time “Armenian Nationalism” meant the discussion of the possibility of revisions of decisions related to Armenian territories that had gone to Turkey and Azerbaijan in the process of the establishment of Soviet rule in Armenia. This was regarded as territorial claims. Memories and yearning for the lost homeland, nostalgia and the desire to return home among the Armenian refugees from Western Armenia and Turkey settled in Soviet Armenia were also considered as a form of “Armenian Nationalism.” Such manifestations of views and feelings were interpreted as “Anti-Soviet,” “Anti-Revolutionary” dissent and such people were condemned by courts, even executed. The report analyzes the reasons for such politics and concludes that this was conditioned by a clause in the 8<sup>th</sup> Article of the Moscow Treaty of March 16, 1921. According to that

Clause, the parties agreed to not allow formation or existence of organizations or groups on their respective territories that have hostile aims towards the government of the other signatory party. Western Armenians were considered in USSR as potential carriers of hostility towards Turkey, and hence were a separate persecuted segment during political repressions.

ԴՈՐԱ ՍՍՔԱՅԱՆ (ԿԱՆԱԴԱ)

**ԿԼԱՐԱ ԶԻԳՐԻՍ-ՀԻԼԹԻՒ ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ապրիլ 26, 1915 թիվ: Շվեյցարիայի Վերդենբերգ (Werdenberg) քաղաքում բուժքույր Կլարա Հիլթին (Clara Hilty, 1884-1988) ամուսնանում է Բադդադի երկաթուղու շինարարության՝ Ադանա-Հալեպ հատվածի պատասխանատու ճարտարագետ Ֆրից Ջիգրիստի (Fritz Sigrist, 1881-1963) հետ: Հարսանիքի հաջորդ օրն իսկ նորապսակները գնացք են նստում և ուղևորվում հարավարևելյան Թուրքիա, որտեղ նախ մի քանի ամիս բնակվում են Էնթիլի կոչվող կայարանի մոտ, ապա բնակություն հաստատում պատմական Կիլիկիայում՝ Քելլեր (այսօր՝ Ֆեզիփաշա) կոչվող հանգուցային կայարանի մոտ: Նրանք այնտեղ երեք ամբողջ տարի ապրում են Ամանոսյան լեռների փեշերին գտնվող, աշխարհից կտրված բարձրադիր մի տնակում:

Ծնվել է Կլարան 1884 թ. Վերդենբերգում, որը Շվեյցարիայի ամենափոքրիկ քաղաքն է և հայտնի է Վերդենբերգյան լճի մոտ գտնվող լավ պահպանված միջնադարյան 40 փայտաշեն գեղատեսիլ տներով և հռչակավոր Վերդենբերգյան դղյակով: Մեծացել է նա այդպիսի տներից մեկում՝ իր քրոջ ու եղբոր հետ, ապահով ու երջանիկ. ծագումով Կլարան Վերդենբերգի բուրժուական հնագույն մի տոհմից էր, որի անդամները դեռևս կուսակալի ժամանակներում զբաղեցնում էին բարձր պաշտոններ: Նրա մեծ հորեղբայրը պրոֆ. Կարլ Հիլթին (Prof. Karl Hilty), Շվեյցարիայի առաջին ներկայացուցիչն էր «Դեն Հաագի» (Den Haag) միջազգային դատաստանական ատյա-

նում: Դոյակի վերջին տիրուհին՝ Ֆրիդա Հիլթին (Frieda Hilty), Կլարայի ազգականուհին էր:

Երիտասարդ տարիներին Կլարան բարեկամացել էր Շվեյցարիայի առաջին բժշկուհի Մարի Հայմ-Ֆեոգլինի (Marie Heim-Vögtlin) հետ, և նրանց համատեղ կատարած ամենօրյա շրջագայությունները իր ժամանակի համար շատ առաջավոր հայացքների տեր տիկնոջ հետ, մեծ ազդեցություն են ունեցել երիտասարդ Կլարայի մտածելակերպի ու հոգեբանության վրա: Ազատասեր և արդար է Կլարան, և նրա յուրաքանչյուր վկայության հետևում թաքնված են նրա ըմբոստացումն ու զայրույթը հայերի կոտորածների և նրանց նկատմամբ «մինչև երկինք աղաղակող անարդարությունների» համար: Նա գրում է. «Վիշտը ճնշում է մարդուն, և միայն մեկ միտք է գերիշխում՝ հեռանալ այս զարշելի երկրից» (16 հունիսի, 1916): Եվ նա համակվում է ձգտումով փախչելու այնպիսի վայրեր, «ուր իշխում են մարդկային օրենքները»:

Նոյշաթելի (Neuchâtel) միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Քլարան ընդունվել է Շվեյցարիայի հիվանդապահուհիների ուսումնարանը, որը նա և իր մտերիմ ընկերուհի Լիզ Ջիգրիստը (Lis Sigrist) միաժամանակ ավարտել են և ստացել բուժքույրի վկայական: 1914 թ. հունիսի 8-ին Քլարան աշխատանքի է անցել Գրաբս (Grabs) քաղաքապետության (կանտոն Սենթ Գալենի = Kanton St. Gallen) հիվանդանոցում՝ գլխավոր բժիշկ դ-ր Վայսի (Dr. Weiß) ենթակայությամբ: Այդ նույն ժամանակաշրջանում Լիզի միջոցով Քլարան ծանոթացել է ընկերուհու եղբոր ճարտարագետ Ֆրից Ջիգրիստի հետ, որը 1910-1914 թ. աշխատել էր Թուրքիայում Բաղդադի երկաթգծի շինարարության վրա և նույն տեղում աշխատելու նոր պայմանագիր էր ստացել 1915-1918 թվականների համար: Չնայած այդ հեռանկարին՝ 1914-ի սեպտեմբերին Քլարան և Ֆրիցը նշանվել են, իսկ 1915-ի ապրիլին ամուսնացել:

Ջիգրիստների. Քելլերում հաստատվելուց կարճ ժամանակ անց սկսվում են հայերի տեղահանումները: Դեպի Սիրիական անապատ տանող գլխավոր ճանապարհներից մեկն անցնում էր Քելլերով, և մինչդեռ Ֆրիցը մեծ մասամբ հայ աշխատուժով իրագործում էր ժայռոտ լեռների միջով փապուղիների (թունելների) փորումն ու երկաթգծերի անցկացումը, Կլարան օրն ի բուն իր պատուհանից ականատեսն է դառնում իրենց տան մոտով անցնող տարագիր

հայերի մահվան երթերին: «Սրանք վտարանդիներ են, - գրում է նա, - որոնց զրկում են հայրենիքից և որոնց անխտիր կարգով արտաքսում են, առանց հաշվի առնելու հիվանդ, թե ծեր, մարդիկ, որոնց մեկ օրից մյուսը հրամայում են՝ մի քանի ժամվա մեջ հավաքվել ու հեռանալ իրենց ցանած դաշտերից, իրենց արհեստանոցներից ու բնակարաններից: (...) Նրանք այստեղից օրերով անցնում են անտանելի շոգին, քամուց և մրրիկից զզգված, փոշեթաթախ, սոված ու ծարավ, և ամեն օր նորից ու նորից վերապրելով նույն փորձություններն ու տանջանքները»: Երեկոներն ամուսինների աչքի առաջ Քելլերի հովտում ժամանակավոր ճամբարներ են կազմավորվում, որտեղ գիշերում են հյուծված հայերը՝ կանայք, երեխաներ ու տարիքոտներ, հազվադեպ՝ տղամարդիկ, քանի որ նրանք նախապես արդեն ոչնչացված են: Երեք տարի շարունակ շվեյցարացի նորապսակ ամուսիններն ամեն օր վիրավոր սրտով դիտում են, «թե ինչպես ներքևում՝ սեպ ժայռերի միջև կիրճում, մարում էին այդքան շատ ճրագներ», մինչդեռ իրենք վերևում՝ մեկուսի տնակում, շարունակում են իրենց առօրյա կյանքը. հյուրեր ընդունում, տարեդարձներ ու կրոնական տոներ նշում, ծնող դառնում և իրենց հանգստավետ տնակում ընտանեկան երջանկություն վայելում:

Այս բոլորի մասին տեղեկանում ենք Կլարա Զիգրիստ-Հիլթիի օրագրություններից: Նրա Թուրքիայում անցկացրած երեք տարիները համընկնում են պատերազմի երեք տարիների և մանավանդ Հայոց ցեղասպանության եռամյա տևողության հետ պատմական Կիլիկիայի տարածաշրջանում: Գոթերենով գրված 100 տարվա վաղեմություն ունեցող այդ հազվագյուտ օրագրային արձանագրությունները տողերիս հեղինակը ձեռք է բերել շվեյցարական արխիվներից: Դրանք վերծանելուց հետո նա շվեյցարացի գույզի վկայությունների մասին գերմաներենով գիրք է պատրաստում: Միաժամանակ պատրաստվում են գերմաներեն գրքի հայերեն և անգլերեն տարբերակները: Երեք գրքերը լույս կտեսնեն 2016 թ. ընթացքում:

Կլարա Զիգրիստ-Հիլթին իր օրագրությունների մեջ ականատեսի իր վկայությունն է տալիս Ամանոսյան տարածքում Հայոց ցեղասպանության ընթացքի մասին: Նա անպաճույճ լեզվով նկարագրում է.

1. Ամանոսյան լեռների խորշերով անցնող և դեպի անապատ բշտիկ հայ վտարանդիների մահվան երթերը.

2. Քելլերի, Կատմայի և Հալեպի ճամբարների ողբերգական վիճակը.
3. Բաղդադի երկաթգծի շինարարության վրա զբաղված հագարավոր հայ աշխատավորների շահագործումն ու հետևողական ոչնչացումը:

Կլարայի օրագիրը միայն Հայոց ցեղասպանության մասին չէ: Բնական է, որ երեք տարվա ամենօրյա գրառումներն արտացոլում են նոր երկրում իր տպավորությունները, զբաղմունքներն ու ապրումները: Նրանք լի են նյութի բազմազանությամբ, պատերազմական շրջանի զրկանքների, անհամար կենցաղային դժվարությունների, համաճարակների, դժվարին կլիմայական պայմանների, խիստ գրաքննության և այլ հարցերի մասին: Հետևապես, հայերի գողգոթային նվիրված վավերագրումներն այդ օրագրում հանդես են գալիս նրա առօրեական մյուս իրադարձությունների համատեքստում: Դա Կլարային չի բավարարում, և նա հետագայում որոշում է հատուկ մի հաղորդագրություն ամբողջովին նվիրել Հայոց ցեղասպանությանը՝ «Ամառ, 1915» խորագրով:

Թուրքիայում կատարած իր առաջին իսկ նշումները Կլարային բնութագրում են որպես ճկուն, հնարագետ և ձեռներեց մի կնոջ: Տեսնում ենք, թե ինչպես է այդ եվրոպացի կինը հարմարվում տեղի պայմաններին՝ պատերազմական շրջանի զրկանքներին: Իրենց Թուրքիա ժամանելու առաջին իսկ ամսում յուդ է հալում և պտղանուշ եփում, լվացքը բակում փռում և դրսում էլ արդուկում, սեփական գինին պատրաստում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ քարյուղի տակառում լոզանք ընդունում: Հետագայում տեսնում ենք նաև, թե ինչպես է նա տեղական և տնից ուղարկված սերմերով իր այգում բանջարախոտ ստեղծում, ծաղիկներ աճեցնում և այլն: Անշուշտ այդ բոլորը նա անում է ոչ առանց օգնության, քանի որ Ֆրիցը նրան ապահովել էր օգնականների մի ամբողջ անձնակազմով: Նա ուներ աղախին՝ Գոհարը<sup>1</sup>, երկու տղամարդ ծառա՝ Յոզեֆին<sup>2</sup> և

<sup>1</sup> Չնայած հայկական անվանը՝ Կլարայի աղախինը՝ Գոհարը, քուրդ էր:

<sup>2</sup> Իսկական անունը՝ Մեհմետ Հյուսեյին: Վերջինս Կլարայի երիտասարդ և սիրելի ծառան է, որը ծագումով հնդիկ էր, մահմեդական և որպես պատերազմական գերի աշխատում էր Զիզբիստների մոտ:



Մուսան<sup>3</sup>: Զիգրիստներն ունեին նաև հայ այգեպան, որն ապրում էր այգում իր ամբողջ ընտանիքով, և թուրք պահակ՝ Բեքիր անունով, որին նրանք Բեքչի էին կոչում, և որը հավատարմությամբ պահպանում էր նրանց տունն ու այգին: Կարդում ենք նաև, թե ինչպես է նա, բառարանը ձեռքին, մարզում առանձին սպասավորներին և միաժամանակ ինքն էլ թուրքերեն սովորում:

Հավանաբար վախենալով, որ այս բոլոր նյութերը ստվեր կզցեն Հայոց ցեղասպանության իր վկայությունների վրա, Կլարան որոշում է հատուկ մի հաղորդագրություն ամբողջովին նվիրել ցեղասպանությանը՝ «Ամառ, 1915» խորագրով: Ահա այս երկու գրվածքները՝ օրագիրն ու ականատեսի վկայությունը, միասին են, որ հայերիս համար անգնահատելի ավանդ և կարևոր սկզբնաղբյուր են Հայոց ցեղասպանության պատմության համար:

Կլարայի երկու գրություններն իրարից տարբերվում են ձևով, բովանդակությամբ և ոճով, թեև երկուսն էլ գրված են նույն գոթական ձեռագրով (Kurrentschrift, gotische Schrift): Մինչդեռ օրագիրը բաղկացած է բազմաթիվ առանձին, հապճեպ գրի առնված, հաճախ դժվար-ընթեռնելի միօրյա արձանագրություններից, ականատեսի վկայությունը բովանդակությամբ ավելի հարուստ 15 էջանոց մի կուռ տեքստ է, որը նաև գրավիչ է իր գեղագրությամբ: Ակներն է, որ այս տեքստը ստեղծվել է ժամանակի և աշխատանքի ներդրումով: Ի տարբերություն օրագրի, որի գրառումներն իրենց ոճով ավելի գործնական և չեզոք են, վկայությունը զգացմունքային և հուզիչ մի շարադրանք է: Թեմատիկ բազմազանության փոխարեն՝ վկայությունը ունի միայն մեկ թեմա՝ հայերի ցեղասպանությունը, որի ընթացքը իր տարբեր դրսևորումներով Կլարա Զիգրիստ-Հիլթին մոտիկից է ապրում, որտեղ սակայն ինքն անգոր է որևէ բան փոխելու և կամ ինչ-որ չափով օգտակար լինելու: Եվ ահա Կատմայի համակենտրոնացման ճամբարն այցելելուց և այնտեղ հայերի թշվառությունը տեսնելուց հետո Կլարայի խիղճը տանջում է, և նա գրում է. «Համակվում ես ամոթով և այդ թշվառության մեղսակիցը լինելու զգացումով, թշվառություն, որը նվազեցնելու համար մատը մատին չես կարող խփել»: Հուսալով, որ ցեղասպանության մասին խոսուն

<sup>3</sup> Զիգրիստ-Հիլթիների քուրդ սպասավորը, որը տարբեր ծառայություններ էր մատուցում տանը և դրսում: Երբ Կլարան առանց Ֆրիցի դուրս էր գալիս ձիավարության, Մուսան, հրացանը ձեռքին, ուղեկցում էր նրան:

մի վկայություն գրելը կարող է թեթևացնել նրա խղճի բեռը, նա իր գրչին ազատություն է տալիս:

Կլարայի գրվածքները, օրագիրն ու «Ամառ 1915» վավերագրությունը միասին վերցրած կազմում են Հայոց ցեղասպանության մասին մի նոր, մինչև օրս մեզ համար անհայտ, սակայն այսօր հավաստի և անաչառ վկայություն, որը մեզ հասել է օտարերկրացի վստահելի ականատեսի կողմից: Այդ երկու գրվածքների համար հայերը հավերժ երախտապարտ պիտի լինեն շվեյցարուհի Կլարա Զիգրիստ-Հիրթիին, քանի որ այդ օրագրություններն անգնահատելի ավանդ են Հայոց ցեղասպանության պատմության համար: Եվ ահա՝ թե ինչու.

1. Կլարայի մեզ թողած ձեռագրերը ոչ թե հուշագրություն են, այլ օրագրություն, այսինքն՝ դեպքերի, դեմքերի ու իրադարձությունների՝ ականատեսի կողմից օր օրի վրա գրված և մեզ հասցված վավերագրություն, որն ընդգրկում է Թուրքիայի հարավ-արևելքում իրագործվող Հայոց ցեղասպանության երեք տարիները՝ 1915-ի մայիսից մինչև 1918-ի ապրիլը: Օրագրությունը կատարված է հնգամյա օգտագործման համար նախատեսված օրացուցային կառուցվածքով տպագիր մի գրքույկի մեջ, որտեղ հինգ տարվա բոլոր օրերին տեղ է հատկացված, և որի մեջ նույնիսկ չլրացված հատվածներն իրենց ասելիքն ունեն:
2. Նյութի հավաստիության համար մեծ նշանակություն ունի օրագրության հեղինակի անձնավորությունը: Կլարան ներկայանում է որպես խստաբարո, շրջահայաց ու լրջախոհ նկարագրի տեղ 30-ամյա մի կին: Օրագրողն օտարերկրացի է՝ ծագումով ազնվական, որը, թեև բազմակողմանիորեն զարգացած, նախապես անձանոթ է եղել թուրքական բազմազգ պետությանը և որևէ կանխակալ կարծիք չի ունեցել երկրում ազգային ու ցեղային այս կամ այն խմբերի կամ նրանց փոխհարաբերությունների մասին: Հետևապես նա հանդես է գալիս որպես արդար դատավոր. նրա խոսքից հնչում է առողջ բանականության ձայնը:
3. Կլարան Հայոց ցեղասպանության վերաբերյալ վկայություններ թողած՝ այլ օտարերկրացիներից տարբերվում է նրանով, որ նրա՝ Թուրքիայում գտնվելը ի պաշտոնե չէր,

այլ բոլորովին պատահական բնույթ ուներ: Նա լրագրող, միսիոներուի կամ դիվանագետ չէ, այլ ուսանած բուժբույր, որի ամուսնությունը Բաղդադի երկաթուղու ճարտարագետ Ֆրից Զիգրիստ-Հիլթիի հետ առիթ է հանդիսացել՝ թողնելու իր բուժքրոջ պաշտոնը Շվեյցարիայում և ամուսնուն հետևելու Թուրքիա՝ Ամանոսի տարածաշրջան: Աշխարհաքաղաքացու և մարդասերի պարտքի գիտակցումն էր, որը նրան մղել է տեսածն ու ապրածը գրի առնելու:

4. Կլարայի անկողնականությունն ապահովված է նաև նրա յուրահատուկ իրավիճակով: Առաջին տարին Թուրքիայում նա, այսպես ասած, հարսանեկան ուղևորության մեջ է, երկրորդ տարում երեխայի է սպասում, երրորդում մայրանում է: Թուրքիայում իր անցկացրած երեք տարիների ընթացքում Կլարան մշտապես տարուբերվում էր անձնական երջանկության որոնման և դրսից եկող ցեղասպանության ճնշող տեսարանների միջև: Նա վրդովված է այդ տեսարաններից. «Այստեղ մարդ ժամանակի ընթացքում սրտային հիվանդ կղաղնա և կամ ինքն էլ շատ դաժան», - (1 հոկտեմբերի, 1915) և բողոք է հայտնում. «Երանի՛ թե այլևս չտեսնեինք այս բոլորը» (9 հոկտեմբերի, 1915): Աստիճանաբար նա աշխատում է դիրքավորվել հակվելով դեպի անտարբերությունը: Սակայն դրսում շարունակվող «Աստվածամոր պատկերները» նրա խիղճն են տանջում: 1917 թ. մարտի 27-ին՝ իր առաջնեկին ունենալուց հետո, նա զուգահեռներ է անցկացնում մարդկային տարբեր վիճակների միջև. «Փոքրիկ Քարլֆրիդելին ծիծաղում և ճովողում է բազմոցից դեպի մեր նախաճաշի սեղանը, մինչդեռ դրսում հովտով անցնում են այդ թշվառները՝ իրենց հետ քարշ տալով նրա նման փոքրիկ էակների»: Հոգեկան հակամարտության մեջ ստեղծված վկայությունները շատ իրական են և համոզիչ:

5. Կլարայի՝ օրացուցային կառուցվածք ունեցող օրագիրը ժամանակագրական ճշգրտությամբ փաստագրում է իրադարձություններ, որոնց ճշմարտացիությունը հաստատվում է զգայական ընկալումներ արտահայտող «տեսնել», «լսել» և «նկատել» բայերի մշտական օգտագործմամբ: Իսկ

այն, ինչ որ ինքը սեփական աչքերով չի տեսել, հայտնի է, որ նա լսել է հավաստի աղբյուրներից: Նրա վկայությունները ոչ միայն համընկնում, այլև լրացնում են ցեղասպանական գրականության տվյալները:

6. Պատմաբանների համար կարևոր է նաև Թուրքիայում Կլարայի օրագրի վարման ամբողջ տևողությունը: Այն ընդգրկում է 1915 թ. մայիսից մինչև 1918 թ. ապրիլ, որը նաև 1-ին աշխարհամարտում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության ամբողջ ընթացքն է՝ սկզբից մինչև վերջ: Ինչպես ոչ մեկ այլ ակնաստեսի, Կլարային հաջողվել է ժամանակագրական ճշգրտությամբ փաստագրել Թուրքիայի հարավարևելյան հեռավոր շրջաններում Հայոց ցեղասպանության ամբողջ ընթացքի վճռորոշ պահերը: Թեև գրականության մեջ շատ են եղել փորձեր՝ վերականգնելու պատմությունը՝ հիշողության միջոցով ընդգրկելով ավելի երկար ժամանակահատվածներ, նրանց մեջ բացակայում է օրացույցով կարգավորված օրագրության ճշգրտությունը:
7. Կլարայի օրագիրը հարուստ է պատմության մեջ հայտնի անձնավորությունների անուններով: Նրանք նախ և առաջ ամանոսյան տարածաշրջանի Բաղդադի երկաթուղու շինարարության վրա պաշտոնավարող եվրոպացի ճարտարագետներն են՝ Վինքլերը, Մորֆը, Քյոփլերը, Լոյթենգերը և ուրիշներ, որոնք բոլորն էլ հոգով ու սրտով պաշտպան են կանգնել իրենց հսկողության տակ գտնվող հայ աշխատավորներին, բայց ցավոք մեծ հաջողություն չեն ունեցել: Սրանք բոլորը Զիգրիստ ամուսինների տան մշտական հյուրերն էին: Հյուրերի թվում էին նաև մարդու իրավունքների հայտնի պաշտպաններ՝ գերմանացի դ-ր Նիփագեն և շվեյցարացի դ-ր Գրեթերը, Մարաշի հայ որբանոցի տնօրեն, ավետարանական Պլանկը (Plank), գերմանացի միսիոներուհի, հայտնի քույր Փաուլա Շեֆերը, շվեյցարացի Բեաթրիս Բոները և շատ ուրիշ միսիոներ քույրեր: Կան նաև հայտնի բժիշկներ՝ դ-ր Մյուլենս, դ-ր Շիլինգ, դ-ր Ֆարահ, դ-ր Հովնանյան և ուրիշներ:
8. Հատուկ պատմական նշանակություն ունի նաև այդ ժամանակվա պետական և քաղաքական բարձրաստիճան

դեմքերի անունների նշումն օրագրում՝ հաճախ լրացուցիչ տվյալների հետ մեկտեղ: Օրագրում պահպանվել է Էնվեր փաշայի Ամանոսի տարածաշրջանով երեք անգամ անցնելու փաստը՝ 16 փետրվարի, 1916 թ., սեպտեմբերի 28, 1916 թ., մարտի 7: Իսկ 1915 թ. նոյեմբերի 6-ին Կլարան հաղորդում է Ջեմալ փաշայի անցնելու մասին: Նշանակալից են նաև կարևոր այլ անձնավորությունների այցերի մասին տեղեկությունները: 1915 թ.՝ հոկտեմբերի 26. «Բարոն ֆոն Օփենհայմը Գերմանիա վերադառնալու ճանապարհին»: 1915 թ. նոյեմբերի 19-ին. «Ֆոն դեր Գուլը այստեղով մեկնում է Հալեպ»: 1917 թ. մայիսի 16. «Գեներալ Ֆալքենհայմը ավտոմեքենայով անցնում է այստեղով» ևն: Չափազանց կարևոր է Կլարայի վկայությունը Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության անդամ և Օսմանյան դաշտային երկաթուղու տնօրեն, փոխգնդապետ Սիլվեստեր Բյոթրիխի (Sylvester Böttrich) անվան հիշատակումը: Այդ բարձրաստիճան զինվորականը ստորագրել էր մի հրաման, որով Բաղդադի երկաթուղու շինարարության վրա զբաղված բոլոր հայերը, անկախ նրանց վարձակալման եղանակից, պետք է աշխատանքից ազատվեին և քսոքի ճանապարհը բռնեին: Հետագայում Բյոթրիխը անձամբ է ներկայանում՝ Ամանոսյան տարածաշրջանը ստուգելու համար, թե ինչպես է կատարվում իր հրամանը: Ահա թե Կլարան ինչ է գրում 1916 թ. փետրվարի 19-ին. «Ֆրիցը ավագ լեյտենանտ Բյոթրիխի և Վինքլերի հետ Իսլահիեում է: Ներկայումս շտապեցնում են հայերի ցուցակների կազմումը: Դեռևս հայտնի չէ, թե ում կարելի կլինի մեզ մոտ պահել: Սակայն երևում է՝ հայերի վտարումը շատ խիստ բնույթ է ստանում»:

9. Օրագիրը մասնավորապես, լույս է սփռում Առաջին աշխարհամարտի ժամանակ Բաղդադի երկաթգծի Ամանոսյան հատվածի շինարարության վրա աշխատող հայերի շահագործման և ոչնչացման պատմության վրա, մի բան, որ մինչև օրս բավարար չափով մշակված ու պարզաբանված չէ: Հետաքրքրասեր ընթերցողն օրագրի միջոցով ծանոթանում է ոչ միայն Թուրքիայի հյուսիսից և արևմուտքից

ամեն օր բռնի տեղահանված, գաղթական հայերի թշվառ վիճակին: Թեկուզ և համառոտ, Կլարայի գրառումներն ընթերցողին ավելի հասանելի են դարձնում հազարավոր հայ մասնագետների և շինարարների ողբերգական կյանքը, մարդիկ, որոնք հաճախ ամբողջ ընտանիքներով Ամանոսի տարածաշրջանում ստրուկի վիճակում են աշխատել, սոսկ հաց ու ջրի դիմաց, որից հետո անմիջապես ուղարկվել են այն աշխարհ՝ գնդակահարվել, մորթուովել կամ կախաղան հանվել:

10. Կլարայի օրագրությունը կարևոր փաստաթուղթ է թուրքական բոլոր կառավարությունների պաշտոնական քաղաքականության դեմ, որոնք ջանում են ժխտել Հայոց ցեղասպանության փաստը: Նրա վկայություններն Ամանոսի տարածաշրջանի Բադդադի երկաթուղում զբաղված հայ աշխատասեր և խաղաղ շինարարների նկատմամբ բռնությունների մասին ի չիք են հանում թուրքերի բոլոր «հիմնավորումները», ըստ որոնց՝ այդ բռնություններն իբր երկրի անվտանգության բնականոն միջոցառումներ էին պատերազմի ժամանակ և մասնավորապես պատասխանն էին ռուսների հետ համագործակցող հայ հեղափոխականների նախահարձակ գործողությունների: Կլարա Զիգրիստ-Հիլթիի գրառումներն ապացուցում են, որ Թուրքիան իրականում օգտագործում էր 1-ին աշխարհամարտը, որպեսզի նրա ստվերում երկրում իրականացնի իր վերջնական՝ պանթուրքիզմի նպատակը: Ահա՝ Կլարայի դատողություններն այս մասին իր «Ամառ, 1915» գրվածքում. «Վաղուց ի վեր այս ազգը [հայերը - Դ. Ս.] հակակրեղի էր իսլամին: Իսկ այժմ սրանք նպաստավոր ժամանակներ են, քանի որ եվրոպական պետություններն զբաղված են իրենց սեփական խնդիրներով և կամ տվյալ պահիս չեն ցանկանում Թուրքիայի հետ իրենց հարաբերությունները փչացնել»:

*Եվ մի թե շատ բան է փոխվել այսօր՝ հարյուր տարի անց:*

**CLARA SIGRIST-HILTY'S HANDWRITTEN REPORTS  
ON THE ARMENIAN GENOCIDE**

Clara Hilty (1884-1988) was a Swiss nurse who in April 1915 married Fritz Sigrist (1881-1963), an engineer on the construction of the Adana-Aleppo section of the Baghdad Railway since 1910. One day after their wedding in Werdenberg, Switzerland, the newlywed couple set off for historic Cilicia in South-Eastern Turkey and settled down near Keller, an important railway junction in the historical Cilicia. Soon after the couple's arrival, the Armenian deportations started. One of the main deportation routes leading to the Syrian deserts passed through Keller, and the Sigrists became the unwitting witnesses of Turkish atrocities. Clara recorded her painful experience in her journal (1915-1918) and in a special report "Sommer 1915". She provides an extensive eye-witness account 1) on the death marches as they streamed by her house for months on end; 2) on the inhuman conditions of the concentration camps in Keller, Katma, and Aleppo; 3) on the annihilation of thousands of Armenian workers at the Bagdad railway construction.

The paper is based on Clara Sigrist-Hilty's 100-year-old reports written in Gothic script. These rare documents have been obtained by Sakayan from Swiss archives and deciphered, analyzed and prepared for publication. A German book is planned to appear in 2016. An Armenian and an English edition are also under way.

*ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

**ՀԱՅ ԵՎ ԹՈՒՐԿ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԸՆԿԱԼՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Վերջին ժամանակներս և հատկապես Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ առավել կարևորվում են հայ-թուրքական հասարակական փոխադարձ ընկալումների, ժամանակակից հայերի և թուրքերի միջև հարաբերությունների

ուսումնասիրություններն ու քննարկումները տարբեր գիտական և քաղաքական հարթակներում: Այս հարցի պատասխանը ստանալու համար անհրաժեշտ կլինեն նախևառաջ գոնե մեկ համատեղ սոցիոլոգիական ուսումնասիրություն անցկացնել Հայաստանում և Թուրքիայում: Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում դա, իհարկե, բավականին բարդ խնդիր էր: Բայց, չնայած դրան, առաջին անգամ պատմության մեջ 2003թ. հայ և թուրք սոցիոլոգները նախաձեռնեցին նման ուսումնասիրության իրականացումը: Հայաստանից քննարկումներին մասնակցում էին Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի մասնագետները (ղեկավար՝ Գ.Պողոսյան), իսկ Թուրքիայից՝ Հետազոտական ու խորհրդատվական կենտրոնի (SAM) ղեկավար դոկտոր Ֆերհատ Քենտելը և նրա աշխատակիցները: Թուրք և հայ հետազոտողների նախաձեռնությամբ հաջողվեց 2003-2005թթ. իրականացնել այս՝ իր տեսակով առաջին և դեռևս միակ հետազոտական նախագիծը<sup>1</sup>:

Այդ տարիներին Թուրքիայում «ցեղասպանություն» բառն արտասանելը նույնիսկ չէր կարելի, ցեղասպանության թեման փակ էր համարվում: Շատ ավելի ուշ թուրքական հասարակության մեջ և հատկապես մտավորականների շրջանում սկսեցին խոսել հայերի ցեղասպանության մասին: 2007թ. Հրանտ Դինքի սպանությունից հետո, թուրք հասարակության քաղաքական գիտակցության մեջ տեղի ունեցան շատ լուրջ փոփոխություններ:

Հետազոտությունը Թուրքիայում իրականացվել էր 35 քաղաքներում (İstanbul, Ankara, Adana, Antalya, İçel, Maraş, Erzurum, Malatya, Elazığ, Bitlis, İzmir, Manisa, Aydın, Denizli, Gaziantep, Adıyaman, Urfa, Diyarbakır, Konya, Yozgat, Karaman, Eskişehir, Kayseri, Samsun, Trabzon, Kastamonu, Zonguldak, Tokat, Bolu, Bursa, Kocaeli, Sakarya,

---

<sup>1</sup> Ferhat Kentel, Gevorg Poghosyan. Armenian-Turkish Citizen's Mutual Perception and Dialogue, Yerevan, 2006, 65 p.

Գ.Պողոսյան. Թուրքիայի հասարակական կարծիքը Հայոց ցեղասպանությունից 90 տարի անց - «Մեծ Եղեռն. Իրողություն և Դատապարտում» - գիտաժողովի նյութեր, 18- 19 ապրիլի, 2005թ., Երևան, ՀՀ ԳԱԱ, 15 էջ:

Ferhat Kentel, Gevorg Poghosyan. Armenian-Turkish Relations and Mutual Perception (Sociological Survey) – Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, գիտական աշխատություններ, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, №12, 2006, էջ 28-47:



Bilecek, Tekirdağ), որին մասնակցել էին 1219 մարդ: Հայաստանում մասնակցել էր 1000 բնակիչ՝ հետևյալ 21 քաղաքներից՝ Երևան, Գյումրի, Արթիկ, Վանաձոր, Էջմիածին, Մեծամոր, Հրազդան, Չարենցավան, Եղվարդ, Արարատ, Արտաշատ, Վեդի, Աշտարակ, Թալին, Գավառ, Վարդենիս, Ճամբարակ, Կապան, Դիլիջան, Իջևան, Եղեգնաձոր:

Հետազոտության արդյունքում Թուրքիայում ստացված հարցման պատասխանների վերլուծությունը վկայում էր այն մասին, որ թուրք հասարակությունը բավարար տեղեկացված չէ Հայաստանի մասին և գիտելիքների բավականին ցածր մակարդակ ունի: Պարզվում է, որ Թուրքիայի հարևան երկիրը՝ Հայաստանը, իրենց համար գրեթե անհայտ մի երկիր էր: Օրինակ, հետազոտությունը պարզեց, որ թուրք հարցվածների մեջ կան մարդիկ, ովքեր կարծում են, որ հայերը հուդայական են կամ Հայաստանում այսօր էլ Խորհրդային Միության փլուզումից հետո ավելի քան տասը տարի անց, շարունակում է իշխել կոմունիստական կուսակցությունը: Թուրքերի կեսը տեղյակ չէր Հայաստանի Հանրապետության քաղաքական կառավարման մասին: Միայն 17,8%-ն է ճիշտ պատասխանել այդ հարցին, իսկ 13,5%-ը համոզված էր, որ ՀՀ-ում դեռևս գերիշխում է Կոմկուսը: Հայաստանում 63%-ը տեղյակ էր, որ Թուրքիայում գերիշխում է նախագահը: Ավելին, նույնիսկ թուրք հարցվածների մի մասը հստակ պատկերացում չունեին հարևան երկրի՝ Հայաստանի աշխարհագրական սահմանների մասին. նրանք իրենց պատասխաններում նշել էին, որ Հայաստանը գտնվում է Սև, Կասպից ու Միջերկրական ծովերի ափերին: Այսպես, Թուրքիայում 45,4%-ը կարծում է, որ Հայաստանը մուտք ունի դեպի Սև ծով, իսկ 29,4%-ը կարծում է, որ մուտք ունի դեպի Կասպից ծով: Հայաստանի բնակչության մասին նույնպես նրանց պատկերացումները շատ աղոտ էին: Այսպես, Թուրքերի 51,3%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին, իսկ նրանց 32,6%-ը կարծում էր, որ Հայաստանն ունի 5-10 միլիոն բնակչություն: Միայն 11,6%-ը տվել է մոտավոր ճիշտ պատասխան՝ 2-3 միլիոն: Հայերի մեծ մասը հստակ պատկերացում ուներ Թուրքիայի բնակչության մասին՝ նշելով 40-60 միլիոն: Այն հարցին, թե տվյալ երկրի բնակչությունն ինչպիսի կրոնական պատկանելություն ունի երկու երկրներում ստացվել էին հետևյալ պատասխանները:

	Հայաստանում	Թուրքիայում
Բուդդիստական	-	1,2%
Քրիստոնյա	-	54,6%
Մահմեդական	99,2%	1,3%
Հուդայական	-	16,8%
Այլ	-	25,5%
Զգիտեմ	0,8%	0,6%

Թուրքերի 60,4%-ը համոզված էր, որ թուրքերն ավելի հին ազգ են, քան հայերը: Նրանց 28,6%-ը տվել է չեզոք պատասխան, որ երկու ազգերն էլ հնագույն են: Մինչդեռ հայերի 94,6%-ը համոզված էր, որ պատմականորեն հայերն են առաջինը հայտնվել:

Թուրք հասարակությունը սեփական պատմության մասին, հատկապես Առաջին աշխարհամարտի ու 1915-1923թթ. Հայոց ցեղասպանության մասին ունի շատ մոտավոր, թերի և հաճախ խեղաթյուրված պատկերացում: Թուրքիայի իշխանությունները փաստորեն անտեղյակության մեջ են պահել սեփական ժողովրդին:

Ինչ վերաբերում է Հայաստանում հարցվածներին, ապա նրանք ունեին շատ ավելի հստակ ու ճշգրիտ պատկերացումներ թե՛ Թուրքիայի և թե՛ թուրք ժողովրդի մասին: Հայերի ճշգրիտ գիտելիքները, այնուամենայնիվ, կրում էին որոշակիորեն բացասական երանգավորում, սակայն դա, ըստ երևոյթին, գալիս էր նրանց պատմական փորձից ու ցեղասպանության հետևանքներից:

Չնայած դրան, թե՛ հայերի և թե՛ թուրքերի մեծ մասը համարում էին, որ երկու ժողովուրդներն ունեն ընդհանուր մշակութային տարրեր երաժշտության, ժողովրդական բանահյուսության, ինչպես նաև ազգային խոհանոցի մեջ:

Ընդհանուր առմամբ հայերի կողմից թուրքերին տրված գնահատականները կարելի էր համարել «բացասական»: Հայերի 79,3%-ը գնահատել էր նրանց «վատ» և «շատ վատ» բառերով, 1000 հայից 5-ն

են գնահատել «լավ», և ոչ մեկը՝ «շատ լավ»: Իսկ թուրքերից ամեն 10-րդը գնահատել է որպես «լավ», իսկ 45,4%-ը գնահատել է «ոչ լավ, ոչ էլ վատ»: Թուրքերի կողմից հայերին տրված գնահատականներն ավելի մոտ էին «չեզոքին»: Ահա թե ինչպես էին մեկ բառով նկարագրում հարցվածները հարևան ժողովրդին՝

Հայերի կողմից թուրքերին տրված բնութագրերը մեկ բառով.

Բացասական բնութագրեր - 68,7%;

(այդ թվում)

-Արյունարբու- 6,4%

-Թշնամի-10,1%

-Բարբարոս- 9,1%

-Մարդասպան- 6,4%

-Զավթիչ- 2,6%

-Վայրենի- 3,6%

-Այլ բացասական- 30,5%

Դրական բնութագրեր - 6,0%

Չեզոք բնութագրեր - 9,5%

Չգիտեմ - 15,8%

Թուրքերի կողմից հայերին տրված բնութագրերը մեկ բառով.

Բացասական բնութագրեր - 34,3%

(այդ թվում)

-Թշնամի -7,8%

-Կանխակալ բացասական -7,2%

-Չար -7,0%

-Եսասեր, կանխակալ-4,5%

-Այլ բացասական բնութագրեր-7,8%

Դրական բնութագրեր -16,5%

-Լավ մարդ -4,2%

-Բարեկամական ազգ -1,4%

-Զանապուղ, աշխատասեր -1,2%

-Մարդկային -5,7%

-Այլ դրական բնութագրեր-4,0%

Չեզոք բնութագրեր- 7,9%

-Քրիստոնյա -2,0%

-Հայ -1,6%

-Այլ չեզոք բնութագրեր-4,3%  
Զգիտեն - 41,0%

Այսպիսով, հայ հարցվածների կողմից թուրքերին տրված բնութագրերի 2/3-ը բացասական է, իսկ թուրքերի կողմից հայերին տրված բնութագրերի միայն 1/3-ն է բացասական: Թուրքերի դիրքորոշումները հայերի նկատմամբ առանձնանում են ավելի դրական ու չեզոք վերաբերմունքով: Բարձր կրթական մակարդակ ունեցող թուրք հարցվածների վերաբերմունքը հայերի նկատմամբ ավելի դրական էր, քան ցածր կրթական մակարդակ ունեցողներինը:

Թուրք հարցվածները համարում էին, որ հայերն ունեն ոչ բացասական վերաբերմունք իրենց նկատմամբ: Մինչդեռ Հայաստանում հարցվածները չէին կասկածում, որ թուրքերը հայերի նկատմամբ ունեն միանշանակ բացասական դիրքորոշում:

Երկու երկրներում հարցվածների շրջանում ամենատարածված կարծիքներն էին.

- Թուրքերը սովորաբար չեն սիրում հայ ժողովրդին - 51,3%:
- Հայերը սովորաբար չեն սիրում թուրք ժողովրդին - 33,6%:
- Երկու կողմերի նախախնամությունը խանգարում է հարաբերությունների բարելավմանը - 30,0% և 24,4%:
- Թուրքիան պոտենցիալ վտանգ է Հայաստանի համար - 27,6%:
- Հայաստանը պոտենցիալ վտանգ է Թուրքիայի համար - 20,6%:
- Թուրքիան թշնամական երկիր է Հայաստանի համար - 33,6%:
- Հայաստանը թշնամական երկիր է Թուրքիայի համար - 23,4%:

Թուրքերի 78,8%-ը համարում է, որ հնարավորության դեպքում ՀՀ-ն տարածքային պահանջներ կներկայացնի: Հայերի 81,7%-ը հայ-թուրքական հարաբերությունների բարելավման ամենակարևոր խոչընդոտ համարում են Հայկական հարցն ու ցեղասպանությունը: Ըստ թուրքերի՝ այդ հիմնական խոչընդոտներն են.

ա) Հայկական կողմի ցեղասպանության պնդումը – 19%:

բ) Հոդերի հարցը - 12,1%:

գ) Կրոնական տարբերությունները -11,2%:

Ստացվում է, որ թուրքերը չգիտեն հայերի բացասական վերաբերմունքի, իսկ հայերը չգիտեն թուրքերի համեմատաբար դրական վերաբերմունքի մասին: Այսպիսով, հայերի և թուրքերի դիրքորոշումների մեջ գոյություն ունի որոշակի անհամապատասխանություն: Սովորաբար, մարդկանց այս կամ այն դիրքորոշումների վրա մեծապես ազդեցություն է գործում անձնական ծանոթության ու որոշակի կապերի առկայության փորձը: Այն հայերը, ովքեր ունեն կամ ունեցել են ծանոթներ Թուրքիայում, ցուցաբերում էին ավելի չեզոք դիրքորոշում թուրքերի նկատմամբ, և այն թուրքերը, ովքեր ունեցել են կամ ունեն հայ ծանոթներ ու ընկերներ, ցուցաբերում էին ավելի դրական դիրքորոշում հայերի նկատմամբ:


Երկու երկրների հասարակություններում էլ գոյություն ունեն որոշակի նախապաշարմունքներ, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն և հաղորդակցման միտումներ: Այսպես, օրինակ, թուրքերի համար «բուժվել հայ բժշկի մոտ» առաջարկությունը, որը վկայում է նաև վստահության մակարդակի մասին, առանձնապես ոչ մի մտավախություն չէր առաջացնում: Սակայն նույնը, իհարկե, հնարավոր չէր ասել հայերի մասին: Մյուս կողմից, հայ հարցվածները պատրաստ էին գնելու թուրքական ապրանքներ և մեկնել հանգստանալու Թուրքիայի ծովափնյա վայրերում: Հայերը նաև կողմ էին արտահայտվում Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցի նկատմամբ:

Նման հարաբերություններ չափելու համար սոցիոլոգներն օգտագործում են այսպես կոչված «Սոցիալական դիստանցիայի կամ Բոգարդուսի սանդղակ» մեթոդը: Մեր ուսումնասիրության մեջ մենք նույնպես կիրառեցինք այն՝ հետևյալ ձևակերպումներով:

Սոցիալական դիստանցիայի սանդղակ – «Դուք ինչպե՞ս կվարվեք, եթե...»

- Եթե պարզեք, որ Ձեր քաղաքում հաստատվել է մի թուրք/հայ ընտանիք,
- Եթե Ձեր շենքում, հարևանությամբ թուրք/հայ բնակվի,
- Եթե Ձեր աշխատավայրում թուրք/հայ աշխատի,
- Եթե հիվանդանոցում թուրք/հայ բժիշկ Ձեզ բուժի,

- Եթե Ձեր որդին ամուսնանա թրքուհու/հայուհու հետ,
- Եթե Ձեր դուստրը ամուսնանա թուրքի/հայի հետ:



Հայերի 66,9%-ը բացասաբար էր արձագանքել նրան, որ հիվանդանոցում թուրք բժշկի մոտ բուժվելու գնա: Իսկ թուրքերի 73,6%-ը ցույց էին տվել չեզոք կամ դրական վերաբերմունք հայ բժշկի մոտ բուժվելու առաջարկին:

Թուրքերի 51.2%-ն ունեն կամ ունեցել են հայ ընկերներ, ծանոթներ: Հայերի 28%-ն ունի կամ ունեցել է թուրք ծանոթներ: Հարցվածների վերաբերմունքը կախված էր նրանից, թե արդյոք նրանք անձնական կապեր ունեն կամ ունեցել են թուրքերի կամ հայերի հետ, թե ոչ:

Նախապատվությունների և ակնկալիքների ուսումնասիրությունից պարզվեց, որ հայերի մեծամասնությունը ցանկանում է գնել թուրքական ապրանքներ: Իսկ թուրքերի 60,3%-ը ցանկանում է գնել հայկական ապրանքներ: Հայերի 73,5%-ը պատրաստ է մեկնելու Թուրքիա՝ զբոսաշրջության և արձակուրդի անցկացնելու համար, իսկ 94,8%-ն իրենց նախնիների հողը տեսնելու համար: Ինչ

վերաբերում է թուրքերին, ապա նրանց 50,4%-ը պատրաստ է մեկնելու Հայաստան բիզնեսի ու առևտրի համար:

Հայերի մեծ մասը համաձայն էր, որ Հայաստանի և Թուրքիայի միջև հաստատվեն դիվանագիտական հարաբերություններ, ու սահմանները բացվեն: Թուրքերն ավելի քիչ էին հակված երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելուն:

Մեր իրականացրած հարցումներում, անկասկած, ամենակնճռոտ հարցը Հայոց ցեղասպանության հարցն էր: Հատկանշական է, որ Թուրքիայում հարցվածների 19%-ը այս խնդիրը շատ լավ գիտակցում էին: Եթե Թուրքիայի իշխանությունները համարձակություն գտնեին դատապարտելու հարյուր տարի առաջ կատարված ոճրագործությունը, դա, իհարկե, կլիներ առաջին քայլը երկու երկրների ու ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների վերականգնման ու զարգացման համար: Այս առումով թուրք հասարակությունը նույնիսկ ավելի լայնախոհ է ու առաջադիմական, քան Թուրքիայի քաղաքական իշխանությունները:

Տարիներ են անցել այս հետազոտության անցկացման ժամանակից, շատ բան է փոխվել հայ-թուրքական հարաբերություններում: Թուրք հասարակությունը վերջին 6-7 տարիների ընթացքում լուրջ փոփոխություններ կրեց<sup>2</sup>: Հրանտ Դինքի սպանությունից հետո թուրք հասարակությունը կարծես արթնացավ, և կարելի է ասել, որ առաջին անգամ պատմության մեջ թուրք ժողովուրդը իր ձայնը բարձրացրեց իշխանությունների դեմ՝ պահանջելով «Դեմքով շրջվեք դեպի Դինքը, դեպի Ցեղասպանությունը»: Այն, ինչի մասին նշում էին մեր հետազոտության ընթացքում թուրք մտավորականների փոքրաթիվ խմբի մասնակիցները, այսօր արդեն բարձրաձայնում են հարյուր հազարավոր ցուցարարներ Ստամբուլի հրապարակներում: Մասնավորապես վերջերս Թուրքիայում իրականացրած սոցիոլոգիական հարցումներից մեկի արդյունքում պարզվել էր, որ ուսանողության 33%-ը տեղյակ է և ճանաչում է Հայոց ցեղասպանությունը<sup>3</sup>: Իզմիրում 2015թ. մարտի 14-15-ին կայացած Էգեյան ժողովրդավարու-

---

<sup>2</sup> Պողոսյան Գ.Ա., Հայ-թուրքական հարաբերությունների ընկալումը հասարակական գիտակցության մեջ, Եր., «Լիմուշ» հրատ., 2015, 141 էջ:

<sup>3</sup> «Голос Армении». 24 января 2015 г., №3 (20637).

թյան գիտաժողովում «Ժողովուրդների դեմոկրատական կոնգրեսը» կոչ է արել Թուրքիային ճանաչել հայերի ցեղասպանությունը: Թուրքիայի վարչապետ Դավութօղլուի գլխավոր խորհրդական Էթեն Մահչուփյանը նույնպես ճանաչել է 1915-ի ցեղասպանությունը:

Դրա հետ մեկտեղ թուրք ազգայնական ռադիկալները ցույցեր են անցկացրել երկրի 3 քաղաքներում՝ հայտարարելով. «Շնորհավորում ենք մեր հայրենիքը հայերից մաքրվելու 100-ամյակի կապակցությամբ»:

Սակայն ակնառու է այն, որ Թուրքիայի երիտասարդ սերունդը դուրս է գալիս սահմանափակ քաղաքական «կլիշեներից», պաշտոնական քարոզչությունից, որ տասնամյակներ շարունակ անտեղյակության մեջ էր պահում թուրք հասարակությանը սեփական պատմության նկատմամբ:

*GEVORG POGHOSYAN (ARMENIA)*

## **THE CHARACTERISTICS OF MUTUAL PERCEPTIONS OF THE ARMENIAN AND TURKISH SOCIETIES**

Discussions at various venues (political, scientific and social) on the complex nature of the Armenian-Turkish relations have become particularly intensive in connection with the 100th anniversary of the Armenian Genocide in Ottoman Turkey. However, never before in the history of the Armenian-Turkish relations has this issue been subjected to a special sociological research in order to identify the mutual perceptions in the public consciousness and the attitudes in the two neighboring countries. The first opportunity appeared in 2003-2005, when the Armenian and Turkish sociologists attempted a joint comparative nationwide public opinion survey with the same methodology, both in Armenia and in Turkey. The article considers the results of this unique and still single study, which has revealed that in both societies there seem to endure quite stable and preconceived images of their neighbors. However, it is clear that the public opinion in modern Turkey is becoming more aware of its historical past and of the genocide of the Armenian population.



ԱՐՄԻՆ ԹԵՈՖԻԼ ՎԵԳՆԵՐԻ «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ  
ԱՆԱՊԱՏՆԵՐ» ԶԵԿՈՒՅՑԻ (ԲԵՌԼԻՆ, «ՈՒՐԱՆԻԱ», ՄԱՐՏ, 1919  
Թ.) ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ  
ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց ցեղասպանության ականատես, գերմանացի գրող և հրապարակախոս Արմին Թ. Վեգների կյանքի և գործունեության, նրա թողած ժառանգության համակողմանի ուսումնասիրումն ու լուսաբանումն ունեն գիտական և քաղաքական կարևոր նշանակություն, հատկապես նրա հայանպաստ գործունեությունն ու քաղաքական հայացքները ըստ ամենայնի վերաարժևորելու և գնահատելու առումով:

Հայոց ցեղասպանությունից հարյուր տարի անց առաջին անգամ (հայերենով) փորձ է արվում ներկայացնելու Արմին Վեգների «Հայ ժողովրդի արտաքսումը անապատներ» խորագրով և լուսանկարների ցուցադրությամբ ուղեկցված ծավալուն դասախոսությունը: Արմին Վեգներն Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո (1919-1924 թթ.) արևմտահայության բռնի տեղահանման ու բնաջնջման ականատեսի իր վկայություններով, մահվան սպառնալիքի տակ արված լուսանկարներով, ինչպես նաև հարակից այլ փաստական ու վավերագիր նյութերով հանդես է եկել բազմաթիվ հրապարակային դասախոսություններով:

Դասախոսությունն առաջին անգամ Արմին Վեգները ներկայացրել է 1919 թ. մարտի 19-ին Բեռլինի «Ուրանիա»<sup>1</sup> ընկերության սրահում: Նույն թվականի ապրիլի 22-ին Բրեսլաուում, որի մասին վկայում է մեզ հասած հայտագիրը, իսկ 1924 թվականին որոշակի փոփոխությամբ՝ Վիեննայում: Ուրանիայի դասախոսությունն առաջին քայլերից մեկն էր, որ ձեռնարկեց Վեգները՝ նպատակ ունենալով

<sup>1</sup> «Ուրանիան» հիմնադրվել էր 1888 թ. այն նպատակով, որպեսզի գիտությամբ հետաքրքրվող հանրությանը, նույնիսկ ոչ մասնագետներին, հասկանալի ներկայացվեն բնական և հասարակական գիտությունների, ինչպես նաև բժշկության հայտնագործություններն ու նոր ձեռքբերումները: Այնուհետև «Ուրանիայի» միջոցառումներն ու դասախոսությունների ծրագրերը ներառեցին նաև հասարակագիտական, մշակութային ու արվեստին վերաբերող թեմաներ:

նոր ավարտված Առաջին աշխարհամարտից հետո Բեռլինում տիրող հեղափոխական և բոլորովին նոր քաղաքական հարաբերությունների ներքո գերմանական հասարակությանը լուսաբանել Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի կանխամտածված բնաջնջման մասին:

Արմին Վեգները 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության ականատեսն էր. իր իսկ գնահատականով՝ «...մեկը այն սակավաթիվ ականատեսներից, ով իր սեփական աչքերով տեսավ այս ժողովրդի կործանումը՝ իր ողջ ընդգրկումով...»<sup>2</sup>:

Հայոց ցեղասպանության իրողության լուսաբանումը հատկապես կարևոր էր հենց Գերմանիայում, քանի որ կայսերական Գերմանիան այդ պատերազմում Օսմանյան կայսրության կարևորագույն դաշնակիցն էր, մեղսակիցը Հայոց ցեղասպանության: Գերմանացի սպաները էական, երբեմն նույնիսկ վճռորոշ դեր են խաղացել Մերձավոր և Միջին Արևելքում՝ Օսմանյան կայսրության պատերազմական թատերաբեմերում: Գերմանիայում այն ժամանակ սովորական երևույթ էր թուրք-գերմանական զինակցության մասին հպարտորեն խոսելը:

Ինչպես հայտնի է, Օսմանյան կայսրությունում ծառայություն իրականացնող գերմանացի սպաներն ու զինվորները հայերի ոչնչացման ականատեսներն էին, նույնիսկ ներքաշված հայերի բնաջնջմանն ուղղված թուրքական գործողությունների մեջ: Դրա մասին Գերմանիայում միայն քչերին էր հայտնի: Գերմանական հանրության մեջ գերիշխում էր «զինակից եղբոր» բավականին դրական կերպարը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ երբ Վեգներն «Ուրանիայում» կարդաց վերոհիշյալ զեկույցը, Յոհաննես Լեփսիուսն իր «Գերմանիան և Հայաստանը» 1914-1918 թթ. փաստաթղթերի հավաքածուն դեռևս չէր հրապարակել: Այդ աշխատության նախաբանը Լեփսիուսը գրել է 1919 թ. Մբ. Զատիկին: Գիրքը հասարակությանը հասել է ավելի ուշ, այսինքն միայն դրանից հետո կարող էր Լեփսիուսի գիրքն ընդհանրապես որևէ ազդեցություն ունենալ: Ուստի՝ Ուրանիայի դասախոսությունն առաջին իրադարձությունն էր, երբ

---

<sup>2</sup> Meier, Andreas, (Hrsg.), Armin T. Wegner "Die Austreibung des armenischen Volkes in die Wüste". Ein Lichtbildervortrag (mit einem essay von Wolfgang Gust), Göttingen 2011, էջ 11:

գերմանական հանրությանն այդպես ծավալուն և հստակ ներկայացվում էր հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը՝ անվանելով իրերն իրենց իրական անուններով: Հենց սրանով է պայմանավորված այս իրադարձության և այս փաստաթղթի պատմական նշանակությունը:

Ճիշտ է, Յոհաննես Լեփսիուսը դեռևս 1916 թ. «Tempel» հրատարակչությունում հրատարակել էր մի աշխատություն՝ «Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի վերաբերյալ» գեկույցը, սակայն, ներքաղաքական իմպերիալիստական հարաբերություններով պայմանավորված, այս աշխատության ազդեցությունն այն ժամանակ չնչին էր: Կայսերական Գերմանիայում հանրային կարծիքը գերազանցապես թուրքամետ էր, որը ոչ միայն պայմանավորված էր գերմանա-թուրքական ռազմական դաշինքով՝ «deutsch-türkische Waffenbruderschaft», այլև այդ տրամադրություններին նպաստող գերմանական քաղաքական վերնախավի կուսակցական որոշ ազդեցիկ դեմքերի քաղաքական հայացքներով, որոնք ուղղված էին բացառապես թուրքական պետության ուժեղացմանն ու աջակցությանը:

Տիրող քաղաքական շրջանակներում և քաղաքական կուսակցություններում Օսմանյան կայսրության և թուրքերի նկատմամբ համակրանքն այն ժամանակ բավականին իշխող էր: Կային հայտնի քաղաքական գործիչներ և հրապարակախոսներ, որոնք աջակցում էին օսմանյան պետության կայսերական, գաղութատիրական հավակնություններին և «Հայկական հարցը» դիտարկում էին այդ տեսանկյունից: Այս առումով ակնառու դեմքերից էին Պաուլ Ռոհրբախը, Ֆրիդրիխ Նաումանը և Էրնստ Յեքը: Մինչդեռ Ռոհրբախը հայ ժողովրդի նկատմամբ դրական վերաբերմունք ուներ, և Օսմանյան կայսրության փլուզման դեպքում, ի դեմս հայ ժողովրդի, նա տեսնում էր Գերմանիայի պոտենցիալ դաշնակցի:

Նաումանն իր աշխարհաքաղաքական հայացքներով չէր խուսափում հայերի նկատմամբ բացասական կարծիքներ տարածելուց: Շատ ավելի բացասական վերաբերմունք ուներ լրագրող Էրնստ Յեքը: Նա գտնվում էր ռասիստական գաղափարների ազդեցության տակ և հայերին համարում էր ստորադաս ժողովուրդ:

Գերմանիայում կային նաև հայտնի դեմքեր ու քաղաքական գործիչներ, ովքեր Առաջին աշխարհամարտի սկսվելուց դեռևս շատ առաջ վճռականորեն հանդես են եկել հայերի օգտին և խստորեն

դատապարտել 1890-ականներին Սուլթան Աբդուլ Համիդի օրոք արևմտահայերի նկատմամբ իրականացված զանգվածային կոտորածները: Նման կարծիքներ լսելի էին ամենից առաջ սոցիալ-դեմոկրատների կողմից: Ամենասուր քննադատությունը հնչեց Էդուարդ Բեռնշտայնի կողմից, ով այն ժամանակ Կարլ Կաուցկու հետ միասին ՄԴԿ-ի առաջատար տեսաբաններից էր: Նա Ռայխս-տագի լիազուսմար նիստում բազմիցս հանդես է եկել ի պաշտպանություն Օսմանյան կայսրությունում ապրող հայերի և սուր քննադատել է կայսերական կառավարությանը՝ «Կարմիր սուլթանի» հանցագործությունների վրա աչք փակելու համար: Այս առումով Լեփսիումը բոլորովին միայնակ չէր իր քննադատությամբ: Եվ ահա, միայն այս ժամանակահատվածում, Առաջին աշխարհամարտում կայսերական Գերմանիայի պարտությունից և 1918 թ. նոյեմբերյան հեղափոխությունից հետո ամբողջովին փոխված ներքաղաքական հարաբերությունները հնարավոր դարձրին այն, որ Արմին Թ. Վեգները նման թեմայով նախ՝ գերմանական հասարակության առջև կարողացավ հանդես գալ, երկրորդը, որ այն Բեռլինում էր, և երրորդ՝ կարևոր հանգամանքն էլ այն էր, որ գեկույցը տեղի ունեցավ «Ուրանիա» սրահում, այսինքն՝ մի վայրում, որն այն ժամանակ կայսերական մայրաքաղաքում կրթված աշխարհի կարևորագույն հավաքատեղիներից մեկն էր: Ուստի Վեգներն իր «Հայ ժողովրդի արտաքսումը անապատներ» դասախոսության համար այն ժամանակ Բեռլինում ավելի լավ վայր, քան «Ուրանիան» էր, չէր կարող գտնել:

Արմին Թ. Վեգները գերազանց պատրաստված էր «Ուրանիայի» դասախոսությանը, քանի որ նա 1915-1916 թթ. Անատոլիայում զինվորական ծառայության տարիներին օրագիր էր պահել: Հիմնվելով այդ օրագրի գրառումների վրա 1919 թ. գարնանը, այսինքն՝ նույն ժամանակահատվածում, երբ «Ուրանիայի» դասախոսությունն էր ներկայացրել, «Egon Fleischel» հրատարակչությունում (Բեռլին) հրատարակվեց «Ճանապարհ առանց տունդարձի» աշխատությունը:

Այս աշխատության մեջ Վեգները, ինչպես վերնագրից կարելի է նկատել, գեղարվեստորեն է անդրադարձնում միևնույն թեմային՝ հայերի արտաքսմանը, ինչպես և իր «Ուրանիայի» դասախոսության մեջ:

«Ուրանիայի» դասախոսության ժամանակահատվածը հետաքրքրական ու կարևոր է նաև մեկ այլ տեսանկյունից. դրանից կարճ ժամանակ առաջ՝ 1919 թ. փետրվարին, Վեգները բաց նամակ էր գրել ու ուղարկել ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին: Նա նախագահին հիշեցնում էր Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի տառապանքների ու հայերի սեփական պետություն ունենալու իրավունքի մասին: Դիմելով նախագահ Վիլսոնին՝ Արմին Վեգները գրում է. «Պարոն նախագահ, փրկեք Եվրոպայի պատիվը: Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը ճանաչել է հայերի իրավունքը ազատ ինքնորոշման մասին, իսկ նրանց ազգային պատգամավորները Փարիզում հռչակել են Հայաստանի անկախությունը: ...Բոլոր ժամանակների համար անուղղելի սխալ կլինեք, եթե Ռուսաստանի հայկական մարզերը չանջատվեն ընդմիջտ այդ կայսրությունից, որպեսզի այնուհետև միավորվեն Անատոլիայի հայկական նահանգների և Կիլիկիայի հետ որպես մեկ միասնական երկիր՝ ազատ թուրքական տիրապետությունից և ելք ունենալով դեպի ծով: Միայն այսպես կարող էր հնարավոր դառնալ փոխհատուցումը...»<sup>3</sup>: Վիլսոնն այս առումով ճիշտ հասցեատերն էր, քանի որ նա 1918 թ. հունվարին իր հանրահայտ «14 կետից բաղկացած ծրագրում» առաջ էր քաշել ժողովուրդների ինքնորոշման իրավունքը որպես կենտրոնական սկզբունք՝ Առաջին աշխարհամարտից հետո Եվրոպայի տարածքային և քաղաքական վերակազմավորման համար: Փարիզի խաղաղության կոնֆերանսը 1919 թ. հունվարի 19-ին ընդունել էր բանաձև, որում նախատեսվում էր Անտանտի երկրներից մեկին հանձնել Հայաստանի ժամանակավոր կառավարման մանդատը: Բոլորի աչքերն ուղղված էին դեպի ԱՄՆ-ը, որը հետագա ամիսների ընթացքում ստուգում էր նման մանդատ ստանալու հնարավորությունը:

Այն, որ Վեգները հենց այդ փուլում, երբ Փարիզում քննարկվում էր Արևելյան և Արևմտյան Հայաստանին ներառող ազգային պետություն ստեղծելու հարցը, հանրային քննարկումների մեջ մտավ, սա վկայում է նրա քաղաքական հասունության, քաղաքական պահի գիտակցության և հայկական շահերի պաշտպանության գործում նրա ներգրավվածության մասին: Ցավոք, Փարիզի խաղա-

<sup>3</sup> Wegner, T. Armin "Fällst du, umarme auch die Erde oder Der Mann, der an das Wort glaubt" Prosa-Lyrik-Dokumente Peter Hammer Verlag GmbH, Wuppertal 1974, էջ 170.

դության բանակցություններում Հայաստանի ճակատագիրն այլ ընթացք ունեցավ, քան Վեգները կարող էր հուսալ: Չնայած նախագահ Վիլսոնը պատրաստ էր մանդատն ընդունելու, այնուամենայնիվ ԱՄՆ-ի սենատը դրա համար անհրաժեշտ իր համաձայնությունը չտվեց (31.05.1920): Դրա փոխարեն Թուրքիայի հետ կնքվեց Սևրի խաղաղության պայմանագիրը (10.08.1920), որը, սակայն, այդպես էլ մնաց թղթի վրա:

Արմին Վեգներն իր դասախոսության մեջ բացարձակ քննադատության էր ենթարկում կայսերական Գերմանիային իր մեղսակցության համար՝ որպես դաշնակից երկիր: «...այս ամենի մեջ Գերմանիայի մեղսակցությունը բոլորովին քիչ չէր, քանի որ պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրության դաշնակիցն էր»<sup>4</sup>, - ասվում է գեկույցում:

Արմին Վեգների այս ելույթն իրադարձություն էր, երբ մատնանշում էր Գերմանիայի պատասխանատվության մասին: Այդ պատասխանատվության մեջ նա տեսնում և մատնանշում էր Եվրոպայի պարտականությունները Հայաստանի անվտանգության երաշխավորման գործում, ինչը նույնչափ արդիական է այսօր. «...Եվրոպայի պարտականությունն է ազատագրության այս գործին ամենալուրջ ու սիրալիր կերպով նպաստել, որ Հայաստանի ճակատագիրը մեծ տերությունների եսասիրական նպատակների ստվերում չմնա: Ողջ Եվրոպան, այդ թվում՝ նաև Գերմանիան, 1878 թ. Բեռլինյան պայմանագրում երաշխավորեցին պաշտպանել Հայաստանի հանգիստն ու անվտանգությունը: Այդ խոստումը մինչև օրս չի իրականացել նրանց վարած եսասիրական քաղաքականության պատճառով...»<sup>5</sup>:

Դասախոսությունն առանց միջադեպերի չանցավ: Այն ուղեկցվեց իրարանցմամբ և ծեծկոտուքով, որին հետևեցին Բեռլինյան օրաթերթերի բանավեճերը: Բեռլինյան մամուլը կենտրոնացավ ոչ թե հայ ժողովրդի ողբերգության վրա, որը որպես ականատես ներկայացրեց Արմին Վեգները, այլ կառչեցին միայն այն փաստից, որ Վեգները ցուցադրել էր լուսանկարներ, որոնք անձամբ չէր

---

<sup>4</sup> Meier, Andreas,(Hrsg.), Armin T. Wegner "Die Austreibung des armenischen Volkes in die Wüste". Ein Lichtbildervortrag (mit einem essay von Wolfgang Gust), Göttingen 2011; էջ 88.

<sup>5</sup> Meier, Andreas,(Hrsg.), Armin T. Wegner "Die Austreibung des armenischen Volkes in die Wüste". Ein Lichtbildervortrag (mit einem essay von Wolfgang Gust), Göttingen 2011; էջ 88.

լուսանկարել: Նա այդ սահմոկեցուցիչ պատկերներով և իր ազդեցիկ խոսքի միջոցով ուզում էր ցնցել անտեղյակ գերմանական հանրությանը՝ քաջատեղյակ լինելով, որ ունկնդիրների շարքերում կային թուրք և գերմանացի սպաներ: Վեզներն ինքը նշում էր. «...Լուսանկարները, որոնք կցուցադրեմ ձեզ, արել եմ ռազմական դատարան պատասխանատվության կանչվելու վտանգն աչքիս առաջ ունենալով: Հետագայում դրանք օրագրերիս հետ միասին մարմնիս կապած անց եմ կացրել սահմանը: Ոչ բոլոր լուսանկարներն եմ անձամբ լուսանկարել, սակավաթիվ լուսանկարներ արել եմ 1909 թ. դեպքերից, որոնք վերցրել եմ որպես լրացումներ, քանի որ իմ արած լուսանկարները շոգից վնասվել ու քայքայվել էին: Որպես ականատես՝ հավաստիացնում եմ, որ այդ տարիներին կատարված դեպքերը ոչնչով չեն տարբերվում մեր օրերում կատարվածներից: Լուսանկարների մեծ մասի հեղինակը, սակայն, ինքս եմ»<sup>6</sup>:

Հանրությունը տարբեր կերպ էր արձագանքում Վեզների դասախոսությանը: Մամուլի մի մասը պահպանեց իր թուրքամետ, հակահայկական կողմնորոշումը և քննադատեց Վեզներին անվանելով նրան ոչ հայրենասեր ու «սեփական բույնը աղտոտող»: Ընդհանուր առմամբ գերակշռում էին այն ելույթներն ու հրապարակումները, որոնք ոչինչ չէին ուզում լսել հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությանը Գերմանական կայսրության և Առաջին աշխարհամարտի տարիներին օսմանյան բանակում ծառայություն անցնող գերմանացի սպաների մեղսակից լինելու մասին: Թուրքական կառավարության հակահայկական գործողությունները հաճախ արդարացվում էին իբրև պատերազմի պահանջմունքներից դրդված լինելով, կամ էլ մասսայական հանցագործությունն ընդհանրապես հերքվում էր: Այդ իրատարածություններին գնահատական տալու առումով մեծ ազդեցություն են ունեցել 1919թ. վերջին գեներալ Օտտո Լիման ֆոն Սանդերսի հիշողությունները («Հինգ տարի Թուրքիա», 2-րդ հրատարակություն, Բեռլին 1920): Չնայած նա չի ժխտում «թուրքահպատակ հայերի հետապնդումները», այնուամենայնիվ նա փորձում է նվազեցնել դրանց նշանակությունը: Գերմանացիների մեղսակից լինելու մեղադրանքը նա

<sup>6</sup> Meier, Andreas, (Hrsg.), Armin T. Wegner "Die Austreibung des armenischen Volkes in die Wüste". Ein Lichtbildervortrag (mit einem essay von Wolfgang Gust), Göttingen 2011; էջ 26.

կտրուկ ժխտում էր՝ անվանելով դա «լևանտական գրպարտություն»:

Վեգները հարկադրված էր հանդես գալ մամլո ասուլիսով: Նա ոչ միայն ամենայն վճռականությամբ հանդես եկավ նման ելույթների դեմ, որոնք փորձում էին հերքել հայ ժողովրդի նկատմամբ իրականացված հանցագործությունը կամ նվազեցնել դրա նշանակությունը, նրանց դեմ, ովքեր սկսեցին վարկաբեկել ու նսեմացնել Վեգներին, նա, դեմ հանդիման կանգնելով, չվախեցավ ուժգին բարոյական պաթոսով հաստատել իր հստակ կեցվածքը հայ ժողովրդի ողբերգության նկատմամբ. «...Ինձ՝ որպես ականատեսի, իմ դիրքորոշման մեջ ոչինչ չի կարող փոխել, ...պատերազմի ընթացքում հայ ժողովրդի կրած ճակատագիրը մարդկության առաջնային կանոնորոշման հարցն է»<sup>7</sup>:

Արմին Վեգների «Հայ ժողովրդի արտաքսումը անապատներ» դասախոսությունը պատմագիտական եզակի փաստաթուղթ է, որն ունի արդիական հնչեղություն Հայոց ցեղասպանության դատապարտման, հայ ժողովրդի իրավունքների վերականգնման և հատուցման գործում:

*MANUSHAK MARKOSYAN (GERMANY/ARMENIA)*

**THE HISTORIC AND POLITICAL SIGNIFICANCE AND  
ACTUALITY OF ARMIN WEGNER'S TALK ON "THE EXILE  
OF THE ARMENIAN PEOPLE INTO THE DESERTS"  
(BERLIN, 1919)**

The paper attempts to present Armin Wegner's detailed account on "The Exile of the Armenian People into the Deserts", where through eyewitness accounts, photographs and other documentary evidence the author, not long after World War 1, in 1919-1924, revealed how Western Armenians had been forced out of their homeland and exterminated.

The report was first presented in March 19, 1919 in Berlin, in the conference hall of the "Urania" society.

Armin Wegner had put forth historical and political questions, accompanied by about 100 photographs of appalling facts of genocide.

---

<sup>7</sup> Rooney, Martin: "Weg ohne Heimkehr". Armin T. Wegner zum 100. Geburtstag. Ein Gedenkschrift. Bremen 1986, էջ 71.



ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ  
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ. ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ  
ԴԻՏԱՆԿՅՈՒՆ

Հայ գիտական շրջանակներում Հայոց ցեղասպանության հիշողության վերաբերյալ ուսումնասիրություններն այնքան էլ շատ չեն և մինչ այժմ գերազանցապես պատկանում են պատմագիտության և ազգագրության ոլորտների հետազոտողներին: Սկզբնական շրջանում այդ հետազոտությունները զուտ փաստագրական բնույթ ունեին և առավելապես ուղղված էին վերապրածների հիշողությունների հավաքագրմանը, որոնք սակայն միևնույն ժամանակ որպես փաստաթուղթ ժամանակին բավականին արժեքավոր եղան ցեղասպանության վերաբերյալ հայ կոլեկտիվ հիշողության ձևավորման հարցում<sup>1</sup>:

Ներկայումս դրանք ավելի համակարգված են դարձել և հիմնականում կենտրոնանում են օբյեկտիվ կառուցվածքների, ինչպես օրինակ, հիշատակման օբյեկտների, ցուցապաստառների, տարաբնույթ պրակտիկաների ու ներկայացումների և/կամ պատմական որոշակի շրջանում ու սոցիալական համատեքստում Ցեղասպանության կոլեկտիվ հիշողության դրսևորումների ու գործառության վերլուծության վրա:

Կարելի է նկատել, որ Ցեղասպանությանը վերաբերող հայագիտական արդի ուսումնասիրություններում լայնորեն կիրառվում է կոլեկտիվ հիշողության մեթոդաբանական այն սկզբունքը, որը Ջ. Օլիկն անվանում է կոլեկտիվիստական, և որին նա հակադրում է ինդիվիդուալիստականը: Հեղինակի համոզմամբ կոլեկտիվ հիշո-

---

<sup>1</sup> Փրկվածների բանավոր պատմությունները այլ վկայությունների հետ միասին պայմանավորեցին ցեղասպանության հիշողության շրջանակները (տե՛ս Մա-հակյան Հ., Հայոց ցեղասպանության հիշողությունը սոցիալ-պատմական առանցքային իրադարձությունների համատեքստում, *Ցեղասպանությունը հասարակագիտական վերլուծությունների կիզակետում*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 45, 46):

ղության ուսումնասիրություններում գոյություն ունեն եզրույթի վերոնշյալ երկու հիմնական ընկալումները: Կոլեկտիվ հիշողությունը, որը հիմնված է ինդիվիդուալիստական սկզբունքի վրա և ենթադրում է հարցումների կամ հարցազրույցների միջոցով արված ուսումնասիրություն, Օլիկն անվանում է «հավաքագրված հիշողություն»՝ համարելով, որ այն ընդամենը խմբի անդամների անհատական հիշողությունների հանրագումարն է: Հեղինակը կարծում է, որ տվյալ մոտեցումը հաշվի չի առնում այն, որ ցանկացած խմբի կամ հասարակության կոլեկտիվ հիշողությունը կազմված է խմբի որոշ ենթաբազմությունների հիշողություններից, մասնավորապես նրանց, ովքեր մուտք ունեն դեպի մշակութային վերարտադրության միջոցներ կամ, որոնց կարծիքն առավել է ուշադրության արժանանում և արժևորվում խմբում: Ինդիվիդուալիստական մոտեցման հետազոտական ռազմավարությունները տեխնիկապես գործառում են զանգվածային հարցումների պարագայում ժողովրդավարորեն՝ արժևորելով ամեն մի հարցվողին, իսկ բանավոր պատմությունների դեպքում՝ վերաբաշխողական հաճախ նպատակ ունենալով վերականգնել կորած կամ անտեսված հիշողությունները նրանց, ովքեր ազատագուրկ են եղել: Եվ վերջապես, այսպիսի մոտեցումը ոչ անհրաժեշտաբար է ելնում կոլեկտիվության գոյության (որն ունի կոլեկտիվ հիշողություն) ընդունումից, ինչի պատճառով ուսումնասիրության օբյեկտը դառնում է հիպոթետիկ, այլ ոչ կատեգորիալ:

Ի տարբերություն ինդիվիդուալիստականի՝ կոլեկտիվիստական սկզբունքը, որը կենտրոնանում է հասարակության մեջ անցյալի օբյեկտիվացիաների ձևանմուշների վրա, Օլիկն անվանում է «կոլեկտիվ հիշողություն»՝ հիմնավորելով, որ խմբերն են ապահովում այն սահմանումներն ու բաժանումները (սոցիալական շրջանակները), որոնց միջոցով այս կամ այն իրադարձությունը՝ որպես դրանց հետևանք, սահմանվում է սուբյեկտիվորեն, և նաև այդ սահմանումներն են առաջ բերում տարբեր կոգնիտիվ ու նյարդաբանական ամբարման գործընթացներ<sup>2</sup>: «Հզոր ինստիտուտները», որոշ

<sup>2</sup> Չնայած Օլիկը նշում է, որ ընդհանուր գոյաբանական տեսանկյունից այս մոտեցումը կոլեկտիվիստական չէ, և դրանում առկա է թաքնված մնացորդային ինդիվիդուալիզմ, քանի որ գաղափարական արտադրանքների, սիմվոլների, հուշարձանների և այլ հանրային բարիքների վրա կենտրոնացումը կոլեկտիվը

պատմություններ առավել արժևորելով, քան մյուսները, տրամադրում են պատումի նմուշներ՝ ուղղորդելով անհատներին, թե ինչպես կարող են և պետք է հիշեն՝ խթանելով հիշողությունն այն ձևով ու այն նպատակների համար, որոնք ոչ մի կապ չունեն անհատի ու համախառն նյարդաբանական գրառումների հետ: Այդպիսով, ժամանակակից հանգամանքները ակնարկներ են տրամադրում անցյալի որոշակի պատկերների համար, և անցյալը վերակառուցվում է ներկայում և ներկա նպատակների համար: Ուստի, Օլիկի պնդմամբ հիշողության կոլեկտիվիստական մոտեցումը, ի տարբերություն հավաքագրված հիշողության, ենթադրում է «ոչ միայն այն, որ մենք հիշում ենք՝ որպես խմբի անդամներ, այլ, որ մենք այդ գործողությամբ [հիշելով] միևնույն ժամանակ նաև կազմավորում ենք այդ խմբերն ու դրանց անդամներին...»: Մինչդեռ, հարցման միջոցով հիշողության հետազոտումը բացառում է շատ բան, ինչն «իսկապես սոցիալական է հիշողության համար», և հեղինակը եզրահանգում է, որ. «հարցման միջոցով ստացված առանձին անհատների հիշողությունների արդյունքը կոլեկտիվ հիշողություն չէ, այլ արտադրված գիտելիք, որն ունի պոտենցիալ դառնալու դրա մասը»<sup>3</sup>:

Սակայն հարցն այն է, թե արդյո՞ք կոլեկտիվ հիշողության էմպիրիկ հետազոտության տեսանկյունից հարցման մեթոդի կիրառությունը կամ այսպես կոչված «ինդիվիդուալիստական» մոտեցումը միանշանակորեն ինդիվիդուալիստական է մեթոդաբանական իմաստով, և արդյո՞ք միայն «կոլեկտիվիստական» սկզբունքն իրապես բավարար է այս կամ այն խմբի կոլեկտիվ հիշողությունն ուսումնասիրելու համար: Պատասխանը պահանջում է կոլեկտիվ հիշողության հավաքագրված և կոլեկտիվ ձևերի տարբերակման Օլիկի մոտեցման որոշ կողմերի պարզաբանում:

Այսպես, այն, ինչն Օլիկն անվանում է հավաքագրված հիշողություն, կարող է վերաբերել բացարձակապես անցյալի տվյալ իրադարձության մասնակից անհատների անձնական փորձով պայմանավորված հուշերի հանրագումարին: Այս դեպքում, իհարկե,

---

դարձնում է կախյալ փոփոխական: Այնուամենայնիվ, ըստ նրա, կոլեկտիվ բնույթի վերլուծության օբյեկտի օգտագործումը հաճախ որպես այս մոտեցման կոլեկտիվիստական բնույթն ապացուցելու փաստարկ է հանդես գալիս (տե՛ս Olick, J. K., *Collective Memory: The Two Cultures. Sociological Theory*, Vol. 17, No. 3, Nov., 1999, էջ 342):

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս Olick, J. K., նշվ. աշխ., էջ 336-346:

ինդիվիդուալիստական մեթոդաբանական մոտեցումն արդարացիորեն չի կարող դուրս բերել կոլեկտիվ հիշողությունը, քանի որ այն, որպես այդպիսին, բացակայում է: Այստեղ խոսքը, ավելի շուտ, ինքնակենսագրական հիշողության մասին է, որն ամբողջությամբ կազմված է անձնական փորձից, և որը խմբի անդամներից որևէ մեկը չի կիսում մյուսի հետ<sup>4</sup>: Որաշակի իրադարձության վերաբերյալ յուրաքանչյուր առանձին հիշողություն պատվում է այն կրող անձի շուրջ (ինչքան էլ, որ այդ անհատները միևնույն իրադարձության ժամանակակիցը և նույնիսկ առանձին դեպքի մասնակիցն են, այնուամենայնիվ գլխավոր գործող անձը նրանցից յուրաքանչյուրն է՝ իր անձնական տպավորություններով, երևակայությամբ ու իրավիճակի իր ընկալման ներկայացմամբ)<sup>5</sup>:

Կոլեկտիվ հիշողության համար անհրաժեշտ են անհատական փորձառությունների էքստերնալացում և օբյեկտիվացում, առնվազն կոմունիկացիաների կամ, ավելի երկարաժամկետ, մշակութային ձևերի<sup>6</sup> ու հիշողության վայրերի<sup>7</sup> միջոցով, որոնք, ինչպես Օլիկն է իրավացիորեն նշում, իրենց հերթին հենման կետ կդառնան ապագա հիշողության, ինչպես նաև ապագա ընկալման համար՝ ներագդելով նոր փորձառությունների կողավորման վրա<sup>8</sup>:

Բսկապես, օբյեկտիվ կառուցվածքները կոլեկտիվ հիշողության անհրաժեշտ պայման են, քանի որ մի կողմից նպաստում են փորձով պայմանավորված առանձին հիշողությունների վերացարկմանը և մյուս կողմից՝ ուրիշի փորձը սովորելու հնարավորություն են ընձեռում: Սակայն դրանք ոչ միշտ կարող են բավարար լինել, քանի որ, որպեսզի անցյալն ընդհանուր լինի խմբի բոլոր անդամների (հատկապես հետագա սերունդների) համար, անկախ այն բանից, թե նրանք այդ իրադարձությանն անձնապես մասնակից եղել

---

<sup>4</sup> Հմմտ. Zerubavel, E., Social Memories: Steps to a Sociology of the Past. *Qualitative Sociology*, Vol. 19, No. 3, 1996, էջ 284:

<sup>5</sup> Հմմտ. Misztal, B. A., *Theories of Social Remembering*, Theorizing Society. Maidenhead: Open University Press, 2003, էջ 11:

<sup>6</sup> Տմ. Ассман Я., Культурная память: письмо, память о прошлом и политическая идентичность в высоких культурах древности. Пер. с нем. М. М. Сокольской, М., Языки славянской культуры, 2004:

<sup>7</sup> St' u Нора П., Проблематика мест памяти. Франция-память. СПб., изд-во С.-Петербург. ун-та, 1999.

<sup>8</sup> St' u Olick, J. K., նշվ. աշխ., էջ 346, 347:

են, թե ոչ, և վերջիններս համատեղ հիշատակեն այն, անհրաժեշտ է, որ անցյալի այդ օրյեկտիվացված կառուցվածքները նրանցից յուրաքանչյուրի կողմից համարժեքորեն, միանշանակ ընկալվեն և մեկնաբանման արժանանան<sup>9</sup>, ինչը պայմանավորված կլինի հետագա սոցիալականացման ընթացքում ինտերնալացման գործընթացով: Չէ՞ որ կոլեկտիվ հիշողությունը միայն այն չէ, որ մենք՝ որպես տվյալ խմբի անդամներ, հիշում ենք անցյալի այս կամ այն իրադարձությունը, այլ նաև և հատկապես այն, թե մենք ինչ ենք հիշում և ինչպես ենք հիշում: Իհարկե, կարելի է պնդել, որ ժամանակակից հասարակությունները մասնավորապես ազգային կրթական համակարգերի, հիշատակման համընդհանուր օրերի, ծիսակարգերի և այլ միջոցներով իրականացնում են ուղղորդված, վերահսկվող սոցիալականացում, որպեսզի ապահովեն հիշողության համայքին նոր սերունդների ինտեգրումը և հուշային համաժամեցումը, այնուամենայնիվ սոցիալականացումը նաև տարերային գործընթաց է, և դրա ընթացքում տեղի ունեցող (ամենատարբեր իրադարձություններով ու հանգամանքներով պայմանավորված) պրակտիկաների հետևանքով կարող են տարբեր սուբյեկտների դիսպոզիցիաների համակարգերը տարատեսակ ձևավորվել<sup>10</sup>:

Այս գործընթացում էականն այն է, որ աշխարհի հետ պրակտիկ հարաբերությունների համատեքստում գոյության պայմաններից կախված, այս կամ այն սոցիալական իրականության օբյեկտիվ

<sup>9</sup> Ըստ Ջերուբավելի՝ փաստը, որ բազմաթիվ տարբեր անհատներ իրենց ազգի անցյալի մասին ունեն միևնույն ազատ զուգորդումները (“free” associations), ցույց է տալիս, որ նրանց հիշողություններն այդքան էլ անկախ չեն միմյանցից, այլ պարզապես անձնավորված արտահայտությունն են մեկ ընդհանուրի՝ կոլեկտիվ հիշողության (տե՛ս Zerubavel, E., նշվ. աշխ., էջ 294):

<sup>10</sup> Բուրդյեն նշում է, որ տարբեր անհատների հաբիտուսների կամ դիսպոզիցիաների համակարգերի համաստեռությունը բխում է դրանց ձևավորման գոյության օբյեկտիվ պայմանների համաստեռությունից: Որպես այդպիսին, նա առանձնացնում է սոցիալական դասը, չնայած հաբիտուսների տարբերությամբ է բացատրում նաև սերնդային կոնֆլիկտը (տե՛ս Бурдье П., *Практический смысл*. Пер. с фр.: А.Т. Бикбов, К.Д. Вознесенская, С.Н. Зенкин, Н.А. Шматко. Отв. ред. пер. и послесл. Н.А. Шматко, СПб., Алетейя, М., «Институт экспериментальной социологии», 2001, էջեր 114-118, 122), իսկ Ռ. Էյերմանը և Բ. Թրնեբը գտնում են, որ հաբիտուսը կարող է ունենալ նաև գենդերային ու սերնդային պայմանավորվածություն (տե՛ս Eyerman, R. and Turner, B. S., *Outline of a Theory of Generations. European Journal of Social Theory* 1(1), 1998, էջ 99):

կառուցվածքները<sup>11</sup> ձևավորում են մտածելու, ընկալման, արժևորման և գործողության ամուր սխեմաներ՝ ամրագրվելով ձեռք բերվող դիսպոզիցիաների համակարգում՝ հաբիտուսում, որն իր հերթին պայմանավորում է ազենտների հետագա պրակտիկաները<sup>12</sup>, կազմակերպում աշխարհը տեսնելու և նրանում գործելու ուղին<sup>13</sup>: Ընդ որում, տարբեր անհատների հաբիտուսների կամ դիսպոզիցիաների հարմարումն առկա օբյեկտիվ պայմաններին կախված է դրանց ձևավորման առաջնային պայմանների ու գործառնական առկա պայմանների համընկնումից: Դիսպոզիցիաները կարող են առկա պայմանների հետ տարածամ գործել այն պատճառով, որ այլ պայմաններում են ձևավորվել և դրանց հետ են օբյեկտիվորեն համաձայնեցված եղել, ինչը կարող է հանգեցնել նոր պայմաններում անհարմարվողականության և բողոքի<sup>14</sup>: Պատահական չէ, որ Հ. Մարուսյանը նշում է հայաստանյան հասարակության որոշ շերտերում, հատկապես երիտասարդության շրջանում, Ցեղասպանության վերաբերյալ հիշատակումների նկատմամբ տարակարծությունների դրսևորման մասին<sup>15</sup>: Դա կարող է բացատրվել նրանով, որ այդ սերնդի մոտ հաբիտուսի ձևավորումը տեղի է ունեցել այլ՝ դարաբաղյան պատերազմում հաղթանակի պայմաններում, որն իր գործառնական գործընթացում չի հարմարվում առկա (գոհի, կորստի օբյեկտիվացված) պայմաններին:

Ավելին, քանի որ էքստերնալացման, օբյեկտիվացման և ին-

<sup>11</sup> Ընդ որում, այս մոտեցումը հակասում է Օլիկի այն պնդմանը, ըստ որի՝ սերունդները և հիշողությունները փոխադարձ սահմանող են ոչ թե սոցիալական և մշակութային կառուցվածքի օբյեկտիվ հատկանիշների, այլ փորձի ընդհանրությունների պատճառով և պատմական իրադարձությունների անհատական հիշողությունների նմանության հետևանքով, և օբյեկտիվացված սերնդային կառուցվածքում անհատական փորձը մնում է դրա կենտրոնական պայմանը (տե՛ս Olick, J. K., նշվ. աշխ., էջ 339):

<sup>12</sup> Տե՛ս Bourdieu, P., Wacquant, L., *An Invitation to Reflexive Sociology*, Chicago: University of Chicago Press, 1992, էջ 126, 127:

<sup>13</sup> Տե՛ս Misztal, B. A., նշվ. աշխ., էջ 89:

<sup>14</sup> Տե՛ս Бурдье П., նշվ. աշխ., էջ 122, 123:

<sup>15</sup> Տե՛ս Մարուսյան Հ., Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները: «Պատմա-քանասիրական հանդես», թիվ 2, 2011, էջ 30:

տերնալացման միջև գոյություն ունի դիալեկտիկ կապ<sup>16</sup>, ապա կոլեկտիվ հիշողության վերակառուցման գործընթացի շարունակականությունը պայմանավորված կլինի ինտերնալացված օբյեկտիվ կառուցվածքների հետագա էքստերնալացմամբ, օբյեկտիվացմամբ: Ուստի, կոլեկտիվ հիշողությունը ոչ թե սոցիալական փաստ է՝ դյուրեկհեյմյան իմաստով, այլ գործընթաց, որը, պայմանավորված ինտերնալացման և էստերնալացման շարունակական գործընթացներով կամ հաբիտուսի և առկա պայմանների փոխազդեցություններով, անընդհատ վերակառուցվում և օբյեկտիվացվում է: Նմանատիպ տեսակետ են առաջ քաշում նաև Բ. Շվարցն ու Հ. Շումանը՝ նշելով, որ մշակույթի ստեղծումն ու մշակույթի ընդունումն անբաժանելի են, իսկ քանի որ կոլեկտիվ հիշողությունը մշակույթի մաս է, ապա պատմական ընկալումների հաջորդականությունը միջնորդավորվում է, ոչ միայն արտադրողներով, այլև արտադրողների ու ընդունողների փոխազդեցության միջոցով<sup>17</sup>:

Այս կոնցեպտուալ մոտեցումը կարծես թե ինտեգրում է կոլեկտիվ հիշողության ուսումնասիրություններում գոյություն ունեցող տարանջատված և միմյանց հակասող ինդիվիդուալիստական և կոլեկտիվիստական, ինչպես նաև անցյալակենտրոն և ներկայակենտրոն մշակույթները: Այն, առաջին հերթին, թույլ է տալիս արձանագրել, որ կոլեկտիվ հիշողության այսպես կոչված կոլեկտիվիստական սկզբունքը, որը, անտեսելով սոցիալական ազենտին, հիմնվում է ինստիտուցիոնալ օբյեկտիվացիաների և/կամ սիմվոլիկ կառուցվածքներում մարմնավորված հիշողության ստատիկ ձևերի վրա, կարող է տեղեկատվություն տալ կոլեկտիվ հիշողության բացառապես ներկա հրամայականներով պայմանավորված և անցյալի պաշտոնական (կամ գերիշխող խմբերի) տեսանկյունից նպատակահարմար կողմի մասին: Այն հաշվի չի առնում, որ կոլեկտիվ հիշողությունը կարող է պայմանավորված լինել նաև հաբիտուսում ամրագրված անցյալի փորձով, և, որ օբյեկտիվացիաները որոշակի ռեսուրսներին մոտ կանգնածների «մենաշնորհն» են, ու ժամա-

<sup>16</sup> Sté u Berger, P. L., Luckmann, T., *The Social Construction of Reality: A Treatise in the Sociology of Knowledge*. Garden City, NY: Anchor Books, 1966, էջ 61:

<sup>17</sup> Sté u Schwartz, B., Schuman, H., History, Commemoration, and Belief: Abraham Lincoln in American Memory, 1945-2001. *American Sociological Review*, Vol. 70, (April 2005), էջ 197:

նակակից բարդ հասարակություններում դրանք չեն կառուցվում դյուրեկհեշմյան նշանակությամբ կոլեկտիվ կերպով:

Երկրորդ այսպիսի մեթոդաբանությունը ենթադրում է կատեգորիալ և ոչ հիպոթետիկ հետազոտության օբյեկտ, քանի որ ելնում է նրանից, որ արդեն իսկ գոյություն ունեն կոլեկտիվություն և նրանում կառուցված օբյեկտիվացիաներ, որոնք սակայն շարունակ վերակառուցվում և վերախմաստավորվում են, կախված ոչ միայն ներկայի հրամայականներից, այլև դիսպոզիցիաների համակարգում ամրագրված անցյալի փորձից: Կոլեկտիվն այլևս հանդես է գալիս ոչ թե որպես կախյալ, այլ որպես օբյեկտիվ կառուցվածքների ինչպես ստեղծող, այնպես էլ վերակառուցող (անկախ) փոփոխական, ինչը լուծում է մնացորդային ինդիվիդուալիզմի խնդիրը, քանի որ ուսումնասիրության օբյեկտը դառնում է խումբը և ոչ թե կոլեկտիվ բնույթ ունեցող այս կամ այն «հանրային բարիքը»:

Երրորդ՝ այն թույլ է տալիս միաժամանակ խուսափել մեթոդաբանական ինդիվիդուալիզմից, քանի որ խմբի առանձին անհատների քննությունը չի նշանակում Ցեղասպանության վերաբերյալ անհատական հիշողությունների հավաքագրում: Անհատական հիշողությունները, որպես այդպիսիք, այստեղ բացակայում են, միայն առկա է ինտերնալացված կառուցվածքների սուբյեկտիվ (այլ ոչ անհատական) համակարգ՝ ընկալումների, պատկերացումների և գործողությունների ընդհանուր սխեմաներ, որոնք բոլոր օբյեկտիվացիաների և առըմբոնումների պայմանն են<sup>18</sup>:

Եվ վերջապես, այսպիսի մոտեցումը ոչ միայն չի հակասում Օլիկի այն դրույթին, ըստ որի կոլեկտիվ հիշողությունը միայն այն չէ, որ մենք հիշում ենք որպես խմբի անդամներ, այլ այն, որ մենք հիշելով, միևնույն ժամանակ նաև կազմավորում ենք այդ խմբերն ու դրանց անդամներին, այլև ավելի հիմնավոր ենք դարձնում այն՝ ցույց տալով սոցիալական ազենտի դերն այդ գործընթացում և կոլեկտիվ հիշողության դինամիկան: Մինչդեռ Օլիկի նշած կոլեկտիվիստական մոտեցման դեպքում այդ դինամիկան հնարավոր է դիտարկել միայն պատմական համատեքստում:

Այսպիսով, կոլեկտիվ հիշողության՝ որպես անցյալի իմաս-

---

<sup>18</sup> Տե՛ս Բурдые П., նշվ. աշխ., էջ 118:



տի/նշանակության ստեղծման շարունակական գործընթացի<sup>19</sup> ուսումնասիրության շրջանակը պետք է ներառի այն, թե որոշակի իրադարձության (տվյալ դեպքում Յեղասպանության) վերաբերյալ ներկա օբյեկտիվացված կառուցվածքներն ինչպես են հարաբերակցվում, սերունդների կամ այլ կոհորտաների դիսպոզիցիաների համակարգի՝ հաբիտուսի հետ: Նշանակում է, որ այն չի կարող միայն հիմնված լինել դիտարկման կամ փաստաթղթերի վերլուծության սոցիոլոգիական մեթոդներով իրականացված օբյեկտիվ կառուցվածքների (որպես «հանրային բարիքների») էմպիրիկ հետազոտության վրա: Անցյալի պատկերի դինամիկան ցույց տալու և մեկնաբանելու համար անհրաժեշտ է բացահայտել նաև սերնդային ու այլ նույնական գոյության պայմաններում ձևավորված հաբիտուսներում առկա Յեղասպանության իրադարձության օբյեկտիվացիաները կամ դրա վերաբերյալ օբյեկտիվացիաների սուբյեկտիվ արտահայտումները:

Հայոց ցեղասպանության կոլեկտիվ հիշողության ուսումնասիրություններում առկա բացը լրացնելու ամբողջական էմպիրիկ նյութի ապահովման առավել նպատակահարմար և հուսալի միջոց կարող է ծառայել սոցիոլոգիական հետազոտության քանակական ռազմավարության ընտրանքային հարցման մեթոդը: Հիշյալ մեթոդի առավելությունն այն է, որ այն հնարավորություն է տալիս ոչ միայն բացահայտելու այնպիսի թաքնված փոփոխականներ, ինչպիսիք են Յեղասպանության վերաբերյալ առանձին անհատների սուբյեկտիվ աշխարհով պայմանավորված ընկալումները, դիրքորոշումները, վերաբերմունքը և հավատալիքները, որոնք դիտարկելի չեն, և դրանք հետազոտելը ենթադրում է հատուկ մշակված սոցիոլոգիական սանդղակների օգնությամբ չափման որոշակի ընթացակարգեր, այլև տեղեկատվության զանգվածայնության ապահովման իր ռազմավարության շնորհիվ դուրս բերելու նույնական հաբիտուսներով պայմանավորված առանձին կոհորտաները: Վերջին հանգամանքը, թերևս, թույլ է տալիս պնդել, որ կոլեկտիվ հիշողության ուսումնասիրություններում քանակական այս մեթոդի կիրառությունը կարող է նաև կանխատեսման հնարավորություն ընձեռել, քանի որ մասնա-

---

<sup>19</sup> St' u Schwartz, B., Culture and Collective Memory: Comparative Perspectives, *Handbook of Cultural Sociology*, edited by John R. Hall, Laura Grindstaff and Mingcheng Lo, Routledge, 2010, էջ 622:

վորապես նոր սերունդների հաբխառուսի քննությունը պատկերացում կտա կոլեկտիվ հիշողության կառուցման և վերակառուցման հետագա ընթացքի մասին<sup>20</sup>:

HAYK SAHAKYAN (ARMENIA)

## ON THE METHODOLOGICAL AND METHODICAL ISSUES IN STUDIES OF COLLECTIVE MEMORY OF THE ARMENIAN GENOCIDE: SOCIOLOGICAL PERSPECTIVE

Collective memory of the Armenian genocide in Armenia has been an area predominantly studied by historians and ethnographers. These studies have primarily relied on the analyses of objectified structures, such as commemorative objects, posters, various practices and representations. This paper argues that such a “collectivistic” approach, as Jeffrey Olick describes it in his *“Collective Memory: The Two Cultures”* (1999), often overlooks the fact that collective memory can also be caused by the past embodied in the system of dispositions. Thus, the study of collective memory cannot be based only on the empirical research of these objectified structures conducted through observations and analysis of documents. It is also necessary to identify the subjective expressions of the objectifications of the Genocide incorporated in generational or other habituses to show, interpret and, even predict the dynamic of the image of the past. The application of the sample survey method is suggested to be capable of revealing latent variables, such as subjective perceptions, attitudes and beliefs, which are not observable and can be measured only by special sociological scales.

---

<sup>20</sup> Ըստ Էյերմանի և Թրների՝ սերունդը, լինելով ընդհանուր հաբխառուս և մշակույթ ունեցող մարդկանց կոհորտա, ունի առանձնահատուկ ու ռազմավարական մուտք դեպի կոլեկտիվ ռեսուրսներ, որը բացառման ծեսերի միջոցով ոչ միայն պահպանում է իր անհատական մշակութային ինքնությունը, այլև ընդհանրապես բացառում է մշակութային կապիտալի ու նյութական ռեսուրսների նկատմամբ այլ սերնդային կոհորտաների հասանելիությունը (տ՝ ռես *Eyerman, R. and Turner, B. S.*, նշվ. աշխ., էջ 93, 94): Ուստի, եթե նոր սերնդի հաբխառուսի և Յեղասպանության վերաբերյալ ներկա օբյեկտիվ կառուցվածքների միջև լինի անհամասեռություն, ապա կարելի է ենթադրել, որ նոր սերունդների տրամադրություններն ապագայում այս կամ այն կերպ իրենց արտահայտությունը կգտնեն օբյեկտիվ կառուցվածքներում:

**ԱՐԵՎՍՏԱՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԵՐԸ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ (1915-1923 թթ.)  
ԸՍՏ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Օսմանյան կայսրության երիտթուրք կառավարության պարագլուխներն Առաջին աշխարհամարտին մասնակցեցին զավթողական նպատակներով և արևմտահայոց սպանող իրագործելու իրենց երբեմնի պանթուրքական և պանիսլամական հրեշավոր ծրագրով: Ուստի զենք փնտրելու և հայ երիտասարդներին թուրքական բանակ զորակոչելու պատրվակով երկրի ողջ տարածքով ծայր առան հայերի ձերբակալություններ, բռնի տեղահանություններ և զանգվածային կոտորածներ:

Ողբերգական այդ օրերին հայ ժողովրդի հոգում վերագարթնեց դարերի խորքից ժառանգաբար արյան հետ եկող «Մահ իմացեալը» ստորով կյանքից նախընտրելու և բռնությանը միահամուռ ուժով դիմադրելու հերոսացման իր խիզախ ոգին: Ինքնապաշտպանական գոյամարտեր տեղի ունեցան Յոզղաթի Ագդաղում, Շատախում, Վանում, Մուշում, Մասունում, Շապին-Գարահիսարում, այնուհետև նաև Կիլիկիայում՝ Զեյթունում, Ֆընդըջագում, Մուսա Լեռում, Ուրֆայում, ավելի ուշ՝ 1920-1921 թթ., Մարաշում, Այնթապում, Հաճընում և այլուր: Այդ բոլորի մասին մեզ են հաղորդել ականատես վերապրողներն իրենց հուշ-վկայություններում:

Յոզղաթը, որն ուներ 48 հայկական գյուղ՝ շուրջ 75 հազար հայ բնակչությամբ, դիմադրում է Օսմանյան կայսրության կազմակերպած զորահավաքին, զինահավաքին և բռնագաղթին:

1915 թ. ապրիլին Յոզղաթի շրջանում թուրք ոստիկաններն իսլամ այլազան ցեղերի և տգետ ու մոլեռանդ ամբոխի հետ հարձակվում են հայկական Քիլլեր, Բեռհրենկ, ապա նաև Չաթ, Բուրուն-Ղըշլա, Էյլենջե, Գումգույու, Թենթիլ և այլ գյուղերի վրա՝ պահանջելով հայ երիտասարդներին զորակոչել թուրքական բանակ և հավաքել բնակչության զենքերը: Յոզղաթցիները կտրականապես մերժում են: Սկսվում է երկկողմ հրացանաձգությունը: Թուրքերը տեսնելով, որ անհնար է նրանց հաղթել, հրկիզում են նշված

գյուղերի փայտաշեն տները: Անօթևան մնացած համագյուղացիները ստիպված բարձրանում են մոտակա Ագդաղի անմատչելի լեռը, որտեղ իրենց խիզախությամբ հայտնի դարձած Սամվել Ինճեյանի, Հաջիբեյ Փափագյանի, Աբիսողոմ Առաքելյանի, Աղամի, Գյուլբենկի, Զիլ-Օհանի, Արթինի, թենթիցի Մանուկի և այլ խմբապետերի ղեկավարությամբ կազմակերպում են մարտական ջոկատներ և չորս տարի շարունակ, կիրառելով պարտիզանական պայքարի ձևը, մինչև 1918 թ. զինադադարը խիզախորեն մարտնչում են Ագդաղի բարձունքներում և տարածաշրջանում<sup>1</sup>:

Եթե Ագդաղի քառամյա գոյամարտն իր լայնածավալ ընդգրկումով, բազմաթիվ մարտական խմբերի և ժողովրդական զանգվածների անձնուրաց մասնակցությամբ կենաց ու մահու պայքար էր թուրքական կառավարության զինված զորաբաժինների դեմ, ապա Վանի ինքնապաշտպանական հերոսամարտն իր ռազմավարական կազմակերպվածությամբ առանձնապես օրինակելի դարձրեց խիզախ վանեցիների սխրանքը, որն սկիզբ էր առել Վանի ղեկավար Պր. Իշխանի և թուրքական խորհրդարանի անդամ Արշակ Վոսմյանի նկատմամբ Ջևդեթ փաշայի կազմակերպած դաժան հաշվեհարդարով ու շատախցիների զինված ինքնապաշտպանությամբ:

Վան քաղաքը բաժանված էր երկու մասի՝ Այգեստան և Քաղաքամեջ: Այգեստանի Համուդ աղայի թուրքական զորանոցը, որը մինչ այդ դատարկ էր, այդ օրը լցվել էր 130 թուրք զինվորներով և դարձել չարիք հայ կովողների համար: Բայց վանեցիները միակամ էին և վճռական. նրանք ուխտել էին՝ «Ձեն ի ձեռին կովելով մեռնիլ, քան՝ ոչխարներու պես մորթոտվիլ»<sup>2</sup>:

Վանեցիները հրավիրում են ընդհանուր ժողով և ընտրում դիմադրողական ինքնապաշտպանական Զինվորական մարմին՝ Արմենակ Եկարյանի, Արամ Մանուկյանի և Հրանտ Գալիկյանի ղեկավարությամբ: Վանում էին նաև ֆիդայիներ Կայծակ Առաքելը, բուլղարացի զինագործ Գրիգորը, նկարիչ Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ: Ընտրվում են նաև Պարենավորման մարմին, Ամրաշեն վաշտ, որտեղ աշխատելու ընդունակ տղամարդիկ սկսում են դիր-

<sup>1</sup> *Պատմագիրք Եռզկատի եւ շրջակայից (Գամիքք) հայոց*, խմբ.՝ Արմեն Դաբեան, Անդրանիկ Երկանեան, Պէրոյթ, 1988, էջ 775:

<sup>2</sup> *Ճիզվեճեան Մ. Գ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925)*, Ֆրեզնո, 1930, էջ 313:

քեր փորել, իսկ երկաթագործները շտապ պատրաստում են նիզակներ՝ զինելով բնակչությանը: Ամրաշեն վաշտը հնարամտությամբ, ստորգետնյա խրամատ փորելով, աննկատ հասնում է մինչև թուրքական զորանոցի հատակը և այն տակից պայթեցնում: Թուրքական զորանոցն իր զորքերով ոչնչացվում է՝ վանեցիներին ազատելով այդ մղձավանջից: Ստեղծվել են նաև կռվողներին օգնության հասնող «Թուրցիկ խումբ», Վառոդի արտադրություն, Փամփուշտարանի արհեստանոց, Խնամատար մարմին, Կարմիր խաչի հիվանդանոցներ և այլն:

Վանի ինքնապաշտպանության մեջ իր նշանակալի դերն ուներ Վարժապետանոցի սաների փողային նվագախումբը՝ ֆանֆառը, որն ամբողջ օրը նվագելով շրջում էր փողոցներով ու ոգևորում կռվողներին և ընդհակառակը՝ բացասաբար էր անդրադառնում թուրքերի վրա: Մայիսի 6-ին Վանի բերդի վրա ծածանվում է հայկական դրոշակը:

Վասպուրականի դիմադրողական ինքնապաշտպանության ականատես Շավարշ Հովվիյանի վկայությամբ. «Առաջին օրն իսկ Այգեստանը ստացաւ ինքնօրէն կառավարութեան մը երեւոյթը, ան իր Զին., Քաղ. եւ Տնտեսական Վարչութիւններովը ամենացայտուն ապացոյցը կ'ուտար տոհմային ձիրքի ու ձեռնհասութեան, կատարելապէս ռամկավարական ուղղութեամբ, այսինքն իւրաքանչիւր անհատ յօժարակամ իր բաժինը կը բերեր ինքնապաշտպանութեան փրկարար գործին»<sup>3</sup>:

1915 թ. գարնանը թուրքական կանոնավոր զորամասերը քրդական աշիրաթների հետ հարձակվում են Տարոն գավառի հայ բնակչության վրա: Սակայն Մուշի հայերը պատրաստ չէին ինքնապաշտպանության, քանի որ գավառի հայ ղեկավարները միակարծիք չէին դիմադրություն կազմակերպելու համար: Հետևաբար, Ցրոնք, Գոմս գյուղերի բնակիչները զագանաբար ոչնչացվեցին: Գոմերի մեջ մոխրացրին Վարդենիսի, Մշախշենի, Աղբենիսի, Ավգուտի, Խվների և շրջակա այլ գյուղերի ողջ հայ բնակչությանը:

Իսկ Մասունի պաշտպանների խմբերը, որոնց գլխավորում էին Փեթարա Մանուկը, Ռուբենը, Կոմսը, իշխան Շառոն և ուրիշներ, չկարողացան կազմակերպել ինքնապաշտպանությունը: Եվ այստեղ

---

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 334:

ևս անդեկ մնացած Սասունի գոյամարտը դաժանորեն ճնշվում է<sup>4</sup>:

Չենթարկվելով թուրքական կառավարության կորստաբեր հրամանին՝ Շապին-Գարահիսարի հայերը հավաքվում և որոշում են կոժել մինչև արյան վերջին կաթիլը: Հունիսի 2-ին բանտից ազատված ավագաններից կազմված խուժանը թուրք ոստիկանների հետ հարձակվում է Շապին-Գարահիսարի շուկայի վրա, և սկսվում է կոդոպուտը, իսկ հայ խանութպաններին, ձեռքերը կապկպած, տանում են բանտ: Շապինգարահիսարցիները շտապ ժողով են գումարում և դիմադրությունը կազմակերպելու համար ստեղծում Զինվորական խորհուրդ Ղուկաս Դեովլեթյանի, Ավագ Տուրիկյանի, Գարեգին Կարմիրյանի, Շապուհ Օզանյանի և Իսրայել Օզանի ղեկավարությամբ: Հաջորդ օրը թուրքական թնդանոթների ուժակոծումից հրդեհվում է հայկական Պարտեզ թաղամասը, և ավերվում շուրջ 3 հազար փայտաշեն տուն: Անօթևան մնացած հայերը՝ շուրջ 5.062 հոգի, ստիպված նահանջում են մոտակա բարձունքին կառուցված հնամենի բերդը, որը թուրքերը շրջապատում են և գնդակոծում: Սկսվում է երկկողմ հրաձգություն: Շուտով թուրքերը, համալրում ստանալով Սեբաստիայից, գերմանական սպաների աջակցությամբ սկսում են ուժակոծել բերդը:

Հունիսի 29-ին՝ պաշտպանության 27-րդ օրը, թուրքերը ներխուժում են բերդ, սկսում են կացնահարել անպաշտպան ողջ մնացածներին: Պատվախնդիր հայուհիները նետվում են անդնդախոր ձորը, որպեսզի փրկեն հայ կնոջ պատիվը<sup>5</sup>:

Ահավոր մղձավանջ ապրեց նաև Կիլիկիայի հայությունը: Հայաշատ Կիլիկիայով էր անցնում բացառիկ կարևորություն ներկայացնող Բեռլին-Բաղդադ երկաթուղին: Այդ հանգամանքը մտահոգում էր Թուրքիայի կառավարությանը, քանի որ Կիլիկիայի աշխատասեր ու զործույա հայությունն իր բարգավաճ վիճակով կարող էր տիրապետող դառնալ թուրքական տնտեսության մեջ: Լեռնային Կիլիկիայում Հաճընից, Ջեյթունից մինչև Դյորսոյո սփռված էին հայկական գյուղերն ու ավանները, որոնց բնակիչները զբաղ-

<sup>4</sup> Աւետեան Մ., *Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեն եւ Զօր. Անդրանիկ (Վերլուծական հայեցողութեամբ և վաւերական տուեալներով)*, Փարիզ, 1954, էջ 354-362:

<sup>5</sup> *Յուշամատեն Մեծ եղեռնի*, խմբ.՝ Գերսամ Ահարոնեան, Պէրյուք, 1965, էջ 771-780:

վում էին մետաքսագործությամբ, ջուլհակությամբ, գորգագործությամբ և այլ տոհմիկ արհեստներով:

Կիլիկիայի արծվաբուն Ջեյթունը վաղուց արդեն թուրքական բռնակալության գայրության կիզակետն էր դարձել: Հետևաբար, ժամանակն էր հին հաշիվները մաքրելու նաև համարձակ զեյթունցիների հետ, որոնք ինչպես անցյալում, այս անգամ ևս կարող էին անձնվեր պայքարի դուրս գալ, բայց դրան խանգարում են Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Բ Խաբայանն ու հայ երևելիները, որոնք, հավատալով թուրքական կառավարության կեղծ խոստումներին, «հնազանդության» կոչ են անում: Այնինչ զեյթունցի մայրերն իրենց զավակներին քաջ ու անվախ դաստիարակելու համար իրենց բարբառով երգել են, որը ներկայացնում եմ կից գրական թարգմանությամբ.

<i>«Բոլուզս Վօղը գղրաջ մը գունա, Կիդէնը փռէ լէաշը դուշմունա, Այծօթ արրջօն թիֆօնգը բէջը Դաււըշ բիդ ինա դէօգիւշան մէշը»:</i>	<i>«Որդիս վաղը կդառնա կտրիճ, Թշնամու դիակը կփռե գետնին, Արծաթ օղակով հրացանն ուսին Ինքնամոռաց նա պիտի կովի»<sup>6</sup>:</i>
--	--

Թուրքական կառավարությունը ինչպես այլ վայրերում, Կիլիկիայում ևս հավաքել էր հայերի զենքերը, երիտասարդներին զորակոչել թուրքական բանակ և ոչնչացրել: Նրանցից շատերը կարողացել էին բանակից փախչել և թաքնվել Ջեյթունում: Մայիսի կեսին Խուրշիդ փաշան 3.000-անոց զորքով գալիս, պահանջում է դասալիքներին, որոնք ապաստանել էին Բերգնկա լեռան վրա կառուցված հինավուրց Ս. Աստվածածին վանքում: 1915 թ. մարտի 25-ին թշնամին սկսում է գնդակոծել վանքը: Ջեյթունի ինքնապաշտպանները, Փանոս Չաքրյանի գլխավորությամբ, պատասխանում են թշնամուն՝ խնայելով իրենց փոքրաքանակ փամփուշտները: Ջեյթունցի քաջերը, Արամ Չոլաքյանի ղեկավարությամբ, վանքի հետևի լուսամուտներից թռչելով, անտառների միջով անցնում են Ֆընդըջագ՝ օգնության հասնելու այնտեղ ևս ծայր առած դիմադրողական ինքնապաշտպանությամբ:

---

<sup>6</sup> Սվազյան Վ., *Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը*, Երևան, 1994, Վկայություն (այսուհետև՝ Վկ.) 147, էջ 117:

1915 թ. գարնանից սկսվում են Կիլիկիայի հայության բռնա-  
գաղթն ու կոտորածը: Դատարկվում է Մարաշը, Այնթապը, Հաճընը,  
Անտիոքը, Իսկենդերունը, Քեսաբը: Մուսալեոցիները տեսնելով, որ  
հերթն իրենց է հասնելու, հուլիսի 19-ին Մուսա Լեռան յոթ գյուղերի  
գրեթե բոլոր բնակիչները միաբանվելով որոշում են չենթարկվել  
տեղահանության կորստաբեր հրամանին: Մուսա Լեռան հերոսա-  
մարտի մասնակից, 105-ամյա **Մովսես Փանոսյանը** (ծնվ. 1885 թ.)  
իրեն հատուկ երիտասարդական ավյունով է պատմել այդ դեպ-  
քերը՝ վերհիշելով մուսալեոցիների բարբառով երդումը.

<i>«Իս հուս ձննուձ իմ, հու՛ս ալէ բըր միռնիմ, Իս չը՛մ ուրթօ եասսէր քիմը դուշմանէն Եամրէն վըրքը չարչարանքում միռնիլ. Թվունքը ծառիս գը միռնէմ եաս դիդը, Թաքա մուհաջըր չը՛մ ըննօ»:</i>	<i>«Ես այստեղ եմ ծնվել, այստե՛ղ էլ կմեռնեմ, Ես չե՛մ գնա ստրուկի պես թշնամու Հրամանի տակ չարչարանքով մեռնելու. Հրացանը ձեռքիս կմեռնեմ այստեղ, Բայց գաղթական չե՛մ դառնա»<sup>7</sup>:</i>
--	---

40 օր համառ մարտեր են մղվում՝ Եսայի Յաղուբյանի, Պետ-  
րոս Դմկաքյանի և վերապատվելի Տիգրան Անդրեասյանի գլխավո-  
րությամբ: Այդ ընթացքում Քըզըլջայի, Քուզըղդազի, Դամլաջըքի և  
Ղափլան Դուզախի բարձունքներում չորս լուրջ ճակատամարտ է  
տեղի ունենում: Ըստ այդմ էլ հյուսվել է ժողովրդական պատմական  
խրոխտ դրուցագներգությունը.

*«...Լեռնցի ենք մենք՝ բոլորս ալ քաջ,  
Մենք չենք խոնարհվի թշնամու առաջ,  
Առյուծի նման կկռվենք քաջ-քաջ,  
Յիր ու ցան կանենք բանակը տաճկաց...»<sup>8</sup>:*

<sup>7</sup> Սվազյան Վ., *Մուսա Լեռան հերոսամարտը. Ականատես վերապրողների  
վկայություններ. The Heroic Battle of Moussa Dag: Testimonies of the Eyewitness  
Survivors*, Երևան, 2015, Վկայություն (այսուհետև՝ Վկ.) 19, էջ 39:

<sup>8</sup> Նույն տեղում, Վկ. 11, էջ 35:



Մեպտեմբերի 5-ին Միջերկրական ծովի խորքով անցնող ֆրանսիական «Կիշեն» ռազմանավը նկատում և դանդաղեցնում է ընթացքը: Յոթ օր հետո ֆրանսիական «Ժաննա դ'Արկ» շոգենավը անգլիական ռազմանավերի ուղեկցությամբ մոտենում է Մուսա Լեռանը և ավելի քան 4.200 մուսալեդիների փոխադրում Պորտ Սաիդ, որտեղ նրանք Պողոս Նուբարի հիմնադրած ՀԲԸՄ-ի աջակցությամբ պատասպարվում են բրեզենտյա վրանաքաղաքում:

Հոկտեմբեր ամսին կազմակերպվում է Ուրֆայի հերոսական ինքնապաշտպանությունը՝ Մկրտիչ Յոթնեղբայրյանի և Հարություն Ռաստկելենյանի գլխավորությամբ: Ուրքի է կանգնում Ուրֆայի ողջ հայությունը: Մանուկ ու ծեր, տղա ու աղջիկ, բոլորը մեկ մարդու նման ինքնամոռաց կովում են 25 օր ու գիշեր անդադար: Հայոց թաղամասերը բաժանվում են վեց մարտական շրջանների, որտեղ տեղաբաշխված էին 800 մարտիկներ: Իրենց բացառիկ քաջությամբ աչքի են ընկել նաև հայ կանայք, այդ թվում՝ հերոսուհի Խանում Քեթենջյանը: Ուրֆացիները երդվում են. «Մենք պատրաստ ենք մեռնելու զենքը ձեռքներին»<sup>9</sup>:

Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1916թ., դաշնակից տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ներքին պայմանավորվածությամբ (Սայքս-Պիկո), Թուրքիայի պարտության դեպքում 2.600.000 հեկտար մշակովի, բերքառատ հողեր ունեցող Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիայի հսկողությանը: Անգլիայի և Ֆրանսիայի իշխանությունները Փարիզի Ազգային պատվիրակության հետ նախապես համաձայնվել էին, որ եթե հայ կամավորները կովեն գերմանա-թուրքական զորքերի դեմ, հաղթանակից հետո հայերին կտրվեն քաղաքական լայն հնարավորություններ, և Հայկական Կիլիկիան կդառնա ինքնավար:

Ուստի, թուրքական բանակից, աքսորի ճամփաներից ու տարբեր վայրերից, նույնիսկ հեռավոր Ամերիկայից ժամանած հայ երիտասարդներն իրենց միլիոնավոր անմեղ նահատակ հարազատների վրեժով լցված, արհամարհելով մահը, պարտության են մատնում թուրք-գերմանական զորքերին՝ նվաճելով Արարայի փայլուն հաղթանակը Նաբլուսի՝ Պաղեստինի մոտ: Հայ քաջարի լեգեոնականներն արժանանում են ֆրանսիական և բրիտանական հրամա-

---

<sup>9</sup> Սահակեան Ա., *Դիւցազնական Ուրֆան և իր հայորդիները*, Պէյրութ, 1955, էջ 818:

նատարության դրվատանքին: Գեներալ Ալենքին 1918 թ. հոկտեմբերի 12-ին Փարիզի Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին հղած հեռագրում գրել է. «Ես հպարտ եմ իմ հրամանատարութեան տակ հայկական զորամաս ունենալուս համար: Նրանք կոռուեցան փայլուն կերպով, եւ մեծ բաժին մը ունեցան յաղթանակի մէջ»<sup>10</sup>:

Չճանաչելով Սևրի պայմանագիրը՝ 1920 թ. հունվարից քեմալաթուրքական զորքերը գրոհում են Կիլիկիայի հայկական բնակավայրերը: 22 օր տևող կատաղի մարտերում Մարաշի հայերը կոտորվում են, իսկ քաղաքը՝ մոխրացվում: Մարաշի ականատեսվկա **Վերգինե Մայիկյանը** (ծնվ. 1898 թ.) պատմել է. «...Մեր խաղաղ կյանքը տևեց 1918-1920 թիվը, քանի դեռ ֆրանսիական իշխանությունը Կիլիկիայումն էր: Ֆրանսիական ու հայկական թերթերը միշտ գրում էին, որ Ֆրանսիան հավիտյան Կիլիկիայում կմնա: ...Օր մըն ալ ելանք, որ ֆրանսիացիները իրենց ձիերուն սմբակներուն տակը քեչե (թաղիք - թուրք.) կապեր են և սուս ու փուս հեռացեր են Մարաշեն»<sup>11</sup> կոտորածի վտանգի մատնելով կիլիկիահայությանը:

1920 թ. ապրիլի 1-ին քեմալականները պաշարում են Այնթապը: Ականատես վերապրող **Սանդուխտ Հեքիմյանը** (ծնվ. 1908 թ., Այնթապ) վկայել է. «1920 թ. Ալի Բըլըջն ահռելի զորքով հարձակվեց Այնթապի վրա: Այնթապի ինքնապաշտպանության ղեկավարն էր Ադուր Լևոնյանը: Ան այնթապցիներու կերակուրի պղինձներն անգամ հալեցնել տվավ, որ բուրբաներ շինեն: Ան իր կամավորներով հարձակվեցավ թշնամու վրա և դուրս եկավ պաշարումեն: Ալի Բըլըջի 24.000-ի հասնող զորքը մեկ գիշերվա մեջ սարսափահար ետ փախավ»<sup>12</sup>:

Այդ ընթացքում Կիլիկիայի գրավման ընդհանուր հրամանատար Գոզան օդլու Դոդան բեյն իր բազմահազարանոց զորքով պաշարում է Հաճըն քաղաքը, որի 35.000 հայ բնակիչներից Մեծ եղեռնից փրկվել էին միայն 6.000-ը: Սակայն հաճընցիները լի էին վճռականությամբ: Նրանք իրենց կառավարիչ փաստաբան Կարապետ Չալյանի ղեկավարությամբ կազմում են Հաճընի ինքնապաշտպա-

<sup>10</sup> Քէլեշեան Մ., Միս-Մատեան, Պէյրութ, 1949, էջ 592:

<sup>11</sup> Սվազյան Վ., Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2011, Վկայություն (այսուհետև՝ Վկ.) 259, էջ 460:

<sup>12</sup> Նույն տեղում, Վկ. 269, էջ 468:

նության բարձրագույն խորհուրդը: Պաշտպանության հրամանատար են ընտրում Ջորավար Անդրանիկի զինակից սպա Սարգիս Ճեպեճյանին: Կազմակերպում են 4 վաշտ, 60 հեծյալից բաղկացած էսկադրոն: Հաճրեն ու իր շրջակայքը բաժանում են պաշտպանական 4 շրջանների, փորում են խրամատներ, մարտական տրամադրությունը համակում է բոլորին: Թշնամին նորանոր թնդանոթներով ու անհամար կանոնավոր զորքով համալրում է իր ուժերը: Ութամսյա երկարատև ու համառ դիմադրությունից հետո թուրքերին հաջողվում է հրետանու խաչաձև կրակոցների հեղեղով ավերել ու հրկիզել նաև Հաճրնի քարաշեն տները: Հարյուրավոր քաջարի մարտիկներ ընկնում են դիրքերում, հազարավոր հաճրնցիներ անխնա կոտորվում են: Միայն 380 հոգու հաջողվում է կովելով ճեղքել թշնամու պաշարման շղթան և դուրս գալ ահավոր հրդեհի շրջափակումից:

*«Երեք հարյուր հայ քաջերով,  
Բոլոր զինված մոսիներով,  
Դողան բեյին մենք ջարդ տալով,  
Հաճրն ինկավ՝ «Վրե ժ» գոռալով»<sup>13</sup>:*

«Վրե՛ ժ» գոռալով՝ ընկնում են նաև ընդհատումներով 314 օր հերոսաբար դիմադրած Այնթապը, հինավուրց քաղաքամայր Միսը, պատմական անցյալ ունեցող Տարսոնը, առևտրի կենտրոն Ադանան և հայերով բնակեցված Կիլիկիայի այլևայլ բնակավայրեր: Անգլիայի հրահանգով ֆրանսիական կառավարությունը, դրժելով իր դաշնակցային պարտավորությունները հայերի նկատմամբ, 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված պայմանագրով Կիլիկիան հանձնում է թուրքերին՝ կոտորածի վտանգի մատնելով տեղի հայությանը:

Այդ ժամանակ է, որ Հայոց ցեղասպանության միլիոնավոր զոհերի վրեժը լուծեց ազգային հերոս Սողոմոն Թեհլիրյանը՝ Բեռլինում սպանելով փախուստի մեջ գտնվող մեծ ոճրագործ Թալեաթ փաշային: Թեպետ գերմանացի դատավորները ըմբռնումով մոտեցան և արդարացրին հայ վրիժառուին, սակայն դրանով չբարելավվեց արևմտահայության վիճակը:

<sup>13</sup> Նույն տեղում, Վկ. 649, էջ 628:

1921 թ. Կիլիկիայի հայության պարպումից հետո հերթը հասել էր Անատոլիայի հայերին:

1922 թ. քեմալականները հրո ճարակ են դարձնում նաև Զմյուռնիայի հայկական և հունական թաղամասերը՝ քրիստոնյաներին քշելով ծովափ: Այդ սահմոկեցուցիչ իրադարձությունը ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես «Իզմիրի աղետ», քանի որ Քեմալ Աթաթուրքը հայտարարել էր՝ «*Թուրքիան՝ թուրքինն է*»<sup>14</sup>:

Աֆիոնգարահիսարցի վերապրող Արփինե Բարթիկյանը (ծնվ. 1903 թ.) վկայել է. «...*Մեյ մըն ալ սկսավ միլլիական (ազգայնական - թուրք.) շարժումը: Իզմիրը կրակի տվին: Առաջին կրակը Հայնոցը տվին: Ս. Ստեփանոս եկեղեցին այրեցին: Քանի որ բոլոր հայերը այդ եկեղեցին մտած էին, որ պաշտպանվեն: Վերջը հայերս փախանք, գնացինք ծովեզերք: Ծովին վրա լի քը նավակներ էին, բայց թուրքերը նախօրոք բոլոր նավակները ծակել էին, որ ջուրը լցվի ու հայերը չկրնան ազատվիլ: Խեղճ հայերը նավակ էին նստում, քիչ մը կլողար նավակը, վերջը՝ լը կ-լը կ, ջուրը կլեցվեր մեջը, բոլորը ծովի մեջ շուռ կուզային: Ծովի վրա լի քը ուռած մարմիններ էին...*»<sup>15</sup>:

Ավելին, 1923 թ. Լոզանի պայմանագրով դաշնակից տերությունները ճանաչեցին Մուստաֆա Քեմալի Անկարայի կառավարությունը և նրա իրավունքը Արևելյան Թրակիայի, Իզմիրի, Կիլիկիայի նկատմամբ, ինչպես նաև այն բոլոր տարածքների նկատմամբ, որոնք Սևրի հաշտության պայմանագրով պիտի անցնեին Հայաստանին: Բացի այդ, նրանք ճանաչեցին Թուրքիայի նոր սահմանները, որոնք ընդգրկում էին նաև Արևելյան Հայաստանի նախկին շրջանները՝ Կարսը, Արդահանը, Սուրմալուն (Իզմիր): Դա Թուրքիայի հաղթանակն էր, իսկ Պատմական Հայաստանի մի փոքրիկ մասը՝ 1/10-ը, շարունակեց գոյություն ունենալ որպես Հայաստանի Առաջին հանրապետություն (1918-1920 թթ.), Խորհրդային Հայաստանի Հանրապետություն (1920-1991 թթ.), ապա 1991 թվականից՝ որպես անկախ Հայաստանի Հանրապետություն, սակայն հայ ժողովրդի մեծագույն մասը մնաց ցրված աշխարհի տարբեր երկրներում: Եվ ստեղծվեց Հայ սփյուռքը՝ որպես պատմական իրողություն:

Այսպիսով, թեպետ երիտթուրք կառավարությունը Հայոց ցեղասպանության ընթացքում (1915-1923 թթ.) դաժանորեն ճնշում էր

<sup>14</sup> Նույն տեղում, Վկ. 195, էջ 392:

<sup>15</sup> Նույն տեղում:

կայսրության տարբեր վայրերում ծայր առած արևմտահայերի դիմադրողական-ինքնապաշտպանական գոյամարտերը, սակայն իրենց մարդկային ապրելու տարրական իրավունքի և ազգի ֆիզիկական գոյության համար մարտնչող անձնուրաց հայ հերոսները փայլուն հետք թողեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ, որոնց մասին վկայել են նաև ականատես վերապրողները:

Ի մի բերելով Հայոց ցեղասպանության ընթացքում արևմտահայոց դիմադրողական, ինքնապաշտպանական երկու տասնյակից ավելի գոյամարտերը՝ կարելի է հանգել մի շարք կարևոր եզրակացությունների, որոնք բացառում են հայ ժողովրդի «ոչխարի պես» գոհվելը, ինչպես թվում է ոմանց.

- Առաջին աշխարհամարտի հենց սկզբից (1914 թ.) երիտթուրք կառավարությունը հավաքել էր հայերի զենքերը, ընդհուպ մինչև խոհանոցի դանակները: Հետևաբար հայերը զինաթափված էին և գոյամարտերի ընթացքում գերմանական զենքերով զինված թուրքական բանակների դեմ կռվում էին ինքնաշեն զենքերով:
- Կառավարությունը թուրքական բանակ էր զորակոչել 17-45 տարեկան հայ երիտասարդներին, որոնց, ըստ էնվեր փաշայի գաղտնի հրահանգի, աչքից հեռու վայրերում դաժանորեն ոչնչացրել էին: Ուստի գոյամարտող տարրը նվազ էր:
- Կառավարությունը հավաքագրել և անապատներում ոչընչացրել էր հայ մտավորականներին՝ արևմտահայերին զրկելով ոչ միայն ռազմունակ ուժից, այլև ղեկավար մտքից:
- Հայ ժողովուրդը երբեք նախահարձակ չի եղել, սակայն երբ իր նկատմամբ անարդարություն և բռնություն է կիրառվել: Արժանին հատուցել է:
- Հայերի գոյամարտերն իրականացվել են միմյանցից անջատ, իրարից կտրված,
- Հայերը թշնամու նկատմամբ եղել են անաչառ, սակայն անզեն բնակչության՝ կանանց, երեխաների և ծերերի հանդեպ՝ մեծահոգի ու մարդկային, իսկ թուրքերը՝ ընդհակառակը:
- Հայ ժողովուրդն ունեցել է բազմապիսի կորուստներ (մարդ-

կային, նյութական, մշակութային, տարածքային և այլն):  
Նրա նպատակն է եղել ապրել խաղաղ ու ստեղծագործ  
կյանքով իր հազարամյա բնօրրանում, իսկ թուրքերը զավ-  
թել են այլոց տարածքներն ու յուրացրել նրանց մշակույթը,

Հայ ժողովուրդն իր դիմադրողական-ինքնապաշտպանական  
գոյամարտերի ընթացքում մշտապես եղել է մենակ, անօգնական,  
հաճախ նաև դավաճանված՝ իր անմնացորդ նվիրվածության դի-  
մաց: Մեծ տերությունները դիտորդի դերում են եղել և ուշացած սուկ  
մարդասիրական ու որբախնամ օգնություն են ցուցաբերել:

Այնինչ, երբ հայ ժողովուրդը միասնաբար բռնցքվել է, Սար-  
դարապատի հերոսական ճակատամարտով վերականգնել է 600  
տարվա իր կորցրած պետականությունը, ապա նաև ազատագրել  
բռնազավթված Արցախը, որը մեր ազգային պահանջատիրության  
առաջին հաղթական հանգրվանն է... Ուստի, աղոթքախառն տողեր  
է հղում առ Աստված.

*«Տե՛ր, դուն պահե միշտ անսասան  
Դյուցազնական Մայր Հայաստան,  
Տուր հարատև խաղաղություն,  
Կյանք ու արև, ազատություն,  
Հայ դրոշով մեր պետական  
Թող միշտ ապրի ազգն հայկական  
Ամեն»<sup>16</sup>:*

VERJINE SVAZLIAN (ARMENIA)

### **THE SELF-DEFENSIVE BATTLES OF THE WESTERN ARMENIANS FOR SURVIVAL DURING THE YEARS OF THE GENOCIDE (1915-1923) ACCORDING TO THE TESTIMONIES OF THE EYEWITNESS SURVIVORS**

The mobilization and the arm-collection of the Armenian youths  
according to a special plan devised by the Young-Turk government on the  
eve of the Armenian Genocide and the mass extermination of these youths,  
followed by the forced exile of the entire Western Armenian population from

---

<sup>16</sup> Սվազլյան Վ., *Կիլիկիա...*, Վկ. 1391, էջ 250:

its native cradle, its deportation to the Syrian deserts, its annihilation and holocaust by brutal means impelled the Western Armenians to wage self-defensive struggles for survival in the various localities of the country (Akdagh-Yozghat, Shatakh, Van, Moush, Sassoun, Shapin-Garahissar, Moussa Dagh, Urfa, Marash, Ayntap, Hadjn and other places).

Although the Turkish government cruelly suppressed the heroic resistance and the self-defensive battles for survival of the Western Armenians, nevertheless the devoted Armenian heroes, who struggled for their elementary human rights, for justice, for the physical survival and honorable life of their nation, recorded brilliant pages in the history of the national liberation struggle of the Armenian people. These heroic events are reflected in the memoir-testimonies and historical song-testimonies of the eyewitness survivors of the Armenian Genocide.

*ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

### **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏՐԱՎՄԱՏԻԿ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՏԱՆԱՐԱՏԻՎ**

Պատմության առանձին իրադարձություններ տարբեր հանգամանքների պատճառով կարող են վերաճել մետանարատիվ<sup>1</sup> և ոչ միայն որպես կարևորագույն իրադարձություն գերիշխել հանրային հիշողության մեջ, այլև ծառայել որպես հիմնարար կադապար, որն ազդում է այլ իրադարձությունների մասին հիշողության ամրապնդման վրա և ձևավորել հիշելու նույնանման պրակտիկաներ: Մետանարատիվը բացատրական մի սխեմա է, թե ինչպես է հարկավոր ինչ-որ բանի շուրջ խոսել և մտածել: Մաս կազմելով հանրային խոսույթի (դիսկուրսի)՝ այն գերակշռում է անհատական ընկալման հանդեպ ու պարտադրվում վերջինիս (հմմտ. կոլեկտիվ/հանրային հիշողության հետ, որը, ըստ Ջ. Օլիկի, կարելի է հա-

---

<sup>1</sup> Alexander J.C. Trauma: Social Theory. Cambridge: Polity, 2012, pp. 17-30, նախա-տիվի հղացքի մասին ընդհանուր տե՛ս նաև Лиготар Ж.Ф. Состояние постмо-дерна, М.: Институт экспериментальной социологии, СПб.: Алетея, 1998.

կադրել անհատական/հավաքված հիշողությանը)<sup>2</sup>: Մետանարատիվն առանձին պատմությունների մի ընդհանրացնող պատմություն է: Որպես այդպիսին կարող է համարվել նաև այդ պատմությանը հղող, նույնիսկ ոչ սյուժետային տարրը, որը կապվում է պատմության մի ընդհանուր մեկնության հետ ինչպես պատմողի, այնպես էլ լսողի մոտ: Ունենալով խմբային և անհատական ազդեցության որոշակի ներուժ՝ այն կարող է դառնալ մտածողությունն ու քայլերը կանխորոշող գործոններից: Նման նարատիվներ ձևավորվում են հատկապես մեծ ողբերգությունների հետ կապված տրավմատիկ հիշողությունների հարատևման պարագայում<sup>3</sup>, առանձնապես, եթե ողբերգությունն ունի կամ դրան վերագրվում է էթնիկ հիմք<sup>4</sup>: Կարծում եմ, որ այս շարքում է հարկավոր դիտել նաև Հայոց ցեղասպանության մասին հիշողությունը:

Տվյալ հոդվածում կփորձեն ուրվագծել հայ ժողովրդի պատմության վերջին շրջանի մի քանի դրվագ, որոնց մասին հիշողության ամրագրումը կատարվել է Հայոց ցեղասպանությունը ոգեկոչելու պրակտիկաների նմանությամբ կամ համապատասխան խոսույթները ներառել են «ցեղասպանություն» եզրը: Ղարաբաղյան շարժման ընթացքում վերոհիշյալ երևույթի բազմաթիվ դրսևորումների քննարկումներին այստեղ չեմ անդրադառնալու՝ հոդվածի թույլատրելի ծավալը չգերազանցելու համար, ինչպես նաև հաշվի առնելով խնդրի բավականաչափ ուսումնասիրված լինելը<sup>5</sup>: Համեմատության համար միայն նշեմ, որ 1988 թ. Ղարաբաղյան շարժման երևանյան ցույցերի ընթացքում գրանցած մոտ 1.000 պատաստաններից ցեղասպանության թեման կամ հենց բառն առկա էին 370-ում, մինչ-

<sup>2</sup> Olick J.K. Collective Memory: The Two Cultures. Sociological Theory, Vol. 17, No. 3 (Nov., 1999), pp. 333-348.

<sup>3</sup> Alexander J.C. Նշվ. աշխ.:

<sup>4</sup> Diner D. Beyond the Conceivable. Studies on Germany, Nazism, and the Holocaust. Berkeley: University of California Press, 2000: Հմմտ. Etkind A. Warped Mourning. Stories of the Undead in the Land of the Unburied, Stanford University Press, 2013: Memory and Theory in Eastern Europe. Eds. Blacker U., Etkind A., Fedor J. Palgrave Macmillan, 2013:

<sup>5</sup> Dudwick N. The Karabakh Movement: An Old Scenario Gets Rewritten // Armenia Review, 1989, 42 (3), էջ 64; Abrahamian L. Armenian Identity in a Changing World. Costa Mesa: Mazda Publishers, 2006, էջ 76; Մարության Հ. Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը: Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009:



դեռ բուն Ղարաբաղի խնդիրը ընդամենը 99-ում էր արտացոլված<sup>6</sup>։ Սա պատահական չէ. տրավմատիկ հիշողությունները հաճախ են վերաճում մետանարատիվի հիմքում ունենալով խմբային անվտանգության ապահովման սուր զգացողություն՝ համախմբման մեծ ներուժով, և արտաքին վտանգի պարագայում արագ ուղղվում են դրա դեմ։ Մետանարատիվների շուրջ կարող են ձևավորվել ազգային ինքնություններ՝ սահմանազատելով և միմյանց հակադրելով «մենքն» ու «նրանքը», ինչը, անկախ պատմական իրողությունից, նախնառաջ մշակութային մեկնության խնդիր է<sup>7</sup>։ Ուստի ցեղասպանության հղումներն այլ պատմական սյուժեների կամ հընթացս կատարվող քաղաքական դեպքերի առիթով իրենց ներդրումն են կատարում նման մեկնությունների ձևավորման համար։ Խնդիրը համեմատությունն է՝ հասկանալու, թե որքանով են դրանք շարունակում մետանարատիվի տրամաբանությունը՝ վերահաստատում «մենք»/«նրանքի» սահմանները։

«Ցեղասպանություն» եզրը հաճախ հայտնվում է հանրային այն քննարկումներում, որոնք ծավալվում են էթնիկ հողի վրա կատարված սպանությունների շուրջ (ինչն, ի դեպ, համապատասխանում է «ցեղասպանության» եզրի՝ Ռ. Լեմկինի սահմանմանը)՝ անկախ դրանց իրավաբանական որակումներից։ Նման դեպքերից էր, օրինակ, հայ սպա Գուրգեն Մարգարյանի սպանությունը, որն իրականացրել էր ադրբեջանցի սպա Ռամիլ Սաֆարովը։ Հիշեցնեմ, որ սպաները Բուդապեշտում էին՝ ՆԱՏՕ-ի «գործընկերություն հանուն խաղաղության» ուսումնական ծրագրի շրջանակներում։ Այս սպանությունը հանրային խոսույթում միանգամից որակվեց որպես ցեղասպանության հանցանքների շարունակություն, և մինչ օրս էլ գրեթե յուրաքանչյուր անդրադարձ Գուրգեն Մարգարյանի սպանությանը ուղեկցվում է «ցեղասպանություն» բառով։ Վերջիններից հիշեցնեմ 2014 թ. պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից այս դեպքի որակումը որպես «միանգամյա ցեղասպանություն»<sup>8</sup>։ Գուրգեն Մարգարյանի սպանությունն ակնարկվեց նաև

<sup>6</sup> Մարության Հ. Հայ ինքնության պատկերազրությունը, էջ 23:

<sup>7</sup> Alexander J.C. Նշվ. աշխ., էջ 3:

<sup>8</sup> Սեյրան Օհանյանը որակեց Գուրգեն Մարգարյանի սպանությունը որպես մեկանգամյա ցեղասպանություն // Armenpress, 19 February, 2014 <<http://armenpress.am/arm/news/750722/>> (30.06.2015):

System of a Down ռոկ խմբի «Holy Mountains» երգի՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված տեսահոլովակում<sup>9</sup> (ռեժիսոր՝ Արման Վարդանյան) ուղղակիորեն այս սպանությունը դնելով ցեղասպանության համատեքստի մեջ:

Ցեղասպանության մետանարատիվում տեսանելի են առնվազն երկու առավել հաճախ կրկնվող ուղերձներ. «հայր զոհ է», «թուրքի նպատակն է հայի ոչնչացումը»: Այստեղ և՛ «զոհը», և՛ նրա «դահիճը» ներկայացվում են էթնիկ խմբերով: Ինչն, ըստ Դ. Դիների, ամենամեծ երաշխիքն է տրավմատիկ հիշողության վերաբրտադրման ու հարատևման համար: Էթնիկ հիմքի վրա կատարված ողբերգությունները տրավման ոչ միայն ամբողջ խմբի վրա տարածելու արդյունավետ մեխանիզմներ ունեն, այլև հաջորդ սերունդներին փոխանցելու միտում<sup>10</sup>:

Այժմ անդրադառնամ երկու իրադարձությունների ոգեկոչման պրակտիկաներին՝ դրանք համեմատելով ցեղասպանության մետանարատիվի հետ՝ 1988 թ. Մայիսակի աղետալի երկրաշարժի և ստալինյան բռնաճնշումների, մասնավորապես 1949 թ. բռնաքսորի մասին հիշողությանը:

Առաջին հայացքից 1988 թ. երկրաշարժին նվիրված հիշատակի արարողությունները, գործող և նախագծված հուշարձանների կոնցեպցիաները հակադրված էին ցեղասպանության մասին հիշողությանն այն խմաստով, որ բնական աղետի դեպքում շեշտվում էին դրա դիպվածային բնույթն ու, հետևաբար, այն հավերժ հիշելու աննպատակահարմարությունը<sup>11</sup>, լավագույն դեպքում խորհուրդ էր տրվում ընդամենը դասեր քաղել (շինարարության որակի, փրկարար ենթակառուցվածքի, աղետին նախապատրաստվելու վերաբերյալ ևն): Մինչդեռ ցեղասպանության պարագայում հակառակը՝ աննշան էին այն քննարկումները, որտեղ կար «դասերի» խնդիրը, սակայն պատմական անարդարության և հավերժ հիշելու պահանջը դառնում է հիմնական: Բավական է մեջբերել Ցեղասպանության հարյուրամյակին նվիրված 2015 թ. լայնածավալ միջոցառումների

<sup>9</sup> System of a Down, «Holy Mountains» տեսահոլովակ // <<https://www.youtube.com/watch?v=AFMfnH4ORqQ>> (30.06.2015):

<sup>10</sup> Diner D. Նշվ. աշխ.:

<sup>11</sup> St' u Shagoyan G. Memorializing the Earthquake // Changing Identities: Armenia, Azerbaijan, Georgia. Collection of Selected Works. Tbilisi: Heinrich Böll Stiftung, 2011, էջ 70-95:

բնաբանը՝ «հիշում եմ և պահանջում»: Չնայած սրան՝ երկրաշարժի զոհերի հիշատակը ոգեկոչելու տարբեր միջոցառումներ, տեքստեր շարունակում էին կառուցվել «ցեղասպանության» նարատիվների տրամաբանությամբ կամ առնվազն համեմատվում դրանց հետ: Առավել ակնառու դա արտացոլված է Սպիտակի երկրաշարժի կապակցությամբ գրված Սիլվա Կապուտիկյանի մի հոդվածում. «Մենք պետք է օգնության կանչենք մեր անցյալ պատմությունը, մեր անցյալ մեծերին ու մեկ առ մեկ պատգամի ու աղոթքի պես կրկնենք նրանք խոսքերը՝ ասված մեր բազմատառապ քառուղիների համանման դարձակետերին»: Այնուհետև մեջբերված բոլոր մեծերի խոսքերը, պարզվում է, ասված էին Հայոց ցեղասպանության կապակցությամբ<sup>12</sup>:

Այն, որ Ցեղասպանության երևանյան հուշահամալիրն աշխարհի տարբեր քաղաքներում այս ողբերգության կապակցությամբ կանգնեցվող հուշարձաններից շատերի համար դարձել է կաղապարային, բազմիցս է նկատվել: Սակայն շատ քչերը գիտեին, որ Գյումրիում երկրաշարժի զոհերին նվիրված հուշահամալիրի մի նախագիծ էր պատրաստվել, որի կառուցվածքը նույնպես համադրելի էր Ցեղասպանության Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հետ: Հուշարձանը պատկերելու էր մի ճանապարհ, որը խորանում է երկու քարե սալերի միջև բացված ճեղքվածքի մեջ, որտեղ պետք է տեղադրվեր թանգարան, իսկ մինչև թանգարանի մուտքը՝ պատի երկայնքով, մոմավառության համար նախատեսված էին հատուկ տեղեր: Հուշարձանը վերևից ընթերցվելու էր իբրև խաչ, իսկ կենտրոնական մասից բարձրացող երկաթյա կոնստրուկցիաները կատարելու էին երկակի գործառույթ տեխնիկական իրենց վրա կրելով որոշակի ծանրություն, և ձայնային՝ երգեհոնի փողերի նմանությամբ. իրենց միջով անցնող օդի հոսանքն անընդհատ ձայն էր արձակելու, որը պիտի խորհրդանշեր զգուշության և տազնապի ահագանգը: Թեև նախագծի հեղինակները (Ս. Քալաշյան, Բ. Հարությունյան, Մ. Չերքեզյան) ձգտում էին զրկել ապագա հուշարձանը հնարավոր ծիսականությունից՝ համարելով, որ այն չպետք է վերածվի ցեղասպանության ոգեկոչման նման մի արարողության, և այդ պատճառով հատուկ այնպես էին նախատեսել, որ ծաղիկ դնելու

---

<sup>12</sup> Կապուտիկյան Ս. Մենք պիտի ապրենք // Երկրաշարժ ժամանակագրություն, Եր., «Լույս», 1989, էջ 217:

տեղ չլինի: Սակայն նույնիսկ իրենք, նախատեսելով մոմավառության համար մի հատուկ վայր, ընդամենն առաջարկում էին փոխել արարողակարգը (ծաղիկ դնելը մոմավառությամբ), բայց հուշարձանը կառուցելու դեպքում ոգեկոչման արարողությունը կընթանար նույն Ցեղասպանության հուշահամալիրի ծիսական տրամաբանությամբ ուխտավորների ճանապարհի դեպի համալիր, ծիսական մասնակցություն (մոմավառություն), այցելություն թանգարան: Ուշագրավ է, որ Գյումրիում երկրաշարժի գոհերին նվիրված առկա հուշարձանի մոտ<sup>13</sup> վերջին տասը տարիներին կիրառում են «հիշածեսի» երկու տարբերակներն էլ և՛ մոմավառությունը, և՛ ծաղկեպսակ ու ծաղիկ դնելու արարողությունները, որոնք ընկալվում են որպես գուգահեռ կամ այլընտրանքային տարբերակներ (երբեմն ծաղիկ դնելիս կամ մոմ վառելիս նաև խաչակնքում են՝ եկեղեցական մոմավառության ծիսական վարքի տարրերը տարածելով հիշատակման այլ արարողության համատեքստ): Ուշագրավ է, որ ինչպես և Ցեղասպանության ոգեկոչման արարողությունների ժամանակ, այստեղ ևս ընդունված է հուշարձանի տարածքում տեղավորել ծաղկեպսակներ՝ ուղարկված տարբեր պաշտոնական անձանց և բազմաթիվ վարչական և ոչ միայն, կառույցների կողմից: Օրվա ընթացքում հուշարձան են այցելում որպես կանոն աշխատանքային, դպրոցական խմբերով, անհատ քաղաքացիներն ավելի նախընտրում են ոգեկոչման արարողությունն անել գերեզմանոցներում: Այստեղ տեսանելի է, թե ինչպես երկրաշարժի գոհերի ոգեկոչման արարողությունը կառուցվում է ապրիլի 24-ի տրամաբանությամբ՝ այն տարբերությամբ, որ առաջարկվող կադապարը գործում է հիմնականում վարչական հիմնարկների մակարդակում՝ տարածվելով քիչ քանակությամբ անհատ մասնակիցների շրջանում, ում համար այս ողբերգությունը դեռ ոչ այնքան հանրային միջոցառում է, որքան անձնական դժբախտություն: Չեմ կարծում, որ իշխանությունները խնդիր ունեն այս ողբերգության ոգեկոչումը վերածելու համահայկական մի արարողության: Սակայն իրենց հայտնի և մյուսների հա-

<sup>13</sup> Որպես հիմնական հուշարձան՝ դրված Ամենափրկիչ եկեղեցու կողքին, սկզբից ծառայում էր Զավեն Կոշտոյանի քանդակած հուշարձանը, որն ընտրվել էր մրցույթի արդյունքում: Սակայն 2008 թ. երկրաշարժի քանամայակի առիթով այն փոխարինվեց Ֆրիդ Մոդոյանի և նրա որդիների սարքած հուշարձանով, որը Մոսկվայի հայ համայնքի նվերն էր Գյումրիին:

մար էլ ընկալելի սգո պաշտոնական այնպիսի կաղապարված արարողակարգ է ձևավորվել, որ տարբեր կառույցներ խմբային մակարդակում ինքնաբերաբար հենց դա են վերադարձնում: Ուշագրավ է, որ երկրաշարժի զոհերի հիշատակը ոգեկոչելու արարողությունը պաշտոնական անձերի մասնակցելու/չմասնակցելու փաստը դառնում է քաղաքական խոսույթի անբաժանելի մասը: Ինչպես 2015-ի 100-ամյակի արարողություններին տարբեր երկրների առաջին դեմքերի մասնակցությունը մամուլի հաճախ քննարկվող նյութերից էր, նույնպես 2013 թ. երկրաշարժի 25-ամյակի արարողություններին հանրապետական իշխանության ներկայացուցիչների բացակայությունը քաղաքային խոսույթում մեկնաբանվեց որպես Գյումրիին «պատժելու» փորձ՝ անցած նախագահական ընտրություններում Սերժ Սարգսյանին հանրապետությունում ամենաքիչ ձայներ տալու համար: Այսինքն, ինչպես և ցեղասպանության պարագայում, այս դեպքում նույնպես մեծ ողբերգության ոգեկոչման արարողություններն ընդլայնում են իրենց գործառնությունները՝ ներքաշվելով քաղաքական խոսույթ: Սակայն, եթե ցեղասպանության դեպքում նման զարգացումը տրամաբանական է՝ հաշվի առնելով խնդրի քաղաքական բովանդակությունը, երկրաշարժի (բնական աղետի) զոհերի ոգեկոչման քաղաքականացումն ու արարողակարգի նման կաղապարումը (հմտ. ցեղասպանության մետանարատիվի հետ) խոսում են ինքնաբերաբար թողարկվող մեխանիզմի մասին: Ինչպես նկատել է Ջ. Ալեքսանդրը, անհատական ողբերգության փոխակերպումը խմբային տրավմայի մշակութային մեկնաբանության արդյունք է, հարյուր հազարավոր մարդկանց մահերն ինքնին չեն երաշխավորում նման տրավմայի ձևավորում<sup>14</sup>: Դրա պարտադիր պայմաններից է, օրինակ, «անիմաստ/անարդյունք» զոհերի խոսույթի ձևավորումը: Ասենք, հաղթանակած պատերազմում նույնիսկ մեծ քանակի զոհերը չեն դառնում խմբային տրավմայի հիմք, չնայած, ինչպես Հայրենական մեծ պատերազմի դեպքում էր, ձևավորում են ընդարձակ խոսույթ, մինչդեռ ցեղասպանությունների («անիմաստ զոհ» տալու տեսանկյունից՝ նաև բնական աղետների)<sup>15</sup> արդյունքում կրած կորուստները սովորաբար հանգեցնում են կոլեկտիվ տրավ-

<sup>14</sup> Alexander J.C. Նշվ. աշխ., էջ 3:

<sup>15</sup> Հմտ. Тавареш Р. Небольшая книга о великом землетрясении. Очерк 1755 года. СПб.: Издательство европейского университета в Санкт-Петербурге, 2009.

մայի ձևավորման, ինչն անդրադառնում է խմբային ինքնությունների վրա (լինի ազգային թե լոկալ, օրինակ՝ քաղաքային<sup>16</sup>):

Մետանարատիվը կարող է ոչ միայն կադապարել մյուս այլ համադրելի նարատիվները, այլև ճնշել դրանք՝ զբաղեցնելով խմբային հիշողության բոլոր հնարավոր ծավալները: Խորհրդային անցյալի հանդեպ մասնագիտական և հանրային հետաքրքրությունն այսօր հաճախ ստվերվում է Հայոց ցեղասպանությունն առավել արդիական հարց ճանաչելու հանգամանքով, և առնվազն մինչև թուրքական ժխտողականության հաղթահարումն ու խնդրի քաղաքական հանգուցալուծումը, մյուս պատմագիտական հարցերը կարծես դատապարտված են ընկալվելու որպես երկրորդական: Այս մոտեցումն առավել արտահայտվում է տարբեր պատմական ողբերգությունների հիշելու հանրային արարողություններում: Համեմատենք երկու «տրավմատիկ» իրադարձությունների «կլոր» տարելիցների ոգեկոչման արարողությունները՝ Հայոց ցեղասպանության և 1949 թ. Հայաստանից 13.272, Ադրբեջանից, Վրաստանից և Սևծովյան ավազանի այլ տարածքներից առայժմ անհայտ թվով հայերի աքսորելու օրը<sup>17</sup>՝ հունիսի 14-ը, որը 2006 թ. «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում լրացումներ կատարելուց հետո սահմանվել է որպես Բռնադատվածների հիշատակի օր: Նկատի ունեմ աննախադեպ շոնդալից միջոցառումներով ուղեկցվող Հայոց ցեղասպանության հարյուրամյակի և 1949 թ. հայերի դեպի Սիբիր բռնագաղթի հիսունամյա (1999 թ.) և վաթսունամյա (2009 թ.) աննկատ անցած տարելիցները: 1990-ականներին Երևանում բռնաճնշումների զոհերի հիշատակին նվիրված մի հուշաքար դրվեց, այնուհետև 2007 թ. կառուցվեց մի տպավորիչ հուշահամալիր: Ի դեպ, ճարտարապետը 1938 թ. գնդակահարված Պետրոս Թորոսյանի որդին՝ հայտնի ճարտարապետ Զիմ Թորոսյանն է. այս փաստը վկայում է հօգուտ այն մտքի, որ, ի տարբերություն Ցեղասպանության, խորհրդային բռնա-

---

<sup>16</sup> «Ленинакан ушел, Гюмри остался»: образы города до и после землетрясения // Levon Abrahamian. Festschrift 60. <[http://levonabrahamian.com/cntnt/articles\\_b.html](http://levonabrahamian.com/cntnt/articles_b.html)> (01.02.07), 39 էջ:

<sup>17</sup> Մանուկյան Ա.Ս. Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., Եր., «Առեքտում»-Անի, 1999, էջ 218-258: Аблажей Н.Н. Репатриация и депортация армян во второй половине 1940-х годов. Вестник Новосибирского гос. университета. Серия: История, филология. 2011. Том 10, выпуск 1: История, с. 116-121.

Ճնշումների գոհերի մասին հիշողության խնդիրը հիմնականում մնում է բռնադատվածների և նրանց ժառանգների տիրույթում<sup>18</sup>: 2009 թ.-ից հունիսի 14-ին «Ի հիշատակ հայ բռնադատված գոհերի» հուշահամալիրում հանդիպում են խորհրդային շրջանի բռնաճնշումների գոհերն ու նրանց ժառանգները: Իշխանության ներկայացուցիչները, այդ թվում՝ նախագահ Մերժ Սարգսյանը, մասնակցել են միայն 2008 թ. հուշարձանի հանդիսավոր բացմանը: Բռնադատվածներին նվիրված հուշարձանը բացելուն հաջորդած 2009 թ.-ից հետո ոչ չ նախագահը, ոչ կառավարության անդամները ոչ մի հունիսի 14 չեն այցելել այս միջոցառումներից և ոչ մեկը: Հայտնվելով «պաշտոնական հիշողության» լուսանցքում՝ հունիսի 14-ը, բացի ստալինյան բռնաճնշումների գոհերի հիշատակի օր լինելուց, ինքնաբերաբար վերաճեց ռեժիմային համակարգի գոհերի հանդեպ հետխորհրդային սոցիալական քաղաքականությունը քննադատելու մի միջավայրի: 2012, 2013 թթ. հունիսի 14-ին հուշահամալիրում հավաքվածները փորձեցին նախագահական նստավայր ներկայացնել իրենց պահանջները, իսկ 2014 թ. բողոքի ցույց անցկացրին կառավարության շենքի առջև<sup>19</sup>: Սոցիալական խնդիրներից զատ հավաքվածների պահանջների կետերից էր նաև նույն հուշահամալիրի տարածքում ստալինյան բռնաճնշումների գոհերին նվիրված թանգարանի հիմնադրումը, ինչի շնորհիվ, ըստ նախաձեռնողների, հուշահամալիրը կարող է վերածվել ամենօրյա գործող կառույցի: Ուշագրավ է, որ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրին կից գործող թանգարան-ինստիտուտի առկայությունը նույնպես ուսանելի փաստ է դառնում այս նախաձեռնության հեղինակների համար, թե ինչ տիպի հաստատության միջոցով է հարկավոր կարգավորել «հիշելու քաղաքականությունը»: Հուշարձանը բացվում է միայն հունիսի 14-ին, որպեսզի, ինչպես բացատրեցին հուշարձանը կամավոր հիմունքներով խնամող բռնադատվածների հասարակա-

<sup>18</sup> Այս դիտարկման համար շնորհակալություն ենք հայտնում Հ. Խառատյանին:

<sup>19</sup> Այդ բողոքի ակցիայի մասին կարճ տեսահաղորդագրություն տես Բռնադատվածների ուսնահարված իրավունքները, 2014 հունիսի 19-ին բռնադատվածների և նրանց ժառանգների բողոքի ցույցը ՀՀ կառավարության շենքի դիմաց (19.06.2014) <<https://www.youtube.com/watch?v=mU5mcdL0Bsw>> (30.10.2014), Բռնադատվածների ուսնահարված իրավունքները. Մեկ օր կառավարության շենքի դիմաց (19.06.2014) <<https://www.youtube.com/watch?v=K9iws173uI0>> (30.10.2014):

կան կազմակերպության ներկայացուցիչները, կանխեն անօթևանների և կենդանիների մուտքը հուշարձանի տարածք: Հուշահամալիրը խնամող ֆինանսավորվող կառույցի բացակայությունը նույնպես հանգեցնում է «թանգարան ստեղծելու» անհրաժեշտության մտքին, իսկ հուշարձանի մերօրյա անխնամ վիճակը բացահայտում է «ողբերգությունների հիշողության քաղաքականության» հիերարխիկ մոտեցումը:

Մինչդեռ Ցեղասպանության և ստալինյան բռնաճնշումների հիշելու և «հուշարձանացնելու» մասնավոր պրակտիկաներում, ի տարբերություն պետական մոտեցման, կոտեսներ բազմաթիվ գուգահեռներ, ինչպես, օրինակ՝ գերեզմանաքարը որպես պատմության հուշագիր-վկայական ներկայացնելը<sup>20</sup>, մասնավոր ուժերով կամ համայնքային նախաձեռնությամբ հուշարձան կանգնեցնելը, ստալինյան բռնաքսորի մասին հուշեր տեսագրելն ու ձայնագրելը<sup>21</sup>, ինչը ցեղասպանության այլընտրանքային վավերագրություն կազմելու փորձառությունը մեկ այլ «լռեցված» պատմության վրա տարածելու փորձերից է՝ այսպես ստեղծելով պատմագիտական նոր սկզբնաղբյուր:

Եթե մինչև 2008 թ. տարբեր ողբերգություններ Ցեղասպանության հետ համեմատվում էին՝ հայերին բաժին հանելով միայն զոհի կարգավիճակը և թշնամուն տեղադրելով «հայ խմբից» դուրս, ապա 2008 թ. նախագահական ընտրություններին հետևած արյունալի իրադարձություններից հետո, երբ զոհվեցին տասը մարդ, Ցեղասպանության հետ համեմատություններում «ղահիճների» և «զոհերի» միջև սահմանն այլևս կորցրեց ազգային պատկանելության ցուցիչը: Ապրիլի 24-ին դեպի Ծիծեռնակաբերդ ընթացող սգո երթին մասնակցող ընդդիմադիրները, ի թիվս այլ պաստառների, տանում էին նաև «1.5 մլն.+10» գրությամբ պաստառը, որը Հրանտ Դինքի սպանության հետ կապված «1.5 մլն.+1» պաստառի վերաձևակերպումն էր: Ցեղասպանության «ղահիճների» և «զոհերի» հետ համեմատությունը ներհայկական շրջանակում տեղադրելու մեկ այլ

---

<sup>20</sup> Տե՛ս Աբրահամյան Լ., Շագոյան Գ. Պատմագրության և հիշողության միջև. Խորհրդային Հայաստանի բռնաճնշումների հուշարձանացումը // Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա, Երևան, 2015:

<sup>21</sup> Նույն տեղում:



փորձ արվեց Ա. Միկոյանի արձանը տեղադրելու դեմ շարժման ընթացքում, երբ ցեղասպանության թեման սկսեց արժարժվել մի քանի սյուժեներում (հմտո. «Միկոյանը որպես թուրքերի դաշնակից», «որպես լեհերի ցեղասպանությանը հանցակից», «որպես Հայոց ցեղասպանության հուշահամալիրը կառուցելուն դիմադրող» նախադրյալները, ինչպես նաև հայ պաշտոնյաների համեմատությունը Էրդողանի հետ՝ համադրելով «պատմությունը թող պարզեն պատմաբանները», «եկեք հիշենք միայն լավը» և այլ արտահայտություններ), ընդհուպ Միկոյանի անունը կրող փողոցը Էնվերի անունով վերանվանելու փերժորմանսը: Ցեղասպանության թեման փորձեց իր քաղաքական պայքարում օգտագործել նաև «Նախախորհրդարան» քաղաքացիական շարժումը՝ «100-ամյակն առանց ռեժիմի» նախաձեռնությամբ: Ցեղասպանության թեման ներհայկական քաղաքական պայքարում օգտագործելու փորձերը ցույց են տալիս, որ հասարակությունը մի կողմից քաջ գիտակցում է դրա համախմբող ներուժի հնարավորությունները, մյուս կողմից, այն գործիքավորելու միտումն ինքնին խոսում է մետանախառնիվ քայքայման մասին, քանի որ փորձ է արվում վերադասավորելու դրա «մենք»/«նրանք»-ի սահմանը:

Այսպիսով, անկախ պատճառներից և հանգամանքներից, ցեղասպանության թեման հայ հասարակական խոսույթում հիմնականում գործում է որպես մետանախառնիվ և ոչ միայն ճնշում է այլ պատմագիտական սյուժեները, այլև ծառայում է որպես տարբեր ողբերգություններ նկարագրելու լեզու:

*GAYANE SHAGOYAN (ARMENIA)*

## **THE ARMENIAN GENOCIDE AS A META-NARRATIVE OF TRAUMATIC MEMORY**

In view of certain circumstances some historical events may become the meta-narrative of collective memory. At that, not only do these events prevail as separate topics, but they also serve as a matrix for other commemorative practices. Usually this is characteristic of the memory of great catastrophes, especially of those based on ethnic issues. The paper considers the memory of the Armenian Genocide in this context.

The article is an attempt to consider other narrations not associated with the Genocide, yet where the concept of genocide is present as a part of common discourse and shapes some commemorative practices analogous to the Genocide commemoration. The paper focuses on the practices of commemoration concerning two dramatic events: the Spitak earthquake in 1988 and the Stalin era repressions including the mass deportation of the Armenians to Siberia in 1949. Analyses allow to conclude that the theme of Genocide may often suppress the memory of other traumatic historical events, yet the analogy between the said events and the Genocide may also increase public sensitivity.

## 5. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝

### «ՄՊԻՏԱԿ ԵՂԵՈՒՆ»

*ԴԱՎԻԹ ՔԵՐԹՄԵՆՉՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

#### ՄՇՈ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՔՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մշո գավառը հայկական ճարտարապետության ինքնատիպ դպրոցներից մեկն է: Ինչպես ցույց են տալիս ներկայիս դաշտային այցելությունները, տարածքում Մեծ եղեռնից 100 տարի անց դեռևս մնացել են հայկական լքված հուշարձանների խեղաթյուրված մնացորդներ, որոնք գործող միջազգային կոնվենցիաներով հնարավոր է այս կամ այն չափով կյանքի կոչել:

Հաղորդման նպատակն է հնարավորինս միջոցներ որոնել պահպանելու ակնարկվող հուշարձանները: Գիտական խնդիրներ են՝ 1. մշակել հուշարձանապահպանության քաղաքականություն: 2. Ըստ իրավիճակային տվյալների՝ ցուցակագրել և դասակարգել տարածքի կարևորագույն հուշարձանատիպերը:

Հետազոտության մեթոդը սիմուլացիոն (վերարտադրական) վերլուծությունն է, որ ենթադրում է տարածքի ծրագրային համակարգումը ներկայիս գործող միջազգային կազմակերպությունների միջոցով, ինչպիսին օրինակ ՄԼ ծովյան երկրների համագործակցությունն է<sup>1</sup>: Փաստորեն, Մուշի տարածքի հայկական լքված հուշարձանների պահպանությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է նրանց իրավիճակային ուսումնասիրությունը և կարևորություն ներկայացնող նմուշների հնարավորին գոյատևման քաղաքականության ապահովումը, ինչպիսին որ ամրագրված է միջազգային կոնվենցիաներով: Հարցը հնարավոր է լուծել ներքոհիշյալ 3 դրույթներով:

Հայաստանում և Մուշի տարածքում փոխադարձ տուրիզմի երթուղիների կազմակերպումը:

---

<sup>1</sup> Տե՛ս <http://www.bsec-organization.org>, BSEC= Black Sea Economic Cooperation.

Հայկական և Մուշի տարածքի ուսումնական հաստատությունների միջև բուհ-ական մակարդակով ուսումնական փորձի փոխանակման ծրագրերի ներմուծումը:

Մուշի Տարածքում ճարտարապետության զարգացման միջավայրակայուն փիլիսոփայության խրախուսումն է, որ ուշ թե շուտ ներմուծվելու է տարածքի ճարտարապետության ծրագրեր<sup>2</sup>:

Ըստ իրավիճակային տվյալների՝ Մուշի տարածքի հուշարձանային հարստությունը կարելի է համակարգել երեք հետևյալ կատեգորիաներով՝ 1. գործող պատմական բնակավայրեր, 2. Ավերակներով գոյատևող հուշարձաններ և հուշարձանախմբեր, 3. իսպառ քանդված հուշարձանավայրեր:

Պատմական բնակավայրի հայտնի օրինակ, ինչպիսին այսօրվա Կարսի նահանգի Անի քաղաքն է, Մշո տարածքում բացակայում է: Սակայն գործող պատմական բնակավայրերի, ներառյալ նաև գյուղերի օրինակները տարածքում բազմաթիվ են: Դրանցից հատկապես կարևոր են Մանազկերտ և Մուշ պատմական քաղաքները և նրանց հուշարձանները, որոնք մասամբ հաշվառված են տեղի հուշարձանապահպանության մարմինների կողմից:

Մանազկերտ քաղաքի տարածքում առաջին դիտումներով կարելի է ամրագրել, որ պահպանվել են քաղաքային պարիսպը, ամրոցը, հայկական գերեզմանատունը, ինչպես նաև երկու եկեղեցիների ավերակներ (հավանաբար երեք խորան Սբ. Աստվածածինը և Արաբու Սբ. Սարգիսը), բնակելի տներ և «Աղջկա» ու «Տիկնոջ» անուններով հայտնի երկու կամուրջներ: Ըստ Հենրի Լինչի տվյալների՝ քաղաքը մինչև XX դարի սկզբները ավերակներով գոյատևող քարավանատուն էր և խանաբար<sup>3</sup>: Ըստ տեղեկության՝ քաղաքն ունի քաղաքապետարանի կողմից պատրաստված հնագիտական քարտեզ: Բնակչության մեջ մինչև օրս կան թրքախոս հայեր: Բնականաբար Հ. Լինչի և Օ. Օսվալդի չափագրությամբ հասած քար-

---

<sup>2</sup> Տե՛ս միջավայրակայուն (Sustainable) ճարտարապետության բնագավառը, օրինակ՝ James Wines, Green Architecture, Taschen, 2000, pp. 8-15.

<sup>3</sup> H.F.B. Lynch, [Armenia, travels and studies. Volume II: The Turkish Provinces](#). London: Longmans, Green, and Co, 1901, p.271. Քաղաքի մասին ավելի մանրամասն տե՛ս Դ.Քերթմենջյան, Տարոն-Վասպուրականի ճարտարապետության միջնադարյան դպրոցը, դոկտորական ատենախոսություն, ատիպ, հտ.1, Երևան, 1993, էջ 178-183:

տեղի<sup>4</sup> տվյալների որոնումը մեծ աշխատանք կպահանջի: Այնուամենայնիվ մեր այցելության ժամանակ պարիսպները և միջնաբերդը կային, և նրանց վրա նորացման աշխատանքներ էին կատարվում:

Մուշ քաղաքը ոչ հին փոքր քաղաքի կերպարն ունի: 100 տարի առաջվա քաղաքը կազմում է ներկայիս բնակավայրի կորիզը, որտեղ մեր այցելության օրերին քանդման և փորման մեծամասշտաբ աշխատանքներ էին կատարվում: Միջնաբերդի տարածքը փաստորեն վերածվել էր զբոսավայրի և հանգստի գոտու: Հայկական բնակության տարիների Բերդի թաղը և Ձորի թաղը<sup>5</sup> ինչ-որ չափով դեռևս գոյություն ունեն: Նրանց միջև անցնող և դեպի նոր քաղաքը երկարող գլխավոր պողոտան դեռևս իր դերը պահպանել է որպես քաղաքի ներքին շուկա: Ըստ տեղեկության՝ Մուշում XX դարի սկզբին եղել են 7 եկեղեցիներ (Սբ. Մարինե, Սբ. Գևորգ, Ջիգրաշեն, Սբ. Կիրակոս, Սբ. Հարություն, Սբ. Աստվածածին, Սբ. Սարգիս, Ձորի թաղի նոր եկեղեցին)<sup>6</sup>: Ներկայիս եղած հնագույն՝ ուշմիջնադարյան երեք մզկիթների կառուցվածքում մնացել են վերափոխված հնագույն եկեղեցիներից որոշ մասեր: Բերդի ստորոտի առաջնորդարանը մեր այցելության ժամանակ արդեն քանդված էր, նրանից ոչ հեռու պահպանվել էր դահլիճանման հայկական մի կառույց՝ Սբ. Մարինե անվամբ ենթադրվող, թվում է՝ հենց դա է առաջնորդարանի պաշտոնական դահլիճը, որովհետև շենքը համեմատաբար նոր է, և Սբ. Մարինեն, ըստ ավանդման, հնաշեն էր: Անցյալի քաղաքային երեք քարավանատները, այսօր վերածվել են խանութների շարքերի, որոնցից մեկի վրա պահպանվել են մի բարձրաքանդակ և «Յիդիզ հան» անունը:

Ավերված հուշարձանների օրինակները (աղ.1), բազմաթիվ լինելով հանդերձ, դրանցից հատկապես կարևոր են Մշո Սբ. Առաքելոցը, Եղերդուտի վանքը, Աստղաբերդը և այլն: Փաստորեն Մուշ նահանգի տարածքում գյուղ չկա, որտեղ մատուռանման եկեղեցիներ պահպանված չլինեն և բնակարաններ, որոնք հարմարեցվել են

---

<sup>4</sup> Տե՛ս H.F.B. Lynch, նույն տեղում:

<sup>5</sup> Ավելի մանրամասն տե՛ս Դ.Գ.Քերթմենջյան, նշվ.աշխ., էջ 174-177:

<sup>6</sup> Տե՛ս «Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների ցուցակներն ու թաքրիքները 1912-1913 թթ.», թարգմանեց՝ Ա.Սաֆրաստյան, «Էջմիածին» ամսագիր, 1965, Բ, էջ 82-84:

Ժամանակակից օգտագործման համար: Ամենամեղմ ձևով ասած, «պահպանված» մատուռներն այսօր օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով: Դրանց քարերն իրացվել են, և շենքերի կմախքներն ինչ-որ կերպ գոյատևում են դեռևս ամրություն չկորցրած «միդիսի» շարվածքի ներքին շերտի շնորհիվ: Տվյալ նյութը չի հաշվառվել: Թվում է՝ լավագույն դեպքում կարելի է թղթի վրա ամրագրել, և դրանցից հույժ կարևորները պահպանել որպես պատմական ժառանգության օրինակներ: Նշվածների թվին են պատկանում մեր այցելած Սիրոնքի (Ցրոնքի) Սբ. Սարգիս և Սբ. Հակոբ եկեղեցիները (աղ.2), Սյունգուի (երբեմնի Նորաշենի) ջրաղացը: Վերևում նշված վանքերն ու Աստղաբերդը (աղ.3) կարիք ունեն անհապաղ ամրակայման աշխատանքների (ստաբիլիզացիայի), որից հետո հնարավորության դեպքում կարելի է կազմակերպել նրանց վերականգնումը կամ գոնե կոնսերվացումը շնորհիվ հայկական գրավոր ժառանգության մեջ պահպանվող փաստացի նյութերի<sup>7</sup>:

Ինչ վերաբերում է իսպառ ավերված հուշարձաններին, դրանք բազմաթիվ են: Այցելությունները մինչև օրս ակտիվ են դեպի նշանավոր Մշո Սբ. Կարապետը (աղ. 4, 5): Վանքի տեղում այսօր գյուղ է: Շատ տեղերում եկեղեցիները և վանքապատկան օժանդակ շենքերը ներսից պահպանվել են: Նկատելի է, որ շենքերի ադապտացումը կատարվել է գիտակցաբար: Խորանների տեղերին և գերեզմանատարածքներին ձեռք չի տրվել, հատկապես կարելի է նշել պահեստի վերածված լինելու պատճառով պահպանված գահադահլիճը, ինչպես նաև գոմի վերածված մառանը և այլն: Տեղում պեղումները շատ բան կարող են պարզել, սակայն ողջ մի գյուղի բնակչությունը տեղաշարժել մեծ ծախսերով կարելի է իրականացնել: Թուրքական ատյանները հնարավոր է՝ գնան այդ քայլին՝ հաշվի առնելով դեպի սրբավայր այցելուների մեծ քանակությունը: Եթե ոչ, թվում է՝ ամենանպատակահարմարը տվյալ վայրից 3-4 կմ հարավ-արևելք գտնվող վանքի տնտեսական ենթամասը հետաքրքիր միջոցառման տարածքի վերածելն է: Փաստորեն այն վերածելով ուսումնական կեմպինգի՝ տեղում կարելի է կազմակերպել Մշո Սբ. Կարապետին նվիրված վիրտուալ թանգարան, որտեղ կարելի է վերակենդա-

<sup>7</sup> St' u Paolo Cuneo, Architettura Armena, Tomo I, De Luca Editore, Roma, 1988, pp. 614-626.

նացնել (ռեվիտալիզացնել) նշանավոր վաղբրիստոնեական համալիրի պատմակրոնադավանական անցյալը:

Եզրակացություններ

Վերոհիշյալ ծրագրի իրականացման համար նպատակահարմար են հետևյալ միջոցառումները.

1/ Երևանում և Մուշ քաղաքում տուրիզմի գրասենյակների հիմնադրումը: Մուշ քաղաքում դա կարող է հարակից լինել մշտական գործող «Տարածքի հուշարձանների վիրտուալ թանգարան»-ին: Ժամանողներն իրենց զբոսաշրջային երթուղին կարող են սկսել հենց թանգարանից:

2/ Համաձայն արդի ճարտարապետության հուշարձանապահպանության տեսության՝ հուշարձանների պահպանություն չի նշանակում անձեռնամուխ պահել տվյալ շենքերը, այլ հարկավոր է նաև ապահովել նրանց նպատակային օգտագործումը որպես թանգարաններ, ուսումնական կենտրոններ և այլն<sup>8</sup>: Հենց այս առումով Մշո Մբ. Կարապետի վանքի տնտեսական ենթամասի կամ «Դրսի տան» տարածքը վերածել ուսումնական ծրագրերի փոխանակման կենտրոնի և երբեմնի նշանավոր կրոնական կենտրոնի վիրտուալ թանգարանի:


3/ Տարածքում գոյատևող ամրաշինական (Աստղաբերդ), հասարակական (քարավանատներ, բաղնիքներ), բնակելի, արտադրական և ինժեներական (կամուրջներ) կառուցվածքներն ըստ անհրաժեշտության պահպանվում են որպես վերնակուլար ժառանգություն: Խնդիրը ծայրահեղորեն սուղ է սրբավայրերի կապակցությամբ: Վերջինների ռեվիտալիզացիան նպատակահարմար է կատարել որպես տարածքի միջավայրակայուն ժառանգության թանգարանացման նմուշներ, ինչպիսիք ըստ էության կարող են ծառայել Մշո Մբ. Առաքելոցը և Եղերդուտի վանքերը:

---


<sup>8</sup> [http://www.unesco.org/culture/natlaws/media/pdf/montenegro/me\\_protcultmonts\\_engtof.pdf](http://www.unesco.org/culture/natlaws/media/pdf/montenegro/me_protcultmonts_engtof.pdf), Low on Protection of Cultural Monuments and General provisions, articles: 20 and 46.




Աղ.1- հիմնական իրավիճակ 1. Մյու Սբ Առաքելոց, 2. Շղերառտի վանք, 3. Մուշ տաղանդարտի կանաչ, 4. Մուշ խանդավազի բաղնիք




Աղ.2 Սիրոնք եկեղեցիների և Բաակի տան մնացորդներ








Աղ.3. Մուշի մոտ, Աստղաքերը կամ Ասպետ բերդ.



Աղ.4. Մշտ Մբ Գարապետ վանքային համալիրի ընդհանուր հաստատկայք 1. վանական մաս, 2. տնտեսական մաս



*DAVID KERTMENJIAN (ARMENIA)*

## THE ABANDONED ARMENIAN MONUMENTS IN MUSH AREA AND THEIR MAIN PROTECTION PROBLEMS

The Mush area is one of glorious regions of Armenian architectural legacy. According to recent field studies there are some remaining monuments possible to survive. Main question of the presented thesis is the protection of indicated monuments. Objectives are: development of

preservation policy, classification of the monuments due to their current conditions. The development strategy is to share the situation within international programs existing at the area, such as the Black Sea cooperation. The expectation promotes touristic, educational and sustainable development trends. The study concentrates on the following issues. 1. The preservation of some sites from Manazkert and Mush cities. 2. Regeneration and establishment of Virtual museum and education center at the complex nearby St.Karapet monastery, and 3. Revitalization and conservation some other public, communal, residential, fortification (Astghaberd) instances, as well as monastic complexes of St. Arakelots and Egherdut.

*ՌԻՄԱ ՄԻՐՈՒՄՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ «ՀԱՅՐԵՆԻՔԻ» ԲՆԱԶՆՁՈՒՄԸ՝  
ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԽՆԴԻՐ**

*Վանորայք և եկեղեցիք Հայաստան աշխարհին մերոյ են մէն մի գանձարանք պահարանք ազգային հնութեանց, բեր ասել եւս և ազգային գոյութեանց: Այսոքիկ են վայրք, յորս մենացեալ ամրացեալ ապաստան եղեն ոգիք սրբասէրք և տքնասէրք. անդանօր վաստակէին միտք և մատունք յօրինողաց և օրինակողաց գրենեաց թարգմանաբար և հեղինակաբար. ծաղկարարք, կազմարարք, երգասացք, շարականք, ճառողք, վարդապետողք, ատաջնորդողք, մեկնիչք, պատմիչք, տումարագէտք. Սոքա և սոյնպիսիք առ հասարակ վանականք են և եկեղեցականք՝ ի հինս:*

*Գարեգին Վ. Սրուանձտեանց*

Դեռևս դասական պատմափիլիսոփայության մեջ ձևակերպվել է մի գաղափարադրույթ, ըստ որի՝ պատմության բուն էությունը պատմամշակութային ինքնատիպ ամբողջականությունների բազ-

մագանությունն է<sup>1</sup>: Հիրավի, պատմամշակութային այդ ամբողջականություններից յուրաքանչյուրն արտահայտում է մի որևէ ազգի պատմամշակութային կեցությունը: Ես ելնում եմ այն նախադրյալից, թե պատմությունն ու մշակույթը փոխկապակցված են. մշակույթը գոյություն ունի այնքանով, որքանով նրա մեջ առկա է պատմության երևույթը և հակառակը, պատմությունը գոյություն ունի այն չափով, որ չափով ներգրավված է ազգային մշակույթի ձևերի բազմազանության մեջ՝ բեղմնավորելով նրա կեցությունը<sup>2</sup>: Յուրաքանչյուր ազգի պատմամշակութային կեցությունը բովանդակում է երկու ազգային և համամարդկային, նախասկզբներ: Ընդսմին, թեև մշակույթը (և առաջին հերթին հոգևոր մշակույթը) ունի համապարփակ չափում և ուղղորդված է մարդու ներքին կյանքին, այնուամենայնիվ ձևավորվում և զարգանում է որոշակի հողի վրա: Մշակույթը բնութագրելի է որպես աշխարհագրական, կլիմայական, էթնիկ և այլ գործոններով պայմանավորված մի ազգի հոգևոր փորձ: Յուրաքանչյուր ազգի մշակույթի հիմքում ընկած են նույն ազգի կողմից պատմականորեն ձևավորված կենսական որոշ կողմնորոշումներ, աշխարհագրացողության առանձնահատուկ տարատեսակ, որոնք ազգի պատմական գոյության ամեն մի փուլում արտահայտում են նույն ազգի ինքնագիտակցության մակարդակը: Մշակույթն ապահովում է ազգի միասնության համար անհրաժեշտ կապը, որը ծնունդ է տալիս ժողովրդի պատմական հիշողությանը և պահպանում այն: Ազգի մշակութային արժեհամակարգը համահարաբերական է այդ մշակույթի կրողների ողջ հոգևոր կարգին: Դրանով է բացատրելի այն հանգամանքը, որ հենց այդ արժեքները ստեղծած ժողովրդի պատմական հիշողությունը որոշակի իմաստ է հաղորդում այդ արժեքներին և ներգրում դրանք մարդկության հոգևոր ժառանգության պահոց<sup>3</sup>:

<sup>1</sup> См. Гумбольдт В. Фон. Язык и философия. М., Прогресс, 1985, с. 300; Гегель Г.В. Ф. Философия истории // Г.В.Ф. Гегель. Соч., т. VIII. М.-Л., Соцэкгиз, 1935, с. 61.

<sup>2</sup> Տե՛ս Միրումյան Ռիմա, Պատմափիլիսոփայական հայեցակարգերը XIX դարի հայ փիլիսոփայության մեջ: Մեթոդաբանական վերլուծություն, Երևան, «Նոյյան Տապան», 2003, էջ 58:

<sup>3</sup> См. Мирумян Римма. Армянское культурное наследие как механизм само-защиты нации в условиях глобализации (к вопросу о политической концепции культуры). Армения в диалоге цивилизаций. Материалы международной научной конференции, 28 апреля 2011г. Нижний Новгород, Деком, 2011, с. 83.

Հայկական մշակույթը լիակատար իրավունքով բնութագրելի է որպես պատմամշակութային ամբողջականություն՝ պայմանավորված դրա միասնությամբ, անկրկնելիությամբ և հայ ժողովրդի հետ (այդ մշակույթի կրողի)ունեցած սերտ կապով: Սույն բանաձևը հիմնավորելու համար անհրաժեշտ են համարում ընդգծել հայ ազգի պատմամշակութային կեցության որոշ առանձնահատկություններ, որոնք նախորոշում են հայի «դիմագիծը» համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ:

1. Չնայած իր պատմական ճակատագրի բոլոր բարդություններին (ազգային պետականության վերելքն ու անկումը, ժողովուրդների տեղափոխություններն ու գաղթը, տարբեր կրոնների ու մշակույթների ներագոյեցությունը, քաղաքակիրթ ու բարբարոս ժողովուրդների հետ ներգործությունը)՝ հայ ժողովուրդը կարողացել է պահպանել իր ազգային-մշակութային ինքնատիպությունը:
2. Հայ ազգային մշակույթի մեջ հստակորեն գործում է մշակույթի ժառանգորդման (մշակութային ավանդույթի գործառնությունը, «ինքնավերարտադրման» մշակույթի ընդունակությունը) կառուցակարգը: Հայ ազգի ինքնաճանաչման շարժընթացն իրականանում է ժառանգորդման սկզբունքի համաձայն, ինչը հնարավոր է ուրվագծել հայ ազգի հոգևոր զարգացման շարունակական հետևյալ վեկտորի միջոցով՝ հայկական էպոսը, մեսրոպյան տառերի գյուտով պայմանավորված V դ. ազգային-մշակութային հեղափոխություն հանդիսացող «Հայկական Ոսկեդարը», Մխիթար Մեֆաստացու լեզվական վերանորոգման քաղաքականության վրա հիմնված ազգային-մշակութային կյանքի վերածնության շարժուն «Հայկական Զարթոնքը», ազգային կեցության ժամանակակից իրողություններից ծնունդ առած «Մեկ ազգ – մեկ մշակույթ» կարգախոսի ձևավորումը<sup>4</sup>:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմությունն արտացոլվել է նրա գոյության հազարամյակների ընթացքում որոշակի տարածքի

---

<sup>4</sup> Տե՛ս Միքումյան Ռիմա, Ոսկեդարից Զարթոնք (հայ ազգային ավանդույթների ձևավորման շարժընթացի դիտարկման փորձ) // Միջազգային գիտաժողով նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին. Զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2006, էջ 185:

վրա ստեղծված նյութական և հոգևոր մշակույթի ձևերի ողջ գունա-  
շարի (առևտրի և արհեստների, դպրության և գրատպագրության  
կենտրոններ, քաղաքներ և գյուղեր, հողագործության մշակույթ,  
ճարտարապետության գլուխգործոցներ, նյութական մշակույթի  
բազմապիսի առարկաներ, միջնադարյան համալսարաններ և XIX-  
XX դդ. դպրոցներ) մեջ: Հայ ժողովրդի ստեղծագործական ոգու շնոր-  
հիվ առանձնահատուկ պատմամշակութային «կերպարանք» ձեռք  
բերած այդ տարածքը հայերի ստեղծած այն բնակավայրն է, որտեղ  
հնարավոր դարձավ հենց հայ ազգային մշակույթի ձևավորումը:  
Դարեր շարունակ հայ ազգի կենսագործունեությունն իրականացվել  
է որոշակի տարածքի վրա՝ նրա ստեղծած զարգացած մշակույթի  
ձևերի մեջ, որը հենց այդ պատճառով ընդունակ եղավ կատարելու  
նման մշակույթներին հատուկ էթնոպաշտպանական գործառույթ:  
Խնդիրն այն է, որ միայն հարուստ այդ մշակույթը ստեղծած ժո-  
ղովրդի պատմական հիշողությունն է հաղորդում դրան պատմա-  
մշակութային խոր ներիմաստ և կապում այդ ժողովրդի պատմական  
հայրենիքի հետ: Այս համատեքստում անհրաժեշտ է ընդգծել, որ  
հայերի մշակութային գիտակցության մեջ «հայրենիք» գաղափարը  
բովանդակում է մայրենի երկրի և հոգևոր՝ սրբազան տարածության  
(հոգևոր հայրենիքի) խորհուրդները:

«Հայրենիք»-ը ըմբռնվում է որպես սրբազան այն տարածու-  
թյունը, որտեղ «ընդարձակվում» է մի ազգի պատմական կեցու-  
թյունը: Ազգի պատմական գոյության առանձնահատկությունը նա-  
խորոշում է սրբազան տարածությունը (հայրենի հողը), և միա-  
ժամանակ ազգի պատմական գոյության ընթացքը հատուկ խոր-  
հուրդ է հաղորդում այդ տարածությանը: Այսպիսով, ազգի լինելիու-  
թյան ժամանակն ու տեղը (հոգեբարոյական կատարելագործումն ու  
հայրենի հողը) կազմում են ազգային կեցության հարացույցային  
(ինքնագիտակցության, ինքնաճանաչման) համատեքստը<sup>5</sup>:

Հազարամյակների ընթացքում Հայկական լեռնաշխարհում  
հայ ժողովրդի ստեղծած մշակութային հարուստ ժառանգությունը  
խոսուն վկայությունն է այնի, որ այդ տարածաշրջանը, ըստ էութ-  
յան, հայության պատմական հայրենիքն է: Դրանով է բացատրելի  
թուրքական կառավարության կողմից կազմակերպված և իրակա-

---

<sup>5</sup> Տե՛ս Միքումյան Ռիմա, Խորեն Աշըգյան («Իմաստասերք հայոց» մատենա-  
շարից), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, էջ 101, 102:

նացված հայ ժողովրդի կոտորածը, ինչպես նաև հայերի քաղաքակրթական ժառանգության սեփականաշնորհումը կամ բնաջնջումը: «1915ի ազգային մեր «Մեծ Աղէտ»-ը (անհրաժեշտություն է ստեղծել.- Ռ. Մ.) հաշուեկշիռ մը կատարելու ազգային ու մշակութային անվերադարձ ու անգին մեր կորուստներուն. Վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, գրադարաններ, վարժարաններ, դպրեվանքեր, ձեռագիր մատենաներ, տպագիր գրքեր, ոսկերչական եւ արծաթագործական աշխատանքներ, մետաղագործական կամ պղնձագործական տնային ու կենցաղային առարկաներ, եկեղեցական սպասներ եւ սրբազան այլ առարկաներ, հնութիւններ, հնախօսական կառույցներ, քանդակներ, խաչքարեր, տապանաքարեր, արձաններ, վիմագիր արձանագրութիւններ, նկարներ, որմնանկարներ, եւ այլն եւ այլն, որոնց քանակը եւ պատմական ու մշակութային արժէքը իսկապէս դժուար, գրեթէ անկարելի է ճշգրտորէն հաշուարկել»<sup>6</sup>:

Հայ ժողովրդի պատմական գիտակցության մեջ 1915թ. Հայոց ցեղասպանությունը գրանցվեց որպես իր դարավոր պատմության ամենատխուր էջը, ինչը, բնականաբար, մեծապես ազդեց նրաներկայի ու ապագայի վրա: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, թե մի ժողովրդի պատմական կյանքի կենսագործման, այն է՝ ազգի ինքնության ձևավորման ու պահպանման, գլխավոր կառուցակարգը ազգային մշակույթն է, ապա միանգամայն ընկալելի է հայազիտության մեջ ամրագրված այն տեսակետը, ըստ որի՝ Հայոց ցեղասպանության ամենածանր հետևանքներից մեկը ազգային հարուստ մշակույթի կորուստն է: «Հայաստանի վանական հաստատությունները, հոգեւոր-կրօնական կրթարաններ ըլլալու կողքին, միաժամանակ եղան նաեւ ուսումնական, դաստիարակչական, գրչութեան եւ արուեստի կեդրոններ, որոնք աւելի կամ նուազ կազմակերպութեամբ եւ գործունէութեամբ ծառայեցին մեր ժողովուրդին՝ դառնալով անոր հոգեւոր, վանական, գրական, ազգային ու մշակութային աշխատանքի եւ գործունէութեան վայրերը: Իսկ մեծ եւ յարաբերաբար աւելի կազմակերպուած վանքերը դարձան մեր իմացական եւ նիութական մշակույթի գլխաւոր աշխատավայրերը»<sup>7</sup>:

<sup>6</sup> Եւրոքմեան Տաճատ վրդ., Հայաստանի վանքերուն և եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, Վենետիկ-Ս. Ղազար, 2001, էջ 16, 17:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 20:

Ասվածը վկայում է հայ ազգի պատմական կեցության մեջ մշակույթի մեծ կապիտալի առկայության, այն է՝ հայ ազգի կենսագործունեության տարածության մեջ նրա հայտնի ողջ պատմության ընթացքում մշակույթի (և հատկապես հոգևոր մշակույթի) արժեքների բարձր կարգավիճակի մասին: «Այս սեր ազգի մերոյ տեսանի նաեւ յայնքան արձանագիրս, ի կոնդակս, ի քանդակս, ի յիշատակարանս ձեռագրաց մատենից, յորս նշանակին գիւղորայք, այգիք, անդաստանք, դրամք, տունք, ասանք, և պէս պէս ստացուածք տւեալք մշտնջենական նուէր այսմ վանուց, այնմ ուխտին կամ եկեղեցոյ, և անիծիւք կնքեալ զբանն ի գլուխս հանողացն և յափշտակողացն զայնոսիկ: Տեսանեմ ես աւասիկ, զի հայրենիք Հայոցս ամփոփեալ են ի վանորայս և յեկեղեցիս մեր, ըստ նիւթական նշանակութեան միանգամայն. քանզի, եթէ դոն մեզ այսօր սեպիականութիւնք ինչ ազգային կամ հայրենական, այն միայն սրբավայրքն են մեր, զորս ազատ են թողեալ տիրողք և խնամող պետութիւնք ի վերայ մեր»<sup>8</sup>:

Դժվար է վերագնահատել մշակույթի կապիտալի խորհրդանշական նշանակությունը քաղաքակրթությունների, ժողովուրդների և պետությունների ճակատագրերում: Հենց այդ կապիտալի կենսագործման ձևն է նախորոշում ժողովրդի ընտրությունը պատմության մեջ: Պետությունների քաղաքակրթական սեփական կարգավիճակի հաստատման գործում մեծ դեր է խաղում մշակութային գործոնը:

Օրինաչափական է, որ գերտերությունների համար մշակույթի խորհրդանշական կապիտալը դրանց իշխանության տարածությունը կազմակերպող արժեքների ու սկզբունքների բարձր կարգավիճակը հաստատելու ձև է: Հայ ազգի պատմական գոյությունը բացահայտում է մի այլ օրինաչափություն. ազգի հոգևոր ինքնատիպությունը կարևոր է այնքան, որքան նրա քաղաքական անկախությունը: Սեփական գաղափարներ չունեցող ազգերը անհրաժեշտորեն ենթարկվում են այն ազգերին (սկզբում հոգեբարոյական, իսկ հետագայում նաև քաղաքական իմաստով), որոնց գաղափարներն ընդունում են: Մշակույթի աշխարհ մտնելու համար ազգերը պետք է ձեռք բերեն «այցեքարտ» (վաստակել սեփական պատմությամբ),

---

<sup>8</sup> Սրուանձտեանց Գ., Հնոց եւ նորոց, Կ. Պոլիս, 1874թ., էջ 11, 12:



ինչը նրանց հոգևոր ներունակության բարձրագույն արտահայտման և զարգացման արդյունք է:

Դարեր առաջ հայերի կառուցած վանքերն ու եկեղեցիները միջնադարյան քրիստոնեական մշակույթի զարգացման և պահպանման միակ «ապաստարաններն» էին, որոնք միաժամանակ եղել են «հայ ժողովուրդին «Հոգեւոր», «Իմացական» եւ «Նիւթական» մշակույթի ստեղծագործութեան եւ գործունէութեան առաջնակարգ կեդրոնները»<sup>9</sup>:

Երիտթուրքերի կազմակերպած և իրականացրած Հայոց ցեղասպանությունը նպատակ ուներ ոչ միայն ֆիզիկապես ոչնչացնելու հայ ժողովրդին և հայերից «ազատելու» նրանց պատմական հայրենիքը (նրանց ստեղծած բարձր մշակույթի բնօրրանը), այլև հայտնի տարածության վրա հայ ազգի պատմական գոյության բոլոր «հետքերը» բնաջնջելու: Դրանով է բացատրելի, մեկ կողմից, հայկական մշակույթի կոթողների բնաջնջումը, իսկ մյուս կողմից, նրանց մի մասի «սեփականաշնորհումը»:

Սակայն հայ ազգը վերապրեց ցեղասպանությունը: Նա ոչ միայն շարունակեց ապրել Հայաստանում և Մփյուռքում, այլև ստեղծեց և շարունակում է ստեղծել նյութական և հոգևոր մշակույթի գանձեր սեփական, ուրույն հայկական կնիքով: Պատճառն այն է, որ թուրքական կառավարությանը չի հաջողվել «սպանել» հայ ազգի հոգևոր որոնումներն ու ձգտումները: Մեր ժողովրդին հաջողվել է պահպանել պատմական հիշողությունը, ազգային-մշակութային դարավոր ավանդույթները: Ավելին, առ այսօր բոլոր հայերի հայացքներն ու մտքերն ուղղված են դեպի իրենց պատմական հայրենիքը, ինչը մեր ժողովրդի պատմական հիշողության կենսունակության իբրև ազգի նրա գոյատևման գրավականի, լավագույն վկայությունն է: «Չ'իշխելով այլ ևս շատ տխուր պարագաները բաւականանում ենք միայն այնու, որ իցիւ թէ գայ ժամանակ, երբ այցելութիւն լինի ամեն Վտարանդի գաղթականին, դառնալ իւր բնակավայրն, կարկատել ու նորոգել աւերակները, ապրել ու մեռնել պապենական յարկի տակ, տանն, հանդ ու հանդաստանի միջում, կրկին պաշտել ու յարգել իւր Սրբավայրերն, *Ժամքն* ու ժամատունն որով այնու մխիթարւած կլինի իւր կրած ու ենթարկւած ամեն

---

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 23:

կերպի թշուառութիւններից և այն՝ անպայման վշտակրութիւններից որով տառապեցան խիստ»<sup>10</sup>:

*RIMA MIRUMYAN (ARMENIA)*

**THE ANNIHILATION OF ARMENIAN CULTURE  
"HOMELAND" AS A TOP PRIORITY OF ARMENIAN  
GENOCIDE POLICY**

The centuries-old history of Armenian nation has been expressed in a range of colors of spiritual and material culture types formed in a particular space during the centuries of its existence. The concept of "homeland" implicates the symbols of motherland and sacred space (spiritual homeland) within the cultural consciousness of Armenians. The Armenian Genocide, organized and implemented by the Young Turks, aimed not only to physically destroy the Armenian nation and set their historical homeland “free” from Armenians, but also to destroy all the traces of “historical existence” of Armenian nation in this prominent space. But the Turkish government didn't manage to kill the spiritual searchings and aspirations of Armenian nation. Our nation managed to preserve the historical memory and century-old national and cultural traditions.

*ՄԱՐԻԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ  
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՋՈՒՂԱՅԻ  
ՆՈՐ ԽԱԶՔԱՐԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ**

Մշակութային ոլորտի իրավական դաշտի բարելավման, մշակութային ժառանգության պահպանման ոլորտի կատարելագործման ուղղությամբ տարեցտարի ավելանում են միջազգային համաձայնագրերն ու հռչակագրերը, դրանց անդամակցող պետություն-

---

<sup>10</sup> Ծերենց Գեորգ, Սրբավայրեր, Թիֆլիս, 1902, էջ 161:

ները: Միաժամանակ արդեն պարբերական է դառնում համաշխարհային նշանակության այս կամ այն պատմամշակութային հուշարձանի ավերման գույժը: Ջերմ մնալով այդ հանցագործությունները կանխելու կամ պատժելու կոչված մարմիններին քննադատելուց փորձենք հասկանալ խնդիրն այլ կողմից, բացահայտենք այն գործընթացը, որն ընկած է հուշարձանի ավերումից հետո: Տուժած կողմը կանգնում է երկրնորանքի առջև՝ վերստեղծելու վնասված կամ ավերված հուշարձանը՝ շարունակելու համար խաթարված պատմական գիծը կամ թողնելու որպես պատմության դրվագ, որը կծառայի իբրև կատարվածի հիշեցում: Սակայն ինչպես վարվի կողմը, որը, քաղաքական իրավիճակից կամ այլ պատճառներից ելնելով, զուրկ է հուշարձանն ավերման վայրում վերականգնելու հնարավորությունից: Ասվածի լավագույն օրինակն է Ադրբեջանին բռնակցված Նախիջևանում գտնվող Ջուդայի խաչքարային դաշտը, որը 1998-2006 թթ. ադրբեջանական իշխանությունների կողմից հիմնահատակ ավերման ենթարկվեց: Համաձայն Շվեյցարիայի «Հայաստան» Հնկերակցության ներկայացրած փաստաթղթի՝ Ջուդայի պարագայում խախտվել են պատմամշակութային հուշարձանների պահպանության հետ կապված համապատասխան բոլոր կոնվենցիաները<sup>1</sup>:

Նյութական մշակույթը գորավոր և ակնառու կապ է, որը միակցում է թե՛ անհատական, թե՛ կոլեկտիվ հիշողությունները, ինչպես նաև ապահովում է օրինականության շոշափելի և խոսուն հիմք, որը կարող է օգտագործվել՝ ապացուցելու տարածաշրջանի և հատկապես էթնիկ իսկության վերաբերյալ պատմական պնդումները<sup>2</sup>: Այն, ինչ քիչ թե շատ անվնաս հայտարարություն է մի քաղաքական ենթատեքստում, կարող է լուրջ քաղաքական նշանակություն ձեռք բերել մեկ այլ ենթատեքստում: Օրինակ՝ «Նախիջևանի Ինքնավար Հանրապետության զարգացումը» գիրքը (Գուլիև, 1984), խոսելով այդ տարածաշրջանի պատմության մասին՝ սկսած նախա-

<sup>1</sup> Switzerland-Armenia Association (SAA), Accountability for Destruction of Cultural Heritage: The case of Jugha, Bern, 2006, [http://www2.ohchr.org/english/bodies/cescr/docs/ngos/SAA\\_AzerbaijanWG49.pdf](http://www2.ohchr.org/english/bodies/cescr/docs/ngos/SAA_AzerbaijanWG49.pdf), 08.11.12.

<sup>2</sup> Condappa P, Cultural Genocide in Bosnia-Herzegovina; Destroying Heritage, Destroying Identity, <http://traumwerk.stanford.edu:3455/culturesofcontact/admin/download.html?attachid=2628>, 23.05.13.

պատմական ժամանակներից մինչև մեր օրերը, երբեք չի նշում հայերին, չնայելով այն հարյուրավոր մշակութային հուշարձաններին, որոնք լուր վկայում են իրենց իսկ հազարամյա ներկայության մասին այդ վայրերում:

Այն դեպքում, երբ պաշտոնապես հուշարձանը խորհրդանշական կերպով ներկայացնում է հաղթողների պատմությունը, միևնույն ժամանակ այն այլաբանորեն աշխատում է որպես «հակապատմություն»՝ այսպիսով իշխանության հայտ ներկայացնելով<sup>3</sup>: Օրինակ՝ օկուպացված շրջաններում մշակութային հուշարձաններն իրենց ներկայությամբ վկայում են այդ վայրերում այլոց անցյալի մասին:

Լինելով հանրության ազգային ինքնության ցուցիչ՝ հուշարձանն օգնում է կապել անցյալը ներկային և զգալ որոշակի արժեքների կրող ու ժառանգորդ, ինչն իր հերթին պարտավորություն է առաջացնում այն փոխանցելու սերունդներին: Հուշարձանների դեմ ուղղված քայլերը միտված են առաջին հերթին հոգեբարոյական վնաս հասցնելու՝ փորձելով ջնջել հակառակորդի մշակութային հետքը, կապը տվյալ տարածքի հետ: Նման մոտեցումը լավագույնս դրսևորվում է Ադրբեջանի մշակութային քաղաքականության մեջ:

Ադրբեջանի կողմից Արցախի և Նախիջևանի հայկական մշակութային հուշարձանների բռնադուրացումը, ըստ Հ. Պետրոսյանի, իրականացվել է երկու հիմնական մեխանիզմներով: Քանի որ հայքրիստոնեական և թաթար-մուսուլմանական մշակույթների միջև հակասությունն առավել քան ակնհայտ է, ապա որպես բռնադուրացման մեխանիզմ հանդիսացել է այդ մշակույթների «ընդհանուր ակունքների», «հարազատության», «նույնականության» վերհանումը: Հաջորդ մեխանիզմը միջանկյալ օղակի՝ «միջնորդավորված ուղու» ստեղծումն էր, որը նպատակ ուներ Արցախի (ինչպես նաև Նախիջևանի) մշակութային ժառանգությունը վերագրելու աղվաններին և նրանց միջոցով նաև ադրբեջանցիներին<sup>4</sup>: Օրինակ՝ 1985 թ.

---

<sup>3</sup> Gispert J., The eagle of history, Notes on cultural memories of Armenians, [http://www.derhuman.jus.gov.ar/conti/2010/10/mesa-20/gispert\\_mesa\\_20.pdf](http://www.derhuman.jus.gov.ar/conti/2010/10/mesa-20/gispert_mesa_20.pdf), 23.05.13.

<sup>4</sup> Պետրոսյան Հ., Մշակութային էթնոցիդն Արցախում (Մշակութային ժառանգության բռնադուրացման մեխանիզմը), Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ, Կաճառ 4 (47-58) 2010, էջ 137-148:

Բաքվում կայացած համասովետական հնագիտական կոնգրեսի ժամանակ ազերի հնագետ Դ. Ախունդովը ներկայացնում է մի գեկույց, որում Ադրբեջանական ՄՍՀ տարածքի բոլոր խաչքարերը որակվում են որպես աղվանական<sup>5</sup>: Մակայն Արցախի ազգային-ազատագրական պայքարից հետո այս լծակները լիովին սպառեցին իրենց, ինչը նշանավորվեց հետխորհրդային Ադրբեջանի տարածքում հայկական մշակութային ժառանգության հանդեպ ընդգծված թշնամանքի դրսևորմամբ<sup>6</sup>: Սրա բարձրակետը եղավ Ջուղա քաղաքի գերեզմանոցի հիմնահատակ ավերումը: Վերջինս հայկական միջնադարյան խոշորագույն գերեզմանոցն էր: Օտարերկրյա ճանապարհորդների վկայությամբ XVII դարի առաջին կեսին այնտեղ եղել է շուրջ 10000 խաչքար<sup>7</sup>: Այդ թիվը գրեթե անփոփոխ է մնացել մինչև XX դարի սկիզբը, երբ երկաթուղու անցկացումով խաչքարերի գրեթե հիսուն տոկոսը ավերվել է կամ օգտագործվել որպես շինանյութ<sup>8</sup>: Եվ ահա վերջին հարվածը հասցվեց 1998-2006 թթ., երբ ադրբեջանական զինված ուժերի կողմից պարբերաբար ավերումների ենթարկվելով՝ 2006 թ. դեկտեմբերին գերեզմանոցն ամբողջությամբ հողին հավասարեցվեց<sup>9</sup>:

Ջուղայի խաչքարերն իրենց մշակման կատարելությամբ, ինքնատիպ պատկերագրությամբ և աննախադեպ քանակով հայկական միջնադարյան քանդակագործության զարմանահրաշ դրսևորումներից էին և ունեին բացառիկ կարևորություն ոչ միայն հայկական, այլև համաշխարհային մշակույթի համար: Ուստի գերեզմանատան ավերման փաստի շուրջ բարձրացած բողոքի ալիքը միանգամայն կանխատեսելի էր: Ավերման մասին հայ և միջազգային մամուլում բազմաթիվ հրապարակումներ եղան, կազմակերպվեցին խաչքարերի լուսանկարների ցուցահանդեսներ, նկարահանվեցին փաստա-

<sup>5</sup> Philip L. Kohl, Clare Fawcett, նշվ. աշխ., թ. 154.

<sup>6</sup> Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 137-148:

<sup>7</sup> Rhodes A., Divers voyages et missions du P. A. de Rhodes en la Chine et Autres Royaumes avec son Retour en Europe par la Perse et l'Armenie. Paris:Sebastian Cramoisy, 1653, p. 416.

<sup>8</sup> Այվազյան Ա., Ջուղայի կործանված խաչքարերի սիմֆոնիան, Երևան, 2007, էջ 5:

<sup>9</sup> High-Resolution Satellite Imagery and the Destruction of Cultural Artifacts in Nakhchivan, Azerbaijan <http://shr.aaas.org/geotech/azerbaijan/azerbaijan.shtml>, 17.01.03.

վավերագրական ֆիլմեր<sup>10</sup>։ Սա այն անմիջական արձագանքն էր, որի նպատակն էր իրազեկել հայ հանրությանը, միջազգային ատլանտներին, դատապարտել կատարվածը։

Ջուղայի խաչքարերի ոչնչացումը հաճախ են համեմատում Թալիբանի կողմից Բամիանի Բուդդաների ավերման հետ<sup>11</sup>, քանի որ երկուսի դեպքում էլ կատարվածը որակվում է որպես մշակութային զենցիղ<sup>12</sup>՝ իրագործվելով ազգային և կրոնական անհանդուրժողականության պատճառով։ Բուդդաների պայթեցումից հետո աֆղանացի և մի խումբ օտարերկրացի մասնագետների շրջանում առաջացավ դրանք վերստեղծելու գաղափարը։ Առաջադրվեցին վերականգնման մի քանի տարբերակներ՝ ընդհուպ մինչև լազերային իմիտացիա։ Մշակութային համալիրի կարևորությունը և կրած կորուստը հստակորեն գիտակցվում էր տեղաբնակների կողմից, ուստի կատարվածից կարճ ժամանակ անց սկսվեց համալիրը վերականգնելու, վերաբժնորելու և նոր լույսով ներկայացնելու գործընթաց։ Բամիանի հովտում հնագիտական պեղումներ են իրականացվում, որոնց նպատակն է վերահաստատել սրբավայրի պատմամշակութային արժեքն ու կարևորությունը<sup>13</sup>։

Սա խոսում է այն մասին, որ ֆիզիկական ոչնչացումից հետո հուշարձանը պահպանում է իր գոյությունը հանրության կամ անհատների հիշողության մեջ։ Վերջինս երբեմն վերստին նյութականացման ընթացք է անցնում՝ արդեն նոր, վերաիմաստավորված կերպով։

Ջուղայի գերեզմանադաշտի վերջնական ավերումից մեկ տարի անց սկսվել և շարունակվում է խաչքարերի վերստեղծման լայնածավալ գործընթաց, որի նախադեպը չի եղել խաչքարագործության ոլորտում։ Տարբեր մարզերում տարբեր վարպետների կողմից կերտվում և կանգնեցվում են Ջուղայի խաչքարերի բազմաթիվ

---

<sup>10</sup> Julfa – History of Armenian khachkars destruction by Azerbaijan, <https://www.youtube.com/watch?v=ispMSktZNyg>, 14.10.12, Azeris Destroying Armenian Cemetery InJulfa - Part 1/2 <https://www.youtube.com/watch?v=GSJB6K9pSH8>, 14.10.12.

<sup>11</sup> Haghnazarian A., Julfa, The annihilation of the Armenian cemetery by Nakhijevan's Azerbaijanian authorities, p. 15, <http://www.raa.am>, 05.04.12.

<sup>12</sup> SAA, The case of Jughha, նույն տեղում։

<sup>13</sup> Beautiful Buddhist Afghanistan-Paradise Lost 3/3, <http://www.youtube.com/watch?v=X6Tcj6u1EsQ>, 18.02.13.

կրկնօրինակներ: Վերջիններս հիմնականում քարակերտ են, կան նաև այլ նյութերով ստեղծված օրինակներ՝ փայտ, մետաղ, մագաղաթ:

Խաչքարերի տեղակայման աշխարհագրությունը բավականին ընդարձակ է և դուրս է գալիս ՀՀ սահմաններից: Անդրադառնանք դրանցից մի քանիսի ստեղծման պատմությանը:

Առաջին խաչքարը վերստեղծվել է Վանաձորում խաչքարագործ վարպետ Բոգդան Հովհաննիսյանի կողմից, սեփական նախաձեռնությամբ: Խաչքարը Ջուղայի դպրոցի դասական օրինակներից է: Բնօրինակի հետ համեմատական քննությունը ցույց է տալիս դրանց գրեթե կատարյալ նմանությունը<sup>14</sup>: Վանաձորի օրինակը ուշագրավ է նրանով, որ Ջուղայի դեպքերին առաջին անմիջական արձագանքը տրվել է հենց վարպետի կողմից: Նա փորձել է զգալ և փոխանցել նախնի վարպետների հետ ժառանգորդության զգացումը, նրանց կատարողական հմտություններն ու տեխնիկան: Աշխատանքի ընթացքում զինվորական հագուստ կրելով՝ փորձել է շեշտել հակադրությունը կործանող զինվորականի և կերտող զինվորի միջև<sup>15</sup>:

Ջուղայի խաչքարերի ամենամեծաթիվ վերարտադրությունները Գյումրիում են: Տեղակայված են կենտրոնական՝ Վարդանանց հրապարակին կից պուրակում: Գաղափարը Գյումրիի նախկին քաղաքապետ Անդրանիկ Ղուկասյանինն է: Խաչքարերի կերտմանը մասնակցել են մի քանի վարպետներ, որոնց թվում՝ Անդրանիկ Ղափլանյանը, Աշոտ Սարիբեկյանը, Սարիբեկ Սարիբեկյանը, Անդրանիկ Ղուկասյանը: Խաչքարագործ Ա. Ղափլանյանի խոսքով դրանց ստեղծման հիմնական դրդապատճառը ազգային արժանապատվությունն է. «Որքան էլ կոտորեք, դարձյալ կստեղծենք»<sup>16</sup>: Գյումրիի օրինակներն աչքի են ընկնում ընտրված խաչքարերի տիպական և ժամանակագրական բազմազանությամբ: Ուշագրավ է, որ խաչքարերից շատերն ակնհայտ անհամապատասխանություն

---

<sup>14</sup> Այվազյան Ա., Ջուղայի վիմագրական ժառանգությունը, հատոր Ա, Երևան, 2004, լուս. 427:

<sup>15</sup> Խաչքարագործ Բոգդան Հովհաննիսյանի հետ հարցազրույցից, Վանաձոր, 2012, օգոստոս (այս և հաջորդ հարցազրույցները՝ Մ.Հարությունյանի):

<sup>16</sup> Խաչքարագործ Անդրանիկ Ղափլանյանի հետ հարցազրույցից, Գյումրի, 2012թ., օգոստոս:

ունեն բնօրինակների հետ: Համեմատական քննության միջոցով արձանագրված բազմաթիվ խախտումները հավաստում են, որ կատարող վարպետները սկզբունքորեն իրենց առջև խնդիր չեն դրել կրկնօրինակման մեջ հասնել բացարձակ ճշգրտության: Վարպետը նշում է անգամ իր տեխնիկական առավելությունը նախնի վարպետի համեմատ՝ հավակնելով բնօրինակի հանդեպ գերազանցության: Մա կարծես խաչքարերի կոտորածին նվիրված հուշահամալիր է՝ բաղկացած մի խումբ կոթողներից: Այլ խնդիր է, թե որքանով է տվյալ հուշահամալիրը կամ ինչպես ընդունված է անվանել «խաչքարերի պուրակը» արդարացնում իր դերն այն միջավայրում, որտեղ տեղակայված է: Գտնվելով Ամենափրկիչ եկեղեցու հարևանությամբ՝ այն միաժամանակ շատ մոտ է բնակելի շենքի բակին: Նույն եկեղեցու բակում է տեղակայված նաև երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը: 2012թ. հոկտեմբերին եկեղեցու հարակից տարածքում տեղ գտավ նաև Պոլոզ Մուկուչի արձանը՝ էլ ավելի ծանրաբեռնելով տարածքի խորհրդաբանական կերպարը: Հատկանշական է, որ Գյումրիի պարագայում որպես կորուստ կարևորվում է նաև քանակը, ուստի փորձ է արվում դա փոխարացնել կրկնօրինակների մեծ քանակի ստեղծումով: Նախատեսվում է կործանված 10 հազարից յուրաքանչյուր 100-ի դիմաց կանգնեցնել 1 խաչքար:

Երևանում՝ Ս. Հովհաննես եկեղեցու բակում, կանգնեցված են Ջուղայի տասը խաչքարերի կրկնօրինակներ: Մտահոգացումը Տեր Դանիել քահանա Բաղումյանինն է: Այստեղ կանգնեցված յուրաքանչյուր խաչքար ընտրվել է առանձնակի ուշադրությամբ՝ փորձելով ներկայացնել ջուղայական դպրոցի վերելքին բնորոշ ողջ ճոխությունը: Դրանց կանգնեցման նպատակը, ըստ վարպետ Վարազդատ Համբարձումյանի, Ջուղայի խաչքարագործական դպրոցի ավանդույթները սերունդներին փոխանցելն ու խաչքարային բազմազանությունը պահպանելն է<sup>17</sup>:

Արարատ Մարգայանը գերեզմանոցի ավերմանն արձագանքել է «Խաչքարեր» յուրահատուկ ակցիայով: Ջուղայի 10 հազար խաչքարերից 36-ը նա վերարտադրել է թղթի և մետաքսի վրա՝ գունագարդ գրքում դասավորելով այբբենական կարգով: Նախագիծը

---

<sup>17</sup> Խաչքարագործ Վարազդատ Համբարձումյանի հետ ունեցած հարցազրույցից, Երևան, 2012թ. , օգոստոս:



ներառում է նաև երկու փոքր ֆիլմ, որոնցից մեկը քանդելու մասին է, մյուսը՝ վերականգնելու: «Ազգեր կան, որոնք ինքնահաստատվում են՝ քանդելով ուրիշների արածը, ազգեր էլ կան, որոնք սարքելու մեջ են իրենց ինքնությունը տեսնում», - ասում է Ա. Սարգսյանը<sup>18</sup>: Մի ֆիլմում ցուցադրվում են այն դրվագները, որտեղ ադրբեջանցի զինվորականները հողին են հավասարեցնում հայկական գերեզմանոցը՝ փոխարենը զինվորական հրաձգարան կառուցելով, իսկ մյուս ֆիլմը պատկերում է 36 խաչքարերի երկրորդ ծնունդը՝ քայլ առ քայլ ներկայացնելով հուշարձանների պահպանված բեկորների, լուսանկարների մշակումը, թղթային հիմքի ստեղծումն ու խաչքարերի արարումը, որը տեղի է ունեցել նկարչի արվեստանոցում: Այս նախագիծը ոչ միայն պատմափաստագրական վերակենդանացում և խաչքարերի գեղագիտական որակը պահպանելու փորձ է, այլև անտարբեր չլինելու կոչ:

Խաչքարերի կրկնօրինակման շարժումն այսքանով չի սահմանափակվում: ՀՀ տարբեր մարզերում և մայրաքաղաքում տարերայնորեն հայտնվում են նորանոր կրկնօրինակներ՝ ստեղծված տարբեր վարպետների կողմից, կանգնեցված տարբեր բարերարների նվիրաբերած միջոցներով, որոնց շարքում են Բերդավան գյուղի գերեզմանատանը, Էջմիածնի Ս. Հրեշտակապետաց եկեղեցու հարևանությամբ, Գեղարդի վանական համալիրի ճանապարհին, Երևանի Ս. Ջորավոր եկեղեցու դիմաց, Խոր Վիրապի տարածքում կանգնեցված խաչքարերը: Մեր ներկայացրած ցանկը չի հավակնում տալ Ջուղայի խաչքարերի կրկնօրինակների ամբողջական ցուցակը, քանի որ այդ գործընթացն ակտիվորեն շարունակվում է:

Ջուղայի խաչքարերի կրկնօրինակման հանդեպ համընդհանուր ոգևորության մեջ հաստուկ ուշադրության է արժանի այն, որ սկսած 2013 թ.-ից բազմաթիվ օրինակներ իրենց հանգրվանն են գտնում ՀՀ սահմաններից դուրս՝ ծառայելով որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողներ: Ասվածի վկայությունն են Ռուսաստանում, Ռումինիայում, Ֆրանսիայում, Վրաստանում, Իրաքում, ԱՄՆ-ում, Իտալիայում, Արգենտինայում կանգնեցված խաչքարերը: Ներկայացնենք դրանցից երկուսը.

---

<sup>18</sup> Հախվերդյան Ն., Քանդվող և վերականգնվող խաչքարեր, <http://www.arm-town.com/news/am/168/20060920/7287/>, 20.11.2006:

ԱՄՆ-ի Կոլորադո նահանգի Դենվեր քաղաքում Հայոց ցեղասպանության 100-ամյակի հիշատակության միջոցառումների շրջանակում առանցքային դեր ստացավ Ջուդայի խաչքարի կրկնօրինակի բացումը, որի շուրջն էլ ծավալվեց հետագա ողջ միջոցառումը: Խաչքարի կանգնեցման նախաձեռնությունը ամերիկաբնակ հայազգի քաղաքագետ և մարդու իրավունքների պաշտպան Միմոն Մադաքյանինն է: Վերջինս բացման ժամանակ իր զգայական ճառում նշում է. «Չկա որևէ կայսրություն, բիբլիական ջրհեղեղ, կամ ցեղասպանություն, որն ի գործ է կասեցնել մեզ ստեղծելուց և վերականգնելուց»:

2015թ. ապրիլի 11-ին Իտալիայի Նեապոլ քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում տեղի ունեցան Ջուդայի խաչքարերից մեկի կրկնօրինակի բացումը և օծումը: Այս իրադարձությունը իր մասնակիցների կազմով, օծման արարողությամբ և գաղափարական հիմքով դարձավ խաչքարերի կրկնօրինակման գործընթացի բարձրակետը՝ ամփոփելով և ամբողջացնելով այն տրամաբանությունն ու հոգեբարոյական դրդապատճառները, որոնք ընկած են գերեզմանոցի ավերումից առ այսօր այդ ուղղությամբ կատարված բոլոր գործողությունների հիմքում: Խաչքարն օծեց Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը: ՀՀ Նախագահ Մերժ Սարգսյանն այդ առիթով ունեցած ելույթում նշեց. «Բուպեններ առաջ Մուրբ Գրիգոր Լուսավորչի անունը կրող այս հրապարակում ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական ժառանգություն ճանաչված հայկական խաչքարի տեղադրումը եկավ լրացնելու Հռոմում, Միլանում, Պադուայում, Բարիում և աշխարհի տարբեր անկյուններում գտնվող Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշակոթողների շարքը՝ որպես խոստուն վկա այն ոճրագործության, որ մեկուկես միլիոն անմեղ կյանք խլեց: Նրանցից շատերն այդպես էլ չիրիմ չունեցան, և հենց այս է պատճառը, որ նման հուշարձանների առավել կարևոր առաքելությունն այն է, որ դրանք դառնում են նրանց հիշատակի յուրատեսակ հանգրվան: Իսկ այս խաչքարի խորհուրդն ավելին է, քանզի դրա բնօրինակը նույնպես անխնա ոչնչացվել է՝ Նախիջևանի մնացյալ խաչքարերի շարքում՝ զոհ գնալով Ադրբեջանի կողմից իրականացված մշակութային ցեղասպանությանը: Այս հանցագործություններն ունեն մեկ նպատակ՝ ոչնչացնել հազարամյա մշակույթներ, ջնջել ժողովուրդների հիշողությունը: Իսկ մարդկային

հիշողությունը հավերժ է այնքան, քանի դեռ առկա են այդ հիշողությունը կրողներն ու փոխանցողները»<sup>19</sup>:

Յեղասպանության 100-ամյա տարելիցին է նվիրված նաև «Մշակութային եղեռն-խաչքարերի խորհուրդը» խորագրով բացօթյա ցուցահանդեսը Երևանում, որում ներկայացված են Ջուղայի խաչքարերի 12 կրկնօրինակներ՝ վերարտադրված խաչքարագործ վարպետ Արտակ Համբարձումյանի կողմից: Այս խաչքարերը ևս նախատեսված են՝ արտերկիր տանելու համար:

Հատկանշական է, որ Ջուղայի խաչքարերի ավերման փաստի հանրային արձագանքը բերեց նրան, որ դրանցով սկսեցին հետաքրքրվել նաև օտարերկրացիները: 2015 թ. ապրիլի 28-ին ԵՊՀ-ում կայացավ «Ջուղայի խաչքարային դաշտի հայրենադարձությունը» ծրագրի և «Նոյի երկրում. ճամփորդություն ետեղեռնյան Հայաստանում» գրքի ներկայացումը: Ծրագրի հեղինակն է ավստրալացի գիտնական Ջուդիթ Քրիսպինը: Վերջինս, Ջուղայի խաչքարերի ավերման մասին տեղեկանալով, մեծապես ազդվել է և ձեռնամուխ եղել Բամիանի Բուդդաների օրինակով իրականացնելու խաչքարերի լազերային վերականգնման ծրագիրը: Այն հնարավորություն կտա թվային տեխնոլոգիաների միջոցով հայտնվելու Ջուղայի գերեզմանադաշտում, եռաչափ ֆորմատով տեսնելու շուրջ 2000 խաչքարեր, ծանոթանալու դրանց պատմությանը, պատկերագրությանը: Ծրագիրը նախատեսում է ունենալ վերականգնված երեք օրինակ, որոնցից մեկը կներկայացվի Սիդնեյում, հաջորդը՝ Երևանում, իսկ երրորդը՝ նախատեսված կլինի աշխարհի տարբեր երկրներում ցուցադրելու համար: Ուշագրավ էր Ջ. Քրիսպինի՝ ԵՊՀ-ում ունեցած բանախոսության ժամանակ հնչեցրած միտքը, որ եթե գերեզմանադաշտի ավերումով աղբրեջանական իշխանությունները նպատակ ունեին մեկընդմիջտ մոռացության մատնելու այդ խաչքարերը, ապա այժմ լազերային վերականգնման շնորհիվ դրանց մասին կիմանա ողջ աշխարհը:

Վերը ներկայացված նկարագրությունները թերի կամ գուցե շատ վերամբարձ կմնային, եթե չանդրադառնայինք այս գործընթա-

---

<sup>19</sup> Հայերն այսօր, ՀՀ Սփյուռքի նախարարության պարբերական, ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի խոսքը Նեապոլում խաչքարի բացման և Սբ. Գրիգոր Լուսավորչի մասունքների վերադարձի կապակցությամբ <http://hayernaysor.am/2015/04/11/>, 5.13.2015.

ցի կոմերցիոն կողմին: Այնուամենայնիվ, ինչը հանգեցրեց Ջուդայի խաչքարերի կրկնօրինակման նման ծավալների: 2006թ. մարտի 20-ին ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց 2003 թ. հոկտեմբերի 17-ին Փարիզում ստորագրված ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիան: 2010թ. խաչքարագործությունը ընդգրկվեց «Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության» ցանկ: Վերջին հանգամանքը կարծես էլ ավելի արժևորեց խաչքար երևույթը: Ջուդայի դեպքերն էլ ուղղակիորեն ազդեցին այս ոլորտում նոր նախապատվությունների ձևավորման վրա: Պետք է նշել, որ բացառությամբ մի քանիսի, բոլոր օրինակները կրում են պատվիրատուների կամ վարպետների անունը: Առկա է փոխշահավետ համաձայնություն. պատվիրատուն տալիս է հանրության կողմից անվիճարկելիորեն դրական գնահատվող պատվեր, իսկ վարպետը, առանց ստեղծագործական ջանքերի նույն գումարով, երբեմն էլ սովորականից ավելի մեծ գումարով ստեղծում է կրկնօրինակ խաչքար: Այսինքն՝ Ջուդայի կրկնօրինակ կանգնեցնելը որոշակի խավի կողմից ձեռք է բերում պրեստիժային կարգավիճակ, ինչն էլ պայմանավորում է կրկնօրինակման նման խոշոր ծավալները: Պետք է նշել, որ բացի քարակերտ հուշարձաններից, Վերնիսաժում մեծ տարածում են գտնում ջուդայական թեմատիկայով հուշանվերները, փայտե և այլ նյութերից պատրաստված մանրակերտերը:

Ամփոփելով Ջուդայի խաչքարային դաշտի ավերումից հետո ընկած գործընթացը՝ կարող ենք բաժանել այն երեք փուլի: Առաջինն ավերմանն անմիջապես հաջորդած ընթացքն է, որի ժամանակ հիմնական խնդիրը կատարված փաստի օբյեկտիվ իրավական գնահատումն է, որն է մշակութային գենոցիդ, ու այդ մասին հայ և միջազգային հանրությանը և համապատասխան մարմիններին հնարավորինս իրազեկելը: Երկրորդ փուլում տեսնում ենք ինքնեկ նախաձեռնությունների արդյունքում, հիմնականում մեկ գաղափարի տակ ամփոփված, որն է կործանմանը արարումով հակազդելը, առաջին կրկնօրինակների ի հայտ գալը: Երրորդ փուլում նորակերտ խաչքարերին տրվում է գաղափարական նոր իմաստ՝ ծառայել որպես Մեծ եղեռնի հուշակոթողներ, որին այդ հուշարձաններն առավել քան համապատասխանում են՝ ստեղծված լինելով որպես մշակութային ցեղասպանության արգասիք:

Ի լրումն ամենի՝ պետք է ցավով արձանագրել, որ անկախ կրկնօրինակման ծավալներից, տեղակայման աշխարհագրությունից, ներգրավված անձանց զբաղեցրած դիրքերից, այս գործընթացի դերը սահմանափակվում է լոկ հայ և օտարազգի միջավայրում փաստի իրազեկմամբ, խաչքարերի հանրահռչակմամբ՝ Ջուղայի մշակութային գենոցիդի ճանաչման և դատապարտման խնդիրը թողնելով չլուծված:

*MARIANNA HARUTYUNYAN (ARMENIA)*

**THE EXAMINATION OF THE PROCESS OF RECREATING  
THE MONUMENTS SUBJECTED TO CULTURAL GENOCIDE  
THROUGH AN EXAMPLE  
OF THE NEW KHACHQARS OF DJUGHA**

1998-2006 the medieval graveyard of Djughha with its marvelous khachqars was completely destroyed. The process which lies after the full destruction can be divided into three phases. The first phase is the process immediately following the destruction, the main concern of which was to give the objective legal assessment what constitutes cultural genocide, and to inform about it to the national and international community and relevant organizations. In the second phase there can be seen the first replica examples which are no more than reasons of personal, spontaneous initiatives. Mostly all of them are combined under the one idea which is to counteract to the destruction by creating. In the third phase a new ideological meaning is given to the newly created cross stones, to serve as monuments of Armenian Genocide, to which they more than correspond since being created as a result of cultural genocide. In addition to all these one can enlist with sorrow, that in spite of quantity of replicas, their replacement, the high position of involved people, the role of this process is limited only by informing about the fact and popularizing khachqars, leaving the problem of recognition and condemnation of Djughha's cultural genocide unsolved.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՌ ՎԿԱՆ

Անի քաղաքը ոչ միայն Հայաստանի նշանավոր մայրաքաղաքն էր, երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոնը, Առաջավոր Ասիայի ամենահայտնի քաղաքներից մեկը, այլև մի ամբողջ համակարգ՝ շրջապատող ամրոցներով և վանքային համալիրներով:

Դրանցից մեկը Խծկոնքի վանքային համալիրն էր, որի համբավը, ինչպես և Անիի, տարածված էր Հայաստանի սահմաններից դուրս՝ միջնադարյան աշխարհով: Այն կառուցված էր հայկական ճարտարապետության հիմնական հորինվածքային կանոնների համաձայն. ներդաշնակությունը և միասնությունը հատուկ էին ոչ միայն համալիրի առանձին շինություններին, այլև ամբողջ կառուցվածքային խմբին, որը զարմանալի ամբողջական էր և համահունչ շրջակա միջավայրի հետ: Եվ այդ միջավայրն էլ պատահական չէր. քաղաքներ կամ վանքեր կառուցելիս մեր նախնիները մշտապես մեծ նշանակություն էին տալիս տեղի ընտրությանը: Խծկոնքի դեպքում դա Տեկոր գետի կիրճի ձախ կողմի լանջի երեք ժայռահարթակներն էին, որոնց վրա գրեթե կողքկողքի կանգնած եկեղեցիները դիտվում էին միջավայրի և միմյանց հետ այնպիսի օրգանական կապի մեջ, կարծես ժայռից դուրս եկած՝ դրա անբաժանելի մասը լինեին:

Համալիրը բաղկացած էր հինգ եկեղեցիներից՝ Ս. Աստվածածին, Ս. Կարապետ, Ս. Ստեփանոս, Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Սարգիս՝ միակը, որն այսօր պահպանվել է վանքի գլխով անցած արհավիրքներից հետո: Ս. Աստվածածին, Ս. Կարապետ և Ս. Սարգիս եկեղեցիները կանգնած էին կողքկողքի, մի փոքր դեպի արևելք տեղադրված էր Ս. Ստեփանոսը, իսկ Ս. Լուսավորիչը՝ նույն ուղղությամբ մոտ 300-350 մ հեռավորության վրա:

Թեև ստույգ թվագրություն ունի միայն Ս. Սարգիս եկեղեցին, մյուս եկեղեցիներն իրենց ճարտարապետական և կառուցողական առանձնահատկություններով թույլ են տալիս թվագրել ողջ համալիրը զարգացած միջնադարի առաջին հատվածով՝ Բագրատունիների ժամանակաշրջանով: Ըստ Թ. Թորամանյանի՝ եկեղեցիներից ամենավաղը Ս. Կարապետն է, որը կառուցվել է X դարից ոչ ուշ: Ինչ

վերաբերում է Ս. Սարգսի կառուցման տարեթվին, ապա այն թվագրվում է պատի վրայի արձանագրությամբ, որտեղ նշված է կառուցման հստակ տարեթիվը՝ 1033 թվականը: Արձանագրության շնորհիվ հայտնի է նաև հայկական ճարտարապետական այս գլուխգործոցներից մեկի կառուցողի անունը. նա հայտնի Վեստ Սարգիսը կամ Սարգիս Սյունեցին է, որը հիշատակվում է նաև Հայկազուն մեծ Սարգիս անվամբ՝ XI դարի հարուստ ու ազդեցիկ հայ ազնվական և քաղաքական գործիչ, թագավորի խնամակալ: Պատմությունից հայտնի է, որ նա կողմնակիցն է եղել Բյուզանդական կայսրության տիրապետությունը Հայաստանում տարածելու և մեծ աշխատանք է տարել այդ ուղղությամբ: Նրա միջնորդությամբ Հովհաննես-Սմբատ արքայի կողմից կնքվել է Անիի թագավորությունը Բյուզանդիային կտակելու թուղթը, որը ճակատագրական նշանակություն ունեցավ Անիի հետագա պատմության համար: Կարճատև ժամանակ՝ մինչև թուրք-սելջուկների հարձակումը, երբ Բյուզանդիան միայնակ թողեց անեցիներին այդ անհավասար պայքարում, Վեստ Սարգիսը Պետրոս Գետադարձ կաթողիկոսի հետ գլխավորում էր Անիում գործող բյուզանդամոլ կուսակցությունը: Սակայն պատմության մեջ տխուր հռչակով հայտնի այս մարդուն կարելի է ինչ-որ տեղ արդարացնել, քանի որ նա, ըստ երևույթին, գործում էր համաձայն իր անկեղծ համոզմունքի՝ իր պատկերացմամբ ելնելով Հայաստանի շահերից: Մի կողմ դնելով պատմական իրադարձությունները՝ կարող ենք ասել, որ կառուցելով Խճկոնքի Ս. Սարգիս բարձրարվեստ եկեղեցին՝ հայկական ճարտարապետության պատմության մեջ նա լուսավոր հետք է թողել:

Տիպային տեսակետից բոլոր եկեղեցիներն էլ գմբեթավոր էին, սակայն Ս. Աստվածածինը, Ս. Ստեփանոսը և Ս. Լուսավորիչը պատկանում էին խաչագմբեթ տիպին, իսկ Ս. Կարապետը և Ս. Սարգիսը քառախորան կենտրոնագմբեթ էին: Սակայն նույնիսկ միևնույն տիպին և ենթատիպին պատկանելով՝ դրանք տարբեր էին իրենց մանրամասներով՝ թե՛ հատակագծային, թե՛ ծավալատարածական հորինվածքներում: Խաչագմբեթներից միայն Ս. Ստեփանոսն ուներ ավանդատներ արևելյան կողմում, իսկ Ս. Աստվածածինը՝ որմնախորշեր ճակատներին, որոնցից գուրկ էր Ս. Լուսավորիչը: Ներդաշնակ համաչափություններով, վեղարով պսակված հարթ գլանաձև թմբուկներով այս եկեղեցիների ծավալներն ամ-

բողջական էին և, ինչպես ընդունված էր այդ շրջանի ճարտարապետության մեջ, կարծես հավաքված ուղղաձիգ առանցքի շուրջ:

Թե՛ հատակագծային լուծումով, թե՛ ծավալատարածական հորինվածքով բոլորովին այլ էին Ս. Կարապետ և Ս. Սարգիս եկեղեցիները. քառախորան կենտրոնագմբեթ, անկյուններում՝ չորս խորաններով այս եկեղեցիներն էլ տարբերվում էին միմյանցից կարևոր մանրամասներով. եթե Ս. Կարապետի չորս խորանները դուրս էին գալիս ընդհանուր ծավալից եռանիստ զանգվածներով, ապա Ս. Սարգիս եկեղեցու քառախորան հորինվածքն ամբողջովին ներգծված է շրջանագծին մոտեցող քսանանիստ ծավալի մեջ: Ս. Կարապետի հովհարաձև վեղարով գմբեթի ութանիստ թմբուկի բոլոր նիստերին լուսամուտներ են տեղադրված, իսկ նիստերի անկյուններն ընդգծող հյուսածո որմնասյուները կարծես իրենց վրա են կրում նիստերը պսակող ճակտոնները:

Թե՛ չափերով, թե՛ իր հարդարանքով ու վեհ կերպարով ամբողջ հուշարձանախմբի մեջ հատուկ տեղ էր գրավում Ս. Սարգիս եկեղեցին: Դրա առաջին հարկաբաժնի բոլոր նիստերը միավորված են դեկորատիվ կամարաշարերով, իսկ հովհարաձև վեղարը կրող տասնիստանոց թմբուկի վրայի նույն կրկնակի որմնասյուները հենարան են արդեն ճակտոնների համար: Իր երկհարկանի կերպարով այս եկեղեցին, ինչպես և չափերով զգալի փոքր Ս. Կարապետը, հիշեցնում են Զվարթնոցի տաճարը: Կարծում ենք՝ այստեղ ո՛չ միայն ճարտարապետական աղերս կա, մանավանդ Ս. Սարգիսի դեպքում այս նմանությունը պատահական չէ. շատ հնարավոր է, որ բյուզանդամետ Վեստ Սարգիսը ցանկություն է ունեցել իր կառուցած եկեղեցում տեսնել քաղկեդոնական նշանավոր տաճար Զվարթնոցի կերպարը:

Ինչպես այլ վանքային համալիրներում, Խծկոնքում էլ կային բարձր գեղարվեստական արժեք ունեցող ճարտարապետական փոքր ձևեր՝ խաչքարեր: Կային նաև տնտեսական նշանակության բազմաթիվ օժանդակ կառույցներ:

Խիստ ու հզոր ժայռերի շրջապատում կանգնած զարմանալի համալիրը՝ եկեղեցիներով ու բոլոր շինություններով, այնքան զորեղ էր իր մոնումենտալ զանգվածայնությամբ և միաժամանակ նրբին ոգեղենությամբ, որ կարող էր բնական լանդշաֆտի և ճարտարապետության միասնության ու ներդաշնակության օրինակ ծառայել:



Հայ բնակչության տարհանումից հետո՝ 1920-ականներին, վանքի տարածքը թուրքական իշխանությունների կողմից հայտա-րարվեց ռազմական գոտի, և արդեն 1959 թվականին ճարտարա-պետական փայլուն համալիրից մնաց միայն Ս. Սարգիս եկեղեցին՝ այն էլ խիստ վնասված վիճակում: Մնացած բոլոր կառույցները, ըստ մոտակա գյուղերի բնակիչների վկայությունների, պայթեցվել են իշխանությունների հրահանգով:

Իսկ կիսավեր Ս. Սարգիսը կանգնած է երբեմնի փառահեղ շինություններով զբաղեցված, այժմ դատարկ տարածքում՝ որպես համամարդկային մշակութային արժեքների դեմ կատարված ոճրա-գործության հուշարձան:

*ANUSH TER-MINASYAN (ARMENIA)*

## **SILENT WITNESS OF CULTURAL GENOCIDE**




The famous medieval capital of Armenia - Ani, was not only a political, economic and cultural center of the country and one of the largest cities in the Near East, but also a whole complex with the surrounding castles and monastery complexes.


One of the "satellites" of Ani was Khtskonq monastery complex, which was built in accordance with the basic compositional principles of medieval Armenia: the harmony and unity of all buildings and structures throughout the group, as well as organic unity of the whole complex with the surrounding landscape.

The complex consists of five churches, one of which - St. Gregory the Illuminator, was a bit further - at a distance of 300-350 meters in the same direction as the other churches.

All the churches were domed, but they are distinguished by plane and volume-spatial compositions and other details.


In the 20<sup>th</sup> years of the 20th century the whole area was declared a military zone by the Turkish authorities, and by 1959 on the place of the brilliant Monastery complex there was only one church of St. Sargis, and that in a very destroyed condition, as a silent witness to the greatness of the human spirit and the crimes, committed against humanity and the cultural values, created by it.











*АРМЕН КАЗАРЯН (РОССИЯ)*

## **АРМЯНСКАЯ РУИНА В КУЛЬТУРНОМ ЛАНДШАФТЕ ТУРЦИИ. СУДЬБА И БУДУЩЕЕ МРЕНСКОГО СОБОРА**

Массовое уничтожение памятников материального культурного наследия армянского народа на территории турецкой части Армянского нагорья, в Киликии и Анатолии, осуществлявшееся, главным образом, в 1950-60-е годы, и геноцид армян 1915-21 годов – явления неодновременные, но имеющие причинно-следственную связь.

Геноцид армян в Османской империи и в прилегающих к ее восточным границам армянских областях осуществлялся с целью физического истребления этноса, сопровождался разграблением материального наследия и разрушением многих построек армян. Основная масса монастырских ансамблей и храмов тогда сохранилась, но, оказав-

шись без внимания, в абсолютном пренебрежении, памятники армянской архитектуры ветшали и с трудом противостояли природной стихии. Их массовое намеренное разрушение началось с середины 1950-х годов в большинстве восточных вилайетов Турецкой республики под разными предлогами и при активном участии турецкой армии<sup>1</sup>. Особенно активно процесс разрушения, часто сопровождавшийся применением подрывов, происходил в Карсской области, вдоль границы с Армянской ССР. Глубинные причины этих акций «белого геноцида» или этноцида еще предстоит изучить, причем не только историкам архитектуры, но и инженерам, специалистами по праву, политике и психоанализу. В основе этого кощунственного явления можно усматривать все атрибуты вандализма, а также отражение состояния турецкого правительства и общества в десятилетия, следующие за окончанием Второй мировой войны. Явление отягощалось одновременным запретом посещения исторических армянских земель Турции с целью изучения состояния архитектурного наследия и вообще с намерением исследования памятников культуры региона.

Следует признать, что разрушения памятников в Восточной Турции имеют аналоги в истории XX века. Эти явления, и особенно турецкий пример, вдохновляют вандалов XXI века – талибов Афганистана, правительство Азербайджана, лидеров так называемого Исламского государства – к массовому уничтожению культурного насле-

---

<sup>1</sup> О состоянии армянского наследия в Турции и о фактах разрушения церквей и монастырей см.: М.М. Асратян, Уничтожение памятников армянской архитектуры. Армянский вопрос. Энциклопедия. Под ред. К.С. Худавердяна и др. Ереван, 1991. С. 241-242; R. Bevan, *The Destruction of Memory: Architecture at war*, London 2006, p. 56-59. Факты изложены также: P. Cuneo, *Architettura Armena dal quarto al diciannovesimo secolo* (Con testi e contribute di T. Breccia Fratadocchi, M. Hasrat'yan, M.A. Lala Comneno, A. Zarian). Vol. 1-2. Roma, 1988, p. 620-649; <http://www.virtualani.org>; S. Karapetyan, *Ani – 1050. Illustrated album*. Yerevan, 2011; А.Ю. Казарян. Памятники христианской архитектуры Восточной Турции: новые данные: Вестник Российского гуманитарного научного фонда. № 1 (46). Москва, 2007. С. 144-153. А.Ю. Казарян, Состояние памятников армянской архитектуры и вопросы их охраны: Вестник «Зодчий. 21 век». № 1 (21). 2006. С. 76-81; A. Kazaryan, *National and political problems in the history of architectural history of medieval Armenia and Southern Caucasus*, in: *History of Art History in Central, Eastern and South-Eastern Europe*. Vol. 1. Torun: Society of Modern Art & Tako Publishing House, 2012. P. 119–125; и др.

дия народов, на исторических территориях которых созданы новые, признанные или непризнанные государства с открыто декларируемой или скрываемой идеологией национализма и религиозного шовинизма. Объективный подход к освещению истории требует вспомнить и об уничтожении большевиками христианских церквей в 20-50-е годы XX века. А если углубиться в древнюю историю, то нельзя не вспомнить фактов уничтожения храмов и целых городов в античную эпоху, разрушения античных святилищ ранними христианами, в том числе и в Армении времен миссионерства Григора Лусаворича, не оставившего ни одного языческого храма, за исключением, возможно, Гарнийского.

Подобными массовыми разрушениями построек, особенно культовых, характеризуются смены эпох при столкновениях цивилизаций. Как правило, восходящие на Олимп власти более низкие по своему культурному развитию и до того момента еще ничего существенного не создавшие прослойки общества жаждут уничтожения наследия своих предшественников. Можно также заметить, что во все времена такое уничтожение не носило спонтанного характера, а задумывалось для осуществления конкретной цели, связанной с желанием изменить облик окружающего пространства, стремлением лишить общность или его часть самой среды своего существования и, тем самым, лишить все последующие поколения исторической памяти.

Эпизод истории XVII века, связанный с депортацией армян с их исторической родины в Новую Джульфу у столицы Ирана Исфахана, свидетельствует о том, насколько древние правители понимали и ценили силу освященного исторической традиции культового здания. Намерение иранского шаха Аббаса перенести в 1614-15 гг. Эчмиадзинский собор на новое место проживания армян, по его мнению, лишило бы переселенцев стремления к возвращению в Армению<sup>2</sup>. Уничтожение памятников армянской культуры в XX веке в Турции имело другую цель, несмотря на то, что оно также было связано с осознанием разрушителей ценности построек и их роли в формировании особой атмосферы среды. Этой целью было тотальное уничтожение исторических следов армянской культуры на географическом пространстве ее сложения и развития.

---

<sup>2</sup> Аракел Даврижеци. “Книга историй”. Перевод с армянского, предисловие и комментарии Л.А. Ханларян. Москва: изд. «Наука», 1973. Гл. 17, § 210-214. С. 180-182.

В результате этой политики, расцвет которой пришелся на 1950-60-е годы, сотни памятников архитектуры были стерты с лица земли самыми разными способами и при участии разных групп турецкого общества, в том числе армейскими подразделениями. Среди уничтоженных или значительно пострадавших построек немало шедевров мирового значения. Следует учитывать, что именно на подвергшейся разрушениям территории на самых восточных окраинах Турецкой республики в Средние века располагался центр Анийского царства, а ранее – один из самых интересных очагов развития раннесредневековой архитектуры. В частности, абсолютно были разрушены первая из известных крестовокупольных построек с четырьмя столбами – церковь-мартирий Св. Саргиса в Текоре (480-е гг.), храм Св. Теодороса в Багаране (624-631), ансамбль культовых сооружений в Агараке (V-VII вв.), крестообразная церковь в Аламане (637), храм VII в. у гробницы князей Камсараканов в Нахчеване<sup>3</sup>, кафедральные соборы Армянской Церкви в Еразгаворсе (898) и Аргине (972–985), монастырский ансамбль Арджо-Арича, ряд построек монастыря Багнайр и многие другие. Целенаправленному разрушению подвергся монастырь Хцконк, четыре церкви которого были взорваны, а пятая, самая большая, многократно подрывалась и в ужасающем состоянии пребывает почти столетия<sup>4</sup>.

---

<sup>3</sup> Об архитектуре этих раннесредневековых храмов с подробной библиографией см.: Թ. Թորոնյան, Նյութեր հայկական ճարտարապետության ցանկության, հ. 1-2, Երևան, 1942-1948; М.М. Асратян. “Армянская архитектура раннего христианства”, Москва. Инкомбук, 2000; P. Donabédian, L’âge d’or de l’architecture arménienne VIIe siècle, Marseille: Parenthèses, 2008, p. 108-110, fig. 163-169; А.Ю. Казарян. “Церковная архитектура стран Закавказья VII века: Формирование и развитие традиции”. 4 тома. Москва: Locus Standi, 2012-2013.

<sup>4</sup> О степени разрушений памятников этой зоны, в частности, см.: А.Ю. Казарян, От Арджо Арича до Мрена. Судьба памятников в окрестностях Текора между экспедициями 1920 и 2013 годов. Вопросы арменоведения. № 3. Ереван, 2015. С. 65-76.





1. Собор в Мрене – единственный храм VII века, сохранившийся на востоке Турции. Общий вид с юга после частичного обрушения конструкций в 2008 г.  
Фото А. Казаряна, 2015

Сейчас происходят очевидные изменения в международной политике, и очень осторожно, но уже на высоком уровне фиксируется факт произведенных массовых разрушений, что фактически подтверждает осуществление этноцида на исторических армянских землях Турции. Это стало возможным, благодаря работе международных экспедиций с целью мониторинга состояния памятников в восточных провинциях страны и обсуждения мер по спасению аварийных построек, которые организуются Всемирным фондом памятников, международными и турецкими научными и общественными организациями с 2013 года; ранее, с 2008 года, подобная работа и реставрационная деятельность были сосредоточены только в пределах Ани, средневековой столицы Армении. Многое нам было известно и до этих экспедиций, благодаря многолетней работе западных и армянских коллег, в результате собственных командировок автора. Теперь открывается полноценная картина утрат, устанавливается степень повреждений, причиненных чудом сохраняющимся памятникам, выстраивается приоритетность в производстве срочных работ по их спасению. Примечательно, что если рань-

ше об этих утратах мирового наследия мы могли узнавать из редких изданий, важнейшим из которых являлась книга «Геноцид армян. Энциклопедия» со статьей М. Асратяна, то теперь об этих фактах пишут в официальных международных заключениях и даже в турецкой прессе. Представляется полезным брошюра «Ани в контексте», по сути своей – документ о состоянии памятников вдоль границы с Арменией по течению реки Ахурян<sup>5</sup>.



2. Собор в Мрене. Вид западной стены. Фото А. Казаряна, 2015.

Экспертным решением рабочей группы «Ани в контексте» (2013) выделены четыре памятника, спасение которых от полного разрушения признано первоочередной задачей Всемирного фонда памятников. Среди них – собор в Мрене, церковь Сурб Саргис Хцконка, жаматун монастыря Оромос, крепость Тигнис. В июне 2015 г. Всемирным фондом памятников (WMF) была организована специальная экспедиция в Мрен, позволившая нам подробнее изучить проблему этого памятника. Туда

---

<sup>5</sup> Ani in Context Workshop (September 28 – October 5, 2013, Kars, Turkey), New York: World Monuments Fund, 2014.

же прибыл консул США в Анкаре, что свидетельствует об интересе этой страны к состоянию армянских памятников на востоке Турции.

Мренский собор, возведенный в 639 году правящим ишханом Армении Давидом Сахаруни во владениях Камсараканов, – единственное чудом сохранившееся сооружение VII века в провинции Карса. Мрен – это особо ценный памятник не только как одно из самых интересных архитектурных сооружений крестово-купольного типа с четырьмя столбами, один из самых ярких образов высоченного интерьера и впечатляющего внешнего силуэта. Памятник отличается особенностями строительной техники, великолепной кладки и частично сохранившейся черепичной кровли<sup>6</sup>. Мренский храм ценен и своей эпиграфикой, и надписями краской по внутренней штукатурке<sup>7</sup>. Среди эпиграфики – большая строительная надпись, а также обнаруженная мной короткая надпись о средневековом ремонте. Собор ценен великолепной росписью, вероятно первой среди частично сохранившихся росписей на постройках VII века в Армении. Выразительны и рельефы, в числе которых – ктиторские композиции на порталах<sup>8</sup>.


---

<sup>6</sup> Об архитектуре собора см.: J. Strzygowski, *Die Baukunst der Armenier und Europa*. Bd. 1–2. Wien: Anton Schroll & co G.M.B.H., 1918. S. 182-184, 278-279, 429-431, 506-508; Թ. Թորանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխ. երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 187-191. Н. Токарский. “Архитектура древней Армении”, Ереван. Изд. АН Арм. ССР, 1946, с. 62-67; Т. Scalesse, *La cattedrale di Mren in Armenia*, “Corsi di cultura sull’arte ravennate e bizantina”, XX, Ravenna, 1973, p. 383-396; Асратян, Армянская архитектура, 2000, С. 34, 158, 350; Казарян. “Церковная архитектура стран Закавказья”. Т. 2, 2012, с. 35-42, 164-183; Ա. Ղազարյան, Կ. Մաթևոսյան, Մրենի եկեղեցու շինարարական առանձնահատկությունները, վարպետանշանները և որոշ վիմագրեր. ՊԲՀ, 2015, հ. 3, и др.

<sup>7</sup> О надписях на стенах собора см.: Ն. Մարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 194-200; И.А. Орбели. Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторские надписи VII века. И.А. Орбели, “Избранные труды”, Ереван, изд. АН Арм. ССР, 1963, с. 395-401 (Первое изд. Христианский Восток, т. 2, вып. 1, Санкт-Петербург, 1913/14, с. 132-138); Ս. Կարապետյան, Մրենը և նրա հուշարձանները. Վարձք. հ. 7. էջ 31-63; Ղազարյան, Մաթևոսյան, Մրենի եկեղեցու շինարարական առանձնահատկությունները, 2015.

<sup>8</sup> M. et N. Thierry, *La cathédrale de Mren et sa décoration*, in : *Cahiers Archeologiques*. T. 21. 1971. P. 43-77; Ch. Maranci, *Building Churches in Armenia: Art at the Borders of Empire and the Edge of the Canon*, in: *The Art Bulletin*, 2006, n. 4, p. 656-675; Ch. Maranci, *New Observations on the Frescoes at Mren*, in: *Revue des études arméniennes*, t. 35, 2013, p. 203-225; Ch. Maranci, *Vigilant Powers: Three Churches of Early Medieval Armenia*. Turnhout: Brepols, 2015, p. 23-111; и др.

Однако этот шедевр архитектуры и искусства мирового значения оказался в удручающем состоянии. Результаты исследования состояния памятника со стороны автора статьи и коллег по экспертным группам 2013 и 2015 годов выявили следы умышленного ослабления несущих конструкций храма, как первопричины разрушения южной стены в 2008 году и как источника угрозы полного обрушения памятника в ближайшее время. В частности, по всему периметру внешних стен вандалами изъятый внешний и внутренний слои кладки до достигаемой высоты, а также до той же высоты выкорчеваны каменные блоки их нижней части столбов. Местами в стенах отсутствует и слой бутобетона, из-за чего верхняя часть стен словно повисает. Опасны многочисленные трещины в сводах и стенах, одна из которых проходит по всему северо-западному углу здания. Благодаря активной позиции экспертов, Мренский собор в 2014 г. внесен в список Всемирного фонда памятников (WMF)<sup>9</sup>.



3. Состояние интерьера Мренского собора. Фото А. Казаряна, 2015.

---

<sup>9</sup> <http://www.wmf.org/watch/project-map>

Следует напомнить, что храм уже не одно десятилетие находится на территории турецкой военной базы, и длительные усилия по уничтожению памятника могли осуществляться либо самими военными, либо при их поощрении. Дополнением и подтверждением факта умышленного разрушения стен и столбов собора служит полное уничтожение других средневековых памятников Мрена, известных в относительной сохранности еще в начале XX века. Это – дворец Сахматина (1261) и мемориальный памятник XIII века, содержащий группу хачкаров.



4. Мрен. Обломок хачкара у разрушенного мемориального памятника XIII века.  
Фото А. Казаряна, 2015.

Поскольку Мрен находился в пограничной зоне, трудно установить (возможно при знакомстве с засекреченными документами воен-

ного министерства) время уничтожения одних его памятников и порчи собора. Очевидно, это произошло тогда, когда турецкими военными были уничтожены храмы Хцконка, Ширакавана и Аргины, Аламана и Агарака, то есть в 1950-60-е годы. До того, на протяжении трех десятилетий после геноцида армянского народа на эти величественные постройки не обращалось особого внимания. Разграбленные, частично изуродованные фанатиками, они продолжали играть свою традиционную роль в ландшафте исторических армянских областей. Только по завершению Второй Мировой войны и после того, как в мире поднялся вопрос о признании геноцида армян, турецкие власти обеспокоились и занервничали. Уничтожение неиспользуемого материального наследия некогда проживавшего на данной территории народа – явный признак проявления нервозности. Возможно, эта акция была и средством политического шантажа как руководства Армянской ССР, так и организаций армянской диаспоры.

Уничтожение армянских монастырей и храмов – это также свидетельство того, что турецкое правительство начало осознать силу памятников армянской культовой архитектуры, как построек, издавна оформлявших ландшафт восточных вилайетов страны и придающих ему очень конкретную «армянскость». Разрушение памятников, таким образом, – это спланированное уничтожение исторического ландшафта.

К счастью, этот план не был осуществлен в полной мере, благодаря чему и по сей день руинированный памятник армянской архитектуры присутствует в культурном ландшафте западной, турецкой части Армянского нагорья. В средневековой столице Армении Ани и некоторых соседних монастырях десятки построек сохраняются в состоянии, требующем незамедлительного укрепления.

Руины Ани, других городов и поселений, таких как Мрен и Багаран, руины древних монастырей и крепостей – это образы, вызывающие ностальгию и боль, переданные через поколения и потому особенно сильные; это также образы утраты былого возвышенного величия, то есть того ощущения, с которым античная руина воспринималась гуманистами эпохи Ренессанса. Для нас же совокупность этих памятников и каждый из них в отдельности тесно связаны с чувствами национального достоинства и гордости, и они одновременно являются

символом пережитой катастрофы<sup>10</sup>. Грустной ситуация была в последние несколько столетий, и армянская интеллигенция рубежа XIX-XX веков с особой болью в сердце высказывалась о состоянии средневекового наследия. С 1915 г. его состояние связывается с трагедией геноцида армян в Османской империи.

Однако значение этого наследия должно быть оценено и представителями турецкой интеллигенции<sup>11</sup>, и часть ее уже осознает это наследие в качестве собственного. Ведь отчасти так оно и должно быть. Примечательно и то, что сегодня без памятников армянской архитектуры и без намека на их бывшее существование культурный ландшафт Восточной Турции обезличивается, превращается в интересный природный пейзаж, лишенный цивилизационной составляющей.

*ARMEN KAZARYAN (RUSSIA)*

### **ARMENIAN RUIN ON THE CULTURAL LANDSCAPE OF TURKEY. THE FATE AND THE FUTURE OF THE CATHEDRAL OF MREN**

The large scale destruction of the monuments of Armenian cultural heritage in Turkish part of Armenian highland took place in 1950-60s, meanwhile that fact has its relation with the Armenian genocide of 1915-1920. In the report is shortly represented the loss of Armenian heritage as well as the monitoring of the monuments of Ani, its surroundings and other districts of Turkey, started last years by the World Monuments Fund and other organization. The causes of partly collapse of the cathedral of Mren and the possibilities of its rescue are observed. The role of Armenian ruined monuments on the cultural landscape of Eastern Turkey, the question of

---

<sup>10</sup> А. Казарян. Разделяя ответственность перед историческим наследием (Размышления о судьбе памятников христианской архитектуры в Восточной Турции). Архитектура, строительство. Ереван, 2007, № 11(21), с. 34–36.

<sup>11</sup> Об Ани, как катализаторе возможного диалога между гуманитариями Армении и Турции, с перспективой разработки совместных проектов см.: Н. Zeitlian Watenpugh, Preserving the Medieval City of Ani: Cultural Heritage between Contest and Reconciliation, in: Journal of the Society of Architectural Historians, vol. 73, n. 4, December 2014, p. 529-555, especial p. 546.

importance of this heritage both for Armenians, Christian civilization, and for Turkish culture are discussed.

### *ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

## **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՆԵՐԿԱ ՓՈՒԼԻ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայ ժողովրդին որպես ազգային ու կրոնական խումբ բնա-  
ջնջելու և նրա բնօրրան Հայաստանը հայաթափելու նպատակով  
դեռևս XIX դարի վերջին քառորդին թուրքական պետության կողմից  
ծրագրված, գործադրված ու մինչև 1923 թվականը շարունակված  
ֆիզիկական բնաջնջման քաղաքականության ամենաընդգրկուն  
գործողությունը 1915-1916 թթ. հայոց Մեծ եղեռնն էր:

Հայոց ցեղասպանությունը հայ ժողովրդի չսպիացող վերքն է,  
որը պարտավորեցնում է կրած ցավը հիշելու հետ մեկտեղ պայ-  
քաբել հանուն մեր ազգային արդար իրավունքների վերականգ-  
նման հայ ժողովրդի կրած տարածքային, նյութական, բարոյական,  
հոգեբանական վնասների հատուցման, հանուն մեր ազգային ան-  
վտանգության ապահովման:

1991 թ. հայկական անկախ պետականության վերականգնումը  
և դրան հետևած Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման  
նոր ալիքը բավական էին հասկանալու, որ հայ ժողովրդի դեմ գործ-  
ված ցեղասպանությունը ճանաչող պետությունների թվի ավելա-  
ցումը որևէ կերպ չի կարող նպաստել մեր ազգային ոստահարված  
իրավունքների վերականգնմանը, եթե այդ ճանաչումը զուրկ է գոր-  
ծած ոճրագործության համար թուրքական պետության միջազգային  
իրավական պատասխանատվության պահանջից և հատուցման  
պարտադրանքից:

Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման ներկա  
փուլի ամենակարևոր առանձնահատկությունը, թերևս, գիտակ-  
ցումն է այն բանի, որ Հայաստանի Հանրապետության իշխանու-  
թյունները ցեղասպանությունը վերապրածների ու նրանց սերունդ-



ների անունից, նրանց միջոցով ու մասնակցությամբ պետք է բարձրացնեն պահանջատիրության հարցը միջազգային դատական ատյաններում<sup>1</sup>: Դա ենթադրում է հիմնավորապես նախապատրաստված, համակողմանի, հետևողական ու նպատակասլաց, հարձակողական բնույթի դիվանագիտական և իրավաբանական գործունեություն: Պատահական չէ, որ վերջին տարիներին ՀՀ-ի ու հայկական Միյուոքի, հայ ազգային, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, դիվանագետների, պատմաբանների ու իրավաբանների ուշադրությունը կենտրոնացել է Հայոց ցեղասպանության իրավական հիմնախնդիրների, մասնավորապես միջազգային պատասխանատվության արդյունավետ համակարգ մշակելու խնդրի վրա<sup>2</sup>: Ելնելով այդ ուղղությամբ գործնական քաղաքականություն

---

<sup>1</sup> Այս մասին տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Ե., Պատմության ինստիտուտ, 2014, էջ 42-46:

<sup>2</sup> Որպես Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման համար պայքարի այս նոր փուլի համար իրավական տեսագործական հենք ապահովող միջոցառումներ արժանափշտակ են Երևանում 2013 թ. հուլիսի 5-6-ը կայացած Իրավաբանների համահայկական երկրորդ համաժողովը, ապա 2015 թ. ապրիլի 22-23-ը տեղի ունեցած «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումը և վերջինիս ընթացքում հայ ու օտարազգի միջազգայնագետների, իրավաբանների և պատմաբանների առանձին նիստը նվիրված ցեղասպանության հանցագործության կանխարգելման, արդեն գործված ցեղասպանության հետևանքների վերացման և դրա համար պատասխանատվության միջազգային իրավական հիմնախնդիրներին: Դրանց մասնակիցներն իրատեսք են փաստեցին, որ Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների վերականգնումն անմիջականորեն ենթադրում է թուրքական պետության պատասխանատվության հարցի բարձրացում, քանի որ ոչ մի անհատ չի կարող ցեղասպանության զոհ դարձած ժողովրդին հատուցել հանցագործության վնասը մասնավորապես վերադարձնել բռնազավթված հայրենիքը: Դա կարող է և պարտավոր է անել միայն այն պետությունը, որը տիրացել է այդ հայրենիքին: Տե՛ս Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ: Իրավաբանների համահայկական երկրորդ համաժողով: Համաժողովի նյութեր 05-06. VII. 2013, Ե., 2014: Ծրագիր «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատասխանատվության միջազգային իրավական հիմնախնդիրները» գիտաժողովի: Կազմակերպիչներ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողով, ՀՀ սփյուռքի նախարարություն, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Համաշխարհային հայկական կոնգրես, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, «Իրավաբանների համահայկական խորհրդաժողով» ՀԿ, Ե., ապրիլի 22-23, 2015:

մշակելու և իրականացնելու անհրաժեշտությունից՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը, համախորհուրդ Միյությունում գործող տարածաշրջանային հանձնախմբերի հետ, 2015 թ. հունվարի 29-ին ընդունեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը»<sup>3</sup>: Հիմնարար նշանակություն ունեցող այդ փաստաթղթով պաշտոնական հիմքի վրա է դրվում Հայաստանի և հայ ժողովրդի միասնական կամքը՝ Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման հասնելու և ցեղասպանության հետևանքների վերացման հարցում, ինչի համար ներկայումս մշակվում է թուրքական պետությանը ներկայացվելիք իրավական հիմնավոր ու ամբողջական պահանջների թղթածրար դիտելով այն անհատական, համայնքային և համագային իրավունքների ու օրինական շահերի վերականգնման մեկնարկ: Հայրենիքի կորուստը Հայոց ցեղասպանության գլխավոր առանձնահատկությունն է, սակայն տուժած կողմի՝ հատուցում ստանալու իրավունքի լիակատար բավարարումն անհնար է, քանի դեռ «հայրենագրկություն» հասկացությունը խորթ է միջազգային իրավունքին, իսկ ցեղասպանությունը դատապարտող և պատժելի համարող ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի «Յեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» միջազգային կոնվենցիայում<sup>4</sup> շրջանցվում է տուժածի հատուցում ստանալու իրավունքը: Կոնվենցիայի 19 հոդվածներից ոչ մեկում այդ մասին ակնարկ անգամ չկա: Բնարկե, այդ հանգամանքը չի կարող հիմք ծառայել հայ ժողովրդի հատուցման իրավունքը մերժելու համար, քանի որ հայրենիքի կորուստը բնութագրում է թուրքական պետու-

<sup>3</sup> St'u [armeniangenocide100.org/pan-armenian-declaration/](http://armeniangenocide100.org/pan-armenian-declaration/):

<sup>4</sup> Կոնվենցիայի ամբողջական բովանդակությունը տե՛ս Конвенция о предупреждении преступления геноцида и наказании за него, էջ 19-26: Բնչպես նաև՝ Сборник действующих договоров, соглашений и конвенций, заключённых СССР с иностранными государствами. Выпуск XVI, Москва, 1957, էջ 66-71; Права человека. Сборник международных документов, М., 1998; The Crime of Genocide. A United Nations' Convention-is Aimed of Preventing Destruction of Groups and of Punishing those Responsible, N.Y., 1949. Կոնվենցիան միաձայն ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 9-ին, այսինքն՝ XX դարի առաջին ցեղասպանությունը՝ Հայոց մեծ եղեռնը, սկսվելուց ուղիղ 33 ու կես տարի անց և ուժի մեջ մտել 1951թ. հունվարի 12-ին:

թյան հայաջինջ քաղաքականությունը, վկայում է Հայոց ցեղասպանության առավել դաժան բնույթի մասին, ինչպես նաև ապացուցում է ոճրագործության կանխամտածված լինելը: Մակայն կոնվենցիան իր գործող բովանդակությամբ չի ապահովում իրավաքաղաքական լիարժեք պայմաններ՝ հասնելու կատարված կամ կատարվող ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման, ցեղասպանության համար մեղավորների պատժի, ցեղասպանության հետևանքով առաջացած տարածքային, նյութական և բարոյական վնասների հատուցման: Որպեսզի կոնվենցիան նաև գործնականորեն ծառայի իր նպատակներին, անհրաժեշտ է այն վերանայել՝ փաստաթղթի բովանդակությունը կատարելագործելու, այն նոր դրույթներով հարստացնելու ձևով: Մասնավորապես հայոց արդարացի պահանջատիրության բավարարման տեսանկյունից հարկավոր է կոնվենցիայում կատարել հետևյալ լրացումները:

1. Կոնվենցիան ցեղասպանության համար հանցավոր է համարում ոչ թե պետությանը, այլ առանձին անհատների՝ պետական գործիչների, որոնք կազմակերպում և գործադրում են ցեղասպանությունը: Նշված փաստաթուղթը սահմանափակվում է ցեղասպանության համար պետության պատասխանատվության առաջացման հնարավորության մասին դրույթով, որն ամրագրված է դրա թիվ 9 հոդվածում<sup>5</sup>: Կոնվենցիայում պետության՝ իբրև ցեղասպանության սուբյեկտի, պատասխանատվության ու դրա բովանդակության հարցերը, ցավոք, դեռևս մանրամասն մշակված չեն, չնայած որ մի ողջ ժողովուրդ ոչնչացնելու համար պետության քաղաքական պատասխանատվության սկզբունքը և դրանից բխող նորմերը միջազգային իրավունքում ձևավորվել են նախքան Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումը: Փաստորեն կոնվենցիան ոչ այլ ինչ է, քան մինչ դրա ընդունումն արդեն գոյություն ունեցող միջազգային-իրավական նորմերի կոդիֆիկացիա: Նորմեր, որոնց հիման վրա են անցկացվել Նյուրնբերգյան դատավարությունները, և կայացվել ֆաշիստական պարագլուխների նկատմամբ համապատասխան վճիռները: Ուստի վերոնշյալ ձևակերպումը կոնվենցիայի սկզբունքային թերություններից է, որը կարող է օգտագործվել միջազգային ոճիր կա-

---

<sup>5</sup> См. Права человека. Сборник международных документов, с. 86:

տարած պետության կողմից՝ ազատվելու պատասխանատվությունից:

Ցեղասպանությունը պետական քաղաքականություն է և իրականացվում է պետական միջոցներով (բանակ, ոստիկանություն, ժանդարմերիա, մոլեռանդ ամբոխ): Անհատները՝ բարձրաստիճան պետական այրերը և նրանց ստորադաս պաշտոնյաները, իրականացնում են պետության քաղաքականությունը, որպես դրա համար լիազորված անձինք և պետության անունից: Այս իրողությունը նկատել և կոնվենցիայի թերությունը քննադատել են այնպիսի ճանաչված իրավագետ-միջազգայնագետներ, ինչպիսիք են Յուրի Բարսեղովը, Հելեն Ֆայնը, Իրվինգ Լուիս Հորովիցը և Ռոբերտ Մելսոնը: Նրանք ևս գտնում են, որ ցեղասպանության համար պետք է հանցավոր ճանաչվի պետությունը՝ անկախ հանցագործության վաղեմությունից, հետևաբար և վարչակարգի փոփոխությունից<sup>6</sup>: Հայերի ցեղասպանության համար պատասխանատու է թուրքական պետությունը որպես ոճրագործության կազմակերպող և գործող: Քանի դեռ Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության խնդիրը վերջնական լուծում չի ստացել, դժվար է խոսել ցեղասպանությունը կանխարգելող և դրա համար պատիժ նախատեսող միջազգային իրավունքի նորմերի արդյունավետության մասին:

2. Միջազգային իրավունքը չափազանց թերի է նաև այն պատճառով, որ ցեղասպանությունը դատապարտող և պատժելի համարող փաստաթղթում չի խոսվում տուժածի հատուցում ստանալու իրավունքի մասին: Սփյուռքը և համայն հայ ժողովուրդը չեն կարող պահանջատեր լինել, քանի դեռ այս հարցում միջազգային իրավունքը թերի է և կարիք ունի լրացման: «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան արդարության պահանջով հարկ է, որ լրացվի բռնագաղթվածների և նրանց ժառանգների տարածքային, նյութական, բարոյական, հոգեբանական կորուստների հատուցման՝ նախևառաջ Հայրենիք վերա-

---

<sup>6</sup> См. Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. “Документы и комментарий”. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов. Т. 1, М., 2002, փաստ. № 600, էջ 766: Նույնի՝ Т. 2. Ч. 2, էջ 127-131: Le Crime de Silence. Le Génocide des Arméniens. P., 1984, էջ 314:

դառնալու իրավունքն անկախ վաղեմությունից ճանաչելու մասին դրույթով:

3. Հարկ է նաև, որ կոնվենցիան պատիժ սահմանի այնպիսի գործողությունների համար, ինչպիսին են իր հայրենիքից բնակչությանը բռնի տեղահանելը՝ նրան բնաջնջելու նպատակով, և ազգային-մշակութային ցեղասպանություն իրականացնելը: Մշակույթը յուրաքանչյուր հանրության յուրօրինակ անձնագիրն է, նրա ինքնության և հայրենիքի նկատմամբ որոշակի իրավունքներ ունենալու վկայությունը: Ազգային մշակույթի ոչնչացումը ոչ միայն ուղեկցում է ազգային խմբի ֆիզիկական բնաջնջմանը, այլև, լինելով ավելի ընդգրկուն, շարունակվում է դրանից հետո էլ, ինչպես հայերի ցեղասպանության պարագայում, երբ հայաթափված Արևմտյան Հայաստանում և Արևելյան Հայաստանից զավթած տարածքներում բացահայտ, բայց առավելապես խնամքով քողարկված շարունակվում է հայկական մշակույթի ոչնչացումը: Դա հետապնդում է որոշակի նպատակ՝ վերջ տալ բնաջնջված խմբի գոյության բոլոր վկայություններին՝ հիմնավորելու համար զավթված տարածքի նկատմամբ զավթողի իրավունքները:

Ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթների թերի լինելն ազդում է Հայոց ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացի վրա, քանի որ հնարավորություն է տալիս ազդեցիկ պետություններին շրջանցելու միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներն ու նորմերը՝ այդ մոտեցումը ձևականորեն արդարացնելով խնդրո առարկա փաստաթղթի թերություններով: Այդ պատճառով էլ, թերևս, մինչ օրս ոչ մի պետություն չի ճանաչել Հայոց ցեղասպանության փաստը դրա զոհի պահանջատիրության իրավունքի ճանաչմամբ հանդերձ: Հետևաբար, ներկա փուլում Հայաստանի Հանրապետությունը պետք է գործի նաև միջազգային իրավունքի վերոնշյալ թերությունների ու բացթողումների վրա միջազգային հանրության ուշադրությունը բևեռելու ու դրանց վերացմանը հասնելու ուղղությամբ: Ընդ որում, այդ դժվարին դիվանագիտական պայքարում պետք է նկատի ունենալ, որ ցեղասպանության համար պետության պատասխանատվությունը թե՛ ընդհանրապես և թե՛ որոշակի գործողության առնչությամբ սահմանող միջազգային-իրավական նորմերը ՄԱԿ-ի շրջանակներում կողմֆիկացնելու, գոյություն ունեցող փորձն ընդհան-

րացնելու և առկա բացթողումները վերացնելու ջանքերը կարող են բխվել ազդեցիկ պետությունների անբարյացակամությանը կամ բացահայտ դիմադրությանը: Դա պայմանավորված է միջազգային իրավունքի այն առանձնահատկությամբ, որ միջազգային իրավունքը ձևավորվել և կատարելագործվում է աշխարհի պետությունների միասնական ջանքերով, այդ գործընթացի վրա էական ազդեցություն են թողնում ազդեցիկ պետությունների քաղաքական շահերն ու հակասությունները<sup>7</sup>:

Անհերքելի է, որ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման 1991թ. հայոց անկախ պետականության վերականգնումից հետո թափ առած ալիքը միջազգային հանրության կողմից ոճրագործության փաստի ոչ թե ճանաչում, այլ կրկնակի ճանաչում է նշանակում: Վերջինս սակայն միջազգային հասարակական-քաղաքական շրջանակներում երբեմն թողնում է այն սխալ տպավորությունը, թե Հայոց ցեղասպանության փաստը, այդ ոճրի համար թուրքերի ու Թուրքիայի պատասխանատվությունը մինչ այդ ճանաչված չեն եղել: Այդպիսով կարծես հաստատվում է թուրքական տեսակետը: Որպես նշված թյուրըմբռնման դեմ պայքարի լավագույն միջոց՝ ՀՀ-ն և հայկական Միությունը հանուն արդարության համազգային պայքարում իրավացիորեն կարևորում են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ մինչ այժմ կատարված հսկայածավալ աշխատանքի լուսաբանումն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակներում, հայ ժողովրդին վշտակցող ու սատարող պետությունների նկատմամբ երախտագիտության արտահայտումն իբրև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և ոճրագործության հետևանքների վերացման ուղղությամբ հայ ազգային-պետական քաղաքականության կարևոր բաղադրատարրերից մեկը: Այս իմաստով տպավորիչ են այն համազգային միասնականությունն ու բարձր կազմակերպվածությունը, որպիսիք դրսևորվում են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներում: Սակայն հարկ է ջանքեր գործադրել նաև այն ուղղությամբ, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման վերաբերյալ պետական պաշտոնական հայտարարություններն ու բանա-

---

<sup>7</sup> См. “Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества”. Т. 2. Ч. 2, с. 127-131.

ձևերը պարունակեն իրենց առանգված պատմական հայրենիքը հետ ստանալու հայերի իրավունքի, հայերի ցեղասպանության համար թուրքական պետության քաղաքական պատասխանատվության և այդ հարցերում միջազգային հանրության պարտավորությունների վերաբերյալ դրույթներ, առանց որոնց այդ փաստաթղթերը զուրկ են գործնական արժեքից: Մինչ օրս Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման վերաբերյալ ընդունված պետական պաշտոնական հայտարարություններից համեմատաբար ավելի արմատական է Ռուսաստանի Պետական դոմայի 1995 թ. ապրիլի 14-ին միաձայն ընդունված հայտարարությունը: Նրանում նշվում է, որ հայերի ցեղասպանությունը կատարվել է նրանց պատմական հայրենիքում՝ դրանով իսկ Արևմտյան Հայաստանը ճանաչելով որպես հայերի էթնիկական տարածք: Այնուհետև շեշտվում է, որ դա արվել է Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելու նպատակով: Սակայն դրանով հանդերձ Պետդոմայի հայտարարությունը շրջանցում է հայերի՝ իրենց առանգված պատմական հայրենիքը հետ ստանալու իրավունքի խնդիրը:

Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման հարցում որոշիչ նշանակություն ունի ժամանակի գործոնը: Հայերի դեմ ոճրագործությունը դեռ շարունակվում է, քանի որ ցեղասպան պետությունը դեռևս չի ընդունել իր մեղքը, չի ենթարկվել քաղաքական պատասխանատվության, իսկ հանցագործության հետևանքները ոչ միայն վերացված չեն, այլև շարունակում են իրենց քայքայիչ ազդեցությունը: Անցած 100 տարվա ընթացքում հայրենիք վերադառնալու փափազը սրտում կյանքից հեռացավ Հայոց ցեղասպանությունը վերապրածների սերունդը, իսկ ցեղասպանության զոհերն ու նրանց ժառանգները հոգնել են պատմական արդարության վերականգնմանը սպասելուց: Որքան երկարում է ժամանակը, այնքան թուլանում է անցյալի մասին հիշողությունը, և մեծանում է Հայոց ցեղասպանության՝ աշխարհի «մոռացված» ցեղասպանությունների շարքն անցնելու վտանգը: Պետք է նաև հաշվի առնել, որ անցած 100 տարվա ընթացքում ցեղասպանությունից փրկված, աշխարհով մեկ սփռված հայերն ու նրանց ժառանգները ոչ միայն հաստատվել, այլև արդեն հիմնավորապես ամրապնդվել են տարբեր երկրներում: Նրանցից շատերի համար դժվար է լինելու հայրենիք վերադառնալը, մանավանդ որ հայ հանրությունը թե՛ Հայաստանում ու թե՛

նրա սահմաններից դուրս, ցավոք, հանդես չի բերում այնպիսի նախանձախնդրություն հայրենիք վերադառնալու հարցում, ինչպիսին ունեն հրեաները: Ավելին, վերջին տասնամյակներում Հայաստանից դեպի արտերկիր թափ առած արտագաղթն արդեն լուրջ սպառնալիք է հայոց պետականությանն ու ազգային անվտանգությանը, հետևաբար՝ նաև հայոց արդար պահանջատիրությանը: Խնդիրն էլ ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ Թուրքիայի քեմալական վարչակարգը, ապա նաև ներկա իշխանությունները ժամանակը հմտորեն օգտագործել և օգտագործում են ի վնաս Հայ դատի: Նախ՝ Թուրքիան ապահովագրել է իրեն Հայկական հարցի վերաբացումից՝ 1920-1923թթ. կնքելով Ալեքսանդրապոլի, Մոսկվայի, Կարսի, Լոնդոնի ու Լոզանի պայմանագրերը: Բացի այդ, թուրքական իշխանություններն անընդհատ կատարելագործում են Հայոց ցեղասպանության ժխտման, հայոց պատմության խեղաթյուրման պետական գաղափարաքաղաքական զինանոցը, հետևողականորեն փոխել են Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը, ինչի արդյունքում նրա հայաթափված տարածքում ներկայումս գերակշռում է իր անկախ պետությունն ունենալու համար պայքարող քուրդ բնակչությունը<sup>8</sup>:

Հայոց ցեղասպանությունը XX դարի առաջին ցեղասպանությունն է, բայց, ցավոք, այն չեղավ վերջինը մարդկության պատմության մեջ: Հրեաների, մահմեդական բոսնիացիների ու թուրքսիների նկատմամբ Ողջակիզման, Սրբբենիցայի ու Ռուանդայի ցեղասպանությունների դատապարտման գործընթացների արդյունքում ժամանակակից միջազգային իրավունքը բավականաչափ կատարելագործվել է, մշակվել են նոր իրավական նորմեր: Դրանք տարբեր պետությունների բարձրագույն օրենսդիր ու գործադիր մարմինների, միջազգային տարբեր կազմակերպությունների և ատյանների կողմից Հայոց ցեղասպանությունը որպես հանցագործություն որակելու փաստերի, հիմնախնդրի վերաբերյալ միջազգային պայմանագրերի ու կոնվենցիաների, ինչպես նաև առանձին դատավարությունների, մասնավորապես երիտթուրքերի դատավարության ու Մոդոմոն Թեհլիրյանի դատավարության նյութերի հետ միասին իրավական

---

<sup>8</sup> Այս մասին տե՛ս Բայբուրդյան Վ., Քրդական հարցը Թուրքիայում և անկախ Քրդստանի ստեղծման ծրագրերը միջազգային դիվանագիտության լուսի ներքո: Տե՛ս [hpj.asj-oa.am/2494/1/2008-1\(34\).pdf](http://hpj.asj-oa.am/2494/1/2008-1(34).pdf):



հիմք են Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման գործընթացի համար, ինչն էլ, թերևս, Հայոց ցեղասպանության դատապարտման և հետևանքների վերացման արդի փուլի պատմաիրավական առանձնահատկություններից մեկն է:

Այսպիսով, հայոց ամենակենսական ազգային հիմնախնդիրը ենթադրում է մեր պետության կողմից պայքարի սեփական կանոնների սահմանում, ինչպես նաև նրա ակտիվ ու նախաձեռնողական դերակատարությունն արտաքին ասպարեզում՝ հիմնված միջազգային իրադրության և ազգային-պետական հնարավորությունների անսխալ գնահատման ու նպատակային օգտագործման վրա: Այս իմաստով վերապահությամբ պետք է վերաբերվել Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման առնչությամբ «ներկա փուլ» արտահայտությանը: Նման բախտորոշ հարցում անցյալ ու ներկա փուլերն իրականում մատնանշում են այն ճանապարհը, որի մի մասն անցել, որի վրա գտնվում ենք և որը պիտի շարունակենք որպես ազգ ու պետություն:

*LILIT HOVHANNISYAN (ARMENIA)*

### **THE HISTORICAL-JURIDICAL PECULIARITIES OF CONTEMPORARY PHASE OF THE REMOVAL OF CONSEQUENCES OF THE ARMENIAN GENOCIDE**

The essence of contemporary phase of the removal of consequences of the Armenian Genocide is that the turkish state must be call to account, avoiding international-juridical responsibility, and must indemnify armenians for the loss of their native land and for moral, psychological, material, financial losses. The realization of the responsibility for a Genocide of the armenians on the objective basis of international law corresponds to the interests not only the armenian people and all international society, but also of Turkey.

## 6. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՐՎԵՍՏՈՒՄ

*ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

### ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԹԵՄԱՆ ՀԱՅ ԱՐԴԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Չկա մի հայ, որի հոգում անկեզ մորենու պես չայրվի Մեծ եղեռնի հիշատակը: Այն իր արտացոլումն է գտել բազում գրական, թատերական և կերպարվեստի գործերում: Անմասն չեն մնացել նաև հայ արդի կոմպոզիտորները, որոնց մի շարք կամերային, սիմֆոնիկ և երաժշտաբեմական երկերում մարմնավորվել և իրենց արժանի գեղարվեստական արտահայտությունն է ստացել XX դարի առաջին ցեղասպանությունը, որը, ցավոք, միակը չէրավ, այլ ունեցավ իր արյունալի և ողբերգական շարունակությունը Երկրորդ աշխարհամարտի հրեական Հոլոքոստի, այնուհետև Կամբոջայի, Ռուանդայի, Դարֆուրի, Սումբայիթի, Բաքվի, Կիրովաբադի, Շահումյանի և մյուս նմանատիպ ոճրագործությունների շարքում:

Հայ արվեստագետներին Մեծ եղեռնի թեման հուզել է տարիներ ի վեր: Բավական է հիշատակել թեկուզ այնպիսի ցայտուն և նշանակալի ստեղծագործություններ, ինչպիսիք են Պարույր Սևակի «Անյոելի զանգակատուն» պոեմը, Էդգար Հովհաննիսյանի «Անտունի» բալետը, Պերճ Զեյթունցյանի «Ոտքի, դատարանն է գալիս» և «Մեծ լույթուն» թատերգությունները, Գրիգոր Խանջյանի, Սարգիս Մուրադյանի, Մինասի, Ժանսեմի, Հակոբ Հակոբյանի կտավները, Հենրիկ Մալյանի «Նահապետ», Անրի Վերնոյի «Մայրիկ» և Ատոմ Էգոյանի «Արարատ» ֆիլմերը, որպեսզի պարզ դառնա, թե որքան է այդ թեման իր չմարող հիշատակով և այժմեականությամբ այրել հայ արվեստագետի հոգին և ստեղծագործ միտքը: Վերջին տարիներին Եղեռնի թեմային գրականության և արվեստի մեջ անդրադարձել են նաև մի շարք օտարազգի գրողներ, կինոբեմադրիչներ և արվեստի այլ ճյուղերը ներկայացնող արվեստագետներ:

Այս թեմային անդրադարձել ենք տակավին Եղեռնի 90-ամ-

յակի առիթով<sup>1</sup>, սակայն անցած տասնամյակի ընթացքում գրվել են նոր ուշագրավ ստեղծագործություններ, հայ կոմպոզիտորները հարստացրել են կամերային, խմբերգային և սիմֆոնիկ ժանրերը տվյալ թեման արծարծող ինքնատիպ երկերով, ուստի միանգամայն տրամաբանական է նաև մեր ուշադրությունն այդ գործերի նկատմամբ: Հասկանալի է, որ մեկ զեկուցման շրջանակներում անհնար է անդրադառնալ ցեղասպանությանը նվիրված բոլոր ստեղծագործություններին: Մենք ընտրել ենք մեր տեսակետից առավել հիշարժան և հանրային ճանաչման արժանացած երկերը, թեև հիշատակելու ենք գործեր, որոնք դեռ սպասում են իրենց կատարմանը:

Եղեռնին նվիրված հայ կոմպոզիտորների երկերի շարքում նախևառաջ պետք է նշել Էդգար Հովհաննիսյանի (1930-1998) «Անտունի» բալետը (1969), որտեղ Կոմիտաս-անտունու կերպարը խորհրդանշել է Եղեռնի զոհ դարձած թերևս բոլոր արվեստագետների ընդհանրացված ճակատագիրը<sup>2</sup>: Տվյալ ստեղծագործության բեմադրությունը<sup>3</sup> ժամանակին արժանացել է հասարակական մեծ արձագանքի, նրան են անդրադարձել իրենց աշխատություններում հայ երաժշտագետներից շատերը, ուստի մենք կանգ չենք առնի նրա վրա, այլ կքննենք Եղեռնի թեմային նվիրված հետագա տասնամյակներում գրված մի քանի նշանակալից երկեր:

1970-ականներից սկսած՝ ցեղասպանության թեման առավել մեծ հնչեղություն է ստանում հայ կոմպոզիտորների ստեղծագործության մեջ: Այդ տարիներին գրված երկերի շարքում առաջին հերթին հիշատակելի է Էդուարդ Հայրապետյանի (ծնվ. 1949թ.) «1915» մեծածավալ օրատորիան՝ ասմունքողի, մեցցո-սոպրանոյի, բասի, խառը երգչախմբի և մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար, որը կոմպոզիտորը հեղինակել է 1977 թվականին՝ հիմնվելով Եղեռնի ականատեսների հուշագրությունների վրա: Օգտագործված պուանտիլիստական տեխնիկան, բազմաթիվ cluster-ների և divisi-ների հնչողությունը, collage-ի ձևով ներմուծված «Ամեն. Հայր Սուրբ» և «Սուրբ,

---

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, մեր հոդվածը՝ Եղեռնը և հայ արդի երաժշտությունը, «Երաժշտական Հայաստան», N 2, (17) 2005, էջ 9-12, նույնի՝ «Ազդակ Երկիր» բացառիկ, Պեյրուք, 24 ապրիլի 2005, էջ 61-64:

<sup>2</sup> Է. Հովհաննիսյանի «Անտունի» բալետի մասին մանրամասն տե՛ս Գ. Կոմիտաս, *Արմյանական երաժշտական թատրոն*, Երևան, 1975, ժ. 3, 177-184.

<sup>3</sup> Լիբրետոն և բեմադրությունը՝ Մաքսիմ Մարտիրոսյանի, դիրիժոր՝ Հակոբ Ոսկանյան, նկարիչ՝ Մինաս Ավետիսյան, խմբավար՝ Գրիգոր Սանդալյան:

սուրբ» երգասացությունները հայոց Պատարագից, բնորոշում են այդ տպավորիչ գործի նկարագիրը: Ստեղծագործության կիզակետային պահերին նվագախմբին միանում է երգեհոնի հզոր հնչողությունը, որը ծավալային հավելյալ խորք է ստեղծում՝ տոգորելով երկը ապոկալիպտիկ երանգներով:

Հայրապետյանը մեծ տեղ է հատկացրել հարվածայինների ընդլայնված խմբին, որն ընդգրկում է բազմապիսի հարվածային գործիքներ, որոնք, զուգորդվելով նվագախմբի լարային և փողային խմբերի հնչողությանը, օրատորիային հաղորդում են հնչերանգային մեծ արտահայտչականություն և ներքին լարվածություն:

Մեներգիչների երգամասերը, սերիալ հիմք ունենալով հանդերձ, հարուստ են ասերգային ելևէջներով, դրանք ընդհատող բազմանշանակ դադարներով, ինչը տրամաբանորեն բխում է օգտագործված տեքստերի բովանդակությունից:

Հայրապետյանը դիմել է Եդեոնի ականատեսների և վերապրողների հուշերին՝ մերժելով գրական որևէ այլ աղբյուր: Օրատորիայի վերջնամասում իբրև ամփոփում ասմունքողն արտաբերում է. «Աղոթեցե՛ք մեզի համար: Այլ այս աշխարհի մեջ ձեզ պիտի չտեսնենք, բայց օր մը իրար պիտի գտնենք...»: Այդ խոսքերը կարծես ամբողջ երաժշտադրամատուրգիական զարգացման հանգուցալուծումն են, կատարսիսը, որը հույս է ներշնչում, թե օրերից մի օր հատուցումը պիտի գա, արդարությունը հաղթանակի, և բազմահազար անմեղ զոհերի հոգիները, վերջապես, հանգիստ պիտի առնեն...

Այսպիսով, օրատորիան հիմնված է դաժան, էքստրեմալ պայմաններում հայտնված մարդկանց սահմոկեցուցիչ վկայությունների վրա: XX դարի երաժշտության մեջ նմանատիպ երկի ցայտուն օրինակ է Առնոլդ Շյոնբերգի «Վերապրողը Վարշավայից» ստեղծագործությունը (1947) ասմունքողի և կամերային նվագախմբի համար: Ակներև է, որ «1915» օրատորիան հղանալիս Հայրապետյանը որոշակիորեն նկատի է ունեցել նաև Շյոնբերգի վերոնշյալ գործը, մանավանդ, նրա վերջնամասում հնչող հրեական հոգեհանգստյան աղոթք-երգասացությունը: Այստեղից էլ՝ մտահղացման էքզիստենցիալիստական ուղղվածությունը, որը հնչունավորվում է էքսպրեսիոնիստական արտահայտչաձևին հատուկ միջոցներով և հնարանքներով, նաև հայոց Պատարագի հատվածների ներմուծմամբ,

ինչի շնորհիվ կոմպոզիտորը հասել է խորապես ազդեցիկ հնչեղության<sup>4</sup>:

Եղեռնի թեման կարևոր տեղ է գրավել Հարություն Դելլայանի (1937-1990) ստեղծագործության մեջ: Նրա «Նվիրում Կոմիտասին» դաշնամուրային Սոնատը (1982) կոմպոզիտորի լավագույն գործերից է: Այն այսօր էլ եզակի է հայ դաշնամուրային երաժշտության մեջ իր ինքնատիպ մտահղացքով, վառ արտահայտված ազգային երաժշտալեզվով և խիստ արդիական բնույթով: Իր էքսպրեսիայով, ասելիքի անկեղծությամբ և նշանակալիությամբ Դելլայանի երկերը ձեռք են բերել փիլիսոփայական ընդգրկում և ծավալ: Բացառիկ ազդեցություն է գործում, օրինակ, Սոնատի ֆինալում հնչող ժողովրդական «Նարոյ» երգը, որն արտաբերվում է հենց կատարող դաշնակահարի կողմից՝ յուրատեսակ հուշարձան դառնալով մեծն Կոմիտասի տառապած հոգուն, հանճարին և ստեղծագործական սխրանքին<sup>5</sup>:

Նույն թեմային է նվիրված Դելլայանի «Լուսության բուպե» խմբերգը (1986)՝ գրված a cappella կանացի երգչախմբի համար, որը ձոնված է Դեր-Ջորի անապատում նահատակված հայերի հիշատակին: Գրական հիմք են ծառայել Գևորգ Կառվարենցի «Գերեզմանի ծաղիկներ», «Որբերը» և Կոստան Զարյանի «Այս գիշեր քուն չունեցա» բանաստեղծությունները: Երկի խորագիրն է Requiem Canticles, այսինքն՝ «հոգեհանգստյան երգասացություններ»: Իր մտահղացմամբ ստեղծագործությունը, իրոք, մի ռեքվիեմ է՝ ձոնված բազմաչարչար նահատակների հիշատակին, որի մեջ հեղինակը կիրառել է խմբերգային երգեցողության հնարանքների բազմապիսի ներկայանակ՝ կերտելով ծավալուն և ողբերգականությամբ լի մի պատում:

Եղեռնի 90-ամյա տարելիցին էր նվիրված Ռուբեն Սարգսյանի (1945-2013) «Դեր-Ջոր վերապրածի խոստովանանքը» (2005) ֆլեյտայի, լարայինների և հարվածայինների համար, որը 2007-ին արժանացավ ՀՀ պետական մրցանակի: Ամբողջական կոտ ձևը, ազգային մելոսի (ինչպես բանահյուսական, այնպես էլ հոգևոր), նեո-

---

<sup>4</sup> Է. Հայրապետյանի «1915» օրատորիան կատարվել է 1986 թ. Հայաստանի կոմպոզիտորների միության պլենումի սիմֆոնիկ համերգներից մեկի ծրագրում: Դիրիժոր՝ Դավիթ Խանջյան:

<sup>5</sup> Տարբեր տարիներին Սոնատը կատարել են դաշնակահարներ Հարություն Փափազյանը, Մեդրակ Երկանյանը, Հայկ Մելիքյանը և ուրիշներ:

կլասիցիզմից և նեոռոմանտիզմից եկող ռճական առանձնահատկությունների հմուտ կիրառումը երկը դարձնում են շատ տպավորիչ: Կործանման ոգու և կենսահաստատ սկզբի հակադրությունը կազմում է այդ երկի մտահղացման առանցքը: Հայ ժողովրդի ապրելու և կերտելու աննկուն ձգտումը մարմնավորված է գուտ ֆուլկլորային երաժշտական կերպարի մեջ, որն օժտված է ցայտուն պարային ռիթմերով և ելևէջներով: Այն, ըստ հեղինակի, Փյունիկ հավքի պես մոխիրներից մշտապես վերածնվող հայ ոգու մարմնավորումն է: Նույն ելևէջների փոխակերպումը հոգևոր երգասացության, որը հիշեցնում է «Տէր, ողորմեա»-ն, դառնում է կարևոր հայեցակարգային և բուն երաժշտակերպական գործոն: Հարվածայինների նվագամասում մերթ ընդ մերթ հնչող wood-block-ի համաչափ հարվածները կարծես խորհրդանշում են ժամանակի անողոք ընթացքը, որն իր արդար դատավճիռը պետք է կայացնի ցեղասպանության վերաբերյալ:

2004 թվականին իր ավարտին հասավ Վահրամ Բաբայանի (ծնվ. 1948թ.) «Մուսա լեռան 40 օրը» երեք գործողությամբ օպերայի ստեղծումը: Ֆրանց Վերֆելի համանուն վեպի հիման վրա գրված լիբրետոն կազմել են Կարպիս Լեփեջյանը և հեղինակը: Օպերան գրված է հեղինակի համար բնորոշ էքսպրեսիոնիզմի և նեոռոմանտիզմի հատուկ ռճական սկզբունքներով ու արտահայտչամիջոցներով: Երաժշտության մեջ գերիշխում է միջանցիկ զարգացումը, թեպետ առկա են նաև ավարտուն արիաներ, անսամբլներ, տեսարաններ և առանձին սիմֆոնիկ հատվածներ: Համերգային կատարումով երաժշտասեր հասարակությանը ներկայացվել են օպերայի չորս դրվագներ, որոնք թեև տպավորիչ էին, սակայն չեն կարող վերջնական պատկերացում տալ ամբողջական մտահղացման մասին: Առավել հիշարժան էր օպերայի նախերգանքը, որը հնչեց հայ կոմպոզիտորական արվեստին նվիրված 2015 թ. փառատոնի համերգային ծրագրերում: Նախերգանքն աչքի ընկավ ցայտուն թեմատիզմով, դինամիկ ու նպատակալաց զարգացումով և դրամատիզմով: Մնում է զինվել համբերությամբ և հուսալ, որ օպերային թատրոնը մոտ ապագայում կիրազործի այդ ստեղծագործության բեմադրությունը:

Ի դեպ, կոմպոզիտորն առաջին անգամ չէ, որ դիմում է Եդեոնի թեմային: Դեռևս 1995-ին նա հեղինակել է «1915 թվական» ինքնա-

սանի կանտատը սոպրանոյի, բարիտոնի, խառը երգչախմբի և մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար (խոսք՝ ժողովրդական, Կոմիտասի, Հովհ. Հովհաննիսյանի և Սմբատ Շահազիզի), որը կատարվել է մեծակատարների, Հայաստանի ֆիլհարմոնիկ երգչախմբի և նվագախմբի կողմից Լորիս Ճգնավորյանի ղեկավարությամբ:

Հաջորդ հեղինակը, ում գործերին ուզում ենք անդրադառնալ այս առիթով, Երվանդ Երկանյանն է (ծնվ. 1951թ.), որի 3-րդ, 4-րդ և 5-րդ սիմֆոնիաները նվիրված են Մեծ եղեռնի թեմային:

3-րդ՝ «Ձայն նահատակաց» սիմֆոնիա-օրատորիան՝ մանկական ձայնի, խառը երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար (1984), գրվել է Եղեռնի զոհ դարձած հանճարեղ բանաստեղծ Դանիել Վարուժանի երեք բանաստեղծությունների հիման վրա: Պատահական չէ, որ սիմֆոնիայի երգամասում հեղինակը դիմել է մանկական ձայնին: Այն կարծես մարմնավորում է Եղեռնին զոհ գնացած բազմահազար մանուկների հավաքական կերպարը: Եռամաս սիմֆոնիան մեծակերտ վոկալ-սիմֆոնիկ մի եռագրություն է, որտեղ կոմպոզիտորն անդրադարձել է այդ համահայկական, նաև համամարդկային հնչեղություն ունեցող թեմային՝ օժտելով սիմֆոնիայի ֆինալը օրինաբանական վերջաբանով<sup>6</sup>:

Այլ է Երկանյանի թիվ 4 (1986) «Nemesis» սիմֆոնիայի մտահղացումը: Նրա երաժշտական կերտվածքը զուտ գործիքային է՝ գրված մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար: Ուստի այս սիմֆոնիայում արտահայտված գաղափարներն ու կերպարները կրում են ավելի ընդհանրացված, բայց ոչ վերացական բնույթ, թեև ստեղծագործությունը ծրագրային չէ ավանդական իմաստով: Ակնհայտ է, որ այն ներշնչված է այսօր արդեն հանրաճանաչ «Nemesis» գործողությունն իրականացրած խմբի գաղափարներով: Ցավոք, սիմֆոնիան առ այսօր չի կատարվել, և չինչա՞ծ գործի մասին ավելին ասել նպատակահարմար չենք գտնում:

Լայն հասարակական արձագանք ունեցավ Ե.Երկանյանի 5-րդ սիմֆոնիան (2011), որը կրում է «Խաչված երազներ» անվանումը և ոգեշնչված է սիմվոլիստ բանաստեղծ Հրանտ Նազարյանցի պոե-

---

<sup>6</sup> Սիմֆոնիան կատարվել է Հայաստանի կոմպոզիտորների միության պլենումում 1986թ. Պետական սիմֆոնիկ նվագախմբի և երգչախմբային ընկերության երգչախմբի կողմից: Դիրիժոր՝ Վահագն Պապյան:

զիայով: Ստեղծագործությունը գրվել է Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի պատվերով<sup>7</sup>:

Սիմֆոնիան որոշակի իմաստով ծրագրային է: Նրա ցայտունորեն արտահայտված քնարախոհական բնույթը հատկանշվում է բազմաթիվ դրամատիկ շեշտադրումներով, երբեմն չարագուշակ և ողբերգական էպիզոդներով, որոնք արտահայտում են կոմպոզիտորի ապրումներն ու մտորումները՝ կապված ցեղասպանության հետ: Սիմֆոնիայի չորս մասերն ունեն Հ.Նազարյանցի բանաստեղծություններից քաղված խորագրեր՝ «Սովերների արքայությունը», «Խաչված երազներ», «Եփրատի օրորը» և «Աստղահյուս պսակներ»: Նեոռոմանտիզմի ավանդույթները, հիրավի մալերյան ծավալն ու շունչը ներդաշնակորեն միահյուսվել են սիմֆոնիայում Երկանյանի անհատական ոճին՝ ստեղծելով խորապես առինքնող երաժշտական կտավ:

5-րդ սիմֆոնիային հետևեց 6-րդի ստեղծումը, որը շարունակում է նախորդ սիմֆոնիայի թեմատիկ և ոճական գիծը: Սիմֆոնիան դեռ չի կատարվել, ուստի և ծանոթ չէ լայն հասարակայնությանը:

2014 թ. Երկանյանն ավարտել է ևս մի մեծակտավ ստեղծագործություն, որն առնչվում է Եդեռնի թեմային: Դա «Եռաձայն պատարագ» օրատորիան է ըստ Պարույր Մևակի հայտնի պոեմի: Օրատորիան գրված է ասմունքողի, խառը երգչախմբի, մանկական երգեցիկ խմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար:

Եվ, վերջապես, հնարավոր չէ չանդրադառնալ Մեծ եդեռնի գոհերի հիշատակին նվիրված Տիգրան Մանսուրյանի վերջին նշանակալի ստեղծագործությանը՝ խառը երգչախմբի և լարային նվագախմբի համար գրված յոթմասանի Ռեքվիեմին (2008-2011), որի համար 2013 թ. կոմպոզիտորն արժանացել է ՀՀ պետական մրցանակի:

Ստեղծագործության բավական համարձակ և աննախադեպ մտահղացումը իր մեջ գուցորդում է հայ միջնադարյան հոգևոր երգասացությունների ելևէջներից սերող երաժշտալեզուն և լատինական հոգեհանգստյան մեսսայի կանոնական տեքստը: Խառը երգչախմբի և լարային նվագախմբի հնչողությունը կարծես ներկայաց-

---

<sup>7</sup> Սիմֆոնիան նվիրված է Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբին և նրա գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Էդվարդ Թոփչյանին: Առաջին անգամ կատարվել է 2011թ. հունիսի 10-ին, դիրիժոր՝ Է. Թոփչյան:



նում է այդ պարտիտուրի երկու երեսակները, երկու հնչյունային հարթություն-տարածությունները՝ ձեռք բերելով խորհրդապաշտական, սիմվոլիկ իմաստավորում:

Բավարական ռադիոյի RIAS հայտնի երգչախմբի պատվերով ստեղծված Ռեքվիեմը Հայաստանում ընկալվեց ոչ միանշանակ, այնքան անսովոր, եթե չասենք ռիսկային էր թվում իր բնույթով տարբեր գեղարվեստական երևույթների նման զուգորդումը: Պատվիրատու երաժշտական խմբի կողմից ներկայացված պահանջը, այն է, որ երկը գրված լինի Ռեքվիեմի լատինական կանոնական տեքստի հիման վրա, հեղինակին առաջադրեց մի գերիսնդիք, որը, մեր կարծիքով, Մանսուրյանի կողմից լուծված է կոմպոզիտորին հատուկ վարպետությամբ: Նա մոտեցավ այդ խնդրին հետևյալ մեկնակետից. կարծես «հայացնելով» տեքստը երաժշտական ելևէջի միջոցով՝ դուրս բերել հայ հոգևոր երգարվեստը նեղ ազգային շրջանակներից և ներկայացնել աշխարհին հայ հինավուրց մոնոդիան իր ողջ հարստությամբ, գեղեցկությամբ և համաշխարհային, համաքրիստոնեական նշանակությամբ: Այդ ամենը մարմնավորված է մեծ դրամատիզմով և փիլիսոփայական ընդհանրացումների հակումով հատկանշվող նրա անհատական ոճի հունի մեջ: Ոճ, որը խարսխված է արդի մոդալ և ազգային ձայնեղանակային երաժշտական լեզվամտածողության վրա: Պատահական չէ, որ Ռեքվիեմն արդեն զբաղեցրել է իր արժանի տեղը վերջին շրջանի կանոնատային-օրատորիալ ժանրում, հաջողությամբ կատարվել ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում:

Ամփոփելով նշենք հետևյալը:

Ուշագրավ է, որ զեկուցման մեջ արծարծված գործերի հեղինակները պատկանում են XX դարի 60-70-ական թվականներին ասպարեզ իջած այն սերնդին, որն իր ծանրակշիռ խոսքն ասաց հայ արդի երաժշտության բոլոր ժանրերում՝ միշտ մնալով «պատմեշին վրայ» և մեծ ներդրում կատարելով հայ կոմպոզիտորական դպրոցի նվաճումների համանվագի մեջ: Նրանք էին դարձյալ, որ գեղարվեստական բարձր մակարդակով իրենց ստեղծագործության մեջ բարձրաձայնեցին և արտացոլեցին Եղեռնի բարդ, պատասխանատու և համայն հայությանը հուզող այդ ցավոտ և նվիրական թեման:

## THE THEME OF GENOCIDE IN THE WORKS OF ARMENIAN COMPOSERS

The theme of Genocide has long been a topic of mind for Armenian writers, artists, filmmakers and composers. Many chamber, choral, symphonic and stage music works of Armenian composers are devoted to that subject.

The first and one of the most significant ones among these works is E. Hovhannisyan's "Antuni" ballet (1969), in which the Komitas character embodies the collective image and the destiny of all Armenian artists from Western Armenia who perished because of Genocide.

The paper covers the works of Armenian composers of the 1960-70's generation, who have made a genuine contribution to all genres of contemporary Armenian music. These are E. Hayrapetyan's Oratorio "1915" (1977), Piano Sonata "Homage to Komitas" (1982) and Choral Poem "The Minute of Silence" (1986) by H. Delalyan, "Confession of a Survivor from Der Zor" for chamber orchestra (2005) by R. Sargsyan, Y. Yerkanyan's Third Symphony "The Voices of the Perished" (1984), Fourth Symphony "Nemesis" (1986), and Fifth Symphony "Crucified dreams" (2011); V. Babayan's opera "The Forty Days of Musa Dagh" (2004), and Requiem (2011) by T. Mansuryan.

*ԼԻԼԻԹ ԵՐՆՋԱԿՅԱՆ (ՀԱՅՍՏԱՆ)*

### ԵՂԵՌՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՎԵՐԱՊՐՈՒՄՆԵՐԸ ԱԼԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Հայոց պատմողական ավանդույթում ազգային երաժշտության պահպանման հարցն իբրև ինքնության կարևորագույն գործոն, գիտակցված է եղել դեռևս մինչև Մեծ եղեռնը և դրան հաջորդող Մփյուռքի ձևավորումը: Այդ են վկայում Կոմիտաս վարդապետի կյանքն ու գործը, նրա գիտահավաքչական գործունեությունը՝ միտված հայ ժողովրդական երգի անադարտ՝ օտար ազդեցություններից

գերծ նմուշների հայտնաբերմանը: Նախանձախնդիր մոտեցումով հայկականն օտար արևելյանից սահմանազատելով, աղավաղումներից զտելով՝ նա ըստ էության լուծում էր հայ երաժշտության ինքնատիպ նկարագիրը հիմնավորելու և ինքնուրույնությունն ապացուցելու սկզբունքային խնդիրը երկու գլխավոր՝ եկեղեցական և ժողովրդական ճյուղերի ուսումնասիրությամբ: Տեսադաշտից դուրս էր հայ քաղաքային, գուսանաաշուղական երգ-երաժշտությունը՝ իբրև գեղագիտական արժեքների այլ համակարգով բնութագրվող և օտար արևելյան գեղարվեստական ավանդույթին կամրջված ճյուղ:

Եղեռնաբեր հանգամանքներով և ազգի ինքնաճանաչման խնդիրներով պայմանավորված այսօրինակ մոտեցումը, որ բնականաբար խոչընդոտել է բնագավառի ուսումնասիրությունը՝ սկզբնավորելով օտարված ժանրերի միմյանց հակադրվող արևելյան և հայկական ըմբռնումները, միանգամայն հասկանալի է իր ժամանակի համատեքստում<sup>1</sup>:

Հայ երաժշտարվեստի ինքնատիպության և եզակիության հավաստումով կնքված Կոմիտասի գործը և նման ընկալումով պայմանավորված ազգային երաժշտական կուռք կամ մշակութային հետքոս դառնալու փաստը առիթ են տվել որոշ հետազոտողների Կոմիտասի համոզմունքներում տեսնել նաև ընդհանրապես հայ ժողովրդի եզակիության հավաստումը: Իբրև խոսուն ապացույց՝ նշվում է Կոմիտասի արտահայտած բուռն վրդովմունքը 1900 թ. Լևոն Եղիազարյանի հրատարակած «Հայ ժողովրդական երգերի հավաքածու»-ի կապակցությամբ, որով «օտարները սխալ կարծիք կարող են կազմել հայ ժողովրդի բարոյականի և մտավորի, անցյալի

---

<sup>1</sup> Ընդհանուր առմամբ աշուղական ու քաղաքային երաժշտարվեստին, «արևելյան» ու «հայկական» հասկացություններին առնչվող Կոմիտասի մտքերն ու տարաբժեք գնահատականները դեռևս լիովին հստակեցված չեն և կարող են տարակարծությունների առիթ տալ: Այս հոդվածում մեր խնդիրը չէ անդրադառնալ դրանց մանրամասն մեկնաբանմանը: Կասկածից վեր է, որ իր գիտահավաքական տեսադաշտում ընդգրկած և ստեղծագործաբար մշակած ու կատարած որոշ նյութերով նա ինքը մեղմացրել է իր անվերապահ դիրքորոշումը «հայի» արևելցու» և «օտարներին զաղափար տվող» ազգային երաժշտության չափանիշների նկատմամբ: Այս մասին տե՛ս *Ռ. Աթայան*, Դիտողություններ հայ քաղաքային ֆոլկլորի մասին, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», Երևան, 1959, N 1, էջ 68, *Լ. Երնջակյան*, Նորահայտ էջեր հայթուրքական երաժշտական աղբյուրների պատմությունից, Հայ արվեստի հարցեր, 2, Երևան, 2009, էջ 58:

և ներկայի մասին»<sup>2</sup>: Մի կողմ թողնելով Կոմիտասի զայրույթի և մտահոգության իրական հիմքերը՝ պայմանավորված ժողովածուում տեղ գտած մեղեդիներից մի քանիսի ոչ հայկական ծագումով, սահմանափակվենք նշելով, որ դրանց շարքում են նաև «Կիլիկիան», «Օրորոցի երգը» (Արի իմ սոխակ) և Տ. Զուխաճյանի «Լեբլեբիջի» օպերայից «Մենք քաջ տոհմի զավակներն ենք» երգը, որոնք ժողովրդի ամենալայն շերտերում ազգային հուզական վերելք են առաջացնում:

Եղենից հետո, հատկապես սփյուռքահայ համայնքներում ստեղծագործող արվեստագետների համար Կոմիտասի անձն ու գործունեությունը ձեռք բերեցին Հայրենիքը մարմնավորող խորհրդի, Հայրենիքը երաժշտական լեզվով մտապատկերելու և վերապրելու, յուրայինի և օտարի սահմանները տարազատելու ուղեցույցի նշանակություն: Բնականաբար, ազգային ու մշակութային ինքնապահպանության դիսկուրսը չի կարող միևնույնը լինել Հայրենիքում և Սփյուռքում: Մեկ օրինակով հնարավոր է գիտակցել ազգային երաժշտությանն ու նվագարանին տրվող նշանակության պաթոսը արևմտահայի կամ սփյուռքահայի պատկերացումներում հայկական աշխարհի իրական ու կորուսյալ տարածքների խորհուրդը մարմնավորելիս:

Ազգային երաժշտական ավանդություն կանոնավորված նվագարաններից՝ թառ, քամանչա, դուդուկ, սրինգ, զուռնա, ուղ և այլն, որոնցից շատերը հավասարապես տարածված են Մերձավոր Արևելքի տարբեր ժողովուրդների երաժշտական կենցաղում, սփյուռքահայ տարբեր համայնքներում դուդուկից առավել նշանակալից խորհուրդ ունի ուղը: Անժխտելի սիմվոլիզմ և հույզ կա ուղի պահպանման ու կենցաղավարման ավանդություն: Արևմտահայի համար այն հայրենի տնից ժառանգած թանկարժեք մասունք է և միջոց ողբերգության հիշողության, նոստալգիկ զգացողության և այդ «զգացողությունների հիշողության» տրամման հաղթահարելու համար: Ուղի արվեստի ու երկացանկի պահպանումը և սերունդներին փոխանցելու առաքելությունը հատկապես ամերիկահայերի ազգային ինքնության՝ հայկականության դրսևորման հաստատուն ցուցիչներից է: Ուղի առկայությամբ ու երաժշտությամբ են նրանք

---

<sup>2</sup> Stéu Recueil de Chants Populaires Arméniens, 1ère livraison, Paris, 1900, Գրական նշխարք Կոմիտաս Վարդապետի բեղուն գործի, Մոսթրել, 1994, էջ 231:

վերապրում իրենց պատմությունը, ուղի տիրապետումով են հաստատում Անատոլիայի բազմազգ երաժշտական մշակույթի հավասարագոր անդամի և կրողի գիտակցությունը:

Այս իրողությանն ենք առնչվում նաև ամերիկահայ կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի մեծածավալ ստեղծագործությունը քննելիս: Հովհաննեսի հայկական երաժշտական ըմբռնումները մեծապես ձևավորվել են Կոմիտասի հոգևոր և ժողովրդական երկերի ուսումնասիրության արդյունքում: Արևմտյան բազմաձայնության և հայ հոգևոր երգարվեստի միությունը կոմպոզիտորին ուղղորդել են դեպի իր նախասիրած լայնաշունչ կանոնական իմիտացիաների ոլորտը: Իր դաշնամուրային և կամերային ստեղծագործություններում նա կիրառել է Կոմիտասի դաշնամուրային պարերի մշակման սկզբունքները: Միևնույն ժամանակ հայկական մոնոդիայի տարբեր ժանրերի ինքնօրինակ վերաարարումների կողքին կոմպոզիտորի ստեղծագործության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում բայաթիները, գազելները, թաքսիմները՝ Անատոլիայի բազմազգ մշակութային ավանդույթում կանոնավորված քաղաքային երաժշտարվեստի ժանրերը: Կոմպոզիտորի երկերում առավել հաճախ կիրառվող գործիքներն են ուղը, քանոնը, թառը, սազը, որոնք պատկանում են համաարևելյան երաժշտական գործիքաբանին:

Հայոց Մեծ եղեռնը հայ ինքնության հարացույցին նոր նշույթներ հավելեց, որոնցով սահմանազատվում են ժողովրդի տարբեր հատվածների՝ արևելահայերի, արևմտահայերի, սփյուռքահայերի պատմական հիշողության մեջ բյուրեղացած էթնոմշակութային ընկալումները: Ավելի քան խոսքը, երաժշտությունը բանալի դարձավ սփյուռքահայ արվեստագետների երկատված ինքնության բարդ որոնումներում:

Ալան Հովհաննեսի «օտար» ձայնի հիմքերը XX դարի երաժշտարվեստում առնչվում են նրա հայ-շոտլանդական ծագման, հայ-արևելյան ինքնության և իր երաժշտական աշխարհում տեղ գտած զանազան արևելյան մշակույթների՝ հնդկական, ճապոնական, կորեական և բազում այլ գեղարվեստական ավանդույթների (օրինակ՝ ճապոնական գագակուի, նո դրամայի, հնդկական ռագաների) ինքնատիպ մեկնաբանության խնդիրներին: Կոմպոզիտորի ինքնության որոնումները խոռվահոյզ են եղել, սակայն լայն ճանապարհներ են բացահայտել նրա երաժշտական դեգերումների և գեղագիտական

ընկալումների համար՝ ձևավորելով նրա հայ-արևելյան երաժշտական աշխարհը Արևմուտքի երաժշտության համատեքստում: Հայկական ինքնության հայտնությամբ է պայմանավորված կոմպոզիտորի շրջադարձը դեպի Արևելք, և այդ ինքնության դրսևորումներն առկա են հեղինակի զանազան «արևելյան» գործերում: Հայկականությունը տարեթվերով պարփակված փուլ չէ Ալան Հովհաննեսի ստեղծագործական տարեգրության մեջ, այլ սեփական ես-ի բացահայտում, ինքնաընկալման տարածք և ելակետ՝ հաղորդակցվելու հինարևելյան քաղաքակրթությունների տարբեր ոլորտներին<sup>3</sup>:

Երիտասարդ տարիներին (մինչև 1940-ական թվականները) Հովհաննեսն ասես անտեսել էր իր ազգային ինքնության մասը կազմող, միևնույն ժամանակ անսովոր հոգեբանական խռովք պատճառող «հայկականությունը»: Հայկական ծագման պատմեջի հաղթահարումը և հայ մոնոդիկ երաժշտությանը դիմելը՝ իբրև ինքնաարտահայտման անհրաժեշտություն, կոմպոզիտորն իր կյանքում նոր փուլով է նշանավորել: Հոգևոր-կրոնական հավատամք ունեցող ու խորհրդապաշտական-արարողական հիմնանյութ փնտրող արվեստագետն անցման այս փուլի կամ նոր սկզբի խորհուրդն իրականացրել է՝ կարևորելով գոհաբերության գաղափարը՝ ոչնչացրել է նախորդ շրջանում գրած շուրջ 500 գործ:

Այդ արտառոց և ճակատագրական որոշման շարժառիթը կոմպոզիտորի «Աքսոր» («Exile», 1937 թ. ) վերնագրված սիմֆոնիան է եղել (նրա 70 սիմֆոնիաներից առաջինը)՝ ձոնված Հայոց Եղեռնին: Նախնիների հիշատակը հավերժացնող Ալան Հովհաննեսի խորհրդանշական նվիրաբերումն իրարամերժ գնահատականների է արժանացել ամերիկյան երաժշտական հանրության տարբեր շրջաններում:

Հակառակ ԲԲՄ Միդլանդ նվագախմբի գլխավոր դիրիժոր Լեսլի Հյուարդի, որը բարձր էր գնահատել իր ղեկավարությամբ հնչած Ալան Հովհաննեսի «Աքսոր» սիմֆոնիան, ամերիկյան կոմպոզիտորներ Լեոնարդ Բեռնստայնն ու Ահարոն Կոպլանդը՝ ժամանակի ազդեցիկ դեմքերը, Բոսթոնի Թանգվուդի համալսարանի երաժշտական կենտրոնում այդ ստեղծագործությունն ունկնդրելիս բարձրաձայն խոսել ու միտումնավոր խանգարել են՝ այն անվանե-

---

<sup>3</sup> Տե՛ս Լ. *Երնջակյան*, Ալան Հովհաննեսի երաժշտությունը Արևելք-Արևմուտք մշակութային խաչուղիներում, Երևան, 2015:

լով “ghetto music”, էժանագին ինտերվալներ պարունակող կամ դոմաժորային: Հովհաննեսը վիրավորված հեռացել է Թանգվուդից<sup>4</sup>:

Վ. Սարոյանին ուղղված նամակներից մեկում Հովհաննեսը գրում է Ա. Կոպլանդի և Լ. Բեռնստայնի անհանդուրժողական, նույնիսկ քամահրական վերաբերմունքի և իր խոցված ինքնասիրության մասին: Եթե նկատի ունենանք նաև երբեմնի համախոհ ընկերների, Արևմուտքի երաժշտության հեղինակավոր դեմքերի՝ Ջ. Քեյջի և Կ. Շոտկիհաուզենի հետ ունեցած տարաձայնություններն ու հետագայում հրապարակայնորեն արտահայտած իր արհամարհանքը նրանց նկատմամբ, ապա մասամբ հասկանալի են դառնում Հովհաննեսի շուրջը ստեղծված անառողջ մթնոլորտի, երաժշտական և ակադեմիական շրջաններից նրա օտարվելու պատճառներն ու հետևանքները: Հովհաննեսն անհամեմատ պակաս ուշադրության է արժանացել երաժշտագիտական շրջաններում, քան ժամանակակից այլ կոմպոզիտորներ, որոնք նույնպես հետաքրքրվել են Արևելքի երաժշտությամբ<sup>5</sup>:

Գուցե Թանգվուդից ստացած բացասական լիցքերն ու հոգեկան ընկճվածությունն ավելի խորանային և էապես ազդեին կոմպոզիտորի ստեղծագործական ապագայի վրա, եթե այդ շրջանում նա չհանդիպեր ծագումով հույն փիլիսոփա, գեղանկարիչ-պրիմիտիվիստ Հերմոն Դի Ջիովաննոյին՝ իր հոգևոր ուսուցչին, որը Հովհաննեսին վերջնականապես «դարձի բերեց» դեպի իր հայկական արմատները: Նրա խորհրդով է կոմպոզիտորը սկսել լրջորեն ուսումնասիրել հայ երաժշտությունը և իր նախնիների մշակութային ժառանգության մեջ է գտել ստեղծագործական-հոգեբանական ճգնաժամից դուրս գալու ուղիները: Հովհաննեսը դառնում է Ութերթաունի (Մասաչուսեթս) հայկական եկեղեցու երգեհոնահարը, հոգևոր հայրերից դասեր է առնում, ուսումնասիրում Կոմիտասի երաժշտությունը և համերգային կատարումով ներկայացնում նրա դաշնամուրային վեց պարերը:

«Աքսոր» սիմֆոնիան Հովհաննեսի այդ նոր ինքնության «առաջին հրապարակային խոստովանություններից» էր, որն օգնել էր

---

<sup>4</sup> **Larry Rohter**, A Composer Echoes in Unexpected Places, The New York Times, Nov. 4, 2011.

<sup>5</sup> Տե՛ս **Tyler Kinnear**, Alan Hovhanness and the Creation of the “Modern Free Noh Play”, 2009, p. 103:

հստակեցնելու նրա «հոգևոր լարվածքը» և կանխորոշել ստեղծագործական ու հոգեբանական ճգնաժամից դուրս գալու ուղիները: Դրան հաջորդող հայկական կոչվող փուլում են ստեղծվել կոմպոզիտորի հանրահայտ հայկական ստեղծագործությունները՝ «Լուսածագ», Հայկական երեք ռապսոդիաներ, «Մուրբ Վարդան» սիմֆոնիա և այլն:

Միմֆոնիայում չկան ազգային երաժշտական մեջբերումներ, որը հեղինակի երաժշտական մտածողության բնութագրական արտահայտություններից է: Գեղանկարչական պատկերի հետ մտազուգորդվող եռամաս սիմֆոնիկ կտավի հուզական-գաղափարական ուղղվածությունն արտացոլող «Lament» /Ողբ/, «Conflict» /Բախում/ և «Triumph» /Հաղթանակ/ ենթավերնագրերը, ինչպես նաև առանձին մասերում օգտագործված ժանրային ձևերը՝ խորալ, պար, ֆուգա, դիսկրետ, հույզերի և ապրումների քառօթիկ փոփոխությունների խոսքային ու երաժշտական նշանակիչներն են: Միմֆոնիայի ոճական-կառուցվածքային առանձնահատկությունները՝ օստինատ ռիթմական հյուսվածքները, ծավալուն մեղեդիական դարձվածքների ու պարային ռիթմերի համադրումները, ալեատորիկ դրվագների ու պոլիֆոնիկ ձևերի մեջընդմիջումը հանդիպում են հեղինակի հայկական և արևելյան տարբեր գործերում: Դրանք որոշակի ոճական ելևէջային ընդհանրություն ունեն հատկապես «Մուրբ Վարդան» սիմֆոնիայի և միևնույն թեման հավերժացնող «Խորհուրդ նահատակաց» սյուիտի հետ: Տվյալ թեմատիկ ժանրում կարելի է դիտարկել նաև «Վերադառնալ և վերակառուցել լքված վայրերը», «Անիի ավերակները» և բազմաթիվ այլ ստեղծագործություններ, որոնք քննադատվել կամ դրվատանքի են արժանացել իրենց խորագրերի համատեքստից դուրս՝ չխոցելով կոմպոզիտորի ազգային ինքնասիրությունը: «Խորհուրդ նահատակաց» սյուիտը յուրօրինակ խոկում է Վարդանանց պատերազմում զոհված 1000 նահատակների մասին: Այս երկի և «Մուրբ Վարդան» սիմֆոնիայի արևելյան խճանկար հիշեցնող տեքստերում օգտագործված են հոգևոր բնույթի մեղեդիներ և հեղինակի նախասիրած ժանրային միավորները՝ երգ, թափոր, ողբ և այլն: Սակայն, եթե «Մուրբ Վարդան» սիմֆոնիայում դժվար է անմիջական հուզական գաղափարական կապ տեսնել երաժշտության ծրագրային անվանումների և Վարդան գորավարի հերոսական անձնավորության կամ կատարած գործի պատմական



բովանդակության միջև, ապա «Խորհուրդ նահատակաց»-ի հիմքում, ի դեպ գրված ուղի և լարայինների համար, ընկած են Պատարագի երգեցողության տեքստային բովանդակության հիմնական միավորները՝ «Սուրբ, սուրբ», «Ամեն Հայր Սուրբ», «Հայր Մեր», «Տեր Ողորմեա» և այլն: Այս տեսակետից սիմֆոնիայի «Սուրբ Վարդան» անվանումը մեզ նույնիսկ զուտ պայմանական է թվում: Թերևս հեղինակն այդ կապը տեսել է նրանում, որ Վարդան Մամիկոնյանը, դասված լինելով հայ եկեղեցու սրբերի շարքում, նրան նվիրված սիմֆոնիայի որոշ հատվածներում օգտագործել է հոգևոր բնույթի մեղեդիներ, իսկ սիմֆոնիայի վերջին մասի՝ Էստամպի հզոր և կենսահաստատ բնույթով ընդգծել է հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ բյուրեղացած Վարդանանց հերոսամարտի հոգևոր և բարոյական հաղթանակի գաղափարը:

Անգլիացի կոմպոզիտոր, դիրիժոր Լեյլի Հյուարդն ամենաջերմ գովեստներն է շնայել Հովհաննեսի ստեղծագործություններին՝ համարելով՝ «հզոր, երաժշտապես ամուր, հիմնարար՝ առանց մխրճվելու խրոմատիզմի մեջ, որը շատերին է գայթակղում... Նա հանճար է և դեռ ավելի մեծ գործեր կստեղծի»<sup>6</sup>: Ալան Հովհաննեսի «Աքսոր» սիմֆոնիայի պրեմիերայից հետո երաժշտագետ Իսաբել Ջոնսը գրել է, որ այդ հույզերով, ողբով, կոնֆլիկտով և հաղթանակով լեցուն գործը մեծ տպավորություն է թողնում... ու թեև կոմպոզիտորն իր սիմֆոնիայի համար ծրագիր է նշել՝ ողբ, բախում և հաղթանակ, այն կարող էր առանց այդ վերնագրերի էլ տպավորիչ լինել... նրա երաժշտությունը նույնքան աբստրակտ մոդեռն է, որքան ժամանակակից կերպարվեստը: Իսկ ամերիկացի գրաքննադատներից մեկը սիմֆոնիայի հաղթական ֆինալը բացատրել է կոմպոզիտորի ամերիկյան կենսականությամբ<sup>7</sup>:

Ալան Հովհաննեսի «Աքսոր» սիմֆոնիայի երաժշտական տեքստը՝ մեղիզմատիկ ոճի մեղեդիական մտածողության գերակշռությամբ, տարբերվում է թե՛ XX դարի ողբերգությունները մարմնավորող էքսպրեսիոնիստական և ավանգարդային արտահայտչամիջոցներով հագեցած արևմտաեվրոպական կոմպոզիտորների երկե-

<sup>6</sup> Տե՛ս Ալան Հովհաննեսի արխիվ, Armenian Student's Association will Sponsor Concert by Alan Hovhanness, by Gladys Aroossian, նաև՝ Alan Hovhanness in Town Hall Concert by Don A. Donelian.

<sup>7</sup> Տե՛ս Ալան Հովհաննեսի արխիվ, New England Topics by Rose Minassian:

րից և թե՛ ժամանակակից հայ կոմպոզիտորների «Եղեռնի խորանին» մատուցած երաժշտական ընծայաբերումներից, որտեղ մարդկային խոսքին առանձնահատուկ գործառույթ է տրվում:

Ալան Հովհաննեսի «Աքսոր» սիմֆոնիայի շուրջ ձևավորված բացասական տրամադրություններն ու կոմպոզիտորի հուզական հոգեբանական արձագանքը վկայում են, որ Եղեռնի թեման սուբյեկտիվ դաշտ է ենթադրում, որտեղ քննադատությունը կարող է պայմանավորված լինել նաև քաղաքական նկատառումներով: Մյուս կողմից՝ թեմայի բացառիկությունը որևէ կերպ չի երաշխավորում սովյալ գեղարվեստական երկի արժեքը: «Եղեռնին նվիրված» ստեղծագործությունները թե՛ որոշակի վերլուծություն են ենթադրում, թե՛ այդ վերլուծության փիլիսոփայություն... Ալան Հովհաննեսը «Աքսոր» սիմֆոնիայում Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացրել է իր պատկերացրած տիեզերական և Ֆրենսիս Բեկոնի «հրեշտակային իմացության» ըմբռնումների հնչյունային տարածքում: Ստեղծագործությունը տարիներ անց կոմպոզիտորը նվիրել է անգլիացի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնին:

Սրբազան կամ ողբերգական թեմայի վկայակոչումը համարժեք չէ սովյալ երկի ընկալման գեղարվեստական արժեքին. երբեմն ծայրահեղ արտահայտչամիջոցների, օրինակ՝ ականատեսների վկայությունների տեքստային մեջբերումները կարող են ավելի ազդեցիկ լինել, դառնալ տառապանքի վերապրում և ստեղծագործությունը վերածել ողբերգական իրողության համատեքստի՝ հետին պլան մղելով երաժշտությունից ակնկալվող հուզական ազդակները: Սակայն «Եղեռնին նվիրված», «Եղեռնի զոհերի հիշատակին» սրբազան խորագրերը կրող ստեղծագործությունները՝ անկախ իրենց մարմնավորումներից և դրանց համարժեք կամ տարարժեք գեղարվեստական ընկալումներից, միավորված են մի թեմատիկ ժանրում, որի էթիկական, հոգեբանական ու բարոյաքաղաքական ենթատեքստը հնարավոր չէ անտեսել: Բոլոր դեպքերում օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գնահատականներով չեն ավարտվում նման գործերի կարևորությունն ու կատարման անհրաժեշտությունը:

Ժողովրդի հավաքական հիշողության համալիրում ողբերգության թեման իր տարբեր ժանրային մարմնավորումներով Եղեռնի ազգային հուշապատման ինստիտուցիոնալ կառույցի մասն է և՛ Հայրենիքում, և՛ Մփյուռքում. դրանք իրենց «հիշեցնող ու մեղադրող»

ներկայությամբ արժևորվում են «Post-Genocide» արվեստի դիսկուրսում:

*LILIT YERNJAKYAN (ARMENIA)*

## **MUSICAL REFLECTIONS OF ARMENIAN GENOCIDE IN ALAN HOVHANNESS' WORKS**

The American Armenian composer Alan Hovhaness' "otherness" in the context of the 20th century musical discourse can be explained by his Armenian-Scottish origins, Armenian oriental musical identity and his unique interpretation of different artistic traditions of eastern musical cultures - Indian, Japanese, Korean etc., available in his works.

The tragic pages of Armenian history are reflected in Alan Hovhaness' huge heritage; this article particularly tackles the "Exile" symphony (No.1, 1939), dedicated to the Armenian Genocide. The "Exile" is a kind of catharsis in the long run of Hovhaness' pursuit of national spirit and musical identity to achieve solution to his psychological and creative crisis. The symphony became a symbolic self-acknowledgement of the composer's Armenian identity, and an offering in commemoration of the victims of the Genocide in the realm of the musical space of the composer's individual perceptions.

*ԼԻԼԻԹ ԱՐՏԵՍՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

### **ՎԱՐԴԱՆ ՄԱԽՈԽՅԱՆ. "LA PLAINTÉ DE L'ARMÉNIE"**

Զեկուցումը նվիրված է XX դարի հայ ծովանկարիչ Վարդան Արիստակեսի Մախոխյանի<sup>1</sup> (1869-1937) "La Plainte de l'Arménie" («Հայաստանի ողբը») երաժշտական ստեղծագործությանը: Հովհաննես Այվազովսկու տաղանդավոր հետևորդներից մեկը՝ Վ. Մախոխյանը, XX դարի առաջին տասնամյակների Եվրոպայի ամենաճա-

---

<sup>1</sup> Վ. Մախոխյանի ստեղծագործությունն ուսումնասիրելիս հիմնվել ենք հետևյալ ուսումնասիրության վրա, տե՛ս **Հակոբյան Ա.**, Ծովանկարիչ Վարդան Մախոխյան, Երևան, «Զանգակ» հրատ., 2004, 132 էջ:

նաչված և լավագույն ծովանկարիչներից էր, ով արժանացել էր Ֆրանսիայի և Գերմանիայի կառավարությունների ու մշակութային հաստատությունների ամենաբարձր տիտղոսներին:

Օսմանյան կայսրության կողմից իրականացված XX դարի ամենասարսափելի և արյունալի ոճրի՝ 1.500.000-ից ավելի հայերի, այդ թվում նաև՝ իր հարազատների տեղահանությունն ու ցեղասպանությունն անտարբեր չէին կարող թողնել նաև մեծ հայրենասերին, խոր և զգացմունքային արվեստագետին, ով հայ ժողովրդի պատմության ողբալի էջերի իրադարձություններին արձագանքել է 1915-1917թթ. ընթացքում գրված յուրօրինակ երաժշտական կտավում և նվիրել այն հայրենիքին՝ Հայաստանին: Ստեղծագործությունը, ըստ Վ. Մախոխյանի, հայրենակիցների տառապանքների արձագանքն է և համաշխարհային արդարության կոչ: Հավանաբար, այն Հայոց ցեղասպանության ողբերգությունն արտացոլող առաջին երաժշտական կտավն է, որը մինչ այժմ չէր արժանացել երաժշտագետ-հետազոտողների և երաժիշտ-կատարողների ուշադրությանը: “La Plainte de l’Arménie”-ն գրվել է ջութակի համար նվագախմբի կամ դաշնամուրի նվագակցությամբ: Ցավոք չի պահպանվել ստեղծագործության պարտիտուրը, որը հնարավորություն կընձեռեր պատկերացում կազմելու նվագախմբային կազմի վերաբերյալ:

Ամեննին պատահական չէ, որ ցեղասպանության արձագանքն արտահայտվել է Վ. Մախոխյանի երաժշտական ստեղծագործության մեջ: Ինչպես հայտնի է, Կարնո Սանասարյան վարժարանում ուսանելու տարիներին Վ. Մախոխյանը ստացել է նաև պրոֆեսիոնալ երաժշտական կրթություն որպես ջութակահար և երկմտել՝ հետագա ուսումնառությունը շարունակել որպես երաժիշտ, թե՛ նկարիչ: Այնուամենայնիվ ընտրելով նկարչությունը՝ ինքն իրեն համարել է երաժիշտ, որը միաժամանակ զբաղվում է նկարչությամբ: Տաղանդաշատ ծովանկարիչը որպես ջութակահար բազմաթիվ համերգներով հանդես է եկել ծննդավայրում՝ Տրապիզոնում, իսկ նրա կատարողական բարձր վարպետության մասին փաստել է մամուլը: Եվրոպայում ուսանելու տարիներին տաղանդավոր արվեստագետը, հավանաբար, ինքնակրթությամբ զարգացրել է իր երաժշտական տեսական և կատարողական գիտելիքները:

“La Plainte de l’Arménie” պիեսը, ըստ էության, Վ. Մախոխյանի և հայ ժողովրդի տրամադրության և վիճակի խորհրդանշական

պատկերն է: Մեղեդին ներկայացնում է բանաստեղծական և միևնույն ժամանակ վշտագին կերպար: Ստեղծագործությունը գրված է g-moll տոնայնության մեջ: Դաշնամուրային նվագակցության մեջ ֆակտուրայում առկա ալիքաձև պասաժները կարծես գրաֆիկորեն արտացոլում են Վ. Մախոխյանի տարերքի՝ ծովի ալիքների խռովահույզ շարժումները: Պիեսի առաջին հատվածում առկա է մտախոհ և էքսպրեսիվ կերպարայնություն: Տվյալ համատեքստում ընկալվում է հարցական բնույթ, որը թաքնված է այդ ինտոնացիաներում՝ «Ինչի համար»: Կուլմինացիայում առկա դինամիկ պոթերկումից հետո ռեպրիզում նկատվում է լարվածության անկում և պարպում: P հնչերանգի վրա շարադրված մեղեդին morendo հնարով հետզհետե մարում է փոքր օկտավում հնչող g հնչյունի վրա, որը, կրկնվելով երկրորդ օկտավում, խորհրդանշում է հայ ժողովրդի վերածնունդը և լուսավոր ապագայի մեծ սպասումները:

Այս պիեսի կատարումը պահանջում է խելամիտ մոտեցում ձայնարտաբերման հարցում, քանի որ յուրաքանչյուր փոքր հատված ունի իր տեմբրային, ակուստիկ և կառուցվածքային առանձնահատկությունները: Տեքստում հանգամանորեն նշված են երաժշտական ընթացքի բոլոր բաղադրիչները: Կատարողի առաջնահերթ խնդիրը Վ. Մախոխյանի մտահղացման զգացմունքային և ստույգ վերարտադրությունն է:

1919թ. հունվարի 13-ին Մոնտե Կառլոյի «Ժամանակակից համերգներ» համերգաշարի շրջանակներում կայացել է ստեղծագործության համաշխարհային առաջին համերգային ունկնդրումը դաշնակահար, կոմպոզիտոր, Մոնտե Կառլոյի օպերային թատրոնի նվագախմբի, Բելգիայի թագավորական օպերային թատրոնի և Մոնտե Կառլոյի օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր Ժորժ Լովերիի և Մոնտե Կառլոյի օպերային թատրոնի առաջին ջութակահար, «Մոնակոյի արքայազնի մենակատար» տիտղոսակիր, ջութակահար Անրի Վաթմանի կատարմամբ, որն արժանացել է հանդիսականների ջերմ ընդունելությանը և բազմաթիվ բիսերի: Նշենք նաև, որ Ժ. Լովերիի ձևն դաշնակահար և կոմպոզիտոր էր, ում գրչին են պատկանում բազմաթիվ դաշնամուրային, կամերային, սիմֆոնիկ ստեղծագործություններ: Նրանց գերակշիռ մասն են կազմում ինչպես երգերը՝ ձայնի և դաշնամուրի համար, այնպես էլ

ստեղծագործություններ ձայնի և նվագախմբի համար<sup>2</sup>: Ինչպես համերգաշարի կազմակերպիչ Ժ. Լովերինը, այնպես էլ Ա. Վաժմանը, իրենց հիացմունքի խոսքերն արտահայտելով, պիեսն իրենց հետագա համերգային ծրագրեր ներառելու թույլտվություն են խնդրել հեղինակից: Հայրենասիրական մեծ պոռթկումով գրված պիեսը խորապես հուզել է ներկաներին, փայլուն հաջողություն բերել կատարողներին և բարձր գնահատականի արժանացել ինչպես եվրոպական մամուլի, այնպես էլ երաժշտագետների կողմից: Ստեղծագործության ունկնդրումից հետո Ա. Մյուլլերն արձագանքել է. «...Մախոխյանը սիմֆոնիստ է, թե՛ իբրև նկարիչ, թե՛ որպես երաժիշտ: Այս ձևոսանք կատարվեց նրա սքանչելի երաժշտական ստեղծագործությունը, որտեղ հորդում են նրա հայրենիքի բոլոր տառապանքները...»<sup>3</sup>: Համերգի մասին հիացական խոսքեր են հնչել:

Ցավոք, պահպանվել է ստեղծագործության միայն կլավիրը:

Ստեղծագործությունը նաև մեծ արձագանք է ստացել Ֆրանսիայի Նիցցա քաղաքի «Օթել Նեքրեսքոյ» հյուրանոցում կայացած համերգի ընթացքում, որտեղ հանդես են եկել նշանավոր կատարողներ և երգիչներ ի նպաստ Մեծ եղեռնից փրկված հայ որբերի:

Ստեղծագործության մասին հիացական տողեր են գրվել «Բազմավեպ» պարբերականում, «La Petit Monégasque», «Eclaireur de Nice» լրագրերում և այլն:

«La Plainte de l'Arménie»-ի հայաստանյան պրեմիերան տեղի ունեցավ «Հայոց ցեղասպանություն-100. Ճանաչումից՝ հատուցում» միջազգային գիտաժողովի շրջանակներում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած համերգի ընթացքում Կոմիտասի թանգարան-ինստիտուտի համերգասրահում 2015թ. հոկտեմբերի 15-ին տողերիս հեղինակի և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 3-րդ կուրսի ուսանող, միջազգային մրցույթների դափնեկիր, ջութակահար Գրիգոր Գյուլխանջյանի կատարմամբ

---

<sup>2</sup> Ջ. Լովերինի մասին տեղեկություններնք քաղել հետևյալ ինտերնետային կայքից: Տե՛ս <http://drs.library.yale.edu/HLTransformer/HLTransServlet?stylename=yul.ead2002.xhtml.xsl&pid=beinecke:lauweryns&clear-stylesheet-cache=yes> 05.10.2015 15:30:

<sup>3</sup> Հակոբյան Ա., Ծովանկարիչ Վարդան Մախոխյան, էջ 97:

(դասախոս՝ արվեստագիտության թեկնածու Մարտուն Կոստանդյան)<sup>4</sup>:

Օսմանյան կայսրության իրականացրած ոճիրը դեռ չի դատապարտվել համաշխարհային հանրության կողմից: Այս առումով հատկանշական է, որ ստեղծագործությունը վերածնվում է 100 տարի անց, փաստորեն այն իր առաքելությունը դեռ չի ավարտել: Մախոկյանական հնչյուններն անընդմեջ հիշեցնելու են 100 տարի առաջ իրականացված և դեռ չդատապարտված ոճիրը՝ մինչև արդարության վերականգնումը: Այս խոր զգացմունքային երաժշտական շարադրանքը ձոն է և պատգամ. այլևս երբեք...

*LILIT ARTEMYAN (ARMENIA)*

### **VARDAN MAKHOKHYAN: “LA PLAINTÉ DE L’ARMÉNIE”**

The paper analyzes the musical composition “La plainte de l’Arménie” (“Lamentation of Armenia”), written by the Armenian marine artist Vardan Makhokhyan (1869-1937) in 1915-1917 and dedicated to his Fatherland – Armenia. As V. Makhokhyan put it – the composition is an echo of the torments of his compatriots and a call for the world justice. “La plainte de l’Arménie” – a piece for violin accompanied by orchestra or piano – is most likely the first to reflect the tragedy of the Armenian Genocide. It is not surprising that V. Makhokhyan reacted to the Genocide with a musical composition: in the years of study at the Sanasarian College in Erzurum, he concurrently took classes of violin and, in fact, had had to choose between the careers as a musician and a painter. Having made a choice in favor of painting, he, however, considered himself a musician engaged in fine arts.

The premiere of the work under review took place on 13 January 1919 in Monte-Carlo. Henri Vazhman performed it with the Orchestra of the Monte-Carlo Opera; conductor – George Lovering. The clavier of the work has survived.

In Armenia, “La plainte de l’Arménie” was first performed by the author of these lines at the concert within the framework of the international

---

<sup>4</sup> Համերգի մասին տե՛ս Գիժակոսյան Մ., Լիլիթ Արտեմյանի մենահամերգը Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին, «Լրաբեր հասարակական գիտություններ», 2015, N 3 (645), էջ 274-276:

symposium “The Genocide of Armenians – 100: from Recognition to Restitution”, organized by NAS RA Institute of Arts.

*ԼԻԼԻԹ ՊԻՊՈՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

**ՍՈՒՐԵՆ ՊԻՊՈՅԱՆԻ «ԳԱՂԹ»  
ԳԵՂԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ**

Հայաստանի վաստակավոր նկարիչ Սուրեն Պիպոյանը պատկանում է հայ նկարիչների այն սերնդին, ում բախտ վիճակվեց անցնել Խորհրդային Հայաստանի խորդուբորդ ճանապարհներով համարյա ամենասկզբից մինչև վերջ և շարունակել ապրել անկախ Հայաստանում: Երկրորդ համաշխարհային պատերազմի 6-ամյա թոհուրոհն անցած երիտասարդ նկարիչը (պահպանվել է նրա ռազմական օրագիրը) առանձնահատուկ ոգևորությամբ մի քանի տարի անց ընդունեց խրուշչովյան ձևիայը և մեծ նվիրումով աշխատեց հետագա տարիներին՝ իր պաշտելի հայրենիքի զարգացմանը զուգընթաց անցնելով սեփական ստեղծագործական փուլերով և արձագանքելով հայաստանյան առօրյային իր արվեստով: Լինելով գեղարվեստական ուսումնարանի և Գեղարվեստաթատերական ինստիտուտի (այժմ՝ Երևանի գեղարվեստի ինստիտուտ) շրջանավարտ, նա ուսանել է հայ գեղանկարչության մեծ վարպետների մոտ: Ստեղծագործական ուղին սկսել է սոցռեալիզմի ոճով, որը գնահատանքի էր արժանանում ժամանակակիցների կողմից՝ սկսած ավարտական «Խոհանոցում» աշխատանքից, «Այրիվանքի քարափները» բնանկարից և այլ: Սակայն նկարիչը փնտրում էր իր ուրույն ոճը: Այն նշմարվեց 1960-ականներին, հասունացավ և հաստատվեց իր ստեղծագործական կենսագրության մեջ այնպես, որ այդ ձեռագրով անսխալ կարելի է ճանաչել Սուրեն Պիպոյանի աշխատանքները: Համապատասխանելով նկարչի անցած դժվարին ուղուն և հախառն խառնվածքին, որը համատեղում էր ռդբրգականությունն ու կենսավետությունը, այդ ոճը, որը դրսևորվում էր նաև այլ արվեստագետների մոտ, արվեստաբանների կողմից կոչվեց «խիստ ոճ»: Համարյա մոնոխրոմ՝ մոխրագույն-դարչնագույն գույսպ գունային գամմայի մեջ պատկերված կտրտված, ճաքճքած հողը, որի նիստերը



շեշտված են բաց գույնով, և այդ հողի վրա քայլող առնական ֆիգուրները՝ գործի մեջ ընկղմված կամ նպատակին, գաղափարին՝ հետևող մարդիկ միասին ստեղծում են խստաշունչ մի միջավայր՝ ազնիվ, աշխատավոր և ճշմարիտ: Այդ խիստ ոճով նկարվեցին «Պահապահները» (1964), «Երևան–2750» եռապատկերը (1968), «Կինի գրավումը» (1969), «Շղթայվածը» (1970), «Աստղաֆիզիկոսները» (1970), «Արփա–Սևանի շինարարները» (1971) և շատ այլ ծավալուն աշխատանքներ: Ավելի առաջացած հասակում նա ներմուծեց լաջվարդն ու դեղինը, նրա ներկապնակ վերադարձավ կարմիրը այն հասակում, երբ արդեն բոլոր արտաքին և ներքին պատերազմներն ավարտվել էին, և մնում էր միայն գովերգել գոյը և ստեղծագործական կյանքը, որն էլ նա անում էր մեծ խանդավառությամբ, ինչպես, օրինակ, «Վերադարձ» կտավում:

Ճաքճքած հողը հեղինակի սիրելի մոտիվն է, այն լրացնում է հերոսների հոգեվիճակը, ինչպես, օրինակ, 1976 թվականին նկարված «Կոմիտաս» կտավում, մեծ երաժիշտը պատկերված է այն պահին, երբ նա, հոգին խռով, հեռանում է Էջմիածնից: Այստեղ նկատում ենք ոսկեգույն կոլորիտի գերակայությունը, որն էլ կհաստատվի «Գաղթ» աշխատանքում:

Սուրեն Պիպոյանն իր բնույթով մոնումենտալիստ էր, նա ձգտում էր մեծ ծավալի և հերոսական հնչեղության բազմաֆիգուր հորինվածքների և կատարել է նման մի շարք կտավներ: Նա երազում էր որմնանկար անել՝ մեծ, փառահեղ, իր հայրենիքը փառաբանող, բայց այդ երազանքը պահանջում էր պետական պատվեր, որը չեղավ:

Իր ծավալուն բազմաֆիգուր հորինվածքների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում նրա «Գաղթ»-ը, որը դարձավ նկարչի կյանքի կենտրոնական ստեղծագործությունը: «Գաղթ» մոնումենտալ կտավը չի լուսաբանվել արվեստաբանական գրականության մեջ չնայած այն փաստին, որ 1980 թվականին Հայոց Մեծ եղեռնի 65-ամյակին նվիրված հանրապետական ցուցահանդեսում ներկայացվելուց հետո, այն արժանացավ «Տարվա լավագույն գեղանկարչական աշխատանք» պատվավոր մրցանակին:

Այս նկարի ստեղծումն ունի երկար պատմություն: Հայոց Մեծ եղեռնի թեման զբաղեցնում էր նկարչի միտքը շուրջ 15 տարի: Այս

հորինվածքի առաջին տարբերակը ստեղծվեց 1964-65 թվականներին:

Նկարչի օրագրում (1964 թվականի դեկտեմբեր) կա գրառում. «Կարդում և ուսումնասիրում եմ հայկական կոտորածներից տեղեկություններ, գարնանը ցուցահանդես է լինելու»: Եվ հետո. «Ապրիլի 22-ին լրացավ հայ գաղթականների և 2 միլիոն արևմտահայերի կոտորածի 50 տարին: Այս օրերին վերածնված հայերը վերհիշել են իրենց անցած օրերը: Ցույցերը կատարվում են կազմակերպված, չնայած բորբոքված կրքերի»:

«Գաղթ» յուզաներկ կտավի առաջին տարբերակի չափսերն են՝ 122x140 սմ: Այժմ այն գտնվում է մասնավոր հավաքածուում: Այս առաջին օրինակը կատարված է նկարչի տվյալ շրջանին բնորոշ մուգ դարչնագույն-կապտավուն ներկապնակով, նկարչին հատուկ կտրիստական-էքսպրեսիոնիստական «խիստ ոճով», լերկ, դաժան անապատի թեք մակերեսով (գուցե լեռներով) դանդաղ ընթացող անծայր մարդկային շարապույների պատկերմամբ: Թեև նրանք գտնվում են մթից դեպի լույս, սակայն նկարի ընդհանուր տրամադրությունը ողբերգական է, ցավալի: Հեղինակը նշմարվում է Սբ. Հովհաննիսյանի վանքի ուրվագիծը: Թեև առօրյա խոսակցության մեջ այս և մյուս տարբերակները նկարչի կողմից միշտ անվանվում էին «Գաղթ», սակայն նրանց պաշտոնական անվանումները միշտ տարբեր էին: Նկարի այս օրինակն անվանվեց «Փրկության ճանապարհ», որը որոշ չափով մեղմում էր ազգայնական բնույթը խորհրդային կարգերի ներքո, թեև նկարիչը շատ լավ էր գիտակցում, որ այդ ճանապարհը հավասարապես եղել է նաև մահվան ճանապարհ: Այդ մուգ, մռայլ գույնը պատմում էր ողբերգության մասին: Ֆիգուրներն ընդհանրացված են, գլխիկոր են, մոլորված, սարնիվեր ճանապարհը դժվար է, վերելքը՝ անտանելի: Մարդիկ ձուլված են հողի հետ, նույն գույնի են, նրանք համարյա հող են:

Ապրիլյան ցուցահանդեսից հետո հեղինակն օրագրում գրեց. «Այսպես, ուրեմն, «Գաղթ» կոմպոզիցիոն կտավի վրա աշխատեցի 25 օր – ստեղծագործական բուռն շրջան էր, խիստ լարված էի աշխատում... Կոմպոզիցիան բաղկացած է 100 ֆիգուրներից, բոլորը մեկ առ մեկ նկարել էր հարկավոր: Աշխատանքը կատարեցի չափազանց խիստ ոճով, պայմանական միջավայրում և սիմվոլիկ: Ցուցահանդեսում աշխատանքը միահամուռ հավանության արժա-

նացավ, ումանց վրա ցնցող տպավորություն թողեց»: Եվ նույն տարվա հոկտեմբերյան գրառման մեջ. «Եվս 25 օր աշխատեցի կտավիս վրա: Աշխատանքը նվիրված է հայ գաղթականներին. «Փրկության ճանապարհ», բազմաթիվ մանր ֆիգուրների երթը սարնիվեր: Իմ կարծիքով դա իմ աշխատանքներից ամենահաջողվածն է»:

1968 թվականին ՀՍՄՀ մշակույթի նախարարության պատվերով Սուրեն Պիպոյանը կատարեց նկարի հեղինակային կրկնօրինակը, քիչ ավելի մեծ չափսերի՝ 160x200 սմ: Այս օրինակը կոչվեց «Դեպի նոր Հայաստան», Խորհրդային Հայաստանի գաղափարախոսությանը համահունչ: Այն մնաց Մոսկվայում, գտնվելու որոշակի վայրը մեզ չհաջողվեց պարզել:

1979 թվականին Սուրեն Պիպոյանը որոշում է կրկին անդրադառնալ այս թեմային, սակայն՝ հիմնականում պահպանելով նույն հորինվածքը, հաղորդել դրան նոր մեկնաբանություն և կատարման ոճ: Նախ և առաջ որոշվեց չափսը անել նախորդներից շատ ավելի մեծ՝ 300x375 սմ: Փոխվեց գունային լուծումը՝ մուգ դարչնագույններից դեպի դեղնավուն-ոսկեգույնը, սպիտակը, երկնագույն-մոխրագույնը, սևը: Ավելացավ մի կարևոր դետալ. գաղթականներին ընդունում են հրեշտակները, որը որոշակի համարձակություն էր աթեիստական խորհրդրդային օրերում: Կտավի ստեղծման ընթացքում ուսումնասիրվեցին հայկական տարազները:

Տուն ու տեղ լքած, բռնի տեղահանված հայությունը գնում է դեղին անապատով՝ տանելով թանկագին մասունքներ՝ գիրք, սրբապատկեր, խաչքար, գրկած երեխային, հիվանդ հարազատին: Նրանց շարքում կարելի է նկատել Կոմիտաս վարդապետի ֆիգուրը, որը դարձել է դեպի մեզ՝ դիտողներիս: Նա հետ է նայում՝ դեպի լքված հայրենիքը: Բացի նրանից, մի փոքրիկ մանչուկ է հետ նայում՝ տխուր, մի քիչ զարմացած հայացքով: Նա ընդմիշտ թողնում է իր պապենական տունն ու բակը: Երեխաներին, մարդկանց կարծես հողմն է տանում, նրանք մի կերպ դիմադրում են ու գնում: Թռչուններն աղաղակում են: Գաղթականներին հովանավորում ու քաջալերում են հրեշտակները: Թռչուններն ու հրեշտակները կարծես միակն են, ովքեր կարեկցում են ճամփա ընկած մարդկանց: Տեսնում ենք, որ պատկերված չեն ռստիկաններ, դիակներ, մահվան սահմոկեցուցիչ տեսարաններ: Նկարչի նպատակն այլ էր, քան սարսափեցնել դիտողին: Գաղթականները պատկերված են իրենց

Ճակատագրին դեմ հանդիման: Նրանք գնում ու գնում են անապատով: Ձեռքերը վեր մեկնած՝ փրկություն են աղերսում Աստծուց: Կտավում կա աղաղակ, որն ստեղծված է նաև կոտորված քարաբեկորներով, որոնք ասես թափվում են ճանապարհին: Նկարիչը չի պատկերել մահը ուղղակիորեն, նատուրալիստորեն, բայց այդ քարերը, որոնք մարդկանց հավասար դերակատարներ են այս կտավում, կարծես քարացած մարդկային ճակատագրեր են: Հեռվում քիչ թեքված վանքն է և լույսը, որ բացվում է ժայռերի միջև: Դիտակետը վերցված է վերևից, մեկ ընդհանրական հայացքով դիտված է անվերջանալի ընթացքը, և այդ ընդհանրացված դիտակետից ժողովուրդը բնորոշվում է որպես թանկագին մշակույթի կրող և հավատարիմ այդ մշակույթին, հարազատ մասունքներին, պատմական կայուն հիշողության անդավաճան տեր: Սա է այս աշխատանքի կարևորագույն խորհուրդը: Որքան այն ողբերգական է, նույնքան և կենսահաստատ, և դրանում կարևոր դեր են կատարում ոսկեգույն կոլորիտն ու ռիթմը, չընդհատվող ընթացքը, շարժումը: Կտավը հագեցած է օդով, որը բնորոշ է Պիպոյանի աշխատանքներին: Սա այն հազվագյուտ նմուշներից է հայկական գեղանկարչության մեջ՝ Հայոց ցեղասպանության թեմայով, որում ողբերգականության հետ մեկտեղ ամենայն ուժով հաստատվում է հայ ժողովրդի բարձրագույն տոկունությունը՝ որպես իր մշակույթին հավատարիմ և ապրելու հսկայական կենսաուժ ունեցող ժողովրդի: Իր հորինվածքային, գունային, գաղափարական լուծմամբ այն հաստատում է հավատի և կյանքի հաղթանակը մահվան նկատմամբ և դրանով խոր ազդեցություն թողնում դիտողի վրա:

1980 թվականին աշխատանքը ցուցադրվեց Հայաստանի նկարիչների միությունում: Հետագայում ցուցադրվել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կոնֆերենց-սրահում: Գաֆեսճյան արվեստի կենտրոնը 2015 թվականի մայիս-հունիս ամիսներին ցուցադրեց այն Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ անցկացվող միջոցառումների շրջանակներում: Վերջին 10 տարիներին այն գտնվում է նկարչի արվեստանոցում:

Այժմ «Գաղթ» գեղանկարչական մոնումենտալ կտավը սպասում է արժանի առաջարկների՝ իր մշտական հանգրվանը գտնելու և հարազատ ժողովրդին հասու լինելու համար:

## **THE “EXODUS” OF SUREN PIPOYAN**

Suren Pipoyan has been working in different genres, but the monumental compositions occupy a special place among his works. The “Exodus” is one of them, which can be called as the central work in his artistic biography. In 1965 the first version of it, called “The road of salvation”, (c., o., 122x140 sm) was presented for the republic art exhibition dedicated to the 50-th anniversary of Armenian genocide. In two years’ time the artist executed the copy of larger size (c., o., 160x200 sm), calling it as “Road to New Armenia”. In 1980 the final version of this composition was fulfilled (c., o., 300x375 sm). The first copies of it were made in rather tough, a little bit somber, cubistic manner and almost monochrome, in grey-brown colors. The columns of bent down people, going through the desert, stone ground towards the light in a distance. The last, basic version of this work keeps the composition almost the same, but the color and the manner of painting have been changed dramatically. Here, the yellow-gold color in combination with grey and some black spots are the priority. The canvas is tragic and life-asserting at the same time. People are carrying the cultural relics upon themselves.

*ՄԱԹԵՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

### **ԵՂԻՇԵ ԹԱՂԵՎՈՍՅԱՆԻ «ԿԱՐՄԻՐ «ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ»**

Հոդվածը նվիրված է հայ գեղանկարչության ականավոր վարպետ, իմպրեսիոնիզմի հետևորդ Եղիշե Թաղևոսյանի (1870-1936) մեկ կտավի ուսումնասիրությանը, որը ժամանակին գտնվել է Շոդակաթ եկեղեցում, իսկ այսօր հանգրվանում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նոր վեհարանում: «Խաչելություն»<sup>1</sup> խորագիրը կրող այս

---

<sup>1</sup> Ե. Թաղևոսյանի արվեստն ուսումնասիրողները հիշատակել են այս աշխատանքի անունը միայն: Տե՛ս **Հովսեփյան Գ.**, Նկարիչ Եղիշե Թաղևոսյան //

նկարը բացահայտում է նկարչի արվեստի չուսումնասիրված էջերից մեկը՝ 1915-1918 թվականների եղերական իրադարձությունների պատկերավոր արտահայտությունը:

1915 թվականին Եղիշե Թադևոսյանի կյանքն ու գործունեությունը միահյուսվում են իր հայրենակիցների ճակատագրի ողբերգական էջերին. նա Վաղարշապատում ականատես է լինում եղեռնապուրծ հայության տառապանքներին: Ինչպես հայտնի է, թուրք բարբարոսների կողմից հայության անլուր հոշոտումները ցնցում են հայ մտավորականներին՝ Մարտիրոս Մարյանին ու Վահան Տերյանին, Եղիշե Թադևոսյանին ու Եղիշե Չարենցին: Ահա ինչ է գրում վերջինս հայացունց այդ դեպքերի մասին.

Նայեցեք –նայեցեք, դուք ինձ չե՞ք ճանաչում.  
Ես սիրել եմ աշխարհը այնքան...  
Բայց հիվանդ օրերի թունավոր կանչում  
Ես բացել եմ թներս արնաքամ:

Եվ բնավ պատահական չէ, որ ծնվում է Ե. Թադևոսյանի «Խաչելություն» կտավը (1918, կտավ, յուղաներկ, 96x61 սմ, Մ.Ա.Ս.Է. նոր վեհարանի թանգարան) (նկ. ...?):

Յուրաքանչյուր մարդու այս աշխատանքը կթվա անսովոր՝ իր արնավառ գույներով պարուրված խորքով: Հոգեբանական հատուկ դասեր չեն պահանջվի, սակայն, հասկանալու, որ ստեղծագործության հեղինակը գտնվել է անհանգիստ, բորբոքված հոգեվիճակում:

Հորինվածքի կենտրոնում խաչն է՝ ասես իր թներով գրկած նկարի վերին հատվածը: Յածր հորիզոնագծով այս հորինվածքը դիտողին է մոտեցնում ոճագործության տեսարանը՝ առաջացնելով ներքինի խաչին նայելու դիտակետ: Հիսուսի մարմինը գունատ է, կապույտ-դեղին գունային ռեֆլեքսներն էլ ավելի են շեշտում տառապանքի դառնությունը: Նա դեռ կենդանի է, սակայն

---

Գաբեգին Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հատոր Ա, Երևան, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատարակչություն, 1983, էջ 156, **Драмлян Р. Г.** Египше Татевосян, Москва, «Искусство», 1957, с. 98, **Մարտիրյան Ե.**, Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Գ, Երևան, «Սովետական գրող», 1983, էջ 131, **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, «Ոսկան Երևանցի», 2009, էջ 39:

գլուխը հուսահատ խոնարհված է՝ մահամերձ վիճակում: Խաչված Քրիստոսի հետևում կարմրաթույր աղջամուղջում երկինքն է: Խաչի տակ գետինը մուգ է, բայց նույնպես կրակոտ: Առաջին պլանում Հիսուսի՝ ստվերներ հիշեցնող մտերիմներն են, ավելի մուգ տոներով ուրվագծված նրանց մարմինները: Այրվող երկնքի ֆոնի վրա պատկերված են սև մարմիններ, որոնք դիտարկվում են որպես երկնքի և խաչի հետ մի ամբողջություն, թեպետ առանձնացված են երանգային նուրբ անցումներով, գույնով, հակադրությամբ: Դրանք լրացնում են համապատկերը՝ ստեղծելով ողբերգական մթնոլորտ: Աջից երեք կանաչ՝ երեսները ձեռքերով ծածկած, ողբում են, կարծես շարժվող կադրի մեջ՝ հաջորդաբար՝ կանգնած, խոնարհված, ծնկած: Չափ անկյունում հասակով մեկ կանգնած է Հովհաննես առաքյալը՝ երեսը ձեռքերով ծածկած: Փոքր-ինչ խորքում երևում է մեջքով կանգնած հոռուեացի զինվորը՝ Լոնգինսը՝ նիզակը ձեռքին. նա նայում է խաչին՝ կարծես պատրաստվելով ի կատար ածել վճիռը:

Կյանքի ու պայքարի կարմիր գույնը պարուրել է տիեզերքն այնպես, կարծես խառնվել է արյան, ողբերգության գույնին՝ տեղ-տեղ ընդունելով գորշ երանգներ: Նշենք, որ արվեստի պատմության մեջ կարմիր գույնը հանդես է եկել և՛ որպես արական սկիզբ, կյանքի, էներգիայի, հեղափոխության խորհրդանիշ, և՛ որպես կրակի, պատերազմի, ագրեսիայի, վտանգի գույն: Կարմիր գույնի խորհրդանիշը հաճախ կապում էին չարիքի հետ, հատկապես եգիպտական դիցաբանության մեջ Սեթ բացասական՝ պատերազմի և արհավիրքի աստծո հետ կամ քառսի Ապոպ աստծո հետ: Կելտական դիցաբանում մաքր կարմիր ձիավորի տեսք ունենալ<sup>2</sup>:

Այստեղ հարկ է հիշատակել ֆրանսիական սիմվոլիզմի ամենացայտուն ներկայացուցիչներից մեկի՝ Մորիս Դենիի «Խաչելություն» ստեղծագործությունը (1890), որն իր հորինվածքով, գույներով՝ կարմիր երկինք, մուգ ուրվագծային մարմիններ առաջին պլանում, մի պահ հիշեցնում է Ե. Թադևոսյանի կտավը: Սակայն ֆրանսիացի վարպետի աշխատանքը, ի տարբերություն Ե. Թադևոսյանի այդ կտավի, ունի դեկորատիվ մոտեցում և կրում է սիմվոլիզմին հատուկ երևակայական բնույթ:

<sup>2</sup> Тресиддер Д. Словарь символов. Москва, «Файр-Пресс», 2001, с. 167.

Թաղևոսյանի նկարի ամբողջ տեսարանը պարուրված է եղերական խորհրդավորությամբ: Այդ առումով այն ինչ-որ չափով գուցորդվում է XVI-XVII դարերի իսպանացի, ազգությամբ հույն մեծ նկարիչ Էլ Գրեկոյի արվեստի հետ՝ նրան բնորոշ «նյարդային, դողահար» մթնոլորտով<sup>3</sup>: Հայ նկարիչն օգտագործել է կարմիր կրապլակների, դեղինի, սևաբոսոր ամպերով հագեցած գունապնակը: Էլ Գրեկոն երկինքը պատկերելիս սովորաբար օգտագործում է սառը և չեզոք գույների (կապույտ, սպիտակ, մոխրագույն) համադրությունը, սակայն այդ սառնության մեջ անգամ նկատելի է բոցավառ անհանգստություն: Թեպետ Ե. Թաղևոսյանն իսպանացի նկարիչների կտավներին ծանոթացել և նրանց մի քանի հայտնի գործեր կրկնօրինակել էր դեռևս 1906 թվականին՝ Բապանիա կատարած իր այցելության ժամանակ, սակայն, ինչպես տեսնում ենք, վառ տպավորություններն ու Էլ Գրեկոյի արվեստի՝ ալեկոծվող անհարթ լույսի, գույնի և դրամատիկ կերպարների ոճաձևը նրա գործերում երևան եկավ շուրջ տասը տարի անց: Բայց սա ոչ թե պարզ կրկնություն էր, այլ ըմբռնված, վերապրված ոճի անհատական ընկալում:

Ե. Թաղևոսյանի Քրիստոսի մարմնի դեղնավուն գույնը՝ կապտականաչ ռեֆլեքսներով, նաև դալուկ ու ձգված ձևերով, վերստին հիշեցնում է XX դարի նոր արվեստի խեղաթյուրված կերպարները: Պատահական չէ, որ էքսպրեսիոնիստական պատկերման եղանակն առաջացավ նկարչի ողբերգական ապրումների ժամանակահատվածում, և կարմրաբոսոր գույների օգտագործումը պարունակում է միանգամայն հասկանալի շեշտադրություն:

1914-1918 թվականներին գրած նամակներում արվեստագետն արտահայտել է իր վրդովմունքը, ցավը, տառապանքը<sup>4</sup>: Ռուս մտա-

<sup>3</sup> Մի առիթով Ե. Թաղևոսյանը Վ. Պոլենովին գրում է. «Ով ինձ վերջնականապես ապշեցրեց, դա Գրեկոն է. դա ինչ տիտան է: Մենք նրան գրեթե չգիտենք: Նա զարմանալի է գույների մեջ. կապույտի ու դեղինի տոների ներդաշնությամբ և՛ իր բոլոր ժամանակակիցներից, և՛ ընդհանրապես Պրադոյի բոլոր ստեղծագործություններից ավելի լուսավոր է: Արտասովոր հավատ կա այն բանի նկատմամբ, ինչ որ նա պատկերում է և ըստ երևույթին բոլորովին չի մտածում, թե արդյոք դա կարող է մեկնումեկին դուր գալ, թե ոչ... Նրա պատկերները միշտ ակնածանք են առաջացնում, դրամատիկ են ու մելամաղձոտ... Նրա գծանկարները արհեստական են, մկանների զալարումները՝ չափազանցված, և դա շատերին վախեցնում է...» (ՀԱՊ, հուշաձեռագրային բաժին, ֆ. 57, ի. 323):

<sup>4</sup> Տե՛ս ՀԱՊ, հուշաձեռագրային բաժին, ֆ. 29, *Драмтян* Р. Г. նույն տեղում, էջ 72:



վորական, խոշոր գեղանկարիչ Վասիլի Պոլենովին ուղղված այդ շրջանի նամակներից մեկում ահա ինչ է գրում նա սիրելի ուսուցչին. «Մենք ապրում ենք ծանր ժամանակներ. մեզ տիրում է տաղտուկի զգացումը. ուզում ես հաղթահարել, մոռանալ, բայց հնարավոր չէ: Մարսավելի է այդքան մտածել հոգու կործանման մասին. Հակառակ Քրիստոսի պատվիրանների...»<sup>5</sup>:

Կտավի ներքևում կա հետևյալ մակագրությունը. «Ի ՅԻՇԱՏԱԿ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՔՐՈԶՍ ՇՈՂԱԿԱԹԻ Ի ԴՈՒՌՆ ՍԲ. ԿՈՒՅՍ ՇՈՂԱԿԱԹ ՄԱՐԻԱՆԷ ՎԱՆՔԻ Ի՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ Ի ՆԿԱՐԶԷ ԹԱԴԷՈՍԵԱՆՑԷ Ի՝ ՀԱՅՈՑ Ռ.Յ.Կ.Է. ԵՒ ՓՐԿՉԻՆ 1918»<sup>6</sup>: Այս գրությունը, ինչպես երևում է հայոց այբուբենի տառային արժեքից՝ «ՌՅԿԷ» (1367+551), վերաբերում է 1918 թվականին: Նկարը նվիրված է եղել Էջմիածնի Շողակաթ եկեղեցուն: Իսկ թե որ թվականին է այն նկարվել, մնում է անորոշ: Ռ.Դրամբյանը, իր գրքի կատալոգում ներկայացնելով Ե. Թադևոսյանի հայտնի բոլոր աշխատանքների ցանկը, «Խաչելությունը» վերագրել է 1916 թվականին<sup>7</sup>:

Պետք է ենթադրել, որ «Խաչելություն» կտավը 1915-18 թվականներին Հայաստանում տիրող հասարակական-քաղաքական ծանր կյանքի և մտավորականների հոգևոր երկատվածության ու ընկճվածության մթնոլորտի պատկերավոր արձագանքն է: Բնական է, որ այս նկարում ծնվեցին արտահայտչական այն միջոցները, որոնք հատուկ էին էքսպրեսիոնիզմին՝ ինքնաարտահայտման գերզգայունությունը, սոցիալական քննադատության պաթոսը, մարդու հոգևոր աշխարհի սուբյեկտիվ պատկերումը, զգացմունքների հիվանդագին լարվածությունը, շրջապատող աշխարհի դեֆորմացիան: Առաջին համաշխարհային պատերազմից հետո էքսպրեսիոնիստների և նրանց հարողների թիվն ավելանում էր: Նրանց ստեղծագործության հիմնական գիծը շարունակում էր մնալ ծայրահեղ հոռետեսությունը<sup>8</sup>: Հիշենք նաև Եղիշե Չարենցի՝ այդ տարիներին

---

<sup>5</sup> ՀԱՊ, հուշածեղագրային բաժին, ֆ. 29, ի.1981:


<sup>6</sup> Մակագրությունը ենթադրաբար պատվիրատուի խնդրանքով է գրվել, քանի որ Ե. Թադևոսյանն ուներ երկու հարազատ քույրեր՝ Հռիփսիմե և Վերգինե անուններով:

<sup>7</sup> St' u Драмбян Р. Г. նույն տեղում, էջ 98:

<sup>8</sup> См. Рычкова Ю. В. Энциклопедия модернизма. Москва. “ЭКСМО-Пресс”, 2002, с. 91-95.

գրած քանաստեղծություններն ու պոեմները, հատկապես «Ողջակիզվող կրակ» շարքը.

Ինչպես երկիրս անսփռփ, ինչպես երկիրս բախտագուրկ,  
Ինչպես երկիրս ավերակ ու արնաներկ -  
Մխում է սիրտս հիմա որք, մխում է սիրտս բախտագուրկ,  
Մխում է սիրտս՝ ավերակ ու արնաներկ...



Արվեստի պատկերավոր ընկալումը և՛ պոեզիայում, և՛ կերպարվեստում ներկա դեպքում արտահայտում է միևնույն տեսիլքը: «Բանաստեղծությունն ուժեղ տպավորություն է թողնում անմիջականորեն արտահայտված հայրենասիրական ապրումների հոգևոր, սրտառույզ գեղումով», - գրում է գրականագետ Գ. Շովսեփյանը<sup>9</sup>: Այս սրտառույզ գեղումը գեղանկարչության միջոցներով արտահայտվել է Ե. Թադևոսյանի «Խաչելություն» կտավում: **Զոհաբերվող Հիսուսի այս պատկերում ներկա իրականության մեջ նորից կրկնվող ստորվճիռն է և մարդկային անսփռի ողբերգությունը:**

XX դարի սկզբին Եդիշե Թադևոսյանի վրձնած աշխատանքը ոչ միայն օտար է հայկական միջնադարյան և նոր շրջանի հանդարտ, խոհեմ, խորհրդապաշտական «Խաչելության» պատկերներին, այլև իր սեփական արվեստում երբևէ ստեղծված ավետարանական թեմատիկային և Քրիստոսի կերպարին: Նրա արվեստին առավել բնորոշ էր XIX դարի երկրորդ կեսի ռուսական գեղանկարչության դպրոցին հատուկ պատմական վավերականություն կրող Քրիստոսի բարոյահոգեբանական, իրապաշտական կերպարը<sup>10</sup>:

Կարելի է, անշուշտ, հաշվի առնել դարասկզբի մոդեռնիստական ուղղությունների, մասնավորապես էքսպրեսիոնիզմի հնարավոր ազդեցությունը հայ նկարչի աշխարհայացքի վրա, սակայն անհանգստության հիմնական պատճառը պետք է փնտրել հեղինակի սեփական ապրումների ու մտորումների մեջ: Առավել ևս, եթե հաշվի առնենք, որ Ե. Թադևոսյանը երբեք չի հարել մոդեռնիզմի որևէ ուղղության՝ հավատարիմ մնալով պլեներային գեղանկարչությանը: Երբեմն նրան հաջողվել է թեմատիկ պատկերներում, ինչպես, օրինակ, «Դեպի պանդխտություն», «Երկրպագություն խաչին», «Գեթսեմանիի աղոթքը», «Հանճարը և ամբոխը», ցուցադրել իր անհատականության խորությունը, մարդկային արժեքների և բարո-

---

<sup>9</sup> Շովսեփյան Գ., Չաբենցի պոեզիան, Երևան, «Հայաստան», 1969, էջ 48:

<sup>10</sup> St u Даниэль С. М. Библийские сюжеты. С.-Петербург. “Художник России”, 1994, Петрова Е. “Земная жизнь Иисуса Христа в русском изобразительном искусстве”. Иисус Христос в христианском искусстве и культуре XIV-XX века. Санкт-Петербург, Государственный Русский Музей, Napoli, Palace Editions “Tonti”, 2000, с. 17, Վարդանյան Ս., Հիսուս Քրիստոսի պատկերման ավանդույթը համաշխարհային արվեստում // «Էջմիածին», Մ.Ա.Ս.Է., Յուլիս (Է), 2011, էջ 78-87:

յագիտության հանդեպ սեփական զգացողությունը: Նա եղել է բնության ու մարդու ներդաշնակության, գեղեցիկի ակնթարթը և հավերժությունը զգացող երգիչ:

Այսպիսով, Եղիշե Թադևոսյանի արվեստին ոչ բնորոշ «Խաչելություն» կտավում արտացոլվեցին նկարչի խոր տագնապան ու ողբերգական, նույնիսկ հիվանդագին ապրումները եղեռն ապրած հայ ժողովրդի ճակատագրի համար:

Եվ ամենևին պատահական չէ, որ նույն շրջանում և հետո Թադևոսյանը տևականորեն ու տենդագին աշխատում է իր «Քրիստոսն ու փարիսեցիները» թեմայով բազմաթիվ էսքիզների և կտավների վրա. այս անգամ Քրիստոսն իր խոր զայրույթն է ուղղել նորոքյա ստոր ու կեղծ «փարիսեցիների» դեմ: Եղեռնազարկ ժողովրդի նկարչի արվեստում ողբերգությունը վերափոխվում է հայոց ազատատենչ ոգու զգացման, աննկուն կամքի ու ազնիվ մաքառումների ազդեցիկ պատկերների:

*SATENIK VARDANYAN (ARMENIA)*

## **RED «CRUCIFIXION» OF YEGHISHE TADEVOSYAN**

The canvas of the outstanding Armenian artist, a master of impressionist painting Yeghishe Tadevosyan's (1870-1936) «Crucifixion» (1918, oil on canvas, 96x61) is stored in the Museum of Mother See of Holy Etchmiadzin. As a witness, the artist stung the consequences of severe massacre of Armenians in 1915-1918. As a result, the picture was born which was not characteristic to his work. Tadevosyan's red-hot-red «Crucifixion» distinguished by its expressionist interpretation: subjective expression of inner experiences, sickly emotional strains, deformation of objects. In those same years, in the poetry of great Armenian poet Yeghishe Charents was born a series of verses and poems where the author also associated the events of the genocide with the universe, shrouded in red with blood, to reiterate the infamous sentence in the image of the crucified Christ. Still unexplored picture of Y. Tadevosyan appears in a new light now.

## **ТЕМА ГЕНОЦИДА В ФИЛЬМЕ ГЕНРИХА МАЛЯНА “НААПЕТ”**

Геноцид армян 1915 года в Османской Турции является одной из трагических страниц в нашей истории. Более полутора миллионов наших соотечественников, как простых граждан, так и представителей интеллигенции, были истреблены по одной причине: они были армянами. Будучи нацией, проживающей на своей исконной территории, мы превратились в людей второго сорта, в людей, которые были лишены как граждане многих прав.

К этой трагической странице в истории нашего народа обращались и в советское время. Тема геноцида нашла свое отражение в искусстве и в киноискусстве в частности. В этой статье мы будем говорить о фильме “Наапет”, который был снят в 1977 году режиссером Г. Маляном по одноименной повести Р. Кочара.

Тема геноцида выражена в образе главного действующего лица – Наапета. В начале фильма зритель видит человека, идущего по дороге. Общие и средние планы, сменяя друг друга, представляют зрителю путника, ищущего пристанища. Спустя некоторое время зритель узнает, что это Наапет. Во время геноцида, устроенного турками, он потерял свою семью и вынужден был перебраться в Восточную Армению, в село, где живет его сестра. Путь героя во временной последовательности занимает целую сцену. При этом новая сцена начинается кадрами, где мы видим Наапета в иной обстановке – в доме, зажигающим свечу. Именно в это время на экране появляется название фильма, а закадровая музыка придает изображению несколько драматичный оттенок. Титры делят сцену как бы на две части. Смысловая последовательность изобразительного ряда здесь соблюдена полностью. Путник идет по дороге, входит в дом, зажигает свечу и готовится переночевать. Но наутро он не уходит, а остается. Именно с этого момента и начинается наше знакомство с Наапетом, который занимается благоустройством своего жилища. Быт здесь, как, впрочем, и во всем фильме, занимает важное место. Быт армянина, обыкновенного простого человека. Действие в этой части фильма не всегда предполагает динамическое развитие. Перед нами определенные ситуации, в которые

вписаны герои. Изобразительную основу сцен составляют статичные кадры, где люди беседуют, курят или выполняют какую-либо работу. Но эти ситуации не предстают обособленными. Они связаны единой темой – трагедией 1915 года.

Монотонный ритм, статичные кадры еще больше акцентируют внимание на главном действующем лице фильма. Сюжетная линия произведения несколько сужена. Акцентированы переход Наапета на новое место жительства, его знакомство с Нубар и рождение ребенка. Это еще больше выделяет образ Наапета, которого на экране воплощает Сос Саркисян. Игра актера спокойна и сосредоточена. Мы видим человека, который очень сильно переживает смерть родных ему людей. Г. Малян использует в фильме интересный режиссерский прием. Он противопоставляет образ главного героя остальным жителям деревни, придавая первому трагичные черты. Наапет или не вступает в диалог с жителями деревни, или же общается с ними крайне редко. В этих сценах режиссер и оператор (С. Исраелян) используют межкадровый монтаж, показывая действующих лиц отдельными кадрами. Мы видим сочетание крупного плана с образом Наапета и общего плана с детьми или же с другими жителями деревни. С помощью межкадрового монтажа представлены также и воспоминания героя: они составляют одну из сюжетных линий фильма и несут смысловую нагрузку.

Очень эмоционально показана и встреча Наапета с Антарам (Г. Новенц). Панорамой режиссер и оператор охватывают действующих лиц этой сцены, которые, обнявшись, плачут. Сцена длится недолго, но представлена она очень выразительно.

В фильм входит и тема, связанная с советской идеологией и укладом жизни, что естественно для произведения, снятого в 1977 году. Одна из его сцен начинается с заседания колхозного совета, где решается вопрос о сдаче земельных участков жителям деревни. Выглядит эта сцена достаточно правдоподобной и сегодня, так как реально отражает ситуацию того времени. Вместе с этим, Малян не акцентирует внимание на взаимоотношениях человека и власти. Акцент сделан на бытовых интерпретациях, которые и придают фильму особый колорит.

Развивая действие, режиссер соединяет двух людей: Напета и Нубар (Софик Саркисян), символизируя этим начало новой жизни.

Сцена, где мы видим их вместе, выдержана в достаточно сжатых тонах. И начинается она в доме Антарам предложением создать семью. Нам хотелось здесь выделить и игру Ф. Мкртчяна, да и вообще сам образ актера. Наблюдая за игрой Мкртчяна, на миг забываешь о тех комедийных ролях, которые принесли славу этому потрясающему актеру. Он не только называет Наапета своим братом, но и всем своим поведением создает атмосферу, в которой создать семью является делом важным и первостепенным. Эта часть фильма, где двое одиноких людей должны встретиться, является кульминацией произведения. Встреча Наапета и Нубар не может не породить воспоминания, и здесь они занимают основополагающее место. Воспоминания героев, будучи внефабульным компонентом, создают настроение, дают возможность почувствовать страшную трагедию, геноцид невинных женщин, детей, среди которых и семья Наапета. Воспоминания входят в содержание фильма достаточно пластично, уже с первым появлением Нубар. Они органично дополняют визуальный ряд, идейно соответствуя мотиву, развитию сцены. Статичные кадры с членами семьи Наапета сменяют друг друга. Звучит композиция “Дле Яман”, которая, в великолепном исполнении Флоры Мартиросян, становится частью художественного замысла. Музыка здесь не просто фон, на котором показаны те или иные персонажи картины: она на смысловом уровне взаимодействует со следующим кадром-символом – яблоней. Оператор показывает плоды дерева, рассыпанные по полю, а также, используя верхний ракурс, дает нам плоды яблони у берега моря. И этот образ здесь не только символизирует ушедшую благоприятную жизнь Наапета и его семьи, но также является стимулом для новой жизни и процветания. Наверное, не случайно в следующей сцене мы видим крестного Наапета, который и передает ему самое дорогое, что у него есть – зерна яблони. Постепенно действие переносится на образы Наапета и Нубар. Общим планом показано приготовление в дорогу. Путь героев длинный и не из легких. Нубар также потеряла семью, и она жертва трагедии 1915 года. Диалоги здесь практически отсутствуют. Постепенно бытовые, семейные взаимоотношения этих людей займут в фильме главное место. Супруги ведут обыкновенный, размеренный образ жизни, свойственный людям, живущим в деревне. Органично будет вписан в эту условность и мотив дерева, которое Наапет посадит и будет

оберегать. Он оберегает его как свое дитя, как живое существо, которое должно дать свои плоды. Параллель, проводимая режиссером между деревом и началом новой жизни, примечательна и достаточно выразительна. Поэтому, когда возникает опасность, что ростки яблони могут замерзнуть, Наапет и Нубар всячески пытаются согреть и спасти плоды. Мотив дерева вводит изменения и в само содержание фильма. В конце очевиден упор на сюжетное повествование и последовательность в развитии событий. После того, как супруги спасают ростки яблони, в фильм входит и мотив рождения ребенка. Предыдущая ситуация длится достаточно долго, что делает факт рождения младенца еще более символичным. Изменение в драматургии фильма отражается и на поведении его героев, в частности – Наапета. Очевиден контраст в игре актера. Внешне спокойный и сдержанный человек очень эмоционально воспринимает рождения младенца. Ведь это и есть победа над смертью и теми, кто ее посеял. “...Наапет не просто персонаж, с психологической достоверностью сыгранный Сосом Саркисяном, это современный фольклорный герой, отсеченный от громадной скалы пластическим резцом актера и режиссера”, - пишет С. Асмикян<sup>1</sup>.

“Наапет – это, по сути, тот характер, от которого ведет дорога к национальному характеру нашего современника”, - отмечает К. Калантар<sup>2</sup>.

Такие произведения открывают дорогу для новых фильмов о геноциде 1915 года, для новых идей, что и является ответом художника на те бесчинства, которые творили турки, пытаясь уничтожить целую нацию.

“Наапет” Г. Маляна занял видное место в истории национального кино. Само по себе воплощение на экране трагедии 1915 года было правильным и необходимым решением.

Заканчивая статью, мы приходим к следующим выводам:

1. Образ Наапета связывает воедино сцены и эпизоды произведения.
2. Воспоминания героя, связанные с трагедией 1915 года, являются в фильме драматургически обоснованным компонентом.

---

<sup>1</sup> Асмикян С. “Тесный кадр”. Ереван, Анаит, 1992, с. 145-146.

<sup>2</sup> Калантар К. “Верный божеству искусства”. Ереван, Мива-пресс, 2000, с. 44.



*ARSEN HAMBARDZUMOV (ARMENIA)*

**GENOCIDE THEME IN HENRIK MALYAN'S  
FILM "NAHAPET"**

The genocide of 1915 took 1,5 million of innocent lives. This theme is the essential component of Henrik Malyan's film "Nahapet" shot on the basis of H. Kochar's story of the same name. The 1915 tragedy is reflected in the character of main hero Nahapet who after losing his close relatives was obliged to move to Eastern Armenia, create a family and continue his gender. The subject development of the film is a little compressed. The interframe mounting, static shots, a bit monotone rhythm even more singles out the main hero's character and the tragedy he suffered.

"Nahapet" is composed within the best traditions of Malyan's cinematography in which the lyrical component occupies its leading place.

*ԳԱՅԱՆԵ ԱՄԻՐԱՂՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

**ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԵՐԳԵՐԻ ՈՐՈՇ ԺԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՈՃԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հայոց ցեղասպանության թեման իր բազմաթիվ դրսևորումներն է ստացել ազգային մշակույթի տարբեր շերտերում, այդ թվում՝ երաժշտական արվեստում: Այս թեման արտացոլվել է թե՛ ժողովրդական երաժշտության, թե՛ հոգևոր երգարվեստի և թե՛ կուլպոզիտորական ստեղծագործության ոլորտներում: Զեկուցումը նվիրված է Հայոց ցեղասպանության թեմայով ժողովրդական երգերի որոշ ժանրային և ոճական առանձնահատկությունների լուսաբանմանը: Մեր ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել Մեծ եղեռնի թեմայով ստեղծված ժողովրդական երգերի 22 նոտագրված նմուշները, որոնք առանձին բաժնով ներառված են բազմավաստակ բանագետ, բանահավաք, բանասիրական գիտու-

թյունների դոկտոր Վերժինե Սվազյանի «Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ» հիմնարար աշխատության մեջ<sup>1</sup>: Դիտարկվող նմուշների երաժշտաբանաստեղծական կառույցի առանձնահատկություններին հանգամանորեն անդրադարձել է արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ Ա. Բադդասարյանը 2002 թ. հրատարակված «Հայոց ցեղասպանության մասին ժողովրդական երգերը՝ երաժշտաբանաստեղծական հատկանիշների տեսանկյունով» հոդվածում<sup>2</sup>:

Քննության առարկա երգերը գրավել են 1946-98 թվականներին Հայաստանում (Երևան, մարզեր), Թուրքիայի Ստամբուլ և Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքներում: Երգասացները սերում են Արևմտյան Հայաստանի, հայկական Կիլիկիայի, ինչպես նաև Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայաբնակ այլ շրջաններից<sup>3</sup>: Երգասացները տասնվեցն են, որոնցից տասնմեկը ցեղասպանության ականատես վերապրողներ՝ ծնված 1888 և 1901-1909 թվականներին: Մյուս չորս երգասացները Եղեռնի վերապրողների հաջորդ սերունդների ներկայացուցիչներն են՝ ծնված 1926-37 թվականներին:

22 երգերից 15-ը հայերեն է, 7-ը՝ թրքալեզու<sup>4</sup>: Հայերեն երգերից հինգն ունեն գրական բանաստեղծական սկզբնաղբյուրներ, մնացած տասը նմուշների բանաստեղծական բաղադրիչները ստեղծվել են

---

<sup>1</sup> Սվազյան Վ., Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2011, էջ 638-660: Երգերի նոտային վերծանությունները կատարել են Ա. Փահլևանյանը, Մ. Մանուկյանը և Կ. Չալիկյանը (նույն տեղում, էջ 638):

<sup>2</sup> Տե՛ս Բադդասարյան Ա., Հայոց ցեղասպանության մասին ժողովրդական երգերը՝ երաժշտաբանաստեղծական հատկանիշների տեսանկյունով, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական աշխատությունների հանդես, Երևան, 2002, թիվ 6, էջ 94-104:

<sup>3</sup> Տե՛ս Սվազյան Վ., նշվ. աշխ., էջ 738:

<sup>4</sup> Օսմանյան կայսրության որոշ հայաբնակ շրջաններում հայերեն խոսելն արգելված էր: Մա կայսրության իրագործած հպատակ ժողովուրդների ձուլման քաղաքականության բազմաթիվ դրսևորումներից մեկն էր: Տե՛ս Սվազյան Վ., նշվ. աշխ., էջ 19, 20: Մինևույն ժամանակ, ըստ Վ. Սվազյանի, այս երևույթը կարող է պատճառաբանված լինել նաև դարավոր համատեղ կեցության պայմաններում երկու ժողովուրդների մշակութային փոխազդեցությունների հանգամանքով: Նույն տեղում, էջ 19:

ժողովրդական միջավայրում և արևմտահայերենի տարբեր բարբառների դրսևորումներն են: Բովանդակության տեսանկյունից երգերի բանաստեղծական տեքստերը հավաստի արտացոլում են ցեղասպանության տարաբնույթ իրողությունները (գորահավաք և զինահավաք, տեղահանություն, կոտորած, հերոսամարտ, հայրենագրություն և որբություն, հայրենաբաղձություն, արտագաղթ):

Ցեղասպանության թեմայով ստեղծված երգերի ժանրային և ոճական առանձնահատկությունները դիտարկելիս հարկ է նկատի ունենալ, որ ինչպես միջազգային, այնպես էլ հայ երաժշտական ֆոլկլորագիտության մեջ կիրառվող ժանրային դասակարգումն օժտված է որոշակի պայմանականությամբ, քանի որ իրագործվում է տարբեր չափանիշներից ելնելով: Ժանրային դասակարգման համար կարող են հիմք ընդունվել մասնավորապես տվյալ ֆոլկլորային նմուշի գործառույթը (ֆունկցիան), նրա բանաստեղծական տեքստի թեմատիկան, երաժշտալեզվական հատկանիշները և այլն<sup>5</sup>: Այսպիսով, թեմատիկ տեսանկյունից վերոնշյալ 22 երգերը վերաբերում են պատմական երգի ժանրին: Երաժշտաոճական հատկանիշներից ելնելով՝ մենք պայմանականորեն դասակարգել ենք նույն երգերը երկու (Ա և Բ) խմբերի, որոնցից առաջինում առանձնացրել ենք զուտ գեղջկական երգին բնորոշ ոճական նկարագիր ունեցող նմուշները: Երկրորդ խումբ ներառել ենք այն երգերը, որոնք ոճականորեն հարազատ են XIX դարի երկրորդ կեսին ձևավորված քաղաքային երգի ժանրին:

Հայ երաժշտական ֆոլկլորագիտության մեջ ընդունված ձևակերպմամբ պատմական երգերն արտացոլում են պատմական տվյալ դարաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր երևույթները, դեպքերն ու իրադարձությունները, ինչպես նաև դրանց հանդեպ ժողովրդի ունեցած վերաբերմունքը<sup>6</sup>: Թեմատիկ լայն շրջանակը պայմանավորել է այս ժանրի երաժշտաոճական բազմատարրությունը և նրա առնչությունը հայ ժողովրդական երգարվեստի մի շարք այլ ժանրերի հետ: Ֆոլկլորագետ Մ. Բրուտյանը ժանրի հիմնական երաժշտաոճական հատկանիշների թվում նշում է լայնաշունչ երգայնության և ասերգայնության գուգորդումը, ինչը

<sup>5</sup> Հայ ժողովրդական երգեր և նվագներ, Թալին, VII պրակ, Երևան, 2012, էջ 6:

<sup>6</sup> Տե՛ս Բրուտյան Մ., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Երևան, 2004, էջ 165:

պատճառաբանվում է պատմական երգերում մի կողմից՝ պատմողական-նկարագրողական (օբյեկտիվ) տարրերի, մյուս կողմից՝ խոր հուզականության (սուբյալ պատմական դեպքի կամ անձի հանդեպ անձնական, սուբյեկտիվ վերաբերմունքի) առկայությամբ<sup>7</sup>: Պատմողականությամբ է պայմանավորված այս ժանրի ոճական բնութագրի ևս մեկ կարևոր բաղադրիչ՝ էպիկականությունը<sup>8</sup>: Մի շարք պատմական երգերում հանդիպող սուգի, վշտի բովանդակային մոտիվը թեմատիկ և երաժշտաոճական աղերսներ է ստեղծում ողբի և լալիքի ժանրերի հետ<sup>9</sup>: Ըստ Մ. Բրուսյանի՝ պատմական երգերի տիպական ձայնակարգը էոլական միտրն է իր տարատեսակներով<sup>10</sup>:

Մեր կողմից պայմանականորեն Ա ենթախմբում զետեղված 12 երգային նմուշներն իրենց ժանրային-ոճական հատկանիշների գերակշռող մասով համապատասխանում են պատմական երգի ժանրի վերը բերված բնութագրին: Նախևառաջ բոլոր նշված երգերի մեղեդիներն օժտված են խառը ասերգային-երգային ոճով: Խիստ հատկանշական է, սակայն, որ անգամ բանաստեղծական տեքստում նկարագրողական տարրերի առկայության դեպքում քննվող նմուշներն աչքի են ընկնում ընդգծված սուբյեկտիվ հուզական երանգով: Էպիկական տարրն այս երգերում լիովին բացակայում է: Կարծում ենք՝ տվյալ երևույթը պայմանավորված է նրանով, որ այս երգերի հորինողները, ինչպես Վ. Սվազյանն է նշում, գերազանցապես եղել են հայ կանայք. «Ի բնե հուզական և զգացմունքային կանայք անմիջականորեն իրենց վտիտ ուսերին են կրել հայերի տեղահանության, արքայի և կոտորածների ամբողջ տառապանքների ծանրությունը: Ուստի նրանք հանգամանորեն և պատկերավոր կերպով են նկարագրել իրենց աչքով տեսածներն ու իրենց հոգու խորքում զգացածները»<sup>11</sup>: Պատահական չէ, որ դիտարկվող երգերի մեծ մասի (12-ից 9-ի) հիմքում էոլական ձայնակարգի կվինտային օժանդակ հենակետով տեսակն է<sup>12</sup>: Սա հայ մոնոդիկ երաժշտության «առավել

---

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 171:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 136, 145-147:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 171:

<sup>11</sup> Սվազյան Վ., նշվ. աշխ., էջ 18:

<sup>12</sup> Ցեղասպանությանը նվիրված երգերում այս ձայնակարգի գերակշռող դերի մասին նշել է նաև Ա. Բաղդասարյանը: Տե՛ս Բաղդասարյան Ա., նշվ. հոդվ., էջ 98:

քնարական» ձայնակարգն է: Երգերի մեծ մասում մեղեդին առանձնանում է կառուցվածքի ավարտունությամբ, հենակետային հնչյունների շրջագարդման հնարների բազմազանությամբ և հարստությամբ:

Վերը նշեցինք պատմական երգի աղերսների մասին այլ ժանրերի հետ: Մեր դիտարկած նմուշներից պատմական երգի և օրորոցայինի ժանրային փոխներթափանցման տիպական օրինակ է «*Քուրասը Մուշթուր*» («Այստեղը Մուշն է») թուրքալեզու երգը: Բանաստեղծական տեքստն ամբողջությամբ ներկայացնում է գաղթի ճանապարհին զավակին քնեցնող մոր հոգեվիճակը, նրա մտահոգությունը կատարվող դեպքերով (Երկնքում ամպ չկա, // Այս ի՞նչ մշուշ է, // Այստեղը Մուշն է, // Ճամփան բարձունք է, // Գնացողը՝ ետ չի գալիս, // Արդյոք ի՞նչ բան է), և օրորի ժանրի հետ միակ կապը կրկներգն է («Նեննի, եավրում, նեննի») <sup>13</sup>: Սակայն երաժրշտառձական տեսանկյունից երգը տիպական օրորոցային է՝ լայն ձայնասահման ընդգրկող մեղեդիով, զարգացման անկաշկանդ, իմպրովիզացիոն ընթացքով, ճկուն, արտահայտիչ ելևէջային դարձվածքներով <sup>14</sup>: Հատկանշական է, որ դիտարկվող երգի սկզբնական մեղեդիական դարձվածքն էապես մոտ է Կոմիտասի գրառած «Քուն եղիր, բալաս» օրորոցայինի նույն կառուցվածքային հատվածին <sup>15</sup>:




<sup>13</sup> Տե՛ս Սվազյան Վ., նշվ. աշխ., էջ 640: Երգասացն է Թուրքիայի տարածքում գտնվող՝ Կեսարիային մերձակա Թումարգա գյուղից սերող Մարիամ Միրզա-յանը (ծնվ. 1927): Երգը գրառվել է1997 թվականին Ստամբուլում: Բանաստեղծական տեքստի հայերեն թարգմանությունը տե՛ս նույն տեղում, էջ 449:

<sup>14</sup> Օրորների երաժշտառձական հատկանիշների մասին տե՛ս Բրուսյան Մ., նշվ. աշխ., էջ 197-202:

<sup>15</sup> Կոմիտաս, Երկերի ժողովածու, 10-րդ հատոր, խմբ.՝ Ռ. Աթայան, Երևան, 2000, էջ 11, թիվ 154:

Պատմական երգի և լացերգի (լալիքի) ժանրային փոխառնչության ցայտուն դրսևորում է «Ա՛խ, ի՛նչ օրեր են» երգը, որը հորինել է Յեղասպանության ականատես վերապրող, ծագումով մշեցի Շողեր Տոնյանը՝ Եդեռնի արհավիրքից փրկված, սակայն ստալինյան բռնաճնշումների ժամանակաշրջանի զոհ դարձած և Սիբիր արքայաժողովում եղբոր մասին: Երգի որոշ երաժշտաոճական և կառուցվածքային առանձնահատկություններ հավասարապես բնորոշ են թե՛ ողբերին, թե՛ լացերգերին: Դրանց թվում են տարբեր ծավալներ ունեցող, հաճախ տարբերակվող թեմատիկ դարձվածքների ազատ հաջորդականությունը, հեկեկոցի նմանվող բնորոշ ռիթմաինտոնացիոն հնարների առկայությունը (նշված դարձվածքների ընդհատումը կամ եզրափակումը երկարատև հնչյուններով, դարձվածքների վերջում ձայնի սահեցման՝ գլիսանդոյի հնարի կիրառումը և այլն)<sup>16</sup>: Այդուհանդերձ քննվող նմուշի ձայնակարգային հնչյունաշարի համեմատաբար լայն ծավալը և երգային տարրի ավելի մեծ տեսակարար կշիռը մոտեցնում են այն լացերգերին, որոնցում, ի տարբերություն ողբերի, վշտի ապրումն առավել մեղմ դրսևորում ունի: Երգի բանաստեղծական տեքստում կրունկի կերպարի առկայությունը բովանդակային անմիջական կապ է ստեղծում պանդխտության երգի ժանրի հետ, որտեղ կրունկը օտարության մեջ գտնվող պանդուխտին հայրենիքից լուր բերող ավետաբեր թռչուն է:



Թեև «Որբանոցին վրայեն սև դուռ մը անցավ» վերնագրով երգում<sup>17</sup> պանդխտության երգերի խորհրդանիշ ավետաբեր կրունկին

<sup>16</sup> Տե՛ս Բրուտյան Մ., նշվ. աշխ., էջ 137-139, 150:

<sup>17</sup> Երգասացը արմատներով կոնիացի Սաթենիկ Գույումջյանն է (ծնվ. 1902): Երգը գրավել է Հրազդանում 1984-ին: Տե՛ս Սվազյան Վ., նշվ. աշխ., էջ 738,

փոխարինում է սև թռչունը, որն ավանդաբար ընկալվել է որպես չար, աղետաբեր ուժի այլաբանական մարմնավորում, այս երգն իր ոճական հատկանիշներով ակնհայտ ժառանգական կապ է դրսևորում պանդխտության երգի ժանրի հետ: Այս առումով տիպական է նախնառաջ երկակի (հարմոնիկ) ձայնակարգը, որի կիրառության հիմնական ոլորտներից մեկը, ըստ Ք. Քուշնարյանի, հենց պանդխտության երգի ժանրն է<sup>18</sup>: Երաժշտագետի կարծիքով այս ձայնակարգի վրա հիմնված մեղեդիներն ընկալվում են որպես հայրենիքի կարոտով կամ մենությամբ պայմանավորված թախիծի, կարեկցանք առաջացնող հոգեկան ցավի երաժշտական արտահայտություններ<sup>19</sup>: Այնուհետև ակնառու է նաև պանդխտության երգերին հատուկ՝ ոճական հենքի՝ բազմաշերտությունը (ինչպես հայտնի է, պանդխտության երգերը՝ որպես միջնադարյան հայրենների ժառանգորդներ աղերսներ ունեն մի կողմից՝ գեղջկական երգի, մյուս կողմից՝ հայ միջնադարյան աշխարհիկ և հոգևոր մասնագիտացված երգարվեստի, այդ թվում՝ գուսանական երաժշտության և տաղարվեստի հետ): Վերջապես քննվող երգը մեղեդիական ծավալման տրամաբանության և առանձին դարձվածքների մակարդակներում էական գույզահեռներ և համընկնումներ է դրսևորում նույն ձայնակարգային հիմքն ունեցող պանդխտության երգերի մի շարք տարբերակների հետ: Մասնավորապես երգի առաջին հարաբերականորեն ավարտուն հատվածը մեղեդիական զարգացման տրամաբանության առումով զգալիորեն մոտ է Կոմիտասի գրառած «Կռունկ, ուստի՝ կուգաս» երգի՝ ստորև բերված տարբերակի նույն կառուցվածքային հատվածին, իսկ դրանց եզրափակիչ դրվագները գրեթե լիարժեքորեն համընկնում են<sup>20</sup>:

---

ինչպես նաև էջ 616, տողատակ:

<sup>18</sup> Քուշնարյան Ք., Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր (թարգմանված ռուսերենից), Երևան, 2008, էջ 433, 434:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 433:

<sup>20</sup> Տե՛ս Կոմիտաս, Երկերի ժողովածու, 10-րդ հատոր, էջ 103, թիվ 136: Ընդգծենք նաև, որ այս տարբերակին զգալիորեն հարազատ է նույն երգի կոմիտասյան մշակումը ձայնի և դաշնամուրի համար: Տե՛ս Կոմիտաս, Երկերի ժողովածու, 1-ին հատոր, խմբ. Ռ. Աթայան, Երևան, 1960, էջ 109-111: «Որբանոցին վրայեն սև դուռ մը անցավ» երգը մեղեդիական հարազատություն ունի նաև Մ. Թումաճանի գրառած պանդխտության երգերի որոշ տարբերակների հետ: Տե՛ս, օրինակ, Թումաճան Մ., Հայրենի երգ ու բան, հ. 2, Երևան, 1983, էջ 155:

Օրինակ 3ա

ԿռուՆկ, ուս- տի՞ կո՞ճ - գաս,

ծա - ռա եմ ձայ - - նիդ.

Օրինակ 3բ



ՈՐ - բա - ն ո - ցի վո - րա - յեւ սև դուռ վր ան-ցավ:

Մեր կողմից պայմանականորեն **Բ** ենթախմբում ընդգրկված երգերը ռճական տեսանկյունից առավել մոտ են քաղաքային երգի ժանրին, հատկապես վերջինիս կարևոր ենթատեսակներից մեկը՝ ներկայացնող ազգային-հայրենասիրական երգերին<sup>21</sup>: Նշված ենթա-ժանրի ստեղծման գաղափարական հիմքը XIX դարի երկրորդ կեսին թուրքական լծից Արևմտյան Հայաստանն ազատագրելու գաղափարական հզոր շարժումն էր: Ազգային-հայրենասիրական երգերի հորինման և կենցաղավարման լայն տարածքը պայմանավորել է դրանց բազմատարր ռճական նկարագիրը, որն առնչություններ ունի ինչպես հայ գեղջկական և աշուղական երգարվեստի, այնպես էլ այլ երաժշտական մշակույթների, մասնավորապես արևմտաեվրոպական դասական երաժշտության հետ<sup>22</sup>: Բազմատարր է նաև այդ երգերի բանաստեղծական բաղադրիչը. հայրենասիրական երգերը ստեղծվել են ինչպես ժողովրդական, այնպես էլ գրական բանաստեղծությունների հիման վրա: Բ ենթախումբ ներառված երգերից վեցում (NN 1, 13, 15, 16, 18, 21) գերակա նշանակություն ունեն եվրոպական երաժշտության ձայնակարգային, ռիթմական և ձևակառուցողական հատկանիշները<sup>23</sup>: Մասնավորապես այդ երգերում հաճախ են հանդիպում եվրոպական դասական երաժշտու-

<sup>21</sup> Տե՛ս Հայ քաղաքային ժողովրդական երգերի հատընտիր, կազմող՝ Ա. Մարյան, Երևան, 2010, էջ 6:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Տե՛ս նաև Բաղդասարյան Ա., նշվ. հոդվ., էջ 99:




թյան հիմքը կազմող մաժոր-մինոր ձայնակարգային համակարգի ինտոնացիոն հատկանիշները, քայլերգի կամ վալսի ժանրերին հատուկ դիրքը և այլն: Նշվածի տիպական օրինակներից է «Օդանավն էկավ մեծ ավետիսով» երգը, որը բնորոշվում է եվրոպական մինորի ձայնակարգային-ինտոնացիոն նկարագրով և քայլերգային դիրքով:

#### Օրինակ 4



Քննվող ենթախմբի մյուս հինգ երգերում (NN 6, 8, 17, 20, 22) ոճական տարասեռության մասնակի դրսևորումներով հանդերձ առավել բացահայտ է կապը հայ գեղջկական (երբեմն՝ նաև աշուղական) երաժշտական մտածողության հետ:

#### Օրինակ 5



Հայոց պատմության ամենաօրհասական պահին անգամ, երբ թվում է՝ այլևս անդառնալիորեն խորտակված են մարդկային արժանապատվությունը, ողջ մնալու հույսը և ապրելու վճռականությունը պահպանելու բոլոր հիմքերը, հայ ժողովրդի զավակներից շատերը կարողացան գերմարդկային ուժ գտնել՝ սեփական վեհագույն տեսակի հարատևությունն ապահովելու համար: Նրանք դիմակայեցին ոչնչացմանը՝ ապավինելով սեփական ինքնության կարևորագույն բաղկացուցիչներից մեկին՝ արարելու շնորհին: Վ. Սվազյանի բնորոշմամբ «պատմականությամբ հագեցած և հավաստի վավերա-

գրերի արժեք ունեցող»<sup>24</sup> այս երգերը միննույն ժամանակ հայ ազգային երգաստեղծության ինքնօրինակ, բարձր գեղարվեստականությամբ օժտված դրսևորումներից են, հայ ժողովրդի աննկուն հոգևոր ուժի և ստեղծագործական հանճարի ցայտուն վկայությունները:

*GAYANE AMIRAGHYAN (ARMENIA)*

## **CERTAIN GENRE AND STYLISTIC PECULIARITIES OF THE FOLK SONGS DEDICATED TO THE ARMENIAN GENOCIDE**

The songs dedicated to the Armenian Genocide perpetrated by the Ottoman Empire in 1915-23-ies form a specific layer of the Armenian folk music. The present Article studies 22 models of folk songs recorded with notes, which were included in a separate section of the voluminous book «The Armenian Genocide: Testimonies of the eyewitness survivors» by Verzhine Svazlyan (Yerevan-2011, pp. 638-660). According to their topic, the examined models refer to the genre of historic song. The latter, in turn, is manifested in different styles, depending on different genres of the rural Armenian song on the one hand and the urban song on the other hand. The major part of the songs that we considered has stylistic affinities with the rural Armenian song and certain points of reference with lyric songs, clamors, lullabies and wanders songs. Few models have stylistic correlations with the urban Armenian song.

*ԻՐԻՆԱ ԳԱՐՍՍԵՅԵՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

### **ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԼԵՎՈՆ ԹՈՒԹՈՒՆՋՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ**

Լևոն Թուրունջյանը՝ հայ արվեստասերին, ցավոք, քիչ ծանոթ ֆրանսահայ արվեստագետը, թաշխատական արվեստի, «Աբստրակցիա և ստեղծագործություն», «Կոնկրետ արվեստ» խմբավորումների

---

<sup>24</sup> Սվազյան Վ., նշվ. աշխ., էջ 18:

հիմնադիրներից մեկը, նրա վրձինն են պատկանում երկրաչափական և սյուրռեալիստական արվեստի բազմաթիվ գլուխգործոցներ: Երվանդ Քոչարի և Արշիլ Գորկու պես Թուրունջյանը հայագգի այն արվեստագետների շարքում է, որոնց ստեղծագործությունները նշանակալից հետք են թողել համաշխարհային արվեստի պատմության մեջ և զարդարել են արվեստի գլուխգործոցների զանձարանը:

Նա ծնվել է 1905թ.<sup>1</sup> Ամասիայում՝ ուսուցիչների ընտանիքում: Սկզբնական կրթությունը Թուրունջյանը ստացել է Ստամբուլի Բերբերյան և Կեդրոնական վարժարաններում, այնուհետև՝ Ստամբուլի գեղարվեստի ուսումնարանում:

1915-ի ջարդերին զոհ գնաց նաև Թուրունջյանի հայրը: Փոքրիկ Լևոնին կոտորածից փրկելու համար մայրը նրան ամերիկյան փրկարար նավով Հունաստան է ուղարկում, այնտեղից Թուրունջյանը մեկնում է Վենետիկ: 1923-ին բազմաթիվ հայրենակիցների պես Թուրունջյանը հաստատվում է Փարիզում<sup>2</sup>, որտեղ և մնում է իր ողջ կյանքի ընթացքում: Փարիզի արվեստագետների միջավայրի բացահայտումը ճակատագրական եղավ Թուրունջյանի համար: Պետք է նշել, որ նրա վաղ շրջանի ստեղծագործությունները հավաստում են այն փաստը, որ Թուրունջյանի նկարչական ձիրքը ի հայտ էր եկել վաղուց, և նա շատ արագ էր տիրապետել նկարչության մասնագիտական գաղտնիքներին:

Իր կյանքի ընթացքում Թուրունջյանը փայլուն համատեղեց երկրաչափական աբստրակցիան, սյուրռեալիզմը և թաշխատական արվեստը՝ նշված արտահայտչալեզուներից յուրաքանչյուրով ստեղծելով ինքնատիպ և գեղարվեստական բացառիկ արժեք ունեցող ստեղծագործություններ:

Հոդվածում քննության կառնենք Թուրունջյանի՝ 1930-40-ական թթ. ստեղծած սյուրռեալիստական ոճի ստեղծագործությունները:

1920-ականներին Ֆրանսիայում ձևավորված և լայն թափ ստացած սյուրռեալիստական արվեստաոճի հիմքը խորհրդանշների և տարիմաստ ֆորմաների կիրառումն էր: Սյուրռեալիստներն աշխատում էին ստեղծել ունիվերսալ արվեստ՝ անմիջականորեն

---

<sup>1</sup> Լևոն Թուրունջյանի ծննդյան թիվն անորոշ է և տարբեր կենսագիրների մոտ տատանվում է 1904-ից 1906-ի միջև:

<sup>2</sup> 1923 թվականին բազմաթիվ հայ փախստականներ Փարիզ են գալիս: ԱՄՆ-ից հետո Ֆրանսիան այդ փախստականներին ընդունող երկրորդ երկիրն էր:

խոսելով դիտողի բնագոյների հետ: Նրանց կարծիքով կեցության իրական պատկերը թաքնված էր ենթագիտակցության ակունքներում: Այդ պատճառով արվեստի ստեղծագործությունը պետք է հիմնվեր վերջինիս արտահայտումների՝ պատրանքի, երազի, տեսիլքների, գառանցանքի, մանկության հիշողությունների և այլնի վրա: Սյուրռեալիզմի խորհրդանշական արտահայտչաբանը հրապուրեց Թութունջյանին: Այդ արվեստաոճը նրան թույլ տվեց, թեկուզ ակամա, կտավին հանձնել եղեռնից մնացած իր հուշերը, ներքին ցավը, կորցրած հայրենիքի վիշտը:

Արվեստաբան Ժերար Բերտրանի խոսքերով. «...նա սյուրռեալիստ դարձավ մի այնպիսի ձևով, ինչպես ուրիշները նոր հավատք են ընդունում: Անդրե Բրետոնի<sup>3</sup> օրինակով նա հավատաց երազի ուժին և մարդ էակի կենսական ուժերը գտնելու անհրաժեշտությանը...»<sup>4</sup>:

Ուսումնասիրելով Թութունջյանի սյուրռեալիստական ոճի կտավների կոմպոզիցիոն լուծումները տեսնում ենք, որ դրանք հիմնված են դիսամփկայի, շեշտված հեռանկարների վրա: Դրանցում կա մի ինքնատիպ գերզգացմունքայնություն, որն արտահայտվում է էլեմենտների ուրվագծերի կտրտվածության, կոմպոզիցիայի լարվածության մեջ:

Թութունջյանի սյուրռեալիստական կտավները հագեցած են խորհրդանշներով: Դրանցում հանդիպում են արմատների, չորացած ճյուղերի և ծառերի, ճաքած նռան և այլ պտուղների, քարի բեկորների, ամպերի, պարանների, սեղանների, պատուհանների, շախմատաձև սալերի, կտրած ձեռքերի և գլուխների պատկերներ<sup>5</sup>: Առաջին հայացքից չհամադրվող այդ առարկաները Թութունջյանի արվեստում ներդաշնակորեն համադրվում են և վերածվելով պայմանական խորհրդանշների՝ խոր իմաստ ձեռք բերում: Թութունջյանի սյուրռեալիստական աշխատանքները երբեմն պարունակում

---

<sup>3</sup> Անդրե Բրետոն (1896-1966) - ֆրանսիացի գրող, բանաստեղծ, սյուրռեալիզմի հիմնադիրներից:

<sup>4</sup> **Maître Claude Robert.** Tutundjian, Hôtel Drouot, Paris, 29 février, 1972, p. 4.

<sup>5</sup> «Խնձորով ալեգորիա», կտավ, յուղաներկ, 17x23 սմ, 1923 թ.: «Նատյուրմորտ պատշգամբում», կտավ, յուղաներկ, 97x130 սմ: «Կարմիր դիմակ», կտավ, յուղաներկ, 89x116 սմ: Անվերնագիր, կտավ, յուղաներկ, 72x115 սմ: Անվերնագիր, կտավ, յուղաներկ, 81x100 սմ: Անվերնագիր, կտավ, յուղաներկ, 33x24 սմ: «Կտրած ձեռքեր», կտավ, յուղաներկ, 65x79 սմ, 1930 թ.:

են նաև երկրաչափական էլեմենտներ, օրինակ՝ գունդ, քանոն, ճատրակ և այլն<sup>6</sup>։ Դրանց նմանակները հանդիպում են նաև նրա գրաֆիկական աբստրակտ աշխատանքներում<sup>7</sup>, սակայն պլուրալիստական ոճի կտավներում այդ դետալները բոլորովին այլ հնչողություն են ձեռք բերում։

Թուրունջյանի կտավների գրեթե բոլոր բնանկարներն ամայացած են։ Դրանցում տեսնում ենք տափաստաններ, պայծառ երկնքի տակ սփռված, տիեզերական տպավորություն ստեղծող տարածքներ։ Նկարչի նպատակն անբնականության և ամայության տպավորության ստեղծումն էր։ Տարածության, որն իր տարիմաստ էլեմենտների շնորհիվ վերածվում է բնության օրենքից, սովորական կյանքի պատկերացումից դուրս գտնվող մի վայրի։

Արվեստաբան Կրիստիան Օլիվերոյի կարծիքով. «...այդ առեղծվածային միջավայրը ճնշող տպավորություն է թողնում, դրանում դիտողը մշտապես երկխոսում է իր մահվան պատկերի հետ, ինչը վկայում է Թուրունջյանի տեսիլքային տեսության մասին, որը պլուրալիստական արվեստում գրեթե ամենահոռետեսականներից է»<sup>8</sup>։

Պետք է նշել, որ նկարները չեն պարունակում մահվան կամ առավել ևս ջարդի պատկերներ, սակայն դրանք դիտելիս հիշողության և տեսիլքի պրիզմայի միջով տեսնում ենք անցյալի մի տանջալից հիշատակ, ցավի հառաչ։ Արվեստագետի մանկության օրերի սարսափազդու պատկերներն արտացոլող այդ աշխատանքներում հաճախ հանդիպում ենք տանջանքի հետ զուգորդվող որևէ էլեմենտի, օրինակ՝ աչքից դուրս ընկած բիբի, երկայնական առանցքով կտրված գլխի, ձեռքված ուղեղի, կտրված ձեռքի և այլն<sup>9</sup>։ Մարմնի

---

<sup>6</sup> Անվերնագիր, կտավ, յուղաներկ, 113x164 սմ, Անվերնագիր, կտավ, յուղաներկ, 82x100 սմ։

<sup>7</sup> Անվերնագիր, 1928 թ., թուղթ, գուաշ, տուշ, 50x62 սմ։ Եռանկյունիով կոմպոզիցիա, 1927 թ., թուղթ, տուշ, 18x24.5 սմ։ Անվերնագիր, 1928 թ., թուղթ, տուշ, ջրաներկ, 28x33 սմ։

<sup>8</sup> Christian Oliveureau, Léon Tutundjian – 1906-1968. L'œuvre constituée 1925-1930, travail de recherche de Diplôme d'Etudes Approfondies soutenue à l'Université de Dijon, juin 1985, p. 17.

<sup>9</sup> «Կտրած ձեռքեր», 1930 թ., կտավ, յուղաներկ, 65x79 սմ։ Սյուրռեալիստական կոմպոզիցիա, 1930 թ., կտավ, յուղաներկ, 90x130 սմ։ Անանուն, կտավ, յուղաներկ, 81x100 սմ։ Անանուն, 1933 թ., կտավ, յուղաներկ, 92x60 սմ։

մասնատված այդ մասերը հաճախ զուգորդվում են բանականության, հաշվարկի, մտքի հետ ասոցացվող դետալների հետ՝ ճատրակ, քանոն և այլն: Արվեստում աջ ձեռքը անկեղծության, բանականության, իսկ ձախը՝ երկակիության խորհուրդն ունի: Բացի այդ, քրիստոնեական արվեստում ձեռքի պատկերումը Աստծո խորհրդանիշն է: Գլխի պատկերումը կրում է իմաստության, խելքի, կառավարման խորհուրդը: Մարմնի այդ մասերի կտրված վիճակում պատկերումն է՛լ ավելի է ուժեղացնում նկարի փոխաբերական իմաստը: Կտրած գլուխները և ձեռքերը դրված են գետնին, հաճախ պատկերված են սփռոցի, ափսեի վրա՝ իբրև սպասքի մի մաս: Դրանցում բիոմորֆ էլեմենտների, հյուսվածքների պատկերումը միգուցե նոր կյանքի վերսկսման, հայ ժողովրդի վերածնության խորհրդանիշն է:

Կտավի հարթությունը հաճախ չորս մասի է բաժանված և չորս առանձին նկարի համապատկերի է վերածվում<sup>10</sup>: Նկարներում պատկերված դեմքերը կամ փակ աչքերով են, կամ էլ անբնական ահասարսուռ հայացք ունեն: Ճեղքված, աղճատված, գերաշխարհային այդ դեմքերը հաճախ ասիմետրիկ են թե՛ աչքերի չափսերով, թե՛ գլխի ընդհանուր համաչափություններով: Արվեստի տեսաբան Ժան Մուրաշանյանի կարծիքով դրանք Թուրունջյանի ինքնանկարներն են, որոնցով նա արտահայտում է իր ներքին հոգեկան տառապանքները, եղեռնի սարսափազդու տեսարաններից հոգու չսպիացած վերքերը<sup>11</sup>:

Երբեմն Թուրունջյանը կտավի մեջ մեկ այլ կտավ է պատկերում՝ շրջանակով կամ առանց շրջանակի<sup>12</sup>: Այդ դեպքում պատկերված երկու նկարների միջև մի ինքնատիպ երկիտություն է ստացվում: Նկարի վրա հաճախ տեսնում ենք բնանկար, մեծամասամբ անտառի կամ ծովի պատկերամբ: Դրան հակառակ, պատկերած կտավից դուրս գտնվող տարածությունն անբնակ և ամայի տեսք ունի: Թուրունջյանի ստեղծագործություններում հանդիպում ենք նաև պատուհանի պատկերումների, որը մի ինքնատիպ

---

<sup>10</sup> Անվերնագիր, կտավ, յուղաներկ, 82x100սմ., «Չորս էլեմենտներ», կտավ, յուղաներկ, 81x100 սմ:

<sup>11</sup> St 'u **Murachanian Jean Louise**. Leon Tutundjian: Trauma, identity and modern art in the aftermath of genocide, University of California, Los Angeles, 2009, 237 p.

<sup>12</sup> «Նկար սյուրռեալիստական բնանկարի մեջ», 1944, կտավ, յուղաներկ:

անցում է դառնում դեպի այլ աշխարհ, այլ իրականություն: Ինքնատիպ է նաև ծառերի պատկերումը: Հիմնականում դրանք կամ չորացած են, կամ մերկացած ձյուղեր ունեն: Դրանց մեծ մասը կղզյակներով կամ մի գծով է պատկերված և հաճախ մարդկանց խմբի տպավորություն է ստեղծում:

Բացի այդ Թուրունջյանը հմտորեն ընդգծում է պատկերի որոշ դետալներ գունային խաղի, շեշտված լույս ու ստվերի միջոցով: Պատկերը դրա շնորհիվ ձեռք է բերում թատերական բնույթ: Այդ զգացողությունն է՝ Լ ավելի է ուժեղացնում հաճախակի հանդիպող դիմակների, վարագույրի, շախմատե սալահատակի պատկերումը:

Թուրունջյանի կտավների էլեմենտներն իրենց ձևերով իրական, միաժամանակ ցնորական են թվում: Դրանք պատկերված են աննյութ, գերբնական միջավայրում: Այդ աշխատանքներում կա մի յուրահատուկ խորհրդավորություն, որն ինքնատիպ ձևով ազդում է դիտողի զգացմունքների վրա: Դրանց մեջ ասես իր մարմնավորումն է ստացել 1915-ի արհավիրքը վերապրած մարդու ներաշխարհը:

Թուրունջյանի ծնողները եղեռնի գոհ էին դարձել, և այդ ցավը մշտապես ապրում էր նրա սրտում: Ամասիայում ծնված նկարիչը մանուկ հասակից առհավետ կորցրել էր իր հայրենիքը, և, ցավոք, նրան այդպես էլ չհաջողվեց գոնե այցելել Խորհրդային Հայաստան: Բնությունից զուսպ և ինքնամիտ լինելով՝ Թուրունջյանը չէր կիսվում իր տառապանքներով ուրիշների հետ, նաև քիչ էր շփվում ֆրանսահայ համայնքի հետ: Արտահայտման միակ աղբյուրը մնում էր արվեստը:

Ցեղասպանության հիշատակներին արձագանքող աշխատանքների շարքից հատկապես առանձնահատուկ է Թուրունջյանի «Դեղին դիմակ» կտավը<sup>13</sup>, որը պատկանում է նրա վաղ շրջանի սյուրռեալիստական ոճի աշխատանքների շարքին: Կտավի հետին պլանում տեսնում ենք մշուշի մեջ աստիճանաբար անհայտացող ծառեր, ամայացած գետնի վրա ցիրուցան եղած քարերի բեկորներ: Կտավի կենտրոնական էլեմենտը ռելիեֆային եզրագծեր ունեցող հսկայական դիմակն է: Լուրջությամբ խախտող ճիչով այն ամբողջ ծավալով առաջ է գալիս դիտողի վրա: Ահասարսուռ ժպտացող դիմակը կարծես բազմաթիվ տանջանքների ենթարկված դեմք լինի:

<sup>13</sup> «Դեղին դիմակ», 1930-ական թթ., կտավ, յուղաներկ, ստորագրված է ներքևի աջ անկյունում, չափսերը՝ 116x89 սմ:

1988-ին Տրետյակովյան պատկերասրահում այդ կտավի ցուցադրությունը մեծ արձագանք էր ստացել:

«Բարձր արվեստ» կերպարվեստի կենտրոնի ուժերով Հայաստան բերված այդ գլուխգործոցը 2015 թ. մարտին զարդարեց Բեյրութի Հայկազյան համալսարանի 60-ամյակին նվիրված ցուցահանդեսը, այնուհետև Հայոց ցեղասպանության հարյուրամյակին նվիրված ցուցահանդեսի շրջանակներում ցուցադրվեց Կոմիտասի թանգարան-ինստիտուտում, մասնակցեց Հայաստանում Լևոն Թութունջյանի ստեղծագործությունների առաջին անհատական ցուցահանդեսին Հայաստանի ազգային պատկերասրահում և «Ծաղկած ծիրանի» ցուցահանդեսին Մարսելում:

Թութունջյանի գերիրապաշտական ոճի աշխատանքները համահունչ են և հավասարազոր սյուրռեալիստ մեծագույն նկարիչների ստեղծագործություններին: Դեռևս 1926-ին Թութունջյանի աշխատանքները ներկայացվեցին Փարիզյան Գալերի Սյուրռեալիստ ցուցասրահում տեղի ունեցած խմբակային ցուցահանդեսում: 1933-ին նա ցուցադրվեց Պյեր Կոլի ցուցասրահում<sup>14</sup> Պիկասոյի, Դալիի, Միրոյի, Մագրիտի, Ջակոմետիի, Տանգիի, Էրնստի և այլ անվանի սյուրռեալիստ արվեստագետների հետ: 1937-ին մասնակցեց սյուրռեալիզմի միջազգային ցուցահանդեսին: Ներկայումս Թութունջյանի ստեղծագործությունները ներկայացված են Փարիզի Պոմպիդու կենտրոնում՝ Պիկասոյի և Միրոյի աշխատանքների կողքին, զարդարում են աշխարհի բազմաթիվ թանգարաններ և անհատական հավաքածուներ:

Դաժանության, ոճի դեմ ճիշդ հանդիսացող Թութունջյանի սյուրռեալիստական աշխատանքներն իրենց գեղագիտական արժանիքներով և խորիմաստությամբ XX դարի արվեստի գոհարների շարքում են դասվում: Արվեստի բովով անցած մարդկային աղետի այդ ինքնատիպ մեկնաբանումներն ամփոփում են եղեռնը վերապրած արվեստագետի արհավիրքի անմոռաց հիշատակը:

---

<sup>14</sup> Gladys Fabre. Tutundjian, Paris, Editions du Regards, 1994, p. 113.



## **THE ECHO OF ARMENIAN GENOCIDE IN THE ART OF LEON TUTUNDJIAN**

This article analyzes surreal paintings of 1930-40's by the French artist with Armenian origins Leon Tutundjian. Surviving the Armenian Genocide and settling in Paris in 1923 this painter worked in many different styles, but the most outstanding of them are his surrealist creations. Analysis of their compositions and details show the original style of the author, explain the reasons why he transferred the memories of genocide by surrealism.

Pictures presented in the article do not contain scenes of death or murder, but looking at them it seems that through the light of vision and memory of the artist we see the painful memory of the whole nation. Memory, expressed by the brilliant brush of Leon Tutundjian.

*ՆԱԻՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

## **ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄՅԱՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

Հայոց պատմության ամենաողբերգական էջերից է Մեծ եղեռնը, որը ծրագրվել և իրագործվել է նախորդ դարի սկզբին Օսմանյան կայսրության իշխանության դեկին կանգնած երիտթուրքական կուսակցության կողմից:

2015-ին լրացավ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը, և ոչ միայն ողջ աշխարհով մեկ սփռված հայությունը, այլև շատ երկրներ խոր ցավով նշեցին մարդկության պատմության խայտառակ էջերից մեկը:

Հայ մտավորականներն ու արվեստագետները բազմիցս անդրադարձել են 1915 թվականի ապրիլյան իրադարձություններին: Հատկանշական է, որ այս թեման տարիքային սահմանափակում չունի, և նույնիսկ տակավին երիտասարդ հայ արվեստագետներն իրենց ստեղծագործություններում արժարծել են այն՝ արտահայ-

տելով մի դեպքում սուգ ու ողբ, մյուս դեպքում՝ հաղթական ոգի ու պայքարի կոչ:

Մերօրյա տաղանդաշատ կոմպոզիտոր Վարդան Ալեքսանդրի Աճեմյանը, ով ղեկավարում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական ֆակուլտետը, իր ուսանողների և առհասարակ հայ երիտասարդների համար հայրենասեր մարդու, հմուտ մանկավարժի, հիանալի և ճանաչված ստեղծագործողի, կիրթ անձնավորության վառ օրինակ է:

Վարդան Աճեմյանը ծնվել է 1956 թվականի ապրիլի 27-ին: Մերը դեպի արվեստը ժառանգել է իր պապիկից՝ ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, պետական մրցանակների դափնեկիր, հանրաճանաչ ռեժիսոր ավագ Վարդան Աճեմյանից: Անգնահատելի էր նաև հոր՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, պետական մրցանակների դափնեկիր, կոմպոզիտոր Ալեքսանդր Աճեմյանի և մոր՝ հիանալի դաշնակահարուհի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Նաթելլա Աճեմյանի վաստակը: Անմոռանալի հետք է թողել Վարդան Աճեմյանի կյանքում նաև տատիկը՝ ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, հայ ականավոր դերասանուհի Արուս Ասրյանը:

Փոքրուց շրջապատված լինելով նման տաղանդավոր արվեստագետներով՝ Վարդան Աճեմյանն ականայից մեծացել է ազգային հենքի վրա խարսխված համամարդկային բարձր արժեհամակարգի մթնոլորտում: Այս մասին են վկայում նաև կոմպոզիտորի բազմաթիվ երաժշտական կտավները, որոնք հարստացրել են ոչ միայն հայ, այլև համաշխարհային երաժշտական գանձարանը:

Մեկ անգամ չէ, որ Վարդան Աճեմյանն անդրադարձել է Հայոց եղեռնին, իսկ 100-ամյակի առիթը պարզապես չէր կարող դուրս մնալ կոմպոզիտորի ուշադրությունից: Սա ուներ իր բացատրությունը: Անձնական գրույցում կոմպոզիտորը նշում է. «Պապիկս Վանից էր, և Հայոց եղեռնի թեման ինձ միշտ հուզել է, ես մեծացել եմ այդ տրամադրության մեջ, ինձ այդպես են դաստիարակել: Պապիկս հաճախ հուզմունքով պատմում էր, թե ինչպես են մազապուրծ փախել Վանից, ու երբեմն, երբ գայրույթն ու ատելությունը թուրքերի հանդեպ և խորը վիշտը անմեղ զոհերի նկատմամբ իրար էին

խառնվում, հարցնում էր ինձ. «Ի՞նչ կանեիր, եթե անապատում թուրքի հանդիպեիր, կսպանեի՞ր»:

Տարիներ շարունակ կոմպոզիտորի հոգում կուտակված այս թեման ի վերջո լույս աշխարհ եկավ երաժշտության միջոցով, որը մնայուն արժեք է սերունդների համար:

Առաջին ստեղծագործությունը՝ Կոնցերտը սուպրանոյի, մեցցո-սուպրանոյի և կամերային նվագախմբի համար, լույս աշխարհ եկավ 1981 թվականին, երբ կոմպոզիտորը դեռ տակավին երիտասարդ էր: Ուղիղ երեսուն տարի անց՝ 2011 թվականին, երբ հետևում էին ուսման, ինքն իրեն գտնելու, փորձի, փնտրտուքների տարիները, ստեղծվում է «1915»-ը՝ պոեմ խառը երգչախմբի համար: Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցը խթան հանդիսացավ Չորրորդ սիմֆոնիայի լույս աշխարհ գալու համար:

Այս երեք ստեղծագործությունները մինչև այս տարի անտիպ էին, սակայն ամիսներ առաջ լույս տեսավ Վարդան Աճեմյանի երգչախմբային ստեղծագործությունների ժողովածուն<sup>1</sup>՝ Դավիթ Ղազարյանի խմբագրությամբ, որում ընդգրկվեց նաև «1915»-ը:

Այսպես, առաջին ստեղծագործությունը, որը նվիրված էր հայերի ցեղասպանությանը, Կոնցերտն էր սուպրանոյի, մեցցո-սուպրանոյի և կամերային նվագախմբի համար՝ ընդլայնված կազմով: Այն առաջին անգամ կատարվեց 1982 թվականի մայիսի 20-ին Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տանը: Կատարողներն էին Ռեբեկա Օջախյանը (սուպրանո), Մարիետա Շահվերդյանը (մեցցո-սուպրանո) և կամերային նվագախումբը՝ դիրիժոր Յուրի Պողոսյանի ղեկավարությամբ: Ստեղծագործությունը մեծ արձագանք գտավ հայ ունկնդրի կողմից, հիացական խոսքեր հնչեցին երիտասարդ կոմպոզիտորի հասցեին, սակայն մամուլում տեղ գտավ միայն երաժշտագետ Կարինե Զաղացյանյանի «Смотр продолжается» հոդվածը<sup>2</sup>, որտեղ ընդամենը 3-4 նախադասություն է նվիրված այս ստեղծագործությանը: Ցավոք, պահպանվել է Կոնցերտի միայն սիրողական ձայնագրությունը:

Այսօր մեզ հետ չէ Մարիետա Շահվերդյանը: Մենք կապ հաստատեցինք Ռեբեկա Օջախյանի հետ, և անձնական զրույցում նա ասաց. «Վարդանը իմ ճանաչած ամենալավ կոմպոզիտորներից

<sup>1</sup> Վարդան Աճեմյանի խմբերգերը, Երևան, «Ամրոց գրուպ», 2015:

<sup>2</sup> Джагацпаян К. Смотр продолжается. “Комсомолец”, 1982, 22 мая, стр. 3.

մեկն է, բացի այդ՝ ամենալավ մարդկանցից մեկը: Նա օժտված է մարդկային դրական բոլոր հատկանիշներով: Վարդանը նաև լավ ընկեր է, համեստագույն արվեստագետ: Թվարկածս բոլոր արժանիքների համար ես սիրով համաձայնեցի կատարել այդ ստեղծագործությունը, սակայն ցավում եմ, որ Կոնցերտը մինչ օրս այլևս չի կատարվել: Թեպետ պատճառներն օբյեկտիվ էին. այն տարիներին մենք ավելի շատ լինում էինք արտերկրում հյուրախաղերով, քան Հայաստանում, բացի այդ, Վարդանի վոկալ գործերը շատ գեղեցիկ են, բայց իրենց մեջ ունեն բարդություն: Հույս ունեմ, որ ապագայում այս հիանալի ստեղծագործությունն իր արժանի տեղը կգտնի և կհնչի դեռ շատ ու շատ անգամ՝ բարձրաձայնելով Հայոց պատմության ողբերգական էջի մասին»:

Կոնցերտը գրված է կամերային նվագախմբի համար՝ ընդլայնված կազմով՝ փայտյա-փողային խումբ, շեփոր, ֆլեքսատոն, քսիլոֆոն, տամ-տամ, բոնգեր, երգեհոն, դաշնամուր, լարային խումբ:

Կառուցվածքի տեսանկյունից կոնցերտը մեկ ամբողջականություն է՝ գուրկ բաժանումներից, դասական եռամաս ձևից, թեպետ շարադրանքի ընթացքում միմյանց են հաջորդում դանդաղ-արագ-չափավոր-արագ-դանդաղ-արագ տեմպերը՝ ստեղծելով որոշակի առանձին հատվածներ, որոնք բացահայտում են ընդհանուր գաղափարի տարբեր կողմերը:

Դիտարկելով Վարդան Աճեմյանի ստեղծագործությունները՝ տեսնում ենք, որ բանալու մոտ նշաններ չկան: Կոմպոզիտորն այս երևույթը բացատրում է հետևյալ կերպ. «Վաղուց է, որ չեմ նշում կոնկրետ տոնայնություն, բայց երաժշտությունն ամբողջովին ընթանում է լադի մեջ: Կարևորը, որ ստեղծագործությունը գրված լինի ճիշտ ժամանակին և լինի բարեհունչ»: Անկասկած, կոմպոզիտորի այս դիտարկումը ևս մեկ անգամ ապացուցում է, որ նրա արվեստը միտված է հուզելու մարդկանց հոգիները, իր մեջ կրում է իրական արվեստի գաղափարներ, այլ ոչ թե ինքնանպատակ է՝ ոչինչ չասող հնչյունների անիմաստ հաջորդումով, ինչը մենք տեսնում ենք ժամանակակից, մոդեռն կոչվող բազում ստեղծագործություններում:

Կոնցերտի հենց առաջին հնչյուններից ստեղծվում է «մռայլ, չարագուշակ, սահմոկեցուցիչ» մթնոլորտ, շնորհիվ ցածր ռեգիստրում անվերջ կրկնվող ռիթմիկ տարբեր խմբերով «սուլ» նոտայի և

մեցցո-սուպրանոյի երգամասում վերընթաց և վարընթաց կիսատոների, որոնք ասես հնչում են որպէս անվերջանալի հարցադրում՝ ինչու, ինչու: Մեծ դեր է խաղում նաև մեծ սեպտիմա դիստանս ինտերվալը, որի վրա ընթանում են մեցցո-սուպրանոյի սեքստոլային չարագուշակ խմբերը և աննկարագրելի սարսափ առաջացնող գլիսանդոները:

Այս հատվածը, կարծես, ազդարարում է արյունալի իրադարձությունների մասին, որոնց արդյունքում կոտորվեցին բազմաթիվ հայեր, ամայացան բազում բնակավայրեր և նույնիսկ բառ չկա արտահայտելու համար այն պատկերը, որը ստեղծվեց սպանդի հետևանքով:

*Allegro*՝ սկսվում է հաջորդ տեսարանը, որտեղ պատկերված է եղեռնի արհավիրքը: Այստեղ մուտք են գործում հարվածայինները, շեփորը, փայտյա-փողային խումբը: Հատկանշական է, որ կոմպոզիտորը երկար ժամանակ չի դիմում սուպրանոյի երգամասին՝ գաղափարային ողջ ծանրաբեռնվածությունը հանձնարարելով մեցցո-սուպրանոյին: Այս հատվածում նվագախմբի նվագամասը շատ լարված է և որթմիկորեն ակտիվ, գերիշխում են տասնվեցերորդականներով շարժումը, կվինտոլային և սեքստոլային խմբերը:

Անմեղ գոհերի հոգիների խաղաղության համար հայ եկեղեցիներում պատարագներ մատուցվեցին, և ահա հենց այս երևույթն է արտացոլված հաջորդ *Adagio* տեսարանում: Կոմպոզիտորը դիմում է հետաքրքիր հնարի. առաջին անգամ մուտք են գործում սուպրանոն և երգեհոնը, և այս եկեղեցական հնչողության մեջ հնչում են ոչ միայն հայ ժողովրդին պատած ցավն ու վիշտը, այլև խաղաղության և ապրելու կոչ՝ հայր պետք է ապրի, արարի, վեր հասնի մոխրից:

Անձնական զրույցում կոմպոզիտորը նշում է. «Ողջ ստեղծագործության ընթացքում փորձել եմ ցույց տալ դառը իրականության և եկեղեցու գործոնի համադրումը և ընդգծել այն գաղափարը, որ բոլոր ճանապարհները տանում են դեպի տաճար»:

Հաջորդ հատվածում վոկալ երգամասը բացակայում է, և երաժշտական շարադրանքն ընթանում է նվագախմբի մոտ: Մեծ նշանակություն են ձեռք բերում ստեղծագործության սկզբի կվինտոլային և սեքստոլային խմբերը, որոնք առկա էին մեցցո-սուպրանոյի երգամասում, իսկ այժմ հնչում են ջութակների, ֆլեյտայի ու կլառնետի նվագամասերում: Մարդու հոգոցներ հիշեցնող մեծացրած

սեկունդաները, փոքրացրած կվարտաները՝ տամ-տամների անդադար մանրանվագների ներքո, պատկերավոր ցուցադրում են կատարվածի ողջ արհավիրքն ու անհուսալիությունը:

Հաջորդող հատվածներում իրական կյանքի և կատարված արհավիրքի բախումն է, երաժշտությունը, կարծես, բաժանվել է երկու շերտի: Առավել ակնհայտ է դա երևում վոկալ պարտիայում, որտեղ մեցցո-սոպրանոն անդադար ներկայացնում է եղեռնագործությունը՝ իրեն բնորոշ մոայլ վարընթաց և վերընթաց սեկունդաներով, վերընթաց փոքրացրած կվարտաներով, կվինտոլային-սեքստոլային խմբերով, իսկ սոպրանոն ազդարարում է հավերժության գաղափարը. ոչ ոք և ոչինչ չի մոռացվել, դեպի տաճար տանող ճանապարհը, որն իր մեջ կրում է ապրելու և չհուսահատվելու պայծառ գաղափարը: Այս հակամարտության մասնակիցն է ողջ նվագախումբը, ինչն առավել պատկերավոր է դարձնում պայքարի ուժը: Եվ հանկարծ sf... բոլոր նվագարանների մոտ ու հարվածայինների ինը տակտերում ընթացող մանրահարվածներ՝ ff-ից դեպի mf, ապա p, pp և ppp վրա մարող հնչողություն: Այս հետաքրքիր հնարն ամենաբարձր կետից մինչև ppp, խոսուն կերպով արտահայտում է Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցի կարգախոսը՝ «Հիշում եմ և պահանջում»: Թեպետ ստեղծագործությունը գրվել է շուրջ 35 տարի առաջ, սակայն հայի հոգում երբեք չի մարել և չի մարի խորը ցավը, հիշողությունը նահատակների մասին և արդարացի պահանջը ողջ աշխարհից՝ ընդունել դառը իրականությունը, Հայոց Մեծ եղեռնը:

Կուռ կառուցվածքով այս կոնցերտը՝ ձևի և բովանդակության համահնչյունությամբ, արծարծված գաղափարի յուրօրինակ մեկնաբանմամբ՝ առանց ավելորդ հույզերի, խիստ ու ազդեցիկ, անկրկնելի գոհար է համաշխարհային երաժշտության մեջ և արվեստագետի բողոք՝ ընդդեմ ոչ միայն Հայոց, այլև եղեռնագործությանն առհասարակ:

Վարդան Աճեմյանի հաջորդ անդրադարձը Եղեռնի թեմային «1915» վոկալիզն է՝ գրված խառը երգչախմբի համար a cappella: Ինչպես կոնցերտում, այստեղ ևս կոմպոզիտորը հրաժարվում է բառերից՝ իր ասելիքը կենտրոնացնելով մարդկային ձայնի՝ վոկալիզի վրա:

Ողջ ստեղծագործության ընթացքում մենք լսում ենք միայն «ա», «օ», «հո» բացականչությունները, որոնք ներառում են ազգի ողջ ցավն ու վիշտը:

Այս փոքրածավալ կտավի մեջ հետաքրքիր կերպով միաձուլված են արական և կանացի տեմբերերը, որտեղ ամեն մի ձայն ունի իր էմոցիոնալ ծանրաբեռնվածությունը: Ի տարբերություն կոնցերտի, որտեղ շեշտադրված է հայ մոր լացը, ողբը, ապա՝ խաղաղության կոչը, դեպի տաճար ցույց տվող ճանապարհի խորհուրդը, «1915»-ում արտացոլված է ողջ հայության, ողջ մարդկության արձագանքը, ինչով և բացատրվում է խառը երգչախմբի ընտրությունը: Ստեղծագործության «խստությունն ու զսպվածությունը» ընդգծված է a cappella հնչողությամբ՝ ոչ մի այլ նվագարանի հնչերանգ:

«1915»-ը սկսվում է ալտերի «մի» հնչյունի ppp ձայնառությամբ, իսկ ալտերի մյուս խումբը այդ ձայնառության վրա կառուցում է իր վարընթաց խրոմատիկ սեկունդաներով քայլերը փոքրացրած կվարտա ինտերվալի սահմանում: 7-տակտանի այս մուտքից հետո, որն ակամայից հիշեցնում է թունանյանական աշուղի խոսքը «Թմկաբերդի առում»-ից, մուտք է գործում երգչախումբը, և սկսվում է իրապատումը: Յուրաքանչյուր ձայն բաժանված է երկու խմբի: Եվ այս բաժանումը պահպանված է գրեթե ողջ խմբերգի ընթացքում, ինչը է՛լ ավելի է հարստացնում հնչողություն՝, ստեղծելով երկու երգչախմբի տպավորություն. կարծես երգչախումբը երգչախմբի մեջ:

Ստեղծագործության ընթացքում հսկայական դեր են խաղում տրիոլային խմբերն ու կետագծային ռիթմը: Խմբերգի առաջին րոպեներից հաստատվում է խորալային բնույթի հնչողություն, ինչը, կարծես, կամարի նման կապվում է տաճարի թեմայի հետ կոնցերտից: Ստեղծագործության կուլմինացիան համընկնում է հնչունային բարձրակետի հետ (երկրորդ օկտավի լյա): Այս հատվածում կանոնի նման բոլոր ձայներում անցնում է երաժշտական նույն դարձվածքը: Սակայն սրանից հետո էլ լարվածությունը չի նվազում, շարունակվում է, և այս անգամ վերընթաց սեկվենցիոն շարժումով հնչողությունը հասնում է երկրորդ օկտավի ֆա#-ին, որից հետո հնչողությունը հետզհետե մարում է՝ հասնելով ppp, որով և ավարտվում է ստեղծագործությունը:

«1915»-ը առաջին անգամ կատարեց «Հովեր» պետական կամերային երգչախումբը 2011 թվականին: Երգչախմբի հիմնադիր-

ղեկավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Երևանի պետական կոնսերվատորիայի դոցենտ Սոնա Հովհաննիսյանը անձնական գրույցում նշում է. «Այս ստեղծագործությանը ես անդրադարձա ամենամյա համերգի ժամանակ, որը նվիրում եմ հայ կոմպոզիտորների նոր, դեռևս չկատարված ստեղծագործություններին: Ըստ իս, «1915»-ը կոմպոզիտորի հայրենիքի հանդեպ տածած սիրո արտահայտումն է, այն ամբողջովին, կարծես, էլեգիա լինի: Ստեղծագործությունը շատ ջերմ է, նուրբ, քնարական: Հետաքրքիր է Վարդան Աճեմյանի ունակությունը՝ ստեղծել մեղեդի, այնուհետև այն փայփայել, գուրգուրել, իմիտացիաների միջոցով զարգացնել և հասցնել կուլմինացիայի, ինչպես տեսնում ենք «1915»-ի օրինակով: Նույնիսկ մի պահ կա, երբ divizi-ն բաժանված է 18 ձայնի, այսինքն՝ ենթաձայները, կլաստեր ստեղծելով, ընդգրկում են լադի բոլոր հնարավորությունները: Այս ստեղծագործությունը համամարդկային է, այն շատ «նրբագգաց է», բայց ոչ ցավի գերակշռությամբ, մի տեսակ դեմոկրատական է ու լայն ընդգրկում ունի»:

Ձրույցի ընթացքում Սոնա Հովհաննիսյանը նշեց նաև հետևյալը. «Տարիների ընթացքում մի օրինաչափություն եմ նկատում՝ որքան կոմպոզիտորը հասունանում է և երևույթներին ավելի իմաստավորված ու խորքային նայում, նա անպայման անդրադառնում է երգչախմբին: Օրինակ, Է.Միրզոյանի վերջին ստեղծագործություններից է խմբերգը, որը նա նվիրել է մեզ՝ «Հովեր» երգչախմբին»:

«Հովեր» երգչախմբի համագործակցությունը Վարդան Աճեմյանի հետ չավարտվեց այս ստեղծագործությամբ: Սոնա Հովհաննիսյանը նշում է, որ այս պահին իր ձեռքի տակ է Վ. Աճեմյանի «Երեք երգ» կոչվող շարքը, որը «չտեսնված գեղեցիկ երաժշտական կտավ է, որը երգչախումբը մինչև այս տարվա վերջ անպայման կկատարի, առավել ևս, որ Վ. Աճեմյանը այն համեստագույն և տաղանդաշատ կոմպոզիտորներից է, ում ստեղծագործություններին անդրադառնում ենք մեծ հաճույքով ու սիրով»:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի հետ կապված բազմաթիվ հայ արվեստագետներ արձագանքեցին զանազան ստեղծագործություններով: Նրանց շարքում էր նաև Վարդան Աճեմյանը, ով իր ազգանվեր գործը կատարեց՝ գրելով Չորրորդ սիմֆոնիան:

Կառուցվածքով այն տարբերվում է դասական քառամաս սիմֆոնիաներից և կազմված է երեք մասից՝ Allegro con moto, Largo



և Adagio: Սիմֆոնիկ նվագախմբի կազմն էլ ընդլայնված է:

Առաջին հայացքից նայելով սիմֆոնիայի պարտիտուրին՝ աչքի է ընկնում հարվածայինների ահռելի կազմը՝ 18 նվագարան-ճշգրիտ բարձրություն ունեցող, ադմկային և ճշգրիտ բարձրություն չունեցող, որոնց թվում երկու տավիղ և ռոյալ:

Փայտյա-փողային խմբի ամեն մի նվագարան ներկայացված է նաև իր տարատեսակով՝ 2 ֆլեյտա և պիկոլո ֆլեյտա, 2 հորոյ և անգլիական փող, 2 կլառնետ և բաս կլառնետ, 2 ֆագոտ և կոնտրաֆագոտ:

Պղնձյա-փողայինները ներկայացված են յուրաքանչյուր նվագարանից չորսական կիրառումով և լարային խումբ:

Սիմֆոնիայի առաջին մասում վեց տակտ մուտքից հետո կլառնետների նվագամասում անցնում է հիմնական թեման: Սա մի «հպարտ», հաղթական թեմա է, որն ի սկզբանե իր մեջ կրում է սեկվենցիոն-մոտիվային զարգացման տարրեր, որոնք բազմիցս հանդիպում են հետագա զարգացման ընթացքում: Վարընթաց մաքուր կվինտան, այնուհետև սահուն վերընթաց շարժումը մաքուր կվարտայի սահմանում պատմողական բնույթ են հաղորդում թեմային: Թեման կրկնվում է երկրորդ անգամ, այնուհետև մաքուր կվինտա և մաքուր կվարտա ինտերվալները փոխկանչի նման անցնում են տարբեր նվագարանների մոտ՝ գալարափող, շեփոր, բաս կլառնետ, հորոյ, ֆլեյտա և պիկոլո: Ու նորից անցնում է հիմնական թեման կլառնետների, բաս կլառնետի և 4 գալարափողերի նվագամասում: Պղնձյա-փողայինների հնչերանգներն ընդգծում են թեմայի հաղթական բնույթը և առնական երանգ հաղորդում նրան:

Մեծ նշանակություն են ձեռք բերում սկզբնական տրիոլային վերընթաց խմբերը, որոնք պարբերաբար հանդիպում են առաջին մասում՝ որոշակի լարվածություն մտցնելով հնչողության մեջ: Երբեմն տրիոլային խմբերը վերածվում են տասնվեցերորդականների խմբերի լարայինների, մասնավորապես ջութակների մոտ:

Առաջին մասն աչքի է ընկնում սեկվենցիոն-մոտիվային զարգացմամբ: Ահռելի հնչողության է հասնում նվագախումբը թիվ 6 հատվածում, երբ բոլոր փայտյա-փողայինների, պղնձյա-փողայինների և ռոյալի նվագամասում անցնում է սիմֆոնիայի մուտքի ռիթմիկ պատկերը: Սրանց ֆոնի վրա լարայինները և անգլիական փողը հնչեցնում են հիմնական թեման: Հաղթական կանչով

ավարտվում է սիմֆոնիայի առաջին մասը: Կոմպոզիտորը նշում է. «Յուրաքանչյուր ստղեծագործության մեջ շատ կարևոր է թեմայի կամ առհասարակ ընտրված նյութի զարգացումը, քանի որ առանց դրա երաժշտությունը վերածվում է մեղիտացիայի: Կյանքն առհասարակ զարգացում է, չէ՞ որ կա սկիզբ, զարգացում, այնուհետև՝ ավարտ»:

Երկրորդ մասը՝ Largo-ն, որն ունի եռմասանի կառուցվածք, սկսվում է փայտյա-փողայինների փոխկանչով, ինչը, կարծես, գրույց լինի նրանց միջև: Հիմնական թեման, որն անցնում է ֆլեյտայի նվագամասում, ունի վառ արտահայտված ազգային բնույթ և հնչում է շատ նրբագեղ ու նազելի: Միաժամանակ այն որոշակի «չարաճճի» տարրեր է պարունակում իր մեջ, շնորհիվ սեքստոլային խմբերի, միջտակտային ու ներտակտային բազմաթիվ սինկոպաների: Ինչպես առաջին մասում, այստեղ ևս մեծ է և տավղի, և՛ հարվածայինների դերը: Հետաքրքրական է, որ այս մասում ևս առաջնային դեր է ստանում սեկվենցիոն-մոտիվային զարգացումը:

Առաջին և երկրորդ մասերի միջև ձգվում է թեմատիկ կամար («նրբագեղ» թեմա), իսկ միջին բաժինը տարբերվում է իր «ստատիկ» բնույթով, այլևս չկան այն «կայտառ» սեքստոլային խմբերն ու նրբագեղ սինկոպաները: Գերակշռում են մեծ տևողությունները՝ կես, քառորդ: Ի տարբերություն ծայրի մասերի՝ միջին մասում բացակայում են վիբրաֆոնը, լիտավրները, ռոյալը, temple-blocks-ը, և հնչողությունը համապատասխանում է կոմպոզիտորի «delicamento» նշմանը: Առհասարակ տվյալ բաժինը ամենալուսավորն է ողջ սիմֆոնիայում և գուրկ է որևէ լարվածությունից:

Սիմֆոնիայի առաջին մասից դեպի երրորդ մաս թեմատիկ կամար է ձգված. կրկին հնչում է առաջին մասի հիմնական թեմայի վարընթաց մաքուր կվինտա ինտերվալը, այնուհետև վերընթաց շարժում դեպի սկզբնական հնչյունը: Նմանօրինակ թեմատիկ կապերը ամբողջական են դարձնում սիմֆոնիան ոչ միայն կառուցվածքի տեսանկյունից, այլև ընդգծում են գաղափարական միասնությունը: Սակայն, ի տարբերություն առաջին մասի Allegro-ի, երրորդ մասն ավելի ծորուն է, ինչին նպաստում են և՛ Adagio տեմպը, և՛ մենակատար հորդի cantabile (երգեցիկ) նշումով թեման, որին ձայնակցում են տավղը, վիբրաֆոնը, ջութակներն ու ալտերը: Երրորդ մասի թեման ամբողջովին կառուցված է տրիոլային խմբերով,

միջտակտային և ներտակտային սինկոպաներով, որոնք բազմիցս հանդիպում են ողջ սիմֆոնիայի ընթացքում: Այստեղ ևս ակներև է ազգային ինտոնացիոն բնույթը:

Ինչպես երկրորդ մասը, երրորդը նույնպես ունի եռմասանի կառուցվածք. ծայրի մասերը դանդաղ են, միջինը՝ դինամիկ, արագ: Թեմատիկորեն այն կրկնում է առաջին մասի հիմնական թեման՝ ռիթմիկորեն փոքր-ինչ փոփոխված, իսկ երրորդ մասում հաստատվում են նաև սկզբնական չափն ու ռիթմը:

Այսպես, թեմատիկ փոքր կորիզից ստեղծվում է ծավալուն երաժշտական կտավ, որը փառաբանում է հաղթանակած հայ ժողովրդի անկոտրում կամքը, սերը դեպի հայրենի հողը, ապրելու և արարելու լուսավոր գաղափարը:

Վարդան Աճեմյանն այսպես է բնորոշում իր ստեղծագործությունը. «Հայաստան աշխարհ: Ահա այն գաղափարը, որ նկատի եմ ունեցել Սիմֆոնիան գրելիս: Ոչ մի լաց ու կոծ, այլ Հայաստան-Դրախտավայր: Առհասարակ իմ ստեղծագործությունների մեծ մասն արտահայտում է հենց այդ սերը մեր երկրի հանդեպ, և կարևորն այն է, որ մենք հասկանանք և ընդունենք դա»:

Սիմֆոնիայի հայաստանյան պրեմիերան տեղի ունեցավ 2016թ. փետրվարի 17-ին Արամ Խաչատրյան համերգասրահում, Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի կատարմամբ՝ տաղանդավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ:

*NAIRA GRIGORYAN (ARMENIA)*

## **THE REFLECTION OF ARMENIAN GENOCIDE IN VARDAN ADJEMYAN'S MUSIC**

One of the most tragic issues of Armenian history is Armenian genocide of 1915 in the territory of Ottoman Empire.

This year we commemorate a centennial of the great massacre, which gave birth to many works of art dedicated to those events.

Among these art works we can distinguish the compositions of one of the most prominent Armenian composers Vardan Adjemyan, head of Composers' Department of Yerevan State Conservatory after Komitas.

Before the centennial commemoration, Adjemyan not only once attended the theme of Genocide composing the concert for soprano, mezzo-soprano and chamber orchestra in 1981.

In 2011 V. Adjemyan released the composition of “1915” for Capella choir devoted to the tragic history events.

At last in 2015 Adjemyan composed the Symphony N4, which symbolizes the unbreakable spirit of Armenian nation, its patriotism and never-fading love for life.

### ԱՆՆԱ ԱՍՍՏՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

#### ԵՂԵՌՆԻՑ ՓՐԿՎԱԾ ԵՐԱԺԻՇՏԸ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊԵՐՊԵՐՅԱՆ (Նվիրվում է ծննդյան 110-ամյակին)

*Յարգելի*

*Պր. Համբարձում Պերպերեան,*

*«Ստացայ Ձեր ինձի դրկած երաժշտական գիրքերը: Շնորհակալություն այդ  
պատիւի համար:*

*Ուսումնասիրելով Ձեր փարդիսիոնները (գործերը), բաականաչափ  
եզրակացություն ունեմ*

*Ձեր գործերի մասին: Բմ կարծիքով շատ հետաքրքիր, շատ փրոֆեսիոնալ եւ  
շատ հարուստ գործեր են:*

*Մեծապէս գովասանելի է, որ արեւելեան երաժշտական ոճը շատ նկատելի  
եւ դիրալի է Ձեր գործերի մէջ. մանաւանդ՝ հայկական արմատը:*

*Յաջողություն եւ առողջություն»<sup>1</sup>:*

Այս տողերը գրել է Արամ Խաչատրյանը Մոսկվայից 1977թ. դեկտեմբերի 19-ի իր նամակում, որը հասցեագրված էր սփյուռքահայ կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ եւ երաժշտական-հասարակական գործիչ Համբարձում Պերպերյանին (1905-1999)<sup>2</sup>:

<sup>1</sup> Ծրագիր, 1979թ., 17 հունիսի, հայ., տպ. 4 թերթ, ԳԱԹ, Հ.Պերպերյանի ֆոնդ, N 21:

<sup>2</sup> Հ.Պերպերյանի մասին տե՛ս Համբարձում Պերպերեան, կենսագրական գիծեր, ԳԱԹ, Հ.Պերպերյանի ֆոնդ, N 21: Բրուտյան Յիգիլիա, Սփյուռքի հայ երաժիշտները, Երևան, 1968, էջ 498-509: Նույնի՝ Սփյուռքահայ երաժշտական մշակույթը, Երևան, 1982, էջ 43-45: Նույնի՝ Հայ երաժշտական մշակույթի աշխարհ

Դժվար է ասել, թե ինչպես կդասավորվեր Հ.Պերպերյանի ստեղծագործական ճակատագիրը, եթե այն դաժանաբար «չսրբագրեր» Հայոց Մեծ եղեռնը:

Հ.Պերպերյանը ծնվել է 1905թ. մայիսի 25-ին Ադանայում:

Հազիվ տասը տարեկան էր Հ.Պերպերյանը, երբ «մի օր եկան, 72 հարազատների կոները պարաններով միմյանց կապեցին ու սվինների տակ քայլեցրին դեպի անապատ:

– Համբարձում, դու քիչ մը կողքով, ինձի կպած քալե, Համբարձում, կծկվե, գուցե գնդակը քեզի չդիպչի,- կրկնում էր մեծ եղբայրը լալահառաչ ձայնով:

– Ինչպե՞ս, մի թե պիտի գնդակահարեն»<sup>3</sup>:

Հոգնատանջ քայլերով առաջ գնացող մանչուկը չէր կարող պատկերացնել, թե ինչ է սպասում իրեն: «Հեովում երևաց Եփրատը. ջրերը հեռում էին, կոհակները զարնվում ու զարնվում... Ու զարնվեցին Եփրատի ափին անմեղ մեղավորները: Անշնչացած մարդկանց թուլացած շղթան գետին տապալվեց... Մանուկն էլ ընկավ: «Ջարկվեցինք,- մտածում էր նա:- Բայց ինչո՞ւ չեմ մեռնում, ինչո՞ւ զգում եմ, հա, երևի դեռ տաք եմ, հիմի պիտի մեռնիմ»<sup>4</sup>:

Նահատակների կողքով անցնում են դահիճները՝ սվինները մխրճելով անշնչացած մարմինների մեջ, ստուգելու՝ արդյոք բոլորին են սպանել: Փոքրիկ Համբարձումն զգում է սվինի քերծվածքը ոտքի վրա...

Որոշ ժամանակ անց մանչուկը գիտակցում է, որ չի սպանվել, հրաշքով ողջ է մնացել: Փորձում է բարձրանալ, բայց թևերը կապկպված էին. նա կրծում է պարանները, քանդում կապանքները և ծունկի ելնելով՝ տողում: Մանչուկը հայտնվում է Հալեպի ամերիկյան որբանոցում: Շուտով որբերին տանում են Թուրքիա՝ ազգուրաց դարձնելու: Այս անգամ էլ Համբարձումը խուսափում է. նա սրընթաց գնացքից նետվում է անապատ...

1923-ին Հ.Պերպերյանն ընդունվում է Աթենքի պետական կոնսերվատորիա, որն ավարտում է 1930-ին որպես ջութակահար,

---

հասփիտ ընձիւղները, Երեւան, 1996, էջ 130, 131: Մուրադյան Մաթևոս, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբին, Երևան, 1970, էջ 564, 565:

<sup>3</sup> Բրուսյան Ցիցիլիա, Մփյուռքի հայ երաժիշտները, էջ 498, 499:

<sup>4</sup> Նույն տեղում:

խմբավար և կոմպոզիտոր<sup>5</sup> և նվիրվում երաժշտական-մանկավար-  
ժական ու համերգային գործունեությանը:

1933-1963թթ. Հ.Պերպերյանը բազմակողմանի երաժշտական-  
հասարակական գործունեություն է ծավալում Բեյրութում. հիմնում  
է երգչախումբ, մանկական երգեցիկ խումբ և պարի անսամբլ՝ երկար  
տարիներ ղեկավարելով դրանք: Նա էր բոլոր երաժշտական հան-  
դեսների կազմակերպիչն ու ղեկավարը: Լիբանանում առաջին ան-  
գամ նա ներկայացրել է Արմեն Տիգրանյանի «Անուշ» և Տիգրան Չու-  
խաճյանի «Կարինե»<sup>6</sup> օպերաները, ինչպես նաև իր «Արեգնագան» և  
«Մանուկը բնության մեջ» օպերաները:

1956թ. մայիսի 27-ին Հ.Պերպերյանը կազմակերպում է հայ  
երաժշտությանը նվիրված փառատոնը: Այդ օրը լիբանանյան կառա-  
վարությունը նրան պարգևատրում է արվեստի Ա կարգի ոսկյա  
շքանշանով<sup>7</sup>:

Տասնամյակներ շարունակ Հ.Պերպերյանը որպես երաժշտու-  
թյան ուսուցիչ դասավանդել է Հ.Բ.Ը.Միության Հովակիմյան-Մա-  
նուկյան և Դարուհի Հակոբյան վարժարաններում, Ճեմարանում,  
Մխիթարյան վարժարանում, Կիլիկիո կաթողիկոսության դպրեվան-  
քում, Սահակյան վարժարանում, ինչպես նաև Կիլիկյան և Մխի-  
թարյան վարժարաններում և ամերիկյան քոլեջում<sup>8</sup>:

Միաժամանակ որպես կոմպոզիտոր և խմբավար Հ.Պերպեր-  
յանը մեծ ճանաչում է ձեռք բերում Բեյրութում, Տրիպոլիում, Հալե-  
պում, Լաթաքիայում, Դամասկոսում, Երուսաղեմում, Աթենքում,  
Պոլսում, Կահիրեում, Ալեքսանդրիայում, Նիկոսիայում և Լառնա-  
կայում կազմակերպած իր հայրենաշունչ երգահանդեսներով<sup>9</sup>:

1963-ին Հ.Պերպերյանը տեղափոխվում է ԱՄՆ, դառնում  
ԱՄՆ-ի և Կանադայի հայ գաղթավայրերի ՀԲԸՄ-ի ընդհանուր երա-  
ժշտական ղեկավարն ու տնօրենը: Տիգրան Չուխաճյանի «Կարի-

---

<sup>5</sup> Հետագայում նա իր պրոֆեսիոնալ երաժշտական կրթությունը շարու-  
նակում է Փարիզում:

<sup>6</sup> Ի դեպ՝ ներկայացման մեջ, որը կրկնվել է 10 անգամ, գլխավոր հերոսուհու  
դերերգը կատարել է Հ.Պերպերյանի դուստրը՝ դեռևս Բեյրութի երաժշտանոցի  
սան Նաիրին:

<sup>7</sup> Բրուսյան Ցիցիլիա, Մփյուռքի հայ երաժիշտները, Երևան, 1968, էջ 501:

<sup>8</sup> Տե՛ս Համբարձում Պերպերեան, կենսագրական գիծեր, ԳԱԹ, Հ.Պերպերյանի  
ֆոնդ, N 21:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում:

ներն» ներկայացրել է նաև Բոստոնում և Լոս Անջելեսում<sup>10</sup>:

Հ.Պերպերյանը համերգներով հանդես է գալիս Նյու Յորքում, Բոստոնում, Պրովիդենսում, Ֆիլադելֆիայում, Դետրոյտում, Քլիվլենդում, Չիկագոյում, Լոս Անջելեսում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆրեզոնոյում, Մոնրեալում և Մոնտեվիդեոյում<sup>11</sup>:

Իր երաժշտական-մանկավարժական ու համերգային բեղմնավոր գործունեությանը զուգահեռ Հ.Պերպերյանը միաժամանակ ստեղծագործել է: Նրա «ստեղծագործութիւնն աչքի է ընկնում ազգային վառ ինքնատիպութեամբ, ինտոնացիոն եւ ռիթմական հետաքրքիր շաղախով, լադային-պոլիֆոնիկ աստղծով, ջերմ զգացումով»<sup>12</sup>:

Երաժշտական թատրոնի համար նրա ստեղծագործություններից առաջինը «Թիթեո» կամ «Մանուկն ու բնությունը» մանկական օպերա-բալետն է՝ գրված 1934-ին (լիբրետոն՝ Բ.Ժիրայրի): Երկրորդը երեք արարից բաղկացած «Շողիկ» օպերան է (1939)<sup>13</sup>, որի համար հիմք է ծառայել Հ.Թումանյանի «Երկրում» պոեմը:

Երրորդ օպերան՝ «Արեգնազան» օպերա-կանտատը, գրել է Հ.Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հիման վրա 1940-ին: Օպերան անվանել է հերոսուհու անունով: Պերպերյանը տեղյակ չի եղել Ա.Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի գոյության մասին:

Յ.Բրուսյանին հասցեագրված իր վերջին՝ 1995թ. օգոստոսի 7-ով թվագրված նամակում 90-ամյա կոմպոզիտորը հայտնում է, թե «...Աւարտեցի չորրորդ՝ «Թամար» օպերաս, ինչպէս նաեւ Սիամանթոյի Ս.Մեսրոպը իբրեւ օրատօրիոյ, տեւողութեամբ երկու ժամ...»<sup>14</sup>:

Հ.Պերպերյանի խմբերգային գործերից են «Եկեղեցին հայկական» օրատորիան (ուրձայն խմբերգ դաշնամուրի կամ երգեչոնի ընկերակցությամբ), «Խորհուրդ Վարդանանց» կանտատը (քառաձայն խմբերգ դաշնամուրի ընկերակցությամբ), «Նաիրյան խմբերգեր» շարքը՝ բաղկացած չորս խմբերգերից («Հայաստանի գովքը»,

---

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>12</sup> Բրուսեան Յիցիլիա, Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընծիւղները, Երեւան, 1996, էջ 130:

<sup>13</sup> Շողիկ, Լիբրետո ըստ Թումանյանի, 1939թ., Հալեպ, օպերա, լուսատիպ 11թ., ԳԱԹ, Հ.Պերպերյանի ֆոնդ, N 20:

<sup>14</sup> Բրուսեան Յիցիլիա, Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընծիւղները, էջ 131:

«Խոսք իմ որդուն», «Հայոց համբարձումը», «Գութաներգ»), «Requiem Aeternam»-ը (Կոմիտասի հիշատակին) և այլն:

1977թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հ.Պերպերյանը Վահան Թեքեյանի խոսքերով գրում է «Աղօթք Վաղուան Սեմին Առջև»<sup>15</sup> կանտատը՝ մեցցո-սոպրանոյի և երգչախմբի համար:

1981-82 թվականներին Հ.Պերպերյանն ավարտում է «Choral Symphonic» մեկ ժամ տևողությամբ ծավալուն գործը մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար: «Վարպետը իր գործին իբրեւ նիւթ առած է Սիամանթոյի «Ս. Մեսրոպ» ստեղծագործութեան «Տեսիլքը» եւ «Գիւտին փառք» խորագրուած հատուածները: Ամբողջը բաժնած է 9 մասերու, որոնք երաժշտական interludeներով կապուած են իրար, առանց դադարի: Երգչախումբի եւ նուագախումբի մասերէն զատ առանձին բաժիններ վերապահուած են «մեցցո սոփրանոյ»ի, «թենոր»ի եւ «պարիթոն»ի<sup>16</sup>:

Կոմպոզիտորի գրչին է պատկանում «Նաիրյան երգեր» շարքը՝ բաղկացած հինգ երգերից («Գյուղ հայրենի», «Զմրուխտ սարից հովեր կուգան», «Վարուժնակիս», «Գողթան երգը», «Լուսավորչի կանթեղը»), բազմաթիվ մեներգեր և խմբերգեր Ե.Չարենցի, Վ.Թեքեյանի, Մ.Մեծարենցի, Դ.Վարուժանի, Սիամանթոյի, Հ.Շիրազի, Ս.Կապուտիկյանի խոսքերով, ինչպէս նաև կոնցերտները՝ Զութակի և նվագախմբի կոնցերտը<sup>17</sup>, որը գրել է 1950-ին և նվիրել որդուն՝ Հրաչին և Թավջութակի և նվագախմբի կոնցերտը<sup>18</sup>, որը գրել է 1949-ին և նվիրել մյուս որդուն՝ Վահէին:

Անհոգ մանկությունից ու պատանեկությունից նենգաբար գրկված, որբ մեծացած Համբարձումը հետագայում իր ողջ ստեղծագործական կյանքում մի անշեջ ջերմություն պահպանեց մանուկների հանդէպ: Մեծ է նրա ծառայությունը հատկապէս մանկական երգչախմբերի ստեղծման, հայ մանուկներին երաժշտական արվես-

---

<sup>15</sup> Կանտատա Աղոթք Վաղվան Սեմին առջև, տպագիր 23 թ., ԳԱԹ, Հ.Պերպերյանի ֆոնդ, N 3:

<sup>16</sup> Տե՛ս Համբարձում Պերպերեանի նոր ստեղծագործութիւնը Հ.Բ.Ը.Միութեան 75ամեակին նուիրուած, հոդված, 1982, ապրիլի 15, հայ., լուսատիպ 1թ., ԳԱԹ, Հ.Պերպերյանի ֆոնդ, N 22:

<sup>17</sup> Կոնցերտ ջութակի և նվագախմբի համար, կից՝ ջութակի պարտիան, 1950, տպագիր 38թ., 14թ., 2 փաթ., ԳԱԹ, Հ.Պերպերյանի ֆոնդ, N 2:

<sup>18</sup> Կոնցերտ թավջութակի և նվագախմբի համար, կից՝ ջութակի պարտիան, տպագիր 31թ., 10թ., 2 փաթ., ԳԱԹ, Հ.Պերպերյանի ֆոնդ, N 1:



տին հաղորդակից դարձնելու գործում: Նա հեղինակ է մանուկների համար գրված բազմաթիվ մանկական երգերի: Մանուկների համար է գրել իր առաջին օպերան՝ «Թիթեռ» կամ «Մանուկն ու բնությունը» մանկական օպերա-բալետը, որը բեմադրվել է Բեյրութում և Ֆիլադելֆիայում:

Ընդամենը տասը տարեկանում հայրենագրված Հ.Պերպերյանն ամբողջ կյանքում մի առանձին վերաբերմունք ուներ հայրենիքի հանդեպ, ինչը դրսևորվեց նաև ստեղծագործության մեջ: Այս առումով հատկանշական են հատկապես նրա վոկալ-սիմֆոնիկ գործերից «Եկեղեցին հայկական» օրատորիան, «Խորհուրդ Վարդանանց» կանտատը, «Նաիրյան խմբերգեր» շարքը...

«Պերպերյանի գործունեությանը ոգի ու կորով ներշնչողը եղել է ու կա իր մայր հայրենիքը, իր ժողովուրդը: Նրա տարիների փայփայած երազն էր օր մը հայրենի երդիկին տակ հնչեցնել իր հայրենակարոտ երկերը: Ու երազն այդ իրականություն էր դառնում... Մպասումների ու երջանկության, երազանքների ու բաղձանքների, անհուն կարոտի ու հրճվանքի հույզերը ալեկոծվում, փոթորկվում էին նրա կրծքի տակ... Աչքերը մշուշվեցին, կոպերը ծանրացան.. շուրթերից մի ահ պոկվեց, երկու տաք շիթ գլորվեցին այտերի վրայով... Նա տեսավ մայր երկիրը, նա իջավ հայրենի հողի վրա... համբուրեց հողը, հետո ողջագուրվեց դիմավորողների հետ:

Նա պատվավոր հյուր եղավ մայր հայրենիքում ծննդյան ու վերածննդի 40-րդ տարեդարձի հանդիսություններին»<sup>19</sup>:

Պերպերյանն սկսում է պատրաստվել Երևանում իր հեղինակային համերգին: Նախապատրաստական աշխատանքները տևում են 15 օր: Եվ ահավասիկ 1961թ. հունիսի 9-ին տեղի է ունենում սփյուռքահայ կոմպոզիտորի անդրանիկ համերգը հայրենիքում:

Վերադառնալով Բեյրութ՝ 1961թ. հուլիսի 27-ի նամակում նա գրում է. «Հայրենիքեն քաղած տպավորություններս սքանչելի ու անմոռանալի հիշատակներով քանդակված են հոգիիս խորքը, որոնք կրկին ու կրկին կը փոխադրեն զիս հոն՝ խանդավառվելու համար ներկայի հերոսական աշխատանքներով, իրականացած հրաշալիքներով և թե ապագայի շատ ավելի փայլուն իրագործումներու հեռանկարներով:

---

<sup>19</sup> Բրուսյան Ցիցիլիա, Սփյուռքի հայ երաժիշտները, Երևան, 1968, էջ 502:

Ուոքիդ տակ հարազատ հողին տվածը Մայաթ-Նովայի գոհար խոսքով «ուրիշ դիդ է»:

Հայրենիքի աշխատանքային ծրագիրը ես կը նմանեցնեմ Կոմիտասյան ուժեղ ներդաշնակությամբ կառուցված խմբերգի մը, որուն կատարումի ընթացքին առաջ եկած կեղծ, անմաքուր ձայնալիքները չեն կրնար խանգարել հիմնականը:

Հոյակապ ու նոր սիմֆոնի մը հորինելու աշխատանքին լծված է մեր քառասնամյա շինարար ժողովուրդը: Մաղթենք, որ այդ համանվագը ամբողջանա խաղաղության ճանապարհով»<sup>20</sup>:

1961-ից հետո Հ.Պերպերյանը հեղինակային համերգներով Հայաստան այցելեց նաև 1978-ին և 1982-ին «եւ Երևանի Ֆիլհարմոնիայի Դահլիճին մէջ նուագահանդէսներ կուտայ՝ արժանանալով հայրենաբնակ ծանօթ երաժիշտներու եւ արուեստագէտներու բարձր գնահատանքին ու ժողովուրդի հիացման»<sup>21</sup>:

1974թ. նշվում է «Հ.Պերպերեանի երաժշտական-ստեղծագործական գործունեութեան 50-ամեակը՝ իբրեւ ազգային երաժշտական մշակոյթի զարգացման նշանակալից իրադարձութիւն»<sup>22</sup>, իսկ 1979թ. հունիսի 17-ին, կիրակի, Թեքեյան մշակութային միությունը կազմակերպում է Հոբելյանական հանդիսություն՝ նվիրված Համբարձում Պերպերյանի ազգային և երաժշտական գործունեության 50-ամյակին, նախագահությամբ՝ Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի: Բացման խոսքով հանդես է գալիս Նուբար Պերպերյանը: Հ.Պերպերյանի Թավջութակի մենանվագով ելույթ է ունենում Վահե Պերպերյանը, որին հաջորդում է Ռուբեն Գրիգորյանի բանախոսությունը: Կոմպոզիտորի մեներգերի կատարմամբ հանդես է գալիս Լիլի Չուգասզյանը՝ Արման Բոյաջյանի նվագակցությամբ: Մամբրե քահանա Գուգույանը ընթերցում է Հայրապետական կոնդակը, որին հաջորդում է Հ.Պերպերյանին Ս.Ներսես Շնորհալի շքանշանի հանձնումը: Եզրափակիչ խոսքով հանդես է գալիս Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

«Համբարձում Պերպերեանի արուեստը հանգրուան առ հան-

---

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 509:

<sup>21</sup> Համբարձում Պերպերեան, կենսագրական գիծեր, ԳԱԹ, Հ.Պերպերյանի ֆոնդ, N 21:

<sup>22</sup> Բրուտեան Ցիցիլիա, Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընձիւղները, էջ 130:

գրուան բիրեղացաւ, ճոխացաւ ու գեղեցկացաւ՝ հասնելու համար նախանձելի բարձունքներու: Իր գեղարուեստական գործունէութեան յիսուն տարիներուն ընթացքին, վարպետը հասցուցած է մեծ թիով աշակերտներ, որոնք այսօր կը գրաւեն կարեւոր դիրքեր երաժշտութեան եւ մշակոյթի ասպարեզներէն ներս»<sup>23</sup>:

1990թ. նոյեմբերի 25-ին Մոնրեալի Ս.Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր եկեղեցում նշվել է նրա 60-ամեայ բազմաժառանգ գործունեության հոբելյանը, «ուր եւ նրան յանձնուեց Ամենայն Հայոց Հայրապետ Վազգէն Առաջինի շնորհաւորանքը՝ սրբատառ կոնդակով»<sup>24</sup>:

Մեծ եղեռնի 60-ամյա տարելիցի կապակցությամբ կոմպոզիտորը 1972-ին գրել է «Requiem Aeternam»-ը (Կոմիտասի հիշատակին) Զարենցի համանուն ստեղծագործության հիման վրա (տեքստը՝ հայերէն և անգլերէն)<sup>25</sup>, որը 1975-ին կատարվել է Դետրոյտում, ամերիկյան պրոֆեսիոնալ երգչախմբի կատարմամբ և արժանացել ջերմ ընդունելության: «Requiem»-ը հնչել է նաև Երևանում, հեղինակի ղեկավարությամբ: Ի դեպ սա առաջին ռեքվիեմն է՝ աշխարհիկ տեքստով<sup>26</sup>: «Նրա «Requiem Aeternam»-ը 1980-1981 համերգաշրջանում ամերիկեան եւ անգլիական երգչախմբերով ու նուագախմբով կատարուել է ԱՄՆ-ում ու Անգլիայում: Վաստակաշատ կոմպոզիտորին, խմբավարին ու երաժշտական-հասարակական գործչին առաջինը շնորհուեց Հայաստանի կոմպոզիտորների միութեան «Կոմիտաս» մրցանակը՝ 1981 թուականին: Այդ առիթու նա Երեւանում ղեկավարեց իր «Requiem Aeternam»-ը»<sup>27</sup>:

«Requiem Aeternam» -ի նոտաները 1982-ին կոմպոզիտորն իր մակագրությամբ նվիրել է «Հայաստանի գրականութեան և արուեստի պետական թանգարանին»<sup>28</sup>:

---

<sup>23</sup> Համբարձում Պերպերեան, կենսագրական գիծեր, ԳԱԹ, Հ.Պերպերյանի ֆոնդ, N 21:

<sup>24</sup> **Բրուտեան Յիցիլիա**, Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընձիւղները, էջ 131:

<sup>25</sup> Անգլերէն թարգմանությունը կատարել են Դիանա Տեր-Հովանէսյանը և Մարգալետ Մարկոսյանը:

<sup>26</sup> Տե՛ս **Բրուտեան Յիցիլիա**, Սփյուռքահայ երաժշտական մշակույթը, էջ 43:

<sup>27</sup> **Բրուտեան Յիցիլիա**, Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընձիւղները, էջ 130, 131:

<sup>28</sup> Requiem Aeternam, ԳԱԹ, Հ.Պերպերյանի ֆոնդ, N 14:

Երաժիշտն իր հարկի տակ ունեցավ երաժշտական ընտանեկան յուրահատուկ կվարտետ՝ տիկին Սրբուհին և դուստրը՝ Նաիրին՝ երգչուհիներ, որդիները՝ Հրաչը՝ ջութակահար և Վահեն՝ թավջութակահար:

...Հ.Պերպերյանի արխիվը գտնվում է Երևանում՝ Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում: Մինչ օրս նրա ստեղծագործության վերաբերյալ չկա հիմնարար ուսումնասիրություն, իսկ նրա գործերը խոնարհաբար սպասում են, թե երբ պիտի հնչեն հայրենիքում և տեղ գտնեն հայ կատարողների երկացանկում:

*ANNA ASATRYAN (ARMENIA)*

**HAMPARTZOOM BERBERIAN: THE GENOCIDE SURVIVOR  
MUSICIAN  
(To the 110th Anniversary of Birth)**

The paper is dedicated to the life and career of the Diasporan Armenian composer, choirmaster and pedagogue Hampartzoum Berberian. Born in 1905 in Adana, H. Berberian narrowly escaped death in the 1915 Genocide. In 1930, he graduated from the Athens Conservatory as a violinist, choir conductor and composer.

In 1933-1963 H. Berberian had developed a multifaceted musical and social activity in Beirut: for the first time in the artistic life of the Lebanese Armenian community, he staged Armen Tigranyan's "Anush" and Dikran Tchouhadjian's "Karineh", as well as his own operas – "Aregnazan" and "A Child in the Countryside". From the year 1963 H. Berberian lived and worked in the USA, acted as music director for the Armenian General Benevolent Union of the US and Canada's Armenian communities. With Dikran Tchouhadjian's "Karineh" he toured in Boston and Los-Angeles, while his own "A Child in the Countryside" he performed for the Philadelphian audience.

In 1961, 1978 and 1982 H. Berberian visited Armenia with concerts; in 1981 he was awarded the Komitas Prize of Armenia Union of Composers for his merits in the field of music.

To the 60<sup>th</sup> Anniversary of the Armenian Genocide, the composer wrote “Requiem Aeternam” (in the memory of Komitas), based on Yeghishe Charents’ work of the same name. The first performance of “Requiem Aeternam” by a professional American choir in 1975 in Detroit was welcomed warmly by the spectators. “Requiem” sounded in Yerevan too, conducted by the composer.

To date, H. Berberian’s oeuvre has not been studied, and this despite the fact that the composer’s archive is in Yerevan, in the Ye. Charents Museum of Literature and Arts.

### *ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼԵԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

#### **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԱՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԱԶԲԵՐՈՎ**

XX դարի առաջին ցեղասպանությունն իրականացվել է Օսմանյան կայսրությունում. հինավուրց և խաղաղասեր հայ ժողովրդի հանդեպ: 1915-1923 թթ. ընթացքում երիտթուրքերի հայակործան քաղաքականության հետևանքով զոհվեց շուրջ 1.5 միլիոն հայ: Մեծ եղեռնը վերապրածները ստիպված էին հանգրվան փնտրել օտար ափերում՝ աշխարհի տարբեր երկրներում ձևավորելով հայկական համայնքներ: Այլոց մեջ «իր գեղարվեստական նվաճումներով առավել նշանակալի» էր Ֆրանսիայի համայնքը<sup>1</sup>: Ֆրանսահայ արվեստագետները ցեղասպանությանը հաջորդող ողջ հարյուրամյակի ընթացքում չմոռացան հայերի կանխամտածված ցեղասպանությունը՝ իրենց ստեղծագործություններում արտահայտելով սեփական վիշտը, ցավն ու բողոքը և հավերժացնելով անմեղ զոհերի հիշատակը:

Հայ գաղթականների թեման առանցքային տեղ է զբաղեցնում իրադարձությունների ընթացքում մորն ու եղբորը կորցրած «հայ ժողովրդի վշտի երգիչ» Սարգիս Խաչատուրյանի (1886-1947) ստեղծագործության վաղ փուլում: «Հուսահատությունը», «Տանջան-

---

<sup>1</sup> Աղասյան Արարատ, Հայաստան-Ֆրանսիա. գեղարվեստական կապերը XX դարում // «Սովետական արվեստ», Երևան, 1991, համար 4, էջ 17, 18:

քը», «Հայ որբերն անապատում» և նկարչի այլ համանուն կտավները, արվեստաբան Արաբատ Աղասյանի բնութագրմամբ, «դրամատիզմով լի և գեղարվեստական էքսպրեսիվ լեզվով արտահայտված եղերական հուզախոռով պատկերներ են»<sup>2</sup>: Դեպի մահվան դուռը գնացող, Դեր-Ջորի ճանապարհին հայտնված հոգնատանջ, սովալլուկ իր հայրենակիցներին՝ հայ գաղթականներին է պատկերել նաև Փարիզի Ժյուլիեն ակադեմիայում ուսանած ֆրանսահայ արվեստագետ Լևոն Քյուրքչյանը (1872-1924): Ֆրանսահայ անվանի նկարիչ, գրաֆիկ, Ֆրանսիայի «Պատվո լեգեոն»-ի շքանշանակիր, բազմաթիվ մեդալների դափնեկիր Էդգար Շահինը (Շահինյան, 1874-1947) անդրադարձել է Հայոց ցեղասպանության թեմային հիմնականում անուղղակի կերպով. նա պատկերել է թշվառների՝ կյանքի և ապրուստի համար մղվող առօրյա մաքառումները, որոնցում գրող, քննադատ և հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի արտահայտությամբ մարմնավորվում էր «...տառապանքի բոլոր ձևերուն ծանոթ իր ցեղին հոգին...»<sup>3</sup>: Օֆորտի մեծ վարպետի՝ 1920-ի «Թշվառություն և հույս» աշխատանքում ուժգին է հակասությունը վասն հավատոյ և վասն հայրենյաց հայ կնոջ կրած տառապանքների և փրկության հույսի միջև: Դինամիկ կոմպոզիցիան, լուսաստվերային աշխույժ խաղը և թրթռուն գծանկարն ուժգնացնում են պատկերի դրամատիկ հնչողությունը:

Հայոց ցեղասպանության թեման զգալի տեղ է զբաղեցրել գեղանկարիչ, գրաֆիկ Մելքոն Քեբաբջյանի (Քեպապճյան, 1880-1949) արվեստում: Հավիտենականության դիտակետից են ներկայացված և քրիստոնեական հույսով են ողողված «Հայի արյան ճամփան», «Հայ մայրերի սուգը», «Ավերակների մեջ հայ ուրվականներ», «Հայ անթաղ նահատակների հիշատակարանը» («Ընչաքաղցություն»), «Ավերակների մեջ հայ ուրվականներ», «Քրիստոսի խորհրդանշանը», «Քրիստոսի տեսիլքը» և գուաշով արված այլ փոքրադիր գրաֆիկական ստեղծագործություններ, որոնք խորհրդապաշտորեն արտահայտում են նկարչի հույզերը, քանի որ Քեբաբ-

<sup>2</sup> Աղասյան Արաբատ, Մարգիս Խաչատրյանի արվեստը Արևելք-Արևմուտք խաչմերուկում // Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները: Զեկուցումների ժողովածու, Երևան, 2004, էջ 408:

<sup>3</sup> Տե՛ս Խաչատրյան Շահեն, Ֆրանսահայ կերպարվեստ, Երևան, 1991, էջ 44:

ջանի վկայությամբ՝ «խորունկ վիշտերը ապրիլ կ'ուզեն»<sup>4</sup>:

Ֆրանսիայի «Պատվո լեգեոն»-ի շքանշանակիր, անվանի ծովանկարիչ Վարդան Մախոխյանի (1869-1937) ստեղծագործության մեջ հաճախ հանդիպող փոթորկոտ, ալեկոծ ծովն է դարձել հայրենի ժողովրդի վշտի խորհուրդը: «Ծովի երգերով Մախոխյանը դարձավ իր ժողովրդի հույզերի երգիչը», - ասել է արվեստաբան Շահեն Խաչատրյանը<sup>5</sup>: 1919-ին Մախոխյանը ստեղծեց «Հայաստանի բողոքը» երաժշտական պիեսը, որն իր հայրենակիցների տառապանքի արձագանքն է և արդարության կոչը համաշխարհային հանրությանը:

Իր ստեղծագործության ուշ շրջանում Մեծ եղեռնի թեմային և սեփական դառը մանկության վերհուշին է անդրադարձել Փարիզի Ժյուլիեն և Գրան Շոմիեր ակադեմիաների շրջանավարտ Արմիսը (Արմենակ Միսիրյան, 1901-1977): Հայոց ցեղասպանությանը նվիրված 20 կտավ նկարիչը ներկայացրել է Փարիզում, Յյուրիխում և Ամստերդամում: Թուրքիայում՝ Ամասիայում ծնված, 1915-ից վտարանդի Լևոն Թուրունջյանը (1904-1968) արվեստաբան Քրիստիան Օլիվերոյի բնութագրմամբ՝ «սյուրռեալիզմի առավել պեսիմիստ նկարիչներից է»<sup>6</sup>: Խոսուն են նկարչի ստեղծագործության մեջ հաճախ հանդիպող և նրա մանկության ծանր դեպքերն արտահայտող կերպարները՝ անմարդաբնակ բնապատկերները, կիսավեր սյուները, չորացած, սաղարթագուրկ ծառերը, անդամահատված ձեռքերը, ձեռքված դեմքերը և այլն: 1915-ի դեպքերից հետո տասնմեկ հոգուց բաղկացած ընտանիքի միակ վերապրողը՝ Զարեհ Մուրաֆյանը (1907-1980), 1939-ին հաստատվել է Ֆրանսիայում: Անվանի նկարիչ-արվեստաբանը չի ուրացել իր անցյալը. մուրաֆյանական ձեռագրի կնիքը կրող «Ջարդը», «Մահ և կյանք», «Հայ մամիկը», «Դիակներ», «Աքսորի նախօրեին», «Վերապրողը» և նման այլ կտավներ միջազգային հանրությանը հիշեցնում են XX դարի առաջին ցեղասպանության մասին:

Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշանի ասպետ, Ֆրանսիայի

<sup>4</sup> Տե՛ս Ով ով է: Հայեր: Կենսագրական հանրագիտարան, Երևան, 2007, հատոր 2, էջ 657:

<sup>5</sup> Խաչատրյան Շահեն, Ֆրանսահայ կերպարվեստ..., էջ 20:

<sup>6</sup> Տե՛ս Աղասյան Արարատ, Լևոն Թուրունջյանի երրորդ «վերադարձը» // Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններ, Երևան, 1997, էջ 19:

Գեղարվեստի ակադեմիայի անդամ, բազմաթիվ մրցանակների դափնեկիր Ժան Գառզուին (Գառնիկ Զուլումյան, 1907-2000) ողջ կյանքի ընթացքում հետապնդել են ավերակ քաղաքների՝ քաղաք-ուրվականների մտապատկերները, որոնք նա փոխանցել է կտավին: Սակայն Հայոց ցեղասպանության թեմային անմիջականորեն նկարիչն անդրադարձել է միայն 1991-ին Մանոսկ քաղաքի մատուռի՝ Ապոկալիպսիսին նվիրված որմնանկարներում՝ այն ներկայացնելով մարդկության դեմ ուղղված մեծագույն ոճրագործությունների շարքում: Մարդկային զանգերից բաղկացած բրգաձև նստավայրին է բազմում եռագլուխ գազանը՝ Թալեաթը, Էնվերը և Ջեմալը, որոնց ազգային պատկանելությունը ճանաչելի է միանգամից՝ հագուստի և զենքի շնորհիվ: Գառզուի արվեստանոցը հաճախած, Փարիզի գեղարվեստի բարձրագույն դպրոցում ուսանած Շարթի (Սարգիս Հարությունյան, 1927-2011) ստեղծագործության մշտական թեմաներից էր Մեծ եղեռնի ողբերգությունը («Դեյր-Էլ-Զորում», 1963-1964, «Կանայք գաղթի ճանապարհին», 1968, «Մտորում», 1968 և այլն): «Ես կարող էի... պատկերել միայն ծաղիկներ և հաճելի տեսարաններ, բայց մանկությունից կուտակված բոլոր տեսարանները կպել են մաշկիս...», - ասել է նկարիչը<sup>7</sup>:

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Ֆրանսիայի «Պատվո լեգեոն»-ի, ՀՀ «Մեսրոպ Մաշտոց»-ի շքանշանակիր, ֆրանսահայ անվանի նկարիչ Ժանսեմը (Հովհաննես Մեմերջյան, 1920-2013) 2001-ին Հայաստանի Ցեղասպանության թանգարան-ինստիտուտին է նվիրել 1998-2001 թվականներին իր վրձնած «Ցեղասպանություն» պատկերաշարի 34 կտավները: Իր ծննդավայրից՝ Թուրքիայից Հունաստան, ապա Ֆրանսիա գաղթած նկարիչը պատկերել է հայերի տեղահանման, ջարդերի, բռնությունների, ողբի տեսարաններ: «Կորուսյալ հոգիները իրենց ապաստանն են գտել բանաստեղծ-նկարչի մոտ: Նա կտավին է հանձնել այն, ինչը աշխարհը չկարողացավ տեսնել: Ժանսեմի նկարները ողջ հայ ժողովրդի հիշողությունն են», - նկատել է ֆրանսիացի տեսաբան Ք. Բլանը<sup>8</sup>: Եղեռնից փրկված, Կ.Պոլսի մանկատանն ապրած նկարիչ Վահե Հեքիմյանը (1915-1997)

<sup>7</sup> St 'u Zahar Marcel. Shart avec une biographie, une bibliographie et une documentation complete sur le peintre et son oeuvre, Genève, 1969, p. 20.

<sup>8</sup> St 'u Խաչատրյան Շահեն, Եղեռնի արձագանքը հայկական կերպարվեստում, Երևան, 2015, էջ 103:



իր ժողովրդի և սեփական վիշտն արտահայտել է վերացական և կիսավերացական պատկերների դրամատիկ երանգներով («Խաչ-քար», «Ներշնչանք», 1987, «Հայաստանի հողը», 1991 և այլն):

Հայոց ցեղասպանության թեման հետաքրքիր լուծում է ստացել մի շարք միջազգային մցանակների դափնեկիր Ռիշար Ժերանյանի (ծնվ. 1921)՝ «գույնի մոզականությունը և գծանկարի կատարելությունը միավորող նկարչի»<sup>9</sup> ստեղծագործություններում: «Քրիստոսի մուտքը Անի» հնարածին պատկերաշարը խորհրդանշական իմաստ ունի: Անին՝ հազար ու մեկ եկեղեցու հրաշագեղ այդ քաղաք-եպիսկոպոսարանը, իր սրբությամբ և նշանակալիությամբ նմանվում է Երուսաղեմին և վերջինիս նմանությամբ՝ ավերվում, ինչի մասին վկայում են նկարչի մյուս «Անիի ավերակները» խորագիրը կրող աշխատանքները: Ֆլորենցիայի ոսկե մեդալի (1969), Փարիզ քաղաքի մրցանակի (1984) դափնեկիր, փարիզաբնակ գեղանկարիչ, գրաֆիկ Ասատուրի (Ասատուր Պզտիկյան, ծնվ. 1943) գունավոր վիմագրություններում արվեստաբան Վիգեն Ղազարյանի բնութագրմամբ՝ «մեռյալ, երևակայական իրականությունն է...», որը «դիտողի մեջ հարուցում է ամայության..., լքվածության զգացում»<sup>10</sup>: Հայոց ցեղասպանությանը նվիրված մի շարք կտավների հեղինակ է վերապրողների ընտանիքում ծնված Փափազը (Հակոբ Փափազյան, 1927-2004): Այդ ստեղծագործությունները ներկայացնող կինոժապավենն այժմ գտնվում է Փարիզի Պոմպիդուի անվան ֆրանսիական ազգային մշակույթի կենտրոնի գրադարանում: Ֆրանսահայ նկարիչ և հասարակական գործիչ Մորիս Տեր-Մարգարյանը (ծնվ. 1928) Հայոց ցեղասպանությունը «տեսել» է իր ծնողի աչքերով: Արտահայտիչ և հուզիչ է էքսպրեսիվ վրձնահարվածներով լուծված նկարչի հոր դիմանկարների շարքը: «Իր պատկերածն այլևս իր հոր դիմանկարը չէ, այլ ամբողջ մարդկության անհանգստության, ցավի և սիրո մարմնավորումը», - նկատել է կերպարվեստագետ Պիեռ Ֆերնանդեզը<sup>11</sup>: 1963-ից մինչև 2000 թվականը Ֆրանսիայում բնակված Ժան Գազանջյանը (ծնվ. 1938) անտարբեր չէր աքսորյալ հայու-

<sup>9</sup> Տե՛ս Richard Jeranian (Album), Paris, 1983 (sans pagination).

<sup>10</sup> **Ղազարյան Վիգեն**, Սփյուռքահայ արվեստ // Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009, էջ 561, 562:

<sup>11</sup> Տե՛ս **Clavel Bernard**. Der Markarian. Portraits de son père, Paris, 1979 (sans pagination).

թյան ճակատագրի հանդեպ, ինչի մասին վկայում են գերիրապաշտական ոճով կատարված նրա «Ցեղասպանություն», «Որսորդը», «Միգրանտներ» (1996), «Միգրանտներ. Սումգայիթ» կտավները: Իրականության և պատրանքի, ներկայի և անցյալի, վաղանցիկի և հավերժականի երկակիությունն է շեշտված Մեծ եղեռնից փրկված ամերիկահայ տաղանդաշատ նկարիչ Արշիլ Գորկու ողբերգական կերպարը ներկայացնող դիմանկարում: «Ցեղասպանություն», «Աքսոր. քարավաններ» (1988) կտավներում Հայոց ցեղասպանության թեմային է անդրադարձել նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի Պլաստիկ արվեստի միջազգային ընկերակցության հիմնադիր (1993), վերացական և ֆիգուրատիվ գեղանկարչության սահմանագծին աշխատող նկարչուհի և քանդակագործուհի Ասիլվան (Միլվա Առաքելյան, ծնվ. 1937):

Այսօր էլ Մեծ եղեռնի դառը հուշը հետապնդում և հուզում է ֆրանսահայ արվեստագետներին: 2015 թվականի սեպտեմբերի 29-ին Ֆրանսիայի Վալանս քաղաքի Հայ մշակույթի տանը բացվեց «Վերադարձ հայաստանյան տարածքներ» վերտառությամբ ցուցահանդեսը՝ նվիրված Հայոց ցեղասպանության հարյուրամյակին: Հանրությանը ներկայացվեցին ֆրանսահայ նկարիչներ Ժերոմ Բոյաջյանի, Գևորգ Բարդակյանի և Վահագն Ստեփանյանի ստեղծագործությունները: Հայոց կոտորածը, հայ փախստականներին ու որբերին պատկերող այս գործերը, ֆրանսիական մամուլի վկայությամբ. «մշակութային բարձրարժեք ստեղծագործություններ են, որոնք հմայում են իրենց արևելյան լույսով, քանզի կերտված են ավանդապաշտ, բայց միևնույն ժամանակ անհավատալիորեն ժամանակակից ոգով»<sup>12</sup>:

Ֆրանսահայ նկարիչները տարբեր դիտանկյուններից են ներկայացրել հայերի համար ցավալի պատմությունը՝ ներկայացնելով այն ուղղակի կամ անուղղակի կերպով, վավերագրական հավաստիությամբ կամ գեղարվեստական ընդհանրացումներով, խորհրդանշական մատուցումներով, անհատական ձեռագիրը կրող տարբեր ոճերով: Սակայն վերոնշյալ բոլոր ստեղծագործությունները միասնաբար միջազգային հանրությանը հիշեցնում են «մարդկության և քաղաքակրթության դեմ գործված ոճրի» մասին: Այս ստեղ-

---

<sup>12</sup> Abattu Iskouhi. A la recherche d'un peuple perdu. 1915-2015: une exposition pour célébrer le 100e anniversaire du génocide arménien // <http://www.ledauphine.com/>.

ծագործություններն այսօր, ինչպես և 100 տարի առաջ, արտահայտում են անարտահայտելին, խոսում են անձայն և դողանջում են լուռ՝ մարդկանց սրտերում արթնացնելով կարեկցանք, մարդասիրություն և արդար դատաստանի սպասում:

*MARGARITA KAMALIAN (ARMENIA)*

### **ARMENIAN GENOCIDE AS SEEN BY FRENCH-ARMENIAN PAINTERS**

As a result of the massacres of the Armenians organized by the Ottoman Empire at the end of the 19th century and the Armenian Genocide taken place at the beginning of the 20th century, Armenian diaspora was formed in many countries of the world. The Armenian diaspora of France is eminent regarding the cultural and artistic results. In the report are presented the works of French-Armenian painters, dedicated to the theme of Armenian Genocide and reflecting the cry of their wounded souls. Among them are talented and famous painters S. Khachadourian, J. Carzou, Jansem, Shart, E. Chahine, M. Kebabjian, L. Tutundjian, and others. Today, as 100 years ago, their works are silent witnesses of the first genocide of the XXth century.

*НАЗЕНИК САРГСЯН (АРМЕНИЯ)*

### **ТЕМА ГЕНОЦИДА В ТВОРЧЕСТВЕ АРМЯНСКИХ ХОРЕОГРАФОВ**

На протяжении ста лет, прошедших со времени Геноцида армян в Турции, армянские балетмейстеры не так уж часто обращались к этой теме.

Впервые это произошло через год после трагических событий. В 1916 году танцовщица «босоножка» Армен Оганян<sup>1</sup>, принимала участие

---

<sup>1</sup> Танцовщица Армен Оганян еще в самом начале 1910-х годов осуществила первые опыты синтеза «свободного» танца с элементами танцев кавказского региона и регионов Ближнего и Среднего Востока. Хореографическое образование она получила в Школе танцевального искусства Л.И.Нелидовой в Москве. Играла эпизо-

в вечерах, организованных деятелями искусства армянской диаспоры в Париже. 22 июня 1916 года состоялся совместный вечер деятелей армянского и французского искусства в знак скорби о жертвах Геноцида, где присутствовали и члены французского правительства, выступали актеры Комеди Франсез и театра Сары Бернар с чтением стихов армянских поэтов во французских переводах. После того, как хор исполнил армянские народные песни в обработке Комитаса, «... в зале наступила таинственная темнота и немного погодя сцена осветилась красным светом и украсилась восточными коврами. После этого тишина прервалась, и в глубине сцены послышалась исполняемая парижским армянским хором песня «Шел, блистал мой милый» (Քելիք, ցոլիք, իմ յարը), по окончании которой, неслышно, мягко ступая, вышла на сцену талантливая танцовщица Армен Оганян и станцевала песню-пляску «Ой, Назан» в сопровождении хора. По окончании песен «Кричи, журавль, кричи» (Կանչէ, կռուկ, կանչէ) и «Оплачьте горе мое» (Դարձի լացիք), г-жа Оганян исполнила танец «Армянской скорби и плача» в сопровождении оркестра. Красноречивое перо не смогло бы так не-

---

Բելա Բարտոկի՝ թուրքական երաժշտության նկատմամբ հետաքրքրության, ինչպես նաև Թուրքիա կատարած ճանապարհորդության առիթով Լիլիթ Երնջակյանը բազմիցս կասկածներ է հայտնել<sup>7</sup>: Մասնավորապես նա նկատում է, որ աշուղական որոշ սի-րավեպեր ներկայացնելիս թուրք բանասացներից շատերը Բարտոկի համար երգել են մեղեդիները՝ չհիշելով բառերը<sup>8</sup>: Ավելին, Բարտոկը բազմաթիվ տարօրինակ իրողություններով է շրջապատ-

---

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, Մեսրոպյան Ա., Կոմիտասի երգչախումբն ու համերգները, Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, «Հայպետհրատ», 1960, էջ 245, 246:

<sup>6</sup> Գյողակյան Գ., Կոմիտաս, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 36:

<sup>7</sup> Տե՛ս Երնջակյան Լ., Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, էջ 159-164:

<sup>8</sup> Երնջակյան Լ., Նորահայտ էջեր հայ-թուրքական երաժշտական աղերսների պատմությունից, Հայ արվեստի հարցեր 2, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, էջ 62:

ված եղել, ինչպես, օրինակ՝ ինֆորմանտների՝ ոստիկանության ուղեկցությամբ ներկայացվելը<sup>9</sup>: Երնջակյանը հատկապես նկատում է, որ Բարտոկը, նշելով բոլոր հնարավոր ազգությունների ու ցեղերի անունները, որոնց հետ դարերի ընթացքում առնչվել են թուրքերը, որևէ կերպ չի հիշատակում հայերին<sup>10</sup>:

Որպես հավելում Լ. Երնջակյանի դիտարկումներին՝ կներկայացնենք ևս մեկ միջադեպ: Ստորև բերվող տեղեկությունները քաղել ենք Բարտոկի հոդվածներից: Ըստ Բարտոկի՝ Պատու Հինդեմիտի օգնությամբ և աջակցությամբ Թուրքիայի կառավարությունը սկսեց նախաձեռնել երաժշտական կրթությունը՝ եվրոպական մոտեցմամբ: Երբ իրեն հրավիրեցին Թուրքիա, ըստ Բարտոկի. «...նրանք (թուրք պաշտոնյաները-Տ.Շ.) չունեին խորհրդատու, քանի որ թուրքական ազգային երաժշտությունը պետք էր զարգացնել թուրքական ժողովրդական երաժշտությունից: Նրանք չունեին որևէ մեկին, ով կարող էր ցուցումներ տալ ժողովրդական երգերի իրական հավաքագրման համար»<sup>11</sup>: Փաստորեն Թուրքիայում Բարտոկին ոչ մի խոսք չեն ասել Կոմիտասի գործունեության մասին և այն մասին, որ իրականում կրթական ծրագիր տարիներ ի վեր նախատեսված եղել է:

Այնուհետև Բարտոկին ցույց են տվել մեծ թվով երգերի ձայնագրություններ: Պետք է նկատել, որ Բարտոկը որևէ ազգի, որևէ տարածքում գրառված, որևէ մեկից ձայնագրած ցանկացած երգի մասին խոսելիս պարտադիր նշում է տարածքը, ժանրը, երգչի անունը և այլ հնարավոր տվյալներ: Ավելին, նույն զգուշավորությունը նա ցուցաբերում է այլ գրառողների հավաքածուներից իր կիրառած երգերի մասին խոսելիս: Թերևս սա միակ դեպքն է, երբ Բարտոկը գրում է Թուրքիայում իրեն ներկայացված շուրջ 130 երգի մասին՝ առանց հավելյալ տեղեկությունների: Դա նշանակում է, որ նրան այդ տեղեկությունները չեն տրամադրել: Հարց է առաջանում. եթե մինչև նա Թուրքիայում չկար որևէ մեկը, ով թուրքական երգերի հավաքագրումով կգբաղվեր, ապա որտեղի՞ց հայտնվեցին այդ 130 երգերի

<sup>9</sup> Երնջակյան Լ., Հայ-թուրքական երաժշտական կապերի օրինակներից, Հայ արվեստի հարցեր 3, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 62:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 66:

<sup>11</sup> Bartók Béla, Folk Song Collection in Turkey, Essays, ed. Benjamin Suchoff. University of Nebraska Press, 1993, p. 137.

ձայնագրությունները: Ո՞վ էր դրանք իրականացրել:

Բարտոկն ինքն այդ երգերի ձայնագրությունը որակում է որպես թերի, քանի որ դրանք չէին նոտագրվել, և բանաստեղծական տեքստերը չէին գրվել: Այնուհետև Բարտոկը գրում է հետևյալ խիստ ուշագրավ նախադասությունը. «...թուրքերն իրենք չհասկացան ձայնագրությունների մի մասի բառերը»<sup>12</sup>: Երբ Բարտոկը որոշակի զարմանք է արտահայտել թուրքերին, նրան պատասխանել են. «Մի անհանգստացեք, շատ հեշտ է դա կատարել ցանկացած ժամանակ, մենք թուրքեր ենք և հասկանում ենք ձայնագրված տեքստերը»<sup>13</sup>: Բարտոկն այդ ժամանակ նվագարկիչով մի ժողովրդական երգի ձայնագրություն է միացրել և թուրքերից մեկին խնդրել է գրել տեքստը, իսկ ինքն սկսել է նոտագրել երաժշտությունը: Թուրքն ուշադրությամբ լսել է ձայնագրությունը, սակայն այդպես էլ չի կարողացել հասկանալ բառերը:

Բնականաբար շատ էական հարց է առաջանում. ի՞նչ լեզվով են եղել բառերը, և ինչո՞ւ թուրքերը չեն կարողացել հասկանալ գոնե, թե ինչ լեզու է եղել: Փաստ է, որ Բարտոկին ներկայացված երգերը թուրքերեն չեն եղել, հավանաբար նաև քրդերեն չեն եղել, քանի որ գոնե լեզուն ճանաչելի կլիներ, և Թուրքիայի տարածքում հնարավոր կլիներ գտնել քրդերենից թարգմանողներ: Արդյո՞ք թուրքերն այստեղ թաքցնելու շահագրգռվածություն չունեին: Հասկանալի է, որ եթե անգամ նրանք իմանային, որ դրանք հայերեն են, երբեք չէին բարձրաձայնի: Ավելին, եթե Բարտոկից առաջ Թուրքիայում «մասնագետ չէր եղել», ինչպես իրենք էին հավաստում, ապա որտեղի՞ց էին հայտնվել այդ անհայտ լեզվով երգերի ձայնագրությունները:

Մեծ հավանականությամբ ենթադրելի է, որ Բարտոկին ներկայացված ազգագրական – երաժշտական նյութերն իրականում հայերեն են եղել: Ասվածը ևս գալիս է փաստելու Լ. Երնջակյանի այն համոզմունքը, որ Բարտոկին հանելուկային թվացող մի շարք երևույթներ իրենց որոշակի բացատրությունն ունեն հայ երաժշտաբանաստեղծական ավանդություն<sup>14</sup>: Ենթադրելի է նաև, որ քննարկվող երգերը Կոմիտասի կատարած ձայնագրություններից պիտի

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 138:

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> Երնջակյան Լ., Նույն տեղում, էջ 64:

լինեին, քանի որ փաստորեն Կոմիտասը Բարտոկից առաջ Թուրքիայի տարածքում եղել է ժողովրդական երաժշտության միակ հավաքողը: Այս հարցի իրական պատասխանը կարելի է ստանալ միայն այդ ձայնագրությունները հետազոտելուց հետո: Դրա համար հարկավոր է փորձել որևէ կերպ մուտք գործելու իրավունք ձեռք բերել հավանաբար դեռևս Անկարայում պահվող այդ արխիվները: Հասկանալի է, որ ներկա քաղաքական պայմաններում սա գրեթե անհնարին պիտի թվա: Համենայն դեպս կարծում ենք, որ փորձել անհրաժեշտ է: Ավելին, ներկա դարաշրջանում, երբ աշխարհի հեղինակավոր թանգարանները, արխիվները և այլ հաստատություններ ձգտում են թվայնացնել պահվող նյութերը, և գործնականում տարածված է մի հաստատությունից մյուսին հետազոտման, պահպանման կամ այլ նպատակով նյութերի փոխանցումը, միգուցե հնարավոր լինի այդ ձայնագրությունները ձեռք բերել այլ աղբյուրներից: Փորձել անհրաժեշտ է:

Վերադառնանք վերն առաջադրված հարցին, թե ինչու պիտի Թուրքիան Բարտոկին հրավիրեր կրթական և ազգագրական հետազոտական ծրագրեր իրականացնելու՝ Կոմիտասի մահվանից հետո: Արդյո՞ք Կոմիտասի արդեն իրականացրած հսկայածավալ ուսումնասիրությունը չի եղել պատճառը, որ մինչև 1935 թ. սպասել են նրա ապաքինմանը:

Կրկին շեշտենք, որ վերը շարադրված կասկածանքը և մտահոգությունը թեև հիմնավոր, սակայն վարկածային է: Իսկ հետազոտությունների՝ դրական նիշով արդյունքը բոլորովին նոր փաստեր, իրողություններ ու դիտանկյուններ պիտի բացի, որը Թուրքիայի համար, մեղմ ասած, ամոթալի պիտի լինի:

*TATEVIK SHAKHKULYAN (ARMENIA)*

## **A PUZZLE FROM “TURKISH” MUSIC**

In the beginning of the 20th century, Komitas was invited by the Ottoman government to establish a conservatory and to realize educational-musicological work there. During the Armenian Genocide, Komitas was sent to exile and later he was returned according to mediation of Henry Morkentau, the USA Ambassador in Turkey by that time. After returning, Komitas stopped working because of the stress resulted from the Genocide.

Later, till his death in 1935, he was living in hospitals in Paris. Short after his death, in 1936, the Hungarian composer Bela Bartok was invited to Turkey for the same function. He was told that before him nobody studied Turkish music. Bartok was presented recordings of ethnic songs, but he was not told where those songs had been taken from, or how they had appeared in Turkey. When Bartok asked to translate the texts of the songs, nobody was able to do that, because the songs were in infamiliar language. Our hypothesis is that those songs could be Armenian, since the language was unknown, and they could be recorded by Komitas, because it was Komitas to work in Turkey in that field. Further exploration of those recordings is necessary to assert or reject our hypothesis.

### *ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

#### **ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ԱՐԴԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՇԻՐԱԿՈՒՄ**

Պատմական, աշխարհաքաղաքական իրողությունների բերումով XIXդ. կեսին – XXդ. սկզբին Շիրակը դարձավ ազգային վառ դիմագիծ կրող արևմտահայության մի զգալի հատվածի նոր հանգրվանը, որտեղ հնարավոր եղավ անդառնալի կորստից փրկել և պահպանել էթնիկ մշակույթի՝ ազգագրության և բանահյուսության հարուստ ժառանգությունը: Վերջինիս ուսումնասիրությունը խորհրդային տարիներից հայ գիտական մտքի տիրույթում է և այսօր էլ որոշակի գիտական հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ Արևմտահայության հուսքը դեպի Շիրակի տարածաշրջան իր հետ բերել է մշակութային յուրահատուկ վառ գծեր:

Հայրենագրված արևմտահայության էթնիկ ինքնության կարևորագույն տարրերը դարերի հոլովությամբ ձևավորվել և զարգացել էին նաև ժողովրդական երգերի մեջ: Արտահայտչական անսահմանափակ հնարավորություններ ունեցող և ժանրային մի որոշակի համակարգի մեջ զարգացող այս արվեստը հատկապես գյուղական միջավայրում նաև տեղական ավանդույթի բացառիկ կրողն է: Բանավոր ավանդված ժողովրդական երգը համարվում է հոգևոր ժա-

ռանգություն, պատմական հիշողություն, ինչպես նաև գեղարվեստական մտածողության տեսակ, որը ցանկացած պահի կարող է նորովի կերպավորվել:

Ըստ Կոմիտասի. «Երգաստեղծության շնորհը գեղջուկի համար մի բնատուր պարզն է, ամենքն էլ լավ կամ վատ, խաղ կապել և երգել գիտեն: ... Շինականի համար իր առօրյա ստեղծագործությունն արժեք չունի, հացի ու ջրի պես մի ակամա պահանջ է: Գյուղացին իր երգերի շատ տեսակներն արհամարհում է, ծիծաղում է ուսում առածների վրա, որ խնամքով գրի են առնում, ժողովում են այդ «ճեռոք բաներն ու աղջկա խաղերը»<sup>1</sup>:

Ժողովրդական ստեղծագործության գլխավոր նպատակները վեր են գեղարվեստական ոլորտներից, թեև իրականացվում են նախևառաջ գեղարվեստական ճանապարհներով, ինչը կասկածից դուրս է: Ի մի բերելով ժողովրդական երաժշտական ստեղծագործության բազմաթիվ մասնավոր կոչումները՝ ֆոլկլորագետները եզրակացրել են, որ նրա գերագույն գործառույթը «մարդկայնության վերարտադրությունն է մարդու մեջ: Ոչ թե առհասարակ վերացական մարդկայնությունը, այլ բավական կոնկրետ, պատմականորեն տվյալ մշակութային ավանդույթով նախորոշվածը, որին այսպես թե այնպես պետք է հաղորդակցվի յուրաքանչյուր ձևավորվող անհատականություն»<sup>2</sup>:

Այսպիսով կարելի է պնդել, որ ժողովրդական երգը, ինչպես առհասարակ ժողովրդական ստեղծագործությունը, ապրում և գործառվում է գրեթե օրգանական բնության օրենքներով: Ուրեմն, որպես «կենդանի օրգանիզմ», ժողովրդական երգը գոյակցում է արտաքին երևույթների ինչ-ինչ տարրերի հետ՝ դրանց յուրացման շնորհիվ պահպանելով ստեղծագործության հորինվածքի ողնուցը կամ հենքը<sup>3</sup>:

Ժամանակը շատ բարդ ու ազդու գործոն է ավանդական, ոչ նյութական մշակույթի ցանկացած դրսևորման, առավել ևս ժողովրդական երգի գոյատևման և պահպանման գործում: Ժողովրդական երգի կենսատու միջավայրի փոփոխման և մշակութա-

---

<sup>1</sup> Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 15:

<sup>2</sup> Алексеев Э. «Фольклор в контексте современной культуры». Москва, 1988, с. 170.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 170:



յին էկոլոգիային սպառնացող որոշ հիմնախնդիրների համատեքստում փորձել ենք դիտարկել Շիրակի մի շարք գյուղական համայնքներում «սպորտ» երգային բանահյուսության առանձնահատուկ դրսևորումները: Հիմնվել ենք 2010-2015թթ. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի երաժշտագիտական խմբի (Հ.Հարությունյան, Ե.Վարդսյան) կողմից իրականացված ազգագրական, բանահյուսական արշավախմբերի նյութերի վերլուծության վրա<sup>4</sup>:

XXI դ. սկզբին, չնայած համաշխարհայնացման արդի գործընթացների ներգործությանը (հեռուստացույց, համացանց, կապի այլ միջոցներ), Շիրակի տարածաշրջանի ցանկացած գյուղում հնչում են ժողովրդական երգեր՝ տեղական նմուշների գերակայությամբ: Նյութի կրողներն ու կատարողները հիմնականում տարեց և ծեր մարդիկ են, որոնք սուրբ մասունքների նման են վերաբերվում ավագ սերնդից իրենց ժառանգված երգային նմուշներին:

*Այսպիսով, մեզ հետաքրքրող երգերի մի մեծ խումբ պետք է դիտել որպես նախորդ սերունդներից հաջորդին փոխանցված ժառանգություն:* Հետևաբար, այս երգերը մեծամասամբ ապրում ու գոյատևում են որպես հիշողություն: Սրանով է պայմանավորվում երգերի ժանրային համակարգի փոխակերպված պատկերը. Պահպանվել են ընտրովի, նախասիրված ժանրերը:

Այստեղ տեղին է մեջբերել երաժշտագետ Ա.Փահլևանյանի կողմից կատարված դիտարկումները խնդրո առարկայի շուրջ. «Ժամանակի ստիպմունքով որոշ ժանրեր դուրս են մղվում ժողովրդի երաժշտական կենցաղից:

Բանահյուսական ժանրը ժամանակի համեմատ վրիպում է մի քանի պատճառով.

ա.կորցնում է իր ստեղծագործական հողը, այն պարտադիր պայմանները, որոնց մեջ ծնվում է այն, զարգանում, փոխանցվում, այսինքն՝ կտրվում է իր պատմաաշխարհագրական, սոցիալ-հոգեբանական հիմքերից (վիպերգեր, պատմական երգեր, պանդխտության երգեր)»,

բ.կորցնում է իր ֆունկցիան (հոգևոր, ծիսական, աշխատանքային երգեր),

---

<sup>4</sup> Հարությունյան Հ., ԴԱՆ 2011-2015:

գ.սոցիալ-հոգեբանական գործոնների փոփոխության հետ դուրս է գալիս մարդու արվեստընկալման համակարգից, որպես ժանր դադարում է հոգևոր պահանջ լինելուց (օրորոցային, մանկախաղաց, առտնին-աշխատանքային կենցաղային երգեր),

դ.երաժշտական-բանաստեղծական բարդ կառուցվածքը պահանջում է կատարողական բարձր մակարդակ, գրեթե մասնագիտական-ավանդական փոխանցում և բացառում է պատահական կրող ու կատարում, ավանդի հեշտ փոխանցում (հայրեն, վիպերգային, աշխատանքային, ծիսական, աշուղական)»<sup>5</sup>:

Իր ժանրային կենսունակությամբ բացառիկ տեղ է գրավում *պարերգի* ժանրը: Հայ բազմադարյա մշակույթում մեծ է եղել ժողովրդական գեղջկական պարերգերի երաժշտական, պարային ու բանաստեղծական արվեստի նշանակությունը՝ որպես ժողովրդի արվեստի ամենահարագատ, ամենահուսալի ու կենարար ելակետային ակունք:

Շիրակի տարբեր համայնքներում այն այսօր էլ հանդիպում է *խաղ, խանա, թաղալո, մանի* անվանումներով.

«Առնեմ օյ մեկ է»<sup>6</sup>:

Փոքրիկ խաղիկների կողքին պահպանվել են նաև ծանր պարերգերի՝ գովընդների եզակի նմուշներ.

«Ասմար աման»<sup>7</sup>:

Բազմազան են նաև ծիսական երգերը: Դրանց մեջ գերակշռում են հարսանեկան և Համբարձման տոնի երգերը.

Ալ առնելու եմ էկե,

Շալ առնելու եմ էկե,

Ես թագվորի քուրըն եմ,

---

<sup>5</sup> «Թալին. Հայկական ժողովրդական երգեր և նվագներ», կազմողներ՝ ԱՍ.Փահլևանյան, Ա.Սահակյան, Երևան, 1983, էջ18:

<sup>6</sup> Հարությունյան Հ., ԴԱՆ 2015: Երգը ձայնագրվել է Լանջիկ գյուղում, երգասաց՝ Բարեղամ Գեղամի Մովսիսյան: Ծնվել է 1938թ. Լանջիկ գյուղում: Ունի միջնակարգ մասնագիտական կրթություն: Նախնիները գաղթել են Ալաշկերտի գավառակի Մոլեաման գյուղից XIX դարի կեսերին: *Հակոբյան Գ.*, Հայրենի երգեր. Բասենի պարերգերը, Երևան, 1978, էջ 20:

<sup>7</sup> Հարությունյան Հ., ԴԱՆ 2015: Երգը ձայնագրվել է Լանջիկ գյուղում, երգասաց՝ Ծաղիկ Միսակի Մովսիսյան-Աբաջյան: Ծնվել է 1941թ. Լանջիկ գյուղում, ունի միջնակարգ կրթություն: Նախնիները գաղթել են Ալաշկերտի գավառակի Խաստուր գյուղից XIX դարի կեսերին:

Հարս տանելու եմ էկե<sup>8</sup>:

Համբարձման տոնի երգերի բազմատեսակությամբ և կենսականությամբ է պայմանավորված նաև դրանց նորովի ծիսականացումը հատկապես հարսանեկան ծիսակարգում.

«Ջան գյուղում»<sup>9</sup>:

Վիպական երգերի շրջանակը սահմանափակվում է աշուղական սիրավեպերի, ինչպես նաև առանձին անհատ աշուղների երգերի շրջանակով.

«Կռունկ»<sup>10</sup>:

Այս նմուշները հատուկ վերլուծության կարիք ունեն, քանի որ դրանցից շատերի մեղեդիները տիպականացվել և յուրօրինակ ինքնուրույն կյանքով են ապրում՝ հարմարեցվելով նոր անհատ հեղինակի բանաստեղծությանը.

«Երգ Անդրանիկի մասին»<sup>11</sup>:

Սա պատմական երգի փայլուն նմուշ է, որը երգասացը լսել է ծնողներից՝ ի երախտագիտություն շուրջ 30000 արևմտահայ գաղթականներին իր հովանավորությամբ նոր ու ապահով հանգրվան ուղեկցող Ջորավար Անդրանիկի:

Ազգաերաժշտաբանական տարբեր հետազոտություններում առանձնահատուկ տեղ են գրավում բանավոր ավանդույթի ստեղծագործությունների կենսական գոյաբանության խնդիրներն ու դրանց ուսումնասիրության մեթոդաբանական յուրահատկությունները:

Ժողովրդական ստեղծագործության մեջ դասական ժառանգություն է համարվում ոչ թե երգերի ընտրանին, այլ յուրահատուկ

---

<sup>8</sup> Հարությունյան Հ., ԴԱՆ 2015: Երգը ձայնագրվել է Լուսակերտ գյուղում, երգասաց Ջենա Բագրատի Կարապետյան: Ծնվել է 1936թ. Լուսակերտում: Տառաճանաչ է: Նախնիները գաղթել են Մուշից XIX դարի կեսերին:

<sup>9</sup> Հարությունյան Հ., ԴԱՆ 2015: Երգը ձայնագրվել է Լանջիկ գյուղում, երգասաց Աստղիկ Արտաշի Առաքելյան: Ծնվել է 1925թ. Լանջիկ գյուղում: Ունի տարրական կրթություն: Նախնիները գաղթել են Մուշից 1915թ.:

<sup>10</sup> Հարությունյան Հ., ԴԱՆ 2015: Երգը ձայնագրվել է Քարաբերդ գյուղում, երգասաց Հասմիկ Մնացականի Բաղդասարյան: Ծնվել է 1936թ. Քարաբերդ գյուղում: Ունի միջնակարգ կրթություն: Նախնիները գաղթել են Մուշից 1915թ.:

<sup>11</sup> Հարությունյան Հ., ԴԱՆ 2015: Երգը ձայնագրվել է Լանջիկ գյուղում, երգասաց Աստղիկ Արտաշի Առաքելյան: Ծնվել է 1925թ. Լանջիկ գյուղում: Ունի տարրական կրթություն: Նախնիները գաղթել են Մուշից 1915թ.:

երաժշտաարտահայտչական գենետիկ ֆոնդը, որը բնագործն պաշտպանվում է ազգամիջյան հետաքրքրությունների ու փոխազդեցությունների ակտիվության պայմաններում<sup>12</sup>: Գրառված, ձայնագրված ժողովրդական երգը կարող է գոյատևել բավական երկար ժամանակ: Սակայն ավանդույթը՝ երգաստեղծության ստեղծարար մեխանիզմը, որը հիմնված է դարավոր գենետիկ հիշողության և փորձի վրա, կարող է գոյատևել միայն նոր երգերի ստեղծման և կատարման պայմանների առկայության դեպքում:

*Շիրակի արդի բանահյուսության մեջ թեև սակավաթիվ, սակայն երգաստեղծության կենդանի ավանդույթով ստեղծված երգերի նմուշներ հանդիպում են: Դրանք, անշուշտ, անհատ երգասացների տաղանդի արգասիքն են: Կարևոր է այն, որ այդ երգերը, արարվելով համայնքային միկրոմիջավայրի մեջ, կատարվում են որպես ավանդական դասական նմուշներ:*

*HASMIK HARUTYUNYAN (ARMENIA)*

## **PATRIOCID AND DISPLAYS OF NATIONAL IDENTITY IN ARMENIAN FOLK PIECE OF MUSIC (ON THE EXAMPLE OF STANDARDS WRITTEN IN SHIRAK)**

Afterwards well-known geopolitical events of the second half of 19<sup>th</sup> century and especially after Genocide of 1915 year outlived thousand western Armenians and settled in a Shirak's region. Refugees from Basen, Mush, Alashkert, Kars, Erzurum, Bayazet here formed the unique Armenian cultural environment, where principles of further existence and development of national musical tradition were formed.

Comparing folklore material collected at the end of 19<sup>th</sup> and began 20<sup>th</sup> century with the modern records of standards of musical folklore of Shirak, we established that musical tradition had saved the viability in modern life due to those of great vitality traditions and principles of western Armenians.

---

<sup>12</sup> Фомин В. Способ существования музыкального произведения и методология сравнительного анализа. Музыкальное искусство и наука. Москва, 1973, вып. 2. Wiora Walter. Ergebnisse und Musikforschung. Darmstadt, 1975.

ՀԱՅ ՈՐԲԵՐԸ ԿԱՆԱԴԱՅՈՒՄ. ԽԵՂՎԱԾ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

2009 թ. մարտի 15-ին ՀՅԴ կուսակցության հովանու ներքո գործող Համագգային հայ կրթական և մշակութային միության Նյու Ջերսիի մանկապատանեկան թատերախումբը Տորոնտոյի Հայ երիտասարդական կենտրոնի «Համագգային» թատերասրահում ներկայացրել է «Ջորջթաունի տղաները» (“The Georgetown Boys”) երկլեզու երաժշտախառն թատերախաղը, որի հեղինակն ու բեմադրիչն էր Հրանտ Մարգարյանը<sup>1</sup>: Այդ նախաձեռնությունը կազմակերպել և իրականացրել է Համագգային հայ կրթական և մշակութային միության Տորոնտոյի «Գլաձոր» մասնաճյուղի թատերական հանձնախումբը՝ ՀՅԴ «Սողոմոն Թեհլերյան» կոմիտեի հովանավորությամբ:

Իսկ ովքե՞ր էին «Ջորջթաունի տղաները», և ի՞նչ առնչություն ունեին նրանք տորոնտոհայության հետ: Մեր մամուլում շատ կցկտուր, երբեմն ոչ ճշգրիտ տեղեկություններ կան այդ մասին: Սույն զեկուցման մեջ, հետադարձ հայացք գցելով Հայոց ցեղա-

---

<sup>1</sup> Մարգարյան Հրանտ Մանուկի (ծնվ. 1938), ամերիկահայ թատերագիր, ռեժիսոր, բանաստեղծ, քիմիական գիտությունների դոկտոր (1971), պրոֆեսոր (1994): 1967-ից՝ Նյու Յորքի Համագգային թատերախմբի հիմնադիր-ղեկավար: Թատերգությունները նվիրված են ամերիկահայ ժամանակակից կյանքի ազգային ու հոգեբանական խնդիրներին: Բեմադրել է իր հեղինակած «Շրջանք» (1975), «Բեռները» (1977), «Վարդանանք» (1979), «Հայրիկ, լոյսի առաքեալը» (1989), «Հեթում արքայ» (1993), «Հայելիներ» (անգլերեն, 1996), Լ. Շանթի «Հին աստվածները» և այլ թատերգություններ: Լույս է ընծայել «Սողոմոն Թեհլերյան» (1980), «Վազեմ... չուշանամ» (1994), «Ուղեորը» (2004), «Երբ արևը կը լուծ» (2005) թատերգությունները, «Ենթասեն փշրուած» (2004) բանաստեղծությունների ժողովածուն, «Քարաձայն պատարագ» (անգլերեն և հայերեն, 1998) ճամփորդական հուշագրությունների ժողովածուն և այլն: Արժանացել է Համագգայինի «Ոսկե մեդալ» (1980), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության «Ս. Մեսրոպ Մաշտոց մեդալ» (1987) պարգևների և ՀԳՄ «Լավագույն դրամատուրգ» մրցանակի (1992): Ի դեպ, «Ջորջթաունի տղաները» թատերգությունը Նյու Ջերսիի մանկապատանեկան թատերախումբը Հ. Մարգարյանի բեմադրությամբ ներկայացրել է Նյու Յորքում դեռևս 2008-ի ապրիլի 20-ին՝ Հայոց եղեռնի 93-րդ տարելիցի կապակցությամբ:

սպանության հարյուրամյա պատմությանը, մենք, օգտվելով հիմնականում սկզբնաղբյուրներից, հանգամանորեն կանդրադառնանք այն հարցերին, որոնք հիմք են ծառայել վերոհիշյալ թատերախաղի ստեղծմանը:

Հայոց Մեծ եղեռնին հաջորդած տարիներին, երբ եղեռնից հրաշքով փրկված հայերը սփռվել են աշխարհի տարբեր անկյուններում, սակավաթիվ վերապրողների է հաջողվել ներգաղթել Կանադա, քանի որ Կանադայի կառավարությունը հայերին համարում էր ասիացիներ և տարբեր պատճառներով սահմանափակել էր նրանց մուտքը Կանադա: Բացառություն է կազմել միայն Կանադայի կառավարության հատուկ արտոնությամբ 1923-1924-ին 8-12 տարեկան 90 հայ որբերի մուտքը Կանադա, որոնք տեղափոխվել են Հունաստանի Քորֆու կղզու որբանոցից՝ մի խումբ կանադացի բարերարների կազմակերպած Կանադայի «Հայերի օգնության միության» (“Armenian Relief Association of Canada”) ջանքերով:

Ինչպես հայտնի է, Կանադայում բնակություն հաստատած առաջին հայերից էր Կանադայի առևտրական կյանքում փայլուն դիրք զբաղեցրած, կանադահայ հայտնի գորգավաճառ և անվանի հասարակական գործիչ Լևոն Պապայանը, որը մեծ դեր է խաղացել Տորոնտոյի հայ համայնքի ստեղծման ու զարգացման պատմության մեջ: Նա ծնվել է Բուրսայում, որտեղ և ստացել է նախնական կրթություն: Այնուհետև ավարտել է Կ. Պոլսի «Կալկաթա Մերա» լիցեյը: 1896-ին թողնելով Թուրքիան՝ հաստատվում է Մոնրեալում, որտեղ իր քրոջ ամուսնու՝ Պողոս Գուրյանի հետ զբաղվում է արևելյան գորգերի և արվեստի գործերի առևտրով: 1902-ին Լ. Պապայանը տեղափոխվում է Տորոնտո, որտեղ գորգավաճառների ավելի ուժեղ մրցակցություն կար: Իր աշխատասիրության, հնարագիտության և բանիմացության շնորհիվ նա կարողացել է կարճ ժամանակահատվածում գոհացնել իր հաճախորդներին և գործարար կապեր հաստատել արտասահմանյան շատ շուկաների ու վաճառատների հետ: Չնայած իր խիստ զբաղվածությանը՝ Լ. Պապայանը ծավալում է նաև լայն հասարակական ու հայրենասիրական գործունեություն: Նրա գործադրած ջանքերի ու նախաձեռնության շնորհիվ են հիմնադրվել Կանադայի «Հայերի օգնության միությունը» (1917), որին իրենց գործուն մասնակցությունն են բերել կանադացի շատ մեծահարուստներ, Հայկական բարեգործական ընդհանուր միության

(ՀԲԸՄ) կանադական մասնաճյուղը (1924), ինչպես նաև «Կանադահայ միությունը» (1925), որի նպատակն էր պաշտպանել կանադահայերի քաղաքացիական իրավունքները և նպաստել ազգապահպանմանը:

Ինչպես նշում է ինքը՝ Լ. Պապայանը, «Պատերազմի ընթացքին, երբ մեր ժողովուրդը այնքան խժոժություններու գոհը կ'ըլլար, բնական է ո՛չ մէկ հայ կրնար անտարբեր մնալ: Ամէն ոք, ո՛ր ալ գտնուէր, ի՛նչ դիրքի տէր ալ ըլլար, պետք էր կատարէր պարտականութեան իր բաժինը:

Տրուած ըլլալով Գանատայի ազնիւ ժողովուրդի ջերմապէս համակրական վերաբերումը մեզ հանդէպ, աշխատեցայ որ՝ մէկ կողմէն տեղական թերթեր հետաքրքրուին մեզմով, ու միւս կողմէ՝ Գանատական ժողովուրդի այդ ինքնաբոյս տրամադրութիւնը աւելի գործնական ու կազմակերպուած ձեւով մը արտահայտուի: Ուրիշներու եւ իմ կողմէ կատարուած այդ ջանքերուն արդիւնքը եղաւ Armenian Relief Association-ը, որուն իրենց գործօն մասնակցութիւնը բերին շատ կարեւոր Գանատացի հարուստներ:

Այս ընկերութիւնը, - այնուհետև շարունակում է Լ. Պապայանը, - ընդհ. պատերազմի վերջին տարիներուն, հայ կարօտեալներու ի նպաստ մէկ միլիոն տոլարի մօտ գումար մը հաւաքած եւ յատկացուցած է իր նպատակին:

Այս ընկերութիւնն է, դարձեալ, որ, 1923 թուին, Յունաստանէն 50 հայ որբեր Գանատա փոխադրել տուաւ, եւ, այժմ, մասնաւոր ազարակ-որբանոցի մը մէջ կը դաստիարակէ զանոնք, իբր ապագայ երկրագործներ: Վերջերս, այս որբերուն եկան միանալու 40 նորեր եւս»<sup>2</sup>:

Եվ այսպէս, 1915-ի Մեծ եղեռնից, ինչպէս նաև հույն-թուրքական պատերազմից (1921-1922) հետո շատ հայ որբեր տարվեցին Քորֆու (Հունաստան), որտեղ նրանց հանդէպ խնամք տարվեց բարեգործական ընկերությունների, ինչպէս, օրինակ՝ Լոնդոնի «Լորդ Մեյերի հիմնադրամի» (“Lord Mayor’s Fund – LMF”) կողմից: Կանադայի «Հայերի օգնության միությունը» իր կազմավորումից անմիջապէս հետո կարողացավ կանադական իշխանություններից թույլտվություն ստանալ՝ հայ որբերին Քորֆուից Կանադա տեղա-

---

<sup>2</sup> Լեւոն Պապանեան, Պատեհութիւններու արժեքը // Խաշմանյան Հ., Ամերիկահայ հանրագիտակ (տարեգիրք), Բոստոն, 1925, էջ 350:

փոխելու: Որբերի առաջին խումբը՝ 8-12 տարեկան հիսուն տղա, 1923-ին Լ. Պապայանի նախաձեռնությամբ բերվեց Տորոնտո: Հետագայում՝ նույն թվականին, այդ որբերը տեղավորվեցին Տորոնտոյից ոչ հեռու գտնվող Ջորջթաուն գյուղաքաղաքում՝ «Հայերի օգնության միության» կողմից 23000 դոլարով գնված ագարակում: Այնուհետև Ջորջթաուն բերվեց ևս 59 որբ (1924-ին՝ 40, Քոբֆուի որբանոցից, իսկ 1926-ին՝ 10 և 1927-ին՝ 9, Շեմլոնից (Լիբանան)՝ օրիորդ Ֆրերսանի որբանոցից), և որբերի ընդհանուր թվաքանակը կազմեց 109 հոգի:

Նշենք, որ «Հայերի օգնության միության» գլխավոր քարտուղար Ա. Վինինգը փորձել է անվանափոխել հայ որբերին՝ նրանց տալով նոր՝ անգլո-սաքսոնական անուններ: Սակայն տղաներն ընդդիմացել են այդ ծրագրին՝ մերժելով ընդունել նոր անուններ: Այդ առթիվ Ա. Վինինգին փոխարինած Ի. Փիերսը 1925-ին ժամանում է Ջորջթաուն և, անձնակազմի հետ կարճ խորհրդակցություն անցկացնելուց հետո, հանդիպում է մի խումբ տղաների հետ: Հանդիպումն անցնում է լարված մթնոլորտում: Տղաները չեն ցանկանում, որ իրենց այլ կերպ անվանեն: Իր ելույթում տղաներից ամենաավագը՝ տասնչորսամյա Օնիկ Շանգայանը, խոսելով խմբի ամենակրտսեր տղայի մասին, ում դարչնագույն աչքերը փայլում էին արցունքների միջից, դիմում է Փիերսին. «Տեսնո՞ւմ եք անկյունում նստած այն տղային: Նրա անունը Մեսրոպ Հակոբյան է: Նրան տվել եք Ջեքսոն ազգանունը: Ի՞նչ գիտի նա պարոն Ջեքսոնի մասին: Երբ նա եղել է փոքրիկ երեխա, հայ քահանան ջուր է լցրել նրա գլխին և անվանել Հակոբյան՝ իր հոր ու մոր ազգանունով: Այնուհետև նա կորցրել է ամեն ինչ՝ իր հորը, մորը, ինչպես նաև իր երկիրը, մնացել է միայն Հակոբյանը: Այժմ Դուք ուզում եք այն նույնպես վերցնե՞լ»<sup>3</sup>: Այդ ընթացքում տասնամյա Մեսրոպն սկսել է հեկեկալ՝ հուսահատորեն փորձելով երկու ձեռքով ծածկել դեմքը: Ի. Փիերսը մոտեցել է նրան, սպիտակ թաշկինակը դրել տղայի ձեռքերին, նայել չորսբոլորը, շնորհակալություն հայտնել տղաներին՝ խնդրելով նրանց չանհանգստանալ՝ նշելով, որ «ամեն ինչ լավ կլինի՝ նրանք մինչ այժմ եղել են լավ տղաներ և պետք է շարունակեն մնալ այդպիսին»<sup>4</sup>: Ցավոք, հետագայում տղաների մի մասը փոխել է իր

<sup>3</sup> **Apramian Jack.** The Georgetown Boys, edited, revised and with an introduction by Lorne Shirinian, The Zoryan Institute, 2009, p. 76.

<sup>4</sup> Նույն տեղում:



անունը (նույն Մեսրոպը 1960-ին դարձել է Ռոբերտ ՄակՔենզի):

Ջորջթաունի որբերի խնամքը 3-4 տարի իրականացրել է «Հայերի օգնության միությունը»՝ գթասիրտ կանադացիների նվիրատվությունների միջոցով: Այսպիսով, հայ տղաները բնակվել, աշխատել ու կրթություն են ստացել Ջորջթաունի մոտ գտնվող մի ագարակում: Նրանք սովորել են վարել ագարակի գործերը: Վերոհիշյալ ագարակն այդ տարիներին հայտնի էր որպես «Հայ տղաների ագարակ», իսկ տղաներին շուտով սկսել են անվանել «Ջորջթաունի տղաներ»: Վերջիններիս հայկական կրթություն ստանալուն զգալիորեն նպաստել և օժանդակել են Պապայան ամուսինները<sup>5</sup>:

Այստեղ արժե հիշատակել, որ Լևոն Պապայանի անուղղակի կապը Ջորջթաունի հայ տղաների հետ սկսվել է դեռևս 1921-22 թվականներին, երբ նա ստանձնել է «Հայ օգնության ֆոնդի» (“The Armenian Relief Fund”) փոխքարտուղարի պաշտոնը: Այդ տարիներին նրա անխնջ ջանքերի և առատաձեռն նվիրատվությունների շնորհիվ զգալիորեն աճել է վերոհիշյալ ֆոնդը: Լ. Պապայանը վճռական և ազդեցիկ դեր է խաղացել 100 հայ որբ տղաների՝ Կանադա բերելու գործում: Երբ 1922-ին «Հայերի օգնության միությունը» կազմեց իր այդ ծրագիրը, նա հասարակական կարգով նշանակվել է այդ կազմակերպության պատվավոր քարտուղար: Հետագայում նա ցանկություն է հայտնել ավելի մոտիկից աշխատելու տղաների հետ, ընտրվել է Ջորջթաունի հայ տղաների տան և ագարակի կոմիտեի անդամ, որի պարտականություններն անմիջականորեն առնչվում էին հայ մանչուկների հոգսերին ու բարօրությանը: Ինչպես հայտնի է, Լ. Պապայանը միակ հայն էր վերոհիշյալ կազմակերպությունների մեջ<sup>6</sup>, և միմիայն նրան ենք պարտական, որ Ջորջթաունի տղաները հնարավորություն ստացան հայերեն սովորելու: Այդ կազմակերպությունների հիմնական նպատակը և սկզբունքը ի սկզբանե հայ տղաներին կանադացի դարձնելն էր, սակայն Լ. Պապայանի գործադրած մեծ ջանքերի շնորհիվ, բազմաթիվ վիճաբանություններից,

---

<sup>5</sup> Տորոնտոյի բարերարուհի տիկին Փերուզ Պապայանը (Պենյան, 1891-1976) ծնվել է Կեսարիայում: Փոքր հասակում ծնողների հետ տեղափոխվել է Անգլիա, որտեղ և ստացել է սկզբնական կրթությունը: 1908-ին ամուսնացել է Լ. Պապայանի հետ, փոխադրվել Տորոնտո և նվիրվել ազգօգուտ գործունեության:

<sup>6</sup> Apramian J. Levon Babayan and the Georgetown Boys // “Nor Serount”, Toronto, 1976, № 1, p. 22.

փաստարկներից ու պնդումներից, անհրաժեշտ դասագրքեր ձեռք բերելուց հետո հնարավոր եղավ հասնել այն բանին, որ տղաները սովորեն իրենց մայրենի լեզուն: Դա, իհարկե՝ հայերին օգնող կազմակերպությունների կողմից մեծ զիջում էր և առաջին հերթին վկայում է Լ. Պապայանի հաստատականության, հայրենասիրության, դիվանագիտական հմտության ու հնարավորությունների մասին: Լ. Պապայանը դարձավ «Ջորջթաունի տղաների» մշտական այցելուն ու մեծահոգի պաշտպանը: Նա նրանց հետ խոսում էր միայն հայերեն և անընդհատ հիշեցնում իրենց ազգի սրբություն սրբոցի՝ լեզվի, գրականության, մշակույթի, հոգևոր ժառանգության մասին, որոնց համար նրանց ծնողները վճարել էին կյանքի գնով:

1926-ին «Ջորջթաունի տղաները», որպես իրենց երախտագիտության արտահայտություն, սկսեցին հրատարակել Կանադայում առաջին հայկական հանդեսը՝ «Արարատ» ամսագիրը (հայերեն և անգլերեն), որը ծառայում էր իբրև հաղորդակցության միջոց ավագ սերնդի և «տղաների», ինչպես նաև Օնտարիոյի ուրիշ հայկական համայնքների միջև<sup>7</sup>: Ամսագիրը գրվում և հրատարակվում էր տղաների ջանքերով և նպաստում նրանց անգլերենի զարգացմանը: Երբ կանադահայ գործարար, «Ջորջթաունի տղաների» հայերենի ուսուցիչ Արիս Ալեքսանյանը ձեռնամուխ եղավ իր այդ ազգաշունչ ծրագրի իրագործմանը, Լևոն Պապայանը դարձավ նրա ամենատանգուն, ամենաջերմ և, որ շատ կարևոր է, առաջին պաշտպանը: Նա քաջալերում էր այդ մտահղացումը, ամեն կերպ աջակցում Ա. Ալեքսանյանին, նրան ցույց տալիս բարոյական ու նյութական օգնություն: Ամսագրի գոյության երկուսուկես տարվա ընթացքում Լ. Պապայանը նվիրաբերել է մոտ 1200 դոլար՝ հայերեն տպատառերով գրամեքենա և բազմացնող մեքենա ձեռք բերելու համար: Բացի դրանից, նա նվիրատվություններ է արել նաև ամսագրի բաժանորդագրության, գործունեության ծախսերի համար: Ընդհանրապես հայ որբերի վերաբերյալ բոլոր բանակցություններում և որոշումների ընդունման գործում Լ. Պապայանը հայության խիղճն էր,

---

<sup>7</sup> The Georgetown Boys, 50 years in Canada // “Nor Serount”, Toronto, 1973, № 6, p. 7., **Apramian J.** Levon Babayan and the Georgetown Boys // “Nor Serount”, Toronto, 1976, № 1, p. 22 (նույնը տե՛ս հեղինակի “The Georgetown Boys”, Toronto, The Zoryan Institute, 2009” գրքի հավելվածում (Appendix II: Ararat Monthly), էջ 170, 171):

որը ներկայացնում էր ոչ միայն սեփական հայացքներն ու Կանադայի հայկական համայնքների ձգտումները, այլև փշուր-փշուր եղած ազգի հույսը: Նման վարքագիծը հաճախ բախվում էր Ջորջթաունի հայ տղաների տան և ազարակի կոմիտեի օտարազգի անդամների տարամետ տեսակետներին, բայց հենվելով իր ճկուն հայացքների տրամաբանական ու համոզիչ հիմքի վրա՝ Լ. Պապայանը կարողանում էր քաղաքական տարաձայնությունները պահել հանդուրժելի մակարդակի սահմաններում<sup>8</sup>:

Շնորհիվ Լ. Պապայանի գործադրած ջանքերի՝ Ջորջթաունի հայորդիներն իրոք որ մեծանում էին իբրև իսկական հայեր: Այդ մասին է վկայում թեկուզև այն հիշարժան փաստը, որ 1926-ին, լսելով Լենինականի երկրաշարժի մասին, ինչպես շատ սփյուռքահայեր, նրանք իրենց սուղ միջոցներից նույնպես ձեռնարկել են հանգանակություն տուժածների օգտին (32,65 դոլար): Չափազանց հուզիչ է այն փաստը, որ 1926-ի նոյեմբերի 22-ին այդ առթիվ իրենց դպրոցի սրահում գումարած ժողովում որբերի անունից ելույթ ունեցող փոքրիկ Ժիրայր Տայանն առաջարկել է, որպեսզի տղաները մեկ օր չսնվեն և իրենց խնայածն ուղարկեն հայրենիք: Այդ առաջարկությունը տղաների կողմից ընդունվել է միաձայն, սակայն Ա. Ալեքսանյանը, գովելով տղաների անձնվիրությունը, ուղղում է մտքրել՝ մեկօրյա սնունդը կորցնել երեք օրվա ընթացքում (հերթականորեն հրաժարվելով նախաճաշից, ճաշից և ընթրիքից):

Ինչ վերաբերում է Ջորջթաունի տղաների հետագա ճակատագրին, ապա պետք է նշել, որ «Հայերի օգնության միությունը» 1926-ի կեսերին հրաժարվեց որբերի խնամակալությունից և նրանց հանձնեց կանադական միացյալ եկեղեցու աշխատանքի բաժանմունքի (United Church Work Departament) տնօրինությանը, որին փոխանցվեց նաև ազարակի սեփականատիրությունը: Չնայած Լ. Պապայանի ցանկությանն ու ձգտմանը՝ «ազարակը դարձնել հայկական Վենետիկ մը, որպեսզի լինի մաքուր սրբավայր մը մեր մատաղ սերնդի դաստիարակության», եկեղեցին որբերին մեկուկես տարի խնամելուց հետո ցրեց, իսկ ազարակն սկսեց օգտագործել սեփական նպատակների համար: Հետագայում եկեղեցին ազարակի 230 աքր տարածքով հողամասից 180 աքրը վաճառեց՝ իրեն պա-

---

<sup>8</sup> Apramian J. Levon Babayan and the Georgetown Boys // “Nor Serount”, Toronto, 1976, № 1, p. 22.

հելով միայն ազարակի շենքերը<sup>9</sup>: Այստեղ հարկ է նշել, որ «Հայերի օգնության միության» ճակատագրական սխալն էր Ջորջթաունի ազարակի և դրա շրջակա հողատարածքի սեփականատիրության իրավունքի փոխանցումը կանադական միացյալ եկեղեցուն: Եթե չլիներ «Հայերի օգնության միության» հրաժարականը, ապա այսօր կանադահայ գաղութն ավելի քան մեկ միլիոն դոլար արժողությամբ կալվածք կունենար:

Միայն վերջերս՝ 2008-ին, երբ հայտնի դարձավ, որ մշակվել է Ջորջթաունի ազարակատունը քանդելու ծրագիր, Տորոնտոյի Հայ դատի հանձնախումբը փորձեց բեկանել այն և հսկայական ջանքեր գործադրեց, որպեսզի հայ որբերի ազարակատունը վերածվի Եղեռնի թանգարանի: Հանձնախմբի երկու տարվա հետևողական ու տքնաջան աշխատանքը տվեց իր արդյունքը. 2010-ի հունիսի 26-ին Ջորջթաունում տեղի ունեցավ պատմական իրադարձություն՝ Հալտոն Հիլզի (Halton Hills) քաղաքապետարանը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի, Օնտարիոյում գործող հայկական կազմակերպությունների և եկեղեցիների ներկայացուցիչների, Օնտարիոյի բոլոր հայաբնակ շրջաններից ժամանած ավելի քան 700 հայորդիների, ինչպես նաև տարբեր ազգերի բազմաթիվ ներկայացուցիչների, Ջորջթաունի տղաների ժառանգների ներկայությամբ հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ՝ Ջորջթաունի հայ որբերի ազարակատունը հռչակել որպես Կանադայի պատմական և մշակութային ժառանգության վայր՝ հարակից այգում տեղադրելով հուշատախտակ (Ontario Provincial Plaque)<sup>10</sup> ի հիշատակ այդտեղ ապրած հայ տղաների: Դրանով անմահացվեց հայ որբերի հիշատակը, որոնք փրկվել էին թուրքական յաթաղանից և 1923-1927 թվականներին իրենց խեղված մանկությունն էին վերագտել այդ ազարակատան մեջ: Ի միջի այլոց, հայ որբերին Կանադա տեղափոխելու ծրագիրը Կանադայի պատմության մեջ առաջին համաշխարհային մարդասիրական նախաձեռնությունն է<sup>10</sup>:

Վերադառնալով «Ջորջթաունի տղաները» ներկայացմանը՝ նշենք, որ այդ ծրագրի իրականացումը Հ. Մարգարյանի, Նյու Ջեր-

<sup>9</sup> Գեորգեան Կ., Ամենուն տարեգիրքը, Պեյրուտ, 1962, էջ 344:

<sup>10</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Բաֆֆի Սարգիսեան, Ճորճթաունի հայ որբերու ազարակատունը հռչակուեցաւ գանատական պատմամշակութային ժառանգութեան վայր, «Հորիզոն», 5 հուլիսի 2010, էջ 4:

սիի մանկապատանեկան թատերախմբի և Համագգային հայ կրթական և մշակութային միության Տորոնտոյի «Գլաձոր» մասնաճյուղի թատերական հանձնախմբի երկու տարվա համատեղ տքնաջան աշխատանքի արդյունքն էր: Կանադահայության համար այդ բեմադրությունը եղեռնի պատմության մի անմոռանալի էջ էր, և բնական է ու հասկանալի այն փաստը, որ ներկայացման բոլոր տոմսերը նախօրոք՝ մոտ երկու շաբաթ առաջ, սպառվել էին:

Նյու Ջերսիի մանկապատանեկան թատերախումբը Հրանտ Մարգարյանի գլխավորությամբ ներկայացման նախօրյակին՝ 2009-ի մարտի 14-ին, ժամանում է հայ որբերի երբեմնի ագարակ, որտեղ նրանց դիմավորում են Համագգայինի «Գլաձոր» մասնաճյուղի վարչության, թատերական հանձնախմբի, ՀՅԴ «Սողոմոն Թեհլերյան» կոմիտեի և Տորոնտոյի Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչները: Թատերախումբը շրջագայում է ագարակում. նրանց բացատրություններ է տալիս մի կանադուհի, ում ծնողները 1923-1927 թվականներին աշխատել են որպես ագարակատան պահակներ, երբ 100 հայ որբ տղաներ փոխադրվել են Կանադա: Համագգայինի Նյու Ջերսիի մանկապատանեկան թատերախմբի պատանի դերասանները հուզմունքով, տխրությամբ, ակնածանքով, բայց միաժամանակ նաև հետաքրքրությամբ ու ժպիտով են շրջել իրենց մարմնավորած տղաների սենյակներում, լոգարանում, ճաշասենյակում և դասարանում: Շրջագայության ավարտին թատերախումբն ագարակատան մուտքի մոտ տեղադրել է ծաղկեպսակ՝ ի հիշատակ Ջորջթաունի տղաների:

Հաջորդ օրը՝ կիրակի՝ 2009-ի մարտի 15-ին, Հայ երիտասարդական կենտրոնի լեւի-լեցուն թատերասրահում կայացել է ներկայացումը: Թատերախաղն սկսվել է Ջորջթաունի տղաներից մեկի՝ ծերունի Մայքլի հիշողություններով, ով տարիներ անց այցելում է Ջորջթաուն, որտեղ էլ վերհիշում է իր անցյալը: Այնուհետև պատանի դերասանները կատարում են Ջորջթաունի տղաների առաջին երգը.

Հորճթաունի հայ տղաքն ենք,

Հայրենիքեն զրկուած ենք...

Այդ ազդեցիկ և հուզիչ երգի միջոցով հեղինակին հաջողվել է հանդիսատեսին փոխադրել Ջորջթաունի տղաների ժամանակաշրջանն ու միջավայրը: Թատերախաղը շարունակվել է ծերունի

Մայքլի հիշողություններով, որոնք խաղարկությամբ ներկայացրել են պատանի դերասանները: Հանդիսատեսները մեծ ապրումով ու հուզմունքով են վերհիշել եղեռնի մղձավանջային օրերն ու հալածանքները, բայց միաժամանակ հպարտությամբ են համակվել՝ ականատես լինելով հայի արժանապատվությունը և ազգությունը պահպանելու ձգտմանն ու պայքարին:

Ըստ մամուլի տեղեկությունների՝ «Ջորջթաունի տղաները» ներկայացումն ունեցել է մեծ հաջողություն, բոլոր դերակատարները հաջողությամբ են մարմնավորել Ջորջթաունի տղաների կերպարները: Այսպես, «Հորիզոն» թերթից մենք քաղում ենք դրվատանքի հետևյալ խոսքերը. «Թատերախաղը հասաւ իր աւարտին: Բոլորս յուզուած ենք, բոլորս յոտնկայս կը ծափահարենք ու «պրաւօ»ներ կը գոչենք: Բոլորս հիացած ենք ամենափոքրէն մինչեւ ալեհեր դերակատարներուն խաղարկութեան վրայ»<sup>11</sup>:

Ամփոփելով մեր ակնարկը Ջորջթաունի տղաների մասին՝ նշենք, որ նրանցից մեկը՝ Ջեկ Աբրամյանը (Հակոբ Աբրահամյան), հայ որբերի առաջին խմբի Կանադա տեղափոխվելու 50-ամյակի կապակցությամբ գրել է «Ջորջթաունի տղաները» գիտափաստագրական աշխատությունը<sup>12</sup>, որն ունեցել է երեք հրատարակություն՝ 1976-ին, 1983-ին և 2009-ին: Հակոբ Աբրահամյանը ծնվել է 1915-ին Հարավային Անատոլիայի Կոնիայի նահանգի Ակշեհիթ քաղաքում: Նրա հայրը բռնագաղթի ժամանակ սպանվել է, իսկ մայրը 1922-ին մի խումբ տեղահանված փախստական գաղթականների հետ հայտնվելով Հունաստանի Քորֆու կղզում, որդուն հանձնել է տեղի «Լորդ Մլերի հիմնադրամի» որբանոց: 1923-ի հուլիսին այդ որբանոցի 8-12 տարեկան հիսուն որբերի հետ միասին Հ. Աբրահամյանը տեղափոխվել է Ջորջթաուն: Ավարտելով Դանվիլի ավագ դպրոցը՝ նախ աշխատել է Դանվիլի տարածքում՝ մինչև 1937-ը, իսկ այնուհետև՝ ներգրավվել «Ալեքսանյան» գորգի ցուցասրահի աշխատակազմում: Երկու տարի ծառայել է Կանադայի ռազմաօդային ուժերում: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հաստատվել է Համիլտոնում:

---

<sup>11</sup> Շաբաթավերջ մը՝ «Ջորջթաունի տղոց» հետ // «Հորիզոն», 6 ապրիլի 2009, էջ 11 (ստորագրված է՝ Համազգայինի «Գլաձոր» մասնաճիղի վարչություն):

<sup>12</sup> Տե՛ս, օրինակ, **Apramian Jack**. The Georgetown Boys, edited, revised and with an introduction by Lorne Shirinian, The Zoryan Institute, 2009.

Հատկանշական է, որ Ջեկ Աբրամյանի աշխատության վերջին հրատարակությունը խմբագրել, վերամշակել և ներածությունը գրել է հայ որբերի՝ Ջորջթաունի տղայի (Մամբրե Շիրինյան) և աղջկա (Մարիամ Մազմանյան) զավակ, գրող, թարգմանիչ, հրապարակախոս, անգլիական գրականության պրոֆեսոր Լորն Շիրինյանը, ում գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է նաև կանադահայ մշակույթը:

Ավելացնենք, որ գիտափաստագրական հետազոտություններից բացի, Ջորջթաունի տղաների կյանքը և գործունեությունն իրենց արձագանքն ու արտացոլումն են գտել նաև կինոարվեստում և գեղարվեստական գրականության մեջ: Այսպես, Ջորջթաունի տղաների մասին կանադահայ մշակութային հանրահայտ գործիչներ Դորոթի Մանուկյանը և Իզաբել Գաբրիելյանն ստեղծել են երկու կինոնկար, իսկ Ջորջթաունի տղաներից մեկի ճակատագրին իր «Արամի ընտրությունը» (“Aram’s Choice”, 2006) մանկական գրքում անդրադարձել է ուկրաինական ծագումով կանադացի գրող Մարշա Ֆորչուկ Սկրալփուչը: Դա առաջին գեղարվեստական գործն է Ջորջթաունի տղաների մասին: 2009-ին Մ. Ֆ. Սկրալփուչը կրկին անդրադարձել է այդ թեմային՝ հրատարակելով վերոհիշյալ գրքի շարունակությունը՝ «Անվանեք ինձ Արամ» (“Call me Aram”) վերնագրով, որտեղ նկարագրում է հայ որբերի՝ Կանադայում անցկացրած մի քանի ամիսների կյանքը, նրանց գործադրած ճիգերն իրենց հայկական անունների պահպանման գործում: Հիշատակված երկու գրքերն էլ կանադական գրական-քննադատական հասարակության կողմից արժանացել են բարձր գնահատականի և խրախուսանքի: Նախ, «Արամի ընտրությունը» Կանադայի գրադարանային միության կողմից ճանաչվել է «Տարվա գիրք» մանկական գրքերի անվանակարգում, իսկ այնուհետև երկու գրքերն էլ արժանացել են Օնտարիոյի գրադարանային միության «Արծաթե կեչի» և «Ոսկե կադնի» մրցանակներին: Ի դեպ, այդ գրքերի հիման վրա ռեժիսոր և բեմադրիչ Սեմ Հանքոքը նույնպես ստեղծել է թատերախաղ նույն՝ «Ջորջթաունի տղաները» վերնագրով, որը 2008-ի մայիսի 1-10-ը ներկայացվել է Ջորջթաունի «Փոքր թատրոնում», իսկ մայիսի 14-ին՝ «Ջոն Էլլոտ» թատրոնում:

Ջորջթաունի տղաների պատմության գեղարվեստական արտացոլմանն է նվիրված նաև Լորն Շիրինյանի «Հարկադրական բաժանում» («Forced Departures») վիպակը:

*ANAHIT BEKARIAN (ARMENIA)*

## **THE ARMENIAN ORPHANS IN CANADA**

On Sunday 15 March, in 2009, the group of New Jersey Youth Theater Hamazkain presented “TheGeorgetown Boys”, a bilingual musical, in the hall of the Armenian Youth centre in Toronto. The musical was written and staged by Herand Markarian, an American of Armenian descent, a playwright, producer, poet and Doctor of Chemistry. For Canadian Armenians, this performance stirred unforgettable memories of the Armenian genocide, the story of about 100 Armenian orphans who were brought to Georgetown, Canada by Armenian Relief Association in 1923-24 and trained as farmers, bringing a new life into the New World.

Levon Papayan, a famous rug dealer and statesman of Armenian descent, had a great contribution to bringing the orphans to Canada and having them educated.

The musical “The Georgetown Boys” was a great success, the cast best portrayed their characters.




Նյու Ջերսիի Մանկապատանեկան թատերախումբը  
Հ. Մարգարյանի գլխավորությամբ





Ջորջթաունի տղաները



«Արարատ» հանդեսի կազմը

ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻՆ ԵՎ ԿԱՐՈՏԱԽՏԸ

Արշիլ Գորկին XX դարի ամենաբանաստեղծական նկարիչներից է և այդ առումով իր արժանի տեղն է գրավում Մարկ Շագալի, Պաուլ Կլեեի, Խոան Միլոյի, Անդրե Մասոնի կողքին:

Իսկ ի՞նչ է նշանակում բանաստեղծական խառնվածքը (ի դեպ, հնարավոր է մեծ բանաստեղծ լինել և բանաստեղծական խառնվածք չունենալ): Այդ խառնվածքն իր նամակներից մեկում բացատրել է 26 տարեկան հասակում իր մահկանացուն կնքած անգլիացի մեծ ռոմանտիկ բանաստեղծ Ջոն Բիդսը, որի վաղաժամ մահը ողբացել են Շելլին, Բայրոնը և ավելի ուշ Օսկար Ուայլդը, որ ակնառես է եղել նրա նամակների աճուրդին: Բիդսը իր նամակներից մեկում բացատրում է պոետի խառնվածքը կամ բնավորությունը: Ըստ նրա՝ «...պոետը չունի սեփական «ես», նա ամեն ինչ է և ոչինչ: Նա չունի բնավորություն: Նա վայելում է լույսն ու ստվերը, նա արբեցման մեջ է տգեղի և գեղեցիկի, Բարձրի և ստորի, հարուստի և աղքատի, չնչին բանի և վեհի առջև... այն, ինչ վիրավորում է առաքինի փիլիսոփային, հիացնում է քամելեոն բանաստեղծին... պոետը ամենաոչ բանաստեղծական էակն է աշխարհում: Նա չունի հաստատուն կերպարանք, բայց նա մշտապես ուզում է այն ձեռք բերել - և բնակվում է մի ուրիշի մեջ... նա թերևս ամենաանբանաստեղծականն է Աստծո բոլոր արարածներից... պոեզիայում ես ունեմ մի քանի աքսիոմա... նախ կարծում եմ, որ պոեզիան պետք է զարմացնի իր գեղեցիկ չափազանցությամբ, բայց ոչ տարօրինակությամբ: Նա պետք է տպավորի ընթերցողին որպես իր սեփական նվիրական խոհերի խոսքային արտահայտություն և թվա գրեթե հիշողության նման... պատկերները պետք է վերանան, Բարձրանան, շարժվեն և անհետանան նրա առաջ բնականորեն, ինչպես արևը... ավելի հեշտ է ասել, թե ինչպիսին պետք է լինի պոեզիան, քան այն ստեղծել, և դա ինձ հանգեցնում է հաջորդ աքսիոմային. եթե պոեզիան չի հայտնվում նույնքան բնական, ինչպես տերևները ծառի վրա, ապա ավելի լավ է, որ նա առհասարակ չլինի»<sup>1</sup>:

<sup>1</sup> История Эстетики. Памятники мировой эстетической мысли, Том 3, Изд. “Искусство”, 1967, с. 793.

Այդպիսի պոետներ են Քուչակը, Շեքսպիրը, Գյոթեն, Պուշկինը, Թումանյանը, Մեծարենցը, Եսենինը, Լորկան, Չարենցը, Շիրազը: Նույնը վերաբերում է նկարչությանը: Հայ նկարչության մեջ այդպիսին է Սարյանը, արտասահմանում՝ Շագալը, մասամբ Կլեեն, Միրոն: Այդպիսին է նաև Գորկին: Դա այն դեպքն է, որ արվեստում ոչ թե «ես»-ը, այլ էգոիզմն է բացակայում, սնոբիզմը:

Արշիլ Գորկու դեպքում, անկախ այն բանից, թե նրա կյանքը դժվարին է եղել, թե հեշտ, նրա շուրջը եղած քիչ թե շատ հայտնի փաստերը և վկայությունները ցույց են տալիս, որ նրա արվեստը և կյանքը, ինչպես Վան Գոգի դեպքում, ուղիղ համեմատականներ չեն, այսինքն Վան Գոգն իր հնարավորությունների և տաղանդի սահմաններում ձգտել է հասնել տեխնիկական և գեղարվեստական բարձր արտահայտության, բայց իր բնավորությանն այնպես բնական է ձուլում վարպետությունն ու խառնվածքը, որ նա հասկացվեց միայն իր մահից հետո, իրենց պատվավոր տեղը հաստատած պոստիմպրեսիոնիստներ համարվող Մեզանի, Գոգենի և Լոտրեկի կողքին: Մրանք այն վարպետներն են, որոնք, չընկալվելով արվեստասեր հասարակայնության կողմից (քննադատներ, նկարիչներ, գրողներ, ժուռնալիստներ), հետմահու արժանացան այն փառքին, որ մինչև այսօր էլ վայելում են: Նրանցից Գոգենն էր միայն, որ բարձր էր գնահատվում ֆրանսիացի մեծագույն բանաստեղծ Մալլարմեի խմբակում: Մեզանին, որը երբեմն հաճախում էր Ֆլոբերի և Զոլայի խմբի հավաքներին (Գոնկուր եղբայրներ, Ալֆոնս Դոդե, Իվան Տուրգենև և այլն), դիտում էին որպես անհաջողակ նկարիչ: Բայց այսօր թե՛ արվեստագետները, թե՛ արվեստի պատմաբաններն ու տեսաբանները XX դարի գեղանկարչական առաջին ուղղությունների՝ ֆովիզմ, կուբիզմ, էքսպրեսիոնիզմ, ստեղծագործությունների հիմքում հենց տեսնում են այդ նկարիչներին, առաջին հերթին «անհաջողակ» Մեզանին:

Արշիլ Գորկու դեպքում այլ ժամանակներ էին, և հայտնի չէ, եթե Երկրորդ աշխարհամարտից հետո ԱՄՆ տարագրված պուր-ռեալիզմի հիմնադիր Բրետոնը և կոմունիստական շարժման առաջնորդ Տրոցկին նրան չպրոպագանդեին, արդյո՞ք Գորկին կլիներ այն մեծությունը, ինչ որ, անկախ նրա շուրջը եղած վեճերից, նա կա այսօր: Իհարկե, հազվադեպ է նշվում, որ ԱՄՆ-ում Գորկու հայտնի նկարիչ ընկալվելու գործում վճռական է եղել առաջին հերթին ռուս

նշանավոր ֆուտուրիստ բանաստեղծ և նկարիչ Դավիդ Բուռյուկի դերը: Բուռյուկը ինչպես Մայակովսկու, այնպես էլ Արշիլ Գորկու դեպքում նրանց կարողացավ մտցնել մի շրջապատ, որի մասին երագում էին. առաջին դեպքում Մայակովսկուն ընդգրկեց ֆուտուրիստ բանաստեղծների միջավայր, իսկ Արշիլի (Ոստանիկի) դեպքում նախ դարձավ կնքահայր նրա կեղծ անվան (Արշիլ Գորկի)՝ իր սիրած մեծ գրողի ազգանունով, և նրան ներկայացրեց Բրետտոնին և Տրոցկուն: Պետք է նաև նկատի ունենալ, որ Մայակովսկու դեպքում ֆուտուրիզմի վրա մեծ էր կոմունիստների, այսինքն՝ բոլշևիկների ազդեցությունը, իսկ Գորկու դեպքում Ամերիկյան ընկած էր կոմունիստական շարժման և նրա առաջնորդների ազդեցության տակ: Ստալինը, ինչպես Խորհրդային Հայաստանում մինչև ձնհալք, այնպես էլ Գորկու համար մինչև կյանքի վերջը մնաց նվիրական հեղինակություն, որին նա ընդունում էր կուրորեն, նամանավանդ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ Ստալինը հեղինակություն էր նաև ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռուզվելտի համար: Տրոցկին մեծ հեղինակություն էր որպես հեղափոխական կոմունիստ առաջնորդ, Բրետտոնն ինքը եղել է կոմունիստ և Դալինն սյուրռեալիզմի իր խմբից հանեց նրա կաթոլիկական, միստիկական հակումների համար: Չպետք է մոռանալ նաև, որ ԱՄՆ-ում աշխատող մեքսիկական մեծ մոնումենտալիստները՝ Օրոսկոն, Ռիբերան և Միկեյրոսը, կամ կոմունիստ էին, կամ հարում էին կոմունիստական շարժմանը, իսկ նրանց մոտ իր դասերն էր ստանում ամերիկյան մյուս մեծ նկարիչը՝ Գորկու հակապատկեր Ջեքսոն Փոլլոքը: Մինչև հիմա էլ վիճարկվում է, թե ումից սկսվեց աբստրակտ էքսպրեսիոնիզմ կոչված ամերիկյան ուղղությունը, որի շնորհիվ արվեստում նոր ուղղությունների առաջացման իմաստով Նյու Յորքը առաջնորդությունը խլեց Փարիզից:

ԱՄՆ-ում նման գաղափարական և գեղարվեստական-գեղագիտական թռիռքների մեջ դժվար է ասել, թե ինչ էր մտածում Գորկին Հայոց ցեղասպանության մասին: Նրա լավագույն նկարներն ավելի շատ խոսում են մանկության նկատմամբ Գորկու կարոտախտի մասին՝ մոր գոգնոցը, ծիրանի գույնը, Վանա լիճը, աքլորի լյարդը, գութանը և այլն, քան ուղղակի դիմում են Հայոց մեծ եղեռնի խոհերին: Եղեռնի ողբերգության զգացումը նկարչի համար այնքան հստակ և շոշափելի չէ, այն ընկած է նրա արվեստի և խոհերի

ենթատեքստում, ինչպես օրինակ՝ «Իմ հոգին լսելով աղջամուղջի մահը» բանաստեղծությունը (1926 թ.), որ արձագանք է Միամանթոյի պոեզիային և ժամանակով մոտ է Մեծ եղեռնին, բայց չենք կարծում, թե նրա ստեղծագործության մեջ Մեծ եղեռնի ողբերգությունն արտացոլված է ուղղակի:

Գորկու մոտ առաջին հատկանիշը միմիկրիայի կամ նմանակման և յուրացման նրա բացառիկ ունակությունն էր, որը XX դարի մեծ վարպետներից հատուկ էր հատկապես Պիկասսոյին: Կարելի է վաղ շրջանից մինչև Գորկու ինքնահաստատումը որպես մեծ նկարիչ և վարպետ ցույց տալ այն արվեստագետների շարքը, որոնց տարբեր ժամանակներում նմանակել է կամ արտանկարել է՝ յուրացնելով նրանց արվեստը և գեղարվեստական ձևերը, սկսած աշակերտական տարիներից՝ Պիսսարո, Մեզան, Պիկասսո, Լեժե, Միրո, Մասսոն, Մատտա և այլն, քիչ չեն նաև ամերիկյան այն մեծ վարպետները, որոնք կամ սովորել են Գորկուց, կամ այս կամ այն չափով ընդօրինակել են նրան՝ Մարկ Ռոթկո, Վիլհելմ դե Բոռնինգ, Մեմ Ֆրենսիս և այլն: Դա հավանաբար հասկացել է Նյու Յորքի ժամանակակից արվեստի թանգարանի հիմնադիր Ալֆրեդ Բարը կամ մեկ ուրիշը, որը շատ ինքնատիպ էքսպոզիցիա է արել Գորկու նկարների սենյակում: Գորկու նկարների կողքին, որոնք գլուխգործոցներ են, և մի քանիսը անթողոքիական, նա տեղադրել է այն վարպետների նկարները, որոնցից ազդվել կամ սովորել է Գորկին՝ Անդրե Մասսոն, Խոան Միրո, և այն նկարիչներին, որոնք եղել են նրա աշակերտները կամ ազդվել են նրանից՝ Վիլլեմ դե Բոռնինգ, Մարկ Ռոթկո, Մեմ Ֆրենսիս:

Հավանաբար Գորկին գրավել էր Ալֆրեդ Բարի ուշադրությունը դեռևս 1936թ., երբ վրդովվել էր Դևիսի և Գորկու՝ Նյուարքի օդանավակայանի ձևավորումների քննադատությունից, և նա հանել էր դրանց մասշտաբային մոդելները՝ իր թանգարանում ցուցադրելու համար: Այժմ էլ այդ կամ նմանօրինակ մոդելները գրավում են Նյու Յորքի օդանավակայանի լուսամուտների տեղը, որպես «առավել արդիական արվեստի բեկորներ»<sup>2</sup>:

Դեռևս 1941թ. «San Francisco News»-ում (17 ապրիլի, 1941) նշվում է, որ Գորկին «տեխնիկական առումով մասամբ արստրակ-

---

<sup>2</sup> A. Gorky, Coats on the roof, A life in letters and documents edited by Mathew Spender, 1999, p. 95.

ցիոնիստ է, մասամբ էքսպրեսիոնիստ», այսինքն՝ այն անունը՝ աբստրակտ էքսպրեսիոնիստ, որ անջատում է հետազայում ամերիկյան նկարչությունն իբրև ինքնուրույն գոյություն<sup>3</sup>։ Հեղինակը նշում է, որ Գորկին նկարում է վստահորեն «գույների ծաղկեփնջով, այսինքն՝ Սեզանի տեխնիկային հետևելով, որը ներկապնակի վրա սիրում էր լցնել իր ունեցած բոլոր ներկերը»։

Գորկու հասուն նկարչության մեջ որոշակի տեղ է գրավում «կամուֆլյաժը» կամ գունաքողարկումը։ Այդ խնդրով նա զբաղվում էր Երկրորդ աշխարհամարտի տարիներին՝ ասելով «շփոթեցնել և անդամալուծել տեսողությունը կամուֆլյաժի դերն է»<sup>4</sup>։ Կամուֆլյաժն իր տեղն է գտել նաև Գորկու նկարչության մեջ և տպավորություն է թողնում, թե կարծես մի կողմից աբստրակտ է, մյուս կողմից՝ էքսպրեսիոնիստական։

Այն նկարիչը, որի ազդեցությամբ վերջնականապես ձևավորվեց Գորկու ոճը, չիլիացի կիսով չափ այուրեալիստ, կիսով չափ աբստրակցիոնիստ նկարիչ Ռոբերտո Մատտան էր՝ Անդրե Բրետոնի ընկերը։ Մատտան ինչ-որ տեղ կարծես վերնից էր նայում Գորկուն, որը ոչ միայն համալսարան չի ավարտել, ինչպես շատ ամերիկյան նկարիչներ, այլև նա «ի վեր», «իսկական ժողովրդական արտիստ է, ֆուկլորի նման, մոր հետ իր դիմանկարի նման»։ Բայց Գորկին նրա կարծիքով ոչ թե ստեղծել է «արդի արվեստ, այլ ծաղիկներ»<sup>5</sup> (երևի նրա աչքին Գորկու նկարները նման էին ծաղիկների)։ Գորկին, ըստ նրա, երգում էր ժողովրդական երգեր, անկեղծ մարդ էր, բայց նաև բարեկիրթ և ազնվաբարո։ Մատտան նրան անվանում էր «Աքիլլես» անունով, որի կրունկը խոցելի էր, իսկ Գորկու թույլ տեղը նրա բարեպաշտությունն էր, փխրունությունը, որոնց պատճառով նա շփոթված էր Նյու Յորքում։ «Դու մի մտածիր Փարիզի մասին, Փարիզը հրդեհի մեջ է, Փարիզը քո աքիլլեսյան գարշապարն է», - ասում էր Մատտան<sup>6</sup>։ Եթե Գորկին միստիկ էր և ազնվաբարո, Մատտան իրեն համարում էր «բուրժուա»։ Գորկուն համարում էր հողի նկարիչ։ Մատտան մասնագետ ճարտարապետ էր, ամերիկյան մյուս մեծ նկարիչը՝ Մոթերվելը, որին «եվրոպացի

---

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 179, 180։

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 179-188։

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 197։

<sup>6</sup> Նույն տեղում։

նկարիչ» էին անվանում, Հարվարդում սովորել է մեծ փիլիսոփա Դյուիի հետ: Այսինքն՝ մաթեմատիկայի իմացությունը նրանց դարձնում է «հղկված» մարդիկ, իսկ Գորկին ֆոլկլորի նկարիչ էր, իսկ դե Բոռնինգը անհոդաբաշխ խորսվիլակ էր, որ լվանում էր Գորկու վրձինները 1940-ին:

Հետաքրքիր է Գորկու անթվակիր մի բանաստեղծությունը, որտեղ եզակի դեպք է, որ նա հիշում է իր նախնիներին.

Ողջույն օ տաղանդ: Մեր նախնիները ընդունել են լավագույնը միայն,

Մեր թանկարժեք կյանքերը մսխվել են:

Օ տաղանդ, մեր ներկա կուլտուրան կործանվել է:

Կարծում եմ, մեր կյանքերը նման են հալված լավայի<sup>7</sup>:

Այս անթվակիր պարզունակ բանաստեղծությունն ամեննին նման չէ ո՛չ Չարենցին, ո՛չ էլ Տերյանին: Նրանում որևէ հույս չկա, կա միայն մրմուռ:

Հետաքրքիրն այն է, որ ինչպես Մատտան, այնպես էլ Մասսոնը հատուկ շեշտում էին պուրոքեալիզմում ավտոմատիզմը, ինչը, ըստ նրանց, այնքան էլ չեն ընկալում ԱՄՆ-ում: Պոլլոքն այն ընկալեց և դարձրեց իր նկարչության հիմքը:

«Գաղթական, թշվառ և հալածված հայր պրովինցիալ (գուցե հեռավոր – Վ.Դ.) Նյու Յորքում չէր կարող այլ հարմար նախագիծ ունենալ, բացի միանալը վարպետների սերովբեների կարգին», - գրում է Պիտեր Շյենշլդալը իր «Մեծ Գորկին» գրքում<sup>8</sup>:

1950-ական թթ. կեսերին Գորկու սիրելի թույրը՝ տիկին Վարդուշը, «Հոգեվարք» նկարի պիտակի վրա «ռուս նկարչի» փոխարեն գրել է տալիս «հայ նկարիչ»<sup>9</sup>:

Ինչպես օտարագիներից ոմանք, հայերը պարծենում են Գորկու բարոյական հաղթանակով թուրքերի իրականացրած հայերի ցեղասպանության դեմ, երբ քաղաքակրթությունը հաղթում է բարբարոսությանը<sup>10</sup>:

Դա կարելի է ասել ոչ միայն Գորկու, այլև համայն հայության օրինակով: Միշտ էլ հայ մարդը այս կամ այն չափով տեսնում է

---

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 221:

<sup>8</sup> Kims, Thieralt. Rethinking Arshile Gorky, The Pennsylvania State Univ. Press, 2009, p.3 (քաղվածք):

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 195:

<sup>10</sup> Նույն տեղում:

մղձավանջներ, եթե անցել է Հայոց ցեղասպանության բռնով: Դա հատուկ էր Արշիլ Գորկուն նաև: Բայց Գորկու իսկական ֆիզիկական ողբերգությունը կյանքի վերջում նրա անբուժելի հիվանդությունն էր՝ քաղցկեղը և նրան պատահած ծանրագույն ավտովթարը: Նրա նամակներում կա միայն քնքշություն, սեր ինչպես արյունակից հարազատների, այնպես էլ իր կնոջ և դուստրերի նկատմամբ: Նա աշխատում էր Գերմանիայում պատվիրած ամենաընտիր ներկերով և վրձիններով, ինչը ես լսել եմ նրա քույր տիկին Վարդուշից, նրանց հորեղբորորդու՝ կուսակցական գործիչ և մշակութաբան գիտնական Ադո Ադոյանի բնակարանում: Նույնիսկ սրանով նա հետևում էր Պիկասսոյին, ինչպես մեզ հայտնի է Իլյա Էրենբուրգի հուշերից: Առաջին աշխարհամարտից հետո, երբ Էրենբուրգը այցելում է Պիկասսոյին, ապշում է նրա արվեստանոցում ներկերի, վրձինների և կտավների առատությունից, ինչը նկատելով՝ Պիկասսոն պատասխանում է, թե կուրիստական շրջանում նա գումար չուներ լավ և շատ ներկեր գնելու, իսկ հիմա այնքան է գնել, որ երբեք չմտածի դրանց պակասության մասին:

Գորկու քրոջ որդի Կառլեն Մուրադյանի հարցազրույցներից մեկում արվեստագետ Ռոբերտ Ջոնասը ընդգծում էր, որ «Գորկու հարուստ հայկական անցյալը սրում էր նրա գիտակցությունը: Դուք ամեն պահ զգում էիք, որ նա երբեք այստեղ չէ, որ նրա անցյալի ցավը երբեք չի անցել: Գորկու գործերն ունեն հայկական ջերմություն և պարային որակ: Գորկին էր առաջինը, որ իր բանաստեղծական երևակայությամբ վերջ տվեց կուրիզմին... նա կրքոտ սեր ուներ անցյալի հանդեպ»<sup>11</sup>:

Վերջին տասնամյակներում հաճախ են լույս տեսնում Գորկուն նվիրված գրքեր, փորձեր են արվում բացահայտելու Գորկու նկարների պատկերագրությունը: Դա կապված է ամերիկյան աբստրակտ էքսպրեսիոնիզմի նկատմամբ թե՛ նկարիչների, թե՛ հետազոտողների մեծ հետաքրքրությամբ: Իսկ դրա հիմքում Գորկու արվեստն է: Աբստրակտ արվեստը ստեղծողների մեծ մասը տարագիրներ են, որոնք իրենց հողը գտան ԱՄՆ-ում: Դրանցից է նաև Արշիլ Գորկին: ԱՄՆ-ում ծնված եգալի մեծ նկարիչը թերևս Ջեքսոն Փոլլոքն էր: Գորկին, Հոֆմանը, Մոթերվելը, դե Քոռնինգը, Ռոթկոն բոլորը տա-

---

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 196:



րագիրներ են: Բայց այդ բոլորի մեջ հայկական հուշերով, որոնք բանաստեղծական ծնունդ էին ստանում, հանդես էր գալիս միայն Գորկին:

Նրա մեծ ողբերգությունը ոչ թե նրա հայ լինելն էր, այլ նրան հասած մահացու հիվանդությունները՝ քաղցկեղ, անկարություն, ողնաշարի ու ձեռքերի կոտրվածք, որոնք նրան զրկեցին աշխատելու վերջին հնարավորությունից, իսկ չաշխատելը նրա համար մահ էր, այդ պատճառով նա կախվելուց առաջ թողած մակագրության մեջ խնդրում է մեղավորներ չորոնել իր ողբերգության համար:

*VIGEN GHAZARIAN (ARMENIA)*

## **ARSHILE GORKY: NOSTALGIA AND ART**

Arshile Gorky was one of the forerunners of abstract expressionism in the USA. Some of Gorky's pupils and disciples were in the van of this current.

The art of Arshile Gorky has some peculiarities: 1. Extensive knowledge in history and technic of painting and drawing. 2. Some of his disciples, as de Cooning, Rothko, Same Francise, were the pioneers of abstract expressionism. 3. Gorky had special talant to imitate and appropriate the way to painting of others (Cezanne, Picasso, Lege, Miro, Matta). 4. He was inspired with magic memories of his childhood in Chorgon and Van (West Armenia).

*ԿԱՐԻՆԵ ԶԱՂԱՅՊԱՆՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

## **ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ԴԱՇՆԱՍՈՒՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ**

Ձայնասկավառակի այս հատուկ թողարկմամբ դաշնակահար և կոմպոզիտոր, միջազգային մրցույթների դափնեկիր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ Հայկ Մելիքյանը<sup>1</sup> իր հարգանքի տուրքն է մատուցում Օսմանյան կայսրության կողմից

---

<sup>1</sup> Джагацпаян К. Идущий по волнам мировой музыки. «Музыкальная Армения», №№1-2 (44-45), 2013.

իրագործված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, որոնց դառնամաղձ իրողության 100-ամյակը լրանում է 2015 թ.:

Մանրագինն է կազմված դաշնակահարի կողմից ընտրված ստեղծագործությունների ծրագիրը: Դա առաջին հերթին հայ երաժշտության դասականի՝ Կոմիտասի երկու շարքն է<sup>2</sup>: Ինչպես հայտնի է, անողորմ բախտի բերումով կոմպոզիտորը դարձավ սպանդի ականատեսը, որի հետևանքով երկարատև կորցրեց հոգեկան հավասարակշռությունը և կյանքի վերջին քսան տարիներն անցկացրեց Փարիզի հոգեբուժարանում:

Սկզբում ներկայացված վեց պարերն անմիջապես արտացոլում են Կոմիտասի ինքնատիպ ստեղծագործական մտածողությունը: Դա և՛ հարմոնիաների լակոնիկ օգտագործումն է, և՛ մեկ ունիսոն շարժումների, մեկ մանր բազմահնար իմիտացիոն ձայնակցությունների գերակշռությունը, և՛ երաժշտական շարադրանքի թափանցիկ, տարածական ֆակտուրան: Բացի դրանից, ամեն մի պարի մեջ կոմպոզիտորը ներկայացնում է ոչ միայն հիմնական մեղեդիական գիծը, այլ նաև պիեսների ենթավերնագրերում հատուկ նշում, թե դաշնամուրի հնչողությունը միաժամանակ գործիքների ինչպիսի հատկանիշներին պետք է նմանեցվի՝ ժողովրդական փողային (նայ), հարվածային (դիոլ, դափ, բլուլ) կամ լարային (թառ): Օժտված լինելով վարակիչ և կրակոտ պարելու ունակությամբ (ըստ ականատեսների հիշողությունների)՝ Կոմիտասը մինևույն ժամանակ պարերի մեջ ընդգծում է անակնկալ շեշտադրումներ, յուրատեսակ դոփյուններ, որոնք արտասովոր հարստացնում են պիեսների հնչյունային արտասանությունը (արտիկուլյացիան):

Պարերին հաջորդող՝ Կոմիտասի դաշնամուրային յոթ երգերում արտացոլված է գլխավոր ընդհանրացված, կարոտով ներշնչված սիրային-քնարական թեմատիկան: Պահպանված է կոմպոզիտորին բնորոշ թափանցիկ ֆակտուրան, որում կրկին առկա են պոլիֆոնիկ գրելաձևի իմիտացիոն և հակադրական տարրերը: Առանձին հնչյունների և հեղինակի կողմից հատուկ շեշտադրված փոքր մոտիվների միջոցով ցրված գործիքի չորս-հինգ ռեգիստրների միջև ընկած տարածության մեջ կոմպոզիտորը կարծես գրավում է ունկնդրի ուշադրությունը դրանց տեմբրային, սոնորային հնչողու-

---

<sup>2</sup> Կոմիտաս. Երկերի ժողովածու, հ.6, Դաշնամուրային ստեղծագործություններ, խմբ. Ռ.Աթայան, Երևան: «Սովետական գրող», 1982:

թյամբ՝ դրանով իսկ կանխատեսելով հետագայում XX դարի երկրորդ կեսի երաժշտության մեջ այդ ուղղության ծնունդը:

Մի փոքր այլ լույսով է հանդես գալիս Կոմիտասը «Գարուն ա» պիեսում, որը փայլուն դաշնակահար, կոմպոզիտոր Ռոբերտ Անդրիասյանի մշակումն է<sup>3</sup>: Ստեղծագործության գլխավոր իմաստը կայանում է երգի հենց առաջին տողերի մեջ, այսինքն, երբ զարնանը սպասված տաքության և լույսի փոխարեն տեղում է ձյունը: Մակայն Անդրիասյանը ավելի շուտ արտաբերում է հենց Կոմիտասի վերջին տարիների բոլորից ծածկված ներաշխարհը՝ խռովահույզ, անհանգիստ, հոգետանջ հարցերի անպատասխան վիճակով: Կոմիտասի բոլոր ստեղծագործությունների (այդ թվում նաև Անդրիասյանի մշակումը) Հայկ Մելիքյանի յուրատիպ, բազմանշանակալից մեկնաբանությունը գրավում է այն ակներև արժանիքը, որը խոսում է երաժշտության հանդեպ նրա ժամանակակից ստեղծագործական հայացքի մասին: Դա հիմնական մեղեդայնության հետ մեկտեղ նաև ուղեկցող ձայնաշերտերի առանձին հնչյունների և մոտիվների արտահայտիչ ընդգծումն է, որոնք առաջատար մեղեդու հետ միասին մտնում են սուրբյան մեջ:

Առաջին ստեղծագործություններին հաջորդիվ հնչում է Էդուարդ Սադոյանի սոնատը՝ նվիրված XX դարի ամերիկացի հանրաճանաչ նկարիչ-աբստրակցիոնիստ, պուրռեալիզմի հիմնադիրներից մեկին՝ Արշիլ Գորկուն: Ծնունդով հայ Գորկին դեռ մանկուց հասկացել է թուրքական կոտորածից փախուստի ողջ դառնալի հետևանքները: Եվ չնայած նրան, որ արդյունքում Ամերիկայում նա ճանաչվել է որպես տաղանդավոր նկարիչ, սեփական կյանքի հետագա, հավելյալ ողբերգական իրադարձությունները նրան հասցրին ինքնասպանության՝ չարագույժ արձագանքելով թուրքական մանկությունից բխող ամեն կերպ իր կողմից խուսափվող սարսափին: Սադոյանի սոնատը կարծես լիովին հազեցած է նկարչի կյանքի ներքին և արտաքին պայքարի երկյուղով: Այս տրամադրվածությունը նկատելի է կատաղի շարժման առաջին իսկ կազմածո միակցությունների սուր դիստանս համահնչյուններից: Դրանց զարգացումը դադարում է միջին, հակադրվող մասում, որի հնչողության մաքրությանը և թափանցիկությանը երբեմն միանում են հայ ժո-

---

<sup>3</sup> Կոմիտաս Ռ.Անդրիասյան. Գարուն ա, Դաշնամուրային ձեռնարկ, Երևան, 1988:

ղովրդական երգի մոտիվների ոգով երկչոտ տարրեր: Երրորդ, ֆինալային բաժինն ամբողջովին լի է զանգերի գունեղ համադրողանջներով, որոնց մեջ հստակ նկատելի է «DIES IRAE»-ն (Ցասման օր)՝ կոմպոզիտորների կողմից հաճախ օգտագործվող այս խորհրդանշական հնագույն մոայլ խորալային մեղեդին: Չնայած նկարչի կյանքի ողբերգական ավարտին՝ Սադոյանն այնուամենայնիվ ավարտում է սոնատը կարծես ուժի ցնծությամբ, կենսակայունությամբ՝ հիմք վերցնելով հենց իր՝ Արշիլ Գորկու արտահայտած և որպես ստեղծագործության ենթավերնագիր առաջադրած գաղափարը. «Ես իմ վրձնով կվերակենդանացնեմ Հայաստանն ամբողջ աշխարհի համար»:

Այժմ արդեն ԱՄՆ-ում բնակվող կոմպոզիտոր Տաթև Ամիրյանն իր «Սպասելով լուսաբացին» ստեղծագործությունը նույնպես նվիրել է ցեղասպանության իրադարձություններին, սակայն այն հույսով և ցանկությամբ, որ հայերի կյանքում երբևէ անխուսափելիորեն կբողբոջի լուսաբացը: Առաջին տազնապալի, սևեռուն կրկնվող հնչյունները և մեղեդային դարձվածքները, որոնք ընդհատվում են Կոմիտասի «Անտունու» թեմայով, այնուհետև կրկին սաստկանում են ջղագրգիռ աններդաշնակ բնույթի առավել խայթուն հնչակապակցություններով: Ի վերջո դրանք հանգում են սուր, անսպասելիորեն պոռթկուն գագաթնակետի (երեք ֆորտե): Եղելության պատկերայնությունն ակնհայտ է: Եվ միայն վերջին, ավարտական դանդաղ բաժնում ամենը խաղաղվում է հարցի և հույսի մտախոհ ինտոնացիաներով:

Չայնասկավառակը եզրափակում է Հայկ Մելիքյանի «Բագինին արձագանքներ» տրիադան՝ ոգեշնչված Դանիել Վարուժանի՝ ճանաչված արևմտահայ բանաստեղծի գրչով: Ստեղծագործությունն առաջին անգամ կատարվել է 2013 թ. մարտի 29-ին Բեռլինում դաշնակահարուհի Կարինե Գիլանյանի հետ միասին (չորս ձեռք ձևաչափով), որի ձայնագրությունն էլ կազմում է տվյալ սկավառակ ներառված ստեղծագործությունների բաղկացուցիչ մասը: Բանաստեղծի տողերից առանձին հատվածներ հանդես են գալիս որպես յուրաքանչյուր պիեսի համառոտ նախաբան, որը նկարագրում է XIX դարի վերջին սուլթանական Թուրքիայի դաժանագույն ռեժիմի կողմից հրահանգված կոտորածը: Բանաստեղծը չգիտեր, որ բախտի բերումով ինքը նույնպես համալրելու է այս անգամ արդեն XX դարի

սկզբի ցեղասպանության գոհերի շարքը: Առաջին կարճ մասում (որտեղ ստեղներին ուղեկցում է նվագը նաև լարերի վրա) անապատային մեռյալ լռության համատեքստում (*pianissimo*) մեկ այստեղ, մեկ այնտեղ հայտնվում են ընդգծված պուանտիլիստական առանձին հնչյուններ՝ որպես մահացածների արձագանքներ, տառապյալ հոգիներ: Երկրորդ մասն արդեն կարծես արտացոլում է բուն դաժան իրադարձության պատկերը, սակայն ստեղծագործության հեղինակի զգացմունքների միջոցով՝ մերթ շփոթված, խլացված, տրամագին հարցական, մերթ ցատումնալից մերկացուցիչ, տանջագին հուզված: Երաժշտության մեջ երբեմն հնչում են հայ ժողովրդական երգի՝ «Գռունկի» սկզբնային, սեկունդային ռիթմահինտոնացիաները: Ավարտական մասն արտահայտում է սարսափն ամփոփող զարհուրելի լռությունը, որտեղ միայն լսելի են մեղմ գեփյուռի շրշյունն ու թափված արյան հոսը: Եվ նաև չեն կարող լռել վերջին անողոր տրեւների օդափարված հարցական երանգները (չորս *piano* հնչողությամբ):

Հայկ Մելիքյանի կողմից ներկայացված ամեն մի ստեղծագործության մեջ, այդ թվում և հայ ժամանակակից կոմպոզիտորների, որտեղ նա լիարժեք իր հասկադերում է, դաշնակահարը փորձել է հնարավորինս ճշգրիտ արտահայտել հեղինակների հիմնական մտահղացումները: Գիտակցելով հայ ժողովրդի այդ ժամանակաշրջանի ողջ ողբերգական, մութ կողմերը, հաճախ նաև պատկերայնորեն ուրվագծելով ժողովրդի տառապանքը Հայկ Մելիքյանը, կարծես համախմբելով ինչպես արդեն վախճանված, այնպես էլ կենդանի կոմպոզիտորներին, կոչ է անում առավել ցատումնալից ճողփյունի և արարչագործ կյանքի բաղձանքի՝ հանուն լեցուն լույսի և արդարության հաղթանակի:

*KARINE JAGHATSPANIAN (ARMENIA)*

## **ARMENIAN PIANO MUSIC DEVOTED TO THE COMMEMORATION OF THE ARMENIAN GENOCIDE**

Issuing a special compact disc, pianist and conductor, laureate of international contests, honoured artist Hayk Melikyan credits a mark of respect to the victims of the Genocide of Armenians in Ottoman empire, centennial of commemoration of which is observed in 2015.

Into the programme of works selected by the pianist first of all cycles of piano works by the classic of Armenian music – Komitas – are included, works of the composer who was meanly destined to be the eye-witness of the massacre and as a consequence lost his mental health and spent the last 20 years of his life at an insane hospital in Paris. In a somewhat different light Komitas is presented in his piece «Garun a» paraphrased by the brilliant pianist, composer and teacher R. Andriasyan who rather transmits the latent inner world of Komitas himself of the last years – troubled, with no peace of mind, never finding answers to tormenting questions.

To this sorrowful date, directly or by implication, works of contemporary Armenian composers – E. Sadoyan, T. Amiryan and of H. Melikyan himself – are dedicated.

Realizing all the tragic sides of the history of Armenians, and sometimes even presenting tortures of the nation through dramatic portrayal, H. Melikyan with the names of deceased and living composers, chosen by him, sort of appeals to more mighty upswing and will to creative life, full of faith towards inevitability of triumph of righteousness.

*ԱՆԱՀԻՏ ՉԹՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

## **ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՆ ԱՐԱՄԱՅԻՄ ԱՂԱՄԱԼՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Արամայիս Աղամալյանը, անցնելով ստեղծագործական բարդ ճանապարհի ինչպես Իրանի հայ թատրոնում, այնպես էլ կինոյում, հաղթահարելով Սփյուռքի բեմարվեստում հաստատված կարծրատիպերը, կարողացավ ոչ միայն նորովի մեկնաբանել պատմական ստեղծագործությունները, այլև առաջիններից մեկն էր արտաշխարհում, որն անդրադարձավ ցեղասպանության թեմային:

Արամայիս Աղամալյանը (1910-1985) ծնվել է Նախիջևանի Ջուլֆա սահմանամերձ ավանում (Իրան): Նախնական կրթությունն ստացել է Թավրիզում, ապա Երևանում: 1924-27 թվականներին՝ Երևանի գեղարվեստական ուսումնարանում սովորելու տարիներին, եղել է Սեդրակ Առաքելյանի, Ստեփան Աղաջանյանի, Գաբրիել

Գյուրջյանի և այլ նշանավոր նկարիչների աշակերտը: Տասնյոթ տարեկանից աշխատել է Երևանի, այնուհետև՝ Լենինականի և Թիֆլիսի թատրոններում որպես դեկորատորի օգնական: 1930-ին բեմանկարչության ասպարեզի իր գիտելիքները խորացրել է Բեռլինի թատերագեղարվեստական դպրոցում: 1935-ին, ստիպված լինելով թողնել ուսումը, վերադառնում է Իրան՝ միանալով Նոր Զուղայի թատերական կյանքին<sup>1</sup>:

1950-ականներին Արամայիս Աղամալյանը մի շարք այլ խոստումնալից արվեստագետների հետ միասին ներգրավվեց անվանի թատերական գործիչ Մուշեղ Հովհաննիսյանի (1902-1957) ղեկավարած «Թեհրանահայ երիտասարդ արվեստասիրաց թատերախմբի»՝ ԹԵԱԹ-ի աշխատանքներին: Բեմադրելով ինչպես ժամանակակից, այնպես էլ դասական հեղինակների գործեր՝ խումբը, զարգացնելով իրանահայ համայնքում արդեն իսկ հաստատված անսամբլային թատրոնի ավանդույթները, կարճ ժամանակահատվածում աճեցրեց ինչպես բեմադրիչներ, այնպես էլ թատերական արվեստի արդի պահանջներին տիրապետող արտիստական վառ անհատականույթյուններ:

Արամայիս Աղամալյանն աչքի ընկնող դեմք էր այդ նոր, ժամանակակից բեմադրիչների շարքում: Սկսելով հոգեբանական դրամաներից՝ նա ճանապարհ հարթեց նաև դրամատիկ դերասանների ինքնարտահայտման համար: Ռեժիսորի առաջին իսկ՝ անհայտ հեղինակների «Կույրը», «Վերջալույսի շողերը», իսկ ավելի ուշ՝ Իվո Վոյնովիչի «Փոթորիկ» («Հասարակածային փոթորիկ») պիեսների բեմադրություններում Լիդա Աթայանը, Մուրեն Բաղդասարյանը և ուրիշներ, իրենց բնական և հուզիչ կերպարներով վերջնականապես փոխեցին նաև դերասանական արվեստի մասին մինչ այդ եղած պատկերացումները: Հետագայում էլ սա եղավ Արամայիս Աղամալյանի բնութագրական հատկանիշներից մեկը. ռեժիսորի յուրաքանչյուր նշանավոր բեմադրություն իր հետ բերում էր նաև դերասանական մի նոր և տպավորիչ հայտնություն:

Նշենք, որ ԹԵԱԹ-ում Արամայիս Աղամալյանը հիմնականում բեմադրում էր օտարազգի հեղինակների գործեր: Նրա հետագա գործունեությունը կտրուկ փոխվեց 1953 թվականից հետո, երբ

---

<sup>1</sup> Տե՛ս «Ալիք» (Թեհրան), 1975, 15 մայիսի: Նաև՝ Իրանահայ վերջին 50-ամեայ թատրոնի վաստակաւորներ, Թեհրան, 1985, էջ 131:

ռեժիսորը Լևոն Շանթի (1869-1951) մահվան տարելիցի միջոցառումների շարքում ստանձնեց գրողի «Հին աստվածների» բեմադրությունը: Մեկ տարի առաջ՝ 1952-ին, այս գործը բեմադրվեց Բեյրութում՝ Համազգայինի «Թատերասերների միությունում»: Չույզ ներկայացումներին էլ մասնակցեց խմբի այն ժամանակ հեռանկարային ուժերից, իսկ հետագայում Հայ սփյուռքի ականավոր թատերական գործիչներից մեկը՝ Ժորժ Սարգսյանը, Վանահոր դերով՝ Բեյրութում և Կույր Վանականի դերով՝ Թեհրանում: Եվ սա խորհրդանշական է: Լևոն Շանթի այս գործը իր առաջին իսկ՝ թիֆլիսյան բեմադրությունից հետո (1913) ներկայացվեց Ալեքսանդրիայում (1923), ապա Մարսելում (1927), հետագայում Բեյրութում և Թեհրանում, ամենուրեք թատերական շարժմանը մի նոր երանգ հաղորդելուց բացի, նշանավորելով նաև զգալի առաջընթաց միջգաղութային և հայրենի թատերական հարաբերություններում: Բացի այդ, «Հին աստվածները» կարևոր, եթե ոչ շրջադարձային նշանակություն ունեցավ նաև առանձին արվեստագետների՝ Արմեն Արմենյանի (Արմենակ Իփեկյան, 1871-1965), Գասպար Իփեկյանի (1883-1952), Հովհաննես Ջարիֆյանի (1879-1937), Մանուէլ Մարությանի (1901-1985) և ուրիշների ստեղծագործական կյանքում: Արամայիս Աղամալյանը «Հին աստվածների» բեմադրությունից հետո վերանայեց իր ժանրային նախասիրությունները: Մինչ այդ գրեթե պատմական գործեր չբեմադրած արվեստագետը իր հետագա գործունեությունը հիմնականում պայմանավորեց այս կարգի ստեղծագործություններով: Գործեր, որոնք, ներկայացնելով ժողովրդի պատմական անցյալը, ռեժիսորին ուղղորդում էին հասկանալու ոչ միայն արդի ժամանակների, այլև ապագայի շատ խնդիրներ: Գրականագետ Էդուարդ Թովչյանը, վերլուծելով Լևոն Շանթի «Հին աստվածները», այդպես էլ գրում է. մեզնից մեկ հազարամյակի վաղեմություն ունեցող եղելությունը «սուկ հենք է, ձև արդիական գաղափարի մարմնավորման համար»<sup>2</sup>: Մինչդեռ նաև բեմադրական մեծ ներուժ ունեցող այս գործերը համայնքում աստիճանաբար դարձան անհրապույր և ոչ հետաքրքիր: Ռեժիսորները, ժողովրդի անցյալը ներկայացնելով հնաճ արտահայտամիջոցներով, «Ալիքի» «Սուր-Խաչ» ստորագրությամբ թղթակցի վկայությամբ «խեղաթյուրում և նսեմացում էին խեղճ հեղինակների

<sup>2</sup> Լևոն Շանթ, Ընտիր երկեր, Երևան, 1968, էջ XIII:



գործերը, պատմական պիեսներն անգամ ներկայացնում էին կահավորումից զուրկ, չոր ու ցամաք պատերի մեջ»<sup>3</sup>։ Ժամանակին նպաստելով հայ թատերական շարժմանը հատկապես իր սկզբնավորման շրջանում պատմական ներկայացումները տարիների ընթացքում ոչ միայն կորցրին իրենց կարևորությունը, այլև, կասեցնելով բեմական շարժման բնականոն ընթացքը, դարձան նաև հանդիսատեսին թատրոնից վանելու հիմնական պատճառներից մեկը, ըստ նույն հեղինակի՝ ձանձրույթ պատճառելով «Հայ Բեմը սիրող հասարակությանը»<sup>4</sup>։

Այսուհանդերձ պատմական գործերը, չստանալով արժանի մեկնաբանումներ, չէին կարող կորցնել իրենց դերը Միյուռքի հայ թատրոնում։ Դրանք, ինչպես և նախկինում, ունեին առանձնահատուկ նշանակություն ազգապահպանման առաքելությունը կրող արտաշխարհի բեմական արվեստում։ Արամայիս Աղամալյանը, իր ստեղծագործական ճանապարհով իսկ հանգելով այս գաղափարին, գտավ նաև ուղիներ՝ անցյալի դեպքերը նորովի մեկնաբանելու համար։ Իրականում դրանք նոր էին այդ ուղիներն անտեսող համայնքի թատրոնի, բայց ոչ իր իսկ դրամատուրգիական նյութի համար։ Ներկայացումները պետք է բեմադրվեին ժանրի բոլոր կանոններին համապատասխան, իրականությանն առավելապես մոտ՝ վերականգնելով ինչպես տվյալ ժամանակաշրջանի միջավայրը, այնպես էլ գործող անձանց արտաքին նկարագիրը։ Արամայիս Աղամալյանը, ստանձնելով Մուրացանի «Գևորգ Մարգպետունու» (բեմակ. Ա. Քաջվորյանի, 1954) և Բաֆֆու «Սամվելի» (բեմակ. Մ. Քոչարյանի, 1957) բեմականացումները, նախ ռեժիսորին համահավասար վերականգնեց նկարչի դերը նման աշխատանքներում։ «Գևորգ Մարգպետունի»-ում Աղամալյանի իսկ էսքիզներով կառուցվեցին մոնումենտալ դեկորացիաներ, որոնք, տվյալ երկի ժամանակաշրջանը վերարտադրելուց բացի, կենտրոնական՝ զանգվածային տեսարանները դարձրին ազդեցիկ և տպավորիչ։ Ռեժիսոր-բեմահարդարը մանրակրկիտ ներկայացրեց Բագրատունյաց արքայական տան անվանի թագավորներից մեկի՝ Աշոտ Երկաթի նստավայրը, պատմական անցուդարձին առնչվող շինություններն ու աշխարհագրական տեղանքը՝ Դվինի բերդը, Գառնտ ամրոցը, Տրդատա հովանոցը և

<sup>3</sup> «Ալիք», 1957, 30 սեպտեմբերի։

<sup>4</sup> Նույն տեղում։

Մևանա կղզին: Նույն սկզբունքով կառուցվեցին նաև «Մամվելի» պատմական շինությունների՝ Օշականի բերդի և դրա շարժական կամրջի, Տաճատուհու դղյակի, Ռշտունյաց հայտնի քարքարոտ ժայռերի դեկորացիաները: Զգեստների ձևավորման համար հրավիրվեցին հատուկ նկարիչներ՝ Անուշավան Գրիգորյանը՝ «Գևորգ Մարգպետունու» և Ռուբեն Աթայանը՝ ԹԵԱԹ-ի առաջատար ռեժիսորներից մեկը՝ «Մամվել»-ի համար: Երկու ներկայացումներին էլ 70-ից ավելի դերասաններից յուրաքանչյուրի հագուստը լուծվեց անհատական մոտեցումով՝ այս հարցում էլ հասնելով պատմական եղելության հավաստի պատկերմանը: Մա պարզապես անցյալը ներկայացնելու ընդունված կարգի հակապատկերն էր: Ռեժիսորի հետ միասին փոխվեց նաև հանդիսատեսի վերաբերմունքն այս գործերի նկատմամբ: Եթե նախկինում հասարակությունը ոչ միայն ձանձրանում էր պատմական ներկայացումներից, այլև խուսափում նույնիսկ կանոնավորներից<sup>5</sup>, ապա հիմա, ըստ «Ալիք» թերթի, այդ նույն «հասարակությունը ծարավի է նման ներկայացումների»<sup>6</sup>: «Անհրաժեշտ է,- գրում է թերթը,- որ մերթ ընդ մերթ բեմադրվեն նաև մեր պատմական դրվագները պատկերող և այդ դրվագների հերոսական դեմքերի հիշատակը ոգեկոչող թատերգություններ»<sup>7</sup>:

Ինքը՝ ռեժիսորը, իր նախասիրություններին հավատարիմ մնալով, 1957-ից սկսած, հետագա գործունեությունը ծավալեց Իրանում մեծ հեռանկարներ խոստացող արվեստի մեկ այլ՝ կինոյի բնագավառում՝ գրեթե նույնությամբ կրկնելով թատրոնում անցած ճանապարհը: Դրամատիկական ժանրի մի քանի ֆիլմերից հետո («Մեր թաղի տղաները», «Թափառական աղջիկը», «Մարդիկ») Արամայիս Աղամալյանը նկարահանեց «Գոլ աղա» պատմական ժապավենը: 1968-ին Էկրան բարձրացած այս ֆիլմը ներկայացնում է երկրի Ֆարս նահանգի գյուղացիների ազատագրական պայքարից մի դրվագ, պատկերում նրանց հալածանքներն ու տառապանքը տեղահանության ճանապարհին: Մա ակնհայտ մի փորձ էր՝ հայ ժողովրդի ոչ վաղ անցյալի իրադարձություններն Էկրանից ներկայացնելու համար: Զուգահեռները հաստատվեցին նաև պատկերային լուծումներով՝ հիշեցնելով Ռուբեն Մամուլյանի գունավոր ժա-

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>6</sup> «Ալիք», 1954, 12 մայիսի:

<sup>7</sup> Նույն տեղում:

պավենները: Մամուլյանն իր «Արյուն և ավագ» ֆիլմում (1941), դիմելով իսպանական գեղանկարչությանը՝ Ֆրանցիսկո Գոյայի, Էլ Գրեկոյի, Դիեգո Վելասկեզի և մյուսների արվեստին, հասավ Մադրիդի, ավելի ստույգ՝ Բսպանիայի համապարփակ պատկերմանը<sup>8</sup>: Արամայիս Ադամալյանը, նույնպես դիմելով ազգային գեղանկարչությանը, մասնավորապես Մարտիրոս Մարյանին, կարողացավ ցուցադրվող իրականությանը հաղորդել ազգային հնչեղություն. «չափազանց արևելյան» և միաժամանակ «Հայկականության»<sup>9</sup> մթնոլորտ, ինչպես գրվեց ֆիլմի առիթով: Սրանք մեկ այլ անվանի արվեստագետի՝ Արբի Հովհաննիսյանի բնութագրումներից են, որն իր հոդվածում, զարգացնելով այս միտքը, գրում է. «Նյութը իրանյան է, այո»: Սակայն ամբողջ աշխարհայացքը, ամբողջ ճաշակն ու շեշտավորումը հայկական են: Առարկայորեն դիտված ու նկարված ամեն մի տեսարանում կարող ես կարդալ դեկավարի նպատակները:

Գեղջուկների, հալածանքի ու տեղահանության հատվածները, պայքարներն և այլն՝ իրենց շեշտով ու գոյությամբ, բավական չեն հիշեցնելու, որ «Հայկականության» փորձեր է կատարվել...

Անուղղակի ձևով չեն պատկերվել որոշ ազգային իրողություններ...»<sup>10</sup>:

Եթե «որոշ ազգային իրողությունները» ներկայացված են անուղղակի ապա ֆիլմի գունային լուծումներն ակնհայտորեն կրում են հայ գեղանկարչության կնիքը:

«Գեղեցիկ ու հետաքրքիր է գույների դասավորումները, որ չափազանց արևելյան է: Շարունակում է հեղինակը: Ընդհանուր առմամբ գույների համադրումը «Մարյանային» է: Համադրված են այնպիսի գույներ, որոնք պիտի մտածես, երբեք միասին գեղեցիկ չեն լինի: Ստացվածը, սակայն, ճիշտ հակառակն է. արդյունքը՝ ճաշակավոր: Երբ ֆիլմն ավարտվում է, ակամայից մտածում ես...

«Այս ֆիլմը իրանյան է»:

Պատասխանը հակասական է»<sup>11</sup>:

Հակասական էր նաև Ադամալյանի դիրքն իրանյան կինոյում:

---

<sup>8</sup> Sté u Tom Milne, Rouben Mamoulian, Bloomington and London, 1970, p. 128.

<sup>9</sup> «Աշխ» 1968, 8 փետրվարի: Նախորդ մեջբերման աղբյուրը նույնն է:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Նույն տեղում:

Իբրև ստեղծագործող՝ նա հասավ նշանակալից արդյունքների: Արամայիս Աղամայանն առաջիններից մեկն էր Իրանում, որը կարողացավ գույնն օգտագործել որպես կինեմատոգրաֆիական արտահայտչամիջոց: Նրա «Մարդիկ» ժապավենը ճանաչվեց լավագույնը մինչ այդ նկարահանված գունավորների շարքում (1964)<sup>12</sup>: Իսկ «Գոլ ադան», ակնհայտ թերություններով հանդերձ<sup>13</sup>, իրանյան կինեմատոգրաֆում իր ներդրման առումով կարելի է համեմատել համաշխարհային կինոյի ձեռքբերումների հետ:

Այսուհանդերձ, ռեժիսորը, լինելով խորապես ազգային արվեստագետ, պարսկական կինոյի սահմաններում չէր կարող լիարժեք արտահայտել իր ժողովրդին հուզող հարցերը: Արբի Հովհաննիսյանը, կռահելով «Հայկականության» փորձը կինոյում, իրականում կռահեց նաև Արամայիս Աղամայանի վերադարձը դեպի թատրոն: Ռեժիսորն իր ստեղծագործական վերելքի տարիներին, ընդունելով հայ մշակութային «Արարատ» կազմակերպության հրավերը և ստանձնելով նոր թատերախմբի կազմավորումն ու ղեկավարությունը, փաստորեն ստանձնեց նաև համայնքի թատերական կյանքի ղեկավարությունը: Միայն թատերական կյանքի մասին պետք է խոսել որոշակի վերապահությամբ: Համայնքի բեմական ասպարեզն այն տարիներին հիմնականում տրամադրվում էր Բեյրութի Համազգայինի «Գասպար Իփեկյան» թատերախմբի հյուրախաղերին: Թատրոնի պատմաբան Անդրանիկ Սարյանը, տեղի թատերական գործիչների պահվածքը գնահատելով որպես «կամավոր դասալքություն և կամավոր նահանջ», գրում է. «Մնում էր հաշտվել այն մտքի հետ, որ լույսը միշտ չէ, որ ծագում է արևելքից...»<sup>14</sup>:

Արտաքնապես անհեռանկարային մի իրավիճակ, որին, սակայն, հակադրվեց վերելքի և լավատեսության այն հզոր ալիքը, որը 1960-70-ականներին համակեց ամբողջ հայությանն ինչպես Սփյուռքում, այնպես էլ հայրենիքում: 1975-ին նշվեց Մեծ եղեռնի 60-րդ տարելիցը: Չկար մի հայագաղութ, որտեղ ապրիլյան գոհերի ոգեկոչումը չվերածվեր բազմամարդ ցույցերի, իսկ Հայաստանում այն առաջին անգամ նշվեց պետականորեն: Հայ ժողովրդի ողբերգու-

---

<sup>12</sup> Տե՛ս «Միջ», 1964, 3 մայիսի:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>14</sup> «Միջ», 1994, 7 մայիսի: Նախորդ մեջբերման աղբյուրը նույնն է:

թյունը, որը նրա բեկորները ցրեց աշխարհով մեկ, տասնամյակներ անց հավաքական ուժ ստացավ: Հասարակությանն իշխող այս տրամադրություններն իրենց արձագանքն ստացան նաև արվեստում: 1961-ի զարնանը Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոնում ներկայացվեց Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» քնարական դրաման՝ Վարդան Աճեմյանի բեմադրությամբ: Մփյուռքի և հայրենի արվեստագետների համատեղ այս աշխատանքն առաջին հիշեցումն էր բեմից Հայոց ցեղասպանության մասին: Աճեմյանի բեմադրությունը, դառնալով սովետահայ թատրոնի խոշոր նվաճում, Արամայիս Աղամալյանի շնորհիվ իր արձագանքը գտավ նաև Մփյուռքում:

1974-ին՝ զարնան այդ նույն օրերին, Սարոյանի դրաման ներկայացվեց Թեհրանում «Արարատի» նորաստեղծ թատերախմբի ուժերով: Եվ ինչպես Հայաստանում, Իրանում նույնպես ստանալով հասարակական լայն հնչեղություն՝ ներկայացումն արձանագրեց մի նոր փուլ իրանահայ բեմարվեստում՝ դրան վերադարձնելով նախկին՝ առաջատարներից մեկի դիրքն սփյուռքահայ թատրոնում:

Ռոբերտ Բյոռնսի (1759-1796) նշանավոր բանաստեղծության վերնագիրն արդեն, արտահայտելով իր լեռների կարոտով ապրող շոտլանդացու զգացմունքները, որպես Վիլյամ Սարոյանի պիեսի վերնագիր, նույնպիսի պատկերայնությամբ արտահայտում է նաև հայ մարդու սերն իր բնաշխարհի նկատմամբ: Հայրենիքից տեղահանված Բեն Ալեքսանդրն ու նրա հարազատներն այդպես էլ չեն համակերպվում նոր վայրերին, նրանք մշտապես իրենց լեռների հետ են և, ի վերջո, դարձյալ բռնում են թափառականի ճանապարհը: «Բեմը պտտվում է, և մենք տեսնում ենք, թե ինչպես Ջոնին, նրա հայրը և տատը լքում են արդեն ընտելացած վայրերը: Վեր բարձրացրած տախտակամածով, որը ներկայացնում է հրապարակ, նրանք քայլում են դանդաղ, կարծես թե սարն են բարձրանում, առջևում՝ տղան, նրանից հետո՝ հայրը, իսկ որոշ հեռավորության վրա՝ տատը»<sup>15</sup>:

Երևանյան բեմադրության այս նկարագրությունը հիմք է տալիս ենթադրելու, որ «Արարատի» շարժական բեմը նույնպես ռեժիսորին հնարավորություն կընձեռեր բեմադրական նման լուծում-

<sup>15</sup> Բաթկեն Հարությունյան, Հայ սովետական թատրոն. 1917-1977, Երևան, 1985, էջ 305:

ների համար: Ելնելով սրահի տեխնիկական պայմաններից՝ կառուցվեցին նաև բոլոր կողմերից դիտվող միաձույլ դեկորացիաներ: Ներկայացման ոգուն համապատասխան՝ պարզ ու տպավորիչ: Բեն Ալեքսանդրի հյուղակը՝ ամերիկյան փոքրիկ մի շինություն, ստեղծում էր ժամանակավոր և ոչ հուսալի կացարանի տպավորություն:

Բեմահարդարման բոլորովին նոր, նախորդ՝ հայ արքաների ժամանակները պատկերող ներկայացումներից ոչ միայն տարբեր, այլև հակադիր մոտեցումներ: Մոնումենտալ և շքեղ շինությունների փոխարեն՝ պարզ ու հասարակ դեկորացիաներ, և չնայած զանգվածային տեսարաններ պիեսում չկան, ռեժիսորն ինքը ուշադրությունը կենտրոնացնում է միայն գլխավոր՝ չորս հերոսների վրա: Մրանք արդեն հայ ժողովրդի նորագույն պատմությունը ներկայացնող բեմադրություններին բնորոշ տարրեր են, որոնք պահպանվեցին նաև նրա հետագա գործերում:

Ներկայացման արտաքին նկարագիրը, այսպիսով, լուծելով զուսպ արտահայտչամիջոցներով, Արամայիս Աղամայանը դերասաններին նույնպես ուղղորդեց նույն՝ զուսպ, սակայն ներքին դրամատիզմ պարունակող խաղի ճանապարհով: Բեմադրական նոր մոտեցումներ, որոնք հանգեցրին նաև դերասանական մի նոր հայտնության: Դա Ջոնիի դերակատար Մաքրինա Գրիգորյանն էր (1956-1986), ըստ Անդրանիկ Սարյանի՝ «տիրակալ դեմքը» «սույն ողբերգության»<sup>16</sup>:

Շնորհալի գեղանկարիչ Մարկո Գրիգորյանի նույնքան շնորհալի դուստրը, Լոնդոնի Գիլդիոլ երաժշտական և դրամատիկական դպրոցում ստանալով մասնագիտական փայլուն կրթություն, իրեն տրված չափազանց կարճ կյանքի ընթացքում, նա չհասցրեց բոլորել իր 30-ամյակը, կարողացավ անջնջելի հետք թողնել Իրանի հայ համայնքի թատրոնում՝ հավասարապես հիացնելով ինչպես իր ստեղծագործական ունակություններով, այնպես էլ մարդկային նկարագրով:

Նրա Ջոնին, Համլետ Քարամյանի Ջասպեր Մաք Գրեգորի հետ կազմելով մեկ ամբողջություն, լուր բողոք էր կյանքի անարդարությունների դեմ: Մի կողմից՝ իր ճանապարհին անցած, շեքսպիրյան դերերով իմաստնացած ծերունին, մյուս կողմից՝ այդ նույն ճանա-

---

<sup>16</sup> «Այլք», 1994, 7 մայիսի: Նախորդ մեջբերման աղբյուրը նույնն է:

պարհի շեմին կանգնած պատանին: Երկունս էլ՝ հավասարապես անգոր և անօգնական, չեն հասկանում և չեն կարողանում համակերպվել աշխարհի անկատարության, չարի անպատժելիության հետ:

Հայաստանի հանդիսատեսը հիշում է Ջոնի-Վարդուհի Վարդերեսյանի եզրափակիչ, կրքոտ և դառնությամբ լի խոսքերը. «Դու գիտես, պապա, ես ոչ մեկին չեմ մեղադրում, բայց ինչ-որ տեղ մի բան սխալ է»<sup>17</sup>:

Մաքրինա Գրիգորյանի Ջոնին այս խոսքերը, թերևս, կարտասանեք ավելի տխուր և մտահոգ: «Չի մեղադրում», սակայն նրա խելացի և խիստ հայացքը լի է մեղադրանքով: Աշխարհի դառնություններն արդեն ճաշակած պատանին փորձում է գտնել նաև այդ ամենի բացատրությունը: Սակայն դրա համար, թերևս, ժամանակ էր պետք: Ներկայացումն այդպես էլ ոչնչի չի հանգում. հերոսները բռնում են դեպի հեռուն տանող ճանապարհը, նրանց ապագան անորոշ է, իսկ վիճակը՝ անկայուն և քիչ հուսադրող:

Արամայիս Աղամալյանի բեմադրած հաջորդ՝ Մուշեղ Բշխանի (1914-1990) «Մեռնիլը որքա՞ն դժվար է» դրաման այս առումով, թերևս, կարելի է դիտարկել որպես թեմայի շարունակություն: Ներկայացված է Մեծ եղեռնից ավելի ուշ ժամանակաշրջան: Պիեսի հերոսը՝ Ջեյմս Արամյանը (Մուրեն Բաղդասարյան), տարագրվածների երկրորդ սերնդից է: Հասցրել է ոչ միայն համակերպվել օտար միջավայրին, այլև իր երկրային կյանքի ընթացքում հասնել բարեկեցիկ վիճակի: Ժամանակները փոխվել են, սակայն նրա՝ թափառականի կարգավիճակը մնացել է նույնը, անցյալի խնդիրները՝ չլուծված, իսկ աշխարհի դրվածքն ինչպես եղել, այնպես էլ մնում է անկատար: Տրոհված հայրենիքի չլուծված խնդիրները, «սփյուռքահայության գոյատևման տագնապը»<sup>18</sup>, հային, ինչպես և անցյալում, ստիպում են մտածել «իր գոյամարտի, ի՞ր վիճակի մասին»<sup>19</sup>:

Ռեժիսորը, ելնելով դրամայի տրամաբանությունից, բավական հեռանալով հեղինակային նշումներից, իրականում գտավ իր իսկ՝ հեղինակի առանցքային գաղափարը ներկայացնելու զարմանալիորեն ճիշտ ուղիներ: Երկնային թագավորության գեղատեսիլ դրյա-

<sup>17</sup> Բաբկեն Հարությունյան, նշվ. աշխ., էջ 305:

<sup>18</sup> Մուշեղ Բշխան, Երկեր, Երևան, 1990, էջ 10:

<sup>19</sup> «Այլք», 1975, 1 հունիսի:

կի, սաղարթախիտ ծառաստանի, դրախտի երկփեղկանի դարպասի, կապտավուն և երազային լույսի փոխարեն<sup>20</sup>՝ դեպի սովորական մի դուռ տանող սպիտակ արահետ՝ մուգ, սևին սովող ֆոնի վրա: Ասկետիկ բեմական միջավայր, շքեղ զգեստավորումը փոխարինվում է պարզ հագուստներով, իսկ գույների բազմազանությունը հասնում է նվազագույնի՝ սևի և սպիտակի: Կոնտրաստի հասած գույների բախում, որը շեշտվում է լուսային երանգներով: Բեմում իշխողը ճանապարհն է, որը, հայի համար դառնալով ճակատագրի մարմնավորում, իր դիրքով խորհրդանշում է նաև նրա պատմական առաքելությունն այս աշխարհում: Դատավճռի հասած իրողություն, որը հաստատվում է Պետրոս առաքյալի (Մանուել Մարության) խոսքերով. «Պիտի թափառիս երկրի և երկինքի միջև, անջրպետի ճամբաներուն վրա, մինչև որ ողջ մնացած կոտորակդ աշխարհեն գա, քեզի միանա: Պետք է ամբողջանաս, հասկցա՞ր. հիմա թերի ես և անընդունելի»<sup>21</sup>:

Ենթատեքստը պարզ է. հայը, տվյալ դեպքում՝ Ջեյմս Արամյանը, երկրի վրա կմնա թափառական, իսկ երկնքում նրա հոգին չի գտնի իր հանգրվանը, քանի դեռ նրա հայրենիքը չի ամբողջացել. կտրված կոտորակը չի միացել մնացած հասվածին: Եվ, իբրև այս իրողության մեկ այլ հաստատում, հայի ուղեղով մտածող ամերիկացին՝ Ջոն Հելլերն (Աշոտ Ստեփանյան), ասում է. «...աշխարհիս տազնապները չեն լուծվիր, եթե փոքր ազգերու դատին լուծում չգտնվի: Եվ ամենեն առաջ՝ հայ ժողովուրդի արդար դատին»<sup>22</sup>:

Այսպիսով, Արամայիս Աղամայանը, բեմադրելով ևս մեկ գործ ցեղասպանության մասին, իր հիմնական սկզբունքին մնաց հավատարիմ. ներկայացնելով անցյալը. նա խորհում է ապագայի մասին: Բացի այդ, պատմական ժանրի ստեղծագործությունները, ներկայացնելով ժողովրդի հավաքական հիշողության կարևոր դրվագներ, հաղթահարելով գաղափարական բազմաթիվ պատնեշներ, ճանապարհ էին հարթում ինչպես տարբեր հայագաղութների, այնպես էլ ամբողջ Սփյուռքի և հայրենիքի մերձեցման համար: Եթե «Իմ սիրտը լեռներում է» թատերախաղի բեմադրությունը Վարդան Աճեմյանի նշանավոր ներկայացման արձագանքն էր Իրանի հայ բեմում, ապա

<sup>20</sup> Տե՛ս Մուշեղ Իշխան, նշվ. աշխ., էջ 407:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 431:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 419:



Արամայիս Աղամալյանն ինքը իր հաջորդ երկու բեմադրություններով ներգործեց հայրենի բեմարվեստի ընթացքի վրա: Ռեժիսորի սանը՝ բեմադրիչ և դերասան Տիգրան Գրիգորյանը (Տիգրիս), 1990-ականներին հաստատվելով Հայաստանում, իրականացրեց Մուշեղ Իշխանի թատերախաղի բեմադրությունը Երևանում՝ պատանի հանդիսատեսի թատրոնում (1992): Մեկ տարի անց՝ 1993-ի հոկտեմբերին, «Մեռնիլը որքա՛ն դժվար է» թատերախաղը ներկայացվեց Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոնում Խորեն Աբրահամյանի բեմադրությամբ՝ ստանալով համահայաստանյան հնչեղություն:

Այս միտումներին նպաստեց նաև 1970-90-ականներին հայությանը համակած միևնույն՝ հոգևոր և ազգային ինքնագիտակցության բուռն վերելքը: Աղամալյանի հաջորդ՝ Պերճ Զեյթունցյանի (ծն. 1938թ.) «Ուռքի՛, դատարանն է գալիս» պիեսի բեմադրությունը, ժողովրդի տրամադրությունները ներկայացնելուց բացի, մի նոր քայլ էր նաև հայրենի բեմարվեստին սերտանալու ուղղությամբ: Ռեժիսորն այս պիեսը բեմադրեց 1983 թվականին՝ նշանավորելով նաև արտիստական մի նոր նվաճում: Սուրեն Բաղդասարյանը (1927-1994) Դոկտոր Լեմբերգի դերով, թերևս, հասավ իր արվեստի բարձրակետին<sup>23</sup>: Հինգ տարի անց՝ 1988-ին, Զեյթունցյանի պիեսը ներկայացվեց Երևանում՝ Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոնում, Տիգրան Գասպարյանի բեմադրությամբ: Դուրս գալով մշակութային իրադարձության սահմաններից՝ ներկայացումը պարզապես միաձուլվեց այդ օրերի ժողովրդական հույզերին: Նույն՝ 1988-ին, Երևանի նորաստեղծ՝ «Անիվների վրա» թատրոն-ստուդիայում բեմադրվելուց հետո (ռեժիսոր՝ Ռաֆի Մուրադյան) թատերախաղն իր արժանի մեկնաբանումը գտավ նաև Թբիլիսիի Պետրոս Աղամյանի անվան թատրոնում («Սողոմոն Թեհլերյան», 1991), Միքայել Գրիգորյանի ռեժիսորությամբ:

Արամայիս Աղամալյանն, այսպիսով, դրամատուրգիական նյութի ընտրությամբ իսկ արձագանքում էր ժամանակի խնդիրներին, մարդկանց տրամադրություններն արտահայտելուց բացի, գտնում նաև նրանց միավորելու ուղիներ:

Դա հաստատվեց նաև 1979-ին, երբ ռեժիսորը ձեռնարկեց

---

<sup>23</sup> Տե՛ս «*Ալիք*», 1994, 13 ապրիլի:

Ֆրանց Վերֆելի (1890-1945) «Մուսա լեռան 40 օրը» վեպի բեմականացումը: Իրանի իսլամական հեղափոխության (1978-1979) օրերին, երբ երկրում վերանայվում էին հասարակական, մշակութային և պատմական շատ արժեքներ, առանձնապես ցավոտ ընդունվեց հայկական դպրոցներն ազգայնացնելու հարցը: Ի պատասխան լուսավորության նախարարության հակասական որոշումների՝ համայնքում, հոգևոր և աշխարհիկ առաջնորդների ղեկավարությամբ ծավալվեց աննախադեպ մի շարժում: Հայ ժողովուրդը դպրոցը, եկեղեցու և թատրոնի հետ միասին, ավանդաբար դիտարկել է որպես ազգապահպանման կարևոր գործոն: Իսկ Մեծ եղեռնից հետո, երբ Հայկական հարցը քաղաքական ճանապարհով լուծելու բոլոր փորձերը հանգում էին ձախողման, դպրոցը և կրթությունն ընդհանրապես ստացան առաջնահերթ կարևորություն: 1928-ին Փարիզի մի խումբ քաղաքական գործիչներ, Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ, Կահիրեում հիմնեցին «Հայ կրթական և հրատարակչական համագգային միությունը» (Համագգային)<sup>24</sup>: Մեկ տարի անց՝ 1929-ին, Բեյրութում բացվեց Համագգայինի Հայ ճեմարանը<sup>25</sup> Լևոն Շանթի և Նիկոլ Աղբալյանի տնօրինությամբ:

Արամայիս Աղամալյանը, բեմադրելով Ֆրանց Վերֆելի վեպը, ընդգծում է, որ երիտասարդ սերնդի հայեցի կրթությունն իր կարևորությամբ չի զիջում Մուսա լեռան հերոսամարտին: Միայն, եթե այդ հերոսամարտը տևեց 40-ից ավելի օր, ապա մայրենի լեզվի և մշակույթի համար պայքարը Միյուռքում տարվում է ամեն օր: Դպրոցների պահպանմանը նվիրված հավաքներից մեկի ժամանակ Թեհրանի թեմի առաջնորդ Տ. Արտակ ս. արքեպիսկոպոս Մանուկյանն իր ճառում այդպես էլ ասում է. «...առաջինը եկեղեցին է, դպրոցն է, որ ամեն օր ուսումի հետ միասին փոխանցվում են ազգային դաստիարակության, և մեր ժողովրդի նկարագիրը հասկանալու ավան-

<sup>24</sup> Միության մասին տե՛ս մեր հոդվածներում՝ Լևոն Շանթը և Գասպար Իփեկյանը «Համագգային» մշակութային միության գործիչներ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1990, N3, էջ 57-65: Նաև՝ «Համագգային» մշակութային միության պատմությունից, «Ազգ», 1998, 28 մայիսի: Նաև՝ Գասպար Իփեկյան, «Համագգայինի» հրատարակիչն ու թատերական գործիչը, «Գրական թերթ», 2009, 26 հունիսի:

<sup>25</sup> 1953 թվականից հետո Համագգայինի Հայ ճեմարանը կոչվեց իր բարերարներից Փալանճյան քույրերի եղբոր՝ Նշան Փալանճյանի անունով: Տե՛ս «Միլիթ», 1953, 25 մայիսի:

դույթներն ու սովորությունները: [...] Մեզ համար դպրոցը, յուրաքանչյուրիս մարմնի մեջ արյունի պես է որ պիտի հոսի կենդանի մնալու համար»<sup>26</sup>:

Այսպիսով, փրկելով գիրն ու գրականությունը, փրկվում է նաև ժողովուրդը: Վեպի հերոսներից մեկը՝ դեղագործ Գրիգորը, այս գաղափարի կրողն է: Նրա գրադարանը՝ որպես հոգևոր սննդի խորհրդանիշ, օրհասական պահին դառնում է օրվա պարենից կարևոր: «Եղբայր իմ,- ասում է նա Գաբրիել Բագրատյանին,- եթե մենք հացի համար աստծուն պետք է գոհություն հայտնենք, ապա դրանից առաջ պետք է նրան փառաբանենք այս գրքի՝ համար»<sup>27</sup>: Գրիգորի և Բագրատյանի երկխոսությունը դառնում է ներկայացման կենտրոնական տեսարաններից մեկը: Գրիգորը փորձում է փրկել գրադարանի չնչին մի մասը: Բագրատյանն սկզբում չի խրախուսում ծերունու արարքը: Մակայն, տեսնելով նրա արցունքները, վերցնում է գրքերի հսկայական պարկը և դիմում դեպի Հյուսիսային լեռնաթամբը:

Բեմադրական տեսակետից հոգևոր արժեքների և ֆիզիկական գոյության համար մղվող պայքարն ստացավ իր առավելագույն լակոնիկ և տպավորիչ լուծումը: Ամբողջ բեմահարդարումը սահմանափակվում էր հարթակին զետեղված երկու թնդանոթներով՝ խորհրդանշելով, կարծես, որ հանուն կյանքի մղվող պայքարն իմաստավորվում է գաղափարական արժեքների պահպանությամբ:

Համայնքի տրամադրություններին այսքան համահունչ բեմադրությունն անտարբեր չթողեց և ոչ ոքի: Չկար մի մարդ, որը ներկայացմանը եկած չլիներ: Մամուլում հրապարակված մեծածավալ հոդվածների շարքում առանձնացավ չեխ հայագետ Լյուդմիլա Մատալովայի հրապարակումը: Հեղինակը հայ մշակույթով սկսեց մասնագիտորեն զբաղվել Ֆրանց Վերֆելի վեպը կարդալուց հետո և օրինաչափություն էր տեսնում, որ իր հայրենակից, կոմպոզիտոր Յոզեֆ Մատեյի համար նույնպես այդ գործի ընթերցումն անհետևանք չմնաց: Երկար պրպտումներից հետո նա գրեց Մուսա լեռան հերոսամարտին նվիրված իր Երկրորդ սիմֆոնիան, և Մատալովան, վերլուծելով այդ ստեղծագործությունը, գրում է. «Առանց տագնապելու չի կարելի չիիշել հայկական եղեռնի այն ահավոր օրերը,

<sup>26</sup> «Այլք», 1980, 31 հուլիսի:

<sup>27</sup> Ֆրանց Վերֆել, Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1987, էջ 311:

գուցե այն պատճառով նաև, որ այսօրվա իրականության մեջ էլ ողբերգություններ կան, ժամանակ առ ժամանակ կրակ է բռնկվում, մարդիկ են տանջվում: Կարծեք կրկնվում է պատմությունը»<sup>28</sup>:

Պատմությունը կարող է նաև չկրկնվել Արամայիս Աղամալյանի և նրա նման բազմաթիվ հայրենանվեր արվեստագետների շնորհիվ: Աղամալյանը, չլինելով Համազգայինի փաստացի անդամ, բեմադրելով դրա հիմնադիրներից մեկի՝ Լևոն Շանթի, նրա գաղափարակից-աշակերտ, մինչև իր կյանքի վերջը Բեյրութի Հայ ճեմարանում դասավանդած Մուշեղ Իշխանի և մյուս ակնավոր հեղինակների գործերը, նրանց գեղագիտական ըմբռումներին հետևելուց բացի, ծառայեց նաև Համազգայինի հիմնական՝ հայապահպանման առաքելությանը: Ըստ դրա մշակույթի պահպանումը և աճող սերնդի հայեցի կրթությունն է, որոնք, ապահովելով ազգի գոյությունը, հզոր միջոց են ցեղասպանության հարվածին դիմագրավելու համար: Ռեժիսորն իր պատմական բեմադրություններով ինչպես թատրոնում, այնպես էլ կինոյում, հաստատում է, որ փորձություններով լի ճանապարհ անցած հայ ժողովուրդն իր առաքելությունն ունի կատարելու. նրա հայրենիքը պետք է ամբողջանա: Անհնարինի աստիճան դժվար մի խնդիր, որն իրականացնելուց հետո միայն կարող է հասնել արհավիրքներից գերծ և իրեն վայել ապագայի:

*ANAHIT CHTIAN (ARMENIA)*

## **THE THEMES OF ARMENIAN GENOCIDE AND HISTORY IN THE CREATION OF ARAMAYIS AGHAMALIAN**

Aramayis Aghamalian (1910-1985), passing a complicated way in the Armenian theatre and cinema art of Iran, came to the staging of historical plays' new interpretations in tune with the contemporary issues. He was also one of the first artists in Diaspora, who appealed to the theme of genocide.

In 1950s, after the “Heen Asdvadzner” (The Pagan Gods) by Levon Shant, Aghamalian staged “Gevorg Marzpetunie” by Mouracan, “Samuel” by Raphie, “My Heart’s in the Highlands” by William Saroyan and other works, reflecting the Armenian history both of the old, and resent times.

---

<sup>28</sup> «*Այլիք*», 1979, 14 հունիսի:

The production of “The Mousa-Dag’s Fourty Days” (1979, by France Werfel), besides of being the logical continuation of Aghamalian’s previous works, was also the reflection of the unrest, which took place after the Islamic revolution of Iran (1978-1979). The importance of youth education Aramayis Aghamalian considered equal to the Mousa-Dag’s battle. This is the opinion which united many of prominent Armenian intellectuals round the “Nation-Wide Union of Education and Publishing Affairs” (Hamazgayin, Cairo-Beirut, 1928). Producing the plays by Levon Shant and by other writers, Aramayis Aghamalian, besides the aesthetic views, joined to the main, patriotic mission of Hamazgayin, having his own investment in surviving and development of both the parts of the native culture.

## 7. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

*ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

**«ՀԱՅԱ-ԳԵՐՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ»**

**ԵՎ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Տակավին 1914 թ. մայիսի 31-ին Բեռլինից Մոսկվայում բնակվող անվանի բանաստեղծ Ալեքսանդր Օստորյանին ուղղված նամակում Իսահակյանը հանգամանալից պատմում է Հայա-գերմանական ընկերության ստեղծման և նրա ծրագրերի մասին: «Հայկական հարցի վերագարթումի օրից Բեռլինում հիմնվեց մի հայկական կոմիտե, որ, շնորհիվ Գերմանիայում ունեցած իր նշանավոր անձանց կապերի, կարող եղավ գերման դիվանագիտության հակառակությունը՝ ռուսական հայասպաստ ձեռնարկների դեմ՝ այնքան մեղմել, որ վերջ ի վերջո հաջողվեց ռեֆորմների շուրջը համաձայնություն ստեղծել Հայաստանով շահագրգռված այդ երկու պետությունների միջև:

Այժմ այդ կոմիտեն մեր ազգի շահերը Գերմանիայում ավելի լավ պաշտպանելու ամենանպատակահարմար միջոցը համարեց Հայ-գերմանական ընկերությունը, որը, ունենալով հայ և գերման անդամներ, կարող պիտի լինի գերման հասարակության ամենալայն խավերը մոտեցնել և հետաքրքրել մեր ազգի վիճակով:

... ընկերությանս ձեռնարկներից մեկն է հրատարակել նաև մի օրգան հայերեն և գերմաներեն բաժիններով՝ երկու ազգերը իրար ծանոթացնելու համար:

Ավելորդ չլինի ասելը, որ թե՛ ընկերությունս և թե՛ թերթը կուսակցականապես և քաղաքականապես չեզոք հողի վրա են կանգնած, և Բեռլինի ռուս դեսպանի հաճությունը ընդունած:

Հայա-գերման ընկերության կողմից պատիվ ունի խնդրելու Ձեզ, սիրելի բարեկամ, որ բարեհաճեք Ձեր շրջանում մեր գործին համակիրներ գտնել՝ անդամագրելով նրանց» (VI, 151-152):

Իր ժամանակի վավերագրերի շարքում Իսահակյանի նամակը լավագույն սկզբնաղբյուրներից մեկն է, որ լույս է սփռում ընկերության գործունեության վրա և մեզ հասանելի դարձնում այդ կազմակերպության ստեղծման նպատակները:

Նամակը գրելուց մի քանի օր անց՝ 1914 թվի հունիսին, կայանում է վերոհիշյալ ընկերության առաջին նիստը, նկատի ունենալով այն մեծ գործունեությունը, որ ծավալել էր հայ և գերմանացի ժողովուրդների մերձեցման խնդրում Յոհաննես Լեփսիուսը, նա ընտրվում է ընկերության նախագահ, տեղակալներ՝ Պաուլ Ռորբախը և Ջեյմս Գրինֆիլդը, գործադիր մարմնի պատասխանատուներ՝ Է. Շտիրը և Ավետիք Իսահակյանը: Բանաստեղծն ընտրվում է նաև ընկերության միակ պարբերականի՝ «Մեսրոպ» հանդեսի խմբագիր: Ընկերությունը ուներ ավելի շատ պատմամշակութային ուղղվածություն, և նրա առաջնային խնդիրներից էր գերման ժողովրդին ծանոթացնել Հայաստանի բազմադարյան պատմությանն, արվեստին ու գրականությանը: Հաստատել բազմակողմանի կապեր, ամրապնդել մշակութային փոխհարաբերություններ և թարգմանել գրական հայտնի կոթողներ:

Հարկ է ասել՝ ընկերության պարբերական «Մեսրոպ» հանդեսը իրերի բերումով ունենում է միայն մեկ տպագիր համար (Ա տարի, Բեռլին, 1914 թ.), որում, ի թիվս մի շարք գեղարվեստական երկերի, տպագրվում է նաև Ավետիք Իսահակյանի «Ուռիների տակ մտորում եմ լուռ...» բանաստեղծությունը:

Իր հերթին Պ. Ռորբախը այսպես է բնութագրել ընկերության հիմնական նպատակներից մեկը. «Հայերի մեջ գերմանական մշակութային ազդեցության վերաբերյալ հոգատարությանն է ծառայել սույն ընկերությունը»: Հարկ է հիշել, որ ընկերության ստեղծումից դեռ մեկ տարի առաջ Գերմանիան առաջին անգամ ակտիվորեն հանդես էր եկել հոգուտ «Հայկական բարենորոգումների»: Բայց շուտով ի դերն ելան «Հայա-գերման ընկերության» ակնկալած բարի հույսերը, հայ և գերման մշակույթների մերձեցման փորձերը, վրա հասած Առաջին համաշխարհային պատերազմը տակնուվրա արեց բանաստեղծի ծրագրերն ու սպասումները: Պատերազմը հատկապես կործանարար եղավ Արևմտյան Հայաստանի համար: Թուրքիան, չեղյալ հայտարարելով Ռուսաստանի հետ 1914 թ. հունվարին կնքած պայմանագիրը, ներգրավվեց աշխարհամարտի մեջ՝ որպես

գերմանական կայսրության դաշնակից և օգտվելով ռազմական իրավիճակից՝ անցավ իր դարավոր երազանքի իրագործմանը՝ հայ ժողովրդի արևմտյան հատվածի իսպառ բնաջնջմանը: Գերմանիան իր հերթին հրահրում էր Թուրքիայի հայաջինջ ծրագրերը՝ համարելով հայերին Ռուսաստանի «բնական դաշնակիցը» և Միջին Արևելքում գերմանա-թուրքական առաջընթացը խոչընդոտող ուժ: Հայա-գերման ընկերության ղեկավարների, մանավանդ Յ. Լեփսիուսի տարած բանակցությունները չհասան իրենց նպատակին: Գերմանիան վճռորոշ բոլոր հարցերում Թուրքիայի կողմնակիցն էր և դաշնակիցը:

Իսահակյանը, ընտրվելով «Մեսրոպ» հանդեսի խմբագիր, ակտիվ գործունեություն է ծավալում, որ հնարավորինս շատ անվանի մարդիկ մասնակցեն հանդեսի աշխատանքներին: Բերենք մի ուշագրավ հատված 1914 թ. ապրիլի 21-ին Բեռլինից Իսահակյանի գրած նամակից՝ ուղղված բանաստեղծ Միամանթոյին, որն այդ շրջանում գտնվում էր Ժնևում. «Ամենից առաջ, խնդրում եմ, քանի այդտեղ ես, մի բանաստեղծություն ուղարկիր, ոչ այս համարի համար, այլ երկրորդ համարի, որ լույս պիտի տեսնի հունիսին<sup>1</sup>: Առաջին թվի համար չէ, քանի որ գերմաներեն առաջին թվի մեջ թարգմանորեն դնելու ենք քո «Հայրենի աղբյուրը»: Ուրեմն, ժամանակ ունես գրելու: ...Ուղարկիր նույնպես Ռ. Սևակի հասցեն (Ռ. Զիլինգարյան, Լոզան, դոկտոր), նյութ եմ խնդրելու, նույնպես» (VI, 148):

Միաժամանակ Իսահակյանը թեթևակի գանգատվում է այն պարտականությունների շարանից, որ բաժին էր ընկած իրեն՝ որպես ընկերության քարտուղարի և «Մեսրոպի» խմբագրի. «Ես դեռ քաղաքից ոտքս դուրս չեմ դրել, և նույնիսկ քաղաքը չեմ տեսել, իմ գործը չէր բնավ պաշտոն, գործ ստանձնելը, բայց անգործ մնալ էլ չի լինիր, երեխա ունեմ, միջոցներ չա՛տ են հարկավոր» (VI, 148):

Նույն շրջանում Իսահակյանը գրում է և իր մտերմագույն ընկերոջը՝ «Գեղարվեստի» խմբագիր Գարեգին Լևոնյանին (1914, մայիսի 3): «Այստեղ եմ ապրելու, արդեն մի տարով բնակարան եմ վարձել, այստեղ եկել եմ մի գործով, այսինքն հայ-գերմանական ընկերության գործերը վարելու և հրատարակվելիք ամսագիրը խմբա-

---

<sup>1</sup> Ցավոք, «Մեսրոպ»-ի երկրորդ համարը այդպես էլ լույս չտեսավ:



գրելու, մի փոքր ռոճիկ ունեւ, որ թեն քիչ է աշխատանքից գնահատման համար, բայց էլի չեղած տեղից լավ է» (VI, 130): Թերևս առաջին անգամ տարագրության շրջանում Իսահակյանը ստանձնեց բավական պատվավոր և պատասխանատու աշխատանք: Նա բերեց նաև իր ամենագործուն մասնակցությունը Բեռլինում հայա-գերման ընկերության և Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջև ընթացող բանակցություններին, որոնցում գերմանական կառավարության անունից հանդես էր գալիս ԱԳ պետքարտուղարի օգնական Յիմերմանը: Եվ եթե մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը Իսահակյանը հույս ուներ, որ Գերմանիան կարող է խոչընդոտ հանդիսանալ Թուրքիայի համար սկսելու Արևմտահայաստանում հայ բնակչության ջարդերը, սակայն պատերազմը փոխեց ամեն ինչ, երբ Թուրքիան հանդես եկավ որպես Գերմանիայի ռազմական դաշնակից և հենց Գերմանիայից իրավունք ստացավ անցնելու հարյուր հազարավոր հայության սպանդին:

Որերորդ անգամ Գերմանիան նենգորեն խաբեց հայ ժողովրդին՝ թողնելով մենակ Արևմտահայաստանի խաղաղ բնակչությանը թուրքական արյունատենչ յաթաղանի առաջ:

Պատմական իրադարձությունների բերումով շատ կարճ տևեց հայա-գերման ընկերության խաղաղ գոյակցությունը, կամ ինչպես կասեր ժողովուրդը՝ մեղրամիսը: Պարզ էր, որ եվրոպական մեծ տերությունների համար ամենակարևորը տնտեսական շահն էր:

1915 թվականի օգոստոսին Իսահակյանը ստիպված էր թողնել Գերմանիան (հակառակ դեպքում որպես ռուսահպատակ նա կազատագրվեր) և ընտանիքով տեղափոխվել բնակության Ժնև (Շվեյցարիա): Այս հարցում Իսահակյանին մեծապես օգնեց Բեռլինում Պարսկաստանի դեսպան Հովհաննես խան Մասեհյանը՝ տալով բանաստեղծին պարսկահպատակի անձնագիր՝ Ավետիս Բայազետ անվամբ, ինչը հնարավորություն տվեց Իսահակյանին մեկնելու Բեռլինից Ժնև:

Այնպես որ երկար տևականություն չունեցավ Իսահակյանի աշխատանքը Բեռլինում հայա-գերման ընկերությունում՝ մեկ տարի և մի քանի ամիս: Սակայն Ժնևից Իսահակյանը շարունակում էր ակտիվ մասնակցություն ունենալ Գերմանիայի հետ տարվող գաղտնի բանակցություններին, որոնք տեղի էին ունենում Ժնևում և

Բեռլինում: Բանաստեղծի նպատակն էր անել ամեն բան, որ եվրոպական գործող պետությունները սատար կանգնեն Հայաստանի Հանրապետությանը:

Իր հերթին նա մշտապես պահպանում էր կապերը Յ. Լեփսիուսի, Պ. Ռոբբախի և Ջ. Գրինֆիլդի հետ և մնում էր հայա-գերման ընկերության անդամ: Իսահակյանն այս շրջանում հավաքեց նաև մեծաթիվ փաստաթղթեր, վավերագրեր, ժամանակակիցների վկայություններ՝ կապված Մեծ եղեռնի հետ, և այդ վավերագրերը նա հրատարակում էր գերմանական մամուլում և իր հերթին նրանց հիման վրա շարադրում ցեղասպանության վերաբերյալ իր «Սպիտակ գիրքը»: Իսահակյանը որոշակի ծառայություն ունի հայ ժողովրդի թշնամի Թալեաթի հայտնաբերման և նրա ոչնչացման գործում:

Ճիշտ է, գերմանական իշխանությունները Եղեռնի շրջանում բացեիբաց պրո-թուրքական դիրք գրավեցին, սակայն Գերմանիայի լավագույն զավակներ Արմին Վեգները, Ֆրանց Վերֆելը, Յ. Լեփսիուսը, Պ. Ռոբբախը, Ջեյմս Գրինֆիլդը, Է. Շտիրը և ուրիշներ շարունակում էին իրենց հայանպաստ գործունեությունը: Պատմությունը դեռ կտա իր գնահատականը 1914-1939 թթ. գործած հայա-գերման ընկերության վերաբերյալ, մեզ մնում է փաստել, որ մի շարք վճռորոշ պատմական իրադարձություններ՝ Առաջին համաշխարհային պատերազմը, Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում և Երկրորդ համաշխարհային պատերազմը խոչընդոտեցին հայա-գերմանական հարաբերության բարելավումը: Ներկայումս կան բազմաթիվ վկայություններ Հայաստանի հանդեպ գերմանական տարբեր շրջանների հետաքրքրության մասին: Թերևս արժեք հիշատակել Հալլե-Վիտենբերգ քաղաքում՝ Հալլեի համալսարանին կից գործող հայկական մշակութային կենտրոնը, որը կրում է, ի հիշատակ հայա-գերման ընկերության, նրա պարբերական ամսագրի «Մեսրոպ» անունը:

*AVETIK ISAHAKYAN (ARMENIA)*

### **“THE ARMENIAN-GERMAN PARTNERSHIP” AND THE ACTIVITIES BY AVETIK ISAHAKYAN (1914 - 1919)**

In June 1914, with a purpose to draw together the cultures of two peoples, an “Armenian-German Partnership” was created in Berlin with the

help of both German and Armenian scientific and cultural circles. On the opening session, Prof. J. Lepsius was elected the first head of the Partnership, while P. Rohrbach, G. Greenfield, E. Stier and A. Isahakyan became the members of the board. The latter was also assigned as a head editor of the periodical called “Mesrop”. However, the First World War distorted the plans of the Partnership regarding any possible improvement of relationship between two peoples. Right from the beginning of the Great War, Germany had been supporting Turkey in regard of any international negotiations discussing the so-called Armenian Question. Avetik Isahakyan could publish only the first issue of “Mesrop”. While being a holder of Russian citizenship, he had to leave the country as quick as possible. With the help of Hovhannes Khan Maseyan, a Persian ambassador in Germany, Isahakyan acquired a Persian citizenship receiving a new name Avetik Bayazed. This allowed him to leave Berlin for Geneva. In fact, the activity of Isahakyan in the Partnership was somewhat interrupted, though he was able to maintain his contacts with the organization and participated frequently in German-Armenian consultations in Berlin. Isahakyan did much for both revealing the Turkish odious Talaat and his subsequent extermination in Berlin in 1921.

### *ՄԱՐԳԱՐԻՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

#### **ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ. «ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ ՈՒ ԻՐ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ»**

Արամ Հայկազը (Զեքեմյան<sup>1</sup>, 1900-1986) ծննդավայրի՝ Շապին-Գարահիսարի հերոսամարտին երկու ծավալուն գիրք է նվիրել՝ առաջինը՝ „The Fall of the Aerie,» («Արծվաբնի անկումը», 1935) անգլերեն, երկրորդը՝ «Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը» (1957): Բացի այդ, գրեթե ամեն տարի հունիսի առաջին օրերին ծննդավայրի, հերոսամարտի, նրա մասնակիցների մասին հողվածներ է հրատարակել, հավաքել ու ամբողջացրել է համաքաղա-

---

<sup>1</sup> ԱՄՆ ներգաղթելիս պաշտոնյայի անփութության պատճառով Արամ Զեքեմյանի ազգանունը գրանցվեց՝ Զեքեմյան: Հայկազն Արամի ու մոր աչքի առաջ թուրքի գնդակից զոհված եղբայրն էր (1898-1915):

քացիների ցուցակը<sup>2</sup>: Գրողը հպարտությամբ ու երկյուղած բժախնդրությամբ հիշել ու հիշեցրել է հայրենակցի՝ Զորավար Անդրանիկի հիշատակի օրերը<sup>3</sup>:

Արամ Հայկազը հրատարակել է պատմվածքների մի քանի ժողովածուներ՝ «Ցեղին ձայնը», Ա եւ Բ հատորներ (1949, 1954), «Չորս աշխարհ» (1962), «Պանդոկ» (1967), «Կարօտ» (1971), «Ապրել ք, երեխե՛ք» (1973), «Երջանկություն» (1978): Գրական առաջին փորձերից սկսած՝ նրա ստեղծագործության հիմնական նյութը բնօրրանն ու ապրած կյանքն են, որ ժողովածուներից մեկի վերնագրով ձևակերպել է՝ «Չորս աշխարհ» Շապին Գարահիսար, Քուրդիստան, Պոլիս ու Ամերիկա: 1969 թ. սեպտեմբերի 6-27-ը նա Խորհրդային Հայաստանում էր, և նրա գրականության մեջ նոր թեմա սկսվեց: Գրողի դուստրը՝ Այրիս Չեքենյանը, 2010 թ. հոր ծննդյան 110-ամյակի առիթով վերահրատարակեց «Արծվաբնի անկումը» անգլերեն գիրքը, իսկ 2015-ին հրատարակեց Արամ Հայկազի «Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ» իր թարգմանությամբ անգլերեն հատորը:

«Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը» պատմական, ազգագրական վավերագիր-մատյանը կազմված է չորս գլխից՝ «Ընդհանուր ծանօթություններ», «Հերոսամարտը», «Կենսագրականներ» և «Պատմական նամակներ»: Ինչպես վկայում են Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (այսուհետև՝ ԳԱԹ)՝ Արամ Հայկազի ֆոնդում (այսուհետև՝ ԱՀՖ) պահվող ու մեր հրատարակած, ինչպես նաև Այրիս Չեքենյանի՝ մեզ նվիրած՝ նամակները, գրողը երկար տարիներ հավաքչական գործ է արել՝ դիմելով Եղեռնից մազապուրծ համաքաղաքացիների օգնությանը, ճշտել անուններն ու փաստերը, նրանց ճակատագիրը կոտորածից հետո ու սրտի ցավով արձանագրել՝ թուրքը կարծածից շատ ավելի մեծ վնաս հասցրեց հայ ժողովրդին՝ կտրելով սերունդների բնական կապը, աշխարհասփյուռ դարձնելով մի ժողովրդի, որն իր գոյու-

---

<sup>2</sup> «Որպեսզի չմոռցուին» հոդվածը հրատարակել ենք «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» գրքի Ե հատորում, էջ 23-27:

<sup>3</sup> Արամ Հայկազի՝ Անդրանիկ Օզանյանին նվիրված բազմաթիվ հոդվածներ հրատարակել ենք «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» գրքի Ա-Զ հատորներում, իսկ Զ հատորում նաև Արամի խորթ եղբոր՝ Հակոբ Կարմիրյանի (1888-1970) հոդվածը Զորավարի մասին:

թյունը չի պատկերացնում առանց բնօրրանի<sup>4</sup>: «Ժամանակի մշուշին մեջ ծածկուած է Բերդին պատմութիւնը, որ տասնեակ դարերու կը հասնի», – գրում է Արամ Հայկազը (էջ 161) ու պատմում ծննդավայրի՝ Տիգրան Մեծի, Միհրդատի ու Պոմպեոսի օրերից սկսած հերոսական պատմութիւնը, որ կարող էր ջնջվել թուրքական թնդանոթների համագարկերի տակ:

Ամենին չտրագնահատելով «Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը» գրքի մյուս գլուխների գրապատմական արժեքը՝ ներկայացնենք Բ մասը, որն սկսվում է Արամ Հայկազի ուսուցիչ Գուրգեն Մխիթարյանի «Հերոսական Շապին Գարահիսարը» հոդվածով:

Թուրքական բանակից փախած մի քանի հայ զինվորներ տագնապալից լուրեր հասցրին քաղաք: Նրանց դիմադրությամբ սկսվեց Շապին-Գարահիսարի հերոսական ինքնապաշտպանությունը: Բերդում 5062 հոգի կար, որոնցից գենք գործածել կարող էր երկու հարյուր հիսունը: 1915-ի հունիսի 3-ի առավոտյան իրարանցում սկսվեց, ու հնչեց Հմայակ Կարապետյանի կոչ-հրամանը՝ Բե՛րդը... Գրողն ականատեսի իրավունքով պատմում է հերոսամարտին առնչվող հարցերի, մանրամասնությունների, անգամ գաղտնիքների մասին և զգուշացնում. «Այս ու նման բազմաթիւ որոշումներ ինծի ու ինծի պէսներու համար անմատչելի էին այն օրերուն: Ես հիմա զանոնք կլեզրակացնեմ յետագայ դէպքերէն ու առնուած քայլերէն: Ամբողջ գրքի ընթացքին պէտք չէ մոռնալ այս բանը» (էջ 173, 174):

«Ժայռի կողին կպած ծիծեռնակի բոյնի մը պէս էր մեր պզտիկ քաղաքը, միայն թէ այդ բոյնին մէջ ծիծեռնակներու տեղ կիապրէին արծիւներ, ու այդ ժայռն ու բոյնը ունէին անջատ անուններ – ժայռը կը կոչուէր Բերդ, ու քաղաքը՝ Գարահիսար:

Բերդի ոտքերուն տակէն՝ քարերու հատած տեղէն կը սկսէր խորունկ ձորերով ակօսուած դաշտը: Ձորերը ձմրան խոր ձիւնին իբր անկողին ծառայելէ զատ ոչինչ ունէին յատկանշական, բայց դաշտը աղուոր էր, ջրալի, բարեբեր ու ծառաշատ:

---

<sup>4</sup> Կատարված ողբերգությունից 100 տարի անց էլ դժվար է պատկերացնել, թե ինչքան խաթարվեց օտար ավերում հաց, ապահովություն փնտրող հայի նկարագիրը, ինչքան ծանր է ուրիշի հայրենիքը շենացնող ու սեփական Հայրենիքի դուրը թակելու իրավունքից զրկված մարդու ողբերգությունը, երբ տասնամյակներ շարունակ հայության Մեծ հայրենիքի փոքր մասի՝ Խորհրդային Հայաստանի դռները շատերի համար փակ էին կուսակցական, քաղաքական ինչ-ինչ պատճառներով:

Վերը՝ ժայռի կողին, ուր տուները խրտչած ոչխարի հոտի մը պէս իրարու վրայ դիզուած էին, հագիւ շարժելու տեղ կար, ու բարեբախտութիւն էր, որ տուները քալելու, շուկայ կամ իրարու այցելութեան երթալու սովորութիւն չունէին, այլապէս ինչպէս կրնային այդքան նեղումեղ փողոցներուն մէջ բախումներ չունենալ...»,– հիշում է գրողը՝ Կոնստանտին Կարապետեան «Իրապէս գեղեցիկ ու կախարդական» գիշերները, երբ «տուները կը բանային իրենց լուսեղէն աչքերը, ու քաղաքը հրաշքով եթերէն ինկած պսպղուն երկնքի կտորի մը կը նմանէր», «լուսնի պայծառ լոյսին տակ քաղաքը կ'ետադրող բազմաթիւ բարտիի ծառերը կ'իտալեցնէին երկիւղածութեամբ»։ Այս գունագեղ պատկերին գումարովում է մանկության թանկ մի հուշ. «Կը յիշեմ օր մը, երբ մայրս գլուխը վերցուց՝ Ամենակալին գահն ի վեր առաքած իր աղօթքին ճամբան դիտելու, ըսաւ.

– Գիշերն աղուոր է. աստղերը մլուկներու պէս իրարու վրայ են կտոցուեր» (էջ 126):

Քաղաքի բնակիչների սովորություններից էր Վարդավառի տոնակատարությունը Թամգարայում՝ քաղաքին մերձակա շեն գյուղերից մեկում։ «1914-ի Վարդավառը տօնուեցաւ բացառիկ շուքով»,– հիշում է Արամ Հայկազը ու պատմում, որ հաջորդ օրը կարկանամ կարդացին գորակոչի ծանուցումները, որ փակցված էին ամենուր. «Հայրենիքը վտանգի մէջ է, ի զէ՛ն» (էջ 137): Հայրենի քը... Հայերը պատրաստ էին պաշտպանելու իրենց պապերի բնօրրանը ու զենք վերցրին, բայց թուրքական բանակում հայ զինվորն անհավատարիմ տարր էր ճանաչվել, ու թուրքական իշխանությունների ծանր լուծը գործում էր եւ ւ բանակում, եւ թիկունքում։ «Շատ բան չէր մեր ուզածը՝ հայ զինուորին ուզածը – զենք եւ առհասարակ հաւասարութեան իրաւունք թուրք զինուորին հետ. չէ որ միեւնոյն հայրենիքի գաւակներն էին ու կանչուած՝ անոր պաշտպանութեան համար» (էջ 143),– կարդում ես ու մտածում՝ ում հայրենիքի՝ հայի բնօրրանի՞, թե՞ վաչկատուն ցեղի գրաված տարածքների, որոնք հարյուրավոր տարիներ անց էլ նրա համար հայրենիք չեն դարձել ու չեն դառնա...

«Խաղաղասէր ու բարի մարդ է հայրս. յեղափոխական եղած էր երիտասարդութեան օրերում» (էջ 154),– պատմում է Արամ Հայկազը և հիշում, որ հայրը դեպքեր էր պատմում 1895-ի կոտորածներից ու եզրակացնում. «... այն ատեն 8-10 զոհ միայն տուինք, քանի

մը օր գործի եւ առեւտուրի չկրցանք նայիլ. խուժանն ու զօրքը մեր թաղերէն հեռու պահեցինք, եւ անոնք զացին իրենց անասնական վրէժը լուծեցին խեղճ Թամզարայէն... Առաջները քսանեւչորս ժամէն, շա'տ-շա'տ երկու օրէն «դադրեցուցէ՛ք»ի հրամանը կու գար, եւ հայ ժողովուրդը դուրս կու գար՝ արեւուն տակ իր վերքերը լզելու: Այս անգամ խնդիրը տարբեր ձեւ առաւ. այս անգամ պիտի կրնան մեր վզին պլլել պետութեան դէմ ապստամբած ըլլալու մեղադրանքը... Առաջ անիծուած սուլթանին ու անօթի թուրք ժողովուրդին համար հայ ժողովուրդը պտղատու ծառ էր. կառավարութիւնն ու իր շունները կը կողոպտէին հայութիւնը, կը կտրէին ծառին ճիւղն ու պճեղը, բայց բունին կացին չէին զարներ: Այս անգամ հարցը տարբեր ըլլալ կը թուի... այս անգամ կացինը մեր արմատին ուղղուած է...» (էջ 189): Դժբախտաբար Արսէն Չեքեմյանը չէր սխալուում...

Հայն ու թուրքը ճակատագրի բերումով հայտնվել են կողք կողքի ու ապրում են նոյն հողի վրա, բայց մենք ճանաչում ենք մեր հարևան ցեղերին,– հարցնում է Արամ Հայկազը և ասում, երկրորդում ու երրորդում՝ ո՛չ ու հազար անգամ ո՛չ: Ահա ճշմարտությունը. «Այսօր ոչ թէ քննադատելու մտքով, այլ անհուն ցաւով կը հաստատեմ, որ այն օրերուն մեր մէջ չկար մէկը, որ կարենար գուշակել կամ չափել թուրքի ծրագիրներուն ծաւալն ու ահաւորութիւնը: Բոլորս ալ կը հաւատայինք, թէ ջարդ մը կամ «կոտորեցէ՛ք»ի սուլթանական հրաման մը կրնար առաւելն 24 ժամէն մինչեւ երեք օր տեւել, յետոյ, ինչպէս միշտ եղած էր անցեալին մէջ, Պոլսէն պիտի հասնէր «դադրեցուցէ՛ք»ի հրամանը, ու հայ ժողովուրդը՝ վիրաւոր ու արինաքամ, պիտի ձեռնարկէր քանիցս քանդուած իր բոյնը վերանորոգելու գործին: Մեր միտքը, քաղաքակի՛րթ մարդու մեր միտքը ուրիշ բան չէր կրնար երեւակայել...

Ով կրնար» (էջ 145):

«Թուրքերը մասնաւոր խնամքով ջարդեր էին ջրառատ ու օրհնաբեր Անդրեասն ու Բիւրքը<sup>5</sup>, ուր կոիւններ ալ տեղի էին ունեցեր կառավարական ուժերու եւ բաւական լաւ կազմակերպուած երիտասարդութեան միջեւ» (էջ 145): Անլուր կոտորանքների տակ ընկերների, կազմակերպության ղեկավարների մասին տվյալներ տվող

---

<sup>5</sup> Արամ Հայկազ, Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը, Նյու Յորք, 1957: Գրքից մեջբերումների էջերը նշվում են շարադրանքում՝ փակագծերում:

հայի (գրքում անունը կա) կամա թե ակամա մատնությունից հետո անպաշտպան գյուղերի բնակիչներին անխնա կոտորեցին, գյուղերն ամայացրին, իսկ կուսակցական նշանավոր գործիչներն անցան ընդհատակ: Թուրքերը զինաթափեցին քաղաքի բնակիչներին, որոնք ինքնապաշտպանության հնարավորություն ունեին՝ հակառակ անպաշտպան գյուղերի: Շապինգարահիսարցիները, որ զենք գնում էին հենց թուրք ծախու զինվորականներից, հանձնեցին անպետք զենքերը, իսկ քաղաքի փողոցներում տոնական տրամադրությամբ շրջող ու օրեցօր շատացող թուրք թափթփուկների՝ այսպես կոչված «կամավորների ամբոխը ոռոնում էր թրքությունը ծագեծագ տարածելու մասին:

Ամբոխի առաջին զոհերից էին Նազարեթ աղա Հյուսիսյանը՝ Վահան Հյուսիսյանի հայրը, հոգևոր առաջնորդ Վաղինակ ծայրագույն վարդապետը, որին խոշտանգող թուրքը (Արամ Հայկազն այս բորենու անունը հիշատակում է) մեկ տարի անց հաճույքով պատմում էր թիկունքից սպանված Հայր սուրբի մահվան ու նրա անթաղ դիակից մնացած հետքի մասին...

Շապին-Գարահիսարի ու Բերդի մասին պատմական, ազգագրական ծավալուն ու հետաքրքիր տեղեկություններից հետո Արամ Հայկազը պատմում է օսմանյան տխրահռչակ սահմանադրության մասին. «Ժողովուրդին ու մանաւանդ երիտասարդութեան խանդավառութիւնը չափ չունէր» (էջ 132), «Կիլիկիոյ կոտորածը արիւնեց մեր սիրտը, ողբացինք, ցնցուեցանք, բայց մոռցանք ու թաւալեցանք մեր խանդավառութեան մէջ», «հայ մայրերու օրօրներն իսկ յեղաշրջման ենթարկուեցան», «անգամ մը, նոյնիսկ, գեղջուկ քահանայ մը պատարագի զգեստաւորումով ազատութեան մասին քարոզ խօսեցաւ...» (էջ 131): Թվում էր՝ «թուրքը կը սորվէր յարգել հայուն իրաւունքը եւ կը սկսէր սարսափիլ անոր վրէժխնդրութենէն» (էջ 132): Գրողը հիշում է, որ հայրենակիցները երգում էին հայտնի հերոսներին նվիրված երգերը... Հայ երիտասարդը չհանդուրժեց, որ բռնում թուրքի դերակատարը չարչարի հային ու գործի դրեց ծանր բռնուցքը. համբերության բաժակը լցվել էր: Գարահիսարի վարժարանի տնօրենն առաջիններից մեկը ողջունեց տխրահռչակ սահմանադրությունը, թվաց՝ ազատությունը մոտ է, բայց Բերդում պաշարված հայերի հետ հայտնվեց թուրքական թնդանդների կրա-



կահերթի տակ. Արամի հիշողության մեջ նա անմահացավ որպես «ծերացած արծիւ մը» (էջ 218):

Քաղաք վերադարձան բանտից ազատված ուսուցիչ Գրիգոր Վահուինին (Արամի հորաքրոջ ամուսինն էր) ու Ղուկաս Դեովլէթյանը (Ղուկաս Աղբարը), որն «իբէտէն ունէր յեղափոխական անցեալ եւ կառավարական ուժերու հետ ընդհարումներու արիւնոտ պատմութիւն մը» (էջ 133): Քաղաքի բնակչութիւնը «յաղթական զօրավարի վայել շքեղ մուտքով դիմավորեց Ղուկաս Աղբարին, իսկ օրեր անց քաղաք հասած Վահուինին, որ ծխախոտի հայտնի մաքսանենգ էր, սկսեց զինել քաղաքամերձ գյուղերի բնակիչներին. «Ով աւելի լաւ կը ճանչնար թուրքը, եւ որո՞ւ խօսքը աւելի կշիռ ունէր, քան անորը, որ ներդաշնակ էր նաեւ քաղաքի յեղափոխական կուսակցութեանց տեսակետներուն հետ» (էջ 135): Բալկանյան պատերազմը սրեց մեր հարևան ցեղի՝ «ազգային ճարտարարուեստ» դարձրած հակումը՝ գողութիւնը: «Այդ գողոնի ապրանքին մեծագոյն յաճախորդները հայերն էին: Կը գնէին զանոնք անանուն զոհողութեանց գինով: Գարահիսարի դէկավար դէմքերը կը հաւատային, թէ հաւասար ուժերու վրայ հիմնուած բարեկամութիւն մը կրնայ աւելի տեսական ըլլալ» (էջ 135): «Ղուկաս Աղբար կ'իայցելէ դիրքերը»՝ գլխում գրողը նկարագրում է արիասիրտ առաջնորդի ու զինվոր դարձած կոշկակարի հանդիպման հուզիչ տեսարանը. Ղուկաս Աղբարը, հասակից հագիվ մի թիզ երկար հրացանը ձեռքին, գլխին մորթե փափախ, շրջում է դիրքերով ու տեսնում կոշկակարի նոր հրացանը, խորհուրդ տալիս լավ պահել, իսկ զինվորը, աչքերը սրբելով, պատմում է՝ վեց ամիս «կէս-կուշտ, կէս-անօթի» է ապրել «աս մասունքը գնելու համար» (էջ 165):

Գրողը չի թաքցնում «ապագայ թրքական վրէժխնդրութենէն» վախեցող, զգաստութեան կոչեր հնչեցնող հայեր էլ կային, հիշում է՝ առաջնորդական փոխանորդ Տեր Մկրտիչը, որ «ժողովրդի խանդավառութիւնը տեսնելով», «խօսեցաւ յոռետես քարոզ մը՝ զգուշացնելով, որ պետության դէմ են կռվելու... Որպէս հետեւանք՝ «Խոհեմ», «զգոյշ» ըլլալու, «գազանին պատրուակ չհայթայթելու» քաղաքականութեան զոհ գացած էր քաղաքի երիտասարդութեան մեծամասնութիւնը՝ երիտասարդութեան ծաղիկը: Դէկավարութիւնը նոյնպէս վերածուած էր կէսի» (էջ 191): Հավելենք՝ սրան նպաստել էր նաև թուրքական բանակից ազատվելու համար փրկագին մուծելու ան-

կարող երիտասարդության հեռանալը Հայրենիքից: Ճիշտ է, գարահիսարցիք հակված չէին տարագրության, բայց թուրքական իշխանության քաղաքականությունը կամաց-կամաց փոխեց հայության նկարագիրը: Անսասան է հավատը. կյանքի պարտադրած բոլոր իրավիճակներում գարահիսարցին աղոթեց ջերմեռանդ «հոգիներու, թե կեանքներու փրկութեան համար» (Էջ 231): Ուրախության ու վշտի պահերին սրբերին ապավինող, Տիրոջը շնորհակալություն հայտնող գարահիսարցին երբեմն ըմբոստանում է՝ օգնություն խնդրելով Փրկչից կամ Աստվածամորից. սպանված Գեղամի մայրը «Ուր է, Աստուածածի՛ն, իմինս ուր է» անպատասխան հարցով արտահայտում է որդեկորույս մայրերի ցավը: Տատիկներից մեկը թալանված ու կիսավեր եկեղեցում երկար աղոթելուց հետո Աստծուն, որ «չտեսնելու եկեր էր ամեն բան», հարցնում-դժգոհում է. «... Այդքան ծով էր մեր մեղքը, Տէ՛ր, ինչու հրաշք մը չցուցուցիր... Մէկ հատ, միայն մէկ հատ կը բաւէր... Այդքան ծով էր մեր մեղքը, Տէ՛ր, մենք քու դուրդ՝ ծառադ չէինք... Զօրութեանդ դուրպան, Տէ՛ր, ինչու անտեսեցիր մեզ, մեր վիշտը, մեր ցաւը, մեր արիւնը, մեր աղօթքը: Քու ժողովուրդդ չենք մենք, Տէ՛ր, ինչու ուշացուցիր հրաշքդ...» (Էջ 273): Հավատավոր մեկ ուրիշ տատիկ՝ Հմայակ Կարազոյզյանի ծեր մայրը՝ Գարահիսարի աղբյուրից քիչ հեռու ծվարած համաքաղաքացիներից առաջինը, համարձակվեց դուրյն առնել ու մոտենալ աղբյուրին, ջուր խմել ու փորձեց ջուր հասցնել մյուսներին... Քիչ անց տատիկը հայտնվեց գետնին... Եկեղեցու բակում հավաքվածները ենթարկվեցին կյանքի «անմիջական պահանջներին, որոնց մեջ առանձնակի տեղ ունէր աղօթքը. «Մարդկային ըմբոստողութենէ դուրս, սրտակեղեք ու անանուն բան մըն էր այդ աղօթքը, հաւաքական այդ ցոյցը Արարչին դէմ: Պաղատանքի, արցունքի, մեղմ ու վախկոտ դժգոհութեան, արտայայտուելու, պոթելալու վախճող բողոքի, համակերպութեան, ապաշաւի եւ վիշտի անանուն խառնուրդ մը: Ամէն ոք, ամէն ընտանիք հարուածուէր էր, ճղակոտոր եղէր, եւ ամէն մարդ ու ամէն ընտանիք տարբեր ձեւով ուսն առած իր խաչը, տարբեր ձեւով կը խօսէր այդ խաչը իր ուսերուն Կամեցողին հետ:

Բարեխօսութեան եւ օգնութեան հասնելու հրաւեր կար բոլոր մեծ ու փոքր սուրբերուն, բոլոր առաքեալներուն, բոլոր կոյսերուն եւ բոլոր մարտիրոսներուն: Զօրութիւննին ցոյց տալու կը հրաւիրուէին

Յիսուսը, Աստուածածինը, Խաչուած Քրիստոսը, Սուրբ Գեորգը, Սարգիսը, Եղիան, Լուսաւորիչը, քարկոծուած Ստեփանոսը, Սուրբ Կոյսը, Սուրբ Յակոբը...

Որքա՛ն արցունք թափուեցաւ անոնց գուրը շարժելու, զանոնք յուզելու, զանոնք արթնցնելու եւ հրաշագործութեան մղելու համար... Որքա՛ն մանուկներու պարտադրուեցաւ իրենց փոքր գլուխներուն անըմբռնելի հատուածներ թոթովել, որովհետեւ «անոնք արդար էին, ու աղօթքնին կը լսուէր անպատճառ»...

Չեմ գիտեր, թէ այդ բոլոր աղօթքները անոնց ապագային վրայ որեւէ բարերար ազդեցութիւն ըրին, թէ ոչ, բայց անկասկած փոխեցին անոնց ներկան: Անոնք ոտքի ելան աւելի թեթեւցած հոգիով ու քիչ մը նուազ դժբախտ, մխիթարուած. չէ՞ որ իրենց կարելին ըրած էին, չէ՞ որ իրենց ճակատագիրը Արարչին էին յանձնած անգամ մը եւս... Ոմանք սիրտ ունեցան ապագային նայելու յոյսով ու հաւատքով: Ոմանք նոյնիսկ կոտորածէն ողջ մնացած ըլլալնուն համար իրար շնորհաւորեցին...» (էջ 274, 275):

Շապինգարահիսարցիներից անբաժան են հոգևոր հայրերը՝ ժամկոչից մինչև հոգևոր առաջնորդ: Թուրքերն սկսում են պղծել Գարահիսարի Մայր եկեղեցին: Ժամկոչ Աղաջանը դժգոհում է. «Եթէ միայն մոմ վառելու եւ գերեզման փորելու վարժուած չըլլային սա անիծած ձեռքերս, ես անոնց հախէն կու գայի» (էջ 175): Նա «քարացածի պէս անշարժ, կարմիր, եփած աչքերով կը նայէր կրակի ծովուն»՝ այրվող ծննդավայրին ու մտածում էր՝ ամեն ինչ ավարտված է: Բայց պարզվում է՝ վրեժ լուծելու գորեղ միջոցներ են աղօթքն ու պատարագելը, ու ժամկոչն անօրինակ նվիրումով գործի է անցնում:

Բերդ բարձրանալու առաջին օրից քահանան ու ժամկոչ Աղաջանը կիսափուլ շենքի անկյունում պատարագ են մատուցում՝ «վրեժի աստծուն մեր տուրքը տալու համար...», որ քիչ հետո հրացանը ձեռքն առնեն: Ածպտերի քահանան (Արամ Հայկազը չի հիշում նրա անունը) բացատրում է, որ Վարդապետին զենքով պաշտպանող Պետրոսի օրինակով իր հոտն է պաշտպանում գայլերից... Երբեմն ապահովության համար գիշերն էին հավաքվում պատարագի...

Գրողը հետաքրքիր դիտարկում է անում. աշխարհաշեն աշխատանքի ու խաղաղության օրերին գարահիսարցիք մեծ ընտանիքի պէս էին ապրում՝ կիսելով միմյանց հոգսն ու հավատարիմ

մնալով պապերից ժառանգած բարոյական օրենքներին: Հերոսամարտի օրերին մարդիկ քիչ-քիչ կերպարանափոխվում են՝ «Անգործ մարդիկ, մանր կամ մեծ խումբեր կազմած, կը վիճէին: Շրջան ընտղ լուրերէն, կատարուող դէպքերէն ու Ձինտութեան Խորհուրդի առած քայլերէն եզրակացութիւններ կը հանէին, վճիռներ կու տային, մարգարէութիւններ կ'ընէին...» (էջ 213): Ամոթխած ու պարկեշտ կանայք ջրի, հացի հերթերում սկսեցին վիճել, կռվել, անիծել ու նույնիսկ սպառնալ. «Թուրքը ինչ որ ալ ընէ, քիչ է ձեզի պէսներուն համար...» (էջ 279):

Գրքի Գ մասում ներկայացված է շապինգարահիսարցիներից 43-ի կենսագրությունը՝ համառոտ կամ ծավալուն շարադրանքով: Դրանցից երկուսի՝ Ջորավար Անդրանիկի ու Ճարտարապետ Թորոս Թորամանյանի անունները հանրահռչակ են: Հավելենք՝ Արամ Հայկազը հիշատակում է հայրենակիցների կյանքի՝ իրեն կամ մյուսներին հայտնի բոլոր մանրամասները՝ աշխատելով սերունդներին թողնել հերոսների մարդկային նկարագիրը

Շապին-Գարահիսարի հերոսամարտի ակունքներում կանգնած են հոգևոր բազմաթիվ գործիչներ, որոնք տարիներ, տասնամյակներ շարունակ Լույսի ու Հույսի իրենց քարոզներում չեն մոռացել զինվելու, թուրքին դիմադրելու պատրաստ լինելու հրամայականը, Հիսուսի Խաչի հետ նաև զենք են գործածել: Համաքաղաքացիների կենսագրությունների շարքում առաջին տասնմեկը հոգևոր գործիչներ են՝ Վռամշապուհ արքեպիսկոպոս Քիպարյան, Սմբատ եպիսկոպոս Սաստեթյան, վարդապետներ Վաղինակ Թորիկյան, Շավարշ Սահակյան, Գեղամ Թևեթեյան, քահանաներ Մկրտիչ Սարգըսյան, Գուրգեն Ղազարյան, Սուրեն Տյուրիկյան, Մկրտիչ Գալիոնձյան, Նաթան Տատյան, Ստեփանոս Կարինյան, ինչպես նաև ՀՅԴ նշանավոր դեմքերից բժիշկ Երվանդ Խաթանապյան, Գուրգեն Մխիթարյան, Միրիճան (Մերուժան) Օզանյան և այլք: Ինչպես Համաստեղի (Համբարձում Կելենյան, 1895-1966) «Սպիտակ Ձիաուորը» դյուցազնավեպում, Արամ Հայկազի գրքի սարսափելի էջերից են հոգևոր հայրերի հետ թուրքավարի վարվելու տեսարանները...

Արամ Հայկազը դաշնակցական չէր, բայց, ինչպես պատմում է ՀՅԴ ճանաչված գործիչ, դրամատուրգ և գրողի մտերիմներից Հրանտ Մարգարյանը, գործունյա համակիր էր. վկա՝ «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» գրքի հատորներում մեր հրատարակած բազմաթիվ

հողվածները և նամակները:

Հողվածներում Արամ Հայկազը միշտ հիշատակում է Հմայակ Կարապետյանի, Ղուկաս Դեովլեթյանի, Վոսմաշապուհ արք. Քիպարյանի, Վահան Հյուսիսյանի անունները՝ չմոռանալով մյուսներին... Միջին թաղը, Հունաց թաղին կից հայոց փողոցները «Ղուկաս Աղբոր և Օգանեան Շապուհի ռազմական համբաւով էին պաշտպանուած» (էջ 160, Շապուհը զոհվեց բանտում ձերբակալված հայերին ազատելու փորձ կատարելիս – Մ. Խ.), Պարտեզի թաղը պաշտպանում էր Հյուսիսյան Վահանը... Հաց թխելու և Բերդ հասցնելու գործը ղեկավարում էր Հաճի Գասպար Ղուկասյանը... Այս անվախ մարդն էր, որ նահանջի ժամանակ խուճապի մատնեց թուրքերին՝ նրանց սպայի փոխարեն չկրակելու հրաման տալով. այդ խորամանկությամբ նա շատերի կյանքը փրկեց:

Բերդ բարձրացողները սարսափում էին կիրասոնցի փախըստական զինվորի դիակից, որն ընկած էր ճանապարհի վրա: Հմայակ Կարապետյանը երիտասարդներից մեկի օգնությամբ դիակն անդունդը նետեց. «Այդ պահուն մեր մեռելը Բերդէն վար անդունդ նետելը սրբապղծութիւն թուեցաւ մեզի, բայց վերջը պիտի վարժուէինք այդ բանին ու նոյնիսկ ուրանայինք մեր մեռելները...» (էջ 180): Արամի վերջին հիշողություններից էր հոր դիակը՝ գլխին բացված վերքից հոսող արյան շիթով (էջ 268):

Բերդը դարձել էր ռազմական ճամբար՝ միակամ ու անձնուրաց զինվորներով՝ անկախ սեռից ու տարիքից. սահմանել էին թուրքերին վերահսկելու կետեր, երեխաները հմուտ հետախույզի պես կատարում էին հանձնարարությունները, ամեն զիշեր գաղտնաբառ էին ընտրում և այլն: Զինվորական խորհրդի որոշման վեց կետերը պարտադիր էին բոլորի համար: Ղուկաս Աղբարը հատուկ ուշադրություն է նվիրում 6-րդ կետին՝ փամփուշտի խնայողությանը և կուսակցությունները լուծարելուն. «Բոլորս հայեր էինք և ոչ կուսակցականներ» (էջ 201):

Երբ Տեր Նաթանը փորձում է Հիսուսի ու Մարիամի օրինակով սփոփել Բերդ փայտ հասցնել փորձող և թուրքի գնդակով ձորն ընկած 18-ամյա Խորենի մորը, կինը հիշեցնում է՝ Աստվածամայրը գոնե կարողացավ նահատակված Որդու ոտքերը գրկել... (էջ 223, 224):

Գրքի ամենամոռյալ գլուխներից է «Թաղում»-ը. այդ օրը հողին պիտի հանձնեին 28 հերոսների՝ Հմայակ Կարապետյան, Ռուբեն ու

Գրիգոր Պարոնվարդյաններ, Հակոբ Պառնազյան, Երվանդ Վեցիկյան, Վարազդատ Նախնիքյան, Գուրգեն, Գեղամ, պատանի Հմայակ Թևեքեյան... Ահա մի հատված այս տեսարանից. «Ահա հատ-հատ կամ պզտիկ խումբերով կը հասնին նահատակներու գէնքի ընկերները: Կը խաչակնքեն կոպիտ, լայն շարժումներով ու գէնքերու փողերը բռնած, գլխահակ կը սպասեն:

... Ինչու այդպէս դիմացը՝ հեռաւոր մութ հորիզոնին վրայ կը նային միայն. հոն մեզի անտեսանելի բան մը կայ...

Չէ՛, ես գիտեմ: Կը վախնան, որ իրենց ակնարկը ծանօթ, վշտաթաթաւ ու թաց դէմքի մը վրայ կ'իյնայ, ու ալ չկրնալով տոկլալ՝ իրենք ալ կու լան:

Իսկ հերոսին համար արգիլուած է արցունքը» (էջ 241, 242):

Գարահիսարցիք սովորույթի ուժով հավաքվում էին երիտասարդների կառուցած պատի տակի ապահով անկյունում ու քննարկում օրվա խնդիրները: Սառինճի ջրի պահակը՝ Տորք Անգեղի ու Սասնա ծռերի հսկա ժառանգը, «հակառակ շատ իմաստուն մարդ մը չըլլալուն», դարձել էր հեղինակություն. «միահեծան իշխանութիւն ունէր» օրեցօր պակասող ջրի վրա: Նա կովի ժամանակ «ղաժան, անհանդարտ, խոժոռ, ահագոցեցիկ» էր «այդ պահերուն քովը մօտենալ կամ իրեն խօսք ուղղել անկարելի էր» (էջ 211), բայց խաղաղ օրերին կարոտով նայում էր անցնող փոքրիկներին, խոսքի բռնվում նրանց հետ, մի շերեփ ջուր տալիս՝ ծնկի եկած, հրճվանքով նայելով. «Ու սրտին կսկիծը կը կարդացուէր դէմքին վրայ: Այդ պահերուն պէխը կը ծռէր յուզումէն, ու սիրտը, գիտեմ, կ'ափսոսէր ներսէն. այդ պահերուն ան կրնար հարիւր թուրքի հետ կռուիլ ու յաղթել...» (էջ 212): Օրեր անց դուրսգալն անգոր ճիգով իրեն սպանելու խնդրանքով դիմում էր համաքաղաքացիներին. ծունկը փշրված էր: Խուճապի ու անկանոն նահանջի ժամանակ Արամն էլ լքեց վիրավորին. «Փակած եմ ոչ միայն ականջներս, այլ և սրտիս դուռը, մէկ մտահոգութիւն ունիմ – լուսնալէ առաջ վեր հասնիլ» (էջ 257):

Անգամ ամենահուսահատ վիճակում հայ մարդը պետք է անխաթար պահի ազգային, մարդկային նկարագիրը ու չնմանվի թուրքին: Թուրքերը, հայերեն խոսելով, համոզում են Բերդի պաշտպաններից մի քանի պատանիների, թե Բյուրքից<sup>6</sup> օգնության եկած

---

<sup>6</sup> Բյուրք գյուղի ինքնապաշտպանական կռիվների եւ տարագրության պատմությանն են նվիրված «Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը» գրքում

հայեր են: Խաբեությունը շուտով բացահայտվում է, երեք երիտասարդներ կովում են յոթանասուն թուրքերի դեմ ու Բերդից դուրս շարտում նրանց: Մի քանի հայ պատանիներ գտնում են թաքնված երկու թուրքի ու սպանում: Նրանց հարցաքննող Ղուկաս Աղբարը զայրանում է. գերիներին «ձեռքերնին կոնակներուն կապած են» սպանել «... ուրեմն ուր պիտի ըլլայ մեր ու անոնց՝ հայուն ու թուրքին տարբերությունը» (էջ 245): Տղաներին անխուսափելի պատժից փրկում է քահանան... «Ոճիր էր»,– գրքի այս գլխի վերնագրով հարցնում է գրողը: Համոզված ենք՝ Ղուկաս Աղբարի ու նրա պես անձնվեր հայրենասերների համար՝ ոճիր էր ու է՝ նաև այսօր:

«Մեր միակ ժամանցն էր թնդանօթի ռումբերը համրել» (էջ 247),– հիշում է գրողը: Ցնցող է այն տեսարանը, երբ պարսպի անկյունում հավաքված երեխաները, միմյանց ընդմիջելով, մեկը մյուսից զարհուրելի դեպքեր են պատմում Բերդում կատարվածից...

Գարահիսարում մեծանում էր անվախ ու ինքնագոհ երիտասարդություն. Գառնիկ Բեյլերյանը բանտում թուրքերի կազմակերպած զանգվածային կոտորածի ժամանակ գնդակահարեց ոստիկանների հարյուրապետին: «Պզտիկ հերոսը» գլխում նկարագրվում է 14 տարեկան Հմայակ Թևեքեյանի սխրանքը. ռումբը թևատակին պահած, վտանգելով կյանքը՝ անցնում է թուրքերի «գնդակներով հերկուած զառիթափին վրայէն», անօգնական կանանց հասցնում զինամթերքը ու բոլորի աչքի առաջ զոհվում: Նրա վրեժը լուծեցին՝ ռումբը պայթեցնելով հարձակվող թուրքերի ամբոխի մեջ. Բերդի դռան մոտ այլևս թուրք չկար: «Ղուկա՛ս, դու՛ն ալ» գլխում լսում ենք Վահան Հյուսիսյանի և Ղուկաս Աղբարի զրույցը. թուրքերը հարյուրավոր զոհեր են տվել մեկ օրում, բայց արցունքները թաքցնող Ղուկաս Աղբարը ողբում է 27 նահատակների մահը ու նշում. «Անոնց երեք հարիւրը մեր պզտիկ Հմայեակին հետ չէի փոխեր...» (էջ 243):

«Ծիպեոցի երկու բոպիկ տղաք» ուսումնասիրել էին իրենց գյուղի թուրք նախապանի շարժուձևը և կարողացան թուրքերի նախիրը զողանալ, հասցնել Բերդ, ավելին՝ թուրքի գլուխը լցրին տարիներ շարունակ Բերդում հայերի կուտակած հացի ու փամփուշտների հեքիաթով... Դիպուկ նշանառու Ավետիս Պարոնվարդյանը ինքնապաշտպանության առաջին օրերին զոհ գնաց սեփական

---

Հարություն Քեֆեյանի «Բիւրքի կոիւր» հոդվածը, «Բիւրքի տարագրութիւնը» հուշագրությունը (ստորագրված է՝ Էմմա Արծիվ):

անփորձությանը: Արամը Բերդից հեռանալիս փրկեց Պարոնվարդ-  
յան Անդրանիկի զավակներից կրտսերին...

«Ամիս մըն էր ահա, որ ամէն օր մեռել կը տեսնէի, բայց չեմ  
գիտեր ինչո՞ւ, չէի կրնար մոռնալ Գեղամը: Ան դպրութիւն կ'ընէր  
ինծի հետ, ու կը հաւատամ, թէ եթէ ձգէին, որ ապրեր, օր մը արժա-  
նաւոր ու սրբակեաց կրօնաւորներէն մէկը պիտի ըլլար: Կը հաւա-  
տամ, թէ Նարեկացին իր պատանեկութեան օրերուն Գեղամի պէս  
գերզգայուն տղայ մըն էր: Գեղամին, որ Աւագ Հինգշաբթի գիշերը,  
մութիւն ու անկողնին մէջ դողահար, խաչուած Յիսուսի հեծեծանքնե-  
րուն ունկնդրելով, չէր կրնար քնանալ...» (էջ 269),– հիշում է գրողը:

Գրողը պատմում է, որ հայերի անձնատվությունից հետո շատ  
երեխաներ մահից փրկվեցին թուրքերի ընչաքաղցության շնորհիվ.  
«աւելի թալանով էին զբաղած, քան ջարդով» (էջ 260): Փրկվածներից  
շատերը հավատափոխության դիմեցին(էջ 264-266): Արամը ևս,  
անսալով մոր աղաչանքներին, ուրացավ հավատը և չորս տարի  
որպէս Միսլիմ ապրեց քրդերի ու թուրքերի մէջ... Հետագայում  
ակամա հավատորացության մեղքը քաղելու համար նա էջմիած-  
նում թողություն հայցեց Ամենայն հայոց կաթողիկոս Վազգէն Առա-  
ջինից....

«Գիշերը քանի մը յանդուգն տղաք իջան վար՝ մինչև թուրքերու  
հասած տեղը և հոն մեռնող զինուորներու զէնքերը, փամփուշտները,  
ջրամաններն ու կօշիկները առած՝ վերադարձան Բերդ» (էջ 223):  
Երիտասարդների ու երեխաների օգնությամբ 24 ժամում պատ կա-  
ռուցեցին՝ շրջանցելով անդունդները... Գրքում հանդիպում ենք  
ուսանող երիտասարդին՝ բոցավառ ճառ ասելիս ու Մուրադի ձիու  
անվան շուրջ ծավալված լեզվակովի ժամանակ. պղնձագործին  
հաղթելու համար նա հատված է արտասանում Դանիել Վարուժանի  
բանաստեղծությունից, ու վիճող կողմերը գտնում են լուծում՝ Մու-  
րադը հաստատ մի քանի ձի ունի:

Բերդի գլխին իջած մշուշի մէջ թուրքերը հասցրին պաշտ-  
պանական պատ կառուցել, ու իրավիճակը կտրուկ փոխվեց: Արամ  
Հայկազը հիշում է, թէ ինչպէս Վարդան Չավուշը ձանձրանում է ու  
մի պահ լքում իրեն վստահված դիրքը: Մինչ Դուկաս Աղբարը կհրա-  
մայեր վերադառնալ, թուրքերն արդեն զրավել էին դիրքը: Հաջորդ  
օրերին հայերն այդ կորցրած դիրքում ավելի շատ զոհեր տվեցին,  
քան կովի նախորդ բոլոր օրերին:



Արամ Հայկազը պատմում է հուսահատության ու թույն խմելու դեպքերի մասին. Ջիշգորցենց ընտանիքի բոլոր անդամների, հատկապես երեխաների դիակները «իրենց կեանքի կանաչ արևը խաւարեցնող ցաւ»-ի կենդանի պատկերներ են, որ տասնամյակներ անց իսկ սարսափեցնում են հեղինակին ու ընթերցողին:

Անձնատվությունից առաջ ինքնական բանագնացները՝ Անդրանիկ Պարոնվարդյանն ու Նշան Սերճենյանը, իջնում են Բերդից ու չեն վերադառնում. հայերը թուրքերի բանագնաց հայ կնոջը չվնասեցին... «Կեանքով մտահոգուող չկար. թանկարժէքը պատիւն էր...» (էջ 255), ու շատերը թույն խմեցին՝ թուրքի ձեռքը չընկնելու համար... Արամի հիշողության մեջ դրոշմվեց հրեշավոր տեսարանը՝ դասընկերոջ՝ Վահեի փոքր եղբայրը՝ Ատոմ Հյուսիսյանը, փրկություն էր աղերսում... (էջ 261):

Բերդի գլխին սպիտակ դրոշ բարձրացրին... բայց թուրքերը, որ «այնքա՛ն սարսափած էին ափ մը մարդոց յանդգնութենէն», չէին հավատում անձնատվությանն ու շարունակում էին կրակել՝ թիրախ ունենալով սպիտակ դրոշը, որն ընկալում էին որպէս ծաղր: Բերդի դռան մոտ հավաքված կանայք ու երեխաները խորհում էին. «...ինչ պիտի ըլլայ նե՛ թող ըլլայ, պիտի մեռնինք նե՛ մեռնինք՝ ազատի՛նք...» (էջ 259): Ժամեր անց տեր հոր «հրավեր»-ից հետո միայն թուրքերն սկսեցին Բերդ բարձրանալ...

Ծեր մայրը փորձել էր մինուճար որդուն, որն ուսի ծանր վերքի պատճառով չէր կարողացել միանալ Բերդից հեռացող տղամարդկանց, կանացի հագուստ հագցնելով («Վահան անուն լերան պէս երիտասարդ մըն էր. ինչպէս կրնար կնոջ հագուստներու մէջ պարսկուիլ...» (էջ 264) փրկել, հիմա կռվում էր թուրք զինվորների դէմ, բայց ուժերն անհավասար են... Խիզախ երիտասարդն առողջ ձեռքով ոլորեց թուրքի վիզն ու նրա հետ նետովեց անդունդը...

«Ղէպի ուր» հոետորական հարցով է վերնագրված գրքի՝ հերոսամարտը ներկայացնող վերջին հատվածը: Բնօրրանից գրկված հայի համար աշխարհի ոչ մի անկյունում չկա խաղաղություն և ապագա, ուրեմն՝ հոետորական հարցի պատասխանն է՝ ղէպի անորոշություն ու անհայտություն, որտեղ շատ դժվար է լինելու հայ լինելն ու հայ մնալը: Փրկվածներից մի քանիսը հաջորդ սերունդների համար պահեցին կատարվածի հիշողությունը, քանզի անցյալի դասերից սովորելու շատ բան ունենք: Երվանդ Էրզրումյանցն

ու Գրիգոր Հյուսիսյանը հասան Անդրանիկի բանակին, պատմեցին կատարվածի մասին, և Զորավարի հրահանգով Հակոբ Տեր-Հարությունյանը գրեց «Շ. Գարահիսարի ապստամբությունը» գրքույկը՝ հերոսամարտի առաջին գրավոր վկայությունը:

*MARGARITA KHACHATRYAN (ARMENIA)*

### **ARAM HAYKAZ. “SHABINKARAHISAR AND ITS HEROIC BATTLE”**

Aram Haykaz (Chekemian 1900-1986) dedicated two large books to the heroic battle of Shabin Karahisar, his native city: the first- “The fall of the Aerie”, 1935, in English and the second- historical, ethnographical and documentary - “ShabinKarahisar and its Heroic Battle”, 1957, in Armenian.

Aram was only 15 years old when in the morning of June 3, 1915 the town was in a state of commotion and Hmayak Karageozyan issued an appeal: “Everyone to the citadel!”.

According to the statement of Aram Haykaz, “we did not and do not know well the nomadic tribes sharing the borders, and in the spring of 1915 we kept imagining just another armed robbery, initiated by the state authorities was launched, whose cessation would soon take place by the order of the same state authorities”.

However, the abominable crime being beyond the capacity of a civilized human being.

*ԻՆԳՍ ԱՎԱԳՅԱՆ (ՀԱՅՍՍՏԱՆ)*

### **ԱՂԱՍԻ ԱԼԵՔՍԱՆԻ ՄԱԿԱՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄԸ՝ «ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՀԵՐԻՑ»**

2015թ. լրացավ Մեծ եղեռնի հարյուրամյակը: Մակայն պատմական գրականության մեջ եղեռնը թվագրվում է 1895-1923 թթ.: Սույն հոդվածի նպատակն ենք համարում անդրադառնալ մի քանի ժողովրդական ֆոլկլորային ստեղծագործությունների և Մեծ եղեռնը վերապրածների հուշապատումների, որոնցում արտացոլված են

1918, 1920 թթ. Ալեքսանդրապոլի գավառում և Կարսի մարզում տեղի ունեցած հայոց ջարդերը:

*Առավոտվա ժամը վեցին  
Մեզի գյուղիցը հանեցին,  
Տարա՛ն, Հազազը մորթեցին,  
Մայրի՛կ, զուլում է, զուլում է:  
Երբ որ հասանք մենք Հազազը,  
Կտրավ մեր սրտի մուրազը,  
Մեզի մորթին ինչպես դազը,  
Մայրի՛կ, զուլում է, զուլում է:  
Թուրքը ելավ Հաջա սարը,  
Ձեն տվավ Հաջազի քարը,  
Հարս ու աղջիկ փախան սարը,  
Մայրի՛կ, զուլում է, զուլում է:*

Այս երգի բառերը գրառել ենք պատահմամբ. 2012թ. Գյումրի եկած մի խումբ ցեղասպանագետների խնդրանքով այցելեցինք Գյումրու Սևերսկի որբանոցի տարածք: Հանկարծ մի տաքսի կանգնեց, և վարորդը՝ Մերուժան Սարիբեկի Սարոյանը՝ ծնունդով Սպիտակի Լուսաղբյուր գյուղից, ով տարիքով բավականին ջահել էր՝ մոտ վաթսուն տարեկան, լսելով մեր խոսակցությունը, ցանկություն հայտնեց երգել և պատմեց «Ջարդի ձորի» կոտորածների մասին: Մերուժան Սարիբեկի Սարոյանը վերապրածների ընտանիքից է, նա անմիջականորեն չի տեսել և չի եղել ցեղասպանության ականատես-վկա, սակայն այս ամենը նա ընկալել է՝ լսելով գյուղում և ընտանիքում ապրող ավագ սերնդի ներկայացուցիչներին, ովքեր վերապրել են Մեծ եղեռնը: Առանձնահատուկ ուշադրության են արժանի հայ իրականության մեջ Հայոց Մեծ եղեռնի ողբերգական շարունակությունը համարվող 1918 – 1920թթ. հայ-թուրքական պատերազմների ժամանակ տեղի ունեցած ջարդերը, որոնք իրենց արտահայտությունն են գտել աշուղական արվեստում: Երգնկայում ծնված և Մեծ եղեռնը վերապրած Հովհաննես Թոչունյան-Հովհաննիսյանը, ով ծառայել է Հայկական կորպուսի բանակային առաջին բրիգադի Երգնկայի գնդում, ապա զորավար Անդրանիկի Հայկական առանձին հարվածային զորամասում, իր «Մեր գնդի ճակատագիրը»

խորագրով հուշերում 1918թ. դեպքերը նկարագրելիս գրում է անհայտ աշուղի մասին. «Գնում էի քաղաք (Ալեքսանդրապոլ) ման գալու, ժողովուրդը հավաքվել էր, մի աշուղ էլ նվագում էր, մի քանիսն էլ լաց էին լինում: Ես էլ մոտեցա՝ տեսնեմ, ինչ է երգում, հիշում եմ երգի մի տունը.

*Շուն տաջիկը Արփաշայն անցավ,  
Քանդեց ավանները Շորագյալ,  
Զարկեց այծյամներդ, կերավ գառներդ  
Մաքուր հորթ չմնաց Շորագյալ...»:*

1918-1920թթ. կոտորածների մասին են վկայում Շիրակի մարզի բոլոր գյուղերում դրված հուշարձանները: Մասնավորապես նշենք Արփենի գյուղի գերեզմանատանը 2007թ. հոկտեմբերի 20-ին դրված խաչքարի մակագրության մասին, որն արված է Մշո բարբառով. «*Ու գուց ու դեն իմաց մացեք, թուրքի առաջ թվանք բացեք*», և Ձիթհանքով գյուղի հուշարձանը, որի վրա բոլորովին բացակայում է արձանագրությունը: Պատմում են, որ թուրքերը հայերին այրել են գյուղի մարագներում, սակայն հուշարձանը դնելուց հետո, բոլշևիկյան բռնաճնշումներից վախենալով, որևէ արձանագրություն չի գրվել: Արփենիի գերեզմանատան խաչքարի հովանավորը՝ 1931թ. ծնված Հովսեփ Մարտինի Ենգոյանը, մի բանաստեղծություն է գրել, որում արտահայտել է գենետիկ հիշողությամբ իրեն անցած այն մեծ ցավը, որը պարուրել է վերապրածի սերունդ Հովսեփ պապիկին.

*«Այս սուրբ խաչքարը պատվո հուշարձան,  
Անմեղ զոհերին գյուղի հանրության,  
Հանուն մարդկության ազգի կեցության,  
Անսուջ պապերին հարգանք հավիտյան:  
Այս խաչքարի տակ անմեղ էակներ,  
Ընտանիքի հայր, որդի ու եղբայր,  
Դուռը դռան կից, հարևան, դրկից,  
Մեկ-մեկ սպանված, հոշոտված թաղված:  
Մարված օջախներ, մարդկանց դիակներ,  
Անքանակ ողբեր, դառն արտասուքներ,  
Սովամահ համայնք, տանջանք, տառապանք,*

Ստորացված մարդ, գազազած համայնք:  
 Ռանչպար մարդիկ, անմեղ գյուղացիք,  
 Արյան մեջ շաղված, փողոցում թափված,  
 Լաց ու արտասուք, ողբ ու աղերսանք,  
 Աստծուն պաղատում, գոնե մի փրկանք:  
 Սոսկալի վիճակ, բռնություն, տանջանք,  
 Սուք ու վայնասուն, մարդկանց աղաղակ,  
 Անարժան պատիժ, անպատիվ վարմունք,  
 Խուժան ավազակ թուրքի արարմունք:  
 Սպիտակ ձյունը կարմիր էր կապել,  
 Սևացած սրտերին սև ու սուգ պատել,  
 Թշվառ մայրերը արյուն են լացել,  
 Հույսերը հատված, Աստծուն մոռացել:  
 Գյուղի շները գիշեր էին զալիս,  
 Տիրոջ դիակը հոտոտում, լալիս,  
 Գիշատիչ թռչուններն էին պտույտներ տալիս,  
 Թուրքերի նման, ավարի համար կտց-կռիվ տալիս»:

1918-1920թթ. Եղեռնին նվիրված չափաժո ստեղծագործություններից բացի, մեծաթիվ են նաև փաստավավերագրական, պատմական և գիտահանրամատչելի բնույթի հուշապատումները: Կարսի անկման մասին իր հուշերում գրում է եպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը: Հոկտեմբերի 20-ին՝ առավոտյան ժամը 10-ի մոտերը, գեներալ Փիրումյանի հեռախոսակապը բերդի պահականոցի հետ ընդհատվում է: Գեներալ Փիրումյանը եպիսկոպոսի օգնությամբ, անթացույր թևի տակ, հասնում է շտաբ, և այնտեղ ամեն ինչ պարզվում է միանգամից. գիշերը թուրքերն անակնկալ հարձակվել են հայոց գործի վրա, վերջիններս լքել էին իրենց դիրքերը և փախել, գնդապետ Մազմանյանը հուսահատությունից ինքնասպանություն էր գործել, քաղաքի բնակչությունը, հանկարծակիի եկած մեր գործի փախուստից, ենթարկվում է անասելի խուճապի. փախչում են ով ինչով կարող էր՝ կառքերով, ձիերով, շատերը, բեռներն ու երեխաներին շալակած, փախչում էին դեպի շտաբի ձորը՝ այնտեղ որպես թե պաշտպանություն գտնելու կամ դեպի Ալեքսանդրապոլ փախչելու: Ստեղծված իրադրության մեջ անպաշտպան քաղաքացիների կյանքը փրկելու համար Գ.Հովսեփյանը գեներալ Փիրում-

յանին խորհուրդ է տալիս անձնատուր լինել: Քաղաք ուղարկված բանագնացները չեն կարողանում քաղաք մտնել համազարկերի պատճառով: Այդ ժամանակ Փիրումյանը դիմում է եպիսկոպոսին. «Սրբազա՛ն, մի բան պետք է դուք փորձեք, անձամբ պետք է բերդի գլուխը բարձրանաք և հայտնեք մեր անձնատվությունը: Այդ պիտի կատարեք ժողովրդի կյանքը փրկելու համար»: Եպիսկոպոսը, առանց տատանվելու, հայտնում է իր պատրաստակամությունը... Ձորից պիտի բարձրանային բերդի գլուխը՝ լեռնաշղթայի բարձունքը... Բանագնացներին է մոտենում ճակատի թուրք հրամանատարը, և եպիսկոպոսը դիմում է նրան. «Փաշա՛, պատերազմի մեջ ենք, հաղթող կա և հաղթվող. մենք հաղթված ենք և եկել ենք հայտնելու, թե մենք անձնատուր ենք լինում: Ահա, այնտեղ մեր հայ զինվորներին շրջապատել են ձերոնք: Կսպանե՛ք, գերի՛ կվերցնեք, ձեր գիտենալիքն է: Բայց ձորը, տեսնում եք, լցված է հասարակ քաղաքացիներով. կանայք, անմեղ երեխաներ, այնտեղ են մեր որբանոցները: Զինվորականը որքան քաջ, նույնչափ վեհանձն, գթոտ պիտի լինի: Դիմում ենք ձեր մարդասիրությանը և խնդրում դադարեցնել կրակը»: Գնդապետը ձեռքով նշան է անում, և կրակը դադարում է<sup>1</sup>:

Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի՝ Հասմիկ Ափիսյանի ֆոնդում են պահպանվում 1920թ. Կարսի անփառունակ անկման ժամանակ ինքնասպանություն գործած Մազմանովի մասին ողբերգի երեք քառատողերը, որոնք ձայնագրել է Հասմիկ Ափիսյանը 2001թ. Յունեսկոյի «Աշխարհի հիշողությունը» ֆոլկլորի պահպանման միջազգային ծրագրի շրջանակներում: Այս ողբերգը տարածված է եղել Շիրակի գրեթե բոլոր գյուղերում և Գյումրիում: Առաջին երկու քառատողերը երգել է Շիրակի մարզի Երազգավորս գյուղի բնակիչ Վոլոդյա Խանոյանը.

*«Մազմանովը գրեց Ղարսից հրաման,  
Բնչան որ հայեր կան, թող հավաքվեն գան,  
Միս, անաստված հայեր, դիվիդ կոտորվեիք,*

<sup>1</sup> Գ.Յովսեփեան, Կենսագրական նոթեր, Սահակ-Մեսրոպ, Գահիրե, 1945, տե՛ս Ս.Բ.Հարությունյան, Ս.Ա. Վարդանյան և ուրիշներ, Կարս: Հայոց բանահյուսական մշակույթը, Ներածական խոսք Սարգիս Հարությունյանի, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 17-22:

*Մազմանովի դիակը թուրքին չթողնեիք:  
Մազմանովը քաշեց ատրճանակը,  
Բզուր տեղը գոհեց ջահել ջանդակը:  
Ախ, անաստված հայեր, դիպիդ կոտորվեիք,  
Մազմանովի դիակը թուրքին չթողնեիք»:*

Երգի երրորդ քառատողը երգել է Մարմաշենի բնակիչ Արաք-սի Պետրոսի Վարդանյանը.

*«Մազմանովին բերին, դրին Ղարսի ստանցին,  
Անաստված հայերը թողին գնացին:  
Ախ, անաստված հայեր, դիպիդ կոտորվեք,  
Մազմանովի դիակը Ղարսում չթողնեք»:*

Այս առումով անգնահատելի տեղեկություններ է հաղորդում եղեռնը վերապրած Աղասի Ալեքսանի Մակարյանը իր «Հիշողություն մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից» հուշապատումում: Աղասի Մակարյանի հուշապատումը գրվել է 1915թ. Մեծ եղեռնից 61 տարի անց՝ 1976թ.: Հուշապատումն ամբողջական է, բաղկացած է 69 մեքենագիր էջերից: Աղասին ծնվել է 1904թ. Շիրակի Ջաջուռ<sup>2</sup> գյուղում, որն ինը կմ է հեռու Գյումրի քաղաքից: Ականատես-վկան 1918թ. կոտորածների ժամանակ եղել է 14 տարեկան պատանի: Ուշագրավ է վերապրածի դիմելաձևը մեզ. *«Այս փոքրիկ աշխատանքը գրում եմ մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից որպես հիշողություն, որը, իմ կարծիքով, օգտակար և հետաքրքիր կլինի սերունդներին՝ մասնավորապես երիտասարդության համար, մանավանդ, որ այն առնչված է իմ ժամանակի քաղաքական ու հասարակական անցուղարձի հետ»*: Նաև հետաքրքիր է վերապրածը Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի և Կարսի մարզի մի շարք գյուղերին, Կարս քաղաքին վերաբերող պատմական, աշխարհագրական և ազգագրական բնույթի տվյալներով ու տեղեկություններով հիշողությունները համալրելու և հարստացնելու փորձը: Նա իր հուշեր է ընդգրկել նաև իր ընկեր-

<sup>2</sup> Թ.Խ.Հակոբյան, Ստ.Տ. Մելիք-Բախյան, Հ.Խ. Բաբսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (ՀՏԲ), 5 հատորով, հ. 4, ԵՀ հրատ., Եր., 1998, էջ 388, 389:

ների, ազգականների, մերձավորների, հարևանների, անգամ թուրքերի երկխոսությունները և հուշերի փոքրիկ պատառիկներ, որոնք անգին տեղեկություններ են պարունակում պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, ազգագրական և կրթական առումով: Վերապրածն իր առաջ խնդիր է դնում ներկայացնելու իր տոհմի տոհմածառը և խոր ցավ ապրում թուրքերի ջարդերի զոհը դարձած տոհմակիցների ճակատագիրը ներկայացնելիս: Հիշողություններում կարևոր տեղեկություններ կան 1918թ. Ադրուլաղից Ջաջուռ տանող ճանապարհին խաղաղ բնակչության շարքերում գտնվող թուրքերի կողմից գերի տարված տղամարդկանց քանակի մասին, երբ գերի տարված 12000 հայ տղամարդկանցից խորհրդային կառավարության պահանջով 1920թ. վերադարձել են ընդամենը 300 մարդ: Ա.Մակարյանը գրում է. *«Վերադարձի ճանապարհին, որն անցնում էր Ջաջուռի լեռնանցքով դեպի Ալեքսանդրապոլ տանող խճուղով, թուրքական հրամանատարությունը գաղթողների շարքերից առանձնացնում է բոլոր երիտասարդ հայ տղամարդկանց և տանում դեպի Ալեքսանդրապոլ որպես գերի: Եղած տվյալներով և գերությունից վերադարձած կոմունիստ, ներկայումս Երևան քաղաքի բնակիչ Բարսեղ Ավետիսյանի պատմելով, 12000 գերիներից 1920թ. Հայաստան են վերադարձել ընդամենը 300 մարդ, այդ թվում ինքը՝ Ավետիսյանը, այն էլ հիվանդ ու կիսակենդան վիճակում: Մնացածը Սարիղամիշի և Էրզրումի ճանապարհին քաղցի և խոշտանգումների հետևանքով ուժասպառ են եղել ու մահացել: Ըստ վկաների՝ գերիներից շատերը կիսամեռ վիճակում էին, ավելի բարվոք վիճակում գտնվողները իրենց ձեռքով ճանապարհներին փոսեր էին փորում ու թաղում էին մեռածներին ու մեռնողներին: Մեր ընտանիքը մնաց Ջաջուռ գյուղում մինչև 1919թ. օսմանյան զորքերի Արևելյան Հայաստանից քաշվելը, որից հետո նորից վերադարձանք Ղարսի շրջանի Մամաշ գյուղը»:* Վերապրածը հիշում է նաև դեպքեր և փաստեր, որոնք վերաբերում են 1920թ., Մուստաֆա Քեմալի արշավանքին և հայ-թուրքական պատերազմին, Ալեքսանդրապոլի գավառի հայերի կոտորածներին Հեգեզի ձորում՝ ժողովրդի լեզվով «Ջարդի ձոր» կոչվող ձորակում: Այս ջարդերը նա որակավորում է ոչ միայն որպես իր գերդաստանի ողբերգական ճակատագիր, այլև որպես հայոց պատմության ողբերգական էջ և պատմության խոշոր ոճրագործություն: *«Օսմանյան դահիճները 1920թ. Ադրուլաղ գյուղի*



ամբողջ բնակչությանը՝ կանանց ու երեխաներին, այս թվում գյուղում եղած գաղթականությանը գյուղից խաբելով դուրս են բերում, թե տանում են Ալեքսանդրապոլ, իբր այնտեղ նրանց կերակրելու նպատակով: Այսպես Ադրբուլաղ-Ալեքսանդրապոլ տանող խճուղով բնակչությանը հասցնում են մինչև Ջաջուռի լեռնանցքը, ամբողջ ժողովրդին նստեցնում են Մկո քաղոն կոչվող սարի ստորոտում: Խաբում են, թե նստեք հանգստանալու: Դահիճների կողմից նախօրոք նախապատրաստված է եղել նրանց սպանության հարցը: Օսմանյան զորքերը գնդացիների և հրացանների կրակոցով կոտորում են անմեղ բնակչությանը: Ադրբուլաղ գյուղի և նրանց հետ եղած նահատակները թաղված են Գեդյուկի եղբայրական գերեզմանում<sup>3</sup>: Հիշողություններում կարևոր տեղեկություններ կան Կարսի ամերիկյան որբանոցի, Արգինեի կիրճում կազմակերպված զանգվածային կոտորածների, 1921թ. Ալեքսանդրապոլը լքելու ժամանակ Սև դուլի տարածքում ցարական Ռուսաստանի գույքը թալանելու մասին: «Օսմանյան զորքերի և խուժան թուրքերի գնդակները հնձում էին փախստականներին, գրում է Մակարյանը, գնդակների ցանցից դուրս պրծնելու համար, ժողովուրդը խնդրում էր ամերիկացիներին, որպեսզի թույլ տան, որ ժողովուրդը մտնի որբանոցի շենքը: Մակայն նրանք մտրակը ձեռքերին ծեծում էին ներս մտնել ցանկացողներին, շատերի գլուխները կոտորում ու արգելում էին մտնել որբանոցի շենքը: Մակայն ժողովրդի ալիքը այնքան մեծացավ, որ նրանք այլևս չկարողացան դիմադրել և բոլորը լցվեցին շենք, այդ թվում և մեր ընտանիքը: Ղարադաղի ամրոցի կողմից եկող թուրքերի գնդակները սպանում ու վիրավորում էին ճանապարհներին ու փողոցներում գտնվող գաղթականներին: Գնդակները նույնիսկ թափանցում էին որբանոցի լուսամուտներից ներս ու սպանում և վերքեր հասցնում ինչպես որբերին, նույնպես էլ այստեղ ապաստանած հայ ժողովրդին: Որբերը, կանայք ու երեխաները բոլորը լաց էին լինում: Այստեղ է ասված. «Մերը մոռացության է տվել զմանուկն»: Ներխուժելով քաղաք՝ ասկյարները մտան որբանոցի շենքը, սկսեցին սպիանահարել ու գնդակահարել ժողովրդին, հենց այստեղ էլ, մեր աչքերի առաջ սվինով ու հրացանի կրակոցով

<sup>3</sup> Գեդյուկ, Գյաղուկ, Գեդյուկ-սատանա, չարք բառից: Ժողովրդական լեզվով այսպես է մինչ օրս անվանվում Ջաջուռի լեռնանցքի մի հատվածը՝ «Ջարդի ձորի» հուշարձանից ոչ հեռու:

հիսունյոթ տարեկան հասակում սպանվեց հայրիկս՝ Ալեքսանը և երեսուն տարեկան հասակում ավագ եղբայրս՝ Լևոնը, որոնք անմեղ ու անզեն կանգնած էին որբանոցի շենքում»։ Խիստ ողբերգական են Ղարսից մագապուրծ լինելու պահերը, որոնք ուղեկցվում են գեղեցիկ հայուհու առնանգամբ. «1921թ. մարտ ամսին... Ղարսի սաստիկ ցրտից դողալով՝ սոված ու կիսամերկ, ահի ու երկյուղի մեջ դուրս եկանք տնից ու ասկյարների ուղեկցությամբ քայլեցինք դեպի երկաթուղային կայարան։ Կայարանում հավաքված էր հայ ընտանիքների մեծ բազմություն, մարդիկ մեկը մյուսի հետ խոսում էին և հազար ու մի եզրակացություններ անում։ Յուրտն ու քաղցր մոռացության էին տալիս ամեն ինչ։ Կայարանում գտնվող երեխաների լացն ու մայրերի մորմոքը և այս անորոշ վիճակը բոլորիս մոլորության մեջ էր գցել։ Այսպես մնացինք երեք-չորս ժամ, եթե այս վիճակը ավելի երկարեր, ապա ժողովրդի մեծ մասը կմեռներ կայարանի պատերի տակ ու անգամ հավաքող չէր լինի։ Սպասումներից հետո կայարանի վերջին գծում կանգնեց ապրանքատար մի գնացք։ Թուրք պաշտոնյաները և զինվորները հայերին բաժանեցին խմբերի և լցրին ապրանքատար վագոնները։ Այդ վագոնները գտնվում էին սարսափելի հակասանիտարական վիճակում։ Յուրաքանչյուր վագոնում լցրեցին այնքան մարդ, որ նստելու տեղ չկար, շատերը մնացին ոտքի վրա կանգնած։ Մարդկանց խտությունից և վագոնների դռների փակվելուց հետո մի քիչ տաքացանք ու ազատվեցինք ցրտամահ լինելուց։ Վագոններում նույնպես սաստկացան խոսակցությունները, մեկն ասում էր. «Մեզ տանում են Թուրքիա մեր հավատքը փոխելու համար»։ Մեկ ուրիշը պնդում էր թե՛ «Տանում են Գյումրի»։ Երրորդն ասում էր. «Ո՛չ Թուրքիա են տանում և ո՛չ էլ Գյումրի, այլ քաղաքից դուրս են հանում կոտորելու համար»։ Միրելի ընթերցող, այսպիսի պայմաններում ինչպիսին կլինի մարդկանց հոգեվիճակը, բառեր չեմ գտնում նկարագրելու համար։ Վագոններում, վերջապես, ժողովրդի նյարդերը ծայր աստիճան քայքայվեցին։ Այստեղ է, որ ասում են. «Կան բուպեներ, որոնք դար արժեն և երբեք չեն մոռացվում»։ Նման մոտորումների պահին հանկարծ գնացքը շարժվեց։ Վագոնների դռների արանքից նայում էինք, թե գնացքը դեպի որ կողմ է գնում։ Մարդիկ որոշ չափով գոտեպնդվեցին, երբ զգացին, որ գնացքը Ալեքսանդրապոլի կողմն է շարժվում։ Այստեղ մեր ուրախությունը երկար չտևեց,

գնացքը Ղարս կայարանից շարժվելուց երեսուն րոպե հետո կանգ առավ Ղարադաղ սարի դիմաց՝ չոլի<sup>4</sup> մեջտեղում։ Այստեղ ժողովրդի մեջ իրարանցում սկսվեց, կարծես հաստատվեց այն վարկածը, թե ժողովրդին քաղաքից հանում են կոտորելու համար։ Այդ գոռուն-գոյունի ժամանակ հանկարծ բացվեց մեր վագոնի դուռը և ոտքից գլուխ զինված երեք ասկյար բարձրացան վագոն։ Այս պահին ժողովուրդը ինքնամոռացության աստիճանի հասավ, իսկ ասկյարները մարդկանց թներից քաշում էին, կոպիտ կերպով հրմշտում էին այս ու այն կողմ, կոպտում մարդկանց ու փնտրում էին ինչ-որ մեկին։ Վերջապես նրանք կանգնեցին մի աղջկա գլխավերևում։ Նրան, բռնելով ոտքերից ու ձեռքերից, քաշքշելով վագոնից դուրս տարան։ Մյուս կողմից աղջկա մայրը, աղջկա հագուստներից բռնած, ողբալով դեպի իրեն էր քաշում։ Ասկյարներին հաջողվեց աղջկան վագոնից դուրս հանել։ Դաշտի մեջ փաշայի հետ կանգնած էին տաս-տասներկու ձիավոր և սպասում էին ասկյարներին։ Վագոնում ոչ-որ չէր տեսել, թե այդ նրբագեղ, լայն կրծքով ու պայծառ աչքերով աղջիկը երբ էր բարձրացել վագոն։ Այսպիսով ասկյարները աղջկան իջեցրին վագոնից, նստեցրին փաշայի ձիու թամբին ու վերադարձան դեպի Ղարս, իսկ գնացքը շարժվեց Մագրա կայարանի ուղղությամբ։ Ուշ երեկոյան մենք հասանք Ալեքսանդրապոլ կայարանը»։ Գնացքի մեջ տեղի ունեցող դեպքերի մասին պատմում է Տիգրանանց Տիրունը<sup>5</sup>։ Մասնավորապես այն, որ միակ ողջ մնացած զավակը գնացքի մեջ մահանում է խոլերայից, և տղայի դիակը ստիպված դուրս են գցում գնացքից։ Վերլուծելով կոտորածների տասնյակ փաստեր՝ կարելի է եզրակացնել, որ եթե օրիորդին չգտնեին, ապա խիստ հավանական է, որ կկոտորեին վագոններում եղած բոլոր հայերին։ Նման դեպքերում, եթե զոհին չէին գտնում, կոտորում էին նրան թաքցնողներին, այնպես որ փրկվածներն իրենց կյանքով հավանաբար պարտական էին այս հայրուհուն։ Սակայն ամենահուզիչն է վերապրածի՝ այսքան հոգեկան ապրումներից և ծանր կորուստներից հետո արտահայտած հետևյալ միտքը, որ ներկայացնում է հայրենիքը և հայրենի տունը

<sup>4</sup> Բառացի՝ դատարկություն, ազատ տարածություն։

<sup>5</sup> Ժենյա Մկրտչյանի հուշերից։ Տե՛ս Վազգեն Հախոյան, 1920թ. կոտորածները Կարսի մարզում և Ալեքսանդրապոլի գավառում, Վանաձոր, Արմինֆո, 2014, էջ 50։

կորցրած մարդու սրտի ցավն ու ծանր հոգեվիճակը. «Մայրս Ջաջուռում է, հայրս Ղարսում, իսկ ես ինչպես մի կամուրջ ընկած եմ երկուսի մեջտեղում, - գրում է նա: -Արդյոք կտեսնեմ Ղարսը Գյումրուն միացած: Մահն էլ Ղարսում ինձ համար մուրազ է»: Այս խոսքերով է նա վերջացնում հուշապատման ամենաողբերգական գլուխը:

INGA AVAGYAN (ARMENIA)

**“FROM THE HISTORY OF OUR FAMILY”  
(MEMORIES OF AGHASI A. MAKARYAN)**

The article presents one of series of “ Those who have survived Great Genocide” where the memories of Aghas A. Makaryan’s “From the history of our family” will be published for the 100<sup>th</sup> anniversary of Genocide. The memories consist of 69 printed pages and contain important information and facts about historical events of 1918-20 and presents the scales of that drastic tragedy. During the Armenian- Turkish war of 1918 Aghasi A. Makaryan was 14 years old. Barely escaping from hunger and cold of death of 1920, his family moved from Kars to Jajur and settled there /which is near Gyumri/. The memoirs were written in 1976. Throughout his life Aghasi Makaryan has psychologically tried to overcome the horrors of the past, but it is not only for him, it is for the survivors of the Genocide as well, but unfortunately it is practically impossible.

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԵՄԱՆ  
ԱՐԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

Մեծ եղեռնի եւ յետ եղեռնի օրերը հայ ժողովուրդի պատմութեան ամենադառն օրերն են:

Մէկ դարու տեւողութեան վրայ երկարող այս ժամանակահատուածը, անկասկած, իր հարազատ դրսեւորումը պիտի ունենար ոչ միայն հայ, այլ նաեւ Հայաստանի մօտ կամ հեռու այլ երկիրներու եւ

Ժողովուրդներու վրայ եւս: Այդ երկիրներէն մասնաւոր յիշատակութեան արժանի է Սուրիան, ուր մեծաթիւ հայ աքաղաղականներ Մեծ եղեռնի օրերուն կայք հաստատեցին եւ հարիւրամեակ մը ամբողջ ապրեցան այնտեղ՝ փորձելով պահել իրենց ինքնութիւնն ու ազգային դիմագիծը:

Առաջին աշխարհամարտի եւ Հայոց ցեղասպանութեան առնչուող դէպքերն ու եղելութիւնները հայ ժողովուրդի պատմութեան կարեւորագոյն իրադարձութիւններն են, բայց եւ այնպէս, անոնք միաժամանակ անքակտելի մասնիկներն են արաբական արեւելքի երկիրներուն եւ արաբ ժողովուրդի ժամանակակից պատմութեան, ու այս այն պարզ պատճառով որ Հայոց ցեղասպանութեան երկրորդ փուլը տեղի ունեցաւ նոյնի՝ նքն արաբական հողի վրայ, սուրիական անապատին ու անոր շրջակայ վայրերուն մէջ, հետեւաբար այդ բոլոր դէպքերը իրենց անդրադարձը պիտի ունենային նաեւ արաբական գրականութեան վրայ:

Հայու կերպարը արաբական գրականութեան մէջ այնքան ալ նոր չէ սակայն: Միջնադարուն, բազմաթիւ արաբ գրողներ, իրենց գեղարուեստական գործերուն մէջ յիշած են Հայաստանն ու հայերը եւ շատ յաճախ մեծ գովեստով արտայայտուած են անոնց մասին:

Ունինք օրինակ բանաստեղծութիւններու գողտրիկ շարք մը, ուր յիշատակուած են Պատմական Հայաստանի տարբեր բնակավայրեր, ինչպէս նաեւ՝ հայ կամ ծագումով հայ քաղաքական-գիւղութեան գործիչներ, որոնց գովքը հիւսած են միջնադարու արաբ բանաստեղծները ու նկարագրած են անոնց հերոսութիւններն ու առաքինութիւնները:

XIX դարու երկրորդ կիսուն եւ XX դարու առաջին տասնամեակներուն, երբ ծնունդ առին արաբական վէպն ու պատմուածքը, նոր ժամանակի արաբ գրողները իրենց գործերուն մէջ սկսան ստեղծել հայ կերպարներ ու անդրադառնալ հայութիւնը յուզող զանազան թեմաներու, բայց եւ այնպէս, ցեղասպանութիւնն ու անոր հետեւանքները մնացին հայութեան առնչուող թեմաներուն գլխաւորները:

Տասնամեակներու վրայ երկարող ժամանակահատուածի մը ընթացքին, արաբական գրականութեան մէջ սկսաւ ձեւաւորուիլ նոր հերոս մը՝ արաբական երկիրներու քաղաքացի հայը, կամ ընդհանրապէս՝ հայ անհատը:

Իրենց գործերուն մէջ հայ կերպարներ ստեղծած եւ հայկական թեմաներ մշակած են արաբական արդի գրականութեան հոյլ մը անուանի դէմքեր, ինչպէս՝ Ուալիուտտին Եականը, Մուսթաֆա Լութֆի Ալ Մանֆալութին, Մաքրուֆ Ալ Ռուսաֆին, Հայր Անաստաս Մարի Ալ Քարմալին, Բժ. Ապտուլ Սալամ Ալ Ուճէյին, Հայտար Հայտարը, Իպրահիմ Ալ Քաունին, Իհսան Ապտուլ Քատտուսը, Նաճիպ Մահֆուզը, Սաիտ Աքըրը, Ապտուլ Ռահման Մունիֆը, Հաննա Մինէն, Ատոնիսը, Ղալէպ Թաքմէ Ֆարմանը, Ուալիտ Իխլասին, Մուհամմէտ Ճըպրիլը, Նապիլ Սուլէյմանը եւ շատ ու շատ ուրիշներ:

Այս գրողները կու գան աշխարհագրական ընդարձակ տարածքէ մը, որուն գլխաւոր օրրանը առաջին հայ աքսորականները պատսպարող Սուրիան է, ուրկէ կը տարածուի դէպի Լիբանան, Եգիպտոս, Իրաք, Պաղեստին, Յորդանան, Մէլուտական Արաբիա, Լիպիա եւ արաբական սփիւռքի այլ երկիրներ:

Սակայն որքան հեռանանք Սուրիայէն, այնքան աւելի կը նօսրանայ հայկական թեման արծարծող արաբ գրողներու թիւը: Տասնեակներով սուրիացի ու լիբանանցի գրողներու կողքին, դժուար թէ գտնուի արաբական արեւմուտքէն՝ Մարոքէն, Թունուսէն, Ալճերիայէն կամ Մուսաննէն արաբ գրող մը, որ իր գործերուն մէջ շօշափած ըլլայ հայկական թեմաներ: Ու այս, ո՛չ միայն անոր համար որ այդ երկիրներուն մէջ գոյութիւն չեն ունեցած հայկական գաղթօճախներ, եւ տեղւոյն ժողովուրդները, ի տարբերութիւն արաբական արեւելքի երկիրներու ժողովուրդներուն, ուղղակիօրէն կապի մէջ չեն եղած հայերու հետ, այլ նաեւ անոր համար, որ այդ երկիրները հեռու եղած են Առաջին աշխարհամարտի անցուդարձերէն եւ անոնց մօտ թուրքերու հանդէպ տաժուած ատելութիւնը եղած է աւելի մեղմ: Պատճառը, որովհետեւ անոնք արաբական արեւելքի երկիրներէն շատ աւելի առաջ թօթափած են թրքական լուծը եւ դուրս եկած անոր քաղաքական ազդեցութեան ոլորտներէն, դարձած են ինքնիշխան եւ կամ՝ ենթարկուած եւրոպական տէրութիւններու ազդեցութեանց:

Արաբ գրողներէն շատեր անդրադարձած են հայկական թեմային որպէս Առաջին աշխարհամարտի օրերուն արաբական երկիրներու պատմութեան առնչուող դրուագ կամ արաբներու դրացիութեամբ ապրող եւ նոյն ընկերութեան մաս կազմող անհատներու եւ հաւաքականութիւններու պատմութեան մէկ մասնիկը, ուրիշներ՝

գրած են առանց նիւթին մէջ խորանալու, անցողակի ու մակերեսային կերպով, բայց կան նաեւ գրողներ, որոնք ամբողջական գործեր նուիրած են Հայոց ցեղասպանութեան եւ իրենց գործերուն մէջ հայ ժողովուրդն ու անոր ենթարկուած ցեղասպանութիւնը եղած են առանցքային ներկայութիւն:

Խօսքը, բնականաբար, արաբերէնով ստեղծուած գեղարուեստական գրականութեան մասին է եւ ոչ թէ յուշագրութեան կամ պատմագրութեան: Որքան ալ զարմանալի թուի այս մէկը, սակայն եւ այնպէս հաստատ իրողութիւն է, որ շատ քիչ են ուղղակիօրէն կոտորածներուն առնչուող արաբ ականատեսներու յուշագրութիւն-վկայագրութիւնները, հակառակ անոր որ անոնցմէ շատեր, Սուրիական անապատին մէջ ուղղակիի ականատեսներն էին տեղի ունեցած բարբարոսութիւններուն:

Որպէս ցեղասպանութեան արաբ ականատես-վկայ, ունինք Ֆայէզ Ալ Ղուէյնի յուշագրական ծանօթ գրքոյկը՝ *Կոտորածները Հայաստանի Մէջ* (Գահիրէ, 1917), Ժողէֆ Թաութէլի տէր զօրեան յուշերը եւ քանի մը փոքրիկ այլ գրառումներ միայն, մինչդեռ ակնկալելի էր որ կոտորածներու թեմայով արաբ յուշագիրներուն թիւը անհամեմատ ըլլար մեծ եւ անոնց գործերը ըլլային առաւել բազմաբնոյթ ու վաւերագրական:

Պէտք է ըսել սակայն, որ արաբ ականատեսներուն ձգած բացը մասամբ դարմանած են գեղարուեստական գրականութիւն մշակողները, որոնք յաճախ անդրադարձած են հայասպանութեան թեմային եւ իրենց ստեղծագործութիւններով տուած են նկարագրութիւնը կոտորածներուն եւ հայ աստղաւորներու վիճակին: Զարմանալի չէ անշուշտ այս երեւոյթը, որովհետեւ, ինչպէս մեզի հետ ունեցած հարցազրոյցի մը ընթացքին պիտի հաստատէր Հայոց ցեղասպանութեան նուիրուած բազմաթիւ պատմութիւններու եւ վէպերու հեղինակ սուրիացի գրող Իպրահիմ Ալ Խալիլ, հայկական ցեղասպանութիւնը՝ «Շրջանի բնակչութեան ենթագիտակցութեան մէջ տեղ գտած է՝ զիրքերու եւ թերթերու մէջ գոյութիւն ունենալէ առաջ»<sup>1</sup>: Արաբ գրողներու մեծ հաստուածի մը մօտ, Հայոց ցեղասպանութեան թեման զիրքերէ փոխանցուած անծանօթ թեմա մը չէ եղած երբեք, այլ իրենց հայրերէն ու շրջապատէն իրենց փոխան-

---

<sup>1</sup> «Հարցազրոյց՝ Վիպագիր Ի. Խալիլի Հետ», «Ազդակ», Պէյրութ, 19 Նոյեմբեր, 1991, էջ 5:

ցուած իսկական իրադարձութիւններ, որոնց գեղարուեստակա-նօրէն մշակողներն ու թուղթին յանձնողները եղած են իրենք միայն:

Վիպագիր Իպրահիմ Ալ Խալիլը ունի ցեղասպանութեան նուիրուած տասնեակ պատմութիւններ եւ բազմաթիւ վէպեր, որոնք կ'որոագծեն Սուրիական անապատի կեանքն ու մանաւանդ իր ծննդավայր Ռազզայի մօտաւոր անցեալը, որոնց մէջ միշտ ալ, ուղղակի թէ անուղղակիօրէն արծարծուած է Հայոց ցեղասպանութեան թեման:

Իր գրական գործերէն զատ, Ալ Խալիլ ունի նաեւ գրական-վերլուծական հետաքրքրական ուսումնասիրութիւն մը՝ նուիրուած համաշխարհային գրականութեան մէջ թուրքի կերպարի դրսեւորումներուն, ուր եւս անդրադարձած է Հայոց ցեղասպանութեան թեմային:

Արժէ յիշել նաեւ ծագումով թուրք, արաբագիր Ուալիուտտին Եականը, որ իր *Յայտնին Ու Անյայտը* (Գահիրէ, 1909-1911) գիրքին առաջին հատորին մէջ ունի յօդուած մը՝ «Ազատութեան Մարտիրոս Մեր Հայ Եղբայրներուն Կոտորածները» խորագրով՝ նուիրուած համիտեան կոտորածներուն: Իսկ այս գիրքին երկրորդ հատորը ամբողջութեամբ նուիրած է Սեբաստիոյ իր եօթնամեայ աքսորին, ուր բազմաթիւ առիթներով դրուատական արտայայտութիւններ արձանագրած է տեղւոյն հայութեան հասցէին: Աւելի ետք, 1909-ի կիլիկեան կոտորածներու առիթով, Եական գրած է գեղեցիկ բանաստեղծութիւն մը՝ «Ողորմեցէ՛ք, ո՛վ սրտեր այս գոհերուն» սկզբնատողով, ապա նոյն առիթով գրած է կուռ յօդուած մը, որ արտաստուած է բազմիցս:

Ան իր *Հարիւր Եւ Մէկ Փաստ՝ Սուլթան Ապտուլ Համիտի Բռնակալութեան* գործին մէջ եւս յիշած է հայերը, եւ վերջապէս իր *Տիգրանն Ու Ռաէֆը* վէպին գլխաւոր հերոսներէն մէկն է հայագգի Տիգրանը:

Բազմաթիւ անգամներ հայ կերպարներ ստեղծած արաբ գրողներէն յիշենք նաեւ Բժ. Ապտուլ Սալամ Ալ Ուճէյլին, որ Գրիգոր Վրդ. Օհանեանի (Տէր Զենոբ) կերպարով գրած է չորս պատմութիւններ, իսկ իր վէպերուն մէջ մէկէ աւելի անգամներ անդրադարձած է Սուրիական անապատ ապաստանած հայու խլեակներուն:

Կայ նաեւ վիպագիր Ֆայսալ Խրդոշը, որուն *Գիշերուան Եւ*



*Յասմիկին Թերթերը* (Դամասկոս, 1994) վեպը ամբողջությամբ Հայոց ցեղասպանության նուիրուած արաբերէն առաջին վէպն է, որ կ'անդրադառնայ բռնագաղթի ենթարկուած գէթունցի ընտանիքի մը ողիսականին՝ Զէյթունէն Գոնիա, ապա Տէր Զօր եւ հուսկ՝ Հալէպ: Երկու այլ վէպերու եւ բազմաթիւ պատմուածքներու մէջ եւս Խրդոշ ունի հայ հերոսներ եւ հայաբոյր հատուածներ:

Արաբ գրողներու ստեղծած հայ կերպարները ընդհանրապէս եղած են դրական հերոսներ, բարի ու ազնիւ քաղաքացիներ, որոնք իրենց նպաստը բերած են արաբական երկիրներու վերելքին ու տնտեսութեան զարգացման, այնքան որ Սուրիական անապատի բազմաթիւ փոքրիկ բնակավայրեր, աքսորական հայերու շնորհիւ տասնամեակներու ընթացքին վերածուած են շէն գիւղերու, իսկ գիւղեր՝ ընդարձակուելով դարձած են բազմամարդ քաղաքներ: Աքսորական այդ հայերը եղած են աշխատասէր, պարկէշտ, հաւատարիմ, գործունէայ, ճարպիկ ու վարպետ արհեստատրներ՝ մեքենագործներ, վարորդներ, ոսկերիչներ, լուսանկարիչներ, վաճառականներ եւ այլն, որոնք իրենց ամէնօրեայ հոգերուն մէջ չեն մոռցած իրենց մօտաւոր անցեալը, հայրենի եզերքը, իրենց արմատները, ու կարօտախտը մշտական կտտացող ներկայութիւն եղած է անոնց հոգիներուն մէջ: Անոնք նաեւ իրենց ազգու դերը ունեցած են արաբական այդ երկիրներու տնտեսութեան, ճարտարարուեստի, գիւղատնտեսութեան ու մշակոյթի զարգացման գործընթացին մէջ եւ բաժնեկիցները եղած են անոնց վերելքին:

Հայկական թեմաներով ստեղծուած արաբ գրողներու գործերը մեծամասնութեամբ կը վերաբերին կա՛մ ուղղակիօրէն ցեղասպանութեան ու անոր նկարագրութեան, եւ կամ անոր հետեւանքով արաբական երկիրներ ապաստանած հայ աքսորականներու կեանքին ու առօրեային: Անոնք մշակած են գրական բոլոր սեռերը՝ բանաստեղծութիւն, վէպ, պատմուածք, շատ կարճ պատմուածք, քրոնիկ, թատերգութիւն եւ այլն:

#### Ա. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Արաբերէնով հայոց ցեղասպանութեան նուիրուած տասնեակներով գեղեցիկ բանաստեղծութիւններ կան, որոնցմէ առաջինը հալէպցի բանաստեղծ Միխայիլ Անթուն Ալ Մաքքալի ընդարձակ քերթուածն է՝ գրուած համիտեան կոտորածներու անմիջական

տպաւորութեան տակ, որ հասկնալի պատճառներով հրատարակուած է աւելի ուշ, Համիտի անկումէն ետք միայն:

Առանձնապէս մեծ է թիւը 1909-ի կիլիկեան կոտորածներուն նուիրուած արաբերէն բանաստեղծութիւններուն:

Օսմանեան սահմանադրութենէն կարճ ժամանակ անց, արաբական Հալէպ նահանգի հարեւանութեամբ, եւ նոյնիսկ այդ նահանգի որոշ հայահոծ աւաններուն՝ Անտիոքի եւ Քեսապի մէջ տեղի ունեցած ջարդերը առատ նիւթ մատակարարած են արաբ բանաստեղծներուն, որոնք բազմաթիւ գործեր նուիրած են այդ եղելութեանց:

Մենք կրցած ենք ժամանակի պարբերական մամուլի էջերէն եւ զանազան քթոդագիրքերէ մէկտեղել կիլիկեան կոտորածներուն նուիրուած 10 արաբ գրողներու 14 բանաստեղծութիւններ, որոնց հեղինակները արաբական գրականութեան օրուայ մեծագոյն դեմքերէն էին եւ հրապարակի վրայ փայլող ծանօթ անուններ:

Այդ բանաստեղծութիւնները գրուած են խոր ընդվզումով ու ցասումով: Անոնցմէ մէկուն մէջ օրինակ, Սուլթան Համիտը նմանեցուած է Հոռմը այրող ու իր այդ արարքով զուարճացող Ներոն Կայսրին: Այլ տեղ արաբ-իսլամ Մաըրուֆ Ալ Ռուսաֆին ներդրութիւն խնդրած է այրիացեալ հայ կնոջմէն՝ իր կրօնակիցներուն գործած ոճիրներուն համար, մինչ ուրիշ մը, հալէպցի քրիստոնէայ Քոսթաքի Ալ Հոմսին գովքը հիւսած է իր համաքաղաքացի արաբ-իսլամներուն, անոր համար որ անոնք, ի տարբերութիւն Հալէպէն ոչ մեծ հեռաւորութեան վրայ գտնուող Անտիոքի թուրքերուն, տէր կանգնած են տեղոյն քրիստոնէաներուն եւ թոյլ չեն տուած որ բաժնեն Անտիոքի հայոց ճակատագիրը: Ուրիշ մը՝ իսլամ կրօնաւոր շէյխ Մուսթաֆա Լութֆի Ալ Մանֆալութին զայրացած է այն փաստէն, որ ջարդարարները իրենց ոճիրները գործելու ընթացքին յաճախ զայն գործած են յանուն Աստուծոյ, ու դիտել տուած է, որ Ան «Աւելի՛ վեհ է, քան՝ անմեղ մարդոց ջարդը հրամայելը» եւ պահանջած է որ ջարդարարներ ամէն առիթով իրենց շրթներուն չունենան Աստուծոյ սրբազան անունը:

Յիշենք նաեւ, որ սիւննի իսլամներու հոգեւոր բարձրագոյն պետը՝ Գահիրէի Ալ Ազհար մզկիթի մեծաւոր Շէյխ Սալիմ Ալ Պիշրին յատուկ յայտարարութեամբ դատապարտած է կիլիկեան կոտորածները եւ իր այդ արարքը օրին բարձր գնահատուած է բարեպաշտ

իսլամներու կողմէ: Տեղացի արաբ գրող մը բանաստեղծութիւնով մը ողջունած էր անոր այդ արարքը:

Հետաքրքրական է նաեւ այն երեւոյթը, որ բանաստեղծ ու հրապարակագիր Ուալիուտտին Եականի՝ կիլիկեան ջարդերու առիթով գրած ու վերել յիշատակուած բանաստեղծութիւնը օրին այնքա՛ն բարձր գնահատուած է արաբ գրական շրջանակներու մօտ, որ քանի մը արաբ գրողներ բանաստեղծութիւններ ձօնած են այդ բանաստեղծութեան ու անոր հեղինակին:

Համիտեան կոտորածներուն նուիրուած արաբերէն միակ բանաստեղծութեան հեղինակը՝ Սիխայիլ Անթուն Ալ Սաքքալ, կիլիկեան կոտորածներուն առիթով ձայնը միացուցած է իր գրչեղբայրներուն եւ այդ առիթով գրած է երեք բանաստեղծութիւններ, որոնցմով կը սկսի 1911-ին լոյս ընծայած իր քերթողագիրքը:

Այս բանաստեղծութիւնները, իրենց գրական արժանիքներուն կողքին, պէտք է բարձր գնահատել նաեւ որպէս երեւոյթ, մանաւանդ որ, որքան որ ծանօթ է մեզի, կիլիկեան կոտորածներէն ներշնչուած չափածոյ գործեր կան միայն հայերէն լեզուով, որոնք այնքան ալ ստուար թիւ չեն ներկայացներ. ունինք Սիամանթոյի, Վարուժանի, Ռուբէն Սեւակի, Լեւոն Էսաճանեանի եւ քանի մը այլ հեղինակներէ բանաստեղծութիւններ միայն. այնպէս որ, արաբերէն այս 14 կամ հաւանաբար նաեւ աւելի բանաստեղծութիւններուն գոյութեան փաստը ինքնին չափազանց խօսուն է ու հետաքրքրական, մանաւանդ որ անոնք իրենց գեղեցկութեամբ եւ բանաստեղծականութեամբ չեն զիջիր իրենց հայերէն նմանակներուն:

1915 թուականի Հայոց Մեծ եղեռնը նոր առիթ հանդիսացաւ արաբ գրողներուն եւ անոնք պատմական այդ մեծ ողբերգութեան նուիրեցին բազմատասնեակ գեղեցիկ ու մնայուն բանաստեղծութիւններ եւ բանաստեղծական հատորներ, որոնցմէ արժէ յիշել Ֆարձ Ալլա Խուտայի «Տառապանք. Արիւնն Ու Բերանը» բանաստեղծութիւնը, մարոնիթ Հայր Պութրոս Ալ Աշքարի «Հայուհին», Միշէլ Սուլէյմանի «Արեան Շատրուանները», Մուհամմէտ Իթանիի «Հայաստանի Վերքերը», Մուին Պըսիսոյի «Երգ՝ Ուղուած Հայ Մանուկի Մը» եւ Ամալ Ճարրահի «Արեան Իւրաքանչիւր Կաթիլ Ծաղիկ Մըն Է» բանաստեղծութիւնները, Ուալիտ Մուշաուուէիի Կոմիտասի նուիրուած գործը, Ամէր Ալ Տըպըքի «Երգ Սասունին»ը, Սաբպ Ահմատ Սաբպի «Արթին Կը Հարցադրէ Անապատը» գործը, Ահմատ

Ալ Տրեյսի *Ո՛վ Գեղեցիկ Հայորդի* ժողովածուն (Հալեյ), Հատի Մուրատի *Ապրող Հայերը* բանաստեղծական ժողովածուն (Պէյրուք, 2015), Ատոնիսի «Դէպի Ո՛ւր Կը Նաւարկես Ով Նոյեան Տապան»ը եւ դեռ շատ ու շատ ուրիշ գործեր: Արաբ բանաստեղծներու՝ Հայոց ցեղասպանութեան եւ հայ-թրքական հակամարտութեան թեմային շուրջ վերջին արտայայտութիւնները եղան արցախեան ազատամարտի եւ Հրանդ Տինքի նահատակութեան անդրադարձները, որոնց նուիրուեցան քանի մը գործեր, ինչպէս՝ Մահմուտ Ալի Ալ Մալիտի «Ղարաբաղը Ժպիտ Սըն Է Քաղաքակրթութեան Դէմքին» խորագրով բանաստեղծութիւնը եւ Ալի Ճըմըա Ալ Քաուտի «Հրանդ Տինք»ը:

#### Բ. ԱՐՁԱԿ՝ ՎԷՊ ԵՒ ՊԱՏՄՈՒԾՔ

Հայոց ցեղասպանութեան թեմայով գրուած արաբերէն արձակ գործերը հարուստ են թէ՛ ընդարձակածաւալ եւ թէ՛ փոքրածաւալ ստեղծագործութիւններով: Առկայ են տասնեակներով պատմութեան եւ վէպեր, որոնք ամբողջութեամբ նուիրուած են ցեղասպանութեան թեմային, ինչպէս Իպրահիմ Ալ Խալիլի բազմաթիւ գործերը, Ֆայսալ Խուրդոշի *Գիշերուան Եւ Յասմիկին Թերթերը* վէպը, Մուհամմետ Ռաշիտ Ալ Ռուլլիի *Սուրէն* (Դամասկոս, 2005) վէպը, վիպագրուիներ՝ Մայսուն Ասատիի *Հայոց Բռնագաղթերը* (Պաղեստին, 2015) եւ Մարի Ռաշոյի *Քոլերայի Դուստրը* (Պէյրուք, 2009) վէպերը, երեք հայուիներու՝ Սիմա Քէշիշեանի *Յիշողութիւն Սը Հայկական Կոտորածներէն* (Պէյրուք, 2007) եւ *Թիւ 570 Գոգնոցը* (Պէյրուք, 2009), Ռեքեքա Մելիքեանի *Մահուան Կարաւանը. Հայոց Կոտորածները* (Ամման, 2015) եւ պատանիներու համար գրուած Նաթալի Քէնտիրճեանի *Արմէնի Պատմութիւնը* (Պէյրուք, 1915) խորագրերով վէպերը, Ապտուլ Ազիզ Սըմահիի *Միմի. Հայաստանի Սպիտակ Ծաղիկը* (Գահիրէ, 2014) վէպը, վիպագիր Մուհամմետ Սամիր Ճըարայի ցեղասպանութեան նուիրուած *Կարօտի Թաղը (Մսավաճառներու Շուկան)* (Լաթաքիա, 2006) վէպը, Հանրիէթ Ապպուտիի *Յտեսութիւն, Մարտինը* (Պէյրուք, 2009), Նապիլ Մուլէյմանի *Արեւելքի Ծիրերը* (Լաթաքիա, 1990-1993) քառահատորեակի տարբեր մասերուն մէջ ցեղասպանութեան նուիրուած բազմաթիւ գլուխները, Մուհամմետ Շաքիպ Պաքըրի *Մարմնի Մնացորդներ. Հատուածներ Հայազգի Պողոսի Վարքէն* (Հալեյ, 2000) հատորը (վիպակ եւ բանաստեղծութիւններ), Մահմուտ Ալի Ալ Մալիտի՝ նա-

հատակ հայ գրողներու նուիրում շատ կարճ պատմութիւններու շարքը, Խալիլ Ճասէմ Ալ Հըմէտիի «Լէոր» եւ Ահմատ Սուէտանի «Հայերը Գաղթեցին» խորագրերով պատմութիւնները եւ շատ ու շատ ուրիշներ:

Կան նաեւ գործեր, որոնց մէջ հայասպանութիւնը ստեղծագործութեան գլխաւոր առանցքը չըլլալով հանդերձ, հեղինակը ուղղակի թէ անուղղակի կերպով անդրադարձած է այդ նիւթին՝ հայ կամ արաբ հերոսի մը յիշողութեան ընդմէջէն, կամ՝ հայ հերոսին արաբական երկիրներու մէջ յայտնուած ըլլալու գաղտնիքի բացայայտումին պատճառով եւ կամ այլ առիթներով:

Կարելի չէ առանձին-առանձին անդրադառնալ այդ բոլոր գործերուն կամ անոնց գեթ մէկ մասին, կամ աւելի ճիշդ՝ աւելի քան հարիւր հեղինակի՝ հազարաւոր էջեր կազմող այն գործերուն, ուր արծարծուած է հայասպանութեան թեման: Առաջին աշխարհամարտի տարիներուն մասին պատմող արաբերէն բազմաթիւ վէպեր, մանաւանդ՝ եթէ անոնք որպէս աշխարհագրական տարածք ընտրած են Սուրիան կամ անոր շրջակայ երկիրները, առաւել կամ նուազ չափով անդրադարձած են հայ արքայականներուն դէպի Սուրիա հոսքին եւ անապատի խուլ անկիւններուն մէջ իրագործուած սպանութիւններու դրուագներուն:

Կան հեղինակներ, որոնք մանրամասնութեամբ նկարագրած են ջարդերը, եւ շատ յաճախ ամէնայետին ճշգրտութեամբ եւ աշխարհագրական վայրերու յիշատակութեամբ, այնքան որ անոնց փոխանցած տեղեկութիւնները կրնան օգտակար ըլլալ նաեւ ցեղասպանութեան պատմութեամբ զբաղող պատմաբաններուն, որովհետեւ անոնցմէ շատերուն գործերը հիմնուած են ստույգ պատումներու, տեղացի ականատեսներու վկայութիւններու եւ սերունդէ սերունդ փոխանցուած յիշողութեանց վրայ:

Կոտորածներու նկարագրութեան առնթեր, ցեղասպանութեան թեման արծարծուած է նաեւ վերապրողներու յիշողութեանց ընդմէջէն, երբ արաբական երկիրներու քաղաքացի հայեր, ամէն առիթով, եւ յաճախ ցեղասպանութենէն տասնամեակներ ետք պատահող դէպքերու նկարագրութեան ժամանակ, կը վերյիշեն կոտորածները, կը վերյիշեն իրենց անցեալը, հայրենի տունը, պարտէզը, կ'ողբան հայրենիքին ու հարազատներուն կորուստը, կ'ապրին կարօտը այդ բոլորին ու ամէն առիթով չեն վարանիր պատմելու իրենց

վիճակուած ճակատագրին մասին: Անոնք չեն վարանիր խօսելու նաեւ օսմանցի *ասկէաքին*, թուրքին ու անոր գործած ոճիրներուն մասին, ու այս բոլորը դրդապատճառներ կը հանդիսանան արաբ հեղինակին, որպէսզի անդրադառնայ ցեղասպանութեան իրողութեան եւ յաճախ ընդհանուր նիւթէն շեղելով խօսի այդ դէպքերուն եւ ողբերգութիւններուն մասին:

Երբ կը կարդանք արաբ գրողներու այս գործերը, շատ յաճախ կը նկատենք որ նմանութիւն մը գոյութիւն ունի անոնց ստեղծած հայ հերոսներուն միջեւ, որոնք բազմաթիւ առանձնայատկութիւններով կը յիշեցնեն ու կ'ամբողջացնեն զիրար ու կը վերածուին ընդհանրական մէկ հերոսի ցեղասպանութեան ենթարկուած բայց անկէ հրաշքով վերապրած ստեղծագործ հայոյ կերպարին:

#### Գ. ԹԱՏՏՈՆ

Հայոց ցեղասպանութեան թեմայով առկայ են արաբերէնով գրուած ընդամենը քանի մը թատերգութիւններ, որոնցմէ կարելի է առանձնացնել Լուէյ Այյատէի *Մարդը, Որ Բնքն Իր Դէմ Պատերազմեցաւ* (Դամասկոս, 1983) եւ Մամտուհ Ատուանի երկու գործերը:

Այյատէի թատերգութիւնը նուիրուած է Սուրիական անապատ հասած հայ ընտանիքի մը պատմութեան, որուն քանի մը անդամները կը փրկուին տեղացի արաբներու պաշտպանութեան շնորհիւ, իսկ Ատուանի *Սէֆէր Պէրլիք. Անօթութեան Օրերը* (Դամասկոս, 1994) եւ Ճէմալ Փաշայի նուիրուած *Սաֆար Պարլիք- 2. Հրէշը (Սրիւնարքու Ճէմալ Փաշան)* (Դամասկոս, 1996) թատերգութիւնները կը պատմեն Առաջին աշխարհամարտի տարիներուն Սուրիոյ մէջ տեղի ունեցած անցուդարձերուն մասին, ուր բնականաբար մեծ տեղ յատկացուած է նաեւ հայոց կոտորածներուն: Հետաքրքրական է մանաւանդ այն փաստը, որ հեղինակը գրի առած ու իր հերոսներուն բերնով ներկայացուցած է պատմական այդ իրադարձութիւններուն նուիրուած եւ Սուրիական անապատի բարբառով ստեղծուած ժողովրդական բազմաթիւ երգեր, որոնց գոյութեան չենք հանդիպիր այլուր:

\* \* \*

Արաբ գրողներու՝ Հայոց ցեղասպանութեան թեմայով ստեղծած գործերը ունին ոչ միայն գրական-գեղարուեստական արժէք,

այլ նաեւ քաղաքական եւ ճանաչողական մեծ նշանակութիւն, մանաւանդ երբ ի մտի ունենանք այն իրողութիւնը, որ անոնց մեծ մասին հեղինակները կրօնակիցներն են ցեղասպանին ու եղած են անոր անմիջական հարեւանութեամբ ապրած ու ապրող մարդիկ, իսկ անոնցմէ քանի մը հատին երակներուն մէջ թուրքի արին հոսած է:

Պիտի չմոռնալ նաեւ այն փաստը, որ արաբներ իրենք եւս ամբողջ չորս դար «վայելած են» թուրքին թրքութիւնը՝ իր բոլոր անմարդկային դրսեւորումներով՝ հարստահարութիւն, կոտորած, կեղեքում, սպաննութիւն, աքսոր, հողային բռնագրաւում, անարդարութիւն եւ այլն, եւ այս իսկ պատճառով, ուրիշ ռեւէ ժողովուրդէ աւելի, իրենք է որ պիտի ըմբռնէին ճակատագրակից այլ ժողովուրդի մը ցաւն ու տառապանքը եւ պիտի գրէին այդ մասին:

Հայութեան հանդէպ արաբ գրողներու հետաքրքրութեան լաւագոյն դրսեւորումն է նաեւ այն փաստը, որ 1992 թուականին, երբ Հալէպի Հայ Դատի Յանձնախումբը գործակցութեամբ Արաբ Գրողներու Միութեան տեղոյն մասնաճիւղի վարչութեան, գրական մարցանք մը յայտարարած էր, որուն ներկայացուած գործերը պէտք է շօշափէին «հայ եւ արաբ ժողովուրդներու բարեկամութեան տարբեր դրսեւորումները եւ զոյգ ժողովուրդներու համատեղ տառապանքը», Սուրիոյ տարբեր շրջաններէն՝ Հալէպէն, Դամասկոսէն, Ռազգայէն, Տէր Ջօրէն, Լաթաքիայէն, Սուէտայէն, Գամիշլիէն, Հոմսէն, Համայէն, Պապէն, Թարթուսէն եւ այլ վայրերէ ներկայացուեցան 48 գրողներու 65 արձակ եւ չափածոյ ստեղծագործութիւններ (մրցանակի արժանացած գործերը, ինչպէս նաեւ յիշատակութեան արժանացած քանի մը այլ գործեր, օրին հրատարակուեցան *Արազիկներուն Գաղթը... Սիրոյ Երգեր Արարատին* (Լաթաքիա, 1993)<sup>2</sup> խորագիրը կրող ժողովածուով, որ լոյս տեսաւ մրցանակաբաշխութեան հանդէսին առիթով):

\* \* \*

Հայոց ցեղասպանութեան թեմայով ստեղծուած արաբերէն գեղարուեստական գրականութիւնը ուշագրաւ է թէ՛ իր քանակով եւ թէ՛ իր որակով, ու երեւի ժամանակն է այլեւս զայն խոր ու համա-

---

<sup>2</sup> Կը բաղկանայ 183 էջերէ: Կը պարունակէ 9 պատմուածքներ եւ 8 բանաստեղծութիւններ:

կողմանի ուսումնասիրության ենթարկելու եւ հայ ու օտար ընթերցող զանգուածներուն աւելի համապարփակ ձեւով ծանօթացնելու:

Ճիշդ այս նպատակով, Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի առիթով, հայ ընթերցողին կը ներկայացնենք հատընտիր մը այդ հարուստ ու բազմազան գրականութենէն, յուսալով որ ժամանակը թոյլատու կ'ըլլայ ի մի բերելու եւ թարգմանաբար ներկայացնելու նաեւ արաբ գրողներու ոչ միայն ցեղասպանութեան թեմայով ստեղծած գործերը, այլ նաեւ ընդհանրապէս հայկական թեմայով իրենց միւս ստեղծագործութիւնները, որոնց մէջ եւս չեն պակսիր մնայուն ու գեղեցիկ ստեղծագործութիւններ՝ արժանի ընթերցումի եւ ծանօթացումի:

*MIHRAN MINASSIAN (ARMENIA)*

## **THE THEME OF THE ARMENIAN GENOCIDE IN THE ARAB LITERATURE**

There are extensive literary works in Arabic language about the Armenian Genocide.

Arab writers had reflected in their works on issues of the Armenian massacres and they offered descriptions of them.

Poems.- There is only one Arab poem about the anti-Armenian massacres committed during the reign of Sultan Abdülhamid II. On the other hand, we find 15 poems written about the Cilician massacres of 1909. Finally, there are a couple of dozen poems on the Genocide.

Short stories and novels.- There are extensive voluminous and minor prose creations on this theme. Some of the short stories or the novels are entirely related to the Armenian Genocide. In some other works, although the Armenian massacres does not constitute the main axis, nevertheless the same theme is reflected directly or indirectly.

Theatres.- There are a couple of plays in Arabic language on the theme of the Armenian Genocide. Their actions are taking place during the First World War in the Syrian desert.



**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ CASE-STUDY ՄԵԹՈԴԻ  
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՄԲ (ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ)**

Օսմանյան կայսրությունում XIX դարի վերջում և ապա XX դարի սկզբում երիտթուրքերի կողմից կազմակերպված ու իրականացված հայերի զանգվածային սպանությունները ցեղասպանության և հայոց տարրի բնաջնջման դիտավորությամբ ու կատարումով, մարդկության դեմ առաջին առավել դաժան և արյունալի ոճրագործություններն են, որոնց անպատժելիությունն իր անջնջելի դրոշմը թողեց ոչ միայն դրանում ուղղակիորեն ընդգրկված հայ ազգի հետագա պատմական զարգացման վրա, այլև բարոյական հիմնավորում հանդիսացան XX դարի նման այլ պատմական նշանակալի դեպքերի համար:

1885-1915թթ. Թուրքիայի հայերի կազմակերպվածությունը, տնտեսական՝ կապիտալի նախնական կուտակման ժամանակաշրջանում թուրքական տնտեսության արտադրական կապիտալի 25%-ը, իսկ առևտրականի 60-80%-ը գտնվում էին հայերի ձեռքում, քաղաքական՝ Հնչակյան, Արմենական, Դաշնակցություն կուսակցությունների առկայությունը, ինչպես նաև դրանց անդամների մասնակցությունը օսմանյան խորհրդարանում և կառավարությունում, մշակութային՝ մտավորականությունն իր ստեղծագործական ներուժով, ազգային թատրոնները, պարբերականները, դպրոցները, եկեղեցիները, անհանգստության հիմնավոր պատճառներ էին երիտթուրքերի շովինիստական քաղաքականության և պանթուրքական ծրարերի համար<sup>1</sup>:

Հայ քաղաքական մտավորականության անուրջները՝ բարեփոխումների միջոցով Օսմանյան կայսրությունից քաղաքակիրթ, օրինապահ պետության ստեղծման վերաբերյալ, ի դեմս երիտթուր-

---

<sup>1</sup> Сваранц А., Геноцид армян в Османской Турции: причины, этапы и последствия в национальной и международной жизни, Էլեկտրոնային ռեսուրս [http://www.noravank.am/upload/pdf/79\\_ru.pdf](http://www.noravank.am/upload/pdf/79_ru.pdf)

քերի վարչակարգի՝ շատ կարճ ժամանակում հոդս ցնդեցին, իսկ Առաջին համաշխարհային պատերազմը պարզապես առիթ դարձավ հայաթափության և ցեղասպանության քաղաքականության իրականացման համար: Երիտթուրքերի կողմից կատարվեց հասարակական կարծիքի նախնական ձևավորում, որտեղ հայերին ներկայացնում էին որպես պետության բոլոր անհաջողությունների հիմնական պատճառ, մահմեդական քաղաքացիներին իբրև թե «հասանելիք» տնտեսական, քաղաքական, առևտրական, պատերազմական հաջողություններից (ավարներից) զրկող, գող, դավաճան և այլ բացասական հատկություններով օժտված մարդիկ, որոնց հարկ է հեռացնել ասպարեզից, բնաջնջել հենց հիմա, հենց այստեղ... Զանգվածային գիտակցության մեջ նման հիստերիայի, «ներքին թշնամու» կերպարի ձևավորումը հնարավորություն է ընձեռում մի կողմից՝ ազատվելու «անցանկալիներից», մյուս կողմից՝ մանիպուլյացիոն քաղաքականություն վարել նաև սեփական բնակչության շրջանում:

1915թ. ցեղասպանության հետևանքները ներկայանում են որպես բազմատեսակ կորուստների համալիր, որոնցից ամենակարևորն ու անվերականգնելին մարդկանց կորուստն է: Գրականության մեջ քննարկվում են նաև այլ կորուստների տեսակներ՝ աշխարհաքաղաքական բնույթի՝ հայաբնակ տարածքների անդառնալի կորուստ ու հենց հայրենագրկություն, տնտեսական՝ արտադրական, առևտրային, ֆինանսական կապիտալի ունեզրկում, ազգային ինքնության բռնի մահմեդականացում, մշակութային՝ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի պատմական հուշարձանների, եկեղեցիների ու մշակութային կենտրոնների ոչնչացում, էթնոստենցիալ-հոգեբանական ուղղակիորեն հոգևոր ու ֆիզիկական գոյության վախ, ազգի գոյատևման ու զարգացման նկատմամբ անվստահություն, որի հետևանքով «ազգային ինքնությունից» հրաժարում ու ասիմիլացում<sup>2</sup>:

Նորագույն հայոց պատմության մեջ ցեղասպանությունը մի կողմից՝ միջազգային քաղաքականության մեջ նշանակալի հիմնահարց է, մյուս կողմից՝ ազգային ինքնության կայացման նշանակալի բաղադրատարր: Ցեղասպանության պատճառների, կորուստների և

<sup>2</sup> Տե՛ս Айвазян А., Стратегические последствия геноцида армян, Византийское наследство (информационно-аналитический журнал), Ер., 2002, N 3, էջ 15-17:

հետևանքների ուսումնասիրության ասպարեզում հայագիտական տարբեր ոլորտներում իրականացվել են պատմական, իրավական, քաղաքական բազմաթիվ հետազոտություններ:

Ներկայացվող հետազոտության նպատակն է բացահայտել ցեղասպանություն վերապրած երկրորդ, երրորդ և չորրորդ հայազգի սերունդների ներկայացուցիչների մոտ առկա սոցիալ-հոգեբանական հետևանքները՝ տրավմատիկ հիշողությունները, նրանց ազգային ինքնորոշումը, հետևանքների հաղթահարմանը նպաստող գործոնները, թուրքերի՝ որպես ոճրագործությունը կատարողների ընկալումը և նրանց նկատմամբ վերաբերմունքը: Որպես ուսումնասիրության մեթոդ է ընտրվել սոցիալական հետազոտություններում ընդունելություն գտած case-study մոտեցումը<sup>3</sup>, որը որակական հետազոտության մեթոդներից մեկն է և հնարավորություն է ընձեռում՝ կազմելով ընտրված ընտանիքի սոցիոգենոգրամը<sup>4</sup>, պատկերացում տալ նշանակալի երևույթների և հետագա սերունդների մոտ դրանց արձագանքների վերաբերյալ<sup>5</sup>: Դեպքին վերաբերող տեղեկությունները ձեռք են բերվել ընտանեկան փաստաթղթերի և ցեղասպանության երկրորդ սերնդի ներկայացուցչի անմիջական խորին հարցազրույցի միջոցով: Հետազոտության արդյունքում կազմվել է սոցիոգենոգրամ, որի մեջ ընդգրկվել են ամերիկաբնակ հայազգի ընտանիքի չորս սերունդները:

Հարցվողի հայրը՝ Արտաշեսը, իր ընտանիքով 1915թ. բնակվում էր իր երկու ավագ եղբայրների, հոր և մոր հետ Խարբերդի մոտակա հայկական գյուղերից մեկում: Այդ ժամանակաշրջանում նա 8-9 տարեկան էր: Տեղահանության սկզբին մայրը ստիպում է երեխաներին գիշերով հեռանալ գյուղից և մեկնել Խարբերդ: Այնտեղ Արտաշեսին՝ որպես տարիքով փոքրի, ընդունում են Խարբերդի Գերմանական որբանոցը, իսկ եղբայրները երկար դեգերումներից

---

<sup>3</sup> Case-study որպես սոցիոլոգիական հետազոտության մեթոդի մասին տե՛ս Թադևոսյան Գ., Որակական սոցիալական հետազոտություններ (ուսումնական ձեռնարկ), ԵՊՀ հրատ., Եր., 2006, էջ 161-174:

<sup>4</sup> Սոցիոգենոգրամի պրակտիկ կիրառության մասին առավել մանրամասն տե՛ս Шутценбергер А. А., Синдром предков: Трансгенерационные связи, семейные тайны, синдром годовщины, передача травм и практическое использование гено-социограммы, М., Изд. “Института психотерапии”, 2005, էջ 22:

<sup>5</sup> Մեթոդը մշակված է եղել Պալո Ալտո-յի դասական ընտանեկան թերապիայի մասնագետներ Անրի Կոլումի, Մուրել Բոունեի, Ջեյ Հեյլիի և այլոց կողմից:

հետո հայտնվում են մեկը՝ ԱՄՆ-ում, իսկ մյուսը՝ Ֆրանսիայում: Մոր և հոր մասին այլևս որևէ տեղեկություն չեն ունենում: 1925թ. 18տ. լրանալուն պես, նա, որբանոցից դուրս գալով՝ Թուրքիայից հեռանալու մտադրությամբ սկսում է փնտրել իր եղբայրներին: Ավագ եղբայրն արդեն դարձել էր ԱՄՆ-ի քաղաքացի, և նրա ջանքերով հաջողվում է երիտասարդ Արտաշեսին ծովով հասնել Ամերիկա:

Հարցվողի մայրը դերսիմցի էր և ցեղասպանության տարիներին 3 տարեկան էր: Նրա հայրը, լինելով քահանա, դաժանաբար սպանվում է, իսկ երեխան իր մոր հետ պատսպարվում հարևան քրդաբնակ գյուղում, այնուհետև բռնում գաղթի ճանապարհը, հասնում Երզնկա, որտեղ այդ պահին ռուսական բանակն էր, հետագայում ռուսական բանակի հետ նահանջում են Ալեքսանդրապոլ, որտեղ և մնում են մինչև 1918թ.: Սովից, պատերազմից և համաճարակից փախչելով՝ մեկնում են Վրաստան, այնտեղից կապ հաստատում Ամերիկայում գտնվող հորեղբոր հետ: Վերջինիս կապերի շնորհիվ անցնում են Կրասնոդար, Նովորոսիյսկ, ապա նավով՝ Ստամբուլ և այնտեղից էլ ԱՄՆ՝ Բոստոն քաղաք:

1934թ. ծնվել է այդ զույգի ավագ որդին՝ մեր հարցվողը, ընտանիքում տիրում էր սիրո և հոգատարության մթնոլորտ, մայրը շատ քիչ էր պատմում եղեռնի մասին, բայց մորական տատիկն ու հայրը կիսվում էին իրենց անդրանիկ զավակի հետ՝ մանրամասն ներկայացնելով այն բոլոր դաժանություններն ու փորձությունները, որոնց միջով ստիպված են եղել անցնել: Դա բնորոշ չէր բոլոր ընտանիքներին, հայ հարևաններից շատերն իրենց երեխաների հետ չէին կիսվում այդ ոճրագործությունների հիշողություններով, արդյունքում երեխաները դառնում էին իսկական ամերիկացի, առանց պատմական ու ազգային արմատների, և ըստ հարցվողի արտահայտության՝ արդյունքում *«Ընտանիքները չորանում էին»*: Ծնողները ձգտում էին, որ իրենց զավակները կարողանան ավելի արդյունավետ ընդգրկվել նոր երկրի սոցիալական կյանքին, ուստի որպես կրթօջախ նրանց ընդգրկում են համալսարանի հանրակրթական դպրոց, որտեղ սովորողներից քառորդը իռլանդացի կաթոլիկներ էին, մյուս քառորդը՝ հրեաներ, մյուս քառորդը՝ հայեր և մի մասն էլ բողոքականների երեխաներ: Առավել մտերիմ հարաբերություններ ստեղծվում էին հրեա համադասարանցիների հետ. *«Նրանք մեզ հասկանում էին»*:

Մասնագիտության ընտրության վրա մեծ ազդեցություն թողեցին մորական տատիկի՝ «մեծ մամի» գրույցները և պատմությունները: Հորը հաջողվել էր գավակների մեջ ձևավորել մի կողմից՝ սեր նախնյաց պատմական հայրենիքի նկատմամբ, մյուս կողմից՝ խուսափել թուրքերի նկատմամբ ատելություն սերմանելուց, և եղեռնագործությունը դիտարկվում էր որպես ոճրագործություն մարդու և ողջ մարդկության նկատմամբ, առանց ազգային, կրոնական կամ այլ ուղղորդված պատկանելության: Հարցվող, այդ բնույթի ընտանեկան դաստիարակության շնորհիվ բոլոր բռնության ենթարկվածների կամ վտանգվածների նկատմամբ ունենալով ապրումակցում, իր երիտասարդ տարիներին մասնակցել էր ԱՄՆ-ի այնպիսի հասարակական շարժումներին, ինչպիսիք էին հակառասիստական և ընդդեմ Վիետնամական պատերազմի մասնակցության շարժումները:

Ազգային ինքնորոշման հարցը, ըստ հարցվողի, 2-րդ սերնդի, իսկ հետագայում՝ առավել մեծ չափով արդեն 3-րդ և 4-րդ սերունդների պարագայում «գիտակցված ընտրության հարց էր...». *«Ձեզ ազգությունը տրվում է ի ծնե, իսկ մենք այն ձեռք ենք բերում կամավոր ընտրության շնորհիվ»*: Ազգային պատկանելության պահպանությունը հնարավոր էր միայն լեզվի, պատմության և եկեղեցու շուրջ միավորվելով, առօրյա կյանքում պահպանելով քրիստոնեական արժեհամակարգը և ապրելակերպը. *«Ազգը՝ նույն հիշողություններն ունենալն է և վերապրելը որպես սեփական, անձնական փորձառություն»*: Ազգային պատկանելության հարցում ավելի լրջանում են խնդիրները 3-րդ և 4-րդ սերունդների մոտ (հարցվողի գավակներն ու թոռները), որոնց համար պատմական Հայրենիքը գոյություն ունեցող է, բայց ոչ *«սեփական»*:

Ազգային ինքնորոշմանը որոշ չափով օգնում են նաև ընտանեկան համատեղ տոների և տարաբնույթ միջոցառումների կազմակերպումն ու մասնակցությունը: Մակայն արդեն 3-րդ և 4-րդ սերունդների մոտ նկատվում է ընտանեկան կապերի թուլացում. Տոների և ընտանեկան համատեղ միջոցառումները դառնում են ավելի հազվադեպ, և նրանք մասնակցում էին հիմնականում մկրտությունների, ամուսնությունների, հոբելյանների և նման այլ նշանակալի ընտանեկան տոնակատարություններին:

Երկրորդ սերնդի ներկայացուցիչների մեջ ձևավորվել է նաև

պարտքի խոր զգացում իրենց այն նախնիների նկատմամբ, որոնք զոհ դարձան պատմական ոճրագործությանը և չկարողացան իրականացնել ներքին պոտենցիալը՝ *«մենք կարծես ապրում էինք նաև նրանց փոխարեն»*:

Ըստ հարցվողի՝ հետտրավմատիկ սթրեսի, վախերի, տագնապների, անցանկալի և անվերահսկելի հիշողությունների հաղթահարմանը նպաստում էին դարերի ընթացքում հայերի կողմից ձեռք բերված՝ իրենց սեփական հոդում մշտապես որպես զաղթականօտար ապրելը, ազգային արժեքների, քրիստոնեության, ընտանիքի նկատմամբ խորին վստահությունը, նվիրումն ու համոզմունքը, ամենօրյա գործունեության մեջ երեխաների ապագայի խնդիրների կարևորումը, պատմական հայրենիքի նկատմամբ անսպառ կարոտը:

Թուրքերի՝ որպես ոճրագործություն իրականացնողների նկատմամբ առաջին սերնդի ներկայացուցիչների վերաբերմունքը տատանվում էր հարևան-թուրքերի մասին ունեցած բարիդրացիական հիշողություններից մինչև *«թուրքերին որպես վերացական երևույթ ատելը»*: Սակայն անգամ ֆինանսական հնարավորությունների առկայության պարագայում առաջին սերնդի ներկայացուցիչները չէին ցանկանում այցելել իրենց ծննդավայրը. *«Անտեղ այլևս հայի երգ չի լսվի, երեխայի ծիծաղ չի հնչի, հայալեզու զրույցի բռնվելու հնար չի լինի»*:

Հայկական սփյուռքի կայացման հարցում ցեղասպանությունից մահապուրծ հայերի արդեն 4 սերունդների գոյության՝ աղապտացման, ասիմիլյացիայի, ազգային ինքնության պահպանման սկզբունքային ու նպատակաբանական՝ անհրաժեշտ ու նախընտրելի և դրա հետ մեկտեղ՝ նաև գոյութենական ու երբեմն արտաքին իրողությունների ընթացքին տրված կամայածին իմպուլսիվությամբ դեռ միայն առանձնահատկությունները քննարկելիս նկատելի է որոշակի օրինաչափություն.

- ցեղասպանությունը վերապրած չափահասների մի կողմից՝ իրենց հետ կատարվածի մասին համատարած լռությունը, որի հիմնավորումը փաստագրված հիշողությունների սակավությունն է, 1941-1945թ. հրեաների Հոլոքոստն ապացուցող փաստագրական նյութերի համեմատ, մյուս կողմից՝ եկեղեցիների, դպրոցների, մշակութային և քաղաքական

կազմակերպությունների ստեղծումը,

- երկրորդ սերնդի ներկայացուցիչների ձգտումը մի կողմից՝ լիարժեք ընդգրկվել նոր հայրենիքի սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական և սոցիալ-մշակութային միջավայր, մյուս կողմից՝ մեղքի և պատասխանատվության զգացումի պահպանումը զոհված նախնիների նկատմամբ,
- երրորդ սերնդի ներկայացուցիչների ազգային պատկանելությունն արդեն ընտրողական բնույթ ունի՝ ազգային արժեքների, հայ քրիստոնեական կենսակերպի, ազգային և ընտանեկան ավանդությունների նկատմամբ կամայական վերաբերմունք,
- չորրորդ սերնդի ներկայացուցիչների կապը պատմական հայրենիքի հետ՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության, ակտիվանում է ոչ այնքան ռեպատրիացիայի, պատմական հայրենիքում մշտական բնակություն հաստատելու, որքան տնտեսական ու ֆինանսական աջակցության, տարբեր ոլորտներում և այդ թվում՝ հայագիտական համատեղ ուսումնասիրությունների իրականացման միտումով:

Արևելյան Հայաստանում բնակվող և ցեղասպանությունը վերապրած բնակչությունը և նրանց սերունդները կարծես ավելի բարենպաստ միջավայր են ունեցել ազգային ինքնությունը՝ լեզուն, մշակույթը, ավանդույթներն ու սովորույթները, հոգեկերտվածքում միմյանց ու օտարների, ներաշխարհի ու արտաշխարհի, մշակույթի նկատմամբ ողջ գործունեության մեջ՝ վերաբերմունքում, հարաբերություններում ու գործողությունում, հոգևոր-քաղաքակրթական ու բարոյական հիմնորոշ սրբություններն ու առաջնային, գերակա սկզբունքներն ու կոդմնորոշումները պահպանելու համար: Թեև հոգեբանական հետևանքների<sup>6</sup> ու նաև բարոյականության մարդկային կյանքին հոգեկեցույց ու կենարար կարգավորության տեսանկյունից արդարաբանորեն նկատվում է պատմական անարդարություն իրականացրած ազգի ներկայացուցիչների հանդեպ՝ դրացիական հարաբերություններում **ընդհանուր քաղաքակրթա-**

---

<sup>6</sup> СМ. Сукиасян С. Г., Погосян В. В., Худоян С. С., Чаликян А. Н., Шавердян Г. М., Жмурин И. Е. Отношение современных поколений армян к геноциду 1915 года: данные поискового исследования (этнопсихологический аспект), Вестник МГОУ, 2012, N4, էջ 90-99.

կան-սոցիալական-մշակութային կենսաշխարհի ունեցող, երկկողմանի անմիջական շփմամբ համակեցության ժխտում ու անհնարինության հաստատում վերբալ ու ոչ գործնական մակարդակում, սակայն երբ քննարկվում է առկա աշխարհակարգում միջազգային իրավունքների երաշխիքով ամրագրված՝ դիստանցավորված **հանրակեցության** պայմաններում համատեղ տնտեսական ու առևտրական գործունեության իրականացման հարցը, ազգային պատկանելությունն այլևս նշանակալի չի համարվում:

Ցեղասպանություն վերապրած հայերը և նրանց սերունդները, կախված բնակության և սոցիալականացման վայրից, դեռևս չեն հաղթահարել այդ եղեռնագործության սոցիալ-հոգեբանական հետևանքները՝ սոցիալական կարգավիճակի, ազգային ընդհանուր ապագայի, ողջ մնացածների ներաշխարհում նահատակվածների նկատմամբ մեղքի զգացումի... բազմատեսակ խնդիրները:

Կարելի է նկատել, որ ժամանակակից հայ հասարակության մեջ պատմության խորհրդածությունները և հենց պատմությամբ ինքնահասկացող միտքն ու ներաշխարհը հնարավորություն ունի այլևս ոչ սոսկ համակվելու ու ամփոփվելու հայրենագրկության, հոգևոր-մշակութային կենտրոնների կորստի, ունեզրկության... խնդիրներում, այլև վեր ընթանալու սրբադասված նահատակների հետ հոգևոր միասնության, որում նաև բարեխոսության ու ըստ ամենայնի աջակցության նկատմամբ վստահության և դրա հետ մեկտեղ՝ մշակութային, հոգևոր-քաղաքակրթական (իր բոլոր չափումներով հանդերձ) հոգեկեցույց ու կենարար ստեղծարար գործունեության բազմաբովանդակ արդյունավետությամբ կայացման ներկա ու հեռանկարային ընտրությամբ:

*JIJYAN ANAHIT (RA)  
KOCHARYAN NERSES (RA)*

## **REVEALING BY THE METHOD OF CASE-STUDY THE SOCIAL-PSYCHOLOGICAL CONSEQUENCES OF THE ARMENIAN GENOCIDE (FAMILY STORY)**

The Armenian genocide is the first mass crime against humanity, and that this crime was not recognized and punished later on brought to its repetition in regard of other nations and peoples. For the full development of



any state and people it is necessary the effective awareness of significant historical events, the impact of which on the personal, family and ethnic level to this day is a matter of interest not only for theory and research, but also practically. The method of case-study gives an opportunity by the example of family genogramm and sociogramm to trace the social and psychological damages and consequences of the genocide, as well as to reveal some mechanisms to overcome them.

*ՔՆԱՐԻԿ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ- ԱՐԵՎՇԱՏՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

**ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲԻԿՅԱՆԻ «ԵՂԵՌՆԱՊԱՏՈՒՄ»-Ը՝  
ՈՐՊԵՍ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐ**

1924 թ. Բոստոնում լույս տեսավ հայտնի գիտնական, բանասեր, պատմաբան Կարապետ Գաբիկյանի «Եղեռնապատում» գիրքը, որը նվիրված է Արևմտյան Հայաստանի Փոքր Հայքի և նրա մայրաքաղաք Սեբաստիայի (թուրքական Սվազ վիլայեթի) հայության տեղահանման և բնաջնջման պատմությանը:

Գաբիկյանը ընտանյոք հանդերձ տեղահանվել է Սեբաստիա քաղաքի գաղթականների հետ, անցել «Արյան» բոլոր ճանապարհները, կորցրել ողջ ընտանիքին, հարազատներին և բարեկամներին: Նա հրաշքով փրկվել է և 1919 թվականին արքայազն Հալեպ, բնակություն հաստատել այնտեղ, ակտիվ մասնակցություն ցուցաբերել քաղաքի կյանքին՝ աջակցելով միջազգային և տեղական հայկական կազմակերպություններին վերապրած գաղթականների կյանքը կարգավորելու գործում: Իսկ 1920 թվականին Երուսաղեմի պատրիարքի հրավերով 11 հայ որբերի հետ տեղափոխվել է Երուսաղեմ և անցել մանկավարժական աշխատանքի: Հենց Երուսաղեմում էլ նա իրականացրել է իր «Եղեռնապատումի» վերջնական տարբերակի շարադրումը: Գրքի ծնունդը և հրապարակումը դժվարին էր: Բավական է հիշել, որ հրապարակման նախորդ երկու փորձերը մատնվել էին անհաջողության<sup>1</sup>: Բայց եկեք չխորանանք և չմոռա-

---

<sup>1</sup> Գրքի հրապարակման առաջին փորձի մասին Գաբիկյանը գրում է. «Ռազգա

նանք, որ 100 տարի սրանից առաջ լույս տեսած ականատեսի և եղեռնը վերապրողի գրքի նկատմամբ ուսումնասիրողը պետք է ցուցաբերի զգուշավոր վերաբերմունք, որպեսզի պատահմամբ չանտեսի գրքի ռացիոնալ հատիկը՝ առաջին ձեռքից ստացած վավերական անգնահատելի տեղեկությունները:

1915 թ. Հայոց ցեղասպանության աղբյուրների շարքում Կ.Գաբրիկյանի գիրքը պատկանում է **առավել արժեքավոր բազմակողմանի ամբողջական երկերի թվին:**

Հեղինակն ընդգրկել է Արևմտյան Հայաստանի պատմական Փոքր Հայքի և Սեբաստիայի 350 000 հայության տեղահանման պատմությունը: Դրանով նա ամբողջացրել է Թուրքական պետության կողմից գործված ոճրագործության չափերը և անհերքելի դարձրել նրանց արածը որակելու որպես ԳԵՆՈՑԻԴ:

Թեև Գաբրիկյանի ուշադրության կենտրոնում եղել են Սեբաստիան և Փոքր Հայքը, սակայն նա դուրս է եկել այդ շրջանակից և անդրադարձել նաև Արևմտյան Հայաստանի այլ շրջանների տեղահանության պատմությանը: Հատկապես այն շրջանների, որոնց քաղաքականների տեղահանման ճանապարհները խաչաձևվել են սեբաստահայերի անցած ուղիների հետ թուրքերի կողմից գաղթականների համար նախատեսված մեծ հանգրվաններում:

Գաբրիկյանը շատ լավ էր գիտակցում իր կատարած աշխատանքի նշանակությունը: «Հայ տարագրութեանց մասին ցարդ երեւան եկածները, - գրում է նա, - մասնակի բաներ են, որոնց մեջ Սեբաստիան և Փոքր Հայքը խիստ անցողակի յիշատակուած են: Հարկաւ օր մը Հայ Տարագրութեան ընդհանուր պատմութիւնը պիտի գրուի: «Եղեռնապատում»-ս կը խորհիմ, գլխաւոր աղբիւրներէն մին պիտի կազմէ մի այդպիսի աշխատութեան<sup>2</sup>»:

---

մտնելու, երկու ամիսի չափ մնացի առանձին սենեակով: Այդ միջոցին էր որ գիշերները գրի առի մեր տարագրութեան այս պատմութիւնը շատ համառօտ գծերով. և զոր յանձնեցի պրն.Սարգիս Մանուկեանի, որ Հալէպ գնալուն գերման հիւպատոսին պիտի տար Կարնոյ տարագրութեան տեղադրին հետ: Եւ իրավ ալ իր հետ տարաւ, բայց իր մէկ ազգականին սպառնալիքին վրայ այրեր ոչնչացուցեր էր» /Գուժկան Սեբաստիոյ /Կ. Գաբրիկյան/, Եղեռնապատում Փոքրոն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ: Բոսսոն,1924, էջ 468: Տե՛ս նաև՝ Վերահրատարակություն, Անթիլիաս, 2006/Այսուհետև՝ «Եղեռն»: Երկրորդ փորձի մասին ասված է միայն, որ ձեռագիրն ուղարկվել է Ամերիկա և կորել:

<sup>2</sup> «Եղեռն», էջ 7:

Մեբաստիայի և պատմական Փոքր Հայքի նկատմամբ թուրքերի ձեռնարկած քայլերը քիչ բանով էին տարբերվում ողջ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցածից: Սակայն պատահական չէ, որ իր «Պատմությունը» Գաբրիկյանը կոչում է «Պատում», որը նշանակում է նաև «համայնապատկեր»: Նա պատկերում է գաղթականության տաժանակիր «կյանք»-ը մինչև նրա սպառումը և ամենօրյա, համակողմանի, մանրամասն նկարագրություններով ստեղծում նրա ողբերգության համայնապատկերը: Գաբրիկյանի պատումը որոշակիացվում և լրացվում է հայ գաղթականության տարբեր շերտերի և սեռի վիճակի պատկերմամբ, տեղահանվողների թվի և քանակի, վայրերի, նրանց քարավանների հստակ որոշված ճանապարհների և այլ շատ իրողությունների պատկերումով:

Հեղինակը պատումը սկսում է մի քանի տարի ընդհանուր գորակոչից առաջ կատարված դեպքերով, երբ Մեբաստիայի կուսակալ դարձավ մոլի իթթիհատական, հայատյաց Մուամմերը (1912 թ.): Գաբրիկյանը ցույց է տալիս, որ ընդհանուր տեղահանությունից շատ ավելի վաղ նախապատրաստված էր Հայոց ցեղասպանությունը, և կար մշակված ստույգ ծրագիր հայության ամբողջական վերացման մասին: Դրան հասնելու համար թուրքերը դեկավարվում էին իրենց ծրագիրը հանրությունից քողարկելու սկզբունքով: Ողջ ժողովրդին պետք էր սրի քաշել ոչ թե միանգամից, ինչպես համիդյան կոտորածների ժամանակ, այլ հարցը լուծել աննկատ, նրա հետզհետե ոչնչացումով: Առաջ քաշվեց հայերի տեղահանության հարցը<sup>3</sup>: Գաբրիկյանը, առաջիններից մեկը լինելով, մատնանշել է գերմանացիների դերը հայերի տեղահանության հարցում՝ նրանց համարելով թուրքերի ուսուցիչներ: Նա գրում է. «Օձուն աղու /այսինքն՝ թույն/ տուողը Գերմանիան եղաւ. և այդ օրէն թուրքին աչքը բացուեցաւ. ծրագրեց հայոց ո՛չ միայն տեղահանութիւնը, այլեւ բնաջնջումը,

<sup>3</sup> Հայտնի ցեղասպանագետ Յոհաննես Լեփսիուսը, խոսելով ողջ Արևմտյան Հայաստանի բնակչության տեղահանության արդյունքում գոհված մարդկանց թվաքանակի մասին, ասում է. «Թալեաթ փաշայի կողմից ստորագրված հրամանում կան այսպիսի բառեր՝ «Տեղահանությունը ոչնչացում է»: Ամեն ինչ տեղի էր ունենում ըստ այդ հրամանի, – գրում է Լեփսիուսը: – Միայն տեղահանված ժողովրդի 10%-ը հասավ արսարման վայր, մնացյալ 90 %-ը մորթվեց կամ ընկավ ճանապարհին» /Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под редакцией проф. М.Г. Нерсисяна. Е., 1986, с. 485/. Թարգմանությունը մերն է:

սպասելով հարմարագոյն առիթին»<sup>4</sup>:

Իսկ մինչ այդ Մուհամեդը սկսում է կեղծ մեղադրանքներով /բոյկոտ, հրդեհներ, թուրքերի թունավորում և այլն/ հայ տղամարդկանց ենթարկել բռնությունների և ահաբեկչության. դրանով իսկ վերանում է հայերի կողմից ակնկալիք դիմադրության որևէ փորձ:

Գաբիկյանը շատ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Մեքաստիայի հայ բնակչության տեղահանման մասին: Հագեցնելով պատմությունն իր ուսումնասիրությունների վրա հիմնված ազգագրական ակնարկով՝ նա հաղորդում է, որ Մեքաստիան ուներ 5 800 տուն՝ հայ բնակչություն, մոտավորապես 34-36 000 անձ: Ըստ թաղերի՝ կազմվեց 14 քարավան, յուրաքանչյուրը 400-550 անձից: Մեքաստիան տեղահան եղավ 15 օրում՝ հունիսի 22-ից հուլիսի 5-ը:

Բռնագաղթի մասին հայտարարություն արվեց հունիսի 18-ին: Իսկ պատրաստության համար տրվեց ընդամենը 3 օր: Գաբիկյանը նկարագրում է այն տագնապալի օրերը, երբ հայերը տենդագին պատրաստություն էին տեսնում մեկնելու համար: Հարկավոր էր լուծել նաև մի շարք հրատապ հարցեր՝ հոգալ տան, ունեցվածքի մասին, ավանդներ թողնել և այլն: Թուրքական բանկերի մասին խոսք լինել չէր կարող, քանի որ նրանք արդեն յուրացրել էին հայերի կողմից մինչև այդ դրված ավանդները: Հայերը դիմեցին ամերիկյան միսիոներներին, և նրանք /Դոքտոր Կլարկը և Մերի Կոնյֆիլդ/ աջակցեցին հայերին: Սակայն շուտով թուրքերն իմացան այդ մասին, և գործը փակվեց: Մինչ այդ թուրքերն արդեն սկսել էին հայերի կողոպուտը, նրանք գրավել էին Ազգային հիվանդանոցը և շատ ուրիշ հաստատություններ: Իսկ ընդհանուր գորակոչից գործող «Թեքելիֆ հարալեն» /ռազմական կարիքների մասին հոգող վարչությունը/ թաթը դրել էր հատկապես հայերի ունեցվածքի վրա<sup>5</sup>: Էլ չենք ասում թուրք բնակիչների մասին, որոնք, ինչպես ամենուր Արևմտյան Հայաստանում, եղան հայերի տների և ինչքի կողոպտիչները և տերերը: Շուտով թուրքական կառավարությունն այդ էլ վերցրեց իր ձեռքը՝ ստեղծելով «Հատուկ կազմակերպություն»-«Տեշ-քիլատ մախսուսա»-ն, որի իրավասության տակ անցան նաև հայ

<sup>4</sup> Տե՛ս «Եղեռն», Գլ. 1, ենթագլուխ. Գերման սպայի մը նախանձու մաղձը, էջ 29, 30, ենթագլուխ Գերմանք տուն կուտան թուրքերուն՝ հայերը տեղահան ընել, էջ 30, 31:

<sup>5</sup> Տե՛ս «Եղեռն», էջ 34-42:

տարագրվածների տները՝ կոչվելով «Էմվալ մետրյուկե»- «Լքեալ տներ»:

Նախքան հայտարարելը հունիսի 18-ին բռնագաղթի որոշման մասին, հունիսի 3-ին սկսվում են ընդհանուր բանտարկությունները: Կարճ ժամանակամիջոցում բանտարկվում է մոտ 5 000 տղամարդ: Մեքսստիայի բռնագաղթից անմիջապես հետո բանտարկյալներին խումբ-խումբ տանում են և սպանում Մայրագոմի լեռան մեջ: «Այդ օրերում, - գրում է Գաբիկյանը, - Մեքսստիա եղածին պես Եւդոկիա, Ամասիա, Մարզվան, Զիլե, Նիկիսար, Հերեկ, վերջապես վիլայեթին ամեն կողմերը, արու արմատը այսպես հաւաքաբար կը բանտարկեն հազարներով ու գիշերները խումբ-խումբ կը տանին... ու կը նահատակեն»<sup>6</sup>:

Մեքսստիայի բռնագաղթից առաջ՝ մինչև հունիսի 16-ը, Ալիսի Վերին-Հովտի հայ գյուղերի տեղահանությունը կատարված էր: Գաբիկյանը ստույգ տեղեկություններ է հաղորդում Մեքսստիայի մոտակա հայկական գյուղերի մասին՝ Դավր, Բրգնիկ, Ուլաշ, Դոմիկ և այլն: Գյուղերը քանդվեցին և հավասարվեցին հողին: Այդ գյուղերի բնակչության մի մասը բռնի իսլամացավ: Բայց դա էլ չփրկեց նրանց բնաջնջումից: Գաբիկյանը տեղեկացնում է, որ այդ գյուղերի մնացյալ բնակիչներին ևս քեցին Միջագետք և Վերին-Շահիրում բնաջինջ արեցին<sup>7</sup>:

Թուրքերի կողմից հայ բնակչության ծրագրված անաղմուկ ոչնչացմանը պետք է նպաստեին ընտրած հատուկ ճանապարհները. 300-400-հազարանոց բռնագաղթվածների քարավաններն անց էին կացնում հորդառատ գետերով, քշում միայն լեռնագնացներին մատչելի լեռների գագաթները, ստիպում անցնել «մազե կամուրջներով», զգում տեղի վայրենի քրդերի ճանկը: Միաժամանակ գործում էին սպանդանոցները՝ Գանկալ, Հասան-Չելեպի և այլն, որտեղ սպանվեցին սեքսստացի գրեթե վերջին տղամարդիկ:

Թեև Գաբիկյանը միշտ աշխատել է իմանալ, թե ինչ է պատահել իրենցից առաջ անցած քարավանների հետ, սակայն իր տեղեկությունները, ինչպես ինքն է գրում, «շատ և շատ անկատար են»: Առաջին 7-8 կարավանները գրեթե ամբողջությամբ բնաջնջվել են: «Սուրուճում, - վկայում է Գաբիկյանը, - քրդերը որոշակի ասում էին,

<sup>6</sup> «Եդեոն», էջ 90:

<sup>7</sup> Անդ, էջ 111:

որ 53 000 հոգի Մեքսստիայի և շրջակայից առջի բերնի գաղթականներէն ջարդած Եփրատ լեցուցած են»<sup>8</sup>:

Հայտնի է, որ թուրքերը հայերի բնաջնջման, ունեցվածքի թալանի ամբողջ մեղքը աշխատում էին բարդել քրդերի վրա: Չմեղմացնելով քրդերի բաժնի մեղքը ցեղասպանության գործում՝ մի ավելորդ անգամ ևս հարկավոր է ընդգծել, որ հիմնական, գլխավոր դերակատարներն այդ հարցում եղել են իրենք՝ թուրքերը:

Հենց սկզբում Երբըխի-խանում Եմնիեթի /անվտանգության ծառայության/ կոմիսարը հավաքում է բոլոր քարավանների տղամարդկանց «կարևոր հայտարարության» համար: Ահա այդ հայտարարությունը: «Բարեկամներ, սրանից հետո դուք ճանապարհին հանդիպելու եք վայրենի քուրդ ցեղերի հարձակումներին, ավազակության և կողոպուտի: Որպիսի մենք կարողանանք ձեզ պաշտպանել, դուք պետք է հանձնեք ձեր ունեցվածքը, գանձերը, ամեն եղածը փաթեթավորված և կնքված մեզ, և մենք կուղարկենք Մալաթիա, ուր և դուք կստանաք անխախտ բոլորը»<sup>9</sup>: Դրան հետևում են գանձերը գաղթականներից բռնի գրավելու տեսարանները, որտեղ թուրքերը իրենց բռնության ձևերով և պահվածքով լրիվ կորցնում են իրենց մարդկային կերպարանքը<sup>10</sup>: Այդ պատմությունը Գաբիկյանը կոչել է «Բլեֆ»: Նա արդեն կանխատեսում էր, թե ինչեր էին սպասվում հազարավոր հայ գաղթականներին, տառապանքի և մահերի ինչպիսի տեսակներ էին պատրաստված նրանց համար: Գաբիկյանի պատումի մեջ հայտնվում են «Անջրդին-Մուզուսի Եազին», «Ջուփ, ջուփ, ջուփ», «Մերկ պարխանա» /«փոքր քարավան»/ և այլ նման վերնագրեր: Այդ գլուխներում պատկերված են հազարավոր գաղթականների անմարդկային տառապանքներն ու մահերը: Բայց դրանով էլ չի վերջանում նրանց դեպի մահ գնացող «Արյան ճանապարհը»: Ողջ մնացածները դուրս են գալիս անապատից երազած սուրբ գետի՝ Եփրատի ափերը: Հնարավոր չէ առանց սոսկումի կարդալ գրքի այն էջերը, որոնցում նկարագրվում է նավակներով գաղթականներին մյուս ափը փոխադրող թիավարների հարձակումը փոխադրվողների վրա:

Գրքում մեծ տեղ է հատկացվում գաղթականների գլխավոր

---

<sup>8</sup> Անդ, էջ 115:

<sup>9</sup> «Եդեոն», գլ.10, էջ 148:

<sup>10</sup> Տե՛ս անդ, էջ 146-155:

հանգրվաններ– բնակավայրերին՝ Ֆըրընջլարին, Սուրուճին և Ռագ-գային: Սուրուճում Գաբիկյանը մնացել է մի քանի ամիս, իսկ Ռագ-գայում՝ երկու տարի: Նա այդ հանգրվաններում հնարավորություն է ունեցել ավելի մոտիկից շփվելու տարբեր քաղաքներից և գյուղերից արտաքսված մարդկանց հետ: Գաբիկյանին հաջողվել է թափանցել իբր բարեգործական նպատակով գաղթականների համար բացված և թուրքերի խիստ հսկողության տակ գտնվող հիվանդանոցները և մանկապարտեզները, այսպես կոչված Բախչեսիները, Բախչեսի չոջուխլարանոցները: Դրանք իրականում «մահվան սրահներ էին»: Այստեղ արգելված էր հիվանդներին դեղ տալ: Գաբիկյանը նման իրողությունը գնահատում է որպես «թուրքերի հայաստյաց քաղաքականության սև գաղտնիքներից մեկը»: Հիվանդների, մահացողների քանակը խիստ հաշվարկվում էր և հետագրով ամեն օր Պոլիս տեղեկացվում: Երկու ամսվա ընթացքում 4000 տեղանոց հիվանդանոցը դուրս էր գրել 27 հազար դիակ: Ֆըրընջլարի թուրքական հիվանդանոցում, որն իրականում դիարան էր, թուրք բժիշկները, ոսկի գտնելու մարմաջով տարված, քրքրում էին հարյուրավոր հանգուցյալների գերծած դիակները, ապա կրակին հանձնում և փոշին մաղում: Ֆըրընջլարում աղբյուրի մոտ գոյություն ունեցող բացօթյա «Չոջուխլար բախչեսիում» գետնին պառկած կամ նստած էին լքված երեքից յոթ տարեկան հայ մանուկները, մոտ 90 երեխա: Քիչ ժամանակ անց տեղական իշխանությունները քաղաքը մաքրելու նպատակով հավաքել են տալիս փողոցներում ընկած դիակները, լցնում փորված փոսերը: Նրանց հետ միասին նույն փոսերն են գցում աղբյուրի մոտ նստած լքված հայ մանուկներին և կենդանի թաղում<sup>11</sup>:

Հիշյալ հանգրվանների պատկերի մասն էին կազմում ծայրաստիճան աղքատության հասած գաղթականները, որոնք ստիպված էին զբաղվել մուրացկանությամբ կամ էլ համաձայնվել ամենատա-ժանակիր աշխատանք կատարելուն, ինչպիսիք էին բեռնակրի, ճանապարհների շինարարության, մորելի հավաքելու գործերը:

Գաբիկյանին՝ որպես մտավորականի և մինչև վերջ իր ազգին նվիրված մարդու, առավել մեծ վիշտ է պատճառել հայ ժողովրդի հոգևոր, մշակութային արժեքների կորուստը: «Պատումի...» 48-րդ գլխում, որն ունի «Մեքաստիա յետ բոնազաղթի» վերտառությունը,

<sup>11</sup> Տե՛ս «Եղեոն», էջ 262:

նա մեկ առ մեկ հիշատակում է սեփաստահայերի կողմից սիրված և կորստի մատնված, հողին հավասարեցված վանքերն ու եկեղեցիներն իրենց հարստությամբ. Դավր գյուղից ոչ հեռու գտնվող Սուրբ Աննայատ, քաղաքի Սուրբ Սարգիս, Հայոց գերեզմանատան Քառասուն մանկանց եկեղեցին, Փրկչի եկեղեցուն կից վարժարանը և այլն և այլն, բոլորը քանդվեցին և հողին հավասարվեցին: Քաղաքի հայաբնակ թաղերը մեծ մասամբ նույնպես քանդում և ավերակի էին վերածում: Շենքերի քարերը և այլ շինանյութն օգտագործում են թուրքական զինանոցների և այլ զինվորական շինությունների կառուցման, ինչպես և փողոցների սալահատակման համար: Իսկ սեփաստահայերի կողմից պաշտված Սուրբ Նշան եկեղեցին թուրքերը դարձրել էին պահեստ, որտեղ ամբարում էին տեղահան եղած հայերի ունեցվածքը: «Տարի մը և ավելի, - գրում է Գաբիկյանը,- եկեղեցիին բակը, շրջակայքը մեծ պազար կը լարուի, ամենը ի վաճառ կը հանեն, աժան-աժան հրամցնելով անօթի թուրք խուժանին... և ինչ որ ամենից ցավալի է,-գրում է Գաբիկյանը,- Ս.Նշանայ վանքի մատենադարանի քանի մը հազար ընտիր գրքերը և 300-ի չափ թանկագին ձեռագրերը կը բաժնեն պազալներուն, հելվաճիներուն, թիւթինչիներուն և հիվանդանոցներու դեղարաններուն, թերթ առ թերթ պատռել մեջը բան պլլելու համար: Եւ կամ հրապարակներու վրայ ոտից կոխան կընեն, եղտյուրէ եղտիւր կը տապլեն, աղբանոցները կը նետեն, կայրեն,թուրքերեն ասելով «Երկրի երեսին դեռ մնացել է են գրագետ մարդիկ»:

Գաբիկյանը չի մոռանում նաև հիշատակել այդ աշխարհակործան պայմաններում իրենց մարդկային կերպարը չկորցրած առանձին թուրք գործակալների՝ գայմակամների հայանպաստ գործերը: Շնորհակալությամբ նա խոսում է արաբների բարյացակամ վերաբերմունքի մասին հայ գաղթականության նկատմամբ, ցույց տալիս, որ շնորհիվ մի քանի արաբական էշրաֆների և թուրք գայմակամների Ռազգայի հայ գաղթականության զգալի մասը չուղարկվեց Դեր-Զոր:

Մեծ արժեք է ներկայացնում 52-րդ գլուխը, որում Գաբիկյանը, իր անձնական ուսումնասիրությունների վրա հենվելով, տալիս է Սվազի վիլայեթի վիճակագրությունը նախքան բռնագաղթը, և հետո Սեփաստիա քաղաքը ուներ 36.800 բնակիչ, որից մնացել էր 157 հոգի,



իսկ Սվազի վիլայեթն ուներ 350 հազար 284, իսկ մնացել էր՝ 1000-2000<sup>12</sup>:

Այս հաղորդմամբ, անդրադառնալով Կ. Գաբիկյանի գրքում ներկայացվող միայն մի քանի հիմնական հարցերին, մենք փորձեցինք ներկայացնել այն որպես Հայոց ցեղասպանության կարևոր սկզբնաղբյուր: Ծանոթությունը գրքի գաղթականության վիճակի ողջ պատկերին իր ամենաբազմազան, երբեմն հանրագիտարանային կողմերով, կարող է ավելի ամբողջական պատասխան տալ թուրքերի ոճրագործության ծավալի մասին:

Ուսումնասիրողները հատվածաբար օգտագործել են նաև Գաբիկյանի հեղինակած պատմությունը, մասնակի թարգմանություններով<sup>13</sup> ներկայացրել են «Եղեռնապատումը», սակայն մինչ այժմ օտար լեզուներով, այդ թվում նաև՝ ռուսերենով, բացակայում էր Գաբիկյանի այդ ստուգապատում երկի ամբողջական թարգմանությունը, այսինքն՝ այն տակավին չէր ստացել միջազգային հնչեղություն: Վերջերս լույս տեսավ Մատենադարանի պատվերով կատարված «Եղեռնապատումի» սովորաձավալ ամբողջական ռուսերեն թարգմանությունը՝ առաջաբանով և ծանոթագրություններով: Թարգմանիչն է ձեր խոնարհ ծառան, իսկ Գրքի պատասխանատու խմբագիրն է ակադեմիկոս Սեն Արևշատյանը:

*KNARIK TER-DAVTYAN-AREVSHATYAN (ARMENIA)*

**“THE HISTORY OF ANNIHILATION OF MINOR ARMENIA  
AND ITS GREAT CAPITAL SEBASTIA” BY KARAPET  
GABIKIAN AS AN IMPORTANT SOURCE  
OF GENOCIDE HISTORY**

“Story of genocide: an account of the deportation and massacres of the Armenians of Sebastia and Lesser Armenia” by Garabed Gabikian is one of the first most important primary sources on the Armenian Genocide in Western Armenia. The author presents story of deportation and extermination of 350,000 Armenians in the historical Lesser Armenia and its capital,

---

<sup>12</sup> Տե՛ս «Եղեռն», էջ 596-604:

<sup>13</sup> Տե՛ս Garabed Gabikian. YEGHERNABADOUM – story of genocide; account of the deportations and massacres of the Armenians of Sebastia and lesser Armenia. New York. Pan-Sebastia Rehabilitation Union. 1978. Abridged by Aris Sevag. 83 էջ:

Sebastia that was little known before that publication. Thus, he presents the evidence of the crime committed by Turks, proving that the Armenian Genocide in the Ottoman Empire in the irrefutable fact.

## *ՀԱՍՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

### **«ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ԿՈԼԵԿՏԻՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ**

#### *1.«Հայոց Մեծ եղեռնը» թեմայի ուսուցման նպատակներն ու խնդիրները*

Թեմայի բովանդակային առանցքը կազմում է հետևյալ հարցերի ուսումնասիրությունը՝ Հայկական հարցը և թուրքական երեք կառավարությունները, ցեղասպանություն երևույթը, Հայոց ցեղասպանությունը՝ պատճառներ, իրականացում, հետևանքներ, ինքնապաշտպանական մարտեր, միջազգային ճանաչում, Հայոց պահանջատիրություն, պատմական հայրենիքի վերադարձ<sup>1</sup>:

#### *Թեմայի ուսուցման նպատակներն ու խնդիրներն են՝*

- ամբողջական և համակարգված պատկերացում ձևավորել Հայոց ցեղասպանության (պատճառներ, շարժառիթներ, իրագործման ծրագիր, իրականացնողներ, փուլեր, հետևանքներ, պատմական դասեր, ճանաչման գործընթաց, 1915 թ. հայերի ինքնապաշտպանական մարտեր) մասին,
- պարզաբանել, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը Հայաստանի Հանրապետության, ողջ հայության համար ազգային անվտանգության հիմնախնդիր է,
- ձևավորել պատմական արդարության վերականգնման, կորսված հայրենիքի պահանջատեր լինելու, հայ ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում անվտանգ ապրելու և զարգանալու իրավունքի համար պայքարի գիտակցություն,
- ձևավորել ազգային հիմնախնդիրների համար պայքարի

<sup>1</sup> «Հայոց ցեղասպանություն» (Հանրակրթական դպրոցի V-IX և XI-XII դասարանների համար), Հայեցակարգ, Երևան, 2014:

գիտակցություն,

- դաստիարակել ավելի բանիմաց, լայնախոհ, պետության հանդեպ պատասխանատու հայրենասեր քաղաքացիներ,
- ձևավորել մերժողական վերաբերմունք մարդու կամ որևէ ժողովրդի նկատմամբ կիրառվող բռնությունների հանդեպ՝ կանխելու այսօր էլ շարունակվող բռնությունները,
- հաղթահարել զոհ լինելու բարդույթը,
- ձևավորել փաստերը համադրելու և օբյեկտիվ գնահատական տալու կարողություններ:

*2.«Հայոց Մեծ եղեռնը» թեմայի ընդգրկվածությունը հանրակրթական ավագ դպրոցի Հայոց պատմության հումանիտար հոսքի և ընդհանուր ու բնագիտամաթեմատիկական հոսքերի չափորոշիչներ, ծրագրեր և դասագրքեր:*

**Պարտադիր բովանդակային միջուկ<sup>2</sup>**

Հայոց Մեծ եղեռնը: Հայերի ցեղասպանությունը՝ երիտթուրքերի պետական քաղաքականություն: Ցեղասպանության իրագործման փուլերը: Հայերի հերոսական ինքնապաշտպանությունը 1915 թվականին: Մեծ տերությունների և համաշխարհային հանրության վերաբերմունքը: Հայոց ցեղասպանության պատասխանատուների դատավարությունն ու պատժումը: Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը:

**Ծրագիր<sup>3</sup>**

«Հայոց Մեծ եղեռնը» թեման ընդգրկված է «Հայաստանը և հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտի տարիներին» թեմա: Հումանիտար հոսքում թեմայի յուրացմանը հատկացված է 17, իսկ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերում՝ 8 ժամ:

*«Հայոց Մեծ եղեռնը» թեմայի սովորողներին ներկայացվող որակական պահանջները հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներում<sup>4</sup>:*

*Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ*

*Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝*

**Ա մակարդակ - միջին**

---

<sup>2</sup> «Հայոց պատմություն» առարկայի հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագրեր, Երևան, 2009:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

#### **Կարողանա՝**

- վերլուծել մեծ տերությունների դիրքորոշումը 1894-1896 թթ. և 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության նկատմամբ,
- վերլուծել Օսմանյան կայսրության ու Գերմանիայի պատասխանատվությունը հայերի բնաջնջման գործում:

#### **Կարողանա՝**

- ներկայացնել և վերլուծել XX դարի սկզբի ազատագրական շարժումները:

#### **Իմանա՝**

- Ցեղասպանության սահմանումը, ցեղասպանություն համարվող հինգ գործողությունները:

#### **Կարողանա՝**

- վերլուծել Ռուսաստանի բոլշևիկյան կառավարության դիրքորոշումը Հայկական հարցում և այդ քաղաքականության նկատմամբ արտահայտել սեփական վերաբերմունքը:

#### **Բ մակարդակ - բարձր**

#### **Կարողանա՝**

- վերլուծել 1894-1896 թթ., 1915-1916 թթ. և 1918-1922 թթ. Հայոց ցեղասպանության փուլերն ու առանձնահատկությունները,
- համեմատել և վերլուծել դրանք իրականացնող գործիչների շահերն ու նպատակները:

*«Հայոց Մեծ եղեռնը» թեմային հատկացվող ժամաքանակը*

Հումանիտար հոսք - 4 ժամ, ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսք - 2 ժամ:

*«Հայոց Մեծ եղեռնը» թեման հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի և ընդհանուր ու բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագրքերում<sup>5</sup>*

*«Հայոց Մեծ եղեռնը»*

*«Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի սկիզբը»*

#### **3. Ներառարկայական և միջառարկայական կապեր**

ՀՀ հանրակրթական հաստատություններում Հայոց ցեղասպանության մասին սովորողները որոշակի գիտելիքներ են ստա-

---

<sup>5</sup> Հայոց պատմություն: Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 11-րդ դասարանի դասագիրք, «Զանգակ» հրատ., 2015 թ., Երևան, Հայոց պատմություն: Հումանիտար հոսքի 11-րդ դասարանի դասագիրք, «Զանգակ» հրատ., 2015 թ., Երևան:

նում նաև հայագիտական մի շարք առարկաներից: Ստորև համառոտ ներկայացնում ենք Հայոց ցեղասպանության մասին հանրակրթական ծրագրերում և դասագրքերում առկա այն ուսումնական թեմաները կամ նյութերը, որոնց աշակերտը ծանոթ է նախորդ դասարաններից, և դրանց հետ ուսուցիչը կարող է ներառարկայական կամ միջառարկայական կապեր հաստատել:

**Հայոց պատմություն, 8 – րդ դասարան**

- «Հայոց Մեծ եղեռնը»
- «Հայկական ցեղասպանությունը և առաջադեմ հասարակությունը»

**Հայոց պատմություն: Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր, 11-րդ դասարան**

- «Հայոց Մեծ եղեռնը»
- «Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի սկիզբը»

**Հայոց պատմություն: Հումանիտար հոսքի 11 – րդ դասարան**

- «Հայոց Մեծ եղեռնը»
- «Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի սկիզբը»

**Համաշխարհային պատմություն, 8 – րդ դասարան**

- «Առաջին աշխարհամարտի սկիզբը և ընթացքը»
- «Առաջին աշխարհամարտը 1914 – 1918 թթ.»

**Համաշխարհային պատմություն: Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 11-րդ դասարան**

- «Առաջին աշխարհամարտի պատճառները և սկիզբը»
- «Առաջին աշխարհամարտը և Օսմանյան տերությունը»

**Հայրենագիտություն, 5 – րդ դասարան**

«Հայոց բնօրրանը», «Հայ երգի մեծերը»

**Հայոց եկեղեցու պատմություն, 9 – րդ դասարան**

«Հայոց Մեծ եղեռնը և եկեղեցին»

**Հայ գրականություն, 7-րդ դասարան**

- Նաիրի Զարյան. «Հայրենի տուն» բանաստեղծությունը
- Գուրգեն Մահարի. «Ինքնակենսագրական», «Բալլադ Չալոյի և առաջին սիրո մասին»
- Սիլվա Կապուտիկյան. «Քելե լաո» բանաստեղծությունը
- Մուշեղ Գալշոյան. «Մամփրե արքան» պատմվածքը

**Հայ գրականություն, 11 - րդ դասարան**

- Հովհաննես Թումանյան. «Հայոց լեռներում», «Հայրենիքիս

հետ», «Հոգեհանգիստ», «Հայոց վիշտը» բանաստեղծությունները

- Գրիգոր Զոհրապ: Կյանքը, ստեղծագործությունը
- Ատոմ Յարճանյան (Սիամանթո): Կյանքը: Յարճանյանը՝ որպես դարասկզբի հայ ժողովրդի պատմական ճակատագրի ականատես և արտահայտիչ. «Հողին ձայնը», «Մահվան տեսիլք», «Հոգիս», «Պարը» բանաստեղծությունները
- Դանիել Վարուժան: Կյանքը
- Եղիշե Չարենց, կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Դանթեական առասպել», «Մահվան տեսիլ» ստեղծագործությունները

### **«Հայոց Մեծ եղեռնը» թեմայի դասավանդումը Դիվինի հակադարձ մեթոդաբանությամբ**

*Այս մեթոդաբանությամբ «Հայոց Մեծ եղեռնը» թեմայի ուսուցումն իրականացնելու դեպքում խորհուրդ ենք տալիս ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերում հատկացնել 3, իսկ հումանիտար հոսքում՝ 5 դասաժամ:*

*Ազատագրական շարժումները XX դարի սկզբին թեմայում տեղ գտած «Երիտթուրքերի հեղաշրջումը և արևմտահայությունը» ենթաթեման (Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 11-րդ դասարանի դասագիրք, Մաս Ա, Բաժին 2, Գլուխ 5, § 4: Հումանիտար հոսքի 11-րդ դասարանի դասագիրք, Մաս Գ, Բաժին 2, Գլուխ 5, § 4), որի յուրացմանը հատկացված է 1 դասաժամ, իրականացնել «Հայոց Մեծ եղեռնը» թեմայի հետ:*

Ստորև ներկայացնում ենք «Հայոց Մեծ եղեռնը» թեմայի ուսուցումը Դիվինի հակադարձ մեթոդաբանության միջոցով:

#### **Անհրաժեշտ ուսումնադիտակտիկ պարագաներ**

Թեմայի ուսուցման արդյունավետության բարձրացման համար խորհուրդ ենք տալիս դասասենյակում ունենալ հետևյալ ուսումնադիտողական միջոցները<sup>6</sup>:

---

<sup>6</sup> Դիվինի հակադարձ մեթոդաբանության կիրառումը «Հայոց ցեղասպանությունը» թեմայի ուսուցման ժամանակ բուհերի ոչ հումանիտար ֆակուլտետներում, "Образование, наука и экономика в вузах и школах. Интеграция в международное образовательное пространство" г. Горис, Армения, 28 сентября – 2 октября 2015 г. Труды международной научной конференции.

*(Մտորն թվարկված քարտեզները, նկարները, գրքերը հեշտությամբ հնարավոր է ներբեռնել համացանցից):*

## **Տեխնիկական միջոցներ**

Համակարգիչ, տեսագրիչ (պրոյեկտոր), հնարավորության դեպքում էլեկտրոնային գրատախտակ

### **Ուսումնադիտողական նյութեր**

#### **1. Հաշվառման աղյուսակ**

#### **2. Քարտեզներ**

- 2.1. 1909 թվականի ջարդերը Կիլիկիայում և Ադանայում
- 2.2. Թուրանի տարածքը ընդգրկող քարտեզ
- 2.3. Մեծ եղեռնի սխեմատիկ քարտեզ
- 2.4. 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության վայրերի քարտեզ

#### **3. Նկարներ**

- 3.1. երիտթուրք ոճրագործների նկարներ և երիտթուրք դեկավարների հրամաններ և այլն
- 3.2. ցեղասպանության տեսարաններ, տեղահանվածների քարավաններ, 1915 թվականի ապրիլի 24-ին ձերբակալված հայ մտավորականներ և այլն
- 3.3. ինքնապաշտպանական մարտեր՝ Արմենակ Եկարյան, Արամ Մանուկյան, Մուսա լեռ, «Գիշեն» հաճանավ և այլն
- 3.4. հայ վրիժառուներ՝ Սողոմոն Թեփիրյան, Արշավիր Շիրակյան, Արտաշես Գևորգյան, Պետրոս Տեր Պողոսյան, Ստեփան Օաղիկյան, Հակոբ Մելքումով, Միսակ Թորլակյան և այլն
- 3.5. Ցեղասպանությունը դատապարտող համաշխարհային առաջադեմ գործիչներ Յոհաննես Լեփսիուս, Ֆրիտյոֆ Նանսեն, Հենրի Մորգենթաու, Ջեյմս Բրայս, Վալերի Բրյուսով, Անատոլ Ֆրանս, Նանսենյան անձնագիր և այլն
- 3.6. Ցեղասպանության տարիներին և դրանից հետո խոնարհված եկեղեցիների, վանքերի նկարներ
- 3.7. Ցեղասպանության հուշահամալիրի նկար
- 3.8. Ցեղասպանությունը ճանաչած երկրների աղյուսակ

#### **4. Գրքեր, դասագրքեր**

*Գրքերն ընտրվել են հետևյալ սկզբունքով՝*

ա. պատմական իրադարձություններ, փաստեր, փաստաթղթեր պարունակող գրականություն

բ. ականատեսների հուշեր, վերապրողների վկայություններ պարունակող գրականություն

գ. միջազգային-իրավական պատասխանատվության հիմքեր, Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքեր և հնարավորություններ պարունակող գրականություն

դ. դասագրքեր

4.1. Հայոց պատմության հիմնահարցեր (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), ուսումնական ձեռնարկ, խմբ.՝ Հր. Սիմոնյանի, Երևան, 2000

4.2. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում /Փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Եր., «Հայաստան», 1991

4.3. Ներսիսյան Մ., Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2005

4.4. Հայոց ցեղասպանության պատմություն, Մեծ եղեռնը Արևմտյան Հայաստանի նահանգներում, հտ 1-3, Եր., ԵՊՀ հրատ., 2008-2011

4.5. Վիրաբյան Ա., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ.1-3, Եր., «Զանգակ» հրատարակչություն, 2012

4.6. Հայեր և երիտթուրքեր, Կիլիկիայի կոտորածները, Ադոսիդես Ա., Եր., 2012

4.7. Վերժինե Սվազյան, Հայոց ցեղասպանություն, Ականատես վերապրողների վկայություններ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2000, Մաս 1-5, 2011

4.8. Վարդանյան Վ., Կիրակոսյան Ե., Գևորգյան Լ., Հայերի ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության հիմքերը /Իրավական ուղեցույց/ Եր., Անտարես, 2014

4.9. Արմեն Մարության, Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Եր., «Տիր» հրատարակչություն, 2014



- 4.10. Ռուբինա Փիրումյան, Հայկական հարցի պատմություն, 9-10-րդ դասարանների դասագիրք, Էդիտ-Պրինտ
- 4.11. Հայոց պատմություն, 8-րդ դասարանի դասագիրք
- 4.12. Հայոց պատմություն, 11-րդ դասարանի դասագիրք
- 4.13. <http://armeniangenocide100.org/>, <http://armeniangencides.am/>, <http://www.genocide-museum.am> կայքերից վերցված նյութեր:

*Ներկայացված ուսումնադիտողական միջոցներից ուսուցիչը, հաշվի առնելով մի շարք առանձնահատկություններ և իր ձեռքի տակ եղած տեխնիկական միջոցները, կարող է ընտրել այն ուսումնադիտողական նյութերը, որոնք իրեն կօգնեն արդյունավետ իրականացնել դասի առջև դրված նպատակները: Ուսուցիչն իր հայեցողությամբ կարող է ընտրել ցեղասպանության վերաբերյալ այլ գրքեր:*

**Ըիվինի հակադարձ մեթոդաբանության կիրառումը դասախոսության յուրացման ժամանակ:**

Նկարագրենք այս մեթոդաբանության կիրառման որոշ առանձնահատկություններ՝ այն ներկայացնելով «Հայոց Մեծ եղեռնը» թեմայի ուսուցման օրինակով: Ուսուցիչը «Հայոց Մեծ եղեռնը» թեման<sup>7</sup> նախապես բաժանում է վեց ենթաթեմաների և դրանցից յուրաքանչյուրի համար կազմում է վերնագրերով արտահայտված պլան:

1. Հայերի ցեղասպանությունը՝ երիտթուրքերի պետական քաղաքականություն
2. Ցեղասպանության իրագործման փուլերը
3. Հայերի հերոսական ինքնապաշտպանությունը 1915 թվականին
4. Մեծ տերությունների և համաշխարհային հանրության վերաբերմունքը 1915-1922 թթ.
5. Մեծ եղեռնի հետևանքները
6. «Ցեղասպանություն» հասկացությունը: Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը

<sup>7</sup> «Հայոց պատմություն» առարկայի հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագրեր, Երևան, 2009:

## Ենթաթեմա 1

Հայերի ցեղասպանությունը՝ երիտթուրքերի պետական քաղաքականություն

- Երիտթուրքական հեղաշրջումը
- Հայերի կոտորածը Կիլիկիայում՝ Ադանայի կոտորածները
- Պանթուրքիզմը՝ երիտթուրքերի պետական քաղաքականության առանցք
- 1910-1911 թթ. Սալոնիկի գաղտնի ժողովները
- Հայոց ցեղասպանության պատճառները
- 1914 թ. գաղտնի խորհրդակցությունը, Երեքի գործադիր կոմիտեի ստեղծումը

## Ենթաթեմա 2

Ցեղասպանության իրագործման փուլերը

- Տղամարդկանց գորահավաքն ու կոտորածը
- 1915 թ. ապրիլի 15-ի գաղտնի հրամանը
- Ազգային, քաղաքական և հոգևոր ղեկավար գործիչների (մտավորականության) ձերբակալություններն ու բնաջնջումը
- Բնակչության տեղահանությունն ու կոտորածը

## Ենթաթեմա 3

Հայերի հերոսական ինքնապաշտպանությունը 1915 թվականին

- Վանի ինքնապաշտպանությունը
- Մուշի, Մասունի ինքնապաշտպանությունը
- Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը
- Մուետիահայության (Մուսա լեռան) ինքնապաշտպանությունը
- Ուրֆայի ինքնապաշտպանությունը

## Ենթաթեմա 4

Մեծ տերությունների ու համաշխարհային հանրության վերաբերմունքը 1915-1922 թթ. և հայ վրիժառուների գործողությունները

- Համաշխարհային առաջադեմ գործիչների՝ Ցեղասպանությունը դատապարտող գործունեությունը (Յոհաննես Լեյսիուս, Հենրի Մորգենթաու, Ջեյմս Բրայս, Վալերի Բրյուսով, Անատոլ Ֆրանս, Ֆրիտյոֆ Նանսեն և այլն)

- *Անտանտի երկրների՝ 1915 թ. մայիսի 11-ի բողոքի հայտարարությունը հայկական ջարդերի կասկակցությամբ*
- *1919 թ. (ապրիլ-հունիս) երիտթուրք պարագլուխների դատավարությունը, 1915 թ. հուլիսի 5-ի՝ Թալեաթին, Էնվերին, Ջեմալին և Նազըմին մահվան դատապարտելու հետակա դատավճիռը*
- *«Նեմեսիս» ծրագրի շրջանակներում հայ վրիժառուների գործողությունները*

#### **Ենթաթեմա 5**

#### **Մեծ եղեռնի հետևանքները**

- *Հայ բնակչության կոտորածները, Արևմտյան Հայաստանի հայաթափումն ու հայրենագրկումը*
- *Սփյուռքի առաջացումը*
- *արևմտահայության նյութական, ֆինանսական կորուստները*
- *մշակութային եղեռնը*
- *բարոյահոգեբանական հետևանքները*

#### **Ենթաթեմա 6**

**«Ցեղասպանություն» հասկացությունը:** Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը

- 1948 թ. ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունները կանխելու և դրա համար պատժի մասին» փաստաթուղթը
- Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը Երկրորդ աշխարհամարտից հետո
- Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետությունները, միջազգային կազմակերպությունները

**Փոփոխական կազմով գույգերով աշխատանքի կազմակերպումը**

Մարդու ողջ կյանքը հիմնված է փոխգործունեության վրա: Բիվինի հակադարձ մեթոդաբանությամբ սովորողների ուսումնական գործունեության կազմակերպման հիմքում ընկած է սովորողների փոխգործունեությունը փոփոխական կազմով գույգերով<sup>8</sup>:

Փոփոխական կազմով գույգերով կազմակերպված ուսումնական պարապմունքների ժամանակ յուրաքանչյուր ուսանող իր առջև

<sup>8</sup> Методические рекомендации к организации работы по ОМР (КСО) Руколеева Л. В., Никитина М. В. Павлодар, 2007.

դրված խնդիրները լուծում է այլ սովորողների հետ համագործակցելու միջոցով, միաժամանակ օգնում նրանց՝ լուծելու իրենց խնդիրները: Կիրառվում է կոլեկտիվ ուսումնական պարապմունքների գլխավոր՝ «յուրաքանչյուրը նպատակ է, յուրաքանչյուրը միջոց է» սկզբունքը<sup>9</sup>: Դասի սկզբում ուսուցիչը, ըստ ենթաթեմաների և ըստ դրանց պլանի կետերի հաջորդականության, ցուցադրում-դասախոսության միջոցով ներկայացնում է «Հայոց Մեծ եղեռնը» թեման (2 դասաժամ), իսկ հաջորդ դասաժամերը հատկացվում են յուրացմանը:

Դասախոսության ավարտից հետո յուրաքանչյուր սովորող ուսուցչից ստանում է «Հայոց ցեղասպանությունը» թեմայի ենթաթեմաներից մեկը (հերթականությունը կարևոր չէ) ու տվյալ ենթաթեմայի պլանը: Նրա խնդիրն է վերականգնել և յուրացնել ենթաթեմայի բովանդակությունը և համառոտ շարադրել տետրում: Ենթաթեմայի բովանդակության շարադրման համար սովորողներն աշխատում են փոփոխական կազմով գույգերով<sup>10</sup>:

Զույգում աշխատանքն ընթանում է հետևյալ կերպ: Սովորողները պլանի առաջին կետի բովանդակությունը շարադրելու համար կազմում են գույգեր: Առաջին գույգում աշխատելիս նրանք միասին քննարկում և շարադրում են նախ առաջին սովորողի ենթաթեմայի պլանի առաջին կետի բովանդակությունը, որն իր տետրում գրում է առաջին սովորողը: Ապա միասին քննարկում և շարադրում են երկրորդ սովորողի ենթաթեմայի պլանի առաջին կետի բովանդակությունը, որն իր տետրում գրում է երկրորդ սովորողը: Այնուհետև գույգը բաժանվում է, և նրանցից յուրաքանչյուրը կազմում է նոր գույգ: Երկրորդ գույգում առաջին սովորողը պատմում է նախորդ գույգում շարադրված իր թեմայի առաջին կետի բովանդակությունը, և եթե ընկերն ունի առարկություններ կամ լրացումներ, դրանք քննարկելուց հետո անհրաժեշտության դեպքում կատարում է լրացումներ և ուղղումներ: Այնուհետև միասին քննարկում և շարադրում են երկրորդ կետի բովանդակությունը: Ապա երկրորդ ուսանողն է պատմում իր թեմայի պլանի շարադրված կետի (կամ կետե-

---

<sup>9</sup> Մկրտչյան Մ.Ա., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Երևան, 2011:

<sup>10</sup> Մարգարյան Հ.Հ., Հայոց պատմություն, Մեթոդական ձեռնարկ բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների համար, Երևան, 2008:

րի) բովանդակությունը, և եթե ընկերն ունի դիտողություններ, դրանք քննարկելուց հետո անհրաժեշտության դեպքում կատարում են լրացումներ և ուղղումներ: Դրանից հետո միասին շարադրում են երկրորդ սովորողի ենթաթեմայի հաջորդ կետի բովանդակությունը, որն իր տեսքում գրում է երկրորդ սովորողը: Նորից գույգը բաժանվում է, և հաջորդ կետի շարադրման համար սովորողներից յուրաքանչյուրը փնտրում է նոր ընկեր: Երրորդ գույգում նորից սովորողներից յուրաքանչյուրն ընկերոջը պատմում է իր ենթաթեմայի շարադրված կետերի բովանդակությունները, եթե կա անհրաժեշտություն, կատարում ուղղումներ և լրացումներ, ապա միասին շարադրում են հաջորդ կետի բովանդակությունը<sup>11</sup>:

Պլանի յուրաքանչյուր հաջորդ կետի բովանդակությունը շարադրում են նոր գույգում: Ենթաթեմայի շարադրման համար սովորողը փոխում է այնքան գույգ, որքան կետ ունի տվյալ ենթաթեմայի պլանը: Բիվինի հակադարձ մեթոդաբանությամբ ենթաթեմաների յուրացման ժամանակ, անհրաժեշտության դեպքում սովորողները կարող են օգտվել ուսումնադիտողական նյութերից՝ քարտեզներից, նկարներից, գրքերից, որոնք նախապես լսարան են տարվել ուսուցչի կողմից: Պլանի բոլոր կետերը մշակելու արդյունքում ուսանողը ստանում է իր ենթաթեմայի ամբողջական տեքստը:

Ենթաթեման յուրացնելուց և բովանդակությունը համառոտ շարադրելուց հետո սովորողը ստանում է հաջորդ ենթաթեման ու պլանը և նույն ձևով շարունակում աշխատել: Աշխատանքն ավարտվում է, երբ բոլոր սովորողներն ավարտում են բոլոր ենթաթեմաների յուրացումը: Տարբեր սովորողներ տարբեր արագությամբ են ավարտում ենթաթեմաների յուրացումը, բոլոր թեմաների յուրացումն ավարտած սովորողներն ուսուցչի կողմից ստուգվելուց հետո կարող են օգնել հետ մնացող ընկերներին:

Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ ամենաշատ ժամանակ իսկում է առաջին երկու ենթաթեմաների յուրացումը, մյուս ենթաթեմաները շատ ավելի արագ են յուրացվում, քանի որ իրենց աշխատանքի ժամանակ սովորողներն արդեն բազմիցս ծանոթացել են այդ ենթաթեմաներին:

---

<sup>11</sup> Մարգարյան Հ.Հ., Բիվինի հակադարձ մեթոդիկայի կիրառման փորձը Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում, Մանկավարժություն, 2007, թիվ 1-2:

Փոփոխական կազմով զույգերով աշխատանքին զուգահեռ, ուսուցիչը կարող է ստեղծել առանձին ենթաթեմաները և ամբողջ թեման ընդհանրացնող «համահավաք ջոկատներ»<sup>12</sup> (որոշակի ուսումնական նպատակի համար ստեղծվող փոփոխական կազմով խումբ), որոնք Մ. Մկրտչյանն անվանում է «հարափոփոխ»<sup>13</sup> ենթախմբեր, որոնցում կընդգրկվեն ենթաթեմաներն ավարտած ուսանողները, որոնք միասին կընդհանրացնեն ամբողջ թեման:

Ըիվիինի հակադարձ մեթոդաբանությամբ ուսուցման կազմակերպման արդյունքում սովորողները ոչ միայն կայուն և համակարգված գիտելիքներ են ստանում «Հայոց ցեղասպանությունը» թեմայի վերաբերյալ, այլ և նրանց մոտ զարգանում են նաև սոցիալական և մտահաղորդակցական բազմաթիվ վերառարկայական կարողություններ և հմտություններ: Դա տեղի է ունենում ի հաշիվ այն հանգամանքների, որ այս մեթոդաբանությամբ ուսուցման կազմակերպման ժամանակ չկան պասիվ սովորողներ, նրանցից յուրաքանչյուրը «գործուն ընդգրկված» է ուսուցման գործընթաց: «Որևէ անձնավորության վրա գործընթացի արդյունավետ ազդեցության անհրաժեշտ պայմանը այդ անձնավորության գործուն ընդգրկվածությունն է այդ պրոցեսում»<sup>14</sup>: «Գիտելիքի փոխանցման պրոցես չկա և չի կարող լինել, քանի որ սովորողի կողմից ստացվող ցանկացած «իրական լիարժեք գիտելիք» արդյունք է իր ըմբռնման, արդյունք՝ սեփական փորձի նկատմամբ ռեֆլեքսիայի»<sup>15</sup>: Այսինքն՝ մեծագույն արժեք են ներկայացնում հենց ուսուցման գործընթացում առաջացած իրադրությունները, որոնցում կողմնորոշվելու, «մտագործունեություն»<sup>16</sup> կատարելու (մտածել, հաղորդակցվել, գործողություններ) և ինքնաանդրադարձ վերլուծության հաշվին էլ յուրացվում են

---

<sup>12</sup> Մակարենկո Ա.Ս., Մանկավարժական պոեմ, «Հայպետհրատ», Եր., 1947:

<sup>13</sup> Մկրտչյան Մ.Ա., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Երևան, 2011:

<sup>14</sup> Մկրտչյան Մ. Ա., Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացման հիմնահարցերը, «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա, Երևան, 2001թ.:

<sup>15</sup> В. Богин. Несколько аспектов проблемы школьного образования и несколько размышлений о путях ее решения. Педагогика, 1990г.

<sup>16</sup> Մկրտչյան Մ.Ա., Քաղաքացիական կրթությունը որպես հանրակրթության ուսումնական առարկա. ստեղծման և ներդրման առանձնահատկությունները, Քաղաքացիական կրթությունը դպրոցում, N1, Երևան, 2001թ.:

գիտելիքները, և ձևավորվում ու զարգանում են համապատասխան կարողություններն ու հմտությունները<sup>17</sup>:

Աշակերտների կողմից ենթաթեմաների ավարտից հետո ուսուցիչը (ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերում ժամանակի առկայության դեպքում (արագ ավարտած աշակերտները), իսկ հումանիտար հոսքում՝ պարտադիր) կարող է ստեղծել ամբողջ թեման ընդհանրացնող ենթախմբեր, որոնցում կընդգրկվեն 6 ենթաթեմաներն ավարտած աշակերտները, որոնք միասին կընդհանրացնեն ամբողջ թեման:

### Սովորողների աշխատանքի համակարգումը և վերահսկումը

Սովորողների աշխատանքը համակարգելու և վերահսկելու համար նախապես կազմվում է հաշվառման աղյուսակ: Հաշվառումը կարող է վարել ուսուցիչը, կամ այն կարելի է փակցնել դասասենյակում, և յուրաքանչյուր սովորող կարող է անձամբ նշումներ անել իր անվան դիմաց: Հաշվառման աղյուսակն ունի հետևյալ տեսքը:

	Ազգանուն	Անուն	Ենթա- թեմա 1	Ենթա- թեմա 2	Ենթա- թեմա 3	Ենթա- թեմա 4	Ենթա- թեմա 5	Ենթա- թեմա 6
1	Սարգսյան	Գոռ	+	$\oplus$	.			
2	Պարսամյան	Արփի	.	+	$\oplus$			
4	Մկրտչյան	Լիլիթ	+	$\oplus$	.	+	+	$\oplus$

Աղյուսակում . նշանով նշված է այն թեման, որը յուրացվում է տվյալ պահին, + նշանով՝ յուրացված թեման (երբ), իսկ  $\oplus$  նշանով՝ դասախոսի կողմից ստուգված թեման (երբ):

### Ստուգումը և գնահատումը

Ուսուցիչը սովորողների յուրացման աստիճանը կարող է ստուգել տարբեր ձևերով:

- Հետևել տարբեր զույգերում սովորողի աշխատանքին:
- Անձամբ որպես զույգ աշխատել սովորողի հետ, ունկնդրել նրա կողմից յուրացված հատվածների վերարտադրումն ըստ պլանի կետերի:
- Ստուգել տեսքում կատարված գրանցումներն ըստ պլանի կետերի:

<sup>17</sup> Г. П. Щедравицкий. Избранные труды. М., шк. Култ. Полит., 1995г.

- Ենթաթեմաների կամ ամբողջ թեմայի ընդհանրացման և ամփոփման համար կազմված ենթախմբերում հետևել սովորողի աշխատանքին (բանավոր խոսքին, հարցադրումներին և այլն):
- Ենթաթեմայի ուսումնասիրության ավարտից հետո կատարել բանավոր հարցում (ծավալուն կամ համառոտ):
- Տալ անհատական գրավոր աշխատանք որևէ ենթաթեմայից, թեստային գրավոր աշխատանք տարբեր ենթաթեմաներից կամ ամբողջ թեմայից և այլն:

**Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական ու հումանիտար հոսքերում աշխատանքի կազմակերպումն ըստ օրերի:**

**Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր**

1-ին դասաժամ, 45 րոպե – դասախոսություն

2-րդ դասաժամ, 45 րոպե – թեմայի յուրացում (փոփոխական կազմով զույգերով աշխատանք)

3-րդ դասաժամ, 35 րոպե – թեմայի յուրացում (փոփոխական կազմով զույգերով աշխատանք), թեմայի ամփոփում փոքր ենթախմբերում, ստուգում, գնահատում, 10 րոպե – ամփոփում, ինքնասանդրադարձ վերլուծություն

**Հումանիտար հոսք**

1-ին դասաժամ, 45 րոպե – դասախոսություն

2-րդ դասաժամ, 45 րոպե – թեմայի յուրացում (փոփոխական կազմով զույգերով աշխատանք)

3-րդ դասաժամ, 45 րոպե – թեմայի յուրացում (փոփոխական կազմով զույգերով աշխատանք), թեմայի ամփոփում փոքր ենթախմբերում

4-րդ դասաժամ, 45 րոպե – թեմայի ամփոփում փոքր ենթախմբերում, ստուգում, գնահատում

5-րդ դասաժամ, 35 րոպե – քննարկում փոքր ենթախմբերով «Պատմական արդարության վերականգնում: Կորսված հայրենիքի վերադարձ» թեմայով (4-5 ենթախումբ, աշխատանք փոքր ենթախմբերում՝ 10 րոպե, աշխատանքի արդյունքների ներկայացում՝ 25 րոպե) 10 րոպե – ամփոփում:



## TEACHING THE THEME “THE ARMENIAN GENOCIDE” AT HIGH SCHOOLS BY COLLECTIVE EDUCATIONAL TRAININGS

The article represents a sample of teaching the theme “The Armenian Genocide” in High Schools, which is implemented through collective educational sessions. The course of the lesson is described in details where Rivin Inverse Method is used, there are given the peculiarities of method usage. There is made a reflection on learners achievements which are received through Rivin Inverse Method. The article defines teaching propositions, goals and issues of the theme “The Armenian Genocide” in High Schools, as well as it suggests all the necessary interdisciplinary ducational didactic means for effective teaching.

*ԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

### ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՐՍ ՔԱՂԱՔԸ ՕՐՀԱՆ ՓԱՍՈՒՔԻ «ՁՅՈՒՆԸ» ՎԵՊՈՒՄ

*«...Վիպասանի «քաղաքականությունը» առաջանում է նրա  
երևակայությունից,  
ուրիշը լինելու կամ ուրիշին պատկերացնելու նրա կարողությունից:  
Այդ ընդունակությունը վիպասանին դարձնում է մի խոսնակ,  
որը բարձրաձայն խոսում է նրանց փոխարեն,  
ուվքեր չեն կարող ճշմարիտ իրականության մասին արտահայտվել»:  
Օրհան Փամուք<sup>1</sup>*

2006 թվականի Նոբելյան գրական մրցանակակիր և մինչ այդ իր երկրում և գրական աշխարհում բազում այլ բարձր գնահա-

---

<sup>1</sup> «Ազգ», օրաթերթ, Հավելված մշակույթ, թիվ 16, թարգմանեց Հակոբ Ծուլիկյանը (հոդվածը թուրքերենից Մորին Ֆիլիի թարգմանությամբ առաջին անգամ հրատարակվել է «Գարդիան» անգլիական թերթում, որտեղից արտատպել է «Արմինյն միտր սփեքթեյթը» շաբաթաթերթը), Արվեստագետի արտահայտվելու ազատությունը նաև մեր ազատությունն է , 28. 10. 2006, էջ Ա. (*հետպսու «Ազգ», թիվ-*):

տականների արժանացած թուրք գրող Օրհան Փամուքը այս նվաճումը ձեռք է բերել առայժմ հեղինակած իր 9 վեպերով<sup>2</sup>, որոնք ընթերցվում են 60 լեզուներով<sup>3</sup>, շուրջ 11 միլիոն օրինակով<sup>4</sup>:

2002 թ. հրատարակված «Չյունը» վեպը նույնպես գտել է իր ընթերցողին և թարգմանվել է երկու տասնյակ լեզուներով, ինչպես և բնագրից հայերենը (թարգմանիչ՝ Հակոբ Սողոմոնյան)<sup>5</sup>: Տեղ է զբաղեցրել 10 «գնալուն գրքերի» (*best seller*) ցուցակում, 2005 թ. արժանացել է ֆրանսիական «Մեդիչի» մրցանակին (*Prix Médicis Etranger*) «Ֆրանսերեն թարգմանված լավագույն արտասահմանյան վեպ» անվանակարգով<sup>6</sup>, բեմականացվել է Գերմանիայում (Ֆրեյբուրգի քաղաքային թատրոնում)<sup>7</sup>, ապա 2008թ. Ստամբուլում<sup>8</sup>:

Վեպն արժանացել է նաև գրաքննադատների ուշադրությանը: Ըստ ամերիկացի գրող Սարա Էմիլի Միանոյի՝ վեպը, այլևայլ գնահատումներով հանդերձ, նկատվել է որպես քաղաքական թրիլլեր՝ «*տոգորված ռուս գրող Դոստոևսկու շնչով*»<sup>9</sup>, և վերջապես «*Մարդու կյանքը նման է ձյան փաթիլի, որի ձևերը առաջին հայացքից թվում են նման, բայց բազմազանության պատճառով տարբեր են ...*»<sup>10</sup>, իսկ

---

<sup>2</sup> 1982 թ.՝ «Ջնդեթ Բեյը և որդիները» (թրք.՝ *Cevdet Bey ve Oğulları*), 1983 թ.՝ «Անձայն տուն» (թրք.՝ *Sessiz Ev*), 1985 թ.՝ «Սպիտակ ամրոց» (թրք.՝ *Beyaz Kale*), 1990 թ.՝ «Սև գիրք» (թրք.՝ *Kara Kitap*), 1994 թ.՝ «Նոր կյանք» (թրք.՝ *Yeni Hayat*), 1998 թ.՝ «Բւ անունը Կարմիր է» (թրք.՝ *Benim Adım Kırmızı*), 2002 թ.՝ «Չյունը» (թրք.՝ *Kar*), 2008 թ.՝ «Անմեղության թանգարան» (թրք.՝ *Masumiyet Müzesi*), 2014 թ.՝ «Գլխումս խառնաշփոթ» (թրք.՝ *Kafamda bir Tuhaflık*):

<sup>3</sup> <http://orhanpamuk.net/news..>, 17. 09. 2015.

<sup>4</sup> 2006 թ.՝ Նոբելյան մրցանակը ստանալուց հետո, Փամուքի գրքերը վաճառվել են 200,000 օրինակով, որը ռեկորդ է համարվում գրական աշխարհում:

<sup>5</sup> Օրհան Փամուք, *Չյունը*, թարգմ.՝ Հակոբ Սողոմոնյանի, Համագլխային հայ կրթական և մշակութային միություն, Երևան, 2009, էջ 402 (*հետադարձ Չյունը*, էջ -):

<sup>6</sup> Волков Валерий, Опубликован первый список премии Медичи, [www.reshto.ru](http://www.reshto.ru), 12.10. 2005, Орхан Памук, Снег, [www.community.livejournal.com](http://www.community.livejournal.com), 22. 01. 2006

<sup>7</sup> Theatre Freiburg put on scene Orhan Pamuk's "Snow" at the presence of the author, [www.orhanpamuk.net/news.aspx?id=18&lng=eng](http://www.orhanpamuk.net/news.aspx?id=18&lng=eng), 20. 10. 2015.

<sup>8</sup> ALİ PEKTAŞ «Snow» comes from Germany to Turkey, Today's Zaman, 29 May 2008, [http://www.todayszaman.com/arts-culture/snow-comes-from-germany-to-turkey\\_143225.html](http://www.todayszaman.com/arts-culture/snow-comes-from-germany-to-turkey_143225.html), 20. 10. 2015.

<sup>9</sup> Sarah Emily Miano, The Observer, "Snow" by Orhan Pamuk, [www.orhanpamuk.net](http://www.orhanpamuk.net), 20. 07. 2005.

<sup>10</sup> Նույն տեղում:

Օրհան Փամուքի երկերի անգլերենի թարգմանիչ, գրող Մաուրեն Ֆրիլին փորձել է գտնել վեպի ընդարձակության սահմանները, որ «*Վեպը կարդալիս չգիտես, թե որտեղ ես կամ հետո ուր ես տեղափոխվելու*»<sup>11</sup>, անգլիացի գրող-արվեստագետ Ռուբ Ֆրենկլինը «Չյունը» վեպի ընթերցումը ավարտելով, իրեն անխուսափելիորեն գտել է «խորհրդավոր» ձյան տպավորության տակ. «*Երբ ավարտեցի վեպի ընթերցումը Վաշինգտոնի կրակոտ ամռան օրերին, երկար ժամանակ մտքերս Կանի և Իփեքի հետ հյուրանոցի համարում էին և նրանց հետ նայում էի անդադար տեղացող ձյանը*»<sup>12</sup>:

Վեպի պյուժեն (պատմությունը) սկսվում է 70-ական թվականներից՝ որպես քաղաքական վտարանդի Գերմանիայում ապրող, 90-ականներին մոր մահվան լուրը առնող Կա-հերուսի՝ Ֆրանկֆուրտից Ստամբուլ վերադարձով: Ընկերոջ՝ «Ջյումհյուրիեթ» թերթի քաղաքական մեկնաբանի հորդորով մեկնում է Կարս<sup>13</sup> (որտեղ եղել էր 20 տարի առաջ), թերթի համար գրելու տեղեկատվություն Կարսի քաղաքապետի ընտրության և գլխաշորով մահմեդական կանանց միջավայրում կատարվող ինքնասպանությունների մասին<sup>14</sup>:

<sup>11</sup> Maureen Freely, *Snow*, Business, <http://orhanpamuk.net/popuppage.aspx?id=98&lng=eng>, 19. 09. 2015.

<sup>12</sup> Ruth Franklin, *Winter's Tale*, Sunday, August 29, 2004, THE WASHINGTON POST, 29.8.2004, <http://orhanpamuk.net/popuppage.aspx?id=95&lng=eng>, 19. 09. 2015.

<sup>13</sup> Քաղաք Արևմտյան Հայաստանում: Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վանանդ գավառի գլխավոր բերդերից: «Կարուց բերդ», «Ամուրն Կարուց», «Ամրոցն Կարուց» և նման այլ անվանումներով են հիշատակել Կարսը հայ և օտար մատենագիրները (Ստեփանոս Տարոնեցի, Թովմա Արծրունի, Արիստակես Լաստիվերցի, Մատթեոս Ռոռնայեցի և այլք): IX-X դդ. Կարսը ներկայանում է հայտնի քաղաք, արհեստների և տարանցիկ առևտրային կենտրոն Անիի, Դվինի, Արծնի, Կարինի, Արտանուշի, Տփղիսի, Տրապիզոնի և այլ քաղաքների շրջանակով:

XVI դարից որպես Օսմանյան կայսրության ենթակա տարածք, կազմել է առանձին Կարս էյալեթ իր 6՝ Կարս, Խոջեան< Զարիշատ, Քեջվան (Կեչվան), Կաղզման (Կաղզվան) և Շորագյալ (Շիրակ) սանջակներով: Կարսը իր աշխարհագրական միջավայրով Օսմանյան կայսրության տարածաշրջանային ընդհանուր համակարգում երբեմն ընդգրկվել է նաև Էրզրումի էյալեթի մեջ: (Կարսի մասին հանգամանորեն տես Հակոբ Մուրադյան, *Կարսի նահանգի վարչա-ժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին*, Երևան, 2006 թ., նաև Օսմանյան կայսրության վարչական բաժանումների ցանկ, ՄՄ Մատենադարան, Չեռ. համար. 299, էջ 14ա):

<sup>14</sup> Angel Gurria Quintana, “*Snow*” by Orhan Pamuk, [www.orhanpamuk.net](http://www.orhanpamuk.net), 20. 07. 2005.

Կան, հայտնվելով Կարսում, վերհիշում է իր մանկությունը, երիտասարդական տարիների իր սիրած էակին, փորձում է վերագտնել իր Իփեքին: Սիրո այս թեմային զուգահեռ զարգանում է վեպի սյուժեն քաղաքի հասարակական կյանքն ալեկոծող խնդիրներով՝ Կարսում տիրող քաղաքական և կրոնական լարվածության, քեմալական աշխարհիկության և Իսլամիստական պահպանողականների շարժման միջև ընթացող պայքարի, ազգային խմբերի՝ թուրք-քուրդ ազգայնականության դրսևորումների, գաղափարական խմբավորումների վրա ներգործող Արևմուտքի և Արևելքի հարաբերությունների, պատմական քաղաքի երբեմնի դերի և նշանակության, հեռու և ոչ հեռու եղելությունների մասին հիշողություններ արթնացնող, ամենուրեք իր էթնիկ ժողովրդի գոյությունը վկայող մշակութային մնացորդների հարցերով: Եվ սյուժետային այս հյուսվածքի՝ գործողությունների, երևույթների իրարամերժ քաղաքական շերտերի առանցքում է հայտնվում վեպի գլխավոր գործող անձ Կան:

Ի վերջո սյուժեն հանգուցակետում է: Սյուժեի որպես տրամաբանական ավարտ տեղի է ունենում Թուրքիայի Հանրապետությունում հերթական զինվորական հեղաշրջումը Ազգային թատրոնում «Հայրենիք կամ գլխաշոր» երկու պայքարող ուժերի խորհուրդը կրող ներկայացման ժամանակ:

Կա - հերոսը ձեռնունայն վերադառնում է Գերմանիա, որտեղ տարիներ անց սպանվում է իր ազգակցի ձեռքով:

Եվ ահա այդ պահին հայտնվում է Կարսում ինքը՝ հեղինակը՝ Օրհան Փամուքը՝ որպես ընկերոջ Կայի կարսյան կյանքի վերապրող՝ քննելու և մեկնելու քաղաքում տեղի ունեցող երևույթների, քաղաքական, հասարակական տեղաշարժերի բովանդակությունը անցյալի, ներկայի և գալիքի պատմության հյուսվածքի մեջ:

Օրհան Փամուքը մշտապես իր վեպերում իրականությունը ճշմարիտ հայացքով է տեսնում և դրա բացահայտման ճանապարհ համարում է պատմությունը, որի շնորհիվ հասարակությունը կարող է դրականորեն վերափոխվել<sup>15</sup>:

Մեր խնդիրը չէ մեր խոսքի շրջանակում հանգամանորեն վերհանել «Ձյունը» վեպի գրական ստեղծագործական արժեքները, այլ համառոտակի անդրադառնալ գրողի՝ իրականությունը ճշմարիտ

---

<sup>15</sup> «Ազգ» օրաթերթ, թիվ 16, Հավելված մշակույթ, 28. 10. 2006, էջ Ա:

հայացքով տեսնելու խոստումին՝ պատմական Կարս քաղաքի մշակութային մնացորդների նկատմամբ ունեցած հեղինակի վերաբերմունքին:

Փամուքը տարիներ շարունակ երազել է գրել մի վեպ, որտեղ անդադար ձյուն կտեղար, և գործողությունների վայրը երկրի կենտրոնից էլ հեռու կլիներ: Կարսը իր պայմաններով համապատասխանել է նրա մտահղացմանը. «*Երբ առաջին անգամ, 25 տարի առաջ Կարս կատարած այցելությունս հիշեցի, մտաբերեցի քաղաքի սառնությունը, իսկ նրա պատմական, ձյունով լի ձմեռները ինձ ուղղորդեցին վեպի գործողությունների վայր ընտրել Կարսը*»<sup>16</sup>:

Փամուքը նկատում է. «*Շատ քիչ բան գիտեի Կարս քաղաքի մասին, նախքան գրական հենք դարձնելս: ... Այս այցելությանս ժամանակ էլ ձեռք բերեցի ընկերներ, ծանոթացա հեռավոր և մոռացված քաղաքի ամեն անկյունին, զրուցեցի իրենց ժամանակը սրճարաններում անցկացնող գործազուրկների, ուսանողների, թերթերի հրատարակիչների, ոստիկանների հետ, որոնք ամենուրեք ինձ էին հետևում*»<sup>17</sup>:

Օրհան Փամուքը հավանել է քաղաքի «գավառական» միջավայրը, հրաշալի շինությունները, լայն պողոտաները: Այցելել է գործող կուսակցությունների գրասենյակները, դիտել է աքլորակոխները, հանդիպել նահանգապետին, լսել կարսեցիների բողոքները՝ աղքատության, անուշադրության, կառավարության ճնշումների և անարդարությունների մասին<sup>18</sup>:

Օրհան Փամուքը, անդրադառնալով Կարս քաղաքի պատմական շերտին, գրում է. «Եղել է ժամանակ, երբ Կարսում ապրել են միջին խավի բարեկեցիկ մարդիկ և օրեր տևող ընդունելություններ ու պարահանդեսներ են կազմակերպվել առանձնատներում: Այդ մարդիկ առևտրով կարողացել են կարողություն ձեռք բերել, որովհետև Կարսը գտնվել է Վրաստան, Թավրիզ, Կովկաս և Թիֆլիս տանող բանուկ ճանապարհների խաչմերուկում, ... երկու հզոր՝ Օսմանյան և Ռուսական կայսրությունների սահմանագծին: Երկու կայսրություններն էլ զենք ու միջոց չեն խնայել ռազմավարական

<sup>16</sup> Орхан Памук. *Другие цвета*, Перевод: Аполлинария Сергеевна Аврутина, СПб, 2008, стр. 135.

<sup>17</sup> «Ազգ» օրաթերթ, թիվ 16, Հավելված մշակույթ, 28. 10. 2006, էջ Ա:

<sup>18</sup> Орхан Памук. *Другие цвета*, стр. 137.

կարևոր նշանակություն ունեցող, լեռներով շրջապատված այդ բնակավայրը գրավելու և պաշտպանելու համար: Դա սկզբում նպաստել է Կարսի վերելքին, սակայն վերջին հարյուրամյակում հենց այդ հանգամանքն էլ Կարսի անկման պատճառ է եղել:

Օսմանների օրոք այստեղ ապրել են տարբեր ազգության մարդիկ՝ որոնք տարածաշրջանում բնակություն էին հաստատել դեռևս պարսկական, բյուզանդական և պոնտական տիրապետությունների շրջանում: Եղել են նաև մարդիկ, ովքեր այստեղ ապրել են Հայկական պետության ժամանակներից, և նրանց՝ դեռ հազար տարի առաջ կառուցած վանքերից մի քանիսն իրենց ողջ հրաշագեղությամբ կանգուն են առ այսօր:

Այն բանից հետո, երբ հինգ հարյուր տարի առաջ կառուցված բերդը 1878 թ. հանձնվել է ռուսական զորքերին, Կարս քաղաքը շարունակել է մնալ հարուստ և բազմազգ բնակավայր: Ռուսական տիրապետության շրջանում Կարս գետակի հարավային տափարակում ընդարձակվել է քաղաքը, արագորեն հարստացել և բաղկացած է եղել զուգահեռ հինգ փողոցներից ու մի պողոտայից, որոնք միմյանց լրացրել են այնպիսի զարմանալի ներդաշնակությամբ, ինչպիսին չի ունեցել արևելյան և ոչ մի քաղաք: ... Անվերջանալի պատերազմներից, զանգվածային կոտորածներից և ապստամբություններից հետո, ... երբ մի կարճ ժամանակահատված Կարսը անկախ հռչակվեց (նկատի ունի Հայաստանի Առաջին հանրապետությունը՝ 1918 թ. մայիսի 28 - Ա.Ա.), 1920 թ. հոկտեմբերին Կարս մտան թուրքական զորքերը՝ Քյազիմ Կարաբեքիր փաշայի հրամանատարությամբ... Թուրքերը, որ քառասուններեք տարի անց կրկին գրավեցին քաղաքը, փոխեցին քաղաքի կառուցապատման ցարական նախագիծը և բնակություն հաստատեցին այստեղ և ռուսական հինգ փողոցները վերանվանեցին Կարսի պատմությանը հայտնի թուրք գեներալների անվամբ, որովհետև չէին պատկերացնում ավելի նշանավոր անձնավորություն, քան զինվորականն է...»<sup>19</sup>:

և արձանագրել է. «Ես գրել եմ վեպ ... ցանկացել եմ Կարսին հաղորդել քաղաքի նկատմամբ ունեցած իմ անձնական վերաբերմունքը, վեր հանել տիրող քաղաքային մթնոլորտը, առկա պրոբլեմ-

---

<sup>19</sup> *Չունք*, էջ 261, Orhan Pamuk, *Kar*, İletişim Yayınları, İstanbul, 2002, s. 276 (Հետադարձ՝ Kar, s.-):

ներք, որոնք որ ես էի պատկերացնում...»<sup>20</sup>:

Փամուքի՝ Կարսի հին ռուսական ու հայկական տներով քաղաքի անցյալը, ներկան միահյուսված են, մեկը մյուսի տրամաբանական շարունակությունն է: Բազմադարյա մշակույթի առկայությունը, հայերի, թուրքերի, ռուսների, քրդերի ներկայությունը զգացվում է քաղաքում, իրենց հետքն ակնհայտ է, ինչպես քաղաքի համայնապատկերի, այնպես էլ նրա պատմության վրա:

Կարս քաղաքի ամեն քար, շինություն ունի իր պատմությունը, իր ճակատագիրը քաղաքի և քաղաքաբնակների պես: Փամուքը իր հերոսների միջոցով ընթերցողին զբոսանքի է տանում Կարսի հնամենի վայրերով, հայկական, ռուսական լքված տների բակերով, փողոցներով, ծանոթացնում քաղաքի պատմությանը: Ըստ Փամուքի՝ Կարսը նման է բոլորի կողմից լքված քաղաքի, հատկապես գիշերները: Նախկինում հայերին պատկանած տների դարպասները փակ են, արդեն ութսուն տարի (արդեն մեկ դար –Ա.Ա.) անբնակ են այդ տները<sup>21</sup>:

Ահա Փամուքի հերոս Կան ձյունածածկ Կարսում կանգ է առնում «Ձյունե ապարանք» հյուրանոցում՝ ռուսական պետերբուրգյան ոճով կառուցված, բարձրադիր պատուհաններով, երկհարկ նրբագեղ շինության մեջ՝ *«Լի ուրվականներով և մեռյալների հառաչանքով...»*<sup>22</sup>: ...Անկախ այն բանից, թե ով է եղել շուրջ 110 տարի առաջ կառուցված այդ շենքի առաջին տերը, նա այն կառուցել էր ճիշտ այնպես, ինչպես Կարսի մյուս շենքերն այդ շրջանում, տունն ուներ պատերի մեջ տեղադրված վառարան, որը կոչվում էր «փեջ», այն քառակողմ էր և միաժամանակ տաքացնում էր չորս սենյակ: *Հանրապետական շրջանում թուրքերն այդպես էլ չկարողացան օգտվել դրանցից, և տունը հյուրանոցի վերածած առաջին թուրքը մուտքի դռան մոտ տեղադրեց արույրե հսկայական վառարան, իսկ հետագայում շոգեջեռուցում անցկացրեց մյուս սենյակները*<sup>23</sup>: Այսպիսի շենքերի մինչև այսօր մենք հանդիպում ենք Գյումրի քաղաքում, ինչպես և Երևանում:

<sup>20</sup> Орхан Памук. *Другие цвета*, стр. 135.

<sup>21</sup> *Ձյունը*, էջ 57, *Kar*, s. 57.

<sup>22</sup> *Ձյունը*, էջ 41, *Kar*, s. 39.

<sup>23</sup> *Ձյունը*, էջ 29, *Kar*, s. 27.

Ահա այդ շինություններից է Բմամ հաթիբների լիցեյի շենքը<sup>24</sup>, որը ժամանակին եղել է ռուսական ներկայացուցչություն, իսկ դրանից առաջ տան տերը եղել է մի հարուստ հայ: Ռուսական զորքերի ներկայության ժամանակ հայերին տեղահանել են, և այն վերածվել է ռուսական զինվորական շտաբի, իսկ երբ քաղաքը անցել է թուրքերին, տանը տիրացել է մի հարուստ ադրբեջանցի, ... իսկ հիմա տունն արդեն ունի նոր տեր<sup>25</sup>:

Բմամ հաթիբների լիցեյի նախկին հանրակացարանը մի ժամանակ նույնպես եղել է հայի առանձնատուն, որի դարպասը հայ դարբինների լուռ վկան է<sup>26</sup>, իսկ հետո դարձել է հյուպատոսարան, որտեղ իր շան հետ ապրել է ռուս հյուպատոսը: Հիմա փակ է<sup>27</sup>:

Ահա ընթերցողի տեսադաշտում հայտնվում են Կարսի եկեղեցին, Վարդանի քարե կամուրջը՝ Կարսի երկու խորհրդանիշերը: Փամուքն արձանագրում է. «...Կան նայում էր ռուսական հին ու խարխլված տներին, որոնց պատուհաններից դուրս էին ցցվել վառարանների ծխնելույզները: Նայում էր ձյանը, որը ծածկում էր փայտաշեն պահեստների և էլեկտրական փոխարկիչի միջև վեր խոյացող հայկական եկեղեցին (Առաքելոց վանք-Ա. Ա.)՝ լքված արդեն հազար տարի: Նայում էր կատաղի շներին, որ մոլեգին հաչում էին սառցե կապանքներով կաշկանդված Կարս գետակի վրա հինգ հարյուր տարի առաջ կառուցված քարե կամուրջը անցնող յուրաքանչյուր անցորդի ետևից»<sup>28</sup>:

Փամուքը հիշեցնում է ընթերցողին, թե Կարսի Անվտանգության վարչության եռահարկ երկարավուն շինությունը 1877-1918 թթ. եղել է մեծահարուստ հայի առանձնատուն, ունեցել է 40 սենյակ, որը հետագայում վերածվել է ռուսական հիվանդանոցի<sup>29</sup>:

Քաղաքապետարանի եռահարկ գեղեցիկ շենքը և ֆինանսների

---

<sup>24</sup> Բմամ հաթիբների կրոնական դպրոցի նպատակն է պատրաստել քարոզիչներ և իմամներ (հոգևոր առաջնորդներ): Այն հիմնադրվել է 1924 թ.: 1973 թ. դպրոցը վերանվանվել է «Բմամ հաթիբների լիցեյ» (թրք. *İmam Hatip Lisesi (İHL)*): 1976 թ. դպրոց են սկսում ընդունվել նաև աղջիկներ (տե՛ս մանրամասն, İH Efsaneler-Gercekler.pdf, s. 15):

<sup>25</sup> Орхан Памук. *Другие цвета*, стр. 137:

<sup>26</sup> Չյունը, էջ 161, *Kar*, s. 169.

<sup>27</sup> Չյունը, էջ 392, *Kar*, s. 418.

<sup>28</sup> Չյունը, էջ 17, *Kar*, ss. 15-6.

<sup>29</sup> Չյունը, էջ 19, *Kar*, s. 17.



վարչության Կարսի ամենապերճատես շինությունը ևս հայերից մնացած ժառանգությունն են<sup>30</sup>:

Ազգային թատրոնի շենքը, որտեղ մի ժամանակ փորձեր են արել Մոսկվայից ու Պետերբուրգից ժամանած կրկեսի արտիստները, Մոլիեր բեմադրող հայ դերասանները, Ռուսաստանով մեկ շրջագայության մեկնող երաժիշտներն ու պարախմբերը<sup>31</sup>, որի սրահում առկա փայտե ճաղաշարին հենվել են հայ երազկոտ, աղքատ օրիորդները, որոնք էժան տոմսերով, ոտքի կանգնած դիտել են ներկայացումներն ու լարախաղացների ելույթները, ունկնդրել կամերային նվագախմբի համերգները<sup>32</sup>, իսկ մասնավոր օթյակում 1900-ական թվականներին նստել է կաշվեղենի մեծահարուստ հայ վաճառական Գրիգոր Ճզմաչյանը (թուրքերենից՝ *Cizmecci* (*ձիզմեջի*) *ձոքավոր կոշիկների վաճառական և կոշկակար* - Ա.Ա.), մորթե զգեստներով պճնված իր ընտանիքի անդամների հետ<sup>33</sup>:

Փամուքն ընդգծում է, որ թատրոնի շենքը Մուխթարը վերածել է կենցաղային իրերի պահեստի՝ արդարանալով՝ «շինությունը ոչ թե թուրքական է, այլ հայկական»<sup>34</sup>:

Ազգային թատրոնից երկու փողոց այն կողմ՝ 90 տարի առաջ կառուցված և ռուսների ժամանակներից մնացած միահարկ գեղեցիկ շինությունը դարձել է հարուստ վաճառական Մարուֆ բեյի սեփականությունը, բայց 80-ականների հեղաշրջումից հետո վերածվել է արաբական երկրից հայրենիք վերադարձած դերձակի արհեստանոցի<sup>35</sup>:

Կարսում դեռևս կան տներ, ինչպես Կարադաղի պողոտայի շրջադարձին երևացող միահարկ, պատուհանները տախտակներով խուլ մեխած հայկական տունը, որը մեր պատկերացումով կարծես համբերատար սպասում է իր տիրոջը<sup>36</sup>:

Փամուքն իր ընթերցողին ուղեկցում է նաև Կարսում գործող պատմության թանգարան, որտեղ ցուցադրվում են «Նոր կյանք» հրուշակարանի տեղում մինչև 1967 թ. կանգուն մնացած ուղղափառ

---

<sup>30</sup> *Չյունք*, էջ 156, *Kar*, s. 164.

<sup>31</sup> *Չյունք*, էջ 375-376, *Kar*, s. 399.

<sup>32</sup> *Չյունք*, էջ 150, 151, *Kar*, ss. 157, 158.

<sup>33</sup> *Չյունք*, էջ 152, *Kar*, s. 159.

<sup>34</sup> *Չյունք*, էջ 388, *Kar*, s. 413.

<sup>35</sup> *Չյունք*, էջ 178, *Kar*, s. 187-8.

<sup>36</sup> *Չյունք*, էջ 156, *Kar*, s. 164.

եկեղեցու դուռը<sup>37</sup>, քրիստոնեական աշխարհից մնացած մշակութային շերտեր, որոնք խոսում են մի ողբերգության մասին մի շարք հարցեր ծագեցնելով: Առաջ է քաշում նաև հայերի ցեղասպանությանն առնչվող հարցը՝ նույնիսկ հնչեցնելով թուրքական պաշտոնական կարծիքը կոտորածների վերաբերյալ: Այդ թանգարանում կա բաժին, որը նվիրված է ոչ թե թուրքերի կողմից սպանված հայերին, այլ հակառակը:

Այսպիսով, Փամուքի այս հիշատակումները կարծես, թեև անուղղակիորեն, ընթերցողների մաքուր մտքերում ծագեցնում են պատասխան պահանջող հարցեր՝ որտեղ են «Այս քաղաքային մշակույթի տերերը, նրանք ու իր անհետացան»:

Այս հարցերի պատասխանը տալիս է Օրհան Փամուքը, երբ 2005 թ. հրավիրվում է Գերմանիա «Ձյունը» վեպի գերմաներեն հրատարակության շնորհանդեսին և այդ առթիվ շվեյցարական «Թագես Անզեյգեր» թերթին տված իր հարցազրույցում. *«Թուրքիայում 30 հազար քուրդ և 1 միլիոն հայ է սպանվել: Ոչ ոք դա չի հանդգնում ասել, ես ասում եմ...»*:

ANI AVETISYAN (Armenia)

## THE HISTORICAL KARS IN ORHAN PAMUK'S “SNOW” NOVEL

The author of the paper will present the Modern Turkish writer, the winner of the Nobel Price in Literature Orhan Pamuk's (Ferit Orhan Pamuk) “Snow “ novel and will shortly introduce the literary value of the novel, as well as evaluations of readers and critics.

Furthermore, the author will clarify some questions raised in the novel: Why the Kars has been chosen as the centre of events? How was the Kars represented in the novel, with its historical past and present? Which is Pamuk's real Kars...? Memory awakening streets, abandoned, inhabited buildings, even with new owners: Where are the people who were walking across the street, living on this land...? Where did they disappear? Why did they disappear? Where are the people who share their lives with foreign neighbours?

---

<sup>37</sup> Ձյունը, էջ 39, Kar, s. 37.

A lot of questions and reviews: Orhan Pamuk gives the opportunity to his readers to find out the true answer.

Finally, the author of the paper assumes that the words of Orhan Pamuk (2005): "One million Armenians and thirty thousand Kurds were killed in Turkey. And almost nobody dares to mention that. So I do..." were the result of the creative process of the novel "Snow" published in 2002.

### *ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

## **ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՀԱՅԵՐԵՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ)**

Աշխարհը վերաբաժանելու և նրա քաղաքական քարտեզը վերաձևելու նպատակով 1914 թ. օգոստոսի 1-ին բռնկված Առաջին աշխարհամարտն իր աղետալի հետևանքներով աննախադեպ էր մարդկության պատմության մեջ: Թեև Հայաստանը որևէ առնչություն չէր ունեցել դրա սանձազերծմանը, սակայն ցավալիորեն դարձավ այդ համամարդկային աղետի մեծագույն զոհը: Պատերազմում հայ ժողովուրդը կրեց ամենածանր ողբերգությունը՝ տալով ավելի քան 1,5 միլիոն զոհ և կորցնելով իր պատմական հայրենիքի մեծագույն մասը:

1915 թ. Հայոց Մեծ եղեռնից շուրջ 100 տարի անց էլ դեռ հանրային գիտակցության մեջ ցեղասպանությունը շարունակում է առավելապես ընկալվել որպես ճանաչման հիմնահարց: Սակայն պարզ դիտարկումները ցույց են տալիս, որ Օսմանյան կայսրությունում այն ի սկզբանե կասկածի տակ չի առնվել ո՛չ համաշխարհային և ո՛չ էլ թուրքական հանրության կողմից: Անտանտի երկրները հայերի բնաջնջման քաղաքականությունը դատապարտել են արդեն 1915 թ. մայիսին ընդունած համատեղ հայտարարությամբ, իսկ թուրքական հասարակությունը յուրահատուկ ձևով այն ընդունել և նույնպես դատապարտել է 1919 թ. ամռանը՝ երիտթուրք մի շարք առաջնորդների նկատմամբ իրականացրած դատավարությամբ ու խստագույն դատավճիռներով:

Սակայն Լոնդոնի (1921) և Լոզանի (1922-1923) խորհրդածո-

ղովներից հետո Հայկական հարցը հետզհետե դուրս մղվեց միջազգային դիվանագիտության ոլորտից և սկսեց մոռացության տրվել:

Անկախ պետականության բացակայության պայմաններում 1921-1991 թթ. միջազգային ասպարեզում հայ դատի հետապնդման խնդիրն առավելապես մնում էր սփյուռքահայության «մենաշնորհը»: Թերևս կարելի է հիշել միայն 1945-1947 թթ., երբ Խորհրդային Միության արտաքին քաղաքականության համատեքստում Խորհրդրդային Հայաստանի անունից խնդիր դրվեց շոշափել նաև հայկական հողերի հարցը: Սակայն այն հանդիպեց անգլո-ամերիկյան կողմի ուժեղ հակազդեցությանը: Շուտով այն մոռացության տրվեց նաև ԽՍՀՄ-ի կողմից: Ավելին՝ 1953 թ. մայիսին խրուշչովյան ղեկավարությունը հրաժարվեց Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից: Հայոց ցեղասպանության թեմայի և հարակից հարցերի արծարծումը խորհրդային երկրում փաստորեն դարձավ խիստ վտանգավոր, արգելված և փակ թեմա:

Միայն 1965 թ. Հայոց Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի օրերին, Հայրենիքում և Սփյուռքում հայ ժողովուրդը բարձրաձայնեց իր խնդիրը՝ Ցեղասպանության դատապարտման ու բռնազավթված հայրենիքը վերադարձնելու պահանջների արձարժմամբ:

Այդուհետ սկսվեց մի ժամանակաշրջան, երբ հայկական կողմը, ակամայից մոռացության տալով դատապարտման ու հատուցման հրամայականը, իր բոլոր հնարավոր միջոցներն ի սպաս դրեց թուրքական մերժողականությանը հակադարձելու համար:

1988 թ. սկսվեց հուժկու Արցախյան շարժումը, որի ընթացքում, մասնավորապես սումգայիթյան ողբերգության առիթով, ցեղասպանության հարցը զուգահեռաբար դարձավ հասարակական քննարկումների նյութ: Խնդիրը տրամաբանորեն հասավ մինչև Խորհրդային Հայաստանի խորհրդարան Գերագույն խորհուրդ, որտեղ, հակառակ մոսկովյան ղեկավարության կամքի, նոյեմբերի 22-ին ընդունվեց Մեծ եղեռնը դատապարտող օրենք: Թվում էր, որ այս կարևոր բանաձևով սկսվում էր ինքնուրույնության ուղին բռնած Հայաստանում Ցեղասպանության խնդիրը պետական քաղաքականության ուղղություններից մեկը դարձնելու ժամանակաշրջան: Ավա՜ղ, այդպես չեղավ: Ցավալի է, սակայն Հայ դատի հետապնդման ճանապարհին առ այսօր պետական, հայեցակարգային մոտեցում չկա: Ուստի հայության համար այս կենսական խնդրի

լուծման նպատակով ազգի բոլոր ուժերի համախմբումը դառնում է կյանքի հրամայական:

Քսաներորդ դարի աշխարհացունց ոճրագործությունը՝ 1915-1916 թթ. Հայոց Մեծ եղեռնը, մեր նորագույն պատմության ամենասև եջն է: Հետագա բոլոր կարևորագույն պատմական իրադարձությունները պտտվում են այդ առանցքի շուրջ, և այսօր էլ այն պահպանում է իր պատմաքաղաքական այժմեականությունը:

Հայոց Մեծ եղեռնի մասին շատ է գրվել, գրել են աննախընթաց մղձավանջից հրաշքով փրկվածները՝ անմոռաց պահելու համար հարյուր հազարավոր անմեղ գոհերի հիշատակը, չեն զլացել ահավոր սպանդի և միաժամանակ հայոց գերմարդկային մաքառումների քիչ թե շատ համակարգված պատմությունը թղթին հանձնել ժամանակի պատմաբանները, հասարակական գործիչները, գրել են իրադարձություններին հաղորդակից օտարերկրյա քաղաքական, ռազմական, դիվանագիտական, կրոնական, մշակութային գործիչները: Գրել են, գրում են ու դեռ շատ կգրեն: Ստեղծվել է պատկառելի ծավալով տարալեզու գրականություն, որն իր գերակշիռ մասով միտված է աշխարհին, մարդկությանն ու սերունդներին պատմելու ճշմարտությունը հայ ժողովրդին վիճակված դաժան փորձության մասին, պատմության անաչառ դատաստանին հանձնելու թուրք մարդասպաններին ու դիմակազերծելու պատմության կեղծարարներին:

Հայոց Մեծ եղեռնը մեր ժողովրդի պատմության չխունացող և արդիականության օրակարգում մշտական տեղ զբաղեցրած հիմնահարցերից մեկն է, որի գիտատեսական և գաղափարական-քաղաքական բացառիկ կարևորությունն առանձնահատուկ հիմնավորման կարիք չունի: Այսօր, երբ մեր ժողովուրդը հետամուտ է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, դատապարտմանն ու հատուցման պահանջին, ազգային իղձերի իրականացմանը, այդ բնագավառի ամեն մի ուսումնասիրություն ձեռք է բերում ուղղակիորեն գործնական նշանակություն:

Սույն գեկուցման նյութը Հայոց Մեծ եղեռնի վերաբերյալ ստեղծված, Մեծ եղեռնին առնչվող կամ նրա առանձին դրվագներին աղերսվող հայագիր և հայերեն թարգմանված գրականության (արձակ և չափածո) մատենագիտության ստեղծման աշխատանքների պատմությունն ու ընթացքն է (մատենագիտության ստեղծման նպա-

տակն ու խնդիրները, նյութերի ընտրությունն ու դասավորության կարգը, գրական երկերի բնույթը և հարակից այլ հարցեր):

Աշխատանքը կատարում ենք այն համոզմամբ, որ այն, որպես օժանդակ ուղեցույց և բանալի, իր նպաստը կրերի Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի բազմակողմանի և համընդգրկուն ուսումնասիրության գործին, կարող է օգտակար լինել Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի պատմության ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետներին, ինչպես նաև հայոց պատմության և գրականության մասնագետների, ուսուցիչների, ուսանողների և ընթերցասեր հասարակայնության համար:

Մատենագիտության ժամանակային սահմանները հիմնականում, չհաշված առանձին մեկ-երկու բացառությունները, ընդգրկում են 1915–2015 թթ. գրքի տեսքով հրատարակված գրական ստեղծագործությունները:

Աշխատանքում նյութերը դասավորել ենք այբբենական կարգով և քարտային գրացուցակի ձևով՝ հաշվի առնելով հրատարակված ստեղծագործության ուղղագրությունը (արևելահայերեն, արևմտահայերեն, դասական ուղղագրություն) նկատի ունենալով այդօրինակ գրացուցակի մի քանի գործնական առավելությունները (լրացումների, վերադասավորության և համեմատելու հեշտությունը): Մատենագիտությունից օգտվելը դյուրացնելու նկատառումով հիմնական աշխատանքի վերջում կցել ենք նաև անձնանունների և տեղանունների ցանկեր:

Յուրաքանչյուր միավորի մատենագիտական նկարագրության մեջ նշել ենք հեղինակ(ներ)ին կամ կազմող(ներ)ին, վերնագրի, հրատարակչի, հրատարակության տեղի, ժամանակի, տպարանի վերաբերյալ ամփոփ տեղեկություններ:

Մատենագիտական ցանկ ընդգրկված գրական ստեղծագործությունները, ըստ բնույթի, տարասեռ են և կարելի է խմբավորել այսպես.

- ա) գեղարվեստական չափածո ստեղծագործություններ,
- բ) գեղարվեստական արձակ երկեր,
- գ) ականատեսների վկայություններ, հուշեր, հիշատակարաններ, նամակներ, որոնք հրատարակվել են ինչպես ականատես-հեղինակների, այնպես էլ նրանց ժառանգների կամ ուսումնասիրող մասնագետների կողմից,

դ) Մեծ եղեռնի զոհ նշանավոր հայ գործիչներին նվիրված գեղարվեստական կամ ոչ գեղարվեստական (ուսումնասիրություններ) գրական գործեր,

ե) Օսմանյան կայսրության կամ Արևմտյան Հայաստանի առանձին տարածաշրջանների կամ բնակավայրերի պատմագագագրական, տեղագրական ուսումնասիրություններ (պատմագիրք, հուշամատյան, հիշատակարան և այլն),

զ) առանձին հեղինակների ինքնակենսագրական կամ կենսագրական երկեր:

Մույն մատենագիտությունը մեր խոնարհումն է բյուրավոր հայ անմեղ զոհերի հիշատակին և Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին:

Ինչ խոսք, աշխատանքը գերծ չէ թերություններից, կլինեն նաև բացթողումներ, հետևաբար շնորհակալությամբ կընդունենք տեղին և օգտակար նկատառումները: Շնորհակալություն:

## **ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՀԱՅԵՐԵՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՏՎԱԾ)**

1. Ղուկասեան-Եագուպեան Լիւսի, Ողբերգ Ձեյթունի 1914-1922: [Վիպերգ, բանաստեղծութ.], /Կազմ. և առաջաբ.՝ Ա. Տազե-սեան/, Պէյրուք, տպ. Զարթօնք, 1987:
2. Ղուկասյան Մարգո Գ., Անվերնագիր... 1915: Փաստագրու-թյուն /խմբ.՝ Կ. Խոդիկյան/, Երևան, հեղինակային հրատ., 2011:
3. Ճամպազեան Բիւզանդ, Պատանի կեանքի մը պատմութիւնը /Առաջաբ.՝ Ն. վրդ. Բախտիկեան/, Անթիլիաս, տպ. Կաթողի-կոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1960:
4. Ճեպեճեան Տիգրան, Ապրուած օրեր հայասպանութենէն (Տէր-Զօր, 1915), Հալէպ, տպ. Կիլիկիա, 2001:
5. Ճեյքըպսըն Մարիա (Եագոպսըն), Օրագրութիւն. 1907-1919 Խարբերդ /Դանիերէն ձեռագիր բնագրէն թարգմանեցին՝ Ն. եպս. Բախտիկեան, Մ. Սիմոնեան/, Անթիլիաս, տպ. Կաթո-ղիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1979:
6. Ճիզմէճեան Մանուկ Գ., Խարբերդ եւ իր զաւակները, Ֆրեզնո,

Ա.հ., 1955:

7. Ճիւանեան Սարգիս Յ., Դրուագներ Թօմարգահայ կեանքէն: Խորհրդաւոր ձիւտորը եւ գեղանի Կուֆարը: Թօմարգայի հայ գեղջուկներուն փառքի եւ բախտի օրերը /Առաջաբ. Բ. Վ./, Paris, տպ. Հ. Թուրաբեան, 1952:
8. Ճինպաշեան Մելքոն, Ֆընտըճագ-Ֆընտըճօխ, Մոնթեվիտէօ, տպ. Ս. Կ. Զաքարեան, Մօնթեվիտէօի Ֆընտըճագի Հայրենակցական միութեան հրատ., 1949:
9. Ճղյան Հակոբ Ե., Սովերում մնացած կյանք [Վավերագրական վիպակ], /Խմբ. և առաջաբ.՝ Շ. Հ. Վարսյան/, Երևան, «Հայաստան», 1991:
10. Ճոնագեան Եփրեմ, Իրաւունքը ճշմարտութեան: Յուշեր չորս կոտորածներէ /Ե. Ճոնագեան, Վ. Թութիկեան/, Պոսթըն, Ա.հ., 1990:
11. Մագասճեան Սարգիս, Տէօրթ-Եօլի Հերոսամարտը (1909-1921), Պէյրութ, 1959:
12. Մագմանեան Վրոյր, Յուշեր եւ վկայութիւններ, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1991:
13. Մաթեան Յարութիւն, Հսկումի գիշեր:
14. Մաթևոսյան Հրանտ Ի., Մեծամոր (Էսսէ), Թափանցիկ օր, Երկեր, 2 հտ., Երևան, «Սովետական գրող», 1985, Հատընտիր: Երկու հատորով /կազմ. և առաջաբ.՝ Ֆ. Մելոյան/, Երևան, օգոստոս, 2005:
15. Մալէգեան Վ., Տարագրի մը յուշատետրը, Գահիրէ, Ա.հ., 1915:
16. Մալխաս, Զարթօնք (վէպ), հտ. Ա.-Ե., Ա.տ., տպ. Ֆարաբի, Ա.թ., նոյնի՝ Պոստոն, տպ. Հայրենիք, 1933, նոյնի՝ Պէյրութ, տպ. Մշակ, 1956, նոյնի՝ հտ. Ա.-Դ., Թէհրան, տպ. Ֆարաբի, 1981, նոյնի՝ հտ. Ա.-Բ., Պէյրութ, տպ. Համագգայինի Վահէ Սէթեան, 1987:
17. Մալոյան Արման Մ., Ամենա...ն (պատմվ.), տե՛ս <http://ardzak.org/%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B4%D5%A1%D5%AC%D5%B8%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%B4%D5%A5%D5%B6%D5%A1-%D5%B6/>
18. Մակարեան Ասատուր Յ., Յուշագիրք Թրակիոյ եւ Մակե-



- դոնիոյ հայ գաղութներու, Մելանիկ, տպ. «Հորիզոն» օրաթերթի, 1929:
19. Մակարյան Արուսյակ, Լուսաստոյի խավարում: Ականատեսի հուշեր, Երևան, Նե, 2012:
  20. Մակարոֆ Ն., Դէյր եզ-Զորի աքսորյալը: Օսմանյան հայերի 1915-ի աքսորը, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2001:
  21. Մահարի Գուրգեն Գ., Պատանեկություն (Մանկություն յեկ պատանեկություն), Յերևան, Պետհրատ, 1930, նույնի՝ Երկեր /Գ. Գ. Մահարի, խմբ.՝ Հր. Թամրազյան, Վ. Դավթյան, Նկ.՝ Մ. Սարյան/, Երևան, «Հայպետհրատ», 1954, նույնի՝ Երկերի ժողովածու, 5 հ. /խմբ.՝ Ա. Ղ. Լուսենց, Ա. Ս. Քիչոյան/, Երևան, «Հայաստան», 1966:
  22. Մահարի Գուրգեն Գ., Երիտասարդության սեմին [Վեպ: Պատմվածքներ], /Գ. Գ. Մահարի, խմբ.՝ Հր. Ս. Թամրազյան/, Երևան, «Հայպետհրատ», 1956, նույնի՝ Երկեր /Գ. Գ. Մահարի, խմբ.՝ Հր. Թամրազյան, Վ. Դավթյան, նկ.՝ Մ. Սարյան/, Երևան, «Հայպետհրատ», 1954, նույնի՝ Երկերի ժողովածու, 5 հ. /խմբ.՝ Ա. Ղ. Լուսենց, Ա. Ս. Քիչոյան/, Երևան, «Հայաստան», 1966:
  23. Մահարի Գուրգեն Գ., Այրվող այգեստաններ: [Վեպ], / խմբ.՝ Ս. Ա. Պայազատ/, Երևան, «Սովետական գրող», 1966, նույնի՝ Երկերի ժողովածու, 5 հ. /խմբ.՝ Ա. Ղ. Լուսենց, Ա. Ս. Քիչոյան/, Երևան, «Հայաստան», 1966, նույն՝ Այրուող այգեստաններ: Գիտական հրատարակութիւն: [Բնագրի հետ համեմատուած, նախկին հրատարակութեան մեկնութեամբ եւ ծանօթագրութեամբ], /աշխատասիր.՝ Գ. Աճեմեան, խմբ.՝ Վ. Այվազեան, Թ. Սուլիեան/, Երևան, «Ապոլոն», 2004:
  24. Մահտեսեան Արմենակ, Արիւնոտ ջաղացքի եղերերգութիւնը: (Բալուի իրական կեանքէն), Նիւ Եօրք, տպ. «Երիտասարդ Հայաստան», 1911:
  25. Մամյան Իգնատ Հ., Ֆիդայիներ: (Պատմագեղարվ. Ակնարկներ), Երևան, Պարբերական, 1990:
  26. Մանասյան Սիրակ Մ., Ընդմիջտ փրկված ճակատագրեր: Կենսագրական տեղեկատու Վանեցիներ: Նվ. Է Հայոց ցեղասպ. 100-րդ տարելիցին /Ս. Մ. Մանասյան, խմբ.՝ Ս. Ս. Հռոռփյան, Ռ. Մարգարյան/, Երևան, «Լուսակն», 2015:

27. Մանգելսեն Յոխեն, Օֆելյայի երկար ճանապարհորդությունը մինչև Բեռլին: Ասք մի գերդաստանի մասին /թարգմ. գերմ. Ռ. Յորդանյան/, Երևան, «Հայաստան», 2003:
28. Մանկասարեան Թադէ, Եօթանասուն տարիներ ետք: Յուշեր, Պէյրութ, Ա.հ, 1983:
29. Մանճիկեան Գեորգ (Ճորճ), Յուշեր, Մոնթրէալ, Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Գանատայի շրջանային վարչութեան հրատ., 2008:
30. Մանուկեան Արամ, Յուշեր, Երևան, «Արևելք», 1990:
31. Մանուկեան Յակոբ, Դիւցազնութեան վերայայտ սեմին, Երգ հայութեան:
32. Մանուկեան Ն. Պ., Վերադարձ դէպի հայրենի տուն [Այնթապի Էհնէշ գիւղին մասին], Պէյրութ, տպ. Կ. Տօնիկեան, 1973:
33. Մանուկեան Թորգոմ, Կոմիտասի հանճարը /Թորգոմ արք. Մանուկեան/, Նիւ Եօքք, Ա.հ., Ա.թ., նոյնի՝ 1985, 1987:
34. Մանուկեան Լևոն Խ., Մասայաց գիրք: Վեպ: Դպր. բարձր տարիքի համար /խմբ.՝ Լ. Սարգսյան/, Երևան, Արևիկ, 1990:
35. Մանուկեան Ղևոնդ Ս., Պատառիկներ անցյալից /խմբ.՝ Գ. Գ. Դալլաքյան/, Երևան, «Հայաստան», 1987:
36. Մանուկեան Մարիամ, Արարատի մյուս կողմում: Պատմություն անհետացած քաղաքի մասին /Մարիամ Մանուկեան, Էլիզ Մանուկեան, թարգմ.՝ Լիլիթ Աբաջյան/, Երևան, Էդիթ Պրինտ, 2005:
37. Մանուկեան Մելքոն, Արյունոտ անապատ (հուշագր.), /հրատ. պատրաստեց՝ Արթուր Մկրտչյան/, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2015:
38. Մաչոտի Մարիա Իմակոլատա, Հայոց ցեղասպանությունը պատմության և հիշողության մեջ /թարգմ.՝ Վ. Գևորգյան, խմբ.՝ Ա. Աթանեսյան, ԵՊՀ, Հայագիտ. հետազոտ. ինստ./, Երևան, ԵՊՀ հրատ., 2015:
39. Մավյան Վարդգես, Տրապիզոնի հայերը մեծ ոճրի ճանապարհին: (Ականատեսի աչքերով), /խմբ.՝ Հ. Յ. Պետրոսյան/, Երևան, «Ճարտարագետ», 2015:
40. Մավրիդիս Օմիրոս, Ազնիվ: «Հայաստան»ից արմատախիլ արվածը Հունաստանում (վեպ), /թարգմ. հունարենից՝ Ս.

- Կյրկյաշարյան, իմբ.՝ Ս. Գեղամյան/, Երևան, Գրաբեր, 2012:
41. Մատաղճեան Թորոս Մ., Յուշամատեան Թումարգայի /առաջաբ.՝ Հ. Գանգրունի/, Պէյրութ, տպ. Կ. Տօնիկեան, 1959:
  42. Մարգարեան Հրանդ, Սողոմոն Թէիլիրեան: Թատերախաղ, Նիւ Եորք, Papken press, 1980:
  43. Մարգարեան Հրանդ, Քարաձայն պատարագ = Liturgy-sound of stones, Նիւ Եորք, Համազգային Հայ Կրթական Եւ Մշակութային Միութիւն Նիւ Եորքի մասնաճյուղի հրատ., 1998:
  44. Մարգարեան Հրանդ, Երբ արելը կը լո՛ւ: Թատերախաղ, Երևան, ՀԳՄ հրատ., 2005:
  45. Մարգարեան Հրանդ, Հայելիներ: Թատերախաղ, Երևան, ՀԳՄ հրատ., 2011:
  46. Մարգարյան Ե., XX դարի առաջին ցեղասպանությունը 1915-2005: [Ելութեք ցուցահանդեսների կազմակերպման համար], /կազմ.՝ Ե. Մարգարյան և ուրիշն.: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ [պատկերանյութ], Եր., «Տիգրան Մեծ», 2005:
  47. Մարգարյան Մարո Ե., Դու փոքրիկ տղա: Հակոբ Ասատուրյանի մոր և անապատներում մարած բոլոր մայրերի սուրբ հիշատակին (բանաստեղծություն), Հատընտիր /իմբ.՝ Հ. Թ. Կարճիկյան/, Երևան, «Սովետական գրող», 1985:
  48. Մարդիգանյան Ավրորա, Հռչակված «Հայաստան»: Մեծ եղեռնը վերապրած Ավրորա Մարդիգանյանի պատմությունը /պատմեց՝ Ա. Մարդիգանյան, պատմ. անգլ. գրի է առել՝ Հ. Լ. Գեյտս, առաջաբան՝ Ն. Վալն, Անգլ. թարգմ.՝ Գ. Պ. Մարգարյանի, իմբ.՝ Ս. Դանիելյան/, Երևան, Ա.հ., 2015:
  49. Մարկ Արեն, Այնտեղ, որտեղ ծաղկում են վայրի վարդեր: Անատոլիական պատմություն, Երևան, «Տիգրան Մեծ», 2008:
  50. Մարկոսյան Զոհրապ, Թուրք ստեղծելուդ համար չե՞ս ամչնար, Աստված: [Ժողովածու]: 1915 թ. Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի անմոռաց հիշատակին, Երևան, «Լուսակն», 2014:
  51. Մարկոսյան Ռազմիկ Ա., Հայրենիքի օտարացած ճամփաներով: [Ակնարկ-ուղեգրություն], /առաջաբ. Բ. Ղազարյան/, Երևան, «Աստղիկ», 2004:
  52. Մարտիկեան Յարութիւն, Թրքական դժոխքից նացիական

- դժոխք, Պէյրութ, Ա.հ., 1973:
53. Մարտիրոսեան Համբիկ, Ապրիլ (բանաստեղծ.), Երկու ափ, Պէյրութ, (հրատարակչությունը չկարողացանք ճշտել), 2012:
  54. Մարտիրոսյան Սասուն, Սասունը Մեմալում: (Փաստագրական երկ), Երևան, «Լուսապսակ», 2014:
  55. Մելիտինեցի Գևորգ, Նախճիրներ (1915-1918): Պատմական ակնարկ մը Մալաթիոյ աշխարհագրական դիրքը, կլիման եւ արտադրութիւնը, Մալաթիոյ հայութեան 1895-ի ինքնապաշտպանութեան կրօնները, Մալաթիոյ հայութեան բնաջնջումն ու տեղահանութիւնը, Մալաթիոյ կրթասիրական ընկերութիւնը, Պոստոն, տպ. «Հայրենիք», 1929:
  56. Մելիքեան Յ. Եղիշէ, Հարք-Խնուս, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, 1964:
  57. Մելիքեան Պօղոս, Հայրենի շունչով, Պէյրութ, Համագգային, 1969:
  58. Մելոյեան Ղեւոնդ, Վասպուրականի հերոսամարտը: Տրամ հինգ արարով, Փարիզ, տպ. «Արաքս», Ա.թ.:
  59. Մելքոնեան Զարեհ, Երգ հաշտութեան եւ համակերպումի, տե՛ս Կեանքով, եւ մասամբք նորին: Բանաստեղծութիւններ, Ֆրիմոնթ, Ա.հ., 1995, նույնի՝ Կեանքով, եւ մասամբք նորին: (Բանաստեղծութիւններ), Գյումրի, «Դպիր», 2012:
  60. Մելքոնեան Հայկանուշ, Կեանք եւ մահ, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1960:
  61. Մելքոնեան Պօղոս, Զէյթուն՝ քաջերու օրրան: Դէպքեր և դրուագներ, Երևան, «Զանգակ -97», 2000:
  62. Մելքոնյան Գառնիկ, Պապերիս շունչը, Երևան, «Տաթևացի», 2013:
  63. Մելքոնյան Հովհաննէս Ռ., Հիշողության դաշտ: Եղերգական պոեմ, գ. 1, /խմբ.՝ Վ. Մ. Մուղնեցյան/, Երևան, «Սովետական գրող», 1987:
  64. Մելքոնյան Հովհաննէս Ռ., Ոճիրի բուրգեր: (Փաստագեղարվեստական երկ), /խմբ.՝ Ա. Մելքոնյան/, Երևան: Պարույր Սևակ, 2001:
  65. Մելքոնյան Ռուբեն, Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ, Երևան, ՎՄՎ-պրինտ, 2010:
  66. Մելքոնյան Ռուբեն, Հայերի բռնի իսլամացումը ցեղասպա-

- նության տարիներին: Ընթացքը և հետևանքները, Երևան, Ա.հ., 2010:
67. Մեհրապեան Համո, Կոմիտաս վարդապետ (1869-1935), Աթենք, Ա.հ., 1944:
  68. Մետաքսյան Մարիցա (Médaksian Maritsa), Մանկություն Մարզվանում (Une enfance à Marzevan), [Texte imprimé], /Maritsa Médaksian, traduit et présenté par Haïk Der Haroutiounian/, Éd. bilingue français-arménien (Երկլեզու հրատ.), /[H. Der Haroutiounian], Paris, Épinay-sur-Seine, Societe des Etudes Armeniennes, 2013:
  69. Մեր գիտը՝ Դատեմ: (Հին եւ նոր ժամանակներուն), /Խմբ. եւ առաջար. Գ. Մխիթարեան/, Պոսթըն, տպ. «Հայրենիք»: Դատեմի լուսաւորչական ուսումնասիրաց ընկ. հրատ., 1958:
  70. Մեր Իզմիրը եւ շրջակայ քաղաքները = Our Smyrna and outling cities, Նիւ Եորք, Հրատ. Զմիւռնահայ միութեան, 1960:
  71. Միլիտոնյան Էդվարդ, 1915 թվից հետո, Հիվանդության պատմություն, Ողբերգություն (բանաստեղծություններ):
  72. Միլիտոնյան Էդվարդ, Պոլիս-2007 (պոեմ), Երևան, «Ամրոց գրուպ», 2007:
  73. Մինախորեան Վահան, 1915 թուականը: Արհաւիրքի օրեր, Վենետիկ, հրատ. Յ. Յ.Կոբոյեանի կտակով, Վենետիկ – Ս. Ղազար, 1949, նույնի՝ Թէհրան, Ա.հ., 2006:
  74. Մինասեան Թադէոս, Յուշեր: Անգարայի եւ Քէսքինի Հայոց Գողգոթան: Ուղեւորութիւն մը Անգարայէն Մեքաստիա, Փարիզ, Imp. A. Der Agopian, 1957:
  75. Մինասյան Հարություն Մ., Օսմանյան Կայսրությունում, Թուրքիայի Հանրապետությունում և հարակից տարածքներում բռնաճնշումների և ցեղասպանության ենթարկված հայ բժիշկներ: Համառոտ կենսագրական բառարան, Երևան, «Լուսաբաց», 2014:
  76. Մինչ «Հոգիներու աճուրդը»: Օրորա Մարտիկանեանի «Խոշտանգուած «Հայաստան»» վէպի հիման վրայ /կազմ., խմբ. և թարգմ.՝ Ս. Գեւորգեան/, Երևան, Ա.հ., 2011:
  77. Միսաքեան Շաւարշ, Տերեւներ դեղնած յուշատետրէ մը, մատենաշար Ազդակի թիւ 80, Պէյրութ, 1957:
  78. Միսաքճեան Ստեփան, Ես Տէր-Զօրի դժոխքէն փախած եմ

- /ներած.՝ Շ. Նարդունի/, Փարիզ, Ա.հ., 1965:
79. Միրաքեան Աննա Կ., Վերքեր ու ցաւեր, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1960:
  80. Միքայէլեան Միքայէլ տոքթ., Յիսուն տարիներ առաջ, Պէյրութ, տպ. «Շիրակ», 1974:
  81. Մխիթար Կարո (Մարտիրոս Խ. Թաշճեան), Պանդուխտի մորմոքներ, Պէյրութ, Ա.հ., 1979:
  82. Մխիթար Կարո (Մարտիրոս Խ. Թաշճեան), Տանջուածները, Մարսէլ, տպ. «Զաւէն», Ա.թ.:
  83. Մխիթար Կարո (Մարտիրոս Խ. Թաշճեան), Վշտամատեան, Պէյրութ, Ա.հ., 1980:
  84. Մխիթարեան Սերովբէ, Մոխրաբերդի ճակատամարտը: Մի դրուագ Ռշտունիքի ինքնապաշտպանութեան կռիւներից, Պէյրութ, տպ. «Կ. Տօնիկեան եւ որդիք», 1980:
  85. Մխիթարեան Օն., Վանի հերոսամարտը /առաջաբ.՝ Գ. Նժդէհ/, Մոֆիա, տպ. Պ. Պալըզճեան, 1930:
  86. Մխսիեան Յարութիւն Թ., Որքի մը յուշերը՝ Ճիպինէն Նիւ Ճըրզի: [Հուշեր], /առաջաբ.՝ Թ. Թորանեան/, Նիւ Ճըրզի, Ա.հ., 1996:
  87. Մկրտիչ Եօթնեղբարեան: Դիւցազնական հայորդին /կազմ.՝ Յա. Հիսայեան/, Աթէնք, տպ. «Ատրուշան», 1937:
  88. Մկրտիչեան Եսթեր Թ., Թուրքիոյ գեհեհէնէն հայ ընտանիքի մը հրաշալի փախուստը: Ականատեսի պատմութիւն, Ադէքսանդրիա, տպ. «Արամ Ստեփանեան», 1918:
  89. Մկրտիչեան Թովմաս Գ., Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու զազանութիւնները: (Ականատեսի պատմութիւն), Գահիրէ, տպ. Գրիգոր Ճիհանեան, 1919, նույնի՝ Պէյրութ, «Արարատ», 1965:
  90. Մկրտչեան Զոհրապ, 1915-2000 թուական: Ի յարգանս ապրիլեան բիրաւոր նահատակների, Երևան, «Ամարաս», 2000:
  91. Մկրտչեան Թ., Ոճրապատում Խարբերդ, Թիֆլիս, տպ. «Աշխատաւոր», 1917:
  92. Մկունդ Տիգրան, Ամիտայի արձագանգներ [Ա հատոր], Նիւ Ճէրզի, 1950, Ամիտայի արձագանգներու վերակոչումն, Բ. Հատոր, Ուիհօքըն, Նիւ Ճէրզի, 1953:
  93. Մնձուրի Հակոբ, Խաղեք գառնուկներս, ուլիկներս, խաղեք,

- մարդն ալ գնաց, տերտերն ալ գնաց, խաղցեք, Երկեր /կազմ.՝ Ս. Նաղդյան, վերջաբ. հեղ.՝ Հր. Մաթնոսյան, խմբ. Մ. Թերզյան/, Երևան, «Սովետական գրող», 1986:
94. Մոռալեան Յարութիւն Ղ., Վրէժ: Ցեղիս միլիոն մը նահատակներուն արեան փոխ-վրէժի ձայնը, Գահիրէ, տպ. «Արգոս», 1931:
  95. Մովսէսեան Արմենակ, Մասունցի ընտանիքի մը ողիսականը: Գէորգ Ճորճ Մովսէսեանին ընտանիքը եւ անոր շառաւիղը, Պէյրութ, տպ. «Նոր կեանք», 1991:
  96. Մովսիսյան Արշալույս, Մշո աղյուծը՝ Մախլուտո: [Զորավար Ս. Բարոյանի՝ Մախլուտոյի կյանքն ու ազատագրական պայքարը], /խմբ. Դ. Մարգարյան/, Երևան, Ա.հ., 2010:
  97. Մովսիսյան Համլետ Տ., Փորձաքար: Վիպակներ, Երևան, «Սովետական գրող», 1988:
  98. Մսերյան Զաւէն, Մկրտիչ Մսերլեանի ազգ.[ային]-քաղաքական գործունէութիւնը, Պէյրութ, «Արագ», 1981:
  99. Մուսա լեռը եւ Մուսա լեռնցին: Մուսա Լերան հերոսամարտի 75-ամեակին առթիւ /խմբ.՝ Ա. Ուրֆալեան/, Լոս Անձլէս, Մուսա Լերան միութ. վարչ., Ա.թ.:
  100. Մուսոյան Մարկ, Ժանդարմը (վեպ), Երևան, «Վերնատուն», 2015:
  101. Մուրադյան Հայրիկ Մ., Էջեր հայ ժողովրդի հերոսական անցյալից /գրախոս. և խմբ.՝ Զ. Ս. Կիրակոսյան/, Երևան, «Հայաստան», 1983:
  102. Մուրատ Ժիւլի, Աքսոր Գասարճեան. Գաղթի ուղիներու վրայ: /Հուշապատում /առաջաբ.՝ Պ. Սիմոնեան/, Պէյրութ, «Ալ Մրատ», 2010:
  103. Սօգեան Լեւոն, Աքսորականի մը ողիսականը (Սեւ օրերու յիշատակներ), Ա.տ., տպ. «Պայքար», 1958:
  104. Յալչըն Քեմալ, Սիրոս քեզնով է խայտում: Վավերավեպ /արևմտահայերենից արևելահայերեն թարգմ.՝ Լ. Զ. Գևորգյան/, Երևան, «Ոսկան Երևանցի», 2005:
  105. Յակոբեան Եղուարդ, Մահերգ նահատակաց: Խմբերգ երգեհոնի նուագակցութեամբ /Ե. Յակոբեան, բանաստեղծ.՝ Վ. Թէքէեանի/, Գահիրէ, հրատ. «Հայ գեղարուեստասիրաց միութեան», 1965:

106. Յակոբեան Ժագ Ս. (Հակոբյան Ժակ Ս.), Հոդաշնչում, Փաստինա, տպ. «Մփիւք», 1991:
107. Յակոբեան Ժագ Ս., Կոտորածին, Քեզ օրո՞ր, Տէ՛ր-Զօր, Մէկ միլիոն հայ, Կա՛նք ու կը մնա՛նք, Ակոյայի դէմ ակոռ, Մէկ վայրկեան լռութիւն (բանաստեղծ.):
108. Յակոբսոն Մարիա, 1915: Պատարիկներ օրագրություններից, Երևան, Պարբերական, 1995: Յակոբսոն Մարիա, Օրագրություն /1907-1919/, Երևան, «Ապոլոն», 2004:
109. Յանիկյան Գուրգեն, Նպատակ և ճշմարտություն: [Հուշագրություն], /կազմ. և առաջաբ.՝ Վլ. Պետրոսյան, Խմբ.՝ Օ. Միքայելյան, ՀԺՇ «Հայաստան»ի ներկայացություն/, Երևան, «Տիգրան Մեծ», 1999:
110. Յավորով Պեյո, Հայեր (բանաստեղծություն), Բանաստեղծություններ: Վիտոռայի փեշերին: Արձակ էջեր: Հուշեր Յավորովի մասին: Թարգմ. բուլղարերենից /խմբ.՝ Գ. Մաֆարյան, կազմ.՝ Մ. Թերզյան/, Երևան, «Էդիթ Պրինտ», 2009:
111. Յարութիւնեան Տիգրան, Բ. մնացորդացը: Ապրիլ 24-ի ազգային սպառնին առթիւ, Պէյրութ, տպ. «Սեւան», 1962:
112. Յափուճեան Աւետիս, Մեծ եղեռնը օտար մտաւորականութեան գնահատումով: Համառօտ մատենագիտութիւն Մեծ եղեռնի մասին (օտար հեղինակներ), Գահիրէ, Հայ ազգ. հիմնադրամի հրատ., 1980:

*ARMAN MALOYAN (ARMENIA)*

## **REFLECTION OF THE ARMENIAN GENOCIDE THEME IN LITERATURE (A BIBLIOGRAPHY OF ARMENIAN LANGUAGE LITERARY COMPOSITIONS)**

The subject of this presentation is the history as well as the process of creation of a bibliography that would list the literary works, either of Armenian authors and translated, touching on the theme of the Armenian Genocide or recounting episodes of it. It details the objectives and the purpose of creating such a bibliography; the selection and ranging of materials; the nature of literary works and a number of analogous issues.



ԵՂԵՌՆԻ ԹԵՈՂԻՑԵԱՆ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ (ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿ,  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ, ՎԱՀԱՆ  
ԹԵՔԵՅԱՆ) ԳՈՐԾԵՐՈՒՄ

Թեոդիցեան այն հարցերի ու տեսությունների ամբողջությունն է, որը քննարկում է բարու և չարի դերակատարումը մարդկային տառապանքի մեջ, առաջադրում բազմաթիվ ինչո՞ւ-ների՝ կապված Աստծու ամենակարողության, բարեգութ ու ողորմած լինելու հետ՝ մի կողմից, և մյուս կողմից՝ չարի «գործյանը» և ներկայությանը մարդկության պատմության ընթացքում: «Թեոդիցեա» եզրն առաջացել է հունարեն «թեոս» (Աստված) և «դիկե» (օրենք, արդարություն) բառերից: Եզրի հայերեն թարգմանությունը կանոնակարգված չէ, հետևաբար նախընտրում ենք օգտագործել հենց «թեոդիցեա» եզրը՝ հայերեն մոտավոր «աստվածարդարացում» թարգմանության փոխարեն: Այս եզրի գործածումը կանոնակարգվում է գերմանացի փիլիսոփա Գոտֆրիդ Լայբնիցի (1646-1716) գործերի շրջանառությունից հետո և կիրառվում նաև աստվածաբանական եզրաբանության մեջ:

Եղեռնը վերապրած հայերի շրջանում ամենից հաճախ տրվող հարցերից էին.

«Ինչպե՞ս բացատրել Աստծու սարսափեցնող լուրջությունը Եղեռնի ժամանակ»<sup>1</sup>,

«Ինչո՞ւ Աստված չփրկեց իր քրիստոնյա ժողովրդին»,

«Ինչպե՞ս կարող է մարդու աշխարհայացքը նույնը մնալ Եղեռնից հետո»,

«Ինչպե՞ս հասկանալ չարի դերակատարումը քրիստոնեական Ամենակարող Աստծու կողքին»,

---

<sup>1</sup> Այս և նման մի շարք այլ հարցեր տե՛ս հետևյալ գրքում. Miller, Donald; Miller, Lorna. Survivors: Oral History of the Armenian Genocide. University of California Press, 1993, pp. 177-186:

«Արդյո՞ք նույնը պետք է մնա Աստծու և մարդու մասին ընկալումը»,

«Ինչո՞վ կարող է օգնել թեոդիցեայի ցանկացած փորձ այն բանից հետո, երբ չարը իրեն դրսևորեց որպես ծայրահեղ հզոր ու ակներևորեն անկախ ուժ» և այլն:

Պետք է նշել, որ այս անդրադարձը ոչ թե գրականագիտական, այլ աստվածաբանական դիտանկյունից կատարված Հայոց ցեղասպանության թեոդիցեայի վերլուծությունն է: Գրողների համապատասխան մտքերը մեջբերելիս մի կողմ է դրվել այն հարցը՝ արդյոք դրանք ուղղադավան աստվածաբանությանը համահռո՞ւնչ են, թե՞ ոչ, և դիտարկումը կատարվել է թեոդիցեայի շրջանակում տեղավորվող հարցադրումների և պատասխանների, Եղեռնի ընթացքում Աստված-հայ հարաբերությունների պատկերման վրա:

Գրողների մտքերը ներկայացնելիս նպատակահարմար ենք գտել չհետևել ժամանակագրական հաջորդականությանը՝ սկսելով վերլուծությունը Պարույր Սևակի բանաստեղծություններից, ապա անցնել Հովհաննես Շիրազի, Հովհաննես Թումանյանի և Վահան Թեքեյանի գործերին:

ՊԱՐՈՒԹՐ ՄԵՎԱԿ: Պարույր Սևակը XX դարի իր ժամանակակից մարդուն տեսնում է որպես էքզիստենցիալ անորոշության ցավով բռնված հիվանդ էակի: Ահա թե ինչ հարցեր է առաջադրում մարդուն Սևակը «Անորոշություն» բանաստեղծության մեջ.

*....Եվ ինչպե՞ս ապրել միայն անցյալով...*

*Ի՞նչ է սպասվում այս մոլորակին,-*

*Ի՞նչ պատասխանես,*

*Ի՞նչ է լինելու այս աշխարհի հետ,-*

*Ինչպե՞ս իմանաս:*

*Ի՞նչ է բուսնելու այս թշվառ հողին:*

*....Ազատում չկա: Եվ պրծում չկա:*

*Կա մի վիթխարի անորոշություն<sup>2</sup>....*

Աշխարհը նա տեսնում է չարի, սակայն ոչ թե մետաֆիզիկական, այլ էթիկական չարի ազդեցության տակ, աշխարհը լի է

---

<sup>2</sup> Պարույր Սևակ, Երկեր երեք հատորով, հտ. 1, էջ 173-175:

մարդու ստեղծած կաղապարների ու ծակոտիների մեջ, այսինքն՝  
դատարկության մեջ, լցված չարիքով:

*....Թունտո ու կարծր կաղապարների  
Անշունչ արանքում,  
Էլ ինչպե՞ս ապրել<sup>3</sup>....*

Նրա մեկնաբանմամբ մարդը նման է կեղևահաճախ ծառի, մահ է տենչում, բայց մահ էլ չունի, միայն առողջ աչքեր ունի, որոնք լի են անորոշության ախտով: Եվ բոլոր հարցերին, որ տալիս են մարդիկ, Սևակը չի ցանկանում պատասխան տալ, իսկ մարդկությանը հուզող հարցերից մեկի՝ ի՞նչ անելու պատասխանը նա մարդկանց կտա իր իսկ ապրած կյանքով<sup>4</sup>:

Թվում է, թե Սևակը ծանոթ է Հոլոքոստի զոհ գերմանացի աստվածաբան Դիտրիխ Բոնհոֆֆերի (1906-1945) այն տեսությանը, թե մարդկությունը թևակոխել է նոր փուլ, և միֆական անցյալը պետք է իր դիրքերը զիջի հասուն քրիստոնեական հավատին, որ պետքի մարդու հոգևոր ներաշխարհը կենդանի պահվի<sup>5</sup>: Սևակն իր «Նորօրյա աղոթք»-ում աշխարհի տառապանքի դեմ բողոքող մարդկանց՝ Աստծուն «մեղադրողներին» է գերադասում, քան նրանց, ովքեր բյուրավոր ու բույթ են հավատքի մեջ:

*....Աստծուն նույնիսկ հայհոյողները  
Շա՛տ ավելի են գերադասելի,  
Վասնզի նրանց բարկացրել է ինքը հավատը՝  
Խոցվա՛ծ-արյունոտ տ,  
Այրվո՛ղ-ապտակվա՛ծ,  
Ցավա՛ծ-ճչացո՛ղ,  
Մանո՛ւկ հավատը,  
Որ հայր դառնալու համար է ծնվել<sup>6</sup>:*

Անդրադառնանք թեոդիցեայի, մահվան ընկալման, չարի դերի

---

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 175:

<sup>5</sup> St' u Dietrich Bonhoeffer. Ethics, New York, 1995.

<sup>6</sup> Պարույր Սևակ, նշվ. աշխ., էջ 76, 77:

և հայոց առնչություններին և ապա բուն Եղեռնի թեմային:

2013 թ. դեկտեմբերի 11-ին կաթոլիկ արքեպիսկոպոս Կլաուդիո Գուջերոտտին՝ Վենետիկի Կա' Ֆոսկարի համալսարանում տեղի ունեցած հանդիպման ժամանակ արտահայտեց այն միտքը, որ հայերս ունենք «մահվան հանդեպ յուրահատուկ մոտեցում», թեև նա լրացուցիչ մեկնաբանություններ չտվեց դրան: Սակայն թեոդիցեայի տեսակետից սա բավականին հետաքրքիր միտք է: Այս մտքին մոտենում է Սևակը՝ Քիչ ենք, բայց հայ ենք<sup>7</sup> բանաստեղծության մեջ. թե ինչու են տառապել հայերը, բացատրությունը, կամ ավելի ճշգրիտ, կիսաաստվածաբանական, կիսափիլիսոփայական՝ չափածո համեմվածքով պատասխանը նույնպես էքզիստենցիալիստական է.

*...Պարզապես մահն էր մեզ սիրահարվել,  
Իսկ մենք ինքնակամ նրան չենք տրվել<sup>8</sup>....*

Հայերի նահատակությունը, դարերով տևած տառապանքը Սևակը չի համարում հայերի ինքնակամ որոշումը կամ մեղքը, այլ ճիշտ հակառակը. նա ասում է, հայերը բարյացակամ են և այլ ազգերի չեն ճնշել.

*....չենք ճնշել մեկ ուրիշ ազգի,  
Ոչ որ չի տուժել զարկից մեր բազկի<sup>9</sup>....*

Սևակի «Դու այսպես ես եղել» բանաստեղծության մեջ հայերը միշտ չէ, որ հաղթական են դուրս եկել չարի դեմ պայքարում.

*....Դու մերթ զարկվել ես, մերթ զարկել չարին<sup>10</sup>....*

Սակայն հաղթական միջոցը չարի դեմ, որ օգտագործել են հայերը, ըստ Պարույր Սևակի, հայերի մարտիրոսությունն է որպես խավարի դեմ պայքարի միջոց. սա երևում է հետևյալ տողերում.

---

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 62-64:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 64:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 21:

....Հօգուտ արդարի և արեգակի  
 Գիտենք քվեարկել մեր կյանքով նաև...  
 Բայց թե կամենան մեզ բռնի վառել՝  
 Մենք գիտենք միսա չ-ն կրա՝ կ'մարել.  
 Իսկ եթե պետք է խավարը ցրել՝  
 Գիտենք մոխրանալ որպես վառ կերոն....<sup>11</sup>

Տողերից երևում է, որ հեղինակի կողմից հայերի այդ ընտրությունն ընկալվում է որպես դրական նշանով ընտրություն:

Թեոդիցեայի մյուս թեման Աստծո ներկայությունն է Եդեոնի ընթացքում, որը Սևակը ներկայացնում է հայոց մայրերի՝ Տիրամորն ուղղված աղոթքի տեսքով: Այս դեպքում, սակայն, ըստ Սևակի, Տիրամայրն ինքն էլ հայ մայրերի հետ աներևույթ նույն տանջանքներին էր ենթարկվում: «Անլուրի զանգակատան» տողերում Սևակն ասում է.

....Եվ լեղապատառ մայրերը հայոց  
 Զուր են մրմնջում աղոթքը կերկեր,  
 Համըր Տիրամոր նիհար ծնկներին  
 Բզուր են այդպես աղերսով փարում.  
     Եթե ունենար  
     Որևէ հնար  
 Խեղճ Տիրամայրը իրեն կփրկեր,  
 Մինչդեռ քիչ հետո ինքն է դառնալու  
     Պիղծ հանաքների,  
     Կեռ դանակների  
 Եվ այն հրդեհի չար կրակին կեր,  
     Որ նորից հիմա

Մարդկային մսեր ու ոսկորներ է շան պես ճարակում<sup>12</sup> (Դո-դանջ կոտորածի)

Աստվածաբանական մտորումների առարկա հանդիսացող «Աստծո անգորության» վերաբերյալ ուսմունքը պատկերված է Սևակի այս մետաֆորիկ նկարագրության մեջ: Պ. Սևակի այս թեոդի-

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 63, 64:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 74:

ցեան՝ ներկայացված Աստվածածնի միջոցով, ցեղասպանության աստվածաբանական մեկնաբանությունների մեջ ամենահաճախ հանդիպող բացատրությունն է. տառապող Աստծո, տառապող Բարու աստվածաբանական իրողությունը<sup>13</sup>:

ՀՈՎՀՏԱՆՆԵՍ ՇԻԴԱԶ: Հովհաննես Շիրազն իր աստվածափիլիսոփայությամբ ավելի պարականոն է, քան, օրինակ, Պարույր Սևակն ու Հովհաննես Թումանյանը: Իր «Բիբլիական շարք»-ը դրա ապացույցն է, որի հենց սկզբում նա որպես բնաբան բերում է իր մոր խոսքերը.

*Յավը տվեց սարերին՝  
Սարերը չտարան...  
Յավը տվեց մարդուն՝  
Մարդը տարավ<sup>14</sup>:*

Չնայած գրական բազմաթիվ հնարանքներին՝ չարը Շիրազի պատկերացմամբ ոչ թե մետաֆիզիկական երևույթ է, այլ արարած, չար հրեշտակ՝ սատանան, որին, սակայն, Շիրազը գրեթե մոտեցնում է, բայց չի հավասարեցնում Աստծուն.

*Եվ Աստծո առջև ձեռքը ծնոտին,  
Եվ ապա ձեռքը դրած իր ծունկին,  
Նստել էր անխոս չարը... սատանան՝  
Ու հանց աշակերտ նայում էր Նրան<sup>15</sup>:*

Շիրազը պատկերում է չարի՝ Աստծու գործերին, մասնավորապես մարդու արարմանը խառնվելը, որով էլ մարդուն մոտեցնում է

---

<sup>13</sup> Հրեական հոլոքոստի հուղայական փիլիսոփայության որոշ հայտնի ներկայացուցիչներ, ինչպիսիք են Էլիեզեր Բերկովիցը, Էլի Վիզելը և այլք, զարմանալիորեն, ի հեճուկս իրենց կրոնի, որը մերժում է տառապող Աստծու գաղափարը, հանգում են հենց այն մտքին, որ Աստված ներկա էր իր ժողովրդի մեջ և տառապում էր տառապողի հետ: Տե՛ս Eliezer Berkovits. God, Man and History, Jerusalem, 2004; Eliezer Berkovits. Faith After the Holocaust, New York, 1973; Elie Wiesel. Night, Penguin Books, 2006; Elie Wiesel. Against Silence: The Voice and Vision of Elie Wiesel, Holocaust Library, 1995 գործերը:

<sup>14</sup> Հովհաննես Շիրազ, Երկեր, հտ. 2, Ե., 1982, էջ 5:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 40:

սատանային: Դիմելով գրական հնարքին՝ նա ցանկանում է ցույց տալ կամ էլ միգուցե հարցադրում կատարել մարդկության հանդեպ չարի ունեցած այդքան իրավասության մասին.

*[Սատանան-Շ. Խ.] ...ձեռքը տարալվ և անտեսորեն  
Իր սրտի տիղմից դուրս հանեց մի ճանկ  
Ու խառնեց կավին,  
Որ, ա՛խ, տակավին  
Հու՛մ էր, ու մերվեց տիղմը չարությանց՝  
Այն սուրբ շաղախին ու, ավաղ, եղծեց  
Կես ճամփին կերտումն այդ աստվածային,  
Խառնեց, խաթարեց այն նյութն անեղծ,  
Սատանայամիտ տիղմով դիվային  
Որ իրեն նս տեսներ մարդու մեջ...<sup>16</sup>:*

Շիրազի բառանյութում Աստված և Ալլահի համապատասխանաբար քրիստոնյայի և մահմեդականի «աստվածներն են», որտեղ, ամենայն հավանականությամբ, խոսքը ոչ թե բուն Աստծուն՝ որպես Արարչի, է վերաբերում, այլ տարբեր կրոնական համակարգերի իդեալներին, էթիկային, այն բանին, թե ինչ է յուրաքանչյուր կրոն բյուրեղացրել իր մեջ. արդյոք համընդհանուր սիրո, հույսի ու հավատի արժեհամակարգ, սպանելու, հափշտակելու արգելք, թե՞ յաթաղանով կրոնական պատերազմի դուրս գալու պատվիրան:

Շիրազի պատկերացրած հայը «Հայ ժողովրդի երգը» բանաստեղծության համաձայն հաղթում է մահվանը.

*....Շանթն է բեկվում ճակտիս վրա,  
Մահ չգիտեմ՝ կա՞, թե՞ չկա,  
Ելնում եմ ես ահերն ի վեր,  
Ելնում եմ ես մահերն ի վեր,  
Ահեր, մահեր, գահերն ի վեր...<sup>17</sup>*

Շիրազն իր ժողովրդի շուրթերով Եդեոնից հետո ասում է, որ ինքը վեր է բարձրանում մահերից կամ էլ մահվան ահերից դեպի

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 42:

<sup>17</sup> Հովհաննես Շիրազ, Երկեր, հտ. 1, Ե., 1981, էջ 216:

միանգամայն աստվածային իրողություններ՝ Երկնքի գահերն ի վեր: Կարող ենք պնդել, որ «գահեր» ասելով Շիրազը նկատի է ունեցել հրեշտակների յուրահատուկ դասը, որը քրիստոնեական գրականության մեջ կոչվում է հենց «գահեր»: Այդպիսով, հայերը ներկայանում են որպես մահը հաղթահարող.

*....Հայր հազար մահից ելնում, կյանքն է կերտում իր վառ...<sup>18</sup>*

Շիրազը Եդեռնի զոհերին նահատակներ է կոչում<sup>19</sup>, որոնց «Հայոց դանթեականը» պոեմի տողերում չմոռանալու երդում է տալիս.

*.... Ես կմոռանամ խաչված Հիսուսին,  
Ու երկնաթափառ երազներս ողջ:  
....Ինձ կմոռանամ, բայց ձեզ, ձեզ երբեք,  
Ով կոտորածներ իմ անմեղ ազգի,  
Ով կոտորածներ մեր ազգակեղեք....<sup>20</sup>*

Իր «Մեծ եդեռնը» բանաստեղծության մեջ նա հարցում է անում Աստծուն, թե անսահման դազադում ո՞ւմ է նա թաղել, ո՞ւմ դազադն է այդքան մեծ, հետո պատասխանում է՝ հայ կոտորածն է հանգչում, որի վրա ոչ մի ազգ չի ցավի, անգամ քրիստոնյա ազգերը.

*....Քրիստոնյա աշխարհն էլ հեթանոսվել, մահմեդվել՝  
Հազար անգամ է դավել՝  
Ոչ մի մեղքը չի քավել....<sup>21</sup>*

Իսկ թուրքերը ներկայացվում են որպես նոր Կայեն<sup>22</sup>: Կոտորածների հետևանքով Շիրազն այն մտքին է, որ Աստված հայից երես է դարձրել.

---

<sup>18</sup> Տե՛ս «Երևանը հրաշակերտողներին» բանաստեղծությունը, նույն տեղում, էջ 238:

<sup>19</sup> Տե՛ս «Զանգ ոգեկոչման» բանաստեղծությունը, նույն տեղում, էջ 229:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 232:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 236:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 123:



*....Աստված հայից երես դարձուց, ես նեո մարդուց դարձրի....*<sup>23</sup>

Այս տողին կարելի է հավելել «Հայոց դանթեականից» դուրս հանված մի քանի հատվածներ՝ Աստծու և հայի փոխհարաբերությունների մասին: Քանի որ «Հայոց դանթեականը» լայնածավալ գործ է, ուստի և հեղինակի թեոդիցեան վերհանելուն կարելի է նվիրել առավել ծավալուն ուսումնասիրություն, մենք այստեղ կսահմանափակվենք միայն մի քանի հատվածների վերլուծությամբ:

Շիրազն այս գործի մեջ Աստծուն պատկերում է որպես «լռող» կամ «անտեսող», որը լռեց կոտորածի ժամանակ<sup>24</sup> կամ «մեզ արեց մտահան»<sup>25</sup>: Թուրքի աստծու դիմաց «քրիստոնյա հայի Աստվածը» ներկայացվում է որպես թուր չունեցող, անպաշտպան, անգոր.

*....Ողջ երկնքով մեկ ամպած հոնքերով Աստված էլ տնքում՝  
Անգոր ցասումով էր խաչակնքում....*<sup>26</sup>

Իսկ թուրքերը հայերին ասում են.

*....-Չքվե՛ք, գլավորնե՛ք, ալլահը թուր ունի,  
Ձեր Աստվածն ի նչ է, երբ որ թուր չունի....*<sup>27</sup>

Սակայն Շիրազը հույս է հայտնում, որ հայերն իրենց այդ խաչը կրելու արդյունքում կվերացնեն Աստծու այդ «կուրությունը».

*«....Մինչև մեզ վրա Աստված իր երկու աչքը բաց անի....»*<sup>28</sup>:

Իսկ հայի կրած տառապանքը դժոխայինից անդին է ընկալում Շիրազը, մինչևիսկ ասում է.

---

<sup>23</sup> Քառյակներ հավատապատումի, տե՛ս նույն տեղում, էջ 277:

<sup>24</sup> Հովհաննես Շիրազ, Հայոց դանթեականը, Ե, 1991, էջ 15:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 21:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 211:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 26:

....Օ՛, չգա՛ւ, Հիսու՛ս, թե՛ դեռ պիտի գաս՝ Քե՛զ էլ կտանեն  
խաչելու... չգա՛ւ...<sup>29</sup>:

Եվ ապա, ի վերջո, տեղի է ունենում մի հաշտություն. Մարտիրոսված հայերը համեմատվում են Հիսուսի հետ, սակայն միաժամանակ այս և մի շարք այլ տողերում երևում է, որ Շիրազը զայրացած է Աստծու վրա, կամ էլ շփոթված է կատարվածից.

*Այս ի՞նչ է, տե՛ր իմ, Աստվա՛ծ իմ անգութ,  
Կախաղանասյուն ողջ անտառ մի մութ,  
Յոթ հարյուր Հիսուս ծառերից կախված,  
Հիսուսից էլ սուրբ հայերն իմ բարի,  
Յաթաղանի դեմ՝ Հիսուսից խաբված՝  
Խաչ բռնած՝ ընդդեմ յաթաղանների,  
Անգեն հիսուսներ զինված զորքի դեմ,-  
Ահա՛ թե մեր բախտն ինչու՞լ էր դժխեմ...  
Մանուկներ կախված՝ հիսուսներ թխլիկ,  
Մայրեր ու քույրեր, եղբայրներ խաչված,-  
Չե՛ս կնճովելու, ո՛վ արդար գալիք,  
Չե՛ս սփռվելու իմ սիրտը տանջված,  
Ա՛խ, պիտի դատե՛ս, ո՛վ Մեծ Դատախազ,  
Թե՛ պիտի մնա վրեժս՝ երազ...<sup>30</sup>*

Պարզ է Շիրազի մտքերից կազմվող հետևությունը. հայոց կոտորածների պատճառը բնությունը մերժող քրիստոնեական հավատն է, որը առճակատվում է հակառակորդի՝ բնությունը գովերգող գաղափարախոսության հետ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ: Պարույր Սևակը Հովհաննես Թումանյանին կոչում է հայի հառաչանքը Աստծուն հասցնող<sup>31</sup>: Հովհաննես Թումանյանը Եղեռնի մեղքը Աստծու վրա չի բարդում, սակայն նա ևս ունի որոշ տողեր, որոնցով կատարում է թեոդիցեական հարցադրումներ: Իր անձնական ապրումների միջոցով նա

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 62:

<sup>31</sup> Պարույր Սևակ, հտ. 2, Անլրելի գանգակատուն, էջ 6:

խոսում է հայ ժողովրդի՝ տառապող ու չարի դեմ մաքառող հոգու անունից: Ամեն տառապանքի ու վշտի հետ մեկտեղ, սակայն, Թումանյանն առանձնանում է լավատեսական տեսիլներով, չի մեղադրում ազգին սխալ կրոն և սխալ Աստված դավանելու, ոչ էլ խաչապաշտ լինելու մեջ. ազգի խնդիրները նա առաջին հերթին տեսնում է սեփական չարության մեջ, որոնք առաջացել են դարեր շարունակ սաստիկ ստրկացված լինելուց: «Հայոց վիշտը» բանաստեղծությունը, որը գրվել է համիդյան կոտորածներից հետո, ունի լավատեսական վերջաբան.

*....Ու մենք չունենք տեղ ու դադար –  
Երկրից երկիր ցիրուցան:  
Բայց զրնում ենք մենք անվեհեր  
Չարկերի տակ չար բախտի,  
Մեր աչքերը միշտ դեպի վեր՝  
Դեպի լույսը մեր ուխտի<sup>32</sup>:*

Մարդու տառապանքների հետ մեկտեղ անապատում փորձության է ենթարկվում նաև Քրիստոս՝ «Քրիստոսն անապատում» բանաստեղծության համաձայն<sup>33</sup>: Թումանյանը գաղթականների անմոռնչ տառապանքը ներկայացնում է հատկապես թոչունների և հարցադրումներ անելով, օրինակ՝ «Գաղթականի երգ»-ում: Սկզբում գաղթականը հարցնում է կռունկին, թե ինքն ուր է գնում, արդյոք շատ է մնացել, իսկ վերջում արդեն խոսքերի հասցեատերն Աստված է.

*Ամեն քար, Աստված, իր տեղն է անժաժ,  
Հենց ես եմ մենակ տեղից գրլորվել.  
Ամեն հավք, անգո լթ, իր բունը ունի,  
Հենց ես եմ դարիք ճամփում մոլորվել....<sup>34</sup>*

Տրամության սաղմոսներից առաջինում Թումանյանն առաջին հերթին զարմանում է ոչ թե Աստծո լռության վրա, այլ թե ինչպես են

<sup>32</sup> Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, Ե., 1978, էջ 39:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 31-32:

ամեն տեսակի զրկանք ու տառապանք տեսածները շարունակում օրհնել Նրան.

*Տեր, մինչև ե՞րբ մեր աչքերը քեզ մընան.  
Մեր գույժն հասավ, հեռո՜ւ-հեռո՜ւ ազգերին,  
Աշխարհ լըցվեց մեր աղաղակ, մեր կական,  
Ու չի անցել մեր տանջանքը տակավին:  
Ինչո՞ւ, Աստվա՛ծ, որքե՞ն ըն արդյոք հայրական  
Գութըդ կօրհնեն կոտորածի էս ձորում,  
Թե տարագիր պանդուխտները կը պատմեն  
Ողորմությունդ օտար-օտար ափերում....<sup>35</sup>*

Եվ վերջին քառատողում նոր անցում է կատարում իր ազգի ցավի միջից տնքացող հոգով հարցնելով Աստծուն.

*....Մի՞թե, Աստված, դեռ բավական չըտեսար  
Էսքան ավեր, վիշտ ու ցավեր, հեծություն,  
Մի՞թե, Աստված, հաճելի չեն քեզ համար  
Աղոթք ու սեր, կյանք ու տաղեր զըվարթուն<sup>36</sup>:*

Կամ՝

*....Աստված, տանջանքից ուժերըս հատան,  
Մի՞թե չըհասավ ժամը փրկության<sup>37</sup>:*

Երբ սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, ամենայն հայոց բանաստեղծը «Վերջին տազնապը» բանաստեղծության մեջ գրում է, որ սատանան նոր մարտի է դուրս եկել մարդկության դեմ: Նա սատանային կոչում է աստվածաշնչյան բառապաշարով՝ «հին վիշապ»<sup>38</sup>: Եվ այդ շրջանը, որ ինքն է այդ պահին ապրել, նա «Անկեղծ չենք» հրապարակախոսական հոդվածում կոչում է «Դա-րավոր կարգերի ու հասկացողությունների հեղաշրջումի օր, պատ-

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 33-34:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 50: Աստվածաշնչում մարդկության թշնամին՝ սատանան, կոչվում է օձ, վիշապ կամ հին վիշապ. տե՛ս Ծննդ. 3.1, Եսայի 27.1, Մաղմ. 91.13, Հայտն. 12.9, 20.2:

մության ահավոր դատաստանի օր»<sup>39</sup>: Եվ այդ թոհուրոհում «Արևելքի հին տառապյալը հայ ժողովուրդը»<sup>40</sup> դրվեց գոհասեղանին:

Էջմիածնում ապաստանած գաղթականների խնամքով զբաղվող Թումանյանը հոգեհանգիստ է կարդում իր ժողովրդի անմեղ զոհերին՝ նրանց արյան կանչը խաղաղելով այն մտքով, որ մարդը զազան է և չի փոխվի.

*Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին՝  
Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին...  
Կանչեցի թըշվատ էն հոգիներին՝ ցրված հավիտյան...  
-Հանգե ք, իմ որբե ր... իզո չի են հուզմունք, իզո չի և անշահ...  
Մարդակեր զազան՝ մարդը դեռ երկար էսպես կը մնա...<sup>41</sup>  
(«Հոգեհանգիստ»)*

Թումանյանը չի գտնում ո՛չ դիցաբանական, ո՛չ իրացիոնալ, ո՛չ էլ ռացիոնալ բացատրություն հայոց Եղեռնին:

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ: Վահան Թեքեյանը «Զվարթնոց տաճարին մեջ» բանաստեղծությամբ ազգի անհոգ անցյալը, երբ հավատքն ամուր էր և մարդ-Աստված հարաբերություններն էլ՝ ներդաշնակ, համեմատում է այն ներկայի հետ, որը ներկայացնում է Զվարթնոցի ավերակ տաճարի ալեգորիկ պատկերով: Անցյալում Զվարթնոցը կանգուն էր, հայր՝ ևս, իսկ իր ներկայում Զվարթնոցն ավերվել է, հայի հոգին՝ նույնպես.

*....Եվ հավատքով մը ամուր ու շրթներով ալ աննենգ՝  
Մարդիկ քեզ, Տե՛ր, կ'օրհնեին, զի կ'օրհնեի ք զիրենց, Տե՛ր...  
....Մինչդեռ այսօր՝ այս փլած տաճարին շուրջ կը տեսնեմ  
Տարածասփյուռ ամեն կողմ, մինչև հեռուն, շա՛տ հեռուն,  
Անոնց սերունդը ամբողջ, միշտ ծնրադիր, թախծադեմ...  
Տե՛ր, արձակե՛ ալ զանոնք ի սե՛ր իրենց պապերուն...<sup>42</sup>*

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 399:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 424:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 52, 53:

<sup>42</sup> Ռուբեն Որբեյան, Ռուբեն Սևակ, Վահան Թեքեյան, Մատթեոս Զարիֆյան, Երկեր, Ե., 1981, էջ 322:

*Աստծուն ուղղված հարցերից է.*

*....Այսուհետև մենք ինչպե՞ս պիտի, Աստված իմ, կրնանք  
Ստաբերել միմիային, խորհիլ, հուսա չ Ապագան....<sup>43</sup> («Ողբ»)*

Թեքեյանը հայ ժողովրդի վրա զգում է չարի կրճտացող ատամը՝ կոտորածների սարսափներին ականատես լինելով։ Իսկ ինչո՞ւ չարը պիտի կրճտացներ ատամները հայ ժողովրդի վրա.... Թեքեյանն օգնության է կանչում, բայց ոչ թե՝ Աստծուն, այլ՝ անհայտին, օղի մեջ գոռում է օգնության հասնել իր ազգին հետևյալ տողերով.

*Ոսոխ Աստված մը անշուշտ, որ դարանած կը դիտեր՝  
Անոր վրա արձակեց ամբողջ չարիքն աշխարհի,  
Ոտքի հանեց բովանդակ հրեշտությունը ի քուն՝  
Մեծ օձերու, վագրերու, շակալներու դեմքերով,  
Փաթթըվեցավ ոտքերուն, խաճատեց կուրծքն ու հասավ  
Անոր վզին, աչքերուն և իր ժանիքը մխեց  
Ճիշտ ուղեղին մեջ անոր՝ զոր արյունին հետ ահա՝  
Ան կը լըզե հեշտագին, ան կը ծծե՝ զգլխած....<sup>44</sup>*

Աստծուն սուր ու կարծր հարցեր ուղղելով հանդերձ՝ Թեքեյանը նաև հարության հույսն ունի։ Նկատենք, որ հարության հույս կարող է ունենալ միայն քրիստոնեական վարդապետությանը հավատացող անձը՝ օրինակ ունենալով հենց Իրեն՝ մահացած և հարություն առած Աստծու Որդուն, Որի հետ հույսեր են կապել շատ հայեր.

*Հարության շունչն է ահա, ջարդակոտոր Ազգըդ իմ,  
Հորիզոնեն ծայր տված, որ կը փչե մարմնուդ վրա...  
Ամայություն ին, լռություն ին... Օրորոց չէ, այլ շիրի մ՝  
Երկիրն ամբողջ՝ ուր երեկ դուն գոհվեցա ր անխնա...  
Բայց հարության շունչն է այս. ու զայն զգաս պիտի դուն*

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 326:

<sup>44</sup> Տե՛ս «Ահավոր բան մը այնտեղ» բանաստեղծությունը, նույն տեղում, էջ 328:

*Գերեզմանիդ իսկ խորեն՝ կուրծքի՛դ վրա ջախջախված...<sup>45</sup>*

Իսկ Եղեռնի զոհերին կոչում է նահատակ<sup>46</sup>: Թեքեյանի մտորումների մեջ կան ապագայի բազում հետաքրքիր տեսիլներ, որոնք դարձյալ շոշափում են փրկության մոտիվը:

Այս ուսումնասիրությունը կարելի է երկար համալրել, քանի որ թեոդիցեայի հարցեր շոշափած հայ գրողների շրջանակը շատ ավելի լայն է: Ամփոփելով և փորձելով բնորոշել վերը նշված գրողների թեոդիցեան, կարելի է ասել, որ Պարյուր Սևակի Եղեռնի թեոդիցեան համամարդկային թեոդիցեայի մի մասն է, չարը, տառապանքը՝ մարդու երկրային գոյությանը բնորոշ երևույթներ: Հովհաննես Շիրազի թեոդիցեան լի է պարականոն և պոետիկ պատկերներով, իսկ Եղեռն ապրած հայ ժողովուրդը ներկայացվում է որպես մահվանը, հետևաբար՝ չարին ևս հաղթած ժողովուրդ: Հովհաննես Թումանյանը և Վահան Թեքեյանը, այն գրողները, որոնք ականատես են եղել Եղեռնի մղձավանջներին, ունեն հարցեր՝ ուղղված Աստծուն, չունեն պատասխաններ, սակայն պահպանում են ազգի հարության հույսը: Այս չորս գրողների գործերում զգացվում է մեկ ընդհանուր մոտեցում. Եղեռնը մարդկայնորեն հասկանալի անհնար է:

*SHUSHAN KHACHATRYAN (ARMENIA)*

**THE THEODICY OF YEGHERN (THE ARMENIAN GENOCIDE)  
IN THE LITERARY WORKS OF THE ARMENIAN WRITERS  
(PARUYR SEVAK, HOVHANNES SHIRAZ, HOVHANNES  
TUMANYAN, VAHAN TEKEYAN)**

In terms of theodicy the interpretation of genocide is the reconciliation of the phenomenon of Good God and mighty manifestation of evil and suffering in the world. Christian orthodox theology states that the evil is non-existent, it was not created by God, but it is related to free will and is the absence of good. Because genocides are the results of the evil will and its

---

<sup>45</sup> Հատվածը՝ «Հարության շունչն է ահա» բանաստեղծությունից, տե՛ս նույն տեղում, էջ 331:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 342, 343:

varieties, the theodicy comes to explain the roots of genocides.

Although not theologians, the Armenian writers, who wrote on *Yeghern*, contemplate on and reveal some challenging aspects and issues of the theodicy of God and suffering in course of the Armenian Genocide. In this article we have examined the theodicies of Paruyr Sevak (1924-1971), Hovhannes Shiraz (1914-1984), Hovhannes Tumanyan (1869-1923) and Vahan Tekeyan (1878-1945).

This study is not done in terms of literary criticism; it is a theological study, a compilation and interpretation of thoughts concerning God and the Disaster of *Yeghern*.

*ЗБИГНЕВ ШМУРЛО (ПОЛЬША)*

## **ОТРАЖЕНИЕ ГЕНОЦИДА В ТВОРЧЕСТВЕ ПОЛЬСКОЙ ПИСАТЕЛЬНИЦЫ ЗОФЬИ НАЛКОВСКОЙ**

Турецкий национализм и стремление властей, чтобы уничтожить в государстве всех христиан, в том особенно армян, привёл к варварским актам насилия, часто повторяющимися резням, убийствам. Армяне в Османской империи почуствовали все принципы паткютюркиза. Европа, в том числе возрождающаяся в 1918 г. новая Польша, после многих лет российского, прусского и австрийского ига, была занята установлением своего послевоенного быта. Только время от времени до европейцев доходили ужасные вести о гибели армян. Среди небольшого количества журналистов, публицистов и писателей, в своих работах говорящих о судьбе армян, старинного христианского народа, которого дальнейшее существование было под угрозой абсолютной гибели, важное место занимает Зофья Налковска, творчество которой сыграло видную и значительную роль в польской литературе XX в.

Зофья Налковска (1884-1954) - польская писательница, журналистка, публицист и драматург - принадлежит к числу выдающихся прозаиков XX века. В период межвоенного двадцатилетия 1919-1939, Налковская принимала активное участие в общественной жизни — была членом правления Союза польских писателей и Академии литературы, членом Пенклуба. В своём творческом развитии прошла путь от произведений, исследующих психологию любви (психологически-



бытовые повести в духе модернистской поэтики о жизни и социальном положении женщин в обществе) к реалистическим социально-психологическим романам, рисуящим различные стороны общественно-политической жизни Польши.

Зофья Налковска оставила тоже выразительный след в мировой литературе содержанием повести «Медальоны» (1946) – одно из первых в Польше произведений о годах гитлеровского режима. Это сжатый и точный рассказ о немцах и организованных ими лагерях смерти во время Второй мировой войны. Книга Налковской – это новаторское произведение по глубине и характеру раскрытия оккупационной, немецкой темы. Для Налковской оно стало художественным выражением гневного возмущения писательницы гитлеровскими злодеяниями<sup>1</sup>.

